ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Ե Ր Կ Ե Ր

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

Ա

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ- 2006

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ա 205

Ադոնց, Ն. Գ.

Ա 205 Երկեր. հատ. Ա., Պատմագիտական ուսումնասիրություններ /Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը . - Եր., Երևանի համալս. հրատ., 2006, 652 էջ + 1 էջ ներդիր:

Նիկողայոս Ադոնցի երկերի առաջին հատորն ընդգրկում է հին և միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմությանն ու հոգևոր կյանքին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված հիմնական աշխատությունները: Ներկայացված ուսումնասիրություններից շատերը կարևոր ներդրում են ոչ միայն հայագիտության, այլև ընդհանուր պատմագիտության բնագավառում:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

Ա 0503020913 / 704 (02) 06 2006

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8084-0704-4

© Պ. Հ. Հովհաննիսյան, 2006 թ.
© Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006 թ.





FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

ԵՊՀ հրատարակչությունը իր երախտագիտությունն է հայտնում

ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ

հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն

դոկտոր **ՋԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՆ,**

մեծաձեռն հայագետ Ն. Ադոնցի երկերի ժողովածուի

հինգհատորյակի հրատարակությունը նախաձեռնելու և

հովանավորելու համար:

Խմբագրական հանձնաժողով
Հովհաննիսյան Պ. Հ., Մարոյան Ա. Գ., Ստեփանյան Պ. Գ.

Հատորը հրատարակության պատրաստեց

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի (1871-1942) ստեղծագործական ժառանգությունը կարևոր ներդրում է հայ և համաշխարհային պատմագիտության մեջ: Նրա շատ ուսումնասիրություններ դուրս են եկել ազգային պատմության շրջաններից և դարձել համընդհանուր պատմագիտությունը հարստացնող արժեքներ: Հատկապես նշանակալից է նրա մեծ ներդրումը բյուզանդագիտության բնագավառում, որտեղ առայսօր համարվում է ճանաչված ու աներկբա ծանրակշիռ վաստակ ունեցող հեղինակներից մեկը:

Տարիներ շարունակ (1904-1920) դասավանդելով Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում և գլխավորելով Բրյուսելի Ազատ համալսարանի Հայագիտության ամբիոնը (1932-1942)՝ Ադոնցը հիանալի հնարավորություն ունեցավ ի մոտո ծանոթանալու համաշխարհային պատմագիտական կենտրոններում կատարվող աշխատանքներին և դրանց լավագույն արդյունքները ներդնելու իր ստեղծագործությունների մեջ:

Նիկողայոս Ադոնցը գիտամանկավարժական ու հասարակական բուռն գործունեություն է ծավալել XX դարի առաջին կեսին: Շուրջ 50-ամյա (1895-1940) գործունեության ընթացքում նա թողել է 100-ից ավելի ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են հայագիտության համարյա բոլոր բնագավառներին՝ պատմագիտությանը, բանասիրությանը, լեզվաբանությանը, բնագրագիտությանը, կրոնի, եկեղեցու և արվեստի, Հայկական հարցի ու հասարակական մտքի պատմությանը, պատմական աշխարհագրությանը և այլն:

Ն. Ադոնցի պատմագիտական առաջին աշխատանքը, որը լույս է տեսել 1904 թ., նվիրված է եղել մարզպան Վասակի խնդրին: Սույն փոքրածավալ ուսումնասիրությունը մեծ արձագանք է գտել հայ պատմա-բանասիրական մտքի և ընթերցող հասարակայնության լայն շրջաններում: Անկախ հոդվածի թվացյալ վիճաբանական միտումներից, այն ակներևորեն մատնանշում է նրա հեղինակի պատմագիտական լուրջ պատրաստությունը, գիտելիքների խորությունը և գիտության մեջ նոր խոսք ասելու

հաստատակամությունը: 1908 թ. Ս. Պետերբուրգում ռուսերեն լույս տեսավ Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» կոթողային մենագրությունը, որն անմիջապես դարձավ հայագիտության ոսկե ֆոնդի մնայուն արժեքներից մեկը: Ցայսօր էլ այն իր բնագավառում դարձյալ համարվում է չգերազանցված արժեք, մնում է միշտ նոր և թարմ խոսք:

Այնուհետև մեկը մյուսի հետևից լույս տեսան «Հին Հայոց աշխարհայացքը», «Հին հայ շինականությունը», «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», «Հայաստանի ոսկեհանքը», «Բագրատունյաց փառքը», «Արտավան Արշակունի», «Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա», «Վարդ Մամիկոնյան», «Վասիլ Հայկազն», «Աշոտ II Երկաթ», «Սամուել Հայը բուլղարների թագավոր», «Հայերը բյուզանդական գիտության մեջ» և մենագրական այլ ուսումնասիրություններ:

1920-1930-ական թվականներին եվրոպական մասնագիտական պարբերականներում տպագրվել են Ադոնցի բյուզանդագիտական փոքրածավալ ուսումնասիրությունները, ինչպես օրինակ՝ Լևոն V Հայկազնին, Նիկեփորոս I կայսրին, Մավրիկիոսին, Փիլարտոսին, Հովհաննես Չմշկիկին, Տարոնացիներին, Թոռնիկյաններին, Ռուբինյանների նախահորը, «Դիգենիս Ակրիտաս» հայ-բյուզանդական էպոսին նվիրված էտյուդները և այլն:

Ն. Ադոնցի բանասիրական աշխատանքները հիմնականում վերաբերում են հին հայկական բնագրերին ու մատենագրության առանձին դեմքերի Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը, Մեսրոպ Մաշտոցին, Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչներին, Եզնիկ Կողբացուն, Կորյունին, Մովսես Խորենացուն, Ղևոնդ Վարդապետին, Մովսես Կաղանկատվացուն և այլն:

Մյուս բնագավառը, ուր Ադոնցը հասել է շոշափելի գիտական արդյունքների, հին հայկական դիցաբանությունը և հայոց քրիստոնեական եկեղեցու պատմությունն են: Այստեղ, անշուշտ, շեշտելի են Հայոց Հայրապետների, Ճառընտիրների, Ճաշոցների նվիրված նրա ուսումնասիրությունները: Գիտական լուրջ ներդրում են հատկապես Գրիգոր Լուսավորչին և Անակ Պարթևին նվիրված աշխատությունները:

Ն. Ադոնցի ընդհանուր գիտական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Հայկական հարցին նվիրված փոքրածավալ, սակայն միշտ ծրագրային արժեք ունեցող այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում», «Հայկական հարցը և գերմանական ծրագրերը», «Թուրքական հայտագիրը և Թուրքահայաստանը», «Առաջավոր Ասիայի հիմնահարցի լուծման շուրջ», «Թուրքիայի անդամահատումը», «Հայկական հարցը Սևրում», «Մեծ եղեռնի տարելիցին» և այլն:

Ականավոր պատմաբանի կարապի երգը եղավ «Հայոց քննական պատմություն» բազմահատոր աշխատությունը[1]: 1930-ական թվականների վերջերին ՀԲԸ Միության «Մելքոնյան հրատարակչական ֆոնդը» Ադոնցին պատվիրեց գրել ֆրանսերեն Հայոց պատմություն՝ սկզբից մինչև XX դարի 30-ական թվականները: 1938 թ. սկսած նա մինչև իր կյանքի վերջին օրերն իրեն նվիրեց այդ աշխատանքին: Ցավոք, մահն ընդհատեց արդեն բավական թափով սկսված աշխատանքները: Ադոնցը հասցրեց գրել միայն աշխատության առաջին հատորը[2], մնացած հատորների նյութերը՝ (հիմնականում երկրորդ և մասամբ երրորդ), ձեռագիր վիճակում գտնվում են պատմաբանի բեյրության թողնում[3]:

Ինչպես ակներև է, հարուստ ու բազմաժանր է Ն. Ադոնցի գիտական ժառանգությունը: Նրա յուրաքանչյուր կողմ, յուրաքանչյուր արտահայտություն հարստացրել է հայ միտքը մեծագույն, անանց արժեքներով: Ինչպես Հ. Թումանյանը գրականության ոլորտում, Կոմիտասը երաժշտության, Հր. Աճառյանը՝ լեզվաբանության, Մ. Աբեղյանը՝ գրականագիտության, Վ. Սուրենյանցը՝ նկարչության, Ա. Թամանյանը՝ ճարտարապետության, այնպես էլ Նիկողայոս Ադոնցը պատմագիտության ոլորտում անկրկնելի է ու մեծ: Թվարկված մեծություններն իրերի բերումով առավել հայտնի են ժողովրդական լայն շրջաններին, քան Նիկողայոս Ադոնցը: Եթե գիտական աշխարհը բավարար խորությամբ է տեղեկացված նրա ժառանգության մասին և լայնորեն օգտվում է դրա անսպառ հնարավորություններից, ապա ընթերցող լայն հասարակությունը զրկված է այդ մեծագույն հարստության հետ ամբողջությամբ աղերսվելու երջանկությունից: Հարցը նախևառաջ այն է, որ Ադոնցի երկասիրությունները ցայսօր իմի հավաքված չեն: Դրանք ցրված են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլալեզու գիտական ու հանրամատչելի մամուլի էջերում՝ «Արձագանք», «Հանդես ամսօրյա», «Արարատ», «Բանբեր գրականության և արվեստի», «Նոր Դար», «Մշակ», «Հուշարձան», «Բազմավեպ»,

---

[1] Այդ աշխատության մասին մանրամասն տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմության» ստեղծագործական ճակատագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 2001, № 1, էջ 63-78:

[2] 1946 թվականին հրատարակվել է Փարիզում, «Histoire d'Arménie. Les origines du x^e^ siècle du VI^e^ (Av I. C.)».

[3] Բեյրութի Համազգայինի գրական արխիվում պահպանվող ադոնցյան մասունքների ընդհանուր նկարագրի մասին տե՛ս «Ազդակ», օրաթերթ, Բեյրութ, 1993, 9 մարտի; «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 1993, 7 մայիսի և այլն:

«Հայրենիք» (ամսագիր), «Հայրենիք» (օրաթերթ), «Հառաջ», «Ազդարար», «Ապագա», «Զվարթնոց», «Հայ մշակույթի օրը», «Վեմ», «Սիոն», «Հուսաբեր», «Անահիտ», «Ակոս», «Անդաստան» և այլն, "Византийский временник", "Записки восточного отделения императорского русского археологического общества", "Журнал Министерства народного просвещения", "Христианский Восток", "Новая жизнь", "Международная политика и мировое хозяйство" և այլն, «The New Armenia», «Revue de L'Orient chrétien», «Armeniaca», «Revue des études arméniennes», «Byzantinische Zeitschrift», «Byzantion», «Annuairi de L'Institut de philologie et D'histoire orientales», «Revue des études indo-européennes» և այլն: Անշուշտ, նշվածն ամբողջը չէ, որին աշխատակցել է Ադոնցը: Հայագետի աշխատությունների մի մասն էլ մնացել է անտիպ՝ ցրված աշխարհի տարբեր գրապահոցների ֆոնդերում:

Դեռևս իր կենդանության օրոք, 1930-ական թվականների վերջերին, Ադոնցն ինքն է նախաձեռնել իր որոշ աշխատանքներն ի մի հավաքելու և մեկ գրքով տպագրելու գործը: Ինչպես հավաստում է Ադոնցի մերձավորագույն բարեկամ Ա. Խոնդկարյանը, պատմաբանը «Հայրենիք»-ում տպագրված իր հոդվածները «վերանայել էր, դասավորել երկու բաժնի և պատրաստել հրատարակության համար»[1]: Նույնը շեշտում է նաև Ադոնցի սաներից Մուշեղ Իշխանը[2]: Տպագրության պատրաստ ժողովածուն, սակայն, լույս տեսավ միայն Ադոնցի մահից հետո՝ 1948 թվականին: Այստեղ զետեղված էր ընդամենը 10 հոդված[3]:

Ն. Ադոնցի աշխատությունների ժողովածուի հրատարակման մյուս փորձը կատարվեց 1965 թ.:

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական մատենաշարը լույս ընծայեց Ադոնցի՝ հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված ֆրանսերեն 13 հոդվածների ժողովածուն: Այն հրատարակության էր պատրաստել ճանաչված բյուզանդագետ Ժ. Գարիտը[4]: Ի դեպ, նույն մատենաշարը 1969 թ. լույս ընծայեց Ադոնցի գլուխգործոցի՝ «Հայաստանը

---

[1] **Ա. Խոնդկարյան,** Երկու խոսք, տե՛ս Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:

[2] **Մուշեղ Իշխան,** Երեք մեծ հայեր, Բեյրութ, 1952, էջ 36:

[3] Տե՛ս **Նիկողայոս Ադոնց,** Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:

[4] **N. Adontz,** Études Armeno-Byzantines, Lisbonne, 1965.

Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրության անգլերեն թարգմանությունը, որն իրականացրել էր Ն. Գարսոյանը[1], իսկ մեկ տարի անց՝ 1970 թվականին, «Դիոնիսոս Թրակացին և հայ մեկնիչները» մենագրությունը[2]:

1971 թ. Երևանում վերահրատարակվեց «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրությունը[3], իսկ 1972 թվականին՝ հայերեն թարգմանությամբ լույս տեսավ «Հայաստանի պատմություն. ակունքները» գիրքը[4]: 1987 թ. «Հայաստան» հրատարակչությունը առաջին անգամ հայերեն թարգմանությամբ լույս ընծայեց «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրությունը, որն իրականացրել էին Ա. Թ. Խոնդկարյանն ու Է. Հ. Խոնդկարյանը[5]:

1990-ական թվականների կեսերին «Հայագիտական բարեգործական ընկերությունը» և «Հայագիտակ» հրատարակչությունը նախաձեռնեցին Ադոնցի երկերի քառահատորյակի հրատարակությունը: Ծրագրի համաձայն առաջին հատորը ներկայացնելու էր Հայկական հարցին և ցեղասպանությանը նվիրված ուսումնասիրությունները: Մյուս հատորներում տեղ էին գտնելու Ադոնցի այն ուսումնասիրությունները, որոնք ժամանակին տպագրվել էին ֆրանսերենով և գրեթե անծանոթ էին մնացել մեր ընթերցողներին: Ցավոք, ծրագրված գործը մասամբ իրականացվեց: 1996 թվականին լույս տեսավ քառահատորյակի առաջին հատորը, որը պարունակում էին Ադոնցի՝ Հայկական հարցին նվիրված 16 աշխատություններ[6]:

Այնուհանդերձ, Ադոնցի գիտական ժառանգությունն ամբողջությամբ դեռ չի դարձել մեր ընթերցողների սեփականությունը: Ահա թե ինչու հայ պատմագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը շարունակում է մնալ նրա երկերի ժողովածուի հրատարակումը:

Այսու իրականություն է դառնում հայագետների բազում սերունդների մեծ երազանքը: **Գալուստ Գյուլբենկյան** հիմնարկության Հայկական մատենաշարի և մասնավորապես դոկտոր **Զավեն Եկավյանի** սիրահոժար նախաձեռնությամբ որոշվել է հինգ հատորով լույս ընծայել ականավոր հայագետի Երկերի համահավաքը:

---

[1] **N. Adontz,** Armenia in the period J. Justinian, Lisbonne, 1969.

[2] **N. Adontz,** Denys de Thrace, et les Commentateurs Arméniens, Louvaine, 1970.

[3] **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.

[4] **Ն. Ադոնց,** Հայաստանի պատմությունը, Երևան, 1972:

[5] **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգի, Երևան, 1987:

[6] **Ն. Ադոնց,** Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հովհաննիսյանը, Երևան, «Հայագիտակ», հրատ., 1996:

Նյութերն ըստ հատորների բաշխվելու են հետևյալ կերպ.

Ա հատոր - Պատմագիտական ուսումնասիրություններ,

Բ հատոր - Բանասիրական ուսումնասիրություններ,

Գ հատոր - Քերականական-լեզվաբանական ուսումնասիրություններ,

Դ հատոր - Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ,

Ե հատոր - Հրապարակախոսություն, նամականի:

Սույն՝ առաջին հատորը հիմնականում ընդգրկում է Ադոնցի պատմագիտական այն ուսումնասիրությունները, որոնք ժամանակին տպագրվել էին Բոստոնի «Հայրենիք» ամսագրում, ապա՝ Ա. Խոնդկարյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Պատմական ուսումնասիրություններ» հատորում: Այս հրատարակությունից դուրս է մնացել միայն «Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում» աշխատությունը, որը տեղ կգտնի Երկերի 4-րդ՝ «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ» հատորում: Ավելացվել են՝ «Տորք աստված հին Հայոց», «Տարկուն հին հայերի մոտ», «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ», «Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև», «Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ», «Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում», «Պատկերների խնդիրը», «Հայ-ծաթերի ծագման մասին», «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» և այլն: Սխալ կլինի կարծել, թե ներկայացվող հատորով սպառվում է Ադոնցի պատմագիտական աշխատությունների ցանկը: Այս բնույթի շատ երկեր զետեղվելու են «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ» հատորում, ինչպես օրինակ՝ «Աշոտ Բ Երկաթ», «Սամուել Հայը բուլղարների թագավոր» և այլն: Հատորից դուրս են մնացել նաև հեղինակի մի շարք մանր ուսումնասիրություններ, գրախոսություններ, ակնարկներ: Իսկ պատմագիտական ակնառու արժեք ունեցող այնպիսի երկեր, ինչպիսիք են «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» և «Հայոց քննական պատմություն» աշխատությունները ըստ հնարավորին նախատեսված է զետեղել Երկերի լրացուցիչ՝ վեցերորդ և յոթերորդ հատորներում:

Հատորում զետեղված նյութերը հրատարակվում են նույնությամբ՝ միայն անհրաժեշտ ուղղագրական, կետադրական միջամտություններով և մասնակի խմբագրական շտկումներով: Մեր կողմից ավելացված կամ վերծանված բառերը ղրվում են ուղիղ [ ] փակագծերի մեջ, իսկ կատարված ծանոթագրությունները, որոնց հերթական համարներն առնված են կլոր ( ) փակագծերի մեջ, տրվում են ծանոթագրությունների բաժնում: Նյութերը դասակարգված են ըստ պատմական ժամանակագրության:

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Որքան և կարևոր համարվին պատմության արտաքին այսպես կոչված նյութական գործոնները, անկարելի է ուրանալ ներքին կամ հոգևոր ազդակների արժեքը: Եթե մեկը տալիս է պատմության անհրաժեշտ ատաղձը, մյուսն է իսկական ճարտարապետը, որ անշուշտ նյութեղենից կերտում կանգնում է պատմական մշտաբարբառ հրաշազան շենքը: Միտքը պատմության գործոն ուժերից մեծագույնն է: Յուրացրած մտքերի և հասկացողությունների ամբողջությունը, այն, որ կոչվում է աշխարհայացք, այն է, որ ձևակերպում է և մարդկայնացնում անհմաստ մթերքը:

Ինչ և լինեն աշխարհայացքի ծագման և կամ զարգացման պատճառները, որքան և կապակից լինեն արտաքին պայմանների, բայց մի անգամ որ մշակված, կազմված է, մի անգամ որ հայտնի ձևավորում է ստացած, աշխարհայացքը երևան է գալիս այնուհետև իբրև ուրույն և ինքնազոր ուժ և գործում է մյուս ազդակների առընթեր, անկախ կամ փոխադարձ ազդեցությամբ:

Պատմությունը, որպես և հասկանալու լինենք, ամենեն առաջ գործողությունների շարան է: Հոգեբանական տեսակետից գործն այլ բան չէ, եթե ոչ հասկացողության մարմնացում: Անհատը, մենակ թե հավաքաբար, գործում է այն չափով, որչափ ըմբռնում է: Կարելի է համարձակ ասել, որ ազգերի հասունության աստիճանը, նրանց տեսության հորիզոնները շատ անգամ նախորոշում և նախագծում են նրանց պատմության շրջանակը: Քաջերի սահմանը զենքը չէ միայն, ինչպես ասված է, այլ և այն հոգեկան մղումը, որ տանում է դեպի զենք:

Նախնական շրջանում աշխարհայացքն անպայման կրոնական գունավորում ուներ: Ոչ միայն պատմության արևածագին, երբ մարդկությունը թափառում էր **տոտեմների** և **ֆետիշների** աշխարհում, այլ և ավելի ուշ, գիտակից շրջանում, տիրական էր այն հավատը, որ կյանքի անտես գործիչները աստվածներն են, նրանք են, օրինակ, որ մարդկանց տանում են պատերազմի դաշտ և նրանց հետ միասին կռվում թշնամու և օտար աստվածների դեմ:

Բնական է հարցնել, արդյոք ի՞նչ էին մեր աստվածները և ո՞ւր էին

առաջնորդում մեզ: Աստվածությունը և նրա թելադրանքը երկրի համար գաղափարական երկնաճեմ գոլորշիներ են, որ բարի անձրևներով բեղմնավորում են պատմական հողը: Մեզնից բխած թեև, բայց իշխում է նա մեզ վրա, ղեկավարում է մեր բարքերն ու գործերը, մեր թռիչքն ու անկումը:

Դժբախտաբար, հուրն ու սուրը, որ հանապազ ավեր են դարձրել մեր երկիրը, չեն խնայել նաև մեր ներքին աշխարհը: Իսկ այս կարգի քայքայումը նվազ աղետալի չէ, քան նյութական փլատակները: Հետևել մեր աշխարհատեսական ուղիին, պարզել նրա հարազատ և խորթ ոլորները, և կամ վերականգնել նրա այնքան անգամ կտրտված թելը, անհնարին գործ է: Այն սուրսափները, որ տեղալով տեղացել են մեր երկրի վրա ահավոր են և նրանով, որ խորտակել են ամբողջ աշխարհայացքներ, չքացրել ապրած անցյալի, կրած փորձառության թանկարժեք և՛ անմոռաց հարստությունը:

Պետք է զարմանալ, որ հայ հիշողությունը, հակառակ բոլոր անհպաստ պայմանների, դեռ կարողացել է պահել դարերի մտավոր և նյութական ավերածի փոշու մեջ այնպիսի շողշողուն մարգարիտներ, որոնք տանում են մեզ դեպի մարդկության ամենահին պաշտամունքների տաճարները:

Հայ երկիրը երբեք կտրված և կղզիացած չէ եղել իր շրջակա խոշոր քաղաքակրթություններից, այլ ապրել է նրանց մեջ իբր կազմակից մաս և կրել նրանց շարժումների անմիջական հետևանքը: Կարելի է ասել, որ այն, ինչ որ ընդունված է եղել լայն քաղաքակրթական աշխարհում, բնավ օտար չէ եղել և մեր հայրենի շրջանին:

Հայ հիշողության հնավանդ փշուրները, հարևան երկրներում տարածված պաշտամունքների լույսի տակ, կստանան իրենց ամբողջությունը և կարող կլինեն վերականգնել մեռած աստվածների պատկերները:

Զբաղվել թաղված աստվածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստվածներն են նաև ոչինչ համարվում, գուցե և ունայն աշխատանք է: Սակայն, աստվածուրացությունը ոչ թե միայն բարոյական լքումի նշան է, այլ և ինքնակոծության վատթար տեսակը:

Արդարև, ի՞նչ է աստվածությունը, եթե ոչ մարդկության վեհաշունչ երազների հայտնություն, և ի՞նչ է պատմությունը, եթե ոչ նորանոր աստվածությանց որոնումներ, նորանոր բարձունքի տենչանք:

Այս է պատճառը, որ մարդկությունը դժվարությամբ է թողնում իր կուռքերը, հեշտ չէ բաժանվում իր սրբություններից: Մեռնում են աստվածները, բայց նրանց պաշտամունքի բեկորները մնում են սրբազան ավանդ, որ անցնում են սերնդե սերունդ, տաճարից տաճար, պահպանելով իրենց վաղեմի խորհրդավորությունը: Եվ զարմանալին այն է, որ հարատևում են հաճախ մանավանդ կրոնի արտաքին արտահայտությունները, որ ավելի մատչելի են հանրության, ծեսերն ու արարո-

ղությունները: Գինիները փոխվում են և մնում են տիկերը իբրև ճվիրական անոթներ, պատրաստ ընդունելու նոր բովանդակություն:

Ավետարանի վերասլաց վարդապետությունն անգամ չի արհամարհել հեթանոսական դատարկված տիկերը: Քրիստոսի ձայնը հնչելիս հեթանոս երկինքը գրեթե անբնակ էր, աստվածները կորցրել էին իրենց ուժն ու հմայքը և տաճարներում մնացել էր միայն նախնի հավատալիքների չոր կմախքը: Քրիստոնեությունը դյուրությամբ գրավեց անշունչ կմախքը և նոր ոգի տվեց նրան:

Հին կրոնի ծիսական ժառանգությունը հարուստ էր ճիշտ այն երկիրներում, որոնք նոր քարոզի անդրանիկ բեմ դարձան և նոր ուսմունքի մարտիրոսարան:

Նրանց թվում էր և Հայաստանը:

I

Հին աշխարհի կրոնական հասկացողության մեջ եթե կար մի պաշտամունք, որ սկզբից ևեթ առաջնակարգ տեղ էր բռնել և ընդհանուր հռչակ վայելում, այդ զուգակից աստվածության գաղափարն էր:

Բնության մեջ ամենից մեծ և խորհրդավոր երևույթը մանավանդ նախնի մարդու աչքում առնացի և կանացի սկզբունքն էր և նրանից բխած բեղմնավորությունն ու համատարած բարիքը: Այդ սկզբունքի մարմնացումը կազմում է հին կրոնական պանթեոնի կենտրոնը:

Տոտեմական շրջանում բեղմնավորության սկզբունքը հավանորեն հանդես է գալիս կենդանական կերպարանքով, այս կամ այն կենդանու, գազանի, սողունի և կամ թռչունի նմանություն ստանալով: Հետո է, որ այր և կնոջ պատկերով է ներկայանում, հաստամարմին և բազմաստիճ կին և երիտասարդ գեղանի այր: Առաջինը պատկերացնում է նաև մայր-երկիրը, իսկ երկրորդը՝ կայծակնահար երկինքը: Նրանց հանդիպումի և միավորության վայրերն են ամպերի մեջ թաղված բարձր լեռների գագաթները, ուր կարծես երկինքը իրոք իջնում է մոտենում երկրին և նրան բեղմնավորում է խոնավությամբ, հորդ անձրևներով և կյանքի կոչում կանաչագեղ բնությունը ձմռան մահացությունից:

Միևնույն պաշտամունքը տեսակ-տեսակ արտահայտությամբ ծանոթ էր հին քաղաքակրթության, սկսած Նեղոսի ափերից մինչև Սև ծովը ու Բաբելոնից Եգեական աշխարհը: Տեղի և ժամանակի համեմատ փոխվում էր անունը, բայց էությունը մնում էր նույնը: Ամենից հայտնի անուններն են՝ Իշտար և Թամուզ Միջագետքում, Աստարտե և Ադոնիս Ասորիքում, Իզիս և

Օզիրիս Եգիպտոսում, Կիբելե (կամ Կիբել) և Ատիս Փոքր Ասիայում, և եգեական-հունական դիցաբանության բազմաթիվ աստվածները Ռեայից մինչև Արիադնե և Զևսից մինչև Դիոնիսոս:

Բազմատեսակ են աղուները մանավանդ Փոքր Ասիայում: Մեր նպատակից դուրս է կանգ առնել աղուների և կամ զուգորդ աստվածությանց վերաբերյալ առասպելների վրա: Մեզ հետաքրքրողը նրանց պաշտամունքն է այն ձևով, ինչպես ընդունված էր քրիստոնեության նախօրյակին դրացի երկրներում, գլխավորապես Փոքր Ասիայում և Ասորիքում: Պետք կա հիշելու Փոքր Ասիայի Կիբելե և Ատիս զույգ աստվածության դիցաբանական ծագումը, որպեսզի հասկանալի դառնա նրանց պաշտամունքի ծեսերը:

Կիբելեն մի հրեշավոր արարած էր սկզբում, երկսեռանի այր և կին միաձգամայն: Աստվածները զարհուրած կտրում են նրա առնական բաժինը և դեն ձգում: Սրանից բուսնում է մի նշենի: Շատ հնում բեղմնավորության ուժը ներկայացնում էր ցուլը, հետագայում նա արտահայտվում էր կնոջ կերպարանքով: Թերևս այս հանգամանքն է պատճառը, որ Կիբելեն երկսեռ հրեշ է: Հին հիշողության արձագանք:

Երբ նշենին աճում է և պտուղ է տալիս, Սանգար գետի աղջիկը մի օր մի նուշ է քաղում ծառից և պահում իր ծոցում: Նշից հղիանում է և ծնում մի մանուկ: Մայրը ամոթից նետում է նորածին երեխային: Մի այծ խղճում է նրան և կաթ է տալիս ու մեծացնում: Դա էր Ատիսը կամ Ատտիսը:

Կիբելեն սիրահարվում է գեղանի պատանի Ատիսին: Միևնույն տղայի ազգականներն ուզում են նրան ամուսնացնել Պիսինունտի թագավորի դստեր հետ, հարսանիքի հանդեսին վրա է հասնում Կիբելեն, խանդից մղված: Ատիսը գժվում է տեղն ու տեղը և խելացնոր անդամահատում է իրեն: Նրան հետևում է Պիսինունտի արքան՝ նրա աղերը: Կիբելեն վշտացած աղերսում է Զևսին, որ իր սիրելի մարմինը անհյուծ, անեղծ պահի:

Ասում են, որ Ատիսի դժբախտությունը տեղի է ունենում փիճի ծառի տակ: Կիբելեն թաղում է նրա առնականը, որից բուսնում է մանուշակ և պատում փիճի ծառը: Զևսը կատարում է Կիբելեի խնդիրը և նրա տարփածուի մարմինը մնում է անապակ, միայն մազերն են երկարում և ճկույթն երբեմնակի շարժվում: Աստվածուհին տանում է Ատիսի մարմինն իր անծավը և այնտեղ ողրում նրա կորուստը:

Առասպելը Կիբելեի բախտը կապում է Ատիսի հետ: Երկուսի հարաբերությունը նույն կարգի է, ինչ որ Հաթյան հիշատակարանների պատկերները, մայր աստվածուհին և այր աստվածը կանգնած մի մի ինձի մեջքի վրա: Այր աստվածը հավանորեն Տիշուպն է, որի զուգորդն է անկասկած և մեր Ատիսը:

Գուցե սկզբում Ատիսը անջատ գոյություն է ունեցել իբրև ուրույն աստվածություն, անկախ և օտար աստվածուհուն: Թվում է թե Ատիսը նախապես լուսնի աստվածությունն է եղել և ժամանակի ընթացքում ձուլվել է Տիշուպի հետ իբր ընկեր և սիրելի մայր երկրի աստվածուհուն: Ինչպես և եղած լինի, նրա շաղկապը աստվածուհու հետ անտարակույս է: Այս շաղկապի իմաստը և խորհուրդը միակերպ է բացատրվում հին և արդի գիտնականների կողմից:

Երիտասարդ աստվածը կենդանի բնության և առանձնապես բուսականության մարմնացումն է: Ինչպես որ բույսը ծլում է հողից, այնպես էլ Ատիսը ծնունդ է առնում մայր աստվածուհուց, մայր երկրից: Ամառվա խորշակը խանձում, սպանում է բուսականությունը դեռ ատոքության չհասած, այնպես էլ Ատիսը մեռնում է կորցնելով իր առնական զորությունը: Բայց նրա մահը ընդմիշտ չէ: Սառնաշունչ ձմեռվա օրերն անցնում են, գալիս է գարունը, և բնությունը վերստին զարդարվում է կանաչ պճրանքով:

Ատիսի մահը նմանապես ժամանակավոր է համարվում. գարնանամուտի գեղածիծաղ օրը հարություն է առնում, որ հետո դարձյալ մեռնի: Այսպես բնության փթիթն ու մահն իր անշեղ հաջորդականությամբ մարմնանում է գեղանի Ատիսի դարևոր մահով և հարությամբ: Ատիսը մի հին փիլիսոփայի խոսքով «գարնանային երեսն է երկրի, կամ երեսի ծաղիկը»:

Բնության աստվածացումը բնականորեն լծորդվելու էր մի շարք արարողությանց հետ, որոնց ամբողջությունը կազմում է Ատիսի տոնախմբությունը: Նվիրական հանդեսները տեղի էին ունենում մարտի 22-ից մինչև 27-ը և իրենց գլխավոր կետերով ոչ այլ ինչ են, եթե ոչ զատկական տոների նախագիծ:

Տոները սկսվում էին իսկապես մարտի 16-ից պահքի և ապաշխարության շաբաթով, որոնք կոչվում էին մաքրության կամ սրբության օրեր:

Ապաշխարության օրերը պատրաստելու էին հավատացյալներին առաջիկա մեծ տոնի համար, որ բացվում էր մարտի 22-ին: Այդ օրը կոչվում էր **Ծառամուտ**, **Arbor intrat,** կամ՝ **Ծառաբեր:** Փիճի ծառի հիշատակն էր, որի տակ տեղի էր ունեցել Ատիսի դժբախտությունը կամ, ավելի հավանական մեկնությամբ, փիճի ծառը ներկայացնում էր հենց իրեն Ատիսին, նրա պատկերացումն էր:

Առավոտյան վաղ արևից առաջ գնում էին սրբազան անտառը, որ նվիրված էր աստվածուհուն, և կտրում էին մի ծառ առանձին ծիսակատարությամբ: Ծառը պետք է լիներ բազմաճյուղ, որը զարդարում էին մանուշակով և ծիրանի շորի պատառներով, ի հիշատակ այն հանդերձանքի, որով Կիբելեն խնամել էր Ատիսի վերքը: Ծառի ճյուղերից կախում էին հովվական ցուպ, սրինգ, թմբուկ և ծնծղա (պղնձե ափսե), որոնք

համարվում էին Ատիսի խորհրդանիշերը: Այնուհետև մեծ շուքով հուղարկավորում էին ծառը մինչև տաճարը լաց ու կոծով և հուզիչ եռաժշտությամբ, ուր և ցուցադրում էին հավատացյալների երկրպագության համար:

Հանդեսի երրորդ օրը մարտի 24-ին, տոնում էին ծառի, որ է Ատիսի, թաղումը: Հին պարսիկներ հավատում էին, որ մեռելի հոգին երեք օր մնում է անշնչացած մարմնի մոտ: Հին քրակացիների մոտ ևս ընդունված էր հանգուցյալին երեք օր պահել, հետո թաղել: Երեքօրյա հսկման ծագումն, անշուշտ, այս հավատալիքն է:

Գերեզմանում ծառը պահում էին մինչև հետևյալ տարին և հետո հանում և այրում էին խարույկի վրա: Թաղման գիշերը սահմանված էր **հսկում**, որին պատրաստվում էին ապաշխարությամբ և ծոմով և որն էր Ատիսի հարության նավակատիքը: Կես գիշերին քրմապետը հանդիսավոր կերպով հայտարարում էր, որ Ատիսը «հարյավ ի մեռելոց և ներկա է տաճարում»: Արևագալին կատարվում էր մեծ պաշտոն, որ կոչվում էր աստվածային ներկայության պատարագ: Արարողությունը խիստ փառավոր էր. շքեղ անկողնու մեջ պառկած հանգչում էր հարյալ աստվածը Կիբելեի պատկերի առաջ: Ամբողջ գիշերն երգում էին, ճրագներ վառած, և կոչ անում Ատիսին: Հանկարծ լույսը հանգցնում էին և վայրկենական մթության մեջ տաճարի խորունկում առկայծում էր մի ճրագ: Այդ նշան էր Ատիսի հարության:

Քահանայապետը օրհնում էր ժողովուրդը, օծելով հանդիսականների կոկորդը, և հռչակում մեծ խորհուրդ, մեծ ավետիք՝ մահվան պարտությունը և կյանքի հաղթանակը: Երջանկություն էր խոստանում նրանց, որոնք հավատում են Ատիսին: Ցած ձայնով հանդարտորեն արտասանում էր քուրմը պաշտամունքի խորհրդավոր խոսքերը. **«արիացե՛ք, ժողովուրդ, աստված փրկվեց, մենք ևս փրկվելու ենք տանջանքներից»:**

Հաջորդ օրը, մարտի 25, գարնանամուտ է. օրերը սկսում են երկարել, գիշերները կարճանալ: Բնությունը զարթնում է ձմռան քնից, դաշտ և ձոր ծաղկում ծածկվում են կանաչավետ գորգով: Այդ օրը աստվածային զույգի Կիբելեի և նրա վերակենդան որդու և սիրելիի **ցնծության** տոնն է: Երկուսին էլ զոհ են մատուցանում, նրանց պատկերները շրջեցնում թափորով և երգելով. **«հարյավ Ատիսը, ուրախ լեր փեսայդ, ուրախ լեր նոր լույս»**:

Այդ օրը ոչ միայն Ատիսի հարության տոնն է, այլ և նրա և Կիբելեի սրբամուսնության: Ի պատիվ փեսային ճրագալույց էր: Ջահակիրները՝ մոմեր և ջահեր բռնած երգում են, ինչպես հարսանեկան հանդեսներին, և աղաղակում՝ **«աղջույն փեսայիդ»:** Տղայք և դեռատի աղջիկներ ճերմակ հագուստով սփռում են ծաղիկներ: Պարեցիկ խումբը պարում է, այր և կանայք թագով զարդարված, դիմակ հագած, կայթում ցնծում են տոնելով սրբազան պսակը: Աստվածուհին շրջապատված է **կորիբանտներով**,

ինչպես մեր հարս թագուհին մակարներով: Հանդեսը վերջանում է մեծ խնջույքով:

Մարտի 26 համարվում էր հանգստյան օր: Նույն ամսվա 27 լվացման օր: Աստվածուհու պատկերը հանդիսավոր թափորով տանում էին և ձգում ջուրը, աղբյուրի կամ գետի մեջ:

Սրանով վերջանում են հանդեսները: Այնուհետև սկսվում է նոր հավատացյալների ընդունելությունն ու մկրտությունը:

Հայտնի է, որ առաջին քրիստոնյաները նույնպես Ջատկի գիշերը նորահավատների մկրտություն էին կատարում: Ատիսի հավատացյալների մկրտությունը լինում էր ջուր ածելով նորահավատի գլխին, կամ **ալյուր, թևի** թափելով և կամ մատաղի, գլխավորապես Ատիսին նվիրված խոյի, **արյունը** սրսկելով և վերջապես **հրով**:

Դժվար չէ նկատել, որ նկարագրածս հանդեսներն ու արարողությունները զարմանալի նմանություն ունին զատկական տոներին: Մեծ պասը, Ծաղկազարդը, ավելի ճիշտ՝ Ծառզարդարը, ինչպես ժողովուրդն է ասում, Ավագ շաբաթվա հանդեսները, կարծես, իրենց նախատիպն ունին Ատիսյան արարողությանց մեջ: Նմանությունը դիպվածական չէ:

Քրիստոնեական եկեղեցին իր ներքին կազմը մշակելիս համակերպվել է արդեն հնուց արմատացած սովորույթներին և գրեթե ողջովին յուրացրել է հանգչող պաշտամունքների ժառանգությունը: Ատիսի և Կիբելեի երկրպագության արարողությունները պատրաստի անոթներ էին ընդունելու և պահելու քրիստոնեական նոր գինին: Բավական էր փոխարինել հեթանոս անունները Տիրամոր և Աստվածորդու անուններով և հին ծեսերը կարող էին հարատևել նոր շնչով:

Կրոնի հաջողությունը միմիայն ներքին արժեքից չէ կախված, այլ և նրա արտահայտության արտաքին ձևերից: Քրիստոսի կյանքն ու քարոզը ավելի հասկանալի պիտի լիներ այնտեղ, ուր ընդունված էր Ատիսի պաշտամունքը, քան մի ուրիշ կրոնական միջավայրում:

Ճշմարիտ կլիներ և հակառակ ենթադրությունը. ուր քրիստոնեությունը դյուրին մուտ է ունեցել, այնտեղ հավանորեն ծանոթ է եղել աստվածային զույգի պաշտամունքը:

Արդ, Հայաստանը լինելով մեկն այն երկրներից, որ հեշտությամբ ընդունել է Քրիստոսի թեթև լուծը, պետք է կարծել, որ նրա կրոնական հողը ևս խորթ չէ եղել Ատիսյան պաշտամունքի ծաղիկներին:

Արդարև, կան երևույթներ, որ հաստատում են այս ենթադրությունը: Խնդիրը հարկավ այն չէ միայն, որ հայ եկեղեցական արարողությանց մեջ նկատելի են այնպիսի ուրույն գծեր, որոնք հեթանոս պաշտամունքի

հնարավոր շողերն են: Կան և այլ կարգի նյութեր, թեև հատուկտոր, բայց բացորոշ, որոնց թվում հիշելու է նախ Դիորփոսի առասպելը:

Վերև հիշված առասպելը Ատիսի և Կիբելեի մասին շատ և բազմատեսակ հեղվածներ (version) ունի: Հիշենք միայն այն, որ ըստ մի հեղվածի, որ պահված է Պավսանիասի մոտ և ծագում է ավելի հին հեղինակից, Զևսը քնած ժամանակ սերմնակաթ է լինում, որից ծնում է երկիրը հրեշավոր Ագդիստիսին, Ատիսի մորը:

Արնոբիոս քրիստոնյա հեղինակը, որ ապրում էր երրորդ դարի վերջերը և չորրորդի սկիզբները, մերձ 305 թվին գրված Adv. Gentes V, 5 աշխատության մեջ ծաղրանքով մեջ է բերում նույն առասպելի մի այլ հեղվածը: Այն ժայռը, որի վրա ննջում է Զևսը, նրա ասելով, կոչվում էր Ագդոս: Օլիմպոսի մեծ աստվածը, տոփանքից բռնված, միավորվում է այդ ժայռի հետ և նրանից ծնվում է Ագդիստիս:

Արդ, այսպիսի մի առասպել ծանոթ է եղել հնում և՛ հայերին: Կեղծ Պլուտարքոսը, «De Fluviis» գործի մեջ Արաքսի մասին խոսած ատենը բերում է հետևյալ դիցաբանական զրույցը:

«Արաքսին հարում է մի սար, որ կոչվում է Դիորփոս և որ իր անունը ստացել է երկրի որդի Դիորփոսից: Սրա մասին այսպիսի մի պատմություն են անում: Միհրը ցանկանում էր զավակ ունենալ, բայց որովհետև ատում էր կանացի սեռը, ուստի գրկախառնվում է մի ժայռի հետ: Ժայռը հղիանում է և սահմանված ժամանակը լրանալուց հետո ծնում է մի մանուկ, անունը Դիորփոս: Սա մեծանում է և կռվի է կանչում Արեսին հանուն առաքինության և սպանվում: Աստվածների որոշմամբ Դիորփոսը կերպարանափոխվում է համանուն լերան»:

Որքան և շինծու, անվստահելի լինին Կեղծ-Պլուտարքոսի հերյուրանքը, մտացածին զրույցները, բայց և այնպես պետք է ենթադրել, որ մի որոշ կռվան ունենալու էր շրջուն դիցաբանական կամ ժողովրդական բանահյուսության մեջ, այնպիսի զարմանալի առասպելներ հորինելու համար: Դիորփոսի զրույցը համենայն դեպս իրական հող ունի: Փոքրասիական տարածված առասպելների հայ հեղվածն է Ատիսի մասին: Զևսի փոխարեն երևան է գալիս բնականորեն Միհրը, հին ավելի ժողովրդական աստվածությունը: Դիորփոսը **«երկրածին»** է կոչվում, նրա մայրը ժայռն է:

Տեսանք, որ այսպիսի ծնունդ ուներ մայր աստվածուհին Ագդիստիսը կամ Կիբելեն: Հավանորեն հայերին ևս ծանոթ է եղել, որ Դիորփոսը Ատիսի նման ծնունդ է ունեցել:

Պլուտարքոսը տարաբախտաբար միայն առասպելի ստվերն է մեզ պահել, շփոթ գծերով: Դիորփոսի մրցումը Արեսի հետ, նրա նահատակումը առաքինության համար ձուլում է նրան գրեթե Արա Գեղեցիկի հետ:

Դիորփոսը փոխվում է լերան ճիշտ այնպես, ինչպես Շամիրամը քար է կտրում Մովսես Խորենացու ասելով: Այստեղ ևս Դիորփոսին է վերագրված ինչ որ պատկանում է նրա մորը:

Գիտենք, որ Կիբելեի բազմաթիվ մակդիրներից միևն է «լեռնական մայր», լեռնաբնակի իմաստով: Մայր աստվածուհին գերադասում էր ապրել լեռների բարձունքում, նրա սրբավայրը քարանձավներն էին: Հինները կարծում էին, որ նրա Կիբելե անունն իսկ քարանձավ է նշանակում:

Կեղծ-Պլուտարքոսի ավանդած հնության պատառը ամեն պարագային մի բան է ապացուցանում որոշակի, որ Փոքր Ասիայի կրոնական երկինքը հարազատ և ընտանի է եղել և՛ հայ միջավայրում: Այս մի գաղափարական օղակ է, որ կապում է հայերին արևմտյան հարևանների հետ:

Սակայն մեզ հետաքրքրող պաշտամունքը միայն արևմուտքի սեփականություն չէր: Նա ընդունված էր ամբողջ Առաջավոր Ասիայում, ուրեմն, ոչ միայն Հայաստանից արևմուտք, այլ և հարավ՝ Ասորիքի և Միջագետքի քաղաքակրթության աշխարհում: Նույն պաշտամունքն այստեղ իր ուրույն գունավորումն ուներ: Հայաստանը, մանավանդ նրա այն մասերը, որոնք աշխարհագրապես կախված են Միջագետքի հարթության վրա, խնամի էին նրան նաև կրոնական սերտությամբ:

Այդ սերտության արդյունք են համարում Արա-Շամիրամի պատմությունը:

Արա Գեղեցիկի պատմությունը իրոք մի առասպել է, կրոնական մտայնության մի բեկոր մեզ զբաղեցնող սրբության տաճարում: Ասել է թե հին պաշտամունքի հայ տեսակավորումն է:

Մեր ժողովրդի մեջ տակավին կենդանի են Արա-Շամիրամյան զրույցի հետքերը: Բայց վստահ չենք, որ դրանք գրական հետադարձ ազդեցության արդյունք չեն: Ավելի ապահով ենք համարում այն, ինչ որ ավանդված է մեզ հնությունից:

Արայի պատմությունը հանրածանոթ է: Շամիրամը Ասորեստանի թագուհին է: Վավաշոտ և գեղխ՝ ամուսնու մահից հետո մարդ է ուղարկում Արային և առաջարկում գալ Նինվե և կնության առնել իրան, տիրանալով Նինվեի գահին:

Արան Հայաստանի թագավորն է: Նա գեղեցիկ է. «Ի բազմաց լուեալ զգեղեցկութենէ նորա, առաքէ հրեշտակս առ Արայն Գեղեցիկ»:

Արան ողջախոհությամբ մերժում է: Շամիրամը պատերազմ է սկսում, կամենալով բռնի հասնել իր նպատակին: Արան ընկնում է կռվի դաշտում: Շամիրամը վերցնում է նրա դիակը և դնում «ի վերնատանն ապարանից», հուսալով, որ նա պիտի կենդանանա: «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա եւ կենդանասցի», հայտարարում է թագուհին: Պատմագիրն

ավելացնում է, որ հույս ուներ կենդանացնել «դիւթութեամբ վիկութեան»: Երբ մարմինը նեխում է, Շամիրամը թաղում է և «զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ, համբաւէ զնմանէ այսպէս. լիզեալ աստուածոց զԱրայ եւ կենդանացուցեալ լցին զփափաք մեր եւ զհեշտութիւն»:

Այս առթիվ Շամիրամը «կանգնէ եւ նոր իմն պատկեր յանուն դիւաց և մեծապէս զոհիւք պատուէ»: Նոր պատկերը, հավանորեն, Արայինն է և ուրեմն նրա աստված լինելուն բացարձակ ակնարկ:

Պատմվում է նաև, որ Արան ծնավ Կարդոսին: Մի ուրիշ անգամ հիշվում է, որ Արան ուներ կին՝ Նուարդ անունով, և նրանից մի արու զավակ 12 - ամյա: Շամիրամը նրան անվանում է Արա ի հիշատակ հոր: Այս Արան թողնում է մի զավակ, «ամենահարուստ եւ շատահանճար յիր եւ ի բան զԱնուշաւանն որ Սօս անուանիւր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի Սօսիսն Արամանեկայ, որ յԱրմաւիր»:

Ինչպես ասացինք, այս պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հին դիցաբանության մի նշխար: Հիմնական իմաստն է Արայի այսպես ասած մահկանացու անմահությունը, նրա մահն ու հարությունը: Անցնելով քրիստոնեական միջավայրից, առասպելը հասկանալի փոփոխություն է կրել: Արայի հարությունը կասկածի է ենթարկված, որով մարմինը նեխվում է և ոչ թե վերակենդանանում: Շամիրամ ինքը մի կախարդ է, Արայի հարությունը՝ վիկություն: Սակայն, այն կոչը, թե աստվածները լիզել են վերքերը և ողջացրել, մատնում է պատմվածի նախնի բուն ոգին, որ մեռած Արան իրոք հարություն է առել:

Արայի որդին ևս նույն անունն է կրում, հարուցյալ Արայի արձագանքն է: Սրա որդին կոչվում է Անուշավան, որ սղումն է Անուշռվան բառի, որ ասել է «անմահ ոգի»: Այս ևս մի ակնարկ է Արայի անմահության, իբր հետևանք հարության: Անուշավանը ձոնված է սոսիների պաշտամանց. սրանով մերկանում է Արայի սքողված էությունը: Նա սոսկ թագավոր չէ, այլ և նվիրական պատկեր, կրոնական մեծություն:

Արայի և Շամիրամի անվան տակ թաքնված են երկու հնագույն աստվածներ, որոնք երկայն ճանապարհ են անցել մինչև թագավոր և թագուհի դառնալը և ոլոր մոլոր հետքեր են թողել անցած ճանապարհի վրա, որ պետք ունին հետազոտության և լուսաբանության:

Խորենացու խստասիրտ քննադատը, հանգուցյալ պրոֆեսոր Գր. Խալաթյանցն իր կասկածամտությամբ այնքան հեռու գնաց, որ չէր ուզում հավատ ընծայել Պատմահոր խոսքերին, թե՝ Արայի և Շամիրամի զրույցը քաղել է գրավոր աղբյուրից և թե՝ հայ առասպելները արդարացնում են նրա ասածները: Ամբողջ զրույցը չինծու, մի տեսակ գրական հերյուրանք էր

համարում նույն գիտնականը (1): Ծերունի պատմաբանը (2) գիտենալով Դիոդորոսից, որ Շամիրամի մասին անթիվ պատմվածներ են եղել Արևելքում (3), իբր թե իրեն իրավունք է համարել ստեղծել նաև հայ մտացածին տարբերակը:

Որքան և մեղավոր լինի Խորենացին, այս կետում ճշմարտության դեմ մեղանչողը նրա քննադատն է: Հույն պատմագրի վկայությունն ավելի հոգուտ Խորենացու է, քան նրա դեմ: Եթե Շամիրամի զրույցները տարածված են եղել Արևելքում, Հայաստանը ևս կարող էր հաղորդ լինել նույն զրույցներին:

Շամիրամի առասպելի հնագույն և Խորենացուն անծանոթ հյուսվածքը, ինչպես կտեսնենք, ցարդ կենդանի է մեր ժողովրդյան հիշողության մեջ: Որ Շամիրամի անունը և նրան փարած զրույցներն ընտանի են եղել հայ աշխարհում, այդ երևում է, ի միջի այլոց, հետևյալ վավերագրից, որ սպրդել է հիշյալ գիտնականի ուշադրությունից, և որ կարևոր է մեր նպատակի համար:

1893 թվին, ուղիղ երեք տարի առաջ Խալաթյանցի մեղադրական աշխատությունից, գերմանացի գիտնական Վիլքենը հրատարակեց «Հերմես» հանդեսում մի ուշագրավ հոդված «Նոր հույն վեպ» վերնագրով[1]:

Բեռլինի պապիրուսների ժողովածուն քննելիս հիշյալ գիտնականը երևան հանեց մի սիրային վեպ, որի հերոսն է Ասորեստանի թագավոր Նինոսը: Թերթերը, դժբախտաբար, շատ մաշված են, գրեթե կեսը պակաս: Ընթեռնելի մասի բովանդակությունն այս է:

Նինոսը գրեթե պատանի, 17 տարեկան, սիրահարված է իր մորաքրոջ աղջկան, որ ավելի նորատի, 13 տարեկան է: Երկուսի մայրերը, ուրեմն, հարազատ քույրեր են: Նինոսի մոր անունը Թամբե է, իսկ նրա տարփածուի մոր՝ Դարկիա: Նինոսը գանգատվում է իր մորաքրոջ Դարկիային, որ իրեն չեն թողնում ամուսնանալ միայն նրա համար, որ հարսը տակավին մանկահասակ է, 13 տարեկան, և պետք է սպասել ևս երկու տարի:

Աղջիկն իր կողմից ուզում է խոսել, գուցե բացատրել իր վիշտը Թամբեին, իր մորաքրոջը, բայց կարմրում է ամոթխածությունից և չի կարողանում բերանը բաց անել:

Մայրերը խորհրդակցում են միասին: Արդյունքը հայտնի չէ բնագրի եղծմամբ:

Այնուհետև նկարագրվում է Նինոսի պատրաստությունը արշավելու Հայաստան: Մեծ զորք է հավաքում հելլեններից, կարիացիներից և ասորեստանցիներից, 70 հազար հետևակ, 30 հազար այրուձի և 150 փիղ: Նինոսը կտրում անցնում է սար ու ձոր, հորդահոս գետեր ոչ առանց

[1] **Wilcken**, Ein neuer Griechisaher Roman, «Hermes», 28, 161 193

դժվարության և բանակ է զարկում մի դաշտում: Տասնօրյա հանգստից հետո սկսվում է կռիվը: Այստեղ ընդհատվում է ձեռագիրը:

Վեպի հանգույցն այնպես պիտի հասկանալ, որ Նինոսը չի կարողանում իր սիրույն հասնել, որովհետև աղջիկը դեռ անչափահաս է: Ստիպված արշավում է Հայաստան, որպեսզի կռվի մեջ անցնե երկու տարին, մինչև որ հարսի օրինական հասակը լրանա: Գիտնական հրատարակիչը խոստովանում է, որ վեպի հանգույցը եթե այս է, բավականին անհեթեթ է:

Սակայն թվում է, թե այլ կերպ է հասկանալու արշավանքի շարժառիթը: Հիշենք, որ աղջիկն ուզում է սիրտը բանալ իր մորաքրոջ առաջ, բայց չի հանդգնում, քաշվում է: Արդյոք պատճառը կուսական պարկեշտությո՞ւնն է, թե՞ ասելիքի անախորժությունը, որ հետ է կասեցնում նրան մորաքրոջ հետ խոսելուց: Թամբեի նկատողությունը՝ «չլինի թե վատաբանես իմ որդուն» միանգամայն պարզում է, թե ինչո՞ւ աղջիկը սիրտ չի անում մորաքրոջ հետ խոսել: Պատճառն այն է, որ աղջիկը չի սիրում Նինոսին, նրա սիրո առարկան ուրիշ ոմն է: Բնական է, որ դժվար է այսպիսի անախորժ խոստովանություն անել տղայի մորը Թամբեին, ուստի և նա կարմրում է և լռում:

Արշավանքի ուղղությունը ապացույց է, որ աղջկա սերը ուրիշ տեղ էր, Հայաստանում: Նինոսը զորահավաք է անում, որ գնա և ոչնչացնի իր ախոյանին: Ուշադրության արժանի է, որ նույն հիշատակարանի աղճատված թերթերը պահել են մի տեղ **ο Էրոս** ընթերցումը, որից քանի մի տող հետո հիշվում է **Արմենի**: Ուրեմն ախոյանը ոչ միայն հայոց թագավորն է թվում, այլ և հավանորեն ինքն Արան, որի անունը տեղի է տված և նույնացած քաջահայտ Էրոսին: Ինչո՞ւ են հայերը զայրացած կամ կատաղած: Դժբախտաբար, հիշատակարանը թերատ լինելով, հարցիս պատասխանը մնում է անհայտ:

Պապիրուսի սիրավեպը շատ նման է Արա-Շամիրամի պատմության: Հերոսուհին, Դարկիայի աղջիկը ուրիշ չէ, եթե ոչ նույն Շամիրամը, ինչպես կտեսնենք ստորև: Տարբերությունն այն է, որ պատերազմը մղում է ոչ թե Շամիրամը, այլ Նինոսը: Բայց որ Շամիրամը մոլված է սիրով դեպի Հայոց թագավորը, այս կարևոր կետում սիրավեպը համերաշխ է հայոց ավանդության հետ:

Կարծում ենք, որ սրանով Խալաթյանցի կասկածները տապալվում են: Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմությունը գրական հերյուրանք չէ, այլ զուտ ժողովրդական զրույց: Որ Շամիրամի շուրջը շատ ավանդություններ և առասպելներ են եղել, այդ երևում է Պատմահոր հակիրճ ակնարկներից: Հայ առասպելը գիտեր «զմահ Շամիրամայ եւ զհետեւակ փախուստն եւ զպասքումն եւ զիղձս ջրոյն եւ զարբումն, այլ եւ ի մօտ հասանել

սուսերաւորաց եւ զյուռութսն ի ծով եւ բան ի նմանէ՝ **Ուղուք Շամիրամայ ի ծով»**:

Սիրավեպի թերթերից մեկի վրա կարդացվում է Տրայանոս կայսեր անունը: Վիլքենը կարծում է, որ պապիրուսը գրված է ոչ ուշ քան առաջին դարը նախքան Քրիստոս:

Զրույցը, անշուշտ, ավելի հին է. նրա սաղմը առասպելական ծագումն ունի և սկիզբը թաղված է հեռավոր անցյալի մթության մեջ: Որպեսզի կարելի լինի մաքրել կրոնական սաղմը հետագա ավելած կցանքից և պարզել հերոսների էությունը և ընդհանրապես հասկանալ զրույցի իմաստը, անհրաժեշտ է նախապես ծանոթանալ Շամիրամյան առասպելների մյուս զանակներին (վարիանտ):

Հին դասական գրականության մեջ Շամիրամին բախտակից է Նինոսը:

Գրեթե բոլոր հին հեղինակները, որոնք հետաքրքրվել են արևելյան պատմությամբ, հիշում են Նինոս-Շամիրամյան զրույցն այս կամ այն չափով: Նրանց սկզբնական աղբյուրն է Կտեսիասը: Սա պարսից Արտաշես թագավորի (4) դռան բժիշկն էր (395) և մոտիկ ծանոթ էր ժամանակակից ժողովրդական զրույցներին: Գրի է առել ի միջի այլոց և Շամիրամի ու Նինոսի վերաբերյալ զրուցախառն պատմությունը, բայց նրա երկը մեզ չի հասել: Նրանից օգտվել են հետագա պատմագիրները, քաղելով կարևոր կտորներ, որոնց միջոցով կարելի է վերականգնել կորած բնագիրը: Առանձնապես հարգի են Դիոդորոս Սիկիլիացու քաղվածները, որոնք այսպես են ներկայացնում Շամիրամի առասպելը:

Շամիրամը Ասորիքի Ասկալոն քաղաքի Դերկետո աստվածուհու դուստրն էր: Քաղաքից ոչ հեռու կար մի մեծ և խոր լիճ, լի ձկներով: Սրա ափին էր գտնվում հոչակավոր տաճարը, նվիրված աստվածուհուն, «որին ասորիները անվանում էին Դերկետո և որի դեմքը կնոջ նման էր, իսկ մնացյալ մասը՝ ձկան»:

Դերկետոյի մասին առասպելաբանում էին, որ Ափրոդիտեին վիրավորած լինելով, պատժվում է վերջինիս կողմից նորանով, որ սիրահարվում է մի երիտասարդի և նրանից ունենում է մի աղջիկ երեխա: Դերկետոն ամոթահար ձգում է մանկան մի քարոտ և անապատ տեղ, և ինքը հուսահատ ընկնում է լիճը և դառնում ձուկ: Այդ պատճառով ասորացիք ցարդ ձուկ չեն ուտում և աստուծո տեղ են պաշտում:

Ընկեցիկ երեխային շրջապատում են աղավնիները, սնում և խնամում են նրան: Որը թևերով պաշտպանում է քնքույշ մարմինը, որը հարևան հովիվներից կաթնեղեն է բերում և կերակրում: Հովիվներից մեկը պատահմամբ նկատում է երեխային, վերցնում տալիս է արքունի ախոռապետին, որի անունով կոչվում է Սեմիրամիս, որ ասորական բարբառով

նշանակում է աղավնի: Այդ ժամանակից ասորիները սկսում են պաշտել աղավնուն իբր աստուծո:

Աղջիկն արդեն չափահաս էր, երբ մի անգամ Նինոս թագավորի մերձավորներից մեկը, այցի գալով ախոռապետին, տեսնում է աղջկան և զմայլում նրա գեղեցկությամբ: Նրա անունն էր Օննի(ես), թագավորի առաջին խորհրդականը և Ասորիքի հրամանատարը: Սա խնդրում է ախոռապետին և նրա համաձայնությամբ առնում է Շամիրամին կնության: Այս զույգից ծնվում է երկու զավակ, Հյուպատ(ես) և Հյուգասպ(ես):

Նինոս թագավորը, արշավելով Բակտրիայի վրա, տանում է հետը նաև Օննեսին: Պատերազմը երկարում է, Օննեսը ստիպված է բերել տալ իր կնոջը՝ Շամիրամին: Սա ճանապարհ է ընկնում ամուսնու մոտ, տղայի շոր հագած, որ չիմանան, թե նա կին է: Բանակ հասնելով՝ Շամիրամը օգնում է պաշարված քաղաքի առման:

Նինոս թագավորը, հիացած Շամիրամի գեղեցկությունից և խելքից, թախանձում է ամուսնուն, որ հոժարի զիջանալ իր կնոջը, որի փոխարեն արքան խոստանում է տալ նրան իր հարազատ դուստր Շուշանը:

Օննեսը անզոր է ընդդիմանալ իր պետի ցանկության: Ակամա, հրաժարվում է կնոջից, բայց վշտից դառնացած խելագարվում է և ինքնասպան լինում[1]:

Աբենագորաս, որ ապրում էր երկրորդ դարի վերջին, հեթանոսությունը ծաղրելու համար հիշում է օգտվելով Կտեսիասից, որ «ասորիները պաշտում էին Դերկետոյին, աղավնուն և Շամիրամին և, որ վերջինս մահից հետո աղավնի է դարձել»[2]:

Հետագա հույն և լատին մատենագիրները Ալեքսանդր Պոլիհիստորից (Բազմավեպից) սկսած մինչև Սինկելլոս կրկնում են սույն պատմությունը քաղվածորեն, օգտվելով ուղղակի կամ չեղակի Կտեսիասից կամ Դիոդորոսից:

Արդ Դերկետո աստվածուհին նույնն է, ինչ որ սիրավեպի Դարկիան, որ նույն անվան փաղաքշական կրճատումն է: Սրա աղջիկն է, որ գրավում է Նինոսի սերը: Անունը վեպի մեջ չէ հիշված, բայց Դիոդորոսի զրույցից երևում է, որ նա ինքը՝ Շամիրամն է, Դարկիայի աղջիկը:

Դերկետոյի ավելի հին և լրիվ ձևն է Ատարգատես: Բավ է հիշել

---

[1] **Դիոդորոս Սիկղիացի**, II, 19:

[2] **Աբենագորաս**, 26:

Ստրաբոնի վկայությունը, թե Ատարդատ կամ Աթարա նույնն է, ինչ որ Կտեսիասն կոչում է Դերկետո[1]:

Այսպես էր կոչվում մայր աստվածուհին Հիերապոլիս քաղաքում Եփրատի ափին, ինչպես երևում է ի միջի այլոց նույն քաղաքի դրամներից, որոնցից մեկը, հատած 332 թ. ն. Ք. պահվում է Փարիզի Ազգային գրադարանում[2]:

Հռչակավոր երգիծաբան Լուկիանոսը, որ ապրում էր Քրիստոսի երկրորդ դարում, հաստատում է այն, ինչ որ գիտենք Կտեսիաս-Դիոդորոսից: «**Ցաղագս աստուածուհւոյն Ասորւոց**» գրության մեջ նա շատ կարևոր տեղեկություններ է տալիս մասնավորապես Հիերապոլիս քաղաքի նշանավոր տաճարի մասին, որ նվիրված էր մայր աստվածուհուն: Լուկիանոսը տեղացի լինելով, ծնված Կոմմագենեի Սամոսատ քաղաքում, մոտեն ծանոթ էր հայրենի պաշտամունքներին և կրոնական ավանդություններին:

Նրա ժամանակ ընդունված կարծիք էր, թե հիշյալ «սրբարանի հիմնադիրը Շամիրամն էր, որ այնքան մեծ շինություններ է թողել Ասիայում»: Տաճարը կանգնել է ի հիշատակ իր մոր, որի անունն էր Դերկետո: Հիերապոլիսի Դերկետոն ամբողջովին կանացի կերպարանք ուներ, մինչդեռ այլուր Փյունիկեում, Լուկիանոսը տեսել էր նույն Դերկետոյի արձանը զարմանալի տեսքով՝ վերին մասը կին, իսկ գոտուց ցած կատարյալ ձուկն: Դերկետո է կոչվում աստվածուհին իբր թե այն պատճառով, որ ձուկն այնտեղ սուրբ է համարվում, ինչպես և աղավնին: Իսկ սրանց սրբության պատճառը Լուկիանոսը այն է համարում, որ Դերկետոն ձկնակերպ է և Շամիրամը՝ աղավնակերպ[3]:

Այս երևույթի իմաստը հասկանալու համար, պետք է նկատել, որ ձուկն և

---

[1] **Ստրաբոն**, XVI, I, 27· **Պլինիոս**, Բնական պատմություն, V, 12:

[2] Ատարգատես կազմված է երկու զատ անուններից, Աթար և Հաթե: Առաջինը արամեական ձևն է Իշտար դիցուհու անվան, երկրորդը՝ փոքրասիական Ատիս աստուծու անունն է, հագագային սկզբնահնչյունով: Ատարգատես, ուրեմն, նշանակում է Ատիսի Իշտար, այսինքն այն Իշտարը, որի սիրելին է Ատիսը:

Այս մեկնությունը պատկանում է Թ. Նյոլդեքեին («The Syrian Goddess», **H. Strong** և **J. Gastrang**, p. 27 Իսկ Ֆրեզեր երկրորդ բաղադրյալը համարում է նույն Աթարի կիլիկյան ձևը իբր Աթեի կամ Հաթեի, ուրեմն Ատարգատես կրկնությունն է նույն անվան (Adonis, I. p. 162):

Աթարի սաբեական ձևն է Ath-tar, որից քանանեական հնչյունն է Astor, իգական մասնիկով Astor-et, որից ծագում է հունական Astarta: Հայաստանին կից Արամեական երկրներում, ինչպես Ուռհա-Եդեսիայում գործածական ձևն էր Թարաթա, Tharatha, այսինքն մեզ արդեն հայտնի Աթարա իգական մասնիկով և սկզբի ձայնավորի հապավմամբ: Խորենացին հիշում է Թարաթա ի թիվս այն կուռքերի, որ Աբգարը Եդեսիայի շինությունից հետո, իբր թե այնտեղ է տեղափոխել Մծբնից (Գիրք Բ, 27): Իր աղբյուրը Ղեբուբնան է: Այսպես ուրեմն, Դերկետո, Ատարգատես, նույն Իշտար-Աստարտե աստվածությունն է:

[3] «De dea Syria», 14.

աղավնին երբեմն ուրույն պաշտամունքի առարկա են եղել, այն ինչ որ **տոտեմ** է կոչվում: Կենդանակերպ աստվածները փոխանցման օղակներ են **տոտեմներից** դեպի մարդանման աստվածությունը: Կենդանիները, սակայն չեն անհետանում, մոռացվում, այլ հարատևում են, կառչելով նոր աստվածներին իբր խորհրդանշաններ:

Սուրբ Գրքից հայտնի է, որ փղշտացիք ունեին ձկան աստվածություն, որ կոչվում էր Դագոն[1]: Բաբելական դիցաբանության ևս ծանոթ է Օդակոն անուն էակ, որ ձկան և մարդու խառնուրդ էր: Եվսեբիոս Կեսարացու ասելով, սկզբում մարդիկ ապրում էին որպես կենդանիներ, հետո հայտնվում է Օդակոնը ծովից և սովորեցնում է մարդկանց գիր, օրենք, գիտություն և երկրագործություն, մի խոսքով, հիմն է դնում քաղաքակրթության:

Եվսեբիոսի տեղեկությունը ծագում է Բերոսից, որ Բաբելոնում քուրմ էր Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ, և գրել է իր հայրենիքի պատմությունը: Նրա երկը մեզ չի հասել, բայց նրանից օգտվել են հետագա գրողները, ինչպես Ալեքսանդր Պոլիհիստոր (Բազմավեպ), Ապոլլոդորոս: Սրանից քաղվածներ ունի Եվսեբիոսը:

Ապոլլոդորոս Աթենացին (179-110 Ք. ա.) Սինկելլոսի վկայությամբ ասում է, որ վեց ձուկ մարդ է եղել, առաջինը Օաննես(ես), մյուս չորսը Անեդոտ(ոս), և վերջինը՝ Օդակոն[2]:

Քերական Հելլադիոս մոտ 290 թվին հ. Ք. պատմում է, քաղելով անշուշտ ինչպես և Ապոլլոդորը Բերոսից, որ Օես անունով մի մարդ, մարմնով ձուկն և գլխով և ոտ ու ձեռքով՝ մարդ, դուրս է գալիս Կարմիր ծովից և ուսուցանում դպրություն և աստղաբաշխություն[3]:

Ս. Գրքի Հովնան մարգարեն, իր անունով և երեք օր ու գիշեր ձկան փորում ապրելով, դարձյալ նույն հին դիցաբանության անդրադարձումն է:

Դիոդորոսի վերև հիշված զրույցի Օննես(ես), արքայական բարձրաստիճան իշխանը և Շամիրամի ամուսինը այժմ հասկանալի պիտի լինի, որ նույն էակն է, նույն աստվածը, որ կրում է **Oes, Onnes, Oannes, Dagon, Odakon, Annedotos** անունները:

Հրեշավոր էակիս խնամությունը ձկան հետ պարզ երևում է մանավանդ Քսանթոս Լյուդացուց մեզ հասած մի առասպելից: Քսանթոսը Արտաքսերքսես թագավորի ժամանակակից էր և Հերոդոտոսից առաջ: Նրա պատմությունից միայն քաղվածներ են մնացել, նրանց թվում և մի հատված Աթենայոսի մոտ: «Մոպսոս Լյուդացին բռնում է Ատերգատին նորա Իքթյուս

---

[1] **Դատաւորք**, ԺԶ, 23; **Ա. Թագաւորութեանց**, Ե, 2-5:

[2] **Syncellos**, 71.

[3] **Photii**, Bibliotheca, 28.

որդու հետ միասին և նետում Ասկալոն լիճը, ուր ձկները կլանում են նրանց»:

Ատերգատի որդին, որ անվանված է Իքթյուս, այսինքն՝ ձուկն, անտարակույս, համազոր է մեզ ծանոթ Օննի, Դագոն և այլ անուններով հայտնի կիսաձուկն աստուծուն:

Դիոդորոսի մոտ, Օննը Շամիրամի ամուսինն է, իսկ Քսանթոսի ասելով, նա Ատերգատի որդին է:

Մենք տեսանք, որ Ատերգատ և Շամիրամ տարբեր անուններ են միևնույն աստվածուհու, որ է Իշտար կամ Աստարտե: Այսու Օննը և Իքթյուս կամ Ձուկը Իշտարի նկատմամբ և ամուսին և որդի են:

Այժմ հասկանալի պիտի լինի, թե ինչու Ատերգատը կամ Դերկետոն ձուկ աստվածության նշանակություն են ստացել: Նա յուրացրել է պարզապես իր զուգակցի հատկությունը: Ասել է թե առասպելը հյուսվել է այնպիսի ժամանակ, երբ Իշտարի լծորդը համարվում էր ջրային մեծ աստվածը Դակոնը կամ Օաննը: Ուստի և Ատերգատի և Իքթյուսի առասպելը այլ բան չէ, եթե ոչ նույն Ադոնիս-Աստարտե մի նոր հայվածք:

Թե հիրավի Դագոնը մերձ է եղել Ատարդատին իբր նոր Ադոնիս, երևում է նրանից, որ երբեմն կոչվում է «Ձևս արորի, իբրև հացահատիկների և արորի հնարողը»[1]: Սրանով նա նույնանում է Ադոնիսի հետ, որ բուսականության և մասնավորապես հացահատիկի աստված է:

Նույնացման, թվում է թե, նպաստել է մեծապես ստուգաբանական թյուր մեկնությունը, որով Դագոն հասկացվել է եբրայական **դակոն** բառի իմաստով, որ իրոք, նշանակում է հացահատիկ, մինչդեռ նա ծագում է **դակ** «ձուկ» բառից: Առաջին ստուգաբանությունը պատկանում է Փիլոն Եբրայեցուն: Ժամանակակից գիտնականներից մի քանիսը, ինչպես հեղինակավոր Սայսը, հնարավոր են գտնում պաշտպանել հին մեկնությունը և Դագոնին համարել երկրագործության աստված ի բնե:

Տեսանք, որ ծովից ելած Դագոնը սովորեցնում է մարդկանց ոչ միայն դպրության, այլ և երկրագործության արհեստը: Մարդաձուկ Դագոնը իր այս իսկ հատկությամբ, իբր վարպետ երկրագործության, կարող էր, անկախ լեզվական թեր ու դեմ հիմքերից, հանդես գալ Իշտարի լծորդի դերում: Եվդեմոս Ռոդոսցին, որ Արիստոտելի աշակերտներից էր և Թեոփրաստեսի դասընկերը, գրել է բաբելական արարչաբանության մասին, ուր ասում է, որ Բել, աշխարհիս բուն ճարտարապետը, համարվում է Առսի և Դավկեի որդին: Առսը հիշեցնում է Հելլադիոսի վերև բերած Օես, այսինքն՝ Օաննեսը: Արվեստագետները Առսը նույնացնում են Էա աստվածուհու հետ, որ ջրային անդունդի տերն էր: Այս է պատճառը, որ ձկան կերպարանքով է ներկայանում:

---

[1] **Müller**, Frag. Hist., III, 567.

Նինոսը, Բելի որդին և Սաննեսը, Բելի հայրը, երկուսն էլ Շամիրամի սիրելի լծորդներն են, որը նա ժառանգել է իր մորից Ատարգատեսից: Ուշագրավ է, որ ավելի հին Սննեսը հանդիսանում է առաջին և օրինավոր ամուսինը Շամիրամի, մինչ Նինոսը, որ ավելի կրտսեր է, միայն սիրահար է, որ բռնի խլում է նրան ամուսնուց՝ Սննեսից և պատճառ լինում վերջնիս կորստյան:

Բաբել-ասորական պանթեոնը կազմված էր զույգերից, ամեն մի այր աստված ուներ համապատասխան կանացի ընկեր: Իշտարը միակ բացառությունն էր, որ կենտ էր ի բնե: Թերևս այս նշան է, որ նա օտարամուտ, եկվոր աստվածություն է և ոչ բնիկ: Որքան ավելի էր աճում Իշտարի հեղինակությունը, այնքան առավել զորեղ աստված էր գալիս նրան լծակից լինելու: Ահա ինչու համար մի շարք վերնաբնակներ փառքի գագաթին հասած սկսում են համարվել Իշտարի, սիրո զորավոր դիցուհու, սիրահարներ: Նորանոր հոմանիները ազդում են իրենց սիրելիի վրա և փոփոխում նրան ոչ միայն անվանապես, այլ և էապես: Ատարգատեսը ոչ միայն փոխում է իր անունը, այլ և ստանում է իր ամուսնուց իբր ժառանգություն նրա ձկան նմանությունը և դառնալով Դերկետո, միևնույն ժամանակ իսկ դառնում է Չուկ աստվածուհի:

Նույն Ատարգատեսը մի այլ կերպով փոխում է իր անունը Շամիրամի, կամ ծերանալով տեղի է տալիս իր դստեր, որ առնում է Շամիրամ անունը, առնելով միևնույն ժամանակ մի նոր՝ աղավնու կերպարանք:

Ինչպես տեսանք, աղավնիներն էին, որ փրկեցին Շամիրամի կյանքը: Արքունի ախոռապետը, որ խնամեց նրան, իր անունով կոչեց Շամիրամ, որ իբրև թե նշանակում է աղավնի:

Անտարակույս, ժողովրդական ստուգաբանությամբ Շամիրամ բառը կապվում է ասորական **Su-um-ma-tu** բառի հետ, որ արդարև նշանակում է աղավնի: Նույն բառի արական ձևն է **Su-um,** վարուժան: Ախոռապետի անունը **Simma** խնամի է **Su-um**-ին:

Կ. Լեհման-Հաուպտը համեմատում է **Simma** անունը **Samams** «արեգակ» բառի հետ, թեև ախոռապետի անունը, ինչպես Դիոդորոսն է ասում, Շամիրամի անվան միջոցով թարգմանվում է աղավնի, ասել է թե **Suum, Sum** բառն է, որի իգական ձևը **Summatu** իբրև թե **Semiramis** -ի հիմն է:

Այս ստուգաբանությունը, իհարկե, հեռու է իսկությունից: Շամիրամ անունը կապ չունի աղավնի նշանակող ասորի բառի հետ և կասկածելի է նույնիսկ նրա սեմական ծագումը:

Կտեսիաս-Դիոդորոսի ստուգաբանությունը կարևոր է համենայն դեպս այն տեսակետով, որ ցույց է տալիս Շամիրամի իրական առնչությունը աղավնու հետ: Ստուգաբանը սխալվում է իբրև լեզվագետ, բայց արդար է պատմականորեն: Աղավնին անհիշատակ ժամանակներից ի վեր համար-

վում է սրբազան և այդ նշանակությունը չի կորցրել նույնիսկ քրիստոնեական մթնոլորտում: Նա Իշտարի նվիրական թռչունն է: Փոքր Ասիա, Փյունիկե և Եգեական աշխարհում աստվածուհու կավե արձանները անբաժան են աղավնու կամ աղավնակերպ գծագրություններից[1]:

Նույն Լուկիանոսի ասելով, Հիերապոլիսի տաճարում աստվածուհու արձաններից մեկն ուներ իր գագաթին ոսկի աղավնի և այս է պատճառը, որ կարծում էին թե արձանը Շամիրամինն է: Այնտեղ աղավնին համարվում էր թռչուններից ամենից հարգին և նվիրականը: Արգելված էր նրանց ձեռք տալ, խփել և կամ սպանել: Չէր կարելի նրանց դիպչել և հալածել, երբ տուն են մտնում, բույն շինում և կամ երբ կուտ են ուտում:

Մեզ հասել են նաև դրամներ, ուր աստվածային զույգերի գլխավերևը գծագրված է աղավնու նշանը:

Հունարեն **պերիստերա,** որ նշանակում է «աղավնի», սեմական փոխառություն է և կազմված է **peras-Istar** բառերից, այսինքն՝ «Իշտարի թռչուն»: Եթե ուրիշ ապացույց չունենայինք, միակ այս բառը բավական էր լուսաբանելու աղավնու և Աստարտեի փոխհարաբերությունը:

Աղավնու պաշտամունքն ևս **տոտեմական** շրջանի մնացորդ է, ինչպես Ատարգատեսի ձուկը: Վերջնիս նման նա ևս ինքնուրույն աստվածությունից փոխանցվել է աղավնակերպ էակի, որ հետագայում բավականանա խորհրդանշանի համեստ դերով:

Չկան և աղավնու սերտությունը աստվածուհու հետ հիմք է ծառայել մի առասպելի, որ դիցաբանական խառնուրդի գեղեցիկ օրինակ է: «Երկնից Եփրատ գետն է ընկնում զարմանալի մեծությամբ մի ձու, որը ձկները հանում նետում են ափը: Աղավնիները իջնում են թուխս նստում ձվի վրա, որից դուրս է գալիս Ափրոդիտեն, որ կոչվում է Ասորիքի աստվածուհի»:

Երկու սրբազան կենդանիների դերերը աստվածային պաշտամունքում խորհրդավոր կերպով հյուսված են այս առասպելի մեջ: Շամիրամը մոր կողմից ձուկ է, էությամբ աղավնի: Իր մայրը Դերկետոն ջուրն ընկնելով կերպարանափոխվում է ձկան, իսկ ինքն իր կյանքի վերջին թաքնվում է մարդկանցից և աղավնու կերպարանքով վերանում է երկինք:

Այսպիսով, Շամիրամը կրոնական աշխարհի տիրուհիներից է և Իշտար-Աստարտեի մի այլ և գրեթե անվանական տեսքը:

Սակայն անսպասելի կերպով երևան եկավ, որ առասպելական տիկինը միայն երկնքի բնակիչ չէ, այլ և երկրի վրա իր պատմական նախատիպն ունի:

---

[1] **Ed. Meyer, Roscher**, Lexicon.

Դեռ 1852 թվին անգլիական հնախույզները հին Կալախ, այժմ Նեմրութ քաղաքի ավերակներում գտան Նեբո աստուծու արձանը, կանգնած «վասն կենաց Ադադ-Նիրարի թագավորի Ասուրի և վասն կենաց Սա-ամմու-րա-մատ տիկնոջ պալատական»:

Վերջերս գերմանացի հայտնի ասորագետ Լեհման-Հաուպտը նույն ավերակներում գտավ Շամիրամի արձանը հետևյալ գրությամբ. «Արձան **Սա-ամմու-րամատ տիկնոջ արքունյաց Շամշի-Ադադի,** թագավորի աշխարհի, թագավորի Ասսուրի, **մոր Ադադ-Նիրարի** թագավորի աշխարհի, թագավորի Ասսուրի, **հարսին Սալմանասարի,** թագավորի չորից կողմանց աշխարհի»:

Առաջին արձանի գրության անորոշ դարձվածքի հիման վրա կարծում էին, որ Սամմուրամատը Ադադ-Նիրարի կինն է. Բայց երկրորդ գյուտը պարզեց, որ նա Ադադ-Նիրարի մայրն է և Շամշի-Ադադի կինը և ուրեմն սրա հոր Սալմանասարի հարսը: Սալմանասարը թագավորում էր 859-824, սրա որդին և հաջորդը Շամշի-Ադադ 824-811, և սրա որդին Ադադ-Նիրար 811-782: Շամիրամի նկատմամբ սրանք են սկեսրայր, ամուսին և որդի:

Առասպելական աշխարհակալուհին իրական պատմության մեջ ոչնչով հայտնի չէ: Ծագումով նա Բաբելոնից էր և հայրենի Նեբոյի պաշտամունքը մուծել է իր նոր ամուսնու Ասսուր քաղաքում, շինելով նրա համար առանձին տաճար և կանգնելով նրա արձանը:

Ինչպես է պատահել, որ մի համեստ պալատական կնոջ անվան շուրջը դիզվել են այնքան առասպելներ և մտացածին սխրագործություններ: Ճշմարիտ է, նա ապրում էր պատմական շատ նշանավոր դարում, երբ Ասորեստանը ճիգ էր թափում վերականգնել իր նախկին զինական հռչակը: Շամիրամի ամուսինը, սկեսրայրը և որդին անընդհատ կռիվներ էին մղում նոր և ահավոր հարևանների դեմ: Հյուսիսից սպառնում էին ուրարտական աշխարհակալները և արիական ցեղերի առաջավոր գնդերը, գլուխ ունենալով մեդացիներին:

Ասորեստանը հաջողությամբ դիմագրավեց համառ թշնամիների հարձակումներին: Արդյոք տիկին Շամիրամը որևէ մասնակցություն՞ն է ունեցել պատերազմական գործողության: Եթե անձնապես նա չի փայլել, համենայն դեպս նրա մերձավորների՝ ամուսնու և որդու պատերազմական փառքը կարող էր անցնել հետագայում իրեն՝ Շամիրամին: Կտեսիաս-Դիոդորոսի զրույցները, այսպիսով, ամփոփում են որոշ պատմական կորիզ: Նրանք հավատարիմ անդրադարձ են այն կատաղի կռիվների, որ տեղի են ունեցած Շամիրամի ժամանակ Ասորեստանի և նրա հյուսիսային ախոյանների միջև:

Ուրարտուի մայրաքաղաքը՝ Վան և մեդացիների Համադանը, ահա երկու նշանավոր մրցարանները ոսոխ ուժերի:

Բնական է, որ հենց այս քաղաքների շրջանում են պահվել պայքարի հիշատակը, կապվելով և կապելով Շամիրամի անվան ուրարտական և մեդական շինարարության կոթողները: Նույնիսկ Շամիրամյան զրույցները, որ ավանդում է Կտեսիասը, ծագել են ոչ թե Ասորեստանում, այլ մշակվել են մեդական շրջանում, ինչպես հավաստում է Լեհմանը:

Չենք կարծում, որ այնտեղից Հայաստան անցած լինի, որպես հակամետ է ենթադրելու նույն գիտնականը: Հայ առասպելները ինքնուրույն բնավորություն ունեն: Հայաստանի այն ժամանակվա տիրապետները ոչ պակաս վտանգավոր հակառակորդներ էին Ասորեստանի քան մեդացիք: Սալմանասարից և Արամեից սկսած պայքարը շարունակվում էր նորանոր բռնկումներով և փոփոխակի բախտով: Կային րոպեներ, երբ համաշխարհային գերիշխանության պատիվը ստիպված էին զիջանել Վանի տերերին:

Անտարակույս, այս երկարատև ընդհարումները չէին կարող անհետ չքանալ ժողովրդական հիշողությունից: Պատմական Շամիրամը մի վտիտ ուրվական է, որ չէր կարող թնդալ այնպիսի մեծ հռչակով: Իր աշխարհածանոթ անունը և համատարած փառքը պարտական է ողջովին ոչ թե պատմական համեստ թագուհուն, այլ Իշտարի համազոր աստվածուհի Շամիրամին: Առաջավոր Ասիայի ամեն մի անկյունում հայտնի Իշտար աստվածուհու պատկերն է, որ Շամիրամ կոչումի ներքո տարածվել և ծնունդ է տվել զարմանալի առասպելների:

Լեզվական շփոթումն այստեղ ևս որոշ դեր է խաղացել, ինչպես Դերկետոյի դեպքում: Սամմուրամատ, բաբելական իշխանուհու անունը, շփոթել են ասորական **Սեմմամատ** բառի հետ, որ նշանակում է աղավնի: Եվ որովհետև աղավնին Իշտարի թռչունն է և որոշ մտքով նույնանիշ, ուստի և Սամմուրամատ - Շամիրամին նույնացրել են Իշտարի հետ:

Դիցաբանության մեջ սովորական երևույթ է, երբ լեզվական շեղումները, շնորհիվ ժողովրդական ստուգաբանությանց, ստեղծում են նոր առասպելներ կամ հնի նոր վարիանտներ: Շամիրամը, Ատարգատեսի դուստրը, ժառանգել է ուղղակի իր հռչակավոր մոր փառքն ու պատիվը: Ահա նրա արտասովոր ժողովրդականության գաղտնիքը:

Հայերին աստվածուհին քաջ ծանոթ էր: Հիերապոլիսի մեհյանի նկարագրության մեջ Լուկիանոսը վկայում է, որ աստվածուհուն նվերներ են գալիս նաև Հայաստանից: Անծանոթ աստծուն երկրպագության չէին գնալ այնքան հեռու: Անկասկած մայր աստվածուհին նրանց պանթեոնի մեծություններիցն էր և սիրված պաշտամունքը:

Հայ զրույցները Շամիրամի մասին ոչ մի նկատումով չեն կարող օտարամուծ համարվել, այլ ընդհաքուչս ծաղիկներ են Հայաստանի հողի: Ուրարտական շրջանում մշակված, այդ զրույցները արտացոլում են հին

քաղաքական և կրոնական ապրումները և այնքան մեծ ժողովրդական-նութիւն են վայելել, որ ուրարտացիներից անցել են հայերին, որոնք գրավելով· նրանց երկիրը, ժառանգել են երկրի մտավոր ինչքն ու ավանդները (5):

Թե որքան կենդանի և շրջուն են եղել հին զրույցները, այդ երևում է Լեզք, Շամիրամակերտ անուններից, որ դիցաբանական երկնքից իջած տեղ են բոնել իրական հողի վրա: Հեռավոր անցյալի բարձր ստեղծագործության և պաշտամունքի հետքերը մինչև այժմ էլ մնացել են կենդանի ժողովրդի մեջ: Հարյուրավոր դարերի ցարդ կենսունակ ավանդը ապացույց է, որ Շամիրամյան զրույցները ընտանի ղողանջներ են Վանա ծովի ափին:

Արա-Շամիրամյան առասպելներից հայտնի է Արալեզ կամ Առլեզ աստվածը: Նրա հիշատակը ավանդաբար կապված է Լեզք գյուղին, որ Վանի մոտ ցայժմ կայուն գյուղ է: Ահա ինչ է պատմում ժողովուրդը մի սրբավայրի մասին, որ գտնվում է այդ գյուղի մոտ:

«Լեզք գյուղի մոտերը կա մի թոնրի ձևով աղբյուրի փոսակ կամ ջրհոր, որ Սուրբ Թոնիր կկոչեն, ուր հաճախ գնացողներ կան, շատերուն իբրև ուխտատեղի, ոմանց ալ հետաքրքրելի: Միմիայն մեկ ձուկ կ'երևի այդ ջուրին մեջ. և որին որ երևի, անոր բախտն ու ուխտը կկատարվի: Դա՝ կնկան կերպարանք ունի եղեր, և արծաթե օղն ալ իր քթին անցուցած՝ կտեսնվի տակավին: Երեցկին է եղեր դա, կին՝ կարի գեղեցիկ, երբ նստած թոնիրի շուրթն հաց կթխե, աղքատ մը կուգա, հաց կ'ուզե, կուտա, կերակուր կ'ուզե, կուտա, գինի կ'ուզե, կուտա: Թշվառականը կհամարձակի նաև պագ մը ուզելու: Երեցկինը կվարանի կվարանի, բայց կմտածե թե աղքատ թեմարզու է, ի՞նչ կա, մե՛ղք է, գուցե վարձք է: Պագն ալ կուտա: Եվ հանկարծ նույն վայրկյանին երեցը ներս կմտնե, երեցկինը ամոթեն ու ահեն ինքզինքն կձգե ի թոնիր կրակին մեջ, տերտերն ալ գինքն ի վրեն: Բայց տերտերը կմրկի, իսկ երեցկինը՝ կրակն ջուր դառնալով, ինքն ալ ձուկ, Աստուծո հրամանով հավիտենական հիշատակ կմնա նույն տեղ»[1]:

1917 թվի ամառը Ռուսական կայսերական հնագիտական ընկերության պատվերով և Աշխարհիբեկ Քալանթարյանի ընկերակցությամբ գիտական նպատակով Վանա գավառը այցելեցինք, նաև Լեզք և տեսանք նշանավոր Թոնիրը (6):

Պատերազմի իրարանցումի հետևանքով գյուղը, ինչպես և ամբողջ շրջանը թափուր էր բնակչությունից: Հազիվ մի քանի տուն վերադարձել էին Երևանից ամառային աշխատանք կատարելու: Տեղական ժողովրդական

[1] **Գ. Սրվանձտյանց**, Գրոց ու բրոց, էջ 53-54:

բանահյուսության ծանոթ առաջնորդներ չունեինք: Աղբյուրի մոտ մի քանի տղաների հանդիպեցինք, որոնք այսքան միայն մեզ հաղորդել կարողացան, որ աղբյուրի անունը Յոթնիր է և որ մեջը ձուկ կա:

Ի՞նչ է նշանակում առաջին վանկը, չկարողացան մեզ բացատրել: Արդյոք յոթ-թոնի՞ր: Հայր Սրվանձտյանցն այցելել է լավագույն պայմաններում, երբ տակավին նահապետական կյանքն իր ներքին և արտաքին հարստությամբ ողջ և կանգուն էր[1]:

Սուրբ Թոնիրի ավանդությունը, դժվար չէ նկատել, զարմանալի հավատարմությամբ կրկնում է մեզ արդեն ծանոթ Դերկետոյի առասպելը: Ասկալոնի լիճը հայ միջավայրում դարձել է մի աղբյուրի փոս կամ ջրհոր: Կնոջ կերպարանքով ձուկը, որ ջրհորի միակ բնակիչն է, նույն Դերկետոն է: Իսկ երեցն ու երեցկինը անցյալի ամենազոր աստուծու և աստվածուհու ստվերներն են: Քրիստոնեական աշխարհայացքը իջեցրել է նրանց երկնային գահից և հավասարեցրել սոսկ երեցի և երեցուհու:

Առասպելի կրոնական բնույթը համենայն դեպս պահված է հարազատությամբ: Ափսոս, որ երեցի և կամ նրա կնոջ անունը չէ հիշված: Խոսքը հարկավ նույն մայր աստվածուհու մասին է: Կտեսիասի պատմածի մեջ Դերկետոն և Շամիրամը անջատ էակներ են, մեր զրույցի մեջ նրանք մի անձն են: Առաջնի արհեստական երկվությունը այստեղ չկա: Քահանան և մուրացիկն աստվածուհու սիրահար Օաննեսի և Նինոսի հոմանիշներն են: Երեցկինը Շամիրամն է: Մուրացիկի ապօրինի պագը նշանակում է, որ Շամիրամը իր ամուսին Օաննեսից անցնում է Նինոսին: Հուսահատ այրը ինքնասպան է լինում: Դերկետոն ջուրն է նետվում ապօրինի որդեծնության ամոթից, իսկ հայ զրույցում նա ջրհորն է ընկնում ամուսնական անհավատարմության «ամոթեն և ահեն»:

Սուրբ Թոնիրի առասպելը միապաղաղ և ամբողջական չենք է, մինչդեռ Կտեսիասի զրույցը բաղկացած է երկու տարբերակների ձուլումից, ասենք ձկան և աղավնու տարբերակներ:

Ուշադրության արժանի է Թոնիրի և ջրհորի աղերսը: Երեցկին-Շամիրամն իսկապես ինքնասպանն է լինում թոնիրի մեջ, որը հետո ջրհորի է փոխվում: Մի ուրիշ զրույցի մեջ, որ վերաբերում է «Հայոց թագավորի և Բելի» կռվին, կրկնվում է նույն միտքը: «Հայոց թագավորը սպաննել է զԲել և

---

[1] Հիշենք նաև, որ բանաստեղծ Ա. Իսահակյանը Սուրբ Թոնրի զրույցը հանգավոր գեղեցիկ չարաղրության է վերածել և տպված է «Տարազ» ամսագրի համարներից մեկում: Արդյոք նրա աղբյուրը ևս Գ. Սրվանձտյա՞նցն է, թե քաղած է Շիրակի ժողովրդական զրույցներից, ինձ հայտնի չէ (7):

հանել Նեմրութա գլուխ. այնտեղը փորեր, թոնիր շիներ, մեջը կախել վառել է: Աստուծո հրամանքով այն կրակը ջուր կտրել, զմոխիրն հողի տակ իջեցուցել, որ չեղնի քամին անոր փոշին տանի»[1]:

Այս մեկնությունը անհարիր է երեցկնոջ նկատմամբ: Այնտեղ կրակը ջուր է կտրել, որպեսզի ամբարիշտ Բելի աճյունը քամին չտանի և նոր աղետների առիթ չտա, իսկ այստեղ ջուրն ու ջրհորը առասպելի հիմնական մասն են և զոհի հիշատակը հավերժացնելու համար են, ուրեմն բոլորովին հակառակ տեսակետ քան Բելի դեպքում:

Թվում է, թե թոնիրը զոհարանի կամ զոհաբերության հնոցի նշանակ է: Հայտնի է, որ մի քանի վայրերում Աղոնիսի պաշտամունքն ուներ առանձին արքայական կամ քրմական տներ, որոնք ժառանգաբար ներկայացնում էին իբր նրանց կենդանի պատկերներ և հաճախ զոհաբերվում էին: Հետագայում փոխանակ կենդանի մարդկանց զոհելու, այրում էին աստվածների խրտվիլակը, կամ նրանց խորհրդանշանը, օրինակ՝ աղավնի:

Շատ կարելի է, որ Սուրբ Թոնիրի զրույցում պահպանված է հինավուրց սովորույթի արձագանքը: Նախ աստվածային զույգի տեղ հանդես են գալիս նրանց պաշտոնյաները, քրմերը, ի դեմս երեցի և երիցուհու, երկրորդ՝ նրանք այրվում են հնոցում, այսինքն՝ զոհաբերվում են:

Ջրհորի ծագումը թոնիրից, այսպիսով, պատահական թռիչք չէ երևակայության, այլ արտացոլում է կրոնական հին սովորույթ, գեղեցկորեն հյուսված առասպելի հիմնական իմաստի հետ:

Սուրբ Թոնիրի զրույցը, երևում է, շատ տարածված է եղել Վանա լճի ոլորում: Դատվան նավահանգստի դիմաց Գրգռտ լերան ստորոտում կա մի գյուղ, որ կոչվում է Ջրհոր, իսկ նրան կից մի այլ գյուղ՝ Շամիրամ: Այս անուններն իսկ վկայում են, որ ջրհորի առասպելը ծանոթ է եղել և այս վայրերում և որ երեցկինը ոչ այլ ոք է, եթե ոչ ինքը Շամիրամը[2]:

---

[1] **Գ. Սրվանձտյանց**, Գրոց ու բրոց, էջ 48:

[2] Տարոնցի Ներոխ անունով մի անձ բարի է եղել ղրկելու մեզ հետևյալ գրությունը, որ դնում ենք այստեղ հարազատորեն:

Հարգո փրոֆ. Ն. Ադոնցին,

Հաճույքով կկարդամ Ձեր «**Հին հայոց աշխարհայացքը**» ուսումնասիրությունը, ուր կհանդիպիմ Սուրբ Թոնիրի պատմվածքին՝ «Հայրենիք» ամսագրի հինգերորդ տարի, թիվ 1, էջ 84: Թող ներվի ինձ ըսել, որ այդ առասպելի մասին, հավանական ըլլալ կթվի Տարոնի աշխարհին, քան թե Վանի գավառի Լեզք գյուղին: 1903 թվին, երբ բաղդ ունեցա Բիթլիս երթալու իմ դասատուիս՝ պ. Մուքայելի հետ, որ Կարմրուկ վանքը պաշտոն ուներ, հանդիպեցանք Սբ. Թոնիրի, որ կգտնվի Չխուրի սահմանին գյուրտ Մառնիկ, գյուրտ Նորշեն և Օձքաղաք գյուղերու քով, Տարոնի Տիգրիս գետի բխած տեղը, որ տարոնցիք «Մեղրա գետ» կսեն, թեև բխած տեղը խոշոր առվի մը չափ ջուր կբխե, բայց երթալով ուրիշ առուներ, գետակներ խառնվելով կկազմեն Տիգրիսը: Այդ բխած տեղեն 100 կամ 50 քայլ հեռու կգտնվի վեղարակապ մատուռ մը, շրջապատված գերեզմաններով, ուր քյուրտեր յուրացուցեր են իրենց

Շամիրամի, ասորական համեստ թագուհու, աստվածացումը և ծուլումը մայր աստվածուհու հետ, անօրինակ երևույթ չէ: Լուկիանոս Սամոսատցին հիշածս գրության մեջ բերում է մեզ զբաղեցնող Ատիս և Կիբելե առասպելի մի ուրիշ տարբերակը, ուր Կիբելեի փոխարեն հանդես է գալիս Ստրատոնիկե: Սա ոչ այլ ոք է, եթե ոչ Անտիոքի թագավոր Սելևկոս Նիկատորի կինը: Եթե մի աննշան իշխանուհի այնպիսի ուշ ժամանակ, ինչպես Սելևկյան շրջանը, կարող էր հռչակավոր աստվածուհու հետ շփոթվել և նրա տեղը բռնել, ի՞նչ զարմանք, որ առասպելների ավելի վառ դարերում ասորական թագուհի Շամիրամը նույն փառքին է արժանացել և մայր-աստվածուհու աթոռը գրավել:

Մեզ հետաքրքրող առասպելների շրջանին է պատկանում նաև մի ուրիշ առասպել, թերևս նրանց մի ուրիշ հեղվածն է, որի հետքերը ևս մնացել են հայ հիշողության մեջ:

Այդ հեղվածում, որ կարելի է կոչել լիդիական, Ատիսին փոխարինում է Տիլոն կամ Թիլոն անուն հերոսը, որ Զևսի որդին է համարվում: Մի անգամ Հերմես գետի ափունքին զբոսնելիս նա մահացու խայթ է ստանում օձից և մեռնում: Նրա քույրը Միրա դիմում է Դամասեն հսկայի օգնության և սա հարձակվում է ու սպանում օձին: Մի ուրիշ օձ, սպանվածի էգը, կծում է Զևսի ծաղիկ կոչված խոտը և դնում ընկածի շրթունքին, որից հետո սպանվածը կենդանանում է: Տիլոնի քույրը հետևում է օձին, առնում է նույն խոտը և դնելով եղբոր բերանը հարություն է տալիս մեռյալին:

Այս զրույցը շատ հին է և ծագում է Քսանթոս Լյուդացի պատմագրից, ինչպես հավաստում են Պլինիոս և Նոննոս:

Լիդիայի մայրաքաղաք Սարդեսի դրամների վրա պատահում են Տիլոնի, սպանված օձի և կենդանարար ոստի դրոշմը, որ ապացույց է զրույցի ժողովրդականության և վավերականության միանգամայն:

մեռելներուն: Դասատուս սապես պատմեց. այստեղ ժամանակին մեծ գյուղ մը եղած է, ան ալ այդ գյուղի եկեղեցին եղած է, առ ջուրի բխած տեղն ալ քահանայի տուն եղած է: Օր մը երեցկին հաց կթխե եղեր. թուրք մուրացիկ մը կուգա, հաց կուզե, երեցկին կուտա, գինի կուզե՝ կուտա, հագուստ կուզե՝ կուտա: Երեցկին շատ գեղեցիկ կըլլա, թշվառական կհանդգնի համբույր մը ուզել, ըսելով՝ քո Աստված որ կսիրես, համբույր մ'ալ տաս, երեցկին, Աստուծո սիրուն: Ան ալ կուտա: Քիչ վերջ երեց կուգա, երեցկին կխոստովանի իր հանցանքը: Տերտեր կսե, եթե այդպես է, կսեմ քեզ Աստուծո սիրուն ծգե քեզ այս վառ թոնիրը, նայեմ: Եվ երեցկին վայրկենական կծգե զինք թոնիրը, երբ երեցը այդ կտեսնե, ինքն ալ զինք կծգե ետևեն: Բայց Աստուծո հրամանավ տերտեր կմրկի, թոնիրեն ջուր կբխե, և երեցկինն ալ ծուկ կ՝ ըլլա, ոսկի օղն ալ քիթն է անցուկ: Եթե արդար մարդ այդ ական կանգնի ըսե՝ երեցկին, Աստված կսիրես դուրս ելիր, կելնե: Եվ ես այդ պատմությունն, որ լսեցի, իմ տղայական զգացումներովս վազեցի և մեկի տեղ տասն անգամ ըսի՝ երեցկին, քո անահուն Աստված որ կսիրես, դուրս ելիր, բայց չելավ այդ տիկին ծուկը, որ ոսկի օղն ալ քիթն անցուցած է: Սբ. Թոնիրը հավանական ըլլալ կթվի հոդ, քանի որ թե եկեղեցին և թե՝ գերեզմանոցը կան իբր վկա:

Հայ ժողովրդի սիրած հավատալիքներից մեկն այն է, որ կան հատուկ աղբյուրներ, ուր օձերը գալիս են իրենց շապիկը փոխելու և երիտասարդ դառնալու: Գաղտնի ծաղիկներ կան, որոնց ուժը միայն օձերը գիտեն. նրանք բերանն են առնում այդ ծաղիկները և աղբյուրի մեջ լողալով նորոգում են իրենց կյանքը:

Թե որքան տարածված է եղել այս հավատալիքը, վկա է Բարսեղ Կեսարացին: Նշանավոր եկեղեցու հայրը, որ հայ մքնոլորտից հեռու չէր ապրում և գրեթե նման միջավայրում է սնված, ասում է. «Եւ օձից աչք յորժամ ցաւեցին, երթայ ուտէ շումրայ, այսինքն՝ սամիթ վայրենի եւ ողջանայ»[1]:

Եվս առավել զարմանալի է հետևյալ պատմությունը, որ անում է հ. **Սրվանձտյանցը:** «Մշո լերան կամ Սեմ սարի ստորոտը կգտնվի Մառնիկ գյուղ: Այս գեղի բնակիչներեն հայ մը Մարգար անուն, ասկից հրնգ տարի առաջ մեռավ: Սա յուր կենդանության կպատմեր, թե 250 տարեկան էր ինքը. մենք տեսանք զինք 1866 թվին, յուր ջիղերը պինդ, երկու անգամ նորոգված էին ակռաները, և դեռ այն տարիքին մեջ կտեսնար քաջ, կլսեր, կխոսեր, կ'ուտեր, կ'ընթանար երիտասարդի մը պես, և ամեն առավոտ լերան մացառներեն չոր փայտ կջարդեր, կշալկեր կբերեր Մուշ, կվաճառեր ծյուն օրերը: Իր անդրանիկ որդին 80 տարեկան էր և ալյոք ծաղկյալ, այն ինչ Մարգարը յուր մորուքի մեջ շատ քիչ ճերմակ ուներ: Սա կպատմեր, թե 150 տարու եղածս ժամանակ աշխարհի մեղաց մեջ ինկա. այսինքն՝ կին առի, թե Ծովասարու մեկ աղբյուրի մեջ տեսա մեկ օր, որ ցավագար և վիրավոր օձ մը եկավ լողցավ և երեք թուփ ունեցող ծաղկե մը կտրեց կերավ, նորոգվեցավ գնաց. դիտեցի, ես ալ նույն ծաղկեն կտրեցի կերա. նույն ջուրը խմեցի, և լողցա, աչքերս լուսավորան, ուրիշ կերպ դարձա»:

Մարգարի ասելով, այն ջուրը, որ խմեց և ծաղիկը, որ բերանը դրեց, հոգով վերացավ մի ուրիշ աշխարհ, նրա «առջև բացվավ մարմար կամարաշեն լուսավոր պալատ մը, աշխարհից ու մարդոց խելքից դուրս էր անոր շենքն ու միջի փառքն ու բարիքն. անմահության տուն ու տեղ էր»: Գյուղացիների ձայնից վերջապես արթնանում է Մարգարը այդ անրջական դրությունից: «Շատ աղաչեցին, որ էդ ծաղիկը, էդ աղբյուրը ու էդ պալատի դուռը ցույց տամ իրենց, հնար չեղավ նորեն տեսնայի», հառաչելով ափսոսում էր երազուն գյուղացին:

Հայր Սրվանձտյանցը հավատացնում է, որ Մարգարը եթե ոչ 250, անշուշտ 150 տարեկանից վեր էր. ապացույց՝ ի միջի այլոց նրա թված ու

[1] **Բարսեղ Կեսարացի**, Վեցօրեք, էջ 186:

անձամբ տեսած փաշաների և առաջնորդների անունները, որ նա հիշում էր[1]:

Այս տարօրինակ պատմության մերձավոր առիթը, անտարակույս, Մարգարի երկարակեցությունն է: Սրան հարկավ ծանոթ է եղել ժողովրդական հավատալիքը, որ որոշ աղբյուրներ և ծաղիկներ թարմացնում ու նորոգում են մարդու մարմինը և, որ դրանց գիտությունը տրված է օձերին: Ապրելով բնության ծոցում, Մարգարը շատ աղբյուրների սառնորակ ջուրն է խմել և շատ ծաղիկների հոտը վայելել: Բնականորեն իր երկարակյաց և քաջառողջ կացությունը վերագրել է խորագետ օձի սիրած աղբյուրի ջրին և ծաղկին, համաձայն հայրենի միջավայրից որդեգրած հավատալիքի:

---

[1] Մարգարի առթիվ վերոհիշյալ պ. Ներոխը գրում է նաև «Հայրենիք»-ի նույն թվի մեջ, էջ 86՝ Մշո Մառնիկ գյուղի Մարգարի պատմվածքը:

Ես տարոնցի ըլլալով տամ լրիվ տեղեկություն այդ մասին, զոր պատմած է ինձ Մարգարի եղբոր տղան, հայտնի հեղափոխական Մառնկա Ավետիս կամ «Ավեն»: Սա ալ այսպես կպատմեր. Մարգար հովիվ եղած է, գեշ հիվանդությամբ վարակված, բորոտ և իրեն «ճղատ Մարգար», «քաչալ» կ'ըսեն: Եվ իրեն ուրիշ ընկեր հովիվ ալ կ'ըլլա այդ հիվանդությամբ. կտառապի բավական ժամանակ, բերվորները չեն ախորժեր իրմե, ոչխարները կթելու ատեն հեռու տեղ մը կնստի: Օր մըն ալ ոչխարները Ծովասարի փեշերուն արածելու ատեն, ոչխարի մը առաջնորդությամբ, մացառներու մեջ կհանդիպի աղբյուրի մը, ուր կպատահի հրաշքը: Կտեսնե որ իրեն բաղդակից օձ մը կուգա կմտնե ջուրի մեջ, կլողանա, աղբյուրի քովի ծաղիկներեն քանի մը հատի թուփերեն կփրցնե կ'ուտե և կմտնե աղբյուրի բխած տեղը, կլողանա, իր շապիկը կծգե, կ'ըլլա աղվոր, գեղեցիկ օձ մը և կ'երթա:

Մարգար այդ տեսնելուն կխորհի, որ Աստված իրեն ցույց է կ'ընե: Ինքն ալ օձ ըրածի պես կ'ընե, կթմրի և կքնե հող, աղբյուրին քով: Մյուս ընկերը կնայի Մարգար չի երևնար. բավական փնտռելե վերջ, չի գտներ, ոչխարներով գյուղ կուգա, կպատմե. գյուղացիք հույսներնին կկտրեն, կխորհեն թե ազատված է իր դառն կյանքեն: Իսկ Մարգար կփոխադրվի լուսեղեն աշխարհ, կպտտցնե դրախտի ամեն կողմը, ցույց կուտան նաև իր տեղը, եթե Ադամի մեղքի մեջ չիյնա, զգույշ Եվայի թոռներեն: Իրեն փոքրիկ տուփ մըն ալ կուտան, մեջը դեղ լեցված, հիվանդներուն ձրի նայե, մեկ կաթիլ խմցնելով. նաև կ'ըսեն. «Քո ոչխարներեն մեկը զույգ կծնի. այդ գառները բերես այսինչ տեղ մատաղ ընես, դուռը կբացվի նորեն, ներս կուգաս»: Տեղը ծանոթ է Մարգարի աչքին. այդ տեսիլքի մեջ կ'արթննա. երկու կամ երեք օր քնացած է եղեր: Գյուղ կուգա աղվոր երիտասարդ մը եղած, առողջ և քաջ: Կպատմե իր տեսիլքի մասին: Չմեռը վրա կհասնի. գյուղացիները կհամոզեն որ ամուսնանա: Ո՛չ, կ'ըսե, դրախտեն կզրկուիմ: Աղի տեսիլք է, կ'ըսեն, և վերջապես կհամոզեն, որ Եվայի թոռներեն մեկու մը հավնի: Վերջապես կհամոզվի և կենակից մը կգտնե իրեն: Գարուն կուգա այդ ոչխարը զույգ կծնի իրավ որ. բավական կխոշորնա, կ'առնե կ'երթա մատղելու համար, որ նորեն երթա քալելով դրախտը, բայց հուսախաբ կ'ըլլա՝ ոչ աղբյուր կգտնե հոն և ոչ ալ ան բլուրը, զոր իր աչքեր տեսեր էին. կուլա և հետ կդառնա, անիծելով պատճառ եղողները: Այս է Մարգարի առասպելը: Իր տարիքը շատ չափազանցված է՝ 250 կամ 150: Մարգարը 120 տարիի չափ ապրած է առույգ. իր զավակները 70-80 տարեկան, տեսած է թոռան թոռը, և նոր ակռաներ ալ ունեցեր է: Կպատմեն, որ շատ մը հիվանդներ այդ տեղ գալով ողջացեր են: Կարելի է այդ ծաղիկի թուփերեն չինած է այդ դեղը: Այս է Մառնկա «քաչալ Մարգարի առասպել պատմվածքը»...

ՏԱՐՈՆՑԻ ՆԵՐՈՒՆ

Հավատալիքն մի ներքին և անգիտակից ուժ է, որի շնորհիվ միամիտ գյուղացին քաջքեր, դևեր, հրեղեն էակներ և այլ նման հրաշալիքներ է տեսնում, ինչպես վկայում է հին դարերից նաև մեր մատենագիր Եզնիկը: Մարգարի տեսիլն այս կարգի հավատալիքների ներշնչումն է:

Աղբյուրի և ծաղկի դյութիչ զորությունը, որ հայտնի է միայն օձին, հավանորեն, կրոնական բնույթ ունեցող և նախաքրիստոնեական առասպելների մեջ տիրական հայացք է: Թվում է, որ Մարգարի նման խղճուկ շինականին այցելած զորությունը ժամանակով դյուցազունների արտոնություն է եղած միայն: Ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե ենթադրենք, որ Տիլոնի նման մի հերոսի շուրջ եղած հինավուրց առասպելների հեռավոր բեկորն է այն, ինչ որ մեզ ավանդ է մնացել Մառնիկ գյուղի հավատալիքների աշխարհում:

Տիլոնի առասպելը հարում է Ատիսի զրույցների շրջանին: Տիլոնն ինքն ոչ այլ ոք է, եթե ոչ Ատիսի զուգատիպը և օձը, նրա մահվան պատճառը, մայր աստվածուհու Կիբելեի խորհրդանիշն է: Դամասենի և օձի պատմությունն միջանկյալ է:

Այսպիսով, հայ ժողովրդի հիշողության մեջ կառչած հատուկտոր ավանդները տանում են մեզ դեպի այն հաստատուն հեղվածը, որ Հայաստանի սահմանակից Միջագետքի քաղաքակրթության ոլորտում ընդունված մայր աստվածուհու Իշտարի պաշտամունքը Շամիրամ անվան ներքո ծանոթ և ընտանի է եղած նմանապես հայ ժողովրդյան: Նույն պաշտամունքը այլ անունով տիրական էր, ինչպես հաճախ շեշտած ենք, նաև Հայաստանի արևմտյան դրացիների մոտ Փոքր Ասիայում, ուր նա կոչվում էր Կիբելե:

Ի՞նչ աղերս կա երկուսի մեջ անդրանկության տեսակետից, այդ չէ այժմ մեզ զբաղեցնում. ինչ և լինի նրանց հարաբերությունը, երկու աստվածությունները նույնանիշ են:

Եվ հիրավի, բավական է համեմատել ինչ որ Դիոդորոսը պատմում է Կիբելեի մասին Դերկետո-Շամիրամյան առասպելի հետ, որպեսզի համոզվենք, որ երկու դեպքերում էլ գործ ունինք միևնույն դիցաբանության հետ, բայց տարբեր միջավայրերի երանգավորումով:

Փռյուգիայի և Լիդիայի թագավորն էր մի ժամանակ Մեոն: Նրա կինն էր Դինդիմենե, որից ունենում է մի աղջիկ զավակ: Չուզենալով նրան պահել, թագավորը ծգում է Կիբելոս կոչված սարը: Գազանները մոտենում են և սնում երեխային: Հարևան հովիվ կիները, նկատելով այդ, առնում են մանկան և անվանում լերան անունով Կիբելե: Երբ մեծանում, հասունանում է իբր մի գեղանի և ուշիմ աղջիկ, սիրահարվում է երիտասարդ Ատտիսին: Ծնողները լսելով, որ նա մերձավոր կապ ունի Ատտիսի հետ, բերել են տալիս

դստեր իրենց մոտ, իսկ Ատտիսին սպանում են և մարմինը թողնում անթաղ: Կիբելեն հուսահատ և վշտաբեկ ողբում է իր սիրելիի մահը: Մեծ պատուհաս և աղետներ են հասնում Փռյուգիային:

Պատգամախոսը դժբախտությունը աստվածային վրեժ է համարում Ատտիսի մարմնի հանդեպ ցույց տված անփութության համար: Իսկույն նեթ ուզում են իրենց հանցանքը ուղղել: Բայց Ատտիսի մարմինն արդեն հյուծված և անհետացած է լինում: Ստիպված պատրաստում են երիտասարդի պատկերը և ողբում ու հարգանքներ մատուցանում նրան իբր Ատտիսին:

Դժվար չէ նկատել, որ Դինդիմենե և իր դուստր Կիբելե համազոր են Ասկալոնի առասպելի Դերկետոյին և նրա աղջիկ Շամիրամին: Աղջկա սիրահար Ատտիսը կատարում է Օննեսի դերը: Երկուսն էլ ընկնում են ողբերգական մահով: Աստվածուհին թե՛ մեկ, և թե՛ մյուս զրույցում ընկեցիկ զավակ է, որին սնում են վայրենի կենդանիները և պատահական հովիվները:

Հայաստանը և հայ ժողովուրդը իր արևմտյան և հարավային հարևանների, ասենք, Կիբելեի և Իշտարի աշխարհների հետ կապված է եղել հնուց ի վեր քաղաքակրթական կապերով, իսկ Կիբելեի հետ՝ նաև ցեղային: Երկու տիկիններն էլ հավասարապես կարող էին տիրապետական գահ և պաշտամունքի սեղան ունենալ Հայաստանում:

Տեսանք, որ Իշտարը գեթ Շամիրամ անունով ընտանի է եղել իրոք հայ մթնոլորտում: Թվում է, որ մյուս աստվածային տիրուհին ևս ընդունված է եղել և որոշ շրջանում հավանորեն կրում էր Անահիտ անունը: Եթե մեկի գլխավոր սրբավայրը հին Տոսպն էր, մյուսինը՝ Երեզ ավանն էր: Հեռավոր Եփեսոսում Կիբելեն փոխել էր իր անունը և կոչվում էր Արտեմիս և մինչև իսկ Անահիտ: Ավելի բնական էր նույն անունը Հայաստանում, որ իրանական քաղաքակրթության այնքան մոտ է կանգնած:

Հայ պանթեոնի մյուս դիցուհին՝ Նանե, նմանապես նույն աստվածության մի այլ դեմքն է: Հիշելու է, որ առասպելի փռյուգիական հեղվածում, որ տալիս է Արնոբիոսը, Ատիսի մայրը կրում է Նանա անունը: Սա Սանգար գետի դուստրն է, որ Ագդիստի արյունից բուսած նռենու պտուղն իր ծոցում պահելով, հղանում և ծնում է Ատիսին: Անհավանական չէ, որ նման զրույցի հետևանքով Նանան բազմած լինի Թորդանում իբր ուրույն աստվածուհի:

Նույն կարգի աստված է և Աստղիկը: Տարբերությունը լոկ անվանական է և գուցե նաև տեղական: Աստղիկը Տարոնում նույնն է, ինչ որ Շամիրամը Վանում և Նանեն Բարձր Հայքում:

Հայտնի է, որ հունական Ափրոդիտեի նախատիպն ևս Իշտարն է, որ անցնելով հելլեն գեղասիրական հանճարի հնոցով, դարձել է գեղանի աստվածուհին: Ափրոդիտեի տեսակների մեջ կա մեկը, որ կոչվում է

Անադիոմենե, պարկեշտ և ողջախոհ դիցուհու կուսական պատկեր: Նրան լողանալիս կամ ջրից ելնելիս տեսնելը համարվում էր բարի նշան, հաջողություն, բախտավորություն:

Նույն հավատը գոյություն է ունեցել և հայ Աստղիկի հանդեպ, որի հետքերը մնացել են ցարդ նրա սրբավայր Տարոնում: Եփրատի ափին ցույց են տալիս մի տեղ Գուռգուռ անունով, որի մասին պատմում են, որ Աստղիկի լոգարանն է եղել: «Եվ քանզի գիշերները լվացվելու սովորություն ուներ Աստղիկը,- ասում է Սրվանձտյանցը, - Դաղոնաց սարին վրա մեծ կրակ կվառեին տարփավոր կտրիճները, որո լուսով կդիտեին Աստղիկի չքնաղ գեղեցկությունը, հնարած է Աստղիկը, որ մշուշ պատե այն ամբողջ միջավայրին, այսինքն՝ Մշո Դաշտն»[1]:

Հարկավ տոփանքը չէր, որ ստիպում էր Տարոնի կտրիճներին դիտել անմատչելի աստվածուհու մերկությունը, այլ երջանկության և բախտի ծարավը, որին սակայն հագուրդ տալ չէր հոժարում հեշտության քմահաճ դիցուհին:

Փոքր Ասիայի հռչակավոր աստվածուհու հին սկզբնական անունը պահված չէ, եթե այն չհամարենք Կապպադովկիայի Կոմանա քաղաքներում ընդունված Մա անունը, ինչպես կարծում են մի քանի գիտնականներ: Բոլոր հայտնի անունները, ինչպես Կիբելե, Դինդիմենե, Արտեմիս, Աթենե, Հերա, Լետո, Հիպտա և ուրիշները տեղական ծագում ունին, այսինքն՝ ընդունված են այս կամ այն վայրում, կենտրոնում: Ոմանք հետո ընդհանրացած են այս կամ այն չափով և լայն ժողովրդականություն ստացած:

Զարմանալի է, ուրեմն, որ մեզանում ևս հին անունը մոռացվել է և տեղի է տվել նոր և հարևան երկրներում տիրող անունների:

Մայր աստվածուհու զուգակից այր աստվածը նմանապես բազմանուն է: Ոչ միայն զանազան երկրներում, այլ և միևնույն երկրի տարբեր վայրերում տեսակ տեսակ անուններ է կրում: Անունները փոխվում են և ժամանակի համեմատ, փոխվում են միևնույն տեղերում ժամանակի ընթացքում: Այս երևույթը հատուկ է և մեր դիցաբանական աշխարհին:

Որքան և սուղ ու պակասավոր են մեր տեղեկությունները, բայց և այնպես նշաններ կան, որ մայր աստուածուհու մտերիմը հայտնի է եղել Հայոց մի քանի անուններով: Ամենից կարևորը և հինը Արաս է, Շամիրամի տարփալին: Որ Արաս թագավոր չէ և ոչ այս աշխարհի բնակիչ, այլ դիցաբանական ստեղծագործության պատկեր, ոմն դյուցազն կամ աստ-

[1] **Գ. Սրվանձտյանց**, Գրոց ու բրոց, էջ 97-98:

ված, այդ անկասկած է: Շամիրամն աստվածուհի է, նրա մտերիմն ևս աստված է լինելու: Շամիրամն Աստարտե կամ Կիբելե, նրա սիրելին պետք է որ Ադոնիսի կամ Ատիսի փոխանակը լինի:

Արայի զրույցը վկայում է արդեն, որ նա այն բարձր էակներիցն է, որ մեռնում են և հառնում, կամ քնանում են և արթնում ձմեռային և գարնանային, բնության անշունչ և կենդանի շրջանների հետ: Խնդիրը անվան շուրջը չէ, այլ պաշտամունքի, որի էությունից կախված է և անունը: Հաճախ անունն այլ ծագում ունենալով հանդերձ անցնում է ժամանակի ընթացքում ուրիշ աստվածության: Կարևորն անվան տակ թաքնված և հարատևած պաշտամունքի էությունն է: Սա է, որ ի վերջո դյուրություն է տալիս և անվան մեկնության, նրա կրած փոփոխության:

Արան մեռնում է: Նրա մահացման կողմնակի պատճառը Շամիրամի կիրքն է, ճիշտ այնպես, ինչպես Ատիսը զոհվում է Կիբելեի սիրային հետապնդման և կամ Թամուզ-Ադոնիսը ընկնում է Իշտար-Աստարտեի առթած խանդի ու վրեժի հետևանքով:

Արայի դիակը չի նեխում, ինչպես հավատացնում է քրիստոնյա միջավայրը, այլ վերստին կենդանանում է համաձայն զրույցի սկզբնական և հարազատ հյուսվածին, նրա հիմնական իմաստին, նման Ատիսի և Ադոնիսի համազոր առասպելների:

Արայի հարությունը միմիայն սոսկ ենթադրություն չէ: Նրա շեշտակի ապացույցը տալիս է մեզ հեռավոր Պլատոնը: Հոչակավոր իմաստասերը «**Պետության**» երկի վերջին գլխում բերում է մի զարմանալի պատմություն, որ քաջածանոթ է: Հարկ եմ համարում բերել էական կտորը: «Արդ քեզ պիտի պատմեմ ոչ թե Ալկինոյոսի պատմությունը, այլ մի խիզախ մարդու, Հայկազն Էրի, ծագումով Պամփյուլացի: Սա երբեմն ընկնում է պատերազմում և տասներորդ օրը, երբ սկսում են հավաքել արդեն նեխված դիակները, տեսնում են որ սա՝ մնացել է անեղծ: Երբ տանում են տուն, որպեսզի թաղեն, տասներկուերորդ օրը արդեն խարույկի վրա պառկած վերակենդանանում է և հետո սկսում է պատմել, ինչ որ տեսել է այն աշխարհում»:

Ուշադրության արժանի է Պլատոնի բառախաղը, որով հակադրում է Ալկինոյոս և «ալկիմոս» Էրը: Ալկինոյոսը Ոդիսականի հերոսներիցն է, հայտնի իր հնարածո պատմվածքներով: Քաջն Էրի պատմությունը նրա հերյուրանքների նման չէ համարում իմաստասերը: Այս ակամա հաճոյականն այլ կերպ չի կարելի հասկանալ և այլ բան չէ նշանակում, եթե ոչ այն, որ Էրի զրույցը իրոք տարածված է եղել և ժողովրդական: Էրի զրույցը պետք ունի տակավին քննության, մանավանդ այն մասում, ուր պատմում է նրա տեսիլը:

Հին հետազոտողները, ինչպես օրինակ Կղեմես Ալեքսանդրացին, կամ

Պրոկղը, առանձին հետաքրքրություն են ընծայում Էրին և համեմատում են և մինչև իսկ նույնացնում են նրան Զրադաշտի հետ[1]:

Սակայն Էրի տեսիլը անմիջական աղերս չունենալով մեր խնդրին, նրա քննությունն ևս թողնելու է: Մեզ համար կարևորը հայ Էրի հարությունն է: Պատերազմում ընկած, հետո կենդանացած, նա հար և նման է մեր Արային: Երկուսի ազգակցությունն ըստ անվան և ըստ առասպելի էության կասկածի տեղիք չեն տալիս և բացատրվելու է նրանով, որ երկուսի աղբյուրն ընդհանուր է և հայ ժողովրդի դիցաբանական աշխարհն է:

Պամփյուլացի հայ Էրը մերձավոր խնամություն է ցույց տալիս նաև թրակիական Զալմոքսիսի հետ: Այս կապը զարմանալի պիտի չթվա, եթե հիշենք հայերի արեևակցությունը թրակիական ցեղերին (8): Հերոդոտոսի պատմելով (Դ, 94-96) Թրակիայի ամենաքաջ և արդարասեր ցեղը, որ կոչվում էր Գետ, հավատում էր հոգու անմահության: Այս վարդապետության ուսուցիչը համարվում էր Զալմոքսիսին, որ իբր թե ստրուկ և աշակերտ է եղած Պյութագորասին և նրանից սովորած հոգու անմահության գաղափարը: Դառնալով հայրենիք սա քարոզել է նույնը իր ժողովրդին: Ստրկությունից ազատվելուց հետո Զալմոքսիսին հաջողում է մեծ հարստություն դիզել, որ և գործ է ածում իր հայրենակիցների գռեհիկ բարքերը մեղմացնելու, ընտելացնելով նրանց իր մեծ ուսուցչի վարդապետության: Այս նպատակով նա հարդարում է մի գեղեցիկ սրահ և այնտեղ հավաքելով իր հայրենակիցներին հյուրասիրում է նրանց մեծ խնջույքներով, որի ընթացքում քարոզում է հոգու անմահության հավատը և հուսադրում անդրաշխարհային կյանքի հաճոյական և երջանիկ պատկերով: Այնուհետև Զալմոքսիսը պատրաստում է իրեն համար մի գետնափոր վիհ, մտնում է այնտեղ և չքանում իր հայրենակիցների տեսությունից: Անցնում է երեք տարի: Ժողովուրդը նրան վաղուց մեռած համարելով, ցավ է հայտնում և ողբում նրա կորուստը: Սակայն չորրորդ տարին նա հայտնվում է: Ժողովուրդը տեսնելով այս հրաշքը, հավատում է և ընդունում նրա վարդապետությունը:

Մի ուրիշ տեղեկությամբ, որ ծագում է հավանորեն Հեկատեյոսից և որ պահվել է Փոտի և Սուիդասի մոտ. «Անշուշտ Գետական (Getes) ցեղեր են Տերիզ և Կրոբյուզ անուն ժողովուրդները, որ հետևորդ լինելով Զալմոքսիսի ուսման հավատում էին նաև, որ մեռնողները նրա մոտ են գնում և, որ վերստին պիտի հետ գան, այսինքն՝ հառնեն»[2]:

Գետերը իրենց անմահ էին համարում, ինչպես վկայում է Հերոդոտոսը և կարծում էին, որ մեռնողը գնում է Զալմոքսիսի մոտ: Հինգ տարին մի անգամ մի մարդ էին զոհում վիճակով, որ նա իրենց բաղձանքները հայտնի Զալմոքսիսին:

[1] C. Clemen, Fontes historiae religionis Persicae, էջ 68 և 94.
[2] Tomaschek, Die Alten Thraker, II, էջ 64.

Հույն պատմագիրը արդարացի կասկած է հայտնում, որ Զալմոքսիսը Պյութագորասին աշակերտած լինի և նրանից ուսած: Ավելի հավանական է համարում, որ նա Պյութագորասից առաջ էր ապրում և որ ավելի շուտով աստված էր, քան մարդ:

Հիրավի Զալմոքսիսը աստված է, և բուսականության կամ բարեբեր բնության աստված, նման Ատիսի և Ադոնիսի: Նրա երեքամյա չքացումը և վերհայտնությունը, ինչպես մեկնում է Վ. Տոմաշեկ[1], սիմբոլիկ արտահայտություն է կամ արձագանք Թրակիայում ընդունված այն սովորության, որի համաձայն հողն երեք տարի անմշակ էր մնում, հանգիստ էր առնում և հերկվում էր միմիայն ամեն չորրորդ տարին: Երեք տարի Զալմոքսիսը, հողի և բուսականության ոգին, թաքնվում էր, անհետանում: Նրան ողոքելու և շնորհը խնդրելու համար զոհում էին ում որ վիճակ էր ընկնում, այսինքն՝ իրենց հասկացողությամբ ուղարկում էին զոհին Զալմոքսիսի մոտ: Տարաբախտ դեսպանը անշուշտ այն անձերի թվին էր պատկանում, որոնք արտոնված էին վերադառնալու այն աշխարհից, այսինքն՝ կենդանանալու:

Պետք է ենթադրել, որ աստուծուն այցելելու և նորեն դառնալու շնորհը վերապահված էր առավելապես արտասովոր անձերի, հերոսների, որոնք ընդհանուր առմամբ ծագում էին տիրող իշխանական կամ քրմական տոհմերից: Ընթանալով ի հակառակն կարելի է ասել, ուր որ հավատում են ընկած հերոսների հարության, այնտեղ կրոնական մտայնությունը տոգորված պիտի լինի Զալմոքսիսյան աշխարհայացքով:

Քաջագործ Էրը, թագավոր Արաև և հերոս Արտավազդը նույն աշխարհայացքի փշրված բեկորներն են: Զալմոքսիս՝ փթթող և թառամող բնության ոգի՝ ոչ այլ ինչ է, եթե ոչ Ատիսի մի ուրիշ հատորը:

Հերոդոտոսը հավատացնում է, որ ոմանք կարծում էին, որ Զալմոքսիսը նույն Գեբելեզիսն է, ուրեմն նույն աստուծու մի ուրիշ անունը: Հավանական է համարվում ուղղել Սեբելեզիս, այսինքն՝ առաջին տառը **u** կարդալ: Այս ուղղումը կարող է ներշնչել միտք՝ կապել աստուծու անունը՝ հայտնի աստվածուհու **Semele** Սեմելեի հետ: Զալմոքսիս անունը գրվում է նաև Սալմոքսիս: Եթե իրոք ստուգաբանական աղերս կա Սալմոքսիսի և Սեմելեի միջև, այդ կլիներ լավագույն մեկնությունը պաշտամունքի տեսակետից: Սեմելեն երկրի աստվածուհի է և Սալմոքսիսը կարող էր նշանակել որդի Սեմելեի:

Սակայն, հատուկ անունների, մանավանդ հին աստվածների, ստուգաբանությունը դժվարին է և միշտ վիճելի: Դեռևս հները հետաքրքրվում էին Զալմոքսիս անվան կազմով և կարծում էին, որ նա նշանակում է **արջի** կաշի՝ իբր թե Զալմոքսիսը ծնվելիս վրան արջի կաշի են ձգում:

Նորերը փորձեցին արդարացնել այս ստուգաբանությունը: Հայտնի

[1] Անդ, էջ 63:

ասորագետ և հայագետ Դը Լագարդը սկզբում տրամադիր էր համեմատել վերջին վանկը - **մոքս** հայերեն **կաշի** բառի հետ[1]: Բայց հետագայում նա հրաժարվեց իր մեկնությունից, գերադասելով տեսնել առաջին **Զալմ** վանկում պարսիկ չարմ **carm**, սանսկրիտ **carman**, որ նշանակում է **կաշի**[2]:

Այս մեկնությունը հավանություն գտավ Տոմաշեկի կողմից, միայն հակառակ Դը Լագարդի, որ վերջին մասը **-ոքս** համարում էր հայերեն **արջ** բառը, առաջարկում է մի ուրիշ մեկնություն:

Անտարակույս հին ստուգաբանությունը, որ աշխատում են հաստատել հիշյալ գիտնականները, լուրջ հիմ չունի և հեռու է Զալմոքսիսի իսկական իմաստը մեկնելուց: Սովորական նմուշ, այսպես կոչված, ժողովրդական ստուգաբանության: Հավանորեն **Զալմոքսիս** որևէ հնչական մերձավորություն է ունեցել այս կամ այն բառին **արջ** և **կաշի** նշանակությամբ: Այստեղից առաջ է եկել և այն հերյուրանքը, որ աստուծու վրան արջի կաշի են ձգել և որ միանգամայն անարժեք է: Բառի ծագումը մնում է տակավին խնդրական: Հատուկ անունների մեկնությունը դժվար է:

Թրակիական Զալմոքսիսին հարակից են թվում հայ Արան և նրա նախատիպար Երը:

Հերոդոտոսի վկայությամբ Թրակիայում սովորություն կար հարուստ մարդկանց մարմինը մեռնելուց հետո երեք օր պահել, որի ընթացքում կենդանիներ էին զոհում, լաց ու կոծ անում և թաղումը վերջացնում մեծ խնջույքով: Ատիս-Ադոնիսյան թաղման ծեսերը ևս երեք օր էին տևում, որին հետևում էր հարությունը: Երեքօրյա հանդեսները թվում է թե մի մանրանկար են Զալմոքսիսի երեքամյա չքացման:

Պարսիկների մոտ ևս ընդունված էր մեռելին երեք օր պահել[3], որովհետև հոգին երեք օր իբր թե մնում է անշնչացած մարմնի մոտ: Քրմական մեկնություն է, անշուշտ: Իսկական հիմը հողին որոշ ժամանակ հանգիստ տալու սովորությունն է: Մեռելին երեք օր անթաղ պահելու ավանդությունը ներշնչված է այն հավատով, որ նա կարող է վերստին կենդանանալ:

Նույն կարգի երևույթներ են և Էրի կամ Արայի հարությունը: Մամիկոնյան կտրիճ զորականի վերակենդանանալու հույսը նույն հին հավատալիքի արձագանք է (9):

Պլուտարքոսին վերագրված, հավանորեն անվավեր, մի գրության մեջ Կլեոմբրոտոս խոսակիցը պատմում է, որ իր ճանապարհորդության ժամանակ արևելյան երկրներում լսել է մի զարմանալի անձի մասին, որ տարին մի անգամ էր երևում մարդկանց, մնացյալ ժամանակը անցնում էր

[1] **De Lagarde**, Zur Urgeschichte der Armenien, էջ 39.

[2] Նույն, Gesammelte Abhandlungen, էջ 291:

[3] **F. Cumont**, Mitra, I, էջ 32.

դևերի և հավերժահարսների հետ, և այսպիսով օժտվում էր հրաշալի ձիրքերով (De detectu oraculorum, 21): Այս օտարոտի ճգնավորն ըստ Կլեոմբրոտոսի ապրում է քեն Կարմիր ծովի ափերին, բայց երևում է, որ այլ բան չէ, եթե ոչ Արևելքում գոյություն ունեցող հայտնի հավատալիքի արտահայտություն:

Հայ հավատալիքների կամուրջը Թրակիայի հետ ակներև է: Այս կարևոր հանգամանքը կարող է անսպասելի լույս սփռել էր և Արա անունների վրա, որոնց ծագումը թաղված է խորհրդավոր մթության մեջ:

Իրանական քաղաքակրթությունը այնպիսի մի վարագույր է ձգած հայ անցյալի վրա, որ ամեն մի հարցի առթիվ պարտավոր ենք ամենից առաջ հաշվի առնել Իրանի հնարավոր ազդեցությունը: Հայոց հին անձնական անունները սակավ բացառությամբ իրանական դրոշմ են կրում: Արդյոք Արաև ևս իրանական փոխառություն չէ՞, նման Վարդան, Տիգրան, Երվանդ, և այլ բազմաթիվ անունների:

Ավեստայում, Իրանի սրբազան գրքում, պատահում է արդարև Արա անունը Ara (**Յաշտ,** 3, 10): Սա մի սոսկ հավատացյալի անուն է: Հայտնի իրանագետ Բարթոլոմե, հեղինակ նշանավոր բառգրքի, **Արա** համարում է կրճատ կամ փաղաքշական ձևը **Aramatay** բառի, որ է **Arem + matay** բարեմիտ, կամ լավ մտածող: Նույն բառը **Armatay** ձևով ստանում է ի միջի այլոց **երկրի** նշանակություն, ինչպես և **երկրի աստվածության**:

Հայ **Սանդ-արամետ,** դարձյալ իրանական է, պահել է նույն **Armatay**-ի պահլավ կամ պարթևական ձևը **Aramet**: Սանդարամետի այլ և ավելի հին ձևն է Սպանդարամետ, որ նշանակում է «սուրբ երկիր» և «երկրի ոգի» միանգամայն:

Նշանակալից է, որ Մակաբայեցվոց գրքում (Բ. 6, 7) հունարեն բնագրի **Դիոնիսոս** բարգմանված է հայերեն **Սպանդարամետ:** Հայտնի է, որ Դիոնիսոսը Արիադնեի նկատմամբ նույնն է, ինչ որ Ատիսը՝ Կիբելեի և Ադոնիսը՝ Աստարտեի: Հետևապես Դիոնիս-Սպանդարամետը մոտենում է իր էությամբ հայ Արային մեր ըմբռնումով, այսինքն՝ իբրև երկրին կապակից աստուածություն: Եթե ճշմարիտ է Բարթոլոմեի ստուգաբանությունը, ապա ուրեմն, **Արա**-ն ոչ միայն պաշտամանական բովանդակությամբ, այլ և լեզվական տեսակետով, իբր բառ, նույնացնում է իրոք (Սպանդ) - **Արա**-մետի հետ, որպես նրա կրճատ ձևը:

Բարթոլոմեի ստուգաբանության օգտին է խոսում և Զոնդարա, որ Կապպադովկիական ձևն է նույն Spentarmat-ի և սրա նման 12-րդ ամսի անուն է[1]:

Սակայն, այս բացատրությունը մի թերություն ունի: Արա Ավեստայում հասարակ անուն է անհատի, և չի հիշվում իբր համանիշ Արամետի: Իսկ եթե

[1] **Th. Benfey** und **M. A. Stern**, Üder die Monatsnamen einiger alter Völker, 1836.

լոկ ժողովրդական ձևն է, ինչպե՞ս հասկանալ, որ նա այնպիսի պատվավոր տեղ է գրավել հայ միջավայրում, մինչդեռ անհետ կորել Իրանում:

Մյուս կողմից մոռանալու չէ բնավ, որ Արայի կից կա Էրը, որը թելադրում է ընդունել, որ իրոք հայերի մոտ գոյություն է ունեցել մի անուն անկախ իրանական Արայից: Մեզ թվում է, որ **Արա** ոչ այլ ինչ է, եթե ոչ զուտ հայ **Էր** իրանական ստվերով սքողված: Էրը այն աստվածն էր կամ դյուցազն, որ հայերը բերել էին իրենց հետ Արևմուտքից: Իրանական մթնոլորտում, շնորհիվ հնչական և գաղափարական մերձավորության, Էրը տեղի է տվել Արա ձևին: Իսկ թե ինչ էր նախնական Էրը, այդ պարզելու համար պետք է Պամփիլիայի վրայից գնանք ետ դեպի Թրակիա:

Հելլեն բազմաստված պանթեոնում մի անուն կա, որ նմանություն ունի հայ Էրին, այդ Արեսն է: Դիցաբանության հմուտներին տարօրինակ պիտի թվա երկու անունների մեջ աղերս որոնելու փորձը: Պատերազմի գոռ աստվածն այնքա՜ն հեռու է երազուն Էրից: Սակայն Արեսի հունական նկարագիրը նախնական չէ: Նրա սկզբնական էությունն ու ծագումը տակավին վիճելի է: Կարծողներ կան, որ ստորերկրյա աստվածության գաղափարն է, որ բնորոշում է Արեսի հնագույն տիպը: Երկրի խորքերից նա կյանք և բարերարություն է զեղում, կամ մահ և ավերածություն է սփռում: Վերջին հատկությունից զարգանում է պատերազմի և սրածության ոգին: Նույն ուղիով, ինչպես Իշտար դառնում է պատերազմի աստուծու Ասսուրի կինը, այնպես էլ Արեսն արժանանում է գեղանի Ափրոդիտեի սիրույն: Ուրիշ խոսքով նա մոտենում է Ադոնիսյան տիպարին: Վկա է և առասպելը, որի համաձայն Արեսը վարազի կերպարանքով սպանում է իր ախոյանին, դժբախտ Ադոնիսին կամ ինչպես հույն-ասորական հյուսվածն է ասում, սպանում է Թամուզին գեղեցիկ Բելտիսի սիրույն համար:

Արեսը համարվում է նաև հայր Ատիսի[1]:

Ադոնիսին սպանելով և Ատիսի հայր ձևանալով Արեսը երևան է գալիս իբրև նրանց վաղեմի ժառանգորդ ոչ որդիական, այլ հայրական իրավունքով:

Այս դիցաբանական գծերը վերապրումներ են հնագույն գրության, երբ մարտագոչ աստվածը հայտնի էր ավելի մեղմ բարքով, Ատիս-Ադոնիսյան պատկերով, թևակից ունենալով Ափրոդիտե-Կիբելե կանացի էությունը:

Արեսը բնիկ թրակացի է: Հոմերոսը նրա բնակավայրը համարում է Թրակիան: Այստեղից է նա հարձակվում Թեսսալիա և Բեովտիա, այստեղ է ապավինում Ափրոդիտեի հետ ունեցած հայտնի սիրային արկպծից հետո: Հաճախ երևան է գալիս զինված թրակացու նման և մարմինը կիտված: Եվ վերջապես Թրակիան կոչվում է նրա անունով Արեա:

---

[1] **Tomaschek**, Die alten Thraker, II, էջ 55, աղբյուր է ցույց տալիս Պրոկղի Tetr., II, 97, սակայն կոչումը ճիշտ չէ: Հավանորեն ուրիշ տեղից է քաղած:

Վիճելին այսպիսով Արեսի հայրենիքը չէ, այլ նրա անվան ծագումը: Արդյոք անունը նմանապես թրակիակա՞ն է:

Հունական պանթեոնը հարուստ է այլազան բնակիչներով: Նրանց մի մասը ավանդ է նախահելլեն բնակչությունից: Հունական են համարվելու այն անունները, որոնք մեկնելի են նույն լեզվի բառամքերքով: Լեզվագետները տրամադիր են **Արեսը** հանել հույն **արե**, «բռնություն, վնաս» սանսկրիտ **arus** «վերք» բառից:

Այս ստուգաբանությունը, որի հիմը պատերազմի աստուծու ավերիչ ոգին է, պայմանական է և եթե պարզվի, որ Արեսը սկզբնապես պատերազմի աստված չէ, պիտի կորցնե իր արժեքը:

Արդ Արեսի մասին շատ տարբեր կարծիքներ կան: Ոմանք համարում են նրան ամպրոպային աստված[1], ոմանք՝ երկնքի[2], ուրիշները՝ երկրի կամ ստորերկրյա և վերջապես կան ընդունողներ, որ նա լույսի և արևի աստվածություն է[3]:

Մեր անձնական դիտողությունները բերում են ուրիշ հետևանքի: Եթե ուշի-ուշով կրկտելու լինենք Արեսի շուրջը դիզված դիցաբանական ատաղձը, կտեսնենք այնպիսի գծեր, հնանիշ ակնարկներ, որ վերաբերում են նրա սկզբնական կյանքին և լուսավորում նրա առաջին քայլերը: Հոմերոսի մոտ Արեսի մերձավորը կոչվում է Ենիո, որը նրա համար և մայր է, և՛ աջակից կովում (**Իլիական**, Ե, 592): Այս է պատճառը, որ Արեսը կրում է երբեմն նրա անունը, Ենիական: Արեսի կապը Ենիոյի հետ հին հիշողություն է և կարևոր: Թվում է, թե Ենիո կանացի դեմքը ոչ այլ ոք է, եթե ոչ Ափրոդիտեի նախորդը: Պելազգական Ափրոդիտեն գրավել է թրակացի Ենիոյի դիրքը Արեսի նկատմամբ: Այնինչ Թեբեում Ափրոդիտեն արդեն Արեսի կինն էր համարվում, Լեմնոսում նրա օրինավոր ամուսինը տակավին Հեփեստոսն էր և Արեսի տարփանքը Ափրոդիտեի հանդեպ ապօրինի էր նկատվում, ինչպես երևում է ցանցի սիրային արկածից, երբ Հեփեստոսը իբր խաբված ամուսին հետապնդում է իր երջանիկ հակառակորդին՝ Արեսին: Ենիոյի և Արեսի մտերմությունը չէր մոռացված դեռևս IV դարում: Թրակիայում սովորություն կար գերիներին զոհել Արեսին և Ենիոյին[4]:

Թվում է, որ այս զույգի հարաբերությունը ավելի բարդ է եղել քան Արեսի և Ափրոդիտեի և մոտ Ատիս-Կիբելյան սերտության: Կարծում ենք, որ

---

[1] **Preller,** Gr. Mith., I, 226.

[2] **Lauer,** Syst. d. Gr. Mith., 242.

[3] **Welcker,** Gr. Goetterlehre, I, 405.

[4] **Ammiani Marcellini,** XXVII, 44.

Ենիոյի անունն իսկ **Enn, Enuo,** ուրիշ բան չէ, եթե ոչ **nana, nina** անվան մի այլ ձևը, և պատկանում են այն բառերի թվին, որ Կրեչմեր գիտնականը կոչում է **Lallnamen**, այսինքն՝ մանկական թոթովք: Մի քանի դյուրահնչյուն ձայների, որպիսին են **պ, մ, ն,** կրկնությամբ կազմվում է մանկական առաջին բառարանը, ուղղված իր ծնողներին: Ենիո, նանա նշանակում են **մայր**:

Հիշենք, որ Նանա էր կոչվում և Ատիսի մայրը Սանգար գետի զարմանալի աղջիկը, որ Ագդիստի կամ Կիբելեի արյունից բուսած նուշն իր ծոցն առնելով հղիացավ և կյանքի կոչեց Ատիսին: Հավանական է, որ նման մի առասպել գոյություն ունեցած լինի և Արեսի վերաբերյալ: Օվիդիոսն ասում է, որ Հերան ծնել է Արեսին մի հրաշալի ծաղկից, ուրեմն առանց Զևսի մասնակցության (**Fast.**, V, 229): Հերան այստեղ նույնանիշ է Նաներին և ուրեմն Արեսը՝ Ատիսին:

Ուշագրավ է նաև Արեսի կապը վիշապի հետ: Պինդարի հեղինակավոր վկայությամբ, Արեսի հայրը վիշապն է, և նույնժամայն երկրից և Արեսից է ծնված վիշապը: Այստեղ երկիրը նշանակ է Երինիսի, որ է Արեսի կինը:

Երինիսը մեզ արդեն հայտնի Ենիոյի մի այլ դեմքն է: Միևնույն անձը և՛ մայր է և՛ կին, միևնույն անձը և՛ հայր և՛ որդի, ինչպես Արեսն և վիշապը, հար և նման փոյուգական նվիրախորհուրդի հայտնի ձևակին. «ցուլը՝ ծնունդ վիշապի և վիշապը՝ հայր ցուլի»:

Նկատելու է, որ օձը մայր աստվածուհու խորհրդանշաններիցն է. սրբազան կենդանի է, որ ապրելով երկրի խորշերում, բնականորեն աստվածուհու մտերիմն է համարվում: Օձի մի այլ պատկերն է փոյուգական Սաբազիոս կամ Սավազիոս աստվածը, որ մայր աստվածուհու վերաբերմամբ համահավասար է Ատիսին:

Մի ուրիշ հնանիշ գիծ: Հոմերոսը (**Իլիական**, Ե, 385) պատմում է, որ Ալոյադները բռնել և փակել էին Արեսին «երկաթե թունիրում, 13 ամիս շարունակ, որովհետև նա սպանել էր Ադոնիսին որսի ժամանակ»: Ալոյադները, ինչպես վկայում է իրենց անունը (հունարեն) ներկայացնում են հունձն և կալ ու կուտը: Նրանց զինակցությունը Ադոնիսին, բուսականության տիրոջ, հասկանալի է: Արեսը, որից վրեժ է խնդրում, ևս օտար ոմն չէ: 13-ամսյա բանտարկությունը նույն կարգի այլաբանություն է, ինչպես Զալմոքսիսի եռամյա անհետացումը և ակնարկում է հողի տարևոր հանգստին:

Ասել է, թե Արեսին ևս հատուկ էր քնելու կամ մեռնելու և հառնելու կարողությունը: Կերամոս քաղաքում, որ Արեսի բանտարկության-տեղն էր, պահվում էր նրա աճյունը, ապացույց, որ նա տեսել է մահ և կենդանացել:

Բոլոր այս դիտողությունները, որ այնպես բնորոշ են Ատիս-Ադոնիսյան տիպարի աստվածության, թելադրում են ընդունել, որ Արեսն ևս սկզբնապես, իր երիտասարդ օրերին, նույն դասի աստված է եղել: Քանի որ

հայ Էր-Արաև էլ նման բնություն ունի, և երկնքից ընկնելուց հետո շարունակել է երկրի վրա պահել իր հինավուրց նկարագրի ամենակարևոր գիծը, ոչ մի արգելք չկա մոտիկ առնչակցություն տեսնել Էր և Արեսի միջև:

Շատ նշանակալից է, որ երկուսն էլ աղերս ունեն շան հետ: Շունը համարվում էր Արեսի նվիրական կենդանի, որպես պատերազմի դաշտի դիակների անխուսափելի այցելու: Հունաստանի մի քաղաքում շուն էին զոհաբերում Ենիալին, ավելի ճիշտ շան ձագ (**Պավսանիաս**, Գ. 14, 9), իսկ Ենիալը նույն Արեսի պատկերն է:

Արային կենդանացնողը Արալեզը կամ Առլեզն էր, որ առաջ էր եկած շնից, ինչպես վկայում է մատենագիր Եզնիկը:

Չենք կարծում, որ հին հավատալիքով բոլոր դիակները անխտիր մատչելի համարվեին շների լափին: Արեսի հակառակորդներին էր անշուշտ վիճակված անարգ կուր լինել շներին: Նրանք, որ ընկնում էին կռվի դաշտում, վայելելով Արեսի հովանավորությունը, իբրև նրա կողմնակիցներ, արժանի պիտի լինեին այլ բախտի: Շները նրանց չէին լափում, այլ Արեսի հրամանով լիզում էին ընկածների վերքերը, բուժում այդ ընտրյալների խոցերը և վերակենդանացնում: Առլեզները այսպիսով բարի շներ են և գործ ունեն հերոսների, այսինքն՝ Արեսի սիրելիների հետ:

Նմանությունը աչքի է ընկնում և այլ կետերում: Ինչպես որ սեմական Թամուզն ուներ իր համանուն թամուզ ամիսը տարվա մեջ, երբ տոնվում էին նրա հանդեսները, այնպես էլ Արեսին հատկացված էր որոշ ամիս: Թեսսալիայում գարնան ամիսն էր, որ կոչվում էր Արեյոս, Բյութանիայում՝ ամառվա ամիսը: Բուսականության ոգին հակում ուներ դեպի գարնան մեղմ արևը կամ դեպի լուսինը, որի շողերը այնքան բարերար էին համարվում բույսերի համար, և կամ դեպի արևը, որի կիզիչ ճառագայթները և կենսատու, և՛ կորստաբեր էին նկատվում: Այս հետևանքով տոները կատարվում էին գարնան և կամ ամառը:

Թվում է, որ հայ Էր-Արան ևս իր հատուկ ամիսն է ունեցել, և թերևս այնպիսի ծագում ունի հայ տոնացույցի Արաց խորհրդավոր ամիսը:

Ատիսի սրբազան ծաղիկն էր մանուշակը, բուսած նրա արյունից: Ադոնիսն ընտրել էր պուտ ծաղիկը (անեմոն): Հայերենում հիշվում է **արանց** ծաղիկ, որ գուցե ուղղելի է **արաց** և կապ ունի Արայի անվան հետ:

Դիցաբանական մերձավորությունը հայտնաբերելուց հետո անտեղի չէ հարց դնել, արդյոք Արես և Էր-Արա անուններուն մեջ ևս ազգակցություն չկա՞:

Վելկեր գիտնականը, որը համարում էր Արեսին աստված հրատապ արևի, ինչպես հիշեցինք վերև, հնարավոր էր գտնում նաև ստուգաբանորեն կապել Արես հայ **արև** բառի հետ: Տակավին վիճելի է, արդյոք **Արես** հինդ-եվրոպական բառ է, թե թրակյան ժառանգություն է նախնի բնակչությունից:

Արեսի պաշտամունքը տարածված է եղել Թրակիայից մինչև Փոքր Ասիայի արևելյան ծայրերը, ոչ միայն Մակեդոնիա, Թեսսալիա, Հունաստան, այլ և Փոքր Ասիայի երկիրները, մանավանդ Բյութանիա, Պամփիլիա, Կարիա, մինչև Կողքիս և Հայաստան: Կիրասունի դեմ «Արեսի կղզի», Արետյաս քաղաքը և «Արեսի պարտեզ», որ էր Կողքիսում ապացույց են, որ Արեսն ընտանի է եղել մերձակա Պոնտոսի ափերին: «Արեսի պարտեզն» այն տեղն էր, ուր պահվում էր հռչակավոր ոսկեգեղմը:

Տեսանք, որ հայերին ևս հայտնի էր Արեսը իբրև ախոյան առասպելական Դիորփոսի: Մի ավանդությամբ Արեսի որդին էր կարծվում Խալիբս, այսինքն՝ Խալիբ քաջածանոթ ցեղի նախահայրը[1]:

Այս և նման զրույցները նշան են Արեսի ժողովրդականության նաև կովկասյան կոչված ժողովուրդների մեջ:

Չի կարելի ժխտել, որ հույն գաղթականությունն է բերել Արեսին Արևելք: Քրիստոսից առաջ յոթերորդ դարից հույներն արդեն հաստատված էին Տրապիզոնի շրջանում: Արդյոք հունական Արեսի ժողովրդականությունը հիմն չունե՞ր տեղական հին պանթեոնում[2]:

Ամեն պարագային մեր ելակետն ոչ այնքան լեզվագիտություն է, որքան դիցաբանական նկատումները: Հետաքրքրական է, որ Արեսը և Էր-Արան թվում է թե զարգացման միևնույն ուղիով են ընթացել:

Հեսիքիոս իր բառագրքում մակեդոնական **Արուտոս** ձևի հանդեպ դնում է Հերակլես, այսինքն՝ Արես: Հայ մատենագրությունից հայտնի է, որ Վահագնը նույնն է, ինչ որ Հերակլեսը կամ Արեսը: Վահագնի վերաբերյալ գուսանական երգը՝ **Երկներ երկինք,** եթե հիրավի Վահագնին է նայում, նրան նկարագրում է իբրև արևի աստված: Վահագն Վերեթրագնա, Հրուգենի

---

[1] **Appol,** Rhod., II, 373.

[2] Վրացերեն լեզվում կա **արն** բառը, որ նշանակում է կողմ և եղանակ: Բառը հին է և պատահում է **Սաղմ**. 73, 17, **արն զազափխուլիսա**, որ է «գարնան եղանակ»: Եթե միայն վրացի **արն**, հույն **արն** բառը չէ Պոնտոսի տեղական բարբառներից առնված, որ արմատակից պարսիկ hava, որտեղից հայերեն ախտա-հավակ (Խորենացու Ողբի մեջ) պետք է ենթադրել, որ առաջմ անտես թելերով կապված է լիտվերենի **oras** «եղանակ, արձակ օդ» նշանակությամբ: Վալդեի համեմատությունը լատիներեն **area** «արձակ տեղ, կալ» բառի հետ համոզիչ չէ:

Հատուկ անունները, որքան հին, այնքան ավելի անմատչելի են ստուգաբանական վերլուծման: Ճշմարտության սահմանները նեղ են, իսկ հնարավորության՝ շատ լայն են: Վրացի **արն** բառը կարող է և հայ Արայի հասարակացումն լինել: Հայ դիցաբանության մի ուրիշ անուն, որ հետագայում Արայի նման արքայական զգեստով է հանդես գալիս, անցել է Վրաստան և այնտեղ մնացել հասարակ անվան նշանակությամբ: Ի նկատի ունենք Արտավազդ անունը, որ «Վիսռամյան»-ի (էջ 108, 189) հայտնի վեպում գործ է ածվում հասարակ կախարդի իմաստով:

մականունն է և առնչություն չունի արևի հետ: Վահագնի արևացումը բուն հայկական բնույթ ունի և բացատրելու է նրանով, որ Վահագնին է անցել տեղական մի ուրիշ աստուծու ժառանգությունը, լծորդված արևին: Ուրիշ խոսքով, իրանական անվան տակ սքողված է զուտ հայկական աստվածություն, որի հարազատ անունը Էր-Արայի մոտն է որոնելու: Ինչպես որ մակեդոնական Արեսը, որ է Արոտոսը հեղաշրջված է Հերակլեսի, այնպես էլ հայ Էր-Արան դառնում է Վահագն, արևելյան Հերակլես:

* * *

Աստվածների **կերպարանափոխությունը** արձագանք է հասարակական կյանքի հեղաշրջման հիմնական հանգույցների:

Սկզբնական շրջանում, երբ մարդը մաքառում էր առավելապես բնության և նրա արհավիրքների դեմ, ամենաշունչ արևը, կյանքը և նրա հարափոփոխ ելևէջները պայմանավորող ուժերը, մարդու և շրջապատի մահն ու վերածնունդ պատճառող ոգիները առաջնակարգ տեղ պիտի գրավեին նախնի պանթեոնում և նրա զարդը կազմեին:

Այնուհետև բնության կռվին ավելանում են նոր հղացումներ, նոր ցավեր: Համայնքը ստիպվում է զենք առնել հարևան ցեղերի դեմ կամ ինքնապաշտպանության համար կամ նոր նվաճումներ և ապրուստի թարմ դաշտեր գտնելու նպատակով: Ուժի և բռնության ահարկու աստվածն է, որ գալիս է այս պայմաններում կապտելու առաջին գահը պաշտելի երկնքում:

Հաջորդ շրջանը պատկանում է հերոսներին, հրաշագործ դյուցազուներին, Հերակլեսի և Վահագնի նմաններին, որոնք սխրագործությամբ և խիզախ արկածներով խմորում են ժողովրդական ոգին համայնական գիտակցությամբ, բարձրացնելով ցեղային կամ ազգային համերաշխության դրոշը:

Բնության աստուծու դերը պատերազմի աստուծուն անցնելիս, նրան են անցնում նաև առաջնի երբեմնյան զուգակցի մայր աստուծուհու մտերմությունը: Հետո Ափրոդիտեն Արեսից անցնում է Հերակլեսին, Իշտարը աշխատում է շահել Գիլգամեշի սերը:

Նրանց հետևում է և մեր Աստղիկը, որ դառնում է Վահագնի տարփալին և «Վահագնի սենյակ»-ն է նրա առանձնության տեղին:

Դիցաբանական և լեզվաբանական պատերը այսպես ասած ճանկռտելով, այստեղ ու այնտեղ կռվաններ որոնելով, աշխատեցինք բարձրանալ դեպի մեր հեռավոր նախնիքների սրբավայրը, ուր պերճորեն բազմած էին մայր աստվածուհին և իր անբաժան մտերիմը, երկնքի և երկրի երբեմնյան վեհապանծ տերերը:

Որքան թանկ են մարդու համար մայր բնության բարիքները, նույնչափ զորեղ է նրանց տնօրեն գերագույն էակների հրապույրը: Թե որքան խոր արմատներ է ունեցել ժողովրդական աշխարհայացքում այդ հինավուրց պաշտամունքը, կարելի է դատել նրանից, որ նրա հեռավոր ղողանջը տակավին այժմ հնչում է կենդանի միջավայրում հազարավոր տարիների տարածության վրայից:

Փոքր Ասիայի հռչակավոր Մելևի դերվիշները, հայտնի իրենց աղմկալից պարերով, որոնք ունին իրենց մենաստանը նաև Կ. Պոլսում, ոչ այլ ոք են, եթե ոչ փռյուգական մոր Կիբելեի և Ատիսի ավանդակիրները, նրանց **gallus** կոչված քրմերի խոսուն ուրվականները:

Դարձյալ մուսուլման **շախսե-վախսե** կոչված արյունռուշտ արարողությունները բաբելոնյան վերապրումներ են Իշտարի և Թամուզի: Իսլամի թանձր և հեղձամղձուկ մթնոլորտը անզոր է եղել արմատախիլ անել հին պաշտամունքը, որ իր արտասովոր տոկունությամբ հարատևել է, համակերպվելով արտաքուստ նոր միջավայրին:

Եզիտների կրոնը իր **մելիք թաուզով**, որ մնում է գաղտնիք, չնայելով բոլոր և այլազան մեկնությանց, թվում է մեզ, որ սերտորեն կապված է զույգ աստվածության պաշտամունքի հետ: **Մելիք թաուզը** ուրիշ ոք չէ, եթե ոչ ինքը Թամուզը, Իշտարի սիրելին: **Thawaz-Thamuz:** Այս տեսակետից պետք կա վերհայելու եզիտների մասին հավաքված նյութերը, որ սակայն ներկա խնդրիցս դուրս է:

Բերածս օրինակները ցույց են տալիս, որ ամբողջ Առաջավոր Ասիայում երբեմն տիրական պաշտամունքը պահել է իր վաղեմի շունչը հակառակ պատմական բոլոր հողմերի և Հայաստանից արևմուտք և հարավ: Իրավունք ունենք սպասելու, որ հայ միջավայրում ևս անհետ պիտի չկորչեին փշրված սեղանի բեկորները: Եթե այդ սեղանի վրա կանգնած հայացք ձգենք հայ եկեղեցու սկզբնավորության կապակից ավանդությունների և զրույցների վրա, դժվար չէ նշմարել հին դիցաբանության ցոլքերը սփռված աստ և անդ:

Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ թագավոր մի կողմից, սուրբ կույսեր՝ Հռիփսիմե, Գայանե, Նունե մյուս կողմից, հայ կրոնական վերաձորոգության այդ սրբազան պատկերներն իրենց բարձր հեղինակությունն ու սրբությունը պարտական են ոչ միայն իրենց մարտիրոսական արյան, այլ թվում է թե մասամբ և այն դարավոր թանկագին հուշերին, որ հին պաշտամունքից անցել է նրանց: Անբնական զրույցներն և առասպելներն այնպես են մթագնել Լուսավորչի և նրա գործակիցների կյանքը, որ նրանց պատմական իրական դիմագծերը խեղդված են կամ հազիվ նշմարելի թանձր մշուշի մեջ:

Մի՞թե անպատասխանատու երևակայության, պատմիչի կրոնական հափշտակության արդյունք են դրանք: Բայց երևակայությունն անգամ սնվում է իրական կյանքով և նրա թևերը, որքան էլ հեռու գնան դեպի ցնորական հորիզոնները, կերտված են աշխարհային նյութերից: Իսկ սրանք հաճախ ոչ այլ ինչ են, եթե ոչ հին հոգևոր կյանքի վերապրումները:

Թվում է, թե հին հավատի մարած արևի շառագունած երկինքը թողել է մի քանի շողեր նոր ավետաբերների, Լուսավորչի և Տրդատի կյանքի վրա: Արդարև ի՞նչպես պիտի հասկանանք Լուսավորչի մուտն ի վիրապն և ելն ի վիրապեն: Բազմազան չարչարանքների վերջաբանություն է մեծ նահատակին ընկերացնել օձերի հետ խոր վիրապի մեջ: Ի՞նչ է նշանակում այս արտասովոր պատիժը: Կարծե՞լ որ գրական հետևություն է Դանիել մարգարեի արկածին, որին նույնպես Նաբուգոդոնոսորը ձգեց մի խոր փոս, ուր պահվում էին առյուծներ: Շատ կարելի է, որ նմանություն կա, բայց ոչ այն մտքով, որ հայ գրիչը փոխ է առնում Աստվածաշնչից, այլ որ երկուսն էլ անջատ վերապրումներ են հին անցյալի նման հավատալիքների:

Հանգուցյալ Գալուստ Տեր-Մկրտչյանը հրատարակելով մի հին և ընտիր թարգմանությամբ վկայաբանություն[1], այն միտքն հայտնեց, որ Ագաթանգեղոս օգտված է այս հիշատակարանից:

Գորիա և Շմոն եղեսիացի էին և այնտեղ մարտիրոսացել են Դիոկղետիանոսի օրով, ժամանակակից էին, ուրեմն և մեր Լուսավորչին: Սրանց և Լուսավորչի չարչարանքների մեջ որոշ նմանություն կա: Նախ երկուսին էլ կախում են մի մի ձեռքից, հետո մի մի ոտքից, այնուհետև նետում են մի փոս և հանում գլխատում սրով:

Հետաքրքրական է մանավանդ փոս ձգելու դեպքը. «Հրամայեաց դատաւորն իջուցանել զնոսա ի կախաղանէն և տանել արկանել ի գուբ մի խաւարային, **որ կոչի վիրապ,** եւ հարկանել զերկոսին ոտս նոցա ի կոճեղս մինչեւ ցառաւօտ: Եւ տարաւ արգել զնոսա ի գուբն խաւարային եւ ծեփեցին **զերդ եւ զդուռն գբին**... եւ զկնի **երից տուընջեան եւ երից գիշերոյ** զի ոչ տեսին նոքա լոյս, բացին զդուրս գբին յերեսաց նոցա եւ պահեցին անդէն ի նոյն գբի, ուր արգիլեալ էին զնոսա զիրոտից ամիս ի գլուխ եւ զնաւասարդի եւ զհոռի մինչեւ ի չորիքտասաներորդն քաղոց»:

Այնուհետև հանում են գբից և կախում ոտից միմիայն Շմոնին, և որովհետև դարձյալ համառում էին, «հրամայեաց իջուցանել և տանել արգիլուլ զերկոսեան ի գուբն յորմէ ելին»: «Եւ յաւուրն հինգետասաներորդ քաղոց ամսոյ, յորում լուսանայր երեքշաբթին, ի ժամու զի խաւսեալ էր հաւու երիցս անգամ», սրով գլխատում են:

[1]«Հիշատակ Դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից», տես «Արարատ», 1896, օգոստոս-սեպտեմբեր:

Հույն Հայսմավուրքի Փարիզի գրչագիր օրինակում ասված է, «Ի խաւար տեղի բանտին»:

Հետաքրքրական է, որ հույն *λάκκος* **լակկոս** բառը Ս. Գրքում թարգմանված է սովորաբար «գուբ», օրինակ Ծննդ. ԼԳ, 20 այլ և 22, և 24, Բ Թագ. ԺԷ, 18, Դանիել Զ, 8, Բ. Մակաբ. Ժ, 37. այլ և նայած մտքին երբեմն **«հոր»**, Ելից ԻԱ, 35, կամ **«ջրհոր»**, Ելից ԻԱ, 33, այլ եւ **«խորխորատ»**, Ելից ԼԲ, 23 և **«վիճ»** Ա. Մակաբ. Թ, 33: Միայն մի անգամ թարգմանված է **«վիրապ»**, Ելից ԺԲ, 29, ինչպես երևում է, բանտի իմաստով, որովհետև խոսքը գերիների մասին է:

Ճիշտ այս մտքով է գործ ածում և Եղիշեն, երբ որ հավատափոխ մոգպետի հասցեին Դենշապուհն սպառնում է աքսորել մինչև Մակուրան և «անդ ընկեցեալ զնա ի վիրապ մի եւ ընկալցի զմահ թշուառութեան»:

Գորիա և Շմոնի գուբը նմանապես ավելի բանտ էր քան վիրապ այն մտքով, ինչ որ ունի Լուսավորչի պատմության մեջ: Վկաների գուբը երդ և դուռն ունի, «ծեփեցին զերդ եւ զդուռն», մի հանգամանք, որ զանազանում է այս գուբը իբրև մի սովորական արգելարան Լուսավորչի վիրապից:

Հույն ընդարձակ վկայաբանության մեջ, որ հայերենի նման թարգմանություն է ասորի բնագրից, և պահված է Միտափրաստի մոտ, գրի համար ասված է. «խավար գուբը, որ էր **այդպէս ըստ անուան և ըստ էութեան**»[1]: Սրա փոխարեն հայ թարգմանիչն ունի՝ «գուբ մի խավարային, **որ կոչի վիրապ**»:

Հույնի իմաստն այն է, որ գուբը որ խավար է կոչվում իսկապես խավար էր: Նույն միտքը հայն արտահայտում է դիմելով վիրապ բառի օգնության, «խավար գուբը» համեմատելով վիրապի հետ, իբրև ավելի որոշ և հասկանալի հասկացողության հետ:

Ասել է, թե թարգմանչի ժամանակ **վիրապ** հազվագյուտ բառն արդեն ստացել էր այն առանձնահատուկ իմաստը, որ կապված է Լուսավորչի անվան: Հույն լակկոս «գուբ» հաճախ է պատահում վկայաբանական գրականության մեջ, այսպես գուբ են ձգում Գոլինդուխտ կույսին, Մորիկ և Խոսրով թագավորների օրով, որ նախապես պահված էր «մոռացության բանտում», որ նույնն է ինչ որ Արշակի Անհուշ բերդը:

Բայց Լուսավորչի գուբը, վիրապն իր ուրույն դրոշմն ունի: Ինչ նմանություն էլ լինի Գորիա և Շմոնի վկայաբանության և Ագաթանգեղոսի մեջ, միանգամայն անկարելի է, որ Լուսավորչի վիրապի պատմությունը փոխառություն լինի վկայաբանությունից: Պետք չէ մոռանալ, որ ասորի վկայաբանությունն ինքն մի անվավեր գրություն է և չէ ծագում բնավ

[1] **Migne**, P G 116, col. 136.

ժամանակակից և չարչարանքին ներկա գրչից, ինչպես հավատացնում է վկայաբանության հեղինակ Թեոփիլոսը: Գալուստ Տեր-Մկրտչյանը համարում էր «պարզ և սրտառուչ» իբր վավերական գրություն: Սակայն, այժմ պարզված է, որ վկայաբանությունը հերյուրված է 350-450 թվականների միջոցին, հավանորեն 390 թվի մոտերը, այսինքն՝ վկաների նահատակությունից գրեթե մի դար հետո, հայ դպրության ծագման նախօրյակին[1]:

Թողնենք առայժմ հայ թարգմանության ժամանակի խնդիրը, որին դառնալու ենք ուրիշ անգամ: Նույնիսկ ասորի բնագրի երևալու ժամանակ Լուսավորիչն արդեն խոշոր հեղինակություն է ճանաչված, որպես սրբությամբ և գերահրաշ զորությամբ առաքինացած եկեղեցու հիմնադիր: Նրան վերագրած 12 չարչարանքների մեջ միակը, որ տեղական կերպարանք ունի և կապված է նույնիսկ աշխարհագրապես երկրի հետ, այդ վիրապի պատմությունն է: Մյուսները, ինչ և լինի նրանց պատմական հիմը կամ առիթը, կրում են ընդհանուր վկայաբանական բնույթ և թերևս շատ կետերում կամ գծերում արդյունք են վերջին խմբագրի գրական ճաշակի:

Սխալ կլիներ կարծել, որ Լուսավորչի փառքը հիմնված է Ագաթանգեղոսի վրա: Լուսավորչի կյանքը, թվում է որ, զարդարված է եղել ավելի շողշողուն և հրաշալի գրույցներով, ավելի կենդանի առասպելներով, որ բնականորեն պիտի կուտակվեին հին և նոր կրոնական հասկացողությանց ընդհարման կենտրոն կազմող անվան շուրջը: Ագաթանգեղոսի վերջին խմբագիրը իբր քրիստոնյա լուսամիտ ոմն գտել մաքրել է Լուսավորչի կենսագրությունն իր ժողովրդական տարրերից, իր իսկական արդուզարդից և վեր է ածել մի սովորական վկայաբանության հազար ու մի սրբերի հատուկ անհնքնագիծ տանջանքներով, որոնց ուսումնասիրությունը միայն գրական հետաքրքրություն ունի և ոչ պատմական: Արտառոց չարչարանքներից հյուսած լուսապսակի մեջ սակայն միայն վիրապի դեպքն է, որ փայլում է կեղծ քարերի մեջ իբր իսկական գոհար հնության խորհրդավոր փայլով:

Վիրապի հրաշքի պատմական հիմը ուրիշ բան չէ, եթե ոչ այն, որ մահապարտ Գրիգորը բանտարկված է եղել Արտաշատում: Հավանորեն բանտը կոչվում էր Վիրապ, որպիսի իմաստ պահված է Ս. Գրքում, ինչպես հիշեցինք:

Սակայն, մեզ թվում է, որ արքայական այդ հասարակ բանտի վրա, ընկել, մնացել է հին կրոնի վերջին հիշողությունը, ինչպես հալածական ամպերի հետին բեկորի ստվեր: Եվ այդ ստվերն է, որ սովորական բանտը դարձրել է վիրապ և տվել նրան Ագաթանգեղոսյան կամ Լուսավորչյան իմաստը:

[1] **Harnack**, Geschichte d. alter. Litterature, II, 474.

Մեղապարտ Գրիգորը փակվում է անլույս մի փոսում երկար ամիսներ, գուցե տարիներ, որպեսզի հետո ելնե և լուսավորե հայ աշխարհը նոր լույսով: Հին հավատալիքի դողանջն է, որ լսվում է վիրապի շուրջը, այն հավատալիքի, որի զորությամբ Թրակացի Զալմոքսիսն անհետացավ գետնի տակ մի փոսի մեջ, մնաց այնտեղ երեք տարի թաքնված, հետո ելավ նոր առաքելության համար:

Ստրաբոնի տեղեկությամբ, Զալմոքսիսը սկզբում քուրմ էր, հետո աստվածացավ, և որ քաշվում էր անմատույց տեղեր, և ճգնում էր քարայրներում, և տեսակցում միմիայն թագավորի հետ ու նրան պատգամներ տալիս: Այս է պատճառը, ավելացնում է հռչակավոր աշխարհագիրը, որ այժմ էլ Գետ թրակիական ժողովրդի թագավորը միշտ մի խորհրդական ունի, որ և համարվում է աստված[1]:

Նույն կերպ և Ատիսը, Ադոնիսը և նման աստվածությունները ու դյուցազները տարեց տարի անհայտանում էին, որ հետո երևան, մեռնում էին, որ հետո հարություն առնեն: Արեսն էլ, տեսանք, մնաց 13 ամիս կալանավոր երկաթե թոնիրի մեջ, ուրեմն փոսի մեջ և հետո արձակվեց:

Հռչակավոր Զրադաշտը, Իրանի մեծ մարգարեն, նմանապես փակվեց թագավորի հրամանով, փոսի մեջ **Zendani gah**, ուր մի բարեպաշտ ամեն օր հաց էր ձգում[2]:

Հայ բուն ժողովրդական միջավայրում, ռամիկ խավերում (ոչ տիրող նախարարական շրջանում) տակավին մեռած չի եղել հինավուրց հավատալիքը: Եվ այդ է, որ Գրիգորին 13 տարի ապրել է տալիս խոր և անլույս վիրապի մեջ:

Զարմանալի չէ: Հայտնի է, որ նույնիսկ մեծ վարդապետի՝ Հիսուսի կյանքը զերծ չէ հին վերապրումներից, քանի որ նրա չարչարանքը և երեքօրյա հարությունը որոշ չափով մի խորհրդավոր անդրադարձ է Ադոնիսյան կարգերի: Զատկական տոները տեսանք, որ Ադոնիսյան հանդեսների ընդօրինակությունն են նոր բովանդակությամբ: Հրեական Պասեքը իր արմատով ևս Թամուզի պաշտամունքի հետանկարն է, որ քահանապետական գիտուն մեկնությունը աշխատել է հարմարեցնել հրեական անցյալի նշանավոր երևույթներին: Գարնան հասարակածի շուրջը բևեռած տոնական հանդեսները նույն հին պաշտամունքի աղոտացած հուշերն են:

Եթե եկեղեցու տեսակետից Զատիկը հրեական Պասեքի արտատիպն է. ժողովրդյան համար հնի նոր կերպարանավորումն է:

---

[1] **Strabon,** VII, 3, 5.

[2] **Fr. Rosenberg,** Le livre de Zoroastre, Zaratustnama (1904), էջ 49.

Ագաթանգեղոսի ասելով, Լուսավորիչը մնում է վիրապի մեջ 13 տարի (ԺԱ-ԺԲ): Նկատենք անցողակի, որ գլ. Ի, ԻԱ, ԻԲ նույն պատմիչը հաշվում է 15 տարի, ակներև ապացույց է, որ Ագաթանգեղոս խմբագրական գործ է, տարբեր աղբյուրներից քաղած:

Տեսանք, որ Ատիս-Ադոնիսը կենդանանում են երեքօրյա մահից հետո. Զալմոքսիսը չքանում է երեք տարի, իսկ Արեսը պահվում է թոնիրի մեջ ուղիղ 13 ամիս:

Արեսի և Լուսավորչի թվերի մեջ նկատելի է զուգադիպություն, մանավանդ որ Ագաթանգեղոսի ձեռագիրները տալիս են երբեմն **13 ամիս** ընթերցումը:

Թվում է, որ **13 ամիսը** սկզբնական է, որ շատ վաղ դարձել է **տարի**, որի հետևանքով առաջացել է և ժամանակագրական շփոթ, և ոչ միայն Գրիգորի կյանքն է երկարացրած մինչև Նիկիո ժողովը, այլ և թերևս հետաձգած հայ լուսավորության տարին մինչև չորրորդ դարու սկիզբը:

Եթե Զալմոքսիսի եռամյա քունը այլաբանական արտահայտություն է Թրակիայում ընդունված սովորույթին, որով հողին երեք տարի հանգիստ էին տալիս, ապա և Լուսավորչի 13 ամիսը (կամ տարին) նույնպիսի փոխաբերական չափ է հայ երկրագործի համար: Տասներեք ամիսը կազմում է հայ տոմարական տարին, հաշված և Ավելյաց պակասավոր ամիսը:

Ասել է, թե հայերի մոտ սովորություն է եղել տարեկան հանգիստ տալ հողին, որ մինչև այժմ էլ մնացել է շատ տեղերում, մանավանդ անջրդի արտերի նկատմամբ:

Կլեոմբրոտոսի զրույցը խորհրդավոր արևելյու մասին, որ ամբողջ տարին ապրում էր ոգիների հետ և միայն մի անգամ էր երևում մարդկանց, օժտված չնաշխարհիկ հատկություններով, դարձյալ պատկերավոր արտահայտություն է հողի տարեկան դադարին:

Փռյուգիական խորհրդում, որի նյութը Կիբելեի և Ատիսի կյանքն էր, ընդունված էր նորընծա հավատացյալին ձգել մի փոս և այնտեղ պահել երեք օր: Այդ միջոցին կատարվում էին զանազան արարողություններ, նպատակ ունենալով քավել, մաքրել նորընծային և արժանացնել աստվածային խորհրդին:

Այլապես ասած, ամեն մի նորընծա կրկնում էր կամ վերապրում էր այն, ինչ որ կրել էր մեծ վարդապետ Ատիսը[1], ինչպես որ քրիստոնյա պատարագը և պատարագիչը պատկերավորումն են Քրիստոսի և նրա տնտեսության:

Անցնենք Լուսավորչի թագակիր գործակցին՝ Տրդատին: Թվում է թե նրա

[1] **H. Graillot,** Le culte de Cybèle, p. 155.

դյուցազնական և արկածավոր նկարագրի մեջ ևս խարխափվում են մի քանի հնավանդ գծեր:

Ազգային ավանդությամբ, որ արձանագրած է Ագաթանգեղոսը, Տրդատ թագավորը պատժվում է ի վերուստ առ Լուսավորիչ և սուրբ կույսերը ցույց տված վերաբերմունքի համար, ստանալով խոզի կերպարանք. «թագաւորն փոխեալ էր ի կերպարանս աղքևայոյզ խոզաց. քանզի թաւացեալ էին առ հասարակ ամենայն մարմինքն, և ընդ անդամս ոսկերացն բուսեալ էր խոզանաստն իբրև զմեծամեծ վարազաց վայրենեաց: Եւ եղնգունք ծայրից մատանց ոտիցն և ձեռացն կճղակացեալք էին իբր զգետնաբիր զարմատակեր կնճացն: Նաև պատկեր երեսացն դիմացն շրջեալ էր ի պատկեր և ի կնճիթ գոճանացն յեղեգան բնակելոց»[1]:

Տակավին Տրդատի կենսագիրը, ուզենալով մի կերպ բացատրել այս տարօրինակ երևույթը, համեմատում է Նաբուգոդոնոսորի հիվանդության հետ: Նոր քննադատները նմանապես փորձում են հասկանալ խոզացման իմաստը: Ա. Գուտշմիդը, Ագաթանգեղոսի այդ խոր քննադատը (10), կարծում է, որ վարազ անունը թե մականունը, որ հայ իշխանական շրջանում, ինչպես Վարազտիրոց, Վարազ-Շահունի, Վարազ Դիմաքսյան և Վարազ-Բակուր, Վարազ-Շապուհ, կարող էր առիթ տված լինել խոզացման զրույցին: Գիտենք նաև, որ հայ իշխանները վարազի պատկերով մատանի էին կրում, որ միևնույն ժամանակ կնիքի տեղ էր ծառայում: Վարազի այս արտոնյալ դրությունը, ինչպես և Վարազդատ և Վարազդեն անունները ցույց են տալիս, որ վարազը թերևս, կապ է ունեցել հին պաշտամունքի հետ:

Տրդատի խոզանալը իրապես մի խորհրդալից հիշողություն է մեզ հետաքրքրող դիցաբանական շրջանում հայտնի վարազի: Գիտենք, որ Արեսը վարազի կերպարանք ստացավ, որպեսզի սպանե Ադոնիսին: Ատիսը ևս ընկավ վարազի հարվածից, այն վարազի, որ ղրկել էր վրեժխնդիր Զևսը: Հայ առասպելի Դիորփոսը նմանապես կռվի բռնվեց Արեսի հետ և սպանվեց: Հավանական է, որ Արեսը այստեղ ևս վարազի կերպարանքի տակ էր թաքնված: Այս կերպարանափոխությունը նշանակում է, որ վարազը հին **տոտեմ** է, որ հետագայում տեղի է տվել ուրիշ աստվածության, այս դեպքում Արեսին: Տրդատը կարող էր հիվանդանալ այնպես, ինչպես Կոստանդին Մեծը, նրան կարող էին վերագրել մի սովորական ախտ: Խոզանալը կապ չունի լյուկանթրոպի կոչված հիվանդության հետ:

Անշուշտ մի հիմք պիտի լիներ, որ հայ ժողովրդական երևակայության մեջ կապտվեր վարազի պատկերը: Վարազը, Տրդատի նկատմամբ, մարած արևի հետին մի շողն է, որ կանգ է առել նրա սեգ ճակատին: Տրդատը միայն

[1] **Ագաթանգեղոս**, ՃԱ, էջ 379:

մահկանացու բագավոր չէ, այլ և դյուցազն, որ «սիգալովն աւերեաց զթումբս գետոց եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զարձանս ծովուց»:

Տոփամոլ արքայի պայքարը տիրանալու գեղանի կույսին և նրա անփառունակ պարտությունը, որքան և սովորական, վկայաբանության մեջ հաճախ կրկնվող արկածը, ևս նշանակալից է: Հռիփսիմե-Գայանեի վկայաբանությունը ուրույն գործ է: Սկզբում գոյություն է ունեցել անկախ, հետո մտել և հյուսվել է Տրդատի և Գրիգորի պատմության հետ: Նրանք կարող են իրական անձինք լինել: Հայտնի է, որ Դիոկղետիանոսի կինը՝ Պրիսկա և դուստրը՝ Վալերիա քրիստոնեություն ընդունեցին և բավականին արկածավոր կյանք ունեցան: Վալերիան ամուսնացած էր Գալերիոս կայսեր հետ և բաժանված: Մաքսիմիանոս Դայա, այն, որ փորձեց ընկճել քրիստոնեությունը Հայաստանում, ցանկացավ կնության առնել Վալերիային, բայց մերժում ստանալով, աքսորեց նրան մոր հետ Միջագետք:

Նույն անձերը հայտնի են նաև **Սերենա** և **Արթեմիա** անուններով[1]:

Եթե ուրիշ հիմք չլինի, այս երկու կանանց դժբախտ կյանքը կարող է նկատվել իբր պատմական հատակ Հռիփսիմեի և Գայանեի վկայաբանության: Ինչ և լինի սուրբ կույսերի ծագումը, նրանց պատմությունը ինչպես որ հասած է մեզ, հեռու է վավերական լինելուց: Եթե Գայանե և Հռիփսիմե որևէ պատմական անձերի ուրվականներն են, ամեն պարագայի նրանք քողաբորբված են դիցաբանական շերտով: Տրդատի բռնությունը Հռիփսիմեի դեմ արդյո՞ք չէ անդրադարձնում Ադոնիսի և Աստարտեի, կամ Ատիսի և Կիբելեի հարաբերությանց հեռավոր հուշերը և մանավանդ Ատիսի և Միդաս թագավորի աղջկա սիրային դեպքը:

Հռիփսիմեի հովանավոր Գայանեն, որ բառացի նշանակում է **«երկրային»**, գրեթե մայրական վերաբերումով դեպի Հռիփսիմեն կարող է համեմատվել մայր աստվածուհու հետ: Նրա սանին պատշաճում է Հռիփսիմե անունը, որ է, **«ընկեցյալ»**, ինչպես Ագաթանգեղոսն ինքն է թարգմանում: Ընկեցիկ էր Փռյուգիայի թագուհու Դինդիմենեի աղջիկը, այդպես էր և Դերկետոյի դուստրը, որ հետո անվանվեց Շամիրամ:

Ագաթանգեղոսի «ըստ անուանդ քում արդարեւ ընկեցեալ եղեր... ի մահուանէ ի կեանս», հարկավ, չինծու մեկնություն է: Քնավ հիմք չկա Հռիփսիմեի անունը հանել հունարեն *ῥίπτω* (ռիպտո) բայի կատարյալից իբր «ռիփսամենե», որ լոկ ժողովրդական կոչված ստուգաբանության նմուշ է, մի բառախաղ: Բայց բառախաղի հիմը ընկեցիկ աստվածուհու հանգչող վերհուշերն են: Հռիփսիմե անունն ավելի խոր արմատ ունի քան թվում է և իսկական նշանակությունը՝ դեռ խնդրական: Անվան վերջին մասը

[1] **Migne, P L** 2, 694.

հիշեցնում է Ասորիքում ընդունված և ոչ այնքան աննշան աստվածուհու անունը, որ է **Սիմա, Սիմյա**:

Բեյրութ քաղաքի մոտերքը գտնված արձանագրության մեջ հիշվում է Բաալ և Հերա աստվածների հետ «**եւ աստուածուհուն ի Սիմա**»[1]: Լուկիանոս Սամոսատցին, Ասորիքի մեծ աստվածուհուն նվիրած նկարագրության մեջ, հիշում է նաև **Սիմնոն**, որ անկասկած նույնն է, ինչ որ արձանագրության Սիմա-ն: Մելիտոն եպիսկոպոսը Անտոնինոս կեսարի առաջ արտասանած ջատագովական ճառի մեջ կոչ է անում ի միջի այլոց և հեթանոս Սիմե աստծուն, անվանելով նրան դուստր Հադադի[2]: Ճշմարիտ է, նորագույն քննությունը վավերական չէ համարում Մելիտոնի անունով հասած այս ճառը, բայց չէ ժխտում նրա հնության արժեքը:

Ուշադրության արժանի է նմանապես, որ Ս. Գրքում հիշվում է **Ասիմաթ** անունով աստված՝ «արք Եմաթացիք արարին զԱսիմաթ», Բ **Թագ**., 17, 30: Ասիմաթի **աթ** իգական մասնիկը վկա է, որ Ասիմա կին աստված է:

Sima կամ **Semea** արամեական **Semaia** բառն է համարվում, որ նշանակում է «երկինք»: Սակայն, պաշտամանական բովանդակությամբ նույնն է ինչ որ մայր աստվածուհին և կամ Շամիրամը, որը նրա մի այլ դեմքն է: Սիմայի, ասորական արտասանությամբ Շիմայի և Սեմիրամի կամ Շամիրամի միջև մինչև իսկ անվանական մերձավորություն կա: Արամեական Բարսեմիոս անունը, անտարակույս, պարտական է իր ծագումը Սիմա աստուծուն: Հեմես քաղաքի քրմապետական տոհմի մեջ ընդունված էր ի միջի այլոց Սոահիմիաս անունը: Այդպես էր կոչվում Հելիոգաբալոս մականունով հայտնի հռովմեական կայսեր մայրը: Դժվար թե այս անունը կապ ունենա Սիմեի հետ: Խնդիրը սակայն անունների առնչությունը չէ:

Գիտենք, որ Սոհեմոս էր կոչվում և հայ թագավորներից մեկը, որ երկու անգամ տիրացավ գահին (11), առաջին անգամ Անտոնինոս կայսեր ձեռնտվությամբ, բայց ստիպվեցավ տեղի տալ պարսից թեկնածու Բակուրին, և երկրորդ անգամ Մարկոս Ավրելիոսի օրով, քշելով իր հակառակորդին: Գահի շուրջը ծագած կռիվներին զոհ գնաց հին մայրաքաղաքը՝ Արտաշատը: Հռովմեական զորքերը կործանեցին հիմնովին և երկրի կենտրոն դարձրին Վաղարշապատ ավանը, անվանելով այն Նոր Քաղաք: Այստեղ էր Սոհեմոս թագավորի աթոռը:

Սոհեմոսի ծագումը խնդրական է: Անունից երևում է, որ Ասորիքից պիտի լիներ, թեև հռովմեական կրթություն էր ստացած և Ներակույտի անդամ էր: Յամբղիքոս մատենագիրը, որ հայտնի է իբրև հեղինակ մի առասպելական

---

[1] **Roscher**, Lexicon der Mythololgie, **Semea** բառը:

[2] **Migne**, P G 5, 1228: Sime filiam Hadadi.

վեպի, որի բովանդակությունը բերում է պատրիարք Փոտը, վայելել է Սոհեմոսի բարեկամությունը և ուղեկցել է նրան մինչև Նոր Քաղաք[1]: Լատիներենի սխալ թարգմանությունը մոլորեցրել է հայր Հ. Գաթըրճյանին, կարծել տալով, որ Աքեմենեսը Սոհեմոսի հոր անունն է, որով և հայ թագավորների ցանկը հարստացել է մի նոր անձով: Մինչդեռ Յամբղիքոսի խոսքերի իմաստն այն է, թե Սոհեմոսը և՛ Աքեմենիդ էր, և Արշակիդ, այսինքն՝ և Աքեմենյան, և Արշակունի տոհմերից:

Եթե շողոքորթություն չէ, հռետորական չափազանցություն է ասորի հեղինակի կողմից Սոհեմոսին արեւմակից համարել Արևելքի երկու ամենանշանավոր արքայական տներին: Եթե Յամբղիքոսը հայտնի չլիներ իր երևակայությամբ, կարելի էր ենթադրել, որ Սոհեմոսի մայրը Արշակունի ծագում է ունեցել և որովհետև Արշակունիներն իրենց սերված էին համարում Աքեմենյան նախահորից, ուրեմն Սոհեմոսի կրկնակի հավակնությունը հիմք ուներ[2]:

Ասորի բնորոշ անունը կապում է Սոհեմոսին Հեմես քաղաքի քրմական և միևնույն ժամանակ իշխանական տոհմին: Հեմեսի Հելոգաբալ աստուծու տաճարի քրմերից մեկը, հափշտակելով կայսերական գահը, թագավորեց Հելիոգաբալոս անունով և հայրենի աստուծու պաշտամունքը պատվաստեց Հռոմում, կանգնելով նրա անվան վայելուչ տաճար:

Անհավանական չէ, որ նույն կերպով և Սոհեմոսը բերած լիներ իր հայրենի Սիմա աստվածուհու երկրպագությունը և հաստատած իր նոր մայրաքաղաքում: Վանքերից շատերը նախապես հեթանոս մեհյաններ են եղել և Հռիփսիմեի վանքը ևս կարող էր կանգնած լինել այնտեղ, ուր երբեմն Սիմայի սրբարանն է եղել: Քանի որ Սիմա պատկերակից է Շամիրամին, նրա մի այլ հատորը, ապա դժվար պիտի չլիներ, որ նա ժողովրդականացար մի միջավայրում, ուր այնպես ծաղկում փառաբանվում էր Շամիրամը հնուց ի վեր:

Երկու կանանց մերձավորությունը մատնվում է և **Ուլունքի** պատմությունից, որ նրանց կյանքում դեր է կատարում: Սուրբ կույսերը Վաղարշապատում իրենց նյութականը հայթայթում էին նրանով, որ «**ամն ի նոցանէ**» ապակեգործության արհեստ գիտեր և «ուլունս ապակեղէնս» էր շինում և վաճառում: Հռիփսիմեն ազնվական էր, «ի թագակապ տոհմէ», և ի հարկե նրան չէր վայելի ապակեգործ լինել, ուստի և այս արհեստը վերագրվում է նրա ընկերուհիներից մեկին:

Թվում է թե արհեստի խնդիրը գիտնական մեկնաբանության արդյունք է

---

[1] **Photii,** Bibliotheca, 94.

[2] Տե՛ս և Յո. Մարկվարտի կարծիքը «Untersuchungen zur Geschichte von Iran», II, 222:

հին ցյութերը մշակողի և կամ խմբագրողի կողմից: Ուլունքի զրույցը Հռիփսիմեի կյանքում արդյո՞ք նույն բնավորությունը չէ ունեցել ինչ որ Շամիրամի ուլունքը, որ նետվեցավ ծովը: Ուլունքը մի թանկագին ավանդ է, որ Շամիրամը ժառանգել է իր մորից՝ Դերկետոյից: Լուկիանոսը պատմում է, որ սիրիական աստվածուհու տաճարից ոչ հեռու կար մի լիճ, որ նվիրական էր համարվում իր ձկներով: Ձկները բազմաթիվ էին և անուններ ունեին, երբ կանչում էին, մոտենում էին աներկյուղ: Առանձնապես արգի էր համարվում մեկը, որ ոսկե զարդարանքներ ուներ իր վրա: Եթե հիշենք, որ այդ պճնված ձուկը ինքը Դերկետոն է՝ Շամիրամի մայրը, նրա հնագույն **տոտեմը**, այն ժամանակ հասկանալի կլինի, որ Շամիրամի ուլունքը նույն իմաստն ունի, ինչ որ ձկան ոսկեթերթ զարդարանքը: Գուցե այդ է պատճառը, որ համաձայն հայ հին զրույցների, ինչպես վկայում է մեր Պատմահայրը, Շամիրամը մահից առաջ նետում է իր ուլունքը ծով. «եւ զյուռութսն ի ծով եւ բան ի նմանէ՝ **Ուլունք Շամիրամայ ի ծով**»:

Այստեղ հռռութքը նույնանում է ուլունքի հետ և նրան տալիս է մի իմաստ, որ հետագայի գիտուն մեկնաբանության արդյունք է: Հռռութք բառը հարել է Շամիրամին և Հայաստանից դուրս: Այս հանգամանքը պարզում է մեզ անսպասելի կերպով նրա ծագումը:

Հայ **հռռութ**-ը փոխառություն է պարսկերենից, ուր հնչում է **harut**: Վուլներսի բառգրքում բացատրվում է, որ **harut**-ը մի ոգի է, հրեշտակ և ընկեր **marut**-ի: Կախարդության պատճառով իբր պատիժ նա կախված է Բաբելոնում մի ջրհորի մեջ գլխիվայր: Ով որ ուզում է կախարդություն սովորել, գալիս է ջրհորի մոտ և հասնում է իր նպատակին:

Հետաքրքիր նմուշ կրոնական խառնաբանության: **Harut** և **marut** հրեշտակները Ավեստայի հայտնի ոգիներն են **haurvatat** և **ameretat**, Արամազդի յոթ համեշասպանտներից: Սրանց համապատասխանում են հին հայերենի հավրոտ և մավրոտ, պարթևյան շրջանի փոխառություն են և ստացել են ծաղկի նշանակություն, երևի նրա համար, որ մավրոտը բուսականության ոգի էր: Հորոտը կամ **haurvatat**-ը ջրի ոգի էր, ուստի և ջրի մեջ է գտնում իր պատիժը: Բայց որ ջուրը ներկայանում է ջրհորում, այս արդեն ավելի հին հասկացողության, բաբելոնյան մեզ հայտնի առասպելի վերհուշն է, հար և նման Շամիրամի յոթոնիր կոչված ջրհորի: Երկու հանգած հավատալիք իրանական և բաբելոնյան երկնքից խաչածևել են հորոտի վրա և նրան դարձրել կախարդության վարպետ, ջատու: **Harut** բառը իր այս նոր նշանակությամբ անցել է և հայերին իբրև **հռռութ, harut** նշանակում է ջատվություն, կախարդություն, որից և հայերենի իմաստը: Բառի փոխառության ժամանակ հայերեն յ բառերի սկզբում հնչվելիս է եղել որպես **հ**:

Դառնալով Հռիփսիմե անվան, պիտի ասել, որ առաջին վանկը Հռիփ մութ է, եթե երկրորդը հիշածս աստվածուհու անունն է:

Ազգային ավանդությամբ Հռիփսիմյանց կույսերի խմբին է պատկանում նաև Վրաստանի առաքելուհին, Նունե կամ Նինո կույսը: Ամեն պարագայում Նունեն բախտակից է Հայաստանի կույսերին այն մտքով, որ նրա պատմական դեմքն ևս մթագնած է դիցաբանական մառախուղով: Նունեի կյանքն ու քարոզչությունը շատ վաղ պարուրվել է անհավաստի զրույցների ցանցով: Հնագույն հիշատակությունը պատկանում է լատին եկեղեցական մատենագիր Ռուփինոսին, որ ծաղկել է IV դարում: Սա գրել է եկեղեցական պատմություն, սկսելով այնտեղից, ուր կանգ է առնում Եվսեբիոսի նման գործը, այսինքն՝ 325 թ., և հասցրել է մինչև 395 թիվը: Նրա մահը ընկնում է մերձ 402 թ.: Երկար տարիներ անց է կացրել Պաղեստինում, որտեղ ծանոթացել է վրաց թագավոր Բակուրի հետ: Գահընկեց թագավորը հոռվմեական ծառայության մեջ էր մտել և զինվորական մեծ պաշտոն ուներ Պաղեստինի սահմաններում: Ահա այս անձից է, որ Ռուփինոսը քաղել է իր թանկագին տեղեկությունը վրաց առաքելուհու մասին և ավանդել մեզ իր պատմության մեջ:

Բակուրի ասելով, Վրաստանը քրիստոնեություն է ընդունում շնորհիվ մի գերի ընկած քրիստոնյա կնոջ, **mulier captiva,** հետևյալ պայմաններում: Վրաստանում ընդունված սովորություն էր, որ երբ մեկի երեխան հիվանդանում էր, մայրը դռնե դուռը էր ընկնում և հարցնում, թե ո՞վ կարող է բժշկել հիվանդին: Դիպվածով մի անգամ մի հիվանդ մանկան մայր գալիս է գերի կնոջ մոտ, որ իր սրբակյաց կյանքով և վարքով բոլորի ուշադրության առարկա էր դարձել, և սա աղոթելով բժշկում է երեխային: Լուրը տարածվելով հասնում է երկրի թագուհուն: Եվ երբ քիչ ժամանակից հետո թագուհին «բռնվում է մի ծանր ախտով» **dolore quodam gravissimo**, հիշում է զարմանալի կնոջ և նրան է դիմում դարման խնդրելու: Գերին նրան էլ է բժշկում, դարձյալ աղոթքով: Թագուհին ընդունում է քրիստոնեություն և սկսում է հորդորել ամուսնուն նույն քայլն անելու: Շուտով ներկայանում է առիթը: Թագավորը մի օր որսի է գնում ուղեկիցների հետ: Հանկարծ օր ցերեկով պատում է նրանց խորին խավարը և, անկարող գտնել ճանապարհը, թափառում են մթության մեջ մոլորված: Հուսահատ թագավորը մտածում է: «Եթե հիրավի Աստված է այն Քրիստոսը, որին քարոզում է իր կնոջ գերուհին, թող նա փարատե այս խավարը և այն ժամանակ ինքը կհավատա»: Հանկարծ փայլում է արևը, վանելով խավարը և թագավորը ընդունում է նոր հավատը:

Մի ուրիշ հրաշք: Ժողովուրդը հետևում է թագավորին: Սկսում են շինել եկեղեցի: Երկու սյուն արդեն կանգնել էին և երբ ձեռնամուխ եղան

բարձրացնելու և իր տեղը դնելու երրորդ այունը, չկարողացան: Բոլոր ջանքերը և մեքենագիտությունն իզուր անցան: Սակայն հետևյալ առավոտը թագավորը մեծ զարմանքով տեսավ, որ այն այ·ւնը, որ այնքան մարդիկ և մեքենաներ չկարողացան շարժել, դրված է իր տեղը, միայն ոչ բոլորովին կպած խարիսխին, այլ մի ոտնաչափ բարձր խարսխից, կախված օդի մեջ:

Ռուփինոսի կամ Բակուրի այս պատմությունը կրկնում են քաղվածորեն մյուս մատենագիրները՝ Սոկրատես, Սոզոմենոս, Թեոդորիտոս և մյուսները:

Խորենացու պատմածը ընդհանուր առմամբ նման է, բայց կան և զգալի տարբերություններ: Նախ Ռուփինոսը անուններ չէ հիշատակում ոչ գերուհու և ոչ թագավորի: Վրաց վարդապետությունն Խորենացու մոտ գերի չէ, այլ Հռիփսիմյանց ցրված ընկերներից, որ «փախստեամբ հասեալ էր յաշխարհն Վրաց ի Մծխիթայ», և անունն էր Նունե: Նրա բժշկության շնորհը ծանոթ է Պատմահորը, որով բժշկվում են շատ ախտաժետներ և «կին Միհրանայ առաջնորդին Վրաց»: Երեխայի բժշկության մասին առանձին խոսք չկա, այլ մասնավոր դեպքը ընդհանրացած է, «զբազում ախտաժետս»:

Սոկրատեսին համաձայն է Խորենացին, որի ասելով թագավորը «մոլորեցաւ ի դժուարս լերանց խաւարեալ օդով»: Խորենացու անձնական ավելումն է, երևի, որ Միհրանը զարհուրում է, հիշելով Տրդատի աղետը:

Կախված սյան գրույցը ծանոթ է Խորենացուն ուրիշ հեղվածով: Նախարարներն ուզում են իմանալ, թե կործանված կուռքերի փոխարեն ի՞նչ բանի պիտի երկրպագեն: Նրանց ասում են, որ պաշտելին Քրիստոսի խաչն է, որ կանգնել էին մի բլրի վրա քաղաքից դուրս: Բայց երբ որ բլուր բարձրանալով տեսան, որ խաչ ասածդ «կոփյալ փայտ է, ոչ ճարտարաց ինչ գործ», շատերը սկսեցին արհամարհել, թե «այնպիսեաւ լի իցէ ամենայն անտառն նոցա»: Ահա այդ ժամանակ է, որ Աստված «առաքեաց յերկնից սիւն ամպոյ» և օդի մեջ երևաց փայտե խաչի մեծությամբ լուսախաչ, տասներկու աստղերով շրջապատված:

Ռուփինոսի ծանոթ Բակուր Վրացին հիշվում է Ամմիանոս Մարկելինոսի պատմության մեջ **Bacurius Hiberus**: Սա հռովմեական բանակում կռվում էր գոթերի դեմ Թրակիայում 378 թ.[1]: Թրակիայից պետք է, որ տեղափոխված լինի Պաղեստին այդ թվից հետո: Ռուփինոսը Երուսաղեմ էր հաստատված 380 թվից սկսած մինչև 395, երբ դառնում է Հռովմ: Նշանակում է, Բակուրի գրույցը ծագում է IV դարու վերջերից:

Բակուրի թագավոր լինելը տարակուսական է: Վիճելի է նաև նրա ծագումը: Չորրորդ դարի երկրորդ կեսում Սուրմակ և Ասպակուր թագավորներն էին, որ թեկնածու էին վրաց գահին մեկը՝ պարսից, մյուսը՝

[1] **Ammiani Marcellini,** XXXI, 12, 16.

հռովմեացվոց կողմից: Բացի սրանից Զոսիմոս հեթանոս պատմագիրը, որ ապրում էր V դարի երկրորդ կեսում, Բակուրին հայ է անվանում, և անկախ Ռուփինոսից, միևնույն բարձր կարծիքն ունի նրա ազնվության և զինվորական կորովի մասին: Հավանական է, որ Բակուրը Գուգարքի բդեշխ էր, որով կարելի է հաշտեցնել երկու համարժեք վկայությունը:

Ավելի շփոթեցուցիչ է այն հանգամանքը, որ Բակուր իշխանի պատմածը գրեթե նույնությամբ կրկնում է Յոհան Նիկիո եպիսկոպոսը ոչ թե Վրաստանին, այլ Հնդկաստանին վերագրելով անցքը:

Յոհան եպիսկոպոսը, որ յոթերորդ դարու հեղինակ է, պատմում է, որ Հնդկաց թագավորի դեսպանը կայսեր մոտից դառնալիս, գերի է տանում հետը մի քրիստոնյա կույս, Թեոգնոստե անունով: Հնդկաց թագավորը կույսին նշանակում է իր կանանոցի վերակացու: Մի օր թագավորը հիվանդանում է: Կույսը խաչակնքելով բուժում է նրան: Մի անգամ թագավորը պատերազմի է գնում և հանկարծ նրան պատում է փոշու և մթության մառախուղը: Իսկույն հիշում է կույսի խաչը և հաղթելով թշնամիներին դառնում է տուն և գրկում քրիստոնեությունը: Նորադարձ արքան ուզում է տաճար շինել, բայց հարկավոր սյուները պակասում են: Կույսի աղոթելով հարևան հեթանոս տաճարի հրաշալի սյուները տեղափոխվում են տաճարը[1]:

Յոհանի աղբյուրը Ռուփինոսը չէ, ինչպես ենթադրում է Զոտենբերգը, այն պարզ պատճառով, որ Ռուփինոսի մոտ չի հիշվում Թեոգնոստե անունը: Հակովբիկ եկեղեցու Հայսմավուրքում Թոթ ամսի 17, որ է սեպտեմբերի 14, նշանակված է Ս. Թեոգնոստե կույսի տոնը, և համառոտ վարքը, որ Յոհանի պատմության կրկնությունն է[2]: Խնդիրը բարդանում է նրանով, որ Յոհանի և Հայսմավուրքի ասելով Թեոգնոստեն ժամանակակից էր Հոնորիոս և Արկադիոս կայսրների:

Ռուփինոսի և Յոհանի համեմատությունից մի բան է հետևում, որ Նունե անունը սկզբնական չէ և պատմական լինելու հավակնություն ունենալ չի կարող: Այլ և, քանի որ միևնույն պատմությունը վերագրվում է և Հնդկաստանին, սրանով և՛ ամբողջ զրույցի հավաստիությունը խախտվում է որոշ չափով:

Լատին եկեղեցականը գովում է Բակուր իշխանի սերը դեպի կրոնն ու ճշմարտությունը, **qui summae erat et religionis et veritatis**[3]: Չնայելով Բակուրի ճշմարտասիրության, նրա պատմածի մեջ մեծ տեղ է տրված երևակայության: Իշխանի երկու գովական հատկություններից ջերմեռանդու-

[1] Chronique de Jean, ev. de. Nicée, trad. de Zotenberg, p. 309.

[2] «Le Synaxaire arabe Jacobite», rédaction Copte, Pat, Orient, I, 227.

[3] **Migne,** P L 21, col. 482.

թյունն է, որ հաղթանակել է: Բակուրը գուցե և անպարտ է և դյուրահավատությամբ ավանդել է օտարին այն զրույցները, որ լսել է իր հայրենի միջավայրում, իր նման ջերմեռանդ վանականներից:

Ինչպես ամեն տեղ, Վրաստանում ևս քրիստոնեությունը մուտ է գործել հրաշագործության շավիղներով: Իրականությունը շուտով զիջել է երևակայական աշխարհին, և ճշմարտության հատիկները կորել են առասպելների փունջի մեջ: Քրիստոնեական առասպելները մեռնող կրոնական հայացքների արդյունք են, կերտված են նրանց ազդեցության տակ և պահում են իրենց մեջ հնի գունավոր հետքերը:

Վրաց դարձի զրույցը նման է Հայոց, չափված միևնույն կաղապարով և երկուսը նման ուրիշ շատ դարձերի: Թագավորի հիվանդությունը, առաքյալի աղոթքով բուժվելը, լուսեղեն սյունը օդի մեջ, էական հանգույցներն են դարձի պատմութեան: Վրաց լուսասյունը՝ օդի մեջ կախված՝ այլ բան չէ, եթե ոչ մի բողբոջ Լուսավորչի տեսիլքի հսկայական ծառի: Կարելի էր կարծել, որ Տրդատի և Միհրանի հիվանդությունը անդրադարձումն է Աբգարի օրինակի: Պահանջկոտ եղեսացիք իրենց թագավորին, որ ապրում էր Քրիստոսից երկու դար ուշ, բուժել են տալիս իրեն Քրիստոսի և նրա մերձավոր առաքյալի ձեռքով, մինչ հայերը և վրացիք բավականանում են ավելի համեստ բժիշկներով: Սակայն ճշմարտության դեմ մեղանչած չէինք լինի, եթե ասեինք, որ երեք թագավորների նմանօրինակ պատմությունները կարող էին անկախորեն եթե ոչ ծնունդ, նպաստ առնել նախորդ կրոնի ավանդներից:

Արդարև, կրոնական հեղաշրջումը որևէ երկրում, որևէ ժողովրդի համար պատմական խոշոր հարց է: Քրիստոնեությունը մի գաղափարական և հասարակական լայն շարժում էր, որի հախուռն ալիքները վաղուց ի վեր զարկում էին հեթանոս տաճարների պատերին և մի օր պիտի տապալեին: Որևէ հիվանդություն, մինչև իսկ թագավորի, չի կարող պատճառ և ոչ առիթ համարվել գաղափարական մի մեծ բեկման: Քրիստոնյա եպիսկոպոսները բժշկական մեծամեծ ծառայություններ են մատուցել Սասանյան թագավորներին, ինչպես հաստատ գիտենք պատմությունից: Բայց այս հանգամանքը նրանցից և ոչ մեկին չի բերել եկեղեցու դուռը իբրև զղջացող Աբգար, Տրդատ կամ Միհրան: Դարձի կապակից հիվանդությունները ունայն զրույցներ են և հեթանոս մտայնության շաղախներ:

Մեզ արդեն ծանոթ Մելիտոն եպիսկոպոսը վերև հիշածս գրության մեջ ասում է. «Սիրիացիք պաշտում էին Ատի Ադիաբենացուն, որը ղրկում է Բալաք բժշկուհուն և սա առողջացնում է Սիմեին, որ էր դուստր Սիրիայի թագավոր Հադադի: Հուսկ հետո ինքը՝ Հադադը բռնվելով բորոտությամբ, Ատին խնդրում է հրեա Եղիսեին, որ գալիս է և բժշկում նրան»:

Ատի, որ Ադիաբենացի է համարվում այստեղ, քաջածանոթ Ատիսն է, թեև կնոջ կերպարանքով: Բալութ Բել կամ Բաալ աստուծու իգական ձևն է և ինքը դուստր Ատիսի: Սիմեի մասին խոսեցինք վերև: Հադադ Միջագետքի հայտնի աստված է, երբեմն դերակատար Թամուզի, այստեղ կոչվում է Սիրիայի թագավոր: Հադադ և Սիմե երկնքից իջել են երկիր և սոսկ մահկանացուներ են դարձել թեև թագակիր: Ատիսը իր դստեր Բալաթի հետ տակավին աստված է: Նախ հիվանդանում է Հադադ թագավորի աղջիկը և բժշկություն է գտնում կին Բալաթից: Հետո նույն և ավելի վատթար ցավ բռնում է Հադադ թագավորին և բժշկողը հրեա Եղիսեն է:

Ահա մի հեթանոսական նախատիպ քրիստոնեական նման զրույցների, ուր գործող անձինք են միշտ թագավորը և նորա կինը կամ դուստրը: Սրանց հիվանդությունը ոչ միայն այլաբանական պատկեր է հեթանոսության, որից պիտի իբրև ախտից քոթափվեին, այլ և արդյունք հեթանոս մտածողության, որի համաձայն աստվածները կոչված են մարդկանց բուժելու զանազան ցավերից:

Վրաց դարձի անձերի և ամենից առաջ կույս Նինոյի դեմքին տեսնում ենք մեզ հետաքրքրող դիցաբանական շրջանի աստվածության կնճիռները: Վրացի զրույցները Նինոյի մասին կրում են հայկական դրոշմ, և հյուսված են հայ միջավայրի ազդեցության տակ: Այս հանգամանքը ավելորդ է դարձնում կանգ առնել այն հարցի վրա, արդյոք մեզ զբաղեցնող դիցաբանությունը կամ Աստարտե-Ադոնիսի պաշտամունքը ծանո՞թ է եղել վիրական ցեղերի շրջանում:

Համաձայն վրաց ազգային ավանդության, Նինոյի պատմությունը ծագում է Սալոմեից, որ ոչ այլ ոք էր, եթե ոչ Տրդատ թագավորի աղջիկը և Միհրան թագավորի որդի Ռևի կինը: Սալոմեն, ուրեմն, ժամանակակից և ականատես է անցքերին, և ահա թե ի՞նչ է նա պատմում Նինոյի ծագման և կյանքի մասին:

Նինոն կապպադովկիացի ծնողների զավակ է, ասել է թե Լուսավորչի նման նա ևս արևմուտքից է գալիս: Նրա մոր անունն էր Սուսանա, այն է Շուշան: Քրիստոնեական դաստիարակությունը Նինո ստանում է հայազգի Նիափոր անունով մի բարեպաշտ կնոջ մոտ, որ Դվինի քաղաքացի էր: Նիափորի հորդորմամբ Նինո պատրաստվում է գնալ Վրաստան, «որ է լեռնային գավառ Հայաստանի», երբ պատեհ առիթ է ներկայանում և Նինո ուղևորվում է Հռոմ: Այստեղ ծանոթանում է Հռիփսիմե և Գայանե արքայազն կույսերի հետ և նրանց 50 ընկերների հետ մկրտվում է:

Այնուհետև Հռիփսիմյան խմբի հետ գալիս է Հայաստան և կույսերի նահատակությունից հետո փախչում է Ջավախք: Այս է այն լեռնային գավառը Հայաստանի, ուր Նիափորն է ուզում ղրկել Նինոյին: Փարավան

լճի մոտ պատահում է ծկնորսների, որ ծուկ էին որսում, տեսնում է հովիվներ, որ զոհ էին մատուցանում Արմազ և Ջադեն աստվածներին: Նինոն նրանց հետ խոսում է հայերեն, որ սովորել էր Նիափորի մոտ:

Ջավախքից Նինո անցնում է Մցխեթ, Վրաստանի մայրաքաղաքը: Առաջին գործն է լինում կործանել տեղական կուռքերը: Պատահում է Շրոշանա անունով մի աղջկա, որի հետ հունարեն է խոսում, և որը առաջարկում է Նինոյին արքունիք գնալ: Նինո ծանոթանում է հրեա Արիաբարին և նրա դստեր Սիդոնիային: Եվ այժմ սրանք են և ոչ Սալոմե, որ պատմում են, առաջինը՝ Նանա թագուհու, երկրորդը Միհրան թագավորի դարձը: Առաքելուհին, որ այլուր կոչվում է Թեոգնոստե, այստեղ կրում է Նինո կամ Նունե անունը: Նրա մոր անունը Շուշան է, թագավորի անունը՝ Միհրան և թագուհու՝ Նանա:

Անունները պատահական չեն: Նունե, լատիներեն **nonna**, հունարեն *Νάννα* նշանակում է «մայր», ինչպես տեսանք վերևում: Ատիսի առասպելում այդպես էր կոչվում Սանգար գետի աղջիկը, որին վիճակված էր դառնալ գեղանի և երիտասարդ աստուծու մայր: Նույն անունն էր կրում հայ պանթեոնի աստվածուհիներից մեկը, Նանեն, որի տաճարը գտնվում էր Եկեղյաց գավառի Թիլն ավանում: Թագուհին, որ Միհրանի երկրորդ կինն է, պահել է իր վրա Նանա աստվածուհու անունը:

Սոսանա, որ է Շուշան, հայտնի է մեզ Դերկետո-Շամիրամյան առասպելից, որ քննեցինք վերև: Նինոս թագավորի աղջիկն էր Սոսանե, որին հայրը տվեց Օննեսին Շամիրամի փոխարեն: Շուշանը, ուրեմն, Շամիրամի տեղակալն է, այլապես նրա մի այլ հայվածքը: Վրաց Սուսանա կամ Շուշանը, որովհետև Նինոյի մայրն է, նախագույն է Նինոյից: Ինչպես Դերկետոն իր դիրքը զիջանում է իր դստեր Շամիրամին, այնպես էլ Սուսանան տեղի է տալիս իր հարազատին՝ Նինոյին: Գիտենք, որ Դերկետոն այնուհետև չչքացավ պանթեոնից, այլ կերպարանափոխվեց ձկան: Վրաց Սուսանան ևս չի վերանում անհետ, այլ պահում է իր դեմքը Շուշանիկի հոչակավոր պաշտամունքի մեջ:

Շուշանիկը մեծ ժողովրդականություն էր վայելում ոչ միայն վրաց, այլ և Հայոց մեջ և երկու երկրների միջակա նահանգի՝ Գուգարքի, տեղական մեծ սրբություն էր համարվում: Անունների կրկնությունը, թերևս արդյունք զրույցի տարբեր հյուսվածքների, ամեն պարագայում ապացուցանում է պաշտամունքի ժողովրդականությունը[1]:

---

[1] Նինոյի զրույցի մեջ Շուշան անունը մտել է հավանորեն Ս. Շուշանիկի վկայաբանությունից: Վերջնիս ևվիրած ֆրանսերեն մի հոդվածի մեջ, որ ցարդ ինչ-ինչ պատճառներով չկարողացավ լույս տեսնել, ցույց ենք տվել, որ Շուշանիկը Վարդանի դուստրը չէր, այլ Վրաց առաքելուհու աղոտացած պատկերը, իսկ ինքն՝ առաքելուհին ոչ այլ ոք է, եթե ոչ Հռիփսիմեն,

Նաեե թագուհու ամուսինը Միհրանն է, Նունեի հետևորդը: Ուրիշ աղբյուրից գիտենք, որ Վրաց առաջին քրիստոնյա թագավորի անունը Բակուր էր[1]: Վրաց դարձի գրույցը ընտրել է Միհրան կամ Միրիան անունը: Սոսկ դիպված չէ: Հարկավ, Միհրան կարող է լինել Ամմիանոս Մարկելինոսին ծանոթ վրաց **Meribanes**, այսինքն՝ Մերվան, կամ Միրիան թագավորը, որ իշխում էր 361 թվականներին: Բայց հավանական է, որ այս մի պատահական զուգադիպություն է և իսկապես Միհրանը այլ ոք չէ, եթե ոչ Միհր աստուծու պատկերը, նրա դրոշակակիրը: Միհրը՝ Արևելքի այդ հին և զորեղ աստվածը վաղուց մրցման մեջ էր Փոքր Ասիայի մեղմ և կանացի Ատիսի հետ և շատ տեղ կորզել էր նրա փառքը և դիրքը: Հայ Դիորփոսի առասպելում ևս Միհրն է երևան գալիս:

Միհրանը որսի ելնելով մոլորվում է լեռներում «խաւարեալ օդով, այլ ոչ տեսանելեօք»: Արևի և համատարած լույսի աստուծու համար ավելի մեծ պատիժ չէր կարելի երևակայել: Միհրը չի կորցնում տեսնելու ընդունակությունը, այլ բնությունն ինքն է խավարում: Հեթանոս լույսը հանգչում է, որպեսզի նրա տեղը ծագե նոր և «մշտնջենավոր» լույսը:

Պարզ է, որ Նունեի հանդիման կանգնած թագավորը հասարակ մահկանացու չէ, կամ միայն այդ չէ, այլ և ինքը Միհրը արքայական թագով: Հետևապես և առաքելուհին սովորական կույս չէ միայն, այլ և մայր դիցուհու փոխանորդ:

Մանի կամ Մանե կույսը ևս պատմական դեմք չէ: Ագաթանգեղոսը չի հիշում նրան, այլ գիտե միայն Մանյա այրք կամ Մանայարքի որպես ճգնարան Գրիգոր Լուսավորչի: Այստեղից Խորենացին հանել է Մանի անունը և ենթադրել որ նա ևս պատկանում էր Հռիփսիմյանց խմբին, միայն հետ էր մնացել, «ո՛չ չուեալ հետեւել նոցա ի գալն առ մեզ», այլ բնակվեց Դարանաղյաց լեռներում մի այրի մեջ, որ կոչվեց նրա անունով Մանյա այրք:

Պատմահոր արտահայտությունը կարծել է տալիս, որ նա Մանի անունը

և Բակուրի պատմածը նույն Հռիփսիմեի արկածն է, տեղափոխված Վրաստան, այսինքն՝ նույն արկածի վրացական կամ գուգարական հյուսվածքը: Նինո անունը ծանոթ է վրացիներին Խորենացուց: Սա է, որ առաջին անգամ հրապարակ է նետել Նինո-Նունեի պատմությունը, օգտվելով Սոկրատեսի հայերեն թարգմանությունից: Մոռացված ավանդությունը, շնորհիվ Պատմահոր, վերակենդանանում է: Նինոյի գրույցի վրաց ծանոթ խմբագրությունը XI դարուց առաջ չէ, ուստի և լի մտացածին պաճուճանքներով: Մինչև Խորենացու հայտնաբերությունը, հին ավանդությունը վրաց առաքելուհու մասին մնացել էր Շուշանիկի անվան և պաշտամունքի ձևով: Շուշան անունը ժառանգություն է մեզ զբաղեցնող դիցաբանական հնության:

[1] **Petrus der Iberer**, ed. Raabe, էջ 15: Ռուսերեն թրգմ. Պետրոսի վարքի «Palestinskij Sbornik», XVI: Պետրոս միաբնակ էր և ապրում էր V դարու վերջերը: Դժվար թե Բակուրին վերագրած պատիվը պատմական ստուգություն ունենա: Թերևս Բակուր իշխանի անվան արձագանքն է:

կապում է իրանական **ման** արմատի հետ, որ նշանակում է «սպասել» և խնամի հայերեն **մնալ** բառին:

Ստուգաբանական մի ուրիշ փորձ գտնում ենք Պրոկոպիոս Կեսարացու մոտ: Սա VI դարի մատենագիր է, քաջածանոթ Արևմտյան Հայաստանին և կարևոր աղբյուր է նույն դարու Հայոց պատմության: Խոսելով Եկեղյաց գավառի մասին, Պրոկոպիոսը բերում է հայկական մի զրույց Իփիգենիայի և Օրեստի վերաբերյալ: Հայերի ասելով, առասպելում հիշած Տավրոսը Հայոց Տավրոսն է և այստեղ են փախել քույր և եղբայր: Ճանապարհին Օրեստը հիվանդացել է: Պատգամախոսը սաստել է, որ հիվանդը չապաքինվի, մինչև որ տաճար չկանգնե Արտեմիսի անվան: Օրեստը լսում է պատգամին և շինում է Երեզ ավանում Արտեմիսի տաճարը: Խոսքը Անահիտի հռչակավոր սրբարանի մասին է, որի ծագումն, ուրեմն, հայերը վերագրում էին Օրեստին:

Նույն զրույցը շարունակում է, որ Իփիգենիան փախուստի ժամանակ կտրում է իր մազերը այնտեղ, ուր Կոմանա քաղաքն է: Այլ և ավելացնում է, որ ասողներ կան, թե Օրեստի հիվանդությունը *μανία*, այսինքն՝ «խելագարություն» էր[1]:

Զրույցիս միտքն է՝ մեկնել **Կոմանա** նշանավոր քաղաքի անունը հույն *κόμη* «մազ» բառից ի հիշատակ Իփիգենիայի մազերին, որ խուզել էր այդտեղ, և ուր կանգնել էին Արտեմիսի հռչակավոր տաճարը: Մեզ թվում է, որ Օրեստի խելագարությունը, **մանյա**, շեշտելով, զրույցը ձգտում է մեկնել Մանայարքը, որ մեծ սրբարան է եղել նման Երեզի և Կոմանայի:

Խորենացու և Պրոկոպիոսի առաջարկած ստուգաբանությունները լեզվագիտական արժեք չունին: Նախ հայտնի չէ հաստատապես Մանյա այրք է, թե՞ Մանայարք: Բնական է Ման կապել հարևան Մանանաղի գավառի անվան. թերևս Մանաղի է բուն անունը և դարձել է Մանանաղի Դարանաղիի ազդեցությամբ: Ենթադրելով, որ Մանաղի ոչ միայն կազմությամբ, այլ և իմաստով նման է Դարանաղիի, կարելի է կարծել, որ **man** պարսկերեն բառն է, որ նշանակում է «տուն», **manbed** «տանուտեր»: Հետևապես, Մանաղի է «տուն աղի», ինչպես Դարանաղի է «դարան աղի»:

Բայց հնարավոր է, որ Նունե և Մանե, ինչպես ունին հին տոնացույցները, բախտակից են նաև ծագումով, այսինքն՝ որ Մանե նմանապես թոթով բառ է և նշանակում է մայր, որպես կոչում որևէ անձավաբնակ աստուծուհու, նման Կիբելեի, որի անունը հանում են Կիբելա «այր, քարանձավ» բառից:

---

[1] **Procopii**, Pers., I, 17: Goth., IV, 5. Զրույցս հայտնի է արդեն Ստրաբոնին, XII, 2, 3, ուրեմն շատ հին ավանդություն է:

Մանե, ուրեմն պատմական անձ չէ, այլ երբեմնյան աստվածության թափուր մնացած այրի և սրբության ժառանգորդ:

Այսպիսով, հայոց և վրաց դարձի պատմության մեջ, քրիստոնեության արշալույսի մթնշաղի մեջ տակավին նշմարելի են հեռացող ստվերները: Հին կուռքերը միանգամից չեն փշրվում, դարավոր փառքերը հեշտությամբ չեն չքանում: Երբեմն շքեղազարդ աստվածների, դիցուհիների ծիրանին պատառոտված է թեև իսպառ, բայց նրա ծվենները մնացել են տակավին այն անձերի ուսերին, որ եկել էին տապալելու նրանց սրբություններն ու տաճարները նոր խոսքով, նոր ուսմունքով: Մեր տեսությունը զարմանալի չպիտի թվա, եթե հիշենք, որ ընդհանուր քրիստոնեական եկեղեցին անգամ զերծ չէ մնացել մեզ զբաղեցնող հեթանոս պաշտամունքի ազդեցությունից: Ջատկական տոները որոշ մտքով այլ բան չեն, եթե ոչ մի նոր խմբագրություն Ատիսյան հանդեսների: Գարնանային աստուծու տոնը, որ գարնանամտին էր և բաղկացած էր մի կարգ հանդեսներից, քրիստոնեական եկեղեցում, մեծ պասի ընդմիջումով, բաժանված է երկու հատվածի՝ Բարեկենդանի և Ջատկի օրեր:

Հայ եկեղեցին, ճշմարիտ է, ստացել է պատրաստի այդ տոները ընդհանուր եկեղեցուց քրիստոնեության հետ միասին, բայց թվում է, որ տեղական միջավայրն անմասն չի մնացել որոշ երանգավորում տալու նրանց: Այսպես, օրինակ, Ծաղկազարդ կոչումը բնավ չի հարմարում այն տոնին, որի իսկական անունն է տոն արմավենյաց կամ ուռենյաց և կամ ողոգոմյան: Ո՛չ Ծաղկազարդ և ո՛չ մանավանդ Ծառազարդար, ինչպես ժողովուրդն է ասում, չեն արտահայտում օրվա եկեղեցական իմաստը: Մինչդեռ նա միանգամայն համապատասխանում է Ատիսի ծառի հանդեսին: Մեր գյուղերում մինչև այժմ էլ ծառ են բերում եկեղեցի և ոչ ճյուղեր: Եկեղեցին աշխատել է հինավուրց տոնը հարմարեցնել Քրիստոսի Երուսաղեմ մտնելու հանդեսին: Ավետարանի խոսքը՝ «այլ հատանէին ոստս ի ծառոց եւ տարածէին ի ճանապարհի», տալիս էր ամեն իրավունք, որպեսզի նոր ճյուղերով ծածկեին հին ծառը:

Նույնպիսի կասկած է հարուցանում և **Բարեկենդանը:** Օտար եկեղեցիներն այդ օրերը կոչում են պանրուտիք: Պանիր ուտելու կամ մի քանի ուտիք օրերը Բարեկենդան կոչելը խիստ թեական է: Հայ գյուղերում Բարեկենդանը մեծ ժողովրդականություն ունի և ի միջի այլևայլ խաղերի, պարերի և ուրախությանց ընդունված է դիմակ հագնել:

Տեսանք, որ դիմակավորվելը հատուկ սովորությունն էր Ատիսյան տոներին, և ծեսի էական մասն էր կազմում: Ատիսի հարության օրերին, երբ աստուծու հետ ամբողջ բնությունը վերակենդանանում է իր քնից, անպայման ճահավոր և վայելուչ էր Բարեկենդան թե Բարեկենդանություն

կոչումը: Կարծելու է, որ այս դեպքում ևս եկեղեցական տոնը կլանել է հին հեթանոս ժառանգությունը:

Առաջավորաց պահքը հայ եկեղեցու ուրույն սովորություններից է և առեղծվածային իր բնավորությամբ: Բյուզանդական եկեղեցին խորշելի էր համարում այդ պասը, ամեն առթիվ շեշտելով նրա հեթանոսական գայթակղիչ բնավորությունը:

Պասը վերջանում է Սուրբ Սարգիս զորավարի հիշատակով, ուստի և ժողովրդի մեջ հայտնի է ավելի Ս. Սարգսի պաս անունով: Պասը լուծվում է փոխինդով, կամ փոխինձով, որ հայտնի է Հայաստանի ամեն մի անկյունում: Միակ պասն է, որ ունի իր ևվիրական կերակուրը: Փոխինձը, անշուշտ, ևվիրական ծագում ունի և նշանակ է որևէ հեթանոս պաշտամունքի:

Ատիսը իր հատուկ պահքն ուներ, ապաշխարության շաբաթը, երբ հավատացյալները պատրաստվում էին մեծ խորհուրդին: Այս պասը զանազանվում էր քրիստոնեական պասերից նրանով, որ արգելված էին մի շարք ուտելիքներ, որոնց մեջ հացը և հացահատիկից պատրաստած կերակուրները կարևոր տեղ էին բռնում: Բնական էր, ուրեմն, որ պահեցողությունը լուծվում էր արգելված ուտեստների ճաշակմամբ, ինչպես օրինակ քրիստոնեական պասը թույլատրվում է լուծել այսպես կոչված Նավակատյաց կերակուրներով: Ասել է թե փոխինձն է այն առանձնահատուկ հացը, որով կատարվում էր թաթախումը Ատիսի պասը լրանալուց հետո: Իսկ թե ինչո՞ւ էր հացը պահեցողության նյութ համարվում, այդ բացատրվում է նրանով, որ Ատիսը մարմնացումն էր բուսականության և ամենից առաջ հացահատիկների և պտուղների, «Ադոնիսը ինքն է ցորեն սերմանեալ»:

Հիշենք ի դեպ, որ Սաբազիոս փոյուգական աստուածություն էր և մայր աստվածուհու նկատմամբ մոտ Ատիս-Ադոնիսին: Նրա պաշտամունքի մեջ ընդունված էր նորահավատին մկրտել, գլխին ալյուր ցանելով և երեսը տրորելով ցորենի պաճով[1]: Հայ ժողովրդի մեջ սովորություն է երեխայի գլխին հատիկ, այսինքն՝ խաշած ցորեն թափել, երբ երևում է նրա առաջին ատամը: Հին մկրտության ծես է, որ այնքան տոկունությամբ մնացել է հեթանոս դարերից ի վեր:

Փոխինձը և փոխինձից պատրաստած ապուրը, որ կոչվում է խաշիլ, բավական են ցույց տալու Առաջավորաց պասի նախաքրիստոնեական ծագումը: Նույնն է վկայում և բյուզանդական մատենագիրներից հայտնի առասպելախառն պատմությունը Արցևուրիոսի մասին, որ է Առաջավորը:

[1] **Gruppe**, Griech, Mythol., էջ 903.

Եվթիմեոս Զիգավին (կամ Զիգաբին) Կ. Պոլսի վանականներից մեկը Ալեքսիոս կայսեր ժամանակ (1081-1118), և հայ կրոնափոխ ոմն Իսահակ, XII դարու կեսին, գրել են հայ եկեղեցու դեմ ամբաստանություններ, առանձնապես ծանրանալով «Արցևուրի (իմա՝ Առաջավորի) սատանայական պասի» վրա:

Սրանց գիտությամբ Առաջավորը Սարգսի կարապետն էր, որ շրջում էր քաղաքե քաղաք և գյուղե գյուղ և ավետում, որ շուտով գալու է իր վարդապետ Սարգիսը: Շրջագայության ժամանակ Առաջավորը մեռնում է: Սարգիսը ողբում է նրա մահը և սահմանում է Առաջավորաց պասը ի հիշատակ նրա: Ասողներ էլ կան, որ Առաջավորը իսկապես Սարգսի շունն է[1]:

Գագիկ II թագավորը բյուզանդական կայսեր Դուկասին (1071-1078) ուղղած «**Գիր Հաւատոյ**» թղթի մեջ աշխատում է պաշտպանել Սարգսին անտեղի զրպարտությունից: «Բայց ի տօնի յորում զտրատելատն Ս. Սարգիս յիշատակեմք եւ ճշմարիտ մարտիրոսն, որ վկայեցաւ յորդւոցն Հագարու յաշխարհն Բագրեւանդի յորդւոյն Մահմետի յաւուրս Թէոդոսի թագաւորի, եւ ոչ **ասի սա իշապանն Սարգիս աստուածուրացն, այն, որ շանն տայր երկրպագանել**»[2]:

Հայ պսակավոր դավանագետը զանազանում է նահատակ Սարգսին իշապան Սարգսից, ասել է, թե չի ժխտում նրա գոյությունը, միայն հայտնում է, որ հայերը տոնում են առաջնի, որ իբրև թե մահմեդականության զոհ է եղել, և ոչ իշապանի հիշատակը:

Այլ դիրք է բռնում Ներսես Շնորհալին Սարգսի հանդեպ, երբ հարկադրվում է բացատրություն տալ Մանուել կայսեր «**Հաւատոյ խոստովանութեան**» գրով: «Ասացուք փոքր ինչ եւ վասն Առաջաւորացն ի մէնջ անուանեալ պահոց, - գրում է Շնորհալին, - զոր հայհոյէք անգիտաբար, **Սարգսի ուրումն ասելով կախարդի էշ եւ սկուզդ ունողի**. ի յապստամբելոցն ի հաւատոյս մերոյ առասպելաբանելով ի զանազան իրս վասն սորին եւ պատմելով ստայօդ բանիւ առաջի ձեր»:

Ակնարկը դավաճան Իսահակի հասցեին է: «Սարգիսս այս ոչ գոյութիւն ունի յազգս մեր եւ ոչ անուն», հավատացնում է հայ եկեղեցականը: Բայց զգուշաբար ավելացնում է. «Զոր թէ ոք ուրեք թէպէտ եւ մեզ անյայտ է, նզովէ զնա Կաթուղիկէ եկեղեցի եւ զէշ նորա եւ զսկուզդ եւ զդիտող նորա եւ չընդունող»:

Հակառակ Գագիկի, որի տեղեկությամբ Սարգիս հայ էր և մարտիրոսացել էր արաբներից Թեոդոսիոս թագավորի ժամանակ, որը կարող է լինել

---

[1] **Migne,** P G 130 և 132.

[2] **Մատթեոս Ուռհայեցի,** էջ 213:

միայն Թեոդոսիոս III կայսրը (716-717), Շնորհալին համարում է Սարգսին Կապպադովկայի իշխան, որ Հուլիանոս Ուրացողի կողմից հալածվում է Արևելք և նահատակվում Պարսից Շապուհ II թագավորի հրամանով:

Երկու տեղեկություններն էլ հեռու են ստուգությունից: Նույնիսկ Սարգսի պաշտպանները չգիտեին, թե ո՞վ է այդ ժողովրդական սուրբը: Շնորհալին տակավին յոթ տարի առաջ քան կայսեր գրելը հարկավոր խուզումներ էր արել և ասորի վանականի միջոցով կազմել մեզ հասած վարքը: Շնորհալին հունվարի 31-ին է դնում Սարգսի հիշատակը: Սրանից երևում է, որ նա աչքի առաջ է ունեցել նոր տոնացույցը: Հին տոնացույցում Սարգսի տոնը նշանակված է մարտերի 23: Համապատասխան վկայաբանությունը գուցե մի օր երևան գա ճառընտիրների ծալքերից:

Ճշմարիտ է, նույն տոնացույցում տեսնում ենք և՛ Սարգսի և Բաքոսի հիշատակն առանձին սահմի 30, բայց մեզ այնպես է թվում, որ մեր Սարգիս զորավարը ոչ այլ ոք է, եթե ոչ նույն Սարգիսը, Բաքոսի ընկերը: Սա զորական էր հռովմեական բանակում և մարտիրոսացված Դիոկղետիանոսի օրով Միջագետքում, ուր և նրա հիշատակը մեծ հռչակ էր վայելում: Թվում է, որ վաղ անջատելով Սարգսին Բաքոսից շփոթել են աղանդավոր Սարգսի հետ, որ Հովհան Մայրագոմեցու աշակերտն էր և որի «**Գիր վճռոցն**» կարդացել է ինքն՝ Հովհաննես Կաթողիկոսն իր իսկ վկայությամբ:

Խնդիրը, սակայն, Սարգսի անձնավորությունը չէ: Առաջավորաց պասի հետ նա անմիջական կապ չունի: Գագիկն ու Ներսեսը այս կետում արդար են, որ պասը Սարգսի անունով է կոչվում երբեմն, որովհետև շաբաթ օրը նրա հիշատակն է տոնվում: Սարգսին հատկացնելով այդ օրը եկեղեցու հայրերը, կարծես, ուզեցել են վանել Առաջավորացի հետ կապված հեթանոսամիտ զրույցները: Հետևանքն այն է եղել, որ Սարգսին են անցել հին հիշողությունները:

Առաջավորք պասի ծագումը խնդրական է: Մեր նախնիք շատ փորձեր են արել մի կերպ մեկնել զուտ հայկական պասի ծագումը: Ենթադրենք, որ եկեղեցին վերջապես գտել է խելահաս մեկնություն: Սրանով խնդիրը չի փակվում: Առաջավորի կամ Սարգսի առասպելաբանությունը, անտարակույս է, որ արմատներ ունի եկեղեցուց դուրս: Առասպելի իսկական անունները մոռացված են: Նրանց տեղը գրավել են Սարգիսը և Առաջավորը:

Ի՞նչ է զրույցի խորհուրդը, դժվար է ասել: Սարգիսը կարծես ներկայանում է իբրև մի տեսակ Քրիստոս: Ունի իր սեփական կարապետը, որ քարոզում է և պատրաստում ուղին: Ունի իր էշը, որի վրա արդյոք մո՞ւտ է գործել աշխարհ: Սարգիսը ողջում է իր սիրելու մահը, որը թվում է, թե ակնարկ է Ղազարի հարության նման մի դեպքի:

Սակայն Քրիստոսի նման են և Ադոնիսն ու Ատիսը իրենց կյանքի

արտաքին գծերով և նվիրախորհուրդով: Արդյոք Սարգիսը պատահական ժառանգորդ չէ՞ Ատիսի նման մի հին աստվածության պաշտամունքի, և նրա վրա չե՞ն մնացել հնության գծեր:

Հիշենք, որ հայ Ատիսը, Արան, ևս բարեկամ է շան, ինչպես Սարգիսը: Հայ ավանդությամբ շանից են ծագում այն արալեզները, որոնք հարություն տվին Արային: Սարգիսը ողբում է իր մերձավորի մահը, որի հիշատակին նշանակված է Առաջավոր պասը: Թվում է, որ մի աղավաղ արձագանք է այդ՝ մայր աստվածուհու ողբին իր մտերմի Ատիսի անկման առթիվ: Կին աստվածուհու պատկերը նսեմացել և վերացել է առասպելից:

Հայ եկեղեցին հնում սառն վերաբերում ուներ դեպի Մարիամ Աստվածածնի պաշտամունքը, երևի, մասամբ այն պատճառով, որ վերակոչում էր հեթանոս աստվածուհու հիշողությունները, որ նմանապես աստվածամայր էր կոչվում: Սրա հետքերը բնաջինջ անելու նպատակով եկեղեցին պատրաստ էր ստվերի տակ պահել և մինչև իսկ ուրանալ Մարիամի իրավունքները:

Սարգսի մասին այժմ էլ շատ զրույցներ կան ժողովրդյան բերանում (12): Պատմում են, որ պասի գիշերը Սուրբ Սարգիսը ձին հեծած փախցնում է մի գեղեցիկ աղջիկ: Ջուգակից աստվածուհու խավարած հետքերը չե՞ն արդյոք: Ատիսը՝ կտրիճ զորավար, իսկ ընկերուհին՝ առևանգելի աղջիկ:

Ասելս այն է, որ Առաջավորի զրույցը իր սկզբնական, ավելի հին ձևով կարող է պահած լինել մեզ հետաքրքրող դիցաբանության վերապրումները, որ ժողովրդից անցել է եկեղեցուն և սուրբ հայրերը ընդունելով ջանացել են գտնել պատշաճավոր մեկնություն և տեղ եկեղեցական տոների շարքում:

Կարող է պատահել, որ հիշածս սրբերի ուսերին թառած լինին և այլ հեթանոսական ոգիներ, այս արգելք չէ մեր տեսության: Քննածս նյութի մեջ, անշուշտ, կան և ուրիշ շերտեր, որ զատելու և հետազոտվելու են առանձին: Տեսանք, որ շատ բարդված է եկամուտ տարրերով և այն դիցաբանությունը, որ հիմն և ելակետն է ներկա հետազոտության: Դերկետոն կլանել է Միջագետքի ամենահին, և անտարակույս նախասեմական մեծ աստվածությունը, որ հանդիսանում է իբրև ձուկն: Ինքը տեղի է տվել Շամիրամին, Շամիրամը՝ Անահիտին: Անահիտի տաճարը կանգնած է Շամիրամի բլուրի վրա Զելա քաղաքում, որ Փոքր Հայքի մեջ էր մտնում: Նույնպես Շամիրամի բլուրի վրա է նստած Արտեմիսի սրբարանը Կապպադովկիայի Տիանա քաղաքում, որ հաջորդականության ճշմարիտ արտահայտություններն են:

Կիբելեն իր կողմից կլանել է Փոքր Ասիայի մի հին պաշտելիք, որ է ջրերի աստվածություն և որ ներկայանում է առասպելում իբրև Սանգար գետի աղջիկ: Ջուկն աստվածը հայտնի է եղել և Հայաստանում: Անժխտելի վկա են այն վիթխարի քարե ձկները, կամ քարե սյուները ձկան նկարագրով, որ

գտան պրոֆ. Ն. Մառ և Ե. Սմիռնով, Սևանա լճի ափերին (13): Փոյուգիական ջրի աստվածության հուշերը ևս մնացել են հին Հայաստանում, և կապ ունին ջրհեղեղի ավանդության հետ, որի տեղական և ինքնուրույն հյուսվածքը հայտնի է եղել Փոյուգիայում և Հայաստանում: Ձկան և թե ջրի փառազուրկ աստվածները ապաստան են գտել Կիբելեի (14) և Դերկետոյի տաճարներում:

ՏՈՐՔ ԱՍՏՎԱԾ ՀԻՆ ՀԱՅՈՑ

Ազգային ավանդության համաձայն, Տորքը Հայոց նախարարություններից մեկի նախահայրն է: Մովսես Խորենացու ասելով, նա Հայկի սերունդից է, Պասքամի զավակը և Հայկակի թոռը (1): Հետաքրքրական է մանավանդ նրա նկարագիրը, որ ավանդում է մեզ նույն պատմագիրը: Տորքը մի հսկա էր, խոշոռագեղ, բարձր, կոպտարանձն, տափակաքիթ, խորակն և դժնահայաց, վիթխարի հասակով և ուժով: Արտասովոր տգեղությունը, ժահադիմությունը, նրա հատկություններից մին էր, որի պատճառով կոչվում էր նաև Անգեղյա: Վաղարշակ թագավորը նրան նշանակում է արևմտյան կողմի սահմանակալ և նրա տոհմը հրեշավոր այլանդակության պատճառով անվանում է Անգեղ տուն: Տորքը Հայոց համար նույնն էր, ինչ որ Ռոստոմ Սագճիկը (Սագաստանցին) Պարսից, որի մասին պատմում էին, որ հարյուր քսան փղի ուժ ուներ: Հայերը Տորքին վերագրում էին այնպիսի առասպելական քաջագործություններ, որ անհավատալի են թվում Սամսոնի, Ռոստոմի և մինչև իսկ Հերակլեսի նկատմամբ: Պատմագիրը հիշում է երկու օրինակ: Տորքը ձեռք էր զարկում որձաքար վեմերին, այնպիսի սալերի, ուր ճեղքի հետք անգամ չէր նշմարվում, և ճեղքում էր քարը, ինչպես և կամենում էր. հետո եղունգներով քերում էր, հղկում՝ ինչպես տախտակ և հենց եղունգներով էլ փորագրում արծիվ և նման պատկերներ: Ըստ մյուս առասպելի, միանգամ Տորքը Պոնտոսի ափերին պատահում է թշնամու նավերին, դիմում է նրանց վերա, բայց չի կարողանում հասնել. նավերը հեռանում են մոտ ութ ասպարեզ. այն ժամանակ հսկան վերցնում է բլրաձև մի վեմ և նետում նավերի ետևից: Ջուրը պատառվում է և նավերից շատերն ընկղմում են, իսկ մնացյալներն ուժգին ալեկոծությունից վարվում, քշվում են հեռու շատ և շատ մղոններ[1]:

Ալևոր հնության այս քանգ ավանդը, Տորքի առասպելը, ճշմարիտ է, գիտական ուշադրությունից չէ սպրդած և քանիցս նյութ է եղել քննության, բայց եղած մեկնությունները տակավին հեռու են հավանականությունից և խնդիրը սպասում է ավելի համոզկեր լուսաբանության: Հանգուցյալ Ք. Պատկանյանը կարծում էր, որ Տորք անունը թուրք ազգության

[1] **Մովսես Խորենացի**, Գիրք Բ, 8:

վերաբուն է, էպոնիմը, և կարելի է նկատել իբր ակնարկ հին թրքական գաղթականության: Տորքի արտաքինը, մանավանդ տափակաքիթ մակդիրը տարորեն հարմարում է թաթարական ցեղի նկարագրին, ինչպես տեսնում ենք հետագա դարերի հայ մատենագիրներից, և թեև Պատկանյանը ընդունում էր, որ հսկայի հատկություններից գլխավորը՝ տգեղությունը, արդյունք է Անգեղ անվան հայ մեկնության, ըստ ժողովրդական ստուգաբանության, բայց և այնպես դիպվածական բան չէր համարում Տորքի թաթարական կամ նույնանման պատկերը[1]:

Պատկանյանի հայացքը սերտ աղերս ուներ Ա. Մորդմանի հոդվածի հետ, որ լույս էր տեսել մի քանի տարի առաջ և նայում էր հայ-թրքական լեզվական առնչության հարցին[2]: Գերման գիտնականն այն միտքն էր հայտնում, որ հայ լեզվի մեջ նշմարվում են թուրանական ազդեցության անժխտելի հետքեր: Խոսքը, հարկավ, այն թրքական բառամթերքի մասին չէր, որ ողողում է արդի խոսուն լեզուն և, որ բնական հետևանք է դարավոր դրացիության և միասնական կենցաղի: Մորդմանն ի նկատի ուներ այնպիսի բառական գանձեր, որոնց գոյությունը հայ լեզվի մեջ վկայված է IV-VII դարերի դպրության հիշատակարաններով, ուրեմն մի այնպիսի ժամանակ, երբ սելջուկների, թուրքերի և նման ցեղերի մասին խոսք անգամ չէր կարող լինել:

Պատկանյանը քննության առնելով Մորդմանի բերած բառերը, գտնում է, որ գրեթե բոլորն էլ պարսկական ծագում ունին և ուրեմն ոչ մի արժեք խնդրի վերաբերմամբ: Ժխտելով Հանդերձ այս բառերի պիտանությունը, Պատկանյանը չի ուրանում Մորդմանի հայացքի լրջությունն իբրև գիտական տեսություն և իր կողմից ևս բերում է քանի մի բառեր նույն միտքը հիմնավորելու նպատակով: Հայերենի և թուրքերենի լեզվական խնամությունը, նրա կարծիքով, կարելի է մեկնել նրանով, որ հնում, գեթ նախքան արաբական շրջանը, որևէ թուրքական գաղթականություն է տեղի ունեցել, դեպ ի Հայաստան և ժամանակի ընթացքում ձուլվել հայերի հետ: Ահա այս պատմական եղելությունն է, որ արձանացած է համարում հայ ժողովրդի հիշողության մեջ ի դեմս Տորք առասպելական հսկայի[3]:

Նոր և միանգամայն անսպասելի կարծիք հայտնեց պրոֆ. Գր. Խալաթյանցը իր մագիստրական աշխատության մեջ[4]: Նա կասկածում է, թե

---

[1] **К. Патканов,** О месте, занимаемом армянским языком в кругу индо-европейских, Тифлис, 1879.

[2] «Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft», Leipzig, 1872.

[3] Անդ:

[4] **Гр. Халатянц,** Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, стр. 326.

որտեղից կարող էր մեր պատմագիրը քաղել Անգեղ տան մասին այնպիսի հնագրական և ցեղաբանական մանրակրկիտ տեղեկություններ, որտեղից կարող էր իմանալ, որ Անգեղ տան նախահայրը Տորքն է, որ ապրում էր II դարում ն. Ք. կամ որ Տորքը ծագում է Հայկակի թոռ Պասքամից իբր 600 տարի առաջ քան Տորքը: Այսպիսի տարակուսանք է հայտնում նաև Ա. Գարագաշյանը[1]: Երկու հայ գիտնականները չեն վարանում նաև, որ Անգեղ բառի ստուգաբանությունը մտացածին է և խորթ հայ լեզվի ոգուն. հսկայի ուժեղության վերա ավելացնում է պատմաբանը ևս այլանդակությունը, որ արդարացնե Անգեղի իբր տգեղ նշանակությունը: Խալաթյանցի կասկածոտությունը վտանգում է նաև առասպելների վավերականության: Առաջին առասպելը, նրա կարծիքով, կատարյալ անհեթեթություն է, որովհետև քարի վերա պատկերներ նկարելու կարողությունը ենթադրում է որոշ կրթական գեղարվեստական պատրաստություն, որ բնավ անհարիր է հրեշավոր հսկայի հիմնական նկարագրի հետ: Տորքի մյուս առասպելը՝ բլրի նման խոշոր քարեր ծգելը նավերի վերա, իրոք արտահայտում է հսկայական ուժ, բայց այնքան է հիշեցնում Հոմերոսի Պոլիփեմոսի նույնանման քաջագործությունը, որ ստիպում է ենթադրել, որ Խորենացին պարզապես փոխ է առել հռչակավոր Կիկլոպի առասպելը որևէ հունական շրջիկ ժողովածուից: Պարոն Խալաթյանցը առաջանալով բացատում է մինչև իսկ Տորք անվան պատմական ստուգությունը: Եվսեբիոսի Ժամանակագրության մեջ, օլիմպիական ըմբիշների ցուցակում, հիշվում է ի միջի այլոց ոմն Տորքոս Կողոփոնացի, որ 145-րդ օլիմպիադին հաղթող է հանդիսացել մրցակռվում[2]: Թեև հունական բնագրում կարդացվում է Մոսքոս, *Μόσχος Κολοφώνιος*, փոխանակ հայ թարգմանության Տորքոսի, բայց այդ հանգամանքը հետ չէ կասեցնում Խալաթյանցին գայթակղիչ համեմատությունից. և ենթադրում է, որ Խորենացին այստեղից է վերցրել Տորք անունը և հերյուրել նորա անվամբ առասպելներ: Հայ ընթերցումը աղավաղության արդյունք է համարում, մի աղավաղության, որ տեղի է ունեցել Խորենացուց առաջ, ուստի և Տորք անվան գոյությունն իսկ հայ գրականության մեջ նկատում է իբր պարզ թյուրիմացություն[3]:

Պատկանյանի կարծիքը մի սոսկ ենթադրություն է, որ իրական խարիսխ չունի ո՛չ պատմական և ո՛չ լեզվական գիտությունների մեջ: Հայ-թուրքական լեզվական առնչության խնդրով ներկայումս զբաղվում է պ. Հ. Պեդերսենը: Սորա հայացքները տարբեր են Պատկանյանի տեսությունից: Այն բառերը,

---

[1] **Ա. Գարագաշյան**, Քննական պատմություն Հայոց, Ա, էջ 250:

[2] **Եվսեբիոս Կեսարացի**, Ժամանակ., Ա, էջ 30. «ի մանկտւոյ բռնամարտիկ կոուին՝ Տորքոս Կողոփոնացին միայն ի մանկութեան ի շրջանակաւ մարտին յաղթեաց»:

[3] **Гр. Халатянц**, անդ, էջ 326 և հետ.:

որոնք ընդհանուր են հայերենի և թուրքերենի մեջ, Հ. Պեդերսենի քննությամբ, զուտ հայկական են և հայերենից են անցել թուրքերին. նա փորձում է մինչև անգամ որոշել փոխառության ժամանակը իբր 500 թ. ն. Ք.[1]

Այս խիզախ հայացքը դեռևս պետք ունի ավելի հաստատուն և հուսալից հիմունքների: Հարգելի գիտնականը «անհիմն է համարում այն կարծիքը, որ հայերենի բառագանձը բավականին ազդեցություն է կրած օտար լեզուներից» և վստահանում է պնդել հայ լեզվի հնդեվրոպական մաքրության վերա: Այսօրինակ թերի կամ միակողմանի ընթռնումով՝ հայ լեզվի բարդ կազմի հանդեպ, մանավանդ այժմ, երբ արդեն հաջողվում է լեզվական պեղումով վեր հանել հայ լեզվի ներքին շերտերը, այն հին տարրերը, որոնք կապում են հայերենը վիրական լեզվախմբի հետ, հարկավ, դժվար է հանգել անվիճելի հետևանքների առավել ևս այնպիսի առեղծվածային խնդիրներում, որպիսին է հայ-թուրքական լեզուների խնամությունը: Համենայն դեպս, այս խնդրին նայող տեսություններն առ այժմ ավելի քան տեսություններ են, տակավին մտքի մառախուղներ և ոչ մի գիտական կռվան չեն կարող ընծայել թուրքական հին գաղթականության հարցը պաշտպանելու: Սրանով և Պատկանյանի կարծիքը Տորքի մասին մնում է օդի մեջ առանց ելուզակի:

Անցնելով պ. Խալաթյանցի դատողության, պետք է նկատել, որ ինչ վերաբերում է Տորքի և Անգեղի հարաբերությանը, անպայման ճշմարիտ է: Ամենայն իրավունքով կարող ենք զատել Տորքն Անգեղից և Խորենացու մեկնությունն նորա լեզվաքննական ճաշակի պտուղ համարել: Իսկ այն ենթադրությունը, որ Տորք անունը իբրև թե փոխառություն է և ըմբիշի աղավաղած անունը, անպայման անընդունելի է և միանգամայն խոտելի: Կարելի է համաձայնել, որ Տորքին վերագրած առասպելները չինծու են, կարելի է թերևս Խալաթյանցի առարկությունը հսկայի փորագրելու ընդունակության վերաբերյալ ուղղել ի նպաստ նորա հիմնական մտքի, ենթադրելով, որ պատմաբանը Անգեղ բառը կամեցել է մերձեցնել **Անգղ** բառին, ուստի և հսկային վերագրել է արծիվ նկարելու կարողություն, այս բոլորը, կրկնում ենք, հնարավոր է, գուցե և հավանական, բայց կարծել, որ Տորք անունն իսկ բյուրիմացության ծնունդ է, բանավոր հիմք չկա: Խորենացու հերյուրանքները, ըստ Խալաթյանցի, միշտ միտումնավոր են և կատարվում են որոշ նպատակով: Այս դեպքում, անհասկանալի է, թե ինչ խորհրդով է պատմաբանը գողանում անհայտ ըմբիշի անունը և նրան վերագրում ստահոդ քաջագործություններ: Եվ որպիսի ծախորդություն. հարյուրավոր անուններից վերցնում է հենց այն, որ աղավաղված է (Տորքոս

[1] **H. Pedersen**, Armenisch und die Nachbarsprachen, KZ. XXX, հայերեն թարգմ. Ազգային Մատենադարան, ԾԲ. «Հայերեն և դրացի լեզուները», թարգմ. Թ. Կետիկյան, Վիեննա. 1906:

փոխ. Մոսքոսի): Թվում է, թե Տորքի եթե ոչ ավանդության գեթ անվան պատմական իսկությունը ժխտելը, ծայրահեղ կասկածամտության արդյունք է: Այդ անունը ծանոթ է Խորենացուն, անշուշտ, հայ կյանքից. հավանական է նաև, որ հսկայի պատկերն իր հրեշավոր գծերով էապես առնված է հայ իրականությունից: Այլապես ինչու պետք է պատմաբանը մի պատահական ըմբիշի անունը կապեր հայության քաջածանոթ Անգեղի հետ և նրան ընծայեր նշանավոր իշխանական տան նախահայրության պատիվը:

Անգեղ իսկապես աշխարհագրական անուն է, Ծոփաց աշխարհի գավառներից մինը, որի կենտրոնական ամրոցը մինչև այժմ էլ պահել է իր հին անունը: Անգեղ, տաճկական արտասանությամբ Էգիլ: Հին հայերը իրավամբ կարծում էին, որ Անգեղ աստծու անուն է և նույն այն Անգեղի հետ, որ հիշվում է Ս. Գրքի հայ թարգմանության մեջ, իբր համազոր բնագրի Ներգալ-ին[1]: Մար-Աբասյան պատմության Անանուն հեղինակն ևս գիտե, որ Անգեղն աստվածություն է[2]: Կարելի է ենթադրել, որ Աստուածաշնչի Անգեղը հունական բնագրի Ներգելի աղավաղումն է *τὴν νεργελ*, բայց ավելի ընդունելի է, որ Անգեղը տեղական ձև է նույն Ներգալ անվան: Սեմական Նարգալ իբր պաշտամունք մոտ է հունական Հերակլեսին. սորա ստուգաբանությունը ևս մութ է և դժվար թե հնարավոր լինի մեկնել հունական հողի վերա: Արդյոք Հերակլ-ես, մանավանդ Հերկուլ-ես ձևը, չէ ծագում սեմական Նարգալից, և կամ հայ անգեղ, հույն հերկուլ, և սեմ. նարգալ միևնույն բառի տարբեր արտահայտություններ չե՞ն: Համենայն դեպս Անգեղը նույն է Ներգալի հետ, եթե ոչ ստուգաբանորեն, գեթ նշանակությամբ: Անգեղ ամրոցն իր անունը պարտական է նույնանուն աստվածության, երևի, այնտեղ գտնվող տաճարի պատճառով: Արշակունիք մեծ կարևորություն էին տալիս Անգեղ բերդին. սա հայտնի էր իբրև արքայական հանգստարան, ուներ մեծ հարստություն. Անգեղ տան իշխանը բարձով վեր էր բոլոր նախարարներից[3]: Երևում է, որ Անգեղն հնուց ի վեր նվիրական վայր է եղել, շնորհիվ Անգեղի տաճարի, և նրա հռչակը չէ նսեմացել նույն իսկ քրիստոնեության ժամանակ: Խորենացին Անգեղը նույնացնում է Տորքի հետ, իսկ Անանուն հեղինակը Անգեղ համարում է Բագրատունյաց ժառանգություն և նույնանիշ Բագարատ անվան: Վերջին համեմատության առիթ է տված գուցե «բագ» բառի նշանակությունը, որ լավ ծանոթ էր մեր հին հեղինակներին (հմմտ. Բագավան - դիցավան, բագին -

---

[1] «Եւ արք Քութայ արարին զԱնգեղ». *καὶ οἱ ἄνδρες Χουθ ἐποίησαν τὴν Νεργελ*. **Гр. Халатянц**, էջ 84:

[2] **Մեքենս**, էջ 6. «Վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»:

[3] **Փավստոս**, Դ, 24:

մեհյան և այլն): Իսկ Անգեղի և Տորքի շաղկապման հիմն որոնելու է նրանց էության նմանության մեջ, այսինքն՝ որ երկուսն էլ գերբնական ուժերի, աստվածության գաղափարներ են:

Հայտնի է, որ հաթյան ցեղի բազմաթիվ աստվածների մեջ առանձնապես հռչակված էին երկուսը, իբր ազգային աստվածներ, Տարկու և Տիշուպ, **tarqu, tišup**. Երկուսն էլ տարածված պաշտամունք էին ամբողջ Առաջավոր Ասիայում: Ենսեն հնարավոր էր գտնում հաթյան ազգությունները բաժանել երկու մեծ խմբի, մեկը՝ Տարկուի երկրպագու, մյուսը՝ Տիշուպի (թեև գիտնականների կողմից հավանություն չգտան)[1]: Տարկու աստվածն ընդունված էր նույն իսկ Քասիդների մոտ հավասար Բելին[2]. նրա կուլտը ընդհանուր էր Պարսկաստանից մինչև Փոքր Ասիայի հեռավոր ծայրերը: Տարկուի երբեմնյան փառքի հետքերը մնացել են մի շարք հատուկ անունների մեջ, որոնք պատահում են Ասիայի հինավուրց ազգությունների մոտ. *δῆμος Τροκονδηνῶν* Փոյուգիայում, *Ταρκονδαρα* Կարիայում, **Trquta** Լիկիայում, *Ταρκόνδημος* Կիլիկիայում[3]: Ասորական սեպագիր արձանագրությանց մեջ կարդացվում են՝ **Tarkudimme**, թագավոր Միտանի պետության[4], **Tarhundaradus** թագավոր Արծիպի (որ համեմատվում է Հայոց Արծափ տեղի հետ)[5] **Tarḫunazi,** թագավոր Մելիտինի, վերջապես **Tarḫuna**, **Tarḫunabe**, լեռան անուն Նաիրի երկրում, այսինքն՝ Հայաստանի հարավային մասում, Եփրատից մինչև Վանա ծովը: Այդ անունը կենդանի էր դեռևս բյուզանդական շրջանում. Զենոն կայսեր դեմ եղած զորապետներից մեկի անունը *Τροκόνδης* էր:

Ուշադրության արժանին այն է մանավանդ, որ հաթյան աստվածության անունը պատահում է Հայաստանի այն մասում, ուր ընկնում է նաև Անգեղ գավառը, հին Նաիրի աշխարհում: Ազգային ավանդությունը, կապելով Տորքը Անգեղ աստվածության հետ, մեզ հիմն է տալիս կարծելու, որ Տորքը ոչ այլ ինչ է, եթե ոչ հինավուրց Տարկուն. և ուրեմն հիշյալ անվանց շարքը կարող ենք հարստացնել, ներմուծելով և Հայոց Տորքը իբրև մի հարգի ավանդ ալևոր հնության: Մեկնության բնավ կարոտ չէ, թե ինչու հեթանոսական հզոր աստվածը քրիստոնեական շրջանում պահպանվել է հրեշավոր էակի այլանդակ, բայց և այնպես զորավոր պատկերով: Կրոնական մտքի նույնօրինակ բեկման արդյունք է դև բառը, որ արիական լուսավոր աստվածության գաղափարից դարձել է չարության և խավարի

[1] **Ed. Meyer,** Geschichte des Altertums, I, p. 626. 2. Aufl. 1909.

[2] **Hommel,** Grundriss der Geographie und Geschichte des alten Orients, 1901, I, p. 44.

[3] **Kretschmer,** Einleitung in die Geschichte der griechischen Sprache, p. 362 և հետ.:

[4] **Hilprecht,** Assyriaca, p. 119.

[5] **Hommel**, Ibid., p. 45.

ոգի: Նաև հնչական խոչընդոտ չի կարելի հարուցանել **tarqu** և Տորք բառերի (**tork, *taurku**) նույնության նկատմամբ:

Ի՞նչն է կապել Տորքն Ահգեղի հետ, արդյոք լոկ աստվածության գաղափարը, թե մի այլ հանգամանք, մնում է մութ: Մեր համեմատության ճշմարտության ապացույց կարող է համարվել այն պարագան, որ հաթյան մյուս աստվածությունը՝ Տիշուպ, նմանապես քարացել մնացել է հայ իրականության մեջ իբր աշխարհագրական անուն Տոսպ, Tospitis, անշուշտ ի հիշատակ նրան նվիրած գլխավոր տաճարի. ուրեմն, այնպես, ինչպես Անգեղ աստվածության անունը անդրադարձել և հառել է որոշ վայրի վերա: Եթե Անգեղ տեղը հնագիտորեն հետազոտվի, պեղումները կարող են երևան հանել այնպիսի իրական հայտնություններ, որոնք գուցե և պարզեն, թէ ինչ են նշանակում այն արծիվները, որ Տորքին փորագրել է տալիս մեր պատմաբանը, արդյոք հաթյան վիմական հիշատակարաններից հայտնի արծվենկարների հետ կապ չունի՞ն:

Նորերս պրոֆ. Մառը մի ուշագրավ հոդվածում ցույց տվավ հայերեն **աստուած** մինչև այժմ անմեկնելի բառի ազգակցությունը փռյուգական *Σαβάζιος* աստվածության հետ[1] (2): Թեև բառիս ստուգաբանությունը տակավին մութ է և մինչև իսկ հայտնի չէ, թե արիակա՞ն ծագումն ունի, թե այլ, բայց անտարակույս է, որ Սաբազիոսը համբավված աստված էր թրակա-փռյուգական աշխարհում: Որտե՞ղ է ծաղկել նրա սկզբնական կուլտը, Թրակիայո՞ւմ, որտեղից անցել է Փռյուգիա, թե հակառակը, դժվար է վճռել: Համենայն դեպս հայերը ծանոթ են եղել աստված Սաբազիոսին փռյուգացիների միջոցով: Այս մի կարևոր հայտնություն է, որով հաստատվում է հայոց և փռյուգացվոց այլուստ վկայված ազգակցությունը: Ասել է թե, աստված - *Σαβάζιος -ը* հնդեվրոպական ծագում ունեցող հայերի պաշտամունքն էր, հայկական ազգի այն տարրերի, որոնք ցեղակից էին փռյուգացիներին: Մինչդեռ Տորք աստուածությունն ընդունված էր տեղական հին բնակչության մեջ, հայության այն տարրերի, որոնք ուրարտական-հաթյան ազգախմբին են պատկանում, և հարևան վերական ցեղի ազգությանց հետ կազմում են մի ընտանիք: Այլ կերպ ասած, մեկն **արմենների** պաշտամունքն է, մյուսը՝ **հայերի**, պատմական հայության երկու բաղկացուցիչ մասերի տարբեր պաշտամունքը: Այն հանգամանքն, որ արմենների **աստուածը** խոր և ծավալուն հիմքեր է ձգել, ցույց է տալիս, թե որպիսի վճռական նշանակություն են ունեցել հնդեվրոպական արմենները պատմական հայության իբր մի ազգության զանգման շաղախի մեջ:

---

[1] Бог *Σαβάζιος* у армян. Bulletin de l'Académie Imp. des Sciences de St. Pétersbourg, 1911, p. 759 (թարգմ. «Արարատ», 1911, էջ 794-799):

ՏԱՐԿՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՄՈՏ[1]

Ասիանիկ դիցարանի վեհագույն բնակիչներից մեկը Տարկու աստվածն էր: Նա նույնքան հռչակավոր էր, որքան Տիշուպը՝ հաթյան ցեղի գերագույն աստվածը: Այս երկու աստվածների պաշտամունքի աշխարհագրական սահմանները բավական ընդարձակ էին և ընդգրկում էին նաև սահմանամերձ Հայաստանը: Հայաստանի նախահայկական բնակիչները կապված էին հաթյան աշխարհի հետ եթե ոչ արյունակցական կապով, ապա ընդհանուր մշակույթով: Նրանց մշակութային սերտության ապացույցը հատկապես աստվածներն են:

Երբեմնի Տարկուն և Տիշուպը դասվում էին Հայաստանում ամենապաշտելի աստվածների շարքը: Դրա մասին կարելի է դատել, ելնելով երկրում՝ այդ պաշտամունքի հետքերի դեռ երկար ժամանակ պահպանվելուց, թեև ինքը պաշտամունքը վերացվել է, կուլ գնալով դարերի մոռացության: Տոսպ կամ Տոսպիտիս աստվածակիր անունը , որը տրվում էր մերթ քաղաքին, մերթ լճին, մերթ ամբողջ Վանի շրջանին, պարունակում էր լճի ափերին եղած Տիշուպի պաշտամունքի վերհուշը:

Տարկուի անունը նույնպես ավելի երկար ապրեց, քան ինքը՝ այս անունը կրող աստվածը: Որպես աստված գահընկեց լինելուց հետո Տարկուն տակավին շարունակում էր ապրել ժողովրդի մեջ հերոսի, հրեշի կամ, ավելի շուտ, գերբնական ուժի պատկերով:

Հայ պատմիչ Մովսես Խորենացին խոսում է Տորք անունով մի հսկայի մասին, որին համեմատում է իրանական վեպի հերոս Ռոստոմի հետ: Տորքի ծագման հարցը մենք քննության ենք առել մեր մի հոդվածում[2]: Այդ ժամանակ առասպելական հայ հսկայի մի քանի գծերը, ինչպես նաև «Անգեղ» մականունը ինձ շատ մշուշապատ էին թվում: Այժմ, կարծում եմ, գտել եմ այդ խնդրի լուծումը. այն է՝ ներկայացնել Տորքին իբրև Տարկու աստծո տեղայնացված տարբերակ:

---

[1] Զեկուցումը ներկայացված է եղել Ասիական ընկերության № 12-րդ նիստին, 1926 թ. նոյեմբերին: Սույն թարգմանությունը կատարված է դրա հրապարակված բնագրից:

[2] «Յուշարձան», Վիեննայի Մխիթարյանների հորելյանական ժողովածու, Վիեննա, 1911:

Հայ պատմիչ Մովսես Խորենացին, պատմելով Տորքի մասին, հետևյալ խոսքերով է բնութագրում նրան. «Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռ Պասքամից՝ մռայլ դեմքով, բարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դժնյա հայացքով մարդուն, որին, սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա, որ վիթխարի հասակ և ուժ ուներ, [թագավորը] արևմուտքի կուսակալ է նշանակում, իսկ ցեղի անունը դնում է Անգեղ Տուն՝ երեսի տգեղության պատճառով...: Բայց եթե ուզում ես, շարունակում է Պատմահայրը, դիմելով իր հովանավոր իշխան [Սահակ] Բագրատունուն, ես էլ նրա մասին անհամ և անտեղի ստեր կպատմեմ, ինչպես պարսիկները, որ Ռոստոմ Սագճիկի մասին պատմում են, թե հարյուր քսան փղի ուժ է ունեցել: Որովհետև նրա ուժեղության և սրտոտ լինելու պատճառով երգերը պատմում էին նրա մասին չափազանց անհամար բաներ, որ ո՛չ Սագճիկին են հարմարվում, ո՛չ էլ Հերակլեսին և ո՛չ Սամսոնին: Քանզի երգում էին նրա մասին, իբր թե ձեռք է զարնում որձաքար ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղք չկար, ուզածին պես ճեղքում էր մեծ ու փոքր, եղունգներով տաշում էր, տախտակներ էր ձևացնում և նույնպես եղունգներով նրանց վրա գծում էր արծիվներ և նման բաներ»[1]:

Այս նկարագրության մեջ առանձնապես արժեքավորն այն ցուցումն է, որ Տորքը ժայռերի վրա արծիվներ և այլ թռչուններ էր գծագրում:

Անգեղ տան իշխանների ամրոցը, որ գոյություն ունի նաև մեր օրերում, գտնվում է Արղանայի մոտ մի բարձր բլրի վրա, հնադարյան Անգիլենե իշխանության կենտրոն՝ Դիարբեքիրից հյուսիս (1), և հավանաբար պահպանել է մեր պատմիչի օրոք դեռ գոյություն ունեցած արծվի կերպարանքով փորագրված հուշարձաններ, որոնք պատմիչը համարում է հսկա Տորքի փորագրություններ:

Երկրամասի հնագիտական տվյալների վերաբերյալ Մովսես Խորենացու դիտողությունները չափազանց ուշագրավ են: Հերոս Տորքը անշուշտ Տարկու աստծո դիցաբանական վերհուշն է: Տարկուն կարող էր որոշակի կապ ունենալ արծվի հետ: Բայց թե որն էր այդ աստծու՝ Տարկուի կերպարանքը, ինչ տեսքով էր նա ներկայանում իր պաշտողներին, հայտնի չէ: Մինչև այժմ հայտնաբերված հնագիտական հուշարձաններն այդ մասին ոչ մի պատկերացում չեն տալիս:

Հայ պատմիչի հաղորդումը կարող է հիմք ծառայել Տարկուի ծագումը քննելու համար: Թվում է, որ առնվազն Հայաստանում Տարկու աստծուն երբեմն պաշտել են արծվի կամ, ավելի ստույգ, անգղի կերպարանքով:

---

[1] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Գիրք Բ, 8:

Անանուն պատմիչը կամ՝ Սեբեոսի գործում՝ կեղծ Մարաբասը ամեն դեպքում Անգեղին ճանաչում է որպես աստծու՝ Տորք մականունով. «Բագարատը կրում է նաև Անգեղ անունը, և նրան այդ ժամանակ բարբարոս ցեղերը կոչում էին աստված»: Սա Տորք Անգեղի և Տարկուի քողարկված կապի մի ակնարկություն է, ինչպես և baya արմատի (Բագարատ անվան մեջ) նույնությունը Տարկուի հետ:

Ժողովրդական ստուգաբանությամբ Մովսես Խորենացին աշխատում է Անգեղ անունը բխեցնել հայերեն «անգեղ, ոչ գեղեցիկ, տգեղ» բառից, մինչդեռ իրականում այն նույնանում է «անգղ, բազե» բառի հետ: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հունարեն ἀετός, γρύψ, ἀλιάετος, γῦψ, ἰκτῖνος բառերը համապատասխանում են «արծուի», «կորճ», «պասկուճ», «գետարծուի», «անգղ» և «ցիռ»[1]: «Անգղ» = γῦψ ծագումն անհայտ է: Հունարեն բոլոր մնացած բառերի ստուգաբանությունը նույնպես առեղծվածային է, բացի վերջին ἰκτῖνος բառից, որ համապատասխանում է հայերենի «ցիռ», գերմաներեն Saēna-ին:

Hesichius-ի բառարանում կա մի բառ, որ զարմանալի նմանություն ունի հայերեն «անգղ» բառին՝ ἄγλυ. ὁ κύκνος ὑπὸ Σκυθῶν[2]: Այս սկյութական բառի քիչ թե շատ ընդունելի հնդեվրոպական ստուգաբանությունը դեռ չի առաջարկվել: Նրա առնչությունը aquila, aquilus-ի[3] հետ շատ կասկածելի է: Հարազատություն չկա՞ արդյոք ἄγλυ և հայերեն «անգղ»-ի միջև: Այս ենթադրությունն ինձ բոլորովին էլ բոնազբոսիկ չի թվում: Հնչյունական հանգամանքները պարզաբանելու համար օգտակար կլինի նկատել, որ հայերեն բառը գրվում է նաև «անկղ» ձևով: Անցնենք սակայն tarkou բառի քննության:

Հունարենում կա τόργος բառը, որ նշանակում է «պասկուճ». դա ճիշտ այն թռչունն է, որի փետուրները փոխ է առել Զևսը Լեդայի հետ խառնակվելիս: Ի դեպ, Լյուկոֆրոնեսի գործերում[4] τόργος կոչվում է ὑγρόφοιτος, այսինքն՝ նրան կարելի է դիտել իբրև ἀλιάετος-ի (հայերեն «գետարծուի») ինչ-որ տեսակ: Ինչևէ, այս իմաստային նրբերանգը տվյալ դեպքում այդքան էլ կարևոր չէ:

Τόργος-ը կապում են անգլերեն stork-ի, գերմաներեն Storch-ի հետ. դրանք բոլորը ծագում են «վնաս» իմաստ ունեցող մի արմատից[5]: Դժվար թե

---

[1] **Վան.**, ԺԱ, 13 և **Երկրորդ.**, ԺԴ, 13:

[2] «Ագլյու». Սկյութերեն «կարապ»:

[3] Լատիներեն «արծիվ»:

[4] **Lycoph.**, 87.

[5] **Boisacq**, Dict. etym.

նրան կարելի է առանձնացնել կովկասյան հնչակցող և նույնիմաստ մի բառից: Լեզգիական ընտանիքին պատկանող Կովկասի լեռնաբնակ ցեղերից մեկի՝ ավարների լեզվում պասկուճին կոչում են itarkou[1]: Սա թույլ է տալիս ասելու, որ tarkou նույնպես սկյութական բառ է, ինչպես և ἄγλυ. քանի որ անտիկ ժամանակաշրջանում ավարները դասվում էին ցեղերի այն լայն ընտանիքի մեջ, որը հայտնի է եղել «սկյութացիներ» ընդհանուր անվանումով: Ավարերեն այդ բառը արտասանվում է «ըտարկու»՝ համարյա «տարկու»:

Ինչ վերաբերում է Տորքի տոհմական Պասքամ անվանը, ապա հետաքրքիր է, որ նա նույնպես պարունակում է բաղադրիչ, որ ևս ունի «պասկուճ» իմաստը:

Հայերեն Աստվածաշնչում հունարեն γρύψ բառը մեկ անգամ արտահայտված է որպես «կորճ», իսկ մյուս անգամ՝ որպես «պասկուճ»: Վերջին ձևը հանդիպում է նաև VII դարի «Աշխարհացոյց»-ում. այնտեղ ասվում է, որ պասկուճը գալիս էր **Ույունյաց աշխարհից,** և ֆագռը (փշավոր ձուկը) հարձակվել էր նրա վրա: **Հարվածից երկուսն էլ ընկնում են ծովը և խորտակվում**[2]:

«Կորճ»/«պասկուճ» բառերի հերթափոխությունը դրդում է մեզ նույնացնելու «-կուճ» վերջահանգը և «կորճ» ձևը: Այդ նույն բառի վրացերեն ձևը paskouji-ն է: Կա վրացերենում և ķanji բառը, որը նշանակում է «ծովարծիվ» և որը, ինչպես երևում է, ազգակից է վերջահանգ kouji-ի: Գրիգոր Մագիստրոսը հիշատակում է «կանդ» «արու արծիվ» բառը. այս անհայտ բառը, շատ հնարավոր է, կարող է լինել kanji-ի մեկ այլ ձևը:

[Բառերի այս շարքից] չի կարելի առանձնացնել վրացերեն k'ori («պասկուճ»), որն համապատասխանում է -kunji բաղադրիչին ճիշտ այնպես, ինչպես ķuri («ականջ»)՝ ķuj-ին, կամ k'omori («ամուսին»)՝ k'omonji-ին, որոնցից մեկն, այսպես ասած, քարթվելական ձև է, իսկ մյուսը՝ մեգրելական:

Այնուամենայնիվ, ստուգաբանությունը չէ, որ հետաքրքրում է մեզ տվյալ պահին: Արծվի և պասկուճի անվանումները հայերենում, ինչպես վրացերենում և նույնիսկ հունարենում դեռ կարոտ են հատուկ ուսումնասիրության:

Մեր նպատակների համար բավական է հաստատել, որ «պասկուճ»-ը

---

[1] **C. Graham,** The Avars Language. I. R. A. S, 1881, XIV, 3.

[2] «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», էջ 44:

արծվի կամ ծովի և ծովեզրի արծվի ընտանիքին պատկանող մի թռչուն է, որ գիտե ճարպկորեն սլանալ ծովի վրայով:

Եվ այսպես, հսկա Տորքի պապահայրը կրում էր Պասքամ անունը: Անհիմն չէր լինի բխեցնելու այդ անունը «պասկուճ»-ից («ծովարծիվ»), և համարել, որ այն կազմված է նույն սկզբունքով, ինչ որ Գեղ-ամ, Բագ-ամ, Արշ-ամ անունները:

Ուստի հայ հերոսի երեք անվանումներն էլ՝ Տորք, Անգեղ և Պասքամ մատնում են իր և արծվի ինչ-որ տեսակին պատկանող թռչնի միջև եղած անմիջական կապը: Ի՞նչ է նշանակում այս տարօրինակ ազգակցությունը:

Թռչունների, ինչպես և մյուս կենդանիների պաշտամունքը նշանակալից տեղ էր գրավում հին դավանանքներում: Հունական և հնդկական դիցաբանությունը հաճախ ներկայացնում է աստվածներին, կցելով ամեն մեկին որևէ թռչուն, որ ուղեկցում էր աստծուն իբրև նվիրյալ սպասավոր:

Հների պատկերացմամբ աստվածներն առանձնակի սեր էին տածում թռչունների և կենդանիների հանդեպ, ուստի և դրանց ներկայությունը տաճարներում անհրաժեշտ էր համարվում: Իրականում դա կենդանական տոտեմի պաշտամունքի վերապրուկ է: Երկրպագելի կենդանիների մեջ մարմնավորվում էին իրենք՝ աստվածները: Ջրհեղեղի պատմությունից հռչակ ստացած ագռավն ու աղավնին ոչ այլ ինչ են, եթե ոչ հնադարյան հավատալիքների արձագանք՝ աստվածային էության կրողները:

Սրբազան թռչունների, թռչուն-տոտեմների մեջ հատկապես արծիվն է, որին շատ նշանակալից տեղ է հատկացվում: Նա է, որ տնօրինում է բոլոր երկնային ըմպելիքները՝ նեկտարը և ամբրոսիան: Հնդիկների մոտ դարձյալ արծիվն է բերում **sauma** և **madhu** ըմպելիքները: Արծիվն է, որ տիրում է թե՛ կայծակին, և թե՛ որոտին, և նա է, որ կայծակ է առաջացնում և անձրև ուղարկում երկիր[1]:

Արծիվը, ինչպես նաև աստվածներին ծառայող մյուս կենդանիները, ոչ այլ ինչ են, եթե ոչ վաղեմի տոտեմներ, նախկին աստվածներ, բայց ծայրաստիճան անկման վիճակում: Իրենց տեղը զիջելով նոր աստվածներին, նրանք, հնանալով, պահպանել են նոր աստվածների օգնականների կամ հասարակ կամակատարների համեստ դիրքը: Երբ Զևսը իրեն զարդարում էր Տորգոսի փետուրներով և ընդունում թռչնի կերպարանքը, այդ նշանակում էր, որ Զևսը բարձրանում էր Տորգոսի գահը:

Նման մի բան պետք է որ պատահեր Հայաստանում՝ կապված պասկուճի պաշտամունքի հետ:

---

[1] **Gruppe**, Mythologie, p. 792.

Տիշուպն ամենից առաջ կայծակի և որոտի աստվածն էր. նա շանթառաք Յուպիտերի ասիանիկ կրկնակն է: Տիշուպի պաշտամունքը հայտնի էր Հայաստանում, հատկապես Վանի թագավորության տարածքում: Հավանաբար հենց այստեղ էլ իր ընդարձակ տիրապետության այդ անկյունում, Տիշուպը բախվել է տեղական հնագույն աստծու Պասկուճին և կլանել նրան: Պարտված աստվածը, թեև զիջում է իր տաճարը նոր ժառանգին, սակայն կարողանում է կնքել նրան իր անունով և խորհրդանիշով: Եվ Տիշուպը հայտնվել է նոր զարդարանքներով, ճիշտ այնպես, ինչպես Զևսը Տորգոսի փետուրներով:

Տարկուն ոչ այլ ինչ է, եթե ոչ Տիշուպի կրկնորդ և հավանաբար պաշտվել է անգղի կերպարանքով: Հնագիտական հուշարձաններում հանդիպում են թևավոր անգղի գլխով պատկերներ: Կարծես երկինքը պահելու համար ձեռքերը վեր բարձրացրած երկու նման պատկերներ անկասկած մատնանշում են նախկին աստծո անկումը, նրա պաշտոնի նվազումը մինչև հասարակ հովանավոր ոգի[1]:

Նախապատմական Հայաստանի դամբարանների պեղումների ժամանակ հայտնաբերվել են, այլ իրերից բացի, նաև նկարներ, պատկերող մարդկային մարմիններ, մշտապես պսակված թռչնի գլխով[2]: Այս պատկերները արդյո՞ք ներկայացնում են հասարակ աղեղնավորներին, թե թռչնի գլխով աստծուն: Եվ եթե մենք իսկապես գործ ունենք սովորական որսորդների հետ, ապա դարձյալ թվում է, որ նրանց պատկերներն ընդօրինակված են աստվածների պատկերներից:

Շատ հայտնի թևավոր սկավառակը՝ Եգիպտոսի, Միջագետքի և Իրանի վեհագույն աստծու խորհրդանիշը՝ թռչուն աստծու մի վերապրուկ է:

Թռչուն աստծու որպես տոտեմի անկումից հետո, նրա դերը ժամանակի ընթացքում, թվում է, հանգում է նոր աստվածների սովորական նամակատարի ծառայության: Սա թերևս իրանական angar՝ ἄγγαρος բառն է, որն որոշակիորեն բնութագրում է նամակատարի այս ծառայությունը:

Ըստ Hesichius-ի, ἄγγαρος. ἐργάτης. ἡ λέξις δὲ Περσικὴ σημαίνει δὲ καὶ τοὺς ἐκ διαδοχῆς βασιλικοὺς γραμματοφόρους[3]:

Suidas-ի բառարանում. οὕτως ἐκάλουν οἱ Πέρσαι τοὺς βασιλείων αγγέλους[4]:

Իրանական angaros բառը հունարեն ἄγγελος-ի համարժեքն է թե

---

[1] **Hetitische Kunst,** Ernest Wasmuth, Berlin, d'après D. g. Hogarth. Carchemish, pl. B, 12, 1914.

[2] **Morgan,** Mission Scientifque au Caucase, I, p. 141, 165, 181.

[3] «Անգարոս». աշխատող. պարսկերեն բառ է, նշանակում է նաև ժառանգական արքայական նամակատարին:

[4] «Այսպես պարսիկները անվանում են արքայական բանբերներին»:

իմաստով, և թե՛ հնչյունաբանական տեսակետից: Երկուսն էլ անբաժանելի են հայերեն «անգղ»/«անգեղ»/«անկղ» ձևերից. այսինքն՝ դրանք ունեն դավանանքային ծագում և դրանց սկզբնական իմաստը թաքնված է հայկական «անգղ» բառի մեջ:

Անգղ աստծու և քրիստոնեական հրեշտակը միջև ընկած տարաձությունը հսկայական է, սակայն հաղթահարելի: Հայերեն «անգեղ»-ը նույնպես անցել է այդ՝ աստծու և հերոսի անունն առանձնացնող տարածությունը:

Խոսելով Տարկուի մասին, հնարավոր չէ շրջանցել նրա ազգային մականունը՝ «Թորգոմա». դրա առնչությունը ասիանիկ աստծու հետ բավական հավատարժան է՝ նա առաջացել է Տարկու (tar-ku) անունից ճիշտ այնպես, ինչպես Pria-mus, Teut-amus և այլ անունները:

Աստվածաշնչի մեկնիչները հնագույն ժամանակներից սկսած՝ համակարծիք չէին Թորգոմա մականվան ազգային ծագման վերաբերյալ: Քանի որ Տարկուի պաշտամունքը լայնորեն տարածված էր Առաջավոր Ասիայում, աշխարհի այդ մասի վրա ապրող ցեղերից յուրաքանչյուրը կարող էր այդ մականվան հավակնողը լինել:

Հովսեպոս Փլավիոսը վկայում է, որ դեռևս իր ժամանակակից հույները վերագրում էին այդ մականվան ծագումը փոյուգիացիներին. Θοργάμης δὲ Θοργαμαίους οἱ δόξαν Ἕλλησι Φρύγες ὠνομάσθησαν[1].

Եվսեբիոս Կեսարացին[2] և նրան հետևող Սինկելլոսը[3], ինչպես և ուրիշ մի քանի եկեղեցական գրողներ նախընտրում են հայերին դիտել որպես Թորգոմի սերունդներ: Հետաքրքրական զուգադիպություն՝ բանավեճը գնում է երկու ազգությունների՝ հայերի և փոյուգացիների միջև, որոնց ազգակցությունը հայտնի է դեռևս Հերոդոտոսի ժամանակներից:

Այժմ հարցը լուծվում է հայերի օգտին: Մի քանի գիտնականներ Թորգոմյանների տիրույթները տեղադրում են Եփրատի հյուսիսային վտակի ավազանում[4]: Մյուսները հակված են այն նույնացնելու Թիլ-Գարիմմուի հետ, որը Մելիտինե կամ Մալաթիա քաղաքի մոտ մի բնակավայր է, որ հիշատակված է Սարգոնի՝ VIII դարի վերջի սեպագիր արձանագրության մեջ[5]:

---

[1] [«[Գամերի երեք որդիներից...] Թորգոմը [սկիզբ դրեց] թորգոմացիներին. հույները սրանց կարծես թե անվանել են «փոյուգիացիներ»]»] Ant.Jud., 126.

[2] **Chron.**, II, 12.

[3] Θοργαμὰ ἐξ οὗ οἱ Ἀρμένιοι ed. Binn, p. 91. [«Թորգոմա, որից [սերում են] Հայերը»]:

[4] **Dilman**. Genesis, p. 172.

[5] **F. Delitsch,** Wo lag das paradies, p. 246.

Պրոֆեսոր Սայսը այդ կարծիքը այնքան էլ հավանական չի համարում[1]: Սայսի կասկածը միանգամայն տեղին է: Մի այդպիսի աննշան վայր, ինչպիսին Թիլ-Գարիմմու ամրոցն է, չէր կարող առաջացնել անտիկ աշխարհում այդքան հայտնի ազգային մականուն:

Ավելի նախընտրելի է Թորգոմա մականվան ծագումը կապել աստծու անվան հետ: Հայտնի են շատ դեպքեր, երբ ցեղերը ածանցում են սեփական անվանումներն իրենց իսկ երկրպագած աստվածների անուններից. օրինակ Քաղդի – քաղդեացիներ, Ասսուր - ասորեստանցիներ:

Ծննդոց գրքի 10-րդ գլխում տրված ցուցակը ներկայացնում է Թորգոմային որպես Գամերի որդի՝ Ասքանազ և Ռիփաթ երկու եղբայրների հետ միասին: Հովսեպոս Փլավիոսը Փոյուգիան համարում է Թորգոմյան տան հարստությունը և հետևողական լինելու համար Գամերի տոհմին հատկացնում է հարևան Գալատիա երկիրը[2]:

Սակայն հայերը Գամիրք անունը հատկացնում էին Կապպադովկիային. դա բխում էր այն հանգամանքից, որ Գամերյան հորդաների կենտրոնն եղել է հենց այդ երկիրը:

Ծննդոց գրքում տրվում է ժողովուրդների տեղաշարժերի աղյուսակը Ք.ա. VII դարում՝ կիմմերների ներխուժման և հայերի՝ Հայկական բարձրավանդակում ասպարեզ գալու դարաշրջանում[3]: Տարօրինակ կլիներ, եթե Հայաստանը կամ Ուրարտուն՝ երկրներ, որ գտնվում էին Սուրբ Գրքում այդքան մեծ հռչակ ստացած գետերի վրա, այդ աղյուսակում հիշված չլինեին: Եթե Գամերը տեղադրված էր Կապպադովկիայում, ապա նրա որդիները՝ Թորգոմն ու Ասքանազը պետք է, բնականաբար, հաստատված լինեին նրա անմիջական հարևանությամբ՝ Հայաստանում:

Սեպագիր արձանագրերում Ասքանազը սկյութացիների մականունն է՝ Ասկուզ, ինչպես որ Գամերը՝ կիմմերների, հին ասորեստանցիներ մոտ՝ Գիմիրրի: Սկյութացիները իրանացիներին հայտնի են Saka անունով, որից, հավանաբար, առաջացել է scythe<*sak-inth կամ achkouzi <achk-ounzi:

Մինչդեռ Հայաստանի գավառներից մեկը կրում էր Sakasene "սակասների հիմնադրածը" անունը: Պարզ է, որ Sakasene-ն սակասների բնակավայրն էր, ուստի և պետք է, որ պահպաներ նրանց անունը:

Մյուս եղբոր Թորգոմի տիրույթները պետք է ընկած լինեին Հայաստանում՝ Կապպադովկիայի և սակասների միջև: Ռիփաթի ճակատագիրն հայտնի չէ, ուստի մենք նրան մի կողմ ենք թողնելու (2):

---

[1] The higher Criticism, p. 131.

[2] Ant. Jud., p. 123.

[3] Sayce, op. cit., p. 153.

Թորգոմի հայրենիքը ավելի ճշգրիտ որոշելու համար անհրաժեշտ կլինի փնտրել այն Հայաստանի հարավում՝ հատկապես Անգեղում, Տորք հերոսի կալվածքներում (3): Մարգարեի խոսքը Թորգոմյան տան ծիերի և հեծյալների վերաբերյալ՝ Տյուրոս քաղաքի շուկայում[1], ավելի են հարմարվում հարևան Հայաստանին, քան հեռավոր Փռյուգիային: Հայաստանը վաղնջական ժամանակներից սկսած առևտուր էր անում Բաբելոնի հետ[2], ուստի զարմանալի չէր լինի, եթե նա ծիեր մատակարարած լիներ հարևան Սիրիայի շուկային:

Հայաստանի հարավային կողմը ամենահարմար երկրամասն է, որտեղ Տարկու աստծու պաշտամունքի հիման վրա կարող էր առաջանալ ու կազմավորվել Թորգոմա մականունը: Հետագայում այս մականունը տարածվել էր ամենուրեք, նույնպես և Տարկուն դարձել էր գերիշխող աստված: Կար ևս մի բնակավայր դարձյալ Անգեղ անունով՝ այժմյան Ալաշկերտը Բագրևանդի գավառում, գավառ, որ, ինչպես վկայում է հենց ինքը «Բագրևանդ» անունը, հայտնի էր իր սրբավայրերով: Գանձակի ու Սևանա լճի միջև ընկած Գետաբեկում հայտնաբերվել է մի առեղծվածային արձանագրություն, որի մեջ, Հոմմելի կարծիքով, 𐎗 նշանը պետք է հասկանալ իբրև Տարկուի պատկերանիշ[3]:

Ինչ վերաբերում է Տարկուի կերպարանքին, որով նա պաշտվում էր Հայաստանում, այն անգղի կերպարանքին, որը դիցաբանական եղանակով պատկերում է կայծակն ու ամպրոպը, ապա դրա վերապրուկը դեռ պահպանվել է մեր օրերին ուշադրությանն արժանի մի ձևով: Անգեղի մոտակայքում գտնվող «Բարձրահայեաց» կոչվող հայկական վանքում կա մի հատուկ կանթեղ, որը կոչվում է «կայծակի կանթեղ» և որը վառում են ամպրոպի ժամանակ: Այն դիտվում է իբրև մի տեսակ շանթարգել: Անշուշտ, այստեղ առկա է հին դիցաբանության Տարկուի վերհուշը՝ Տարկուի, որը ներկա էր այդ նույն սրբավայրում, այն ժամանակ՝ իր սեփական տաճարում:

Բիթլիս քաղաքի մոտ գտնվող մի այլ հայկական վանք՝ Սուրբ Գևորգ, հռչակված է իր տքնող աքաղաղով: Վանքը կառուցված է մի լեռնոտ շրջանում, որտեղ առատ ձյունը և վատ եղանակը երկար ձմեռների ընթացքում դժվարացնում են երթևեկությունը: Վանքը, որը միաժամանակ իջևանավայր է ճանապարհորդների համար, ունի մի խելացի աքաղաղ, որն

---

[1] Եզեկիել, ԻԷ, 14:

[2] **Herodoti Hist.**, I, 194.

[3] **Tarcondemos**, p.182.

իր կանչով հայտնում է ճանապարհորդներին, արդյոք նրանք կարող են շարունակել իրենց ուղևորությունն առանց վտանգվելու: Ոչ ոք չէր համարձակվում լքել վանքը, քանի դեռ թռչունը ազդանշան չէր տալիս:

Ի՞նչ էր խորհրդանշում այդ հիասքանչ աքաղաղը, որը վանքի շրջակայքում կանխատեսում էր եղանակը: Արդյո՞ք նա անգղ աստծու ժառանգության հետմահու պահապանը չէր: Անգղ-Տարկուն էր, որ տնօրինում էր երկնային երևույթների ճակատագիրն իբրև ամենակարող տեր: Դարեր անց, բազմաթիվ ալեկոծություններից հետո հեթանոսական այդ հավատալիքը ապաստան էր գտել քրիստոնեական պատերի ետևում: Ինչպիսի՜ համառություն, հավատքի պահպանողականության ի՜նչ փայլուն օրինակ...

Անգղը փոխարինվել է աքաղաղով: Կարելի է ենթադրել, որ դա պատահել է արյա-եվրոպական ազդեցության ներքո: Աքաղաղի պաշտամունքը լավ վկայված է Ավեստայում: Այն պակաս հայտնի չէ ժամանակակից եզդիների մոտ: Աքաղաղի՝ որպես անգղի հավելյալ փոխանորդի [պաշտամունքը] սկիզբ է առնում դեռևս Տարկուի ժամանակներից:

Արևմուտքը նույնպես ճանաչում էր սրբազան աքաղաղին և նրա իշխանությունը որոտի ու կայծակի վրա: Այս իշխանության վերապրուկն էր պատճառը, որ բոլոր բարձր շինությունների, հատկապես եկեղեցիների տանիքները պսակվում էին աքաղաղի կերպարանք ունեցող շանթարգելներով:

Ընդորում միայն Հայաստանում չէ, որ անգղը աստվածային գահի վրա նախորդում է աքաղաղին: Վերջերս Գ. Օտրանը իր ազգագրական և լեզվաբանական ուսումնասիրություններում կարծես թե բացահայտել է «Եգիպտոս» բառի ասիանիկ ծագումը, նրա ածանցված լինելը rjipya (çyena) բառից, որ նշանակում է «բազե» կամ «աստվածային արծիվ»: Ըստ այդ ստուգաբանության՝ Եգիպտոս նշանակում է «Բազե աստծու երկիր»[1]:

Նույն գիտնականը առաջարկում է մի այլ, ավելի համարձակ բացատրություն՝ Միջագետքի Սին աստծու վերաբերյալ: Նրա կարծիքով, [Սին անունն] առաջացել է նույն çyena («բազե») բառից: Ի դեպ նշենք, որ հայկական «ցին» ձևը ամեն դեպքում ավելի հարմար է:

Մենք գիտենք, սակայն, որ այս բոլոր՝ քիչ թե շատ հարցական համադրությունների կողքին կա ավելի իրական մի փաստ: Եգիպտոսում Հորուս աստծուն պատկերում են գլխին պսակ դրած ճուռակի տեսքով: Հորուսը, որ դարձել է Իզիսի որդի, ոչ այլ ինչ է, եթե ոչ ասիանիկ Ատտիսի,

[1] **Tarcondemos**, p. 182.

Կիբելեի որդու եգիպտական կրկնորդ, այսինքն՝ Տիշուպ կամ էլ Տարկու: Եթե Հորուսը ճուռակ է, ապա ոչինչ չի խանգարում, որ Տորքը լինի անգղ:

Ոմանք հնարավոր են համարում, որ եգիպտական Հորուս աստծու անունը առաջացած լինի «բարձր», «վերամբարձ» բառից[1]: Սակայն, չնայած գիտնականի բարձր հեղինակությանը, այս ստուգաբանությունը կարելի է հերքել. վաղնջական աստծուն՝ «բարձր», «վերամբարձ» դիմելու ձևը շատ սովորական էր, և ոչ առանձնահատուկ:

Հորուսը նախ և առաջ ճուռակ էր, և պաշտվում է որպես ֆետիշ կամ տոտեմ: Արդյո՞ք բնական չէր լինի, եթե նրա անունն էլ նշանակեր պարզապես «ճուռակ»:

Եթե իրոք եգիպտերենում պահպանվել են ասիանիկ ծագում ունեցող բառեր, ինչպես պնդում է Գ. Օտրանը, ապա մեծ հանդգնություն չէր լինի առաջարկել կովկասա-սկյութական մի բառ Հորուս անվան հետ համադրելու համար:

Վրացերենում ճուռակը կոչվում է k'ori: Ասիանիկ լեզուներում կոկորդային հնչյունը ազատորեն արտասանվում էր որպես «h» (հմմ. hati, kata-, հայերեն՝ «կացին», հունարեն՝ ἀξίνη, իսկ արամեերեն՝ hasina): Վրացերեն բառը հիշեցնում է Hesychius-ի [բառարանում բերված] κεῖριϛ. ὄρνεον, ἱέραξ, κίριϛ, κίρριϛ, εἶδος ἱεράκος բառը[2]: Հայերեն նույնիմաստ «ուր-ուր» կամ «օր-օր» բառը, որը, շատ հնարավոր է, ազգակից է վրացերեն k'ori-ին, ոչ այլ ինչ է, եթե ոչ our, or<*hor բառի կրկնությունը (հմմ. հայերեն «օրի»՝ «արջնագռավ», վրացերեն or-bi՝ «արծիվ»):

Կա ևս մի ընդհանրություն Տարկուի և Հորուսի ճակատագրերում. երկուսն էլ կորցնելով իրենց աստվածությունը, վերածվեցին հասարակ հերոսների: Հորուսը հետագայում առնմանվեց Սուրբ Գևորգի կերպարանքին[3]: Հիասքանչ աքաղաղը հայկական Սուրբ Գևորգի վանքում արդյո՞ք չի վկայում, որ հայերի մոտ նույնպես Սուրբ Գևորգը ժառանգել է որոշ՝ անցյալում Տարկուի համբավը կրող երկրամասեր:

Հորուսի՝ սուրբ քրիստոնյայի վերածվելու փաստը խոսում է Տարկու աստծուն Տորք հսկայի հետ համադրելու օգտին:

Այս համառոտ շարադրությամբ մենք աշխատեցինք հայկական մի փոքրիկ լումա մուծել Տարկուի վերաբերյալ եղած ավանդությունների հարուստ գանձարանը՝ ավանդություններ, որոնք «Tarkondemos» գրքի հեղինակը (4) հավաքել էր այդպիսի ջանասիրությամբ և վարպետությամբ (5):

---

[1] **Ed. Meyer, Roscher**, Lex,, I, 2746.

[2] «Կեյրիս». բոչուն՝ բազե, [այլ կերպ հնչում է] «կիրիս», «կիրրիս»: Բազեի տեսակ:

[3] **Clermont-Ganneau,** Revue Archéologique, n.s., 32, p.196. Horus et Saint--Georges.

ՀԱՅ ՀԻՆ ՇԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ անդրանիկ համալսարանը հրատարակել է իր անդրանիկ **«Գիտական տեղեկագիրը»:**

Առիթը Հայաստանի խորհրդայնացման հնգամյակն է և Տեղեկագիրը նվիրված է հայ բանվոր-գյուղացիներին (իմա՝ բանվորներին և գյուղացիներին): Հրատարակությունը տոնական երևույթի հանգամանք ունի և օրվան պատշաճ հոդվածն է «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին»: Հեղինակն է պ. Հակոբ Մանանդյանը, Երևանի համալսարանի պրոֆեսոր և իմ անձնական բարեկամը (1):

Հոդվածագիրը իրավամբ գանգատվում է, որ մեր անցյալը մնում է տակավին մութ, «մանավանդ հայոց պատմական կյանքի ներքին իրական կողմերը, նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական առանձնահատուկ հիմնական ուժերը»: Հետևում է տխուր հայտարարություն, որ այդպիսի աշխատություններ չկան և որ իր հոդվածը նախապատրաստական աշխատանք է միայն, մի շարք դիտողություններ, որոնց նպատակն է պարզել «շինական դասի դրության հավանական ընդհանուր գծերը մարզպանական Հայաստանում»:

Հոդվածագիրը հայտնում է, որ շինականների վիճակը «ամենադժվար ուսումնասիրելի խնդիրներից մեկն է», որ մատենագրական աղբյուրները հատկապես այս մասին «լուռ ու մունջ» են: Այսպես է խոսում հոդվածի ներածականում: Իսկ վերջը, ուսումնասիրությունը կատարելուց հետո, հայտարարում է, որ շինական դասի դրությունը «այնքան էլ մութ և անորոշ չէ, ինչպես այժմ կարծվել է»: Ասել է, թե դժվարությունները հարթվել են, մութ խնդիրը լուսավորվել:

Տեսնենք, ի՛նչ լույս է բերում պ. Մանանդյանը շինական դասին: Առաջին միտքն այն է, թե հնում համայնական հողատիրություն է եղել Հայաստանում՝ Արշակունյաց շրջանում և նրանից հետո:

Սակայն իրավամբ կարելի է խրտչել այս նորությունից: Հայաստանի երկու խոշոր հարևան պետությունները, իրանական արևելքը և բյուզանդական արևմուտքը, որոնց ազդեցության տակ կերտված է հայ կյանքը, ծանոթ չեն բնավ համայնական հողատիրության: Արևելյան ֆեոդալականությունը գիտե տոհմային հողատիրություն, բայց ոչ համայնական: Ինչ վերաբերում է Բյուզանդիային, մինչև վերջին ժամանակներս արդարև

ընդունված կարծիք էր, որ համայնատիրական տնտեսություններ են եղել, բայց այժմս հերքված է այս տեսությունը՝ խնդրին նայող պատմական հիշատակարանների լուրջ քննությամբ:

Այսպիսի պայմաններում ինչ հիմ ունի պ. Մանանդյան համայնատիրական կարգեր որոնել Հայաստանում:

I. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՐԴԱԹՎԻ

Մովսես Խորենացին պատմում է, որ Վաղարշակ թագավորը սահմանեց, որ միայն անդրանիկ որդին ապրե իր մոտ՝ արքունիքում, իսկ մյուսները գնան բնակելու Հաշտենից գավառը: Արտավազդ թագավորը նույն նկատումով իր մոտ է պահում միայն երեց որդուն, իսկ մյուսներին հատկացնում է Աղիովիտ և Առբերանի գավառները:

Տիրան արքայի ժամանակ Հաշտեանցիք նեղ գտնելով իրենց սահմանները, խնդրում են, որ ընդարձակե իրենց ժառանգությունը: Թագավորը հրամայում է, որ մի մասը գնա Աղիովիտ և Առբերանի՝ իրենց ազգակիցների մոտ: Սակայն վերջիններս տրտնջում են, առարկելով, որ իրենց հողն ևս պակաս է: Տիրանը վճռում է «ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունին **հաւասար** տրոհել յինքեանս: Զոր **բաժանեալ ըստ մարդաթուի,** գտասւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկեալ ի գաւառն Աղիովիտի եւ Առբերանոյ»[1]:

Ընդգծածս բառերն են այն գայթակղության քարը, ուր սայթաքել է պ. Մանանդյան:

«Հողերի հավասար և ըստ մարդաթվի բաժանումը, որքան հայտնի է, համայնական հողատիրության որոշ կարգ է», - կոչում է հոդվածագիրը:

Ճշմարիտն ասած, ինձ գոնե հայտնի չէ և շատ տարօրինակ է լսել, որ հողի հավասար **բաժանումը** նշան լինի համայնական կարգի: Բաժանման որևէ եղանակ ինքնին չէ կարող հատկանիշ համարվել հողատիրության: Այն, ինչ որ բնորոշում է հողատիրությունը, **սեփականության** իրավունքն է ամենից առաջ: Որպեսզի հողը համայնական համարվի, պետք է ցույց տրվի, որ նրա իրավատերը համայնքն է: Իսկ բաժանման եղանակը համայնական արժեք կունենա միայն այն դեպքում, երբ նա ծագում է համայնքից որպես արտահայտություն նրա իրավունքի:

Արդ Խորենացու մոտ խոսքը համայնական հողի մասին չէ, այլ տոհմական, որ բնավ շփոթելու չէ: Եվ հողի տնօրենը համայնքը չէ, այլ թագավորը, որ գործում է կամ վեհապետության և կամ անդրանիկության իրավունքով:

---

[1] **Մովսես Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Գիրք Բ, 62, Վենետիկ, 1865, էջ 140:

Բացի սրանից, Խորենացու խոսքերն անգամ անճիշտ և կամ միակողմանի են ըմբռնվում պ. Մանանդյանի կողմից: Որպեսզի իր ենթադրության համար ազատ դաշտ պատրաստե, նախ նա փորձում է հերքել իմ անձնական տեսությունս (2): Ուստի կուզեի այստեղից սկսել, որով և դյուրություն տված կլինենք ընթերցողին ավելի մոտեն հետևելու խնդրի էության:

Խորենացու խոսքը աշխատել ենք արժեցնել, ի թիվս ուրիշ ապացույցների, բացատրելու համար սեփական կոչված ազատության ծագումը: Մեր խորհրդածությունները միաժամանակ պարզում էին նաև սեփական կամ սեպհական բառի այժմյան նշանակությունը:

Մատենագիրները **սեպուհ** են կոչում հայ իշխանական տան բոլոր արու զավակներին, բացի տան գլխավորից, որ է **նահապետ** կամ **նախարար**: Երեքն էլ պարթևիկ բառեր են: **Սեպուհ**, լրիվ ձևը սեպուհր, է պարթև **visapuhr**, որի առաջին մասը նույնն է, ինչ որ լատին **vicus** «գյուղ», հույն *οἶκος* «տուն», իսկ երկրորդը նշանակում է որդի: Ուրեմն սեպուհ նշանակում է բառացի տան, տոհմի որդի:

Նահապետ բառի ստուգաբանությունը ևս որոշ է, գոնե ինձ համար: **Նահ** համապատասխանում է պարսից **naf** բառին, հնագույն ձևն է **napha**, եվրոպական հավասարակը հնչում է **nabha**, որից լատին, հույն և գերման **umblicus, omphalos, nabel** բառերը: Բոլորի հիմնական միտքն է «պորտ», փոխաբերաբար «սերունդ, ցեղ»: Նահապետ ասել է, թե նշանակում է բառացի «ցեղապետ, տոհմապետ»:

Հավանորեն նույն **նահ** բառն է թաքնված և **նախարարի** մեջ, որի պարսիկ ձևը թվում է թե է **Nahodar**, և հիշվում է Ամմիանոս Մարկելինոսի մոտ որպես հատուկ անուն: Թերևս **նախ** բառի ազդեցությամբ **նահարարը** դարձել է նախարար: Նշանակությունը՝ «ցեղի, տան պահապան», գրեթե նույն ինչ որ նահապետ: Երկուսին փոխարինող զուտ հայկական բառն է **տանուտեր**:

Հայ նախարարները մի մի տուն էին, տոհմ, և նրանց հողերը տոհմի անբաժանելի սեփականությունն էր: Անմիջական տերն ու տնօրենը տան ավագ անդամն էր, նահապետը, տանուտերը: Անդրանիկության սկզբունքը համարվում էր անձեռնմխելի: Տան մնացյալ արու զավակները կոչվում էին սեպուհ:

Նախարարական հողին իրավական բնույթ էր տալիս զինվորական ծառայությունը: Ջորահավաքի սովորույթը չկար հնում: Ամեն մի իշխանական տուն պարտավոր էր որոշ թվով մարտիկ տալ: Զինվորական տեսակետից շատ էլ ցանկալի չէր իշխանական հողերի բաժանումը մանր կտորների: Մի տուն, որ ի վիճակի էր մի քանի տասնյակ հեծյալ տալ, բաժան բաժան լինելով, կարող էր հասնել այնպիսի դրության, որ նրա

մասերը առանձին առանձին անզոր կլինեին անգամ մի մի ձիավոր պահել: Երկրի պետին, հարկավ, ձեռնտու չէին մեծամեծ տներ այնքան զորեղ, որ սպառնային թագին, բայց բնավ նպաստավոր չէր նաև տների պառակտումը:

Սակայն, խոսքն այն մասին չէ, թե ինչ էր պատճառը նախարարական իրավակարգի կայունության և ի՞նչ նրա քայքայման: Փաստ է, որ սկզբում իշխանական տները կազմում էին մի մի միություն տանուտերի իրավասության ներքո, իսկ հետո միությունները քակվում են սեպուհների կենտրոնախույս ձգտումների հետևանքով: Սրանք գերադասում են դուրս գալ տոհմական շաղկապից, ստանալով իրենց հասանելի բաժինը: Սեպուհի բաժինը կոչվում է սեպուհական = սեպհական: Հետագայում այս բառը ստանում է այժմյան նշանակությունը, որ արդյունք է սեպուհի և սեպհական բաժնի հարաբերության իրավական բնույթի:

Պետք է նկատել, որ հնդիկ-եվրոպական լեզուներն ընդհանուր բառ չունին սեփականության գաղափարը արտահայտելու համար: Ապրելով տոհմային կյանքով հնդիկ-եվրոպական ցեղը տակավին անծանոթ է եղել սույն հասկացողության: Միմիայն ցեղի բաժանումից հետո է, որ առաջ է եկել սեփականության գաղափարը և ամեն ազգ մշակել է, հորինել յուրովի բառ ըստ յուր կյանքի պայմանների և հասկացողության: Անգամ լատին և հույն լեզուները չունին ընդհանուր արտահայտություն: Լատին **proprius**, որ ընդունված է արդի եվրոպական լեզուներում, սղումն է **propatrius** բառի, որ է անդրհայրական: Ասել է թե սեպհական է համարված այն, ինչ որ եղել է հորից առաջ, ուրեմն հասել է կամ մնացել է պապերից:

Հունարենում *ἴδιος* ստուգաբանորեն նշանակում է «զատ, առանձին» և ստացել է սեփականի իմաստ:

Մեզանում ևս նման մտածությամբ գործ էին ածվել թերևս տոհմային սեփականություն արտահայտելու համար հայրենի, բուն, բնիկ բառերը:

Ագաթանգեղոսն ասում է՝ «զբուն եւ զձեր սեպհական Պահլաւն», Փարպեցին՝ «զբնիկ եւ զսեպհական տեղիս նախնեաց», «զբնիկ սեպհական կալուած ազգին Արշակունեաց»: Կարծես հին **բնիկը** մեկնվում է նոր **սեպհականով**:

Ագաթանգեղոսն ունի անգամ բնություն սեփականության իմաստով՝ «**զբնութիւնն** պարթևական, զձեր սեպհական (և ոչ սեփական, ինչպես ունի Էջմիածնի հրատարակությունը՝ երկու ձեռագիր պահել են ստույգ ուղղագրությունը) Պահլաւն ի ձեզ դարձուցից»[1]:

Փավստոսն ասում է Ս. Ներսեսի մասին. «շրջէր ընդ իւր **ձեռական**

[1] **Ագաթանգեղոս,** Պատմութիւն Հայոց, Էջմիածին-Տփղիս, 1909, էջ 20:

իշխանութիւնսն, զի հնգետասան գաւառ իբրեւ **սեպհական ի բնմէ առանձինն առեալ** էր նոցա կարգեալ»:

Խոսքը եկեղեցու սեփականության մասին է և գծածս բառերը փորձեր են նույն գաղափարը արտահայտելու, որոնցից վերջին երկուսը մոտենում են հունական *ἴδιος-ին*:

Ագաթանգեղոս ասում է. «Ժողովուրդ **ձեռական** անւանեցան» (գլ. ՀԴ), ուր ձեռական նույնանիշ է սեպհականի:

Ս. Գիրքը, որ ամենայն դեպքում մնում է լավագույն աղբյուրը բառաքննության համար, գործ է ածում սեպհական բառը ոչ հաճախ և այն տեղերում, ուր իմաստը վիճելի է նաև հունարեն և անգամ եբրայեցի բնագիրներում:

Միայն մի տեղ հույն «բնակէ ինքն եւ որք ընդ նմա», *οἳ παρ᾽ αὐτοῦ* հայը դարձնելով բավականին ազատորեն՝ «բնակեցաւ սեպհական գնդաւն հանդերձ»[1], թվում է թե, հասկանում է **սեպհական** այժմյան իմաստով:

Մյուս դեպքերում սեպհական բառը համապատասխանում է հույն *περούσιος* հայտնի դարձվածքում՝ «եղիջիք դուք ինձ ժողովուրդ սեպհական յամենայն ազգաց»[2]: Նաև «ետու քեզ զՍիկիմ սեպհական արտաքոյ եղբարց քոց»[3]. հույնն ունի *ἐξαίρετον ὑπέρ τοὺς ἀδελφούς*, այսինքն՝ առավել քան եղբայրներդ ունին:

Պետրոսի թղթում «սեպհական ժողովուրդ» հույն *λαὸς εἰς περιποίησιν* է[4]:

Սեպհական ժողովուրդ չէ նշանակում Աստուծո սեպհականություն, այլ «հատուկ, առանձին, մյուս ազգերից **զատ»**: Տակավին հները, սկսած Ս. Հերոնիմոսից, դժվարանում էին ըմբռնել հույն *περούσιός εἰς περιποίησιν* նորալուր բառերի բուն իմաստը:

Եբրայեցերեն բնագիրն ունի **segullah** բառը, որ մասնավոր գանձ, գույք է նշանակում: Եվ այս իմաստը հանում են մեկնաբանները **Ա. Մնացորդաց,** ԻԹ, 3, **esti moi ho peripepoiemai chrusion kai argurion** խոսքերից, ուր հրեական բնագրում նույն **segullah** բառն է կարդացվում:

Դավիթ մարգարեն ասում է, որ տաճարի շինության համար կնվիրե ոչ միայն հասարակությունից հավաքած գումարը, այլև իր անձնականը, «ինչ որ ինքը պատրաստել է իր համար», ուրեմն իր սեփականը: Հայ թարգմանիչը չի հասկացել նախադասության իմաստը. «եղեւ ինձ զորս նուիրեցիդ տեառն ոսկի եւ արծաթ» բնավ, չէ տալիս հույնի միտքը: Բնագրում խոսքը

[1] **Ա Մակաբ.**, ԺԳ, 53:

[2] **Ելք**, ԺԹ, 5: **Օրէնք**, Է, 6; ԺԴ, 2; ԻԶ, 18: **Իսայ.**, Բ, 14:

[3] **Ծննդոց**, ԽԸ, 22:

[4] **Ա Պետրոսի**, Բ, 9:

այն ոսկու և արծաթի մասին է, որ Դավիթը դիզել, պատրաստել է իր համար, մինչ հայը կարծում է, որ գույքը պատրաստած է տիրոջ համար, ուստի հույն բառը հայը թարգմանում է **«ընտիրեցի»** և ավելացնում է **տեսուն** բառը:

Եթե թարգմանիչը լիներ այն անձը, որ թարգմանել է Մակաբայեցվոց գիրքը, պիտի ասեր՝ «է իմ սեպհական ոսկի եւ արծաթ»:

Հերոնիմոսը եբրայական **segullah** թարգմանում է **peculiaris:** Լատիներեն **peculium** է կոչվում այն դրամը, որ հայրը ևվիրում է որդուն կամ տերը՝ ծառային. և ուրեմն **peculiaris** է ամեն գույք, որ կրում է **peculium**-ի բնավորություն: Դավթի գույքը, **segullah, է peculiaris** անհատական և զատ և ոչ հասարակաց և ընդհանուր: (Այսպիսով մոտենում է հույն *ἴδιος*-ին, որ հակադրվում է **demosios** «հասարակաց» կամ **koinos** «ընդհանուր» բառերին): Բայց և այնպես ո՛չ հույնը և ո՛չ հայը **segullah** չեն թարգմանել այն բառով, որ նշանակում է սեփական:

Հույն *ἴδιος*-ի դեմ ամենուրեք հայն ունի յուր **մեր, ձեր** դերանունները, երբեք սեփական, որ է իսկական իմաստը:

Հայ սեպհական = *περούσιος* = **peculiaris** առանձին երանգ ունի, նշանակելով այն ինչ որ զատ է, ուրույն և ոչ նման ընդհանուրի:

Սեպհականը Ս. Գրքում իրապես իր տեղն է գործածված:

Տեսանք, որ սեպհական է այն բաժինը, որ զատված է տանուտերական ընդհանուր գույքից, և որ շուտով նույնանալու է սեփականության հետ:

Ղազար Փարպեցին պատմում է, որ Դենշապուհը հայ քահանաներին նահատակելուց հետո նրանց դիակների վրա, պահապան կարգեց ինը հոգի և նրանց թվում երանելի Խուժիկին, «որպէս զկարի **սեպհականագոյն** եւ պիտոյ իւրում հրամանի»:

Ինչ որ հրեից ժողովուրդն էր Եհովայի համար, նույնն է Խուժիկը պարսիկ պաշտոնյայի աչքում: Ո՛չ Խուժիկն էր սեփականություն պարսկի և ո՛չ հրեաները՝ Աստուծո:

Փարպեցու մոտ բառը պահել է տակավին սկզբնական երանգը, որպես «ուրույն, ընտիր, ընտրելագույն»[1]:

Սեպուհների բաժինը այսպիսով ուրույնության վրայից անցնում է սեփականության: Սեպուհների զատումը և առանձին ազնվական դաս կազմելը իբր սեպհական ազատություն, ապացույց է մեր մտքի: Ոչ միայն գաղափարները, այլև բառերը միանգամից չեն հասունանում, այլ պետք ունին ժամանակի:

---

[1] Վրաց Կյուրիոն կաթողիկոսը Սմբատ Վրկանին ուղղած թղթում անվանում է նրան **վասպուրականագոյն**, որ **սեպհականագույնի** հին ձևն է: Ուխտանես խորք է գտել և փոխել է «պատուականագոյն» («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 170; Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 97):

Սեպուհների անջատումն արդեն նշան է և հետևանք նախարարական ավանդների քայքայման: Արշակունյաց անկումը վճռական մոմենտ էր, որին հաջորդող պայմանները միայն արագացնել կարող էին երեկի կազմալուծումը: Պիտի թառամեր մանավանդ այն իրավակարգը, որ գերազանցորեն Արշակունի ծաղիկ էր:

Հինգերորդ և վեցերորդ դարերը համարել ենք սեպհական ազատության զարգացման շրջան: Մեզ առարկում են, որ երևույթն ավելի հին է, քանի որ Փավստոս հիշում է Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի **սեպհական** տները:

Հնությունը միշտ հնարավոր է. հասարակական երևույթները մի գարնան չեն բուսնում և մի աշնան թարշամում: Բայց բերած օրինակը անհաջող է: Փավստոսի գործը V դարից առաջ չէ. այնուհետև դավաճան իշխանները՝ կոթնած պարսկական ուժի կարող էին պահանջել և այն, ինչ որ օրինական չէր համարվում երկրի սովորույթների տեսակետից: Մասնակի հիշատակությունից շատ ավելի կարևոր է այն հանգամանքը, որ Փավստոս տակավին չգիտե սեպուհներին որպես ուրույն դաս: Նա որ սիրում է շարել «նախարարք, մեծամեծք, ավագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զորագլուխք, դատավորք, պետք, իշխանք» (Դ, 3) և անգամ սատրապք, ոչ մի անգամ չէ հիշում սրանց շարքին սեպուհք:

Մինչդեռ Փարպեցու մոտ տանուտերերի հետ միշտ հրապարակի վրա են սեպուհները և այնքան ինքնուրույն են թվում, որ ստորագրում են և կնքում քաղաքական դաշինք, ինչպես երևում է Վասակի դատից:

Մյուս կողմից հաստատապես գիտենք, որ Արևմտյան Հայաստանում նախարարական հողերի բաժանում տան այր անդամների մեջ արդեն ընդունված սովորույթ էր VI դարում: Այս մասին ճառում են հատկապես Հուստինիանոսի նովելները 536 թվից: Պարսկական Հայաստանում նախարարական կարգը ավելի կայուն էր, գուցե ավելի քիչ վտանգված, քան Բյուզանդական բաժնում: Սակայն սեպուհների անկախությունը փաստ կարելի է համարել VI դարում նաև պարսկական բաժնի համար:

Եթե պետք կա հասարակական պատմական երևույթները դնել ժամանակագրական թելի վրա, սեպհական ազատության թելը ընկնում է V և VI դարերի վրա: Ասել է թե այդ միջոցին է, որ սույն երևույթը զարգացել, տիրացել է կյանքին: Այս է ընդհանրացման իմաստը:

Խորենացու ժամանակ սեպհական պայազատությունը շարունակում էր վեճերի և հակառակությանց նյութ լինել: Իբրև ապացույց, որ Խորենացին քաջ ծանոթ էր քննածս հարցին, և ուրեմն նրա ժամանակ սեպուհների անջատումը տիրական երևույթ էր, հիշել ենք Պատմահոր տեղեկությունը Հաշտյանքի և Առբերանի ու Աղիովիտի Արշակունիների վերաբերյալ:

Կարևոր ենք համարել այն, որ հայ պատմիչը հնարավոր է գտնում հայրենական ստացվածքի բաժանումը տան զավակների մեջ հավասար և ըստ մարդաթվի:

Արշակունյաց տունը մի մեծ նախարարություն է. ինչ որ ընդունված է նրանց մոտ, կարելի է ասել, հասարակաց է և բնորոշ նախարարական միջավայրի: Խորենացու ենթադրած բաժանումը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեպհական իրավունքի արտահայտություն:

Մեր այս մեկնությունը պ. Մանանդյան համարում է վիճելի: Ինչո՞ւ, որովհետև հողի հավասար բաժանումը «խիստ արտասովոր է և անօրինակ կալվածատեր ազնվական դասի համար»,- դատում է պ. Մանանդյան:

Պատմահոր խոսքերը սխալ է ըմբռնում պ. Մանանդյանը: Այլ և կարծում է, որ հողի հավասար բաժանումը «համայնական հողատիրության որոշ կարգ է», և երկար պտույտներից հետո գտնում է և այն միջավայրը, ուր գործում էր այդ կարգը: Դուրս է գալիս, որ համայնատիրականները ոստանիկ կոչված մարդիկ են եղել, և սրանց մի մասն էլ այս պատճառով ազնվականների շարքից հանում է և դարձնում շինական: Բայց ինչպե՞ս է եղել, որ Պատմահայրը գյուղական սովորույթը վերագրել է ազնվական, այն էլ թագավորական, տան:

Սրա պատասխանն էլ է գտել պ. Մանանդյան. Խորենացին որպես թե սխալվել է, ոստանիկներին Արշակունյաց սերունդ համարելով:

Մեղադրել մատենագրին նախ քան փորձել պատշաճ և բավարար մեկնություն տալ նրա խոսքերին, հանձնարարելի մեթոդ չէ: Մարդաթիվ բառը, որ գայթակղության բուն քարն է, երկու կերպ կարելի է հասկանալ, համաձայն մարդ բառի կրկնակի նշանակության: Ոչ միայն մեր, այլև մեր հարևան պարսիկ լեզվում, **մարդ** ասելով հասկացվում է սովորաբար այր մարդ. և ինչպես երևում է այս գործածությունը հնուց է: Ս. Գրքում միայն մի անգամ է պատահում մարդաթիվ բառը իր լայն իմաստով[1]· Բայց նույն Ս. Գիրքը հաճախ կրկնում է Թվոց գրքի առաջին գլխում. «առէք զհամար ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, ըստ **բազց**, ըստ գլխոց» և իսկույն բացատրում է. «ամենայն արու ի քսանամենից եւ ի վեր»:

Քանի որ պ. Մանանդյանը իրավամբ նկատում է, որ ֆեոդալ ոգուն ընդդեմ է հողի բաժանումը ըստ շնչի, բնական է սույն գիտությունը վերագրել և մեր Պատմահոր, և մարդաթիվ հասկանալ ոչ ըստ շնչի իմաստով, այլ բառի մյուս և մասնավոր նշանակությամբ, ըստ այր մարդկանց թվի:

Ըստ շնչի բաժանումը խոտելի է, որովհետև ֆեոդալ հողատիրությունը պարտավորում է զինվորական ծառայության և հաշվի առնել կարող էր միայն զենքի ընդունակ սեռը:

[1] **Եզք**, ԺԲ, 4:

Հաշտենից և Աղիովիտի արքայազն գանգատավորները, անշուշտ, կանայք չէին, այլ Արշակունի սեպուհները, որոնք միայն իրավազոր էին հող պահանջելու: Թագավորը հրամայում է եղած տոհմական հողերը բաժանել գանգատողների մեջ հավասար:

Ռուսական օրենքի տրամադրությամբ մեր գյուղերը ևս տեղ տեղ սովորություն էին արել պարբերաբար վերաբաժանել իրենց հողերը: Այսպիսի գյուղերում, որ անճամբ գիտենք, բաշխումը տեղի էր ունենում ըստ գլխի, որով հասկանում էին միմիայն այր մարդկանց: Քանի գլուխ է այս ինչ տունը, կամ քանի գլուխ հող ունի, նշանակում է քանի տղա անդամ ունի տունը: Երբ ուզում են չունչ հասկանալ, ասում են՝ քանի **բերան ուտող** ունի:

Այսպիսով, հին և նոր լեզուն իրավունք է տալիս Պատմահոր մարդաթիվը հասկանալ իրական իմաստով: Պատմահայրը սրանով կմնա ազատ ամբաստանություններից, խախտած չլինելով «կալվածատեր ազնվական դասի» սկզբունքները:

Բնական ուղին թողած, պ. Մանանդյանը ընկնում է ենթադրությունների աշխարհը և «կարելի»-ների վրայից սահելով հասնում մինչև ոստանիկները, որպեսզի նրանց անցնեն, ինչպես հիշեցինք, «մարդաթուի» մեջ: Նախապես հերքում է մեր տեսությունը ոստանիկ կոչված ազատների մասին և տալիս նորալուր մեկնություն և ահա ինչպես:

2. ՈՍՏԱՆ ԵՎ ՈՍՏԱՆԻԿ

Խորենացու օրով ոստանիկ մարդիկ վաղուց իջել, անհետացել էին պատմությունից: Նա առաջին բանասերն է, որ հետաքրքրվել է նրանց հարցով և կամեցել է որոշել, թե ինչ էին ոստանիկ կոչված ազատները:

Քաղաքական և հասարակական հաստատությունների հայրը, նրա կարծիքով, միշտ նույն Վաղարշակն է, Արշակունյաց թագավորության հիմնադիրը: Նա է, որ կարգել է չորս պահապան գունդ արքունի դրան Հայկյան թագավորների զարմից և կոչել ոստան: Հետագայում պարսից թագավորները կազմել են նման գնդեր և դարձյալ անվանել ոստան: Արդյոք հին գնդերը սպառե՞լ էին, թե բռնի ոչնչացվել պարսիկների ձեռքով, Պատմահայրը չգիտե. պնդում է միայն այն, որ պարսիկները նրանց տեղը նոր գնդեր են կազմել **արքունի անվամբ**: Մի ուրիշ առիթով հաղորդում է, որ Տիգրանակերտի կողմերում ևս ոստան կոչված ազատություն կա, որ ծագում է Տիգրանուհու սերնդից:

Խորենացին այս խնդրում լոկ հետախույզ է, և նրա աղբյուրները հայտնի են, ուստի կարելի է նրան հանգիստ թողնել և դիմել անմիջական ակունքին:

Ոստանի և ոստանիկ ազատների մասին խոսողներն են Ղազար, Եղիշե և Փավստոս: Համեմատելով սրանց և այլուստ հայտնի տեղեկությունները, պարզել ենք ոստանի հաջորդական նշանակությունները՝ մերկացնելով նրա ստուգաբանական ծագումը: Ոստան նշանակում է սկզբնապես **շեմ,** դուռն, հետո **արքունիք**, ապա **արքունի կալված**:

Այս մեկնությունը կասկածելի է համարում պ. Մանանդյան և ապավինում է Հյուբշմանին, որի կարծիքը շատ ավելի հիմնավոր և համոզիչ է գտնում: Գերման հայագետի բացատրությամբ ոստան են անվանվել IV դարում այն երկիրները կամ քաղաքները, որ Արշակունի թագավորի (կամ թագավորական տան որևէ իշխանի) իշխանության տակ են գտնվել: Հյուբշման ոչ մի ստուգաբանություն չէ առաջարկում, այլ տալիս է լոկ ոստանի նկարագրական մեկնությունը: Գերման գիտնականի և մեր մեջ հակասություն չկա: Նրա մեկնությունը լրիվ չէ և չէ ընդգրկում այն բոլոր նշանակությունները, որ տալիս են մատենագիրները:

Այս բանը քաջ պիտի գիտենար, մանավանդ պ. Մանանդյանը, եթե իրոք «հավաքած ունի մատենագրական բոլոր վկայությունները ոստանի մասին»:

Ահա Փարպեցին ոստան է անվանում Ապար աշխարհի Վրկան քաղաքը, որ Արշակունի կալված չէ, հարկավ, և անվանում է կրկին անգամ: Վեհ Դենշապուհը հայ քահանաներին հանում է Նյուշապուհից և տանում Ռևան նահատակելու, հրամայելով, որ հայ չթողնեն քաղաքից դուրս գալ մինչև «ցժամանակ մտանելոյ ամենայն զօրացն արքունի **յոստանն**»: Եվ երբ որ թագավորը մտնում է ըստ կարգելո ժամանակին **յոստանն ի Վրկան**, իրավունք է տրվում հայերին երթևեկելու[1]:

Միհրան-Գուշնասպ վկայի հայրը Բաբա **ostandar** էր Մծբնի, ինչպես երևում է նրա վկայաբանությունից[2]: Ասել է, թե այստեղ ևս մի ոստան կա, որի պետը կոչվում է ոստանդար:

Այլևս ասորի հիշատակարանները ոստան են անվանում Արզն քաղաքը, Աղձնյաց աշխարհի կենտրոնը, և նրա շրջանը՝ տուն ոստանի: Այստեղի եպիսկոպոսը ներկա էր 554 թվի ժողովին[3]:

Ասել, որ այս վայրերը ոստան էին կոչվում, որովհետև արքունի կալված էին՝ Արշակունի թե Սասանյան, դժվար թե հնարավոր է:

Գիտենք նաև, որ ոչ միայն Արշակունի թագավորները, այլ մյուս իշխաններն իրենց ոստանն ունեին:

---

[1] **Ղազար Փարպեցի,** Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 94:

[2] **G. Hofmann,** Syrische Auszüge, p. 93.

[3] **I. A. Chabot,** Synodicon Orientale, Paris, 1902, p. 322-323.

Խորենացին Երվանդաշատը Կամսարականների ոստան է կոչում: Ղևոնդի համար Դարոյնքն է ոստան Բագրատունիների: Ռշտունյաց ոստանը կանգուն է ցարդ: Աղամակերտը Արծրունիների ոստան է ըստ Փարպեցու և այլն:

Այս բոլորը չեն զետեղվում ոստանի իբր արքունի կալված նշանակության մեջ:

Եթե ընդունեինք այդ նեղ իմաստը անհասկանալի կմնար Փավստոսի ոստան արքունի դարձվածը, որ գործ է ածում Անգեղ տան համար: **Արքունի** մակդիրն ինքնին վկայում է, որ կա և ուրիշ կարգի ոստան, որը արքունի չէ:

Արշակ թագավորը կոտորում է Կամսարականներին և «զգաւառսն յոստան ուներ»:

Տարօրինակ թյուրիմացությամբ պ. Մանանդյան այս, ինչպես և «ոստան արքունի» ասացվածքը, համարում է նպաստավոր Հյուբշմանի և ընդդեմ մեր տեսության:

Փավստոսը Պապի համար ասում է, որ եկեղեցու հողը «հատանէր յարքունիս»: Ղազար Փարպեցու մոտ պարսից թագավորը հրամայում է կաթողիկոսական տունը «յարքունիս ունել»:

Նույնանիշ արտահայտություններ են, ուր ոստանը համազոր է արքունիքին:

Եթե ոստանը միայն արքունի կալված լիներ, պետք էր ասել «զգաւառսն ոստան առնէր» և ոչ «յոստան ուներ»: Լեզվական նրբություն է, որ պետք չէ անտես առնել:

Անհարթությունները վերանում են, գտնելով իրենց լուծումը մեր առաջարկած ստուգաբանության մեջ: Նյութերի բանասիրական քննությունը թելադրում է, որ ոստան նշանակում է արքունիք, ապա արքունի կալված: Իսկ լեզվագիտական որոնումը բերում է այն հետևանքին, որ սկզբնական նշանակությունն է շեմք:

Պարոն Մանանդյանը հայտնում է, որ մեր ստուգաբանությունը ոչ մի հիմք չունի և որ մատենագրության մեջ չի գտել և ոչ մի հետք, որ արդարացներ մեր մեկնությունը: Առանց հիմքի ուրիշ հիմքի դեմ խոսել, անզգուշություն է:

Հայ ոստան բառը համարել ենք իրանական փոխառություն և կարծում ենք, որ նույնն է, ինչ որ պարսիկ **aslan,** որ ըստ Ջոնսոնի ընտիր բառգրքի նշանակում է. **threshold, king court, Royal palace**:

Ճիշտ այն նշանակությունները, որոնք ունի մեր ոստանը: Պարսիկ **astan** գրությունը, այսինքն՝ սկզբի **a** չպիտի շփոթեցնե ընթերցողին: Շիտակ ընթերցումն է **ostan:** Հայտնի ուստա «վարպետ» բառը գրվում է պարսկերեն **asta** և **astad** և կարդացվում է **osta** և **usta**:

Վուլերս ևս գիտե **astan** բառը որպես **locus dormiendi** կամ **quiescendi**, այսինքն՝ ննջելու կամ հանգչելու տեղ և համարում է ծագած **ust** բառից, որ է ազդր, որով **ustan** իբրև «**a supino cubitu derivata**»: Ստուգաբանությունը թեև կասկածելի է, բայց կարևոր է այնու, որ **astan** հանելով **ust-**ից հաստատում է նույն բառի **ustan** հնչյունը:

Նույնը վկայում է մանավանդ ասորի **austn** գրությունը, որ և հիմ է տալիս բառի ստուգաբանական վերլուծման: Հավանորեն **stana** «տեղ» բառն է սկզբից ածանցված մի մասնիկով, մի նախդիր, թերևս **au, avi,** որ շաղկապվելով **stana** հայտնի բառի հետ, տալիս է նրան «մուտքի, շեմի, դրան» իմաստ:

Պարսիկ **astan** բառը ոչ միայն «սեամ, դուռն» է նշանակում, այլև «արքայական դուռն»: Այս իմաստը և գործածությունը պահվել է անգամ օսմանյան լեզվի մեջ: Բարձրագույն դուռը կոչվում էր բարձր ոճով **astan** կամ **astan i saadet** և նման ծաղկուն մակդիրներով: Այս մասին վկայում են դարձյալ նույն Ջոնսոնը և ուրիշ բառգրքեր:

Ակներև է, որ բառս Իրանից է անցել Օսմանյան դուռը: Ասել է, թե ատենով կենդանի խոսք է եղել Իրանում և նշանակել է նաև, կամ առավելապես, արքայական և իշխանական արքունիք:

Իրանից անցել է հայերին ոստան հարազատ հնչյունով և նշանակել է արքունի դուռն:

Պարոն Մանանդյան առնվազն անզգույշ է, երբ հայտարարում է, որ հայ մատենագիրները քրքրելով, հետք անգամ չէ գտել, որ ոստան նշանակեր դուռն:

Մեր այն աշխատության մեջ, որ քննադատում է պ. Մանանդյանը, բերել ենք զինվորական կոչված գահնամակը, հետաքրքրական գործ, հայ զինվորական ուժերին նայող: Այնտեղ նշանակված է, թե որ նախարարական տունը որքան հեծյալ ուներ: Վերջում կարդում ենք. «եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք **յդ**-ից հազարաց, թող զսպասաւորս **դրանն արքունի որ է ոստանդ,** որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի, եւ մարդպետական որ է նեքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն. և ընդ ամենայնն թիւ զօրացն Հայոց որ է հարիւր եւ քսան հազարաց»:

Ահա մի կարևոր վկայություն, որ ոստանն է արքունի դուռն:

Հիշատակարանը որոշում է երեք տեսակի զորք՝ նախարարական, թվով 84 հազար, սպասավորներ **դրանն արքունի որ է ոստանդ,** որոնք պատերազմ էին ելնում թագավորի հետ, ասել է թե արքայական զորք, և վերջապես մարդպետական կամ թագուհու պահապան զորք: Խորենացին ծանոթ է եղել այս հիշատակարանին և այդ մասին պարագայորեն խոսած ենք «**Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում**» գործիս մեջ:

Հարկ է նշանակել, որ **որ է ոստանդ** վերաբերում է նախընթաց **դրանց արքունի** խոսքերին և ոչ թե սպասավորներին, որոնց նայում է **որք ելանեին** և այլն նախադասությունը:

Այսպիսով, մեր մեկնությունը հաստատվում է ոչ միայն ստուգաբանորեն, այլև մատենագրական նեցուկով, հակառակ պ. Մանանդյանի հայտարարության:

Ոստան բառի տեսակ տեսակ կիրառումները, գտնում են, իրենց բանալին: Ոստան կարող էր լինել և՛ Վրկանում և Մծբինում, այլև Խորասանի և Բաղդադի կողմերում, այս մասին ևս կան տեղեկություններ, ինչպես և Հայաստանի ոչ միայն թագավորական, այլև ամեն մի իշխանական նստավայր կարող էր ոստան կոչվել: Ասորի **austan** իրավամբ Շաբո թարգմանում է **residence de la dynastie**:

Հասկանալի է դառնում և «յոստան ունել» ասացվածքը որպես «յարքունիս ունել»:

Վերջապես, Արշակունիների արքունիքն ու աթոռանիստը, գուցե և կալվածը համարվում է ոստան **par excellence**:

Անցնենք ոստանիկին, որի կապը ոստանի հետ անուրանալի է: Պարսկական ձև է, որի հայկականն է ոստանեա, որ պատահում է Փարպեցու մոտ: Ոստանիկ ասել է նրանք են, որ ծագում են արքունի ոստանից: Բառացի՝ դրանիկ, իսկ իրական բովանդակությունը ի՞նչ է:

Փավստոսին ծանոթ է ոստան, բայց ոչ ոստանիկ: Փարպեցին և Եղիշեն են, որ գիտեն և հաճախ հիշում են ոստանիկ ազատներին:

Փարպեցու ոստանիկի փոխարեն Եղիշեն ունի **ոստանիկ յարքունի տանէ**: Կամ առանց ոստանիկի, միայն **յարքունի տանէ,** երբ խոսքը այրուձիո կամ զորքի մասին է:

Փավստոսի լռությունը պատահական չէ: Հավանական է, որ ոստանիկ ազատություն, կամ ավելի ճիշտ ոստանիկ կոչումը որոշ իմաստ է ստանում Արշակունյաց թագի անկումից հետո:

Խորհրդավոր է նաև Եղիշեի հավելումը՝ յարքունի տանէ, որ չէ խուսափել Խորենացու դիտող աչքից:

Արդարև արքունի տունը ընկած էր, ինչո՞ւ պետք է նրա անունը կրեին որոշ կարգի ազատներ և նրանց այրուձին: Պատմահայրը ստիպված է ենթադրել, որ թերևս տարբերություն կար հին ոստանիկ գնդերի և նոր **արքունի** կոչվածների միջև և թե վերջինս գուցե կազմված է պարսից կողմից:

Տիգրանակերտի ոստան ազատությունը, որի մասին խոսում է Խորենացին, արձագանք է Փավստոսի ցուցման, թե Անգեղ տունը Արշակունի ոստան էր: Աղձնի ոստան կոչումը ևս կարող էր ներշնչել նույն միտքը:

Ոստանիկ համարել ենք հավաքական անուն Արշակունիների ժա-

ռանգորդների բառի լայն նշանակությամբ, հաշվելով ոչ միայն Արշակունի սեպուհները, այլև արքունիքի և թագի բոլոր պաշտոնեությունը, նմանապես և այն անձինք, որ ազատություն և կալված էին ստացել Արշակունի թագից առանձին ծառայության համար և սերտորեն կապված էին նրան: Սրանք էին պարգևական կոչված հողերի տերերը: Արշակի դրան 900 բարձ է համարում Փավստոս: Ճիշտ է, որ Սասանյան Գահնամակը 600 բարձ ուներ, բայց Խոսրով Փարվեզի ժամանակ ավելի քան 3000 այր սպասավոր կար դրան: Սասանյանների պալատական և արքունի պաշտոնեությունը վայելում էր ազատներին հատուկ արտոնություն:

Նույնը պետք է ենթադրել և Պարթևյան արքունիքի համար, ուրեմն և հայ Արշակունիների: Սպասավորները և պաշտոնյաները պիտի կազմեին բուն դրանիկների կամ ոստանիկների դասը:

Արտաշեսի անկումով Արշակունի ցեղը չանհետացավ միանգամից: Բյուզանդական Հայաստանում փայլուն ներկայացուցիչներ ունեին քաղաքական ասպարեզում տակավին VI դարում, ինչպես Հովհաննես և Արտավան Արշակունիք, որ մասնակից էին կայսրության դեմ կազմակերպված ապստամբության:

Անտարակույս պարսկական բաժնում ևս հարատևեցին նրանց շառավիղները: Փարպեցին երկու ոստանիկ մարդու անուն է տալիս՝ «Զանդազան յոստանեայ տանէն և Պապ Արտակունեաց, որդի Քաբոցի, այր ոստանիկ»: Արդյո՞ք այս Արտակունիք Պապ անունը չեն ժառանգել Արշակունիներից, որպես հեռավոր արենակից կամ մերձավոր թագին, նման Զյունական, Վարաժնունի մանր տների, որ հաստատված էին Արշակունի հողերի վրա:

Կամենալով պարզել ոստանիկի բովանդակությունը, կարծել ենք, որ երեք կարգի մարդիկ՝ արենակիցներ, պաշտոնյաներ և պարգևականներ, կարող էին հավասարապես կոչվել ոստանիկ, որպես ընկած թագի մերձավորներ այս կամ այն մտքով:

Ռուսաց մոտ ազնուականություն նշանակող բառը ծագում է դուտն բառից, **dvorianin, dvorianstvo** նշանակում է «դրանիկ, դրանկություն»:

Ոստանիկների իրավական դրությունը համեմատել ենք սեպուհներին, ասելով, որ նրանք ընկած թագի նկատմամբ նույնն էին, ինչ-որ սեպուհները նախարարների հանդեպ:

Այս առթիվ պ. Մանանդյանը վերագրում է մեզ այն միտքը, իբրև թե սեպուհ անունը հատուկ ենք համարում միմիայն նախարարական ընտանիքներին, և ոչ նաև թագավորական տան և նշանակում է անգամ գրքիս էջը՝ 451:

Եթե բաց անենք այդ էջը, կտեսնենք, որ պ. Մանանդյան ուշադրությամբ չէ կարդացել ինչ որ շտապում է հերքելու: Կոչ արած տեղը խոսքս այն մասին է, թե տոհմային կենցաղը, երբ փոխանցվում է ֆեոդալականի, ի՞նչ փո-

փոխություն են կրում տոհմային տերմինները: Այն բառերը, որ սկզբում նշանակում էին ընդհանրապես տոհմի զավակներ, պահում են սովորական իմաստը, իսկ մի քանիսը, օրինակ, սեպուհ դառնում է հատուկ իշխանական տներին:

Այստեղ հակադրվում են ոչ թե իշխանական և թագավորական, այլ իշխանական և հասարակ ընտանիքները: Ասել է, թե գյուղացու որդին չի կոչվում սեպուհ, այլ իշխանի, և ոչ թե իշխանի որդին սեպուհ է, ինչպես պ. Մանանդյան է թյուրաբանել, իսկ թագավորինը չէ սեպուհ:

Իր հերքումներով պ. Մանանդյան ուղիները հարթված է համարում, որպեսզի վերջապես ավետե մեզ իր նոր խոսքը, վիճելի խնդրի վերաբերյալ:

Ոստանիկները, պ. Մանանդյանի կարծիքով, թագավորական ծագում չունին: Խորենացին սխալվել է նրանց թագավորազն համարելով: Ոստանը արքունիքի հետ կապ չունի: Ոստան է կոչվում արքունի հողը, ուրեմն Եղիշեի «ոստանիկ յարքունի տանէ» հասկանալու է աշխարհագրական մտքով և ոչ տոհմային:

Ասել է թե ոստանիկներն այն մահկանացուներն էին, որ ապրում էին թագավորի հողերի վրա: Սրանք գործ չունին ո՛չ թագավորի, ո՛չ սեպուհների և ո՛չ նախարարների հետ: Ապա ի՞նչ են: Չէ՞ որ ֆեոդալական դար էր և գին ուներ միայն արյունը, ազնվականությունը, իսկ ազատ դասի մեջ մուտք չէին կարող ունենալ բոլոր այն մարդիկ, որ ո՛չ թագավորական են, ո՛չ նախարար, ո՛չ սեպուհ:

Փակելով հնարավորության դռները պ. Մանանդյան ուրիշ ելք չէ գտնում քան մի սոսկալի թռիչք անել դեպի հեռավոր անցյալի մեծությունները: Նա, որ այնքան սիրում է մատենագրական տեղեկությունները, հանկարծ գիր ու գիրք մի կողմ է նետում և սլանում անգիր դարերի վրայից մինչև Հայկյան ժամանակները: Եվ ահա ինչ է բարբառում:

«Ոստանը կամ արքունի երկիրը Հայաստանի տանուտիրական բուն այն շրջանն էր, ուր գլխավորապես հաստատված պիտի լիներ հնդկա-եվրոպական եկվոր և տիրող ցեղը և հիմնած քաղաքական ամենաանշանավոր իր կենտրոնները: Եթե այդպես է, չե՞նք կարող արդյոք ենթադրել, որ ոստանիկ դասը մեծ մասամբ բաղկացած պիտի լիներ հին այս տիրող ցեղի հատվածներից: Չէ՞ որ Հայկ Նահապետը, որի սերունդներից, Խորենացու կարծիքով, ծագել է ոստան ազատությունը, ոչ թե իրոք թագավոր է եղել, այլ առասպելական մի հսկա, որը դառել է հայազգի անվանադիր հերոսը և նախահայրը»:

Այս բանաստեղծությունից հետո պ. Մանանդյանը միանգամայն վստահելի է համարում Խորենացու վկայությունը, որ պարսիկները ոչնչացրին հին ռազմիկ դասը և նրա տեղ ստեղծեցին հլու արքունի գունդ:

Տեսանք, որ Խորենացու խոսքերը այլ բան չեն, եթե ոչ բանասերի փորձ մեկնելու Փարպեցու և Եղիշեի տեղեկությունները:

Ընթերցողը սակայն սպասում է գիտենալ, ի՞նչ էր այդ ոստանիկ կոչված ռազմիկ դասը, ինչո՞ւ էր նա ազատ և ի՛նչով էր ազատ: Այդքան դիմացկուն քաջարի դասը ինչպե՞ս է, որ նախարարական աթոռներ չէ գրավել:

Մեր քննադատի ցանկությունն է, որ նրանք ազատ լինեն, բայց չինական: «Ընդունելով, որ ոստանիկ են անվանվել Արշակունյաց բուն երկրի ազատները, որոնցից կազմված գունդն անվանվել է արքունի կամ **յարքունի տուն է,** դժբախտաբար, աղբյուրների վկայությունից չի որոշվում, թե արդյոք այդ ոստանիկ ազատների դասին չե՞ն պատկանել նաև **ազատ գյուղացիները**, որոնք կարող էին գոյություն ունեցած լինել հին Հայաստանում»: Այս դեպքում «հաւասար եւ **ըստ մարդաթուի»** հողաբաժանումը կարող էր վերաբերվել ոստանիկներին, եթե միայն գտնվեր մատենագրական աղբյուրների մեջ հաստատուն որևէ ցուցում կամ ակնարկ»:

Թվում է, թե տարաժամ է հիշել մատենագրական աղբյուրներ, երբ բանասերի միտքն այդքան հեռու է գնացել մատենագրությունից:

3. ՀՈՂ ԵՐԴՈՅ ԵՎ ՎԻՃԱԿ

Պարոն Մանանդյանը կարծում է, որ «հող երդոյ և վիճակ» տեքնիկ տերմիններ են:

Ագաթանգեղոսի ասելով, Տրդատը եկեղեցուն հող բաշխեց: Փավստոսը վկայում է, որ Պապ թագավորը, եկեղեցական հողերի մեծագույն մասը կտրեց:

Համեմատելով երկու մատենագիրների վկայությունը, պ. Մանանդյանը գտնում է, որ սրանք միմյանցից անկախ են այս կետում, որ նրանց տեղեկությունը հավաստի է և ստույգ, և որ Ագաթանգեղոսի վկայությունը, որ ավելի լրիվ է, համարելու է նաև ավելի ուղիղ:

Ասել, որ երկու մատենագիրներն անկախ են միմյանցից, կասկածելի է: Ասել, որ Ագաթանգեղոսն ավելի ուղղախոս է, քան Փավստոսը, ևս առավել կասկածելի է: Եվ պնդել, որ նրանց տեղեկությունը պետք է ընդունել իբրև ստույգ, միանգամայն անընդունելի է:

Երբ Ագաթանգեղոսը և Փավստոսը բախվում են և կանգնած են դատի առաջ, Փավստոսն է միշտ արդար և Ագաթանգեղոս ամբաստանյալ և որքան «ընդարձակ» ճառե, նույնքան մեղավոր է:

Այս կետում Ագաթանգեղոսի աղբյուրը և ներշնչողը Փավստոսն է:

Պատմականորեն անընդունելի է, որ Լուսավորիչ կարենար եկեղեցիներ շինել «յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գիւղս եւ յագարակս»: Լոկ բառեր են, ճարտասանություն, զուրկ իրական բովանդակությունից: Հազար հինգ հարյուր տարի անցնելուց հետո էլ Հայաստանում կան գյուղեր, որ եկեղեցի չունին տակավին:

Քնավ հավաստի չի կարելի համարել, որ Տրդատ բոլոր եկեղեցիներին չորս չորս հող երդո տար ագարակներում, և յոթն յոթն՝ ավաններում: Հայ եկեղեցու հիմնադիրն առաջին քրիստոնյա տաճարները կանգնեց հին սրբավայրերի ավերակների վրա: Բավական էր, որ նրանց գույքը հասներ եկեղեցիներին, և նոր հողեր տալու պետք չէր ունենա բարեպաշտ թագավորը:

Այս տեղեկությունը Լուսավորչի կենսագիրը պարտական է Փավստոսին:

Պապ թագավորին սևացնելու նպատակով, ինչպես և Ներսեսին գովաբանելու, Փավստոսը դիմում է Տրդատի հեղինակության: Պապը «յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս,-ասում է Փավստոս,-եւ զերկուսն միայն թողոյր երկուս հողս եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գիւղ մի երէց և սարկաւագ և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն»:

Ի՞նչ է այս յոթն կամ հինգն կամ երկու հողը:

Հայոց լեզվի մեջ հողաչափության հատուկ բառեր կան, ինչպես արդու, գրիվ, օրավար, լուծ, կորի, որ պատմագիրը կարող էր գործ ածել տարտամ դարձվածքից խուսափելու համար: Հեղինակը գերադասել է անորոշությունը:

Ագաթանգեղոսն ավելացնում է «երդոյ» բառը, «չորս հողս երդոյ», «եօթն հողս երդոյ»: Արդյո՞ք այսու վերանում է անորոշությունը:

Պարոն Մանանդյանը կարծում է, որ «հող երդոյ» հատուկ հողաբաժին է, որ տրվում էր «երդերին, այսինքն՝ տներին»:

Դժբախտաբար, լեզվական նրբությունները սպրտում են արգո բանասերի աչքից: Եթե նրա հայտնած միտքը ճշմարիտ լիներ և երդ նշանակեր **nрnշ** մակարդակի հող, պետք էր ասել «երդ հողոյ», ինչպես ասում ենք մի տուն հող:

Ոչ մի հիմ չկա կարծելու, որ երդ ունեցել է նման նշանակություն: Երդերը հավասար և որոշակի մեծություններ չեն, որ նրանց հատկացրած հողերը հավասարամեծ լինեն:

Սակայն, պ. Մանանդյանին մոլորեցրել է այն հանգամանքը, որ հունարեն թարգմանության մեջ Ագաթանգեղոսի հող երդո դարձրած է **arouras:** Ասել է, թե հող երդո հատուկ հողաբաժին է հավասար **aroura**-ի: Բայց հույն արուրա կամ լատին **jugerum**, որ իրոք, հողաչափ է, մեծ բան չէ և անում է մոտ քառորդ հեկտար, գրեթե նույնչափ դեսյատին[1]:

[1] **Հերոդոտոս, II**, 168, հիշում է արուրա որպես Եգիպտոսում ընդունված չափ, հավասար հարյուր քառակուսի կանգուն տարածության: Կանգունը մեկուկես ոտ է և ոտը՝ 30 սանտիմետր, ուրեմն հարյուր կանգուն՝ 45 մետր: Եգիպտոս արքայական կանգուն համարվում էր մոտ 50 մետր: Իսկ **jugerium**, ըստ Պլինիոսի «Բնական պատմության», 18,3 մի ուղղանկյուն տարածություն է, 240 և 120 ոտ կողերով:

Այս հաշվով գյուղական երեցը Տրդատի շնորհիվ պիտի ստանար ոչ ավելի քան մի դեսյատին հող, իսկ Պապի կրճատումից հետո մի քառորդ դեսյատին: Մեծ առատաձեռնություն չէր բարեպաշտ Տրդատ թագավորի կողմից, իսկ Պապը, որքան և չար, չէր կարող կարծել, որ քառորդ հեկտարով կարելի է տուն պահել:

Պետք է ընդունել հետևապես, որ հայ թարգմանը գործ է ածել արորա ոչ իբրև հողաչափ, այլ բառի բուն իմաստով, որ է հող ընդհանրապես վարած, թե վարելի: Պարոն Մանանդյանի մեկնության միակ հիմը ընկնում է:

Ագաթանգեղոսը, ինչպես ասացինք, ներկա դեպքում կախված է Փավստոսից և ավելի բան չէ ասում, քան իր աղբյուրը:

Փավստոսը ասում է, որ Պապը եկեղեցու հողը կրճատեց և թողեց ամեն գյուղում երկուական հող, երկու հոգի, մի երեց և մի սարկավագ, պահելու համար, որով ամեն մեկին ընկնում է մի հող: Երեց և սարկավագ երկու հոգի չեն, երկու տուն են, երկու երդ: Երկու երդը երկու հող է ստանում Պապից. ստացած հողը, ուրեմն, կարելի է կոչել հող երդո: Տրդատը ավելի աստվածապաշտ էր, քան Պապը, ուստի նրան Ագաթանգեղոս վերագրում է երկու անգամ ավելի հող, քան Փավստոսը՝ Պապին, որ է «չորս հողս երդոյ»: Իսկ Փավստոսի «եօթն հող» մեկնում է այն մտքով, որ այդ ավանների քահանայության բաժինն էր:

Ագաթանգեղոսը ոչնչով չի խանգարում Փավստոսի անորոշությունը: Պատասխանատուն մնում է ինքը՝ Փավստոսը: Ի՞նչ է նշանակում այդ անորոշությունը:

Պապը ոչ միայն հողն է կարճում, այլև «զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն», այսինքն՝ եղած հողն էր ծանրաբեռնում նրանով, որ երեցների և սարկավագների որդիներին «ծառայության» էր առնում: Ծառայություն այստեղ նշանակ է հարկատվության:

Այս տողերը տանում են մեզ դեպի արտաքին աղբյուր և կասկածելի են դարձնում Պապին վերագրված միջոցները եկեղեցական հողերի դեմ:

Հարկավոր - բացատրությունը տալու էինք «**Փավստոս որպես պատմագիր**» հոդվածի մեջ, որի մի մասը միայն լույս տեսավ Պետրոգրադի «**Christianski Vostok**» ռուս հանդեսում (3):

Թեև վեճը տերմինի մասին է և պատմական հավաստիությունը աննշանակ է այս դեպքում, բայց հարկավոր ենք համարում մի քանի խոսք ասել:

Հայտնի է, որ Ներսեսի կյանքը այն ձևով որպես մտած է Փավստոսի պատմության մեջ կրում է օտար ազդեցության հետքեր: Կան գծեր, որ առնված են Քարսեղ Կեսարացու կյանքից:

Կեսարիո եպիսկոպոսը ժամանակակից էր Ներսեսին, տեսել էր նրա

մահը և անծանոթ չէր հայ իրադարձումներին: Նրա թղթերից մեկը ուղղված է ոմն կոմս Տերենտիոսի, որ նույն անձն է, որին հիշում է Փավստոսը և որը կայսեր զորքով եկավ Հայաստան, նպաստելու Պապ թագավորին գրավելու հայկական գահը: Կեսարացին պատկառելի դեմք է և մեծ հեղինակություն մեր եկեղեցու համար: Առանձին արժեք ունի մեզ այժմ զբաղեցնող հարցի տեսակետից Բարսեղի մի նամակը, գրված ոմն Մոդեստոսի: Կեսարիո հայրապետը գրում է, որ եկեղեցու պաշտոնյաները «**երեցները և սարկավագները ըստ հին համարազրի արձակված էին հարկերից, իսկ այժմ նրանց ցուցակ են անց կացնում**»[1]:

Նամակագիրը հիշում է նաև, որ կան քահանաներ, որոնք ազատ են մնացել հարկից, ավելի ճիշտ որոշ արտոնություն են վայելում, և գանգատվում է, որ այդ արտոնությունը թողնվում է ժառանգաբար նրանց որդիներին: Հայրապետը գտնում է, որ այս ձևը անարդար է, որովհետև հաճախ որդիները անարժան են վայելելու ժառանգած առանձնաշնորհումը, ուստի առաջարկում է, որ իրեն թողնվի առանձնաշնորհումի բաշխումը եկեղեցականների միջև, որպեսզի արժանավորները ստանան և եկեղեցու պետը իրազեկ լինի քահանայության դրության:

Բարսեղի առաջարկը հասկանալու համար, ինչպես և արտոնության էությունը, պետք է գիտենալ հետևյալը: Հռովմեական կայսրության մեջ Դիոկղետիանոսի օրից հարկահանության հիմը կազմում էր **jugum,** որ նշանակում է բառացի **լուծ**, և իրապես հողի այն քանակը, որի արդյունքը բավական է մի մարդու ապրուստի համար: Հարկային համարագիրը կայանում է նրանում, որ պարզեն և գրի առնեն, թե ով որքան **jugum** «լուծ» հող ունի: Ամեն մի լուծի համար պահանջվում է որոշ հարկ:

Արտոնությունը, որի մասին խոսում է Բարսեղ Կեսարացին, արտահայտվում է նրանով, որ հայտնի չափով **juga** զեղչվում է: Եթե մեկն ունի 20 լուծ հող, արտոնվում է տալ հարկ միմիայն դիցուք կեսի համար, ուրեմն տասն լուծը բաշխվում է նրան:

Բարսեղի նկատողությունից երևում է, որ կային եկեղեցական պաշտոնյաներ, որ կարողացել էին ձեռք բերել առանձնաշնորհում, հետևապես, շատ հող ունենալով, քիչ հարկ էին վճարում, կամ գուցե միանգամայն ազատ էին: Հայրապետը հոժար չէ, որ որդիները ևս օգտվեն հայրերին զիջած արտոնությունից: Նա առաջարկում է, որ հայտնի, թվով անհարկ **juga** իր տրամադրության տակ դնեն, որպեսզի ինքը և իր հաջորդները արժանապես բաշխեն վաստակավոր երեցների միջև:

---

[1] **Migne,** Patrologiae cursus completus, 32, col. 509.

Կոստանդին Մեծը, ինչպես որ ակնարկում է և Բարսեղ Կեսարացին, արդարև ազատ էր հայտարարել եկեղեցական հողերը հարկերից: Օրենքը հասած է մեզ: Նրա հաջորդների օրով օրենքը թվում է, թե փոխված էր և եկեղեցականները գրված էին հարկատու, **adscripti censibus**: Բարսեղ Կեսարացու միջնորդության հետևանքը, իրական թե տեսական, այն պիտի լիներ, որ արտոնյալ երեցների և սարկավագների որդիքը և եղբայրները հարկի տակ պիտի ընկնեին: Ճիշտ այն, ինչ որ Փավստոսն է ասում, որ «զեղբայրս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւագացն» ծառայության առավ: «Եօթն հողի» վերածումը «երկու հողի» կարելի է կապել Բարսեղի ակնարկած **juga**-ներին:

Ասորի դատաստանագրքի մեջ **jugum** բովանդակում է որպես հողաչափ 20, 40 և 60 **jugerum**, նայելով հողի հատկության, այսինքն՝ 5, 8 և 12 հեկտար: Եթե ընդունենք, որ Պապը մի մի **jugum** է թողել գյուղական երեցներին և սարկավագներին, քանակը բավարար է: Փոքր Հայքում և Պոնտոսում 30 **jugera** էր համարվում **jugum**:

Պապին վերագրված գործը դժվար է անջատել այն երևույթներից, որոնք մտահոգություն էին պատճառում Բարսեղ Կեսարացուն: Արդյո՞ք կայսրերին հետևելով Պապը բռնացել էր իրոք եկեղեցականների հողային և անձնական դրության վրա, որ անկարելի բան չէ: Նույնչափ հնարավոր է, որ Բարսեղի կենսագրության մյուս գծերի հետ այս կետը ևս անցած լինի Ներսեսին և հարե Պապի անվան: Այս դեպքում ենթադրելու է, որ արևմտյան **jugum** չէ գտել հայացի արտահայտություն և փոխարինվել է հող ընդհանուր բառով:

Ամեն պարագային Փավստոսի վկայությունը պետք ունի ստուգման: Նրանից քամած հող երդո չէ բնորոշում իր նախագաղափարի էությունը: Բնական է, որ չենք կարող հետևել պ. Մանանդյանի խորհրդածություններին, երբ հող երդո համարում է ոչ միայն հատուկ հողաբաժին, այլև «հավաստի նշան, որ հողատիրական համայնական կարգերը գոյություն են ունեցել **ևս հին Հայաստանում**»:

Բայց ինչպե՞ս հաշտեցնել համայնական հողատիրությունը թագավորի իրավունքների հետ: Ահա Տրդատը համայնքներից խլում է հող և տալիս եկեղեցիների սպասավորներին: Նշանակում է, թագավորը գերագույն սեպհականության իրավունք ուներ հողերի նկատմամբ: Փույթ չէ. «համայնքները տնտեսապես ենթարկված լինելով թագավորի կամ նախարարների իշխանության, կարող էին միաժամանակ պահպանած լինել համայնական հողատիրության որոշ կարգեր»:

Նույն բանասերն է, որ հարուցանում է այս հարցերը և պատասխանում է ոլոր մոլոր, և հետաձգում, որ ուրիշ անգամ լուծե բարդ հանգույցները: Դարձ-

յալ վերաղառնում է նույն «հող երդոյ» խոսքին, որ նրանից ճմլե մի նոր ճշմարտություն, այն է «հող երդոյ» հողաբաժինը կոչվում էր իբրև թե վիճակ: Ցարդ կարծել էր տալիս, որ հող երդո հենց գյուղական հատուկ հողաբաժինն է, այժմ դուրս է գալիս, որ հատուկ հողաբաժինն ուրիշ անուն ունի, որ է վիճակ:

Նախ՝ հերքում է մեր թռուցիկ մի խոսքը: Մեր ժողովրդի մեջ առանձին բառ չկա տան հողաբաժնի համար: Սովորաբար ասում են այս ինչի հողը, արտը, և նման ընդհանուր բառեր: Արդյոք հնո՞ւմն էլ այդպես է եղել: Աչքի առաջ ունենալով Եղիշեի մոտ պարսիկ մարզպանի հրավերը, այն միտքն էինք հայտնել, որ «կեանք, արար, կալուած» բառերը, որ այդտեղ գործ են ածվում ազատների, շինականների և եկեղեցականների գույքի նշանակությամբ, թերևս երբեմն հատուկ լինեին գյուղական հողաբաժնի:

Արդյո՞ք այս դեպքում կարելի է որոշել գյուղական հողի իրավական բնույթը: Մի հարց, մի ենթադրություն, որն եթե հետաքրքրություն ունի, այդ ավելի հաստատումն է, քան հերքումը: Արար, որ գրաբարում զանազան նշանակություն ունի, իսկ ժողովրդի բերանում մնացել է միայն «արար աշխարհ» ասացվածքում, հասարակ բառ չէ երևում:

Փավստոս ևս ասում է, որ Արշակի թագավորությամբ խաղաղացավ երկիրը՝ «Ժողովեցան ամենայն թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց... եւ յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յիւրաքանչիւր **յարարս իւրեանց**»:

Չեմ կարծում, որ խոսքը միայն շարժական գույքի մասին լինի: Սովորական բառ չէ թվում նույնպես **կյանք** գույքի իմաստով, իսկ կալված հար և նման է եվրոպական **tenure**-ին:

Պարոն Մանանդյանը երկար ու բարակ վկայություններ է բերում, որ այդ բառերը հողի իմաստ չունին, որ կյանք համապատասխանում է հույն *βίος*-ին, որ Ավետարանում ապրուստի մտքով է գործածվում և, հետևապես, արհեստական բառ է: Կարելի է, բայց անհնար չէ նաև այն, որ հայերենում արդեն այդպիսի իմաստ ունեցել է, որ հույն *βίος* այդպես են թարգմանել:

Ամեն պարագային կարևորն այս չէ, այլ այն, որ իմ որոնած բառը, Մանանդյանի կարծիքով, «վիճակ»-ն է: Եվ իբրև ապացույց քաղում է Հայկազյան բառգրքից Մխիթար Գոշի մի խոսքը, Երեմիա մարգարեի մեկնությունից. «Վիճակ զանդաստանս **սովոր են** ասել, եւ **մեք** սովոր ենք զժողովուրդս **վիճակ** կոչել»:

Այս վկայությունը «պարզ ցույց է տալիս, որ վիճակ սովորաբար գործ է ածվել անդաստանների, այսինքն՝ արտերի կամ վարելահողի համար»,- եզրափակում է պ. Մանանդյանը:

Դժվար թե կարելի է ավելի դավաճան օրինակ բերել քան այս վկայությունը, որի իմաստը չէ հասկացել պ. Մանանդյանը: Մխիթար Գոշի

խոսքը Ս. Գրքի մասին է: **Ս. Գիրք** «սովոր են ասել վիճակ զանդաստանս», և ոչ թե հայերը: Իսկ **մենք**, հայերս, «սովոր ենք զժողովուրդս վիճակ կոչել»:

Բոլորովին հակառակ հետևանք. հայերը անդաստանին վիճակ չեն ասել:

Սրանով ընկնում են և մյուս երկու ապացույցները, որ քաղած են Ս. Գրքից: Հարկ ենք համարում, սակայն կանգ առնել նրանցից մեկի վրա, այն է՝ որ Ս. Գրքում հունական *σχοινισμός* բառը հայերեն թարգմանված է վիճակ: Եվ որովհետև հույն բառը նշանակում է պարանով չափած հողամաս, ուրեմն վիճակ ևս հողամաս է:

Նախ՝ ոչ միայն հողամասը, այլ ամեն գույք կարող է վիճակ կոչվել, ձևավոր ոճով, եթե վիճակով է ստացված: Երկրորդ՝ չի երևում, որ պ. Մանանդյանը ստուգած լինի Հայկազյան բառգրքի կոչումը: Հույն բառը, իրոք, դժվարության մեջ է դրել Ս. Գրքի հայ թարգմանիչներին: Տեսակ տեսակ բառեր են ընտրել միտքը մի կերպ արտահայտելու: Միայն վիճակ բառը չէ, որ տեսնում ենք *σχοινισμός*-ի դեմ, որ ավելի իմաստուն է տալիս, քան բառը թարգմանում: Մի տեղ գործ է ածվում **պարանք** (II Թագ., Ը, 2), մի տեղ՝ **ապառանդակք** (Ես., ԾԴ, 3), մի ուրիշ տեղ՝ **լարաբաժին** (Ամովս Է, 18; Միք., Բ, 5) և վերջապես վիճակ՝ (Յես., ԺԷ, 15; Եզ., ԽԷ, 13): Եվ ոչ միայն *σχοίνισμα κληρονομίας* է թարգմանում վիճակ ժառանգության, այլև կլերոնոմիա առանձին, (Եզ., 47, 18) առանց սխոյնիսմաս բառի:

Չի երևում, որ վիճակ հող նշանակեր անկախ հրեական հասկացողությունից:

Եթե արդարև վիճակ արմատացած լիներ Հայոց մեջ որպես «համայնական-տոհմական հնագույն շրջանի տերմին», թարգմանիչները գոնե դռնե դուռ չէին ընկնի պատշաճավոր բառ գտնելու, այլ ամենուրեք կդնեին վիճակ, նման նահապետ, նախարար խոսուն բառերի:

Անտեղի է հիշել նաև Թովմա Արծրունու խոսքը արաբների մասին, թե «արկանէին վիճակս եւ լարս ձգէին», ապացուցանելու համար, որ լար ու վիճակ ձգելը եղել է հողաբաշխի ձև նաև հայերիս մոտ:

Միամտություն կլիներ կարծել, որ հրեշավոր Բուղային ուղեկցող արաբները հողեր գրավելու ուրիշ միջոց չունեին, քան լարով չափել և վիճակ ձգել: Թովմայի խոսքը ոճային սեթևեթ է և ոչ իրական պատկեր, մի ձևավոր ասացվածք, առնված Ս. Գրքից:

Հարկավ, այս չէ նշանակում, որ լարն ու վիճակը ծանոթ չէին հայերին, ինչպես և ծանոթ լինելուց բնավ չի հետևում, որ վիճակ տեքնիկ բառ լինի հողային իմաստով:

Մեղմ խոսելով, «վիճակ»-ը շատ ավելի վատ վիճակի մեջ է գտնվում, քան ակնարկածս երեք բառերը, որոնց տեղն ուզում է բռնել: Բայց և այնպես պ. Մանանդյանը կարծում է, որ իր «լեզվական այս նոր դիտողությունները»

գալիս են հաստատելու «իր ենթադրությունը համայնական հողատիրության գոյության մասին հին Հայաստանում»:

4. ՌԱՄԻԿ ԵՎ ՇԻՆԱԿԱՆ

Գյուղացիության դիրքը նախարարական կազմի մեջ որոշելու համար անհրաժեշտ է պարզել նախապես երկու կարևոր տերմին, ռամիկ և շինական: Կարևոր է մանավանդ սրանց փոխադարձ հարաբերությունը որոշել:

Պարոն Մանանդյանը կարծում է, որ ռամիկ և շինական նույնանիշ չեն և, որ առաջինն ավելի լայն հասկացություն է և բովանդակում է իր մեջ ո՛չ միայն շինականը, այլև քաղաքացին կամ քաղաքի ազգաբնակչության մի մասը: Եվ պետք է տեսնում մատենագրական աղբյուրներին դիմել իր կարծիքը հաստատելու համար: Ոչ միայն Բուզանդը և Փարպեցին են վկայության կոչում, այլ անգամ X դարում ապրող Հովհաննես Կաթողիկոսը:

Ինչ վերաբերում է բառի ստուգաբանությանը, նա հարում է Հյուբշմանի կարծիքին, որ ռամիկ նույնն է, ինչ որ «երամ, երամակ»: Կոչ է անում նաև ոսկեդարյան թարգմանությանց և ուզում է հավատացնել, որ ռամիկ այնտեղ համապատասխանում է իբրև թե հույն *δῆμος, δημότης* բառերին, որ նշանակում են ամբոխ, խառնիճաղանճ բազմություն:

Դժվար թե կարիք կա նկատելու, որ Հյուբշմանի ստուգաբանությունը և նրա վրա հիմնված դատողությունները ոչինչ չեն ավելացնում այն նշանակության, որ հետագայում ստացել է ռամիկ բառը:

Հույն *δῆμος* խուժան չէ, ինչպես և հայ ռամիկը: Ս. Գիրքը գործ է ածում **ամբոխ** համաձայն հույն *ὄχλος* կամ *θόρυβος* և խառնիճաղանճ՝ կամ խառնաճաղանճ՝ յոյն *σύμμικτος*: Ռամիկ պատահում է ոչ հաճախ և միշտ ունի իր դեմ հույն բնագրում տարբեր բառեր՝ *ἔθνος, ὄχλος, θόρυβος*, որ նշանակում են «ժողովուրդ»: Մի անգամ ռամիկ համապատասխանում է հույն *ἐλάχιστος*, որ է «նվաստ»: Արժանի է ուշադրության, որ հակադրվում է իշխանի կամ թագավորի և կամ հեծյալ ուժերի: «Դատաստան անաչառ իշխանաց լինի, ռամիկն ներելի ողորմութեամբ» (Իմ., Զ, 7): «Եւ հեծելազօրքն վառեալք երկոտասան հազար, բոլ զայլռամիկն ամենայն» (**Յուդ**, Է, 2), երկրորդ անգամ (Յուդ, Է, 10): «Արար կոչունս սիրելեաց իւրոց եւ մեծամեծաց... եւ ամենայն իշխանաց նախարարացն», և «դարձեալ միւս անգամ ետ կոչել ի հարսանիսն զռամիկ քաղաքակիցս իւր» (Եսթ, Ա, 3-5):

Շինական բառը միայն մի անգամ է պատահում Ս. Գրքում և այն՝ **շինականագույն** խորթ ձևով, որի դեմ հույն բնագիրն ունի *ἀγροικότερος* (Բ. Մակ., ԺԴ, 30), որ է գեղավարի, գռեհիկ: Թվում է, թե շինականն ոչնչով

բարձր չէ ռամիկից: Վահան Մամիկոնյանը Վաղարշ թագավորի առաջ խոսելիս իր հակառակորդների հասցեին ասում է, որ նրանք այնպիսի ստոր մարդիկ են, որ «կրտսեր շինականք աշխարհին Հայոց հաց գարշէին ուտել»: Կրտսեր շինական արհամարհական շեշտ ունի, հավասար գռեհիկի: Պատմիչների գործածությունից մի բան է հետևում միայն, որ ռամիկ և շինական նա է, որ ազնվական չէ, իսկ ինչ տարբերություն կա երկուսի մեջ, այդ մասին և ոչ մի ակնարկ: Բուզանդ և Եղիշե ավելի սիրում են գործածել շինական, քան ռամիկ, մինչդեռ Փարպեցու մոտ հակառակն է տեսնվում: Շաղագոմի գյուղերում թաքնված ժողովուրդը, որի վրա հարձակվեց Հազարավուխտը Վահանին հետապնդելիս, Փարպեցին կոչում է ռամիկ: Դվին քաղաքում ևս նախարարների և ազատների կից նա գիտե ռամիկներ: Այն, ինչ Խորենացին պատվիրում է գեղջուկներին «պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս»:

Մատենագիրների լեզուն որոշ չէ: Եթե նրանց շփոթ գործածությունից հանենք այն եզրակացությունը, որ ռամիկը գյուղացին է և երբեմն քաղաքի ստորին խավերը, ինչպես խորհում է պ. Մանանդյանը, մեծ գանձ ձեռք բերած չենք լինի: Հեռուն գնալ և ռամիկը բանավոր կենդանիների երամակ համարել, նշանակում է առաջուց ուրանալ բառի տեքնիկ բնավորությունը:

Ամեն պարագային ռամիկ այն է, որ ազատ դասին չէ պատկանում, այս կետում համերաշխ են մատենագիրները: Այս հանգամանքն է, որ թելադրել էր մեզ լծորդել ռամիկը Արամե ազգագրական անվան: Ավելի Իրանի, քան հայերի կողմից պարտված ու խոնարհեցրած Արամե ժողովրդի անունը, կարծում էինք, կարող էր ընդհանրանալ պարթև **Արամիկ** ձևի տակ և դառնալ նշանակ հլու, խաղաղ ազգաբնակության: Բնավ չենք համառում այս մեկնության վրա[1]:

Խնդրի լուծումը կախված է պահլավերենից, ուր դեռ հուսալի է, որ մի օր կհայտնվի ռամիկ բառը այնպիսի ձևով, որ վերջ կտա վարանումներին[2]:

---

[1] Միևնույն միտքը պաշտպանած կլինենք, եթե համեմատենք պարսիկ **aram** կամ **ram** բառի հետ, որ նշանակում է «խաղաղ, հնազանդ, հլու», և արմատակից է հույն *ἠρέμα*, որ նույն իմաստն ունի: Զենդերենում ծանոթ է **rama** բառը կոպտության նշանակությամբ:

Հայերեն գռեհիկ ածանցված է գռեհ բառից, որ է «փողոց»: Վրաց լեզվում նույն բառերը հնչում են **გლეხი** «գյուղացի» և **გლახა** կամ **გლახակი** «խեղճ, ողորմելի»: Նույն մտայնությամբ լատին **rusticus** ծագում է **rus** բառից, որի համաձևն է գերմանական **Raum:** Եթե ենթադրենք, որ նույն արմատը, որ ծանոթ է իրանական լեզուներին, հայտնի է եղել նաև գերմաներեն ածանցով, կստանանք **rama** - «գյուղ», որից **rama - yaka, ramik** «գեղջուկ»:

Ահա մի կարգ հնարավորություններ, ավելի ընդունելի, քան **երամ**, որպես աղբյուր ռամիկի:

[2] Սողդիական լեզվի մեջ երևան եկավ rmknik = ramakanik բառը *ἐθνικός* նշանակությամբ,

Ամեն պարագայիւն ռամիկ այնպիսի անգույն հասարակ բառ չենք համարում, ինչպես Հայկազյան բառգիրքը և նրա հետևությամբ Հյուբշմանը: Պարոն Մանանդյանը ևս վտարում է ռամիկը նախարարական իրավակարգի տերմինների շարքից, և կենտրոնացնում իր ուշադրությունը շինական բառի վրա, որն այսպիսով մնում է միակ արտահայտիչը գյուղացիության որպես դասակարգի:

Շինականը նա է, որ ազատ չէ, և ազատը՝ նա, որ հարկատու չէ: Այսպես բնորոշելով շինականի և ազատի տարբերությունը, պ. Մանանդյանը կարծում է, որ շինականների հարկատվության համար հատուկ տերմին է եղել, որ է «ի հարկի ծառայութեան»:

Որ շինականները հարկ էին վճարում, այդ գաղտնիք չէ: Բայց որ «ի հարկի ծառայության հատուկ և առանձին տերմին» է, այդ կասկածելի է: Փավստոսը պատմում է Մուշեղ Մամիկոնյանի զինվորական սխրագործությունները, վերագրելով նրան մի շարք երկրների նվաճում: Մուշեղը հարձակվում է, հաղթում և երկիրը կամ բնակիչները «ի հարկի ծառայութեան կացուցանէր»:

Խոսքն այս դարձվածքի մասին է, որը մինչև այժմ որպես թե բավարար կերպով մեկնված չէ: Անձնական մեկնությունս, որ այս դարձվածը չէ նշանակում հարկ դնել, այլ հնազանդեցնել, ծառայության բերել, պ. Մանանդյանը համարում է «միանգամայն անհաջող»:

Զգալով, որ հիշյալ դարձվածքը կարող է սխալ ըմբռնվել և կարծել տալ, թե «ի հարկի կացուցանել» նշանակում է հարկ դնել, մենք մեր գրքի մեջ զգուշորեն ցույց ենք տվել անգամ այն աղբյուրը, որտեղից առել է Փավստոսը այդ դարձվածքը, ցույց ենք տվել, որպեսզի թյուրիմացության առաջն առնենք: Բայց մեր ջանքը իզուր է անցել, գոնե պ. Մանանդյանի համար:

Պետք է ասել, որ Մուշեղին վերագրված նվաճումները անարժեք բնավին են պատմական տեսակետից: Հովհաննես կայսրը 363 թվին կնքեց պարսից Շապուհ թագավորի հետ **ամոթալի** կոչված դաշինքը, լքելով իր դաշնակից Արշակ թագավորին, որ ընկավ Շապուհի ձեռքը և զոհ գնաց կայսեր դավաճան բարեկամության: Անմիջական հետևանքն եղավ Հայաստանի ծայրագավառների անջատումը, որ մի առ մի թվում է պատմագիրը: Արդ ճիշտ այս գավառներն են, որոնց վերստին նվաճումը վերագրվում է Մուշեղ Մամիկոնյանին: Սա չի համապատասխանում պատմական իրականությանը: Ամոթապարտ դաշինքն սկիզբն եղավ Արշակունյաց պետության քայքայման, որ քիչ հետո բաժանվեց երկու ոխերիմ թշնամիների մեջ:

որ **ռամիկ** -ի ուրիշ ձևն է **ռամական**, բայց չի լուծում ստուգաբանական կնճիռը՝ **E. Benveniste**, Essai de Grammaire Sogdienne, p. 95. (ed. 1929).

Մուշեղին ընծիրված այդ էջերը Փավստոսի ճարտասանության արդյունք են և գովք Մամիկոնյան հերոսին: Մակաբայեցվոց գիրքն է, որ աղբյուր է ծառայել մեր պատմագրի ոգևորության: Ոճը և բառերը մատնում են նրան: Հուդա Մակաբայեցին «հարկանէր», «ի գերութիւն վարէր զկանայս», պատանդս առնէր, և «զմնացորդս» «ի հարկի ծառայութեան կացուցանէր»: Ավելի բան չէ գտնում Փավստոսը ասել Մուշեղի մասին, քան կրկնել այս բառերը գրեթե միևնույն ձևով ամբողջ 12 գլուխներում, ուր իր հերոսի պատերազմական շահատակություններն է նկարագրում: Որ Փավստոսը գտնվում է Մակաբայեցվոց ազդեցության տակ, ինքը ևս չի թաքցնում և մի ուրիշ առթիվ հիշում է նրանց «ի նմանութիւն Յուդայ եւ Մաղաքեայ Մակաբէի անկան ի ճակատ պատերազմի»[1]:

Ամբողջ Ս. Գրքի մեջ մի անգամ է միայն պատահում «ի հարկի ծառայութեան կացուցանել» ոճը և այդ՝ Բ. Մակաբայեցվոց 8-րդ գլխում, որտեղից քաղում է Փավստոս և մյուս հիշածս բառամթերքը:

Որպեսզի խելահաս լինենք բուն իմաստին, մի միջոց կա և դրական միջոց, դիմել հույն բնագրին: Արդ հայ դարձվածքի դեմ հույնը ունի *καταδουλώσαντο*, այսինքն՝ ծառայեցուցին[2]:

Ասել է, թե խոսքը հարկատվության մասին չէ, այլ հնազանդության, ծառայության բերելու:

Եթե պ. Մանանդյանը փոխանակ Նորայրի հեղինակությանը (4) ապավինելու, բանար հույն բնագիրը, կարծում եմ, ձեռնպահ կմնար, մեր մեկնությունը անհաջող համարելու արտորանքից: Հարկ հայերեն չի նշանակում միայն «տուրք», այլև ավելի լայն իմաստով, «հարկադրանք»: «Ի հարկի ծառայութեան կացուցանել» նշանակում է «պարտավորացնել, հարկել ծառայելու», «ի հարկի ծառայութեան կալ», պարտավորվիլ ծառայելու:

Նույն դարձվածը առանց ծառայության, այլ լոկ «ի հարկի կացուցանել», «ի հարկի կալ», կամ «հարկիլ» ևս միևնույն նշանակությունն ունի, որ է ծառայել: «Ոչ եւս կայցեն նոքա ի հարկի օտարաց», կամ «թէ ոչ հարկեցէք արքային» հույնն ունի միշտ *ἐργῶνται*, *ἐργάζεσθαι*[3]:

Երբեմն **հարկ** թարգմանված է հույն *φόρος*, որ նշանակում է «տուրք, հարկ»: Ս. Գրքի մասնագետները, սակայն վկայում են, որ հույն բառը Յոթանասնից թարգմանության մեջ գործ է ածվում առավելապես ծանր աշխատանքի, բեկարի մտքով, համաձայն եբրայերենի **mas** բառին, մերթ փոխարինվելով *ἔργον* «գործ, աշխատանք» բառով[4]:

---

[1] **Փավստոս Բուզանդ**, Գ,11:

[2] **Ա. Մակաբ.**, Ը, 10:

[3] **Երեմիա**, Լ, 8 և ԻԷ, 9:

[4] **Vigouroux**, Dictionnaire de la Bible, II, 1030.

Հայերեն **հարկ** իր կրկնակի իմաստով լիովին ծածկում է հույն բառը: Նշանակալից է՝ «կացոյց զնա ի վերայ հարկաց բեռնակրաց», ուր հարկը է բեկար, **corvée:** «Արկ արքայ Սողոմոն մարդահարկ յամենայն Իսրայէլ, եւ էր հարկն երեսուն հազար արանց»: Մարդահարկ նշանակում է բեկարի ենթակա մարդ: Նույն միտքն ունի և հարկատուք բառը, որ կարդացվում է Մնացորդաց գրքի համապատասխան տեղում, «ած Սողոմոն ի հարկատուս»[1]:

Ս. Գրքի հետևությամբ Ղևոնդ պատմագիրն ասում է Եզիտի մասին. «հասանէր ի քաղաքն Կարնոյ եւ արկանէր **մարդահարկ** ի վերայ աշխարհին եւ հաւաքեալ զբազմութիւն անթիւ կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն եւ փոյթ յանձին կալեալ շինէր զխրամատեալ պարիսպ քաղաքին»: «Արկ Սողոմոն ընդ հարկօք ծառայութեան»[2] դարձյալ վերաբերում է ծանր աշխատանքի: Այսպիսով, ոչ «ի հարկի» և ոչ «ընդ հարկօք ծառայութեան» դարձվածները չունին այն իմաստը, որ տրամադիր է տալ պ. Մանանդյանը: Փարպեցու մի վկայությունը ևս չէ հաստատում իր տեսությունը: Պարսից թագավորը հրամայում է Աբրահամ և Խորեն երեցներին երթալ Ասորեստան, որ այնտեղ «մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն եւ **ի հարկի կայցեն** մինչեւ ցվախճանս իւրեանց»: Թագավորի պատվերը կատարվում է և երկու երեցների ականջները կտրում են և ղրկում Ասորեստան «կալ անդ նոցա ի հարկի եւ առնել մշակութիւն»: Խորենը մեռնում է աքսորում, իսկ Աբրահամը՝ տեղացի քրիստոնյաների երաշխավորությամբ, «որք զտունս իւրեանց եւ զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս ցվախճան նորա, եւ կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա», արձակվում է և գալիս Հայաստան:

Պարոն Մանանդյանի ըմբռնումով **ի հարկի կալ** նշանակում է հարկ տալ: Ասել է, թե հայ աքսորական քահանաները ոչ միայն արքունի մշակություն պիտի անեին, այլև պարտավոր էին հարկ տալ և ահա այդ հարկատվությունից նրանց ազատելու համար Ասորեստանի հավատացյալները գրավ են դնում կամ երաշխիք առաջարկում իրենց գույքը:

Սակայն հնարավո՞ր է արդյոք, որ տաժանակիր աշխատանքի դատապարտված աքսորականները դեռ հարկ էլ տան և ինչ միջոցներից: Փարպեցին ավելի զգաստ է, քան խորհում է պ. Մանանդյան: Նա պատմում է, որ աքսորյալ խեղճ երեցներն ապրուստի միջոց չունեին և նրանց պիտույքները հոգում էին տեղացի քրիստոնյաները հոժարակամ ընծայաբերությամբ: Ուրեմն ո՞րտեղից պիտի վճարեին այդ թշվառականները պետական հարկ, և ինչո՞ւ պիտի վճարեին, քանի որ հոգևորական լինելով չէին պատկանում հարկատու դասին:

---

[1] **Գ Թագաւորութեանց**, ԺԱ, 28 և Ե, 13= **Բ Մնացորդաց**, Ը, 8:

[2] Նույնը, Թ, 21:

Պարզ է, որ խոսքը հարկի մասին չէ և չէ կարող լինել: «Ի հարկի կալ», տեսանք, որ Ս. Գրքում նշանակում է ծառայել, մարմնավոր աշխատանք կատարել, կամ ինչպես պատմագիրն է ասում, «առնել մշակութիւն արքունի»: Այս է իսկական իմաստը «ի հարկի կացութեան»: Եղիշեն նույն պատմությունն անելիս ասում է պարզորեն, «կտրեաց զնոցա ունչս և ականջս և ետ տանել յԱսորեստան զի կայցեն **ի մշակութեան արքունի**»: Դարձյալ կրկնում է դահճապետի բերանով. «եղեւ հրաման պատուհասիդ ձերոյ եւ ի վերայ դորին պատուհասի՝ երթալ ձեզ յԱսորեստան եւ լինել ձեզ **մշակ** յարքունիս»: Մի ուրիշ անգամ Եղիշեն նրանց պատիժը կոչում է «արքունի պատուհաս»:

Արտաքին աղբյուրներից հայտնի է, թե ինչ էր արքունի մշակությունը: Այն, ինչ որ այժմ կոչվում է հասարակաց կամ հանրօգուտ աշխատանքներ, իսկ մեր ժողովուրդն կոչում է թագավորական բեկար: Ճանապարհներ շինել և պահպանել, ջրանցքներ բանալ և մաքրել, հեղեղների դեմ ամբարտակներ կանգնել, ուղևորների համար օթևաններ, կարվանսարաներ կառուցանել, կամուրջներ ձգել, աշխատել պետական և արքունի շենքերի վրա, գուցե և արքունի կալվածներում, նաև հանքեր մշակել, ահա մի շարք աշխատանքներ, որ կատարվում էին արքունի կոչված մշակների ձեռքով: Նրանք իրենց պետերն ունեին, գործի ղեկավարները, որ կոչվում էին կարիգպետ, ավելի հին ձևը լինելու է կարիկպետ: Ճիշտ այն գործավարներն են մարդահարկերի վրա նշանակված, որ հիշում է Ղևոնդ պատմագիրը իր վերև հիշածս խոսքերում:

Ահա այն մշակները, որոնց հետ պիտի լծվեին մարմնավոր տաժանքի նաև մեր երեցները: Պատմագիրը հավատացնում է, որ տեղացի քրիստոնյաներն իրենց երաշխավորությամբ ազատ կացուցին Աբրահամին ծանր պատուհասից:

Պարոն Մանանդյանը կարծում է, որ «համերաշխիքը այն հարկերի համար էր, որ նրանից ստացվելու էր մինչև նրա վախճանը»: Փարպեցին ուրիշ բան է ասում: Երաշխավորության գլխավոր կետը զանց է անում պ. Մանանդյանը, որ է «եւ կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա»: Քրիստոնյաները, ուրեմն, հանձն են առնում կատարել զկարգեալսն, այսինքն՝ զիրամայեալս ի թագաւորէն, ինչպես ասում է պատմագիրը սկզբում, այսինքն՝ այն հարկը, մշակությունը, որ ծանրանում է աքսորականի վրա: Որպես ապահովություն հանձնառության նրանք գրավ են դնում իրենց գույքը հարքունիս:

Ավելորդ չէ նկատել, որ Եղիշեն չի հիշում երաշխավորության հանգամանքը, այլ ասում է, որ Աբրահամը 12 տարի Ասորեստան մնալուց հետո դարձավ հայրենիք: Փարպեցին, ինչպես և Եղիշեն պատմում են, որ

Աբրահամն աքսորի ժամանակ երբեմն գնում էր Ապար աշխարհը կապույտ նախարարների տեսության, տանելով հետը նյութական նպաստ այն տուրքերից, որ տալիս էին նրան Ասորեստանի քրիստոնյաները: Երթևեկի այս ազատությունը ցույց է տալիս, որ աքսորական երեցը շնորհի էր արժանացել քրիստոնյաների երաշխավորությամբ թերևս սկզբից: Բայց ինչո՞ւ չէր վերադառնում Հայաստան, եթե ազատ էր արձակված: Թվում է, որ Ապար աշխարհ այցելելը և երաշխավորության խնդիրը պատմական իրողություն չեն: Սոսկ գովասանք, նրա անձնական առաքինությունը դրվատելու միջոց: Աբրահամի արձակումը կապ ունի գերյալ նախարարների դարձի հետ և երկուսն էլ հետևանք են ընդհանուր ներումի, որ տեղի ունեցավ Պերոզ թագավորի օրով:

Կասկածս, սակայն խնդրին չէ վերաբերում: Փարպեցու վկայությունը ամեն դեպքում պահում է իր արժեքը որպես հնարավոր կենցաղական երևույթ: Վիճելի ոճերը, «ի հարկի կացուցանել կամ կալ, ընդ հարկօք կացուցանել կամ կալ», չեն նշանակում հարկատու անել կամ լինել և ուրեմն խոսք չի կարող լինել և այն մասին, որ նրանք «հատուկ տերմիններ են»: Դրանց իմաստն է արկանել ի ծառայություն և կալ ի ծառայություն: Հարկ հարկանել, «արկանել ընդ հարկաւ, դնել ընդ հարկաւ», դնել հարկ, տալ հարկ, սրանք են հարկ նշանակող դարձվածները:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՈՐՏՈՒԹՅՈՒՆ

Մի կողմ թողած լեզվական խնդիրը, ոչ ոք կարե ժխտել, որ գյուղացին հարկ էր տալիս և կամ նա կարող էր ծառա կոչվել իր տիրոջ նկատմամբ, որպես իշխանը ծառա է թագավորի հանդեպ: Այլ բան է, եթե ծառա, իրոք, տեքնիկ բառ լիներ նախարարական իրավակարգում համազոր **servus:** Այս ավելի արժեք կ'ունենար, քան այն մատենագրական ցուցումները, որ բերում է պ. Մանանդյանը ապացուցանելու հայ գյուղացիության ճորտանման վիճակը: Տեսական արգելք չկա: Ֆեոդալականությունը բերում է իր ետևից servage որպես բնական ստվեր: Հայ նախարարական կարգը ևս ունենալու էր համապատասխան ստվերը, մի ենթադրություն, որ պետք ունի հաստատության, բայց որի համար պատմությունը զլանում է փաստեր տալ:

Ինչ ինչ վկայություններ, որ բերել եմ գրքումս որպես նպաստ սեպուհական իրավունքի լուսաբանության, պ. Մանանդյանն ուզում է օգտագործել ուրիշ նպատակով: Դվինի ժողովը 641 թ. տրտունջ է հայտնում, թե «յորժամ ազատք զիւրեանց զերդ և զմարդ բաժանեն, յոլովք չարակնութեամբ առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան **ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել**»: Եղիշեն պատմում է, որ Աղվանից թագավորը

«հաճեցաւ զսեպհական առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն առեալ էր հազար երդ»: Այս վկայությունը պ. Մանանդյան վերագրում է Մովսես Կաղանկատվացուն, մինչդեռ աղբյուրը Եղիշեն է, որտեղից քաղում է Կաղանկատվացին: «Երդերի և մարդկանց» բաժանումը, նրա կարծիքով ակնարկ է, որ գյուղացիները համարվում էին ազատների «հատուկ գույքը» և ուրեմն գտնվում էին ճորտանման վիճակում:

Այս ևս ճիշտ չէ: Երդ ու մարդ նույնն է, ինչ որ երդ, տուն: Ինչպես որ բաժանում էին գյուղեր, ագարակներ, կարող էին բաժանվել և գյուղի տները, երդերը: Բաժանումը ոչինչ չի ասում անձնական կապի մասին, որը միայն կարող է բնորոշել ճորտանման վիճակը: Ինչ վերաբերում է ազատների չարակնության, որով եկեղեցու ժառանգավորներին աշխատում էին ծառայության և ստրկության մեջ ձգել, պետք ունի տակավին ստուգության: Եկեղեցու ազատության մասին ճառերը հաճախ չափազանցություններ են, որ պետք է ընդունել զգուշությամբ: Եղիշեն ևս գանգատվում է, որ Հազկերտը «ազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն» և «միայնակեաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ աշխարհագրաւ էարկ»: Նույն հեղինակը **Միանձանց** ճառի մեջ ասում է. «ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց եւ սուրբ **քահանայք** նորա կոփին՝ **չարչարին յանօրէն հարկահանաց**»:

Սակայն, Բյուզանդիայում անգամ բարեպաշտ կայսրերի հովանավորության տակ, եկեղեցին բացարձակ ազատություն չէր վայելում: Եկեղեցին իր հողերի համար հարկ էր վճարում: Հարկ էին վճարում նաև մենակյացները, որի դեմ բողոքում է Բարսեղ Կեսարացին, համարելով անարդար[1]: Այլև 409 թվին հրատարակված մի օրենք, որ մտել է Հուստինիանոսի Օրինագրքի մեջ, ասում է, որ գյուղացին քահանա ձեռնադրվել կարող է միայն այն պայմանով, որ շարունակե վճարել իր հարկը կամ գտնե մի փոխանորդ, որ մշակե հողը նրա տեղ: Այս բանի համար պատասխանատու էր նրա տերը[2]:

Եթե աստվածապաշտ Թեոդոսիոս կայսրը, որի հիշատակը տոնում է եկեղեցին, կարող էր այսպիսի հրահանգ տալ, ավելի բան չէ կարելի սպասել չարագործ Հազկերտից: Հարկավ, կայսերական օրենքը խստությամբ չէր գործադրվում: Ինչպես ամեն օրենք, նա ևս գիտեր բացառություններ: Կային առանձնապես արտոնված կղերականներ, որոնք կամ թեթև հարկ էին վճարում, կամ իսպառ ազատ էին արձակված:

---

[1] **Migne, P G,** 32, col. 1019. **A. Piganiol,** L'impôt dc capitation sous le Bas-Empire, p. 60.

[2] C. J. I. 3, 16. **A. Piganiol,** p. 61.

Եթե Թեոդոսիոսի օրենքի տրամադրությամբ մոտենանք այն երևույթին, որ դատապարտում է Դվինի ժողովը, թերևս գտնենք, որ ազատների «չարակենությունը» որոշ իրավական հիմ ուներ: Արդարև, ահա իշխանական գյուղացին քահանա է ձեռնադրվում և հրաժարվում է իրեն հասանելիք հարկը վճարել այն հիմամբ, որ կան հին քահանայական տներ, ազատ հարկատվությունից: Իշխանը իրավունք ուներ ժխտել քահանայի հավակնությունը և նրանից սովորական հարկը պահանջել: Հարկատու վիճակը ծառայական է անշուշտ և Դվինի ժողովականները կարող էին ասել «արկանել ի ծառայութիւն», բայց ոչ «ի ստրկութիւն»: Իշխանական գյուղացին ամենավատթար դեպքում **servus** է և ոչ **sclavus**, որոնք տարբեր հասկացողություններ են: Ստրկություն բառը ժողովականների բերանում այլ բան չէ, եթե ոչ հակառակորդի անկշիռ չափազանցություն: Ամեն պարագային եկեղեցու ազատությունը կարոտ է ստուգման ավելի անաչառ աղբյուրների հիմամբ, քան են եկեղեցականների վկայությունները:

Կասկածելի է նաև պ. Մանանդյանի դիտողությունը Ղազար Փարպեցու մասին նույն ճորտության խնդրի առթիվ: Վահան Մամիկոնյանին գրած Թղթի մեջ Փարպեցին ասում է, որ ինքը հասարակ ոմն չէ և ոչ էլ «ծառայ ուրուք, քանզի պարեգօտաւորք ազատեալ են ի Քրիստոս. իսկ որ զատոյցն զիս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս եւ ազատութեան եղեւ մեզ առիթ, տէր Աղան, քո տեառն քեռի էր»:

Պարոն Մանանդյան ուզում է հասկանալ «ազատութիւնն» աշխարհային իմաստով, այսինքն՝ Փարպեցին գյուղացի տղա էր հարկատու, և Աղան Արծրունու շնորհիվ ազատվում է հարկատվությունից, անցնելով կրոնավորների դասը: Սակայն, այս բացատրությունը չի պարզում, թե Աղան ի՞նչ իրավունքով պիտի Ղազարին հաներ հարկատու վիճակից: Փարպի գյուղը Արծրունիների սեփականություն չէր, որ Աղան Արծրունին գործեր որպես տեր հանդեպ իր **ծառայի:** Նա սովորական մենակյաց էր, որ տակավին «ի տիս տղայութեան» քաշվել էր աշխարհի անցավոր վայելքներից «յանապատ» և ճգնողական խստամբեր կյանք էր վարում, գիշեր ցերեկ անդադար աղոթելով: Եկեղեցական վարչության մեջ դեր չուներ և ոչ էլ հարկավոր աստիճանը, որ կարծել տար թե նրա միջնորդությունը Ղազարի համար եկեղեցու անունով էր:

Մութ է մնում դարձյալ թե ի՛նչ գործ ունի Ղազարը Մամիկոնյան ընտանիքում, ուր տեսնում ենք նրան մանուկ հասակից, «սննդակից եւ խաղակից» Մամիկոնյան որեարների Վահանի, Վասակի, Արտաշեսի և Վարդի: Ինչո՞ւ պետք է Ձվիկ և Անուշվռամ, Արծրունի քույրեր, մեկը Մամիկոնյան, մյուսը՝ մեծ բդեշխի տիկին այնքան մայրական խնամք տածեին մի գեղջուկ տղայի:

Նոր մեկնությունը նոր դժվարություններ է հարուցանում: Հավանականն այն է, որ խոսքը աշխարհային ազատության մասին չէ, այլ հոգևոր: Կրոնավորի ուրեմն և Ղազարի աչքում, բոլոր աշխարհականները ծառա են, ազատ, թե գեղջուկ: Իսկական ազատը նա է, որ «ազատեալ է ի Քրիստոս», փրկված է «ի ծառայութենէ աշխարհիս»: Այդ ազատությունն երաշխավորում է պարեգոտը, հոգևոր կոչումը: Աղան, որի մոտ «սնեալ եւ ուսեալ է» Ղազարը, տալով նրան և պարեգոտ, դառնում է «ազատութեան առիթ»: Այսպիսով թեթևացրած կլինի Ղազարի վիճակը: Աշխարհից փրկելը ավելի դյուրին է, քան «ճորտությունից»:

Դժվար թե կարելի է ողջունել Խորենացու «փախչողք ի ժառանգութենէ» խոսքի նորալուր մեկնությունը: Ժառանգություն իբրև թե շինականների հողաբաժինն է այնպիսի ծանր պայմանների ներքո, որ նրանք չէին ուզում մշակել և գերադասում էին փախչելով ազատվել աշխատանքից: Նախ մեր Պատմահայրը շինականների մասին չէ խոսում, այլ ժողովրդականների, որոնց անվանում է «վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք»: Եթե ոչ վերջին երեք ածականները, գոնե առաջին երեքը ոչ մի կերպ չեն հարմարում ճնշված ճորտերին: Խորենացու Ողբը որպես մի քերթված վատ աղբյուր է պատմության, եթե է: Վարդապետներին, կրոնավորներին, վիճակավորներին, աշակերտներին, ժողովականներին, զորականներին, իշխաններին և դատավորներին վերագրած Աղամա յոթ մեղքերը նույնչափ ստույգ են որքան «տարերց փոփոխել զբնութիւնս իւրեանց»: Եթե մի բան կա, որ վերաբերում է հայ կյանքին այդ է «յօտարութիւն վտարումն ազատաց եւ անքիւ նեղութիւնք **ռամկաց**»:

Այս տողի հեղինակը չի կարող ամբաստանել, որ ռամիկը փախչում է իր հողից: Ավելի բնական է ըմբռնել ժառանգությունը սովորական իմաստով, այսինքն՝ որ «ժողովրդականք վէսք, ստահակք» փախչում էին հոգևոր կոչումից, չէին ուզում եկեղեցուն ծառայել:

Պարոն Մանանդյանի առարկությունը, թե եկեղեցականությունը արտոնյալ վիճակ է, ուստի անհեթեթ կլինի կարծել, որ նրանից խուսափում էր ժողովուրդը, անարժեք է: Արտոնության կից կա և ծանր պատասխանատվություն և պահանջ: Ահա Պապ և Աթանագինես թողնում են «հոգեւոր պատիւը», մերժելով «զանձինս իւրեանց **ի ժառանգութենէ** Աստուծոյ»: Ողբի իմաստն հենց այն է, որ մարդիկ այնքան փչացել են, որ հրաժարվում են անգամ հոգևոր բարձր կոչումից: Ճարտասանություն կամ դառնություն լցված սրտի:

Պարոն Մանանդյանի փաստերն այնքան փխրուն են, որ ոչինչ չեն ավելացնում այն լուկ տեսական թելադրության, թե հավանական է, որ Հայաստանում ևս ճորտանման վիճակ եղած լինի: Նա կարծում է, որ

ճորտությունը համատարած երևույթ չէ եղել, ոչ էլ ամեն տեղ միակերպ և նույնանման, այլ որ զանազան վայրեր ունեցել են իրենց առանձնահատկությունները: Պատրաստ է անգամ թույլ տալ, որ ճորտերի կից կարող էին լինել և ազատ գյուղացիության մնացորդներ: Առանձնահատկությունների գոյությունն ապացուցանելու համար վկայության է կոչվում Խորենացին: «Գիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց **առանձնականութեանց,** և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատենաք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն»[1]: Որոնելի առանձնահատկությունները պ. Մանանդյան գտնում է ընդգծած **առանձնականութեանց** մեջ:

Սակայն պ. Մանանդյան հաշիվ չէ տալիս իր մեկնության հետևանքի մասին: Հիրավի, գյուղեր, գավառներ և տներ ինչու պիտի վեճի բռնվեին իրենց առանձնահատկությունների առթիվ: Առանձնահատկություն ասածդ բնական խտրոց է, մի տեսակ **noli me tangere,** որ ընդհարման առիթ չունի: Պատմիչին երկու կերպ հասկանալ կարելի է: Կամ գյուղեր, գավառներ և մասնավոր տներ առանձին առանձին, մեկը մյուսի հետ և բոլորը միասին միմյանց դեմ հակառակություններ ունեին, և կամ ի նկատի ունենալով կոչումի վերջին մասը, պիտի կարծել, որ առանձնականությունք այն վեճերն են, որ ծագում են սեպուհական իրավունքի շուրջը ընտանիքից բաժանվել, **առանձնական** դառնալ, ցանկացողների միջև: Առանձնահատկությանց մասին այստեղ խոսք լինել չի կարող, որովհետև անհիմաստ է:

Պետք է խոստովանել, որ պ. Մանանդյան ոչինչ չէ կորցնում, եթե անգամ հրաժարվի իր մեկնությունից: Առանձնահատկությունները դուրս է գալիս, որ «չեն բացատում ճորտանման վիճակը, որ միևնույն բնություն պիտի ունենար Հայաստանի բոլոր շրջաններում»: Ասել է, թե հայտարարված առանձնահատկություններն այլ բան չեն, քան նույն ճորտական արտի խոտեր:

Հոդվածագիրը բացատրում է վերջապես, թե ինչ է հասկանում ճորտություն ասելով: Նա գտնում է իրավամբ, որ «ճորտ, ճորտություն բառերը բավականին ճապաղ և խառնաշփոթ գաղափարներ են»: Փորձում է պարզել: Դուրս է գալիս, որ առանձին շփոթ չկա, որ երկու տեսակ ճորտ է եղել, համաձայն երկու տարբեր տնտեսության, որ մի գերման գիտնական և նրա հետևությամբ մի ռուս (5) անվանում են Grund և Gutsherrschaft: Լսում ենք նաև, որ Հայաստանում առաջին տեսակի տնտեսությունը պիտի եղած լինի, այսինքն՝ որ նախարարները սեփական տնտեսություն չունեին, այլ ապրում էին ստացած հարկերով: Հետևում է ապացույց, քաղած Բուզանդից, դժբախտաբար անհաջող: Ներսեսը պատվիրում է թագավորին, մեծամեծներին և «ամենեցուն որ ոք ի վերայ ընկերին ունիցին

[1] **Մովսես Խորենացի**, Գիրք Ա, 3, էջ 7·

իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց **ծառայս** եւ ընդ **կրտսերս** եւ ընդ **աշակերտս**, սիրել իբրեւ զընտանիս եւ մի՛ անարժանս եւ աւելի տարապայմանս **հարկօք** նեղել քան զչափն, յուշ առնելով զի եւ նոցա տէր գոյ յերկինս»:

Կարծում ենք, որ այստեղ խոսքը հարկերի մասին չէ բնավ և ոչ էլ նախարարների: Պատվերն ուղղված է բոլոր նրանց, ով ստորադրյալ ունի առհասարակ, ինչպես տերը, որ ծառա ունի, մեծը, որ կրտսեր ունի, ուսուցիչը, որ աշակերտ ունի: Սրանց սաստվում է, որ ավելորդ նեղություն չտան, ավելորդ բռնություն չգործադրեն և մեղմ վարվեն փոքրավորների հետ: Հարկը այստեղ տուրքի իմաստ չունի:

Հարկավ անհաջող ապացույցը դեռ ապացույց չէ հակառակ դրության, որ նախարարները հարկ չէին ստանում, ինչպես և հարկ ստանալը ինքնին դեռ չի նշանակում, որ սեփական տնտեսություն չունեին: Երկու տեսակ տնտեսությունն իրար բացասող երևույթներ չեն, այլ կարող են կենակցել բարի հարևանությամբ:

Գերման գիտնականից պ. Մանանդյան լսում է, որ իսկական ճորտության աղբյուրը հենց սեփական խոշոր տնտեսությունն է, ուստի նրան հաճելի է, որ մեր նախարարները միմիայն հարկատու գյուղեր ունենան և ոչ սեփական տնտեսություն, որպեսզի կարելի լինի հանգել մխիթարական եզրակացության, որ «Հին Հայաստանի շինականներին պետք չէ համարել իրավազուրկ կամ ճորտ այդ բառի լրիվ իմաստով»: Իրավական մեղմ դրության պատճառն այն է, նրա կարծիքով, որ «խոշոր առևտուրը և առևտրական կապիտալը Հայաստանում չէին կատարում առանձին մեծ դեր գյուղատնտեսության նկատմամբ»:

Օտարոտի միտք: Որքան հայտնի է, առևտուրը և իր կապիտալը ջրկիրներ չեն ֆեոդալական ծառի համար: Ընդհակառակը նրանց բացակայությամբ է, որ հողը և կալվածատիրությունը ստանում է կապիտալի ուժ և նշանակություն:

Կամենալով մոտեն որոշել շինական դասի վիճակը, պ. Մանանդյան դիմում է Կանոնագրքին, մասնավորապես Շահապիվանի ժողովի կարծեցյալ կանոններին և տեսնում է, որ շինականներն իրավունք են ունեցել գույք ունենալ և ամուսնանալ առանց կալվածատիրոջ հաճությունն առնելու: Այսպես խնդիրը բավականին պարզված համարելով, կնքում է իր հոդվածը լավատես հայտարարությամբ, որ շինականների գրությունը «այնքան էլ, մութ ու անորոշ չէ, ինչպես մինչև այժմ կարծվել է»:

Բարեկամական ուշադրությամբ հետևելով քայլ առ քայլ Հ. Մանանդյանի հետազոտության, տարաբախտաբար, չեմ կարող հարել նրա հայտարարության: Չեմ տեսնում իրոք լուսաբեր շող, որ ընդհանուր տեսությունների վրայից անցնելով գար մտներ շինական երդիկից ներս և լուսավորեր նրա մթությունը: Մատենագրական նոր և փոքր ի շատե արժեքավոր նյութեր չկան սեղանի վրա: Կան հայտնի նյութերի օտարոտի մեկնություններ: Մատենագրական ցուցումները պահանջում են զգուշավոր վերաբերում: Նրանց արժեքը մերկացնելու համար բավական չէ սովորական համեմատությունը, հարկավոր է առաջնորդող լապտեր:

Հայ մատենագրությունը որքան և ծեր, ավելի մանուկ է, քան նախարարական կարգի հիմնական հյուսվածքը: Նրա վրա նստած է Արշակունի կնիք: Արևելքում ֆեոդալականությունը նույնքան հին է, որքան նրա պատմությունը: Բայց այն ֆեոդալ կարգը, որ տեսնում ենք Հայաստանում, գլխավորապես Արշակունի գործ է: Արշակունիների անկումից հետո բնական է, որ նրանց ստեղծած և հովանավորած իրավակարգը սկսվեր եղծվել, քայքայվել. Երբ հայ գիրը երևան եկավ, նախարարական շենքը արդեն փլված էր էապես. Չի կարելի ասել, որ անգամ անդրանիկ հայ պատմական գործերը փայլում են նախարարական նիստ ու կացի գիտությամբ: Լավագույն պատմիչը, Բուզանդ, կամ ժլատ է կամ շատ տեղյակ չէ: Արշակի շինարարության մասին խոսելիս պատեհ առիթ էր պարզելու այն կարգերը, որոնց վերականգնումը հատկացնում է Արշակին: Սակայն, ավելի բան չի գտնում ասելու քան այն, որ սպարապետությունը տրվում է Մամիկոնյաններին, հազարապետությունը Գնունի տան, որ շատ գործակալներ կային և որ բարձերի քիվը հասնում էր ինն հարյուրի:

Հայ անդրանիկ պատմական գործերում խրատական միտումները բավականին մթագնում են իրականությունը և ճոռոմաբան լեզուն հաճախ խեղդում է պարզ և շիտակ խոսքը: Պատմական կարևոր տերմինները կորցնում են իրենց անհատականությունը ճարտասանական խառնաշփոթի մեջ: Կանգնել նրանց երբեմնյան ուրույնության, որոշել նրանց տեղը հասարակական կազմի մեջ դժվար խնդիր է: Մատենագրական համեմատությունները բավարար միջոց չեն դրական արդյունքի հանգելու: Հարկավոր է ուրիշ օժանդակ մեթոդ, առաջնորդող տեսական հայացք:

Անշուշտ պ. Մանանդյան ունի տեսական հայացք, մշակված գերման գիտնական Կնապպի հետևողությամբ: Մեզ թվում է, որ վերջնի տեսությունը միակողմանի է: Պետք է հաշվի առնել նաև ֆրանսիական գիտունի Պիգանիոլի տեսակետը, թե **servage**-ի ծագումը որոնել պետք է ոչ թե

տնտեսության եղանակի մեջ, այլ վերագրել մանավանդ հարկահանության հատուկ սիստեմի[1]:

Թերի է նաև պ. Մանանդյանի դիրքը չինականության խնդրում, քանի որ ելակետ ունի միայն հարկատվությունը և անտես է առնում միանգամայն հողային սեփականության սկզբունքը:

Կոստանդին Մեծի ժամանակից «հեռուն չգնանք» կայսերական օրենքը զանազանում էր երկու տեսակ հողային սեփականություն, **territoria** և **possessiones,** այն է **պետական** հող և **կալվածական**: Ըստ հողի զանազանվում էին և գյուղացիք:

Տերիտորիայի վրա ապրում էր ազատ գյուղացիությունը, որ կոչվում էր **plebeius**, իսկ կալվածական հողերի գյուղացին կոչվում էր **colonus**: Պլեբեյուս գյուղացին սեփականատեր էր իր հողամասի և վայելում էր սեփականության իրավունքները լիովին: Իր հողային սահմանյալ հարկը հատուցանում էր անմիջապես պետության: Կոլոնը, ընդհակառակը, տեր չէր իր հողի, սեփականության իրավունքը պատկանում էր կալվածատիրոջ, ինքը գյուղացին միայն **tenancier,** «կալող կամ հողակալ» էր, և հողամասի համար հարկ էր վճարում ոչ միայն պետության, այլև առանձին հողավարձ կամ կապալագին էր տալիս կալվածատիրոջ, որ կոչվում էր սովորաբար canon: Կալվածական հողերի սեփականատերերն էին նախ արքայական տունը, հետո եկեղեցին, և վերջապես մասնավոր անձինք:

Կոլոնները անկախ իրենց հողային տերերից բաժանվում էին երկու կարգի: Պարոն Մանանդյան կամ իր առաջնորդ գերման գիտնականը (6) կարծում է, որ բաժանումը բխում է տնտեսական երկու տարբեր սիստեմներից: Առաջինը իբրև թե հողատիրական է, երբ կալվածատերը ստանում է միայն հարկեր, երկրորդը՝ հողատնտեսական, երբ կալվածատերը ինքն է մշակում հողը, բոնի աշխատել տալով գյուղացիներին, որտեղից իբրև թե սկիզբն է առնում ճորտությունը:

Այս հայացքը լոկ տեսական կերտված է: Պատմական իրականությունը կոլոնների զանազանությունն այլ կերպ է ներկայացնում: Կա երկու տեսակ կոլոն, մինն է **originalis**, «տեղական», մյուսը **inquilinus** «եկաբնակ». առաջինը հաստատված է մշտապես և ժառանգաբար հողի վրա, երկրորդը մշակում է հողը լոկ ժամանակավորապես: Առաջինը մուծված է հարկային ցուցակի մեջ **adscripti censibus** է, և պարտավոր է վճարել պետական հարկ, բացի կալվածատիրոջ հասանելի հողագնից: Երկրորդը չէ ցուցակագրված և հարկ չէ վճարում պետության, այլ որպես ազատ ձեռք իր հողային աշխատանքի համար ստանում է վարձ հողատիրոջից: Առաջինը կոչվում է այս պատճառով **adscripticius** «ցուցակագրված», երկրորդը՝ ազատ կոլոն:

[1] **A. Piganiol,** L'impôt de capitation sous le Bas-Empire, p. 61.

Ցուցակագրված կոլոնների դժբախտությունը սկսվում է այն օրից, երբ պետական գանձարանը հրահանգում է, որ կալվածատերերը պատասխանատու են իրենց կոլոնների հարկերի գանձման համար[1]: Կալվածատիրոջն է պատկանում հողը և ուրեմն նա է պատասխանատուն իր հողից պետության հասանելիք հարկի համար: Հեռանա գյուղից կոլոնը, ուրիշ ասպարեզ ընտրե, կամ մինչև իսկ մեռնի, միևնույն է, նրա բաժին հողի հարկը պարտավոր է վճարել կալվածատերը:

Այս օրենքն արդեն բավական է, որ կոլոնը կորցնե տեղաշարժի ազատությունը և մեխվի հողին: Կալվածատիրոջ անձնական շահը պահանջում է, որ չթողնե կոլոնին լքել իր հողը: Կոլոնը շղթայվում է հողին: Որպեսզի ապահովե տուրքերի գանձումը կալվածատերը հարկ է համարում ձեռք դնել գյուղացու գույքի վրա, պատրաստ գրավելու եթե գյուղացին թերանա իր պարտքը կատարել: Առաջ կոլոնը պետության հպատակ էր, այժմ դառնում է կալվածատեր անհատի հպատակ, անպաշտպան, ենթակա նրա կամքին: Նախկին **colonus** դառնում է **servus**:

Այս փոփոխությունը արձանագրված է արդեն IV դարի վերջերին: Արկադիոս և Հոնորիոս կայսրերը խոստովանում են, որ ցուցակագրված կոլոնները, **adscripti censibus**, գրեթե մատնված են ճորտության **quadam servitute dediti**:

Ազատ կոլոնների դրությունը ևս վատթարանում է: Օրենք կար, որ որդին ժառանգում է հոր վիճակը, լինի պլեբեյ, թե կոլոն: Անաստասիոս կայսրի († 518) օրենքով, մի կոլոն որ 30 տարի աշխատում է միևնույն կալվածում, չի կարող այլևս թողնել իր տեղը և մնում է կապված հողին[2]: Կարծում են, որ այս օրենքը վերաբերում է իսկապես ազատ կոլոններին: Սրանք համենայն դեպս չեն իջնում մինչև ցուցակագրված կոլոնների աստիճանը, պահելով որոշ ազատություն:

Հռոմեական վերջալույսի այս կարգերը հարատևում են բյուզանդական շրջանում: Փոխվում են միայն անունները: Սեփականատեր գյուղացիների հողերը կոչվում են *ὁμόκενσα*, կոլոններինը *ὁμόδουλος*, պլեբեյուս վերակոչվում է *χωρίτης* կամ *κύριος*· Ազատ ընդունում է ավելի որոշ անուն *μισθωτός* «վարձկալ կամ վարձավոր», իսկ հետագայում *μορτίτης* «բաժնեվոր», ցուցակավոր կոլոնը պահում է իր անունը հունական թարգմանությամբ՝ *ἐπανόφραφος:* Ութերորդ դարում Իսավրյան օրենսդրությամբ կոլոնները հայտարարվում են արձակ իրենց հողային կապյալ դրությունից:

---

[1] C. J. XI, 50, 2. **A. Piganiol,** L'Impôt ..., p. 83

[2] C. J. XI, 48, 19. **A. Piganiol,** p. 85.

Արևմտյան մեծ հարևանի գյուղացիության վիճակը կարող է ուղեցույց լինել մեզ համար և ոչ միայն տեսական նկատումով: Փոքր Ասիան անծանոթ երկիր չէ իրանական քաղաքակրթության: Աքեմենյան աշխարհակալների օրերից նա ենթակա է եղել Իրանի ոչ միայն քաղաքական իշխանության, այլև կրել է սատրապական տնտեսության ազդեցությունը: Փոքր Ասիական երկրները մտնում էին Դարեհի հարկային սիստեմի մեջ: Սելևկյան շրջանում ևս միևնույն տերերն էին և կառավարության միևնույն եղանակը: Սասանյանների ժամանակ անմիջական դրացիներ էին և փոխադարձ ազդեցության տակ: Խոսրով Նուշիրվանի նորոգումները, նրա մուծած հարկային նոր սիստեմը, կարծում են, պարզ ընդօրինակություն է Բյուզանդական կարգերի, որ հիմնված են Դիոկղետիանոսի ժամանակ և նրա ձեռքով:

Ընդհանուր նմանություն, շոշափման կետեր, հնարավոր են Բյուզանդիայի և Իրանական աշխարհի հարկատու ժողովրդյան դրության մեջ: Բյուզանդական կարգերը, որ շատ ավելի որոշ են և աներկբա, կարող են առաջնորդել գեթ ուղիղ շավղի վրա դնելու իրանական և նրա հետ հայ գյուղացիության վիճակի ուսումնասիրությունը: Մինչև Սասանյանների անկումը Հայաստանը մնում է, ինչպես էր, իրանական դասական քաղաքակրթության մանրանկարը:

Առաջին հարցը վերաբերում է հողերի տեսակին, ինչ որ կոչվում է «պետական» և «կալվածատիրական»: Որ Արշակունի թագավորական տունը ուներ սեփական հողեր, նախարարական տների նման, անտարակույս է: Սակայն դժվար է ենթադրել, որ ամբողջ երկիրը բաժանված լիներ թագավորի և նախարարների և ընդհանրապես ազատների միջև: Պետք է կարծել, որ հողի մեծագույն մասը պետական էր, ուրեմն թագավորական, բառի լայն մտքով: Առտնին կյանքում աչքի չէր ընկնում այս տարբերությունը, մանավանդ որ ամբողջ պետությունը և երկիրը կապված էր Արշակունի անվան: Ուստի մատենագրության մեջ ևս տարբերությունը չի նկատվում: Արտագերս բերդը, ըստ Փավստոսի, գտնվում է «յերկրին Արշակունեաց»: Ասել է թե կա Արշակունյաց երկիր, ինչպես կան Մամիկոնյան, Արծրունյան և այլ նախարարական երկրներ:

Մյուս կողմից՝ պատմագիրը գիտե ոչ միայն տերություն Արշակունյաց, այլև «տէրութիւն թագաւորութեան Հայաստան երկրի»[1]: Ի՞նչ է արքունի տունը և ոստանը, որպես հողային հասկացողություն: Արդյոք չե՞ն թաքցնում իրենց մեջ արքայական և պետական հողերի գրեթե մոռացված և ծուլված տարբերությունը:

Արշակունյաց տունը, ուրիշ բան չէր, եթե ոչ մի մեծ նախարարություն: Նա էր, որ կերտել էր մյուս տները ըստ պատկերի յուրում: Գուցեև

[1] **Փավստոս Բուզանդ**, Դ, գլ. 2:

արքայական տան և պետության հողերի հասկացողությունը մի էր և չէր զատվում միմյանցից: Սակայն, նրանց անկումից հետո տեսնում ենք ոստանիկ ազատներ, որ ժառանգել են բուն Արշակունի հողերը, կամ մի մասը: Մնացածը ճանաչվում է պետական սեփականություն, երբ վեհապետական իրավունքն անցնում է Սասանյան միապետներին:

Հիմք կա ամեն պարագային զանազանելու երկու տեսակ հող թագավորական և նախարարական, և կամ պետական ու կալվածատիրական, սրա մեջ հաշվելով արքայական տան, նախարարների և եկեղեցու հողերը: Տարբեր հողերը ենթադրում են և տարբեր գյուղացիներ: Արդյոք կարելի՞ է առաջանալ և տարբերություն տեսնել շինականի և ռամիկի մեջ, մեկը համեմատելով պլեբեյի հետ, մյուսը՝ մերձ համարելով կոլոնի[1]

Փավստոս խոսելով Արշակի գործերի մասին, ասում է. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն, աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած **դեհկանութեան**, շինականաշէն ազգն Գնունեաց, հազարապետն ամենայն երկրի»:

Նախադասությունը ճոռոմ է, բայց իմաստը պարզ է: Արշակ թագավորը սկիզբ է դնում կամ վերականգնում է հազարապետության գործակալությունը, այսինքն՝ պաշտոնը, և հանձնում է Գնունյաց ազգին: Հազարապետությունը «աշխարհատես խնամակալութիւն է», «աշխարհաշեն դեհկանութիւն», իսկ Գնունիք՝ շինականաշեն:

Ի՞նչ է նշանակում իրապես հազարապետություն, և ի՞նչ է դեհկանությունը: Պարսից դրան հազարապետը նույնն էր, ինչ որ վզուրկ հրամատար (ոչ հրամանատար): Հռչակավոր Միհրներսեհին, Հազկերտ II-ի մինիստրին, Եղիշեն անվանում է հազարապետ, մինչդեռ ինքը Միհրներսեհ իրեն կոչում է վզուրկ հրամատար <i> Երան և Աներան: Հրամատարը Սասանյան պետերի առաջին և գլխավոր մինիստրն էր: Նրա ձեռքի տակ էր և պալատական թիկնապահ գունդը, որտեղից ծագում է և նրա հազարապետ կոչումը: Պարսից հազարապետը ավելի արտաքին գործոց մինիստրի է նմանում, մինչ Հայոց մոտ թվում է, որ ներքին գործոց հետ կապ ունի:

Փավստոսի խոսքերից ակներև է, որ հազարապետին ենթակա էր շինականությունը, ուրեմն հարկերի գանձման հոգսը նրա վրա էր: «Շինականաշեն» Գնունյաց ազգի պաշտոնը կապվում է «դեհկանության»: Հինավուրց տերմին նոր բովանդակությամբ: **Դեհ**, որ ժամանակով նշանակում էր աշխարհ, հետզհետե սեղմվելով հանգում է գյուղի: **Դեհկանն** էլ,

[1] Վերոհիշյալ Սողղի **ռամական**-իկ բառը հավանորեն նույնն է, ինչ որ Գահնամակի **ռամական**-ը, որ նոր լույս է սփռում, **ռամական նամա** ցուցակի վերա. Նախարարական հեծյալների ցուցակն է այսպես կոչվում: Հիմ կա, ուրեմն, կարծելու, որ **ռամիկ, ռամական** նախարարական գյուղացիներն են, որոնցից կազմված էր այրուձին:

դեհի պետը, ազնվական բարձրությունից իջնում է մինչև հասարակ գյուղացու աստիճան:

Սասանյան շրջանում դեհկանը գյուղական փոքր կալվածատեր ազնվական էր, և երբեմն այնքան աննշան հողատեր էր, որ չէր տարբերվում սովորական գյուղացուց[1]: Հաճախ կառավարության ներկայացուցիչներն էին դեհկաններն իրենց տեղերում, որոնց հանձնվում էր առավելապես հարկերի գանձումը: Դեհկանի վարչական պաշտոնը մի կողմից և իր անձնական դրությունը, որպես գրեթե գյուղացի, մյուս կողմից թելադրում են կրկնակի իմաստ դեհկանություն բառի, հարկահանություն և շինականություն: Փավստոսի մոտ կարծես գործ է ածված դեհկանություն որպես հոմանիշ հազարապետության և ուրեմն հարկահավաքի իմաստով: Նույն հեղինակը հազարապետությունը հակադրում է սպարապետության: Մեկի տեսչության տակ է գտնվում շինականությունը, հարկատու դասը, մյուսը՝ տեր է զինվորական ուժերի, և գլուխ ազատ դասի, որի պարտականությունը հանդեպ արքայական գահի զինվորական ծառայություն էր և ուրեմն նրանց այրուձին կազմ ու պատրաստ պահելը սպարապետի գործն է:

Արդ եթե Արշակունի թագավորն առանձին հազարապետ ուներ հարկերը գանձելու համար, նա արքայական տան գյուղերի համար չէր: Այս դեպքում ամեն մի նախարարական տուն պետք է իր հազարապետն ունենար, ինչ որ անհավանական է, և որի մասին ակնարկ չկա մատենագիրների մոտ: Պետական հազարապետն ավելի լայն շրջանի շինականության համար էր: Եթե միայն արքայական գյուղերի տնտեսության հսկիչ լիներ, թագի անկումից հետո պիտի վերանար: Այնինչ, հազարապետության պաշտոնը մնում է և կոչվում է «հազարապետ աշխարհի»: Եղիշեն ավելացնում է՝ «իբրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից», որով հաստատվում է Փավստոսի խոսքերը, թե հազարապետը հարկատու դասի, աշխարհականության, խնամակալն ու հոգածուն էր:

Արշակունյաց անկումից հետո պարսիկները նոր աշխարհագիր են անում, հարկերի չափը որոշում և նշանակում պարսիկ հազարապետ: Նրանց ժամանակ և հետո պետք է ենթադրել, որ կար հոծ շինականություն, որ մշակում էր իր բաժին հողը որպես սեփականատեր: Կարող ենք անվանել ազատ շինականություն, նրանց գյուղերը **vici libri**: Մեծամեծ նախարարների, գավառապետների և գործակալների կից Փավստոս հիշում է «դասապետք շինականաց»: Սրանք վերաբերում են հավանորեն այս հողատեր շինականության[2]:

Պետական շինականությունից զատ է կալվածատիրականը կամ

---

[1] **Th. Nöldeke,** Tabari, վերջին գլուխը:

[2] **Փավստոս Բուզանդ,** Դ, 51

նախարարականը: Կլասիկ հեղինակները մռայլ գույներով են նկարագրում Իրանի գյուղացիությունը: Ամմիանոս Մարկելինոսը հավատացնում է, որ պարսիկ ազնվականությունն անգամ մահվան և կյանքի իրավունք ուներ ստրուկների և ժողովրդի վրա: Հեծելազորի ետևից ընթանում էր հետևակ խուժանը՝ մատնված մշտական ստրկության, **addicta perenni servitio**, կարծես զինվորական ծառաներ լինեին, **calones**[1]:

Ավելի հին պատմիչ Հուստինոսը բաժանում է պարթև հասարակությանը ազատների և ստրուկների, **liber** և **servi**[2]:

Անշուշտ գույները խտացած են և վերաբերում են հավանորեն ոչ բոլոր շինականության, այլ առավել իշխանական գյուղացիներին: Սրանք, իրոք, **servi** էին: Խուսափում են գործածել ճորտ բառը, որը թեև հազարամյա հասակ ունի, բայց մեզ զբաղեցնող շրջանի նկատմամբ շատ նոր բառ է: Հետաքրքրականը հենց այն է, թե ինչպես էին կոչում հնում, այն ինչ որ հետագայում ճորտ էր ասվում: Բառն ինքնին շատ բան կպարզեր գյուղացիների դրության մասին, ինչպես և ստրուկ բառի ստուգաբանությունը, որ տակավին անհայտ է:

Նույն Հուստինոսը պատմում է, որ պարթևական ազատները սովորություն ունեին պատերազմի տանելու իրենց սերվերին, նախապես ընտելացնում էին նրան զինական արվեստի և հեծելության: Կասկած չկա, որ խոսքը ազատների գյուղացիների մասին է: Հայոց մեջ ևս հիշվում է «ռամիկ այրուձի», «ռամիկսպաս զօրք», թերևս, «ռամիկ սպասզօրօք», որ հավանորեն կազմում էին նախարարների հպատակ գյուղացիները: Զինաշարժի վարժեցնել կամ ձի նստել սովորեցնել կարող էր իշխանը իր սեփական գյուղում և իր գյուղացիներին:

Տարօրինակ է, որ չի հիշվում երբեք **շինականի** այրուձի: Կարելի՞ է հետևեցնել, որ ռամիկը իշխանական գյուղացին է:

Արիստոտելին վերագրված, բայց ապահովապես նրան չպատկանող **«Տնտեսություն»** գրվածքում հիշվում են մի քանի տնտեսություններ, ի միջի այլոց սատրապականը: Սրա եկամուտների մեջ կարևոր է համարվում հողային հարկ *ἐκφόριος* և *δεκάτη*: Գիտնականները կարծում են, որ մեկը արքայական հողերի հասն է, մյուսը՝ պետական: Թերևս, ավելի ճշմարիտ կլիներ ասել, որ երկու տեսակ հարկը երկու կարգի գյուղերից է, սատրապական և պետական: Նույնը ասելու է և հայ սատրապների նախարարների նկատմամբ: Հայ հեղինակները վկայում են, որ նախարարները և ազատները ունեին **գյուղեր** և **ագարակներ**: Թե Արշակունի և թե

[1] **Ammianus Marcellinus**, XXIII, 6.

[2] Տես մեր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», էջ 385 (ռուսերեն):

Սասանյան թագավորները վարձատրել կամենալով իշխաններին պարգևում էին «գիւղեան և ագարագս»: Ագարակ ասելով պետք է հասկանալ այն հողերը, որ մշակում էին իշխաններն իրենք անձամբ, թե ծառաների միջոցով և որ կազմում էին նրանց անձնական տնտեսությունը: Փավստոսի պատմությունը Խաղի եզների մասին ցույց է տալիս, որ եկեղեցին ևս ուներ սեփական տնտեսություն, նմանելով նախարարական տներին: Եկեղեցին շատ կետերում նախարարացած էր:

Թվում է, որ նախարարների կամ տանուտերների հետ հաճախ հիշվող ազատները կամ **ազատանի**, կազմում էին հայ հողային ազնվականության ավելի ցած դասը: Ազատ բառը միայն ընդհանուր կոչում չէր նախարարականության դասի, այլ նշանակում էր նաև մանր ազնվականություն, նման Իրանի ազատներին:

Հավանական է, որ նրանք սկզբնապես Արշակունիների հետ Հայաստան տեղափոխված հաղթական Պարթև ընտանիքի զավակներն էին: Պարսիկ ազատները, ինչպես ենթադրվում է, արիական ցեղի մնացորդներն էին: Հայ ընկճված իրականությունը չի կարող այդքան հեռու գնալ և բարձրանալ մինչև Արմենները: Բառը պարթևական ծագում ունի և կրողներն ևս ամենայն հավանականությամբ Պարթև տոհմեր էին: Հետագայում սրանք կոչվում են հեծյալ, ինչպես որ Իրանի ազատները կազմում են Սասանյան շրջանում **aswar**, այսինքն՝ ձիավորների դասը: Ազատանի ապրում էր գյուղերում և խաղաղ ժամանակ զբաղված էր իր տնտեսությամբ և գյուղերով: Պարսիկ դեհկան ազնվականը դառնում է գյուղի քետխուդա և ի վերջո ձուլվում գյուղացիության հետ: Հայ ազատանին ևս նման բախտ է ունեցել:

Պատահական չէ և ոչ էլ գրական ճամփով է, որ հին տանուտերը եկել դարձել է հոմանիշ գյուղական քետխուդայի: Հասարակական վայրէջք է: Փավստոսին ծանոթ **Կարճազատները** հավանական կարապետներ էին վայրէջի վրա կանգնած ազատների: Արևելյան պահպանող ոգին հիմ է տալիս համեմատելու նրանց նոր ժամանակների մանր մելիքների և բեկերի հետ, որոնցից շատերը գյուղական քետխուդաներ էին և ուրիշները ոչնչով չէին զանազանվում գյուղացիներից, միայն ազատ էին հարկերից: Խոշոր նախարարական տները, նրանք որ «գաւառատեարք» էին և «կուսակալք, կողմնակալք», և կազմում էին փոքր իշխանական մարմիններ, գուցե և առանձին տնտեսություն չունեին: Հինգ հայտնի ինքնավար իշխանությունները, որոնց անկախությունը ճանաչված էր Պարսից և Բյուզանդիայի կողմից, կարող էին տիպար համարվել հայ մեծամեծ նախարարությանց, ոչ միայն բդեշխների, այլև Բագրատունի, Արծրունի և Մամիկոնյան տների:

Սակայն, երբ զարգանում է սեպուհական իրավունքը և նրա զորությամբ մեծ տները քայքայվում են և վեր ածվում մանր սեպուհական կենտրոնների,

պետք է ենթադրել, որ սրանք ոչ միայն տեր էին գյուղերի, այլև ունեին ագարակներ իրենց անմիջական խնամածության տակ:

Նախարարական կամ կալվածատիրական հողատիրության իրավական բնույթը իր մանրամասնության մեջ հայտնի չէ: Կան տեսակ տեսակ հողեր՝ հայրենի, պարգևական և սակագին: Սրանց հարաբերությունն անմիջական տերերի հետ կարող էր միակերպ չլինել: Երկրի վեհապետի դիրքը ևս սրանց հանդեպ մութ է:

Չի կարելի անգամ վստահել, որ նախարարական հողերը բոլորն էլ ազատ լինեին պետական ծանրությունից: Դվինի ժողովի կանոններից մեկը հայտարարում է, որ եկեղեցականները «ընդ ազատաց տոհմին են կարգեալ», որ եկեղեցու հողն ու ջուրը ազատ է, և երեցների տները «ի դիւանին եղեալ են, բայց միայն **զհասն տալ յարքունիս**»: Ասել է, թե ազատ հողը պարտավոր էր որոշ հաս տալ պետական գանձարանին: Այս ակամա խոստովանությունը կարևոր է: Եկեղեցին արտացոլում է նախարարական միջավայրի կարգերը և իր ազատությունը նախարարականի պատճեն է: Իրավունք ունինք կասկածելու, որ նախարարական հողերին ևս անծանոթ չէ եղել արքունական հասի վճարումը:

Այս պարագան նոր լույս է սփռում դեհկանների հարկահանության վրա: Ոչ թե Սասանյան բյուրոկրատիան էր նրանց հանձնել հարկերի գանձումը, այլ հին իրավունք էր, որ պահել էին փառքի վերջալույսին գեթ գյուղական նեղ շրջանում: Այս նշանակում է, որ պետական գանձարանը ստանալիք ուներ նաև նախարարական գյուղերից: Ուրիշ խոսքով Բյուզանդական կոլոնների նման նախարարական գյուղացիք վճարելու էին **canon** հողատիրոջ և որոշ հաս կամ հողահարկ պետության:

Եթե միայն ճիշտ է այս ենթադրությունը, կարելի է ասել, թե պատրաստ է այն դուռը, որ տանում է **կոլոնատից** դեպի **սերված**, միայն թե մյուս պայմանները ներեն: Այս պայմանների մեջ պետք է դասել ամենից առաջ հողի և բնակչության հարաբերական չափը. Գյուղացու շղթայումը հողին **հետևանք է այն երևույթի**, որ աշխատող մշակող ձեռքերն ավելի քիչ են եղել քան հողը և ավելի թանկ: Անընդհատ պատերազմների և այլ աղետների պատճառով Բյուզանդիայում բնակչությունը նոսրացել էր և բավական չէր յայնածիր տարածությունները մշակելու համար: Հողատերերի և պետության շահերը համերաշխաբար պահանջում էին չթողնել, որ հեռանան միանգամ ձեռք բերած աշխատող ուժերը, ուրեմն, գյուղացուն մեխել հողին և զրկել նրան տեղաշարժի և անձնական ազատության իրավունքից: Սրանով ստեղծվում է կոլոնի համար այն դրությունը, որ կոչվում է **սերված**:

Հայաստանում պակաս չէին սով, սրածություն և անթիվ կոտորածներ: Սակայն, որքան նվազում է ժողովուրդը, ավելի մեծ չափով պակասում էր և

հողատեր ազնվականությունը: Քաղաքական աղետների առաջին զոհերը ազատներն էին:

Մյուս կողմից երկրագործության պիտանի դաշտերը այնքան մեծ ծավալ չունեին, որ նրանց մշակման համար ձեռքերի սակավություն զգացվեր: Հիմք կա կարծելու, որ նախարարական կարգերի ծաղկման շրջանում միշտ հողն էր, պակաս քան մարդը: Վրացերեն լեզուն ունի **բռգանի** բառը, որ նշանակում է հողազուրկ գյուղացի, նման ռուսական «բոբիլ»-ի: Սա ուրիշ բան չէ եթե ոչ հայերեն բոկանի, որ երբեմն ունեցել է այդ իմաստը և իր հետ տարել է և պահել վրաց լեզվում: Կարևոր տերմին է թվում և ոչ սովորական բառ, և հին վկա սակավահողության: Հողի և աշխատանքի համեմատական չափը նպաստավոր պայման չէր, որ **սերվաժը** բողբոջեր Հայաստանում արևմտյան ֆեոդալականության հատուկ երանգներով:

Կարիք չկա նկատելու, որ այս բոլորը մութ հարցեր են, կարոտ տակավին հետաքննին լուսաբանության: Մեր անցողակի նկատողությունները վկայում են խնդրի բարդությունը[1]: Թափանցել հինը դժվար է, երբ նոր ժամանակների գյուղական հողային պայմանները, ո՛չ պաշտոնական, այլ սովորութային գծերը մնում են դեռ այնքան սակավածանոթ: Թերևս գտնվին ընթերցողներից հետաքրքրվողներ, որոնք կարձանագրեն գեթ այն միջավայրի, որտեղից ելած է, հողատիրական և հարկային առանձնահատկությունները: Գիտենք, որ այդպիսիները կան զանազան վայրերում և զանազանապես: Սրանով փրկած կլինեն ինչ որ կորուստի է մատնված և որոշ նպաստ կբերեն, թերևս, և անցյալի ուսումնասիրության (7):

[1] Նույն հարցերին է նվիրված և մեր հոդվածը՝ «L'Aspect iranien du servage», extrait du «Recueil de la Société Jean Bodin», Bruxelles, 1937 (8):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԸ

Երևանի «Գիտական տեղեկագրում» կա մի հոդված հայ անցյալին վերաբերյալ, բավականին մեծաքան վերնագրով, «Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկեհանքերի և նրանց տեղի մասին. տեղագրական ուսումնասիրություն» (1):

Հոդվածը պատկանում է պ. Ա. Խաչատրյանին, Սանասարյան դպրոցի նախկին ուսուցիչներից մեկին:

Հոդվածի ճակատը զարդարված է խրատաբանական քանդակով, առնված Վալդեմար Բելքից, որի միտքն է, թե «առանց ընդհանուր աշխարհագրական աղերսները գիտնալու» և «առանց տեղական մասնավոր հարաբերությունները ճշտելու» մարդ չի կարող արդյունախոս լինել աշխարհագրական խնդիրներում:

Մեծ իմաստություն չէ, հարկավ: Բայց մխիթարական է գոնե կարծել, որ պ. Խաչատրյան յուրացրել է այս իմաստությունը, և ուրեմն կարելի է հուսալ, որ տեղի վրա կատարած ուսումնասիրություն ունի և այդ ուսումնասիրությամբ հաջողել է վանել հայ բանասիրության երեսից ինչ ինչ աշխարհագրական կնճիռներ:

Հոդվածի մեծ վերնագիրը չպիտի շփոթե ընթերցողին: Խոսքը միայն երկու հույն պատմիչի մասին է, Ստրաբոն և Պրոկոպիոս, և սրանց վկայությունն էլ մեծ բան չէ, գրեթե **einsilbig**, ինչպես կասեն գերմանացիք: Ստրաբոն հիշում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին աչք է ունեցել Կաբալլայի ոսկեհանքի վրա, որ գտնվում էր Սի(ս)պիրիտի մեջ: Սի(ս)պիրիտ հայ Սպեր գավառն է և Կաբալլա այն տեղի անունը, ուր էր ոսկեհանքը նույն գավառում:

Ավստրիացի դպրոցական մի ուսուցիչ, Մոնցկա անունով, այն միտքն է հայտնել, թե Սի(ս)պիրիտ որոնելու է Հայաստանի հարավային սահմաններում, մեծ աշխարհակալի ճանապարհի մոտիկ: Մի անհատական կարծիք, անկարող խախտելու ինչ որ ընդունված է (2):

Պարոն Խաչատրյան մեծ աշխուժով արշավում է Մոնցկայի վրա և, այն ինչ սպասվում է, որ «տեղագրական ուսումնասիրությամբ» ջախջախե իր հակառակորդին, ընդհակառակն նա նահանջում է, «մի ավելի կարևոր առաջարկություն անելով ի նպաստ Մոնցկայի կարծիքի» և համաձայն է, որ Սի(ս)պիրիտ գտնվելու է Տիգրիսի ավազանում: Իսկ ոսկեհանքե՞րը: Ոչ, հանքերը թողնում է Սպերում, «մինչև որ չհաստատվի ոսկու հանքի գոյությունը» Տիգրիսի ավազանում:

Այսպես է սկսում և այսպես փակում հույն պատմիչի վկայության քննությունը: Եվ այս կոչվում է «տեղագրական ուսումնասիրություն»:

Սակայն, երևում է, որ պ. Խաչատրյանի ուսումնասիրության նյութը իսկապես Ստրաբոնը չէ: Կաբալլայի ոսկու խնդիրը նա հարուցանում է որպես մի մարզանք, մի տեսակ հեսաև, ուր սրում է իր գիտական միտքը, որպեսզի ավելի հաջողությամբ ճակատե մյուս պատմիչի վկայության շուրջ:

Պատմիչը Պրոկոպիոսն է և Մոնցկայի դերում մենք: Իր աշխատությունը վերջացնելուց հետո բավականին ժամանակ է անցնում, և պ. Խաչատրյան իմանում է, որ նույն խնդրով զբաղվել ենք և մենք (3): Դուրս է գալիս, որ «իրարից անկախ (մի՛տ առեք, քսանից ավելի տարի առաջ գրածս անկախ նրանից) երկուսս էլ, ինչպես հայտարարում է պ. Խաչատրյան, հանգել ենք երբեմն նույն եզրակացության, շատ կետերում էլ իրարից տարբերվում ենք»:

Արգո բանասերը բերում է մեր բացատրությունները, քննում է, հակասություններ է գտնում, ջրում, հերքում և հետևյալ դատակնիքն է արձակում.

«Հեղինակը չի կարողացել պատկերացնել տեղագրական պայմանները և արդեն առանց երկիրը անձամբ տեսած լինելու, կարելի չէ, մանավանդ երբ ուշադրության չառնվին աղբյուրների մանրամասնությունները, ինչպես եղել է այս դեպքում»:

Ահա ծանր ամբաստանություն, որից հետևում է, թե հոդվածի ճակատազարդ **motto**, Բելքի խոսքը, ուղղված է մեր դեմ: Մեղապարտ ենք, ուրեմն, որ տեղագրության ծանոթ չենք, և աղբյուրների մանրամասնիքը անտես ենք արել: Ասել է, թե այս երկու արատից զերծ է պ. Խաչատրյան, որ տեսել է երկիրը, ուսումնասիրել աշխարհագրական պայմանները, այլև լիովին օգտավետել է պատմական աղբյուրները իրենց մանրամասնությամբ:

Տեսնենք, որքան արդարացի են այս հայտարարությունները:

1. Պրոկոպիոս հույն պատմիչը հիշում է երկու աշխարհագրական կետ, **Bolon**, որ միշտ կոչում է **Phrourion** «բերդ», և **Pharangion**, որ երբեք չի կոչում բերդ: Առաջնի, Բոլոնի, համար ասում է թե գտնվում է Թեոդոսուպոլսի (որ է Կարին = Էրզրում) սահմաններին մոտիկ: Իսկ Փարանգիոն այն տեղն է, ուր կար ոսկեհանք, և շատ մոտ էր Վոհ կամ Ճորոխ գետի ակունքին:

Բոլոն բերդը ծանոթ է հայ մատենագրության: Սա այն բերդն է, որ Փարպեցին կոչում է Բողբերդ և դնում է Բասենում: Բասենը Կարինի թիկունքն է, և ուրեմն Պրոկոպիոս իրավունք ուներ ասելու, որ Բոլոն բերդը Կարինի սահմաններին մոտ էր:

Փարանգիոնը անծանոթ է մեր մատենագրության, բայց Պրոկոպիոսի այն ցուցումից, թե գտնվում էր Ճորոխի ակունքում և թե հայտնի էր ոսկեհանքով, պարզ հետևում է, որ խոսքը Սպերի շրջակայքում գտնված ոսկեհանքի մասին է, որովհետև Ճորոխի ակունքը իրոք գտնվում է Սպերի առջև

բարձրացող լեռների մեջ: Նույն տեղն է Փարանգիոնը, ինչ որ Ստրաբոնի Կաբալլա:

Լույսի պես պարզ է: Եվ այս ճշմարտության դեմ է ելնում պ. Խաչատրյան, առարկում է, հակասություններ է գտնում մեր խոսքերի մեջ, առանց նկատելու, որ հակասության աղբյուրն ինքն է, իր հիմնովին սխալ հասկացողությունը, որով պատմիչի հիշած երկու տեղերը ձուլում է, կարծելով, որ նրանք գտնվում են միևնույն տեղ իրար կից: Այս պատճառով էլ Փարանգիոնին է վերագրում, ինչ որ պատմիչն ասում է Բոլոնի մասին, և ընդհակառակը՝ Բոլոնին է տալիս, ինչ որ վերաբերում է Փարանգիոնին:

Հիմնական սխալ, որ փոշի է դարձնում ոչ միայն նրա առարկությունները, այլ և ամբողջ ուսումնասիրությունը:

«Պրոկոպիոս Բող և Փարանգիոն միշտ «անբաժան» է հիշում, գրում է պ. Խաչատրյան, և որոշակի ասում, թե ոսկեհանքը գտնվում էր **նրանց** մոտ: Իսկ Ադոնց ոսկեհանքը դնում է Սպերի մոտ, ուստի չէր կարող Բասենի սահմանների վրա գտնվել»:

Ո՛չ, պ. Խաչատրյան, Պրոկոպիոս այդ չէ ասում, այլ այն, որ ոսկեհանքը գտնվում է Փարանգիոն, իսկ Բող՝ Բասենում:

Տարբերությունը մեծ է:

Այս հանգամանքը զանց առնելով պ. Խաչատրյան գտնում է, որ մեր տեղագրական բացատրությունը չէ նպաստում խնդրի լուծման: Երեսը դարձնում է մեզնից և առաջարկում դիմել Պրոկոպիոսին, որ նրա տված մանրամասնությունների միջոցով կարողանա ճշտել ոսկեհանքի տեղը, քանի որ մեզ հանդիմանեց, որ ուշադրության չենք առել մանրամասնությունները:

Արգո բանասերը բերում է միառմի Պրոկոպիոսի տեղեկությունները: Հետևենք նրան: Գեղեցիկ առիթ է ծանոթանալու նաև նրա բանասիրական կարողություններին հետ:

Պրոկոպիոս ասում է, ըստ Խաչատրյանի՝

1. Հոռոմները «պահանջեցին պարսկական մի քանի բերդեր Պարսկահայքում, որոնք են Բոլոնի բերդը և Փառանգիոն անվանված բերդը, **որն** այն տեղում է (!), ուր պարսիկները ոսկի են հանում, որը տանում են արքային»:

2. Իսահակ Կամսարականը «Հոռոմներին հանձնեց Բոլոն բերդը, որը շատ մոտ էր գտնվում Թեոդոսուպոլսի սահմանին»:

3. **Պարսից թագավորը** «պահանջում է, որ հոռոմները պետք է վերադարձնեն Փառանգիոն և Բոլոն բերդերը (!)»:

4. «Հոռոմները վերադարձնում են պարսիկներին երկու բերդերը (!) Փառանգիոն և Բոլոն»:

5. Ճորոխի ձորը «շուրջ երեք օրվան ճամբա հարկատու է հոռոմներին,

սակայն, նրանից անդին սկսվում է Պարսկահայքի երկիրը (!) և այս տեղումն է ոսկու հանքը, որ Կավատի հրամանով մշակում է Սիմեոն անունը հայը... սա հոռոմներին հանձնեց իրեն և Փառանգիոն, բայց մերժեց հանձնել հանքի ոսկին»:

6. Վոհ կամ Ճորոխ «բղխում է Ծանի երկրից՝ շատ մոտիկ (!) այն հայերի միջից, որոնք բնակում են Փառանգիոնի շուրջը»:

Թողնենք առայժմ անճշտությունները, որ սպրտած են այս կետերի մեջ շնորհիվ պ. Խաչատրյանի անփութության: Բավականանանք անգամ նրանով, ինչ որ ինքն է առաջարկում: Տեսնք, ի՞նչ հետևություններ է հանում պատմիչի վկայություններից:

«Արդ այս տեղեկություններից նախ հետևում է,- դատում է պ. Խաչատրյան,- թե ոսկու հանքերը գտնվում էին սահմանի վրա Փառանգիոն և **Բոլոն բերդերին** շատ մոտ մի տեղում. երկրորդ՝ այս **բերդերը** մոտ էին Թեոդոսուպոլսի կամ Կարինի սահմանին. երրորդ՝ Ճորոխը բխում է Փառանգիոն բերդին(!) մոտակա մի տեղից»:

Աննշելի է մի բանասերի, մանավանդ, երբ քննադատի դերում է, այսպիսի արտասովոր անփութություն, որով պ. Խաչատրյան մեղանչում է իր իսկ բերած «մանրամասնությունների» դեմ:

Ոսկու հանքը գտնվում է **միմիայն Փարանգիոնում,** ինչպես վկայում են պ. Խաչատրյանի բերած առաջին և հինգերորդ կետերը: Բոլոնի մասին խոսք չկա:

Թեոդոսուպոլսի սահմանին մոտ է **միմիայն Բոլոն,** որպես վկայում է երկրորդ կետը, և ոչ թե «երկու բերդերը»:

Ճորոխը բղխում է Փարանգիոնի մոտակա տեղից, ինչպես կարելի է տեսնել հինգերորդ և վեցերորդ կետերից, և ոչ թե Փարանգիոն **բերդի** մոտակա տեղից: Եվ ընդհանրապես Փարանգիոն բերդ է անվանված անգլիական թարգմանության մեջ սխալմամբ միայն առաջին կետում, մյուս տեղերում երբեք Փարանգիոն չէ անվանված բերդ, ինչպես պնում է պ. Խաչատրյան:

Այս տխուր համեմատությունից մի բան է հետևում, որ հարգելի բանասերը բանասիրական աչք չունի և, եթե ունի, կանխակալ մի կարծիք կուրացրել է նրան: Շփոթելով երկու միմյանցից հեռու ընկած վայրերը, միացնելով մեկը մյուսի հետ, կապելով մեկի տեղադրությունը մյուսին, պ. Խաչատրյան ստեղծում է մի աշխարհագրական երկվորյակ և ճգնում որոնելու նրա տեղը: Եվ զարմանալին այն է, որ կարծում է, թե հաջողել է գտնել, և ո՞ւր, Թորթումի հովտում: Նախապես ցուցադրում է իր տեղագրական գիտությունը, որովհետև երկիրը տեսել է և հռչակավոր Սրտածորից շատ անգամ բարձրացել է Կուշկուշլար սարի գագաթը և հափշտակիչ զմայլումով դիտել հմայիչ և վեհաշուք համայնատեսլարանը:

Նայենք, ի՞նչ նոր բան է ասում, որ հայտնի չէր:

Առաջ հարկավոր է տեսնում ճշտել Հայաստանի հոռոմ-պարսիկ սահմանագիծը:

«Առանց մանրամասնությունների մեջ մտնելու, ասենք, թե Կարին և Շաղագոմ հոռոմներին էին, իսկ Բասեն և Ոքաղ պարսիկներին: Սրանց միջև բնական սահմանագիծն են կազմում, որոնց հետևում էր և քաղաքականը, նոր անուններով - արևելքից Բասեն գետի և Եփրատի ջրաբաշխ՝ Դեվե-Բոյուն-Քիրեջլի-Ղարղաբազար կամ Չորան-Դեղե լեռնային կատարները: Կարինի հյուսիսից Թորթում վտակի և Եփրատի մի կողմից, իսկ մյուս կողմից առաջնի և Վերին Ճորոխի ջրաբաշխ լեռները: Ղարղաբազարի հյուսիս-արևմտյան ծայրը... Կուշկուշլար գագաթն է, որի հյուսիսից երկարում է մի թև կապելու համար այս լեռնակույտը ուրիշ մի մեծ լեռնաշարքի՝ Զիարեթ-Ղազանբաշի և այլն, որոնք աղեղնաձև զատում են Թորթում գետի ավազանը Եփրատի և Ճորոխի ավազանից... Այս պատնիշաձև լեռնաշղթայի կատարներից ուրեմն անցնում էր հոռոմ-պարսիկ սահմանագիծը և Ճորոխի ձորը հավանորեն մինչև Օլթի գետի բերանը հոռոմներին էր պատկանում: Պատմական տեղեկություններն էլ գալիս են հաստատելու այս բնական սահմանագծի՝ քաղաքականի հետ նույն և մի լինելը: Փարպեցին հիշում է Գյուղիկ և Վարդաշեն» և այլն:

Այս է պ. Խաչատրյանի աշխարհատեսության արդյունքը:

2. Այժմ թող խոսի մեր հասակավոր գիրքը, որ քննադատվում է և ուր մանրամասն որոշված է բյուզանդական և պարսկական Հայաստանի սահմանագիծը սկսած Նփրկերտից մինչև Ճորոխի հովիտը:

Ահա ինչ է ասված մեզ զբաղեցնող աշխարհամասի վերաբերյալ (4).

«Թեոդոսուպոլսի շրջանում և այն կողմը սահմանագիծը անցնում էր այն լեռնաշղթայի վերայից, որ երկարում է Թեոդոսուպոլսից մինչև Ճորոխ գետը Էրզրումի աջ կողմից բարձրանում են դեպի հյուսիս նախ Դեվե Բոյունու լեռները, ապա Ղարղաբազար, որ վերջանում է Կանդիլ գագաթով և այստեղից շրջում է դեպի արևմուտք և միանում Դումլու շղթային: Դումլու ձգվում է Էրզրումի վերևից և շարունակվում է, ուղղվելով դեպի Ճորոխի ափերը Սպերից բարձր: Սույն այս գծին հարում էին Պարսից կողմից Բասյան և Տայոց աշխարհի Բուխա և Ոքաղ գավառները, սրանց դեմ ու դեմ Հոռոմ բաժնում էր Կարին և Շաղագոմ»:

Այնուհետև բերվում են նույն պատմական ցուցումները, Դու, Մկնաոհնճ, Գյուղիկ, Վարդաշեն, Ծաղիկ գյուղերի վերաբերյալ, սահմանագիծը պատմականորեն ևս հիմնավորելու[1]:

Ի՛նչ զանազանություն կա այս տողերի և պ. Խաչատրյանի նկարա-

[1] «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», էջ 22-23:

գրության մեջ: Եվ ոչ մի, թեև մեկը գրված է **քսան տարի առաջ** «առանց երկիրը տեսած լինելու», իսկ մյուսը պատկանում է երկրատես մարդու: Միակ տարբերությունն այն է, որ պ. Խաչատրյան չէ տալիս Դումլի լեռան անունը, այլ ծանրանում է նրա արևմտյան փեշերի վրա, որ անջատում են Ճորոխի ակունքը Սերչամից և սահմանագծի հետ առնչություն չունին:

Իրավունք ունեինք հուսալու, որ Կուշկուշլար լեռների մշտական այցելուն, որ Սանասարյան վարժարանի սաներին անգամ տանում էր հետը «հայրենագիտության ծանոթություններ ստանալու», գեթ մի հատիկ ծաղիկ բերեր հայ բանասիրության այդ լեռների բարձունքից:

Բայց և այնպես պ. Խաչատրյան ներկայացնում է իր տեղագրական նկարագրությունը որպես նորություն և այդ նկարագրությունից հետևում է, որ «Փառանգիոն և Բոլոն բերդերը պետք է փնտռել Թորթում գետի ավազանում», փնտռում և գտնում է, որ Վխիկ գետակի հովտում կան **Քաթդողոս** և **Բուլուլ** գյուղերը և խորհիմաստ հարց է տալիս. «Արդյո՞ք կարելի չէ այդ գյուղերի անուններում վերագտնել մեզ հետաքրքրող բերդերի անունները»:

Ոչ, կարելի չէ: Կատարյալ անհեթեթություն է ամեն նկատումով: Պրոկոպիոս ասում է, որ Փարանգիոն Ճորոխի ակունքումն է, բայց պ. Խաչատրյան ուզում է, որ Վխիկ գետահովտում լինի: Փարպեցին ասում է, որ Բողբերդ գտնվում է Բասենում, Խաչատրյանը փոխադրում է բերդը Վխիկ գետի ափը: Եվ ի՞նչ է պատասխանում Փարպեցուն:

«Արդյոք Փարպեցին սխալվո՞ւմ է դնելով Բողբերդը Բասենում, - խորհում է պ. Խաչատրյան, թե նույն անունով երկու բերդ կար՝ Տայքում և Բասենում»:

Եվ այս կոչվում է տեղագրական ուսումնասիրություն:

Իսկ Բարդողոս և Բուլուլ գյուղերը արդյոք ինչո՞վ են հայտնի, որ մեր բանասերի ուշադրությունն են գրավել: Անծամբ տեսե՞լ է, գաղափար ունի՞ նրանց դիրքի մասին: Ո՛չ, նրանց անունները կարդացել է ի. Սարգսյանի քարտեզի վրա (5): Գոնե ստուգե՞լ է, իրավ այդպիսի անուններով գյուղեր կա՞ն: Դարձյալ ո՛չ:

Ահա Ռիխարդ Կիպերտի նշանավոր քարտեզի վրա Բարդողոսի փոխարեն կարդացվում է Պարտոնս: Ո՞րն է ճիշտ: Ինչո՞ւ է պ. Խաչատրյան կանգ առել այդ երկուսի վրա, քանի որ Վխիկ գետակի հովտում կան և ուրիշ նման գյուղեր գուցե և ավելի հարմար ամրոցային դիրքերով: Թերևս այնտեղ ոսկեհանք կա, որ գայթակղել է պ. Խաչատրյանին: Ո՛չ և ո՛չ: Լոկ լեզվագիտական հաշիվներն են, որ բերել են նրան Բարդողոս և Բուլուլ գյուղերի մոտ և սրանց «անուններում ուզում է» վերագտնել Փարանգիոն և Բող բերդերի հիշատակը:

Սակայն, պ. Խաչատրյան, որպես հայոց լեզվի հնամյա ուսուցիչ, պիտի

գիտնա, որ հ. Սարգսյանի գրչի Բարդողոս և Բուլուլ կարդալու է Պարտողոս և Պուլուլ: Արդ, ի՞նչ խալիֆայական լեզվագիտություն է հարկավոր, որ նմանություն տեսնե այս և Փարանգիոն և Բող անունների մեջ:

Այսպիսով բանավոր հիմք չկա Բողբերդը և ոչ էլ Փարանգիոնը տեղահան անել և քաշել Թորքումի հովիտը, մեկը՝ Բասենից, մյուսը՝ Սպերի մոտերքից:

Այս սխալն արված է երկու մոլար ենթադրությամբ: Իբրև թե Բող և Փարանգիոն միշտ «անբաժան» են հիշվում, ուստի պետք է որ իրար հարևան լինեին: Երկու վայրերը անբաժան են քաղաքական բախտով, բայց ոչ աշխարհագրապես:

Պրոկոպիոսը, տեսանք որ, նրանց տեղագրությունը տալիս է անջատ և միմյանց հետ չէ շփոթում: Ինչ վերաբերում է քաղաքական բախտին, ոչ միայն նրանք իրար հետ էին կապված, այլ և Լազիկեի զույգ բերդերին՝ Շարապանի և Սկանդայի հետ, որ իրարից և հայ վայրերից հեռու էին:

Մյուս թյուր ենթադրությունն է, որ Սպեր հոռոմներին էր պատկանում, ուստի Փարանգիոն չէր կարող այնտեղ լինել, որովհետև սա պարսից բաժնումն էր:

Թվում է, թե Սպեր ասելով պ. Խաչատրյան միշտ հասկանում է Սպեր քաղաքը: Մինչդեռ խոսքը մի դեպքում գավառի մասին է, մյուս դեպքում քաղաքի շրջակայքի: Գիտենք, որ Սպեր գավառը պատկանում էր հոռոմներին: Խորենացին չհաշված (Գիրք Գ. 43), մեր գիտության միակ աղբյուրը Պրոկոպիոսն է, նրա այն վկայությունը, թե Ճորոխի հովիտը երեքօրյա ճանապարհ արևմուտքից դեպի արևելք հոռոմական հող էր: Բայց եռօրյա ուղին մինչև ո՞ւր էր հասնում, հայտնի չէ:

Մենք հավանական ենք համարել, որ հոռոմ-պարսիկ սահմանագիծը ծառայել է հիմ և սահման Տայոց աշխարհի և Բարձր Հայքի: Եվ որովհետև Սպերը մտնում է Բարձր Հայքի մեջ, ուրեմն պատկանում էր հոռոմներին:

Մյուս կողմից՝ Տայքի մեջ էր Ասյացփոր «աս Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Յոհ գալով ի Սպերայ»: Որով Սպերի և Տայքի սահմանագիծն ընկնում է մոտավորապես Սպեր քաղաքի մոտերքը: Այս քաղաքը հայտնի չէր հնում, արդյոք Սմբատավա՞նն է, որը Վարդանը նույնացնում է սխալմամբ Բաբերդի հետ:

Այսպիսի պայմաններում ոչ թե Սպեր քաղաքն է, որ պիտի լուծե հոռոմ-պարսիկ սահմանագծի խնդիրը, և սրա հետևանքով որոշե Փարանգիոնի դիրքը, այլ ընդհակառակը: Փարանգիոնի տեղագրությունը այնքան որոշ է Պրոկոպիոսի մոտ, որ սա պիտի հիմն ծառայի սահմանագիծը ճշտելու Սպերի շուրջը:

Խաչատրյան այնքան վստահ է իր գիտության, մասնավորապես Սպերի վերաբերյալ, որ պետք չէ զգում քննության և զլանում է անգամ պարզել իր գիտության աղբյուրները:

Հիշելու է նաև, որ Փարանգիոն գտնվում էր ուղիղ սահմանակից լեռներում և ոչ թե պարսկական հողի վրա: Պարոն Խաչատրյանին անծանոթ են մնացել երկու ուրիշ հույն պատմիչներ՝ Մալալա և Թեոփանես, որ կարևոր տեղեկություններ են հաղորդում ոսկեհանքի մասին և լրացնում Պրոկոպիոսին: Սրանց տեղեկությունը բերված է մեր գրքում[1], որ սպրտել է, թերևս, մեր քննադատի ուշադրությունից:

Մալալա պատմում է, որ ոսկեհանքը գտնվում էր պարսկական սահմանի լեռներում, որ անձրևի և հեղեղի ժամանակ հողը իջնում էր և մերկանում ոսկու ավազը: Հանքը տալիս էր տարեկան երկու հազար լիտր ոսկի: Մալալա հավատացնում է, որ Անաստասիոս կայսեր ժամանակ ոսկեհանքի լեռները անցան կայսրության, և սա էր միայն վայելում հանքերի հարստությունը, մինչդեռ առաջ **պարսիկները** և **հռոմեները միասին** կապալով էին տալիս մասնավոր անձանց: Ասել է թե եկամուտը բաժանում էին:

Ոսկեհանքը հռոմեները գրավեցին 527 թվին և պահեցին մինչև 532 թիվը: Պատմիչը չփոթել է գրավման ժամանակը: Բայց իրողությունը մնում է իր ուժի մեջ, որ մինչև գրավումը ոսկեհանքից օգտվում էին երկու պետությունները:

Թեոփանեսը հաստատում է Մալալայի խոսքերը, ասելով, որ առաջին ժամանակները հռոմեները և պարսիկները ստանում էին ոսկեհանքից մի մի տաղանտ, իսկ այժմ օգտվում են միայն հռոմեները:

Արդ՝ այս միացյալ տիրապետությունը, եթե անգամ եղած լինի ժամանակավորապես, ցույց է տալիս, որ ոսկեհանքը զուտ պարսիկ հողի վրա չէր, այլ իրոք, սահմանի շերտում, համաձայն Պրոկոպիոսի նկարագրության: Հետևապես ոչ մի հիմ չկա որոնելու ոսկեհանքի տեղը Թորթումի հովտում:

Հավաստին այն է, որ նա գտնվում էր Թորթումի ավազանը զատող Ղազան լեռնաշղթայի արևմտյան փեշերի վրա, ուր սկիզբ է առնում Ճորոխ, Սպերի դեմ առ դեմ: Ճորոխի ակունքը բաժանվում է նույն գետի հովտից Սպերի մոտ Խորտուկ կոչված լեռներով: Այս լեռներն այժմ էլ հռչակված են իրենց հանքերով: Խորտուկ գյուղի մոտ կա արծաթահանք[2]:

V. Cuinet (Ա, 149) վկայում է, որ Սպերի արծաթահանքը մշակվում է ցարդ: Մի այլ տեղեկությամբ, Սպերը ժամանակով հանքային հարստության կենտրոն էր և անվանված են Կիան, Սուլեյմանբար, Սեմարիկ գյուղերը, ուր արծաթե հանքեր կան[3]:

Մեզ այնպես է թվում, որ եթե մի օր պ. Խաչատրյան Կուշկուշլար սարի

---

[1] «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», էջ 198:

[2] **Launey**, La Géorgie et les richesses minerales de l'Asie, էջ 651՝ Խորտուկ կոչված է Խորտակոլ:

[3] **Murray**, Handbook Asia Minor, էջ 214:

հմայիչ տեսարանից զրկեր իրեն և իջներ Սպերի ձորը և այս տեղերի նկարագրությունն աներ, շատ ավելի մեծ ծառայություն մատուցած կլիներ հայրենագիտության, քան զբաղվել հույն պատմիչների քննությամբ, որ երբեք արդյունավետ չի կարող լինել, քանի որ անգետ է բնագրի լեզվին: Քննելի հեղինակի լեզուն գիտնալը առաջին և անհրաժեշտ պայմանն է, որ քննությունը լինի եթե ոչ ուղիղ, գոնե անկախ և գիտակցական:

* * *

Հակառակ որ մենք հատկապես շեշտել ենք, թե Փարանգիոն բերդ չէ, պ. Խաչատրյանը իրավունք է համարում ասել.

«Պրոկոպիոսի անգլիացի թարգմանիչը, որից օգտվում ենք և մենք, **միշտ** էլ բերդ գիտե թե՛ Բոլոն և թե՛ Փարանգիոն»:

Սրանով ամբաստանում է և անգլիացի թարգմանչին: Երկու մեղք է գործում, նախ թարգմանչի դեմ, հետո թարգմանչի հետ Պրոկոպիոսի դեմ:

Փաստ է, որ անգլիացի թարգմանիչը միայն մի և այն առաջին անգամ բերդ է կոչում Փարանգիոն, այնուհետև նույն անունը պատահում է վեց թե յոթ տեղ և **երբեք** բերդ չի անվանում, այլ համաձայն բնագրին միայն Փարանգիոն:

Ունենալով ձեռքի տակ մի հրատարակություն, ուր մի էջի վրա հունական բնագիրն է, և դեմ ու դեմը մյուս էջում անգլերեն թարգմանությունը, պ. Խաչատրյան անզոր է ոչ թե միայն թարգմանությունը ճշտել, այլ անգամ թարգմանության հետևել բարեխղճորեն և առանց աղավաղելու:

Պրոկոպիոս ասում է, որ հոռոմները գրավեցին «Choria, phrourion to Bolon kai to Pharangion kaloumenon», որ է «(երկու) վայրեր բերդն Բոլոն և Փարանգիոնն կոչեցյալ՝»:

Անգլիացի թարգմանիչը հասկացել է և «Փարանգիոնն կոչեցյալ **բերդն**, phrourion», մինչդեռ իսկական իմաստն է և Փարանգիոնն կոչեցյալ **վայրն**, **chorion**: Այսինքն՝ եթե պետք կա լրացնելու բնագիրը, ավելացնելու է **խորիոն** և ոչ **ֆրուրիոն**, քանի որ երկու վայրերը **choria** են կոչված:

Սխալը լեզվական չէ, այլ իմաստի: Ինչ որ ներելի է թարգմանչին, ներելի չէ հետազոտողին: Պատմիչն այնուհետև քանիցս հիշատակում է նույն անունները և Փարանգիոն, հիշվում է առանձին թե Բոլոնի հետ, երբեք բերդ չէ անվանվում, մինչդեռ Բոլոն միշտ բերդ է մնում:

Այս վայրերի հետ պատմիչը հիշում է և սրանց բախտակից լազական զույգ բերդերը՝ Շարապան և Սկանդա, և միշտ գործ է ածվում երկուսի համար **phrouria** «բերդեր» և առանձին **phrourion** «բերդ»:

Դարձյալ, հիշված «Փարանգիոնն կոչեցյալ» բառերին հետևում է անմիջապես, *Οθεν δὲ χρύσον ὀρύσσοντες*, այսինքն՝ «որտեղից հանում էին ոսկի»: Անգլիացին թարգմանում է ճիշտ՝ **which is the place** և այլն:

Պատմիչն այնքան տխմար չէր, որ կարծեր, թե բերդի մեջ հանքագործությամբ էին պարապում: Եվ վերջապես ի՞նչ է նշանակում պատմիչի բացառիկ դարձվածքը՝ «այսպես կոչեցյալ Փարանգիոն», որ գործ չէ ածում ուրիշ տեղ անունների վերաբերյալ:

Այս դիտողություններից եզրափակել էինք, որ Փարանգիոն թերևս հենց «հանք» է նշանակում և փորձել էինք համապատասխան ստուգաբանություն տալ, համեմատելով **farhangion** հայ-իրանյան **հրահանգ** բառի հետ:

Այս առթիվ լեզվագետ Խաչատրյան նկատում է, որ «հրահանգին տալիս ենք այնպիսի նշանակություն, որ այս բառը չունի բնավ ոչ պարսկերենում և ոչ հայերենում», և որ «ներելի չէ բառերին տալ այն իմաստը, որը կամենում ենք ունենալ, բոլորովին անտեսելով նրանց բուն նշանակությունը», և վերջապես «հնչական պահանջները ևս նկատի չեն առնվել»: Եվ այս ասում է այն մարդը, որ Փարանգիոն վերագտնում էր Բարդղոսի մեջ:

Զարմանալի են այս ինքնաբավ առարկությունները: Պարթև **frahang** բառը տալիս է հայերենում **հրահանգ**, և պարսկերենում **farhang**, ինչպես որ **frahat** պարթև անունը դառնում է հայերենում **Հրահատ** և պարսկերենում **Farhad** կամ պարթև **framan**, հայերեն **հրաման**, պրսկ. **farman**: Հնչական թերություն տեսնել այստեղ, նշանակում է հասկացողություն չունենալ հնչաբանության մասին:

Ինչ վերաբերում է բառի իմաստին, պ. Խաչատրյան ևս սխալվում է անպատասխանատու պարսկագիտությամբ: **Farhang** շատ նշանակություն ունի. ի միջի այլոց այդպես է կոչվում **canalis subteraneus**, ինչպես կարելի է տեսնել Վուլլերս հռչակավոր պարսիկ-լատին բառգրքից: Նույնը հաստատում է Յենկերի բառգիրքը, մեկնելով որպես **unterirdischer Gang oder Canal**: Ներկայումս պարսիկները հանքին ասում են **kan**, որ արմատակից է հայ **ակն** բառին և նշանակում է ստուգաբանորեն ստորերկրյա կամ գետնափոր անցք, նման ֆարհանգի, այլ և «գետնափոր ջրանցք», այն որ Էջմիածնում կոչվում է քանքան: Նույն արմատից է նմանապես ավելի սովորական **kahriz** քահրիզ բառը ջրանցքի իմաստով, այլ և **farghan** ջրանցք:

Արդ եթե **kan** «գետնափոր անցք», նշանակում է միևնույն ժամանակ և **հանք**, ինչո՞ւ **farhang** = «գետնափոր անցք», չէր կարող գործ ածվել նմանապես հանքի մտքով: Անշուշտ, կարող էր: Դարձյալ պարսկերեն **kani** նշանակում է հանածո, նույն իմաստը կարող ենք ենթադրել և **farhang** ձևի համար: Ավելացնելով հունական **on** վերջավորությունը կստանանք **farhangion**. հնարավոր է նաև, որ **ion** վերջավորությունն ամբողջապես հունական է: Կարծում ենք, պ. Խաչատրյանի վերամբարձ ընդդիմախոսությունը անհիմն է:

3. Նույնչափ անտեղի են և պ. Խաչատրյանի ճառերը Բողբերդի խնդրում:

Տեսանք, որ Փարպեցին Բողբերդը դնում է Բասենում, իսկ Պրոկոպիոսը Կարինի սահմանների մոտ:

Պարոն Խաչատրյան հարկ է տեսնում մեզ ուսուցանելու, որ այս երկու ցուցումները իրար հակադիր չեն, որ բերդը կարող է լինել Բասենում և Կարինի մոտ: Բայց ո՞վ ասաց, որ այստեղ հակադրություն կա: Արգո բանասերի խրատն ամենից շատ իրեն էր պետք, որպեսզի Բողբերդը Բասենից Թորքում չտաներ:

Բողբերդի անունը չէ պահվել և տեղն անհայտ է: Մասնավոր հետազոտում տեղի վրա մի օր թերևս վեր հանի արձանագրության կամ մի այլ նշանի միջոցով հինավուրց բերդի հետքերը: Առայժմ միայն ենթադրություններ կարող ենք լինել:

Ներկայումս Բասենի նշանավոր բերդն է Հասան-Կալե: Հին Բողբերդը թվում է, որ մի տեսակ հակակշիռ էր պարսից հողի վրա ընդդեմ բյուզանդական Կարինի: Ուստի հավանական է, որ նա գտնվում էր Հասան-Կալեի տեղը և ուներ այն ռազմագիտական նշանակությունը, որ փակում էր գլխավոր ուղին, որ գնում էր Կարինից դեպի Պարսկահայաստանի միջնաշխարհ Այրարատյան դաշտը:

Սակայն, մի քանի դիտողություններ դրդել էին մեզ ընդունել, որ Հասան-Կալեի տեղը եղել է Վաղարշակերտ անունով մի քաղաք:

Ներսես Շինողի համար ասված է, որ «զՎաղարշակերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց»: Կոստանդին կայսրը գալիս է իջևանում Կարնո դաշտում և նրան ներկայանում է Վաղարշակերտի վրաց եպիսկոպոսը: Կայսրը Բասենի Սալքորա գյուղում եղած ատեն, նրա մոտ է գալիս դարձյալ Վաղարշակերտի եպիսկոպոսը, անունը Զաքարիա:

Վրաց եպիսկոպոսի ներկայությունը խոսում է հօգուտ Բասենի և ոչ Բագրևանդի Վաղարշակերտի: Կարինն և Սալքորա վազող եպիսկոպոսը ևս, թվում է, թե նստած էր Բասենում, քան Բագրևանդում: Վրաց քաղաքական և կրոնական ազդեցությունը զորանում է Տայքում և նրա շրջապատում , մանավանդ Դավիթ Կյուրապաղատի իշխանության ժամանակ: Դրացի Բասենը կարող էր այդ ազդեցության ենթարկվել և անգամ վրացի եպիսկոպոս ունենալ: Իսկ հեռավոր Բագրևանդը դուրս է վիրական հավակնության շրջաններից:

Ներսես Շինող եպիսկոպոս էր Տայոց և ծննդյամբ Տայքի Իշխան գյուղից: Կաթողիկոսանալուց հետո, երբ գժտվեց Թեոդորոս Ռշտունի իշխանի հետ, քաշվեց Տայք, և մնաց վեց տարի: Նրա շինարարության արդյունքն է թերևս Բասենի Ս. Աստվածածին եկեղեցին, մոտ Հասան-Կալեի, և ոչ Բագրևանդի Վաղարշակերտի համանուն եկեղեցին:

Այս խորհրդածությունները ակամայից ծնում են մի ենթադրություն, որ

Հասան-Կալեի Ս. Աստվածածնի մոտ Վաղարշակերտ անունով քաղաք է եղել. և այս քաղաքը զատելու է և Վաղարշապատից, և՛ Բագրևանդի Վաղարշակերտից:

Պարոն Խաչատրյան, որ մեր գրքի կոչումներից կարող էր կռահել գործի էությունը, գերադասում է դյուրին ուղին, ընդգծելով, որ մենք իբրև թե շփոթել ենք Բագրևանդի Վաղարշակերտը Բասենի Վաղարշավանի հետ, որ Վաղարշակերտը արաբ և պարսիկ հեղինակների մոտ կոչվում է Վալաշկերտ, որտեղից արդի Ալաշկերտ:

Նախ ոչ մի օտար հեղինակ չէ հիշում Վալաշկերտ անուն քաղաք Հայաստանում: Կա և հիշատակվում է Վալաշկերտ և Գուլաշկերտ Պարսկաստանում, որ բոլորովին կապ չունի մերինի հետ, բացի անունից:

Հետո՝ Վալաշկերտից ի՞նչպես է ծագել Ալաշկերտ: Լեհման և Բելք կարծիք են հայտնել, որ Ալաշկերտ ավելի հին է, քան Վաղարշակերտ և որ խալդական անունն է **ulu Anashi,** որից Ալաշկերտ, որպես Անաշիկերտ:

Վաղարշակերտ, ուրեմն, մի տեսակ վարժապետական հայացումն է, ինչպես Մենուասի քաղաքը դարձել է Մանուազակերտ, և Նախճվանը՝ Նախիջևան:

Թվում է, որ առաջին անգամ Հովհաննես Կաթողիկոս է, որ հանդես է բերում Վաղարշակերտը, առանց տեղը որոշելու, Յուսուփի հալածանքի ժամանակ: Սրան հետևում է Ասողիկ: Իսկ Լաստիվերտցու ցուցումները տանում են մեզ ավելի դեպի Բասեն:

Լաստիվերտցին գիտե և Վաղարշավան, նույն գավառում: Եվ այս հանգամանքը արգելք չի կարող լինել, որ Վաղարշակերտը ևս Բասենում լինի: Արշարունիքում երեք քաղաք կար միևնույն թագավորի անունով՝ Երվանդաշատ, Երվանդակերտ և Երվանդավան:

Այսպիսով, շփոթության հարց չկա, այլ մի խուլ ենթադրություն, որ վրաց եպիսկոպոսի աթոռանիստ Վաղարշակերտը իր Ս. Աստվածածին եկեղեցիով, թերևս, որոնելու է Բասենում, Հասան-Կալեի մոտ: Գուցե սխալվում ենք, և Վաղարշակերտը և այս դեպքում Բագրևանդի Ալաշկերտն է հայացրած: Ամեն պարագայի՝ թյուրիմացության մասին խոսք չի կարող լինել: Բագրևանդի Վաղարշակերտը նույնչափ խնդրական է, որքան մեր ենթադրյալ համանուն քաղաքը Բասենում:

Կարծելով, որ Հասան-Կալեի տեղ այս քաղաքն է եղել, մենք փորձել էինք որոնել Բողբերդը ոչ Բասենի դաշտում, այլ այն լեռների մեջ, որ պատում են Բասենը հյուսիսից և զատում նրան Բուխա գավառից:

Բուխա Տայոց աշխարհի հարավային անկյունն է, փոված հիշյալ լեռների հյուսիսային լանջերի վրա: Բնական ամրություն են այս լեռները Բասենի սահմանագլխին, ուր այժմ էլ կան մի քանի բերդեր, ինչպես նշանակում են աշխարհագրական քարտեզները: Սրանցից մեկը կոչվում է Բուհա-Կալե:

Եթե միայն անունը ճիշտ է արձանագրված, կարելի է կարծել, որ հին Բուխա անունն է պահված Բուհա ձևով:

Ձեռագրերից հայտնի է և Բոխա ընթերցումը. Բոխա-բերդ կարող է հանգել Բող-բերդի ինչպես որ բախտ դառնում է բաղդ, և ընդհակառակն Օլթի, ուրեմն հին Ուղթի փոխվում է Ուխտիք կամ Ուխթիք ձևերի:

Լեզվական անպատեհություն չկա, հակառակ պ. Խաչատրյանի լեզվագիտության: Կարևորը բնավ այն չէ, որ Բողբերդը Բուհա-Կալեն լինի անունով: Խնդիրը այն է, թե այս և մոտակա բերդերը իրենց տեղադրությամբ կարո՞ղ են մտնել Բասենի մեջ և կամ համարվել մասն նրա ռազմագիտական ամրությունների շղթայի: Պարոն Խաչատրյան, որ հրապարակ է գալիս որպես երկրի տեղագրական պայմաններին ծանոթ անձ, պարտք ուներ պատասխանելու այս հարցին: Եվ եթե մի օր, փոխան Կուշկուշլար սարի, իրեն ձգեր Բուհա-Կալեի շրջանը, այսօր ավելի բան կարող էր ասել, քան իր լեզվագիտական անօգուտ պտույտները:

Լեզվական նկատումները չեն, որ մեզ դրդել են Բողբերդը որոնել Բասենի լեռներում, այլ որ այս լեռները տիրելով ամբողջ դաշտին հանդիսանում են բնական ամրություն: Բող կարող է կապ ունենալ Բուհա-Կալեի հետ, կարող է պարսկերեն **բռզ** բառը լինել, որ նշանակում է բարձր, հին **բարզ**, հայերեն **բարձր**, որի **բռզ** ձևը մնացած է **բռզանդ** «բարձր» բառի մեջ: Ուրեմն Բողբերդ ոչ այլ ինչ է, եթե ոչ «Բարձր բերդ»: Կարևոր է տեղադրությունն ամենից առաջ:

Քանի որ խոսքը Բուխայի մասին է, ավելորդ չէ նկատել, որ Բուխա ցեղագրական ծագում ունի, այսինքն՝ սկզբնապես ժողովրդի անունն է: Ստեփաննոս Բյուզանդացին գիտե «Կարինի ետևը Եփրատի և Կուրի միջև Բոնխա ժողովուրդ»: Ծանոթ է նաև Պտղոմեոս, որի ձեռագիրները տալիս են Բոկխա ընթերցվածը, իսկ հրատարակիչները ուղղում են Բոխա, հայերեն Բուխայի ազդեցությամբ:

Ստեփաննոսի Բոնխա, որ հունարեն գրվում է **Bogcha**, Պտղոմեոսի **Bokcha**, կարելի է կարդալ նաև **Bolcha:** Հնագրական տեսակետով հնարավոր է:

Արդյոք հայերեն անունն ևս ընթեռնելու չէ՞ Բոլխա և այս չէ՞ եղել արդյոք մերձավոր առիթը, որ Խորենացին, համաձայն իր լեզվագիտական մեթոդի, Բլղար Վղնդուրին բերել է Հյուսիսային Կովկասից և բնակեցրել Անփայտ կամ Վերին Բասենում:

Պարոն Խաչատրյանի առարկությունների քննությունը ցույց է տալիս, որ նրա հավակնոտ հայտարարությունները չարդարացան, որ «տեղագրական ուսումնասիրություն», ինչպես և Վխիկ գետի, Բարդողոս և Բուլուլ գյուղերի լեզվագիտությունը, բնավ իրավունք չեն տալիս այն խրոխտ շեշտերին, որ պարոնը նետում է իր հոդվածում և, որ տեղի չունին բանիմաց բանասիրության մեջ:

4. Նույն բանասերը չի կարողացել ձեռնպահ մնալ անիրավ նկատողություններից մի իրավացի խնդրում, որպիսին է Բագրևանդի բառի ստուգաբանությունը: Պարոն Խաչատրյան չի բավականանում միայն նրանով, որ բերում է Մարկվարտի նորերս հայտնած ավելի ստույգ մեկնությունը նույն բառի, այլ իրավունք է համարում հետին թվով քրքրելու մեր բացատրությունը, որպես թե լեզվական օրենքներին հակառակ առաջարկ:

Պտղոմեոսի ձեռագիրներն ընծայում են Բագրևանդավեն ընթերցվածը, մյուս կողմից՝ կան պարսկական ցեղեր Քամալ-**ավանդ**, Հասան-**ավանդ**, Սիր-**ավանդ** անուններով: Այս երկու երևույթը մղել էին մեզ Բագրևանդ վերլուծել՝ **Baga-rata-vanda:** Տասնյակ տարիներ են անցնում և նորերս Մարկվարտ առաջարկում է ավելի ստույգ վերլուծում՝ **Bagare-vand,** ասել է թե **Baga-rai-vanda:** Պետք է ասել, որ **rata** և **rai** միևնույն արմատիցն են: Նոր մեկնությամբ **vand** սովորական ածանց է և **rai-vand** նշանակում է «հարուստ» և աստուծու մակդիրն է: Մինչդեռ մենք համարել էինք **vand** հնագույն ձևը gund բառի «տուն, բնակություն» իմաստով: Նաև համեմատել էինք Խուժիստանի մի քաղաքի անվան հետ, որ է **Գունդի**-շապուհ, կամ ավելի հին ձևը՝ **Վանդի**-շապուհ, որ հիշում է մի հույն հեղինակ՝ **Bendo-sabor-on**:

Պարոն Խաչատրյան այս առթիվ լեզվագիտական խրատներ է կարդում, որ Բագրատվանդ չի կարող դառնալ Բագրավանդ: Ինչո՞ւ: Ահա **havatsara** դառնում է՝ հավասար, և **vardat-gesa** Վարդ-գես:

Արգո պարոնի առարկությամբ **gund** տուն չէ նշանակում: Քրդերի մեջ ապրած մարդ է և կարելի էր սպասել, որ գիտենար, որ քրդերեն **gund** նշանակում է գյուղ:

Բերում է նաև Մարկվարտի մեկնությունը, թե Վենդիսաբոր ծագում է Վեհ-Անտիոկ-Սապուր անունից և հետևապես աղերս չունի մեր ենթադրած վանդ - գունդ բառի հետ: Եվ այստեղ լոկ իր անծանոթությունն է ցուցադրում:

Անգամ մեր կոչումը ստուգելու նեղությունը չի քաշել պ. Խաչատրյան, ապա թե ոչ ցույց տված տեղում կտեսներ, որ Մարկվարտի կարծիքը նորություն չէ և ոչ իսկություն, այլ նա ծագում է արաբ հեղինակներից և հայտնի արևելագետ Նյոլդեքե անարժեք է համարում և փորձում է այլ կերպ մեկնել: Այսպիսի պայմաններում ներելի է և ոչ անգոսնելի կցել խնդրին նաև գունդ գյուղ, բնակություն, բառը, քանի որ ոմանք Գունդի-շապուհի մեջ պատրաստ են տեսնել մինչև անգամ գունդ - զորք, բանակ բառը, որ նվազ պատշաճավոր է, քան մեր առաջարկը:

Մարկվարտ կարծում է նաև, որ հիշյալ քաղաքի անունը Վեհ-ազ-Անտոկ-շապուհ չէ եղել, ինչպես արաբ մատենագիրներն են գրում, այլ Վեհ-Անտոկ-շապուհ:

Նյոլդեքե, որ չի ընդունում այս ստուգաբանությունը, ինչպես ասացինք,

նույն ուղղումը առաջարկում է մի ուրիշ քաղաքի անվան առթիվ:

Խոսրով Անուշիրվան Անտիոքի բնակիչներին գաղթեցրեց և հաստատեց Տիզբոնի մոտ հիմնած նոր քաղաքում, որ կոչեց Վեհ-**ազ**-Անտոկ-Խոսրով:

Ահա այս անունն է, որ նա ուղղում է Վեհ-Անտոկ-Խոսրով:

Սեբեոս պատմագիրը ծանոթ է այս քաղաքին, որ անվանում է Վեհ-Անջաթոք-Խոսրով: Նույն գիտնականը ուզում է հայ անունն ևս ուղղել Վեհ-Անտոք-Խոսրով:

Կարծում ենք, որ այս առաջարկը վիճելի է: Սեբեոսի Վեհ-Անջատոքը հաստատում է արաբ մատենագիրների վկայությունը, որ քաղաքի անունն իրոք եղել է Վեհ-ազ-Անտոք, հայ Անջատոք աղավաղումն է կամ Ազ-Անտոքի կամ ավելի հին ձևի՝ Աժ-Անտոքի:

ՄԻՀՐԴԱՏ ԵՎՊԱՏՈՐ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Ա. ՄԻՀՐԴԱՏ ԵՎՊԱՏՈՐ

Այն բանից հետո, երբ 133 թվականին Պերգամոնի արքան իր թագավորությունը կտակեց հռոմեական ժողովրդին, ոմն Արիստոնիկոս բռնազավթեց այդ երկիրը: Հարևան երկու երկրների արքաները՝ Պոնտոսի Միհրդատ Էվերգետեսը (169-121) և Կապպադովկիայի Արիարաթես Փիլոպատորը օգնության եկան հռոմեացիներին՝ պայքարելու Արիստոնիկոսի դեմ: Տեղի ունեցած պատերազմի ընթացքում, մոտավորապես 130 թվականին, Կապպադովկիայի արքան զոհվեց: Որպես պարգև Պոնտոսի թագավորն ստացավ Վերին Փոյուգիան, իսկ Կապպադովկիայի սպանված թագավորի ժառանգները՝ Լիկաոնիան և Կիլիկիան: Ըստ Ապպիանոսի[1], այդ դեպքերից քիչ անց, Պոնտոսի թագավորը ներխուժեց Կապպադովկիա: Օգտվելով խառնակ իրավիճակից՝ զոհված թագավորի այրին սպանում է իր բոլոր որդիներին, բացառությամբ մեկի, և իր դուստր Լաոդիկեին Արիարաթես Փիլոպատորի որդի Արիարաթես Եպիփանեսի հետ ամուսնացնելուց հետո, հեռանում է:

Պոնտոսի թագավոր Միհրդատ Էվերգետեսը նույնպես սպանվում է և իշխանությունն անցնում է նրա այրուն և երկու որդիներին՝ Միհրդատ Եվպատորին և Միհրդատ Բրեստոսին: Յոթ տարի տևող խնամակալությունից հետո այրի թագուհին ևս սպանվում է: Ըստ Վալերիոս Մաքսիմոսի[2], Միհրդատ Եվպատորն էր սպանել իր հորը: Այժմ նա ազատվում է նաև իր մորից: Նրան է վերագրվում նաև իր փեսայի և քրոջ սպանությունը Կապպադովկիայում[3]:

Հուստինոսը պնդում է[4], որ նա Գորդիոսի միջոցով էր սպանել իր փեսա Արիարաթես Եպիփանեսին (դրախմաները նրան տասնհինգ տարվա թագավորություն են տալիս): Միհրդատ Եվպատորը դաշնակցել էր Բյութանիայի թագավոր Նիկոմեդեսի հետ Պափլագոնիա ներխուժելու համար, որը վաղօրոք նրանք բաժանել էին միմյանց միջև: Մոտ 104 թվականին

[1] **Appiani,** Mithr., 10.

[2] **Valerii Maximi,** Factorum, 9, 11

[3] Բանակին հասցեագրած իր ուղերձում, Միհրդատ Եվպատորը խոստովանում է, որ ինքը Կապպադովկիան նվաճել է՝ սպանելով այդ երկրի թագավորին (**Just.**, XXXVIII, 7):

[4] **Just.,** XXXVIII, 1

Միհրդատը ներխուժում է Սինոպե: Հռոմը պահանջում է, որ այդ երկրներին վերադարձվի նախկին կարգավիճակը: 103 թվականին Միհրդատ Եվպատորի կողմից Հռոմ ուղարկված դեսպաններին հաջողվում է հարցը լուծել հօգուտ Պոնտոսի:

Այժմ Միհրդատն իր ուշադրությունը բևեռում է դեպի Կապպադովկիա և ցանկանում տապալել նաև իր կողմից սպանված Արիարաթեսի որդուն: Նիկոմեդեսը, որը նախապես տեղեկացել էր այդ ծրագրի մասին, հանկարծակի ներխուժում է Կապպադովկիա: Այրի թագուհին դիմում է իր եղբոր՝ Միհրդատի օգնությանը: Եվպատորը դուրս է քշում բյութանացուն և գահին բազմեցնում իր զարմիկ Արիարաթես Փիլոմետորին, թեև նրա մայրն արդեն հաշտվել էր Նիկոմեդեսի հետ և անգամ ամուսնացել վերջինիս հետ:

Միհրդատը նախատեսել էր, որ Գորդիոսը պետք է առաջնակարգ դեր կատարեր Արիարաթեսի արքունիքում՝ դառնալով նրա ավագ նախարարը: Սակայն Արիարաթեսը վրդովվում է, տեսնելով թե ինչպես է իր հորը սպանողը հաստատվում արքունիքում: Միհրդատը որոշում է իր ծրագիրն իրականացնել զենքով: Արիարաթեսը վճռում է զենքին պատասխանել զենքով և ստիպում Միհրդատին հրաժարվել բռնությունից[1]:

Միհրդատը խաբեությամբ ծուղակն է գցում Արիարաթեսին: Նա տեսակցության է հրավիրում իր զարմիկին և նենգաբար դաշունահարում դժբախտ թագավորին: Միհրդատն իր ութամյա որդուն անմիջապես կարգում է Կապպադովկիայի թագավոր, որը ստանում է Արիարաթես Փիլոպատոր անունը (100 թ.): Սակայն կապպադովկիացիները ապստամբում են Միհրդատի տիրապետության դեմ և թագավոր հռչակում իրենց սպանված արքայի եղբորը: Միհրդատը պատերազմում է նրա դեմ և դուրս քշում Կապպադովկիայից: Քիչ անց սա ևս սպանվում է: Նիկոմեդեսը և նրա կինը Լաոդիկեն՝ Կապպադովկիայի նախկին թագուհին, Կապպադովկիայի գահը խնդրում են Լաոդիկեի կարծեցյալ երրորդ որդու համար, որին նա իբր թե ունեցել էր Արիարաթեսից: Իր հերթին Միհրդատն էլ, Գորդիոսի միջոցով, առանց դույզն իսկ անհարմար զգալու, փորձում է համոզել Սենատին, թե Կապպադովկիայում գահ բարձրացված մանուկը Արիստոնիկոսի դեմ պատերազմում զոհված Արիարաթես Փիլոպատորի որդին է:

Սենատը հրամայում է չափազանց գործունյա այս թագավորներին անմիջապես թողնել գրավված տարածքները: Նիկոմեդեսը պետք է ազատեր Պափլագոնիան, իսկ Միհրդատը՝ Կապպադովկիան: Երկու երկրներն էլ Հռոմի կողմից հռչակվում են անկախ պետություններ: Կապպադովկիացիները թագավոր են խնդրում և Սենատը նշանակում է թագավոր՝ Արիոբարզանեսին (95 թ. առաջ):

[1] **Just.**, XXX, 1 (Auxiliantibus finitimis regibus՝ «հարևան արքաների օգնությամբ»):

Արիոբարզանես՝ 34 տարի - մինչև 62 թ.: Հետևաբար նա թագավորել է 95 թվականից:

Միհրդատ Եվպատորի որդին ըստ դրախմաների թագավորել է 5-6 տարի: Այսինքն՝ 101-100-95 թվականները:

Սակայն սկզբնապես Կապպադովկիան հռչակվել էր հանրապետություն - 96 թվական:

Փիլոմետոր (նրա զարմիկը) - ըստ դրախմաների թագավորել է 12 տարի: Այսինքն՝ 114-102 թվականներին:

Եպիփանես (նրա փեսան) թագավորել է 15 տարի: Այսինքն՝ 129-114 թվականներին:

Միհրդատը բանակցություններ է սկսում Տիգրանի հետ՝ Արիոբարզանեսի դեմ պատերազմելու համար: Այդ առաքելությունը հանձնարարված էր Գորդիոսին: Որպեսզի Տիգրանն իրեն չկասկածի երկդիմության մեջ, Միհրդատը նրան կնության է տալիս իր դուստր Կլեոպատրային[1] Այնուհետև Տիգրանը ներխուժում է Կապպադովկիա: Արիոբարզանեսը փախչում է Հռոմ՝ իր հետ տանելով գանձերը: Պոմպեոս Տրոգոսը կարծում է, թե Միհրդատը, Տիգրանի օգնությամբ, դարձյալ տիրանում է Կապպադովկիային[2]: Արդի պատմաբանները մեխանիկորեն կրկնում են այս տեսակետը, առանց փորձելու պարզաբանել Տիգրանի գործողությունների իրական շարժառիթները: Արիարաթես Փիլոմետորը, այսինքն՝ Միհրդատի զարմիկը իր հարևանների օգնությամբ էր հետ մղել Միհրդատին: Այդ հարևաններից մեկը, անկասկած, Ծոփքի արքան էր, որը 100 տաղանտով պահանջել էր Ֆորնիզա ամրոցը[3]: Հղանալով Ծոփք ներխուժելու միտքը՝ Տիգրանը շահագրգռված էր թուլացնելու նրա դաշնակից Կապպադովկիային: Հասկանալի է, որ նա հաճույքով է ընդունում Գորդիոսի առաջարկը: Սենատը վճռում է պաշտպանել Արիոբարզանեսին և հանձնարարում է Կոռնելիոս Սուլլային, որն այդ ժամանակ նշանակվել էր Կիլիկիայի պրետոր, Կապպադովկիայի արքային ուղեկցել իր թագավորություն: Սուլլայի զորքը մեծաքանակ չէր, սակայն նա օգտվում է դաշնակիցների ծառայություններից, որոնք իրենց հավատարմությամբ ու եռանդով օգնում են նրան՝

---

[1] **Appiani,** Mithr., 13. Նիկոմեդեսի դեսպանները Միհրդատի զորավարների հետ ունեցած հանդիպման ընթացքում ակնարկում են, որ նա նույնիսկ խնամիական կապ է հաստատել Հայի հետ:

[2] **Just.,** XXXVIII, 3. Նույն պատմիչի բերած Միհրդատի ճառում վերջինս բողոքում է, որ հռոմեացիներն իրեն մեղադրում են Գորդիոսի և Տիգրանի արարքների համար («Imputari sibi, si qua Gordius aut Tigranes faciat»):

[3] **Strabo**, XII, 2, 1.

մեծ թվով կապպադովկիացիների և նրանց օգնության եկած էլ ավելի մեծ թվով հայերի ջարդելու, ինչպես նաև Գորդիոսին դուրս քշելու և Արիոբարզանեսին գահին վերահաստատելու գործում[1]

Սուլլան պրետոր է եղել Հռոմի քվարկության 661 թվականին, այսինքն՝ Ք. ա. 92 թվականին: Արիոբարզանեսի վերահաստատումը գահին հավանաբար վերաբերում է 91 թվականին[2]:

Այդ ժամանակ է, որ սկիզբ են առնում քաղաքական հարաբերությունները Հռոմի և Պարթևստանի միջև: Կասկածից վեր է, որ հենց Սուլլան էր, որ դիմել էր պարթևների օժանդակությանը, որպեսզի ապահովեր Կապպադովկիայում Տիգրանի դեմ հակամարտությունում իր ունեցած հաջողությունը: Իզուր է Սուլլան փորձում համոզել, թե նախաձեռնությունը գալիս է պարթևներից:

Երբ նա գտնվում էր Եփրատի ափին, նրա մոտ եկավ պարթևաց թագավորի դեսպան Օրոբազոսը, որը հետամուտ էր Հռոմի բարեկամությանը: Դեսպանը տեսակցություն խնդրեց՝ դաշնակցության ու բարեկամության վերաբերյալ բանակցություններ վարելու համար: Այդ կապակցությամբ Սուլլան առիթը բաց չի թողել մեզ մի զավեշտական պատմություն ավանդելու: Հանդիպման ժամանակ հռոմեացի զորավարը երեք բազմոց էր նախապատրաստել՝ իր, Արիոբարզանեսի և պարթևաց դեսպանի համար: Ընդունելության ընթացքում զորավարը բազմել էր կենտրոնում, իսկ կողքերին՝ դեսպանն ու Կապպադովկիայի թագավորը: Պարթևների թագավորը դժգոհ մնալով այն բանից, որ դեսպանը պատվավոր տեղը զիջել էր հռոմեացուն, սպանել է տալիս Օրոբազոսին[3]:

Կարևորն այն է, որ Միհրդատի և Տիգրանի քաղաքական մերձեցումը պատճառ հանդիսացավ, որպեսզի երկու խոշորագույն տերությունները Հռոմն ու Պարթևստանը, անհրաժեշտ համարեին պայմանավորվել Հայաստանի և Պոնտոսի տարածքային հետագա ծավալումը կասեցնելու համար: Այսպիսով, դա հիմք դրեց մի քաղաքականության, որը պետք է դարերի խորքից գոյատևեր մինչև մեր օրերը, դառնար պարտավորեցնող մի դեղատոմս բոլոր ժամանակների քաղաքագետների համար:

Բացասական լուրջ հետևանքներով հղի այդ ակտը ստիպեց Տիգրանին ու Միհրդատին ավելի սերտացնել իրենց բարեկամությունը և կնքել քաղաքական դաշինք:

---

[1] **Plutarchi** vitae, Sulla, 5.

[2] **Appiani,** Mithr., 57 Միհրդատի հետ բանակցությունների ժամանակ Սուլլան հիշեցնում է, որ ինքը Արիոբարզանեսին վերահաստատել էր Կապպադովկիայում:

[3] **Plut.**, Sulla, 5.

Փոխադարձ համաձայնությամբ Միհրդատին էին անցնում «նվաճված քաղաքները, իսկ Տիգրանին՝ գերիները և ամբողջ ավարը»[1]:

Կնքված դաշինքի հետևանքով Միհրդատը դուրս է քշում Բյութանիայի արքա Նիկոմեդեսին, որի տեղը հաստատում է նրա ախոյան Քրեստոս կոչեցյալ Սոկրատեսին՝ հուսալով, այդ միջոցով իրեն ենթարկել Բյութանիան: Սա Միհրդատի մշտական քաղաքականությունն էր՝ կրակից շագանակներ հանել ուրիշների ձեռքերով: Գահընկեց թագավորը ապաստանում է Հռոմում: Հենց այդ ժամանակ երկու զորավարներ՝ Միթրասը և Բագոասը (միգուցե՞ Տիգրանի հրամանով) գրավում են Կապպադովկիան և երկրորդ անգամ Արիոբարզանեսին վտարելով՝ կրկին գահ են բարձրացնում Արիարաթեսին[2]:

Հռոմը բռնում է վտարված թագավորների կողմը և պահանջում նրանց վերականգնել գահին: Այդ հրամանի կատարումը հանձնարարվում է Մանիոս Աքվիլիոսին և Մանլիոս Մալտինոսին[3]: Վերջիններս հաջողությամբ են կատարում իրենց միսիան: Միհրդատը ենթարկվում է հռոմեացիների պահանջին. «նա Կապպադովկիայից հետ կանչեց իր որդուն» Արիոբարզանեսի տեղն ազատելու համար և «հռոմեացիներին հաճոյանալու համար սպանեց Քրեստոսին՝ Բյութանիայի արքային»[4]:

Վերականգնված թագավորներից հռոմեացիները պահանջում էին պատերազմ սկսել: Պատերազմելու համար միջոցներ հայթայթելու նպատակով Նիկոմեդեսը, հռոմեացի զորավարների դրդմամբ, ներխուժում է Պոնտոս: Միհրդատը Պելոպեդեսին ուղարկում է հռոմեացի զորավարների մոտ և բողոքում Նիկոմեդեսի վարքագծի դեմ: Հռոմեացիների պատասխանը չափազանց երկիմաստ էր: Ճարահատյալ Միհրդատը ներխուժում է Կապպադովկիա, վտարում Արիոբարզանեսին և հաստատում այնտեղ իր որդի Արիարաթեսին[5]:

---

[1] Այս պայմաններին առանձնապես չհավատալու պատճառներ կան: Ավելի ուշ Տիգրանը ասպատակեց Կապպադովկիան և Կիլիկիան՝ 12 քաղաքների բնակիչներին իր նոր մայրաքաղաքը վերաբնակեցնելու համար: Ինձ թվում է, որ 92 թ. կնքված պակտի այսպես կոչված պայմաններն ընդամենը ենթադրություններ են, որոնք հիմնվում են Տիգրանի հետագայում կատարած գործողությունների վրա:

[2] Թ. Ռեյնակը կարծում է (**Th. Reinach**, Mithridate Eupator roi de Pont, p. 115), թե այդ զորավարները հայեր էին: Ապպիանոսն այդ մասին ոչինչ չի հաղորդում և մենք նույնիսկ հաստատապես չգիտենք, թե պատմիչը ո՞ր արշավանքը նկատի ուներ: Արդյո՞ք խոսքը Կապպադովկիա կատարած երկրորդ արշավանքի մասին է, որն, ինչպես ենթադրում է պատմիչը, տեղի է ունեցել 90 թ., թե՞ խոսքը 95 թ. տեղի ունեցած առաջին արշավանքի մասին է:

[3] **Just.**, XXXVIII, 3. Պոմպեոս Տրոգոսը տալիս է Մանիոս Աքվիլիոսի անունը:

[4] Նույն տեղում, նաև **Appiani**, Mithr., II.

[5] **Appiani**, Mithr., 15

Հռոմը չհանդուրժեց այս իրավիճակը և սկսվեց իսկական պատերազմը: Հռոմեական բանակն ուներ մոտ 150.000 զինվոր: Հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ Նիկոմեդեսը հավաքագրեց 50.000 հետևազորայիններ և 6000-ոց հեծելազոր: Միհրդատի բանակը կազմված էր 250.000 հետևակայիններից և 40.000 հեծյալներից: Փոքր Հայքը տրամադրել էր 10.000 հեծյալ՝ Միհրդատի որդի Արկաղիասի հրամանատարության ներքո (ես չեմ կարծում, թե նրան կարելի է նույնացնել Արիարաթեսի հետ): Այն փաստից, որ Փոքր Հայքի բանակը չի թվարկվում ընդհանուր զորքի մեջ, մենք կարող ենք հանգել այն հետևության, որ այս երկիրն այդ ժամանակ կցված էր Կապպադովկիային[1]: Սակայն ո՞ւր է Կապպադովկիայի քանակակազմը: Դեռևս պետք է պարզել, թե ո՞ր թվականին է Փոքր Հայքն ընկել Միհրդատի տիրապետության տակ (1):

Ի շարս Միհրդատի զորավարների, հիշատակում են նաև հայ Նեմանեսին, որը մասնակցել է ճակատամարտին և որին նույնացնում են Միհրդատի կողմից Հռոմ ուղարկված դեսպանի հետ[2]:

Պատերազմն ավարտվում է 84 թվականին, 73 թվականին վերսկսվելու համար:

Քանի դեռ Միհրդատը պատերազմում էր Հռոմի դեմ, Տիգրանը բազում անելիքներ ուներ Արևելյան ճակատում՝ հռոմեացիների դաշնակից պարթևների դեմ: Հակառակ ոմանց պնդումների, պարթևներն այդ ժամանակ թույլ չէին: Տիգրանի ժամանակակիցը պարթևաց թագավոր Միհրդատն էր, որը ստացել էր «Մեծ» տիտղոսը (123-86): Պարթևների քաղաքական գործունեությունը սկսվել է մ.թ.ա. III դարի կեսերից, սակայն նրանց հզորության իրական ժամանակաշրջանը համընկնում է Հայաստանում Արտաշեսյանների հարստության սկզբնավորման հետ: Ուստի, պարթևները և հայերը բեմահարթակ են դուրս եկել գրեթե միաժամանակ: Նրանց միջև խուլ թշնամանք գոյություն ուներ Սելևկյան ժառանգության համար: Միհրդատ Մեծի թագավորության ժամանակ կշեռքի նժարը թեքվում է պարթևների կողմը: Հաղթանակած թագավորը, որը գտնվում էր իր փառքի գագաթնակետին, առաջինը յուրացրեց Աքեմենյանների «Արքայից արքա» տիտղոսը: Հայոց թագավոր Տիգրանը վիճարկում է այդ տիտղոսը և այն խլում Միհրդատի հաջորդներից: Գերիշխանության համար Տիգրանի մղած պայքարը և նրա վերջնական հաղթանակը կազմում են Արևելքի պատմության ամենափառահեղ էջերից մեկը: Արդի պատմաբանները սխալվում

[1] **Th. Reinach,** p. 122.

[2] **Gaffi**, Bullettino della commissione archeologica commandc di Roma, 1886, № 403 (վերցված է Թ. Ռեյնակից՝ էջ 456):

են, չընդունելով նրա մեծությունը (ի դեպ, նրանք այս հարցում հետևում են անտիկ հեղինակներին, առանց մտահոգվելու պատմությանը քննական մոտեցում ցուցաբերելու մասին: Կատարելապես ճիշտ է, որ «բոլոր սխալներից ամենավատը այն սխալն է. որը վերցված է ուրիշից»: Հին հեղինակները որդեգրել են սահմանափակ և միևնույն ժամանակ ազգային կողմնակալությամբ տոգորված պատմական հայեցակետ): Տիգրանը չի վայելել պատմիչների բարյացակամությունը, ինչպես նրա դաշնակից Միհրդատը: Միհրդատ Եվպատորը Հռոմի հակառակորդն էր և դա բավարար էր, որպեսզի պատմիչները նրան դարձնեին կենտրոնական գործող անձ, արեգակի պես մի բան, որի շուրջը պտտվում էին նրան ժամանակակից մնացած բոլոր գործող անձինք, որպես հասարակ մոլորակներ:

Գահ բարձրանալով Միհրդատից ավելի ուշ, Տիգրանն իրեն դրսևորեց որպես խոշոր աշխարհակալ և կարճ ժամանակահատվածում ստեղծեց Միհրդատի տերությունից առնվազն տասն անգամ ավելի մեծ կայսրություն, որը տարածվում էր Կովկասից մինչև Պաղեստին և Կապպադովկիայից մինչև Մեծ Մարաստան: Հին պատմիչները, որոնք ավելի էին սիրում իրենց Պլատոնին, քան ճշմարտությունը, զարմանալի հնարամտություն են ցուցաբերել պատմական իրողությունը աղավաղելու և Տիգրանի աչքի ընկնող կերպարը աղճատելու համար: Արդի պատմաբանները ոչ քննադատաբար են հետևել հին պատմիչներին: Նրանք, ովքեր զբաղվել են Միհրդատի գործունեության ուսումնասիրությամբ, աշխատել են հայոց թագավորին ներկայացնել որպես հասարակ մի գործիք Միհրդատի ձեռքում: Պոնտոսի թագավորը ձգտում է «ելնելով իր շահերից օգտագործել Տիգրանին»[1] կամ «Տիգրանի շնորհիվ հաղթանակներ տանել»[2]: Տիգրանին որպես Պոնտոսի թագավորի կամակատար տեսնելու ցանկությունն այնքան է շեշտվում, որ պատմաբանները պատրաստ են նրան դատապարտելու իր սեփական ուղիով գնալու համար: Այսպես, Տիգրանին և Միհրդատին «հարձակողական և պաշտպանական դաշինքով» միմյանց հետ կապելուց հետո, նրանք վրդովվում են, որ Հռոմի դեմ Միհրդատի վարած պատերազմի ընթացքում Տիգրանն իր պարտավորությունների փոխարեն «մտածում էր միայն իր երբեմնի նվաստացումների համար պարթևներից վրեժխնդիր լինելու մասին»[3]:

Փաստորեն, նրանց կարծիքով, Հայոց թագավորը պետք է իր երկիրը թողներ պարթևների ճիրաններում: Միհրդատին օգնության չտապելու

[1] Այս և հետագա երեք մեջբերումների թերթիկները թափված են:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

համար: Ապա, այդ դեպքում ինչո՞ւ նրանք չեն դատապարտում Միհրդատին, որն անտեսելով իր պարտավորությունները, օգնության չէր եկել Տիգրանին, որը միայնակ պայքարում էր պարթևների դեմ: Այս չէ՞ արդյոք իրերի տրամաբանությունը:

Տիգրանի և Միհրդատի կնքած պայմանագրի մանրամասները մեզ հայտնի չեն: Այնուհանդերձ, անկասկած է, որ այդ փաստաթուղթը բխում էր պայմանավորվող կողմերի ընդհանուր շահերից. Այն պահին, երբ Միհրդատը անհաջողություն կրելով, հույս ուներ, դաշինքի համաձայն, Տիգրանից օժանդակություն ստանալու, պարթևները, պարտություն կրելով Տիգրանից, իրենց հերթին հույս էին դնում Հռոմի վրա՝ կասեցնելու Հայոց թագավորի առաջխաղացումը: Տիգրանի և Միհրդատի դաշինքը ուղղակի աղերս ուներ Հռոմի և Պարթևստանի մերձեցման հետ: Երկու թագավորները պետք է գործեին, մեկը Հռոմի, մյուսը՝ պարթևների դեմ: Այստեղից էլ նրանց դաշինքը, ինչպես նաև նրանց հակառակորդների հակադաշինքը: Միհրդատն անպայման կարիք ուներ ապահովելու իր արևելյան թիկունքը Հռոմի դեմ պատերազմելու համար: Իր կողմից Տիգրանն էլ, Պոնտոսի թագավորի հետ դաշինք կնքելուց հետո, կարող էր ազատորեն իր ուժերը չափել պարթևների հետ: Անշուշտ, այս դաշինքի առաջին անմիջական հետևանքներից մեկը Տիգրանի զորքերի ներխուժումն էր Կապպադովկիա, այնտեղ Գորդիոսին (այն անձնավորությունը, որը բանակցել էր Տիգրանի և Միհրդատի դաշինքի վերաբերյալ) հաստատելու համար: Դա, անկասկած, հօգուտ Միհրդատի կատարված քայլ էր: Բայց պակաս ճիշտ չէ նաև այն, որ Կապպադովկիայի հարցի ռազմական նման լուծումը պարտադրվում էր Տիգրանին՝ իր սեփական քաղաքական շահերից ելնելով: Հայոց թագավորը նոր էր բռնակցել Ծոփքը իր թագավորությանը, որն ավանդական, բարեկամական կապեր ուներ Կապպադովկիայի հետ: Ժամանակին Կապպադովկիան, հակադրվելով Արտաշես թագավորի նվաճողական ծրագրերին, փրկել էր Ծոփքին (2): Ավելի ուշ Ծոփքը փոխարենը սատարել էր Արիարաթեսին՝ Միհրդատի դեմ նրա պայքարում: Ծոփքը հնարավոր կապպադովկիական վտանգից պաշտպանելու համար, հասկանալի է, որ Տիգրանին անհրաժեշտ էր Կապպադովկիայում վստահություն ներշնչող դաշնակից ունենալ: Այդպիսի մեկը Գորդիոսն էր, և Տիգրանը նրան վերահաստատեց Կապպադովկիայի գահին: Նա դեռևս այլ առիթներ կունենա այդ նույն պատճառով միջամտելու Կապպադովկիայի հարցին:

Տիգրանի հետ դաշինք կնքելուց հետո, Միհրդատը իր բավականին գրգռիչ վարքագծով պատերազմ հրահրեց Հռոմի դեմ: Դրա համար պատրվակ ծառայեցին Կապպադովկիայի և Բյութանիայի հարցերը: Մի քանի ամսվա ընթացքում հավակնոտ աշխարհակալը իրեն ենթարկեց Փոքր

Ասիայի մեծ մասը, Արշիպելագը և Հունաստանը: Նա սիճ հաղթանակներ էր տոնում, երբ հռոմեական լեգեոնների գլուխն անցած Սուլլան ափ իջավ Ասիայում: Ք. ա. 86 թ. երկու գլխավոր ճակատամարտերում՝ Բեովտիայում (Քերոնեայի մոտ) և Օրքոմենայում Միհրդատը պարտություն կրեց և ստիպված էր Ք. ա. 85 թ. ստորագրել Դարդանոսի հաշտության պայմանագիրը՝ հրաժարվելով իր բոլոր նվաճումներից: Խաղաղությունը շարունակվեց 12 տարի: Այդ ընթացքում Միհրդատի անդորրը չվրդովվեց: Սակայն Հռոմն իր նկատառումներն ուներ և Դարդանոսի հաշտության պայմանագիրը նրա կողմից չվավերացվեց: Ք. ա. 73 թ. Հռոմը վերսկսեց ռազմական գործողությունները Միհրդատի դեմ:

Միհրդատն էր, որ իր անխոհեմ քայլերով Հռոմին առաջնորդեց դեպի Հայաստանի սահմանները:

բ. ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է զբաղեցնի Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին:

Համեմատաբար կարճ ժամանակահատվածում Տիգրանին հաջողվեց ընդարձակածավալ մի տերություն ստեղծել, որը տարածվում էր Կովկասյան լեռնաշղթայից մինչև Պաղեստին և Կապպադովկիայից մինչև Մեծ Մարաստան: Պատմության մեջ առաջին անգամ Հայաստանը հաջողությամբ դուրս եկավ համաշխարհային պատմության առաջին շարքերը և իր կամքը պարտադրեց Արևելքի երկրներից շատերին:

Տիգրանն իրեն դրսևորեց որպես աշխարհակալ և լուսավորիչ: Նրա կատարած գործը պետք է ուսումնասիրվի և ներկայացվի առավել անաչառ և ավելի բարեխղճորեն, քան դա արվել է հին և արդի պատմաբանների կողմից, որոնք ավելի տոգորված են եղել հռոմեական հայրենասիրությամբ, քան պատմական ճշմարտության սիրով: Պատմական իրականությունը կեղծվել է հօգուտ Հռոմի փառքի, Տիգրանի աչքի ընկնող կերպարը աղճատվել է հօգուտ նրա ռազմական հակառակորդների վարկի: Տիգրանի պատվերով գրված պատմությունները մեզ չեն հասել: Այն ամենը, ինչ պատմում են հին պատմիչները, տեղեկություններ են, որ հաղորդել են ասիական ռազմարշավները ղեկավարած զորավարները: Ռազմի դաշտից զորավարների կողմից Հռոմի Սենատին ուղարկված զեկույցներն այնքան էլ արժանահավատ չեն, արժանահավատ չեն նաև նրանց ուղեկցող հեղինակների շարադրանքները, քանզի դրանք չափազանց կողմնակալ են:

Արդի պատմաբանները հետևում են այդ զեկույցներին և պատմիչների շարադրանքներին առանց քննական մոտեցում դրսևորելու և կրկնում են այն բոլոր անհեթեթությունները, որ նրանք հաղորդել են Տիգրանի և Արևելյան իրադարձությունների վերաբերյալ: Եթե լսելու լինենք այդ պատմիչներին, ապա Տիգրանը՝ Արևելքի այդ ամեհի տիրակալը, կատարյալ ոչնչություն էր, զուրկ ամեն տեսակի արժանիքներից և առաքինություններից: Որքան նրանք չափազանցնում են հռոմեացի զորավարների արժանիքները, նույնքան էլ արժեզրկվում են հայ միապետի արքայական և մարդկային արժանիքները: Տիգրանի մասին հռոմեացիների գրած պատմությունները կասկածելի, կամ, առնվազն, ակնհայտորեն չափազանցված են թվում:

Երևակայական մանրամասները, ծիծաղաշարժ տեսարանները, որոնցով հարուստ են ստրկամիտ գրողների նկարագրությունները, կոչված են ցուցահանելու հաղթանակած հռոմեացիների իմաստնությունն ու ճարպկությունը, և ցուցադրելու նրանց պարտված հակառակորդների ոչնչությունը: Իրականությունը, սակայն, ոչ մի կապ չունի նման հերյուրանքների հետ: Բոլոր այն դեպքերում, երբ հռոմեացիների հնարագիտությունը հակադրվում է նրանց հակառակորդների հիմարությանը, մենք կարող ենք վստահ լինել, որ գործ ունենք միտումնավոր կեղծիքի հետ, որը պատմական որևէ արժեք չի ներկայացնում:

Տրամաբանական զգոնությունն է միայն, որ մեզ հնարավորություն է ընձեռում հայ-հռոմեական հարաբերությունների մասին հին պատմիչների հաղորդած տեղեկությունների վերաբերյալ քննական մոտեցում դրսևորել: Հակառակ դեպքում կդառնանք միտումնավորության ու կեղծիքի ակամա զոհ: Իսկ դա պակաս վտանգավոր չէ, քան ինքը կեղծիքը:

Ավարտելով Իտալիայի նվաճումը, Հռոմը ձեռնամուխ եղավ միջերկրածովյան ավազանում՝ Կարթագեն, Իսպանիա, Գալլիա, Հունաստան, Փոքր Ասիա, Ասորիք և Եգիպտոս, իր գերիշխանությունը տարածելու գործին:

Փոքր Ասիայի թագավորություններն իրեն ենթարկելու համար Հռոմը կիրառում էր «Բաժանիր և տիրիր» քաղաքականությունը: Պահպանելով և խրախուսելով տեղական դինաստների հակամարտությունները, նա խոչընդոտում էր այդ տարածքներում որևէ հզոր պետության ստեղծմանը: Տեղական դինաստներին գժտեցնելով միմյանց հետ՝ Հռոմը լուրջ դժվարությունների չհանդիպեց այդ թագավորությունները հարաճուն կերպով կլանելու գործում: 146 թ. Մակեդոնիան և Հունաստանը համալրեցին հռոմեական պրովինցիաների թիվը: Քիչ անց՝ 133 թ. Պերգամի թագավորությունը նույնպես բռնակցվեց Հռոմին: Բյութանիան, Կապպադովկիան և Պոնտոսը մեկը մյուսի հետևից անկում ապրեցին: Կիլիկիան և Ասորիքը վերածվեցին հռոմեական պրովինցիաների: Միջերկրական ծովի ողջ ավազանը

պատկանում էր Հռոմին: Փոքր Ասիայի և Ասորիքի նվաճման համար մղվող պատերազմներով էր նշանավորվում Հռոմեական հանրապետության գոյության վերջին հարյուրամյակը: Կործանարար մի պատերազմ, որը լուրջ հետևանքներ ունեցավ թե՛ Հռոմի և թե՛ Արևելքի համար: Հռոմի հանրապետական վարչակարգի փլուզումը և միապետության հաղթանակը պետք է դիտվեն որպես Արևելյան աշխարհի հետ հպման հետևանք:

Պատմաբանները հաճախ իդեալականացնում են Ասիական պատերազմները, դրանց վերագրելով լուսավորչական նպատակներ: Այդ պատերազմները վարող զորավարները փառաբանվել են որպես առասպելական հերոսներ: Սակայն բուն իրականությունը այդքան լուսավոր չէ, ինչպես այն ներկայացվում է ի հեճուկս հռոմեական հայրենասիրության:

Հանրապետությունն իր վերջին տարիներն էր ապրում: Նվաճումներն իրենց հետ բերում էին բարքերի փոփոխություններ և հարվածում էին անհատական ու հասարակական բարոյականությանը: Հին առաքինությունները նահանջում էին նյութական բարգավաճման առջև, որը դառնում էր անհրաժեշտ գործոն բոլոր նրանց համար, ովքեր հասարակական կյանքում հավակնում էին առաջնակարգ դեր կատարելու: Նոր բարքերը միայն սրում էին հասարակական հարաբերությունները: Սրվում էր դասակարգային պայքարը պլեբեյների և ազնվականական օլիգարխիայի միջև:

Զինվորական ռեֆորմը, բանակը մատչելի դարձնելով բոլոր քաղաքացիների համար, չունևոր դասակարգի շահերին ծառայելու փոխարեն կործանարար մի գործիք դարձավ հավակնոտ մարդկանց ձեռքում: Աղքատության հետևանքով ստորին խավը զանգվածաբար բանակ էր գնում: Այսուհետև զինվորական ծառայությունը դարձավ մասնագիտություն: Յուրաքանչյուր ոք կարող էր ստեղծել վարձկանների բանակ, եթե ուներ դրա հնարավորությունը: Նախ և առաջ անհրաժեշտ էր կարողություն դիզել՝ զինվորներ վարձելու հնարավորություն ունենալ և նրանցից համախոհների զորք կազմելու համար: Զորք, որը նվիրված կլիներ և առաջ կտաներ իրեն վարձած անձանց հասարակական հավակնությունները և նրանց կբարձրացներ հանրապետության քաղաքական կյանքի առաջին շարքերը:

Կարողություն դիզելու համար չէր անտեսվում և ոչ մի միջոց. «Պատրաստ են, - գրում է պատմիչը, ոտնահարել պատիվը, պատշաճությունը, աստվածային և մարդկային օրենքները, ազատվել հարգանքից և ամոթից»[1]: Գավառի կառավարչի պաշտոնը ամենաբաղձալին էր. դրա ընձեռած

[1] Հատկանշական է հատկապես Գայոս Սալուստիոս Կրիսպոսի օրինակը: Նա ծնվել է Հռոմի քվականության 657 քվականին, այսինքն՝ Ք. ա. 87 քվականին: 59 թ. դարձել է քվեստոր, 52 քվին՝ տրիբուն և հեռացվել ծերակույտից: 47 թ. դարձել է պրետոր, իսկ 46 քվին՝ նշանակվել Աֆրիկա Նովայի պրոկոնսուլ: Գրեթե սնանկացած հեռանալով Հռոմից, նա վերադառնում է իր հպատակներից թալանած կարողությամբ: Կաշառակերության համար մեղադրվելով, նա

նյութական օգուտների և այն հնարավորությունների պատճառով, որ այն տալիս էր կարողություն դիզելու ցանկությամբ տոգորված անձանց: Շատ հաճախ կարողություն դիզելու համար գերադասում էին գնալ Արևելք: Արևելք էին գնում նաև զինվորական փառք վաստակելու համար լիներ դա իրական, թե երևակայական փառք, քանզի դա անհրաժեշտ նախապայման էր Հռոմում իշխանության գալու համար:

Ասիական պատերազմներն ավելի նման էին արկածախնդրության, քան կշռադատված ձեռնարկումների այն առումով, որ դրանք նախածեռնում էին այնպիսի մարդիկ, որոնք առաջնորդվում էին իրենց անձնական շահերով: Այդպիսիներն ավելի շուտ մտահոգված էին անցողիկ փառք վաստակելու խնդրով, քան հասարակական ու պետական շահով: Ազգային թագավորությունների գոյությունը ամենևին էլ չէր սպառնում Հռոմի մեծությանը, և նրանց ոչնչացումը նույնպես ոչինչ չավելացրեց նրա փառքին: Այդուհանդերձ, ազգային անկախության այդ փոքր կենտրոններն ոչնչացվեցին Հռոմի կողմից: Այն զորավարները, որոնք հեշտ հաղթանակներ էին տենչում, սրեցին իրենց թուրն Արևելքում, որպեսզի հետագայում, բախտի քմահաճույքով, դրանով խոցեին հանրապետական վարչակարգի սիրտը:

Չափից ավելի փառաբանված և գովասանքներով ընդելուզված այդ անձինք ծայրահեղ չարագուշակ դեր խաղացին մեռնող հանրապետության դրամայում: Մարիուսից սկիզբ առնող բռնապետների շարքի յուրաքանչյուր հաջորդը իր հերթին նպաստեց դարավոր վարչակարգի անկմանը: Եթե պլեբեյ Մարիուսը և պատրիկ Սուլլան իրենց դասակարգերի շահերին նվիրված կուսակցությունների առաջնորդներ լինելու պատիվն ունեին, ապա նրանց հաջորդները՝ Պոմպեոսը, Կրասոսը, Կեսարը, Անտոնիոսը, Օկտավիանոսը անտեսում էին ինչպես պետության, այնպես էլ ցանկացած կուսակցության շահերը: Նրանց առաջնորդող միակ կիրքը իշխանատենչությունն էր: Նրանց պակասում էր ոչ թե գերագույն իշխանությունը զավթելու ցանկությունը, այլ վճռական գործողությունների դիմելու խիզախությունն ու հաստատակամությունը:

Այսպիսով, նրանք համաձայնության եկան և միավորեցին իրենց ուժերը ու եռապետության անվան տակ դաշինքի պես մի բան կնքեցին: Երեք աստղերից՝ Պոմպեոսից, Կեսարից և Կրասոսից, կազմված առաջին եռապետությունը, ստեղծվելուն պես քանդվեց՝ պարթևների դեմ ձեռնարկած արկածախնդրական արշավանքում Կրասոսի սպանվելու հետևանքով: Պոմպեոսը զոհ գնաց Կեսարի հետ մրցակցությանը, իսկ վերջինս էլ սպանվեց

արդարացվում է իր մշտական խնամակալ Կեսարի ջանքերով: Պալատինում գեղեցիկ այգիներով շրջապատված մի շքեղ պալատ է կառուցում, ուր և ապրում է ծոխության և զեխության մեջ և այդ պալատում էլ մահանում է 51 տարեկան հասակում (Ք.ա. 36 թ.):

մահամերձ հին վարչակարգի վերջին ազնիվ դեմքերից մեկի՝ Կասիոսի կողմից:

Օկտավիանոսը և Անտոնիոսը՝ մեկը Կեսարի զարմիկը, մյուսը նրա զորականներից, երրորդ մի անձնավորության՝ Լեպիդոսի հետ 43 թվականին կազմեցին երկրորդ եռապետությունը: Երեք ախոյանների միջև չուտով քաղաքացիական պատերազմ սկսվեց: Այն ավարտվեց 31 թվականին Ակցիումի ճակատամարտով և հանգեցրեց Հռոմում միապետական կարգերի հաստատմանը: Դարավոր վարչակարգը անկում ապրեց և Օկտավիանոսը հիմնադրեց նոր կայսրություն՝ նմանակելով Արևելքի մեծ կայսրություններին: Հենց սա էր Ասիական պատերազմների ընթացքում Արևելքի հետ Հռոմի շփումների անմիջական արդյունքը: Հռոմի արևելյան այս քաղաքականության ղեմ էր, որ իր կարծեցյալ դաշնակցից՝ Միհրդատից ևենգված, հաստատակամորեն պայքար էր մղում ժամանակի Արևելքի մեծագույն դեմքը՝ Տիգրան Մեծը:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵՎ ԱՆԱԿ ՊԱՐԹԵՎ

Ագաթանգեղոսի անունով մեզ հասած պատմությունը խմբագրական գործ է, ինչպես նորագույն քննադատությունը պարզել է: Երկի հիմնական մասն է Գրիգորի կյանքը, հավելածուն՝ Ս. Հռիփսիմյանց վկայաբանությունը, Գրիգորի վարդապետությունը և Տեսիլը: Չորս հատվածները տարբեր ծագումով հմտորեն հյուսված են խմբագրի կողմից և կազմում են մի հավաք ամբողջություն:

Սակայն, Գրիգորի կյանքն իսկ միապաղաղ գործ չէ: Կա պատմական կորիզ և վկայաբանական կեղև: Ճշմարիտ է, մտացածին զրույցներն ու հրաշքները վկայաբանությանց սովորական զարդ են դարձել, բայց կա **modus in omnibus:** Արտառոց հերյուրանքները, նույնքան արժանավոր սրբի մասին, ճշան են, որ հնարագետ հեղինակը իրապես հարուստ չէ տեղեկությամբ և ստիպված է ապաստանիլ երևակայության, բացը լցնելու համար: Եթե այլ փաստ չլիներ, բավական էին այն հրաշքները, որ պատմում է Ագաթանգեղոս, որպեսզի կասկածի տակ առնվեյ նրա ականատես լինելու հավակնությունը:

Վկայաբանական հողակույտի մեջ հազիվ քանի մի հատուկտոր և հարգի քարեր են ճշմարվում: Գրիգորի կյանքը գրի առնելու փույթը վերաբերում է այնպիսի ժամանակի, երբ նրա իսկական պատկերը արդեն աղոտացել էր հասարակական հիշողության մեջ: Դրերի գյուտը բնականորեն պիտի բերեր իր հետ ազգային ինքնագիտակցության զարթում և հայրենի անցյալի հետաքրքրություն: Քանավոր հիմք չկա կարծելու, որ Լուսավորչի առաքելությունը կարող էր գրված լինել օտար լեզվով նախքան հայ գրականության ծնունդը:

Որքան և ժողովրդական համարենք Լուսավորչին հենց սկզբեն, թվում է, որ առավելապես հայ անդրանիկ մտավորությունն է, որ արժանավորել է նրա հռչակը և ստեղծել ազգային մի մեծ սրբություն առաքելական լուսապսակը գլխին: Նա է, որ հետամուտ է եղել նաև հավերժացնելու դեռ կենդանի թեև արդեն աղավաղ ավանդությունները հայ եկեղեցու հիմնադրի մասին, գրի առնելով այն զրույցները, որ շրջում էին նրա և, նրա թագակիր գործակցի, և հրաշափառ դարձի վերաբերյալ:

Լուսավորչի, Տրդատի, Սուրբ կույսերի անվան, կամ սկզբնական վկայարանների շինության հարած զրույցները ինչ ձևով և ոգով են եղել գրի

առնված նախապես, մնում է հնության գաղտնիք և մեզ անմատչելի՝ այլևս: Սակայն, պետք է կարծել, որ նրանք քաջահայտ էին այն անձին և գրչին, որ թաքնված է Ագաթանգեղոս անվան տակ: Սա է, որ անջատ նյութերը զտել, իրար է կցել և մշակել ամբողջական պատմություն: Հավանորեն շատ բան զեղչած է հնից և մտցրած նոր ավելուքներ, անկապ զրույցները միմյանց ընտելացնելու և մի շաղախ կազմելու դիտավորությամբ:

Որքան և ճգնել է խմբագրական գործի հետքերը թաղել, բայց և այնպես նրանք մնացել են նշմարելի մինչև իսկ սովորական աչքի համար: Գերմանահայտնի գիտնական Ա. Գուտշմիդ, որին է պատկանում Ագաթանգեղոսի լավագույն և խիզախ քննադատությունը, չգիտենալով հանդերձ հայերեն և օգտվելով թարգմանությունից (1), կարողացել է հետևել և նշանակել բոլոր այն կետերը, ուր բաղադրելի հատվածները իրար են կցած, կարծես մի կարված, որ մատնում է միացրած պատառների փոխանցման գծերը:

Խմբագիրը հավատացնում է, որ ինքը գրում է որպես ականատես, բայց խոստովանում է իր գրավոր աղբյուրը, որտեղից քաղել է իր տեղեկությունները: «Սուտապատում ճարտարախօս» չեմ, ասում է նա, «այլ զյաճախագոյնս թողեալ եւ ի նշանաւոր գիտակաց քաղելով զհամառօտսն կարգեցաք»:

Առաջաբանում իրեն Տրդատի քարտուղար է համարում և գրում է պատմությունը «ի ձեռնարկութենէ նշանագիր ժամանակագրացն»: Կույսերի մասին խոսելիս չի ծածկում, որ նրանց վկայաբանությունը հայտնի է եղել, «որոնց ահաւասիկ եւ ճառք ի միջի ձերում պատմին»: Հույն թարգմանիչը խոհեմությամբ հապավել է այս խոսքերը: Տեսիլը միտումնավոր բանաստեղծություն է, ինչպես և վարդապետությունը՝ շարադրություն է, կազմված Բարսեղի **«Վեցօրէք»-ի** շնչով, նման այն շինծու ճառերի, որ հին պատմիչները դնում են ընտրյալ հերոսների բերանը: Վիրապից նոր ելած Գրիգոր շրջապատված է խուռն բազմությամբ, որ դառնում է նրան հետևյալ խոսքերով. «արդեօք ո՞չ յիշեսցես զչարիսն զոր մեք ընդ քեզ արարաք, եւ տայցե՞ս մեզ զուղիղ **վարդապետութիւն**»: Նրանով նախապատրաստում է հեղինակը և արդարացնում վարդապետության ներկայությունը, որ կլանում է գրքի մեծագույն մասը: Ո՛չ Տեսիլը և ո՛չ վարդապետությունը չեն կարող վերագրվիլ Գրիգորին ոչ մի կերպ:

Լուսավորչի կյանքը, որ կազմում է գրական Ագաթանգեղոսի պատմական կորիզը, այն ևս կարկատված է զանազան պատառներից: Արդեն Գուտշմիդ նկատել է, որ մի տեղ Գրիգորի Խոր-Վիրապում տանջվիլը 13 տարի է հաշվում, մի ուրիշ տեղ 15, որ պարզ նշան է աղբյուրների տարբերության:

Զգալի նմանություններ կան Գրիգորի չարչարանքների և Գորիա և

Շմոնի վկայաբանության մեջ, ինչպես վերջերս ապացուցվեց (2): Այս պարագան մի նոր հիմ է տալիս զատելու Գրիգորի առաքելությունը իր վկայաբանությունից՝ մեկը պատմություն է, մյուսը՝ գրականություն:

Պատմական մասերու մեջ ամենեն ստույգը համարելու է Գրիգորի կյանքը: Սակայն, այս ևս զերծ չէ թվում կասկածելի տարրերից: Այն օրվանից, երբ Գրիգորի մանկությունը կապվել է Տրդատի հետ, պատմական իսկությունը որոշ չափով գունատվել է և տուժել: Նախարարական միջավայրի հասկացողությունները դրել են իրենց դրոշմը Գրիգորի պատկերի վրա: Այս հասկացողությամբ հայ երկրի մեծապանծ Լուսավորիչը պետք է, որ սոսկ ծագում չունենար, այլ ազնվական. նա զավակ է ոչ ուրիշ, քան Պարթև ցեղի, որ ժամանակին ամբողջ Արևելքում առաջին տոհմն էր համարվում և քայլում էր շատ և շատ գահերի վրա արքայական պերճությամբ: Գրիգորը հասարակ մահկանացու չէ, այլ սերում է պարթևական Սուրեն ճյուղի ազնվական արյունից, և հարազատ որդի է Անակ իշխանի:

* * *

Այս միակ փորձը չէ կապելու Գրիգորին Արշակունի տոհմին: Գեղջուկ Զենոբը պահել է մի ուրիշ զրույց, իրոք հրաշակերտ, որ գայթակղեցրել է անգամ Խորենացուն:

Բուրդար անունով ոմն **ի նշանառը ազգէն Պարսից** գնում է պանդխտության Գամրաց կողմերը և Կեսարիայում ամուսնանում է Եվթաղ կոչված մեծատան քրոջ Սոփիի հետ: Տարին չբոլորած Բուրդար առնում է իր կնոջ և ճանապարհ ընկնում դեպի հայրենիք՝ պարսից հողը: Նրա ետևից գնում է և աները՝ Եվթաղը: Հասնելով Արարատյան գավառը, Վաղարշապատ քաղաքը, Սոփին մտնում է Գրիգոր մանկան մոտ իբր ստնտու և սնուցանում նրան:

Երբ Խոսրովի սպանության հետևանքով Անակի ազգատոհմը ոչնչացվում է, Բուրդար խլում է Գրիգորին իր մոր Ոգուհու ձեռքից, հանձնում իր կնոջ Սոփուն և հեռանում Կապպադովկիա, հարկավ, աներոջ հետ միասին: Այստեղ կրթվում է, ուսանելով հելլեն և ասորի դպրություն և լեզու: Տասներկու տարեկան հասակում պսակվում է Դավիթ բարեպաշտ մարդու դստեր հետ, անունը Մարիամ: Ունենում է երկու որդի, Վրթանես և Արիստակես:

Ագաթանգեղոս անծանոթ չէ այս զրույցին: Զենոբի ասելով, ոչ միայն Գրիգորն է ազատվում սրից, այլ և նրա եղբայրը Սուրենը, որ սնվում է իր հորաքեռ մոտ՝ պարսից երկրում:

Ագաթանգեղոս ևս գիտե, որ երկու մանուկ է փրկված. «պրծեալ ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայկեաց ուրումն, զմին ի կողմանս Պարսից եւ զմին ի կողմանս Յունաց»:

Դարձյալ Ագաթանգեղոս անգետ չէ, որ Լուսավորիչ երկու որդի է ունեցել, «յայնմ ժամանակի լուաւ յոմանց ի տեղեկաց որ գիտակ արարին զքագաւորն վասն սրբոյն Գրիգորի զի յառաջ մինչդեռ ի մանկութեան տիսն էր ամուսնացեալ եւ երկու որդիս ստացեալ, որոյ առաջնոյն անուն ճանաչի Վրթանէս, որ յաշխարհիակաց կեանս էր, որ ապա եւ յաստիճան պաշտամանն եկաց յերիցութեան»: Երկրորդը՝ Ռստակեսը մանկությունից ընդունում է ճգնավորական կյանք:

Ջենոբը հիշում է մենակյացի անունը, Նիկոմաքոս, որի մոտ է գնում Ռստակեսը: Ագաթանգեղոս անունը չի տալիս, այլ ուզում է հավատացնել, որ ինքը չէ գնում ուրիշի մոտ, այլ իրեն են միանում ոմանք, «գտեալ զոմանս յինքն յարեցուցեալ» (Գլ. 123):

Անհավանական չէ ենթադրել, որ երբեմն երկու իրարից անկախ զրույց է եղել Լուսավորչի ծագման վերաբերյալ:

Մեկի հիմն է ցույց տալ, որ Լուսավորիչն պարթև արյուն ունի և է որդի Անակ իշխանի: Մյուսը իր սկզբնական ձևով Գրիգորի հայրն է համարել Բուրդարին, որը նմանապես անտոհմիկ ոմն չէ, այլ «ի նշանաւոր ազգէն Պարսից», կամ ինչպես Խորենացին է ասում «ոչ ի փոքունց եւ յանշնանից»: Բուրդարի կինը՝ Սոփի «կապպատոկեացի» է «եւ է քոյր Եւթաղի», որ դարձեալ «յայտնի ոմն է» և մեծատուն: Ասել է թե Գրիգորը օտար չէ արևմուտքին. իր ծագումով մի ոտը արևելք է, մյուսը՝ արևմուտք:

Բնական կասկած է ծագում, արդյոք սկզբում խոսքը Եվթաղի և Սոփու մասին չէ՞ եղել, որ նրանք են համարվել Գրիգորի ծնողները:

Հետո միայն Եվթաղ աներ է դուրս բերած, հոր դերը զիջանելով Բուրդարին, որպեսզի այս կերպ կապվի մանուկ Գրիգորը արևելյան ազնվական տոհմի հետ:

Հետագայում երկու զրույցները Անակի և Բուրդարի շուրջը ձուլվել են և կազմել մի պատմություն, ուր Բուրդարին և իր կինը այլևս հայր և մայր չեն Գրիգորի համար, այլ լոկ դայակ, ստնտու, Եվթաղն էլ աներ է:

Անունների ընտրությունը նպատակավոր է, որպես վայել է առասպելական պատմությանց: Եվթաղ մեծատուն է, **Euthalios** նշանակում է հունարեն «հարուստ», Սոփի, **Sophia**, «իմաստութիւն», Բուրդար հավանորեն, պարսկերեն **burdar** «տանող», որ պատշաճում է և որոշում անձի էությունը որպես դայակ:

Երևում է որ Գրիգորի մանկության պարագաները հյուսված են Տրդատի պատմության օրինակով: Որպիսի զուգադիպություն: Երկու մանուկ, զոհ միևնույն ընտանեկան դժբախտության, փախչում ազատվում են օտար երկիր, իրար հանդիպում և միևնույն գործի ծառայում: Երկուսի արկածային մանկությունը և վերջնական հաղթանակը ավելի վիպական բնույթ ունին, քան պատմական և մեկը, անշուշտ, ձևած է մյուսի վրա:

Վերականգնել իսկությունը դժվար է: Տրդատի փախուստը հավանական է, թեև Ագաթանգեղոսի տված պարագաները կասկածելի են: Եղիշեն ևս գիտե, որ Տրդատ «ի տղայութեան փախուցեալ ի հայրապսպան մարդախոխող հօրեղբարցն իւրոց, ապրեալ սնաւ» Հունաց երկրում: Բայց թվում է, թե ուրիշ տեղեկություն ուներ սպանության հեղինակների մասին: Տրդատի հոր Խոսրովի սպանողներն իր հարազատ եղբայրներն են եղած՝ մի հանգամանք, որ խախտում է Ագաթանգեղոսի պատմության հիմը:

Բյուզանդացի հեղինակ Զոնարաս, քաղելով Դիոն Կասսիոսից, հաղորդում էր Գալլոս կայսեր մասին խոսելիս, որ նույն ժամանակ պարսիկները գրավեցին Հայաստան, մինչ Տրդատ թագավորը փախավ և նրա որդիքը անցան պարսից կողմը (II, 589):

Սրանով կասկածի տակ են ընկնում հայ աղբյուրների ավանդածը Տրդատի մասին:

Գալլոս կայսրը թագավորում էր 251-253 տարիներուն: Խոսրովի սպանվելով Հայաստանը չի կորցնում իր թագը, այլ գահն է անցնում նրա որդի Տրդատը: Սա 252 թ. մոտավորապես պարսիկների ճնշման տակ փախչում է որպես գահակալ թագավոր և ոչ «ի տղայութեան հասակի»:

Գիտնականների կողմից եղած փորձերը հաշտեցնելու օտար և հայ տեղեկությունները համարելու են անհաջող:

Այս հակասությունը ցույց է տալիս, որ Տրդատի և իր հոր Խոսրովի պատմությունը պարուրված է հայ ավանդության մեջ վիպական պաճուճանքով: Բյուզանդական վեպը ընտանի էր հայ ազնվականության շրջանում ինչպես և պարսկականը: Տրդատի անձը նույնչափ հերոսական էր որքան Սասանյան Արտաշիրի: Սա սկիզբը դրավ պարսիկ ազգային վերածնության, հիմնելով նոր և փառահեղ հարստությունը և վերականգնելով Իրանի հին կրոնը՝ զրադաշտականությունը: Հայ թագավորը ևս նահապետ էր հանդիսանում Հայաստանի կրոնական վերանորոգության և նոր և հայացած Արշակունի արքայական տան:

Արտաշիրի կյանքը զարդարված է հրաշալի առասպելներով: **«Կարնամակը»**, ուր պատմվում է Արտաշիրի կյանքի վեպը, բացառիկ գրական-պատմական գործ է, որ արտահայտում է նույն ժամանակվա վիպական ճաշակը և ծանոթացնում ժողովրդական ստեղծագործության շրջուն մոտիվների հետ:

Հիմք կա կարծելու, որ նման գրույցներ հյուսված են եղել և Տրդատի կյանքի շուրջը, նման գույներով նկարված նրա պատկերը: Հայ մատենագիր Ագաթանգեղոսը հարմար չէ գտել փծուն առասպելները և նրա գրչի տակ թափվել են կենդանի պատկերից բոլոր մսերը և մնացել չոր կմախքը:

* * *

Ագաթանգեղոսի հունարեն թարգմանությունը սկսվում է մի հատվածով, որ պակասում է հայերեն բնագրի մեջ: Նա վերաբերում է Արտաշիրի և Արտավանի բախման և քիչ տարբերությամբ կրկնվում է «Կարնամակի» մեջ: Առասպելական զրույց: Այս հանգամանքը պերճորեն վկայում է Ագաթանգեղոսի երբեմնյան կապը «Կարնամակի» հետ:

Բանասիրության մեջ կարծիք է հայտնված, որ հիշյալ վիպական հատվածը Ագաթանգեղոսից չէ առնված, այլ հույն թարգմանիչն է, որ ավելացրել է քաղելով անհայտ աղբյուրից:

Դժվար թե կարելի է համաձայնել այս ենթադրության: Ի՞նչ շարժառիթ պիտի ունենար թարգմանիչը կցելու Ագաթանգեղոսին մի պարսկական զրույց, որ կրոնական որևէ շահ չունի և եկեղեցական տեսակետից անճոռնի առասպել է: Ագաթանգեղոսի թարգմանությունն այլ նպատակ չունի, եթե ոչ ներկայացնելու հայ եկեղեցու հիմնադրի կյանքը՝ ի պետս կրոնական վեճերի մյուս եկեղեցիների հետ: Ինչո՞ւ պիտի թարգմանիչը ավելացներ մի զրույց, որ անարժեք է եկեղեցական նկատումով: Հավանական է, որ հայ բնագրում եղել է իրոք նույն հատվածը: Զարմանալի է, որ հույնը չէ տալիս Ագաթանգեղոսի անունը, չէ հիշում, որ թարգմանելի գործը Տրդատի իսկ քարտուղարին է պատկանում: Այսպիսի կարևոր տեղեկություն չէր կարող բարձիթող անել թարգմանիչը, եթե առաջաբանը իր ներկա ձևով հայտնի լիներ նրան:

Ճշմարիտ է, առաջաբանի ընդհանուր միտքը ծանոթ է հույն թարգմանչին, այն, որով մատենագիրը համեմատվում է օտարադեմ վաճառաշահ նավարկուի հետ: Սակայն, այստեղից դեռ չի հետևում, որ տրամադրելի է այժմյան առաջաբանը իր ներկա վիճակում: Թվում է, որ առաջաբանը նորեն խմբագրված է և մտցրած Ագաթանգեղոս քարտուղարի անունը: Նախնի առաջաբանն ավելի ամփոփ պետք է եղած լինի և ազատ այն վատթար տեսակի հռետորական դպրոցի արհեստական ոճից և բառակուտակներից, որ տեսնում ենք այժմ: Նավարկության պատկերը եղել է նաև Փարպեցու առաջաբանում, որի միայն հետքերն են մնացել:

Փարպեցու առաջաբանի խառնակ վիճակը բացատրելու է նրանով, որ մի նոր ձեռք կամեցել է համաձայնեցնել Ագաթանգեղոսի վերամշակված առաջաբանի հետ: Տրդատի քարտուղար Ագաթանգեղոսին է վերագրված նաև Անանունի պատմությունը Սեբեոսի մոտ:

Այս պատմությունը նախապես կազմում է եղել Փավստոսի մասը այս կամ այն ձևով, և իհարկե, առանց Ագաթանգեղոսի անվան:

Ագաթանգեղոսի արդի առաջաբանի խմբագրության ժամանակը

որոշելու համար հաշվի առնելու է Ագաթանգեղոս անվան հիշատակությունը Անանունի մոտ: Գաղտնի թելի երկու հանգույցներն են, գուցե, միաժամանակ կապված: Մեր նպատակը չէ լուծել այդ հանգույցները: Ինչ որ մեզ այս րոպեիս զբաղեցնում է, Արտավանին նայող հատվածն է: Ընդունենք անգամ, որ այդ հատվածը չի եղել հայ բնագրում, այլ առնված է ուրիշ տեղից: Հունարեն թարգմանությունը պատկանում է հայ մարդու և նա առած պիտի լինի նույն հատվածը, եթե ոչ Ագաթանգեղոսի օրինակից, ուրիշ հայ աղբյուրից: Ասել է, թե հայ շրջաններում ծանոթ է եղել:

Մեզ թվում է, որ ներկա Ագաթանգեղոս պահել է նաև ուրիշ մոտիվներ, որ հատուկ են պարսկական վեպին, որպիսին է «Կարնամակը»:

Արտաշիրը փախչում է Արտավանի պալատական աղջկա հետ, բռնելով ուղին դեպ հարավային Պարսկաստան, որպեսզի ապստամբության դրոշը բարձրացնե ընդդեմ Արտավանի: Ամենից առաջ նրան հարում է մի ազնվական մարդ, որ թվում է Սպահանի իշխանն է: Նրա անունն էր Բանակ: Նա ևս փախած էր Արտավանի երեսից և մեկուսացած ապրում էր իր վեց որդիների հետ:

Արտաշիրը սկզբում կասկածով է վերաբերում Բանակին, կարծելով, որ նա կեղծում է, որպեսզի նենգորեն իրեն բռնե և տանե Արտավանի ձեռքը: Բանակը ամեն կերպ համոզում է, երդվելով որ հավատարմությամբ կծառայի նրան: Արտաշիրը շարունակում է իր ուղին, բայց շուտով դառնում է Բանակի մոտ և նրա հետ միասին հարձակվում է Արտավանի վրա, ջարդում նրա զորքերը և տիրանում նրա ժառանգության:

Արտաշիրի մի այլ արկածն է նրա կռիվը Հավքաճրոխտ դևի հետ: Հսկայական մի ուժ, որին չի կարողանում դեմ դնել պարսիկ հերոսը և քանի անգամ անհաջողություն կրելուց հետո փախչում է և այնպես փրկվում ահռելի թշնամուց: Ճանապարհին դադար է առնում մի գյուղում և հյուրընկալություն խնդրում Բուրջակ և Բուրջակտուր անուն եղբայրներից, ձևանալով որպես մի հասարակ ձիավոր Արտաշիրի պարտված զորքերից: Եղբայրները ընդունում են անծանոթ օտարականին: Շուտով մտերմանում է Արտաշիրը և հայտնում է իր ով լինելը: Նրանց օգնությամբ Արտաշիրը ծրագրում է, թե ինչպես կործանե հսկա Հավքաճրոխտին: Որոշում են, որ Արտաշիրը ծպտյալ մտնե դևի մոտ ծառայության: Այդպես էլ անում է: Դևի և նրա սպասավորների աչքը մտնելուց հետո, մի բարի օր ինքն է հանձն առնում կերակրել դևին: Մինչ դևը բերանը բաց սպասում էր սովորական կերակուրին, Արտաշիրը տալիս է նրան հալած արճիճ: Դևը տեղնուտեղը պայթում է և սատակում:

Սասանյան պատմությունը, հայտնի է, իր տեղն ունի հռչակավոր «Շահնամեի» մեջ: Հիշածս զրույցները Արտաշիրի կյանքից գտնում ենք և

այստեղ գրեթե նույնորեն: Զանազանությունն այն է, որ Ֆիրդուսին կոչում է իշխան Բանակին **Supak**, և նա Սպահանցի չէ, այլ Ջահրամից՝

Yeki namvar bud names Tebak:
Ki ber sahr gahram bud u padsa:

Տաբակը յոթն որդի ուներ, «Կարնամակի» Բանակը՝ վեց: Լսելով Արտաշիրի ընդվզումը, լքում է Բահմանին, որ է որդի Արտավանի և անցնում ապստամբի կողմը: Բահմանը պարտվում է և Արտաշիր գրավում է Ստահր քաղաքը, որ երևում է Բահմանի իշխանության կենտրոնն է: Սելքում Տաբակը ինչպես և Բանակը, հավատ չեն ներշնչում Արտաշիրին: Երբ Զենտավեստը ձեռքին երդվում է, որ հիու ծառա է և ոչ մի դավաղրական գաղտնիք չունի, այն ժամանակ Արտաշիրը ընդունում է նրան և միասին հաղթում են Բահմանին:

Հրեշի պատմությունը ևս ծանոթ է «Շահնամե»-ին: Միայն թե անունը կարդացվում է Հավթուատ (**Haftwad**) փոխանակ Հավթանբոխտի: Բանաստեղծը բացատրում է անունը նրանով, որ հրեշը յոթն որդի ուներ: Հավթուատը մի աղքատ մարդ էր և իր աղջկան շնորհիվ ձեռք է բերում մի չնաշխարհիկ որդի, որ աճելով ստանում է փղի մեծություն և ուժ: Արտաշիրը սպանում է Նուշզատի որդի Միհրակի աջակցությամբ դևին նույն ձևով, ինչպես սպանում է Հավթանբոխտին, այսինքն՝ ծպտյալ ծառայության է մտնում Վիշապի մոտ և հալած արճիճ տալով մեռցնում: «Կարնամակի» մեջ Անուշակզատի որդի Միհրակը, ընդհակառակը, Արտաշիրի դիմադիրներեն է և ընկնում է Արտաշիրի սրից:

* * *

Թվում է, որ նման առասպելներով խտացած է եղել և հայ նախարարական միջավայրը: Տակավին Խորենացու ժամանակ կենդանի է և ընտանի հայ մթնոլորտում Արտաշիրի առասպելական պատմությունը մինչիսկ ավելի լայն բովանդակությամբ, քան տալիս է Կարնամակը և կամ մյուս աղբյուրները: Տեսականապես հնարավոր է, որ պարսիկ հերոսական վեպը ազդած լինի և հայ ստեղծագործության վրա: Մասնավորապես ինչ վերաբերում է Արտաշիրի ժամանակակից և հակառակորդ Խոսրով-Տրդատ թագավորների մասին պահված ազգային ավանդություններին:

Այս տեսակետից հետաքրքրական է կանգ առնել սպահանցի իշխան Բանակի վրա: «Շահնամեն» անվանում է նրան **Supak:** Նյոլդեքե հաստատ չէ համարում Բանակ ընթերցումը, հնարավոր է գտնում կարդալ **Բռհակ**:

Արդյոք այս վիճելի ընթերցվածը չէ՞ թաքցնում Անակ Պարթևի անունը: Պահլավ գրերը այնքան միակերպ են, որ արգելք չեն կարող լինել այս ենթադրության:

Բանակը ինչպես և Տաբակը Պարթև ցեղից են, մեկը Սպահանի շրջանում, մյուսը՝ Ջահրամում, որ, կարծվում է, արդի Գարուն է: Սրանք Արտավանի իշխանության ներքո երկրների պետեր են: Բանակը նույնպիսի դավաճան, որպես հայ ավանդության Անակը: Արտավանին լքելով, ծառայում են Արտաշիրի շահերին, և օգնում նրան, սպանելու Պարթև Արտավանին և կամ Խոսրովին:

Արտաշիրի կռիվը Հավթանբոխտի հետ տալիս է մի ուրիշ վիպական մոտիվ, այն է բարեկամ ձևանալ թշնամուն, հավատը գրավել և խարդախորեն սպանել: Արտաշիրի վերաբերումը Հավթանբոխտին հար և նման է Անակի դավադրության հայ Խոսրովի դեմ:

Հավթանբոխտը առասպելական դեմք է և հավանորեն կապակից այն կրոնական մեծ վերանորոգության, որ տեղի ունեցավ Սասանյանների համբարձումով: Պարթև պաշտամունքը տեղի տվին Զրադաշտականության, կամ ավելի հեշտ, վերջինս դարձավ պետական պարտադիր կրոն: Ի զուր չէ ասած «Կարնամակ»-ում, որ Հավթանբոխտի սպանությունից հետո Արտաշիրը վերահաստատեց Միհրական և Սեղա մեծ տոները:

Haftanboxt, Haftwad, Astawad զանազան ընթերցվածներն արդեն վկայում են, որ հրեշի բուն անունը եղծված է և պետք ունի ստուգության: Չենք ուզենալ անուշադիր թողնել, որ Ագաթանգեղոսի ասելով, Հայոց թագավորը Արտաշիրի հարձակումը վանելուց հետո «հրաման տայր **յառքն բազին** մեհենից ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտամանն»:

Արդյո՞ք որևէ գաղտնի կապ չկա յոթն բագին դարձվածի և Հավթանբոխտի մեջ: Կարելի՞ է հրեշի անվան ստույգ ընթերցմամբ մերձեցնել հայ բառին, կարծելով, որ նշանավոր դևը արտահայտում է յոթն բագինյան կռոց պաշտամունքը, կամ գուցե յոթն բագինը ընդունված իմաստից ավելի բան է ծածկում իր մեջ, որ նվազ հավանական է:

Հավթանբոխտի դեմ լարած թակարդի մեջ Արտաշիրին աջակից են Բուրջ և Բուրջակտուր եղբայրները: «Կարնամակը» հիշում է, որ Արտաշիրի հայրը Սասան երազում տեսավ, որ իր տան երեք նշանավոր հրատները, սրբազան կրակները՝ **froba, gushasp** և **burdjin** բորբոքվում և լուսավորում են ամբողջ աշխարհը: Նախագուշակություն, ուրեմն, Արտաշիրի հաջողության:

Անտարակույս, Բուրջ և Բուրջակտուր եղբայրները դիմառնություն են **burdjin** կրակի: Հայտնի է, որ առաջին հրատը **adr-Farnbag** համարվում էր հովանավոր կրոնի, երկրորդը **adr-Gushnasp** (= հին Վշնասպ) - պատերազմական, երրորդը՝ **adr-Burzin - Mihr -** երկրագործության: Բուրջ ներկայացնում է վերջին հրատը, այն է **Burdjin** (= հին Բուրջին): Իսկ Բուրջակտուր, պետք է ենթադրել, աղավաղումն է **burdjak-dar** բառի, որ է հրատը պահող մոգ պաշտոնյա, կամ ավելի հավանական **burdjin-atur** (= **ad-r,** հուր):

Զարմանալի է, որ այս մտացածին եղբայրների անունը հիշվում է և հայ ավանդության մեջ: Հայ ռացիոնալիստ պատմաբանը՝ Խորենացին, աշխատում է իր սովորությանը համաձայն իրական զգեստ հագցնել առասպելական էակներին: Նրա մեկնությամբ Արտաշիրի դեմ մաքառեց Արտավանի ազգականներից Կարենյան Պահլավ տունը առաջնորդությամբ Վեհսաճանի: Սակայն, չուտով պարտվեց, ամբողջ տունը բնաջինջ եղավ և մի միայն մի տղա կարողացավ փրկվել, փախչելով Քուշանաց աշխարհը: Փրկողը ոչ այլ ոք էր, եթե ոչ տան մտերիմներից ոմն Բուրզ անունով:

Արդ՝ այս Բուրզը, հավանորեն, նույնն է ինչ որ «Կարնամակի» Բուրջը և Բուրջակտուրը: Բուրզը փախչում է Քուշանաց աշխարհը: Քուշանք հայտնի Եվթաղ կամ Հեփթաղ ցեղն է, որ V-VI դարերում տիրում էր Խորասանի հյուսիսային սահմաններին:

Պարսից վեպի Բուրջ և Բուրջակտուրը նույնպես Խորասանի կողմերիցն է և այս է պատճառը, որ Արտաշիրը ձևանում է խորասանցի, երբ նրանց խորհրդով, ուզում է ներգել Հավքաներխտին:

Խորհրդավոր հանգամանք: Նոր նպաստ մեր մեկնության, որ Բուրջ թե Բուրզ արտահայտիչ են Բուրզին՝ միևր կրակին: Հայտնի է, որ սրա գլխավոր ատրուշանը գտնվում էր Խորասանում, Ռեվանտ քաղաքում, ոչ հեռի Նյուշապուրից: Այս այն վայրն է, ուր նահատակվեցին Ղևոնդյանց քահանաները՝ 451 թվի ապստամբության հետևանքով, և որ կոչվում է Փարպեցու մոտ Ռևան:

Խորենացու Վեհսաճանը խնամություն ունի «Կարնամակի» Բարչանի հետ: Արտավանին հաղթելուց հետո Արտաշիրը գնում է **Կարմանի** Բարչան թագավորի վրա, որ ապաստան էր տվել Արտավանի երկու որդոց, մինչ մյուս երկուսը փախել էին Կակուլի արքայի մոտ: Իսկ ըստ Խորենացու Արտավանի ազգականները, Կարնան Պահլավները ճակատում են Արտաշիրի դեմ Վեհսաճանի գլխավորությամբ:

Թվում է, որ Կարնան կշռում է Կարման և Վեհսաճանը՝ Բարչան, կամ Պահլավ ձևով, Վարճան: Թերևս Վեհսաճան, կարդալու է Վեհ-ռաճան, կամ Բարչանը՝ Բեհ-սաչան, որի պահլավ ձևը՝ Վեհ-սաճան:

* * *

Մի դիտողություն ևս:

Տաբարի պատմում է, անշուշտ, առնելով «Կարնամակի» նման վիպական աղբյուրից, որ Արտավանը Արտաշիրի ապստամբության առթիվ կամենալով նրան վատաբանել, թուղթ է գրում, որի մեջ ասում է. «Դու մեղավոր ես, որ անցար չափդ և վճռեցիր բախտդ, օ՜ քուրդ, որ քրդերի վրանում ես ծնված» (**Nöldeke**, Geschichte der Perser und Araber, p. 11-12)

Խորենացին նույն բանը պատմում է հայ Արտաշես թագավորի վերաբերյալ: Երվանդ, լսելով, որ Սմբատ Բագրատունի աշխատում է արքայորդի Արտաշեսին հաստատել հայրենի գահի վրա ընդդեմ Երվանդի, մարդ է ղրկում և հանդիմանում, թե «խաբեալ ի ստնտուէդ սնուցանես զորդի մարիդ հակառակ ինձ»: Մար ասելով հասկացվում է այստեղ քուրդ:

Այս կետը ևս ցույց է տալիս որ «Կարնամակեան» զրույցները տարածված են եղել հայ միջավայրում:

Մեր համեմատությունները մի բան են վկայում, որ Ագաթանգեղոսի պատմությունը Գրիգորի և Տրդատի փոխհարաբերության և թերևս ծագման մասին վիպական գունավորում ունի հայտնի չափով: Ավելի հեռուն գնալ դժվար թե հիմք կա:

Ճիշտ է, ասորի Գևորգ եպիսկոպոսի տված տեղեկությունները կարող են խրախուսել կասկածի տակ առնելու Ագաթանգեղոսի վարկածը Գրիգորի ծագման վրա, բայց և այնպես զգուշանալու է այս գայթակղիչ հայտնությունից: Գևորգ եպիսկոպոս († 740), ապրած ութերորդ դարու առաջի կեսին, ծանոթ էր Գրիգորի մի կենսագրության, ուր հայ երկրի Լուսավորիչը ազգով հռոմայեցի էր համարված: Տղայության օրերից Հայաստան գալով որպես թե սնավ և ուսավ հայ գիրն ու լեզուն և Տրդատի մերձավոր եղավ և նրա փրկության պատճառ (3):

Վստահելով այս տեղեկության, կարելի էր կարծել, որ Գրիգոր հռոմայեցի է անվանված այն պատճառով, որ նա ծագումով հռոմեական բաժնի հայկական երկրամասերից է եղել և գուցե ելած այն բեղուն միջավայրեն, որտեղից ծնան կապպադովկիական նշանավոր հայրերը Գրիգոր անունով:

Սակայն, անխոհեմություն կլիներ անպայման հավատ ընծայել ասորի եպիսկոպոսին: Սա և կամ իր աղբյուրը երևում է շփոթել են Գրիգորին Ագաթանգեղոսի հետ:

Գրիգորի կենսագիրն է, որ ասում է իր մասին, թե հռոմայեցի էր Հայաստան եկած և Տրդատի մերձավոր՝ այն է քարտուղար: Գրիգորի ժամանակ հայերը գիր ու դպրություն չունեին, ուստի Գևորգ Ասորու խոսքը, որ Գրիգոր ուսավ հայ գիրը, բավական է, որ խախտե մեր հավատը դեպի նրա ճշմարտախոսությունը:

Մեր քննությանից հետևում է մի բան, որ Գրիգորի կյանքը Ագաթանգեղոսի գրչի տակ, որպես պատմական գործ, կրած է իրանական վիպախոսության ազդեցությունը ի վնաս պատմական իսկության:

ՄԱՐԶՊԱՆ ՎԱՍԱԿԸ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

Հայերի պատմական կյանքում V դարը հատուկ հոչակ ունի: Քրիստոնեական նորածին լուսավորության ազդեցության տակ տեղի ունեցած ժողովրդական ոգու արագ վերելքը արտահայտություն գտավ պարսկական միապետության դեմ ուղղված այսպես կոչված կրոնական շարժման մեջ:

Ավանդական հայացքը այդ շարժման նկատմամբ, որն անցել է այն նկարագրող պատմիչներից՝ նոր հետազոտողներին, ինձ թվում է միակողմանի և Հայաստանում իրերի իրական դրությանը չհամապատասխանող: Հնարավորություն կա հիմգերորդ դարի իրադարձություններին տալ փոքր ինչ այլ լուսաբանություն և պատմական այլ գնահատական:

V դարի պատերազմների պատմությունը մեզ հասել է Եղիշեի և Ղազար Փարպեցու նկարագրությամբ: Փաստերի պատկերման մեջ նրանք ընդհանուր առմամբ համընկնում են: Հուզման պատճառը, ինչպես նրանք են կարծում, Հազկերտ II-ի պաշտոնական հրովարտակն է եղել, որով առաջարկվում էր հայերին հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել մազդեզականություն: Հոգևորականությունն ու իշխանները երկրի մարզպան Վասակի հետ միասին հավաքվեցին Արտաշատ քաղաքում՝ խորհրդակցելու և պատասխան տալու համար: Նրանք վճռեցին չկատարել արքայի կամքը և զենքի ուժով պաշտպանել հավատը ընդդեմ բռնության: Վճիռը հաստատվեց փոխադարձ երդմամբ Սբ. Ավետարանի վրա: Երբ ժամանեցին մոգերը և սկսեցին արծարծել սրբազան հուրը, գազազած ամբոխը նետվեց ատրուշանների վրա, ոչնչացրեց դրանք և սպանեց մոգերին: Շուտով հայտնվեց պարսիկ զորքը: Այդ ճգնաժամային պահին մարզպան Վասակը իր համախոհների հետ միասին անջատվեց հայերից և անցավ պարսիկների կողմը: Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ճակատամարտ տվեցին պարսից զորքին, որն ավարտվեց Վարդանի մահով: Պարսիկները բռնեցին մնացյալ խռովարարներին և դատի տվեցին: Դատավարության ժամանակ բացահայտվեց Վասակի խարդախությունը և նրան դատեցին:

Այդ տեսքով են ներկայացնում մեզ պատմիչները հայերի ապստամբությունը V դարում, ընդ որում նրանք, որպես հոգևոր կոչման և դաստիարակության տեր անձինք, ջանում են ամբողջ պատմությանը հաղորդել

կրոնական բնույթ: Հուզումները Հայաստանում, իմ կարծիքով, հանգչում էին ուրիշ, առավել կենսական հիմքերի վրա: Եղիշեի մոտ պահպանված որոշ դրական տվյալներ խոսում են հօգուտ այն բանի, որ խռովությունները Հայաստանում կրում էին ոչ միայն կրոնական, այլև ընդհանրապես սոցիալական բնույթ: Ցանկանալով մնալ զեկուցման սահմաններում, ես չեմ շոշափում հարցի այդ կողմը և քննարկում եմ սոսկ այն հիմնական գաղափարը, որն անցկացնում են պատմիչները:

Ըստ Եղիշեի, և մասամբ ըստ Ղազարի, Վարդանը և նրա զինակիցները, որոնք ընկել են մարտում՝ հավիտենական փառաց և հիշատակաց արժանի սուրբ նահատակներ են: Հակառակ կուսակցությունը Վասակը և նրա համախոհները, դավաճաններ և հողկալի երդմնազանցներ են: Փառասիրությունից և անձնական շահագրգռություններից դրդված, նրանք տեղի են տվել պարսիկների թելադրանքին, ըստ Եղիշեի, նույնիսկ ընդունել են պարսից կրոնը և գլխավոր մեղավորները հանդիսացել երկրի բոլոր աղետների համար:

Մեսրոպի կենսագիրը՝ Կորյունը, խիստ համակրանքով է խոսում Վասակի անձնավորության մասին (1): Կասկած է առաջանում պատմիչների դատողությունների ճշմարտացիության մասին, ուստի հարկ է առավել բանական հիմքեր փնտրել Վասակի գործողություններում:

Եթե մի կողմ նետելու լինենք վարքագրական տեսակետը, որով Եղիշեն և Ղազարը դիտում են իրերը, և շարադրանքից հեռացնենք կուսակցական և Վասակի նկատմամբ քշնամական ոգին, ապա իրադարձությունը մեզ կներկայանա այլ լույսի ներքո:

Հայոց իշխանները, առավել ևս երկրի կառավարիչ Վասակը, օժտված էին քաղաքական խոհեմությամբ և քաջ գիտակցում էին, որ իրենց համար անհնարին է ուժերը չափել հզորագույն մի միապետության հետ:

Արտաշատի ժողովում հարցը քննարկելիս նրանք հույս էին դնում արտաքին օգնության վրա: Ժողովից հետո Վասակը, որոշման համաձայն[1], դեսպանություն հղեց Թեոդոսիոս կայսեր մոտ, որի հետ հայերը մեծ հույսեր էին կապում: Այդ բոլորի մասին տեղեկացնում են Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ Վասակ Մամիկոնյանին, ինչպես նաև Անտիոքի ստրատեգոս Անատոլիոսին, և խնդրում նրանց աջակցությունը. Սուրհանդակներ ուղարկեցին նաև հայկական հարավային նահանգները Աղձնիք, Անգեղտուն և Ծոփք[2], որոնք այն ժամանակ իրենցից ներկայացնում էին Բյուզանդիայի հովանավորության տակ գտնվող ինքնավար սատրա-

[1] **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1891, էջ 204:

[2] Նույն տեղում, էջ 205:

պություններ: Կոչեր հղեցին Իբերիա և Աղվանք, և, վերջապես, բանակցությունների մեջ մտան հոների թագավոր Հեռանի և ուրիշ լեռնականների հետ[1]:

Վասակը և նախարարները սպասում էին դեսպանների վերադարձին: Մինչ այդ հոգևորականությունը եռանդով հրահրում էր ժողովրդի կրքերը: Ամբոխը տեղի տվեց նրանց բոցաշունչ քարոզների ազդեցությանը, և սկիզբ առան թշնամական գործողություններ, ցույցեր և բախումներ: Զարեհավանում խաժամուժը սրբազան կրակը ջուրը ներեց, բոնեց մոգերին և իրենց պատշած արեգակի ծագման ժամանակ սպանեց նրանց:

Իշխաններից ոմանք առաջարկեցին Վասակին կանգնել շարժման գլուխ և հայտարարել համընդհանուր ապստամբություն: Նա դանդաղում էր: Այդ ճգնաժամային պահին լուր ստացվեց Թեոդոսիոսի մահվան մասին: Նրա հաջորդ Մարկիանոսը կտրականապես հրաժարվեց աջակցել հայերին: Անատոլիոսի և Եղփարիոս Ասորու (ավելի ճիշտ՝ Փղորենտ, ինչպես Ղազարի մոտ է: Հավանաբար՝ Փղորենտիոսը, նախկին **praefectus praetoriis** - ն արևելքում՝ 435 և 438 թվականներին)[2], Եղիշեի արտահայտությամբ այդ երկու անարգ և վատթար արանց, խորհրդով կայսրը գերադասեց խաղաղություն պահպանել հեթանոսների հետ, քան թե օգնել քրիստոնյաներին: Մարկիանոսը անգամ հարկ համարեց նույն Փղորենտիոսի միջոցով այդ մասին տեղեկացնել Հազկերտին: Դեսպանության անհաջող ելքը ջարդուփշուր արեց հայերի հույսերն ու ծրագրերը և շրջադարձային կետ հանդիսացավ շատ իշխանների համար՝ նրանց գործողություններում: Կայսեր մերժումին անմիջապես հաջորդեց Հայաստանի կայսերական մասի կառավարիչ Վասակի, ինչպես նաև հարավային նահանգների սատրապների մերժումը: Չգիտես ինչու հոներին չհաջողվեց կատարել տված խոստումը: Հետագայում հայերը կշտամբում էին նրանց, որ իրենց խոսքը չպահեցին և պատերազմի ժամանակ չհայտնվեցին: Ինչ վերաբերում է Իբերիային և Աղվանքին, ապա այնտեղ ուղարկված պարսկական զորաջոկատը շեղեց նրանց ուշադրությունը և խանգարեց նրանց միանալու հայերին: Ըստ երևույթին, հոներին էլ այդ զորաջոկատն էր կասեցրել:

Հանգամանքների անհաջող դասավորման հետևանքով հայերն ընկան անելանելի դրության մեջ: Այդպիսի պայմաններում խզել կապերը պարսիկների հետ և նրանց բացահայտ պատերազմ հայտարարել, նշանակում էր երկիրը տանել դեպի անխուսափելի կործանում: Վրա հասավ հուսախաբության ու տատանումների պահը: Կարծիքները տարամերժվում էին: Պարագլուխները պառակտվեցին երկու բանակի: Մի մասը կանգնած էր հանուն ապստամբության և խորհուրդ էր տալիս շարունակել սկսված գործը՝ հույսը

---

[1] **Եղիշե**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Վենետիկ, 1893, էջ 144 և 240:

[2] **Codex Theodosianus**, ed. Jothof, t. VI, p. 320.

դնելով սեփական ուժերի վրա: Մյուս մասը, հասկանալով նման հանդգնության ամբողջ վտանգը, խոհական համարեցին կասեցնել հետագա գործողությունները և կոծկել գործը: Առաջին կուսակցության գլուխ կանգնած էին Մամիկոնյաններն ու Արծրունիները, իսկ երկրորդի մարզպան Վասակն ու Բագրատունիները: Հաշտություն չկայացավ: Տեսակետների անհամաձայնությունը շուտով վերաճեց փոխադարձ թշնամության. և երկու կողմերը սկսեցին գործել տարբեր ուղղություններով և բացահայտորեն միմյանց դեմ: Վասակը կոչ կոչի հետևից էր ուղարկում երկրի բոլոր կողմերը և հուզված ժողովրդին խաղաղության և կարգի հրավիրում: Նա «ոչ երբեք դադարէր», ասում է Ղազար Փարպեցին, «գրել նամականի առ իշխանս և շինականս և քահանայս աշխարհիս Հայոց, ցուցանէր իմն բերեալս ի դրանէ ուխտս սուտս և վկայութիւնս ընդունայնս, թէ «Արքայից արքայ զքրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի, և զվնաս կոտորածի մոգուցն չխնդրէ. և զապստամբութենէն ասէ, թե «բնաւ և յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ և ի բանից Վարդանայ, և մի՛ կորնչիք ընդ դմա»[1]: Այդ նույնն է հաստատում Եղիշեն: Մարզպանի խոսքը ոչ բոլորովին կասեցրեց շարժումը: Ժողովուրդը եռանդով արձագանքեց Մամիկոնյանի կոչին և շարժվեց դեպի մարտադաշտ: Պարսից զորքի Հայաստանի սահմաններում հայտնվելուն պես, Վասակը, որի վրա ավելի շատ էր պատասխանատվություն ընկած երկրի ճակատագրի համար, ներկայացավ պարսից զորավարին: Նա վերջինիս աշխատում էր տարհամոզել, որ թեև երկրում ապստամբություն է՝ սակայն դա ժողովրդական ապստամբություն չէ, ներշնչում էր մարզպանը. սոսկ մի բուռն մարդիկ, հրահրված Վարդանից, անկարգություններ են կատարում. նրանց հետ հեշտ է հաշիվ տեսնել և նրանց հարկավոր է հանդարտեցնել:

Վարդանը նույնպես շտապեց հանդիպելու պարսից զորքին: Արաքսից ոչ հեռու տեղի ունեցավ ճակատամարտ: Ճակատամարտի հենց սկզբում նրա զինվորությունը, որը գլխավորապես ռամիկներից էր կազմված, փախուստի դիմեց: Նա մի բուռն քաջերի հետ ընկավ մարտում: Պատմիչների խոսքերով, հայերի կողմից ընկավ 287 մարդ, իսկ մարտադաշտ էր հայտնվել, ըստ Եղիշեի, 60.000 մարդ. պարսիկների թիվը եռակի ավելի էր: Որքան էլ որ առասպելական են այդ թվերը, բայց ցույց են տալիս, որ մարտական ուժերը նշանակալի էին: Այդքան պատկառելի ուժերի բախումից ստացվեց զոհերի համեմատաբար աննշան թիվ: Ակնհայտ է, որ պարսիկները հայերին դիտում էին որպես խռովարարների, որոնց հարկ էր ցրել և ոչ թե կոտորել որպես թշնամիների: Այդպիսով, շնորհիվ Վասակի միջնորդության, Հայաստանը փրկվեց սարսափելի կոտորածից:

Ճակատամարտից հետո մարզպանը վերստին դիմում է բնակչությանը նույն բովանդակությամբ կոչերով[1], և միաժամանակ աջակցում է պարս-

[1] **Ղազար Փարպեցի,** էջ 220, **Եղիշե,** էջ 176:

կական իշխանություններին զինաթափելու և հանդարտեցնելու ժողովրդին: Շուտով Վասակի տեղը նոր մարզպան նշանակեցին Ատրորմիզդին՝ հանձնարարելով շարունակելու երկրի խաղաղեցումը: Վասակը մյուս իշխանների ու հոգևորականների հետ կանչվեց արքունիք ամբողջ գործի քննության համար: Հարցաքննության ժամանակ պարզվեցին գործի բոլոր հանգամանքները: Տուժող կողմը, առաջնորդվելով Վասակի նկատմամբ տածած ատելությամբ, մատնեց բոլոր գաղտնիքները: Ներկայացվեցին գործին վերաբերող փաստաթղթեր՝ կնքված Վասակի կնիքով: Պարզվեց, որ մարզպանը ոչ միայն խառն է խռովություններին, այլ որ դրանք ամբողջապես նրա ձեռքի գործն են: Մերկացնելով Վասակին պետական դավաճանության մեջ, պարսիկները նրան զրկեցին բոլոր իրավունքներից և զնդան նետեցին, որտեղ և նա մահացավ:

Շրջանցելով մանրամասնությունները, ես ներկայացրի սոսկ իրադարձությունների սխեման այն հաջորդականությամբ և ներքին կապակցվածությամբ, ինչպես որ ես եմ հասկանում դրանք: Բոլոր փաստերը ես վերցրել եմ պատմիչներից, որոնց մոտ, սակայն, դրանք հայտնվում են այլ երանգավորումով: Դեսպանությունների հարցին նրանք հարկ եղած ուշադրությունը չեն դարձնում և շարադրանքում բավարար տեղ չեն հատկացնում: Իշխանների և ժողովրդի միջև տեղի ունեցած պառակտումը կախման մեջ չի դրվում դեսպանության սպասված ելքից: Ղազար Փարպեցին կարծում է, որ Բյուզանդիա ուղարկված դեսպանությունը վերադարձի ճանապարհին հապաղեց Հյուսիսային Հայաստանում և չհասավ պատերազմին: Պատմիչը ճիշտ չէ: Նախ և առաջ, նրա տեղեկությունը հակասում է Եղիշեի ցուցումին[2], համաձայն որի հայերը իմացան դեսպանության հետևանքների մասին, բայց և այնպես վճռեցին շարունակել գործը՝ ապավինելով Աստծուն և իրենց: Երկրորդ, Թեոդոսիոսը մահացել է 450 թվականի հուլիս ամսին. Արաքսի մոտի ճակատամարտը տեղի է ունեցել հաջորդ թվականին, Քրիստոսի հայտնության շաբաթ օրը: Դեսպանությունը Կոստանդնուպոլիս էր ժամանել դեռևս Թեոդոսիոսի կենդանության օրոք: Մեկ ամբողջ տարվա ընթացքում այն կարող էր հայերին հաղորդել իր առաքելության արդյունքների մասին, ինչպես որ, օրինակ, Մարկիանոսը հաջողեցրեց ժամանակին տեղեկացնել Հազկերտին իր որոշման մասին:

Եղիշեն աղավաղում է Վասակի կոչերի իմաստը: Նա չի հավատում նրանց անկեղծությանը և կարծում է, որ այդ կոչերի հետևանքով հարավային նահանգները և Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչը օգնության չեկան: Նրանց մերժումի իսկական պատճառը բացահայտվեց վերը:

[1] **Եղիշե**, էջ 228: **Ղազար Փարպեցի**, էջ 240:
[2] **Եղիշե**, էջ 135:

Արդարացի չէ Եղիշեն նաև իր այն պնդման մեջ, որ իբր թե Վասակը և նրա համախոհները ուրացել են քրիստոնեությունը և մազդեզականություն ընդունել: Առավել անկողմնակալ Ղազարը ոչ մի տեղ որոշակի չի ասում Վասակի հավատուրացության մասին. բոլոր մակդիրները, որոնք ուղեկցում են նրա անվանը, մատնացույց են անում միայն նենգություն, ուխտադրժություն: Վասակի կուսակցությունը նա բնութագրում է որպես մի խումբ մարդկանց, «զորոց», ինչպես նա է արտահայտվում, «գիտէր զհոլովումն ի վատթար կողմն, և ոչ ուղղակի ի խորհուրդ ուխտապահութեանն»[1]: Փաստորեն չի արդարանում նաև երկու պատմիչների համար էլ ընդհանուր **principium divisionis** - մասնակիցների բաժանումը տվյալ ուխտի կամ դաշինքի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի տեսանկյունից: Արտաշատի ժողովին մասնակցում էր 18 իշխան: Նրանցից գործին նվիրված դուրս եկան լոկ 8 մարդ, մնացյալ տասը հրաժարվեցին մասնակցելուց և կանգնած էին Վասակի կողմը: Ակնհայտ է, դրանում չի կարելի տեսնել ուխտադրժություն, այլ սոսկ հարցի **վերաձևում:**

Պառակտումից հետո Վասակին հարեցին ևս հինգ իշխաններ՝ Խորխոռունի, Գաբեղյան, Ակեացիք և Ուրծեցիք, իսկ Վարդանին՝ երեքը - Մանդակունի, Ռոփսենյան և Տաշրաց իշխանները, ինչպես երևում է պարսիկների բռնած նախարարների ցուցակից: Մամիկոնյաններից հետո շարժմանը առավել եռանդուն մասնակցություն բերեցին Արծրունի և Կամսարական իշխանները: Մամիկոնյանները սերտ կապերի մեջ էին գտնվում հոգևորականության հետ: Վարդանը Սահակ կաթողիկոսի թոռն էր: Հոգևորականության շարքերում Արծրունիներն ունեին խիստ հայտնի ներկայացուցիչ ի դեմս Աղանի, որի եղբայր Մեհրուժանը մտնում էր Թեոդոսիոսի մոտ ուղարկված դեսպանության կազմի մեջ: Արշավիր Կամսարական իշխանը ամուսնացած էր Վարդան Մամիկոնյանի դստեր հետ: Մյուս իշխաններից խռովությունների ժամանակ հատկապես աչքի ընկավ Վահան Ամատունին. նա անձնական հաշիվներ ուներ Վասակի հետ. դրանից առաջ պարսից պաշտոնյա Դենշապուհը նրան հեռացրել էր Հայաստանի հազարապետի պաշտոնից: Հնարավոր է, որ նա իր անկման մեջ կասկածում էր Վասակին:

Խռովությունների պատմության մեջ Բագրատունյաց իշխաններին նրանց հզորությանը վայել ուշադրություն չի դարձված: Ամենաազդեցիկ նախարարական տունը ետին պլան է մղված այն պատճառով, որ ձեռնպահ էր մնացել հուզումներին մասնակցելուց: Բագրատունիները նույնիսկ ժողովին չէին եկել: Բայց երբ Վասակը ուխտը դրժեց, ապա Տիրոց Բագրատունին հարեց նրան և օժանդակում էր նրա գործողություններին: Բագրատունիների ազդեցության ոլորտում գտնվող Արարատյան նահանգի

[1] **Ղազար Փարպեցի,** էջ 207:

տարբեր գավառների իշխանները (Աբեղյան, Գաբեղյան, Վահևունի, Վանանդի, Աշոցքի, Դվինի տերերը) հետևեցին Տիրոցի օրինակին:

Բագրատունյաց իշխանների գործելակերպը ցույց է տալիս, որ հենց սկզբից հայոց ավագանու մեջ համերաշխություն չկար: Այն պահին, երբ տարածայնությունը պարզորոշ երևան եկավ և իշխանները պառակտվեցին կուսակցությունների, Վասակը՝ երկրի մարզպանը, կանգնեց մեծամասնության կողմը և վարվեց նրա ցանկությանը համապատասխան (2):

Երկու պատմիչներն էլ, Եղիշեն և Ղազարը, վայելում էին Մամիկոնյանների հովանավորությունը և նրանց հանձնարարությամբ գրեցին իրենց երկերը: Զարմանալի չէ, որ նրանք իրերը դիտում են իրենց հովանավորների աչքերով: Եղիշեն ուղղակի հայտարարում է, որ նա գրել է պատմությունը այն բանի համար, որպեսզի գալիք սերունդները անիծեն ուխտադրուժ Վասակի հիշատակը:

Նման կանխակալ նպատակով է բացատրվում այն պարագան, որ Եղիշեն պատմությունից մասամբ դուրս է նետել որոշ տարրեր, մասամբ էլ վերամշակել է դրանք:

Ըստ Ղազար Փարպեցու, Հազկերտը իր մոտ էր պահել Վասակի երկու որդիներին իբրև պատանդների: Եղիշեն լռում է այդ մասին. ընթերցողի աչքում այդ պարագան կարող էր փոքր ինչ մեղմել ուխտադրուժ Վասակի մեղքը: Ընդհակառակը, նա հորինում է պատմություն, որ իբր թե Վասակը սպանել էր իր հորեղբայր Վաղինակին և նրանից հափշտակել իշխանությունը (էջ 255 և 259), և որ նա հետապնդում էր իր զարմիկներին (էջ 179): Ըստ Ղազարի, Վասակի փեսան, ոմն Վարազ-Վաղան[1], կնոջ՝ Վասակի դստեր, հետ վատ վարվելու պատճառով ընկել էր աներոջ աչքից:

Վարազ-Վաղանը փախել էր Պարսկաստան, ընդունել մազդեզականություն և փոքր դեր չէր խաղացել խռովությունների մեջ: Ղազարը նրա մասին արտահայտվում է կծու արտահայտություններով և նկարագրում է նրա տանջալից մահը: Եղիշեն ամենևին չի հիշատակում նրա մասին. փեսայի անձնավորությունը նրա մոտ միաձուլվում է աներոջ կերպարին՝ քրիստոնեությունից նրա ուրացումը և մահվան պատկերը, որը նկարագրում է Ղազարը, Եղիշեն փոխանցում է Վասակին: Մարզպանի գահընկեցությունից հետո նախարարական իշխանությունը տոհմում անցնում է Վարազ-Վաղանին: Նա երկար չվայելեց աներոջ նկատմամբ իր հաղթանակը և մահացավ սոսկալի մահով:

«Այլ աստէն իսկ նախ ընկալեալ յարդար դատաստանեն Աստուծոյ զվճիռ հատուցման ըստ արժանի գործոց իւրոց, - ասում է Ղազարը, - քանզի տեսիլ նշաւակի եղև ամենայն տոհմին իւրոյ գաւառին մարդկան: Վասն զի ի խոր-

[1]Հմմտ. Վաղինակ= Վարազ -Վաղան (ակ):

հըրդակցէն, ի դիւէն իւրմէ, տանջեալ ամս բազումս առաջի ամենեցուն հանապազօր նշաւակօք, զգետնեալ փրփրէր անզգայութեամբ, և չկարացեալ ասել, թէ մեղայ: Վասն որոյ գտեալ դիւին ամենաթափուր զայրն ի խնամոց մարդասիրին՝ յետոյ ապա սաստիկ և անհնարին խայտառականօք մինչ ի բազում ժամանակս չարալլուկ կտտանօք զարկուցեալ՝ հեղձոյց: Որ և զմնացորդս ժահահոտ չարահամ խորտկին իւրոյ եթող զաւակին իւրում... Եւ այսպէս նորա աստեն ընկալեալ զհատուցումն մեղաց իւրոց՝ պահի և անշէջ գեհենոյն ի տարտարոսին՝ մատնել յաւիտենից և անանց բոցոյն» (էջ 128-129):

Մոտավորապես այդպիսի գծերով է նկարագրում մեզ Եղիշեն Վասակի մահը. «Եւ օր ըստ օրէ բերէին իբրև զգեշ ընկենուին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին... Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտս դժնդակս անդէն ի կապանսն: Ջեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան գոգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամսութիւն նորա: Եռացին որդունք ընդ աղս նորա, և ի վայր սորեցին ընդ ոնգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծման ջիլք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա: Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա: Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա: Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ: Ոտնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա:

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեզոք Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զգէշ քարշեցաւ» (էջ 263-264):

Առավել ճշմարտացի Ղազարը այլ կերպ է ներկայացնում Վասակի մահը:

«Եւ ննջգաւորն Վասակ կացեալ ի դրանն ամս ինչ կարի վշտագին և նեղութեամբ բազմաւ՝ մաշէր զաւուրս իւր հառաչելով և յոգւոց հանելով... ինքնին զիւրոյին ծեծէր զդէմսն, ասելով. «Ահա ընկալ զայս ծաղս, ասէր. զոր ետ բերել քեզ ուխտանենգութիւն սրբոյ Աւետարանին և արիւն նահատակութեան սրբոյն Վարդանայ Մամիկոնէի և այլոցն ցանկալի հաղորդելոցն ընդ նմա, որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալան զանուն բարի յերկրի և անանց ազգաց զազգս իւրեանց: Իսկ դու, ասէ, մեղաւո՛ր անձն իմ, կեաս խղճիւ և ցաւովք մտաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահիս մշտնջենաւոր և անանց գեհենին» (էջ 284-285):

Ըստ Ղազարի, Վասակը մինչև կյանքի վերջը մնաց քրիստոնյա, և դրա համար էլ մահվան մահճում նրա շուրթերին զղջման խոսքեր է դնում:

Եղիշեն, քանի որ նրան հավատուրաց է համարում, նրան զրկում է այդ մխիթարությունից ևս (3):

Բերված զուգահեռը և ուրիշ հանգամանքներ հանգեցնում են այն մտքին, որ գրական կապ գոյություն ունի Եղիշեի և Ղազարի միջև: Անունների միևնույն ցանկերը միևնույն կարգով երկուսի մոտ էլ կան: Նման ապշեցուցիչ զուգադիպությունը կարելի է բացատրել մեկի կախվածությամբ մյուսից, և կամ նրանով, որ երկուսն էլ ունեցել են մեկ ընդհանուր աղբյուր: Կարծիքը, որ Ղազարը օգտվել է Եղիշեից, քանի որ, ըստ ավանդության, ավելի ուշ է ապրել, հիմքից զուրկ է: Գրական առումով Ղազարի երկը ավելի առաջնային է, քան Եղիշեինը: Մեզ հասած խմբագրությամբ Եղիշեի պատմությունը չի կարող բարձրանալ մինչև ավելի վաղ ժամանակ, քան VI դարը: Եղիշեի գիրքը կազմված է երկու մասից՝ առաջինը նվիրված է պատերազմների պատմությանը, իսկ երկրորդը՝ պարունակում է Ղևոնդի և մյուս քահանաների չարչարանքների պատմությունը: Հայոց եկեղեցական օրացույցում Վարդանի և նրա զինակիցների և Ղևոնդյանց քահանայից հիշատակները նշվում են առանձին, տարբեր օրեր: Այդ օրացույցին համապատասխան գոյություն ուներ նաև ժողովածու, որն ամփոփում էր օրացույցում նշված բոլոր սրբոց վարքերը: Եղիշեի ներկա երկատված տեսքը, ինչպես ինձ թվում է, առաջացել է և պայմանավորված է օրացուցային նկատառումներով, այլ կերպ ասած, Եղիշեի երկը գրված է այդ ժողովածուի համար: Բայց քանի որ օրացույցը և նրան համապատասխանող ժողովածուն առաջացել են VI դարից ոչ վաղ, ապա և Եղիշեի պատմությունն էլ այդ տեսքով չի կարելի վերագրել ավելի վաղ ժամանակի: Այդ դեպքում, երկու պատմիչների միջև կախվածության հարցը կարելի կլիներ լուծել հօգուտ Ղազարի: Սակայն Եղիշեի մոտ կան ինքնուրույն բնույթի ամբողջ էջեր, որոնց համար Ղազարի երկը իբրև աղբյուր չէր կարող ծառայել:

VII դարի պատմիչ Սեբեոսը, սեղմ բառերով շարադրելով V դարի իրադարձությունները, վկայակոչում է ինչ-որ պատմություն. «այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ **պատմութիւնն**»,- նշում է նա (էջ 23): Այդ պատմության Վարդանը կոչվել է Կարմիր («Կարմիրն կոչեցեալ Վարդան»): Այդպիսի մականուն Վարդանը չունի ո՛չ Եղիշեի, ո՛չ էլ Ղազարի մոտ: Դրա համար էլ չի կարելի նույնացնել Սեբեոսին հայտնի պատմությունը նրանց երկերի հետ: Սեբեոսի բառերը «ի ձեռն այլոց գրեցաւ» ցույց չեն տալիս շատ հեղինակներ, որոնց տակ կարելի կլիներ հասկանալ Եղիշեին և Ղազարին, այլ պարզապես նշանակում են հեղինակի անհայտ լինելը չիմանալով կամ չցանկանալով նա չի տալիս հեղինակի անունը:

Պետք է ենթադրել, որ գոյություն է ունեցել հատուկ հին պատմություն՝ «Կարմիր Վարդանի պատմություն» վերնագրով, որը և ընկել է Ղազարի և Եղիշեի երկերի հիմքում:

ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՆԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ (Զ ԴԱՐ)

Հին հայոց քարոզչական գործունեության ընկատմամբ շատ բան չգիտենք, մինչդեռ այդ աննշանակ չէ նոցա քաղաքակրթական դերը որոշելու համար Արևելքում: Պատմագիրներն ավանդում են, որ հայերը քարոզել են քրիստոնեություն Աղվանքում և մասամբ Վրաստանում: Սակայն երևում է, որ նոցա ավետարանող ձայնը հնչել է նաև Կովկասյան շղթայի այն կողմը: Այս մասին ստույգ և խիստ հետաքրքիր տեղեկություններ կան ասորի մի հեղինակի մոտ, որ 1870 թ. հրատարակեց դր. Ժ Լանդ՝ Բրիտանական մուզեի ձեռագրից[1]: Վատիկանի մի ձեռագրում գտնվում են այս երկից հինչ հինչ հատվածներ՝ հռչակավոր Ասսեմանին իր Bib. Or., հատ. II. տվեց նոցա բովանդակությունը, իսկ **Mai** լույս ընծայեց Scr. Veterum nova collectio, t. X: Գիտնականները հակամետ էին վերագրելու այդ երկը Զաքարիա միաբնակ հռետորին, որին հիշում է Եվագրիոս, իբրև եկեղեցական պատմության հեղինակի: Բայց Լանդի հրատարակությունից պարզվեց, որ այդ աշխատությունը Զաքարիայինը չէ, այլ մի ուրիշ ասորի Անանուն հեղինակի: Սա օգտվել է Զաքարիայի գրքից, ինչպես ինքը վկայում է Գ և Դ գրքերի վերջում, և նորա «Եկեղեցական քրոնիկոնից» քաղել է իր պատմության Գ - Զ գիրքը, իսկ մնացածն (Զ - ԺԲ) ինքն է գրել:

Զաքարիա Հռետորի գրքի նյութն է եղել 450-491 թթ. եկեղեցական պատմությունը, գրված հունարեն և ուղղված Եվպրաքսիոս անուն ոմն պալատականի: Այս աշխատությունը մեզ չի հասել, Լանդի հրատարակածը ասորի հեղինակի սեփական գրությունն է: Ձեռագիրը չէ պահել սորա անունը, գրքի որոշ ցուցումներից երևում է, որ անցքերին ժամանակակից մարդ է, ապրել է Հուստինիանոսի դարում և գիրքը կազմված է այլ և այլ ժամանակ 555, 561 և 569 թվականներին:

Անանուն ասորու երկը կարևոր հիշատակարան է VI դարի պատմության համար: Իսկ մեզ համար առանձնակի հետաքրքիր է նորա վերջին գլուխը, ուր գտնում ենք հայոց մասին շահեկան տեղեկություններ: Օգուտ քաղելով

[1] «Zachariae episcopi Mitylenes aliorumque scripta historica graece plerumque deperdita». Anecdota syriaca, t. III: Անգլերեն թարգմանությունը լույս տեսավ 1899 թ. «The Syriac chronicle known as that of Zachariah of Mitylene», by F. J. Hamilton, F Brooks. London.

անգլիական թարգմանությունից, առաջ ենք բերում այդ կտորն ամբողջապես:

«Պտղոմեոս Փիլադելփոսից 150 տարի հետո, Պտղոմեոս Փիլոմետորը բարի ցանկությամբ ջանադիր եղավ և սուրհանդակներ, նամակներ և պարգևներ ուղարկելով ազգերի երկրների պետերին, թախանձեց նրանց գրել ու ուղարկել դրացի ժողովուրդների և իրենց իշխանության տակ գտնված աշխարհների սահմանները. նույնպես նրանց ազգաբնակությունն և սովորույթների նկարագիրը: Նրանք գրեցին և ուղարկեցին, բացի հյուսիսային կողմից, որ ծգվում է դեպի Արևելք և Արևմուտք: Եվ մենք հարկավոր համարեցինք արտագրել այդ այստեղ վերջում, հետաքրքրվողների գիտության համար (հետևում է Պտղոմեոսից մի բանաքաղ. որ բաց է թողնվում):

Ազգերի երկրների այս նկարագիրն, ինչպես հիշվեցավ վերև, եղավ Պտղոմեոս Փիլատելփոսի ջանքով, և նորա թագավորության 30 տարին[1] 150 տարի Ք. ա., այնպես որ այն ժամանակից մինչև ներկայս, այն է մեր օրերի լուսափայլ թագավորի՝ Հուստինիանոսի իշխանության 28 տարին, Ալեքսանդրյան 866 թ., 333 Օլիմպիատ - անում է 711 տարի միջոց: Այսպիսի ձիզ շրջանում, հարկավ, քանի՛ քանի՛ նոր քաղաքներ են շինվել աշխարհում ամեն ազգերի մեջ, Պտղոմեոսից մինչև ներկա օրս, մանավանդ Քրկչի ծննդից սկսած: Խաղաղությունը թագավորել է ազգերի, լեզուների և ցեղերի մեջ. նոքա թողել են իրենց նախկին սովորությունն, ո՛չ մի ազգ ոտի չէ կանգնել պատերազմելու. կամ սուր հանելու ընդդեմ այլ ազգի և ո՛չ իսկ ձգտել ևս կռվելու. Կատարվեցավ մարգարեի խոսքը թե՝ «Ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս և զսուիճս իւրեանց ի մանգաղս»[2]:

Սրանցից զատ հյուսիսային կողմում կա այլ ևս հինգ հավատացյալ ժողովուրդ. որ ունին 24 եպիսկոպոս. նրանց կաթողիկոսը կենում է Դվինում, Պարսկահայքի գլխավոր քաղաքում: Նրանց[3] կաթողիկոսի անունը Գրիգոր էր՝ մի առաքինի և նշանավոր մարդ:

Ապա Գուրզան՝ մի երկիր Հայաստանում, և որի լեզուն նման է հունարենի: Սրանք ունին քրիստոնյա իշխան, ստորակա պարսից թագավորի:

Ապա Արրան աշխարհ՝ Հայոց երկրում, իր սեպհական լեզվով. հավատացյալ և մկրտված ժողովուրդ է, սա ևս ունի իշխան, ստորակա պարսից թագավորին:

---

[1] Ասորի հեղինակը Կլավդիոս Պտղոմեոսին շփոթմամբ Եգիպտոսի թագավորի տեղ է ընդունել:

[2] **Եսայի Մարգ.**, Բ, 4:

[3] Ձեռագրում քանի մի տառ եղծված է, ինչպես նշանակում է Լանդ, անգլիացի թարգմանիչներ իրավամբ ենթադրում են, որ ընկած է հավանորեն «առաջին» բառը:

Ապա Սիսական աշխարհ, իր սեպհական լեզվով. քրիստոնյա ժողովուրդ. այստեղ կան նաև հեթանոսներ:

Բազգուն աշխարհ իր սեպհական լեզվով. կից է և ձգվում է մինչև Կասպից պահակն և ծովը, պահակ, որ գտնվում է Հոնաց երկրում: Պահակից այս կողմը - բուլգարներն են, որ ունին իրենց սեպհական լեզուն, հեթանոս և բարբարոս ժողովուրդ. ունին քաղաքներ: Հետո ալաններն, որ ունին հինգ քաղաք: Հետո Դադու(?) ցեղի մարդիկ, որ ապրում են լեռներում և ունին բերդեր: Ունոգուր, վրանաբնակ ժողովուրդ. Օգուր, Խազար, Դիրմար(?), Սարուրգուր(?), Բագարսիկ(?), Խուլաս (?), Աբդել, Եփթալիտ այս 14 ժողովուրդները բնակվում են վրաններում: Սրանք ապրում են ոչխարի մսով, ձկով, վայրի կենդանիների մսով և զենքի միջոցով (կողոպուտով): Սրանցից այն կողմը գաճաճների և շնամարդկանց ցեղն է, իսկ սոցանից հյուսիս-արևմուտք ամազոններն, որ միատիտ կանայք են և ապրում են մենակ իրենք իրենց, զինավարժ են և հեծյալ: Սրանց մեջ այր մարդիկ չկան. և երբ ուզում են զուգավորիլ, գնում են խաղաղությամբ իրենց հարևան ցեղի մոտ, կապվում են նորանց հետ մի ամիս և վերադառնում իրենց տեղը: Հետո, երբ ծնում են, եթե երեխան տղա է, սպանում են, իսկ եթե աղջիկ, պահում: Այս եղանակով պահպանում են իրենց դիրքը: Նրանց մոտ ապրող ցեղն է Հարուս(?) բարձրահասակ և հաղթանդամ մարդիկ, որ զինավառություն չունին, և ձին անկարող է տանել նրանց, անդամների խոշորության պատճառով: Իսկ արևելյան կողմում, նույնպես քեզ դեպի հյուսիս ապրում են երեք այլ սև(ամորթ) ցեղ:

Արդ՝ սրանից ավելի քան 20 տարի առաջ, Հոնաց աշխարհում քանի մի մարդիկ թարգմանեցին ինչ ինչ գրքեր տեղական լեզվով: Թե ինչպես կատարվեցավ այդ բանն, որ հաջողեց Տերը, կպատմեմ այնպես, ինչպես լսել եմ հավաստի մարդկանցից Հովհան Ռգայենցուց, որ կենում է Իշոկուենու հիմնած վանքում՝ Ամիդի մոտ, և Թոմաս խազախորդից [կաշեգործ]. սա այն գերիների թվումն էր, որ տարավ Կավատ 50 կամ ավելի տարի առաջ:

Պարսից հողն ոտ կոխելուց հետո, սորանք նորից վաճառվեցան հոներին. անցան պահակից մյուս կողմն և մնացին նրանց երկրում ավելի քան 30 տարի, առին կանայք և ծնան որդիք, բայց մոտավորապես այսքան ժամանակ անցնելուց հետո նրանք դարձան և պատմեցին մեզ իրենց բերանով հետևյալը:

Երբ որ եկան Հոռոմ երկրից վարած գերիներն, որ տարել էին հոները, և մնացին նրանց երկրում 34 տարի, այն ժամանակ հրեշտակն երևեցավ Կարդուծատ անունով մի մարդու, որ Առան երկրի եպիսկոպոսն էր, և ինչպես ինքն եպիսկոպոսն էր պատմում, ասաց նորան. «Առ երեք բարեպաշտ քահանա և գնա՝ դաշտ և ստացիր ինձնից այն պատգամն, որ ուղարկում ի

քեզ Տերը. որովհետև ես եմ գերիների պահապանը, որոնք քշված են Հռոմ երկրից դեպի ազգերի երկիրը և վերառաքել են իրենց աղոթքները Աստուծուն: Ինձ պատվիրած է այն, ինչ որ հարկավոր է քեզ ասել»: Երբ Կարդուծատը, որ հունարեն թարգմանությամբ նշանակում է *Θεόκλητος*, վեր կացավ և գնաց ջերմեռանդ սրտով աննապատ՝ - և Աստված կանչեց, իր երեք երեցների հետ, հրեշտակն ասաց նրան. «Արի՛, գնա՛ ազգերի երկիրը, պահպանիր մանուկներին մահից, կարգիր նորանց համար քահանաներ, հաղորդիր հավատի խորհուրդները և զորացու նրանց: Ահա՛, ես քեզ հետ եմ և սիրով կաջակցեմ քեզ այնտեղ. դու հրաշքներ կգործես ազգերի մեջ, և կունենաս ամեն բան, ինչ որ հարկավոր կլինի քեզ քո սպասավորությանդ համար»: Նորա հետ գնացին և ուրիշ չորս հոգի: Մի երկրում, ուր դժվար է հանգիստ գտնել, այս յոթ երեցները ամեն երեկո ստանում էին բնակարան, յոթ նկան հաց և մի աման ջուր: Նրանք մտան այնտեղ ոչ պահակով, այլ անցան լեռների վերայից: Տեղ հասնելուն պես գերիներին պատմեցին այս բոլորը. շատերը մկրտվեցան, հոներից շատերն էլ քրիստոնեություն ընդունեցին: Այստեղ մնացին յոթ տարի և թարգմանեցին գիրքեր հոնաց լեզվով: Արդ հենց այդ ժամանակն էր, որ թագավորն Պրոբոսին դեսպանությամբ ուղարկեց այն կողմերը, որպեսզի նոցանից վարձով մարդ հավաքի ազգերի հետ պատերազմելու համար: Երբ սա լսեց հոներից Ս. մարդկանց մասին և տեղեկացավ նորանց պատմության գերյալներից ևս, մեծ անձուկ և փափագ հայտնեց նրանց տեսնելու: Եվ տեսավ ու ստացավ նրանց օրհնությունը. և մեծ հարգանք էր ցույց տալիս նոցա ազգերի առաջ:

Մեր թագավորն իրա՛զեկ լինելով վերև հիշած դեպքերին, որ Տերը հաջողեց, հարևան Հռոմ քաղաքների կողմերից 30 ջորի՝ բեռնած ուղարկեց նրանց. նմանապես ալյուր, գինի, յուղ, կտավե շորեր և ուրիշ մթերք ու սրբազան անոթներ: Պրոբոսը կենդանիներին էլ թողեց նրանց իբրև նվեր, որովհետև հավատացյալ և բարեսեր մարդ էր:

Արդ՝ մի ուրիշ հայ, նույնպես եպիսկոպոս, որի անունն էր Մակու, նախանձավոր եղավ այդպիսի ազնիվ գործերի և գնաց 14 տարուց հետո, կամ քիչ ավելի: Նա էլ բարի ցանկությունն ունեցավ և հոժարակամ գնաց այդ երկիրը, իր քանի մի երեցների հետ միասին: Կանգնեց աղյուսյա եկեղեցի, տնկեց բույսեր, ծանոթացրեց զանազան տեսակ սերմերի, նշանները գործեց և մկրտեց շատերին: Այդ ազգերի իշխանները տեսնելով այս նորությունները, զարմանում էին մարդկանց վերա և մեծ սիրով և հարգանքով էին վերաբերում նրանց: Իշխաններից յուրաքանչյուրը հրավիրում էր նրանց իր սեպհական գավառը և իր ժողովրդի մոտ և աղերսում իրենց ուսուցիչ լինել. և ահա՛ նորանք այնտեղ են այժմս:

Այս անցքը մի նշան է Աստուծու ողորմության, որ հոգում է այն ամենի

համար, որ նորանն են ամենուրեք: Եվ այսուհետև հասած է ժամանակը, որ նորա զորության ներքո է, որ «լրումն հեթանոսաց մտցէ», ինչպես ասում է առաքյալը[1]: Արդարև, պարսից թագավորն իսկ, ինչպես պատմում են գործին տեղյակ մարդիկ, յոթ տարի է ձեռք է քաշել խեղդած կամ մորթած անասունների, ինչպես և անարդար կենդանիների և թռչունների միս ուտելուց, սկսած այն օրից, երբ նորա մոտ եկավ Տրիբոնիա արքիատրը (բժշկապետ), որ գերի էր ընկած այդ ժամանակ. և մեր լուսափայլ թագավորի կողմից եկավ Բիրովի, մի կատարյալ մարդ, նորանից հետո Կաշովի, իսկ այժմ Գաբրիելը՝ Մծբինցի քրիստոնյա: Այդ ժամանակվանից ի վեր հասկացավ, թե ինչ պիտի լինի իր ուտեստը, որն այլևս չի պղծվում հին սովորության համեմատ, այլ թերևս օրհնվում, և հետո ուտում: Հովսեփը, քրիստոնյաների կաթողիկոսը նոյնպես նորա վստահությունն է վայելում մեծապես և սերտ կապված է նորան.. որովհետև ինքը բժիշկ է, մոգպետներից հետո առաջին տեղումն է նստում նորա առաջ և ինչ որ խնդրում է, ստանում է:

Բացի այն, որ գերիների և Ս. մարդկանց հետ քաղցր էր վարվում, այժմ իրեն շրջապատող քրիստոնյա բժիշկների խորհրդով, շինել է տվել հիվանդանոց, մի բան, որ առաջ աննծանոթ էր, և նվիրել է 100 ջորի և 50 ուղտ, բեռնած արքունի շտեմարանի բարիքներից, նաև 12 բժիշկ և այլ պիտանի բաներ: Եվ արքունի դրան...» (այստեղ ձեռագիրը ընդհատվում է):

Այս հատվածը (1) գրված էր հեղինակի վկայությամբ, Հուստինիանոսի 28 տարին, Աղեքսանդրյան 866 թ. և 333 օլիմ., այն է՝ 555 թ. (527+28 = 866 - 311 = (322/4) + 3 - 776 = 555): Հոները քրիստոնեություն ընդունեցին, դարձյալ հեղինակի ասելով մոտավորապես 20 տարի առաջ, ուրեմն՝ 555 - 20 = 535 թ.: Կավատ իր տարած գերիները վաճառեց հոներին, գերիները մնացին այնտեղ 34 տարի, որից հետո երևեցավ Կարդուծատը: Կավատի գերեվարությունն եղավ 502 թ., երբ սկսվեցան պարսկական կռիվները: Ուրեմն՝ և այս հաշվով Կարդուծատի քարոզությունը վերաբերում է (502 + 34) = 536 թ., սակայն Պրոբոսի ներկայությունը քիչ խանգարում է ժամանակագրությունը: Սա Անաստասիոս կայսրի քեռորդին էր. և ինչպես պատմում է Պրոկոպիոսը[2], Հուստինոսի (518-527) վերջին տարիները ուղարկվեցավ Հոնաց մոտ, որպեսզի զորք վարձի և տանի Վրաց Գուրգեն թագավորի օգնության ընդդեմ պարսից: Քանի որ Հուստինոսը մեռավ 527 թ., Պրոբոսի երքը չէր կարող լինել ուշ քան 526 թ.[3], այն ինչ հատվածիս հեղինակի ասությամբ, Պրոբոս արդեն հոների մեջ էր, երբ առաքյալները քարոզում էին: Եթե ճիշտ է, որ քարոզությունն յոթ տարի տևեց, թերևս 526 թ. հաշվելու

[1] Տե՛ս **Հռոմ.**, ԺԱ, 25.

[2] B. P. I, 12.

[3] Ըստ Muralt-ի՝ 522 թվական: **Essai de Chronogr.**, p. 135:

լինենք առաջին, իսկ 534 թ. վերջին տարին: Պրոկոպիոս, ժամանակակից պատմագիր, որ իր աշխատությունը հասցրել է մինչև 50-ական թվականները, ոչինչ չգիտե հոների քրիստոնեություն ընդունելու մասին: Հուստինիանոսի թագավորության սկզբներում քրիստոնեություն տարածվեցավ լազերի և աբխազների մեջ: Կայսրը նորանց վերա եպիսկոպոս նշանակեց Եվփրատաս անուն աբխազին, որ պալատական ներքինիներից էր[1]: Մեր հեղինակից երևում է, որ գրեթե նույն ժամանակներն սկսվեցավ Ավետարանի քարոզությունը հոների մեջ: Պրոկոպիոս, որ պատմում է լազերի և աբխազների մասին, զարմանալի է, որ չէ հիշում նույն երևույթը նորանց հարևան հոների մոտ: Այս հանգամանքը, թերևս տեղիք տար կարծելու, որ ասորի հեղինակի պատմած զրույցը, ոչ այլ ինչ է, եթե ոչ մի արձագանք լազերի կամ աբխազների մեջ կատարված իրողության: Սակայն Պրոկոպիոսի լռությանն էլ մեծ նշանակություն չէ տալու. նա այնքան էլ տեղյակ չէ երևում անմատչելի լեռներում կատարվող անցքերին, մանավանդ այն մասի, որ պարսից իրավասության տակ էր, ինչպես էր Հոնաց աշխարհը:

VI դարու սկզբներում հոնաց թագավորն էր Ամբազուկ, սորա ձեռքին էր հռչակավոր պահակը՝ այժմյան Դարիալի կիրճը. զգալով իր մահը ծերունի հոն թագավորը առաջարկում էր Անաստաս կայսեր տիրանալ պահակին և փոխարեն տալ իրեն դրամական վարձատրություն: Անաստասը մերժեց, իսկ Ամբազուկը մահից հետո պարսից թագավոր Կավատը վանեց նորա որդիներին և հափշտակեց պահակը[2]:

Այսպիսի քաղաքական պարագայում, բնական է, եթե հոները հարվեին հունական կողմը և հակում ցույց տային քրիստոնեություն ընդունելու: Դրացի քրիստոնյա ժողովուրդների ազդեցությունը, և մանավանդ գերիների 30-ամյա բնակությունը հոների մեջ, հարկավ, աննշանակ չեն այս դեպքում: Գերիների թվում կային անշուշտ նաև հայեր, որոնց շնորհիվ քարոզիչները հանդիսանում են հայեր՝ Արվանից եպիսկոպոս իր երեցներով: Եպիսկոպոսի անունն էր Կարդուծատ, որ հեղինակի մեկնությամբ նշանակում է *θεόκλητος*: Անգլիացի թարգմանիչները բացատրում են անունս հայերեն «կարդալ» և «Աստված» բառերից: Բայց հայերեն այդպիսի բառ չկա և բարդությունն իսկ հայացի չէ: Ավելի հավանական է ենթադրել, որ Կարդուսթ բառի մեջ առաջին երկու տառերը աղավաղված են. և պետք է կարդալ Ասդվաստր՝ Աստվածատ(ուր):

«Աստվածատուր» անունը, իբրև հատուկ անուն հին մատենագրության մեջ չի պատահում: Կարծես, եպիսկոպոսի իսկական անունը չէ, այլ մակդիր. և հունարեն թարգմանած է, ոչ սովորական, *θεόδοτος*, կամ *θεοδόσιος* այլ

[1] B. got., IV, 3.

2 B. P. I, 10.

θεόκλητος, որ այնքա՜ն դիպող է պատմության - Աստված իր հրեշտակի միջոցով նորան **կանչում** է առաքելության:

Երկրորդ հայ եպիսկոպոսի անունը նույնպես աղարտված է: Դր. Լանդ կարդում է ﺵ, իսկ անգլիացի թարգմանիչները՝ ش = Մակու (արդյոք Մակար?): - Սա ևս աղվանից կամ սյունյաց եպիսկոպոսն է (2): Հետաքրքրական է, որ Ստեփանոս Օրբելյան հիշում է VI դար ոմն Մակար եպիսկոպոս Պետրոս Քերթողի նախորդ: Սյունյաց պատմագիրը եպիսկոպոսների ցանկը կազմելուս անշուշտ օգտվել է Պետրոս Քերթողի պատմական երկից, ինչպես ինքը վկայում է: Բայց և այնպես, դժվար է ենթադրել, որ խոսքը այս Մակարի մասին է. մանավանդ որ ավելի քան հավանական է, որ «մակու» ձևի մեջ թաքնված է ուրիշ անուն, քան Մակար: Վերջինս լինելով ընդհանուր քրիստոնեական անուն, չէր աղճատվի:

Հատվածումս հիշված Հովսեփ կաթողիկոսը - հայ չէր, այլ նեստորական արքեպիսկոպոս: Ահա ինչ է գրում Ասսեմանին դորա մասին. **«Joseph Chosroae regis opera, cujus medicus erat, anno graecorum 863 electus, tribus post annis depositus fuit, nemine tamen, quoad vixit, propter ejusdem Chosroae timorem in ejus locum substituto»** (B. O., II, p. 413): Ասսեմանին այս տեղեկությունը առած է Բարհեբրեի ժամանակագրությունից: 863 թ. Աղեքսանդրյան թիվն է և հավասար է (863-311) = 552 թ. Ք.: Նա կառավարել է եկեղեցին միայն 3 տարի, ուրեմն մինչև 555 թ. մեր ասորի հեղինակի գրության տարին:

Ստույգ և պատմական անճշտություն է նաև Տրիբոնիա արքիատրը: Սա, իրոք, բժիշկ էր կոչումով. եղել է Խոսրովի մոտ և վայելել նորա շնորհը, բայց ո՛չ իբրև գերի: Հուստինիանոս նորան ուղարկեց, Խոսրովի խնդրանքով իր թագավորության 19 տարին, 546 թ. ըստ մեր հեղինակի 548, որովհետև Տրիբոնիայի գալստի օրից մինչև 555 թ. հաշվում է յոթ տարի: Խոսրով սիրեց նշանավոր բժշկին և նորա միջնորդությամբ արձակեց հոռոմ գերիներին[1]: Կաշովի և Բիրովի անունները խնդրական են, ըստ Պրոկոպիոսի, մոտավորապես այդ ժամանակները Հուստինիանոս ղրկեց Կոստանդին և Սարգիս անճշտությունները Խոսրովի մոտ, իբրև դեսպան (**Proc**., I, p. 259):

Ազգագրական անուններից, Ունոգուր, Օգուր, Սաբիր, Փորբրիգոր, Ավար, Խազար, Եփթալիտ - հայտնի են և պատահում են ուրիշ հեղինակների մոտ: Անգլիացի թարգմանիչները հարցական նշան են դրել մյուս անունների առաջ: Սարուրգուր = Բյուզանդական *Σαράγουροι* (**Prescus**., p. 158 և 161 Bon.), որ Ույգուրների մի ցեղն է: Ույգուրները թրքական ծագումն ունին. և Սարուրգուր նշանակում է շեկ Ույգուրներ (թրքերեն սարու բառից)[2]:

[1] **Procopii**, Bella persica, p. II, 28. B. g., IV, 10.

[2] **Радлов**, Das kudatku Buch. Ներածություն, էջ 73.

Բագարսիկ, անշուշտ, Փավստոս Բուզանդացու **բաղասճիքն** է: Քուլաս, կամ **Խուլաս** և **Դաղու**, հայ Անանուն աշխարհագրության մեջ հիշված *խեղայք* և **դիղոյք** են, հավանորեն: Աբդել, Եփթալիտ բառի տառադարձությունն է, որ գտնվում է Teoph. Sin. մոտ՝ «*τῶν Ἀβδελῶν* (*φημὶ δὴ τῶν λεγομένων Ἐφθαλιτῶν*», p. 282, ed. Bonn: Ինչ վերաբերում է *Դիմար* անվան, կարելի է համեմատել Եղիշեի *զղվարի* հետ, եթե ներվի վերջինս կարդալ *Դղվար:*

Ամազոնների հարևան ցեղը, որի հետ հարաբերություն ունեին նրանք, Ստրաբոն կոչում է *γαργαρεύς* (Geogr., XI, 5) մեր հեղինակի **հարուսը**, անտարակույս, Ստրաբոնի (Գար)գարևսի հետ կապ ունի:

Գուրգան՝ Վրաստանն է. Ջորջիա անունը հունական *γεωργοί* (երկրագործ) բառն է ասիական արտասանությամբ[1]: Բազգուն = Աբասգիա, Աբխազ: Ուշադրության արժանի է, որ Վրաստանը և Աբխազիան Հայոց երկրի մասն է համարված, հավասար Սիսական աշխարհի: Հեղինակի կարծիքով, վերջինս իր սեփական լեզուն ունի և դեռևս VI դարում այնտեղ եղել են հեթանոսներ:

Եկեղեցական պատմության համար կարևոր վկայություն է, որ VI դարի կիսում Վրաստանը, Աղվանից և Սյունյաց աշխարհների նման Հայոց կաթողիկոսի իրավասության տակ էր: Պրոկոպիոսը նույնպես հիշում է, որ քրիստոնյաների եպիսկոպոսապետը կաթողիկոս էր կոչվում հունական բառով, որովհետև այն կողմերի քրիստոնյաների ընդհանուր պետն էր (*τόν τε τῶν χριστιανῶν ἱερέα καθολικὸν καλοῦσι τῇ Ἑλλήνων φωνῇ, ὅτι δὴ ἐφέστηκεν εἷς ὢν ἅπασι τοῖς ταύτῃ χωρίοις*“ B. P., II, 25): Հայոց եկեղեցին ուներ 24 եպիսկոպոս: Ղազար Փարպեցուց երևում է, որ V դարում հայ եպիսկոպոսների թիվն 18 էր. պետք է ենթադրել, նույն 18 վիճակները մնացել էին և VI դարում: Այն ժամանակ Վրաստանի և Աղվանքի բաժին կմնա վեց եպիսկոպոսական թեմ:

Այսպիսով տեսնում ենք, որ մեզ հետաքրքրող հիշատակարանը իր բովանդակությամբ միանգամայն պատմական է: Կարդուծատի առաքելության հանգամանքները խիստ բնորոշ են ամեն մի առաքյալի կյանքը զարդարող զրույցների: Կարևորը պատմության հիմքն է, որ անշուշտ հավաստի է. այն է որ հայերը VI դարում փորձել են Ավետարանի և նորա հետ միասին քաղաքակրթության տարրական սկզբունքները սերմանել հյուսիսային անկիրթ ազգերի մեջ, հուսալով թերևս, այդ միջոցով չեզոքացնել նոցա հաճախակի և ավերիչ արշավանքները:

Հիշատակարանս զուրկ չէ նաև գրական նշանակությունից: Աղվանից եպիսկոպոս Կարդուծատի կյանքը հիշեցնում է ակամայից Փավստոս

[1] **Forbiger,** Handbuch., II, p. 445, № 39.

Բուզանդի նույնպես Աղվանից եպիսկոպոս Գրիգորիսի գործունեությունը: Եթե կուզեք, նմանությունը քիչ է Գրիգորիսի փորձը անաջող ելք է ունենում և ինքն իսկ զոհ է գնում իր բարի դիտումների, իսկ Կարդուծատ, ընդհակառակը՝ հաղթանակում է: Բայց այդ քիչն էլ խիստ ուշագրավ է: Փավստոսի Սանեսանը Մազկթաց թագավոր է, ասորի հեղինակի հոներն հարկավ թրքական ծագում ունեցող ույգուրները չեն, որոնց բյուզանդական պատմիչները ընդհանուր անվամբ հոն են կոչում (3): Այլ այն ազգն են, որոնց թագավորի անունը Ամբազուկ էր, ըստ Պրոկոպիոսի: Եթե նրանց ծագման խնդիրը դեռ պարզած չէ, սակայն աներկբա է, որ նոցա թագավորական տոհմը իրանական ծագում ուներ, ինչպես երևում է հատուկ անուններից. **Ամբազուկ**, ոչ այլ ինչ է, եթե ոչ հայերեն ան-բազուկ բառը. իսկ **Սանեսան** բառը նույնպես իրանական հնչյուն ունի:

Փավստոս Բուզանդացու և մեր հատվածի առնչության մասին, մենք վաղաժամ ենք համարում որևէ դրական պնդում: Մի բան պարզ է, որ քանի Փավստոսի վերջնական խմբագրության խնդիրն առկախ է մնում, սույն հատվածս կարող է հանդիսանալ երկսայրի սուր նույն խնդրի համար: VI դարի կեսը և մասնավորապես 555 թ. մի որոշ սահման է, որից կամ առաջ կամ հետո է կատարված Փավստոսի պատմության խմբագրությունը, այն ձևով ինչպես որ մեզ է հասած: Հատվածն ինքն իրեն վերցրած ունի թեր և ընդդեմ նշաններ: Խնդրի լուծման համար անհրաժեշտ են այլ օժանդակ հիմքեր: Փավստոսի նոր քննադատներից մեկը, պ. Գ. Տեր-Պողոսյան, քանի մի ուշագրավ դիտողություններով[1] կապ է որոնում Փավստոսի և VII դարու Անանուն աշխարհագրության մեջ, մի հանգամանք, որ տանում է Բյուզանդարան պատմությունը դեպի VII դար: Քննադատիս վարկածներն՝ իրենք իրենց դեռևս համոզկեր և կտրական փաստեր չեն խնդրի համար, բայց անպայման հարկավոր նյութեր են:

[1] **Գ. Տեր-Պողոսյան**, Նկատողություններ Փավստոսի պատմության վերաբերյալ, Վիեննա, 1901:

ԱՐՏԱՎԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Հուստինիանոսի ինքնակալության տասնևիններորդ տարին էր, 545 թիվը:

Հեռավոր Լիբիայից մայրաքաղաք էր վերադառնում Արտավան հայ իշխանը, որ օրվան հերոսն էր, մի հաղթական զորավար, որ գալիս էր ստանալու գեղանի Պրիեկտայի՝ կայսեր քրոջ դստեր ձեռքը, որպես հատուցում իր քաջարի գործի համար: Պատրաստ էր, հակառակ դեպքում, ծառանալ նույնիսկ մեծազոր ինքնակալի դեմ:

Արտավանը Արշակունյաց տոհմի վերջին շառավիղներից էր: Հայ արքայական տունը մեռնում էր, հանգչում էր ընդմիշտ հնադարյան ճրագը, շաղ տալով իր վերջին ճառագայթները կայսրության հեռավոր հորիզոնների վրա: Խորհրդավոր երևույթ: Արտավանի կյանքը կարծես մի մանրանկար էր, մի նշանակալից ուրվագիծ, այն առաքելության, որ պիտի կատարեր հայությունը Բյուզանդական տերության մեջ գալոց դարերում:

Արշակունի իշխանը նոր էր հեռացել հայրենիքից և հեռացել էր, թողնելով այնտեղ բարի անուն, մեծ գործերի հիշատակ: Տարիներով մաքառել էր կայսերական իշխանության դեմ, պաշտպանելով իր հայրենիքի շահերը: Այժմ իրերի քմահաճ բերումով ծառայում էր նույն իշխանության պատերազմի դաշտերում:

Հուստինիանոսի գահակալության առաջին տասնամյակը խռովությունների շրջան էր Հայաստանում: Բյուզանդական իշխանությունը հետամուտ էր ոտնձգելու երկրի ավանդական ինքնահատուկ կարգերը: Ուզում էր ներմուծել պետական վարչաձևը, նպատակ ունենալով հայ հողամասերը սերտորեն շաղկապելու պետության հետ:

Բյուզանդական Հայաստանը անջատվում էր Պարսկականից Կարին-Նփրկերտ (Մուֆարղին) գծով և բաժանվում էր երկու մասի իրավական դրության տեսակետից: Հյուսիսային մասը, որ կոչվում էր Մեծ կամ Ներքին Հայք, կենտրոն ունենալով Կարինը, գտնվում էր կայսերական կուսակալի կառավարության ներքո: Հարավային մասը բաղկացած էր հինգ անկախ և ինքնավար իշխանություններից, նման Ղարաբաղի Խամսա (որ արաբերեն նշանակում է հինգ) մելիքությանց: Սրանք էին՝ Հանձիք, այժմյան Խարբերդի շրջանը, Բալահովիտ, այժմյան Բալու, Հաշտյանք, արդի Ճապաղջուր և Գենջ, Անգեղտուն, Արղանայի շրջանը, և Ծոփք, որ ընդարձակ երկիր էր

Տիգրիսի ձախ և աջ ափերին, Նփրկերտից մինչև Քնաբեղ և Փիտար հին և ցայժմ կանգուն գյուղերը:

Փոքր Հայոց վաղուց մտած էր պետության վարչական կազմի մեջ և բաժանված էր երկուսի՝ Առաջին և Երկրորդ Հայք, կենտրոն ունենալով Սեբաստիա և Մելիտինե քաղաքները:

536 թվին ելավ կայսերական հրամանագիրը, որով բոլոր հիշածս հողամասերը ենթարկվում էին նոր տրոհումի, բաժանվելով չորս մեծ շրջանների, Ա, Բ, Գ և Դ Հայք անուններով: Հին Ներքին Հայքը, կոչվելու էր այսուհետև Առաջին Հայք, մեջն ունենալով նաև Տրապիզոն քաղաքը՝ ծովափնյա հողերով: Նախկին Երկրորդ Հայքը, այսինքն՝ Սեբաստիայի շրջանը, կոչվելու էր Երկրորդ Հայք, և նախկին Երրորդ Հայքը, Մելիտինեն՝ Երրորդ Հայք, և վերջապես Չորրորդ Հայք անվան տակ միացվում էին հինգ ինքնավար իշխանությունները: Միաժամանակ ջնջվում էին տեղական առանձնահատկությունները, տեղի տալով ընդհանուր վարչական կարգերի:

Այս նորոգությունը հարվածում էր ամենից առաջ նախարարական արտոնությունները և փոխում էր երկրի հասարակական հինավուրց պատկերը:

Վարչական վերակազմության նախորդել էր արդեն զինվորականը: Հայ հողամասերից կազմված էր մի քանի տարի առաջ զինվորական մի մեծ շրջան միահեծան սպարապետի հրամանատարության տակ: Նախարարական այրուձին, այսինքն՝ հեծյալ գնդերը, առել էին պետական զորամասերի մեջ: Զինվորական առաջավոր կայաններն էին սահմանագլխի վրա Կարին, Կիքառիճ և Նփրկերտ, մշտական բերդապահ գնդերով և մեծ մասամբ հայ իշխանների ձեռքի տակ:

Այս արմատական փոփոխությունները պետք է բնականորեն հուզեին երկիրը, մանավանդ ազնվականությունը, որի իրավունքներն էին խոցվում: Մի պատեհ առիթ էր հարկավոր, որ զսպված դժգոհությունը ժայթքեր: Առիթը տվին երկրի պաշտոնակալները:

Բյուզանդական-պարսկական պատերազմները վերջացել էին խաղաղության դաշինքներով 532 թվին: Պատերազմի ընթացքին Սպերի շրջանում գտնվող ոսկեհանքի տերը, ոմն Սիմեոն հայ իշխան, անցնում է կայսեր կողմը: Կայսրը չի պահանջում ոսկեհանքից այն բաժինը, որ Սիմեոնը տալիս էր առաջ պարսից թագավորին: Սիմեոն օգտվելով կայսերական հովանավորությունից բռնի տիրանում է մի քանի գյուղերի, որ պատկանում էին Պերոզ իշխանին, հավանորեն Արշակունյաց ժառանգներից: Սրա երկու որդիները սպանում են Սիմեոնին և փախչում Պարսկական Հայաստան: Կայսրը վիճելի գյուղերը շնորհում է Սիմեոնի ազգականին՝ Համազասպին, նշանակելով նրան միաժամանակ երկրի կառավարիչ.

Պալատական պաշտոնյա մի հայ Ականիոս անունով զրպարտում է

կայսեր առաջ, որպես թե Համազասպ հավատարիմ չէ և ուզում է նորից պարսից կողմն անցնել: Կայսրի հավանությամբ ամբաստանիչը հաջողում է սպանել Համազասպին և երկրի ղեկն իր ձեռքն առնել:

Ակակիոսը չարաբարո անձն էր: Հայ լինելով հանդերձ թշնամական վերաբերում ուներ դեպի իր ցեղակիցները: Որպես կառավարիչ ատելի էր ամենին: Նոր հարկեր դրեց երկրի վրա, բավականին ծանր: Զայրույթը ընդհանուր էր: Հայերը դավադրություն կազմեցին և վերջ դրին Ակակիոսի կյանքին:

Դավադրության հեղինակը և Ակակիոսի սպանիչը Արտավան Արշակունին էր իր եղբոր Հովհաննեսի հետ: Հովհաննես Արշակունու որդիքն էին:

Խռովությունները ծայր տվին: Մայրաքաղաքից եկավ Սիտտաս կամ Ցիտտաս նշանավոր զորականը: Նա երկրի պայմաններին և գործիչներին ծանոթ անձ էր: Նորակազմ զինվորական շրջանի պետն էր եղած և պարսկական պատերազմների ժամանակ զորքերի հրամանատար: Սիտտաս ետևե եղավ մեղմ միջոցներով վրդոված խաղաղությունը վերականգնելու, ընդառաջելով հայերի ցանկության և վերացնելով ամենից առաջ Ակակիոսի սահմանած արտակարգ հարկերը:

Սակայն Ակակիոսի որդին՝ Ադոլիոս, որ արքունիքում պաշտոնյա էր, հոր սպանության ոխը սրտում՝ կարողացավ տրտունջ հարուցանել Սիտտասի դեմ, որ, իբրև թե, դանդաղկոտ է հայերի հանդեպ և անփույթ՝ չարագործներին պատժելու հրահանգում: Կայսերական սաստը մղեց զորապետին ավելի վճռական միջոցների: Սիտտաս բանակցության մեջ մտավ Ասպետյան, այսինքն՝ Բագրատունի տան հետ, «որ ամենից հեղինակավորն և մեծ տոհմն էր», նկատում է հույն պատմիչը: Հաշտությունը կնքելու վրա էր, երբ Սիտտասի զորքերը հանկարծակի ընկան հայ բանակի վրա, որ կանգնած էր Բասենի Ավնիկ քաղաքի մոտ՝ ակնդետ բանակցության ելքին: Առաջ եկավ խռնումն: Սիտտասն արատավորեց իր անունը, կոտորել տալով քարանձավում ապաստանած հայ կանանց և երեխաներին: Հայերը զայրացած թշնամու նենգ և վատահոգի վարմունքից, խոյացան նրա վրա: Արտավան Արշակունին մի անգամ ևս փայլեց իր քաջությամբ, տապալելով նիզակի շեշտակի հարվածով Սիտտասին:

Այսպես ընկավ կայսեր մեծագույն զորավարը, որ Վելիսարիոսի հավասար ուժ էր համարվում պետության մեջ: Նրա տեղ եկավ մի ուրիշ զորավար, Բուզ(ես) կամ, նոր արտասանությամբ, Վուզ: Սա ևս խաղաղ միջոցների կողմնակից էր, կամ այդպես էր, գոնե ձևանում: Բուզես առաջուց մոտիկ ծանոթ էր և անձնական բարեկամ Արտավանի հոր Հովհաննես Արշակունի իշխանին: Իր մոտ կանչեց Հովհաննեսին, հուսալով նրա միջոցով խռովությանց վերջ տալ: Հովհաննես գնաց իր վաղեմի բարեկամի մոտ, առնելով հետը Վասակ Մամիկոնյանին, որ իր փեսան էր: Մամիկոնյան

իշխանը իր տոհմին հատուկ հոտառությամբ զգաց, որ ճանապարհը բարի չէ և խորհուրդ տվավ իր աշերոջ խոհեմությամբ հետ դառնալ: Հովհաննեսը չանսաց, շարունակեց միայնակ իր ուղին և զոհ գնաց այն վստահության, որ ուներ դեպի իր բարեկամը: Հոռոմ զորավարը ննջգեց և տմարդորեն սպանել տվեց Հովհաննես իշխանին:

Թշնամությունը սաստկացավ: Ապստամբներն անուժ էին երկարելու դիմադրությունը: Կամ պետք է զենքը վայր դներին և կամ դիմեին արտաքին օգնության: Հարևան խոշոր պետությունների հակամարտությունից երբեմն օգտվում էին հայ նախարարները մեծ հաջողությամբ: Խորհեցին պղտորել պարսից թագավորի և Հուստինիանոսի հարաբերությունը՝ գրգռելով Խոսրովին նրա դեմ:

Դեսպանության գլուխն անցավ Վասակ Մամիկոնյանը: Արտավանը անմասն չէր գործին, նա, որ ապստամբության ոգին էր: Կրկնակի ոճիր գործելուց հետո կայսրության դեմ, անխոհեմություն կլիներ նրա կողմից գանգատավորի դերն ստանձնել: Նրա փեսա Վասակն է, որ խոսում է Խոսրով թագավորի առաջ: Հույն պատմագիրը հետևյալ ճառն է դնում Վասակի բերանը.

«Տեր արքա, մեզնից շատերը ծագումով Արշակունի են, այն Արշակի շառավիղները, որ արեևակից էր պարթև թագավորներին, Պարսկաստանի նախկին տերերին: Նա ոչնչով պակաս չէր իր ժամանակվան թագակալներից և ոչ մեկից: Այն, ինչ ներկայումս մենք կանգնած ենք ձեր առաջ որպես ստրուկներ և փախստականներ, կանգնած ենք ոչ մեր հոժար կամքով, այլ բռնությամբ: Եվ բռնացողը թվում է թե Հոռոմ զորությունն է, ոչ մեծ արքա, բայց ոչ: Այն մարդը, որի անփութության շնորհիվ կատարվում է բռնությունը, նա է իսկական պատասխանատուն գործած անարդարության համար: Թող սկսենք մեր պատմելիքը քիչ հեռվից, որպեսզի հասկանալի լինենք: Արշակը, մեր նախնիքներից վերջին թագավորը, զիջավ իր տերությունը Թեոդոսիոս կայսրին ինքնաբերաբար մի պայմանով միայն, որ նրա մերձավորները բոլորն ապրեն մշտապես ազատ և չենթարկվեն որևէ հարկատվության (1): Այս համաձայնությունը ուժի մեջ էր մինչև վերջին տխրահռչակ դաշինքը, որ կնքեցիք և որը կարելի է անվանել, առանց սխալվելու, համաշխարհային չարիք (2): Այդ օրից է, որ անտեսելով բարեկամ, թե թշնամի, ամեն ինչ խառնում և խառնակում է նա, որ միայն անվամբ է քեզ բարեկամ, ոչ թագավոր, իսկ իրականին անսուտ թշնամիդ է: Շուտով կհամոզվես ինքդ, հենց որ հաջողությամբ վերջացնե արևմտյան ազգերի նվաճումը: Արդարև, ի՛նչեր չի արել այս մարդը, որ օրենքի հակառակ չլիներ»:

Խոսքը Հուստինիանոս կայսրի մասին է: Հայ բողոքականները այնուհետև թվում են մի առ մի, թե ինչպես կայսրը խափանեց հարևան ծաների և լազերի ազատությունը, ձեռք կարկառեց դեպի հոները մի կողմից և դեպի

եթովպացիք մյուս կողմից: Աղետաբեր եղավ Լիբիայում, Իտալիայում, խորտակեց վանդալներին, գոթերին, մավրուսներին և վերջապես փորձեց գայթակղեցնել արաբ ցեղապետին՝ Ալամունդարոսին, որ պարսից հպատակ էր: Բոլոր այս ազգերին ընկճելուց հետո Հուստինիանոսին մնում է միայն նվաճել Պարսից պետությունը: Վասակն ուզում է ապացուցանել, որ կայսրը անհավատարիմ է գտնվել 532 թվին կնքված դաշինքին: «Հուստինիանոսը ինքն է ավերել դաշինքը, շարունակում է հայ ճառախոսը, որովհետև խաղաղությունը վրդովում է ոչ թե նա, որ առաջինն է զենք առնում, այլ ով որ խաղաղության օրերում չարիք է նյութում իր հարևաններին: Ով խորհում է ոճիր, նա արդեն գործած է համարվում, եթե անգամ չհաջողի ոճիրն իրագործել: Ինչո՞վ են վերջանում պատերազմները, հայտնի է: Հաղթում են սովորաբար նրանք, որ առիթ չեն տվել կռվի, այլ որ պաշտպանվում են ընդդեմ կռվարարի»:

Հայերը շեշտում են, որ Հուստինիանոսի դրությունը բարեհաջող չէ: Զորքերի մեծ մասը ցրված է արևմտյան հեռավոր ծայրագավառներում: Երկու նշանավոր զորապետներից մեկը՝ Սիտտաս, սպանված է իրենց հայերի ձեռքով, մյուսը՝ Վելիսարիոսը, կորած է ընդմիշտ Հուստինիանոսի համար: «Արդ, ելնելով թշնամու դեմ,- եզրափակում է իր խոսքը Վասակը,- դիմադրության չես պատահի, իսկ հանձին մեր կգտնես հավատարիմ և երկրին քաջածանոթ առաջնորդներ զորքերիդ համար»:

Հայերի առաջարկը ընդունելի էր պարսից արքայի համար և մանավանդ հաճելի նրանց զինակցությունը:

Նույն առաքելությամբ Խոսրովի մոտ եկավ մի ուրիշ դեսպանություն Գոթաց թագավորի կողմից: Նա ևս տրտնջում էր Հուստինիանոսի աշխարհակալական քաղաքականությունից և հորդորում էր պարսից թագավորին պատերազմ սկսել:

Քիչ հետո լազերը դիմեցին Խոսրովին, ուժ տալով նախորդ խնդիրքներին: Սրանց ճառերը ևս նույն ոճով են հորինված ինչ որ հայերինը: Հարկավ, ճառերը շինծու են, և պատկանում են իրեն՝ պատմագրին, և ոչ թե ճառախոսներին: Սակայն այս հանգամանքը չի նսեմացնում նրանց պատմական արժեքը: Հին պատմագրության մեջ ընտանեցած ձև է, որի միջոցով և մեր հեղինակը պարզում է Հուստինիանոսի թշնամիների դիրքը նրա հետևած քաղաքականության հանդեպ: Ընկճված մանր ազգերը քաջածանոթ էին մեծ պետության ամենակուլ ախորժակին և անտեղյակ չէին բնավ, թե ի՜նչ է անցնում պետության զանազան անկյուններում:

Պարսից դուռը ուզեց օգտվել կայսրության ներքին խլրտումներից ու դժգոհություններից և հայտարարեց պատերազմ: Հույս ուներ մի քանի հարվածով տիրանալ Բյուզանդական հողերին մինչև Եփրատ:

Հայերը ներկայացան 539 թվի աշնան: Ձմեռը պատրաստության մեջ անցավ և հաջորդ գարնան սկսվեցին պատերազմական գործողությունները: Առաջի երեք տարին ռազմական դաշտն էր Միջագետք և Լազիկե, այսինքն՝ Հայաստանի հարավային և հյուսիսային կողմերը: Միայն 543 թվին հակառակորդ բանակները ճակատեցին Հայաստանի հողի վրա: Կայսերական զորքերը երեք առաջով վերև հիշված կայաններից դիմեցին դեպի Դվին: Բախումը տեղի ունեցավ Անգղ գյուղի մոտ և պարսիկները չարաչար պարտվեցին:

Ապստամբ հայերը Վասակի և Արտավանի գլխավորությամբ մասնակցում էին պարսկական շարժումներին: Սակայն նախքան պարսկական զորքերի Հայաստան անցնելը, նրանք լքեցին պարսիկներին և հաշտվելով կայսեր հետ, քաշվեցին մայրաքաղաք և մտան պետական ծառայության մեջ: Արտավանի առաջ բացվում էր նոր և լայն ասպարեզ:

* * *

Արտավանը մենակ չէր: Նրա հետ էին իր եղբայր Հովհաննեսը և մի գունդ հայ քաջեր:

Բյուզանդական Աֆրիկայի նվաճումը և խաղաղեցումը տակավին վերջացած չէր: Մերձ 545 թվականին կայսրը ուղարկեց Լիբիա Արիոբինդոս ծերակուտականին, որ իր քրոջ աղջկա՝ Պրիեկտայի, ամուսինն էր: Նրա բանակի մեջ էին ի միջի այլոց և Արտավան ու Հովհաննես Արշակունի եղբայրներն իրենց կտրիճներով: Հասնելով Կարթագեն, Արիոբինդոս իմացավ, որ մավրուսների (մավրեր) պետերը՝ Ստոցաս և Անտալ(աս) իրենց ուժերով կանգնած են երեք ավուր հեռավորության վրա: Բախումը անխուսափելի էր: Հարևան Նումիդիայից կայսերական զորքերը օգնության չեկան հակառակ Արիոբինդոսի հրամանին: Տեղի ունեցավ արյունահեղ ճակատ: Բյուզանդական գունդը մեծ չէր և նրա զորավարն էր Հովհաննես Արշակունի, որ կռվեց հերոսաբար և ընկավ պատերազմի դաշտում: Նրա կորուստը մեծ կսկիծ պատճառեց կայսեր:

Շուտով պարզվեց, որ Նումիդիայի զորքերը դիտավորյալ չէին եկել օգնության: Նրանց պետը՝ Գոնթարիս հանդուգն և փառատենչ անձն էր և չար ծրագիրներ էր որոճում՝ հափշտակել Աֆրիկայի իշխանությունը և իրեն թագավոր հռչակել: Պետք էր նախապես կործանել Արիոբինդոսին, ուստի գաղտնի հարաբերության մեջ մտավ մավրուսների հետ և նրանց դրդեց արշավել Կարթագեն ընդդեմ Արիոբինդոսի: Մավրուսների գլխավոր Անտալասին խոստացել էր հաջողության դեպքում նրան զիջանել Կարթագենի նահանգը՝ Բիզակը:

Անտալասի հետ էր և արշավին մասնակից մավրուսների մի ուրիշ պետը, Կուցինաս, որ թագավորում էր Նումիդիայում: Արիոբինդոսը կարողացել էր սրան իր կողմը քաշել և համաձայնության գալ, որ կովի ժամանակ դավաճանե ընկերոջը և անցնի Բյուզանդական բանակը:

Արիոբինդոս, որ անտեղյակ էր Գոնթարիսի դավերին, հայտնեց նրան իր և Կուցինասի գաղտնիքը: Իսկ Գոնթարիս շտապեց նախազգուշացնել Անտալասին:

Այսպես երկու մավրուս իշխանները արշավեցին Կարթագենի վրա ընդդեմ Արիոբինդոսի, մեկը՝ պատրաստ դավաճանելու իր ընկերոջ և անցնելու Արիոբինդոսի կողմը, մյուսը՝ կուսակից Գոնթարիսին, որ պիտի դավաճաներ իր զորավարին՝ Արիոբինդոսին:

Գոնթարիս, կամենալով կովի ընթացքին վերացնել մեջտեղից Արիոբինդոսին, համոզեց նրան անցնել զորքի գլուխը և անձամբ հարդարել ճակատը մավրուսների դեմ:

Արիոբինդոսը, որ զինվորական արհեստին անփորձ էր բոլորովին, երբեք զենք ու զրահ չէր առած ձեռքը, վարանում էր պատերազմի ելնել և իր անձը անխոհեմաբար փորձանքի ենթարկել: Այս դանդաղկոտությունը կարծել տվեց Գոնթարիսին, որ Արիոբինդոսը գլխի է ընկել և ուրեմն իր դավադրությունը բացվել է: Գոնթարիս շտապեց դիմակը հանել, մտավ Կարթագեն, զորքը գրգռեց Արիոբինդոսի դեմ, ամբաստանելով նրան, որպես մի վեհերոտ անձն, որ խուսափում է կռվել թշնամու դեմ և պատրաստվում է փախչել, հետը տանելով այն գանձը, որ նշանակված է զորքերի համար: Գոնթարիս առաջարկեց գրգռված զորականներին ձերբակալել Արիոբինդոսին և տիրանալ նրա գանձին:

Զորքը հոչակեց Գոնթարիսին սպարապետ Արիոբինդոսի տեղ: Այս կացության հանդեպ Արիոբինդոսը ուզում էր փախչել դեպի մայրաքաղաք: Ահա այստեղ է, որ Արտավան առաջ նետվեց, խորհուրդ տվեց գնալ ապստամբ Գոնթարիսի դեմ և խեղդել խռովությունը իր սաղմի մեջ: Արշակունի իշխանը հավաքեց իսկույն հայ կտրիճներին, առավ և մի քանի այլ զինվորներ, որ մնացել էին հավատարիմ, և նետվեց Գոնթարիսի վրա: Արտավանը քաջության հրաշքներ գործեց կոտորելով բազմաթիվ թշնամիներ: Սակայն Արիոբինդոսը, որ երբեք արյուն չէր տեսած, սարսափելով սոսկալի կոտորածից, խույս տվավ և թաքնվեց ծովափնյա մի եկեղեցու մեջ, ուր պահված էին նրա կինը և ընտանիքը: Գունդը հետևեց Արիոբինդոսին: Արտավան չկարողացավ փախուստի առաջն առնել, մնաց մենակ և ստիպվեց ինքը ևս թողնել կռվի դաշտը:

Գոնթարիս տիրացավ Արիոբինդոսի տան և գանձերին: Քաղաքի եպիսկոպոսին միջնորդ ուղարկեց նրա մոտ, որ գա իրեն ներկայանալու, խոս-

տանալով նրան ապահովություն: Ժամանակի սովորության համաձայն բռնակալը երդում կերավ մկրտության ավազանի վրա, որ չարիք չի հասցնի Արիոբինդոսին: Սա հավատաց և գնաց ընկավ հաղթողի ոտքերը: Գոնթարիս խոսք տվավ արձակել նրան և ուղարկել մայրաքաղաք կնոջ հետ միասին, այլև դարձնել գրաված գանձերը: Այնուհետև ընթրիքի կանչեց և առաջարկեց վերջին գիշերը անցնել իր նախկին բնակարանում և առավոտյան ուղևորվել մայրաքաղաք: Սակայն այս լոկ քակարդ էր: Գոնթարիս դրժեց իր խոստման և գիշերը խողխողել տվավ միամիտ հյուրին:

Սպանվածի կինը և քույրը ընկան Գոնթարիսի ձեռքը, որոնց սակայն պատվով պահեց և կնոջը՝ Պրիեկտային, ստիպեց գրել կայսրին, որ Գոնթարիսը միանգամայն անպարտ է իր ամուսնու Արիոբինդոսի, կորստյան համար և որ ինքը գոհ է նրա վերաբերմունքից: Գոնթարիս հույս ուներ այս կերպով թագավորին հաճոյանալ և նրա հավանությունը առնել ամուսնանալու Պրիեկտայի հետ հարուստ օժիտով:

Արիոբինդոսի հետ Արտավանը ևս հնազանդվել էր Գոնթարիսին: Զորավարի սպանությունը և նրա ընտանիքի գերությունը դեպքեր էին, որ չէին կարող չազդել դյուրազգաց հայ իշխանի վրա: Պատժել չարագործին իր կրկնակի ոճիրի, բռնության և սպանության, համար Արտավանը համարում է մի սրբազան պարտք: Նա խորհում է սպանել Գոնթարիսին:

Արտավանի մտերիմներն էին իր ազգական Գրիգորը, որ թվում է, թե իր քեռորդին էր, Վասակ Մամիկոնյանի որդին, և իր նիզակակիրը՝ Արտաշիրը, հավանորեն, նույնպես Արշակունյաց տոհմից: Արտավանը իր գաղտնիքը մերկացավ այս երկու անձերին:

Մամիկոնյան զավակը իսկույն բորբոքվեց իր ցեղին հատուկ արկածախնդրական ոգով և սկսեց ավելի ևս գրգռել իր քեռուն, վառել նրա մեջ փառասիրական տենչերը:

Ահա ինչպես էր խոսում Գրիգորը. «Արտավան, այժմ քեզնից է կախված միայն օգտվել քեզ վիճակված առիթից և պսակել գլուխդ փառքով, որպես Վելիսարիոսը, և անգամ մեծապես գերազանցել նրան: Արդարև, Վելիսարիոսը եկավ այստեղ մեծաքանակ զորքով, խոշոր դրամական միջոցներով, ընկերակցությամբ բազմաթիվ աշխատակիցների և զորականների: Թողնենք ուժեղ նավատորմը, որ այժմ մեզ անմատչելի է: Նա ուներ իր ձեռքի տակ զորավոր հեծելագունդ, շատ և շատ գործիքներ և ամեն տեսակ պատրաստություն, վայել հռովմեական պետության արժանապատվության: Այսպիսի պայմաններում Վելիսարիոսը նվաճեց Լիբիան և այն մեծ դժվարությամբ:

Սակայն նրա ջանքերն ի զուր անցան: Այժմ այնպիսի դրության մեջ է պետությունը, կարծես ոչինչ չէ կատարվել, բացի այն, որ Վելիսարիոսի հաղթությունները թանկ նստան անհամար մարդկանց կորուստով և

պետական միջոցների վատնումով ու ստեղծեցին մի վիճակ, որ պետությունն անկարող է այլևս պաշտպանել իր շահերը: Ճար անել այս կացության, բարվոքել կայսրի գործերը կարող ես միմիայն դո՛ւ: Ամեն ինչ կախված է քո տրամադրությունից: Պետք չէ մոռնաս մանավանդ, որ դու Արշակունյաց տոհմիցն ես: Խորհի՛ր, մարդիկ, որ ազնվական ծագում ունեն, պարտավոր են ամեն տեղ և ամեն ժամանակ փայլել արիությամբ: Դու արդեն մեծ և քաջ գործեր ես կատարել ազատության համար: Տակավին երիտասարդ, դու սպանեցիր Ակակիոսին, Հայաստանի կառավարչին, և Սիտտասին, հռովմեական սպարապետին: Անցար Խոսրով թագավորի կողմը և մասնակցեցիր նրա արշավանքներին ընդդեմ կայսրի:

Արդ, քանի որ այդպես կտրիճ ես եղել, քո պարտքդ է՝ թույլ չտալ, որ արբած շունը իշխե Հռովմեական կայսրության: Ցույց տուր այժմ, ո՛վ քաջ, որ բոլոր նախկին սխրագործություններդ կատարել ես միմիայն հոգուդ ազնվությունից և արիությունից: Ինչ վերաբերում է ինձ և Արտաշիրին, մենք քո ձեռքին ենք և կ՚օժանդակենք քեզ մեր բոլոր ուժերով»:

Պատմագրի հերյուրած ճառը ամեն պարագայի բնորոշում է հայերի լարված դրությունը Գոնթարիսի բանակում: Գոնթարիս գժտվել էր իր դավադրության մասնակից Անտալաս մավրուս իշխանի հետ: Հակառակ պայմանի նա բաժին չէր հանել Անտալասին հաղթված թշնամու գույքից և զինվորներից: Գոնթարիս բավականացել էր միայն Արիոբինդոսի գլուխը ղրկելով Անտալասին որպես նվեր: Մավրուս իշխանը զայրացած լքել էր արդեն իր երեմնի զինակցին և միացել կայսերական զորքերի մնացորդներին Բիզակում:

Գոնթարիս պատվիրեց Արտավանին գնալ Անտալասի վրա և ջարդել նրա ուժերը: Արտավան արդարև հաղթեց Անտալասին և ի փախուստ դարձրեց նրա զորքը: Սակայն փոխանակ հետապնդելու, Արտավան հրամայեց յուրայիններին հետ դառնալ: Գոնթարիսի զինակիրներից մեկին, Ուլիթեոս անունով, այս բանը կասկածելի թվաց: Ուզում էր ամբաստանել Արտավանին որպես դավաճանի: Արշակունի իշխանը հարկավոր բացատրությամբ ցրեց ամեն մի կասկած և միևնույն ժամանակ խորհուրդ տվեց Գոնթարիսին ելնել ավելի մեծ զորքով ընդդեմ վտանգավոր թշնամու և ջախջախել ընդմիշտ նրա ուժերը:

Գոնթարիս վճռեց հետևել Արտավանի խորհրդին: Արշավանքի նախօրյակին նա մեծ խնջույք սարքեց և հրավիրեց բոլոր զորականներին, որոնց թվում էր և Արտավանը իր մերձավորներով:

Սեղանը հարդարված էր մեծ դահլիճում, ուր հնուց կային երեք բազմոց: Առաջնի վրա բազմեց ինքը՝ Գոնթարիս իր համախոհներով, Արտավանը և Պետրոս անունով մի թրակացի, որ զինակիր էր եղած Սողոմոնի՝ Լիբիայի

նախկին կառավարչի: Մյուս երկու բազմոցները բռնեցին վանդալ զորագնդի առաջնորդները: Բարեհաջող առիթ էր սպանելու բռնակալին: Այս միտքն էր, որ խռովում էր Արտավանին, վաղուց ծրագրած լինելով սպանությունը: Գրիգորին և Արտաշիրին, ինչպես և իր մյուս զինակիր հայերին նա հայտնեց իր մտադրությունը, և պատվիրեց, որ նրանք ճաշի ժամանակ, ինչպես ընդունված էր, կանգնեն իր ետևը, սրերը ձեռքին:

Դավադրության ծրագիրը մշակված է պարագայորեն: Նախահարձակը պիտի լիներ Արտաշիրը: Գրիգորը պատվեր ուներ ընտրել հայ տղաներից ամենաքաջերին և տանել արքունիք ու թողնել նախասրահում, Գոնթարիսի պահապանների կողքին: Կարիք չկար նրանց հայտնելու գործի էությունը: Նրանց ասելու էր, որ կասկած կա թե միգուցե Արտավանին ճաշկերույթի են հրավիրել՝ նրա կյանքի դեմ դավ սարքելու դիտավորությամբ: Ուստի նախազգուշության համար պետք է, որ Գոնթարիսի պահակի մոտ կանգնած սպասեին: Այլև ձևանալու էին, իբրև թե կատակ են անում, վահանները ձեռքերին խաղացնելով, վեր ու վայր ձգելով, պտտեցնելով, և հենց որ խառնաշփոթի աղաղակներ լսվեին ներսից, պետք է վահանները հագած՝ օգնության վազեին:

Բուն սպանության գործը հանձնված էր Արտաշիրին, որ Գրիգորի հետ որպես թիկնապահ կանգնելու էր Արտավանի ետևը, սեղանի շուրջը: Այս դիրքում թիկնապահները իրավունք չունեին վահան կրելու: Ուստի Արտաշիր պաշտպանության մի այլ միջոց խորհեց: Սլաքի կոթերը կոտրտելով շարեց ձախ արմուկի վրա, փաթաթեց կաշիով և սքողեց վերարկուի թեզանիքով: Կռվի ժամանակ այդ ձեռքը կարող էր վահանի տեղ ծառայել հակառակորդի հարվածի դեմ:

Այս պատրաստությունից հետո Արտաշիր դարձավ Արտավանին հետևյալ խնդրով. «Ահա այս սրովս կհարվածեմ Գոնթարիսին, իսկ թե հետևանքը ի՞նչ կլինի, չգիտեմ: Արդյոք Աստված, բարկանալով բռնակալի վրա, կօգնե՞ ինձ այս խիզախ գործում, թե ուզենալով ինձ պատժել որևէ մեղքիս համար կխանգարե ձեռնարկս: Իսկ դու, եթե տեսնես, որ հարվածս մահացու չէ, մի կասիր իսկույն խողխողել ինձ նույն սրով: Ապա թե ոչ կարող են ինձ կտտել և բերանիցս խոսք հանել, որ ոճիրը կատարել եմ քո խորհուրդով և այսպես կկորչեմ ես նշավակության մահով և կկործանեմ քեզ ակամա մատնությամբ»:

Արտաշիր, Գրիգոր և մի ուրիշ նիզակակիր մտան սրահը և կանգնեցին Արտավանի ետևը: Հացկերույթը սկսվեց: Արտաշիրը մտահոգ սպասում էր հարմար վայրկյանին: Ահա արդեն ձեռքը տանում էր դեպի սուրը: Սակայն Գրիգորը չթողեց և ասաց հայերեն լեզվով, թե Գոնթարիսը դեռ զգաստ է, բավական չափով գինի չէ խմել:

Արտաշիր հառաչ քաշեց և ասաց. «Լսի՛ր, ինձ խանգարեցիր այն պահուն, երբ ես սիրտ էի առել հարվածելու, լավ չարիր»:

Խրախճանքը շարունակվում էր, Գոնթարիսն արդեն զվարթացել էր գինուց և առատաձեռնորեն սեղանից բաժին էր հանում զինակիրներին: Ով որ ստանում էր, հեռանում էր դուրս սրահը, այնտեղ ճաշակելու: Բոլորը քաշվեցին, մնացին երեք հոգի, որոնցից մեկն էր վերև հիշած Ուլիքեոսը:

Արտաշիր ևս դուրս էր եկել իր ընկերների հետ: Հանկարծ միտքը եկավ, որ եթե սուրը պատյանից հաներ, ոչ ոք նրան չէր կարող արգելել: Անմիջապես սուրը հանեց, պատյանը մի կողմ նետելով, քևի տակ ծածկեց վերարկուով և մտավ դահլիճը: Մոտեցավ Գոնթարիսին, որպես թե գաղտնիք ուներ հայտնելու:

Արտավանը նկատեց և սկսեց հուզվել: Ներքին կռիվը փոթորկում էր նրա հոգեկան անդորրությունը: Գլուխը թափահարում էր, գունատվում և թվում էր, թե միևնույն ժամանակ ոգևորված էր գործի փառահեղությամբ:

Թրակացի Պետրոսը գլխի ընկավ, բայց ոչինչ չասաց, որովհետև ի ներքուստ համակրում էր գործին:

Երբ որ Արտաշիրը մոտեցավ Գոնթարիսին, սպասավորներից մեկը հրեց նրան, Արտաշիրը թեքվեց այնպես, որ սպասավորի աչքին ընկավ մերկացած սուրը. «Այդ ի՞նչ է, բարեկամ»,- գոռաց նա: Գոնթարիս ձեռքը աջ ականջին դրած՝ դարձավ դեպի Արտաշիրը: Ճիշտ այդ պահին իջավ սուրը նրա գլխին, և կտրեց գանկի կեսը մատերի հետ:

Պետրոսը բարձրաձայն խրախուսում էր փշրել մեծագույն չարագործին:

Գոնթարիս ցատկեց տեղից: Արտավանը, որ նստած էր ոչ հեռու, հանեց երկսայրի սուրը և մխեց նրա աջ կողքը մինչև կոթը և թողեց ցցված: Գոնթարիսը ի զուր փորձեց վեր կենալ: Հարվածը մահացու էր և նա թավալեց տեղնուտեղը:

Ուլիքեոս շարժեց սուրը, որ զարկե Արտաշիրին: Սակայն վերջինս դեմ դրավ սլաքի կտորներով զրահավորված ձեռքը, հարվածը հետ մղեց և ինքը հարձակվելով սպանեց Ուլիքեոսին առանց դժվարության:

Արտավանը և Պետրոսը վերցրին մեկը՝ Գոնթարիսի և մյուսը՝ Ուլիքեոսի սուրը և սկսեցին կոտորել մնացած նիզակակիրներին: Բարձրացավ, բնականորեն, մեծ ժխոր: Այն հայերը, որ կանգնած էին դուրսը Գոնթարիսի մարդկանց կողքին, հենց որ լսեցին աղմուկը, սուրացին ներս, ինչպես որ հրամայված էր, և ջարդեցին Գոնթարիսի կողմնակից վանդալ իշխաններին առանց լուրջ դիմադրության:

Գոնթարիսի պահակը, կատարված եղելության առաջ, ստիպված էր հարել հաղթական հայերին:

Այսպիսի եղերական վախճանով կործանվեց ապստամբ Գոնթարիսը, թագավորելով միմիայն երեսուն յոթն օր: Հուստինիանոսի տասնիններորդ տարին էր, այսինքն՝ 545 թիվը:

Արտավան այս գործով մեծ անուն հանեց ամբողջ կայսրության մեջ: Արիոբինդոսի կինը՝ Պրիեկտան, պարգևեց նրան մեծ գանձ, իսկ կայսրը նշանակեց Լիբիայի ընդհանուր սպարապետ:

Շատ չանցավ, և Արտավանը խնդրեց կայսեր թույլատրել վերադառնալ մայրաքաղաք: Կայսրը կատարեց խնդիրը և նրա տեղը նշանակեց Լիբիա մի ուրիշ անձն, որ կոչվում է Հովհաննես, եղբայր Պապի: Կարծիք կա, որ սա ևս հայ էր: Բայց հարցը մեր ներկա խնդրից դուրս է:

Մայրաքաղաքում սկսվում է Արտավանի կյանքի մի նոր արարը:

* * *

Արտավանը, Արշակունյաց վտարանդի զավակը, գեղեցիկ էր և բարեկազմ, կեցվածքը՝ ազնվական, շարժումները՝ վեհ, խոսքը՝ չափած: Լիբիայի արկածից հետո ժողովրդական պաշտելի հերոս դարձավ: Պերճ մայրաքաղաքը խոնարհվել էր նրա առաջ:

Անտարբեր չէր դեպի քաջարի Արտավանը մանավանդ Պրիեկտա Արիոբինդոսի կինը, որին փրկել էր հայ կտրիճը Գոնթարիսի անհաճո գրկից: Արտավանը սիրահարված էր: Տակավին Լիբիայում իրար խոսք էին տվել: Երբ Պրիեկտան վերադարձավ իր գերությունից մայրաքաղաք, Արտավանը քիչ հետո հետևեց նրան: Թողեց Լիբիայում այն բարձր պաշտոնը, որ արդար գինն էր իր մեծագործության: Այժմ Արտավանը համարվում էր արդեն Պրիեկտայի նշանածը և ցանկանում էր ամուսնանալ:

Բոլոր նշաններից երևում է, որ Արտավանի տարփանքն է իսկապես խմորել Գոնթարիսի սպանության դավադրությունը: Պրիեկտայի սերն է, որ մղել է նրան դեպի եղեռնը: Ժամանակակից պատմագիրը ոչ մի բանավոր հիմք չէ հիշում Արտավանի գործի համար: Ի՞նչ էր սպանության իրական շարժառիթը, մնում է մութ: Պետք է ասել, որ Պրոկոպիոս պատմագիրը մի տեսակ հեգնանքով է պատմում Լիբիայի արկածը: Հեգնանք, որ երբեմն ծաղրի է փոխվում: Ինքը հայտնի Վելիսարիոս զորավարի քարտուղարն է եղել, մեծ պաշտամունք ունի դեպի իր տերը և նախանձով է վերաբերում դեպի ամեն մի անձ, որ կարող էր նսեմացնել Վելիսարիոսի անունը որևէ սխրագործությամբ: Այս է պատճառը, որ պատմագրի հեգնությունը միշտ միևնույն աստառն ունի, որ Արտավանը կամ Արտաշիրը ուրիշ մղում չունեին իրենց դավադրության, քան աշխարհք զարմացնել, Վելիսարիոսին նմանել: Պատմագիրն այս դեպքում հանդես է գալիս, անտարակույս, որպես մի հետևակ հոգեբան, քան անաչառ դիտող: Նա տրամադիր չէ արժեք տալու Արտավանի և Պրիեկտայի սիրային մտերմության, այլ ընդհակառակը, աշխատում է վարկաբեկել նրանց սերը: Արտավան որպես թե հարել էր Պրիեկտային, հուսալով, որ այնուհետև հեշտ է ձեռք մեկնել կայսերական

թագին: Հիշենք, որ Պրիեկտան Հուստինիանոսի քրոջ աղջիկն էր, ուրեմն կայսերական տանից էր: Իսկ Պրիեկտայի մասին ասում է, որ ոչ թե իսկական սերն էր, այլ ավելի երախտագիտության զգացումը, որ տանում էր նրան դեպի Արտավանը, իր ազատարարը: Նա էր, որ Պրիեկտայի ամուսնու վրեժն էր լուծել, նա էր, որ ազատել էր իրեն՝ Պրիեկտային, Գոնթարիսի ճիրաններից: Թե հիրավի սիրային կիրքը կարող էր ներշնչած լինել Լիբիայի **դառը**, երևում է նրանից, որ նույն կիրքը ընդունակ եղավ գրգռելու Արտավանին դեպի անհամեմատ ավելի խիզախ և ավելի մեծ գործ: Այդ էր դավադրություն Հուստինիանոսի դեմ իր մայրաքաղաքի մեջ:

Պատմագիրը սկսում է Արտավանի հանդուգն ծրագրի պատմությունը մի բարոյական խորհրդածությամբ: Երբ մարդ բարձրանում է անսպասելի կերպով բախտի թևերի վրա, նա չի կարողանում կանգ առնել ստացած երջանկության վրա. նայում է առաջ, ձգվում է ավելի հեռուները, մինչև որ կորցնում է ամեն ինչ տարապարտուց: Արտավանը հասել էր փառքի բարձունքին: Կայսրը զարդարեց նրան մեծամեծ պատիվներով: Լիբիայի զորապետությունը թողնելուց հետո նա նշանակվեց մայրաքաղաքի ուժերի գլխավոր: Կայսրը պարգևեց հյուպատոսության պատիվ: Բախտը ժպտում էր նրան ամեն կողմից: Մնում էր միայն Պրիեկտայի սերը վայելել, և այդ չհաջողեց:

Արտավանը ամուսնացած էր երիտասարդ հասակում: Կինը հայ էր և մինչև իսկ Արշակունյաց ցեղից: Արտավանը թողել էր նրան իր հայրենիքում: Կինը հլու տարել էր անջատման ծանրությունը: Բայց երբ լսեց, որ Արտավանը շնորհիվ իր քաջագործության, հանգամանքների հաջող բերումով, հռչակվել էր ամբողջ կայսրության մեջ, չդիմացավ այլևս իր անփառունակ վիճակին և ճանապարհ ընկավ դեպի Բյուզանդիա: Նա ներկայացավ կայսրուհուն և խնդրեց նրան դարձնել իրեն իր ամուսնուն: Կայսրուհին, որ ամեն կերպ հովանավորում էր անբախտ և լքված կանանց, ստիպեց Արտավանին հաշտվել կնոջ հետ և առնել նրան իր մոտ:

Պրիեկտան անցավ ուրիշի ձեռքը: Միրելի կնոջ կորուստը դառն կսկիծ թողեց Արտավանի սրտում: Խոր խոցված էր հայ իշխանը: Ջայրացած հաճախ լսելի էր անում իր տրտունջը, որ այնքան ծառայությունների փոխարեն, որ մատուցել էր կայսրության, թույլ չտվին անգամ առնել սիրած կնոջ և բռնադատեցին ապրել մեկի հետ, որ ատելի է և թշնամի իրեն:

Արտավանը տանջվում էր ներքուստ: Անկարող էր ամոքել իր ցավը: Հպարտ իշխանը վիրավորված էր, խայթված: Ատում էր զրկանքի հեղինակներին: Հազիվ սանձում էր իր բորբոքված կրքերը, որ սպառնում էին պայթելու:

Կար մի ուրիշ անձ, որ նույնպես դժգոհ էր և լի անհուն ատելությամբ դեպի կայսրը: Դա իշխան Արշակն էր, որ նույնպես հայ էր և անգամ ազգակից Արտավանի, այսինքն՝ Արշակունյաց տոհմից էր:

Արշակը ևս ցոր էր հեռացել հայրենիքից և թվում է, թե Արտավանի հետ միաժամանակ և միևնույն պայմաններում: Ասում էին, որ Արշակր մեղանչել էր Հուստինիանոսի դեմ: Իբրև թե միաբանելով պարսից Խոսրով թագավորի հետ, փորձել էր պետական հեղաշրջում առաջ բերել կայսրության մեջ: Երևի ակնարկը վերաբերում է կայսրի դեմ լարված որևէ որոգայթի: Ինչևէ, կայսրը ներողամիտ էր գտնվել Արշակի նկատմամբ, ոչ գույքն էր հափշտակել և ոչ էլ բանտ էր ձգել: Սակայն ծանր վիրավորանք էր հասցրել նրան: Հրամայել էր ծեծել մտրակով, և հետո ուղտի վրա դրած՝ ման ածել քաղաքը:

Արշակը խորապես առնված էր կայսեր վարմունքից և հնար էր որոնում խարդավանել նրա և պետության դեմ: Բնական է, որ կարեկցություն գտավ նախ և առաջ իր հայրենակցի՝ Արտավանի, կողմից:

Արշակը սկսեց այնուհետև գրգռել Արտավանին, խայթելով նրա ինքնասիրությունը, շարժել, ոտի հանել նրան Հուստինիանոսի դեմ: Նախատում էր Արտավանին նույնիսկ այն բանի համար, որ նրա փառք ու պարծանքն էր նկատվում: «Տղամարդությունը, որ ցույց տվիր, - ասում էր Արշակը, - բնավ անդեպ էր և վայել միմիայն կնոջ: Հերոսի անուն վաստակեցիր ուրիշների թշվառության գնով հոչակ ստացար որպես տապալիչ ապօրինի իշխանության, մինչ հոժարեցիր սպանել ի զուր տեղը Գոնթարիսին, որ բարեկամդ էր և հյուրասիրողդ: Իսկ այժմ արիությունդ կորցրած՝ նստել ես այստեղ վեհերոտ, այնինչ **մեր հայրենի երկիրը, բռնված ամենուրեք պահնորդ զօրքերով, հեծում է անլուր հարկերի ծանրության տակ:** Հորդ սպանեցին բանակցության և հաշտության հրապուրով, ցեղակիցներիդ ստրկացրին գլխովին, և այժմս ցրում են նրանց շարունակ կայսրության բոլոր ոլորտները: Այսպիսի պայմաններում ահա, դու Արտավան, կարծում ես, որ մեծ բան է, որ հռովմեակւսն զորավար ես և կամ կրում ես հյուպատոսի տիտղոս: Դու նույնիսկ կարեկցություն չես ցույց տալիս ինձ, որ ազգականդ եմ, այն դառնագին անարգանքի համար, որ ես կրեցի: Ինչ վերաբերում է ինձ, ես ցավում եմ, ո՛վ բարեկամ, որ այնպես անբախտ եղար կանանց խնդրում, մինչ մեկից զրկվեցիր անարժանապես, իսկ մյուսի հետ ապրել հարկադրվեցիր հակառակ կամքիդ: Այս բոլորից հետո ի՞նչ կասկած, որ ամեն ոք, որ դույզն-ինչ ինքնասիրություն ունի, չի սասանի, որքան էլ անվճռական լինի կամ երկչոտ, ձեռք բարձրացնել Հուստինիանոսի վրա, որը նստած իր սենյակում առանց քիկնապահների, օրնիբուն մինչև խոր գիշերը ծերունի եպիսկոպոսների հետ ծամծմում է եռանդով քրիստոնեական դավանանքները»:

Այսպիսի ճառերով Արշակը գլխից հանեց Արտավանին: Երբ տեսավ, որ մեծ զորավարը կակղել է, դիմեց մի ուրիշ հայի, որ Պարսկական Հայաստանիցն էր, և որի անունն էր Քանարանգես, և ջանաց նրան ևս խառնել գոր-

ծին: Քանարանգեսը երիտասարդ տղա էր, շատ գեղեցիկ, բայց ոչ խելահաս և բնավորությունը բավականին երեխայական էր: Դժվար չէր նրան համոզել:

Արշակը երկու հայրենակիցների հավանությունը երաշխավորելուց հետո, փորձեց թեքել իր կողմը նաև Գերմանոսին, որ կայսեր եղբորորդին էր և դրան ազդեցիկ անձերից մեկը:

Արտավանի հետ խոսելիս Արշակը ակնարկել էր, որ Հուստինիանոսը մեծ մենակ էր, ազգականների հետ գժտված և ուրեմն օգնություն հուսալ նրանցից չէ կարող: Ակնարկը վերաբերում է իսկապես Գերմանոսին: Սրա եղբայրը մեռնելիս՝ թողել էր իր ժառանգությունը Գերմանոսին պայմանով, որ իր կինը և աղջիկը ստանան իրենց օրինական բաժինը: Հուստինիանոսը միջամտել էր, հովանավոր ձևանալով հանգուցյալի կնոջ և դստեր շահերի: Այս առթիվ Գերմանոսի հարաբերությունները կայսրի հետ լարվել էին և անգամ դարձել թշնամական:

Գերմանոսը երկու որդի ուներ, երկուսն էլ տակավին երիտասարդ, տաքարյուն և գրգռված կայսեր դեմ: Արշակը հույս ուներ, ինչպես հավատացնում էր Արտավանին, որ այս երկու եղբայրները ոչ միայն կմիանային դավադրության, այլև նախաձեռնությունը իրենց վրա կառնեին: Ավագ եղբայրը, Հուստինոսը, տղա էր, մորուսը հազիվ բողբոջած, բայց հայտնի էր ձեռնարկու և ներհուն ոգվով: Հյուպատոսության տիտղոսի էր արժանացել:

Սրան դիմեց Արշակը և խնդրեց ժամադրություն գաղտնի և կարևոր խոսակցության համար: Հանդիպումը տեղի ունեցավ եկեղեցու մեջ:

Արշակը նախ երդում տվավ Հուստինոսին, որ խոսակցությունը իրենց մեջ կմնա և ոչ ոքի չի հայտնի, բացի թերևս իր հորից: Այնուհետև սկսեց պարսավել, երեսովը տալ, որ այնպես անտարբեր է դեպի քաղաքական կյանքը: Կայսեր մոտ ազգական լինելով, ներելի է համարում, որ պետական բարձր պաշտոնները վարեն աննշան և ստորին ծագումով անձեր: Ինքը պարապ նստած գոհանում է հանդիսատեսի ամուլ դերով: Կայսրը պարզապես քամահրում է, բանի տեղ չէ դնում ոչ միայն իրեն Հուստինոսին, այլ անգամ հորը, որ անպայման վաստակավոր ոք է, և կրտսեր եղբորը, որին վիճակված է մնալ ամբողջ իր կյանքում մասնավոր մարդու համեստ դերի մեջ: Շարունակելով իր խոսքը, Արշակը հիշեցնում է Հուստինոսին, ինչպես իր ապիկարության պատճառով չկարողացավ անգամ ստանալ իր հորեղբոր ժառանգությունը, որ կտակով իրեն էր թողած և որի մեծ մասը ձեռքիցը ընկավ շնորհիվ կայսեր անարդար միջամտության: Արշակի կարծիքով, Հուստինոսի և յուրայինների վիճակը ավելի ևս պիտի վատթարանա, երբ Իտալիայից վերադառնա Վելիսարիոսը, որ արդեն, լուրերի նայելով, ճանապարհին է և հասել է Իլլիրիա:

Այսպիսի գրգռիչ ճառերով Հուստինոսի միտքը պղտորելուց հետո

Արշակը առաջարկեց նրան ծառանալ Հուստինիանոսի դեմ, միանալով ծրագրված դավադրության: Պարզեց գործի էությունը, չծածկեց նաև ինչ որ խոսել էր Արտավանի և Քանարանգեսի հետ:

Հուստինոսը լսելով այս բոլորը, շփոթվեց, այլայլվեց, և հայտնեց պարզ և պարզ, որ ոչ ինքը և ոչ հայրը չեն կարող այդպիսի առաջարկ ընդունել:

Արշակը պատմեց ամեն ինչ Արտավանին, իսկ Հուստինոսը լուրը տարավ իր հորը: Վերջինս հաղորդեց որդու խոսակցությունը պալատական զորքերի պետին՝ Մարկելլոս անունով անձին: Գերմանոս և Մարկելլոս խորհուրդ արին և որոշեցին, որ վաղաժամ է և իրենց համար թերևս վտանգավոր այս մասին զեկուցում տալ կայսեր:

Մարկելլոսը լրջմիտ, ծանր բնավորության տեր մարդ էր. սիրում էր գործել լռելյայն: Անշահասերի համբավ ուներ իր պաշտոնեության մեջ, թեթևամիտ ճառերի և գործերի կողմնակից չէր: Մասնավոր կյանքում ևս բավականին խստակյաց էր, հեռու զվարճություններից և խրախճանքներից: Նախանձախնդիր էր մանավանդ արդարության և ճշմարտության: Ահա այս մարդն էր, որ չթողեց, որ գործը հասնի կայսեր: «Ի՞նչ օգուտ քեզ, ասաց նա Գերմանոսին, մատնություն անել այս գործում: Եթե փորձես խոսել կայսեր հետ ծածուկ, Արտավանի կուսակիցները իսկույն ևեթ պետք է կասկածեն, որ մատնիչը դու ես: Եվ եթե Արշակը փախչի, ամբաստանությունը կմնա անապացույց: Գալով ինձ, ես սովոր չեմ հավատ ընծայել մի բանի, որ ինքս անձամբ չեմ ստուգել, ևս առավել տեղեկացնել կայսեր: Կցանկայի ականջովս լսել այդ մարդու խոսակցությունը. կամ սարքելու է այնպես, որ լսի իմ վստահելի և հավատարիմ անձերից մեկը»:

Գերմանոսը պատվիրեց իր որդուն, Հուստինոսին, կատարել Մարկելլոսի ցանկությունը: Սակայն Հուստինոսն այլևս չէր կարող հուսալ տեսակցել Արշակի հետ, քանի որ բացեիբաց մերժել էր նրա առաջարկը: Խորհեց դիմել Քանարանգեսին և նրան հարցնել, արդյոք Արտավանի գիտությա՞մբ էր Արշակը եկել իր մոտ:

«Այսպիսի գործերում,-դարձավ նա Քանարանգեսին,-իմ կողմից մեծ անզգուշություն կլիներ վստահանալ Արշակի նման մի մարդու: Այլ է, եթե դու հաճես բերանդ բանալ, այն ատեն, թերևս, միասին ընդհանուր ուժերով գործը գլուխ բերենք»:

Քանարանգես նախապես Արտավանի հաճությունն առավ և ապա կրկնեց Հուստինոսին ինչ որ իրեն Արշակն էր ասել: Հուստինոսը ձևացավ, որպես թե հավանեց ծրագիրը և խոստացավ համոզել իր հորը ևս:

Հայրը՝ Գերմանոսը, ցանկացավ անձամբ բանակցել Քանարանգեսի հետ: Նշանակեցին տեսակցության օրը: Գերմանոսն իմաց տվավ Մարկելլոսին և խնդրեց, որ մի վստահելի մարդ ղրկե լսելու Քանարանգեսին իր ականջով:

Մարկելլոսը գործը հանձնեց Ղևոնդիոս անունով մի անձի, որ հայտնի էր արդարասիրությամբ և ճշմարտախոսությամբ: Գերմանոսը սրան թաքցրեց իր տանը վարագույրի ետև և հնարավորություն տվավ նրան հետևելու Քանարանգեսի խոսակցության: Անգետ, որ ծուղակի մեջ է, Քանարանգեսը պատմեց ինչ որ խորհել են Արտավանը, Արշակը և ինքը: Հիշեց, որ վտանգավոր են համարել գործը սկսել Վելիսարիոսի բացակայության, երկյուղ կրելով, որ սա քաղաք հասնելով կարող է իրենց դեմ ելնել և վնասել: Մինչև անգամ եթե հաջողեն տապալել Հուստինիանոսին նախքան Վելիսարիոսի գալը, դարձյալ վստահ չեն, որ Վելիսարիոսը անգործ մնա: Հավանական է, որ մեծ զորք կհավաքե Թրակիայում և կհարձակվի մեզ վրա: Ահա ինչու ավելի նպատակահարմար են նկատել դավադիրները՝ սպասել Վելիսարիոսի գալստյան: Այն ատեն միայն նշանակված օրը սուսերամերկ և հանկարծակի խուժել դեպի արքունիք, երեկոյան դեմ, երբ մութը կկոխի, և խողխողել կայսրին, Մարկելլոսին և Վելիսարիոսին միաժամանակ: Այսպիսով ամեն մի վտանգ փարատված կլինի և հաղթական դավադիրները տեր կդառնան գահին և տերության:

Թաքնված Ղևոնդիոսը լսեց այս բոլորը և հավատարմությամբ տեղ հասցրեց: Սակայն Մարկելլոսը պատշաճ չգտավ անմիջապես զեկուցանել կայսրին: Հապճեպ վճռականությամբ կարող էր վնասել Արտավանին տարապարտուղ: Մարկելլոսը արդարասեր էր: Գերմանոսը տեսնելով, որ Մարկելլոսը ձգձգում է գործը և վախենալով, որ ինքն էլ կասկածի տակ կընկնի, շտապեց բանալ գաղտնիքը Կոստանդին և Բուզես անձերին:

Գերմանոսի երկյուղն արդարացավ: Մի քանի օրից հետո լուր եկավ, որ Վելիսարիոսը մոտ է քաղաքին: Մարկելլոսը, որ հավանորեն նրա գալուն էր սպասում, պատմեց կայսեր գործի էությունը: Արտավանի մարդիկը իսկույն ևեթ կալանավորվեցին: Նշանակվեց քննություն: Երբ հարցուփորձը վերջացավ և արդյունքը արձանագրությամբ ներկայացրին կայսրին, սա նշանակեց իր պալատում հատուկ ատյան ծերակուտականներից: Ատյանը մեղապարտ հռչակեց Գերմանոսին և իր որդուն, Հուստինոսին: Պատմագիրը, որ ամեն կերպ աշխատում է սպիտակացնել այս երկու անձերին, ստիպված է խոստովանել, որ բարձր ատյանը ամբաստանեց նրանց: Սակայն երբ Կոստանդինը և Բուզեսը վկայեցին, որ Գերմանոսն իրենց իրազեկ էր արել սկզբից ևեթ, դատարանը անպարտ հռչակեց ամբաստանվածներին: Հանդես եկավ նաև Մարկելլոսը, թեև ուշ, և խոստովանեց, որ ինքն է պատասխանատուն, որ չհրապարակեց ոճիրը իր ժամանակին, այլ քաշքշեց միմիայն նրա համար, որ մոտեն ծանոթանա գործի բոլոր հանգամանքներին: Հավատացրեց, որ Գերմանոսն ու Հուստինոսը իրեն իմաց էին տվել վաղօրոք առանց բան թաքցնելու:

Մարկելլոսը այսպիսով փրկեց Գերմանոսին և Հուստինոսին: Ծանրությունը մնաց Արտավանի վրա: Կայսրը խլեց նրանից բոլոր պաշտոնները և պատիվները, բայց ուրիշ անախորժություն չպատճառեց ո՛չ նրան և ո՛չ ընկերներին: Անգամ սովորական բանտ չձգեց նրանց, այլ պահեց ի դիպահոջ իր մոտ պալատում:

Տարին չլրացած կայսրը ներումն շնորհեց Արտավանին:

Թվում է, որ դավադրության պատմությունը մեղանչում է ճշմարտության դեմ: Պատմիչը Արտավանի համակիրներից չէ և ճշմարտությունը զոհել է ինչ-ինչ նկատումների: Արդարև, կայսրը նշանակում է քննիչ մասնաժողով, որ ուսումնասիրե գործը և կազմում է մանրամասն արձանագրություն: Բարձրագույն ատյանը քննության հիման վրա ճանաչում է հանցավոր Գերմանոսին և Հուստինոսին: Եվ հանկարծ հրապարակ են գալիս վկաներ՝ Բուզեսը և Մարկելլոս, մարդիկ որ ամենից հառաջ պիտի հարցաքննվեին, մնում են լուռ և հանգիստ և խոսում են, երբ արդեն վճիռն արձակված է: Ավելի քան կասկածելի դատավարություն է: Անշուշտ, հույն պատմիչը մի բան ծածկել է ուզում, ուստի և ստիպված է հեղհեղել դատավարությունը:

Գերմանոսն ու Հուստինոսը փոխադարձաբար ատելի էին կայսեր և կայսրուհուն: Գերմանոսի փեսան, Հովհաննեսը, նույն զգացումն ուներ և լի էր ոխակալությամբ ընդդեմ Հուստինիանոսի, որ ննջգորեն սպանել էր նրա հորեղբայր Վիտալիանոսին: Բուզեսը ևս ոչ մի հիմ չուներ սիրելու մանավանդ կայսրուհուն: Դավադրությունից հինգ տարի առաջ, ուրեմն 543 թվին, կայսրը ծանր հիվանդացել էր գրեթե մահամերձ: Բուզեսը և Վելիսարիոսը անզգույշ խոսքեր էին ասել, խրոխտացել էին, որ Հուստինիանոսի հաջորդի բախտը կախված է իրենցից: Լուրը հասել էր կայսրուհուն: Մի օր սա կանչում է Բուզեսին արքունիք և հանկարծ հրամայում է ձգել նրան գետնափոր մի նկուղ, խավար և անելք, ուր փակում էին մահապարտներին: Թշվառ Բուզեսը մնում է այս վիրապում երկու տարի և չորս ամիս: Դիպվածով լույս աշխարհ է տեսնում, որպես թե մեռելությունից կենդանանում: Հասկանալի է, որ այս անձը չէր կարող քնքույշ սեր և հավատարմություն ունենալ դեպի կայսերական տունը:

Արդ, երբ այսպիսի կասկածելի անձեր հիշվում են դավադրական ձեռնարկի մեջ, դժվար է երաշխավորել, որ նրանք անմեղ զոհեր լինեին: Հակառակ ենթադրությունը ավելի հիմնավոր կլիներ, ինչպես և ցույց տվավ բարձրագույն ատյանը:

Հիշված անձերը հավանորեն մասնակից են եղել դավադրության: Հետո ինչ-ինչ պատճառներով, երկյուղից, թե մի այլ նկատումով, հրաժարվել են: Արշակի մի ակնարկից կարելի է եզրափակել, որ Գերմանոսը հուսադրված է եղել, որ գահի թեկնածուն ինքը պիտի լիներ: Թերևս հետագայում

համոզվելով, որ դժվար է մրցել Արտավանի հետ, աննպատակ է համաբրել նրան գործակցել և ի զուր տեղը փորձանքի ենթարկել իր կյանքը:

Ամեն պարագային Արտավանի շնորհազրկությունը երկար չտևեց: Վելիսարիոսի հեռանալուց հետո Իտալիան ընկավ նորից գոթերի ձեռքը: Այստեղից արշավեցին Սիկիլիա: Կայսերական նավատորմը ճանապարհ ընկավ նրանց դեմ Լիբերիոսի գլխավորությամբ: Սակայն կայսրը շուտով զգաց, որ սխալ էր գործել: Լիբերիոսը զառամ հասակի մեջ էր և անվարժ զինվորական արվեստի: Ահա այդ ատեն էր, որ ներումն շնորհեց Արտավանին, դարձնելով նախկին պաշտոնները և պատիվները, և նշանակեց Թրակիայի ընդհանուր սպարապետ:

Լիբերիոսին անմիջապես հետ կանչեց և նրա տեղ առաքեց Արտավանին: Նավատորմը հասել էր արդեն Սիրակուզա, երբ Արտավանը մեկնեց մայրաքաղաքից: Ուղևորությունը աղետալի վախճան պիտի ունենար: Ծովը հուզված էր և սոսկալի ալեկոծությունը պիտի կլաներ հռչակավոր զորավարին, եթե մի հրաշքով կատաղի ալիքները չնետեին նրան Մելիտե՝ արդի Մալտա, կղզին:

Այստեղից Արտավանը գնաց Սիկիլիայի վրա, մաքրեց կղզին գոթերից և վերահաստատեց օրինական իշխանությունը:

Վերջին անգամ հիշատակվում է Արտավան Իտալիայի Կրոտոն քաղաքի պաշարման առթիվ, երբ քաղաքացիք մարդ են ուղարկում Արտավանին և աղերսում օգնության հասնել իրենց:

Հետագա կյանքի մասին ոչինչ հայտնի չէ:

Դավադրությունը եղավ 548 թվին: Հաջորդ 549 թվին Արտավանը ստացավ ներում, իսկ 559 թվին Սիկիլիա էր: Այնուհետև լռում է պատմությունը:

Արտավան իշխանի կյանքը նման է վեպի: Այդպես են իսկապես բոլոր այն կյանքերը, որոնք ծավալվում են նոր ուղիների մոտ: Նորություն ասածդ ինքնին այլ բան չէ, քան մի տեսակ պատահականություն: Բնական է, որ նոր ճանապարհների վրա հրաշագործող կյանքերն էլ հյուսված են հաճախ դիպվածական, ասենք արկածավոր թելերից:

Սակայն Արտավանի ուղին սրկածախնդրական չէր. այն մի պատվանդան էր [illegible]ագա մեծ արծանի, որ կանգնելու էին հայերը Բյուզանդական պատմության մեջ:

Հուստինիանոսի օրից և նրա քաղաքականության հետևանքով կայսրության դռները լայն բացվեցին հայության առաջ, առավելապես տիրող դասի, ազնվականության: Իրար ետևից քաշվեցին արևմուտք մանավանդ Արշակունի և Կամսարական տան ներկայացուցիչները:

Արտավան և Հովհաննես Արշակունիք, Ներսեհ, Հրահատ և Իսահակ Կամսարական երեք եղբայրներ, Գղակ, Արտավազդ, Վարազ, մի ուրիշ Հով-

հանձնես, այլև Արշակ, Արտաշիր և Քանարանգես - ահա հայ ասպետության այն շարասը, որ իրենց այրուձիով Բյուզանդական զորքի զարդն էին կազմում Հուստինիանոսի օրով: Եվ հռչակավոր Ներսեսը, որ Հուստինիանոսի տերության իսկական սյունն էր (3):

Հայ անունն արդեն դուրս էր եկել իր նեղ ձորերից ու կիրճերից և քնդում էր մեծ պետության ծավալուն տարածության մեջ:

Հայությունը մի գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլև թավալում են հուժկու ալիքներ դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանոսը:

Արտավան, Ներսես և նրանց շուրջը գործող իշխանների պարը, առաջին մեծ ալիքներն էին, որ զարկեցին Բյուզանդական արքունիքի պատերին:

Հայաստանի լեռների այդ վայրի ծաղիկները պատվավոր տեղ գրավեցին Բյուզանդական շքեղության մեջ:

Արտավանի առանձնահատուկ արժանիքն այն է, որ առաջին հայն էր, որ ձեռք կարկառեց կայսերական թագին:

Արշակունի զավակը մի ոստյունով ուզեց թառել Կոստանդնի Մեծի գահի վրա: Համարձակություն էր, բայց ոչ երազական թռիչք: Այս համարձակությունը եղավ պատվանդան Հայոց մեծ և հոյակապ վերելքի Բյուզանդիայում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

Դարերից ի վեր սովորություն է դարձած վատաբանել հայ ազգությունն իր որպես թե հակահասարակական հատկության համար: Ներքին խռովություններն ու ընդհարումները հասարակական կյանքի ասպարեզում որակվում են միշտ իբրև հետևանք անմիաբան և հակառակիչ ոգու: Անմիաբանության համբավը համարվում է ընդաբույս խորշում մեր ալևոր ճակատին: Նա ինքն է պատճառ կարծվում և մեր ճակատագրական դժբախտության: Ցան ու ցրիվ, մանավանդ ներհակ և հակառակ գործունեությունն է, որ տանում է մեզ դեպի վտանգների և դառնության նեղուցները:

Այսպես էին մտածում հները և նրանց հետևելով՝ նորերը:

Հայ ազնվականությունը, երկրի ամենակարևոր առաջնորդ ուժը, ներկայանում է մեզ հետնորդներիս հին մատենագիրների մոտ այնպիսի սև գծերով, որ միայն հառաչել կարելի է: Երկպառակություն, գժտություն, դավադրություն, տեսակ տեսակ մեքենայություններ հիմն ունենալով եսասիրություն, փառամոլություն, քսություն, ամեն ստորին ձգտում, բայց ոչ հասարակական բարձր խոյացում,- ահա ինչպես է նկարագրվում նախարարական միջավայրը:

Կողմնակալ գրիչներն ուզում են հավատացնել համառորեն, որ հայ իշխաններն այնքան տկարամիտ էին, որ գերադասում էին օտար կուսակալին սեփական թագավորից և կամ նրանց համար ավելի հարգի էին Չունակներն ու Բրքիշոները, քան Ներսես-Սահակները:

Չափազանցությունը երբեք առաքինություն չէ մանավանդ մատենագրի համար, որից պահանջվում է անաչառ և խոհուն կշռանք: Մեր նախնիք հաճախ մեղանչած են արդարության դեմ, աղավաղելով ժամանակակից իրողությունները: Ընորհիվ նրանց միակողմանի և թյուր լուսաբանության մեզ ներկայանում է անցյալը շատ անգամ որպես անհատական սանձարձակության ասպարեզ, զուրկ գաղափարական ղեկավար նշանաբաններից:

Հարկավ հներից չի կարելի սպասել երևույթների վերլուծում, անցքերի գնահատում այնպես, որպես պահանջում է արդի քննիչ միտքը: Ո՛չ մատենագիրների տեսակետը և ո՛չ նոցա հանձնարարականները չեն կարող

պարտադիր համարվել մեզ համար: Նրանց հայտարարություններն անգամ հարգի են լոկ իբրև կուսակցական ապրումների արդյունք:

Եթե պատմական ստույգ իրողությունների վրայից հանենք այն պատրանքը, որ պատկանում է մատենագիրների անձնական տեսության, և հետևենք անցքերի հաջորդական ելևէջներին, կտեսնենք, որ նրանց հիմը կազմում են երկու քաղաքական գործելակերպ, երկու ուղղություն, ձգված ամբողջ դարաշրջանի երկարությամբ: Հայրենասերներ և դավաճաններ չէին և ոչ էլ բարեմիտ և չարագործ ուժեր, որ դեմ առ դեմ կանգնած պայքարում էին ընդգրկած ուղիների վրա: Երկու խոշոր հոսանքներ էին, որ ձգտում էին միևնույն նպատակին տարբեր միջոցներով, միևնույն մարմնի հարազատ հատվածներ, բռնված նույն քաղաքական տենդով:

Ի՞նչ էր նրանց գաղափարական ինքնորոշումը:

Հարցս միայն տեսական շահ չունի: Թվում է, որ հին դարերի քաղաքական հոսանքները մի տեսակ նախաշավիղներ են նոր ժամանակվա մեր կուսակցական խմորումների:

Ասել է, թե ազգային մտայնությունը քաղաքական մեծ հարցի հանդեպ մնացել է հավատարիմ հնության ավանդներին: Հավատարմությունը բնավ գիտակցական չէ այս դեպքում, այսինքն՝ նա արդյունք չէ հին ուղիների ծանոթության: Նման պարագաներն են, որ ծնել են նման հոգեբանություն և նման քաղաքական տրամադրություն ու ուղեգիծ, հին և նոր ժամանակները:

Անցյալում ունենք մի լայն շրջան, որ իր քաղաքական ոգորումներով նման է մեր տակավին թարմ ազատագրական շարժման և խրատական՝ շատ նկատումներով (1):

* * *

Իններորդ դարի կեսերին իրականացավ հայի քաղաքական երազը: Հայաստանի մի մասը, փոքր, բայց կարևոր բաժինը, ազատվում էր արաբական լծից:

Այն արյունը, որ թափեցին հայերը վերջին անգամ Արշակունի թագի պաշտպանության համար, ուղիղ չորս դարով էր անջատված երջանիկ օրից, երբ կորցրած թագը գալիս է զարդարելու Բագրատունի իշխանի գլուխը:

Աշոտը իրավունք ուներ տոնելու իր հաղթանակը տակավին 861 թվին:

Չորս դարը խաղաղության, անուշ քնի ոսկե ժամանակամիջոց չէր: Գրեթե անընդհատ պատերազմների, խռովքի, անկումի և ամբարձի փոթորկալից շրջան էր: Ի՞նչ գործոն և կամ ղեկավար ուժեր կային հրապարակի վրա և ի՞նչպես էին դասավորված ձգտելի նպատակի հանդեպ: Նրանք տարբեր էին քան այժմյան ուժերը, ինչպես և տարբեր է այն ժամանակվա և արդի հայ հասարակական կյանքի կառուցվածքը:

Հայտնի է, որ հին Հայաստանում տիրող իրավակարգն էր ֆեոդալականությունը կամ հայ բառով նախարարությունը:

Շատերը կարծում են, որ նախարարական կարգը մեծ չարիք էր մեր երկրի համար: Արդարությունն ընդդեմ է այս կարծիքին: Այսպես մտածել, նշանակում է բռնանալ պատմության վրա, մեղանչել իրականության դեմ և ոտնահարել պատմական հեռանկարները: Ֆեոդալականությունն ընդունված էր ամբողջ իրանական քաղաքակրթության լայնատարած աշխարհում և նրա հասարակական և քաղաքական կազմակերպության հիմն էր: Արդ ոչ միայն իրանական պետությանց, այլև Իրանի քաղաքակրթության ստեղծող ուժը, ինչպես հեղինակավոր իրանագետներն են կարծում, հենց նույն ֆեոդալ իրավակարգն էր: Նրա քայքայմամբ տապալվում, կործանվում է պարսկական այն բարձր քաղաքակրթությունը, որ ծաղկել և բարգավաճել էր Աքեմենյան, Արշակունյաց և Սասանյան հարստությանց ժամանակ: Պարսից ազնվականությունն էր այդ քաղաքակրթության ստեղծողն ու պահպանողը և, երբ նա բնաջինջ եղավ արաբների ձեռքով, ընկավ և նրանց գործը:

Նույնանման դրության մեջ էր, և Հայաստանը: Քանի որ շեն և կանգուն էին նախարարական տները, քաղաքական կյանք կար երկրում: Նրանց անկումով մեր հայրենիքի դռները մնացին միշտ բաց աշխարհակալների և արկածախնդիր հրոսակների առաջ: Արաբները հեշտությամբ տիրացան Հայաստանի այն մասերին, ուր ազնվականությունը գրեթե անհետացել էր, ծծվելով Բյուզանդական կայսրության մարմնի մեջ:

Այսօրվա գեղջուկ Հայաստանը, կար ժամանակ, որ աշխարհիս ամենից արիստոկրատ երկիրն էր: Քանի՜ քանի տասնյակ մեծ ու փոքր իշխանական տոհմեր թառած էին Հայոց լեռների կրծքին: Ամեն մեկն ուներ իր անառիկ ամրոցը և իր այրուձին, որ է հայտնի թվով հեծյալ մարտիկներ: Այրուձին բաղկացած էր գրեթե բացառապես իշխանական ընտանիքների զավակներից և մերձավորներից: Հայ ազատանի, որեար կամ մանկտի ասելով պատմագիրները հասկանում են ազատ դասի որդիներ:

Այրուձին պատմական իմաստով համազոր է արևմուտքի միջնադարյան **chevalier**-ի և կազմում է հայ **ասպետությունը:** Միակ մշտական զինվորական ուժն էր այրուձին ընդդեմ արտաքին թշնամիների և հայ աշխատավոր շինականության նեցուկը:

Այս կոչումով հայ նախարարները կարող են քավել իրենց մեղքերը, եթե ժամանակակից պահանջկոտ մտքերը հակամետ են նրանց կեղեքող դաս անվանել:

Հների աչքում նախարարները բարերար պահապաններ էին: Երբ արաբների ենթգության զոհ գնաց նախարարական տոհմերի մի խոշոր մասը (2), ահա թե ինչ է ասում ժամանակակից պատմագիրը այդ առթիվ. «Բնակիչք

աշխարհիս մնացին իբրեւ զխանձող ծխեալ ի հրոյ եւ իբրեւ զօրաւ փխրեալ առ ոտն կոխեալ խոզից, թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց, մատնէին որպէս զոչխարս ի մէջ գայլոց»:

Այս սրտառուչ համեմատությունն արդեն բավական է ինքնին բնորոշելու նախարարության պատմական դերը: Նա է երկրի առաջնորդը, առանց որի, ինչպես առանց հովվի, ոչխարները ընկնում են գայլերի բերանը. նա է ժողովրդի պահապանը, առանց որի ծխում է նա խանձողի նման և ինչպես խուրձեր կոխոտվում խոզերի ոտի տակ:

Շնորհիվ մշտապես սպառազինված ազնվականության, Հայաստանը երբեք այն օրին չի հասել, որ դիաքավալ փռվի հաղթական թշնամու առջև, ինչպես տեսանք այդ նախարարության անկումից հետո: Նրա օրով մեր երկիրը նվաճված չի եղել բառի բուն իմաստով: Հռոմ, պարսիկ, արաբ և Բյուզանդիոն չեն կարող պարծենալ, որ նախարարական Հայաստանը պարտված դարձել է նրանց սովորական նահանգը: Դարերի ընթացքում հայ ֆեոդալները կարողացան կռվել և պահել իրենց դիրքը և ազատությունը: Նրանց թշնամի պետությունները ծանր փորձերից հետո ընտելացան մեղմելու իրենց հավակնությունը: Տարեկան տուրք և զինվորական օգնություն, ահա այն երկու համեստ հանձնառությունները, որոնցով նախարարությունը դնում էր իր և երկրի ազատությունը արտաքին թշնամուց:

Արշակունյաց անկումից հետո «ի նախարարսն Հայոց անկաւէր թագաւորութիւնն»,- ասում է պատմիչը:

Թագավորի պարտականությունը պարսից վեհապետի հանդեպ կատարում են, ուրեմն, նախարարները: «Գանձն յարքունիս Պարսից երթայր, - շարունակում է պատմագիրը. - սակայն, այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարաց առաջնորդէր ի պատերազմի»:

Նախարարները հոժար են արքունի գանձը, սովորական տուրքը վճարելու, բայց երբեք հանձնելու այրուձին օտարի ձեռքը: Հրաժարվել այրուձիից, նշանակում է զինաթափ լինել, որ է ինքնասպանություն գործել:

Երբ արաբները խուժեցին Հայաստան VII դարում, հայ իշխանները արիաբար դիմադրեցին զենքով:

Թեոդորոս Ռշտունյաց իշխանը արտասովոր հեռատեսությամբ զգալով նոր աշխարհակալների անպարտելի հեղեղը, բարվոք համարեց հաշտություն կնքել այն պայմանով, որ երկրի ամենեն կարևոր ավանդը, տեղական իրավակարգը չտուժե և անվրեպ պահպանվի: Նրանից հետո հայերը ավելի նպաստավոր դաշինք կռելու պատեհություն չեն ունեցել. «Ոչ առնում ի ձէնջ սակ գերեամ մի եւ ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ եւ դուք կամիջիք եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ԺԵ հազար եւ հաց յաշխարհէն տուք եւ ես սակս արքունի անգարեմ: Եւ հեծեալս յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այլ ուր եւ

հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. եւ ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս եւ ոչ տաճիկ սպայ ի բազմաց մինչեւ ցմի հեծեալ: Թշնամի մի՛ մտցէ ի Հայս եւ եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր, արձակեմ ձեզ զաւրս յօգնականութիւն, որչափ եւ դուք կամիջիք»:

Արաբների այս զիջող և մեղմ ոգին քաղաքական մեծ խորհուրդ ուներ: Զինական ուժերով տակավին հարուստ Հայաստանի համակրությունը քաղել և նրա զորությունը լարել ընդդեմ Բյուզանդիայի, իրենց իսկական ախոյանին, խոհական մեծ քայլ էր արաբների կողմից:

Հայ նախարարությունն անգետ չէր իր խոշոր հարևանների քաղաքական նկատումներին: Հասկանում էր իր մեջպետական դրության նշանակությունը և ձգտում էր և արժեցնել իր կարևորությունը և՛ շահավետել ոսոխների թշնամությունը յուր համար: Հայերը խուլ հանդիսատեսներ չեն եղել Արևելքի և Արևմուտքի մրցության և կամա թե բոնի խառնվել են նրանց ընդհարումներին:

Թե որքան կարևոր էր համարվում հայի մասնակցությունը, վկա են պատմությունը և երեկվա տակավին թարմ հիշողությունները:

Հայ զենքի կշիռը ցոլում է մի սքանչելի պատմվածքում, հնությունից մեզ հասած: Վասակ Մամիկոնյան, հայ այրուձիի սպարապետը, որ երկար տարիներ մեծ անախորժություններ էր պատճառել պարսից թագավորին, վերջապես գերի է ընկնում պարսից ձեռքը: Շապուհ թագավորը դառնում է հայ զորականին հետևյալ խոսքերով.

«Աղուէս, դու էիր խանգարիչ որ այսչափ աշխատ արարեր զմեզ, դու ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, եւ զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ»:

Քաջարի զորավարը, Վասակը, թեև գերի, պատասխանում է խրոխտաբար. «Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ, զի ցայժմ ես քեզ առիւծ էի եւ արդ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերինն կայր եւ միւս ոտնս ի միոյ լերինն կայր: Յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի, յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»:

Գոռոզ արքան զարմացած, բացատրություն է խնդրում: Հայ իշխանը մեկնում է աներկյուղ, որ երկու լեռները պարսիկ և Հոռոմ պետություններն են և նրանց բախտն է, որ կախված էր իրենից:

Անձամբ փոքր, բայց հսկա Վասակը մարմնացումն է հայ մարտական նախարարության:

Վիպական հոյակապ պատկերը ցույց է տալիս, որ հայ իշխանները գերազանցորեն գիտակցում էին իրենց դերը միջազգային բախումների ժամանակ: Բայց ի՞նչ էր նրանց ուղեգիծը երկու սլաքների միջև, արդյո՞ք

հետամուտ էին սեփական քաղաքականության, քե՝ զուրկ ազգային ձգտումներից, ճոճվում էին հարևանների ինքնահաճ հովերից:

Պետք է խոստովանել, որ ֆեոդալ կարգերը վատ համբավ ունին գրեթե ամենուրեք: Հայ նախարարությունը, որ նմանապես ֆեոդալականություն է, բնական է, որ մասնակից լինի և նրա թերիներին, և վատ անվան:

Անշուշտ, հայ իշխանական մեծությանց մեջ կային այնպիսիները, որոնց մտքի հորիզոնը ավելի հեռու չէր գնում, քան աչքի տեսությունը և որոնց համար հայրենիքի սահմանները կանգ էին առնում այնտեղ, ուր վերջանում էր իրենց կալվածը: Բայց ընդհանրությունն այդպես չէր: Ինչպես դասակարգ, հայ ազնվականությունը ոչ միայն հայրենասիրություն և ազգային բարձր ձգտումներ ուներ, այլև անձնվիրություն և կորով հետապնդելու իր ձգտումների իրագործումը:

Հայրենիքի և ազգի սերը մի բնական զգացմունք է, որ բխում է մարդու բնությունից իսկ և կապված է անգամ անհատական ինքնասիրության, և միայն արատավոր մարդիկ կարող են թափուր լինել այդ զգացմունքից, ինչպես դատարկ են և սեփական արժանապատվությունից: Ինքնաճանաչ հասարակության համար վեճը հայրենասիրության սկզբունքի շուրջ չէ, այլ այն միջոցների և գործերի, որով արտահայտվում է սկզբունքը: Ճշմարիտ հայրենասիրությունը ուրիշ նպատակ չունի, եթե ոչ ապահովել հայրենիքին այնպիսի պայմաններ, ուր նա կարողանա զարգանալ ազատորեն և իր բաժին ծաղիկը բերե համամարդկային քաղաքակրթության փնջին:

Անկասկած բարգավաճելու ամենակարևոր պայմանը քաղաքական անկախությունն է: Ազատության համար մղված կռիվները և ջանքերը գրեթե կլանում են ազգերի պատմությունը:

Հայ նախարարությունը ևս ծարավի էր ինքնուրույնության: Ոչ մի ժամանակ այնքան ճիգ և արյուն չէ թափված օտար լուծը թեթևացնելու և կամ իսպառ թոթափելու համար, որքան նախարարական շրջանում:

Երկու տրամադրություն էր տիրում առաջնորդող ուժերի մեջ համաձայն երկու ճանապարհի, որ տանում է դեպի քաղաքական տենչանք: Ըմբոստության արյունոտ ուղին և խոհեմության զգուշավոր դիրքերը, գործունեության տարբեր միջոցներ են, տարբեր դրոշակներ: Սրանց շուրջն էին դասավորված երկրի գործոն ուժերը, ղեկավար ունենալով երկու նշանավոր տներ:

Մի ուղղության դրոշակակիրներ էին Մամիկոնյան սխրագործ իշխանները, մյուսի՝ ծանրախոհ Բագրատունիները:

Տեսականորեն երկու հոսանքները միմյանց չեն բացասում, բայց գործնական գետնի վրա ծնում են բախումներ, աղետալի հետևանքներով: Այստեղից է և Մամիկոնյան և Բագրատունի տոհմերի ողբերգական թշնամությունը:

Նախարարական շրջանների պատմությունը էապես այս երկու տների պատմությունն է:

Բավական չէ նրանց նկարագիրը տալ: Կուզեի աչքի անցնել թեթևակի բոլոր նշանավոր քաղաքական անցքերը, որ տեղի են ունեցել Հայաստանում Արշակունյաց անկումից մինչև Բագրատունիների բարձրանալը: Ամեն ոք ի վիճակի կլինի անձամբ համոզվելու, թե ի՞նչ դեր են կատարել երկու դրոշակակիր տները հայ անցյալում և ի՞նչ է նրանց ընտանեկան և քաղաքական դիմամարտության հիմը:

Հայերը դեռ սգի մեջ էին:

Հազիվ սթափված այն ընդարմացնող հարվածից, որ պարսիկները հասցրել էին Արշակունյաց գահին, պատասխանատու դասը հետամուտ եղավ վերականգնելու կորցրած թագը: Վարդանանց և Վահանանց կռիվները անդրանիկ փորձերն էին, որ անհաջող անցան:

Նրանց քաղաքական բնույթը տարակուսանքից դուրս է, թեև սքողված է եկեղեցական շքեղ շուրջառի տակ: Այդ կեղծ ծածկոցը, որ այնքա՜ն խնամքով և ոգևորությամբ փռել են ցայժմ մեզ համար սրբազան ձեռքեր, ինքն իրեն վերանում է Վասակի դատի ժամանակ, որպեսզի ցույց տա ամբաստանված մարդու վեհությունն իր անկման մեջ, վերանում է, որպեսզի մերկացնե, ազատե ճշմարտությունը սոսկալի կրքերի բռնությունից:

Պարսիկները առանձին փափկանկատությամբ գահազուրկ Հայոց մարզպանությունը հանձնել էին Սյունյաց իշխան Վասակին, նախարարների մեջ ամենակարող դեմքին: Նրա շրջանում է ծագում ապստամբության միտքը:

Հետագայի պատմությունը իրավունք է տալիս կարծելու, որ գործին խառն էր և Բյուզանդական դուռը, թերևս իսկական գրգռիչը:

Հազկերտի գահակալության առաջին տարիները պարսիկները ասպատակել էին հանիրավի կայսերական հողերը հակառակ 422 թվին կնքած դաշինքի: Թեոդոսիոս կայսրի խաղաղասիրությունն էր պատճառը, որ ապօրինի արշավանքը ծանր հետևանքներ չունեցավ:

Վասակի ծրագիրը կարող էր ներշնչված լինել Բյուզանդիայից որպես հակացույց կամ վրեժ պարսիկներից կրած վիրավորանքի համար:

Թեոդոսիոս կայսրը մասնակից էր շարժման և խոստացել էր օգնություն: Վասակը նախապես ապահովելով թիկունքը հունաց կողմից, համաձայնության էր եկել նաև անմիջական դրացիների՝ Վրաց, Աղվանից և Աղձնյաց աշխարհների հետ, որպեսզի միահամուռ ուժերով նետեն պարսկական լուծը:

Սակայն Թեոդոսիոս կայսրը մեռնում է 450 թվին, 28 հունիսի: Ծրագիրը մնում է կախված օդի մեջ, քանի որ նոր կայսրը, Մարկիանոսը, չի ուզում հայերի պատճառով վրդովել խաղաղությունը Արևելքում, մանավանդ, որ քաղկեդոնական վեճերը արդեն սպառնում էին տակնուվրա անել ամբողջ պետությունը:

Այս պայմաններում այլ բան չէր մնում, եթե ոչ հրաժարվել կամ հետաձգել խռովության ծրագիրը: Խոհեմությունն էր թելադրում այս ևսհանգը և՛ խոհակաևությունը, որպեսզի սուրբ գործը չվիժե անխորհուրդ արկածախնդրությամբ:

Տարաբախտաբար ուշ էր: Հուզված ամբոխը շատ էր հառաջացել և արդեն արյուն թափել: Դյուրաբորբոք գլուխները ծանր վիրավորանք էին հասցրել պարսիկ կրոնավորներին և պետական մեծ ոճիր գործել, ավերելով ատրուշաները և ջուրը նետելով սրբազան հուրը: Հրդեհը արդեն վառված էր:

Խռովարարների գլուխն է անցնում Մամիկոնյան կտրիճ տուևը: «Ամենայն իրք այսպիսի գործոց, - ինչպես վկայում է Մամիկոնյան պատմիչը,- ի բնէ յոլով Մամիկոնէիցն ազգաւ եւ նոցա միաբանութեամբ ելեալ էին ի գլուխ» և «առանց առաջնորդութեան ազգին այնորիկ եւ ոչ մի ինչ իրք եւ գործք աշխարհիս Հայոց երթեալ էին ի գլուխ»:

Այսպիսով նախարարների ուխտը քակվում է: Ապստամբները բաժանվում են երկու բանակի, մեկն ուզում է շարունակել գործը, մյուսը՝ տեսնելով ծախորդ հանգամանքները, նախադասում է հետ կեևալ և ամեն ինչ մոռացության տալ: Առաջնի ղեկավարներն էին **Վարդան Մամիկոնյան** և Ներշապուհ Արծրունի, երկրորդի՝ Վասակ Սյունի և **Տիրոց Բագրատունի**:

Ո՛չ ուրացության և ո՛չ դավաճանության մասին խոսք անգամ չի կարող լինել: Երկու կողմն էլ հավասարապես հասարակական շահն ի նկատի ունեին: Տարբեր էին նրանց տեսակետները, երկուսն էլ կասկածելի իրենց առավելությամբ:

Ապստամբության ծրագիրը հիմնված էր Արևմուտքից ակնկալած օգնության վրա: Ուևայն հույս. կայսրը ոչ պակաս փութով քան պարսիկները վերացրել էր Արշակունյաց թագը հունական բաժնում: Թեթևամտություն էր հուսալ, որ այդ կայսրը օգներ հայերին վերականգնելու կորցրած անկախությունը պարսկական բաժնում:

Ուխտապահների դիրքը ավելի նպաստավոր չէր: Մի ժողովուրդ, որ այնպիսի անտարբերությամբ վերաբերվեց Արշակունիների վերջին հառաչանքին, անընդունակ էր կամ անկարող նորեն խոյանալու դեպի քաղաքական բարձունքը: Հայի ուժերը չէին ներում խրոխտանալ մեծ պետության դեմ:

Ուխտանենգները սթափվելով երազներից փրկեցին երկիրը ահեղ փորձանքից, իսկ ուխտապահները մարտիրոսացան, գիտակցորեն մահը գրկեցին, որ անմահանան և օրինակ ծառայեն սերունդներին և խրատ՝ բռնավորին, որ բռնությունն էլ իր սահմաններն ունի, և որ հայ ժողովուրդը չի ուզում գլորվել մինչև ստրկության հատակը:

Հայաստանի խռովյալ վիճակը տևեց գրեթե տասը տարի՝ մինչև գերված նախարարների դարձը:

Քսան տարի չանցած վերստին աղմկում է երկիրը: Առանձին պատճառ **չկար, եթե ոչ հին** վերքի մորմոքը:

Ժամանակակից պատմիչը գանգատվում է, որ «աւազակ, անպիտան, հացկատակ, վատատոհմիկ» որեարները առաջ էին քշվում, իսկ արժանավոր մարդիկ հետ մղվում:

Այսպիսի չարիք լուրջ շարժառիթ չէ կարող նկատվել քաղաքական ծանր քայլերի: Թվում է, որ բանսարկուն դարձյալ արևմտյան կեղծ բարյացակամն էր:

Հայ ավագանիները, սրտացավ իշխանները Գյուտ կաթողիկոսի մոտ հավաքված խորհրդակցում են իրերի դրության մասին և ուրիշ դարման չեն գտնում, եթե ոչ «ի խնդիր լինել օգնականութեան և ապստամբել: Առաքէին գաղտ եւ պատգամատրս միանգամ եւ երկիցս առ թագաւորն Յունաց Լեւոն, որոյ թէպէտեւ յանձն առեալ կամէր օգնել, յերկարէր ժամն եւ **խափանէին խորհեալքն**»:

Լևոնը Մարկիանոսի հաջորդն էր և թագավորեց 457-474 թիվը: Եթե նոր ապստամբությունը, որ պայթեց 482 թվին, պատրաստվում էր դեռ Լևոնի օրով, նշանակում է, որ նա նոր բան չէր իսկապես, այլ հին կրակը՝ վառված 451 թվին, որ շարունակում էր մխալ:

Հրապարակի վրա նույն հին կուսակցություններն են, հին երկփեղկ մտածողությունը: Մեկի պարագլուխը դարձյալ Մամիկոնյան տունն է, շրջապատված նախկին համակիրներով՝ Արշարունյաց, Վահևունի, Պալունի և այլ տոհմերով: Հակառակ բանակում կանգնած են Գաղիշո Մաղխազ Խորխոռունյաց իշխանը և Վասակի համախոհը, և Սյունյաց իշխան Գդիհոնը: Վասակի նման Գաղիշո Մաղխազն ևս, որ դատապարտվել է սև բախտի և ընկել սերունդների անեծքի տակ, միանգամայն անպարտ է: Գաղիշոն ապրել էր անձամբ նախորդ անցքերի դառնությունը, նրա հիշողության մեջ դեռ չէր ցամաքել թափված անմեղ արյունը: Իրավամբ կարող էր խորշելի համարել նոր ցնցումներ և աղետաբեր՝ երկրի համար:

Պետք է խոստովանել, որ Վարդանանց կռվից հետո պարսիկները ամեն զիջումներ արին Հայոց: Արքունի հրամանով Ատրորմիզդ մարզպանը հայտարարել էր կրոնական ազատություն, «ի կամս մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց որպէս զինչ եւ կամի պաշտել՝ պաշտեսցէ»: Ներումն էր շնորհվում բոլոր փախստականներին և քաղաքական հանցավորներին, բացի ձերբակալված անձերից, որոնց մեծ մասը ազատ թողնվեցին: Այլև «թողուլ հրամայէր զհարկս աշխարհին եւ զայրուձին եւս զարքունի թեթեւացոյց առ ժամանակ մի»:

Այսքան ներողամիտ քաղաքականությունից հետո նոր աղմուկներ հարուցանել, խաղաղությունը վրդովել պիտի քվեր անիմաստ:

Շատերը կարծում էին, որ նոր ցույցերը ծնունդ են Մամիկոնյան խռովասեր ոգու: «Ոչ է հնար սմա (այսինքն՝ Վահանա) առանց ապստամբութեան կեալ ի հայս: Յիշեցուցանէին Արեաց եւ զնախնեացն նորա զմիոյ քէ ո՞վ ի նոցանէ ոչ խռովեցոյց զԱրեաց աշխարհ եւ ոչ արար մեծամեծ վնասս եւ մահունս: Արդ երբեւէ, ասեն, սա զնոյն խռովութիւն յարուցանելոց է ի վերայ ձեր»:

Վահանը Վարդանի եղբոր Հմայակի որդին էր: Հմայակն ևս ընկել էր խռովության տարին: Հնարավոր է, որ Վահանին օտարոտի չէր և ընտանեկան վրեժխնդրության ոգին: «Ի հարցն իմոց ես տղայ մնացի,- ասում է Վահանը, - ո՛չ զվաստակս նոցա, որ առ Արեաց աշխարհն լեալ է, գիտեմ եւ ո՛չ յանցման նոցա հաղորդ ինչ էի»:

Արդյո՞ք այս խոսքերով պատմագիրը չէ ուզում արդարացնել իր հերոսին այն կասկածներից, որ նա իբրև թե մերձավորների մահվան վրեժը լուծելու աղագավ է, որ ըմբոստացել է:

Ճշմարիտ է, Վահանի զենքի շաչյունը այն ժողովրդականությունը չուներ, ինչ որ Վարդանինը, բայց նրա շարժառիթները նույնչափ ազնիվ էին և հեռու անձնականությունից:

Խնդիրն այն է, որ ինչ որ տանելի էր Գաղիշոյի և նման իշխանների համար, անհանդուրժելի էր թվում Մամիկոնյան կտրիճների տեսակետից: Երբ որ Վահանի համախոհները առաջարկում են նրան գործի գլուխն անցնել և պարզել ապստամբության դրոշը, խոստանալով նաև Վրաց և Հոնաց օգնությունը, Մամիկոնյան իշխանը պատասխանում է. «զԱրեաց ուժն և ստամբակութիւնն քաջ գիտեմ և զՀոռոմոց զթուլութիւնն և զխաբէութիւնն. և զձեր ծանուցեալ է փորձիւ իմ քէ որպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ և ատեցին: Եւ վասն Վրաց արքայի և Հոնացդ զորս ասէք, Վիրք առանձին թեթեւ ինչ աշխարհ են և այրուձիով սակաւաւորք, բայց վասն Հոնաց ո՛ գիտաց, հաւանի՞ն գալ քէ ոչ, որք չենն ի միջի եւ չերեւին: Բայց քան զամենայն եւս առաւել յանձանց երկերուք, վասն զի մարդիկ սուտք էք եւ անվստահք»:

Ծանր հանդիմանությունից առնված՝ պատասխանում են խոսակիցները. «Ջամենայն զոր ասացերդ, լի ասացեր, ճշմարիտ ասացեր եւ արդար: Բայց զյոյս մեր ոչ ի Հոռոմս եղեալ է և ոչ ի Հոնս, բայց նախ յողորմութիւնն Աստուծոյ, բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի եւ ի մահ նախնեացն որ նահատակութեամբ իւրեանց հաճոյ եղեն Փրկչին Քրիստոսի, և ապա **ի մահ անձանց մերոց, քանզի լաւ համարիմք մի ժամ մեռանել,** քան թէ զամենայն օր զեկեղեցւոյ եւ զքրիստոնէից զարհամարանս տեսանել եւ զպակտումն»:

Ապստամբ բանակի շունչը Մամիկոնյաններն էին: Տրամախոսությունը ուրիշ նպատակ չունի՝ պատմագրի գրչի տակ, եթե ոչ ընդգծել Մամիկոնյան

իշխանի հեղափոխական խառնվածքը: Վահանը ապստամբում է և երկու տարի շարունակ ճակատում է պարսկական հետապնդումներին ամենայն հաջողությամբ: Պերոզ թագավորը սպանվում է հոնաց արշավանքում 484 թվին և նրա հաջորդ Վաղարշը հաշտության է կանչում ըմբոստներին, մեղքը ձգելով իր նախորդի ամբարտավան ուսերին:

«Մեք որ ապստամբեցաք,- ասում է Վահանը հաղթանակի օրը,-ոչ եթէ գիտէաք եթէ մեք Արեաց առաջի ինչ կարեմք կալ զի և զմեր տառապանացս ոյժ գիտեմք և զԱրեաց այնպիսի մեծ եւ զանհամար գնդի եւ ուժոյ զսաստկութիւն, բայց միայն **զմեռանելն եղաք առաջի** եւ նմին պատրաստ եմք եւ առաւել եւս ուրախ եմք զի **զանուանի զլաւ մահ մեռանիմք**»:

Գեղեցիկ խոսքեր են, վայել կրոնավորի, բայց ո՛չ քաղաքական գործիչի: Կրոնավոր հեղինակը դրանով ուզում է բնորոշել այն հոսանքը, որի առաջնորդն է Մամիկոնյան տոհմը: Վահանը հաղթող հանդիսացավ և ձեռք բերեց մարզպանությունն ինքը և իրենից հետո իր եղբայր Վարդը:

Հակառակ հոսանքը կարող էր զսպել հաղթականների հրճվանքը և արդարացնել իրենց վերապահ դիրքը, ցույց տալով, որ հաղթությունից հետո հայերը ավելի բան չստացան, քան ունեին ապստամբությունից հառաջ:

* * *

Ավելորդ սնապարծություն կլիներ վերագրել Վահանի հաջողությունը միմիայն նրա զենքին: Գահակալական վեճերը և մոտալուտ պատերազմի վտանգը Բյուզանդիայի հետ, հարկադրեցին Պարսից Դուռը օր առաջ խաղաղացնելու Հայաստանը:

Վաղարշի հաջորդ Կավատի օրով արդարև սկսվեց պատերազմը, որ տևեց ամբողջ դար և եթե երբեմն դադրում էր՝ միայն նորա համար, որ վերսկսվի ավելի լայն ծավալով: Այս շրջանը խրատական է նրանով, որ հայ գործիչներին բերում էր դառն հիասթափություն քրիստոնյա Արևմուտքի նկատմամբ: Հուսախաբությունն այնքան մեծ էր, որ ստիպված էին Մամիկոնյաններն և Բագրատունիք միացած ուժերով դուրս գալ կայսերական ոտնձգությունների դեմ:

Հուստինիանոսի օրով և նրա հրամանով Արևմտյան կամ Բյուզանդական Հայաստանը ենթարկվեց արմատական փոփոխության: Նախարարական իրավակարգը վերացվում էր: Հարավային Հայաստանի հինգ նախարարությունները, որ անկախ իշխանություններ էին, ճանաչված 298 թվի դաշինքով, կորցնում էին ընդմիշտ իրենց ինքնուրույնությունը:

Ամբողջ երկիրը Փոքր Հայքի հետ միասին բաժանվում էր նոր վարչական միությունների, որոնք կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ

Հայաստան: Առաջինի մայրաքաղաք և վարչական կեդրոն էր նշանակվում Կարին կամ Թեոդոսուպոլիս, Երկրորդի՝ Սեբաստիա, Երրորդի՝ Մելիտինե, Չորրորդի՝ Նփրկերտ կամ Մարտիրուպոլիս, այժմ Մուֆարղին: Ամեն մեկի կառավարությունը հանձնվում էր սովորական պաշտոնյայի կոմես (որ է կոմս) անունով, որ նստում էին հիշածս կեդրոններում:

Կարինում այն ժամանակները տակավին ապրում էին Արշակունյաց վերջին շառավիղները: Հայտնի էր մանավանդ Արտավանը, որ հետո անցավ Բյուզանդիա և մեծ անուն հանեց: Արշակունիներին սահմանակից էին Սպերի Բագրատունիք և Տայքի Մամիկոնյանները:

Երեք նշանավոր տների ներկայությունն ախոյան պետությունների սահմանագլխին հղի էր ամեն անակնկալներով: Տների մրցության, թե պետությունների ներգամիտ քաղաքականության հետևանքով, միշտ հնարավոր էր սպասել բարդություններ:

Սպերի ոսկեհանքը մի գայթակղիչ կովախնճոր էր շրջակա իշխանների համար: Այս առթիվ ծագած տեղական գժտությունները շուտով քաղաքական բնավորություն ստացան: Կայսեր կողմից նշանակված մի պաշտոնյա Ակակիոս անունով, որ ծագումով նույնպես հայ էր, աչք ունենալով ոսկեհանքի վրա, սպանեց նրա տիրոջը՝ իշխան Համազասպին և գրավեց թանկարժեք գույքը: Այս մարդը, որ օտարներին ծառայելով չէր աշխատում գոնե չվնասել իր արենակիցներին, անհանդուրժելի էր և ապօրինի գործի պատիժն ստացավ՝ սպանվելով հայերի ձեռքով:

Բյուզանդիայից եկավ նոր պաշտոնյա, Սիտտաս անունով, որ ականավոր զինվորական էր: Սա ևս ընկավ հայերի սրից: Երրորդ պաշտոնյան, որ փոխարինեց Սիտտասին, անունը Բուզես, անճամբ ծանոթ էր հիշյալ Արտավանի հորը՝ Հովհաննես Արշակունի իշխանին, ուստի իր մոտ է հրավիրում նրան բանակեցելու պատրվակով և սպանում ենգորեն իր վաղեմի բարեկամին:

Հովհաննեսին ուղեկից էր Վասակ իշխանը, որ և նրա փեսան էր, աղջկա ամուսինը: Հավանորեն Վահանի եղբոր Վասակի թոռն էր, և որդի այն Գրիգորի, որ հայ գնդով գնաց Վաղարշ թագավորի օգնության՝ Վահանի կողմից: Վասակը զգալով լարած թակարդը, խորհուրդ տվեց իր աներոջ հավատ չընծայել Բուզեսին և հետ դառնալ: Հովհաննես չանսաց և զոհ գնաց իր միամտության և բյուզանդական խարդախության: Իսկ Մամիկոնյան իշխանը փախչելով ազատվեց կորուստից:

Կայսերական պաշտոնյայի տմարդի վարմունքը լցրեց դառնության բաժակը: Հայ իշխաններն արդեն զայրացած էին Հուստինիանոսի քաղաքականությունից: Ընդհանուր դժգոհության և տրտունջի թարգման է հանդիսանում Վասակ Մամիկոնյանը: Դեսպանության գլուխ անցած՝ նա

ներկայանում է պարսից Խոսրով թագավորին և բացատրելով կայսերական քաղաքականության վտանգավոր հետևանքները Արևելքի համար, խորհուրդ է տալիս պատերազմ հայտարարել, քանի ուշ չէ, խոստանալով Հայոց աջակցությունը: Եվ այն մեծ քրիստոնյա թագավորը, որի անունով և հուսով այնքա՜ն արյուն էր թափվել երեկ մյուս օրը, տրտունջի առարկա էր և թշնամի, որի դեմ օգնության էր կոչվում անօրեն համարված թագավորը:

Պատերազմասեր պարսից արքան առիթ էր որոնում, որ բանակը շարժե: Կռիվն սկսվեց: Համատարած ժանտախտը խանգարեց Խոսրովի զենքի հաջողությունը: Բյուզանդական զորքերը առաջացան անարգել մինչև Դվին, Պարսկահայոց մայրաքաղաքը: Նոր հիասթափություն տիրեց հայերին: Վասակ և Արտավան, շարժման ղեկավարները, ստիպված էին հաշտվել կայսեր հետ և մտան նրա ծառայության մեջ:

Պատերազմական գործողությունները դադարեցին 543 թվին, որ հարմար առթիվ վերստին արծարծվեն:

572 թվին սույն Վասակի որդիքը՝ Վարդան և Վարդ սուսերահար արին Դվինում Պարսից մարզպան Սուրենին, լուծելով իրենց ավագ եղբոր Մանուելի մահվան ոխը, որի սպանությունը վերագրում էին Սուրենին: Խաղաղությունը նորեն վրդովվեց երկրում: Միաժամանակ և վրաց Գուրգեն թագավորը ոտի կանգնեց պարսից դեմ: Նրան միացան լեռնական ցեղերը:

Անտարակույս էր, որ ընդարձակ շարժման ետևը թաքնված էր դարձյալ կայսեր չարաշուք պատկերը: Հուստինիանոսի պատերազմները դադար առին 532 թվին, խաղաղության դաշնագրով, որի կետերից մեկը պարտավորում էր կայսերական կառավարության վճարելու պարսիկներին տարեկան 500 լիտր ոսկի, որ է 30 հազար ոսկեդրամ, հիսուն տարվա ընթացքում:

Հուստինոս [II] կայսրը առիթ էր փնտրում, որ խախտե դաշինքը և հրաժարե ծանր պարտականությունից: Քրիստոնյա հայերի և վրացիների խլրտումները լավագույն պատրվակն էր:

Երբ պարսից դեսպանը գալիս է դրամը պահանջելու, Հուստինոս կայսրը հարկավոր է համարում նկատելու, որ «դրամի վերա հիմնված բարեկամությունը գովելի չէ» և անմիջապես նշանակալից հարց է տալիս Հայոց շարժման մասին: Դեսպանը պատասխանում է, որ խառնակություն կար, բայց ներկայումս կարգը վերականգնված է:

Կայսրը, որ խորամանկ է, քան խորագետ, հայտարարում է, որ «ինքը պատրաստ է պաշտպանելու ապստամբ հայերին և չպիտի ներե որևէ բռնություն նրանց դեմ, քանի որ միևնույն քրիստոնյա հավատն են դավանում»:

Խելացի դեսպանը, որի անունը Սեբուխտ էր և ինքն քրիստոնյա, հավանորեն ասորի, եթե ոչ հայ, առարկում է, որ հենց քրիստոնեության շահերն են, որ պահանջում են հրաժարվել պատերազմներից, որովհետև ընդ-

հարումների միջոցին ամենից շատ վնասվելու են քրիստոնյաները, քանի որ նրանց երկիրն է ռազմաբեմ լինելու: Այլև հասկացնել է տալիս նրբորեն, որ պատերազմի հետևանքը դեռ հայտնի չէ, թե ինչով կվերջանա, և երբեք մարդու կամքից չէ կախված:

Սեբուխտի խոսքերը իմաստության դաս է, որին պետք ունեինք դեռ երեկ մենք՝ անուղղելի երազատեսներս, նմանապես մեր և քրիստոնեության կասկածելի հովանավորները:

Պատերազմը սկսվեց, բայց կայսրը շուտով ստիպվեց զինադադար խնդրելու: Բանակցության ժամանակ երևաց, որ գոնե պարսիկների կարծիքով Հայոց ապստամբության պատճառը բյուզանդական դավադիր խաղերն էին:

Պարսից Որմիզդ թագավորը զոհ գնաց պալատական հեղաշրջումի: Մոր կողմից թուրք էր, դաժան և բիրտ, և ատելի նույնիսկ մերձավորներին, որոնք և սպանեցին նրան: Վահրամ Չուբին, որ Պահլավ կամ Պարթև իշխանական տնից էր, փորձեց տիրանալ գահին և վերականգնել Արշակունյաց թագը: Թերևս հաջողեր, եթե Արևմուտքի անպատեհ միջամտությունը չլիներ: Մավրիկիոս կայսրը հարկավոր գտավ Որմիզդի որդուն՝ Խոսրովին պաշտպան կանգնել և հաստատել նրան հայրական գահի վրա:

Չուբինի խռովություններին մասնակից էին և հայերը: Նախքան ապստամբելը Չուբին կոչ է անում հայերին, հորդորելով հարել իրեն և ընդհանուր ուժերով ջնջել «տիեզերական պատուհասը՝ Սասանյան տունը»: Ըմբոստ իշխանը խոստանում էր հայերին անկախություն. երդվում էր տալ նրանց նախկին թագավորությունը հին սահմաններով՝ մինչև Կապկոհ (Կովկաս) լեռները և Աղվանից դուռը (Դերբենդը), մինչև Արվաստան ու Մծբին:

Կոչը պատրիչ էր: Հայ իշխանները, որ առիթ էին որոնում գլուխ բարձրացնելու պարսից բռնության դեմ, միացան Չուբինին: Առաջնորդը դարձյալ Մամիկոնյան տունն էր՝ ի դեմս Մուշեղ զորավարի:

Հայ պատմագիրը անպարտ է համարում Մուշեղին և այնպես է ձևացնում, որ իբրև թե նրա օգնությամբ է, որ պարսիկները կործանեցին Չուբինին:

Բայց պարսից տեղեկությամբ Մուշեղն մասնակից և օգնական է եղել ապստամբներին: Այս է պատճառը, որ պատերազմից հետո հայ զորավարը կոչվում է Դուռը, իբրև քննության և կամ հանդիմանության համար: Մուշեղ գնում է արքունիք, առնելով հետը երկու հազար ձիավոր: Թագավորի հրամանով ուզում են Մուշեղին զինաթափ անել և ապա թույլ տալ ներկայանալու նրան: «Լոյծ զկամարդ եւ զսուսերդ ի միջոյ քումմէ,- ասում են նրան,- և մերկեա ի քէն զպաոազինութիւն քո, զի ոչ է օրէն մտանել առաջի թագաւորին»:

Մուշեղի սիրտը կասկած է ընկնում և պատասխանում է համարձակ. «Ի մանկութենէ իմմէ սննդակից եղեալ թագաւորաց ի նախնեաց իմոց եւ հաւուց

եւ այժմ հասեալ կամ ի դուռն արքայի ի տեղի հանդիսի: Ե՞ս զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի բաց մերկացայց եւ լուծից զկամարս եւ զգօտիս յանձնէ իմմէ զոր ոչ երբեք լուծանեմ ի տան իմում յուրախութեան, եւ կամ ինձ արժա՞ն իցէ գիտել զչարութիւնդ Պարսից»:

Այս խոսքերով հայ զորականը թողնում է և հեռանում առանց տեսնել ուզելու թագավորին:

Խոսրով զիջում է, բայց սառն է ընդունում, «ոչ ձգեաց արքայ զձեռն որպէս յերեկն եւ յեռանդն»:

Մուշեղը հևռանում է դժգոհ:

Պարսից թագավորը ղրկում է ետևից «երդումն աղ կնքեալ» ի նշան հաշտության, գիտենալով որ Մամիկոնյան առյուծը միշտ վտանգավոր է, երբ տրտնջող է:

Այս միջադեպը գեղեցիկ գծեր է բերում Մամիկոնյան իշխանների նկարագրին:

II

Խոսրով, հայրենի գահը նստելով, իր բարերար Մավրիկիոսի հետ բարեկամության դաշն կնքեց 591 թվին և ի տրիտուր զիջավ նրան Հայաստանի մեծագույն մասը, թողնելով իրեն Դվին, Սյունիք և Վասպուրական:

Հսկառակորդ պետությունների հաշտությունն իսկ աղետաբեր եղավ մեզ համար ոչ նվազ քան նրանց թշնամությունը: Ինչպես այժմ, այնպես էլ հնում և կռվում և համբուրվում էին զորեղները մեր դիակների վրա:

Քրիստոնյա կայսրը բարեմիտ էր դեպի հայերը, երբ Հայաստանը պարսից ձեռքին էր: Հենց որ գրավեց հայ հողերը, փոխեց իր գույնը:

Մավրիկիոս կայսեր վերագրում էին հայերը մի քստմնելի ամբաստանագիր, ուղղված Խոսրովին. «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակիա գումարեմ եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յարեւելս տանել, զի եթէ մեռանիմ, թշնամի մեռանիմ, եւ եթէ սպանանեն, զթշնամիս սպանանեն եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դուքա յերկրի իւրեանց լինիցիմ, մեզ հանգչել ոչ լինի»:

Դժվար թե կայսրի բարոյական սնանկությունն այնքան առաջացած լիներ, որ այսպիսի թուղթ գրեր: Ջազրելի ծրագրերը չեն սիրում լույս և ծնում ու հասունանում են մթության մեջ: Հայ գրույցը, սակայն, արտացոլում է ստուգիվ իրական դրություն:

Պարսիկները գումարել էին հայ այրուձին և փակել Սպահանում, իսկ իշխաններին տարել Տիզբոն: Հույներն ևս իրենց բաժնի հայ ուժերը տեղափոխել էին Թրակիա, կռվելու ընդդեմ թշնամիների:

Այսպիսի պայմաններում հայ ղեկավար ուժերը հարկադրված էին մաքառել և պարսիկների և հույների դեմ: Պարսկական բաժնում նրանք սպանում են պետական համարակարին և խլում գանձած տուրքը. «Ի գանձուդ այդորիկ զՀայաստան մեր արասցուք եւ առեալ ի նոցանէ օգնութիւն պատերազմեսցուք **ընդ երկոսին թագաւորդ** և բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»:

Այսպես մտածողների թվում էին նաև Մամակ Մամիկոնյան և Գագիկ Մամիկոնյան:

Հունական բաժնում ևս ժայթքում է դժգոհությունը: Կայսրը պահանջում է հայ այրուձին երկու նշանավոր և ազդեցիկ ցեղի ներկայացուցիչների Սահակ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու, առաջնորդությամբ, որ ուղարկե Թրակիայի ճակատը:

Իշխանները խորհում են և վճռում են ապստամբել. «Խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել **իւրեանց թագաւոր** զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ **կեալ եւ մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց**»:

Հայ նախարարների հայրենասիրական բարձր զգացումը վկայում են և օտար աղբյուրները:

Սահակ Մամիկոնյանը հնազանդվում է կայսեր հրամանին, իսկ Սմբատ Բագրատունին ճանապարհից հետ է գալիս և ապստամբների գլուխն անցնում: Նա է, որ սպանում է Հովհաննես պատրիկին, հունական բաժնի կառավարչին՝ 591 թվականին:

Մամիկոնյան տրամադրությանց արտահայտիչն էր Համազասպ Մամիկոնյանը, որ Հունաց Հերակլ զորավարի հետ էր և ընդդեմ ապստամբական ցույցերին: Այս ժամանակներից սկսած հետզհետե զորանում է Մամիկոնյան հոսանքի թեքումը դեպի Արևմուտք, իսկ Բագրատունյացը դեպի Արևելք:

Սմբատի հանդուգն սպանության գործը քննելու եկավ մայրաքաղաքից սենատոր Դոմենտիոսը: Հետևանքը եղավ՝ բռնել Սմբատին և տանել կայսեր: Քրիստոնյա թագավորը ուրիշ միջոց չգտավ պատժելու ըմբոստ իշխանին, քան ձգելու կրկես գազաններին կուր: Սակայն, հայ կտրիճը զլացավ և այդ հաճույքը պատճառելու ցնցող տեսարանների ծարավի վեհապետին:

Հույն պատմագիրը վկայում է, որ Սմբատը հրաշքով ազատվեց սոսկալի մենամարտից: Իսկ հայ պատմիչը բացատրում է հրաշքի էությունը: Հուսահատ իշխանը բռունցքով ուշաթափ է անում արջին, եղջյուրներից կախված տապալում է կատաղի ցուլին, և ճարպիկ ոստյունով վերելակում առյուծը և կոկորդը սեղմելով խեղդում: Ամբոխը և ամենից առաջ կայսրուհին ի տես այս անսովոր քաջության պահանջում են ազատություն, և փոշոտ իշխանը կրկեսից ելնելով հրավիրվում է արքունիք:

Ահա այս հսկայի սերունդն է, որ պիտի մի օր ժառանգեր Հայոց թագը: Սմբատ չմնաց կայսրի մոտ և հարմար առիթով անցավ Խոսրովի ծառայության և նշանակվեց Վրկանի և հետո Հայաստանի մարզպան: Նրա որդին Վարազտիրոց և սրա որդին Սմբատ արժանացան պարսից թագավորի վստահության նույն պաշտոնում:

Արաբները նվաճեցին Իրանը և նրա հետ և Հայաստանի մի մասը: Բագրատունիք առժամանակյա ճոճումներից հետո կանգ առան նույն քաղաքական գծի վրա, ինչ-որ ընտրել էին պարսից օրով: Արաբները ևս, անծանոթ նախարարական բարքերին, սկզբում փորձեցին բռնի ուժով վերջ տալ վտանգավոր տոհմերին, բայց չուտով ստիպվեցին ավելի հաշտ ուղի գտնել: Բագրատունի իշխանների խոհեմությունն ու զգուշությունը սանձեց արաբական բրտությունը, և Աշոտ Վասակյան նշանակվեց իշխան իշխանաց 732 թվին:

Մամիկոնյանների հեղինակությունը նսեմանում էր: Աշոտի բարձրացումը ոչ միայն նշան էր հակառակ հոսանքի պարտության, այլև հարված Մամիկոնյան տան անվան: Այրուձին, որի ժառանգական սպարապետներն էին Մամիկոնյան իշխանները, անցնում էր Բագրատունյաց ձեռքը:

Տոհմական ինքնասիրությունը վիրավորված տեսնելով, երկու եղբայր՝ Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանք՝ փորձեցին խլել Աշոտից առաջնության պատիվը: Աշոտն ուներ սակայն զորեղ հովանավոր հանճին երկրի պետի՝ Մրվանին, խալիֆայության գահի՝ թեկնածուին: Հազիվ իշխանության գլուխ անցած Գրիգոր, պետք է տեղի տար Աշոտին Մրվանի հրամանով:

Մամիկոնյանների փորձը ծանր նստեց, հետևանք ունենալով Դավիթի կորուստը:

Օմմայան հարստությունը վերջացավ ութերորդ դարի կեսին Մրվանի մահով, զիջանելով իշխանությունը Աբբասյան տան: Խառնակ դրությունից ուզեցին օգտվել Մամիկոնյաններն և ազատվել արաբներից: Շարժման ոգին Գրիգոր Մամիկոնյանն էր:

Առանց Աշոտի համաձայնության, որ երկրի պատասխանատու տերն էր, գործը դատապարտված էր անհաջողության: Ուստի աշխատում են համոզել Աշոտին: Երկու հոսանքները վերստին բախվում են, և հայ պատմության ամենեն դրամատիկ էջերն են, որ ծավալվում են մեր առջև, որ հավետ կանաչ պիտի մնան մեր հիշողության և գիտակցության մեջ:

Պարտք և պետք եմ համարում բերել Աշոտի խրատը ըմբոստացողներին: «Ով եղբարք, - ասում է Աշոտ,- ոչ տեսանեմ խոհական մտաց զգործ անզգայութեանդ, այլ **անուղղայ խորհուրդ** եւ բանս տարապարտս: Քանզի ահա նուազունք են զօրքս մեր ի մէջ բռնութեանն Իսմայէլի եւ ոչ **կարեմք զդէմ ունել զօրաց նոցա եւ ոչ զերկիր մեր հանել ի բերանոյ վիշապացն:** Եւ միայն

աշխատութիւն եւ վտանգ հասուցանեմք ի մտածումս մեր: Այլ եթէ կամիջիք ընդունել զխրատ իմ, ոչ արասցուք զբանդ զայդ եւ հարկեսցուք նոցա որպէս ցարդ եւս եւ կալցուք զստացուածս մեր, զայգիս, զանտառս եւ զանդաստանս մեր»:

Ահա մի պարզ և պայծառ խորհուրդ: Սակայն, Գրիգոր Մամիկոնյանի համախոհները, որ հակառակ հոսանքին էին պատկանում, չեն համաձայնում ընդունել իմաստության խրատը, այլ սպառնում են. «Եթէ ոչ միաբանեսցիս ի խորհուրդս մեր, ոչ մնասցէ առ քեզ եւ ոչ մի ոք ի զօրաց քոց: **Չկարեմք ժուժկալել տագնապիս, յորում կայ երկիրս Հայոց**»:

Այս հուսահատական ճիչը չէր, որ բռնադատեց Աշոտին միանալ խռովարարներին: Մամիկոնյան իշխանը, Գրիգորը, կենտրոնացրեց իր ուժերը իր սեփական կալվածում, Տայքում, ոչ միայն նրա ղիրքն ու ամրությունը նկատի առնելով, այլ գլխավորապես այն հաշվով, որ օգնության խոստում էր ստացել կայսերական զորքերի կողմից, որ նստած էին Պոնտոսում. «Քանզի էր ի մէջ նոցա ուխտ խաղաղութեան հրամանաւ կայսերն Կոստանդնի»:

Դարձյալ օտարի ստահոդ խոստումներն էին, որ հույս էին ներշնչում ապստամբության նախածեռնողներին: Թվում է, որ այս հանգամանքն էր, որը ստիպել էր Աշոտին տալ իր ակամա հավանությունը:

Արդարև, Կոստանդին Կոպրոնիմոս կայսրը արշավեց և առավ Կարին և Մելիտինե քաղաքները, բայց հեռու էր հայերին դարման հասցնելու մտքից: Ապստամբության ծրագիրը վտանգվեց և օդ ցնդեց: Իշխանների միաբանությունը քակվեց: Աշոտը հեռացավ, որ գնա Բագրևանդ և ներկայանա արաբական հրամանատարին:

Ծրագրի վիժման պատճառը, անշուշտ, Աշոտն էր: Մամիկոնյան Գրիգորը ոխացավ և, գիշերը հարձակվելով Աշոտի վրա, բռնեց և տվեց իր սպանված եղբոր Դավթի ծառաներին՝ «բառնալ զլոյս աչաց նորա»:

Երկրի մտավոր աչքը կորցրեց իր տեսությունը, Աշոտը կուրացավ և աչքի լույսի գնով փրկեց Հայաստանը նոր փորձանքից:

Պետք կա՞ նկատելու, որ Աշոտն իր վարմունքով նվազ ուխտանենգ չէր Գրիգորի նկատմամբ, քան Վասակ Սյունին՝ Վարդանի: Բայց տե՛ս, որ պատմիչը «որդիք յանցանաց» է անվանում Գրիգորի կուսակից ուխտապահներին և ինքը Գրիգորը «սատակէր ի կենաց անյիշատակ բարձեալ ի միջոյ», մինչդեռ Աշոտը դառնում է «պսակ պերճութեան եւ փառք ազգիս Հայոց»:

Աշոտին հաջորդեց իր հորեղբոր Բագարատի որդի Սահակը, «գեղաղէշ երեսօք, երեւելի հասակաւ եւ ազնուական բնութեամբ»:

Հավանորեն Խորենացու հովանավոր Սահակ իշխանն է, որ անմահ հիշատակ թողեց իբր նախածեռնող «Հայոց պատմութեան» (3):

Չախողված ընդվզումի դառնությունը մնաց Մամիկոնյանների սրտում որպես հանգած կրակի ծուխ և մի օր պիտի պայթեր: Հենց որ անցավ քսանամյա օրհասական ժամանակը, երկիրը ծածկվեց խռովքի նոր ամպերով: Մարտական ուժերը ոգի առած ասպարեզ ելան մի անգամ ևս փորձելու ազատվել ատելի անուրից, «լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս վտանգաւորս», - ասում է ականատես պատմիչը:

Ապստամբության դրոշակը ծածանում էր կրկին և կրկին անգամ միևնույն ձեռքերում: Արտավազդ Մամիկոնյանը Դվին քաղաքում զենքի պատրաստություն տեսնելուց հետո, քաշվեց Շիրակ և զարկեց արաբական հարկահանին Կումայրի ավանում (որ է արդի Ալեքսանդրապոլ, վերակնքված վերջերս Լենինական, փոխանակ վերականգնելու հին անունը, որ պահել է ցարդ ժողովուրդը՝ **Գյումրի**):

Նշանը տրված էր: Մուշեղ Մամիկոնյանի սրից ընկավ մի ուրիշ հարկահան և ինքն ամրացավ Արտագերս հինավուրց բերդում: Լուրը հասավ Դվին մայրաքաղաքը: Չորս հազարանոց բերդապահ գունդը եկավ Մուշեղի վրա, բայց ջարդ կերավ և նահանջեց:

Ամբոխն արդեն խուժել էր փողոցները, կանայք ողբով և վայով ընդառաջում էին սիրելիներին: Հանկարծ որտեղից ուր հայտնվեցին շրջիկ քարոզիչներ, որ գրգռում էին ժողովուրդին և քաջալերում հաղթության հույսով. «Մերձեալ է ահա ժամանակ փրկութեան ձերոյ,- գոչում էր մի կրոնավոր,- զի այժմ ընդհուպ դարձցի գաւազան թագաւորութեանն միւս անգամ ի տուն Թորգոմայ առնուլ ձեօք զվրէժ յազգէն Իսմայէլի: Եւ դուք մի զանգիտէք յերեսաց նոցա թե նուազունք իցէք, զի մի այր ի ձէնջ հալածեսցէ զհազարսն եւ երկուքն զբիւրսն»:

Սակայն, այս բոլորը լոկ ինքնախաբեություն էր կամ, ինչպես պատմիչն է որակում. «տեսիլ սուտ եւ բաղձալի սրտի»: Ապստամբները հաջողեցին իրենց կողմը քաշել Սմբատ սպարապետին, կուրացած Աշոտի որդուն: Նա Մամիկոնյանների փեսան էր և ստիպված էր զիջանել: Երկրի պետը, իշխանաց իշխանը Աշոտն էր, հիշյալ Սահակի որդին, «այր խոհական հանճարով», որ բացեիբաց ընդդիմացավ ապստամբության, խրատեց չանսալ մոլեկան մոնոզոնի (կրոնավորի) քարոզին և հետ կենալ վնասակար ձեռնարկից:

Կուսակցական հայեցակետների ընդհարման սուր վայրկյան էր: Աշոտի դիրքը փափուկ էր: Քսան տարի առաջ նույն վիճակի մեջ էր մյուս Աշոտը, այս Աշոտի պապի եղբայրը: Նրա նման և հետևությամբ Աշոտը պատասխանատվության ծանր բեռը ուսերին չհապաղեց, չվեհերեց արտասանել այս վճիտ և խոհուն խոսքերը:

«Մանկունք էք եւ կրտսերագոյնք հասակաւ եւ գիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմագլուխ վիշապին, զի հզօր է զօրութիւն նորա եւ անքիւ

բազմութիւն ընդ ձեռամբ նորա եւ անչափ պատրաստութիւն զինուց ի գանձս նորա: Եւ ամենայն թագաւորութիւնք որք հակառակ կային իշխանութեան նորա, փշրեցան որպէս զանօթ բրտի: Զի թէ հռովմայեցւոց թագաւորութիւն ոչ կարաց համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ դողաց յերեսաց նորա եւ ոչ յանդգնիլ ընդդէմ տէրունեան հրամանին, զի եւ դուք չէք անտեղեակ ամենայն զօրութեան արքային յունաց, քաջութեան անձին նորա եւ բազմութեան եւ պատրաստութեան զօրաց նորա, զի ամենեւին ընդ միտ անգամ ոչ էառ ածել զմտաւ առնուլ զաշխարհս հայոց ի ձեռաց նորա, Կոստանդին, որդի Լեւոնի, որ մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ ահաւոր գազանացն, սպան զառիւծն իբրեւ զուլս այծեաց: Արդ որ զայս ոյժ զօրութեան ունէր, այնպէս ընթադրեալ է յահէ չարաթոյն գազանին որ ապականէ զերկիր: Իսկ դուք **յո՞վ արդեօք ապաւինեալ և կամ որով զօրութեամբ եւ որով ուժով կարէք զդէմ ունել** անյաղթելի իշխանութեան նոցա:

Արդ՝ եթէ հաճոյ թուի անձանց ձերոց, ընկալարուք զխրատ իմ, քանզի զօգուտն ձեր եւ զպիտոյսն եւ զանդորրութիւն աշխարհիս տեսանեմ ես: Զի այս լինի ելք գործոցդ, կամ դառնալ ձեզ եւ մտանել ընդ հնազանդութեամբ նոցա եւ հանդարտիլ եւ կեալ խաղաղութեամբ՝ յերկրիս ձեր եւ կամ մերժիլ փախստեամբ համօրէն ընտանեօք յերկրէս ձերմէ եւ լքանել, թողուլ զժառանգութիւն հարցն ձերոց, զբնակութիւնս ձեր, զանտառս եւ զանդաստանս, նաեւ զգերեզմանս հարց ձերոց եւ երթալ բնակիլ ընդ արքային յունաց եւ կամ թէ ոչ անկանիցիք ի ձեռս նեղչաց ձերոց ր կենացս, զի գիտեմ ես զբարս աստուածութեան իշխանին Իսրայէլի, զի ոչ դադարէ մինչև կատարէ զկամս անձին իւրոյ»:

Հեռատես իշխանի իմաստուն խրատը, որ մինչիսկ մեզ համար քաղաքական գործունեության հիմ կարող էր համարվել մոտիկ անցյալում, մնաց ձայն բարբառո հանապատի: Ապստամբները արդեն պաշարել էին Կարինը: Դվինը սարսափի մեջ էր: Հանկարծ մի տխուր լուր ցնցեց երկիրը. արաբական բանակը, բաղկացած 30 հազար վարձկան թուրքերից ոմն Ամրի հրամանատարությամբ եկել հասել էր Խլաթ քաղաքը: Աշոտն այս պահին նույն քաղաքումն էր և տեսնելով ահավոր վտանգը, պատվեր ղրկեց իբրև թե ամենուրեք միանալ և հավաք ուժերով դեմ դնել թշնամուն: Թվում է, թե պատմագրի կողմից արդարացման տկար փորձ է: Աշոտը հավանորեն գնացել էր թշնամու բանակը հաշտության առաքելությամբ:

Ապստամբները հավատ չընծայեցին Աշոտի պատվերին, կարծելով, որ նա ուզում է նենգորեն ազատել Կարինը պաշարումից և հաճոյանալ արաբներին:

Մի գունդ ապստամբներ անցան Արծեշ քաղաքը, բայց անհաջողությա:

դիպեցաւ շնորհիվ քաղաքացիների մատնության: Արաբները առաջացան Բագրևանդ և բանակ զարկեցին Արծնի գյուղի մոտ:

Արծեշի գույժը Կարին հասած, հայերը լքեցին պաշարումը և խոյացան դեպի թշնամին: Պատմիչն անգամ զարմանում է, որ փոխանակ փախչելու հունական սահմանը և ազատելու իրենց կյանքը, ճակատեցին թշնամու դեմ, «լաւ համարեցան ընտրել զմահ անձանց, քան տեսանել զկորուստ աշխարհիս եւ զանպատուութիւն եկեղեցւոյ Քրիստոսի»:

Հազիվ հինգ հազար էին, իշխանազունք և շինական ժողովուրդ: Սկզբում քաջությամբ հետ մղեցին թշնամու գրոհը, բայց հետո ընկճվեցին բազմության առաջ, մանավանդ որ ռամիկ ուժերը շուտով լքեցին իրենց դիրքերը և ցրվեցին: Մնաց միայն իշխանական որեարը, որ իրար քաջալերելով նետվեցին գիտակցաբար մահվան գիրկը. «**Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր եւ մի տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբարանս մեր**»:

Այս սրբազան մրմունջը շրթունքին ընկան երեք հազարի չափ նահատակներ և նրանց թվում Մուշեղ Մամիկոնյան և Սմբատ Բագրատունի: Հայրենիքի զոհերը մնացին անթաղ, անձրևի և արևի տակ. «ոչ լալ եւ ոչ հաց սգոյ բեկանել ի տունս իւրեանց եւ ոչ տալ գերեզմանի, այլ բացընկեցիկ օթագացեալ ի վայրի յարեւու եւ ի փոշւոջ եւ յանձրեւի եւ ի մրրիկս հողմոց»:

Երկիրը հառաչեց և ողբաց ինքնուրաց քաջերի մահը, առանց նրանց «մնացին թափուր յօգնականութենէ նոցա եւ մատնեցան ի ձեռս գազանաբարոյ թշնամւոյն»:

Արծեշի կռիվը տեղի ունեցավ հրոտից 4-ին՝ շաբաթ օր, իսկ Արծնի՝ նույն ամի 13 = 775 ապրիլի 15 և 23-ին: Արյունալից ամպերն անցան հայ հորիզոնից, երկիրը խաղաղեց և նորեն լծվեց շինարար աշխատանքի: Ապստամբ Սմբատի որդին՝ Աշոտ Մսակերը խոհեմ քաղաքականությամբ հիմը դրեց Բագրատունիների իսկական զորության: Կամսարականներից գնեց Արշարունիքը և Բագարան տեղափոխեց իր նիստը: Որդին՝ Բագարատը հաստատվեց Տարոնում, մյուսը՝ Սմբատը, հաջորդեց հորը:

IX դարը հայության համար նշանավոր էր առանձնակի: Ոչ միայն իրենց հայրենիքում էին առաջանում հայերը, այլև Բյուզանդական պետության մեջ ամուր դիրքեր էին գրավում, որ մի օր տիրանան Կոստանդնի Մեծի գահին: Իսկ արաբական պետությունը նշաններ էր ցույց տալիս քայքայման: Խալիֆաները փառքի վերելքը կատարած սկսել էին իջնել, որ մոտ ապագայում խաղալիք դառնան վարձկան բյուրք զինվորների ձեռքին: Բաբեկի շարժումը, որ ոչ միայն քաղաքական գույն ուներ այլև ընկերային, մեծապես հարվածեց պետության վարկը: Ծայրագավառների ամիրաները գլուխ բարձրացրին և ձգտում էին անջատվելու:

Այս բոլորը գաղտնիք չէր նաև հայերից: Անարդար կլիներ հանդիմանել, որ երբևիցե հայերը բավականին շրջանկատ չեն եղել քաղաքական մեծ գալիքների հանդեպ: Հեռուն տեսնել, շատ հեռուն թափանցել, անհնարին չէ եղել մեզ համար: Մեր ազգային թերությունն այն է, որ անկարող ենք ընթանալ իրերի հետ ոտն առ ոտն, շտապում ենք կանխել դեպքերը, առջևն ընկած վազում ենք, փոխանակ ետևից գնալու, գնալու համրաքայլ:

Մսակերի որդին, Բագարատը, ինչպես և Արծրունյաց իշխանը, զգալով արաբների տկարությունը, վճռեցին չվճարել սովորական հարկը: Պետք եղավ, ճնշումի, որ արքունի տուրքը գանձվի: Մի օր էլ պետական հարկահանները սպանվեցան Տարոնում: Քաղաքային բնութի մահափորձերը դառնացրին արաբներին: Մուտավաքիլի օրով մի կատաղի փոթորիկ անցավ Հայաստանի վրայից և այն վերջինն էր և լավագույն ապացույց պետության թուլության: Որքան հզոր է պետությունը, նույնչափ վեհանձն է դեպի հպատակ ժողովրդի ըմբոստացումը, և որքան թույլ, այնքան դաժան:

Ապիկար և մեղկ խալիֆայի կողմից ինններորդ դարի կեսին եկավ մի թյուրք Բուղա անունով, որ թեև 80 տարեկան էր, բայց բնածին անգթությունը չէր մեղմացել նույնիսկ զառամ տարիների ծանրության տակ, եկավ ողողելու Հայաստանը արյունով: Արյունռուշտ էր **Բուղան**. ի բնե և խարդախ, զի խարդախությունը անգթության կարապետն է: Նենգորեն և ողոքիչ լեզվով իր մոտ կանչեց գրեթե բոլոր ազդեցիկ իշխաններին Տարոնի, Վասպուրականի, Սյունիքի, Գարդմանի, մինչև իսկ Խլաթի և Թիֆլիսի կասկածելի մուսուլման ամիրաներին, բոլորին կալանավորեց և տարավ Բաղդադ:

Շատերը մահացան օտարության մեջ: Նահատակվեց և Սմբատ իշխանը, որի արաբական անունն էր Աբլաբաս: Բայց նրա որդին Աշոտ լուծեց հոր և մյուս մարտիրոսների արյան վրեժը իր հաղթանակով: Արաբական լուծն ընկավ Հայաստանում ճիշտ այն միջոցին, երբ հայի մյուս զավակը՝ Վասիլ բարձրանում էր Բյուզանդիայի գահը:

Աշոտի հաղթությունը Բագրատունյաց հոսանքի հաղթանակի օրն էր և Մամիկոնյանների՝ պարտության: Աշոտ իզուր չէր, որ Մամիկոնյան Կուրդիկ իշխանի գլուխը կտրած ղրկեց Սամառա խալիֆին (4):

Կուրդիկ իշխանի արյունոտ գլխի հետ ընկավ ընդմիշտ և այն կարմիր դրոշը, որ ծածանվում էր այնպես պերճորեն չորս հիշածս դարերի պատմության վրա: Կարմիր դրոշը տանում էր դեպի քաղաքական ազատություն արյան ուղիներով: Բռնության դեմ բռնություն, ուժի դեմ ուժ, արյան փոխարեն արյուն՝ ահա դրոշի նշանաբանը: Նախնիք զարդարել են Վարդանին՝ Ավարայրի հերոսին, **Կարմիր** կոչումով: Նրա քաջարի սերունդը, որ նույն վեհությամբ փայլեց հետագայում, իրավունք ունի նույն կոչման իր այնքան պանծալի և հառաջամարտիկ անուններով:

Դժվար է գտնել որևէ պատմության մեջ մի իշխանական տուն, որ դարերի ընթացքում մնար այնպես հավատարիմ իր տոհմական մտայնության և ավանդներին: Ութերորդ դարի Մուշեղը հար և նման է չորրորդ դարի Մուշեղին: Արյան հետ ժառանգում էին ընտանիքի հերոսական ուղին: Անուններն անգամ, որ անցնում էին սերունդե սերունդ հուշարարներ էին իրենց անցյալի: Մամիկոնյան տունը՝ հայ զինվորական կորովի մարմնացումն է, հայ ասպետական կարողության կենդանի պատկերը:

«Սրի երկյուղը անծանոթ է մեր տոհմին,- ասում է Վարդանը,- և մեզնից և ոչ մեկը և ոչ մի ժամանակ չէ քաշվել սրի ահից: Եվ թե ինչպես ավելի բարի ընկերի մասին ենք հոգպցել, քան մեր անձի, բոլորին հայտնի է»:

Ճշմարիտ նկարագիրը Մամիկոնյան տան, որ տալիս է պատՀիչը Վարդանի բերանով:

Հայ երկրի ու ժողովրդի արժանապատվության ուխտված զինվորներն էին, որ անհավասար կռիվների մեջ ուժասպառ եղան, հերոսներ, որ այրվեցին անձնվիրության հրդեհներում: Ի՞նչ է հերոսությունը, եթե ոչ արհամարհանք մահվան հանուն մերձավորի:

Մամիկոնյան կտրիճներն իրոք մի մի հերոսներ էին, աննման ծաղիկներ, սփռված մեր անցյալի ապառաժոտում, և պատվաբեր ամեն մի պատմության: Այդ չքնաղ ծաղիկները արևակեզ ընկան:

Իրավ է նույն Վարդանի տրտունջը, ուղղված նախարարներին.

«Ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ եւ զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց եւ մահուց»:

Վշտերն ու մա:հերը սաստկացան մանավանդ Վարդանից հետո, ինչպես տեսանք, և Մամիկոնյան որեարը արյունաքամ իջավ պատմական դաշտից այն ժամանակ, երբ նորա հրջանիկ մրցակիցը Բագրատունյաց տունը բարձրանում էր աջողության սանդուխտով դեպի արքայական ապարանքը:

Այլ էր Բագրատունիների նկարագիրը, նրանց խառնվածքը և ընտրած ուղին: Ոչ պակաս քաջ և հայրենասեր, Բագրատունի իշխանը միևնույն ժամանակ շրջանկատ է և գործնական: Չկարենալ զսպել կրքեր, զայրույթը պահել իր ամանի մեջ, թուլություն է: Բռնության դարեր էին, երբ կոպիտ ուժի հանդեպ հասարակական շահը հաճախ պահանջում էր լռել, քան խոսել և տոկալ, քան հուզվել: Անհատական խիզախությունը, հարկավ, պատրիչ է, բայց շատ անգամ աղետաբեր ընդհանրության: Պատասխանատու գործիչը ստիպված է հաճախ հրաժարիլ շահատակություններից, և կյանքի դառնություններն պահել իր ներսը, համբերության երկանաքարի տակ մանրել ոչնչացնել ծանր ապրումները առանց որևէ արտաքին պայթոցի:

Սկզբում Բագրատունի Սմբատները Մամիկոնյանների նման սովոր էին ձեռքը պահել դաշույնի վրա, իսկ հետագայում Աշոտները ստիպված էին

ձեռքը դնել ճակատին: Ծաղրախոհ և խորաթափանց՝ Բագրատունիք համակիր չէին ցնցումների, ընդունակ էին անգամ չարիք գործելու, ավելի մեծ չարիքի առաջն առնելու համար:

Եթե Մամիկոնյանները հայ խաչելության և սրի շողշողուն քարերն են, Բագրատունիք հայ խոհականության քարե սյուներն են: Գագիկ թագավորի արձանը, որ երևան նկավ Անիում, ներկայացնում է մեր ասպետների թագակիր զավակիր: ոչ նժույգը սանձած, նիզակը ճոճելիս, սաղավարտը գլխին, այլ որպես ալեփառ ծերունի, նման ավելի վանահոր, քան զինվորականի երկար վերարկու, մեջքը պնդած գոտիով, մանրածալ փաթեթը գլխին, և պարզած բազուկների վրա կանգնում հայրենի սրբարանը:

Աշոտի համար, ասում է ժամանակակից պատմիչը. «Ոչ ի հակառակութիւնս ինչ կամ ի կռիւս ընդ թշնամիսն մաքառեալ, քան թէ բարեզգեաց բանիւք և բարի օճանաւ ածեալ զնոսա յուղղութիւն եւ ի կամս իւր»:

Այս ողոք և հաշտ քաղաքականությունը, որին աշխատում էին հետևել Բագրատունիները ընդհանրապես, այնքան էլ դյուրին չէր: Համակերպման ուղին խեծբեկ է և ծանր բարոյապես: Կորանալ մինչև ստորություն բռնավորի առջև, ուխտանենգ լինել, եղբայրասպանությամբ, ուրացությամբ խղճի ձայնը խեղդել՝ ահա փշերն ու տատասկները այն կածանների վրա, որ տանում էին դեպի Բագրատունյաց թագն ու գահը:

Սմբատի սերունդները, այն Սմբատի, որ գազաններից ահ չուներ, հարկադրված էին իջնել մինչև հնության ստորիքը, որպեսզի հոգեկան կսկծոտ գալարումների գնով ապահովեն հայրենիքի բարորությունը: Աշոտ թագավորի հայրը Սմբատ կոչվում է Խոստովանող: Նույն կոչումին արժանի է **[վերջինիս]** թագակիր որդին, այն, որ բարձրացավ գահ Կուրդիկ Մամիկոնյանի արենաթաթախ դիակի վրայից...

* * *

Մրցակից հոսանքների մեկի հաջողությունը հաճախ մոռանալ է տալիս մյուսի արժեքը: Միակողմանի վերաբերումն է, և գալիս է այն դատավորներից, որոնք դասված են կուսակցական շարքերում:

Առաջին շրջանում մինչև Սասանյան հարստության անկումը զորեղ էին և ազդեցիկ Մամիկոնյան տրամադրությունները: Նախարարական կարգը տակավին ատոք վիճակի մեջ էր: Տենչանքները կապված էին զենքի և զրահի շաչյունին և բոլորում էին տոհմական սպարապետների անվան շուրջը: Ընդհանուր համակրությունը նրանց կողմն էր: Հայ մտավորականության և գրի ներկայացուցիչները՝ Փավստոս, Եղիշե, Ղազար, Հովհան Մամիկոնյան, բոլորն էլ Մամիկոնյան տան փառաբանիչներն են և նրանց ուղղության

կողմնակից: Յոթերորդ դարը հույսերի և համակրությանց ճոճման ժամանակ էր, և այդ դարի պատմագիր Մեբեռսը աշխատում է բարեխիղճ լինել և անաչառ մրցող ուժերի հանդեպ:

Արաբների հաստատվելուց հետո զգալապես հառաջանում են Բագրատունիք և հետզհետե գրավում են երկրի համակրությունը: Մամիկոնյան արծիվները, ճիշտ է, դեռ շարունակում են խոյանալ մարտի դաշտերում, բայց երգիչներ չունին: Պատմագիրները՝ Ղևոնդ, Հովհաննես Կաթողիկոս, Շապուհ Բագրատունի, Ասողիկ գովաբանում են բացառապես Բագրատունի իշխաններին, նրանց ջատագովներն են:

Այս պատմիչների թվումն է հռչակավոր Պատմահայր Մովսես Խորենացին: Բանգրատունիների գուսանն է նա և Մամիկոնյանների նզովիչը: Իր Բագրատունի մեկենասին հաճոյանալու համար չէ, որ գովում է նրա տոհմը: Պատմահոր անձը և կոչումը կասկածի իրավունք չեն տալիս բնավին: Խորենացին գաղափարական հակառակորդ է Մամիկոնյան քաղաքականության և սիրող հասարակական անդորրության:

Պատմահայրը մեծ հայրենասեր էր. նրա հայացքը պարտավորիչ կլիներ, եթե վերաբերեր իր ժամանակվան կացության: Բայց ցավն այն է, որ նոր կշռով մոտենում է հին պատմության և այնտեղից է ուզում հանել Մամիկոնյան փայլուն անունները, ջնջել նրանց հիշատակը: Արտավազդ, Մուշեղ, Վասակ, Մանուել չորրորդ դարի այս չնաշխարհիկ հերոսները, որոնց այնքա՜ն հուզիչ նկարագիրը Փավստոսի լավագույն էջերն են կազմում, չգո են համարվում Խորենացու մոտ, բայց հիշվում է Վահան Ուրացողը՝ Մեհրուժանի ընկերը, հարկավ, առանց Սամուելի, որ սպանելով դավաճան հորը, սրբեց Մամիկոնյան անբիծ անունը այդ միակ արատավոր ստվերից:

Փավստոսի հերոսների քաջագործությունները Խորենացին վերագրում է ուրիշներին՝ Առավանյան, Ամատունի և կամ Բագրատունի տներից: Հայ մտքի խոշոր մեծությունը Խորենացին այսքան աչաղկոտ [նախանձկոտ] է և նեղսիրտ, այսքան կուսակցական: Թվում է, որ շատ դառնացած է եղել իրեն ժամանակվան Մամիկոնյան աղմուկներից:

Դժվար է ուրանալ Մամիկոնյանների կարմիր հետքը մեր պատմության մեջ: Եթե ներելի է համեմատել հասարակական մարմինը անհատի հետ, Մամիկոնյան տոհմը Խորենացուց առաջ և հետո էր և մնաց հայ ազգի բաբախուն սիրտը:

Խորհուն գլուխը, իմացականությունը, եթե անգամ շոյենք հակառակ հոսանքը նրան վերապահելով այդ կարողությունը, անհուսալի ուժ է առանց սրտի ներշնչումների: Գործնական ասպարեզում զգացական զեղումներն են մտքի իսկական թևն ու թափը: Մամիկոնյան հոսանքն էր պատրաստել այն

սերմերը, որից բուսավ Բագրատունիների հունձը: Ազատասիրությունը ևս պետք ունի հոգածու ձեռքերի: Խիզախումները և բողոքի որոտումները որքան և անհետևանք, այն նշանակությունն ունին, որ չեն թողնում, որ ժողովրդի խոնարհությունն ու հլությունը հավասարվի ստրկության:

Պետք զգալ և պարտք պաշտպանելու քաղաքական իրավունքները անգամ մահվան գնով, ահա այն հողը, որի վրա կանգնեց Բագարանի արքունիքը և որի պատրաստության են ծառայած և նախորդ զինական շարժումները:

Սխալ կլիներ կարծել սակայն, որ երկու խոշոր հոսանքները, որ ակոսում են մեր անցյալի չորս դարը, երկու իշխանական ընտանեկան տրամադրությանց սոսկական ծնունդն են, կամ նրանց տոհմային ընդունակությանց արտահայտությունը: Մամիկոնյան և Բագրատունի տները երկու ուղղությանց առաջնորդներն են, ղեկավար ուժերը և ոչ նրանց ստեղծագործողները: Եթե այդ իշխանական տոհմերը բնաջինջ չլինեին կամ եղած լինեին շատ առաջ, հոսանքները պիտի շարունակվեին: Գուցե կկորցնեին որոշ երանգը, որ պայմանավորված է երկու տների անհատական հատկությամբ, բայց իրենց էությունը ոչինչ չէր տուժի:

Գծածս քաղաքական հոսանքներն ավելի խոր արմատներ ունին և հանգչում են պատմական կյանքի զարգացման տարբեր տնտեսական-հասարակական երևումների վրա: Դրանք են հին նախարարական կարգը և նորածին քաղքենիությունը:

Սկզբում տիրական էր Հայաստանում, ինչպես և ամբողջ Իրանում ֆեոդալականությունը: Սասանյանների անկումով պիտի թուլանար և չքանար արևելյան այդ հինավուրց իրավակարգը: Արաբները նպաստեցին նրա քայքայման: Չորս դարվան անընդհատ կռիվներում նախարարական հիսունի չափ տոհմերը ջնջվել էին և մնացել միայն մի տասնյակ: Արդ՝ Մամիկոնյան հոսանքը հայ ֆեոդալականության, հայ զինված ազնվականության ասպետական շունչն էր: Ազնվականության տկարացման և անկումի հետ պիտի վերանար հրապարակից և նրա գաղափարական հայտարար Մամիկոնյան տունը: Արաբները չէին, որ պիտի հովանավորեին Մամիկոնյաններին:

Անցնող ազնվականության դիրքերը հետզհետե գրավում էր նոր **բյուրգերական** դասը, քաղքենի հասարակությունը: Իշխանական ամրոցները մամռոտում էին և քաղաքները շենանում: Ահա այդ նոր հասարակական ուժին է, որ հենվում են Բագրատունիները, նոսրացած ազնվականության պետերը:

Նախարարական Հայաստանի յուրաքանչյուր անկյուն կյանքի փոքր, բայց անկախ հնոց էր, ինքնամփոփ և ինքնաբավ տնտեսական և

հասարակական մի միություն: Ինքն իր պիտույքներն է հայթայթում, պարապելով հողագործությամբ և անասնապահությամբ: Ուրիշ դասակարգ չկար, բացի աշխատավոր շինականությունից: Սա պետք ուներ իր իշխանին, որ պահպաներ սահմանները արտաքին թշնամիներից, օտար հարձակումներից և առ ու կողոպուտից:

Քաղաքային բնակչության հաշիվները այլ են: Սրա զբաղմունքն է գլխավորապես վաճառաշահություն և արհեստներ: Երկուսն էլ պահանջում են գործունեության լայն և մեծ շրջան և ճանապարհների ապահովություն: Միահեծան իշխանությունը գերադասելի է, քան մանր տերերի ցանցը, որ իրապես մի թակարդ է ապրանք տանող և բերող կարավանների համար: Նկատելու է նաև, որ քաղաքների բնակչությունը բաղկացած էր մեծ մասամբ օտարներից. ավելի արաբ, հրեա, ասորի և պարսիկ կային, քան հայ, որ տակավին ընտել չէր առևտրի:

Խաղաղ քաղաքականությունն ավելի էր համապատասխանում քաղաքներին, քան ազատագրական իրարանցումները: Արճեշի օրինակը խրատական է: Երբ հայ ապստամբները՝ 772 թվին գնացին Արճեշի վրա, քաղաքացիները գաղտնի իմաց տվին Խլաթ արաբական բանակի հրամանատարին, որի հետ էր Աշոտ Բագրատունին. «Եւ իբրեւ մօտ հասանէին ի քաղաքագիւղն, բնակիչք քաղաքին յառաջ զգացուցին ի քաղաքն Խլաթ առ Ամր զօրավար Իսմայէլի զգալուստ նախարարացն Հայոց»:

Արաբները գալով դարան մտան և հանկարծակի հարձակվելով հայ զորքերի վրա, մոտ հազար և հինգ հարյուր մարդ կոտորեցին:

Ֆեոդալների, գեղջուկների և քաղաքների բնակիչների բախումը նկատել և արձանագրել է Խորենացին: Վաղարշակի բերանով հայտարարում է. «Հրամայեմ տալ քաղաքացեաց մարդկան արգոյ եւ պատիւ լինել քան զգեղջկաց եւ գեղջկաց պատուել **զքաղաքացիս որպէս զիշխանս**: Եւ քաղաքացեաց մի կարի առ. **գեղջկօքն պերճանալ**, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան եւ աննախանձոտ կենաց, որ է շինութեան եւ խաղաղութեան կենաց պատճառք եւ որ ինչ նման այսոցիկ»:

Հղփացած քաղքենիությունը նկրտում է բռնել թառամած իշխանների տեղը: Պատմագիրը բնական է համարում այս ձգտումը և հորդորում է գեղջուկ դասին՝ տալ նրան պատկանելի իշխանական հարգանքը: Մարդասիրաբար խորհուրդ է տալիս, որ քաղաքացիք էլ շատ չպերճանան և եղբայրաբար վարվեն շինականների հետ ի շահ բարեկարգության երկրի: Հասարակագիտական կարևոր հեղաշրջումն է, որ տեղի է ունեցել կյանքում:

Մանուկ, բայց արդեն պերճացած դասակարգի համար ցանկալի էր և նպաստավոր Աշոտների քաղաքականությունը՝ կամաց-կամաց հավաքել երկիրը, ընդլայնել իշխանության սահմանները և երկարել հաղորդակցու-

թյան ուղիներն առանց խզելու կապերը հարևան մեծ պետությանց հետ: Նորաստեղծ դրության փայլուն արտահայտությունը, նրա արբունքը դառնալու էր շուտով արքայական Անին, խոշոր վաճառաշահ կենտրոն արևելյան առևտրի: Նույն Անին էր դառնալու այն հնոցը, ուր պիտի ձուլվեին հայ ազնվականության զենքերը, որպեսզի նոր պայմաններին համակերպվելով փայլե հայ նոր հանճարը առևտրական և արդյունաբերական աշխարհում:

Մինչ Անիում մարում էին ֆեոդալականության վերջին ճառագայթները, Արևմուտքը նոր էր ողջունում նրա արշալույսը: Հասարակագիտական տեսակետից Արևելքին էր պատկանում առաջնությունը, և նա էր կարապետը նոր բուրժուական իրավակարգի:

Այսպիսով՝ մի թագից դեպի մյուս թագը տանող չորս դար ժամանակամիջոցը ընթացել է զարգացման հետևողական շավղով: Որքան էլ բեկված, խզված լինի առաջադիմության թելը արտաքին արհավիրքներից, բայց և այնպես կյանքը սահել է նրանց վրայից: Պսակավոր Բագրատունիների հովանու տակ հայ աշխատանքը կարողացել է պարփակվել իր ազգային սահմանների մեջ և իր նպաստը բերել համամարդկային քաղաքակրթության շտեմարանին:

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

1. ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Հնուց գոյություն ունեցող հարց է, բայց սուր կերպով հրապարակ իջավ VIII-IX դարերում: Եկեղեցու հայրերը, ինչպես ուրիշ շատ խնդիրներում, այս դեպքում ևս համերաշխ չէին և ունեին հակառակ կարծիքներ՝ երբեմն մեղմ, երբեմն կտրուկ և անհաշտ ոգով արտահայտված:

Հեթանոս աշխարհը կանգնած էր կուռքերի առաջ: Քրիստոնեությունը տապալելով անշունչ նյութերի պաշտումը, իր կողմից մշակում էր հետզհետե այնպիսի պաշտամունքներ, որ հեթանոսական մոլորության կերպարանք կարող էին ստանալ: Խաչի, Քրիստոսի Մարդեղության և Տնօրենության պատկերներն, ինչպես և աստվածահաճո սրբոց նկարները սրբազան իրերի բարձր համարում էին ստացել:

Հեթանոսները և հրեաները հիմք ունեին մեղադրելու քրիստոնյաներին, որ անշունչ առարկաներ են պաշտում՝ քար և փայտ: Եվ կամ անտես և աներևույթ Աստծուն շոշափելի ձևով են ներկայացնում, այս կամ այն կերպարանքը տալիս:

Խաչի և պատկերների խնդրում որոշելու է երկու վերաբերում.

1) պատկերը որպես զարդարանք կամ ուսուցման միջոց, որ փոխարինում է անգրագետներին գիրը, կամ հորդորիչ միջոց բարեպաշտության և կրոնասիրության,

2) պատկերը որպես օրինակ նախատիպի, սուրբ և պաշտելի ինքնին (1):

Առաջին վերաբերումը կարելի է անվանել ընդհանուր խոսքով պատկերահարգություն: Երկրորդ՝ պատկերապաշտություն. *τιμή* և *λατρεία*. Կամ *ἡ τῆς τιμῆς προσκύνησις* և *ἡ τῆς λατρείας προσκύνησις τιμητική* և *λατρευτική*[1].

---

[1] Տակավին Բարսեղ Մեծն ասել է, որ պատկերի (իր իսկ հանդեպ) հարուցած հարգանքը պատկանում է նրա նախատիպին. *ἡ γὰρ τῆς εἰκόνος τιμὴ πρὸς τὸν πρωτότυπον διαβαίνει* (I, 21, Հովհաննես Դամասկացու մոտ. **Migne**, t. 94):

Ոմանք հենվելով Ելքի վրա[1], ժխտում էին դրականորեն պատկերները (2). մանավանդ երկյուղ էին կրում, որ կդառնար մի տեսակ կռապաշտություն: Էլվիրի (Elvira) ժողովը 306 թ. որոշում է 30 կանոն, որով արգելվում է սրբապատկերների պաշտամունքը՝ որպես կռապաշտություն placuit picturas in ecclesia esse non debere, nequod **colitur** et **adoratur** in parietibus depingatur[2]:

Եվսեբիոս Կեսարացու վերաբերումը նշանակալից է: Կոստանդին Մեծի քույրը՝ Կոստանցիա, խնդրել էր Եվսեբիոսից Քրիստոսի պատկերը: Եվսեբիոս հարց է տալիս, թե ի՞նչ պատկերի մասին է խոսքը: Արդյո՞ք Բանի պատկերը, որ է Հիսուս Քրիստոս: Սակայն ասված է, որ միայն Հայրը ինքը գիտե, թե ի՞նչ կերպ պիտի ունենա, ինչպե՞ս պիտի լինի Որդին: Կամ գուցե խոսքը նրա փառավորյալ Մարդեղության մասի՞ն է: Սակայն ինչպե՞ս կարելի է անշուշտ գույների միջոցով ներկայացնել այն Մարդեղությունը, որ այլակերպյալ է և ողջովին սուզված աստվածային լույսի մեջ: Գուցե վերջապես Կոստանցիա խնդրում է Մարդեղության պատկերը նախքան Հարությունը և Համբարձումը: Սակայն միթե՞ Կոստանցիա չգիտեր, որ Ս. Գիրքը արգելում է կերտել պատկերը նրա, որ է երկրի վրա, թե երկնքում: Ուստի Եվսեբիոս ստիպված է մերժել նրա խնդիրը: Եվ որպես լուսաբանություն և հիմնավորումն իր մերժման, Եվսեբիոս ավելացնում է, որ տեսնելով մի կնոջ ձեռքին Քրիստոսի և Պողոս [Առաքյալի] ենթադրյալ պատկերները, խլեց, որպեսզի այս սովորությունը չընդհանրանա և ժողովուրդը չսկսե, կռապաշտների հետևությամբ, ներկայացնել Աստծուն պատկերների մեջ[3]:

Իր «Եկեղեցական պատմության» մեջ Եվսեբիոս նկարագրելով **Paneas** քաղաքի արձանը, ուր ներկայացված է տեռատես կինը և Քրիստոս, [այն] համարում է հեթանոսական նախապաշարմաց մնացորդք[4] (Վրթանեսի մոտ (3) ընդհակառակը, այս անդրին հիշվում է, որպես ապացույց պատկերապաշտության):

Պատկերապաշտությունը թվում է, [թե] արդեն տարածված էր, երբ սկիզբն առան առասպելներն ու զրույցները Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի անձեռագործ պատկերների մասին: Աբգար թագավորին ղրկված պատկերի հրաշագործության մասին գիտե VI դարի պատմագիր

---

[1] **Ելից**, 20, 4:

[2] **Mansi**, t. II, 11.

[3] **Pitra**, Spicilegium, t. I, 383-386.

[4] **Eusebius**, VII, 18.

Եվագրիոս: Սրա ասելով, [պատմիչից] Խոսրով [թագավոր] չկարողացավ առնել Եդեսիան, շնորհիվ պատկերի պաշտպանության[1]:

692 թ. ժողովի 82-րդ կանոնը ընդունում է պատկերները որպես հարգելի և պատվիրում է Քրիստոսին ներկայացնել մարդու կերպարանքով և ոչ թե գառան[2]:

Պատկերների [վերաբերյալ] վեճերի մեջ կարևորը հարցի տեսական, աստվածաբանական կողմն է, որ երևան է գալիս ուշ, թեև, եթե հավատալու լինենք Թեոփանեսին, նախածեռնությունը պատկանում է Մաբբուգի Փիլոքսենոս եպիսկոպոսին[3] (4): Նույնը կարծես հաստատում է և Հովհաննես Եփեսացին Յոթներորդ ժողովում՝ 787 թ., բերված և հերքված են սրանց վկայությունները[4]: Այս տեղեկության [համաձայն], Փիլոքսենոս [եպիսկոպոսը] կարծում էր, որ Քրիստոսին հարգել չէ նշանակում, երբ նրա պատկերներն են չինում: Նա աններելի էր համարում հրեշտակներին նկարել մարմնով, քանի որ նրանք հոգևոր էակներ են և տղայամտություն է Ս. Հոգին ձևակերպել որպես աղավնի: Այսպիսի հայացքներ ունենալով, նա ոչնչացնում էր հրեշտակների պատկերները և ծածկում նկուղներում՝ Քրիստոսինը:

Յոթներորդ ժողովում, Փիլոքսենոսի հետ, մեղադրվում են նաև Սեվերոսը, Պետրոս Ֆուլոն (Թափիչը) և ընդհանրապես միաբնակները:

Պատկերամարտությունն, այսպիսով, տեսական հողի վրա կապվում է միաբնակության հետ: Այս նկատումով շատ կարևոր է Եվսեբիոսի վերև հիշված դատողությունը: Ըստ Եվսեբիոսի, անկարելի է ներկայացնել Քրիստոսի մարդեղացումը, որովհետև նա այլափոխված է և աստվածացած և դարձել է *ἄληπτος*[5]: Եթե խնդրի վրա նայենք միաբնակ վարդապետության տեսանկյունից, ապա պիտի խոտելի համարվի Քրիստոսի պատկերագործությունը եվտիքյանների (5) աչքում, քանի որ մարդկայինը ձուլվում է աստվածայինի հետ և կլանված է նրանով: Անհնարին է մարդկայինը նկատել առանձին: Սեվերյանների օրինակով մարդկայինը ներկայացնել առանձին նշանակում է [այն] զատել աստվածայինից և, ուրեմն, նեստորական գործ կատարել: Աստվածայինը և մարդկայինը այնպես են միացված, որ անկարելի է դրանք ներկայացնել անջատ-անջատ, ինչ-որ անհնարին է, քանի որ մեկը սահմնափակ և պարագիր (circonscrit) է,

---

[1] **Evagr**., Hist. eccles., IV, 26. P.G., t. 86, 2, col. 2745.

[2] **Mansi**, t. XI, 977-980.

[3] **Theoph**., 5982.

[4] **Mansi**, t. XIII, 317 և 180-181.

[5] **Pitra**, Spicilcguim, t. I, 385.

մյուսը անհուն և անստեղծ և անպարագիր: Պատկերների խնդիրն ուներ արտաքին և ներքին խթաններ: Արտաքինը գալիս էր օտար կրոններից՝ հրեական և մուսուլմանական համայնքներից, մանավանդ պավլիկյան աղանդավորներից: Ներքինը՝ եկեղեցական գործիչներ[ից], որ Ս. Գրքի հիման վրա և կամ քրիստոսաբանական տեսություններով դատապարտում են պատկերապաշտությունը: Սակայն կարևորը ազգայնական և աստվածագրական մթնոլորտների տարբերությունն էր, որով տարվում էին Բյուզանդական կայսրության արևմտյան և արևելյան թևերը:

Արաբական խալիֆ Օմար II (717-720) և Բյուզանդիայի կայսր Լևոն III (717-741) միաժամանակ հանդես են գալիս պատկերների դեմ, ոչ անշուշտ, միևնույն և ընդհանուր պատճառներից դրդված և ոչ մեկը մյուսի ազդեցությամբ: Թեոփանեսի զրույցը Քեսեր Ուրացողի (6) մասին չինծու է թվում:

Փիլիպպիկոս Վարդան կայսրը, Նիկեփոր պատրիկի որդին, որպես թե նպատակ է ունեցել ջնջել պատկերապաշտությունը: Սակայն կանխահաս մահը արգելք է եղել գործին: Լևոն [III] Իսավրացի կայսրը վճռում է իրագործել: Տակավին մանուկ հասակում նա առիթ է ունեցել մի ուղևորության ընթացքին ծանոթանալ մի քանի հրեաների հետ, որ արտաքսված էին Սիրիայից Մուավիայի որդի Եզիդ [I-ի] օրով (680-683): Լևոն Իսավրացին նրանց ազդեցության ներքո սկսեց թշնամական վերաբերում ցույց տալ պատկերների հանդեպ: Հրեաներից մեկը, որպես թե կատակով, գուշակել էր, թե Լևոնը մի օր գահ պիտի բարձրանա և երդում էր առել, որ ոչնչացնե պատկերապաշտությունը[1]: Թեոփանեսի ասելով, երբ Լևոնը կայսր դարձավ, հիշեց իր խոստումը: Մի հրեա Փյունիկեի Լավոդիկիա քաղաքից, որին կոչում էին *Σαραντάπηχυς*՝ բառասուն կանգուն վիթխարի հասակի համար, և որ մոտ բարեկամն էր Եզիդ [II] խալիֆի (720-724), հավատացրեց խալիֆին, որ երեսուն տարի (ըստ Թեոփանեսի 40 տարի) կթագավորե, եթե վերացնե պատկերապաշտությունը: Եզիդ խաբված՝ հրաման արձակեց նույն մտքով: Սակայն ինքը շուտով մեռավ, հակառակ մարգարեության: Քսան տարի անցավ և գահ բարձրացավ Եզիդի որդին՝ Վալիդ [II] (743-744), որը սուտ մարգարեին պատժեց՝ մահվան տալով իր խաբեբայության համար:

Լևոն [III-ը] նախանձով էր նայում մուսուլման տիրակալների նախաձեռնությանը մի խնդրում, որ մոտ էր իր սրտին: Մի սիրիացի *Βησήρ* անունով, օգտվեց Լևոն [կայսեր նման] պատրաստի տրամադրությունից և

---

[1] Հրեան իբր թե մի օր ասել է նրան. «Բարեկամս, եթե իրոք կայսր լինես, դու հարկավ կոչնչացնես բոլոր այս պիղծ պատկերները»:

նրան մղեց գործի: Բեսերը ծնված էր քրիստոնյա, գերի էր ընկել արաբների ձեռքը, կրոնափոխ եղել և փրկվել ստրկությունից: Մարմնավոր ուժի և ճարպկության շնորհիվ ընկնում է կայսերական դուռը և սադրում Լևոնին պատկերամարտության: Մյուս գործակիցներն էին Փոյուգիայի Նակոլիա քաղաքի եպիսկոպոս Կոստանդինը, Կլավդիոպոլիս քաղաքի եպիսկոպոսը, Թովմասը և Եփեսոսի արքեպիսկոպոս Թեոդոսիոսը, որ էր որդի Տիբերիոս III կայսեր[1]:

726 թվին Լևոն [III-ը] արձակեց իր հրամանագիրն ընդդեմ պատկերապաշտության, հայտարարելով, որ ինքը և կայսր է և նվիրապետ *βασιλεὺς καὶ ἱερεύς εἰμί*:

Հրամանագիրը մեզ չի հասել և դժվար է որոշել բուն իմաստը: Մայրաքաղաքում և արևմտյան երկրներում՝ Իտալիա, Հունաստան և կղզիներ, մեծ ցույցերով ընդդիմացան հրամանին: Վերջիններս անգամ ապստամբություն հայտարարեցին և ոմն Կոզմասի կայսր ընտրեցին և մի նավատորմով ղրկեցին Լևոն [III-ի] դեմ, սակայն 18 ապրիլի 726 թվին ձախողեցին[2]:

[Կայսրության] արևելյան մասը խաղաղ մնաց: Պատրիարք Գերմանոսը միայն 730 թվին ստիպված էր հրաժարվել գահից և քիչ հետո խեղդամահ եղավ: Նրա հաջորդը՝ Անաստասիոս Սինկելլոսը համակերպվեց կայսեր քաղաքականության:

Ասորական արևելքից պատկերամարտության դեմ եղավ Հովհան Դամասկացին: Առաջին ճառը արտասանված է 726 թ., երկրորդը՝ 730 և երրորդը՝ քիչ հետո[3]: Սրա տեսության հիմնական հղվածներն են, որ Աստված, անտարակույս, անտեսանելի, անպարագիր և անմարմին է և ուրեմն չի կարելի նրան ներկայացնել որևէ զգայական պատկերով, թեև մարգարեներին երևում է շոշափելի ձևով[4]:

Սակայն Աստված մարդացել է և ուրեմն կարելի է նրան նաև նկարել և ներկայացնել մարդկային ձևի տակ. *οὐ τὴν ἀόρατον εἰκονίζω θεότητα, ἀλλ᾽ εἰκονίζω θεοῦ τὴν ὁραθεῖσαν σάρκα*[5] «Ոչ եթէ զանտեսանելին

---

[1] **Mansi**, t. XIII, 100 և հտ., ուր հիշվում են առաջին երկուսը, Թեոդոսիոսի մասին տես **Mansi**, t. XII, 967.

[2] **Nicephori**, p. 1-77

[3] **Migne**, P[atrologia] G [racca], t. 94, col. 1232-1420.

[4] Նույնը, I, 4; II, 7, 11; III, 4, 9, 24:

[5] Նույնը, I, 4, 16; III, 6:

պատկերացուցանեմ Աստուածութիւն, այլ պատկերացուցանեմ զտեսանելի մարմինն Աստուծոյ»: Այսպես և պատկերացնել կարելի է նաև Ս. Կույսին և սրբերին և ընդհանրապես բոլոր մարմնավոր էակներին[1]: Նույնը և հրեշտակների, դևերի և մարդկային հոգիների նկատմամբ: Ճիշտ է, համեմատելով երկրային մարմինների հետ սրանք աննյութ են, սակայն մարմին ունեն (*σώματα*), եթե համեմատենք Աստծո հետ այն մտքով, որ սահմանափակ են, որոշ տեղ են բռնում և շոշափելի ձևով էլ երևացել են մարգարեներին և արդարներին[2]: Պատկերագրությունն ուրեմն թույլատրելի է, սակայն վեճի էական մասն այն է, թե գործածության ի՞նչ [ոլորտ] պիտի ունենա նկարը: Կան, որ հենվելով Ս. Գրքի վրա, ընդհանրապես դեմ են պատկերի գործածությանը: Դամասկացու կարծիքով, Ս. Գիրքը նախ հետևողական չէ, անպայման ընդդեմ չէ, երկրորդ՝ պարտավորիչ չէ, քանի որ մենք գտնվում ենք ոչ թե հին օրենքի, այլ շնորհի տակ:

Ի՞նչ վերաբերում պիտի ցույց տալ ինչպի պատկերները: Դամասկացի զանազանում է տոկ հարգանքը պաշտամունքից: Տալ հարգս արժանավորին, երկրպագել *προσκύνησις τιμητική* այլ է, և այլ *ἡ τῆς λατρείας προσκύνησις*, կամ պաշտամունք իսկական: Ուրեմն որոշելու է պատկերահարգությունը պատկերապաշտությունից, սովորական հարգանքը, սերը, ակնածությունը կամ պատկառանքը՝ կրոնական պաշտամունքից (Տիրոջ պատկերին կամ Ս. Կույսի և կամ սրբերի, նրանց նշխարների, խաչի տված հարգանքը կրոնական է):

Դամասկացին ավելացնում է նաև, որ անգրագետների համար նկարը գիրք է. *ὅπερ τοῖς γράμμασι μεμνημένοις ἡ βίβλος τοῦτο καὶ τοῖς ἀγραμμάτοις ἡ εἰκών*[3]:

Պատկերներն այս մտքով հիշեցնում են և կենդանի պահում Տիրոջ Տնօրենությունն և վերջապես քաջալերում են մեզ նմանել սրբերի օրինակին: Դամասկացու մյուս տեսությունն այն է, որ սուրբ անձանց պատկերները ներկայացնելով, դրանք [պատկերները] կարծես մի տեսակ սրբանում են, շնորհ են ստանում. *χάρις δίδοται θεία ταῖς ὕλαις διὰ τῆς εἰκονιζομένων προσηγορίας*[4]:

Լևոն [III-ը] մեռավ 741 թվի հունիսի 18-ին, առանց կարողանալու զգալի հարված տալու պատկերապաշտությանը: Միայնակի Փոքր Ասիան էր նրա հենարանը: Նրա որդին՝ Կոստանդին [V] Կոպրոնիմոսը, որոշեց իրագործել հոր ծրագիրը: Առաջին տարին Արտավազդի (7) ապստամբությունը արգելք

[1] **Migne**, P[atrologia] G [raeca], I, 19; III, 24.

[2] Նույնը, III, 25:

[3] Նույնը, I, 17, (col. 1248c):

[4] Նույնը, I, col. 1264; I, 16; II, 14:

եղավ: Արտավազդը հաջողեց տիրանալ մայրաքաղաքին և վերականգնել պատկերների պաշտամունքը 741 թվին: Սակայն Արտավազդի հաղթանակը ժամանակավոր էր: Կոստանդին [V-ը] զորեց [ընկճեց] իր հակառակորդին և մայրաքաղաք մտավ 742 թ. նոյեմբերին: Սպասեց վայր մի [մի պահ] մինչև որ իշխանությունը հաստատեց վերջնականապես և 743 թվին նորեն կրոնական գործին կպավ:

Կոստանդին [V] զգաց, որ ամենից առաջ հարկավոր էր ժողով գումարել և հոգևորականության հավանությունը երաշխավորել: Այնուհետև միայն պետությունը կարող էր հիմնել իր աենելիքը ժողովի վճիռների հիման վրա: Հիերիայի (Hieria) պալատում 753 թվի փետր[վարի] 10-ին գումարվեց ժողով՝ մասնակցությամբ 338 եպիսկոպոսների: Բացակա էին Անտիոքի, Երուսաղեմի և Ալեքսանդրիայի պատրիարքությունները, ինչպես և [Հռոմի] պապը չուներ իր ներկայացուցիչները: Նախագահում էր Եփեսոսի Թեոդոսիոս արքեպիսկոպոսը: Դժբախտաբար ժողովի արձանագրությունները մեզ չեն հասել, մնացել են միայն որոշումները (*ὅρος*) և նզովականները՝ պահպանված VII ժողովի (787 թ.) գործերի մեջ[1]:

Ժողովը գտնում է, որ

1. Անկարելի է և անթույլատրելի կրոնական պատկերներ շինել, գործածել և պաշտել: Եթե մեկը ձգտե Հիսուս Քրիստոսին ներկայացնել ամբողջովին և որպես Մարդ և Աստված միաժամանակ, դրանով կպարագրե, կպարփակե աստվածայինը և կշփոթե բնությունները: Կամ եթե ձգտե ներկայացնել Քրիստոսի միայն մարդկայինը, նա դրանով կբաժանե սյն, ինչ որ պետք է միացած լինի, այսինքն՝ կկազմե մի մարմին *ἀθέωτος*. ուրեմն կմեղանչե նեստորականության մոլորությամբ: Հետևապես, ով որ պաշտե այսպիսի մի պատկեր, հաղորդակից կլինի նույն մոլորության: Միակ պատկերը, որ Հիսուս Քրիստոս մեզ է ավանդել, ինքն է՝ հաղորդությունը, հաց և գինի:

2. Գալով Ս. Կույսի և սրբերի պատկերներին, անթույլատրելի են եկեղեցու կողմից, որ խորշում է կուռքերի կռապաշտությունից: Ժողովը կարծում է, որ սրբերի պատկերներ շինելը ոչ մի կերպ չի կարելի բարեպաշտություն համարել, քանի որ սրբերն ապրում են Աստծո հետ և ամբարիշտություն է պատկերների միջոցով երկատել նրանց երկնային կյանքը: Ոչ թե հարգել, այլ անարգել է նշանակում նրանց լուսավոր անձերը պատկերացնել պիղծ նյութի միջոցով:

---

[1] **Mansi**, t. XIII, 208-356. վեցերորդ նիստի արձանագրությունները, ուր բերված են որոշումները և նրանց հերքումները:

3. Ժողովը պատվիրում է, որ բոլոր պատկերները՝ նկարած, թե այլ կերպ շինած, պետք է հանել եկեղեցիներից, որպես խոտելի և կշտամբելի հավատի տեսակետից: Ով որ համարձակվի շինել կամ պաշտել կամ եկեղեցում կախել, կամ դնել իր տանը և կամ ծածուկ պահել, կարգալույծ կլինի, եթե եպիսկոպոս է, քահանա կամ սարկավագ, և կբանադրվի, եթե աշխարհական է կամ վանական[1]:

4. Զգուշացնում է ոչնչացնել սրբազան պատկերազարդ անոթները՝ պատկերամարտության պատրվակով:

5. Նզովք՝ Գերմանոս պատրիարքին, Գևորգ Կիպրացուն և Մանսուրին [Հովհաննես Դամասկացուն]:

Կոստանդին [V] կայսրը մեռավ 775 թվի սեպտեմբերի 14-ին: Պատկերապաշտների բանակը տակավին հաղթված չէր: Արևմուտքում Հռովմը դեմ եղավ 769 թվի Լատերանի ժողովին, իսկ Արևելքում՝ Երուսաղեմում, 767 թվին գումարվեց ուրիշ ժողով, երեք պատրիարքությունների ներկայացուցիչներից, դարձյալ ընդդեմ պատկերամարտության:

Այս վերջին հանգամանքը վկայում է պերճորեն, որ պատկերամարտության շարժման դրդիչները որոնել Սիրիա և Եգիպտոս անհիմն է: Շարժման բույնը Փ[ոքր] Ասիան էր: Արտավազդի օրինակը ցույց է տալիս, որ քաղաքական նկատառումներն էին առաջնորդում գործիչներին, եթե հարում կամ խորշում էին պատկերամարտությունից: Այդ օրինակը չի կարող հիմք համարվել ո՛չ Փ[ոքր] Ասիայի և ո՛չ էլ հայերի իսկական դիրքը որոշելու շարժման մեջ: Երևում է, որ շարժումը ազգայնական դրոշակ չուներ, այլ ազատամտական երևույթ էր, որ համակրողներ ուներ ամենուրեք և մասնավորապես Հալիսի և Եփրատի ափերին, պավլիկյանների ազդեցության տակ և նրանց հետևողությամբ:

Կոստանդին [V-ի] որդին՝ Լևոն [IV] Խազարը շարունակեց հոր քաղաքականությունը: Երբ 780 թ. սեպտեմբերի 8-ին մեռավ, կինը աթենացի Իրենեն, անցավ կառավարության գլուխ, որպես խնամակալ իր մանուկ որդու Կոստանդին [VI] Ծիրանածնին: Իրենե պատկերապաշտ էր և ամեն ջանք գործեց ջնջելու 753 թվի ժողովը: 784 թվի դեկ[տեմբերի] 25-ին պատրիարքական գահը վիճակվեց Տարասիոսին, որ կայսերական քարտուղար էր և համամիտ Իրենեի:

---

[1] Հալածանքների և մանավանդ նահատակների մասին վրույցները խիստ չափազանցված են: Հազիվ մի քանի անուններ են թվում, որոնցից կարևորագույնն է թերևս Ստեփանոս Կրտսերը (տես **Migne**, t. 100, col. 1120):

786 թվի օգոստոսի 17-ին տեղի ունեցավ առաջին ժողովը, բայց անհաջող: Պահակ զորագունդը ընդդիմանում է թագուհու ձեռնարկին: Սա ստիպված էր արձակել ժողովը: Երկրորդ ժողովը զգուշությամբ նշանակվեց Նիկիա քաղաքում՝ 787 թվի սեպտ[եմբերի] 24-ին, որ և կոչվեց **յոթներորդ** ժողով: Ներկա էին 333-337 անձն: Այստեղ էին Հռոմի պապի երկու ներկայացուցիչները, իսկ Երուսաղեմի, Անտիոքի և Եգիպտոսի պատրիարքները անհաղորդ էին, թեև երկու վանական՝ Հովհաննես և Թովմաս, ինքնակոչ իրենց համարում էին նույն վիճակների հոգևորականության բերան: Ժողովի ութ նիստերից միայն երկուսը զբաղվեց մեզ հետաքրքրող հարցով: Դ-րդ նիստին (հոկ[տեմբերի] 1-ին) կարդացին Ս. Գրքի վկայությունները, ինչպես և Ս. Հայրերից քաղվածքներ, որ ի նպաստ էին պատկերների:

Ժողովը ընդունեց, որ կարելի է համբուրել խոնարհաբար (*ἀσπαζόμεθα*) խաչի նկարը, և հետևելով եկեղեցու ավանդություններին՝ հարգանք մատուցանել (*τιμητικῶς προσκυνοῦμεν*) Տիրոջ, Ս. Կույսի, հրեշտակների պատկերներին և նույնպես սրբերի[1]: Ջ-րդ նիստը նվիրված էր 753 թ. Հիերիայի ժողովի որոշումներին և նրանց հերքման[2]: Է-րդ նիստը ձևակերպեց ժողովի որոշումները[3]: Ժողովը սահմանեց, որ խաչի, Տիրոջ, Ս. Կույսի, հրեշտակների և սրբերի պատկերները ցուցադրելի են և կարելի է համբուրել և մատուցանել նրանց հարգանքի երկրպագություն (*ἀσπασμὸν καὶ τιμητικὴν προσκύνησιν*), միայն Աստծուն վերապահելով պաշտամունքի երկրպագությունը (*τὴν ἀληθινὴν λατρείαν*): Բացի սրանից, պատկերների առաջ կարելի է խունկ ծխել, մոմեր վառել, ինչպես անում են խաչի և Ավետարանի առաջ, այն հավատքով, որ պատկերին մատուցած հարգանքը վերաբերում է իրապես պատկերի ինքնատիպին[4]:

Վերջին նիստը տեղափոխեցին մայրաքաղաք, այն կայացավ Magnaura պալատում 787 թվի հոկ[տեմբերի] 23-ին, որից հետո ձեռնամուխ եղան անհետացնելու պատկերամարտների գրությունները:

Ժողովի որոշումներից երևում է, որ արդյունքը չէ համապատասխանում հարուցած աղմուկին և, որ Ս. հայրերը ստիպված են եղել բռնել միջին ճանապարհը՝ մեծ զիջումներ անելով իրենց հակառակորդներին: Նախ Հայր Աստծո պատկերը չի հիշվում բնավ: Ասել է, թե պատկերամարտների տեսությունը այս կետում հաղթանակել է: Հիսուս Քրիստոսի նկարը թույլ տալը բացատրվում է Մարդեղության պարագայով: Բացի սրանից, ժողովն

---

[1] **Mansi**, t. XIII, 1-156.

[2] Նույնը, 204-364:

[3] Նույնը, 364-413:

[4] Նույնը, 377:

իրապես ընդունում է հակառակորդների տեսակետը, որ պատկերները պաշտելի չեն, այլ միայն հարգելի: Այլ է հարգանք, այլ է կրոնական պաշտամունք: Գուցե ծայրահեղ պատկերամարտներ կային, որ ժխտում էին անգամ հարգանքը, սակայն կային և ծայրահեղ պատկերապաշտներ, որոնք պատրաստ էին պաշտել պատկերները, որպես իրական սրբություններ, ինքնատիպը փոխարինող: *τιμή* և *λατρεία* գաղափարները պարզելուց և միմյանց զատելուց հետո, իսկապես վեճը կրոնական մտքով վերջացած պետք է համարել և դժվար է ասել, թե հաղթանակը որի կողմն է՝ պատկերապաշտների, թե պատկերամարտների: Ամբոխը չի սիրում և չի կարող միջին գծի վրա կանգնել: Պատկերահարգությունը դարձավ պատկերապաշտություն, և սա է հաղթողների կասկածելի առավելությունը հանդեպ իրենց հակառակորդների, որոնք զգալով այս կսրելիությունը, ընդդիմանում էին պատկերների գործածությանը:

Յոթներորդ տիեզ[երական] ժողովը (787 թ.) մի նշանավոր մոմենտ է պետության և եկեղեցու հարաբերությունների և պատմության մեջ[1]: Ժողովին նախագահեց ինքը՝ պատրիարքը, փոխանակ կայսեր: Այս զիջումը բացատրելու է մասնավորապես նրանով, որ պատրիարքը՝ Տարասիոս, պետական նախկին պաշտոնյա էր, աշխարհականությունից կոչված պատրիարքական աթոռ, և վայելում էր կայսեր վստահությունը: Ամեն պարագային այս ժողովը մի նոր սկզբունք առաջ բերավ, որ դավանաբանական խնդիրները ենթակա են եկեղեցու իրավասության և եկեղեցին միանգամայն անկախ է այսպիսի վեճերում պետության միջամտությունից: Մյուս հարցերում, որ վերաբերում են օրենսդրության և վարչության, կայսրը պահում է իր վճռական ձայնը: Հայտնի է, որ Կոստանդին Մեծի օրվանից կայսերական իշխանությունը հենվում էր եկեղեցու վրա, որպես պետական մի գործակալության վրա: Կայսրը, ինչպես հայտարարում էր Կոստանդին V Կոպրոնիմոսը, «և՛ կայսր է և՛ նվիրապետ»: Եկեղեցական ժողովները կայսրերն էին գումարում և իրենք էլ նախագահում, ինչպես մի տեսակ ծերակուտական ժողով: Ընդունված էր, որ եկեղեցական ժողովների սահմանած կանոնները արժեք ունեին միայն այն ժամանակ, երբ անցնում էին կայսերական օրենսդրության խողովակով և հայտարարվում էին որպես օրենք: Երբեմն գումարվում էին խառն ժողովներ՝ պետական և եկեղեցական պաշտոնյաներից: Եկեղեցու մեջ հաճախ ձայներ էին լսվում և ճիգեր թափվում, որ եկեղեցին ազատ համարվի պետության ճնշումից և գործն որպես անկախ և ինքնուրույն մի

[1] **H. Gelzer,** Das Verhältniss, p. 193.

հաստատություն: Երկու հակադիր և ծայրահեղ հոսանքների մեջ հաշտարար դիրք էր բռնել երրորդ ուղղությունը, որին կողմնակից էր և Տարասիոս: Նա ևս պնդում էր, որ եկեղեցին անկախ ճանաչվի գեթ դավանաբանական կնճիռները հարթելիս: 787 թվի ժողովը Տարասիոսի գործն էր և այս քաղաքականության հաղթանակն էր: Տարասիոս պատրիարքը մեռավ 806 թվի փետր[վարի] 25-ին: Նիկեփոր կայսրը, որ գոհ էր Տարասիոսի վարքագծից, խորհեց նրան հաջորդ ընտրել դարձյալ աշխարհական փորձառու անձերից: Հարմարագույնն էր նկատվում Նիկեփոր (8), որն, ինչպես հանգուցյալ Տարասիոս, կայսերական առաջին քարտուղարն էր *πρωτοσεκρήτης:* Նիկեփոր կայսրը զգալով, որ վանականությունը կարող էր ընդդիմանալ իր ընտրությանը, քաղաքագիտորեն նախապես դիմեց Թեոդորոսին՝ Ստուդիոսի վանահորը, և հարցրեց նրա կարծիքը պատրիարքական ընտրությունների վերաբերյալ: Թեոդորոս ջատագով էր եկեղեցու կատարյալ անկախության աշխարհական իշխանություններից: Նա վերակազմել էր վանական կյանքը և կարողացել էր ստեղծել վանականության մի ահավոր ուժ: Ստուդիոսի վանքը հաշվում էր մինչև 700 կրոնավոր (ըստ այլ տեղեկության՝ 1000): Թեոդորոսը այն միտքը հայտնեց, որ պատրիարքական աթոռին վայել ժառանգ ընտրելի է միշտ վանականներից, որը պետք է գոհացնի նրանց պահանջները: Նա պետք է լինի առաքինի, բարեսեր, իսկական եկեղեցական, որ անցել է աստիճանաբար եկեղեցական նվիրապետության ամբողջ սանդուխը: Ասել է, թե Թեոդորոս ընդդեմ էր Նիկեփորի ընտրության և ավելի ինքն իրեն էր առաջարկում: Նիկեփոր կայսրը Թեոդորոսին և վերջինս հորեղբայր [Սակկուդիոնի վանահայր] Պլատոնին 24 ժամով բանտարկեց, որպեսզի չխանգարեն Նիկեփորի ձեռնադրության, որ տեղի ունեցավ Զատիկին՝ ապրիլի 12-ին:

Խռովարար Թեոդորոսը գլուխ բարձրացրեց շուտով մի ուրիշ առիթով: Կոստանդին VI-ը բաժանվել էր իր կնոջից՝ [Մարիայից], և վերստին ամուսնացել Թեոդոտե անունով կնոջ հետ 795 թվին: Կոստանդինի անկումից հետո Իրենե դրդեց Տարասիոս պատրիարքին հայտարարելու, որ Կոստանդինի վերամուսնությունը ապօրինի էր, և Հովսեփ վանահայրը, որ կատարել էր պսակադրության կարգը, արժանի է պատժի: Տարասիոսի կենդանության խնդիրը մնաց առկախ, քանի որ ինքն ևս անմասն չէր ապօրինի համարված գործին: Հենց որ [Տարասիոս] մեռավ, հին հարցը վերստին երևան եկավ: Կարևորը, հարկավ, ա ւն չէր, թե մեռած կայսրը տարիներ առաջ ի՞նչ ապօրինի գործ է կատարել: Սկզբունքային հարց էր, որ հրապարակ էր հանվում: Կայսրն իրավունք ունի՞ ոտնակոխ անելու եկեղեցական կանոնները: Ստուդիոսի վանական միաբանությունը պնդում էր, որ կանոնը վեր է, աստվածային օրենքը պարտավորեցուցիչ

բոլորի համար, և արքայական ծիրանին անգամ բացառություն չի կարող կազմել: Պետական իշխանության տեսակետն էր, որ կայսրը բարձր է, ինչպես աշխարհական, այնպես էլ եկեղեցական օրենսդրությունից: Խնդիրը քննվեց 809 թվի հունվարին գումարված աշխարհական և եկեղեցական պաշտոնյաներից գումարված խառն ժողովում, ուր պետական տեսակետը վեր առավ: Խոովարար վանականները, Թեոդորոս և Հովսեփ եղբայրները և իրենց հորեղբայր Պլատոնն աքսորվեցին. կայսրը Ստուդիոսի միաբանությունը ևս ցրեց:

Նիկեփոր կայսրը կրոնական նկատումով թվում է, թե անտարբեր էր, անկրոն ոմն էր, ոչ պատկերների դեմ էր և ոչ թեր, հաշտ աչքով էր նայում անգամ պավլիկյան և մյուս աղանդների վրա: Այս է պատճառը, որ նրան գաղտնի կապեր են վերագրում պավլիկյանների հետ, մանավանդ, աթինգանների[1] (9): Նիկեփոր սնած էր Պեսիրես, ուր բավականին զորեղ աղանդավոր համայնքներ կային: Լուր էր տարածված, որ Վարդանի (10) ապստամբության ժամանակ աղանդավորներն ի նպաստ Նիկեփորի **ցուլ են զոհել** (taurobole) և այլ հուռութներ գործել (Վարդանի շորերը ջրաղաց նետել): Թեոփանեսը նշում էր, թե Նիկողայոս անունով մի վանական «մեր առջև անարգելով սրբապատկերները, սկսեց ազատ քարոզել պատկերապաշտության դեմ՝ բնակվելով քաղաքի դռան մոտ մի խցում, իսկ իշխանություններն անտարբեր էին»[2]: Նիկեփորին կրոնը հետաքրքրում էր պետականորեն, այսինքն՝ որքան որ այն կապ ուներ պետության հետ, [իսկ] անձնապես անտարբեր էր:

Նիկեփոր և իր հաջորդը՝ Միքայել [I] Ռանգաբե մնացին ընդհանուր առմամբ նույն տողի վրա, որ գծել էր Իրենե: Պատկերամարտությունը սակայն խեղդված չէր: Առիթ էր հարկավոր, որ նորեն առկայծեր մոլեռանդության գաղտնի հուրը: Միքայել [I-ի] անհաջող արշավանքը բուլղարների դեմ 812 թվին, առիթ տվավ պատկերամարտությանը հրապարակ ելնելուն:

---

[1] Athingani կոչված աղանդավորները պավլիկյաններին մոտ էին: Կարծում են, որ սրանց անունը ծագում է Պողոսի առ Կողոսացիս II , 21 թղթի μηδὲ θίγῃς արտահայտությունից ἀθιγγάνειν այստեղից և ἀθίγγανος նոր հունարեն նշանակում է գիպսե, գնչու: Սակայն ավելի հեշտ կլիներ Zigeuner և ἀθίγγανος կապել իրանական[ան] čingana-k-ի հետ ճիճանման մարդ (հայերեն գնչու, փոխանակ չնգու), հմմտ. kurd-mana, turk-man և այլն:

[2] **Theoph.** Nic., A.M., 6303. Այս Նիկողայոս թվում է այն համանուն անձն էր, որի մոտ հյուրընկալվեց Նիկետաս Մենակյացը՝ Թեոդորա թագուհու ազգականը: Որովհետև Նիկողայոսի համար ասված էր προσγενής, նշանակում է նա ևս հայ էր:

787 թվի ժողովով պատկերապաշտության շուրջ հարուցված վեճերը և կրքերը չխաղաղվեցին: [Հաստատվեց] հոգնած ուժերի ժամանակավոր դադար: Նիկեփոր կայսրը միջին ճանապարհն էր ընտրել: Ընդունելով հանդերձ Նիկիո ժողովը, գտնում էր, որ հակառակորդները պարտավոր չեն բոնի պաշտելու պատկերները: [Նրանք] ունեին որոշ ազատություն, պայմանավ միայն, որ անարգանք չհասցնեն պատկերներին:

Լևոն [V] կայսրը ուրիշ քաղաքականության հետևեց: Անշուշտ, պատկերամարտները ուժեղացել էին կամ ժամանակավոր դադարից հետո գլուխ էին բարձրացրել և այնքան ազդեցիկ էին, որ գահակալը ստիպված էր հետևելու նրանց:

Թշնամի մատենագիրները հավատացնել են ուզում, որ Նիկեփոր պատրիարքը գրավոր խոստումն է պահանջել ուղղափառության համար և, որ Լևոն [Հայկազնը] խոսք է տվել, բայց հետո դրժել (Incert., Sym.): Ուրիշներն էլ ասում են, որ կայսրը խոստացել է դա անել թագադրության ժամանակ[1] և վերջապես կան աղբյուրներ, որ [նշում են, թե] Նիկեփոր պատրիարքը «Հավատոյ Թուղթ» (*τόμος*) է պատրաստել և ներկայացրել Լևոն Հայկազնին: Սա (կայսրը) հավանել է, խոստանալով թագադրությունից հետո ստորագրել այն, սակայն թագադրության երկրորդ օրը մերժել է[2]:

Իրողություն է, որ Լևոն Հայկազնը միայնակ չէր, եթե անգամ ընդունենք, որ նա անձամբ պատկերապաշտության վրա մեծ համարում չուներ: Իսավրյանների ժամանակ երկիրը բարգավաճ վիճակի մեջ էր՝ ներսը՝ թե պատերազմի դաշտում: Մինչդեռ, 787 թվից հետո գործերը զգալիորեն վատթարացել էին: Հասարակական կարծիքը, ամբոխային տրամադրությունն այստեղից որոշ եզրակացություններ էր հանել, թե երկինքը հաշտ աչքով էր նայում պատկերամարտության վրա: Հավատացնում էին, որ

---

[1] **Vita Theod.**, 665.

[2] **Ignatii**, Vita Niceph., Patr., 163. Լևոնը գահ բարձրացավ 10 հունիսի VII ինդիկտիոնի, տե՛ս Scr[iptor], Inc[ertus], 340. Նաև **Հոլիան**., p. 349 ստ՝ Παγκράτιον τινὸς σκιαστοῦ ὅστις ἐκ παιδόθεν δαίμονα οἰκεῖν ἀτάκτως φερόμενος, διάνων ἐν ἀσυνεσία, ὃν τινα, Ὑλιλᾶν ἐπωνόμαζεν, ὡς τινές φασιν, ἑρμενευόμενον Ἑβραϊστὶ λέγεται πρόδρομος καὶ συνεργὸς τοῦ διαβόλου. Նույնը՝ p. 350, εὗρον Κωνσταντῖνον, υἱὸν πρεσβύτερου τινὸς τζαγγαρίου, καὶ Κασυματᾶ μαθόντα τὴν γραμματικὴν καὶ ἐπονομασθέντα Ἀντώνιον. Սկզբում վանահայր Μετροπολίτων կոչված վանքի, հետո եպիսկոպոս՝ Συλαίου.

Լևոն Հայկազնը կամենալով նմանել Լևոն Իսավրացուն, ուստի Սմբատ որդու անունը փոխեց Կոստանդինի՝ հայտարարելով նրան Ավգուստոս՝ 813 թվի վերջը: Փիլոմելիոնի վանքի անապատականի գուշակությունն իրականացել էր: Լևոն Հայկազնը որպես թե մարդ է ղրկում շնորհակալություն հայտնելու, բայց նա արդեն մեռած էր և նրան հաջորդել էր մի ուրիշ՝ Symbatios (Սմբատ) (և ոչ Սաբբատիոս) անունով վանականը[1]:

Սա պատկերամարտ էր և Իրենե թագուհուն անվանում էր ընձուհի [յագուար] և բակքանդ՝ մոլեկան [տռփական], իսկ Տարասիոս պատրիարքին՝ Տարախիոս (Շփոթեցնող): Վանականը պատգամ տվավ, որ «Եթե Լևոնը չկործանի պատկերապաշտությունը, Աստված պիտի տապալե նրա գահը»: Լևոն Հայկազն կայսրը շփոթված այս մարգարեությունից խորհրդակցում է Թեոդոտոս Կասսիտեր(աս) ի հետ: Սա վճռական կարծիք չէ հայտնում և խորհուրդ է տալիս դիմել Անտոն անունով մի ուրիշ հայտնի վանականի, իսկ ինքը ծածուկ նախազգուշացնում է Անտոնին: Երբ կայսրը գիշերով ծպտյալ գալիս է սրա մոտ, վանականը[2] ասում է, որ եթե Իսավրացու հավատը վերականգնե, կթագավորե մինչև 72 տարեկանը[3]:

Լևոնի խորհրդատուներ էին, բացի Սմբատ և Անտոն ճգնավորներից, Հովհաննես Քերականը՝ իր ժամանակվա ամենակրթված անձնավորություններից մինը: Սրա փութ [կարճառոտ] անունն էր *Ὑλίλας* Hylilas կամ Hylzilas, երբայեցերեն որպես թե *πρόδρομος καὶ συνεργὸς τοῦ διαβόλου*. Սա էր որդի *Παγκρατίου τινὸς Σκιαστοῦ*[4] և պատկանում

---

[1] Այս վանականի պատասխանը խիստ էր. «Գնացե՛ք ասացեք, որ ես կռապաշտից ևվեր չեմ ընդունում և որ ինքը շուտով մեռնելու է, քանի որ տառապում է, որ մարդիկ պաշտում են սնոտի իրեր»: Լևոն Հայկազնը գանգատվում է ոմն Վասիլի, որ էր պատկերամարտ: Սա խորհուրդ է տալիս դիմել ուրիշ ճգնավորի:

[2] Անտոնը մերկացնում է ծպտյալի անձը և ասում նրան. «Եթե գնաք Լևոն Իսավրացու ուղիով, կթագավորեք մինչև 72 տարեկան. ներսը՝ խաղաղություն և դուրսը՝ հաղթություն: Կլինեք 13-րդ Առաքյալը և Չեր սերունդը գահ կնստի: Ապա թե ոչ՝ վաղահաս մահը Չեր բաժինն է»:

[3] Լևոն III-ը (717-741) թագավորեց 33 տարի: Եթե վանականը ուզում էր ասել, թե Լևոն V-ի թագավորությունը ևս պիտի տևե այդքան, այսինքն՝ 33 տարի, ապա նրա թագավորությունը պիտի շարունակվեր մինչև 846 թիվը (813+33 = 846), երբ Լևոնը կլիներ 72 տարեկան: Ասել է, թե Լևոն Հայկազնը ծնված է 774 թվին (846-72=774): Այդ ժամանակ նրա հայրը՝ Վարդը, արդեն հրապարակի վրա էր: Հետևաբար, 813 թվին Լևոնը պետք է լիներ 39 տարեկան (813-774 = 39):

[4] **Cedr.**, II, 144.

էր *Μοροχαρζανίοι* (Morocharzanioi կամ Morocardanioi) նշանավոր ընտանիքի[1]: Եղբոր անունն էր Արշավիր[2]: Երիտասարդ տարիներից սքեմ էր հագել, վանահայր էր Կ. Պոլիս Ս. Սարգիս և Բաքոս վկաների մենաստանին, որ պալատական եկեղեցի էր և որի հոգևորականությունը մտնում էր կայսերական կղերի կազմի մեջ: Նրան Իաննիս (*Ἰάννης*) էին անվանում, ակնարկելով ոչ միայն փարավոնի մոգին[3] (11), այլև, լեկանոմանտեսին, որպես թե լականով (տաշտով) գուշակություններ էր անում (12): Մի օր եկեղեցում, երբ կարդում էին Եսայի մարգ[արեի] 40-րդ գլ[ուխը]՝ «Ինչ կերպ եք երևակայում Ամենակարողին: Արհեստավորի ձեռքը կարո՞ղ է նրան ներկայացնել ոսկու և արծաթի միջոցով», Հովհան[նեսը] մոտեցավ կայսեր և շշնջած նրա ականջին. «Լսում ե՞ս մարգարեի խոսքերը (13), ամենևին մի զղջա սկսածդ գործի համար»:

Թեոդոտոս Կասսիտերաս կոչեցյալը Մելիսսենոսների տնից էր: Սրա հայրը **Միքայել** Անատոլիկոն [բանակաթեմի] ստրատեգ էր Կոստանդին V Կոպրոնիմոսի ժամանակ և Եվդոկիայի քրոջ հետ էր ամուսնացած, որ կայսեր երրորդ կինն էր[4]: Սա Հովհաննեսի բարեկամն ու համախոհն էր, երկուսն էլ Լևոն կայսեր խորհրդականներից:

Երրորդ կարևոր դեմքն էր Կոստանդին Կասսիմատ՝ Պամփիլիայի Սյուլլայոն (Syllaion) բնակավայրից: Հայրը քահանա էր, բայց վատ բարքի համար կարգազուրկ է եղել և պարապում էր կոշկակարությամբ[5]: Կոստանդինը մեծ ընդունակություն ուներ, մանավանդ գրական ձիրքեր և նուրբ ճաշակ: Սկզբում ուսուցիչ էր քերականության, հետո՝ իրավագիտության: Վերջը հոգևոր կոչում ստացավ և Անտոն անունով վանահայր էր մի նշանավոր վանքի: Անտոնը ուրախ բնավորության տեր էր, սրամիտ և լավ զրուցող, զվարճախոս: Հակառակորդները [նրան] համարում էին սրախոս, բամբասող և բավականին ճկուն՝ անխտիր ուղիներով կյանքի մեջ առաջանալու համար: Իրենեի, Նիկեփորի և Միքայելի ժամանակ որպես թե պատկերապաշտ էր եղել, այժմ փոխելով իր գույնը պատկերամարտության սյուն է դառնում և Լևոն կայսեր թելադրողը: Մյուս համախոհներից հայտնի

---

[1] **Theoph.** Cont., 154.

[2] **Scriptor Incertus,** p. 350-359; **Sym. Mag.,** p. 606; **Leo Gramm.**, p. 208-209, 221; **Vita Theodori**, col. 172, 277

[3] **Ք ռուք ատ Տիմոքես,** Գ, 8:

[4] Scriptor Incertus de Leone Armenio, p. 360. Եվ ոչ թե Եվդոկիա էր քույր Միքայելի, ինչպես պնդում է Lebeau, t. XIII, p. 15.

[5] Արդյո՞ք **կասի**-մատ չի նշանակում կաշեգործ:

էին Հովհաննես Սպեկտաս (Spectas) և ծերակուտական Եվտիքիանոս, այլև երկու վանականներ՝ Լեոնտիոս և Ջոսիմաս[1]:

814 թվի Հոգեգալստյան օրը Հովհաննես Քերականը հիշված անձերի հետ[2] ձեռնամուխ է լինում նյութեր մթերել 787 թվի ժողովի դեմ: Կայսեր բարեհաճ ցանկությամբ բոլոր գրադարանները դրված էին նրանց տրամադրության տակ: Գլխավոր աղբյուրն ի վերջո **753 թվի** ժողովի արձանագրություններն ու գործերն էին, որ ամբարված էին հին գրքերից և Ս. հայրերի [գործերից] քաղված վկայություններ՝ ընդդեմ պատկերապաշտության:

Նախապատրաստական գումարումները [խորհրդակցությունները] կայանում էին արքունիքում, ուր առանձին բնակարան էր հատկացված խորհրդական անդամներին: Հակառակորդներն ավելորդ չէին համարել հիշել, որ խորհրդական անդամները կերակուր էին ստանում արքայական ճոխ սեղանից և իրենց մարմինը պարարտացնում էին, որպես խոզեր[3]:

Սկզբնական խորհրդակցությունները կատարվում էին գաղտնի, և երբ հարցնող էր լինում, թե ինչով են զբաղված արքունիքում, պատասխանում էին, թե «կայսրը հանձնարարել է ստուգել հին գրքերի մեջ, արդյո՞ք որքան ճիշտ է, որ ինքը չուտով մեռնելու է և այս է մեր որոնումների նյութը»[4]:

Գաղտնի հանձնաժողովն իր զբաղմունքներն ավարտելուց (մինչև դեկտեմբեր) հետո կայսրը իր մոտ է կանչում պատրիարքին և աշխատում տնտղել նրա տրամադրությունը: Նա ասում է պատրիարքին. «Ժողովուրդը գայթակղություն է համարում պատկերը և սրա պատճառով է, որ երկինքը որպես պատիժ այդքան հաջողություն տվավ բշնամիներին պատերազմի դաշտում ընդդեմ մեր պետության՝ նախընթաց կայսրերի օրով: Պետք է լքել այս պաշտամունքը, որ էական չէ կրոնական տեսակետից և ոչ էլ կարելի է արդարացում գտնել Ս. Գրքի մեջ: **Ես աստվածաբան չեմ, ես կայսր եմ** և իմ պարտքս է հաշտեցնել մտքերը, այլապես պառակտումը կարող է մեծ խռովություն հարուցանել պետության մեջ: Թողնք բռնենք հաշտարար ուղին և ի հաճույս զորքի, վտարենք պատկերները»: Նիկեփոր պատրիարքը համոզվելով, որ ամեն մի զիջում նշանակ է պատկերամարտության, հակառակում է կայսրին, ասելով, որ պատկերի պաշտամունքը հինավուրց ավանդ է, հին՝ Ս. Գրքի չափ, նույնչափ էլ հիմն է ուղղափառ հավատի, և որ

---

[1] **Vita Nicetae**, XXIX.

[2] Հովհաննես Քերականն ու մյուսները ծածուկ պայմաններում սկսեցին աշխատել Հոգեգալուստից սկսած, իսկ Անտոնը՝ հուլիս ամսից մինչև դեկտեմբեր:

[3] **Ignatii**, Vita Niceph. Patr., 165.

[4] **Epist. Synod.** Orient ad Theoph., 373. **Migne**, t. 95, 345.

խաչի ու Ավետարանի մեծարումը ևս նախատեսված չէ Ս. Գրքի մեջ, սակայն ընդունելի է նույնիսկ պատկերամարտների կողմից: Կայսրն առաջարկեց պատրիարքին խորհրդակցել, առանձին ժողով գումարելով Հովհաննես Քերականին և նրան համամիտ գիտուն եկեղեցականների հետ և համաձայնության գալ: Սակայն համառ պատրիարքը մերժեց, առաջարկելով, որ խնդիրն արդեն պարզված է 787 թվի Նիկիո ժողովում և, որ նոր ժողովի կարիք չկա[1]:

Կայսրը զայրացած գոչեց. «Կորե՛ք այստեղից, կույր և անհնազանդ հոտ, որ մերժում եք ընդունել լույսը, որ տրվում է Ձեզ: Ես գիտեմ, ինչպես հնազանդեցնել Ձեզ»: Լևոնը թեև կարճահասակ էր, բայց այնպիսի մի ձայն ուներ, կարծես որոտ էր, և դեմքը, որքան բարեձև և ներդաշնակ գծեր ուներ, բարկության պահին կրում էր վայրագ և սարսափելի արտահայտություն:

Պատրիարքը հուզված հեռանում է և գիտենալով, որ պատկերամարտների գլուխ է կանգնած Սյուլլայոնի եպիսկոպոս Անտոնը, վերջինիս կանչում է իր մոտ, կամենալով ստուգել նրա դիրքը: Անտոնը հավատացնում է, որ ինքը պատկերահարգ է և հակառակ պատկերամարտների: Կայսրը լսելով Անտոնի վարմունքը կանչում և հանդիմանում է նրան՝ երկդիմության համար: «Տեր, - արդարանում է եպիսկոպոսը, - խոսք կարող եմ տալ միայն իմ կայսեր, մնացածը խաղ է: Ես ասացի նրանց այն, ինչ որ նրանք ուզում էին լսել, որպեսզի Ձեզ դյուրություն տամ անելու այն, ինչ որ վճռել եք»:

Մինչ այս, մինչ այն, մայրաքաղաքի պահագնդերից (tagwate) զինվորներն ազատություն էին տվել իրենց զգացումներին և անարգել Հիսուս Քրիստոսի պատկերը, որ դրված էր պալատի դռներից մեկի վերև, այն որ կոչվում էր Պղնձե դուռն: Պատկերի արձանագրություն ասում էր, որ խաչը կոտրել էին Լևոն Իսավրացու ժամանակ և վերանորոգել էր Իրենե: Չար լեզուներն ասում էին, որ այս քայլի գաղտնի ներշնչողն ինքն՝ կայսրն էր, որ կեղծորեն դուրս է գալիս և առաջարկում վերցնել խաչը, որպես թե ազատ պահելու անարգանքից:

Զինվորների ցույցերից հետո պատրիարքը գումարում է եպիսկոպոսների և վանականների ժողով, ուր երդվում են մնալ անհողդողդ Է-րդ ժողովի վճռի վրա: Այնուհետև պատրիարքը հայտնեց կայսրին, որ ինքը պատրաստ է թողնել աթոռը, եթե հաճելի չէ իր անձը, միայն թե եկեղեցին չխռովել նորամուծությամբ: Զինվորների ցույցը և պատրիարքի տեսակցությունը կայսեր հետ եղել է 814 թվի դեկտեմբերին՝ Ծննդյան տոների նախօրյակին[2]: Կայսրը չընդունեց պատրիարքի հրաժարականը,

[1] **Scriptor Incertus,** p. 352.

[2] Նույնը, էջ 355:

որպես թե Ծննդյան տոն էր և երկյուղ էր կրում, թե հանդիսության ժամանակ պատրիարքը կարող էր եկեղեցի չընդունել պատկերամարտ կայսեր: Այս տոնին կայսրը մեծ հանդեսով մտնում է եկեղեցի հագած ամենաթանկագին զգեստներ, բոլորած եպիսկոպոսների և աշխարհականների մեծ շարքերով: Կայսրը մոտեցավ սեղանին և համբուրեց սփռոցը (ծածկույթը), որի վրա ասեղնագործված էր Հիսուս Քրիստոսի ծնունդը պատկերող նկարը:

Սակայն կայսրը 815 թվականի Հայտնության օրից փոխեց իր վերաբերումը և ցույց չտվավ սպասելի հարգանքը պատկերներին: Միևնույն ժամանակ կայսրը պատրաստվում էր գումարելու ժողով և վերաքննել խնդիրն ի նպաստ յուր: Ամեն կողմից քաղաք էին թափվում պատկերամարտ վանականներ՝ Միկենայից, Եվբեայից, Կորնթոսից և այլ տեղերից: Քաղաք ժամանելուն սրանք առաջնորդվում էին դեպի կայսերական պալատը, նախքան պատրիարքին ներկայանալը, որպեսզի չենթարկվեն պատրիարքարանի ազդեցության:

Պատրիարքն իր կողմից պատրաստություններ էր տեսնում և զորեղացնում իր կուսակիցների թիվը: Հիշելու է մասնավորապես Ստուդիոսի վանահայր Թեոդորոսը, որ տարիներ առաջ Նիկեփորի հակառակորդն էր և այժմ միացել էին ընդդեմ ընդհանուր թշնամու: Պատրիարքի կուսակիցները ժողով են գումարում Ս. Սոփիա Մայր տաճարում և ամբողջ գիշերը հսկման մեջ անցնում: Կայսրին հաճելի չէր, ինչ որ կատարվում էր Ս. Սոփիայում: Ուստի հրամայեց, որ վաղ առավոտյան պատրիարքն իրեն ներկայանա և բացատրություն տա իր վարմունքի մասին: Տեսակցությունն այս անգամ փոխվեց իսկական վիճաբանության պատկերների հարցի շուրջը: Պատրիարքը խնդրեց թույլատրություն՝ ներկայացնելու իր հետ համամիտ հոգևորականությանը, որ նրանցից լսե վիճելի խնդրի ամբողջ փաստաբանությունը: Երբ ժողովեցին, կայսրը սկսեց խոսել. «Ի նկատի ունենալով, որ կասկածներ են հարուցել պատկերապաշտության շուրջը, և Ս. Գրքի վկայությունները ևս նպաստավոր չեն ընդունված սովորության, անհրաժեշտ է միանգամ ընդմիշտ պարզել, լուծել խնդիրը, որպեսզի հնարավոր լինի մեզ համար այսուհետև կատարել մեր մեծ պարտքը, որ է պահել եկեղեցու միությունը»[1]: Եպիսկոպոսներից ոմանք պատրաստ էին համակերպվել, ուրիշները տեսնելով պատրիարքի տոկունությունը, առ ոչինչ էին համարում կայսեր սպառնալիքները և համարձակ ընդդիմախոսեցին: Ստուդիոսի Թեոդորոսին է վերագրվում այն խոսքը, թե կայսրը իրավունք չունի միջամտելու եկեղեցական գործերի մեջ: «Թողեք եկեղեցին իր հովիվներին և ուսուցիչներին. հոգացեք Ձեր սեփական անելիքի մասին, որ

[1] **Ignatii**, Vita Niceph. Patr., 168.

է պետություն և զորք: Եթե հակառակ վարվեք և ջանաք քակել մեր հավատը. գիտցեք, որ հրեշտակն անգամ, եթե գա երկնից մեզ շրջելու, չպիտի հնազանդվենք»[1]:

Կայսրը արձակեց բոլորին, նկատելով, որ նպատակ չունի մարտիրոսներ շինել նրանցից կամ որևէ պատիժ տալ, մինչև որ խնդիրը չքննվի[2]: Պատրիարքը և ընդհանրապես պատկերապաշտները հանգիստ չէին նստած, այլ ամեն կերպ աշխատում էին ամբոխին գրգռել, ցույցեր անել: Ս. Սոփիայի ժողովը և կամ հսկումը անհանդուրժելի էր, ուստի կայսերական հրամանով արգելվում է անջատ և առանձին հավաքույթները պատրիարքարանում, իսկ Թովմաս պատրիկին հանձնարարվում է հսկել պատրիարքի վրա: Պատրիարքը մասնավոր նամակներ է գրում կայսեր մոտ անձանց, հուսալով ազդել կայսեր վրա: Գրեց նաև Թեոդոսիա թագուհուն, հորդորելով կասեցնել ամուսնուն ահավոր ձեռնարկից: Գրեց ընդհանուր լոգոթետին և [ծերակուտական] Եվտիքիանոսին, որ առաջին սեկրետարն էր [ասեկրետար]:

Պատրիարքը, որ այդ այդ ժամանակ կայսեր հրամանով արդեն հեռացված էր իր պաշտոնից[3], հիվանդացավ: Շատերը կարծում էին, որ պատրիարքի մահվամբ դժվարությունները կհարթվեն բնականորեն: Մտածում էին հաջորդի մասին: Հովհաննես Քերականի հավակնությանը խոչընդոտ էր իր [երիտասարդ] հասակը և ծագումը[4]:

Թեոդոտոս Կասսիտերաս, որ Լևոնի աջ բազուկն էր, հարմարագույն անձ էր պատրիարքության աթոռի: Նա Մելիսսենոսների տնից էր և հայրը՝ Միքայել, պատրիկ և ստրատեգ Անատոլիկոն բանակաթեմի, պատկերամարտ էր Կոստանդին V-ի օրով:

Սակայն պատրիարքը ողջանում է: Արդեն ոտի վրա էր, երբ սինոդը վերջացրեց իր գործերը: Նախ՝ թագուհու եղբայրը՝ **Թեոփանես**, հետո՝ առաջին պատվիրակության մի քանի հոգևոր անձերից, ուղարկվեցին պատրիարքի մոտ:

Առանց Թովմաս պատրիկի միջնորդության և խորհրդի պատրիարքը պիտի մեղմեր ընդունել պատվիրակությանը: Երբ քաղաքում իմացվեց այս

---

[1] **Vita Nicetas,** 30. A.S. april 3, t. I ad ede XXII; **Georg. Mon.,** 477; **Vita Theod. Stud.** (=Migne, t. 99, 233) 240. Տե՛ս նաև «Vita S. Theodoris Studitae», "Византийский Временник", т. XII, 1914, стр. 282.

[2] **Vita Theod.** Stud., 281. Միքայելը վատաբանեց Լևոնին, իմիջիայլոց αὐτοῦ ἔς τὴν γαμετὴν ἀνοσίους γάμους ἐγκαθυβρίσαι - eiusque uxoris incertarum nuptiarum dedecus proferret.

[3] **Vita Nic.,** 190.

[4] **Scriptor Incertus,** p. 359.

այցելության մասին, ստվար ամբոխով շրջապատեցին պատրիարքարանը, մեծ մասամբ զինվորներ էին: Աղետը անխուսափելի էր, եթե նույն Թովմաս պատրիկը չփակեր դռները և չցրեր ցուցարարներին:

Պատվիրակության նպատակն էր համոզել պատրիարքին, որ ընդունի նոր եկեղեցական քաղաքականությունը, սպառնալով, որ հակառակ դեպքում գահընկեց կլինի: Ժողովն այնուհետև վճռեց հեռացնել Նիկեփորին պատրիարքական աթոռից: Թշնամի գրողները հավատացնում են, որ Լևոն կայսրն ուզում էր վերջ տալ պատրիարքի կյանքին: Սակայն անհավանական է և լոկ զրպարտություն: Լևոնը բավականին իրատես և գործնական անձնավորություն էր[1] և գիտեր, որ այսպիսի աննպատակ միջոցով միայն կզորացներ ընդդիմադրությունը: Ստույգն այն է, որ որոշված էր պատրիարքին մեկուսացնել: Նրան հեռացրին նախ Ագաթոս վանքը՝ Բոսփորի ափին, հետո Ս. Թեոդոր վկայի վանքը՝ նույն Բոսփորի ասիական եզերքում և ավելի հեռու մայրաքաղաքից: Պատրիարքին ուղեկցողը [կայսրի] կրտսեր ազգականն էր (եղբորորդին) Վարդ-աս: Պատմում են, որ նավում պահակ զինվորները պատրիարքին չթողեցին նստել, երբ Վարդը նստած էր: Վշտացած պատրիարքը դարձավ Վարդին, թե «Սովորի'ր ուրիշի դժբախտությունից՝ սեփական դժբախտությունը լավ տանելու համար»: Իսկապես, հետագայում Վարդը կրում է իր պատիժը: Թեոդորոս Ստուդիտեսը նրան պատահեց Սմիռնիա (Զմյուռնիա), ուր էր Վարդ որպես ստրատեգ Թրակեսյան բանակաթեմի: Վարդը ծանր հիվանդացավ, և ոմանք խորհուրդ տվին դիմել Թեոդորոսին, որ աքսորված էր այնտեղ: Թեոդորոս ասաց, որ կառողջանա, եթե հրաժարվի Լևոն կայսրի՝ իր հորեղբոր, աղանդից: Վարդը կատարեց և ապաքինվեց: Բայց քիչ ավելի ուշ զղջաց և նորեն դարձավ հին մոլորության: Սակայն շուտով մեռավ այս ուրացության պատճառով[2]:

815 թ. Զատկին (= 1 ապրիլի) Թեոդոտոս Կասսիտերաս կտրեց մազը և բարձրացավ պատրիարքական գահը: Թշնամիները անգամ խոստովանում են, որ Թեոդոտոսը անուշ բնավորության տեր էր, բարեսիրտ ոմն և զուրկ չէր առաքինությունից, թեև բարեպաշտ չէր համարվում: Այսպես են անվանում բոլոր պատկերամարտներին նրանց հակառակորդ մատենագիրները: Թեոդոտոս պատրիարքի համար ուրիշ թերություն չէին գտնում, քան այն, որ ճոխ սեղան էր պատրաստում և հրավիրում եպիսկոպոսներին և վանականներին, ուր համադամ կերակուրների հետ աշխարհային զրույցներ էին անում և կատակներ, զվարճաբանում էին՝ անվայել հոգևոր կոչման:

---

[1] **Georg. Mon.**, p. 769-770; **Sym. Mag.**, p. 603.

[2] **Vita Theodori,** Migne, t. 99, 233; **Vita Nicolai Stud.,** Migne, t. 105, 863.

Թեոդոտոս նախագահեց [815 թվի] պատկերամարտ ժողովին, որի նախապատրաստությունները արդեն տեսնված էին: Ժողովի արձանագրություններն ոչնչացրին 843 թվի [պատկերապաշտ] ժողովի որոշմամբ, և եթե մի բան մնացել է, ապա այդ մնացել է հակառակորդների գրվածքներում[1]:

Սինոդի որոշագիրը էական մասում հայտնում է, որ «Կոստանդին V և Լևոն IV կայսրերը ժողով էին գումարել եկեղեցու ականավոր հայրերի մասնակցությամբ և ավանդորեն անօգուտ մնացած գործողություններով ցզովել պատկերապաշտությունը:

Եկեղեցին այնուհետև խաղաղ մնաց բավականին տարիներ, և ժողովուրդը անդորրություն վայելեց, մինչև որ կառավարության ղեկն անցավ մի կնոջ, որ ամեն ինչ վրդովեց կանացի պարզամտությամբ: Հիմնվելով անգետ կրոնավորների թելադրանքի վրա՝ նա մի անկարող ժողով գումարեց և նորեն հրապարակ հանեց մոլար ուսմունքը՝ նյութականի միջոցով պատկերացնել Բան Աստծուն և Որդուն, Աստվածամորը և սրբերին ներկայացնել մեռած գծերով և պարտադրել, որ այդ նկարները պետք է պաշտվեն, արհամարհելով եկեղեցու ճշմարիտ վարդապետությունը: Պղծելով մեր **latreia** աստվածապաշտությունը, հայտարարեցին, որ անկենդան պատկերներին պետք է տալ այն, ինչ որ մատուցանելի է միայն Աստծուն: Անմտաբար ասում էին, որ պատկերները օժտված են (լի են) աստվածային շնորհով և ներելի էին համարում ճրագներ վառել և խունկ ծխել նրանց առջև: Արդ, մենք վանում ենք այսուհետև ընդհանրական եկեղեցուց պատկերագործությունը, հերքում ենք Տարասիոս պատրիարքի սահմանած երկրպագությունը, ոչնչացնում ենք Սինոդի վճիռը այն հիմամբ, որ նա տալիս է պատկերներին անպատկան պատիվը, և դատապարտում ենք (ցզովում) ճրագավառությունը և խնկարկումը նրանց առաջ»:

---

[1] 815 թվի ժողովի վճռագիրը բերված է Նիկեփոր պատրիարքի մի գործում՝ Ἔλεγχος καὶ ἀνατροπὴ τοῦ ἀθέσμου... ὅρου, Acta concilii A.D. 815 (Les actes du concile iconoclaste de l'an 815, ed. D. Serruys Mélanges d'archéologie et d'histoire (E'cole francaise de Rome), XXIII, Paris-Rome, 1908. Մի մասը և վերնագիրը բերված են **Hefele-Leclercq,** Histoire des conciles, III, 2, p. 1217. Մյուս աղբյուրներն են՝ **Theodorus Studita,** Epistola, II, 1, **Migne**, t. 99; **Vita Theodori** (Michael Studita, Migne, t. 99, 223). Ի cp. ad Lud. **Vita Nicetae,** XXX (Theosterictus, A.S. april 3, t. I ad coll. XXII sqq.=Mansi, t. XIV, 135 sqq. 417, Scr. Inc., 360-361).

815 թվի Սինոդից հետո հակառակորդ վանականները հանձնվեցին Հովհաննես Քերականին՝ խելքի բերելու: Ընդդիմադիրներից շատերն աքսորվեցին հետևյալ տարվա գարնանը, Զատիկից հետո (816 թվի Զատիկն ընկնում էր ապրիլի 20-ին): Ոմանք հնազանդվեցին, ուրիշները մնացին հաստատ իրենց համառության վրա և աքսոր գնացին: Լևոն կայսեր ձեռնարկած հալածանքները ինձ թվում է չափազանցված և հեռու իրականությունից: Ստույգ է, որ **Թեոդորոս** Ստուդիտես, որ Կոստանդին VI-ի օրոք ենթարկվել էր հալածանքի, այս անգամ ևս աքսորվեց ոմն **Նիկողայոսի** հետ, որ Ստուդիոն վանքի եղբայրակիցներից էր:

Թեոփանես ժամանակագիրը, որ ներկա չէր 815 թվի ժողովին, ևս հանձնվում է Հովհաննես Քերականին, որը սրան փակում է մի արգելարանում և վերջը աքսորում Սամոթրակե, ուր և մեռնում է 818 թվի մարտի 12-ին:

Մյուս աքսորականներից հայտնի են՝ **Եվփիմիոս** Սարդացի[1]:

Գևորգ, եպիսկոպոս Միտիլեն [կղզու]՝ աքսորված Խերսոն և փոխարեն նշանակվեց Լևոն՝ ոմն պատկերամարտ[2]:

Սիմեոն Լեսբոսցի, որ սյունակյաց էր Մոլոս քաղաքում:

Թեոփիլակտոս Նիկոմեդիացի, որ իբր թե ծեծված էր կայսեր ներկայությամբ և աքսորված Կիբիսիոտ թեմը[3]:

Միքայել, Երուսաղեմի սինկելլոս 811 թվից, իր բարեկամ **Հոր** և երկու պաղեստինցի եղբայրք՝ **Թեոդորոս** և **Թեոփանես:** Այս երկուսը փախել էին Միքայել I-ի օրով Պաղեստինից՝ մուսուլմանների հալածանքներից, մոտ 812 թվին և եկել Կ. Պոլիս, ուր հյուրընկալվել են Խորա վանքում:

Մակար, վանահայր, Pelekêtê վանքի՝ Եփեսոսի մոտ:

Հովհաննես, վանահայր Katharoi վանքի[4]:

Հիլարիոն, վանահայր Դալմատոս (Dalmatoi) վանքի: Սովամահ եղև Թեոդոտոս պատրիարքի օրով[5]:

Եմելիան, եպիսկոպոս Կյուզիկոսի:

Եվդոքս Ամորրացի:

Միքայել, եպիսկոպոս Սիննադայի:

Հովհաննես, վանահայր Psicha վանքի:

Ընդամենը՝ 18 հոգի:

---

[1] **Acta Davidis**, 229.

[2] Նույնը, 227: Համմս. «Analecta Bollandiana», XVIII, 209, 399. 1899, ed. Delchaye.

[3] **Х. М. Лопарев**, "Византийский Временник", IV, 355.

[4] **Acta Sanctorum**, ապրիլ 27, III, 496.

[5] **Acta Sanctorum, հունիս** 6, I, 759.

Միքայել կայսեր (820-829) անձնական համոզումը հակապատկերական էր: Սակայն, հանուն խաղաղության, նա կողմնակից չէր խիստ քաղաքականության և բռնության: Ամեն ոք կարող էր վարվել, ինչպես ուզում է, միայն առանց փորձելու ոտնձգելու պետական օրենսդրությունը՝ հիմնված 815 թվի ժողովի վրա:

Միքայել Թլվատ երկյուղ կրելով պատկերապաշտների ընդդիմությունից, ընտրեց մեղմ ու հաշտ ուղին: Նա ազատություն շնորհեց աքսորված և հալածված պատկերապաշտներին: Սրանք, և ամենից առաջ Թեոդորոս Ստուդիտեսը, շնորհավորելով Միքայելի գահակալությունը, հորդորում էին նրան վերականգնել պատկերապաշտությունը և հետ դարձնել գահընկեց Նիկեփոր պատրիարքին: Վերջինս ևս դիմեց կայսեր նույն հորդորով: Կայսրի պատասխանը շատ որոշ էր. «Մեր նախորդներն իրենք են պատասխանատու Աստծո առաջ՝ դավանած վարդապետության համար: Մեր պարտքն է պահել եկեղեցին այնպես, ինչպես ավանդված է մեզ: Ոչ ոք չպետք է համարձակվի բերան բանալ պատկերների՝ քերի կամ դեմ: Կատարյալ լռություն հարցի շուրջը, ահա այսօրվա նշանաբանը: Պատրիարքն էլ կարող է վերագրավել աթոռը, եթե հոժար է այս քաղաքականությամբ ընթանալ»: Կայսրն առաջարկում էր նաև, որպեսզի երկու կողմերը խորհրդակցեն և գան ընդհանուր համաձայնության: Ինչպես և պատրիարքին խնդրեց խոսել իր կուսակիցների ու բարեկամների հետ և որդեգրել կայսեր պաշտպանած գիծը: Պատկերապաշտները բացեիբաց հրաժարվեցին հերետիկոսների հետ բանակցելուց: Թեոդորոս չքաշվեց ասելու նաև, որ ամեն բանով հնազանդ են կայսեր, բայց եկեղեցական գործերում չեն կարող ենթարկվել կայսերական բարձրագույն հրամաններին, և որ վեճի միակ հեղինակավոր ատյանը Հռոմի պապն է՝ բոլոր եկեղեցիների պետը: Թեոդորոս անձամբ ներկայացավ կայսեր, ինչպես և Նիկեփոր պատրիարքը, և նույնը կրկնեց: Կայսրը ևս մնաց իր տեսակետին անհողդողդ, կրկնելով, որ եկեղեցին մնալու է այնպես, ինչպես հասել է իրեն, և ով ուզում է պաշտել պատկերները, կարող է պաշտել, սակայն քաղաքից դուրս:

Այս խոսակցությունները տեղի են ունեցել հավանաբար Թեոդորոս Ա պատրիարքի (815-821) մահից հետո և նպատակ են ունեցել Նիկեփորին կոչելու պատրիարքական գահը գրավելու: Սակայն դրանք արդյունքի չհանգան: Պատրիարք ընտրվեց Անտոն(իոս) Կասսիմատ՝ Սյուլլայոնի եպիսկոպոսը, Լևոն V-ի հայտնի պատկերամարտ գործակիցը: Թեոդորոս

Ստուդիտեսի և իր կողմնակիցների քաղաքականության մեջ մի կետ կար, որ չէր կարող հաճելի լինել կայսերական իշխանությանը: Նրանք պնդում էին, որ եկեղեցական խնդիրներում գերիշխանությունը պատկանում է Հռոմի գահին: Այս հայացքը ընդդեմ էր պետական հիմնական օրենքին, որի տրամադրությամբ կայսրն էր համարվում գերագույն պետը ոչ միայն աշխարհային, այլև եկեղեցական գործերում: Միքայել II կայսրին բնավ հաճելի չէր, որ Թեոդորոս Ստուդիտեսը լավ հարաբերությունների մեջ էր Հռոմի հետ և աշխատում էր ի նպաստ պապի միջամտության պետական խնդիրներում: Դժգոհությունը զայրույթի փոխվեց, երբ կայսրի մոտ եկավ Եվգինեոս Բ պապի կողմից պատվիրակություն, որի գլուխ էր Մեթոդիոս եպիսկոպոս, որ հետագայում պատրիարք եղավ: Լևոն V-ի օրով նա ապաստանել էր պապի մոտ և այժմ գալիս էր պապի դավանաբանական թղթով հօգուտ պատկերապաշտության: Անհանդուրժելի էր, որ կայսրի հպատակը արտաքին ուժի հենված խարդավանքներ կայսերական իշխանության դեմ: Կայսեր հրամանով Մեթոդիոս կալանավորվեց և աքսոր ղրկվեց:

Այնուհետև վրա հասան ներքին խռովությունները Թովմասի ապստամբության պատճառով: Թեև ապստամբությունը աշխատեց իր կողմը քաշել դժգոհ պատկերապաշտների բանակը հայտարարելով իրեն կողմնակից նրանց դավանության, բայց մեծ հաջողություն չունեցավ: Խաղաղությունը վերականգնելուց հետո Միքայել II-ը մի անգամ ևս փորձեց գլուխ բերել եկեղեցու միությունը, առաջարկելով նորեն հակառակորդներին համաձայնության գալու ժողովով: Պատկերապաշտների կարծիքով, պետք էր հրավիրել տիեզերական ժողով՝ չորս պատրիարքների (14) և պապի մասնակցությամբ: Այդպիսի ժողովը միայն կարող էր իրավասու և հեղինակավոր համարվել, կամ եթե գերադասում են տիեզերական ժողով գումարել, անհրաժեշտ պայման պիտի լինի նախապես վերահաստատել Նիկեփորին իր գահի վրա[1]: Այս բանակցությունը 824 թվին էր:

Միքայել II տեսավ, որ պատկերապաշտներն անդրդվելի են, անշուշտ, ապավեն ունենալով պապի անունը: Որպեսզի պապին իր կողմը ձգե, Միքայել Թուղթ գրեց ֆրանկների կայսր Լյուդովիկոս Բարեպաշտին, ուր բացատրեց գործի էությունը: Թուղթը խիստ կարևոր վավերագիր է. Այստեղ շեշտված են պատկերապաշտության ծայրահեղությունները, որ «Պատկերապաշտները լույս են վառում պատկերների առաջ և խունկ ծխում և միևնույն հարգանքի են մատուցանում, ինչ որ կենարար խաչին. Նրանք աղոթում են և ուխտ անում: Շատերը սովորություն ունեն անգամ պատկերր

[1] **Theodorus Studita,** Epistola, II, 129.

չորքով» ծածկել և կնքահայր դնսրծնել իրենց երեխաներին: Կան քահանաներ, որ պատկերներից ներկր հանում են և խառնում հաղորդության հետ (հացի և գինու) և տալիս հավատացյալներին (15): Ուրիշները տիրոջ մարմինը դնում են պատկերների ձեռքը՝ հավատացյալներին ուտեցնելու համար: Լևոն V կայսրը ժողով գումարեց և արգելեց այսպիսի գործողությունները: Այլև կարգադրեց, որ եկեղեցիներում ցած կախված պատկերները վերցնեն և թողվեն միայն բարձր կախվածները ի խրատ և յուսումն այն անձանց, որ գիր և կարդալ չգիտեն: Պայմանով, որ հավատացյալները մոմ չպիտի վառեն և ոչ խնկարկեն պատկերների առջև: Մի քանի անձինք չընդունեցին ժողովը և փախան Հռոմ, ուր և նրանք զբաղված են ժողովի զրպարտությամբ»: Միքայել II կայսրը խնդրում է Լյուդովիկոսից ընդունել իր պատվիրակներին, որ հանձնարարական Թղթով գնան պապի մոտ, և նպաստել նրանց ուղևորության[1]:

Լյուդովիկոս Բարեպաշտը ծայրահեղության համակիր չէր, ո՛չ պատկերամարտները և ո՛չ էլ Նիկիո ժողովի (787 թ.), թեև հաստատված պապի կողմից: Կողմնակից էր միջին ճանապարհի, ինչպես որ գծված էր 794 թվի Ֆրանկֆուրտի ժողովում: Այս ժողովն ընդդեմ էր պատկերների պաշտամունքին, բայց ներելի էր համարում դրանք եկեղեցիներում կախել որպես զարդարանք և կամ կրթիչք: Լյուդովիկոսը պարտք համարեց առնել պապի հաճությունը և գումարել մի նոր ժողով՝ վերստին քննության առնելու խնդիրը: Ժողովը տեղի ունեցավ 825 թ. նոյեմբ[երին] Պարիս, որն արտահայտվեց 794 թվի ժողովի իմաստով, այն է՝ դատապարտեց 787 թվի ժողովը, մյուս կողմից օրինավոր չգտավ պատկերամարտների ցանկությունը՝ վանել պատկերները եկեղեցուց[2]:

Թեոփիլոս կայսրը (829-842), որ Ավգուստոս էր հայտարարված հոր՝ Միքայելի, առաջին տարին (821 թ.) մասնակից էր թերևս հոր քաղաքականության և նրա մահից հետո շարունակեց հավատարիմ մնալ նույն քաղաքականության: Սակայն 834 թվից նկատվում է որոշ խստություններ մոլեռանդ պատկերապաշտների հանդեպ: Կարծում են, որ մասամբ նոր պատրիարքի՝ հռչակավոր Հովհաննես Քերականի կամ Հյուլիլասի ազդեցությունն էր, որ զգալի էր դառնում: Նա (Հովհաննես Քերականը) [պատրիարքական] գահ բարձրացավ 832 թվին:

Ժամանակակից մատենագիրները, անտարակույս, չափազանցնում են Թեոփիլոսի հարուցած հալածանքը: Մանավանդ, որ փաստեր չեն հիշում,

---

[1] **Mansi**, t. XIV, 417-422.

[2] **B. Simson**, Jahrbücher des frankischen Reichs unter Ludwig dem Frommer, 2 vol (814-840), Leipzig, 1874-1876.

այլ բավականանում են միայն ընդհանուր խոսքերով: Միակ օրինակը, որ բերում են պաղեստինցի երկու եղբայրների Թեոդորոսի և Թեոփանեսի, դեպքն է: Նրանք իրենց եռանդը ցույց էին տվել տակավին Լևոն V Հայկազնի օրով, ուստի և աքսորվել էին մայրաքաղաքից: Լևոն V-ի մահից հետո նորեն գալիս են մայրաքաղաք և սկսում իրենց քարոզն ի նպաստ պատկերների: Միքայել II-ը ևս սրանց արտաքսում է մայրաքաղաքից: Թեոփիլոս կայսեր օրով վերստին երևում են և սկսում աղմկել: Կայսրն աշխատում է սրանց խելքի բերել, բայց չի կարողանում կոտրել մոլեռանդ վանականների համառությունը: Թեոդորոս Ստուդիտեսի դափնիները հանգիստ չէին տալիս այս օտարական կրոնավորներին: Ծանր պատիժ էր վիճակված նրանց: Կայսեր հրամանով մի քանի տող խարանում են նրանց երեսին [ճակատին] և աքսորում Բյութանիա: Թեոդորոս շուտով մեռնում է, իսկ Թեոփանես ապրում է մինչև Թեոդորա կայսրուհու կառավարությունը և ստանում Նիկիո եպիսկոպոսական աթոռը: Այս խստությունը հասկանալի է դառնում, եթե ի նկատի ունենանք, որ այս խռովարարները դրսից էին եկած և ուրեմն ինքնին կասկածելի: Կայսրը դառնացած էր այս առթիվ: Այդ դառնությունը արձագանք է գտել նրանց [Թեոդորոսի և Թեոփանեսի] երեսին [ճակատին] գրած [խարանված] ոտանավորում, ուր ևս հիշվում է, որ նրանք օտար տեղից [Երուսաղեմից] էին եկած[1]: Կայսեր դժգոհությունը ավելի ևս պիտի սաստկանար, որովհետև Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքները միասին ժողովական Թուղթ էին գրել Թեոփիլոսին՝ ի նպաստ պատկերապաշտության[2]:

Հալածվածներից ոմանք Լևոն V-ի ժամանակվանից մոլեռանդ վանականներ էին: Մեթոդիոս, որ ջերմ պատկերապաշտ էր, բանտարկվեց ստորգետնյա նկուղում: Նա հետո բավականին մեղմացավ և անգամ վայելում էր կայսեր բարեկամությունը՝ հաստատվելով պալատում[3]: Հիշելու է նաև Ղազարոս անունով (de genere Chazarus) վանականի դեպքը, որ նկարիչ էր պատկերների և չանսալով հրամանին՝ այլևս չպարապել իր արվեստով, սոսկալի պատժի ենթարկվեց՝ շիկացած երկաթով ձեռքը այրեցին:

Թեոփիլոսին վերագրված բռնությունները չեն արդարանում փաստացի տվյալներով: Ստույգն այն է, որ մոլի պատկերապաշտներին արգելված էր ապրել մայրաքաղաքի մեջ, բայց ազատ էին բնակվելու քաղաքից դուրս՝ շրջակայքում: Թվում է, որ պատկերներն արգելված էին միմիայն մայրա-

---

[1] Ոտանավորը տե՛ս **Vita Theodori,** Migne, t. 116, 653; **Theoph. Cont.,** 105 և այլն:

[2] **Migne**, t. 95, 345.

[3] **Genes**., 76; **Theoph. Cont.,** 116.

քաղաքի եկեղեցիներում, իսկ դուրսն առանձին հսկություն չկար: Մայրաքաղաքից վտարվում էին, հալածվում նաև պատկերահաւն վանականները:

Մատենագիրները հավատացնում են, որ Թեոփիլոսի կինը՝ Թեոդորա [Մամիկոնյանը], ինչպես և սրա մայրը Թեոկտիստե, ջերմեռանդ պատկերապաշտներ էին և իրենց զգացումը ստիպված էին ծածկել Թեոփիլոսից: Պալատական ծաղրածու Դենդերիսը, որ նույն չափ տգեղ էր, որքան Հոմերոսի Թերսիտեսը, մի օր մտնելով կայսրուհու ննջարանը նկատեց, որ նա համբուրում է սուրբ պատկերներ[1]: Դենդերիսը հարցրեց թագուհուն, թե դրանք ի՞նչ են: Թեոդորա պատասխանեց, որ սրանք իր փոքրիկ տիկնիկներն են, որ շատ սիրելի են իրեն: Միմոսը իսկույն վազեց կայսեր մոտ: Սա ճաշի վրա էր և հարցրեց միմոսին, թե որտեղից է գալիս: «Դայակի (մայրիկի *παρὰ τὴν μάνα*) մոտից, ուր տեսա սիրուն տիկնիկներ բարձի տակ», - պատասխանեց միմոսը: Կայսրն իսկույն գլխի ընկավ, բարկացած վեր ցատկեց տեղից և գնաց կայսրուհու ննջասենյակը և սկսեց նրան նախատել կռապաշտության համար՝ վկա բերելով ծաղրածուին: Կայսրուհին ամուսնուն հանգստացնելու համար ստեց, ասելով. «Այդ այն չէ, ինչ որ կարծում ես: Ես և իմ աղախինները նայում էինք հայելու մեջ և Դենդերիսը հայելու մեջ տեսնելով մեր պատկերները կարծել է, թե տիկնիկներ են, և հիմարաբար եկել, հայտնել է քեզ»: Թեոփիլոսը ձևացրեց, թե գոհ է բացատրությունից, սակայն նրա բարկությունը նստեց: Իսկ մի քանի օր անց Թեոդորան սաստիկ ծեծել տվավ Դենդերիսին, սաստելով, որ այլևս խելքը գլխին պահի և տիկնիկների մասին ոչինչ չխոսի, որ իրեն չվերաբերող խնդիրների մեջ չմտնե և լեզվի չափն իմանա: Մի օր, երբ Թեոփիլոսը հարցրեց Դենդերիսին, թե արդյո՞ք դայակը (մայրիկը) շարունակում է համբուրել, փաղաքշել տիկնիկներին, միմոսը մի ձեռքը բերանին դրավ, մյուսը՝ հետևին և ասաց. «Սս՜, տեր կայսր, տիկնիկների մասին լռի՛ր, լռի՛ր»[2]:

---

[1] Դենդերիսի դեպքը պատկերված է **Beylié**, L'Habitation Byzantine, 20:

[2] **Theoph. Cont.**, 91. Սույն բնագրի 51-րդ էջի հակառակ կողմում Ն. Ադոնցը դարձյալ բերում է Դենդերիսի մասին տվյալ պատումը, սակայն մի փոքր այլ խմբագրությամբ. «Պալատում կար մի խղճուկ մարդ ոչնչով ավելի քան Հոմերոսի Թերսիտեսը: Դենդերիս էր անունը ծաղրածու և զվարճախոս և ապերասան, և կատակներով զվարճություն էր պատճառում Թեոփիլոսին: Մի անգամ մտնելով թագուհու ննջարանը, տեսավ, որ թագուհին համբուրում է պատկերներ և ջերմեռանդորեն մերձեցնում աչքերին: Չնացնելով, թե չէ հասկանում, հարցրեց, թե այդ ի՞նչ է. «Իմ սիրունիկ տիկնիկներն են, - պարզամտում է կայսրուհին,- որ ես շատ սիրում եմ»: Կայսրը ճաշում էր, երբ մոտեցավ Դենդերիս, «Ո՞ւր ես կորել, հարցրեց կայսրը,- որտե՞ղից ես գալիս»: Նա էլ պատասխանեց, որ Մանայի (այսպես էր անվանում Թեոդորային) մոտից, և պատմեց, թե ինչպես էր կայսրուհին բարձի տակից հանում տ|:չնիկներ» (**Պ. Հ.**):

Նույնպիսի մի դեպք պատմում են Թեոկտիստեի՝ կայսրուհու մոր, վերաբերյալ: Թեոկտիստե ապրում էր իր սեփական Gastria կոչված տանը: Կարծում են, որ այս տունը գտնվում էր Սամաքիա քաղում, այժմյան ավեր Sanjakdar մզկիթի տեղ, որ Հայոց Ս. Գևորգ եկեղեցուց ոչ հեռու է: Gastria [հունարեն] նշանակում է ծաղկաման, որպես թե Ս. Հեղինե (16) Երուսաղեմից բերել էր այն ծաղիկները, որ բուսած էին այնտեղ, ուր Ս. Խաչն էր գտել, և տնկել ծաղկամանով[1]:

Հաճախ էին իրենց տատին՝ Թեոկտիստեին, այցելության գալիս նրա թոռները՝ Թեոդորայի աղջիկները. թվով հինգ Թեկլա, Աննա, Անաստասիա, Պուլքերիա, Մարիա: Թեոկտիստեն սովորեցրել էր նրանց պաշտել պատկերներ՝ հակառակ հոր ուղղության: Նա մի արկղ ուներ՝ լի զանազան սրբերի պատկերներով: Երբ թոռները գալիս էին, հանում էր պատկերները, մոտեցնում նրանց երեսին և քսում շրթունքին: Մի անգամ հայրը հարցնում է երեխաներին, թե ի՞նչ է տվել տատը, և ինչպե՞ս են ժամանակ անցկացրել: Մեծ աղջիկները հասկանում են և լռում, իսկ Պուլքերիա, որ փոքր էր, պատմում է, թե ինչպես տատիկը հանեց արկղից բազմաթիվ տիկնիկներ և կպցրեց իր և իր քույրերի երեսին և շրթունքին: Թեոփիլոսը զայրացավ, բայց քաշվեց բռնանալ թագուհու մոր վրա, որ ընդհանուր հարգանք էր վայելում բարեպաշտության համար[2]: Այս դեպքից հետո կայսրն աղջիկներին այլևս այնտեղ հաճախ այցելել չէր թողնում:

4. ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Թեոփիլոս մեռավ 842 թվի հունվարի 20-ին: Թագաժառանգը դեռ անչափահաս էր, ուստի մեռնող կայսրը մի քանի խնամակալներ էր նշանակել: Նախ ազդեցիկ զորավար, սպարապետ Մանուել [Մամիկոնյանին], որ կայսրուհու հորեղբայրն էր, այնուհետև Թեոկտիստոս ներքինիին և Վարդ [Մամիկոնյանին]՝ կայսրուհու եղբորը[3]: Սրանք պետք է խնամեին թագաժառանգ Միքայելին և Թեոդորա կայսրուհու հետ միասին վարեին պետության գործերը մինչև ժառանգի չափահասությունը:

Մի տարի չանցած՝ 843 թվի մարտին, կայացավ եկեղեցական ժողով, ուր որոշում են վերականգնել պատկերապաշտությունը: Թեոդորա

---

[1] γάστρα: Հավանական է, որ այստեղ նախապես պարտեզ է եղել, ջրառատ տեղ է:

[2] Թեոկտիստեի նկարը, թե ինչպես պատկեր է տալիս Պուլքերիային, մինչդեռ մյուս քույրերը կանգնած են եղել, տե՛ս **Beylié**, op. cit., 56. Skylitzes:

[3] Վարդը հիշվում է միայն Թեոփանեսի Շարունակողի մոտ. **Theoph. Cont.**, 148:

կայսրուհին այս գործի պահով դասված է սրբերի շարքը որ տոնվում է հոկտեմբերի 13-ին: Պատմության առեղծվածային էջերից մեկն է պատկերի պաշտամունքի վերականգնումը մի այնպիսի ժամանակ, երբ կարծես երկար ջանքերից հետո հաստատված էր հակառակ ուղղությունը 815 թվից սկսված: Հարցի քաղաքական կողմը թաքնված է մեր աչքից: Ժամանակակիցները տրամադիր են դա բացատրելու Թեոդորայի և իր ընտանիքի բարեպաշտությամբ: Թեոդորայի և իր մոր՝ Թեոկտիստեի, տիկնիկների թեթևամիտ զրույցները թվում է, թե հորինված են հետին թվով նրանց պատկերապաշտությունը փաստաբանելու համար: Ամեն կերպ աշխատել են ցույց տալ, որ բոլոր այն ազնվերը, որ մասնակից են դարձել պատկերապաշտության հաստատման, այլ շարժառիթ չունեին, քան կրոնական զգացումը: Մանուելի մասին հերյուրված է մի պատմություն, որպես նրան ներշնչողները եղել են Ստուդիոնի վանականները: Մանուելը հիվանդանում է, և վանականներն իրենց աղոթքներով բժշկում են նրան և պարտադրում, որ ի տրիտուր վերականգնե պատկերները[1]: Մի ուրիշ զրույցի համեմատ, հիվանդացողը ոչ թե Մանուելն էր, այլ նրա կինը՝ Հեղինեն, և բուժողը՝ Նիկողայոս մանականը, նույն Ստուդիոնի միաբանությունից[2]: Հանգիստ չէ թողված և հանգուցյալ կայսրը՝ Թեոփիլոս: Նա որպես թե մահվան անկողնում, նախքան աչքերը փակելը, ընդմիշտ զղջացել է և պատվիրել Թեոդորայից ժողով գումարել և ուղղել իր մոլորությունը, վերահաստատելով պատկերները: Անհիմն հերյուրանք: Արդարև, բավական է հիշել այն, ինչ որ պատմվում է Թեոդորայի մասին, որ սա տատանվում էր հարել իր խորհրդակիցներին, կամենալով պաշտպանել իր ամուսնու քաղաքականությունը: Թեոդորան իր ամուսնու մասին այն կարծիքն ուներ, թե նա խորաթափանց միտք էր և գիտեր ինչ որ հարկավոր էր անել, և այժմ «*πῶς τῶν ἐκείνου διαταγμάτων ἀμνημονήσαντας εἰς ἑτέραν διαγωγὴν ἐκτραπείημεν*, ինչպես մոռանալով նրա կարգավորությունը, ընդունենք մի ուրիշ ուղղություն»[3]:

Ակներև է, որ Թեոդորան այլ համոզմունք չէր կարող ունենալ, քան իր երկրպագելի ամուսինը: Հետևապես, ոչ նրա և ոչ էլ նրա հորեղբոր՝ Մանուել [Մամիկոնյանի] ենթադրյալ բարեպաշտությունը չէր կարող հիմք ծառայել նոր եկեղեցական ուղղության: Ուրիշ մեկնություն է որոնելու:

---

[1] **Theoph. Cont.**, 148-149.

[2] **Vita Nicolai Studitae**, Migne, t. 105, col. 916.

[3] **Genes.**, 80.

Թեոդորայի շրջապատը կազմում էին նախ խնամակալները՝ Թեոկտիստոս և Մանուել, ապա՝ Մեթոդիոս եպիսկոպոսը, որ Թեոփիլոսի օրով ապրում էր պալատում և Թեոդորայի հարազատները՝ մայրը, եղբայրները և քույրերը: Ժամանակակից մի հեղինակ Թեոկտիստոսին է համարում գլխավոր թելադրիչը նոր եկեղեցական քաղաքականության[1]: Գենեսիոսն ավելացնում է նաև Մանուելին[2], իսկ Թեոփանեսի Շարունակողն այդ պատիվը վերագրում է միայն Մանուելին[3]: Մի ուրիշ տեղեկությամբ, նախաձեռնությունը գալիս է Օլիմպոս լեռան ճգնավորներից: Նրանցից Հովհաննիկ(իոս), որ կանխասացության շնորհ ուներ, Արշակի (Arshakies) և Նիկոմեդիայի եպիսկոպոս Եսայիի հետ թելադրում են Մեթոդիոս եպիսկոպոսին, իսկ սա կայսրուհուն՝ ի նպաստ պատկերների[4]:

Միքայել Սինկելլոսի վարքի մեջ ասված է, որ Հովհաննիկ(իոս)ը կայսրուհու և ծերակույտի հարցին ի պատասխան, Մեթոդիոսին է հանձնարարում որպես պատրիարք: Սինչդեռ, ժողովրդական թեկնածուն Միքայելն էր[5]:

Հավանականն այն է, որ գործի ներշնչողներն էին Թեոկտիստոս և Մեթոդիոս եպիսկոպոս[6]: Վերջինս գիտուն անձ էր, բայց բարոյական

---

[1] **Georg.. Mon.,** 811. ὑποθήκη δὲ καὶ παραινέσει θεοκτίστου κανικλείου καί λογοθέτου.

[2] **Genes.**, 78.

[3] **Theoph. Cont.,** 148.

[4] **De Theophilii,** Imperatoris absolutione, p. 25. «Analecta Byzantino-russica», edidit W. Regel, Petropoli, 1891.

[5] Vita Michaelis Syncellî, տե՛ս "Известия", т., XI, 227 (1906).

[6] Մեթոդիոս Սիրակուզացի, Կ. Պոլսի վանքերից մեկի վանահայր: Պատկանում է այն վանականների թվին, որ Լևոն V-ի օրով՝ 815 թվին, փախել էին Հռոմ, և այնուհետև պապի միջամտությամբ Միքայել II-ի օրով վերադարձել հետ պապական դավանաբանական թղթով: Սակայն նույն Միքայելի կարգադրությամբ 821 թվին ձերբակալվեց դավանաբանական վեճերի համար և ինը տարի՝ մինչև 829 թվի հոկտեմբերը, մնաց բանտում՝ Նիկոմեդիո ծոցում գտնվող Ս. Անդրեաս Առաքյալի կղզում՝ Akritas=Տուզլու-Բուրնու հրվանդանից ոչ հեռու (**Vita Meth.**, I, 5, 8): Թեոփիլոս կայսեր կարգադրությամբ Մեթոդիոս եպիսկոպոսն արգելափակվեց Անտիգոնոսի կղզում (Antigoni), սակայն չուտով արժանացավ կայսեր բարեհաճությանը և նրա գիտությամբ գաղտնի տեղափոխվեց պալատ (**Gen.**, 76; **Theoph. Cont.,** 116): Մահացել է 847 թ. հունիսի 14-ին:

նկարագիր չկար: Սկզբում կատաղի պատկերապաշտ, սակայն հաշտվում է Թեոփիլոսի պես մոլի պատկերամարտի հետ և ապրում նրա պալատում: Թեոփիլոսի մեռնելուց հետո, աչք ունենալով պատրիարքական գահին, նորեն հարում է պատկերապաշտության: Թեոկտիստոս ներքինի էր: Սա էր կործանել Լևոն V [Հայկազնի]: Նա իր առանձնաշնորհ դիրքը պահպանել էր ինչպես Միքայել II, այնպես էլ Թեոփիլոս կայսրերի օրով և հասել դրոմոսի լոգոթետության: Թեոփիլոսի մահվամբ, Թեոկտիստոսի դրությունը կարող էր խախտվել: Հայերը, որ շրջապատել էին գահը, հիմ չունեին սիրելու Թեոկտիստոսին: Սա իր դրությունն ապահովելու համար որոնում է նեցուկ և այն գտնում **պատկերապաշտների բանակում:** Պատկերապաշտները գլխավորապես հույն վանականներն էին: Պատկերամարտությունը՝ վերսկսած Լևոն V Հայկազնի ձեռքով, ավելի համակիրներ ուներ հայերի մեջ:

Թեոկտիստոսը նախ իր կողմն է ձգում Մեթոդիոս եպիսկոպոսին, անշուշտ, գայթակղեցնելով պատրիարքական գահի ակնկալությամբ: Երկուսը միասին սկսում են համոզել Թեոդորա թագուհուն, և հավատացնում են, որ գահը, տունը և նրա որդին՝ Միքայելը, վտանգի մեջ են: Ակնարկը, անշուշտ, պրոտոստրատոր, մագիստրոս, սխոլերի դոմեստիկոս, նշանավոր զորավար Մանուել Մամիկոնյանի՝ թագուհու հորեղբոր, և կեսար Վարդ Մամիկոնյանի՝ թագուհու եղբոր, հասցեին էր, որոնք բավականին ազդեցիկ էին տիրանալու գահին: Թեոկտիստոսն արդեն հաջողել էր կործանել պատրիկ Թեոփոբոս խորհրդավոր անձին: Թեոփիլոս մահվան անկողնում հրամայեց գլխատել նրան, անշուշտ, Թեոկտիստոսի նենգավոր չշունջի՝ ազդեցությամբ[1]:

Թեոկտիստոս իրեն օգնական ուներ և սխոլերի դոմեստիկոս Պետրոնաս [Մամիկոնյանին]՝ թագուհու և կեսար Վարդի եղբորը: Ազատվելով ամենավտանգավոր ախոյաններից՝ Թեոկտիստոս պիտի ջանար թուլացնելու գահի շուրջը վխտացող ազդեցիկ հայերի հեղինակությունը: Այս նպատակով է, որ նա հարուցեց պատկերների խնդիրը, երևի հուսալով, որ հայերը կընդդիմանային և կկորցնեին ժողովրդի աչքում իրենց մեծ հռչակն ու հմայքը:

Թեոկտիստոսի հաշիվները մասամբ միայն արդարացան: Հայ ղեկավար ուժերը զիջան պատկերների խնդրում, պահեցին իրենց դիրքը և ի վերջո տապալեցին Թեոկտիստոսին:

---

[1] Թեոփոբոս ծագումով մեծազարմ պարսիկ էր (միգուցե՞ պարսկահայ), որ ամուսնացած էր Թեոդորա կայսրուհու քրոջ հետ: Նրա մասին տե՛ս **Sym. Mag.**, p. 646: **Georg. Mon.**, p. 810; **Leo Gramm.**, p. 227-228:

Եկեղեցական ժողովի նախապատրաստությունները տևեցին մի տարի: 843 թ. մարտ ամսին [11-ին] կայացավ մեծ դատաստանը: Ժողովը գահազրկեց Հովհաննես Է Քերական պատրիարքին և 843 թ. մարտի 11-ին նրա տեղ ընտրեց Մեթոդիոսին (843-847): Մատենագիրների տեղեկությամբ, կայսրուհին Հովհաննեսից պահանջեց միանալ ժողովականներին, սպառնալով այլապես գահընկեց անել[1]: Սակայն Հովհաննես մնաց հաստատ իր համոզման՝ յամոթ յուր բոլոր թշնամիներին, որոնք ամեն ջանք ու ճիգ էին թափել սևացնելու նրա հիշատակը: Մեթոդիոս, որ Թեոփիլոսի օրով կեղծ, թե անկեղծ պատկերամարտ էր, չդժվարացավ համակերպելու նոր կացության՝ ամեն ինչ զոհելով պատրիարքական գահը գրավելու անհագուրդ փափագին:


Հովհաննես պատրիարքին գահընկեց հայտարարելուց հետո, Կոստանդին Հայը[2], որ գիշերապահ գնդի (հսկման գնդի) դրունգարն էր, հրաման ստացավ մի քանի զինվորականների հետ գնալ պատրիարքարան և այնտեղից հեռացնել Հովհաննեսին: Սակայն պատրիարքը դանդաղում էր հեռանալ: Եվ երբ Վարդը գնաց իմանալու պատճառը, Հովհաննես գանգատվեց, որ զինվորներն իրեն հետ վարվել են կոպտաբար և անգամ վիրավորել և ցույց տվավ սուսերահար վերքը: Թեոփանեսի Շարունակողը

---

[1] **Theoph. Cont.**, 151; Georg., 811, Sym. Mag., 647.

[2] Ըստ Սիմոն Մագիստրոսի, դրունգար Կոստանդին τῆς βίγλας Թովմաս պատրիկի և վիգլայի դրունգար Գենեսիոսի հայրն էր ὁ πατὴρ Θωμᾶ πατρικίου καὶ Γενεσίου (= Theod. Mel., 174 = Leo Gram., 249):

Այս Գենեսիոս էր μάγιστρος՝ Մագիստրոս Լևոն VI-ի օրով (տե՛ս C. de. Boor, Zu Genesios. «Byzantinische Zeitschrift», Bd. 10, 1901, p. 62), իսկ Թովմաս՝ լոգոթետ τ. δρόμου: Այս Թովմասի որդին էր պատմաբան Գենեսիոս (Genesios), որ էր քարտուղար χαρτουλάριος ὁ ἐπὶ τοῦ κανικλείου, Կոստանդին VII Ծիրանածնի ժամանակ: Իր գործը գրել է 944-948 թվականների ընթացքում:



պատմում է, որ Հովհաննեսն ինքն էր իրեն վիրավորել, մեկ այլ աղբյուր հիշում է, որ եղունգի փոքր դանակով էր իրեն վիրավորել[1]: Սակայն մի ուրիշ աղբյուր վկայում է, որ Հովհաննեսն այնքան էր հուզված դեպքերից, որ իրոք ցանկացել էր վերջ տալ իր կյանքին[2]:

Այս հակասական տեղեկություններից դժվար է վերահաս լինել ճշմարտության: Թվում է, որ զինվորներն իրոք վիրավորել էին հայրապետին իրենց բիրտ վարմունքով, ինչպես որ ենթադրում են[3]:

Ժողովականների հեղհեղուկ և ճկուն բարոյականը փայլում է մանավանդ, երբ գործը հասնում է Թեոփիլոս կայսեր անձին, արդյո՞ք նզովել նրա հիշատակը, նման մյուս բոլոր պատկերամարտների, որոնք ժողովի կողմից արժանացան մեծ անեծքի: Ժողովականներն ուզում էին մի կերպ փրկել կայսեր հիշատակը ի հաճույս թագուհու: Եվ ահա մի շարք առասպելներ են հերյուրում՝ արդարացնելու համար իրենց ապօրինի վարմունքը: Նախ՝ Թեոդորա կայսրուհին հայտնում է ժողովին, որ իր ամուսինը մեռնելիս զղջացել է և վերջին շունչը տվել է Քրիստոսի պատկերի շրթունքներին[4]: Պատմում են նաև, որ թագուհին գաղտնի խոսակցություն է ունեցել քանի մի ազդեցիկ վանականների հետ, ոչ միայն Մեթոդիոսի, այլև Լեսբոսցի Սիմեոն Սյունականի, նրա եղբոր՝ Գեորգի հետ և ասել, որ կայսրը աջահամբյուր (eujlogiva) է թողել նրանց համար, եթե միայն ընդունեն նրան որպես ուղղափառի: Սիմեոնը կոտրտվելուց հետո համաձայնում է[5]: Սիմեոնը դուրս է բերած այստեղ որպես հեղինակավոր ոմն, որ վիճում է Հովհաննես Քերականի հետ Թեոդորա կայսրուհու և Միքայելի ներկայությամբ, և որ նա է, որ հաջողեցնում է Մեթոդիոսի ընտրությունը և ինքն էլ իբրև թե ստանում է սինկելլոսի պաշտոն պատրիարքարանում[6]:

Ուղղափառության մասին ճառող այս հոգևորականների համար խիստ բնորոշ է նրանց կաշառակերությունը և անձնական շահագրգռությունը: Թեոփիլոսի հոգու ազատ արձակման վերաբերյալ մի ամբողջ գրություն է հասել մեզ, ուր պատմվում են բոլոր մտացածին զրույցները, որ պատրաստել էին սուրբ հայրերը Թեոփիլոսին անմեղ հռչակելու:

---

[1] **Acta Davidis,** 248.

[2] **Theophanes**, De exsilio S. Nicephori, Migne, t. 100, col. 164.

[3] **G. Finlay,** History of the Byzantine and Greek Empires from 716-1453, London, 1906. Schlasser, Geschicte des Bilderstürm. **J. B. Bury,** A History of the Eastern Roman Empirer from the Fall of Irene to the Accession of Basil I, London, 1912, p. 148. «History of Greece» vol. II, 1876.

[4] **Theop. Cont.**, 153.

[5] **Acta Davidis,** 244.

[6] Նույնը, 250:

Թեոփոբոսի սպանությունից հետո Թեոփիլոս ծանր հիվանդ էր և խիստ անհանգիստ: Իբրև Թեոկտիստոս ծածուկ կրում էր վզից կախ Տիրոջ պատկերը: Թեոփիլոս մի օր նկատեց պատկերը և նշան արեց, որ Թեոկտիստոս մոտենա իրեն: Թեոկտիստոս դողում էր երկյուղից, կարծելով որ իրեն սպասում է Թեոփոբոսի բախտը: Բայց անչափ զարմացավ, երբ Թեոփիլոս բռնեց պատկերը և տարավ շրթունքներին և իսկույն զգաց թեթևություն իր ցավերին: Ամուսնու հոգեվարքին թագուհին մոտեցրեց նրան համբուրելու Հիսուս Քրիստոսի և Ս. Կույսի պատկերները: Մի այլ զրույցի համաձայն, թագուհին երազ է տեսնում, թե ինչպես Թեոփիլոսին շրթայված ներկայացնում են մի մեծ մարդու, որ գահի վրա էր նստած և ճակատին կրում էր Քրիստոսի նկարը: Թագուհին սկսում է լալ և աղերսել իր ամուսնու համար: Դատավորն անմիջապես հրամայում է Թեոփիլոսին պահող հրեշտակներին՝ արձակել նրա շղթաները[1]:

Մի ուրիշ առասպել. Մեթոդիոս գրեց բոլոր հերետիկոս կայսրերի անունը մի գրքի մեջ և դրեց սեղանի վրա: Թեոփիլոսի անունը ևս մտցրած էր գրքի մեջ: Մեթոդիոս երազ է տեսնում, թե ինչպես մի մարդ նրան ասում է, որ Թեոփիլոսին ներում է շնորհված: Արդարև, երբ մոտենում է սեղանին, վերցնում է գիրքը, տեսնում է, որ Թեոփիլոսի անունը այլևս չկար և նրա տեղ բաց էր[2]:

Պատկերների վերականգնման հանդիսավոր տոնը կատարվեց 843 թվի մարտի 11-ին՝ Մեծ պահոց առաջին կիրակին: Ամեն կողմից մայրաքաղաք թափվեցին կրոնավորներ շրջակա մենաստաններից՝ ահագին բազմությամբ: Գիշերային հսկումը կատարվեց մայրաքաղաքի Վլաքերնա թաղամասում գտնվող Ս. Կույսի (Աստվածածնի) եկեղեցում: Կիրակի առավոտյան կայսրուհին, մանուկ կայսրը և ծերակուտականները՝ պատրիարքի և եկեղեցական առաջնորդների ահագին թափորով շարժվեցին դեպի Ս. Սոփիա, խաչերով, պատկերներով և ջահերով:

Ժամանակակից մատենագիրները առասպելների հետևից ընկած անփույթ են գտնվել նկարագրելու մեզ երկու բանակների վերջին մրցությունը և հաղթանակը: Պատկերամարտների դիմադրության մասին ոչինչ չգիտենք: Գործն այսպես է ներկայացրած, կարծես պատկերապաշտների հակառակորդներն իսկույն անհետացել էին: Սակայն ինչ-ինչ նշաններից երևում է, որ դիմադրություն եղել է: Բավական է հիշել Մեթոդիոսի խայտառակ դեպքը: Պատմում են, որ պատկերամարտները դրդել են մի

---

[1] **De Theoph.,** absolutione, 32, տե՛ս «Analecta Byzantino ‹ussica».

[2] Նույնը:

կնոջ գանգատվելու, որ Մեթոդիոսը գայթակղեցրել է նրան, մինչև անգամ որդի է ունեցել: Պաշտոնական քննություն է նշանակվում: Մեթոդիոս ուրիշ միջոց չէ գտնում արդարանալու, քան բաց անելու (մերկացնելու) իր ամոթանքը (մերկությունը) և ցույց տալու, որ ինքը մարմնապես անընդունակ էր այն հանցանքին, որ վերագրվում էր իրեն: Այնուհետև պատվական հայրապետը, առանց ամաչելու, բացատրում է, որ Հռոմ եղած ժամանակ մարմնական ցանկությունն այնպես էր բուռն այրում, տոչորում իրեն, որ ստիպված Պետրոս Առաքյալից օգնություն աղերսեց: Իր աղոթքների շնորհիվ նա երազում տեսավ Առաքյալին, որի հրաշագործ շոշափումը ազատեց մարմինը և միտքը այլանդակ կրքերի և տարփանքի խառնումից: Կինն էլ իբրև թե խոստովանում է ողջ ճշմարտությունը, որ ինքը խաղալիք է եղել թշնամիների ձեռքին և, որ այս ամբողջ պատմությունը շինծու էր: Գենեսիոս, որ պահել է այս պատմությունը, հայտնում է, որ կինը Մետրոփանեսի մայրն էր, որ հետո դարձավ Զմյուռնիայի եպիսկոպոսը[1]:

Պատկերամարտության հիմնական կառույցները վերացան, իսկ նրա մնացորդները դատապարտվեցին 869 թվի ժողովում[2]: Սակայն հաղթությունը բացարձակ չէր: Պատկերամարտությունը թողեց իր հետքերը: Նրա ազդեցությամբ էր, որ եկեղեցուց վերացան քանդակագործ պատկերները: Լուսամիտ և կիրթ հասարակությունն ընդդեմ էր պատկերների պաշտամունքին, բայց ընդունում էր նրանց գործածությունը եկեղեցիներում, սակայն առանց պաշտամունք մատուցանելու: Մի տեսակետ, որ պարզ արտահայտված է Միքայել II Թլվատի նամակում առ ֆրանկների կայսր Լյուդովիկոս I Բարեպաշտը և որը լուրջ պատկերամարտների տեսակետն էր: Վեճը միշտ տանում է դեպի ծայրահեղություն, երկու կողմն էլ մեղանչում էին՝ չափազանցության հասցնելով իրենց վերաբերումը դեպի պատկերները:

Քրիստ[ոնեական] եկեղեցին, որպես արևելյան հաստատություն, պիտի խորշեր աստվածայինի մարմնավոր արտահայտությունից: Սակայն արևմուտքի համար, որ սովոր էր հելլեն արձանագործության հրաշակերտ հիշատակարաններին, որ ներկայացնում է հեթանոսական աստվածներ, հասկանալի է, խոտելի չէր պատկերագրությունը: Ճշմարտությունը միջին ուղու վրա էր՝ **պատկերահարգություն** և ոչ **պատկերապաշտություն** (17):

---

[1] **Genes.**, 83-84.

[2] **Mansi**, t. XVI, 389.

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱ

I

Թեոփիլոս կայսրը (829-842) զինակցություն էր որոնում հեռավոր Արևմուտքում ընդդեմ արաբների: Հատուկ պատգամավորություն ղրկեց այս նպատակով Լյուդովիկոս Բարեպաշտի և Սպանիայի ամիրայի մոտ:

Պատգամավորության գլուխն էր Թեոդոս Բաբուցիկ պատրիկը, որի անունը վկայում է նրա հայ ծագումը (Բաբոց): Սա ներկայացավ Լյուդովիկոս կայսեր 839 թվին, հունիս ամսին, և հավանորեն միևնույն պատգամավորությունն էր, որ այնտեղից անցավ Սպանիա:

Բյուզանդական արքունիքը հաջողության ակն ուներ մանավանդ սպանական ամիրայից: Կորդովայում հաստատված իշխանական տունը Օմմայան հարստության մի ճյուղն էր, ոխերիմ թշնամի Բաղդադի Աբբասյան տոհմին: Թեոփիլոսն ուզում էր օգուտ քաղել այդ հանգամանքից: Պատգամավորությունը պատվեր ուներ գրգռել Կորդովայի ամիրային և ոտքի հանել Աբբասյանների դեմ: Ամիրան այդ ատեն Աբդուր-Ռահմանն էր (815-850):

Նույն 839 թվի վերջերը ամիրայի կողմից պատասխան-պատվիրակություն եկավ Բյուզանդիա գլխավորությամբ Յահյա-ալ-Ղազզալ անձի, որը ղրանիկ նշանավոր բանաստեղծներից մեկն էր: Յոթանասուն տարեկան ծերունի էր, բայց դեռ պահել էր առնական կորովը այն աստիճան, որ զարմանք էր հարուցանում և հիացում բյուզանդական պալատում: Անշուշտ ուրիշ ավելի հարգի արժանիք ուներ, որ այնպես սիրելի եղավ կայսեր և հրավիրվում էր մասնակցել արքայական սեղանին, թեև ոգելից ըմպելիքների ներկայությունը գայթակղեցուցիչ էր ուղղափառ մուսուլմանի համար:

Յահյա-ալ-Ղազզալ մի անգամ կայսեր մոտ նստած խոսում էր, երբ հանկարծ հարևան սենյակից ներս մտավ թագուհին ազնվական պճրանքով: Չնաշխարհիկ մի գեղուհի, ասես «գեղեցկության արև էր, որ ծագեց»: Արաբ բանաստեղծը այլայլվեց զմայլանքից, աչքը մնաց սևեռած այդ աննման պատկերին: Խելքը, ուշքը, կորցրել էր, այլևս չէր լսում թե ի՞նչ է խոսում կայսրը: Անուշադիր լինել կայսերական զրույցին ավելի քան անքաղաքավարություն էր և խորշելի պալատական նուրբ նիստ ու շարժի տեսակետից: Կայսրը զարմացած հարցրեց թե ի՞նչ է նշանակում այս տարօրինակ վարմունքը: Յահյա-ալ-Ղազզալի պատասխանը անսպասելի չէր.

«Տե՛ր կայսր, ես աքանչացա, ապուշ կտրեցի, թագուհու կախարդական գեղեցկությունից ուշք ու միտքս գլխիցս թռավ, չկարեցա այլևս հետևել խոսակցությանդ: Հավատացնում եմ, որ կյանքումս երբեք այսպիսի չքնաղություն չեմ տեսած»:

Այս ասելով արաբ բանաստեղծը սկսեց մի առ մի թվել և նկարագրել կայսրուհու հմայքները, հայտնել իր զեղումն հիացումը և վերջացրեց խոսքը շեշտելով որ գերված, դյութված է մանավանդ թագուհու **սևորակ աչերից**[1]:

Այդ սևորակ աչերի տերը հայուհի էր: Հայ աչերի հռչակը, ուրեմն, հասնում է մինչև IX դարը: Կայսրուհին, Թեոդորա էր անունը, արդարև գեղանի էր ոչ միայն մայրաքաղաքի, այլ համայն պետության չափով: Նրա ընտրության և ամուսնության շուրջը կատարյալ առասպելներ են պատմում հները:

Երբ Թեոփիլոս արքունքի հասավ, մոր առաջին հոգն եղավ արժանավոր հարս ընտրել նրա համար: Հրաման ուղարկեց պետության ամեն կողմերը, որ ամենագեղանի աղջիկներին հավաքեն բերեն մայրաքաղաք: Լայնատարած կայսրության մեջ պակաս չէին դեռահաս գեղեցկություններ: Կայսերական պատվերը կատարվեց և շուտով հատընտիր գեղուհիները ճանապարհ ընկան բախտի ետևից դեպի մայրաքաղաք:

Թագուհի մայրը, Եվփրոսինե, ժողովեց բոլորին պալատ և դահլիճներից մեկում նշանակեց հարսնատեսության հանդես: Արքայական փեսացուի ձեռքը տված մի խնձոր, ոսկե խնձոր, որ աղջկան որ հավաներ նրան պետք է տար խնձորը: Մատաղ ընտրելիները կանգնած էին շարքով և սրտատրոփ սպասում էին այս նոր Պարիսի վճռին: Վայրկյանը հուզումնալից էր: Թեոփիլոս անցավ, նայեց, դիտեց, զննեց և կանգ առավ մեկի առաջ, որի անունն էր Կասսիա: Ընտրությունը կատարված էր: Ձեռքը մեկնեց խնձորը տալու և ասաց. «Արդարև, վատ բանը կնոջից է ծագում»:

Աղջիկն առանց քաշվելու վրա բերեց. «Սակայն, լավ բանը ևս կնոջից է ծագում»:

Թեոփիլոսի խոսքը, երևի, մի ակնարկ էր Եվայի մեղսագործության: Ուզում էր ասել, որ ամեն մի կին մի նոր Եվա է, պատճառ մարդու անկման: Պետք է կարծել, որ Կասսիայի պատասխանածն էլ նկատի ուներ Մարիամ Աստվածածնին, որ վերածնեց մարդկությունը, սկիզբը եղավ նոր կյանքի: Փեսայի ասածը, անշուշտ, ախորժ հաճոյախոսություն չէր, բայց հարսնացուի պատասխանը ևս հեռու էր պարկեշտ լինելուց: Պալատական խստապահանջ բարքերին հակառակ էր Կասսիայի վարմունքը և նա տուժեց: Թեոփիլոսին դուր չեկավ աղջկա համարձակությունը: Հարսնության

[1] **Ahmet Ibn Mohammet al Makkari**, The History of the Mohammedan dynasties in Spain, II, 114-115.

ոսկե խնձորը տվավ մի ուրիշ օրիորդի, որի անունն էր Թեոդորա: Պարտված և վշտացած, Կասսիան հեռացավ մի վանք ողբալու իր օրհասական սխալը կուսակրոն մենության մեջ:

Երևակայությունը զգալի տեղ ունի այս պատմվածքի մեջ, բայց և այնպես զուրկ չէ և իրական կորիզից: Կասսիա հայտնի է որպես հեղինակ մի քանի գրվածքների, որոնց մեջ կարևոր է մեզ համար այն չարամիտ երգիծաբանական տողերը, որ ուղղված են հայերի հասցեին[1]: Հավանական է, որ Թեոփիլոս սկզբում աչք է ունեցել Կասսիայի վրա, բայց հետո հաղթանակել է Թեոդորա: Վշտացած գեղուհին ստիպված է եղել սրտի դառնությունը թափել հայերի գլխին ընդհանրապես:

Կա և մի ուրիշ զրույց նույն նյութի վրա: Այստեղ Թեոփիլոսի հարսնացուները յոթ հոգի էին: Բոլորին մի մի խնձոր շնորհեց: Հետևյալ օրը նորից հրավիրեց նրանց արքունիք և հարցրեց, թե ի՞նչ են արել խնձորները: Բանից դուրս եկավ, որ միայն Թեոդորան էր բերել խնձորը: Ստացած խնձորը ներկայացրեց Թեոփիլոսին և իր կողմից էլ մի ուրիշ խնձոր նվիրեց նրան: Կայսրը զարմացավ, չէր հասկանում նվերի խորհուրդը: Թեոդորա բացատրեց, որ առաջին խնձորը նշանակ է իր կուսական անարատության, երկրորդը՝ գրավական լումա իրենից ծնելի որդուն: Երբ Թեոփիլոս հարցրեց, ի՞նչ է նշանակում այս գուշակությունը, Թեոդորա պատմեց, որ մայրաքաղաք գալուս ճանապարհին այցելել է մի սյունակյաց սուրբ ճգնավորի Նիկոմիդիայում: Նա է, որ իրեն խնձորը տվավ և ասաց կանխատեսությամբ, որ պիտի արքայական գահի արժանանա[2]:

Զրույցիս ծագումը բոլորովին արհեստական է, առաջին պատմվածքի դիտավորյալ փոփոխակը: Այն օրից, երբ Թեոդորա մեծ համբավ ստացավ և պատկերապաշտությունը վերականգնելուց հետո արդեն սրբանալու շավղի վրա էր, նրա ջերմեռանդ կողմնակիցներին անախորժ է թվել, որ բարեպաշտ թագուհին իր բախտը պարտական լիներ Կասսիայի թեքևամիտ անզգուշության: Ուստի և բարեփոխել են նախորդ զրույցը:

Բյուզանդական պատմությունից հայտնի են ուրիշ օրինակներ, երբ գահաժառանգի համար վայելուչ հարս ընտրելու նպատակով գեղեցիկ թեկնածուներ են ժողովում արքունիք: Այս եղանակով էր ընտրվել Կոստանդին VI կայսրի կինը՝ Մարիամ, 788 թվին, Ստավրակիոսի կին Թեոփանո՝ 807 թվին, և Միքայել III-ի կինը՝ Եվդոկիա 855 թվին: Վերջինս Թեոդորայի որդին էր և ուրեմն մայրը փեսայացրել էր իր որդուն նույն ձևով ինչպես որ ինքն էր հարսնացել:

Բյուզանդական բարքերի տեսակետից հետաքրքրական է հիշել, որ

---

[1] Տե՛ս հոդվածս «Կասսիա միանձնուհի և հայերը»՝ «Հանդես Ամսօրյա», 1901 (1):

[2] Vita Theodorae Imperatricis, **Analecta Byzantino-russica,** éd. Regel, p. 4.

երբեմն հատուկ հրահանգներ էին տրվում կայսերական շրջիկներին, որ ուշադրության առնեն թեկնածու աղջիկների ինչ ինչ հատկությունները, օրինակ հասակի, գլխի և կամ ոտների ու ձեռքերի մեծությունը, և որ ընտրությունը կատարեն համաձայն հանձնարարված չափերի: Արքայական փեսայի պահանջկոտ ճաշակին հարմար էր եկել այս տեսակետից վերոհիշյալ Մարիամը, որ Արմենիակոն թեմիցն էր և քոռն Փիլարետի, որ հայ ծագում ուներ և առաքինի ու ողորմած կյանքի համար դասվեց սրբերի շարքը: Սրա վարքի մեջ է հիշատակված ընտրության այս պարագան[1]:

Եթե ուզում ենք հավատ ընծայել հարսընտրության այս եղանակի իսկության, պետք է ենթադրենք, որ ընտրությունը սահմանափակված էր որոշ հասարակական շրջանում: Պետական ասպարեզներում փայլող ականավոր ընտանիքների գեղանի դուստրներն էին, հավանորեն, որ հրավիրվում էին արքունիք այս կամ այն եղանակով, ցանկալի ընտրությունը կատարելու նպատակով: Ամեն պարագային Թեոդորայի հարսնությունը արդյունք չէր միայն իր բնական գեղեցկության: Թվում է, որ և քաղաքական աստառ կար:

Թեոդորա ծննդյամբ Եբիսսա քաղաքից էր, որ գտնվում էր Պափլագոնիայում: Տեղը հայտնի չէ, հավանորեն Եբիսսա կապ ուներ Աբիսիաև կոչված գավառի հետ, որը հիշվում է 863 թվի արշավանքի տեղագրության մեջ և որը գտնվում է Պափլագոնիայի և Արմենիակոն թեմի սահմանագլխին:

Թեոդորայի հոր անունն էր Մարինոս և մոր՝ Թեոկտիստե, վերակոչյալ Փլորինա[2]:

Մարինոսը հասարակ մարդ չէր, դրունգարի թե տուրմարքի կոչում ուներ, որ սպարապետից (στρατηγος) հետո բարձրագույն աստիճանն էր զինվորական: Բացի Թեոդորայից Մարինոսն ուներ երկու որդի՝ Վարդաս և Պետրոնաս: Մատենագիրները ոչինչ չեն ասում, թե ի՞նչ ծագում ուներ այս տոհմը: Սակայն Վարդաս, որ է հայերեն Վարդ անունը, արդեն պերճախոս և անսուտ վկա է Մարինոսի ազգության: Բարեբախտաբար, դրական ցուցում ևս կա: Մարինոսի եղբայրն էր Մանուել սպարապետը, անվանի անձն, պետության ամենակարկառուն դեմքը: Մատենագիրները ավանդում են միաբերան որ սա հայ էր[3]: Վկայում են նաև, որ Մանուելը Թեոդորայի հորեղբայրն էր, *Θεῖος*[4]:

---

[1] **Vita Philareti**, Известия Русского Археологического Института = Կ. Պոլսի Ռուսական Հնագիտական ինստիտուտի հանդես, V, 76.

[2] **Theoph. Continuatus,** 89; **Symeon**, 625: Սկզբնական աղբյուրն է վերոհիշյալ Vita Theodorae, էջ 2:

[3] **Theoph. Cont.**, 110; **Genesius**, 52.

[4] **Ibid**, 148.

Մանուել և Վարդ անունները տանում են մեզ դեպի Մամիկոնյան տունը: Նախարարություններն իրենց հատուկ տոհմական անուններն ունեին: Այս երկու անունները Մամիկոնյան են առավելապես:

Մեր մատենագիրները ընդհանրապես ժլատ են բյուզանդական հայերի նկատմամբ, չեն սիրում նրանցով զբաղել, գուցե և հայ չեն համարում այդ «հոռոմներին», որ հեռացել էին մայրենի եկեղեցուց: Մանուելը այն բացառիկ անձերից է, որոնց հիշատակը արժանացել է ուշադրության: Մանուելը գժտվեց բյուզանդական արքունիքի հետ և հեռացավ առժամանակ Բաղդադի դուռը: Վարդան պատմիչը հիշելով այս հանգամանքը, Մանուելին անվանում է Մամիկոնյան. «ելանէր ի խնդիր մեծ զօրավարին **Մանուէլի Մամիկոնենոյ** եւ նորա աճապարեալ հարիւր եւ յիսուն արամբք անկանի ի Կամախ և անտի առ Մամուն իշխանն Իսմայէլի»[1]:

Այս վկայությունը կարևոր է, որովհետև ծագում է հավանորեն, Շապուհ Բագրատունի պատմագրից, որ նույն դարու մարդ էր և թերևս ծանոթ իսկ նշանավոր զորավարին:

Սրանով հաստատվում է, որ Թեոդորա՝ Մանուելի եղբոր Մարինոսի աղջիկը հայ էր և այն էլ Մամիկոնյան իշխանուհի:

Հակառակ զրույցներին, Թեոդորա իր բախտը պարտական չէր միմիայն իր գեղեցկության: Բյուզանդական արքունիքում այնքան զորեղ էին փառասիրական տենչանքները և այնքան կատաղի հակամարտությունը անհատների և խմբակցությունների միջև, որ միայն գեղեցիկ սև աչերը բավական չէին, որ մի գավառական համեստ աղջիկ արժանի համարվեր կայսերական թագին: Թվում է, որ Մամիկոնյան իշխանների հռչակը, այն դիրքը, որ նրանք կարողացել էին ստեղծել Բյուզանդիայում, մասնավորապես Մանուելի պատկառելի անձը և բարձր անունը, վճռական դեր են կատարել Թեոդորայի ընտրության մեջ:

Թեոդորան ուներ երեք քույր՝ Սոփիա, Կալոմարիա կամ Գեղանի Մարիամ և Իրինե: Սոփիան ամուսնացավ Կոստանդին Բաբուցիկ հայ իշխանի հետ, որին մոտ արենակից էր այն Թեոդոս Բաբուցիկը, որ դեսպանության գնաց արևմուտք 839 թվականին: Բաբուցիկ փաղաքշական էր Բաբոց անվան:

Մարիամը ևս հայ ամուսին առավ, որ էր Արշավիր պատրիկ և մագիստրոս, հավանորեն Կամսարականներից: Արշավիրը մի քույր ուներ Իրինե անունով, որ մայր դարձավ հռչակավոր Փոտ պատրիարքին, հույն եկեղեցու պարծանքին: Այս Իրինեի հետ մատենագիրները շփոթել են Թեոդորայի քույր Իրինեին, որ բոլորովին տարբեր անձ է: Սա Թեոդորայի այն քույրն է, որ հետո ամուսնացավ Թեոփոբոս նշանավոր զորավարի հետ:

[1] **Վարդան**, էջ 77:

Հիմք կա կարծելու, որ Թեոփոբոս պարսիկ չէր, այլ արաբական Հայաստանից փախած հայ:

Մարինոսի տան խնամությունը հայերի հետ ցույց է տալիս, որ օտարացած հայերից չէր և հավանական է որ Մարինոսի կինը՝ Թեոկտիստե-Փլորինան ևս հայ էր, որ իր դուստրերին կնության տվավ հայ մարդկանց:

Մարինոս և Մանուել միակ Մամիկոնյանները չէին: Կային և ուրիշները, նույնպես օժտված բախտից, որոնցից մեկին փեսայացրեց Թեոդորան իր դստեր Մարիամին: Դա Ալեքսիոս-Մուշեղ ականավոր Մամիկոնյանն էր, որ կեսար էր հայտարարված և ուրեմն գահ պիտի բարձրանար, եթե Թեոդորան մեռներ առանց արու ժառանգի:

Հայ ուժի և ազդեցության շրջանն էր: Ութերորդ դարու վերջերն էր, երբ հորդան տվեց հայության ամեհի ալիքը, որպեսզի հաջորդ դարում ողողեր բյուզանդական արքունիքը և հիմն ձգեր հայկական պերճ հարստության և Բյուզանդիոնի իսկական մեծության: Շարժման դրոշակակիրները Մամիկոնյան զավակներն էին: Սակայն, այստեղ ևս, ինչպես Հայաստանում, նրանք կարողացան միայն ցանել մեծագործություններ, իսկ հունձքը քաղեցին ուրիշները:

Արդյոք նույն համառ և տոկուն հակառակորդը չէ՞ր, որ Հայաստանում ևս խլեց նրանցից արքայական թագը:

II

Ութերորդ դարու վերջերից սկսած Մամիկոնյան տունը հետզհետե ընթանում է դեպի չքացում: Բուլղայի գերության մեջ էր Մամիկոնյաններից մի հոգի՝ Գրիգոր իշխանը, որ հաջողեց փախչել գալ հայրենիք: Մինչ Բագրեվանդից ուզում էր անցնել հարևան Գաբեղյան գավառը, հանկարծակի մեռավ: Արաբ ոստիկանը հետապնդում էր Գրիգորին:

Աշոտ Բագրատունին, ապագա թագավորը, «կտրեց մեռածի գլուխը,- ասում է պատմագիրը, - և առաքեց ոստիկանին, ասելով թե Գրիգորը կամենում էր անցնել Հունաց կողմերը և ինքը մարդ ղրկեց ետևից և սպանեց և ահա նրա գլուխը»:

Խորհրդավոր պատմություն, անկախ պատմական ստուգությունից: Գրիգորը անծամբ կենդանի էր թե մեռած, երբ Աշոտի դահիճը կտրեց նրա գլուխը, այդ չէ կարևորը: Մամիկոնյան տունը այդ պահին արդարև քամված, ջլատված ուժ էր, և նրա գլուխը կտրել նշանակում էր մեռածի գլուխ կտրել: Ընկան Մամիկոնյանները, հանգավ հայ խիզախության դարավոր ճրագը: Պատմիչը արձանագրելով Գրիգորի տխուր վախճանը, ավելացնում է. «Եւ այնմ հետէ բարձաւ ի Հայոց աշխարհէս ազգն Մամիկոնէից»[1]:

[1] **Վարդան**, էջ 81:

Այսպես, երբ հայ հայրենիքը հրաժեշտ էր տալիս Մամիկոնյան տան, նրա վերջին գերեզմանն էր հարդարում, նույն տան տարագիր զավակները շարունակում էին փայլել իրենց տոհմական տաղանդով Բյուզանդական պետության մեջ:

Հարևան քրիստոնյա տերությունը վաղուց է, որ ապաստարան էր դարձել հայ քաղաքական տարագիրների համար: Կյանքի դժնդակ պայմանները, անդադրում մաքառումը արաբ բռնության դեմ և այս գետնի վրա բուսած ներքին տարաձայնություններն ու կուսակցական բախումները հաճախ դուրս էին նետում հայրենի ոլորտներից մարտական կարող ուժեր, անհատական խոշոր տիպարներ և երբեմն նույնիսկ ժողովրդական մեծամեծ հատվածներ:

Քաղաքական մթնոլորտը պղտորված էր և կրքերը լարված, երբ Կոստանդին կայսրը (740-775) խլեց Կարինը արաբներից և շատերը ցանկացան գաղթել կայսրության սահմանները. «Եւ բազումք ի բնակչաց գաւառացն խնդրեալ յարքայէն, զի գնասցեն զկնի նորա: Եւ նորա տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղխս իւրեանց խաղացին յառաջ... Թողին զերկիրն ծննդեան իւրեանց եւ հատուածեալք անկան ի կողմն արքային բարեբաշտի»[1]:

Հույն պատմիչների վկայությամբ, երբ Կոստանդինը առավ Կարին և Մելիտինե քաղաքները, ինքն էր, որ տեղական ժողովրդից մեծ գաղթականություն հանեց և բնակեցրեց Թրակիա[2]:

Նույն կայսեր օրով էր դարձյալ, որ նախարարներից շատերը «մերժեալք լքին զժառանգութիւնս իւրեանց եւ փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»:

Հայտնի է նաև Շապուհ Ամատունյաց իշխանի և իր որդու Համամի մեծ գաղթը տասն և երկու հազարանոց բազմության գլուխն անցած նույն կայսրի վերջին տարիները: Տեղափոխություններ ստեպ են կատարվել մասնական թե զանգվածային սկսված VI դարուց:

Իշխանական տներից շատ շատերին վիճակվեց ճաշակել պանդխտության դառնությունը: Ոմանք կորան պատերազմի դաշտերում, ոմանք ընտելացան նոր հայրենիքին և ծառայեցին նրա փառքին: Արշակունի, Բագրատունի, Մամիկոնյան, Կամսարական, Խորխոռունի, Գնունի, Ամատունի, Անձևացի և այլ տներ, ունեցան ամենեքյան իրենց շողշողուն ներկայացուցիչները: Սկզբում հայ ազնվականները սփռված էին որպես հատ հատ ծաղիկներ կայսերական զորականության մեջ, հետո խտանում են և կազմում հայկական մի սեղմ միջավայր:

---

[1] **Ղևոնդ**, գլ. ԻԹ և ԼԲ:

[2] **Theophanes**, էջ 662, **Nicephore Patriarche**, 60.

Ութերորդ դարու երկրորդ կեսին կայսերական բանակն արդեն հայերի ձեռքին էր: Լևոն կայսրի օրով 778 թվին հարյուր հազարանոց բանակը շարժվեց դեպի արաբական սահմանները և գրավեց Գերմանիկե, արդի Մարաշ քաղաքը: Ջորքի հրամանատարներն էին Միքայել Լախանոդրակոն, սպարապետ Թրակեսյան գնդի, **Արտավազդ**, սպարապետ Անատոլիկյան գնդի, **Տաճատ**, սպարապետ Բուկելլարյան գնդի, **Վարազտիրոց**, սպարապետ Արմենիակյան գնդի, (ո՛չ Կարիստիրոց, ինչպես տպագրված է), **Գրիգոր, որդի Մուշեղակի**, սպարապետ Օփսիկյան:

Հինգ զորավարներից չորսը հայեր են, չորս նշանավոր թեմերի ստրատեգներ, այսինքն՝ զինվորական պետեր:

Թեմ էին կոչվում Բյուզանդիոնում զինվորական մեծ շրջանները: Սկզբնապես թեմ նշանակում էր որոշ զորամաս՝ բաղկացած մերձ տասը հազար հոգուց, հետագայում ստացավ աշխարհագրական իմաստ, համազոր այն շրջաններին, ուր ընկնում էին նրանց մշտական կայանները: Արմենիակյան թեմը տարածվում էր Հայաստանի սահմաններից մինչև Սինոպ, իր մեջ ունենալով և Ալիսի գետաբերանի արևմտյան շերտերը, այն որ հնում բոնում էր Պափլագոնիան: Այս է պատճառը, որ Թեոդորայի մասին ասում են որ Պափլագոնացի աղջիկ էր, գոյ ածելով հին անունը փոխանակ նորի՝ Արմենիակոնի կամ Արմենիակյանի:

Մյուս կարևոր թեմն էր Անատոլիկյանը, որ ընկնում էր Արմենիակյանից արևմուտք, տարածվելով Ալիս գետից մինչև Եգեական ծովափը: Սրանից զատվեց արևմտյան ծովեզրյա մասը՝ Զմյուռնիայի շրջանը, կազմեց նոր թեմ Թրակեսյան անունով, որովհետև այստեղի զորամասը բաղկացած էր Թրակացի գոթերից:

Կայսերական անձնապահ գունդը նստում էր մասամբ մայրաքաղաքում և մասամբ ասիական ցամաքի վրա: Մայրաքաղաքին հպած ասիական հողամասերը կրում էին այս պատճառով Օփսիկյան (լատ. **obsequium** բառից) անունը: Օփսիկյան թեմի արևելյան մասը, Անգորայի շրջանը, կազմեց ինքնուրույն թեմ Բուկելլարյան անունով, ստանալով իր անունը **bucellum** բառից, որ նշանակում է զինվորական հաց: Այստեղ նստած գունդը զբաղված էր զորքի պարենավորման գործով:

Այսպես ուրեմն, ամբողջ Փոքր Ասիան բաժանված էր չորս թեմերի՝ 778 թվի արշավանքի ժամանակ: Բացի Թրակեսյան փոքր թեմից, մյուս բոլորը գտնվում էին հայ զորավարների իշխանության տակ: Զորավարները, կամ հունական բառով ստրատեգները, թեմերի միահեծան կառավարիչներն էին:

Ավելորդ չէ հիշել, որ արշավանքը չհաջողեց շնորհիվ Միքայել Լախանոդրակոնի խարդավանության: Ջորքը պաշարեց Մարաշը, բայց չկարողացավ առնել, որովհետև արաբները կաշառելով Միքայելին, այլ ելք տվին գործին:

Հիշված հայ զորավարները տակավին նոր էին թողել հայրենի հողը: Արտավազդը, Անատոլիկյան թեմի տերը, այն համաձուն Մամիկոնյան իշխանն էր, որ 771 թվին խփել էր արաբ հարկահանին և փախել արևմուտք: Արտավազդը Հմայակի որդին էր և ուներ եղբայրներ, եթե միայն «յորդւոցն Հմայեկի» չկարդանք «յորդւոյն Հմայեկի»[1]:

Տաճատը ևս ծանոթ է մեզ Ղևոնդից: Սա Անձևացյաց իշխան Գրիգորի որդին էր, անցել էր Բյուզանդիոն, հռչակ ստացել Թրակիայում բուլղարների դեմ մղած ճակատամարտում և 778 թ. Բուկելլարյան թեմի սպարապետն էր:

Լևոն կայսեր մահից հետո, երբ պետության գլուխ անցավ Իրինե թագուհին, որ Աթենացի հույն աղջիկ էր, սկսվեց հակահայ շարժում: Առաջին զոհը եղավ Տաճատը, որը և փախավ արաբների մոտ և մեծ ընդունելություն գտավ: Փախուստի առթիվ, որ եղավ 782 թվին, Ղևոնդն ասում է, որ Տաճատը ծառայել էր կայսեր 22 տարի: Ասել է թե Հայաստանից հեռացել էր 760-ական թվականներին, ուրեմն հայ-արաբական կռիվների շրջանում:

Վարազտիրոցը և Մուշեղակի որդի Գրիգորը թվում է թե Աշոտ Կույրի անբախտության հեղինակների զավակներն էին: Աշոտի հակառակորդներն էին «Սմբատայ որդիք» և Դավիթ ու Գրիգոր իշխանները: Սմբատը որդի էր Վարազտիրոցի և կյուրապաղատության պատիվ էր ստացել Վարդանակերտի հաղթությունից հետո: Ըստ Մովսես Կաղանկատվացու Սմբատը մեռավ 727 թվին[2]: Արդ՝ սրա որդին էր հավանորեն Արմենիակյան թեմի զորավար Վարազտիրոցը, որ կրում էր իր պապի անունը, ինչպես սովորություն էր, և Բագրատունյաց տոհմիցն էր:

Դավիթ և Գրիգոր Մամիկոնյանները սպանվեցին 749 թվին: Իսկ սրանց երրորդ եղբայրը Մուշեղը Գրիգորի մահից հետո նրա տեղը բռնեց կարճ ժամանակով («եւ կացուցին իշխան զեղբայր նորին զՄուշեղ սակաւ ինչ ժամանակս»)[3]:

Այս Մուշեղին պետք չէ շփոթել համանուն անձի հետ, որ 775 թվի ապստամբության ղեկավարն էր: Սա Հրահատ կոմսի որդին էր Մամիկոնյան տոհմից, մինչդեռ Գրիգոր, Դավիթ և Մուշեղ եղբայրների մասին պատմագիրը նույն ցուցումը չէ տալիս: Երևում է, տարբեր անձեր են:

Թվում է թե Գրիգորի եղբոր Մուշեղի որդին պետք է լիներ այն Գրիգորը, որ Օփսիկյան թեմի զորավարն էր 778 թվի արշավանքին: Գրիգոր անունը կարող է որոշ հիմ ծառայել այս նույնացման:

Հրահատյան Մուշեղի որդին չէր կարող լինել Գրիգոր զորավարը, որով-

---

[1] **Ղևոնդ**, էջ 138:

[2] **Մովսես Կաղանկատվացի** (Փարիզ, 1860), Գ, ԺԶ:

[3] **Ղևոնդ**, էջ 124:

հետև Մուշեղ երկու որդի թողեց, երկուսն էլ սպանվեցին Մեհրուժան Արծրունու ձեռքով:

Գրիգոր զորավարը խառն էր այն դավադրության, որ կազմված էր 782 թվին ընդդեմ Իրինե կայսրուհուն: Գրիգորը այդ միջոցին պոստի լոգոթետ էր, այսինքն՝ հաղորդակցության մինիստր, որը սակայն ավելի համապատասխանում էր արդի ներքին գործերի մինիստրության:

Դավաղիրները չոյս հոգի էին պալատական մեծամեծներից, որոնցից երեքը հայ էին, Գրիգոր, Վարդ և Կոստանդին:

Վարդը պատրիկ էր և Արմենիակյան թեմի զորավար: Սա Արծրունյաց տոհմից էր և հայտնի դարձավ մանավանդ իր հռչակավոր որդով, որ գահ բարձրացավ Լևոն V Հայ անունով: Ղևոնդ պատմագրից հայտնի են Վահան Արծրունու որդիները՝ Սահակ, Համազասպ ու Գագիկ և վերջնիս որդիները, Համազասպ, Սահակ և Մեհրուժան: Սրանք բոլորը մեռան հայ հողի վրա մինչև 785 թ., կենդանի մնաց միայն Մեհրուժանը: Սակայն մյուսների սերնդի մասին տեղեկություն չունինք: Անհավանական չէ, եթե Վարդը նրանց զավակներից լիներ, հեռացած արևմուտք, նման մյուս իր ժամանակակից գործիչներին, Արտավազդին, Գրիգորին և Տաճատին:

Մյուս դավաղիրը՝ Կոստանդին որդի էր Վարդան պատրիկի և հրապարակի վրա էր 765 թվից, երբ դեռ սպաթար էր և կայսեր պրոտոստրատոր: Այժմ պալատական հեծյալ գնդերից մեկի, էքսկուբիտորների, պետն էր, որ կոչվում էր դոմեստիկոս (մեր պատմիչների դոմեսլիկոսը): Վարդանը զորավար էր Արմենիակյան թեմի նախքան Վարդը և գոնե անունից դատելով ևս Մամիկոնյան տան զավակ էր: Նույն տոհմը այդ միջոցին մի ուրիշ և ավելի փառավոր ներկայացուցիչ ուներ, որ կրում էր կրկնակի անուն Ալեքսիոս - Մուշեղ:

Հիշյալ դավադրությունը ուղղված էր Իրինե կայսրուհու դեմ, որ իր ամուսնու՝ Լևոն կայսեր մահից հետո 780 թվին նշանակված էր խնամակալ իր տակավին մանուկ որդուն, Կոստանդինին:

Իրինե Աթենացի էր և ձգտում էր ուժեղացնել հույն տարրը և հետ մղել հայերին: Պայքարը անխուսափելի էր: Մոլեռանդ կայսրուհին հեռացրեց իրենից հայ նշանավոր մարտական ուժերին, շրջապատեց արքունիքը ապիկար և նենգամիտ ներքինիներով: Նա էր որ վերականգնեց 787 թ. պատկերների պաշտումը, որին հակառակ էին հայերը: Առաջին դավաղրական փորձը, թեև անհաջող անցավ, խրատական նախազգուշացում էր կայսրուհուն իր բոնի քաղաքական գծի համար:

Թագաժառանգ Կոստանդինը արդեն չափահաս էր: Մայրը ամուսնացրեց նրան Մարիամ անունով մի գեղեցիկ աղջկա հետ, որ Արմենիակյան թեմիցն էր: Այստեղ նշանավոր տները հայկական էին և Մարիամը ևս հայ ընտանիքից էր:

Ընտրությունը պատահական չէ թվում: Կայսրուհին թերևս փորձում էր մեղմել իր վերաբերումը դեպի հայերը: Այս միջոցին էր նաև, որ պալատական գնդի դրունգարն էր հայազն Ալեքսիոս-Մուշեղը:

Իրինե թագուհին ոչ միայն չէր ուզում զիջանել գահը իր որդուն, որ արդեն հասակավոր էր, այլ երբ պալատական մի անհաջող փորձ եղավ հօգուտ որդուն, փառասեր մայրը պատժեց հանցավորներին և փակեց պալատում իր որդուն, մեկուսացնելով նրան պետական գործերից: Արմենիակյան թեմը ընդդիմացավ թագուհուն, պաշտպան հանդիսանալով թագաժառանգի բոնաբարված իրավունքներին: Իրինե դիմեց Ալեքսիոս-Մուշեղի օգնության և նրան ղրկեց խաղաղացնելու ըմբոստ թեմը: Սակայն, Մուշեղը անցավ ապստամբների կողմը: Կայսրուհին ստիպված էր զիջել և արձակել բանտարկված որդուն, Կոստանդնին: Սա կառավարության ղեկը ստանձնեց, բայց ընկավ նույն ներքինիների ազդեցության տակ, և ականջ կախելով նրանց գաղտագողի շշուկներին, որպես թե Ալեքսիոս-Մուշեղը փառասիրական մեծ ծրագրներ ունի, տմարդորեն կուրացնել տվեց մեծ իշխանին, որին պարտական էր իր գահը:

Մուշեղն այդ ժամանակ Արմենիակյան թեմի զորավար էր: Հայերը գրգռվեցին, նորից ոտքի ելան, այս անգամ ապերախտ Կոստանդնի դեմ: Սա ուղարկեց երկու հայի՝ Կոստանդնի-Արտաշիրին և Քրիսոքիր անունով պավլիկյան աղանդավորին, որ Բուկելլարյան թեմի զորավարն էր, զսպելու Արմենիակյան թեմի խռովարարներին: Իրինե և իր ներքինիները հաջողեցին գժտեցնել Կոստանդնին հայերի հետ: Իրինեի թելադրությամբ էր նաև, որ Կոստանդինը բաժանվեց իր հայ կնոջից և ամուսնացավ ուրիշի հետ:

Մայրը որդուն կղզիացրեց, զրկեց իսկական պաշտպաններից, և ապա գրավեց նորից գահը, կուրացնելով իր որդուն և ընդմիշտ հեռացնելով մրցությունից 797 թվին: Հինգ տարի միայն վայելեց իր հաղթությունը, 802 թվին Իրինե տապալվեց ինքը և կործանեց ընդմիշտ Իսավրյան տունը: Դժգոհ տարրերը կազմեցին դավադրություն, որին մասնակից էր և վերոհիշյալ Գրիգորը՝ Օփսիկյանի զորավարը և հաջողեցին: Իրինե պարտավորվեց վանք քաշվել և քավել իր սխալները:

Իրինե զոհ գնաց իր ձախորդ քաղաքականության: Նա շեղվեց այն քաղաքական և կրոնական շավղից, որ գծել էին իր նախորդները և կամեցավ ծառայել հունական ազգային շահերին ավելի քան ներում էին իրական պայմանները: Այս է պատճառը, որ հույն եկեղեցին չի վարանել սրբացնել նրան, մի կնոջ, որ ընդունակ էր խարանել հարազատ որդու աչքերը, և ցայժմ էլ տոնում է նրա հիշատակը օգոստոսի 15-ին:

Ազգերի մրցությունն իր տեղն ունի բյուզանդական պատմության մեջ, մանավանդ հայ և հույն անխուլ պայքարը: Անկարելի էր անտեսել հայ ուժերը առանց ծանր հետևանքների:

Տեսանք, թե ինչ ականավոր դեմքեր էին խմբված հայ նախարարական ասպետությունից Իսավրյան տան վերջալույսին: Նրանք գլխավորապես Մամիկոնյան զավակներ էին, արծիվներ, որ վաղուց ճախրում էին կայսերական թագի շուրջը: Արտավազդ, Գրիգոր, Մուշեղ, Վարդան, Վարդ անունները մի բան ավելի են նշանակում, երբ պատկանում են Մամիկոնյան տան: Ահա մի տուն, որ ունի պատմական ուրույն նկարագիր՝ կերտված քաղաքական փոթորիկների մեջ, ունի տոհմական հատուկ խորշոմներ իր ճակատին:

Հայ ուժերի հենարանն էր Արմենիակյան թեմը իր զորաբանակով, որ բաղկացած էր մեծ մասամբ հայերից և գտնվում էր հայ զորավարների իշխանության տակ: Այս զորաբանակը կայսրության ռազմական ուժերի փայլն էր սկզբից ևեթ, իսկ հայ զորավարները մնացին մինչև վերջը զինվորական արվեստի անգերազանցելի վարպետներ:

Իսավրյան տան բնական հաջորդները հայերն էին: Գործող ուժերի փոխադարձ հարաբերականը այս էր թելադրում: Մի պատահմունք էր, որ Իրինեից հետո գահն ընկավ ոմն Նիկեփորի ձեռքը, որի ծագման մասին բյուզանդական երևակայությունը ավելի ցնցող առասպել չէր կարող հերյուրել քան այն, որ նա արաբ էր և այն էլ թագավորական ցեղից: Հանրական համակրությունը Նիկեփորի կողմը չէր և հետագայում նա ատելի դարձավ իր կեղեքիչ արծաթասիրության համար: Հազիվ թե գահ բարձրացավ, սկսան խռովությունները:

Գահի թեկնածու ելավ 803 թվին Վարդան Հայազն, առաջին զինվորական դեմքը պետության մեջ: Միաժամանակ հինգ թեմերի զորավար էր, *μονοστράτηγος*, այսինքն՝ մենասպարապետ: Իր իսկական թեմը Անատոլիկյանն էր: Նիկեփորի հակապատկերն էր Վարդանը որպես մարդ: Ազնվական բնավորության տեր էր, վսեմ շարժվածքով, արդարամիտ և անշահասեր: Այս ընտիր հատկություններով բնավ չէր նմանում պալատական արծաթամոլ և քծնի արարածներին և սիրելի էր ընդհանրության:

Վարդանը ուներ որպես գործակից երեք երիտասարդ սպա, որոնք հռչակվեցին ապագայում, Լևոն, Միքայել և Թովմաս: Երբ Վարդանը զորքով շարժվեց դեպի մայրաքաղաք, Լևոնը և Միքայելը լքեցին նրան և անցան Նիկեփորի կողմը: Ուստի որոշեց վայր դնել զենքը և քաշվեց վանք: Չախորդության պատճառներից մեկն, անշուշտ, այն էր, որ Արմենիակյան թեմը չեզոք դիրք բռնեց: Երևի, Գրիգոր, որդի Մուշեղակի, այդ միջոցին զորավար Արմենիակյանի, չուզեց ելնել ընդդեմ Նիկեփորի, որի բարձրացման գործակից էր եղել: Նիկեփորը հակառակ իր հանդիսավոր խոստման մարդ ղրկեց և կուրացրեց Վարդանին, կամենալով ազատվել միանգամ ընդմիշտ երկյուղալի ոսոխից:

Վարդանի մականունն էր Թուրք, հավանորեն, Քերսոնի ճակատում

երբևէ թյուրքերի դեմ կռված լինելու համար: Հետաքրքրական է, որ բյուզանդական մի ժամանակագրի, Սիմեոն Լոգոթետի, գործի սլավոն թարգմանության մեջ Թուրքի փոխարեն կարդացվում է Կուրտ, Kourt[1]: Հետաքրքրական է, որովհետև Կուրտ նույնն է թվում ինչ որ Կուրդիկ, կամ Քուրդիկ անունը, որ սեփական էր Մամիկոնյան տան: Կուրտ կարող էր Վարդանի հոր անունը լինել:

Վանական կյանքում ընտրեց Սաբբա անունը և այնքան փայլեց սրբակեցությամբ, որ հույն եկեղեցին սրբերի կարգը դասեց նրան և հիշատակը տոնում է ցայժմ սեպտեմբերի 8-ին:

Անցավ հինգ տարի և 808 թվին նորից մի հայ իշխան ծառացավ Նիկեփորի դեմ միևնույն դիտավորությամբ: Արշավիր պատրիկն էր, գիտուն և բարեմիտ անձ, պաշտոնով քվեստոր (quaestor), բարձր պաշտոն էր, որի համար պահանջվում էր գրական և օրենսգիտական մեծ պատրաստություն, որովհետև քվեստորն էր, որ խմբագրում էր օրենքները և կազմում կայսերական թղթակցությունները:

Արշավիրի կուսակիցներն էին բազմաթիվ ծերակուտականներ և բարձրաստիճան հոգևորականներ: Դավադրությունը սակայն անժամանակ բացվեց և հեղաշրջական փորձը վիժեց:

Անցավ նորեն հինգ տարի և 813 թվին այս Արշավիրի փեսան, սրա Թեոդոսիա դստեր ամուսին Լևոնը վրեժխնդիր եղավ և խլեց գահը Նիկեփորի տանից:

Նիկեփորին հաջորդեց իր միակ որդին՝ Ստավրակիոս, որ շուտով մեռավ: Ուներ և մի դուստր, որ ամուսնացավ Միքայել Ռանգաբեի հետ: Սա ժառանգեց գահը:

Վերև տեսանք, որ 780 թվի դավաղիրները չորս հոգի էին, Գրիգոր որդի Մուշեղակի, Վարդ, Կոստանդին՝ որդի Վարդանի, չորրորդն էր Թեոփիլակտոս Ռանգաբե, Միքայելը սրա որդին էր, որ փեսայանալով Նիկեփորին, տիրացավ գահին:

Միքայելը պարտություն կրեց բուլղարական արշավանքին և զորքը կայսր հռչակեց Լևոնին, որ դավաղիր Վարդի որդին էր:

Տեսանք, որ Կոստանդնի հայրը, Վարդան ևս փորձեց գահ բարձրանալ: Գրիգորը հիշվում է վերջին անգամ 802 և 803 թվերին: Արդյոք Ալեքսիոս-Մուշեղը սրա մոտ ազգականը չէ՞ր, թերևս եղբայրը:

Չորս դավաղիրներից երեքը արժանացան գահի հանձին իրենց մերձավորների: Ալեքսիոս-Մուշեղը, որ նմանապես թեկնածու եղավ կայսերական թագին, անհավանական չէ որ չորրորդ դավաղրի՝ Գրիգորի տանից լիներ և նրա իրավունքների, թե հավանականության արտահայտիչը:

---

[1] Հրատ. **Մրեզնևսկի**, էջ 88:

Լևոն Հային սպանեց Միքայելը, որ իր լեզվական թերության համար կոչվում է Թլվատ: Միքայելի օրով սակայն հայոց առաջադիմությունը չկասեց, այլ սկսվեց մի շրջան, երբ Մամիկոնյան տունը հասավ իր զորության բարձրագույն կետին, դառնալով փաստորեն պետության ղեկավարը:

III

Միքայել Թլվատը, իր նախորդ Լևոն Հայը և մի ուրիշ հայ՝ Թովմաս անունով, սկսել էին իրենց ասպարեզը Վաղդանի բանակում, այն զորավարի, որ 803 թվին փորձեց գրավել կայսերական գահը: Երեքն էլ Վարդանի դորյուփորներն էին, այսինքն՝ թիկնապահները:

Բյուզանդական պատմագիրները սիրում են առասպելախառն զրույցներով զարդարել նշանավոր անձերի կյանքը: Վարդանի մասին պատմում են, որ նախքան ապստամբելը գնացել էր մի ճգնազգյաց վանականի մոտ, հայտնել նրան իր փառատենչ ծրագիրը և խնդրել, որ աղոթե գործի հաջողության համար: Վանականը առանց քաշվելու խորհուրդ էր տվել Վարդանին հրաժարվել իր ձեռնարկից, որովհետև մարգարեական աչքով տեսնում է, որ գործը պետք է ձախողի և ինքը զորավարը պետք է զրկվի աչքի լույսից:

Վարդանը հեռանում է և մինչ նրա սպաթարները՝ Լևոն, Միքայել և Թովմաս քարշում էին ձին, որ զորավարը նստե, վանականը հետ է կանչում Վարդանին և ասում, որ երեք սպաթարներից առաջինը և երկրորդը պետք է հաջողին գահ բարձրանալ, իսկ երրորդը պետք է տապալվի նույն շավղով գնալու հանդուգն փորձի մեջ:

Այս և նման գուշակությունները, որ հերյուրված են իհարկե, հետին թվով, **post factum**, մի տեսակ նախագիծ են գալիք իրադարձության: Արդարև Վարդանը չհաջողեց, Լևոնը թագավորեց, այժմ հերթը Միքայելին էր և հետո Թովմասին:

Այս անձերը բոլորն էլ հայ են, անգամ առաջատես կրոնավորը թվում է թե հայ էր: Երբ Լևոնը գրավեց գահը, պատմում են որ հիշեց վանականի գուշակությունը և շնորհակալության նվերներ ուղարկեց նրան: Սակայն, վանականը արդեն մեռել էր և նրա խուցը բռնել էր մի ուրիշ մենակյաց, որի անունն էր Սմբատ և ոչ Սաբբատիոս, ինչպես եղծում են մյուսները[1]:

Վարդ կեսարի փեսան ևս մի հայ էր Սմբատ անունով, որի անունը ևս փորձում են հունացնել, գրելով Սաբբատիոս[2]:

Հիմք կա կարծելու, որ Սմբատ վանականի նախորդը նմանապես հայ էր

---

[1] **Theoph. Cont.**, 26 ունի *Συμβάτιος*, իսկ **Genes.**, 3 և **Symeon**, 604, *Σαββάτιος*, հայ անվան հունական ձև տալու համար:

[2] **Genesius**, 106.

և որ Վարդանի այցելած մենաստանը հայ հիմնարկություն էր: Հայ զորականը ասել է, թե վստահացել էր հետապնդելի քաղաքական գաղտնի ծրագիրը իր հայրենակից կրոնավորին:

Միքայելի ծագումը մութ է: Նա Ամորիա քաղաքիցն էր, որ Անատոլիկյան թեմի կենտրոն էր և հայտնի՝ **Աթինգան** կոչված աղանդավորներով: Կար և աթինգաններին և հրեության մոտիկ մի ուրիշ կրոնական համայնք: Կարծես թե խոսքը պավլիկյան աղանդի մասին է:

Անհավանական չէ, որ Միքայելը պավլիկյան հայերից լիներ: Պատմագիրները նրա ազգության խնդիրը թողնում են անորոշ, հիշում են միայն, որ Ամորիայի աղանդավոր հասարակությունիցն էր: Այն հանգամանքը, որ Միքայել ծառայել էր հայ զորավարի մոտ, ընկերակից էր մանկությունից Լևոնին և Թովմասին, և հետո, ինչպես կտեսնենք, մնում է շրջապատված հայերով, իրավունք է տալիս ենթադրելու, որ արյունով ևս մոտ էր հայերին: Գահի թեկնածուները սովորաբար հայեր էին դարեր շարունակ:

Պավլիկյան համայնքից էր նաև Քրիսոքիր անձը, որ Բուկելլարյան թեմի զորավարն էր և Տաճատ Անձևացու հաջորդը 790 թվականներին, Ալեքսիոս-Մուշեղի ապստամբության ժամանակ: Միքայել Թլվատը հակառակ էր պատկերապաշտության և անտարբեր դեպի պետական եկեղեցին: Եթե անտեսենք այն անհեթեթությունները, որ ուղղափառ պատմագիրները բարդում են նրա վրա, մի բան կմնա ստույգ, որ նա խմորված է եղել պավլիկյան հակաեկեղեցական հայացքներով:

Միքայելը թագ կապեց թե չէ Թովմաս զորավարը նրա դեմ ելավ և երեք տարի անընդհատ կռիվ մղեց, կամենալով կորզել իշխանությունը: Թովմասը ծնվել էր Գազիրա կամ Գազյուրա ավանում, որի տեղը ճշտիվ հայտնի չէ, բայց հաստատ է, որ գտնվում էր Արմենիակյան թեմում՝ Իրիս գետի հովտում: Ենթադրվում է, որ արդի Թուրխալ քաղաքի մոտերն է եղել, Թոկատի և Ամասիայի միջև: Լևոնը ևս թվում է թե այս կողմերիցն էր: Նա Պիգրա քաղաքիցն էր: Պատմագիրների ասելով Պիգրան գտնվում էր Անատոլիկյան թեմում: Այլուստ հայտնի չէ Պիգրա: Մեզ թվում է, թե շփոթություն կա և խոսքը Պիգա ավանի մասին է, որ գտնվում էր Լիկոս (= Գայլ) և Իրիս գետերի խառնարանի մոտ և ցայժմ էլ պահել է հին անունը Ֆիդի: Լևոնը ծառայել էր Վարդանի մոտ Անատոլիկյան թեմում: Նրան ուղեկցել էր Գուշակ կրոնավորի մոտ, որն ապրում էր նույն թեմում, այն է **Փիլոմելիոն** ավանում (մերձավորապես արդի Ակշեհիր քաղաքը Իկոնիայի երկաթուղային գծի վրա): Ասել է, թե Լևոնի կյանքի սկզբնական շրջանը անցել էր Անատոլիկյան թեմում: Գուցե այս է պատճառը, որ նրա ծննդավայրը ևս կարծել են նույն թեմում:

Թովմասի ազգությունը վիճելի է համարվում հնուց ի վեր: Արդյո՞ք հայ էր, թե սլավոն: Պատմական վկայությունները հակասական են և գիտնա-

կանցերից ումանք, առանց փորձելու հակասության աղբյուրը պարզելու, արտահայտվում են ի նպաստ սլավոն ծագման:

Գեներիոս պատմագիրը, որ ինքն ևս հայի զավակ էր, ասում է դրականորեն, որ Թովմասը հայ էր, *ἐξ Ἀρμενίων τὸ γόνος*[1] և մանկությունից ընկերակից Լևոնին:

Նույն պատմագիրը, բերելով մի ուրիշ վարկած Թովմասի նախնական կյանքի վերաբերյալ, և կամենալով բացատրել նրա հաջողությունը, տալիս է նրա նկարագիրը, ուր գովում է նրա բարի գծերը և ասում, որ համակրելի էր, ընկերական և քաղաքացի կրթությամբ, հակառակ որ, ավելացնում է պատմագիրը «**սկյութանման** էր ծագումով»՝ *καὶ σκυθίζων τῷ γένει*[2]:

Արդ Թեոփանեսի Շարունակողը, որ այս կետում ուրիշ աղբյուր չունի, քան Գեներիոսը, կրկնում է սրա ասածները, և այնտեղ, ուր Գեներիոս ասում է, թե Թովմասը հայ էր, Թեոփանեսի Շարունակողը, փոխում է և հայի տեղ դնում է **սլավոնածին**, *σκλαβογενής* և որպեսզի հավատ ներշնչե իր այս կարծիքին, ավելացնում է, որ սլավոնածինները ցրված էին շատ տեղ արևելքում: Իսկ ուր Գեներիոս խոսում է սկյութանման ծագման մասին, Թեոփանեսի Շարունակողը այնտեղ գործ է ածում մի ուրիշ դարձված, «թեև ծագումով **բարբարոս** էր»: Իսկապես *σκυθίζων* այլ բան չէ նշանակում, քան բարբարոս, մի մարդ, որ չի պատկանում հույն ցեղին:

Թեոփանեսի Շարունակողը երևում է այստեղից այն եզրակացությունն է հանել, թե սկյութ և բարբարոս նշանակում է իրապես սլավոն, քանի որ այդ ժամանակները հին սկյութական տափաստանները բռնված էին սլավոն ցեղերի կողմից: Նույն պատմագիրը խոստովանում է, որ ինքը անձամբ հավատում է Թովմասի սլավոն ծագման, «հիմն ունենալով ինչ ինչ գրություն»[3]:

Գրավոր աղբյուրի հիշատակությունը հակասում է նույն հեղինակի խորհրդածության, որ անում է Թովմասի մասին եղած զրույցների առթիվ և ուր խոստովանում է որ այլ աղբյուր չկա, քան **լուրեր** և **ենթադրություններ**:

Պետք է կարծել, որ աղբյուրի ակնարկը վերաբերում է Գեներիոսին, որից արդարև օգտվել է: Արդ քանի որ Թեոփանեսի Շարունակողի հաղորդությունը Թովմասի սլավոն ծագման մասին արդյունք է Գեներիոսի սկյութանման բառի կամայական մեկնության, միակ դրական վկայությունը մնում է այն, ինչ որ տալիս է Գեներիոս թե Թովմասը հայ էր:

Մեզ թվում է, որ Թովմասն ու Միքայելը Վարդանի փեսաներն էին, նրա դուստրերի ամուսինները: Այս երևում է Միքայելի կենսագրական մի զրույցից:

---

[1] **Genes.**, 8.

[2] **Ibid**, էջ 32.

[3] **Theoph. Cont.**, 50 և 53: *ἐξ ἐγγράφων τινῶν ἔχων τὸ βέβαιον*, p. 50.

Նույն երկու պատմագիրները պատմում են, որ Միքայելը սնվել և մեծացել էր աթինգաև կոչված աղանդավորների միջավայրում, մանկությունը անցել էր ախոռներում և հետո մտել էր իր թեմի զորավարի մոտ ծառայության: Սակայն, թլվատության պատճառով հաջողություն չի ունենում և զորավարը ուզում էր արձակել, երբ աթինգաևներից մեկը, որ մտերիմ էր զորավարին, հայտնում է նրան, թե պետք չէ Միքայելին հեռացնել, որովհետև նրան և իր ընկերոջը մեծ ապագա է սպասում և, որ երկուսն էլ գահ պիտի բարձրանան:

Զորավարը հավատում է այս մարգարեության և անմիջապես մեծ խնջույք է պատրաստում և հրավիրում Միքայելին և նրա ընկերոջը: Կերուխումից հետո զորավարը ցանկություն է հայտնում, որ նրանք փեսայանան իրեն, առնելով կնության իր երկու դուստրերը: Այդպես էլ լինում է[1]:

Տարակույս չկա, որ Աթինգաև գուշակը ոչ այլ ոք է, եթե ոչ Փիլոմելիոնի վանականի մի ուրիշ պատկեր և զրույցս՝ վանականի և Վարդանի դեպքի մի այլ վարկած: Վանականը, ինչպես և իր հաջորդ Սմբատը պատկերապաշտության դեմ էին և այս արդեն բավական է, որ վանականը նմանեցվեր Աթինգաև աղանդավորի: Անանուն զորավարը հենց ինքը Վարդանն է: Միքայելի ընկերը, որի անունը չէ հիշված, կամ Լևոնն է և կամ Թովմասը, ինչպես դատելու է Փիլոմելիոնի զրույցից: Լևոնը չէր կարող լինել, որովհետև նա ամուսնացած էր Արշավիր պատրիկի դստեր Թեոդոսիայի հետ: Ուրեմն չէր կարող փեսա լինել Վարդանի: Մնում է ընդունել, որ Միքայելի ընկերը Թովմասն էր, հետևապես, սրանք էին Վարդանի փեսաները: Միքայելի կնոջ անունը Թեկլա էր, իսկ Թովմասինը՝ հայտնի չէ:

Մեր այս մեկնությունը տալիս է ստույգ բանալին լուծելու Թովմասի վերաբերյալ առասպելները:

Պատմում են, որ Թովմասն անհշաև և աղքատ տան զավակ էր, մի օր վճռում է գնալ մայրաքաղաք բախտ որոնելու և հաջողում է մտնել մի ծերակուտականի մոտ սպասավորության: Սակայն, Թովմասն անազնիվ է գտնվում իր տիրոջ նկատմամբ, հանցավոր տարփանք տածելով նրա կնոջ, որի հետևանքով զրկվում է տեղից և փախչում արաբների մոտ:

Մինուն պատմիչները գիտեն և մի ուրիշ զրույց, որի համաձայն անանուն ծերակուտականը ինքը Վարդանն է, և Թովմասն ուրիշ անձ չէ, քան նա, որ Լևոնի և Միքայելի հետ ուղեկցել էր Վարդանին հայտնի վանականի մոտ Փիլոմելիոնում[2]:

Եթե իրավ խոսքը Վարդանի մասին է, ստահոդ պետք է համարել այն լուրը, որպես թե Թովմասը փորձել էր արատավորել նրա կնոջ պատիվը և ականա փախուստ տվել: Խոտելի է այս պատմությունը, որովհետև Թովմա-

[1] **Genes.**, 31; **Theoph. Cont.**, 44.

[2] **Genes.**, 35.

սը Վարդանի հետ էր և հավատարիմ մնաց նրա ապստամբության ժամանակ 803 թվին մինչև վերջը, իր անձը հավասարապես փորձանքի ենթարկելով, և հեռացավ ոչ Վարդանից, այլ նրա անձնատուր լինելուց հետո փախավ, երկյուղ կրելով կայսեր վրեժխնդրությունից:

Ժողովրդական երևակայության մեջ քաղաքական հանցավորի փախուստը ստացել է սիրային արկածի բնույթ, որպես թե Թովմասի փախչելու պատճառը եղած լինի իր տոփանքը դեպի զորավարի կինը:

Թե որքան անհեթեթ է այս փաստաբանությունը, հազիվ թե պետք կա բացատրելու: Սիրային որևէ զանցառության համար վտարվել հայրենիքից և այն էլ կայսեր միջամտությամբ, խելքից դուրս բան է: Պարզ է, որ իսկությունը խեղաթյուրված է, մանավանդ, որ գիտենք փախուստի բուն քաղաքական հանգամանքը: Եթե ընդունենք, որ Թովմասն արդարև Վարդանի փեսան էր, ինչպես տեսանք վերև, այն ժամանակ սիրային ամբաստանությունը կներկայանա մեզ իր իրական լույսի մեջ: Ենթադրենք, որ Թովմասը, փախչելով հեռու արևելք արաբների մոտ, չէր կարողացել կամ չէր կամեցել կնոջը տանել իր հետ և ուրեմն կնաթող էր եղել տարիների ընթացքում, ապրելով արաբների մոտ օտարության մեջ: Կնաթողությունն արդեն ամուսնական խաբեություն է: Այս պարագան զրույցի մեջ այնպես է անդրադարձել, որպես թե Թովմասը գործել էր մի անբարոյական քայլ, մի սիրային սայթաքում, Վարդանի ընտանիքի հանդեպ, այսինքն՝ պատրել էր նրա կնոջ (իմա՛ դստեր) և փախել:

Պատրաստվելով ապստամբության, Թովմասը հայտարարել էր արաբներին, որ ինքը հսկարակ ոմն չէ, այլ Իսավրյան տան վերջին շառավիղն է և փախել է իր մոր Իրինեի ձեռքից, որ ուզում էր կուրացնել նրան, և այժմ ցանկանում է տիրանալ հայրենի ժառանգության: Թովմասի շարժումը սկիզբն առավ 821 թվին, դեկտեմբեր ամսին: Կոստանդնի աղետը պատահեց 797 թվին, ուրեմն Թովմասը փախած պիտի լիներ այս ժամանակ, որպեսզի հիմ ունենար ասելու, որ ինքն է Կոստանդինը: Մյուս կողմից, Թովմասի շարժումը սկսվեց 821 թվին դեկտեմբեր ամսին: Այստեղից պատմագիրներն այն եզրակացությունն են հանել, որ Թովմասը մնացել է օտարության մեջ 25 տարի, 797 թվից մինչև 821 տարին, մինչդեռ նույն պատմագիրները վկայում են, որ Թովմասը մասնակցել էր Վարդանի ապստամբության 803 թվին, այլև Լևոնի գահակալելուց հետո 813 թվին նշանակվել էր Ֆեդերատների տուրմարխ, այսինքն՝ օտարականներից կազմված գնդի պետ, մի պաշտոն, որ երբեմն վարել էր ինքը Լևոնը և այժմ նույն պատիվը տվել էր իր վաղեմի ընկերոջ Թովմասին:

Այստեղից հետևում է, որ Թովմասն օտարության մեջ մնացած պիտի լիներ տասը տարի առաջ 803 թվից մինչև 813 տարին, և ոչ թե քսան և հինգ

տարի, որ արվեստական հաշվի արդյունք է, Թովմասի փախուստի կարծեցյալ թվից, որ է Կոստանդնի կուրացման տարին մինչև նրա դարձը, այսինքն՝ 797-821 թվականների ժամանակամիջոցը:

Ոմանք ուզում են պատմական արժեք տալ քսան և հինգ տարվան և հետ տանել Թովմասի փախուստը մինչև 788 թիվը, ենթադրելով, որ երկու անգամ մնացել է տասն և հինգ տարի 788 թվից մինչև 803 թիվը, և երկրորդ անգամ տասը տարի 803 թվից 813 թ.: Այդպես է կարծում Բըրի, անգլիացի հայտնի բյուզանդագետ և նորերս մեռած[1]:

Սակայն, Թովմասն արաբների մոտ էր, երբ ծառացավ Միքայելի դեմ 821 թվին, ուրեմն պետք է ենթադրել և մի երրորդ փախուստ և համապատասխան ժամանում արաբների մոտ: Այս ժամանումը, որքան և տևած լինի, արդեն խանգարում է 25 տարվան հաշիվը: Բացի դրանից, եթե Թովմասի առաջին փախուստը դնենք 788 թվին, ստիպված ենք ընդունելու, որ այն ծերակուտականը, որի ընտանիքում տեղի էր ունեցել Թովմասի սիրային արկածը, Վարդանը չէր: Հարկավ, չէր կարող Թովմասը զինակից լինել մի մարդու, որի ձեռքից փախել էր օտարություն: Ծերակուտականը պետք է որ ուրիշ անձ լիներ այս դեպքում:

Անգլիացի գիտնականի ենթադրությունը ներշնչված է գլխավորապես Միքայել կայսեր նամակից, գրված Լյուդովիկոս Բարեպաշտին 824 թվին, այսինքն՝ Թովմասի ապստամբությունը խեղդելուց հետո: Թովմասի մասին Միքայելը գրում է.

«Ոմն Թովմաս անունով անձը, նա որ լինելով ստորադրյալ մեծ պատրիկներից մեկի, այն ժամանակ, երբ իշխանությունը Իրինեի ձեռքին էր, խաբեություն է գործում իր տիրոջ նկատմամբ, այն է խառնակվում է իր տիրոջ կնոջ հետ և փախչում պարսիկների մոտ: Այնտեղ մնում է հիշյալ Իրինեի ժամանակից մինչև Լևոնը, ուրանում է քրիստոնեական հավատը... հավատացնում է նրանց, որ ինքն է Կոստանդին, որդի Իրինեի, և որ ուրիշ մեկն է զրկվել աչքերից և ինքը փախել ազատվել է»[2]:

Այստեղ ուշադրության արժանի է այն պարագան, որ Միքայելը չէ տալիս պատրիկի անունը և Թովմասի ոճիրը իրական է համարվում և գործված Իրինեի ժամանակ:

Այստեղից անգլիացի գիտնականը այն եզրակացությունն է հանել, որ պատրիկը չէր կարող Վարդանը լինել: Սակայն, նամակի մեջ չէ ասված, որ Թովմասը մնաց արաբների մոտ 25 տարի, որպեսզի կարելի լիներ փախուստը հետ տանել մինչև 788 թիվը, մի կերպ արդարացնելու համար կասկածելի տարեթիվը:

---

[1] **Bury,** Eastern Roman Empire, 84, ծանոթ. 2:

[2] **Mansi,** XIV, 417.

Միքայելին անպայման հավատալը վտանգավոր է: Բարեպաշտ կույսեր ուղղած նամակում, նրան հաճոյանալու համար, ստիպված է ծածկել կամ խեղաթյուրել ճշմարտությունը: Բավական է հիշել, որ Լևոնի սպանության մասին ասում է, որ մի քանի խռովարար զինվորների գործ էր, այնինչ ինքն էր իսկական հեղինակը: Միքայելը, անշուշտ, մեղանչում է դիտմամբ ճշմարտության դեմ, աշխատելով թաքցնել Թովմասի ով լինելը: Հակառակորդի արժեքը նսեմացնելու նպատակով ուրանում է, որ Թովմասն իր մոտ ծանոթն էր և ընկերը և անգամ քեռեկալը համաձայն մեր լուսաբանության: Ծածկում է, որ Թովմասը նշանավոր Վարդան զորավարի փեսան էր, ինչպես ինքը և ուրեմն նույնանման իրավունք ուներ գահի թեկնածության: Արհամարհական դարձվածք է կիրառում նրա վերաբերմամբ:

Հասկանալի է, որ պատմագիրները, որ ծանոթ էին այս նամակին, չեն կարողացել բացատրել Միքայելի տարօրինակ վերաբերումը իր ընկեր Թովմասին, քան ենթադրել, որ մանկությունից նրանք սիրելի չէին միմյանց:

Իրինե թագուհին ընկավ գահից 802 թվին հոկտեմբերի 31-ին: Վարդանի խռովությունը պայթեց 803 թվին, հուլիսի 19-ին, ուրեմն մի քանի ամիս հետո, և տևեց մինչև սեպտեմբերի 8, հազիվ ուրեմն երկու ամիս: Անհավանական է, որ 15 տարի առաջ փախած և այդքան տարիներ օտարության մեջ դեգերած Թովմասը վերադառնար հայրենիք մասնակցելու մի ապստամբության և իսկույն նեք նորից փախչեր վերստին: Իսկ փաստ է. որ նա մասնակցել էր ապստամբության Միքայելի և Լևոնի ընկերակցությամբ և փախել անհաջողությունից հետո, մինչդեռ իր երկու ընկերները դավաճանել էին Վարդանին և ւսնցել հակառակ կողմը: Միքայել թաքցնում է այս կարևոր հանգամանքը իր նամակում և երևի ինքն է առաջինը, որ Թովմասի խախուտի քաղաքական բնավորությունը փորձում է վարագուրել սիրահարական անհեթեթ զրույցով:

Թե հիրավի Թովմասի փախուստը կապ ուներ Վարդանի ապստամբության հետ, երևում է Սամուել Անեցու տեղեկությունից, որի համաձայն՝ «Պէ թուականին սուտ թագաւորն Թովմաս ի Կարնոյ քաղաքն եկն»: Միքայել Ասորին քաջածանոթ է Թովմասին, և հիշում է երկու փախուստ. մեկը Հարուն-ալ-Ռաշիդի օրով (786-809), նրա վերջին տարիները, մյուսը՝ Մամունի ժամանակ (813-833): Առաջին դեպքում տալիս է Թովմասի անունը և հոր անունը, որ էր Մոսմար. եթե ճիշտ է ընթերցումը: Հայ թարգմանության մեջ բսւց է թողնված, տարաբախտաբար, հոր անունը (էջ 362): Երկրորդ անգամ պատմում է, որ մի հոռոմ էր եկել Մամունի մոտ, խնդրում էր օգնել իրեն վերստանալ հայրենի թագը: Այս անանուն հոռոմը, հավանորեն նույն Թովմասն է և շփոթմամբ նրա երևումը արաբների մոտ հաշվում է 831 թվին. փոխանակ 821 թվին:

Միքայելը իր նամակում ասում է, որ Թովմասն որպես թե ըմբոստացել էր տակավին Լևոնի ժամանակ: Այս վկայությունը ևս կասկածելի է: Կա մի ուրիշ տեղեկություն, որի համաձայն Թովմասի ապստամբության շարժառիթն էր նախ՝ վրեժ լուծել Լևոնի սպանության համար և երկրորդ՝ ելք տալ և հագուրդ իր սրտմտության ընդդեմ Միքայելի[1]:

Թովմասը փախչելով արևելք, հաջողում է հակել իր կողմը «Հայաստանի իշխանությունը, Խաղտյաց իշխանությունը և Արմենիակյան թեմի զորավարին»:

Թե ինչ ուժերից էր բաղկացած Թովմասի բանակը, հայտնի է Միքայելի նամակից, ուր ասված է, թե Թովմասը «շարժվեց Պարսկաստանից, ունենալով հետը սարակինոսներ, պարսիկներ, իվերներ, հայեր, աբխազներ և ուրիշ այլազան ցեղեր»[2]:

Եթե իրոք Թովմասի ձեռքի տակ եղել են սարակինոս և պարսիկ ուժեր, պետք է կարծել, որ արաբական խալիֆի կողմեն տված օգնական գունդն էր: Պատմագիրները, որ Թովմասի նկատմամբ ընդունակ են ամեն ինչ չափազանցելու, թվում են մի շարք ցեղեր և ժողովուրդներ, որ Թովմասի բանակում լինել չէին կարող աշխարհագրական պայմանների հետևանքով: Այսպես, բացի հայերից և պոնտական կամ կովկասյան մի քանի ցեղերից հաշվում են՝ հագարացի, եգիպտացի, հնդիկ, պարսիկ, ասորեստանցի, կաբիր ալան, վանդալ, սլավոն, հոն և գոթ ժողովուրդներ[3]:

Այստեղ թված են գրեթե բոլոր այն ժամանակ հայտնի ժողովուրդները: Անխոհեմություն կլիներ որևէ պատմական արժեք տալ այս շարանին: Միքայելի նամակի «և մնացյալ այլազան ցեղերը» խոսքը առիթ է տվել պատմագիրներին ցուցադրելու իրենց աշխարհագրական գիտությունը ավելի մեծ չափով, քան պահանջում էր Թովմասի բանակի կազմը:

Առասպելական չափազանցությունները մի կողմ թողած, Թովմասի բանակը բաղկացած էր Հայաստանի, Խաղտիքի և Արմենիակյան թեմի ուժերից: **Chaldaei quae gens montem Caucasum incolit** ասելով, նամակը հասկանում է Պոնտոսի եզրածիր տարածությունները մինչև Կովկասյան լեռնաշղթան: Այստեղ Խաղտիքը փոխարինում է հին Լազիկա, որ Տրապիզոնից ձգվում էր մինչև Աբխազիա:

Թեև Միքայելը իր նամակում Խաղտիքը կոչում է **ducatum**, բայց դժվար թե այդ ժամանակ Խաղտիքը վարչապես կազմակերպված միություն ներկայացներ: Խաղտիքը թեմ դարձավ Միքայելից հետո նրա որդու և հաջորդի՝ Թեոփիլոսի օրով: Մինչ այն մտնում էր Արմենիակյան թեմի մեջ այն մասով, որ պատկանում էր կայսրության:

---

[1] **Theoph. Cont.**, 50.

[2] **Mansi**, XIV, 417.

[3] **Genes.**, 32; **Theoph. Cont.**, 55.

Armeniae ducatum՝ Հայաստանի իշխանություն, թե զորավարություն, ևս մութ է թե իրապես ի՞նչ է նշանակում: Թովմասի ապստամբության ժամանակ Հայաստանում իշխում էին Աշոտ Մսակերը և իր եղբայր Շապուհը: Հավանական է, որ եթե ոչ Մսակերը, գեթ Շապուհը, որ տիրում էր Սպերի շրջանում, աջակցություն ընծեռած լիներ Թովմասին որևէ կերպ:

Արմենիակյան թեմի **dux** կամ զորավարը նմանապես հարել էր Թովմասին: Ո՞վ էր այդ զորավարը, դժվար է ասել: Բայց որ արդարև նա Թովմասի հետ է եղել, երևում է նաև այն բանից, որ հանվում է պաշտոնից: Ապստամբական շարժումը մեծ ծավալ էր ստացել, բոլոր թեմերը հարել էին Թովմասին, բացի Արմենիակյան թեմից: Այս երևույթը բացատրելու է նրանով, որ Միքայելը հայ զորավարին հեռացրել էր և նրա տեղ նշանակել ոմն Օլբիանոսի (= Աղբիանոս): Հարևան Օփսիկյան թեմը ևս հանձնել էր Կատակիվլ(աս)-ին, որ իր եղբոր որդին էր: Կայսեր հավատարիմ էին մնացել նույնպես Քրիստափորոս մագիստրոսը իր երկու որդիներով, որոնց անուններն էին Վարսակ(իոս) և Նասոր, **Barsakios, Nasor**: Անուններն արևելյան բնույթ ունին:

Երբ Թովմասը հաղթական ոգևորությամբ մոտեցավ մայրաքաղաքին և պաշարեց, Միքայելի հետ կռվում էին ներսից նրա դեմ հիշյալ Օլբիանոսը և Կատակիվլասը: Թվում է, թե Արմենիակյան և Օփսիկյան զորքերը լքել էին նրանց, թերևս, համակրանք ցույց տալով շարժումին: Սակայն երևում է, որ այս երկու զորավարներն իրենց գնդերովն էին Միքայելի մոտ[1]:

Երկուսից մեկը, կամ հիշյալ թեմերի զորքերը անցել էին Թովմասի կողմը, կամ իրենց զորավարների հետ քաշվել էին մայրաքաղաք: Այլապես Թովմասը չէր կարող Արմենիակյան թեմի վրայից անցնել անարգել և հարձակվել մայրաքաղաքի վրա:

Թովմասին զինակից էր նաև Գրիգոր Պտերոտես կոչված զորավարը, որ Լևոն թագավորի քեռորդին էր[2]: Երբ տեսավ, որ պատերազմը երկարում է, Գրիգորը վճռեց թողնել Թովմասին և անցնել Միքայելի կողմը, որպեսզի փրկել կարենար իր կնոջը և որդիներին, որ Միքայելի ձեռքին պատանդ էին: Թովմասը զգաց վտանգը և սպանել տվավ Գրիգորին:

Թովմասի խռովությունը տևեց երեք տարի 821-824 թթ.: Հաջողությունը մեծ էր և անշուշտ, պիտի հաղթանակեր և գահը գրավեր, եթե ետևից չհարվածեր անակնկալելի կերպով բուլղարական թագավորը Մորտագոն, որ մեծ զորքով եկավ Թովմասի դեմ և փրկեց Միքայելին վերահաս անկումից:

Թովմասին կողմնակից էին նաև երկու զինվորականներ Քիրեաս և Գազարենոս, որոնցից երկրորդը կոչվում էր Կոլոնիացի: Ասել է, թե ծնված էր

[1] **Theoph. Cont.**, 67.

[2] **Ibid.** 57· *ἀδελφιδοῦς* նշանակում է այստեղ քրոջ որդի և ոչ եղբոր:

Պոնտոսի Կոլոնիա քաղաքում, (արդի Շապին-Կարահիսար): Սրանք գործում էին Կաբալա և Սանիանա վայրերում և Թովմասի անկումից հետո շարունակեցին իրենց խռովարար գործունեությունը:

Կարծում եմ, որ Սանիանա գտնվում էր Անկյուրայից հարավ-արևելք Ալիսի աջ ափին, իսկ Կաբալա՝ Իկոնիայից հյուսիս-արևմուտք[1]: Սակայն թվում է, թե ավելի հիմ ունինք որոնելու Կոլոնիայի շրջանում: Միքայելը խոստացել էր նվիրել Գազարենոսի ծառային, եթե դավաճաներ իր տիրոջ, Սանիանա և Նեո-Կեսարիո եպիսկոպոսությունը[2]: Այստեղից հետևում է, որ Սանիանա մոտ պիտի լիներ Նեո-Կեսարիային (արդի Նիկսար): Ենթադրում ենք, որ Գազարենոսի Սանիանան կապ չունի Գալատիայի համանուն բերդի հետ և հավանորեն այլ բան չէ, եթե ոչ արդի Ճանիկի կամ Ջանիկի շրջանը և սրա հին անունը, որ նշանակում է Ճաների երկիր: Ճան, հնում սան, այժմյան լազ ժողովրդի անունն է: Կաբալա ևս որոնելու է նույն կողմերը, Խաղտյաց աշխահի և Փոքր Հայքի սահմաններում: Սպերի շրջանում կար համանուն տեղ, հայտնի ոսկու հանքերով: Թվում է, որ Փոքր Ասիայում տարածված անուն է եղել և կարող էր նույնանուն տեղ լինել և հիշածս շրջանում, քանի որ Թովմասի գործունեության կովանն էին հայ-պոնտական երկրները:

Այս հանգամանքը բնավ նպաստավոր չէ Թովմասի սլավոն ծագման տեսության: Ապստամբը եկավ Կարին և կազմակերպելով հայ, խաղտ և Արմենիակյան դժգոհ տարրերը, նրանց վրա հենվելով, գլուխ բերեց մի մեծ քաղաքական և հասարակական շարժում: Օտարական, տեղական պայմաններին և ժողովրդին խորթ մի սլավոն, չէր կարող ո՛չ վստահություն ներշնչել և ո՛չ համակրություն գեթ այն չափով, որ անհրաժեշտ էր մեծածավալ և տևուն ամբոխային ըմբոստության համար:

Սլավոնները բյուզանդական Արևելքի մեջ դեր չեն կատարել երբեք անհատապես և թե հավաքաբար: Ամբողջ պատմության ընթացքին հայտնի չէ և ոչ մի դեպք, ուր սլավոնը դուրս գար քաղաքական ասպարեզ Փոքր Ասիայի մեջ: Մինչդեռ սովորական երևույթ է հայերի գրեթե անդադրում խիզախումը կայսերական թագի շուրջը, սկսված Հուստինիանոսի դարաշրջանից:

Թովմասը ծնված էր պոնտական հողերի այն մասում, որը հնուց բռնված էր զանազան փոքր ցեղերով: Սրանք դյուրությամբ չէին ենթարկվում քաղաքակրթության, ուստի և համարվում էին բարբարոս: Նույն համբավն ունեին և սկյութական ցեղերը: Ուշադրության արժանի է, որ Ս. Գրքի մեջ

---

[1] **Ramsay**, Asia Minor, 248, 359.

[2] **Theoph. Cont.**, 72.

հունարենի **սկյութ** անվան դեմ հայերենը ունի **Խաղտիք**: Ուրիշ անգամ նույն բառը թարգմանած է խուժ և գուժ, այսինքն՝ վայրենի, բարբարոս[1]:

Հասկանալի է, թե ինչու Թովմասը, լինելով Խաղտյաց աշխարհից կամ դրացի, կոչվում է սկյութացի կամ բարբարոս: Այստեղ սկյութացի բառը ուրիշ բան չէ նշանակում քան խաղտյացի, Խաղտյաց աշխարհից:

Հարկավ, պատմագրի բերանում այս մի վիրավորական կոչում է, մի հայհոյանք Թովմասի հասցեին: Այս բնավ չի պատասխանում իսկության, քանի որ Թովմասը, ինչպես որ նույն պատմագիրն է վկայում, բարեկիրթ էր և քաղաքացի կենցաղի և բարքի տեր: Նրա արտասովոր հաջողության պատճառներից գլխավորը հենց բարեկրթությունն է համարում, որ նրա անձին տալիս էր որոշ հմայք ամբոխի աչքին, մինչ Միքայել կայսրը զուրկ էր այդ հատկություններից:

IV

Թովմասի հարուցած մեծ շարժումը նշան էր, որ Միքայելը ժողովրդական չէր և չէր վայելում ընդհանուրի համակրությունը: Քաղաքական ոճիրները արդարանում են կամ մեղմանում են ստեպ, նայելով թե իրենց հեղինակները որչափ գերազանց են զոհերից: Միքայելի գործած սպանությունը դատապարտելի էր, քանի որ ինքը ոչ մի կետում չէր կարող հավասարվել իր նախորդին՝ Լևոն Հային: Սա նշանավոր գահակալներից էր, օժտված բազմակողմանի ընդունակություններով: Պատերազմի դաշտում առաջնակարգ զորական էր, պետական ասպարեզում՝ վարչական մեծ կարողությունների տեր: Նրա արդարադատության մասին առասպելներ էին պատմում, իսկ կրոնական ջերմեռանդությունը անվիճելի էր, հակառակ որ պատկերամարտ լինելով չէ խուսափել հակառակորդների անլուր լուտանքից: Ջերծ էր արծաթասիրության տարածված արատից, և առատաձեռն էր: Նիկեփոր պատրիարքը, որ քնքույշ սեր չուներ բնավ դեպի Լևոնը և չէր կարող ուենալ, որպես կատաղի հակառակորդ նրա եկեղեցական քաղաքականության, որի պատճառով և գահընկեց էր եղել, երբ լսեց Լևոնի մահը, գոչեց. «պետությունը կորցրեց մի մեծ, թեև ամբարիշտ, պետական մարդ»[2]:

Մեծագույն գովասանք, որ կարելի էր լսել մի բշնամուց:

Այսպիսի մի արժանավոր անձի սպանությունը, բնական է, դժվար կացություն պիտի ստեղծեր սպանիչ Միքայելի համար: Առանձին շրջանկատություն էր հարկավոր և խոհեմություն, որ կարենար վայելել իր հանցագործության արդյունքը:

Միքայել Թլվատը խստությամբ չվարվեց Լևոնի ընտանիքի հետ: Լևոնը

---

[1] **Բ Մակ.**, Դ, 47՝ «Թեպետ առաջի Խաղտյաց դատ վարեին»: **Գ Մակ.**, Է, 3՝ խուժ և դուժ:

[2] **Genes.**, 17; **Theoph. Cont.**, 30.

իր նախորդի Միքայել Ռանգաբեի որդիներին ներքինացրել էր և վանական դարձրել: Նրանցից մեկը հետագայում պատրիարքական գահը բարձրացավ Իգնատիոս անունով: Միքայելը բավականացավ նույն պատիժը տալով և Լևոնի որդիներին: Կրտսերը՝ Թեոդոսը մեռավ, չդիմանալով ծանր գործողության, իսկ Վասիլը և Գրիգորը մեծ անուն վաստակեցին եկեղեցական ասպարեզում իրենց առաքինի վարքով և 847 թվին երկուսն էլ թեկնածու էին պատրիարքական աթոռին, երբ առավելություն տրվեց հիշյալ Իգնատիոսին, անշուշտ, այն պատճառով միայն, որ Լևոնի պատկերամարտության ստվերը տակավին ծանրանում էր որդիների վրա:

Մենաստան ղրկվեցին նաև Լևոնի մայրը և կինը, կայսրուհի Թեոդոսիան: Լևոնի ավագ որդու անունն էր Սմբատ, որ Ավգուստոս, այսինքն՝ թագաժառանգ էր հռչակվել և այս առթիվ վերակոչվել էր Կոստանդին[1]:

Ուրիշ անգամ հիշվում է, որ Կոստանդինը վերակոչվել էր Վասիլ[2]: Անշուշտ, սխալմունք է: Այս Կոստանդին վերակոչյալ Վասիլ որդու մասին պատմվում է, որ ներքինացումի գործողության ժամանակ կորցրեց խոսելու ընդունակությունը, բայց հետո ողջացավ շնորհիվ Գրիգոր Աստվածաբանի, որի պատկերը կրում էր իր կրծքին (արդյո՞ք խոսքը Աստվածաբանի մասին է, թե Լուսավորչի): Լևոնի մայրը, կինը ղրկվեցին Տերանց (*Δεσπότων*) վանքը, իսկ որդիները՝ Պրոտեն կղզին:

Միքայել Թլվատը ջանաց մոտենալ հայ շրջաններին, որոնք, անշուշտ, չէին կարող համակրել իրենց ազգակցի սպանողին: Նրանց իրեն քաշելու հուսով Միքայելը դիմեց խնամիական միջոցի:

Տեսանք, որ Մանուել Մամիկոնյանը առաջնակարգ դեմք էր և Արմենիակյան թեմի զորավարն էր Լևոնի ժամանակ: Արմենիակյան գունդը վտանգավոր էր Միքայելի համար և կարող էր նրա բոլոր հաշիվները խառնել: Հարկավոր էր սպառնալիքը չեզոքացնել: Միքայելը որոշեց խնամիանալ Մանուելի տան հետ: Մանուելի ավագ եղբայրն էր Մարինոսը, որի դուստր Թեոդորան հայտնի էր իր սքանչելի գեղով և, թերևս, ծանոթ արքունիքին Լևոնի օրերից:

Կայսրը ընտրեց նրան հարս իր որդու Թեոփիլոսի համար: Եթե ճշմարիտ է մեր ենթադրությունը, որ Միքայելի կինը Թեկլա Վարդանի դուստրն էր, ուրեմն հայ, առավել ևս հասկանալի կդառնա Թեոդորայի ընտրությունը:

Թեոդորան միայն իր գեղեցկության չէր պարտ այն մեծ բախտը, որին արժանացավ, այլև իր տոհմի քաղաքական և պետական կշռին: Թեոդորան երեք քույր ուներ և երկու եղբայր: Քույրերն էին Կալոմարիա կամ Գեղանի Մարիամ, Սոփիա և Իրինե, եղբայրները՝ Վարդաս և Պետրոնաս:

---

[1] **Theoph. Cont.**, 41; **Genes.**, 26.

[2] **Ibid**, 47.

Թեոդորայի ամուսնությունը տեղի ունեցավ Միքայելի գահակալությունից մի քանի ամիս հետո: Հները շփոթելով ավգուստության և ինքնակալության տարեթվերը, կարծել են, որ Թեոփիլոսն ամուսնացել է իր ինքնակալության առաջին տարին՝ 829 թվին, հոր մահից հետո: Այս շփոթությունը չէր ներդաշնակում պատմագիրների այն վկայության, թե 837 թվին Թեոփիլոսն ուներ արդեն չափահաս դուստր, նշանված Ալեքսիոս-Մուշեղի հետ: Նոր ժամանակվան քննադատներին էր վերապահված ճշտել պսակադրության իսկական տարեթիվը: Վենետիկի դուքս Հուստինիանոս Պարտիկիակը թողել է կտակ թվագրված՝ «Ինդիկտիոնի յոթներորդ տարին Միքայել կայսեր՝ ինն երորդ և Թեոփիլոսի՝ ութերորդ»: Ինդիկտիոնի յոթերորդ տարին համապատասխանում է 829 թվին (մինչև սեպտեմբեր): Միքայելը գահ էր բարձրացել 820 թվի դեկտեմբերի 25-ին: Հետևապես 829 տարին իրոք, նրա իններորդ տարին է: Եթե նրա իններորդ տարին հավասար է Թեոփիլոսի ութերորդին, նշանակում է Թեոփիլոսի առաջին տարին է 821 թիվը[1]:

Գիտենք, որ պսակադրությունը և թագակապությունը կատարվել են միաժամանակ՝ Հոգեգալստյան օրը[2]: Զատիկը 821 թվին, մարտի 24-ին էր և Հոգեգալուստը՝ մայիսի 12-ին, երկուշաբթի օր:

Ասել է, թե Միքայելը հազիվ գահ բարձրացած, շտապել է թագաժառանգ հռչակել իր որդուն՝ Թեոփիլոսին: Ճիշտ նույն օրը տեղի է ունեցել և Թեոդորայի պսակադրությունը, այն է 821 թվին, մայիս ամսին:

Եթե ենթադրենք, որ Թեոդորան այդ ժամանակ մոտ 16-17 տարեկան էր, ծնունդը պիտի տանենք մինչև իններորդ դարու սկզբի տարիները: Այս հաշվով և նրա հայրը Մարինոսը ծնված պետք է լիներ առաջ, քան 780 թվականները:

Հույն եկեղեցին հոկտեմբերի 13-ին տոնում է Նիկետասի հիշատակը: Սա պատկերամարտության զոհերից էր և կենսագրության մեջ ասված է, որ Կ. Պոլիս էր եկել 780 թվականին, ծնվել էր Պափլագոնիա 763 թվին, և որ կարևորն է, համարվում էր Թեոդորայի ազգական, ուրեմն հայ ծագումով[3]: Ասել է, թե Նիկետաս Սամիկոնյան տանիցն էր և Մարինոսի մերձավորը, և որովհետև ծնված էր 763 թվին Պափլագոնիա, հետևապես Մարինոսի և Մանուելի տունը հաստատված էր Արմենիակյան թեմում, ութերորդ դարի կեսին: Անհիմն չէ ենթադրել, որ նույն ժամանակվան Հայաստանում ծավալվող կուսակցական պայքարի հետևանքով է, որ այս ընտանիքը քաշվել է կայսրության սահմանները:

---

[1] **Romanin**, Storia documentata di Venezia, I, 348: Միայն րնագրի 18-րդ տարին ուղղելու է 8-րդ, համաձայն Բրուկի՝ Byz. Zeit., X, 542.

[2] **Georg**., 790.

[3] **Acta Sanctorum**, III, 448. Բնագիրը աղավաղված է. պետք է կարդալ *φασὶ δὲ αὐτοῦ* (և ոչ *αὐτὸν*) *ἀπόγονον εἶναι, Θεοδώραν* (և ոչ *Θεοδώρας*).

Միքայելի հաշվով, գեղանի Թեոդորան, Արմենիակյան թեմի զինվորական նշանավոր ընտանիքի զավակը, Մանուել Մամիկոնյանի եղբոր դուստրը, իր հարսնությամբ արքունիք պիտի բերեր հայրենի համակրությունը և մեղմացներ Լևոն Հայի սպանիչի հանցավորությունը:

Միքայելը բայց և այնպես անպատուհաս չմնաց: Թեոդորայի պսակից մի քանի ամիս հետո պայթեց Թովմասի ապստամբությունը նույն տարվա վերջին ամսին և տևեց երեք տարի մինչև 823 թիվը: Թովմասի անկումից հետո, տեսանք, խռովությունը շարունակեց դեռ մի տարի հուզել ընդհանուր խաղաղությունը և դադրեց 824 թվին:

Միքայելը չորս տարի թագավորելուց հետո, կորցրեց իր առաջին կնոջը և երկրորդ անգամ ամուսնացավ Եվփրոսինեի հետ: Հունական օրենքով որպես թե կրկնապսակ թագավորը իրավունք չուներ իշխելու, ուստի նա թագը զիջավ իր որդուն[1]:

Վերջին տեղեկությունը, որ կատարյալ առասպել է, ծագել է նրանից, որ Թովմասի ապստամբությունը խեղդվել էր 821 թվին, ուստի Թեոփիլոսի թագավորությունը, հաշվել են այս տարուց: Միքայելը, իրոք, վերամուսնացավ Եվփրոսինեի հետ, բայց այս առթիվ նա չհրաժարվեց գահից: Իսկ որ կրկնապսակը որպես թե իրավունք չուներ թագավորելու, ստույգ չէ:

Եվփրոսինեն միանձնուհի էր: Վերջին Իսավրյան կայսեր՝ Կոստանդին VI-ի դուստրն էր: Մայրը, Մարիամը հայ էր, ամուսնուց բաժանվելով վանք էր քաշվել իր դստեր Եվփրոսինեի ընկերությամբ:

Այժմ Միքայելը բռնի հանեց մենաստանից և կնության առավ Եվփրոսինեին: Նպատակն էր, անշուշտ, օրինական կերպարանք տալ գահի հափշտակության: Հանգած տան վերջին շառավիղի Եվփրոսինեի հետ նա տիրանում էր և Իսավրյան թագին որպես օրինավոր ժառանգ: Այլ իմաստ չունեին նաև ապստամբ Թովմասի խաբեբա հայտարարությունը, թե ինքը ոչ այլ ոք է, եթե ոչ Կոստանդին VI կայսրը և փախել ազատվել է մոր ձեռքից և ուզում է վերագրավել կորցրած գահը:

Արդյոք Թեոդորայի հարսնությունը փրկեց Միքայելին Արմենիակյան զինվորական տան թշնամությունից, դժվար է որոշ բան ասել: Թովմասի շարժման ժամանակ Արմենիակյան թեմի զորավարն էր ոմն Օլբիանոս: Մինչդեռ սպասելի էր նույն պաշտոնում տեսնել Մանուելին: Լևոն կայսեր պատմության մեջ հիշվում է, որ Մանուել նշանակվեց զորավար Արմենիակյան թեմի[2]: Իսկ Միքայելի որդու Թեոփիլոսի պատմության մեջ նույն պատմագիրն ավանդում է, որ Լևոնի օրով Մանուելը Անատոլիկյան թեմի զորավար էր: Կամ ընդունելու է, որ վերջին վկայության մեջ Անատոլիկյանի

[1] **Michel le Syrien,** éd. Chabot, p. 72.

[2] **Theoph. Cont.,** 24.

հիշողությունը սոսկ սխալ է փոխանակ Արմենիակյանի, կամ որ, իրոք, Արմենիակյան թեմից տեղափոխվել էր Անատոլիկյանը Միքայելի օրով:

Մանուելի կյանքը ընդհանրապես մութ է: Հայտնի չէ, թե ե՞րբ և ինչի՞ց ստիպված փախչում է արաբների մոտ և հետո վերադառնում:

Պատմում են, որ պատճառը պալատականների քսությունն էր: Մանուել մեծամեծ ծառայություն էր մատուցել Թեոփիլոսին, փրկելով նրան մահվան ճիրաններից արաբական մի արշավանքի ժամանակ: Արաբներն արդեն շրջապատել էին կայսրին և գերի պիտի վերցնեին, երբ հանկարծակի Մանուելն առաջ նետվեց, ձայնելով իր զինվորներին. «տղայք, ամաչեցեք մեղուներից, որոնք իրենց թագուհու սիրուն համար թռչում են նրա ետևից»:

Ասաց և պլացավ թշնամու վրա փրկելու իր կայսեր, որպես մի «առյուծ, որ կռվում է իր կորյունների համար»: Ճեղքեց արաբական գիծը և մոտենալով կայսեր, գոչեց. «ո՛վ թագավոր, հետևիր ինձ, դիակների վրայից ճանապարհ կհորդեմ քեզ համար»:

Թեոփիլոսը դանդաղում էր: Մանուելը քանի անգամ հիշեցնելուց հետո վերջապես մոտեցավ, բռնեց նրա ձիու սանձից, և սպառնալով որ ինքը կսպանե, եթե չհնազանդվի իրեն, քաշեց հանեց թշնամիների միջից և այսպիսով փրկեց նրան գերվելու խայտառակությունից:

Կայսրը երախտագիտորեն մեծամեծ պատիվների արժանացրեց Մանուելին և հաճախակի կոչում էր նրան «բարերար և փրկիչ»:

Մանուելի դիրքը չար նախանձ շարժեց պալատականների շրջանում: «Եվ այն մարդը,- նկատում է պատմագիրը,- որ ճակատել էր բյուրավոր թշնամիների դեմ և ազատել իր թագավորի կյանքը, ընկճվեց մի քանի վատահոգի անձանց քսության առաջ»: Կայսերական մի մատռվակ, որ առաջ ծառա էր եղել Մանուելի մոտ, նախազգուշացրեց նրան: Մանուելը բարվոք համարեց տեղի տալ չարության և հեռանալ արքունիքից: Մինչև իսկ թողեց կայսրության սահմանները և ծածուկ փախավ արաբական դուռը[1]:

Մի ուրիշ աղբյուր, որ Մանուելին անվանում է ամենից հռչակված զորավարն ամբողջ Արևելքի մեջ և շատ հարգված թագավորի կողմից, պահել է մեզ նրա բանսարկուների անունները: Կայսեր ականջին շշնջողը Վասիլ անունով մի անձն էր, որ գործում էր սակայն ուրիշ, ավելի ազդեցիկ, մարդու թելադրությամբ: Դա Միրոնն էր, հաղորդակցության լոգոթետը և Պետրոնասի աները: Պետրոնասը Մանուելի եղբորորդին էր և թագուհու եղբայրը:

Թեոփիլոսի միտքը պղտորել էին, թե Մանուելը որպես թե ձգտում է գահի և այս ուղղությամբ գաղտնի աշխատանքներ է կատարում: Արքունի մատղովակի բարեխոսությունը այստեղ վերագրվում է թագավորի առաջին հանդերձապահին՝ պրոտովեստիարիոսին, որի անունը Լևոն էր: Սա չի

[1] **Genes.**, 61; **Theoph. Cont.**, 116 և 118.

հաջողում ցրել անհիմն զրպարտությունները և Մանուելը, անզոր կռվելու ստոր մեքենայությանց դեմ, ստիպվում է հեռանալ պալատից և փախչել Ասորիք, այնտեղից ամիրապետի դուռը[1]:

Թեոփիլոսը հետո զղջաց և միջոցներ ձեռք առավ հետ բերելու հռչակավոր զորավարին:

Մանուելի կյանքի մեջ մութ գծեր շատ կան: Փախուստի պատմությունը նրանցից մեկն է: Տակավին հնում տարաձայնություն կար այն մասին, արդյոք Թեոփիլոսի ժամանա՞կ է տեղի ունեցել փախուստը թե նրա հոր՝ Միքայել Թլվատի: Ոմանց ասելով, Մանուելը փախել էր «Միքայելի օրով կամ ատելությունից և կամ երկյուղալով նրա հին թշնամությունից»[2]:

Հայ տեղեկությունները, որ անտես են արված հարցովս զբաղված նորագույն գիտնականների կողմից, ուժ են տալիս վերջին վարկածին: Լևոնի սպանությունից հետո, ասում է հայ պատմագիրը. «Թագաւորեաց (-եա՞լ) Միքայէլն, ելանէր ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի Մամիկոնենոյ. եւ նորա աճապարեալ հարիւր և յիսուն արամբ անկանի ի Կամախ եւ անտի առ Մամուն իշխանն Իսմայէլի, որ սպանեալ զեղբայրն Մահմէտ ինքն տիրէր Տաճկաց: Եւ նորա յոյժ պատուեալ զնա, կտրեաց ռոճիկս աւուրն հազար երեք հարիւր եւ վեց կշիռ արծաթոյ եւ զայլ օր ըստ օրէ պարգեւս անչափ եւ անկշիռս»[3]:

Այս տեղեկությունը խիստ արժեքավոր է, որովհետև ծագում է Շապուհ Բագրատունու կորսված երկից, որից քաղել է Վարդանը: Շապուհը ոչ միայն անցքերին ժամանակակից էր, այլև լինելով իշխող տան անդամ մոտեն ծանոթ էր քաղաքական իրադարձությանց: Ըստ օտար աղբյուրների, Մանուելը փախել է արաբների մոտ Կիլիկիա-Ասորիքի վրայից, մինչդեռ հայ պատմագիրը գիտե որ հալածական իշխանը եկել է նախ Կամախ Հայաստան, հետո միայն անցել է արաբների մոտ: Գիտե որ փախել է Միքայելի օրով և մեծ ընդունելություն գտել ամիրապետի կողմից: Թռչակի խնդիրը ևս ցույց է տալիս, որ մեր պատմագիրը իրազեկ աղբյուրից է քաղել իր տեղեկությունները:

Այս դեպքում նախանձի և բանսարկության պատճառանքը ընկնում է: Փախուստի բուն շարժառիթը մնում է որոնելի: Ամենից հավանականն է ենթադրել, որ Թովմասի շարժման խառն է եղել Մանուելը գործով թե լոկ համակրանքով: Խռովությունը զսպելուց հետո է, որ «Միքայէլ ելանէր ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի»:

---

[1] **Georg.**, 796; **Symeon**, 632.

[2] **Theoph. Cont.**, 121.

[3] **Վարդան**, էջ 77-78:

Հիմ չկար վստահելու հանցապարտ կայսրին, ուստի և հայ զորավարը խույս տվավ իր հայրենիքը: Եթե ճիշտ է այս ենթադրությունը, Թովմասի շարժումի հայկական բնավորությունը մի նոր ապացույց է ստանում Մանուելի մասնակցությամբ:

Մի ուրիշ հայ պատմագիր հիշելով Միքայելի կռիվը Թովմասի հետ և վերջնիս պարտությունը հայոց 272 (= 823 ի. Ք.) թվին, ավելացնում է. «Եւ ապա պատերազմեալ Միքայէլի ընդ տաճիկ զօրուն եւ զբազումս ի նոցանէ սատակեաց ի Կուռն աւատին եւ յաղթեաց նոցա եւ Անկիւռիան»[1]:

Հավանորեն և այս տեղեկությունը առնված է Շապուհ Բագրատունուց: Դժբախտաբար, բնագիրը աղճատված է թվում, թերևս **Անկիւռիան** ուղղելու է առ **Կիւռիոն**:

Կուռն ավանը բյուզանդական պատմագիրների Կորոն և արաբական Կուռու կոչված վայրն է, որ գտնվում էր Կիլիկյան դռներից հյուսիս Արգեոս լեռան լանջերի վրա[2]: Զարմանալի է, որ արաբացի Յակուբի պատմագրի մոտ ևս Կուռու անվան փոխարեն կարդացվում է Անկյուռա[3]: Սա ասում է, որ Մամունը գրավեց այս ավանը 830 թվին, որտեղից փախավ Մանուելը:

Մի այլ վկայությամբ, Թեոփիլոս կայսրը արշավեց արաբների դեմ և առավ Զուպատրա բերդը 1141 սելևկյան (= 829 ի. Ք.) թվին, իսկ հետևյալ տարին, ուրեմն 830 թվին, պատրիկ Մանուելը գլուխ բարձրացրեց կայսեր դեմ և անցավ արաբների կողմը: Նույն տարին հակահարձակում գործեց և խլեց չորս բերդ հազիրաև (= հուշիս) ամսին[4]:

Այս չորսի թվումն էր հավանորեն և Կորոնը:

Երևում է, որ այս ժամանակ տեղի է ունեցել և Մանուելի փախուստը համաձայն արաբ պատմագրի վկայության: Ասել է, թե արաբ և ասորի աղբյուրները գրեթե համերաշխ են, դնելով Մանուելի փախուստը 830 թվին և Կորոնի գրավման ժամանակ:

Սրանց և հայ տեղեկության հակասությունը կարելի է մասամբ հարթել, ընդունելով, որ նախ Միքայելն է արշավել և առել Կորոն բերդը, ինչպես հայն է ասում, հետո Մամունը հետ է գրավել, և այս ատեն է, որ փախել է Մանուելը: Հայը համաձայն չէ վերջին կետում, և փախուստը դնում է ավելի առաջ և Միքայելի կենդանության:

Նորագույն գիտնականներից մեկը, առանց ծանոթ լինելու հայ տեղեկության, արդեն այն միտքն է հայտնել, որ Մանուել փախած պիտի

---

[1] **Ստռիկ**, U. Պետերբուրգ, 1885, էջ 144:

[2] **Ramsay**, Asia Minor, 355.

[3] **Վասիլև**, Բյուզանդիա և արաբներ, I, 85:

[4] **Michel le Syrien**, 78.

լիներ Միքայելի ժամանակ: Անհավանական է գտնում, որ հալածական զորավարը վստահեր վերադառնալ այն գահակալի մոտ, որից փախուստ էր տվել[1]:

Ինչ վերաբերում է դարձին, բոլոր աղբյուրների վկայությամբ, այդ տեղի է ունեցել Լուլոն բերդի առումից հետո: Լուլոն կամ Լուլու մի կարևոր ամրություն էր Կիլիկյան դռների կամ Կապանի հյուսիսային մուտքի առաջ պաշտպանելու համար Կապանը:

Վարդան պատմագիրը հաղորդում է, որ «Մամուն էր ի կողմանս Յունաց զամս(՞) եօթն և առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ եւ դառնայ ի Միջագետս. եւ Մանուիլ երթայր դարձեալ ի Յոյնս»[2]:

Ըստ Միքայել Ասորու, Մամուն արշավեց և պաշարեց Լուլոն բերդը 1142 սելևկյան թվին այար ամսին, որ է 831 թ. մայիս, բայց չկարողացավ առնել: Հետևյալ 1143 թվին, երբ պատրաստվում է գնալ Եգիպտոս, լսեց, որ բերդը անձնատուր է եղել: 1143 տարին հավասար է 831 թ. հոկտեմբերից մինչև 832 թ. հոկտեմբերը: Մամունը փետրվար ամսին 832 թ. արդեն Եգիպտոս էր գտնվում, հետևապես բերդն ընկած պիտի լիներ ավելի առաջ, այն է 831 թ. հոկտեմբերից մինչև 832 թ. փետրվարը[3]:

Վարդանի տեղեկությունը թվում է, թե հաստատում է և ճշտում այս ժամանակամիջոցը: Հայ պատմագրի խոսքը, թե Մամունը մնաց Հունաց կողմերում **զամս** յոթն, պատմական հիմ չունի: Հավանորեն կարդալու է **զամիսս** յոթն և ենթադրելու, որ յոթն ամիսը Լուլուա ամրոցի պաշարման և անկման տևողությունն է: Եթե պաշարումը սկսված է մայիսից, ինչպես վկայում է ասորին, ապա առումը կընկնի յոթն ամիս հետո՝ նոյեմբերին, նույն 831 թվին:

Մանուելի դարձը ուրեմն 831 թ. նոյեմբերից հետո է:

V

Մանուելի դարձի պարագաները ևս անվիճելի չեն:

Պատմում են, որ Թեոփիլոսը, երբ դեսպան ղրկեց արաբների մոտ խաղաղության դաշն կնքելու, միաժամայն պատվեր տվավ դեսպանին խոսել Մանուելի հետ և համոզել նրան վերադառնալ: Դեսպանը Հովհաննես Սինկելլոսն էր, մի նշանավոր եկեղեցական և ծագումով հայ, որ հետո պատրիարք ընտրվեց:

Ուրիշներն ավանդում են, որ դեսպանությունը խաղաղության համար չէր

[1] **E. W. Brook,** Byz. Zeit., X, 297.

[2] **Վարդան**, էջ 79:

[3] **Bury**, Roman Empire, 473.

և ոչ բաց և արձակ, այլ գաղտնիք էր, շատերին անծանոթ, և հատկապես Մանուելին հետ բերելու նպատակով էր: Կայսեր գիտությամբ Հովհաննեսը իբերական (վրական) հնամաշ շոր հագած՝ հարեց Երուսաղեմ ուխտի գնացող կրոնավորներին, իբրև նրանցից մեկը և այդպես ծպտված հասավ Բաղդադ: Հաջողեց մուրացիկի կերպարանքով ներկայանալ Մանուելին և կատարել կայսեր հանձնարարությունը: Որպես երաշխիք կայսերական խոսքի, տվավ նրան կայսեր կրծքի խաչը և կնքված նամակը: Մանուելը մեծապես հուզվեց և խոստացավ դառնալ հայրենիք պատեհ առթիվ:

Հայ զորավարը իր քաջագործությամբ արդեն գրավել էր ամիրապետի վստահությունը: Մի օր խնդրեց թույլ տալ արշավել դեպի Կապպադովկիա պատժելու իր թշնամիներին, որոնք ամբաստանել էին իրեն կայսեր առաջ և այն պահուն գտնվում էին Կապպադովկիա: Մանուել արշավեց: Նա ծածուկ հայտնեց իր դիտավորությունը Կապպադովկիայի զորավարին և խնդրեց, որ մի ջոկատ զինվոր դարանամուտ լինեն ապահովելու իր փախուստը:

Հարձակման պահին Մանուել շեղվեց դեպի դարանակալ զինվորները և անցավ նրանց կողմը: Մանուելի հետ էր այդ ժամանակ ամիրապետի որդին: Մանուել հրաժեշտ առավ նրանից, ասելով. «այժմ դու դարձիր, զավակս, հորդ մոտ, իսկ ես գնում եմ ոչ այլ ուրեք, բայց եթե առ իմ կայսրը և տերը»:

Թեոփիլոս ընդունեց Մանուելին գրկաբաց, մեծամեծ պատիվների արժանացրեց, մագիստր(ոս)ության աստիճան տվավ և նշանակեց սքոլարների դոմեստիկոս[1]:

Ուրիշները պատմում են, որ Հովհաննեսն ինքն է առաջարկում կայսրին իր պատրաստակամությունը գնալ Մանուելին բերելու: Խնդրում է տալ իրեն բավականաչափ գանձ, որպես թե գերիներին և բանտարկյալներին օգնելու, հուսալով, որ այդ պատրվակի տակ կհաջողի տեսակցել նաև Մանուելի հետ: Կայսրը հոժարում է և Հովհաննեսը ուղի է ընկնում Բաղդադ և ողորմածության քողի տակ հաջողությամբ կատարում է իր առաքելությունը: Կայսեր ինքնագիր նամակի հետ տալիս է նրան նաև կրծքի խաչը, որով Մանուելը համոզվում է, որ հրավերը անկեղծ է և խոստանում է վերադառնալ:

Մանուելը խնդրում է ամիրապետին, որ թույլ տա արշավել նրա որդու հետ թշնամու դեմ: Արշավանքը վերջանում է հաջողությամբ և Մանուելը հաճելի է դառնում ամիրապետի աչքին և ավելի մեծ պատվի արժանանում:

Այսպես ամիրապետի հավատքն է ձեռք բերում և երբ ծրագրում է փախուստ տալ, նորից առաջարկում է նրան թողնել իրեն մեծ զորքով և նրա որդու ընկերությամբ գնալ և նվաճել ամբողջ Բյուզանդիան: Անատոլիկյան թեմին մոտենալուց հետո Մանուելը զատվում է բանակից՝ որպես թե որսի և

[1] **Genes.**, 63. **Theoph. Cont.**, 119-121.

զբոսանքի աղագավ, առնելով, իր հետ ամիրապետի որդուն: Սրան հայտնում է իր ցանկությունը, ասելով, որ իր աչքում «ավելի լավ բան չկա կյանքում, քան հայրենիքը և ազգակիցները»: Այնուհետև բաժանվում է մանուկ ընկերակցից արտասուքով և վերադառնում մայրաքաղաք:

Կայսրը մագիստրոսության պատիվ շնորհեց Մանուելին և սքոլարների, այսինքն՝ պալատական զորքերի, դոմեստիկոս նշանակեց, այլև նրա երեխաներին գրկեց մկրտության ավազանից[1]:

Վերջին հանգամանքը պարզում է մյուս պատմագրի *σύντεκνος* բառի բուն նշանակությունը որպես կնքահայր[2]:

Հիշատակվում է նաև Հովհաննեսի մի ուրիշ դեսպանությունը արաբների մոտ: Սրա նպատակն էր հայտնել ամիրապետին Թեոփիլոսի գահակալությունը հոր մահից հետո, «համաձայն հինավուրց սովորության»: Դեսպանը տարավ իր հետ թանկագին նվերներ, մոտ չորս կենդինար ոսկի արաբական դրամ պաշտոնյաներին բաշխելու համար: Ամիրապետը գոհ մնաց նվերներից և Հովհաննեսի արտակարգ առատաձեռնությունից:

Արևելցիներին շլացնելու և կայսեր հարստությունը ցուցադրելու կրկնակի մտահոգությամբ դեսպանը տարել էր հետը, ի միջի այլ պարգևների, երկու ոսկե կոնք, լակառ, թանկագին քարերով ընդելուզված: Ճաշից հետո ձեռքերը լվանալու համար էին: Կայսերական առաքյալը արդեն ցնցող տպավորություն էր գործել, շռայլելով աջ և ձախ հարուստ նվերներ ամեն մեկին, որ գալիս էր շնորհավորելու նրա գալուստը: Ոսկիով լի արծաթե ամաններ պարգևում նրանց: Իսկ կոնքի դեպքը միանգամայն ապշեցրեց արաբներին:

Մի անգամ ճաշից հետո, երբ Հովհաննեսը ձեռքերը լվաց կոնքում, պատվիրեց սպասավորին, որ անփութորեն մի կողմ նետե ոսկե կոնքը և հնարավորություն տա գողանալու: Կոնքը անհայտացավ: Ի զուր անցան բոլոր որոնումները, ամեն ինչ տակնուվրա արին և չկարողացան գտնել: Հասարակությունը ցավ էր հայտնում չքնաղագեղ իրի կորստյան առթիվ: Ամիրապետը պատրաստ էր փոխարինել արժանավոր ընծաներով:

Սակայն, Հովհաննեսը ձևացավ, որ իրեն համար մեծ բան չէ կորուստը: Եվ հրամայեց, որ հետևյալ օրը մյուս կոնքը բերեն ձեռքերը լվանալու, կամենալով ցույց տալ, որ այդպիսի ամաններ շատ ունի: Այս վարմունքը, մանավանդ վեհանձն վերաբերումը դեպի մյուս կոնքի կորուստը, սքանչացրեց նույնիսկ ամիրապետին: Սա հրամայեց փոխարենը հարյուր գերի ազատ արձակել, հանել նրանց ցնցոտիները և հագցնել նոր և վայելուչ զգեստներ և ընծայաբերել կայսերական դեսպանին: Հովհաննեսը մի անգամ ևս ազնվական դիրք բռնեց, հայտնելով ամիրապետին, որ այդպիսի մի մեծ

[1] **Georg.**, 796-798; **Symeon**, 632-634.

[2] **Theoph. Cont.**, 120.

շնորհ չի կարող ընդունել առանց փոխադարձը վկայելու: Ուստի խնդրեց սպասել, մինչև որ մայրաքաղաքից հասնեն նույնչափ արաբ գերիներ, ազատ արձակված կայսեր կողմից: Հովհաննեսի այս արդարամիտ շարժվածքը մեծ հիացում առաջ բերեց արաբների մոտ և մտերմական հարաբերություն հաստատեց, որից հետո մեծ հոչակով և ընծաներով վերադարձավ մայրաքաղաք[1]:

Եթե արդարև այս դեսպանությունը Թեոփիլոսի ինքնակալության առթիվ էր, ապա տեղի պիտի ունեցած լիներ առաջին տարին: Թեոփիլոսի հայրը մեռավ, ինչպես տեսանք, 829 թվի հոկտեմբեր ամսին: Հետևապես սրանից հետո է դնելու առաջին դեսպանությունը: Իսկ եթե երկրորդը ևս պատմական է, չէր կարող ուշ լինել, քան 832 թ. ապրիլ ամիսը, որովհետև այս ժամանակ Հովհաննեսը պատրիարքական աթոռը նստավ, մինչդեռ դեսպան էր գնացել որպես սոսկ սինկելլոս:

Հավանական չէ, որ կարճ միջոցում բյուզանդական դուռը կրկնակի դեսպանություն ղրկած լինի արաբներին: Թվում է, որ առավելություն պետք է տալ մյուս տեղեկության, որ գիտե միայն մի դեսպանություն: Սրա գլխավոր նպատակն է եղել մերձազգային մի պարտք կատարել, ծանուցանելով նոր կայսեր գահակալությունը: Երևում է, որ առաքելությունը գաղտնի բելաղրություն ուներ հոգալ միևնույն ժամանակ փախստական զորականի դարձի մասին:

Սրանով հաստատվում է այն ավանդությունը, թե Մանուելը փախել էր ոչ թե Թեոփիլոսի ժամանակ, այլ նրա հոր, քանի որ դեսպանության պահին նա արդեն արաբների մոտ էր: Մյուս կողմից ավանդությունն ինքը ենթադրել է տալիս, որ այն դեսպանությունը, որի նպատակն էր Մանուելի դարձը, կարող էր նույնը լինել գահակալության դեսպանության հետ:

Մտաղրության արժանի է պատմագրի այն խոսքը, թե դեսպանը «աւետեց Մանուէլին կայսեր կարեկցութիւնը եւ ներումը չարիքների»[2]: Այս նախադասության միտքն այն չէ, թե կայսրը վատություն չի արել Մանուելին, այլ որ կներե Մանուելին արդեն կատարած վատության համար:

Այս մի ակամա խոստովանություն է, որ հայ զորավարը լոկ զրպարտության զոհ չէր, այլ որ լուրջ մեղադրություն էր ծանրանում նրա վրա: Ի՞նչ կարող էր լինել նրա հանցանքը: Արդյո՞ք մեղսակից չէր Թովմասի խռովության: Պատմագիրները շատ մեծ համարում ունին Մանուելի վրա և ամեն բան չեն հայտնում մեզ, գիտեն լռել: Երևում է, որ մահապարտ Միքայելը չէր կարողացել գրավել Մանուելի բարեկամությունը, անգամ խնամիանալով նրա տան հետ: Զորավարի փախուստը թշնամական լարման հետևանք էր:

---

[1] **Theoph. Cont.**, 95-98.

[2] Նույն տեղում, էջ 119:

Թեոփիլոսը խոստանում էր ներում: Արդյո՞ք խոսքը վերաբերում է Թեոփիլոսի հետևյալ դատաստանին:

Նոր գահին տիրանալուց հետո Թեոփիլոսը ժողովեց Մագնավրա պալատում մեծամեծներին և հայտարարեց, որ կանխահաս մահը խափանեց իր հոր Միքայելի մտադրությունը վարձատրելու արժանապես բոլոր այն անձերին, որոնք ձեռնտու էին եղել իրեն Լևոնի սպանության գործում: Ավելացրեց, որ վարձատրության խնդիրը մի պարտք է, որ հորից մնացել է իր վրա և ինքը կուզեր պարտաճանաչ լինել: Ուստի խնդրեց բոլորին, ով որ մասնակից է եղել Լևոնի սպանության, չթաքցնե, այլ հայտնե այդ մասին: Ժողովականների միջից իսկույն բարձրացան հանցագործները և պարծենալով խոստովանեցին իրենց մեղսակցությունը:

Թեոփիլոսը հրամայեց անմիջապես կալանավորել այդ մարդկանց և հանձնել եպարքոսին, որպեսզի արժանի պատիժ ստանան, քանի որ համարձակվել են Աստուծո տաճարը պղծել և ձեռք բարձրացնել նրա օծյալի վրա: Եպարքոսը գլխատել տվեց հանցավորներին[1]:

Մի ուրիշ պատմվածով դատաստանը այլ կերպ է եղել: Թեոփիլոսը ձիարշավ սարքեց կրկեսում և հետո ծերակուտականներին կանչեց կայսերական օթյակը կրկեսում, այսպես կոչված Կաթիսմա: Միևնույն պահին պատվիրեց պրոտովեստիարիոս Լևոն Քամաղրակոնին բերել այն ջահը, որ կոտրվել էր սրի հարվածից Լևոն կայսեր սպանության ժամանակ: Ապա դառնալով ժողովականներին հարց տվավ. «ով որ տաճար է մտնում և սպանում Աստուծո օծյալին, ի՞նչ պատժի է արժանի»: «Մահվան պատժի», գոչեցին հլու ծերակուտականները:

Քաղաքի եպարքոսը չհապաղեց գործադրելու դատավճիռը: Ի զուր անցավ մահապարտների բողոքը և բացատրությունը, թե իրենց ոճիրի շնորհիվ է, որ Թեոփիլոսը գահի վրա է[2]:

Ի՞նչ է նշանակում այս անագան դատաստանը, ավելի քան անսպասելի: Պատմագիրները չեն ուզում տեսնել այստեղ արդարասիրության մի գերագույն տուրք կայսեր կողմից: Ընդհակառակը հետին միտք են որոնում կայսեր վարմունքի մեջ: Մեկի կարծիքով, կայսրը կողմնակից էր Լևոնի պատկերամարտ ամբարշտության, ուստի և վճռեց վրեժխնդիր լինել նրա մահվան[3]:

Մյուս պատմագիրն ավելի խորն է նայում և ենթադրում, որ կայսրի միակ մտահոգությունն էր այդպիսի խիստ միջոցով պաշտպանել և ապահովել իր թագը նման ոճիրներից[4]:

---

[1] **Theoph. Cont.**, 85-86.

[2] **Georg.**, 791; **Symeon**, 625.

[3] **Georg.**, 791.

[4] **Theoph. Cont.**, 85.

Գուցե ճշմարտության ավելի մոտ կլիներ ենթադրել, որ Թեոփիլոսը ձգտում էր հետնյալ դատաստանով գոհացում տալ հակադիր ուժերին, և իրեն մերձեցնել: Գործուն ուժերը կենտրոնացած էին հայ շրջաններում առավելապես: Սրանց համար Լևոն Հայի սպանությունը քաղաքական մեծ ոճիր էր: Ապացույց՝ Թովմասի խոշոր շարժումը, որ մեծ ժողովրդականություն ուներ: Միքայելը արդեն մի կարևոր քայլ էր արել մոտենալու Մամիկոնյան ազդեցիկ տան, պսակելով իր որդուն Թեոդորայի հետ: Թեոփիլոսի ապաժամ դատավարությունը մի ուրիշ փորձ է նույն ուղղությամբ և նպատակ ունի խմբելու իր շուրջը իր հայ ազգականությունը:

Աննշանակ երևույթ չէ, որ կոտրած ջահը ցուցադրողը պրոտովեստիարիոս Լևոնն է: Սա ճիշտ այն անձն է, որ նախապես ծառայել էր Մանուելի մոտ, և հետո, որպես պաշտոնյա Թեոփիլոսի արքունիքում, հետամուտ էր ջրելու Մանուելի դեմ հարուցած ամբաստանությունները: Կարծես թե Լևոնի սպանողների պատիժը մի նոր քայլ էր գոհացնելու Մանուելին և նրա շրջապատին:

Եթե այդ քայլը որևէ կերպ դյուրացրեց Մանուելի դարձը, Թեոփիլոս սխալված չէր: Պատմագիրների միահամուռ վկայությամբ Մանուելը Թեոփիլոսի թագավորության ամենակարող դեմքն էր, նրա զինվորական փառքն էր:

VI

Մամիկոնյան տոհմիցն էին նաև երկու եղբայրներ՝ Ալեքսիոս-Մուշեղ և Թեոդոս, բայց ոչ Մանուելի և Թեոդորայի ընտանիքից:

Նախ՝ կանգ առնենք մի ուրիշ անձնավորության վրա, որ որքան նշանավոր, նույնքան և առեղծվածային է: Դա պարսիկ կոչված Թեոփոբոսն է: Առասպելական թանձր մշուշ է նստած սրա ծագման և գործունեության վրա, մշուշ, ուր հազիվ են թափանցում պատմական իսկության քանի մի շող:

Պատմում են, որ Թեոփոբոսը Պարսից արքայական տանիցն էր: Երբեմն բյուզանդական մայրաքաղաքն էր եկել դեսպանությամբ մի ազնվական պարսիկ, ապօրինի սիրային կապ հաստատել մի կնոջ հետ, որդի ունեցել և հեռացել քաղաքից: Պարսից մոտ որպես թե հին սովորություն կար, որ թագավորել կարող էր միայն այն անձը, որ սերված էր իրենց արքայական ցեղից: Սակայն, անընդհատ պատերազմների մեջ թագավորական տունը բնաջինջ էր եղել և թեկնածու չունեին: Հարցուփորձ անելով իմացան, որ բյուզանդական մայրաքաղաքում Թեոփոբոս անունով մեկը կար, որ արքայական արյուն ուներ: Պարսիկները մարդ ղրկեցին կայսեր քաղաքը, որ որոնեն և գտնեն հիշյալ անձին: Խնդրակները տեղեկացան, որ Օքսիա կղզում (Իշխանաց կղզիներից մեկը) ապրում էր իր մոր հետ մի երեխա, որի դեմքի գծագրությունից և շարժումներից երևում էր, որ որոնելի անձը պիտի լիներ: Հարևանները արդարև

վկայեցին, որ ժամանակով այդ կնոջ հետ կենակցել է մի պարսիկ և նրանց սիրտ պտուղն էր երեխան: Այս մասին հաղորդեցին կայսրին և խնդրեցին, որ երեխային դարձնեն պարսիկներին: Կայսրն ուրախություն հայտնեց գյուտի առթիվ և Թեոփոբոսին ընդունեց արքունիք ազնվավայել կրթություն տալու համար:

Ըստ նույն պատմվածքի մի ուրիշ փոփոխակի, պարսիկը դեսպան չի եղել, այլ մի անձ, որ պատերազմական շփոթի ժամանակ թողել էր հայրենիքը և հեռացել կայսերական հողը: Հայտնի չէ, թագավո՞ր էր, թե թագավորական տան մերձավոր: Մայրաքաղաքում ապրել էր չքավորության մեջ և վերջը մտել ծառայության մի խանութպան կնոջ մոտ: Սրա հետ կապվել էր սիրով և ունեցել մի արու զավակ: Մայրաքաղաքում էլ մեռել էր:

Պարսիկները աստեղագիտության, թե դյութության միջոցով երևան են հանում իրենց արենակից մանկան գոյությունը օտար երկրում: Խուզակներ են ուղարկում և համոզվում են, որ, իրոք, այդպես է: Կայսեր հաղորդում են և նրա հավանությունը առնում, որ պարսիկները ապստամբեն արաբների դեմ և անցնեն կայսերական հողը, որպեսզի վայելեն նորագյուտ հայրենակցի իշխանությունը, հպատակվեն նրան որպես արքայական տան շառավիղի:

Ճիշտ այդ ժամանակները Պարսից առաջնորդը՝ Բաբեկը, հայ պատմիչների Բաբանը, հինգ տարի արաբների դեմ մաքառելուց հետո, փախել ապաստանել էր կայսրության սահմաններում՝ ոչ միայն թշնամու ահից, այլև կարոտելով տեսնել Թեոփոբոսին: Բաբեկ եկել էր մինչև Սինոպ և իր հետևորդներով, որ յոթ հազար հոգի էին, հպատակություն էր հայտնել կայսեր:

Ավելացնում են նաև, որ Թեոփոբոսը 12 տարեկան էր, երբ հայտնվեց և արծվաքիթ էր Կյուրոսի նման, որ նշան էր նրա պարսիկ ծագման:

Հավատացնում են, որ Թեոփիլոս մեծամեծ պատիվներ տվեց պարսիկներին, Թեոփոբոսին մեծարեց պատրկության պատվով և իր կնոջ քրոջ հետ ամուսնացրեց: Փախստական պարսիկներին նա թույլատրեց կնության առնել հռոմ աղջիկներ, և Բաբեկի գունդը ցրեց բյուզանդական թեմաների մեջ, առանձին տուրմաներ կազմելով[1]:

Մեր մյուս աղբյուրները բավականանում են հակիրճ տեղեկությամբ, թե Թեոփոբոսը իր հոր հետ փախավ եկավ Թեոփիլոսի մոտ 14 հազար հոգու հետ: Սրանց կայսրը զետեղեց մյուս թեմաների մեջ առանձին տուրմաներ կազմելով, իսկ Թեոփոբոսին կնության տվավ իր քեռուն, այսինքն՝ Թեոդորայի քրոջը[2]:

Ամբողջ պատմությունը առասպելական է. լավագույն դեպքում ժողովրդական մի զրույց: Այս ակներև է: Սակայն, դժվար է քրքրել և որոշել այն պատմական կորիզը, որի շուրջը կծկվել են վիպական թելերը:

---

[1] **Genes.**, 53-57 **Theoph. Cont.**, 110-112.

[2] **Leo Gram.**, 215; **Georg.**, 797; **Symeon**, 625.

իշխանության տակ և ուրեմն խոսք չի կարող լինել որևէ արքայական տան մասին: Ասենք, Բաբեկի անունն արդեն երաշխիք է, որ հարցը վերաբերում է ոչ թե պարսիկներին, այլ պարսիկ աղանդավորներին, որ կոչվում էին **Խուռամ** կամ **Խուռամյան**: Այս մի կենսունակ և ծավալուն շարժում էր կրոնական և հասարակական բնույթով: Ուներ նաև կոմունիստական ձգտումներ: Այս աղանդավորները հայտնի էին նմանապես **Մուխամմիր** անունով, որ նշանակում է կարմրազգեստ, որովհետև սիրում էին կարմիր զգեստ հագնել: Հավատում էին, որ մի օր իրենց միջից մի թագավոր պիտի ծնի, որպես նոր մեսիա կամ մահդի, և իրենց առաջնորդն:

Այս ժամանակները արդարև ոմն Ջավիդան որդի Սահլի հայտարարել էր և ճանաչվել որպես ակնկալյալ մահդի, բայց սպանվել էր և նրա տեղը անցել էր Բաբեկ հիջրի 201 = 816-817 թվին:

Աղանդը ծագել էր Ատրպատականում և այստեղից տարածվել, լայն ծավալ ստացել: Հայաստանը ևս տուժեց այս շարժումից: Բաբեկը ամուսնացած էր Սյունյաց Վասակ իշխանի դստեր հետ: Հայերը մեծագույն հարվածը տվեցին աղանդավորներին, սպանելով նրանց առաջնորդներին: Բաբեկի նախորդին սպանեց Իսահակ Աշոտյան (Աշոտ Մսակերի որդին) Կորդվաց լեռներում: Բաբեկին ձերբակալեց Սահլ Սմբատյանը և հանձնեց արաբներին: Եվ վերջապես Բաբեկի եղբորը Աբդալլահին բռնեց իշխան Ե-սայի Աբու-Մուսե և մատնեց արաբներին:

Խռովության ընթացքին հավանական է, որ աղանդավորները երբեմն անցնեին բյուզանդական հողը անհաջողության դեպքում: Հայտնի է, որ այդպիսի փախուստ տեղի է ունեցել 829 թվին, այլև 837 թվին: Այս ժամանակն էր, որ բռնվեց Բաբեկը և նրա հետևորդների մի մասն անցավ սահմանը ոմն Նասրի առաջնորդությամբ[1]:

Այն լուրը, թե Բաբեկը նմանապես փախած լինի Բյուզանդիա և հաստատված Սինոպ, հարկավ, զուրկ է որևէ պատմական հիմքից:

Մի ուրիշ աղբյուր վկայում է, որ Բաբեկը, տեսնելով, որ իր կողմնակիցները անցան սահմանը, ինքը ևս ինն հոգով գնաց **Beth Romaya** Ստեփանոսի մոտ[2]: Եթե միայն սխալ ընթերցում չէ **Romaya**, Հռոմ փոխանակ **Ranaya**, Առան, այսինքն՝ Աղվանք, պետք է ենթադրել, որ հռոմ բառը գործ է ածված լայն իմաստով, որպես քրիստոնյա աշխարհ, քանի որ հիշված Ստեփանոսը Աղվանից իշխան Ստեփանոս Աբլ-Ասադն է և Եսայի Աբու-Մուսեի քեռին: Ստեփանոսը բերել էր տվել Բաբեկին և հարվածել բաղակացիներին, բայլականցիներին, ուստի և սպանվել էր Դավոն և

[1] **Michel le Syrien,** III, 79-88.

[2] Նույն, էջ 90:

Շապուհ իշխանների կողմից: Սպանությունը կատարվել էր 276 հայ թվականից երեք տարի հետո, ուրեմն 279 թ. որ է 830[1]:

Ասորի պատմագիրը Բաբեկի փախուստը Ստեփանոսի մոտ դնում է սելևկյան 1148 թ. = 837 հ. Ք.: Այս ժամանակ Ստեփանոսը կենդանի չէր: Ասորի բնագիրը թերի է: Արաբ մատենագիրների ասելով Բաբեկը ապաստանեց ոչ թե Ստեփանոսի, այլ Իսա իբն Յուսուֆ իբն Ստեփանոսի մոտ[2]: Սա ոչ այլ ոք է, եթե ոչ Եսայի Աբու-Մուսեն, որ Հովսեփի որդին էր: Իսկ Հովսեփը Ստեփանոսի որդին չէր, այլ քեռայրը, և Եսային քվերորդի էր Ստեփանոսի, ինչպես վկայում է հիշյալ հայ մատենագիրը:

Այսպիսով բյուզանդական վերև հիշված զրույցի մեջ պատմական տարրն այն է, որ Խուռամ աղանդավորներից կամ Բաբեկի հետևորդներից մի խումբ անցել է բյուզանդական հողը: Բայց աղբյուրները չեն հիշում, որ սրանց առաջնորդը եղել է Թեոփոբոսը: Տալիս են ոմն Նասրի անունը, իսկ արաբական պատմիչը Նասրի փոխարեն ունի Բարսիս[3], թերևս, կարդալու է Նարսիս:

Շատոնց կարծիք է հայտնված, թե փախստականները առավելապես հայերիցն էին, որ հավասարապես տառապում էին թե՛ Բաբեկի, և թե՛ Մամունի խժդժություններից[4]:

Արդարև, բյուզանդացիք հաճախ պարսիկ էին անվանում քաղաքական իմաստով նախկին պարսկական, հետագայում արաբական, բաժնի հայերին:

Ուշագրավ է, որ պարսիկ փախստականները զետեղվում են Սինոպի շրջանում, այսինքն՝ Արմենիակյան թեմում, ուրեմն հարում են հայ միջավայրի: Այս կողմնակի նշան է, որ գեթ մասամբ հայ պետք է լինեին նրանք:

Գալով Թեոփոբոսին, մի բան հաստատ է, որ սա նշանակված է եղել փախստականների պետ և տնօրեն: Բայց որ ինքը նրանց հետ եկած լինի կամ դավանական առնչություն ունեցած լինի, ավելի քան տարակուսելի է: Հակասական վկայությունները արդեն փաստ են, որ ճշմարտությունը կորած է, տեղի տալով մտահաճ հնարաբանության:

Սակայն, կա մեկ ցուցում, որ դուրս է մնացել առասպելական հյուսվածքից և հենց դրա համար մոտ է իսկության: Պատմագիրներից մեկն ասում է, որ Թեոփոբոսի հայրը ծառայելիս է եղել բյուզանդական զորքի մեջ[5]:

Ասել է, թե Թեոփոբոսը փախստական չէր, այլ զորականի որդի. ուրեմն կրթված և սնված Բյուզանդիայում:

---

[1] **Մովսես Կաղանկատվացի,** Գ, 19:
[2] **Tabari,** III, 1223; **Weib,** II, 301.
[3] **Tabari,** 1235; **Վասիլև,** I, 114.
[4] **Finlay,** History of Greece, II, 153.

Գիտնականներից անգամ նրանք, որոնք Թեոփոբոսի գլուխցները համարում են անպատմական և հնարածո, հակամետ են ընդունելու նրա պարսիկ ծագումը[1]:

Հիմք չենք տեսնում միանալու այս կարծիքին: Այնտեղ, ուր պակասում են ստույգ պատմական տեղեկությունները և դաշտը մնում է ենթադրությունների, պետք է նախընտրություն տալ այն ենթադրության, որը համերաշխ է տիրող շրջապատի ընդհանուր պայմաններին:

Արդ մեզ հետաքրքրող շրջանում Հայոց ազդեցությունը գտնվում էր իր վերապահյալի մեջ: Շուրջը ամենուրեք վխտում էին հայ նշանավոր դեմքեր արքունիքում և թե դուրսը պետական անվի բոլորտիքը: Պարսիկ կամ արաբ գործիչներ չենք տեսնում ասպարեզի վրա և դժվար հանգամանք է, որ IX դարում, երբ քրիստոնյա և մուսուլման աշխարհների հարաբերությունները այնպես լարված էին, մի մուսուլման, թեկուզ պարսիկ, կրոնափոխ լինելով ծառայեր կայսրին և առաջնակարգ դիրք գրավեր: Բացի դրանից անտեսելու չէ բնավ, այն, որ Թեոփոբոսը ամուսնացած էր կայսրուհի Թեոդորայի քրոջ հետ, այսինքն՝ խնամիացած էր հայ ընտանիքի հետ: Տեսանք, որ Թեոդորայի երեք քույրերից Կալոմարիա ամուսնացավ Արշավիր պատրիկի հետ, Սոփիա Բաբուցիկի: Երրորդ քրոջ, Իրենեի, ամուսնության մասին ուղղակի հիշատակություն չկա: Բայց իրավունք ունինք ենթադրելու, որ Իրինեն էր ճիշտ այն անձը, որը Թեոդորայի քույրն էր և որին Թեոփիլոսը կնության տվավ Թեոփոբոսին: Քանի որ Մամիկոնյան տան մյուս երկու փեսաները՝ Արշավիրը և Բաբուցիկը հայ էին, հավանական է կարծել նույնը և երրորդ փեսայի՝ Թեոփոբոսի նկատմամբ: Կայսրուհին չէր կարող իր քրոջը տալ մի փախստական պարսիկի: Նա իր հարազատ դստեր համար փեսա էր ընտրել, ինչպես կտեսնենք, Ալեքսիոս-Մուշեղ ականավոր հային, որ նույնպես Մամիկոնյան որեարներից էր:

Թեոփիլոսի ինքնակալության առաջին տարին, 829-830 թվին, Թեոփոբոսը մասնակից էր նրա արևելյան առաջին արշավանքին Մանուել զորավարի հետ:

Հետևապես այդ ժամանակ Թեոփոբոսը չէր կարող 12 տարեկան երեխա լինել, ինչպես հավատացնում է վիպախառն զրույցը, այլ հասակն առած տղամարդ էր և պետք է շատ առաջացած, զինվորական սանդուղի բարձր աստիճանները կոխած լիներ, որպեսզի կարենար կայսրի և մեծահռչակ զորավար Մանուելի հետ խորհրդի նստել և ռազմական ծրագրեր մշակել:

Եթե ընդունենք, որ առաջին արշավանքին Թեոփոբոսը առնվազն 30-35 տարի հասակ ուներ, պետք է ծնված լիներ դարու սկզբներին կամ նախորդ ութերորդ դարու վերջերին:

Ստուգապես հայտնի է, որ Հարուն Ռաշիդի (786-809) և Կոստանդին VI

[1] **Hirch**, Byz. Studien.. 139; **Bury., O. C.,** 253, **Վասիլև**, I, 82.

կայսեր (780-796) օրով, ուրեմն 786-796 տասնամյակի ընթացքին Հայաստանից մի ստվար գաղթականություն անցավ բյուզանդական հողը Շապուհ Ամատունի իշխանի և իր որդու Համամի առաջնորդությամբ: Բազմության քանակը 12 հազար էր, այր և կին, նախարարներ և հեծյալներ: Տայքի վրայից անցան Պոնտոս: Կոստանդին նրանց ընդունեց, «պատիվ տվավ նախարարներին և նրանց հեծյալներին, և մյուս խառնիճաղանճ ամբոխը բնակեցրեց բերրի և արգավանդ տեղում»[1]:

Թեոփոբոսի մասին ևս ասված է, որ իր հոր հետ եկավ կայսեր մոտ 14 հազար փախստականների հետ: Այս գաղթը Թեոփիլոսի օրով չէր և ուրեմն կապ չուներ Խուռամ աղանդավորների իրական թե ենթադրական փախուստի հետ: Ոչինչ անպատեհություն չեմ տեսնում Թեոփոբոսի և իր հոր գաղթը 14 հազար մարդով նույնացնելու Շապուհի և իր որդու Համամի գաղթի հետ, որ հաշվում էր 12 հազար մարդ: Թեոփոբոսի պատմությունը գրի է առնված տասներորդ դարի կեսերին: Դարուց ավելի ժամանակամիջոցը բավական էր որպեսզի հին անցքերը տեղահան լինեին հիշողության մեջ և Շապուհի դեպքը շփոթվեր և ձուլվեր խուռամ պարսիկներին վերագրված կրկնակի փախուստի հետ:

Զարմանալի է, որ արաբական աղբյուրները անծանոթ չեն Թեոփոբոսին, ինչպես և բյուզանդացիք չեն հիշատակում Նասրին, խուռամյանների առաջնորդին: Չենք ուզում հետևեցնել, որ Թեոփոբոսը նույն Նասրն է, այլ որ կլանել է վերջնիս պատկերը:

Շապուհի առաջին հանգրվանը եղել է Խաղտյաց կամ Պարխար լեռների այն մասը, որը ցայժմ էլ կոչվում է Համշեն, այսինքն՝ Համամաշեն ի հիշատակ Համամի: Այս դեռ չի նշանակում, որ Համամը չէր կարող մյուս իշխանների նման կայսերական ծառայության մեջ մտած լինել:

Հնարավոր է Թեոփոբոսի առեղծվածային պատկերը մերձեցնել եթե ոչ Համամին, գոնե իր որևէ եղբոր:

Շապուհ պարսիկ անունը, որ նշանակում է արքայորդի, դյուրությամբ կլուծեր հանելուկը թե ինչո՞ւ Թեոփոբոսը համարվում էր թագավորական ցեղից սերված մի այնպիսի ժամանակ, երբ Արևելքում պարսիկ թե հայ թագավորական տան հետք չկար:

Մեր այս ենթադրությունը մի փորձ է հանելու Թեոփոբոսի խորհրդավոր ծագումը առասպելների միջից և դնելու էր պատմական հողի վրա:

Մյուս կողմից՝ անուրանալի է, որ որոշ նմանություն կա Թեոփոբոսի և Մանուելի կյանքի գլխավոր գծերի միջև: Նմանությունը այնքան շոշափելի է, որ ակամա ծնում է կասկած, արդյո՞ք Թեոփոբոսը նույն Մանուելի մի ուրիշ պատկերը չէ, նրա այսպես ասած վիպական ստվերը:

[1] **Պատմ.**, վերջին գլուխ:

Ինչպես Թեոփոբոսը, այնպես և Մանուել հարակցություն ունի խուռամյանների հետ: Երբ Մանուել փախավ արաբների մոտ, հոռոմ գերիներից գունդ կազմեց ամիրապետի թույլտվությամբ և գնաց խուռամ կոչված աղանդավորների դեմ կռվելու Խորասանում[1]: Նման ձևով Թեոփոբոսը ներկայանում է մեզ որպես պետ այն աղանդավորների, որոնք կայսրին էին ապավինել:

Թեոփիլոս սկզբի տարին արշավեց արաբների դեմ: Զինվորական խորհրդին ներկա էին Մանուել և Թեոփոբոս: Մանուելի կարծիքով կայսրը անձամբ չպիտի մասնակցեր կռվին վտանգից խուսափելու համար և ճակատը տեղի պիտի ուղեներ ցերեկը: Թեոփոբոսը, ընդհակառակը, առաջարկում էր, որ կայսրը իր ներկայությամբ խրախուսե զինվորներին և որ կռիվը բարվոք էր վարել գիշերով:

Ճակատամարտը կատաղի էր և արյունահեղ: Կայսերական զորքը կրունկ դարձրեց, կայսրը մնաց մենակ պատերազմի խոնարհանում թիկնապահ գնդով և Թեոփոբոսի ձեռքի տակ գտնված երկու հազար պարսիկներով: Բայց կարողացան ճողոպրել և բռնել մոտիկ բլուրը: Երբ գիշերը վրա հասավ, Թեոփոբոսը խորամանկության դիմեց, հրամայեց գնդին աղմուկ հանել, փող հնչել, թմբուկ զարկել, ձևացնելով, թե նոր զորքեր են եկել օգնության: Արաբները խաբվեցին և երկյուղից մի կողմ քաշվեցին, որով հնարավորություն տվին Թեոփոբոսին և կայսեր իջնել բլրից և գնալ միանալ գլխավոր զորքին: Շնորհիվ այս հնարամտության Թեոփոբոսը սիրելի դարձավ Թեոփիլոս կայսրին:

Նույնանման մի դեպք պատմվում է նաև Մանուելի նկատմամբ, այն դեպքը, որ առիթ ունեցանք բերելու վերև, թե ինչպես կայսրը նորից արշավեց Կապպադովկիա ս՛՛՛բների դեմ և խուճապի ժամանակ մնաց պարփակված թշնամու օղակի մեջ: Մանուելը խանդավառեց զինվորներին մեղուների օրինակով և սլացան փրկելու իրենց տիրոջը վտանգավոր վիճակից: Հակառակ կայսեր կամքին, հավատարիմ և տիրասեր զորավարը բռնեց նրա ձիու սանձից և հանեց ապահով տեղ: Կայսրը շնորհապարտ եղավ հավետ Մանուելին:

Երկու դեպքն էլ, մեր կարծիքով, պատմական չեն, այլ հնարածո, ավելի ճիշտ ասած, զատ զատ անդրադարձումներ են այն իրողության, որ տեղի ունեցավ մի քանի տարի հետո Դազիմոնի ճակատում 838 թվին:

Դազիմոնը այժմյան Թոկատի մոտերքն էր: Արաբական բանակը զորեղ էր և ահարկու: Կայսրը ստիպված էր քաշվել և ամրանալ Անզեն կոչված բլրի վրա: Մանուելը սքոլարների, այսինքն՝ պալատական կանոնավոր գնդերի դումեստիկոսն էր: Թեոփոբոսը պարսիկ գնդի հրամանատարն էր: Երկու զորավարներն էլ խորհուրդ տվեցին հարձակողական գործողություններ

[1] **Theoph. Cont.**, 118.

սկսել գիշեր ատեն, բայց կայսրը և մյուս զորավարները ընդդիմացան: Կայսերական զորքը չդիմացավ արաբական գրոհին և նահանջեց: Պարտությունը ակնհայտնի էր: Պարսիկ գունդը հուսահատված փորձեց գաղտնի բանակցել արաբների հետ, խոստանալով ոչ միայն լքել կայսրին, այլև նրան մատնել արաբների ձեռքը, պայմանով որ իրենց թույլատրվի դառնալ հայրենիք:

Մանուել զորավարը, որ տեղյակ էր լեզվին, լսեց մատնիչների դավադրական խոսակցությունը թշնամու հետ և անմիջապես կարգադրեց, որ կայսրը հեռանա, որպեսզի արաբների ձեռքը չընկնի: Կայսրը հակառակեց, բայց Մանուելը բռնի ստիպեց փախչել:

Արդյո՞ք Թեոփոբոսը ինքը մասնակից էր իր գնդի դավաճան ծրագրերին, պատմագիրներն այս կետում տարաձայն են: Կարծիք կար, որ Թեոփոբոսը առաջարկել էր նախընտրել գիշերվան ճակատը, թաքուն նպատակ ունենալով իր գնդով արաբների կողմը անցնել: Այս մասին ամբաստանություն եղավ կայսեր և Թեոփոբոսը վախենալով պատժից փախավ Ամաստրիա կնոջով և երեխաներով: Կայսրը նավատորմ ղրկեց նրա դեմ, որպես ըմբոստի: Բայց շուտով ներեց և հաշտվեց նրա հետ[1]:

Պատմում են նաև, որ Սոզոպետրա քաղաքի վրա հարձակվելուց և ավերելուց հետո Թեոփիլոս ետ դարձավ, ուղին բռնելով դեպի մայրաքաղաք, և պատվիրեց Թեոփոբոսին, որ տանի պարսիկ գունդը Սինոպ, զետեղե այնտեղ և հետո գա իրեն մոտ: Պարսիկները որպես թե ապստամբեցին և բռնադատեցին Թեոփոբոսին իրեն թագավոր հայտարարել: Հավատարիմ զորավարը փախավ մայրաքաղաք և հայտնեց կայսրին գործի էությունը: Կայսրը նրան սիրով ընդունեց, բայց հրամայեց ցրել պարսիկ գունդը, որ այդ ժամանակ աճել էր և հաշվում էր 30 հազար մարդ, մյուս թեմաների (զորամասերի) մեջ, կազմելով նրանցից ուրույն տուրմաներ կամ վաշտեր[2]:

Այս դեպքը ուրիշ բան չէ, քան նախորդի կրկնությունը այն աննշան տարբերությամբ, որ փոխված է տեղի անունը, Սինոպ փոխանակ Ամաստրիայի, և պարսից դավադրության տված է ապստամբական, քան դավաճանական բնույթ:

Վավերականը Ամաստրիայի արկածն է թվում, որպես հետևանք Դազիմոնի պարտության: Իսկ Անզեն բլրի անցքի արձագանքներն են վերոհիշյալ վիճելի երկու համանման միջադեպերը, ուր մեկի հերոսն է ներկայանում Թեոփոբոսը, մյուսի՝ Մանուելը (հակառակ Հիրշի, որ հավաստի է համարում Մանուելի առաջին գործը և անվավեր Անզեն բլրի դեպքը)[3]:

[1] **Theoph. Cont.**, 135. **Symeon**, 637. **Georg.**, 803,

[2] **Theoph. Cont.**, 124.

[3] **Hirch**, O. C., 145.

Ի նպաստ մեր մեկնության է արաբական մի տեղեկություն, որով հաստատվում է, որ կայսրի կյանքը վտանգված էր Դազիմոնի ճակատում, միայն զարմանալի է, որ ազատարարի դերում երևան է գալիս ոչ թե Մանուելը, այլ Նասրը[1]:

Այսպիսով Մանուելի և Թեոփոբոսի կյանքի գլխավոր գծերը, որչափ որ պատմությունը պահել է, խաչաձևում են և գրեթե ծուլվում: Եթե անգամ Թեոփիլոսի ազատումը պատկանում է Նասրին, փաստը մնում է անհերքելի, որ միևնույն երևույթները վերագրվել են թե Մանուելին, և թե՛ Թեոփոբոսին չնչին փոփոխակներով:

Աննշանակ չէ նաև այն պարագան, որ պատմագիրներից ոմանք ասում են, որ Թեոփոբոսը կայսեր քեռայրն էր, իսկ ուրիշները համարում են նրան թագուհու քեռայրը: Եթե մտաբերենք, որ Մանուելը թագուհու հորեղբայրն էր, կարող ենք կասկածել, արդյոք Թեոփոբոսի անորոշ կապը կայսերական տան հետ մի պղտորված արձագանք չէ՞ Մանուելի իրական ազգակցության:

Մանուելի մահվան մասին երկու տեղեկություն կա: Մեկին նայելով՝ նա կենդանի էր տակավին 857 թվին Թեոկտիստոսի սպանության ժամանակ: Մյուսը ասում է, որ Մանուելը մեռավ այն վերքից, որ նա ստացել էր Դազիմոնի կռվում 838 թ. կայսրին պաշտպանելիս:

Այս կետում ևս մի որոշ նմանություն ենք շոշափում նրա և Թեոփոբոսի մեջ: Պարսիկ զորավարի մահը նույնչափ առասպելախառն է, որչափ և նրա կյանքը: Սրան սպանեց Թեոփիլոս կայսրը իր մահվանից առաջ, ուրեմն նախքան 20 հունվարի 842 թիվը, երբ պատահեց կայսրի մահը: Պատմագիրն հաղորդում է, որ Սինոպի դեպքի առթիվ կայսրը հրամայեց գլխատել Թեոփոբոսին և ավելացնում է, որ մի ուրիշ պատճառ ևս կար սպանության:

Ակնարկը վերաբերում է Ամաստրիայի անցքին: Քիչ հետո անդրադառնալով այդ անցքին, նույն պատմագիրը հաղորդում է, որ կայսրը ներման պատրվակով իրեն մոտ բերել տվեց ապստամբ զորավարին, փակեց պալատում, և մի օր հրամայեց սպանել, զգալով իր մոտալուտ մահը: Երբ դժբախտ զորականի գլուխը բերին կայսեր, սա փայելով ձեռքով մեռածի երեսը ավաղեց. «այժմ դու այլևս այն Թեոփոբոսը չես և ո՛չ ես՝ այն Թեոփիլոսը»:

Նկատենք անցողակի, որ մեր ենթադրությունը, թե Սինոպի և Ամաստրիայի դեպքերը միևնույն իրողության տարբեր արտահայտություններն են, հաստատվում է պատմագրի ակամա խոստովանությամբ, որով սպանությունը անմիջական հետևանք է համարվում և՛ Սինոպի և Ամաստրիայի դեպքի, մի բան, որ ուրիշ ոչինչ չի նշանակում, քան այն, որ հիշած դեպքերը հար և նույնն են:

Սպանության մասին շրջում էին և ուրիշ լուրեր: Որպես թե սպանությունը

[1] **Masudi**, Prairle d'Or., 68; **Վասիլև**, I, 65.

կատարվել էր ոչ թե թագավորի հրամանով, ապա այն ծովակալի, որը ղրկված է եղել զսպելու ապստամբությունը: Սա ինքնագլուխ գիշերով սպանել էր տվել Թեոփոբոսին:

Երբ պարսիկ գունդը հարցրեց թե ի՞նչ եղավ անհետացած զորավարը, խաբելով հավատացրին, թե Թեոփոբոսը մեռած չէ, այլ ապրում է պալատում: Պարսիկները մնացին այն կարծիքին, որ Թեոփոբոսը տակավին մահ չէ ճաշակել[1]:

Վերջին խոսքերից գիտնականները հետևեցրել են, որ Թեոփոբոսը իրոք հարակցություն է ունեցել պարսիկ աղանդավորների հետ, գուցե գերագույն էակ է ճանաչվել, որի հետևանքով և հավատացել են, որ Թեոփոբոսը ենթակա չէ մահվան, այլ որպես մի նոր Եղիա համբարձել է երկինք[2]:

Պատմագրի այն խոսքը, թե Թեոփոբոսը ապրեց անապականության մեջ կարող էր հիմ ծառայել մոլար հասկացողության: Բարեբախտաբար, հնարավորություն կա ստուգելու այս կասկածելի տեղեկությունը ըստ այն աղբյուրի, որտեղից առնված է: Այնտեղ ասված է, թե Թեոփոբոսի մահը գաղտնի եղավ, ոչ ոք չիմացավ, ուստի և պարսիկները, ավելի ճիշտ պարսիկ աղանդավոր գունդը, որի գլուխն էր Թեոփոբոսը, մնաց այն հավատի մեջ, թե զորավարը տակավին մահ չի ճաշակել **մինչև այն ժամանակը.** խոսքը այստեղ այն ժամանակվան մասին է, երբ հարցնում էր պարսիկ գունդը, և ոչ թե երբ գրում էր պատմագիրը, ինչպես հասկացել է մյուս պատմագիրը[3]:

Հետաքրքրական է, որ ոչ կոստանդինյան պատմագիրները ոչինչ չգիտեն Թեոփոբոսի անմահության զրույցների մասին:

Թեոփոբոսի մարմինը թաղեցին իր սեփական տանը, Ներսեսի պալատի մոտ[4]: Թվում է, որ այս տեղեկության բիվը ևս մեկնության արդյունք է: Իսկական աղբյուրն ասում է, որ Թեոփոբոսին թաղեցին Ներսեսի շենքի մոտերքը մի տեղ, «որ այժմ կոչվում է *τῆς θεοφοβίας*»[5]:

Արդ, այս չէ նշանակում Թեոփոբոսի տուն, այլ երկյուղածության եկեղեցի: Ի՞նչ կապ կարող էր լինել Թեոփոբիա սրբարանի և Թեոփոբոս անձի միջև, արդյոք սրբարա՞նն է պարտ իր անունը Թեոփոբոսին, թե ընդհակառակը: Բնական կասկած է ծագում, որ ժողովրդական ստուգաբանությունը Թեոփոբիա եկեղեցու մեջ տեսել է համանուն սրբի հանգստարան և հերյուրել Թեոփոբոսի պատմությունը և մանավանդ նրա անմահության առասպելը:

---

[1] **Gen.**, 60; **Theoph. Cont.**, 136.

[2] **Lebeau,** Le Bas-Empire, XIII, 153; **Bury**, O. C. 253.

[3] **Genesius**ի *ἀχρι τῶν ὧδε χρόνων*, խոսքը, էջ 60: **Theoph. Cont.**, 136, փոխել է *μέχρι τῶνδε*, որ նույնանշանակ է, բայց կարծես տարբերության երանգ ունի:

[4] **Symeon**, 646.

[5] **Georg.**, 810.

Այս խորհրդավոր զորավարի սպանության պարագան նմանապես պարզ չէ: Զանազան լուրեր կային: Հայտնի չէ որոշակի թե ո՞վ էր սպանողը: Ասում էին, որ թագուհու եղբայր Պետրոնասն և լոգոթետը, այսինքն՝ հռչակավոր Թեոկտիստոսն էին, որ գործեցին ոճիրը թագավորի հրամանով: Ուրիշները վերագրում էին դահճի դերը ծովակալ Օրիփասիոսին:

Թեոփոբոսը սպանված էր գաղտնի և թաղված գաղտնի, գիշերով: Անհասկանալի է այս արտակարգ զգուշությունը հանդեպ մի բուռն պարսիկների այնպիսի դերում, երբ միահեծան կայսրերը և ամենակարող պետական դեմքերը օր ցերեկով խողխողվում էին առանց որևէ բողոքի:

Եթե շարունակենք զուգահեռները, որ գծեցինք Մանուելի և Թեոփոբոսի միջև, կտեսնենք, որ որոշ աղերս կա նաև նրանց վախճանի մեջ: Մանուելի մասին նմանապես լուրեր էին տարածված, որ նա մեռել էր 838 թվի ճակատում ստացած խոցերից: Մինչդեռ պատմությունից երևում է, որ ապրել է այնուհետև ևս գոնե քսան տարի պալատում:

Թեոփոբոսի «անմահությունը» ճիշտ այս կարգի երկարակեցություն էր, քանի որ սպանվել էր, բայց հավատացնում էին, թե տակավին ապրում է պալատում:

Ահա այս դիտողություններն են, որ մաքառում են Թեոփոբոսի դեմ: Եթե նրա մեջ պատմական տարր կա, բաղկացած մի կողմից Շապուհի որդու և մյուս կողմից պարսիկ Նասրի իրական ստվերներից, ամեն պարագայում, այդ տարրը Մանուելի շուքի տակ այնքան է աղոտացել, որ Թեոփոբոսը դարձել է Մանուելի վիպական մի երկվորյակը:

VII

Մանուելից և Թեոփոբոսից ավելի պերճ դեմք կար բյուզանդական արքունիքում: Դա Ալեքսիոս-Մուշեղն էր, Մամիկոնյան իշխաններից: Շատ գեղեցիկ երիտասարդ էր և փեսայացավ կայսերական տան: Թեոփիլոսն ու Թեոդորան հինգ աղջիկ ունեին, բայց ոչ մեկ արու զավակ: Որպեսզի ապահովեն գահի ժառանգությունը, որոշեցին դուստրերից մեկին՝ Մարիամին տալ կնության Ալեքսիոս-Մուշեղին և հայտարարել նրան գահաժառանգ:

Նորափեսան մեծամեծ պատիվների արժանացավ: Կայսրը նրա համար առանձին տիտղոս ստեղծեց, որ է պատրիկ անթյուպատ, այլև մագիստրության պատիվը տվեց և կեսար հռչակեց: Նույն նոր տիտղոսն էր, որ շնորհեց կայսրը նաև Բագրատունյաց իշխանին Աշոտին, որ էր որդի Շապուհի և թոռն Մսակերի:

Ասողիկ սխալմամբ անվանում է «հյուպատավորության պատիվ, այսինքն՝ **ապուհյուպատ** պատրկություն», փոխանակ «**անթյուպատ** պատըր-

կութեան»: Մի ուրիշ անգամ ուղղում է իր սխալը, երբ Շապուհ Բագրատունուն, այսինքն՝ մատենագրին, կոչում է «որդի Աշոտոյ անթիպատրիկի», միայն կարդալու է «**անք-ի (պատ) պատրկի**»[1]:

Ալեքսիոս-Մուշեղի պատմությունը ևս ազատ չէ կնճիռներից: Նախ ո՞վ է այս իշխանը:

Վերև տեսանք, որ համանուն մի անձն ըմբոստացավ կայսրի դեմ 792 թվին: Նա պահան գնդի պետն էր պալատում կամ ինչպես կոչում էին վիգլի դրունգարը, հետո նշանակվեց զորավար Արմենիակյան թեմի: Հավանորեն սրա թոռն էր Ալեքսիոս-Մուշեղը, Թեոդորայի փեսան, եթե դատելու լինենք պապի անունը թոռան փոխանցելու սովորությունից:

Ալեքսիոս-Մուշեղի ընտանիքը ապրում էր Ակրոպոլիս կամ միջնաբերդ թաղում մի տան, որ կոչվում էր Կրենիտիսսայի տուն: Կրենիտիսսա իգական ձևն է Կրենիտես անվան: Ալեքսիոս-Մուշեղի տոհմը կրում էր Կրենիտես մականունը, նույն տան անունով, ինչպես կարծում են հները:

Կրենիտիսսա, երևի, Ալեքսիոս-Մուշեղի մայրը կամ տատն էր: (Ի՞նչ է իսկապես բառի ծագումը, դժվար է ասել: Արդյոք հունարեն **կրենն** «աղբյուր» բառից է, տունը աղբյուրի մոտ գտնվելու համար: Այս դեպքում սպասելու էր Կրենիտիս, - տիդու, մինչդեռ Կրենիտես, հոգ. սեռ. Կրենիտոն է: Եթե աշխարհագրական ծագում ունենար, զարմանալի չէր լինի նրա մեջ տեսնել ոչ թե Կարինի, այլ Դեղիք գավառի Կոնի ավանի անունը):

Թեոդորայի առաջին երեխան տղա է եղել, բայց մեռել է մանուկ հասակում՝ խեղդվելով պալատին կից ավազանի մեջ[2]: Սրա դամբանը գտնվում էր Ս. Առաքելոց եկեղեցու մեջ իր քրոջ Մարիամի կողքին, և այստեղից էլ գիտենք, որ անունը Կոստանդինոս էր[3]: Մեզ հասել են դրամներ, որոնք կրում են Թեոփիլոսի հետ և մի անմորուս պատկեր, որ Կոստանդինոս ինքն է[4]:

Այնուհետև Թեոդորան ընծայել է իր ամուսնուն հինգ դուստր, Թեկլա (Թեկղի), Աննա, Անաստասիա, Պուլքերիա և Մարիա (Մարիամ): Հատուկ հիշատակություն կա, որ Մարիան ամենից կրտսերն էր, կամ, ուրիշ վկայությամբ, ամենից սիրելին: Սակայն, Մարիան ոչ մի կերպ չէր կարող ամենից փոքրը լինել, եթե իրոք ամուսնացած էր Ալեքսիոս-Մուշեղի հետ:

Արդարև, Թեոդորան հարսնացել էր 821 թվին: Եթե Մարիան վերջին երեխան էր, ուրեմն, հաշված առաջին զավակը Կոստանդինը, վեցերորդն էր: Հետևապես ծնված կարող էր լինել ամենավաղ ոչ առաջ, քան 827 թիվը: Գիտենք, որ 839 թվին արդեն մեռած էր: Այս հաշվով 12 տարեկանից

---

[1] **Uառիկ**, էջ 144 և 138:

[2] **Theoph. Cont.**, 88.

[3] **De Cerimoniis**, 645.

[4] **W. Wroth**, Catalogue of the Imperial Byzantine Coins, XLIII.

պակաս պետք է լիներ ամուսնության պահին, որ հավանական չէ: Ճշմարտության ավելի մոտ կլիներ ընդունել, որ Մարիամը, ընդհակառակը, անդրանիկ աղջիկն էր: Ուրիշ առթիվ պատմագիրը խոստովանում է, որ փոքր աղջիկը Պուլքերիան էր:

Երեխաները սովորություն ունեին հաճախ այցելելու իրենց տատին, Թեոկտիստեին, որ Թեոդորայի մայրն էր: Սա ապրում էր իր սեփական տանը Սամաքիա քաղում: Տունը կոչվում էր Գաստրիա և գտնվում էր ոչ հեռու այժմյան Հայոց Ս. Գևորգ եկեղեցուց: Գաստրիա նշանակում է հուևարեն ծաղկամաև: Որպես թե Հեղինե թագուհին Երուսաղեմից բերել էր հետը մի ամանում այն ծաղիկները, որ քաղել էր Խաչգյուտի տեղում և ամանը ծաղիկնե,ով դրել էր Գաստրիա տան տեղը, որից և մնացել է անունը: Ժողովրդական զրույց է, հարկավ, առանց պատմական որևէ ստուգության: Այս տունը պատկանում էր Թեոդորայի մորը՝ Թեոկտիստեին, ասել է, թե Մամիկոնյան տան սեփականություն էր: Տունը գնված էր Նիկետաս պատրիկից և վերջը վերափոխվեց մենաստանի:

Թեոկտիստեի և Թեոդորայի մասին պատմագիրները գովեստով են խոսում, որպես բարեպաշտ և կրոնավոր. և մանավանդ, պատկերապաշտ կանանց: Նույն ոգով կրթել էր աշխատում Թեոկտիստեն նաև իր մատաղ թոռներին: Թեոփիլոսն ինքը պատկերամարտ էր, ինչպես և իր ամբողջ շրջապատը: Թեոկտիստեն պատկերները պահում էր ծածուկ մի փակ արկղում: Երբ երեխաները գալիս էին, հանում էր զգուշությամբ սրբերի պատկերները և փոքրիկների գլխին դնում, երեսներին և շրթունքներին քսում, որպեսզի մանկությունից ընտելանան հարգելու պատկերների սրբությունը:

Հայրը մի օր հարցրեց երեխաներին, թե տատիկը ինչպե՞ս ընդունեց նրանց և ի՞նչ պարգև տվավ: Մեծերը լռեցին, իսկ Պուլքերիան, որ **խելքով և տարիքով ամենից տհասն էր** պատմեց, որ տատիկը իրենց շատ միրգ տվավ և հետո արկղից հանեց տիկնիկներ և նրանց երեսին ու գլխին դրեց գուրգուրանքով: Այստեղից երևում է, որ Պուլքերիան էր կրտսերը և ոչ Մարիան:

Թեոդորա թագուհին, Մամիկոնյան իշխանուհին, Մարիայի համար նշանած էր ընտրել իրեն արենակից Ալեքսիոս-Մուշեղին, նույն Մամիկոնյան տոհմից:

Բյուզանդական արքունիքը գաղտնի որոգայթների և դավերի բույն էր: Պակաս չէին բանսարկու մարդիկ, ընդունակ և պատրաստ թափելու չարախոսության թույնը մեծության սանդուղի վրա կանգնած անձերի գլխին:

Թեոփիլոսն ուղարկեց Ալեքսիոս-Մուշեղին պատերազմական գործով Լանգոբարդիա: Այսպես էր կոչվում այն ժամանակ հարավային Իտալիան: Հայ զորավարը հաջողությամբ կատարեց կայսերական պատվերը, որով ավելի հաճելի դարձավ արքունիքում: Սակայն, որքան աճում էր կայսերսերը, նույնքան և զորանում էր նախանձորդների չարակամությունը:

Կայսեր ականջը հասավ սովորական բամբասանքը, որպես թե Ալեքսիոս-Մուշեղ տենչում է թագին և որ **Այբը** երևի պիտի տիրանա **Թոյին**, այսինքն՝ Ա(լեքսիոսը) պետք է գրավե Թ(եոփիլոսի) գահը: Ամբաստանյալը, զգալով, որ անկարող է կարկել չարաբանների բերանը, ցանկություն հայտնեց քաշվել քաղաքական ասպարեզից, նախընտրելով մենաստանի անդորրությունը: Սակայն, կայսրը ընդդիմացավ, չուզեց որ իր սիրելի դուստրը այրիանա: Ալեքսիոս-Մուշեղը մնաց իր պաշտոնում:

Շուտով հանգամանքները փոխվեցին: Թեոդորան նոր արու զավակ ծնեց, որով ապահովեց գահի հաջողությունը: Մինչ այն մեռավ Ալեքսիոս-Մուշեղի կինը՝ Մարիան: Թեոփիլոսը վերջին սերն ու հարգանքը տվեց իր դստեր, թաղելով նրան արծաթապատ դագաղի մեջ և նրա դամբարանը հայտարարելով պատսպարան նրան ապավինող հանցավորների համար: Սգավոր ամուսինը հագավ վանականի սև զգեստ:

Ուրիշ տեղեկության համաձայն, Ալեքսիոս-Մուշեղը ուղարկվեց ոչ թե Լանգոբարդիա, այլ Սիկիլիա կղզին, և ուղարկվեց ստրատելատի (զորապետի) և դուքսի պաշտոնով: Նախանձը և դավերը այստեղից սկիզբ առան: Սիկիլիացիներից ոմանք գնացին մայրաքաղաք և փսփսացին պալատում, թե Ալեքսիոս-Մուշեղը իբրև թե մատնում է քրիստոնեության շահերը սարակինոսներին, այլև ինքը ձգտում է կայսրության:

Մինչ ամբաստանությունը տեղ հասավ, Մարիան, սիրելի դուստրը, մեռավ: Թեոփիլոսը թաղեց նրան արծաթազարդ դագաղի մեջ և դամբարանի համար նույն կարգադրությունն արեց, ինչ որ հիշվեց: Ինչ վերաբերում է Ալեքսիոս-Մուշեղին, կայսրը ուղարկեց Թեոդորոս Կրիթինոս եպիսկոպոսին Սիկիլիա նրա ետևից: Եպիսկոպոսը տարավ Մուշեղին կայսրի շնորհի հետ և նրա անձնական լանջախաչը որպես երաշխիք կայսերական խոստումին: Ալեքսիոս-Մուշեղը հավատաց և ուղի ընկավ մայրաքաղաք: Սակայն, Թեոփիլոսը դրժեց իր ուխտը և հրամայեց խարազանել Մուշեղին որպես ապստամբի և նետել բանտ, այլև գրավեց հարքունիքս նրա ինչքը:

Մի օր կայսրը մեծ թափորով ծերակուտականների ուղեկցությամբ ելավ պալատից գնալու Վլաքերնայի Սուրբ Աստվածածնի եկեղեցին: Թեոդորոս եպիսկոպոսը ևս մտավ թափորի մեջ զգեստավորված: Երբ կայսրը ծերակույտի հետ մոտեցավ սեղանին, Թեոդորոս եպիսկոպոսը կարդաց բարձրաձայն 44-րդ Սաղմոսի 5-րդ տան առաջին մասը. «**վարեա՛, ուղղեա՛ եւ բազաւորեա՛**», և դառնալով կայսեր, հարցրեց «վասն որոյ, ո՛վ բագաւոր»:

Սա ամոթահար շարունակեց Սաղմոսը. «**վասն ճշմարտութեան, հեզութեան եւ արդարութեան**»:

«Եվ ո՞ւր է քո արդարադատությունը, երբ իմ միջոցով խոսք տվիր Ալեքսիոս-Մուշեղին և հետո դրժեցիր», ասաց հանդիմանությամբ եպիսկոպոսը:

Կայսրը սրտմտած, հրամայեց արտաքսել եկեղեցուց հանդուգն հոգևորականին, անողորմ ծեծ տվեց և աքսորեց:

Հուսկ հետո, երբ մի օր կայսրը մտավ մայր եկեղեցին, Հովհաննես պատրիարքը նախատեց նրան և հետ կանչել տվեց եպիսկոպոսին: Վերջինս այն անարգանքից հետո իրեն արժանի չհամարեց այլևս եպիսկոպոսության, և կայսեր հրամանով հանձն առավ էկոնոմի (տնտեսի) պաշտոնը տաճարում:

Հետաքրքրական է, որ 824 թվի պատվիրակության մեջ, որ Միքայել կայսրը ուղարկեց արևմուտք Լյուդովիկոս կայսեր հիշվում է **Թեոդորոս, Էկոնոմոս U. Սոփիայի**[1]: Արդյո՞ք Թեոդորոս Կրիթինոս եպիսկոպոսը չէր, որ նախապես էկոնոմ էր եղել և այժմ նորից դառնում էր հին պաշտոնին:

Միաժամանակ կայսրը հանեց բանտից Ալեքսիոս-Մուշեղին, վերադարձրեց նրան գրաված գույքերը և նախկին պատիվը:

Այս պատմվածքը զանազանվում է առաջնից: Այնտեղ կայսրը հավատ չի ընծայում չարախոս լեզուներին, իսկ այստեղ, ընդհակառակը, ոչ միայն ականջ է կախում, այլև ծանր պատիժ է տալիս: Բացի դրանից երկրորդ պատմվածը ոչինչ չգիտե Ալեքսիոս-Մուշեղի կրոնավորության մասին: Մինչդեռ առաջնում ասված է, որ Մուշեղը կնոջ մահից հետո վանք մտավ, հակառակ թագավորի ցանկության: Վերջինս ստիպված տեղի տվավ և իր սիրելի իշխանին նվիրեց Քրիսոպոլսի կայսերական վանքը, նաև մերձակա երկու վանքերը:

Քրիսոպոլիսը այժմյան Սկյուտարն է, ծովի մյուս ափին քաղաքի դեմ հանդիման: Ոչ հեռու գտնվում էին պետական զինանոցները Անթիմոս կոչված վայրում: Ալեքսիոս-Մուշեղը մի օր պտույտի ելնելով տեսավ այս տեղը և շատ հավանեց: Ցանկացավ սեփական մենաստան ունենալ և նրանով իր հիշատակը անմահացնել: Թեոդորայի, իր թագակիր զոքանչի, միջնորդությամբ հաջողեց պարգև ստանալ կայսրից Անթիմոսի տեղը և կառուցեց մի նոր վանք: Այստեղ անցկացրեց իր կյանքը և մեռավ: Նրա գերեզմանը և գերեզմանի վերև կախված սրբի պատկերը, նրա կողմից նվիրված, անվնաս մնացել էին մինչև XI դարու կեսերը, ինչպես վկայում է մեր պատմագիրը[2]:

Ալեքսիոս-Մուշեղը ուներ մի եղբայր, Թեոդոս անունով: Սա ևս նշանավոր պատրիկ էր և վերջը եղբոր վանքը մտավ, առաքինի կյանքի հրաշալի օրինակ տվավ: Վախճանվեց նույն վանքում և թաղվեց եղբոր մոտ:

[1] **Mansi**, XIV, 417.

[2] **Theoph. Cont.**, 109.

* * *

Պալատական առաջնակարգ դեմքերից էին նաև Կոստանդին Բաբուցիկ և Թեոդոս Բաբուցիկ: Հավանորեն եղբայրներ էին և Բաբուցիկ իրենց հայրանունն էր: Ո՞վ էր Բաբուցիկը և երբ էր տարագրվել, հայտնի չէ: Անունը՝ Բաբ, Բաբիկ, Բաբգեն, Ժաբան կամ Բաբեկ շարքից, որ հին **պապ** բառի միջին-պարսկական **բաբ** ձևից ածանցականներ են տոհմական որոշ դրոշմ չէ կրում, որ կարելի լիներ մերձեցնել այս կամ այն նախարարական տան:

Ավելորդ չենք համարում հիշել, որ հնարավոր է զուգադրել Բաբուցիկին այն ըմբոստ իշխանի հետ, որ հայտնի է վրաց «Տարեգրքից», և որի անունը, թեև կարդացվում է **Գաբլուց**, բայց դյուրությամբ կարելի է ուղղել՝ Բաբուց: Նա որպես թե Սմբատ Աբլաբասի կամ Խոստովանողի եղբայրն էր, ուրեմն Աշոտ Մսակերի որդիներից մեկը: Մի ուրիշ իշխան, Գուառամ, ելավ Գաբուցի դեմ և **քշեց նրան հոռոմոց աշխարհը**[1]:

Դժբախտաբար բնագիրը խանգարված է և որոշ կետերում գոնե հավատ չէ ներշնչում: Անվավեր է և ժամանակագրությունը, որ կարող ենք անտեսել, արժեք տալով միմիայն այն ցուցումներին, որ Գաբլուցը Մսակերի որդին է և Գուառամը Բագրատ Կյուրապաղատի եղբայրն է, ուրեմն Աշոտ Կյուրապաղատի որդին: Աշոտ Մսակերը մեռած է մինչև 826 թիվը, իսկ Աշոտ Կյուրապաղատը իր այս կոչումը պարտական էր Լևոն Հայկազն կայսեր (813-820): Երկու ժամանակակից այս Աշոտների զավակները, Գաբլուց և Գուառամ կարող են հասակակից լինել և 830 թվականներին արդեն հասուն տարիքի մեջ լինել:

Թվում է, որ անպատեհություն չկա նույնացնելու Գաբլուցին Բաբուցիկի հետ: Սակայն, մի մեծ խոչընդոտ կա: «Վրաց տարեգրքի» ասելով, Գաբլուցը քշված պետք է լինի արևմուտք Բուղայի արշավանքներից հետո, ուրեմն իններորդ դարի կեսերին: Մինչդեռ Բաբուցիկի որդիներն այդ ժամանակ արդեն հայտնի գործիչներ էին արևմուտքում:

Արդ՝ եթե հավատ ընծայենք «Տարեգրքի» ժամանակագրական նշաններին, պետք է հրաժարվենք մեր առաջադրած համեմատությունից: Բայց քանի որ հիմք չկա վստահելու «Տարեգրքին», պետք չկա արհամարհելու մեր ենթադրությունը, որքան և երկբայական:

Երկու Բաբուցիկների հարաբերությունը որոշ չէ: Եղբայրներ համարեցինք ի նկատի ունենալով այն պարագան, որ միաժամանակ են երևում պատմության մեջ: Բայց անհավանական չէ կարծել, որ նրանք հայր և որդի են և որ Բաբուցիկ ոչ թե Կոստանդնի հոր, այլ իր իսկ հայ անունն է, և որդին Թեոդոս պահել է իր վրա: Սրանով մի աստիճան կդյուրանա Բաբուցիկի և

[1] **Brosset**, Histoire de la Géorgie, I, 268-269.

Գաբլուցի ենթադրական համեմատությունը ժամանակագրական տեսակետից:

Կոստանդին Բաբուցիկը ամուսնացած էր Թեոդորայի քրոջ, Սոփիայի հետ, ուրեմն կայսեր քենակալն էր: Ամորիայի պաշարումի ժամանակ գերի ընկավ արաբների ձեռքը և մյուս զորավարների հետ ընդունեց մարտիրոսության պսակ 845 թվին[1]:

Թեոդոս Բաբուցիկը ուղարկվեց արևմուտք Լյուդովիկոս Բարեպաշտի մոտ դիվանագիտական կարևոր հանձնարարությամբ և մեռավ առաքելության ընթացքին 840 թվին:

Կոստանդինը պատրիկ էր և պալատական չորս գնդերից մեկի, որ կոչվում էր վիգլայի, պետն էր, դրունգարը: Այս պաշտոնը գրեթե միշտ հայ զորականների ձեռքին էր:

Կոստանդնից առաջ թե հետո նույն պաշտոնում գտնում ենք թագուհու եղբորը, Պետրոնասին: Սա դրունգար է հիշվում Թեոփիլոսի կյանքից առնված մի դեպքում: Մի օր, երբ կայսրը իր սովորության համաձայն անցնում էր Միջին փողոցով դեպի Վլաքերնայի Ս. տաճարը և ամեն ոք իրավունք ուներ մոտենալ և իր ցավը հայտնել երկրի տիրոջ, մի կին գանգատվեց կայսեր, որ Պետրոնասը նորոգում է իր տունը, բայց այնքան է բարձրացրել, որ բոլորովին կտրել է իր աղքատիկ հյուղի լույսը և ուշք չի դարձնում իր բողոքին, քանի որ խեղճ և այրի կին է: Կայսրը նշանակեց անմիջապես մի հանձնաժողով, երեք հոգուց կազմված, քննելու բողոքը: Քննությունը պարզեց, որ գանգատավորը արդար էր: Պետրոնասի տունը քանդել տվեց կայսրը և մթերքը հանձնեց այրի կնոջ[2]:

Ի դեպ, հանձնաժողովի երեր հոգուց մեկը հայ էր Լևոն-Սմբատ անունով: Դարձյալ կրկնակի անուն, հայ և հռոմ, եթե ոչ իր և հոր անունը: Կարծում ենք, որ սա նույն անձն է լինելու, որ մի ուրիշ տեղ կոչվում է Լևոն Քամադրակոն: Այս Լևոնը Թեոփիլոս կայսրի պրոտովեստիարիոսն էր, այսինքն՝ հանդերձապահը, և հիշվում է Լևոն V Հայկազն սպանության գործը քննելու պատմության մեջ: Երկու դեպքումն էլ Լևոնի տրված հանձնարարությունը կրում է դատական բնույթ և հավանորեն խոսքը միևնույն անձի մասին է:

Կոստանդին Բաբուցիկի հետ շփոթելու չէ համանուն անձը՝ Կոստանդին Մանիակ. Երկուսն էլ ժամանակակից գործիչներ էին և Կոստանդին Մանիակը ևս վիգլայի դրունգար էր: Կրկնակի անուններից Մանիակը, թերևս, հայ Մանակն է. Նշանավոր ընտանիք էր Բյուզանդիայում: Մանիակի թոռն էր հռչակավոր Հովսեփ Գենեսիոս պատմագիրը, որ մեր աղբյուրներից մեկն է, և որի հոր անունը Թովմաս էր:

[1] **Theoph. Cont.**, 135.

[2] **Symeon**, 627-628; **Georg.**, 793.

Գենեսիոսը չէ մոռանում շեշտել, որ Կոստանդին Մանիակը հայ էր և մի մութ ակնարկ է անում նրա Բյուզանդիա գալու առթիվ: Որպես թե Մանիակը ղրկված լիներ Թեոփիլոսի մոտ պատանդի ձևով և հետո իր հոգու և մարմնի գեղեցկության և կատարյալ բարեսրտության համար նշանակվեց վիգլայի դրունգար, այլև պատվեց պատրկության պատվով և դարձավ պոստի լոգոթետ[1]:

Ուշագրավ է պատմագրի ակնարկը, որ Կոստանդինը ուղարկված էր «իշխանների և եղբայրակիցների կողմից» և ուղարկված էր որպես *ἐπικηρυκεύσεως ὅμηρον:* Ի՞նչ բանակցության մասին է խոսքը, մութ է: Թեոփիլոսի օրով (829-842) Հայաստանի զորավար իշխաններն էին Աշոտ Մսակերի որդիները, Սմբատը՝ Շիրակում, Բագարատը՝ Տարոնում, նաև Մսակերի եղբորորդին Աշոտ Անթյուպատոս պատրիկը՝ Սպերում: Վերջինս իր տիտղոսը ստացել էր Թեոփիլոսից 837 թվի արշավանքի հետևանքով: Հավանական է, որ կայսրը բանակցության մեջ եղած լինի Սպերի իշխանի հետ նախ քան արշավանքը նրա աջակցությունը ապահովելու համար: Այս առթիվ Մանիակը կարող էր ուղարկված լիներ կայսեր իբրև երաշխիք խոստացած օգնության: Բագրատունյաց արտաքին քաղաքականության համար կարևոր այս կետը մնում է վարագուրված:

Գենեսիոսը ներկայացնում է իր պապին համակրելի գծերով և առիթ չէ փախցնում գովելու, ինչպես կտեսնենք, նրա մարդասեր ոգին: Գիտենք հաստատապես, որ Մանիակը վիգլայի դրունգար էր 843 թվին Հովհաննես պատրիարքի գահընկեցության ժամանակ: Մանիակը ամբաստանվում էր, որ վիրավորանք էր պատճառել պատրիարքին: Երևում է, որ նա անմիջապես հաջորդել էր դրունգարության պաշտոնում Կոստանդին Բաբուցիկին, որ գերի էր ընկել 838 թվին: Պետրոնասի ստանձնումը նույն պաշտոնի մնում է խնդրական, եթե չընդունենք, որ 838 և Թեոփիլոսի մահվան 842 տարվան մեջ է դնելու նրա պաշտոնավորությունը: Կարելի է կարծել, որ Մանիակը իր երկրորդ անունը պարտական է Կոստանդին Բաբուցիկին այն մտքով, որ նա դրունգարական պաշտոնի հետ կարող էր յուրացրած լինել և անունը:

Գենեսիոսը հավատացնում է, որ իր պապը նաև լոգոթետ եղավ և նույնը կրկնում է նրան հետևելով Թեոփանեսի Շարունակողը[2]: Ավելի քան երկբայելի է: Այդ պաշտոնը երկար տարիներ վարեց Թեոկտիստոս ներքինին: Նրա մահից հետո լոգոթետությունն անցավ Սմբատին, Վարդ կեսարի աղջկա ամուսնուն: Մինչդեռ Կոստանդին Մանիակը դրունգար է հիշվում այդ ժամանակները և մնաց այդպես մինչև Վասիլի գահակալությունը: Ոչ թե Մանիակը, այլ իր որդի Թովմասը նշանակվեց պոստի լոգոթետ Լևոն VI

[1] **Genes.**, 81.

[2] **Theoph. Cont.**, 198.

(886-911) օրով: Իսկ Թովմասի որդին, պատմագիր Հովսեփոսը կաճիկլիոնի քարտուղար էր, այսինքն՝ դիվանագետ Կոստանդին Ծիրանածինի ժամանակ, տասներորդ դարու կեսերին:

Հովսեփ Գենեսիոսի հորեղբայրը, Թովմասի եղբայրը, ևս կոչվում էր Գենեսիոս[1]:

VIII

Քաղաքական անցքերով հարուստ չէ Թեոփիլոսի թագավորությունը: Առժամյա դադարից հետո վերսկսվեցին բշնամական գործողություններն արևելյան սահմանների վրա: Պատմագիրները հավատացնում են, որ տասնևութ ճակատ է մղել բշնամու դեմ և ամեն անգամ անփառունակ նահանջել: Ահա ինչո՞ւ համար շատերը անվանում էին նրան անբախտ կամ անհաջողակ:

Այս դեպքում անհասկանալի են դառնում մեզ այն գովեստները, որ այնպես առատորեն շռայլում են Մանուելի կամ Թեոփոբոսի հասցեին որպես քաջակուռն ռազմիկների, մանավանդ, Մանուելի, որի անունը դղրդում էր ամբողջ Արևելքում: Ո՞ր դաշտերում և ե՞րբ էր վաստակել այդ հռչակը: Պարտությունները պսակ չեն բերում և ոչ հերոսներ ստեղծում:

Թվում է, թե պատմագիրները չափազանցնում են Թեոփիլոսի «անբախտությունը»: Պատճառը, անտարակույս, կայսրի ամբարիշտությունն է: Թեոփիլոսը պատկերամարտների բանակումն էր, ուստի և բարեպաշտ պատմագիրները չեն ուզում, որ նա աջողակ լինի արտաքին բշնամու դեմ: Նրանց հավատով, պատկերների դեմ կռվող իշխանը չէր կարող հաճո լինել Աստուծուն, որից կախված է զենքի հաջողությունը: Տասնևութ ճակատների հաշիվը չկա մեջտեղը, որ կարելի լիներ զատել և ճշտել վկայությունը: Այն արշավանքները, որ հիշվում են, այնքան էլ ձախորդ չեն: Երկու անգամ Թեոփիլոսը փայլուն հաջողություն ունեցավ և մեծ շուքով ու հանդիսավոր թափորով տոնեց իր հաղթական դարձը և մուտը մայրաքաղաք:

Երկու դեպքումն էլ արշավանքի մերձավոր առիթը փախստական **խուռամ** աղանդավորներն էին, ինչպես տեսանք վերև: Թեոփիլոսն ուզեց օգտվել արաբների ներքին խռովություններից և դուրս ելավ նրանց դեմ: Ռազմական բեմը սովորաբար կիլիկյան բարձունքների վրա էր, Տարսոն-Մարաշ-Մելիտինե գծի սահմաններում: Առաջին հարձակումով կայսերական զորքերը գրավեցին Զապետրա և Մսիս (Մոպսուեստիա) քաղաքները և ավարի հարկանելով նահանջեցին 830-831 թթ.:

Երևում է, մի ուրիշ մեծ հաջողություն ունեցավ Խարսիանում, ուր արաբները գերի տվին մինչև քսան և հինգ հազար մարդ: Պարզ չէ, թե ինչպես էին

[1] Leo Gram., 249.

առաջացել արաբները մինչև Խարսիան, եթե նախընթաց ընդհարմանը իրոք, իրենք պարտություն էին կրել: Խարսիան, Արմենիակյան թեմի հարավ-արևմտյան մասն է, Կեսարիայից հյուսիս:

Ավելորդ է կրկնել խնդիրը: Թողնենք արշավանքի մանրամասնությունները: Ամեն պարագային Թեոփիլոսն իրեն հաղթող էր համարում և թվում է, որ հիմք չկա կասկածելու, որ բավականաչափ գերիներ և հարուստ կողոպուտ էին ընկել նրա ձեռքը: Կայսրը հարկավոր էր համարել տոնելու իր հաղթությունը:

Հանդիսական թափորի նկարագրությունը հասել է մեզ: Երբ Թեոփիլոսը վերադառնալով պատերազմից հասավ Հիերիա պալատը, որ գտնվում էր Քաղկեդոնի մոտ, ուրեմն ասիական ափի վրա քաղաքի հանդիման, ընդառաջեցին նրան կայսրուհին, քաղաքի եպարքոսը, և ամբողջ ծերակուտական կազմը: Գերիները դեռ չէին եկել, ուստի յոթն օր սպասեց այստեղ կայսրը և որպեսզի կայսրուհին մենակ չմնա, քաղաքից բերել տվեցին ծերակուտականների կանանց: Յոթն օրից հետո կայսերական շքահանդեսը շարժվեց դեպի Ս. Մամասի վանքը, ուր մնաց ևս երեք օր և հետո անցնելով Ոսկե Եղջյուրը կանգ առան Վլաքերնայի պալատում: Գերիների կարավանը միացավ կայսերական խմբին: Վլաքերնայի պալատից կայսրը ձիով գնաց մինչև Ոսկե Դուռը, ուրեմն պարսպի հյուսիսային անկյունից մինչև հարավայինը, արդի Եդի-Կուլե դուռը: Ոսկե Դռնից սկսվում էր մեծ պողոտան, որ է **մեսա**, այսինքն՝ միջից փողոց, և ձգվում էր ուղիղ մինչև Ս. Սոփիայի Մայր տաճարը և կայսերական մեծ պալատը:

Դրան առջև քաղաքի բարձր պաշտոնյաները գլուխ ունենալով եպարքոսին ընծայաբերեցին կայսեր թանկագին քարերից շինված մի թագ: Այնուհետև շարժվեց թափորը դեպի Ս. Սոփիա: Փողոցը ամբողջ երկայնությամբ զարդարված էր սկարամանդ և սնդուս կոչված պաստառներով, գույնզգույն ծաղիկներով և վարդերով: Քաղաքը համայն պճնված էր որպես հարսանեկան առագաստ, ինչպես ասում է պատմագիրը: Կայսրը իր վեհության մեջ էր, ճերմակ ձի նստած գոհարազարդ տապճակով, գլուխը զարդարած թագով (տիարա), ձեռքին գայիսոն, մեջքը գոտեպնդած սրով, ամբողջ իրանը զրահապատ, թաքնված ոսկեճամուկ պատմուճանի (քիտոն) տակ:

Նրա կողքից գնում էր Ալեքսիոս-Մուշեղը, Մամիկոնյան իշխանը, մեծանուն կեսարը, նմանապես սպիտակ ձի հեծած, թանկագին տապճակով, գլխին՝ սաղավարտ (կասիս) ոսկեհուռ գլխակապով (պերիկեփալա), սուրը՝ մեջքին, ամբողջապես զրահավորված հանդերձ զանգապաններով և բազպաններով, ձեռքին՝ ոսկե նիզակ:

Կայսրի և կեսարի առջևից գնում էին սենեկապանները (կուբիկուլար) և սենեկապետները (պրեպոչիտ), ետևից՝ ներքինի պրոտոսպաթարները:

Ամբոխը ողջունում էր ցնծության ձայներով հաղթական թագավորին: Թափորը հասավ Մայր տաճարի՝ Ս. Սոփիայի առաջ, կանգ առավ: Կայսրը մտավ եկեղեցի աղոթելու և հետո դիմեց դեպի մեծ պալատը: Քալկի կամ պղնձե դրան դեմուդեմը պատրաստված էր մի ամբիոն, վրան՝ մի ոսկե գահ, ոսկե երգեհոն և սրանց միջև մի բարձր խաչ, նույնպես ոսկե՝ ընդելուզված թանկագին քարերով: Երբ կայսրը կոխեց ամբիոնը, ժողովրդականները երգեցին «Միայն սուրբ»:

Քաղաքի բնակչության կողմից կայսրին ևվեր տվին զույգ ոսկե բազկանոցներ, որից հետո խոսել սկսեց ամբիոնից ինքը՝ կայսրը, պատմելով և նկարագրելով իր հաղթությունը[1]:

Հանդեսը այն հաղթության առթիվ էր, որ տեղի էր ունեցել Թեոփիլոսի առաջին տարիները 831-832 թվին, հավանորեն, Կիլիկիայի ճակատում:

Նույն հանդեսները կրկնվեցին մի քանի տարի հետո, 837 թվին, մի նոր հաղթության առիթով, որ տարել էր Թեոփիլոսը դարձյալ արևելյան ճակատում: Վարդ Կեսարի մասնակցությունը հանդեսին վերաբերում է այս թվին:

Արշավանքի դրդիչը փախստական Նասրն էր: Աղանդավորական շարժումը իր վճռական փուլի մեջ էր և կլանել էր արաբների ուշադրությունը: Կայսրը հարմար դատեց խաղալ դեպի արևելք և ասպատակել թշնամու անպաշտպան սահմանները և այնու օգնել, թերևս, իր դաշնակից խռովարարներին: Արշավանքի մասին շատ բան չգիտենք: Կայսերական զորքերը ավերվեցին Զապետրա և Սամոսատ քաղաքները: Վերջինս համբավավոր էր իր հարստությամբ, և որպես թե ամիրապետի հայրենիքն էր[2]:

Ուրիշ վկայությամբ, մի քանի քաղաքներ գրավեցին, երկուսը բոլորովին ավերեցին, իսկ Սոզոպետրա կամ Զապետրա, պաշարեցին, որը իբրև թե ամիրապետի հայրենիքն էր[3]:

Ոչ Սամոսատը և ոչ Զապետրան ոչ մի նկատումով հայրենիք չեն կարող նկատվել ամիրապետի համար:

Հայ մատենագրությունը պահել է կարևոր տեղեկություն նույն այս արշավանքի վերաբերյալ: Թեոփիլոսի օրով «եղեւ գալուստ հոռոմդիերոյն ի գաւառն Բասեան և զբազումս խողխողեցին սրով ի վերայ յարուցեալ գեղաքաղաքին Գոմաձորոյ: Իսկ Թէո(վ)փիլոս գնաց ի Խաղտիս եւ ել ի Ցամաք-կամուրջ և գերեաց զբազումս ի հայոց հանդերձ ընտանեօք իւրեանց. եւ տուեալ զհիւպատաւորութեան պատիւն, այսինքն ապուհիւպատ պատրկութեան Աշոտոյ որդւոյ Շապհոյ եւ թողու ի Սպեր գաւառի: Եւ ինքն առեալ հարկս ի Թէոդուպոլսեցեաց դարձաւ անդրէն: Եւ ապա եկեալ

---

[1] **De Cerimoniis**, I, 503-505.

[2] **Georg.**, 798.

[3] **Theoph. Cont.**, 127.

հռոմմդի արանցն ի Վանանդ ի գիտըն Կաճկաքար կոտորեցան ի ձեռն Սահակայ որդւոյ Իսմայէլի: Եւ ի նոյն ամի եմուտ Թէոփիլոս յԱսորիս եւ էառ զքաղաքն **Ուրքելի** եւ պատերազմեցաւ ընդ տաճկաց **յԱլմուլատ** եւ յաղթեաց: Սա ի խաղալն իւրում յարեւելս կոյս ի սահմանս հայոց առնու **զԾմու** բերդն հայոց, **զԱսատին,** եւ **զՄեծկերտ** եւ **զԱլբերդ** ի գաւառին **Գեղամայ** եւ **զխոզան** եւ **զՉորրորդ** Հայս անապատ առնէ ի մարդոյ եւ յանասնոյ»[1]:

Ամբողջ հատվածը բավական մութ է: **Հռոմմդիներ** կամ **հռոմմդի արանց** սուղ ձևն է ռամիկ հռոմ **դևի, դևի-եր**, բառի, որ նշանակում է **հռոմ կողմ:**

Այս բառը հաճախակի պատահում ենք Շապուհ Բագրատունու անունով հրատարակված գործի մեջ: Սա Շապուհի կորսված երկը չէ, այլ նրա հետևությամբ կազմված պատմություն է Արծրունյան միջավայրից (2): Հռոմմդի բառը բնորոշ է Շապուհի գեղջուկ լեզվի համար և տեղիք է տալիս կարծելու, որ մեր հատվածը քաղված է Շապուհից: Նույն գլխի մեջ Ասողիկը Դավթի թագի պատմության առթիվ հիշում է Շապուհին և անվանում է նրան «որդի Աշոտոյ Անթիպատրիկի», ստուգիվ՝ «անթի (պատ) պատրիկի»:

Մի քանի էջ հետո, մեզ զբաղեցնող հատվածում, նույն պատմագիրը Շապուհի հոր Աշոտի ստացած պատիվը, հյուպատավորությունը, բացատրում է որպես «ապուհիպատ պատրկութիւն», փոխանակ «անթիպատ պատրկութեան»:

Պետք է կարծել, որ հատվածը մի աղբյուրից չէ առնված: Տարբեր աղբյուրների նշան է և այն, որ Թեոփիլոսի մասին ասված է «**գնաց ի Խաղտիս**» (փոխ. եկն), մինչ մյուս մասերում՝ «**եղեւ գալուստ հռոմմդիերոյն** կամ **եկեալ** հռոմմդի արանց»:

Հատվածը թվում է, թե խոսում է երկու արշավանքի մասին: Հռոմմները եկան Բասեն և Թեոփիլոսը գնաց (արդյոք Բասենի՞ց, որով հասկանալի կդառնար «**գնաց**»-ը) Խաղտիք, Աշոտին թողեց Սպեր, հարկ առնելով կարինցիներից դարձավ մայրաքաղաք: Երկրորդ անգամ հռոմմները եկան Վանանդ և պարտություն կրեցին, իսկ Թեոփիլոսը արշավեց Չորրորդ Հայք:

Սակայն, ուրիշ հավաստի տեղեկություն ունինք, որ Չորրորդ Հայքի ավերումը և Կարինի հարկապահանջը միաժամանակ եղավ: Այսպես, 1148 սելևկյան տարին, որ է 836-837 թիվը, Թեոփիլոսը արշավեց և ավերեց Զապետրա քաղաքը, Հանձիթ, Արշամուշատ և մարդ ուղարկեց Հայաստան հարկ ժողովելու[2]:

Մեր հատվածի վերջին մասը վերաբերում է ճիշտ այս արշավին: **Ուրքելի** երևում է տեղական անունն է այն քաղաքի, որ բյուզանդացիք կոչում էին

[1] **Ասողիկ**, էջ 144:

[2] **Michel le Syrien**, III, 88-89.

Զապետրա, ավելի լրիվ ձևով, Սոզոպետրա: **Ալմուլատ** կարդալու է **Աշմուշատ, Ասաղին՝ Պաղին** և Ալբերդ հավանորեն թերի ընթերցումն է Ա(նդ)զբերդ նշանավոր ամրության, ինչպես և ի գավառին **Գեղամայ** պետք է կարդալ, թերևս, **Անգեղայ:**

Այստեղից էր, որ կայսրը «**գնաց**» Խաղտիք, երբ կարինցիներից հարկ պահանջեց և Աշոտին նշանակեց տեր Սպերի: Պարզվում է նաև, որ Զապետրայի հետ հիշված Սամոսատը իսկապես Հանճիթի Արշամուշատն է և ոչ Կոմմագենի Սամուսատը, ինչպես շփոթել է հույնը:

Ինչ վերաբերում է Բասենի և Վանանդի դեպքերին, դրանք պատկանում են մի ուրիշ արշավանքի: Երևում է Բասենից հոռոմներն անցել էին Վանանդ և ջարդ կերել արաբ իշխան Սահակից: Սա Թիֆլիսի տերն էր, Շուաբի տանից, հաջորդել էր իր հորեղբոր Ալիի: Ալի և ավագ եղբայրը Իսմայել Մամունի օրով էին: Իսահակը կամ Սահակը, որ Իսմայելի որդին էր Մուտասիմի ժամանակակից էր: Սա թվում է, թե հետզհետե առաջացել էր դեպի արևմուտք, կայսրության սահմանակից հողերը: Վտանգը հասկանալի էր, ուստի և կայսերական զորքերը պատվեր էին ստացել հետ մղելու հավակնոտ արաբ իշխանին, բայց հաջողություն չունեցան:

Արդյո՞ք այս ընդհարումները կապ չունին Աբխազյան արշավանքի հետ, որի մասին խոսում են պատմագիրները: Երկու պատերազմ է հիշատակվում Աբխազիայի դեմ, մի անգամ Վարդի և Թեոփոբոսի հրամանատարությամբ և մյուս անգամ՝ Թեոկտիստոս ներքինու: Վերջինս տեղի ունեցավ Թեոփիլոսի մահից հետո, նրա կնոջ Թեոդորայի կառավարության առաջին տարին: Իսկ նախորդ արշավանքի ժամանակը խնդրական է: Թեոփիլոսի առաջին տարին բյուզանդական նավատորմը պարտվեց Թասոս կղզում արաբների դեմ կռվելիս: Այս դեպքից անմիջապես հետո հիշատակվում է Վարդի և Թեոփոբոսի արշավանքը դեպի աբխազները, ուստի և կարծում են, որ արշավանքը տեղի է ունեցել նույնպես Թեոփիլոսի առաջին տարին, 830 թվին:

Պատմագիրը, պետք է նկատել, հոռետես է Թեոփիլոսի թագավորության վերաբերմամբ: Հոռետեսությունը միտումնավոր է, կանխակալ: Թեոփիլոսը պատկերամարտ էր, ուրեմն ամբարիշտ, իսկ ամբարիշտն անարժան է հաջողության: Աբխազյան արշավանքը հիշելուց հետո ավելացնում է, որ բնությունն անգամ փոխվել էր Թեոփիլոսի թագավորության ժամանակ, անսովոր չորության հետևում էին հեղեղներ, անպակաս էին սովն ու կարոտությունը և անգամ երկրաշարժը[1]:

Ասել է, թե Վարդի և Թեոփոբոսի պարտությունը ևս արդյունք էր, բնության աղետաբեր խաղերի:

---

[1] **Theoph. Cont.**, 137.

Սելևկյան 1151 թ. = 839 թ. իսկապես մեծ երկրաշարժ տեղի ունեցավ Կարինի շրջանում[1]: Եթե հույն հեղինակի ակնարկը վերաբերում է այս երկրաշարժին, ապա Աբխազիայի արշավանքը տեղափոխելու է երկրաշարժի տարին, 839 թիվը: Հավանական է, որ այս արշավանքը նույնն է, ինչ որ հիշում է Ասողիկը, թե կայսերական զորքերը պարտություն կրեցին Վանանդում Սահակ Իսմայելացու կողմից: Կարծես թե ավելի հիմք կա Աբխազիայի առաջին արշավանքը դնելու 839 թվին, քան 830, երբ Վարդը դեռ հրապարակ չէր իջած և ոչ էլ Թեոփոբոսը, որը, նույն պատմագրի ասելով, Թեոփիլոսի ժամանակ էր անցել արաբներից կայսեր կողմը:

Թեոփիլոսի 837 թվի արշավանքը հաղթական էր: Այս առթիվ նորից կրկնվեցին, ինչպես հիշեցինք վերև, այն հանդեսները, որ կատարվել էին առաջին հաղթության ժամանակ: Երեխաները դիմավորեցին կայսեր, զարդարված ծաղկե պսակներով: Կրկեսում ձիարշավին մասնակցեց ինքը կայսրը և այստեղ ևս հաղթեց: Ժողովուրդը ողջունում էր ցնծալից աղաղակներով, գոչելով. «Քարև եկար, անհաղթելի ախոյան»[2]:

Ուրախությունը երկար չտևեց: Արաբները չէին կարող անպատասխան թողնել ասպատակությունները: Նույն 837 թվին նրանք վերջ դրին Բաբեկի խռովության, բռնեցին հռչակավոր ապստամբին և 838 թվի հունվար ամսին սպանեցին Բաղդադում: Խալիֆն այժմ ազատ էր և կարող էր մտածել վրեժխնդրության մասին: Գարնանը մեծ զորքով շարժվեց դեպի կայսերական հողերը, կետ նպատակի ունենալով հասնել Ամորիա, կայսերական տան հայրենի քաղաքը: Զորքի հրամանատարներն էին երկու նշանավոր զորավարներ՝ Ափշին և Աշնաս: Սրանց հետ էին իշխանաց իշխանի (Քագարատի) և Վասպուրականի իշխանի (Աշոտի) զորքերը[3]:

Առաջին մեծ ընդհարումը կայսերական զորքերի հետ պատահեց Դազիմոնի մոտ (այժմյան Թոկատի շուրջը): Կայսրը պարտվեց և հազիվ ճողոպրեց շնորհիվ Մանուել զորավարի (ըստ այլ տեղեկության Նասրի):

Արաբները անցան Անկյուրա և այնտեղից սուրացին դեպի Ամորիա: Թեոփիլոսը փորձեց խաղաղություն կնքել, խոստանալով վերաշինել Զապետրան, դարձնել գերիներին և անգամ մատնել ասպատակության ղեկավարներին: Մուտասիմ ամիրապետը մերժեց և հրամայեց արձակել բանակին շարժվել: Օգոստոսի սկզբին Ամորիա քաղաքն էլ արդեն պաշարված էր:

Քաղաքի պաշտպանությունը հանձնված էր Անատոլիկյան թեմի զորավարին՝ Այետիոսին: Նրան օգնության ուղարկեց կայսրը Կոստանդին

---

[1] **Michel le Syrien,** III, 95.

[2] **Georg.**, 798-799. **De Cerimoniis**, 507-508.

[3] **Genes.,** 62. **Theoph. Cont.,** 127.

Բաբուցիկին վիգլայի գնդի դրունգարին և Թեոդորոս Կրատերոսին, որ ներքինի էր և պրոտոսպաթար: Սա նախապես ղրկված էր պաշտպանելու Անկյուրա քաղաքը, բայց նախքան տեղ հասնելը քաղաքն արդեն ընկել էր արաբների ձեռքը: Ենթադրվում է, որ ինքը Բուկելլարյան թեմի զորավարն էր այդ ժամանակ, քանի որ իրեն էր հանձնված Անկյուրայի պաշտպանությունը, որ թեմի գլխավոր քաղաքն էր: Չնայելով, որ քաղաքը ապահովված էր հարկավոր զինական ուժերով, բայց և այնպես տասն և հինգօրյա պաշարումից հետո ընկավ թշնամու ձեռքը: Պատճառը վերագրվում է մատնության և հիշում են անգամ մատնիչների անունները և դավաճանության պարագաները: Կարիք չկա կանգ առնելու նրանց վրա:

Հաղթողները վայրագաբար վարվեցին քաղաքի հետ: Բնակիչներին կոտորեցին, մի մասը միայն գերի առան, ամբողջ քաղաքը ավերեցին, կողոպտեցին: Զոհերի թիվը հասնում էր մինչև երեսուն հազարի, արաբների ասելով, իսկ իրենք՝ բյուզանդացիք հաշվում էին յոթանասուն հազար:

Գերյալների թվումն էին քառասուն և երկու նշանավոր զորականներ, որոնք տարվեցին Սամառա, Բաղդադի մոտ, և բանտի մեջ մնացին գրեթե յոթն տարի: Արաբների նպատակն էր բարձր փրկանք ստանալ կայսրից գերիների ազատության համար, բայց տեսնելով, որ մեծ բան չէր կարելի հուսալ կայսերական առատաձեռնությունից, հրամայեցին գլխատել բոլոր 42 նահատակներին հաջորդ ամիրապետի օրով 845 թվին, մարտի 6-ին: Անունով հայտնի են միայն վեց հոգի՝ Թեոդորոս Կրատերոս, Կոստանդին Բաբուցիկ, Թեոփիլոս, Բասո (կամ Վասո) Վազող, Կալլիստոս, Դուկ Փոքր Հայքի Կոլոնիա քաղաքի: Այետիոս զորավարը գլխատվել էր ավելի կանուխ Ամորիայի առումից անմիջապես հետո 224 հիջրի = 839 թվին[1]:

Կալլիստոսը, որ Մելլիսին հայտնի տոհմիցն էր և Կոլոնիայի (այժմ Կարա-Հիսար) տուրմարք կամ դուկ (դուքս), Ամորիայի գերիներից չէր իսկապես, այլ իր պաշտոնատեղում մատնվել է արաբ իշխանության տեղացի պավլիկյան աղանդավորների կողմից և մարտիրոսացավ 42 գերիների հետ մարտի 5-ին:

Ամորիայի աղետը ծանր էր Թեոփիլոսի և ընդհանրապես քրիստոնյա աշխարհի համար: Կատաղի թշնամուց վրեժ լուծելու այլ միջոց չկար՝ եթե ոչ դիմել արտաքին օգնության: Թեոփիլոս պատգամավորություն ուղարկեց Ֆրանսիա Լյուդովիկոս Բարեպաշտի մոտ:

Ինչպես հիշեցինք վերև, պատգամավորն էր Թեոդոս Բաբուցիկ պատրիկը, եղբայր թե որդի Կոստանդին Բաբուցիկի, որ այդ ժամանակ տակավին տառապում էր արաբական բանտում: Թեոդոս արդեն համոզել էր Լյուդովիկոսին, երբ իր հանկարծահաս մահը ի չիք դարձրեց բոլոր

[1] **Վասիլև**, Բյուզանդիա և արաբներ, I, 46 (ռուսերեն):

աշխատանքը: Շուտով մեռավ և Լյուդովիկոսը: Այնուհետև շատ չապրեց և Թեոփիլոսը. մի տարուց հետո հուսահատ մեռավ 842 թվին հունվարի 20-ին, թողնելով գահը իր կնոջ Թեոդորային և տակավին մանուկ որդուն՝ Միքայելին: Նույն տարին մեռավ նաև Մուտասիմ ամիրապետը:

Երկու հակառակորդների մահով դադարեց ժամանակավորապես և թշնամությունը երկու պետությունների միջև:

IX

Միքայելը հազիվ երեք տարեկան էր, երբ հայրը, Թեոփիլոսը, մեռավ: Մայրը, Թեոդորան էր նրա օրինական խնամակալը: Մահվան անկողնում Թեոփիլոսը կանչեց իր մոտ մեծամեծներին և պատվիրեց նրանց հավատարմությամբ ծառայել իր որդուն և կնոջը:

Ամորիայի 42 մարտիրոսների վկայաբանություններից մեկի մեջ, որը խմբագրված է Սոփրոնիոս արքեպիսկոպոսի ձեռքով, ասված է, որ նահատակությունը կատարվեց Միքայելի, Թեոդորայի և Թեկլայի թագավորության ժամանակ[1]:

Թեկլան Թեոդորայի ավագ դուստրն էր: Ասել է, թե նա հայտարարված է եղել գահաժառանգ: Նույնը հաստատում են և այն դրամները, որոնց մի երեսին Թեոդորայի գլուխն է, իսկ մյուս երեսին՝ Միքայելի և Թեկլայի[2]:

Սակայն, իրական կառավարիչներն ուրիշ անձինք էին, նշանակված նույն Թեոփիլոսի կողմից որպես «հոգածուներ և խնամակալներ»: Դրանք էին Թեոկտիստոս ներքինին, որ այդ ատեն պոստի լոգոթետ էր, Մանուել Մամիկոնյան հռչակավոր զորավարը, թագուհու հորեղբայրը, այլև Վարդ Մամիկոնյան, թագուհու եղբայրը[3]:

Թեոկտիստոսն այն անձն էր, որ նպաստել էր Միքայելին սպանելու Լևոն V-ին, և որպես այդպիսին վայելել էր Միքայելի և նրա որդու Թեոփիլոսի վստահությունը և այժմ կայսերական տան հավատարիմ պաշտոնյա էր համարվում և թագուհու ամուր նեցուկը: Մանուելի և Վարդի աշխատակցությունը բացատրելու է ոչ միայն նրանով, որ թագուհու արենակիցներն էին, այլև որ նշանավոր դեմքեր էին իրենց անհատական կարողությամբ:

Թեոփիլոսի խնդիրը՝ պաշտպանել իր որդուն և կնոջը ուղղված էր իսկապես երեք խնամակալներին: Անշուշտ, հեռատեսություն չէր նրա

---

[1] «Сказание о 42 мучениках», հրատարակված ակադեմիկոս **Նիկիտինի** ձեռքով Պետերբուրգի Գիտությանց Ակադեմիայի գործերում: «Записки Академии наук», вып. VIII, т. VII, 2 (= 905), p. 52.

[2] **W. Wroth,** Catalogue of the Imp. Byzantin Coins, I, XLII և II հատորի տախտակը:

[3] **Theoph. Cont.,** 148. *φροντισταὶ καὶ ἐπίτροποι.* Առաջին երկուսը հիշվում են Գենեսիոսի մոտ, էջ 77, երրորդը ավելացնում է **Theoph. Cont.,** 148.

կողմից բաժանել իշխանությունը երեք անձի մեջ և փառատենչ մրցության ու հակառակության դուռ բանալ: Բյուզանդական արքունիքը այն միջավայրը չէր, ուր հարգվեր իրավունքը և կամ պեսպես հակումներն ու ձգտումները սովոր լինեին միաշավիղ ընթանալու: Ընդհարումը խնամակալների մեջ անխուսափելի էր:

Երբ Թեոփիլոսը փչեց իր վերջին շունչը, Մանուելը, որի հեղինակությունը և դիրքը ընդգծելու համար պատմագիրը կոչում է պրոտոմագիստրոս, առաջին մագիստրոս, հավաքեց ժողովուրդը և զորքի հավատարիմ և վստահելի գնդերը մեծ կրկեսը և դարձավ նրանց մի ճառով, ուր հիշեցնելով իր մեծամեծ վաստակները, մշտական սերն ու խնամքը և թե ինչպես ինքը միշտ զորավիգ է եղած և երբեք չէ թերացած իր պարտականությանց մեջ, ասաց, որ այժմ ժամանակ է, որ նրանք էլ վկայեն իրենց երախտագիտությունը և վկայեն ոչ թե խոսքով միայն, հապա և գործով: Դրա համար մի բան է լոկ պահանջվում, շարունակեց ճառախոսը, որ ուխտեն հավատարիմ մնալ կառավարության և հնազանդվեն նրա կարգադրությանց:

Ամբոխը կարծում էր, որ հռչակավոր զորավարը ուզում է գրավել գահը, և պատրաստ էր ցնծությամբ ողջունել նրա քայլը, երբ անսպասելի կերպով հնչեց նորա ձայնը, «Կեցցեն Միքայել և Թեոդորա»

Հիասթափումը ընդհանուր էր և տխուր: Ժողովուրդը ցրվեց գլխիկոր և հուսաբեկ[1]: Անմեկնելի էր թվում Մանուելի վեհանձն շարժումը, և անհասկանալի, թե ինչպես կարելի էր կամովին հրաժարվել մի փառքից, որի համար ուրիշները արյուն էին թափում և ոճիրներ գործում:

Ահա այսպիսի մի անձի վիճակված էր լծվել աշխատանքի Թեոկտիստոսի հետ, որ Մանուելի հակապատկերն էր: Ներքինի էր, ոչ մտավոր կար ուներ և ոչ զինվորական շնորհք և բավական խոհեմ չէր, որ զգար իր նվաստության չափը[2]:

Ներքինիներին հատուկ քսությունն ու խարդավանքը Թեոկտիստոսի զենք էր: Ուրիշ հնար չգիտեր պահելու իր դրանիկ բարձր դիրքը, քան նենգել և զրպարտել վտանգավոր մրցորդներին: Թեոկտիստոսի ստորության առաջին զոհն եղավ ինքը Մանուելը: Դավեր սարքեց, ստվեր ձգելու նրա հռչակի վրա, կասկածի տակ առնելով նրա հավատարմությունը: Մանուելը ալևորել էր ռազմական դաշտերում և ընտել չէր դրանամուտ գործունեության: Զգաց, որ խարդախության ճակատում լավ զինվոր չէր, գերադասեց տեղի տալ: Թողեց պալատը, թողեց այնտեղ իրեն հատկացված բնակարանը և քաշվեց իր մասնավոր տունը Ասպարի ավազանի մոտ (այժմ՝ Չուխուր Բոստան, Կեֆելե կոչված մզկիթի մոտ):

---

[1] **Genes.**, 77-78.

[2] **Theoph. Cont.**, 202.

Մանուելը շարունակեց վարել իր խնամակալական պաշտոնը, հաճախելով արքունիք ամեն անգամ, երբ պահանջում էին պետական գործերը:

Թեոկտիստոսը արժանացավ թագուհու անսահման վստահության: Դրության տերն էր: Պատմությունը այնպիսի հիշատակներ չէր արձանագրել, որոնցով կարելի լիներ չափել ամենազոր ներքինու արժեքը: Ինչ որ հայտնի է, պատվաբեր չէ: Պատերազմական հմտություն չուներ, թեև ինքնավստահ էր: Սկզբի տարին պետք էր զորք ուղարկել Աբխազիա: Թեոկտիստոսը գլուխ անցավ և չարաչար պարտվեց: Նավատորմի մի մասը ջախջախվեց փոթորիկից, մի մասն էլ ափ նետվեց, և գլխովին ոչնչացավ: Վատաբախտ զորավարը դարձավ ամոթահար և ծեռնունայն:

Պատմագիրը Թեոկտիստոսի հանցանքը մեղմացնելու համար պատրաստ է ձախողությունը վերագրել արևի կրկնակի խավարման[1]: Սակայն խավարումը տեղի է ունեցել 840 թ. ապրիլի 15 և 841 թ. հոկտեմբերի 18-ին: Եթե պատմագրի ակնարկը վերաբերում է այդ դեպքերին, ապա Աբխազիայի արշավը կատարված պետք է լինի Թեոփիլոսի օրով և ոչ Թեոդորայի: Կարծես թե խոսքը նույն արշավանքի մասին է, որը վերև հիշվեց որպես Թեոփոբոսի և Վարդի գործ, և որը մենք տրամադիր էինք դնելու 841 թվին, երկրաշարժի տարին:

Անհաջողության դիպեց և մյուս արշավանքը, որն առաջնորդեց նույն Թեոկտիստոսը դեպի Կրետե կղզին: Արաբները կորզել էին այս կղզին և Թեոդորա կայսրուհին ուզում էր վերագրավել: Թշնամին անպատրաստ էր դիմադրելու, բայց խորամանկության դիմեց, ստահոդ լուր տարածելով, որպես թե պալատական հեղաշրջում է կայացել և թագուհին, վտարելով իր որդուն, տալիս է գահը մի անձի, որի հետ մտադիր է ամուսնանալ: Թեոկտիստոսն անմիջապես թռավ մայրաքաղաք, ձգելով զորքը իր բախտին: Անցքը տեղի ունեցավ 843 թվին մարտ ամսին:

Այս դասը ևս անօգուտ անցավ ներքինի զորավարի համար, որ ձգտում էր անպատճառ փայլել զինվորական մարզում: Մելիտինի ամիրը հարձակվեց պետական հողերի վրա: Թեոկտիստոսը վերստին դաշտ նետվեց: Տավրոսի լանջերին, Կեսարիայից հյուսիս, Մավրոպոտամոն (Սև Ջուր) կոչված վայրում զարկվեց թշնամու հետ արյունահեղ մարտում, պարտություն կրեց, վեհերոտությամբ փախավ մայրաքաղաք, թողնելով 40 հազարանոց բանակը սոսկալի վտանգի մեջ: Զորքի մի մասը անցավ թշնամու կողմը և ընդունեց իսլամ: Զորավարներից մեկը, Թեոփանես Փարղանցի, նմանապես դավաճանեց, թեև հետագայում փախավ արաբներից և մտավ նորից կայսերական ծառայության մեջ: Թեոփանեսը թշնամացավ Թեոկտիստոսի հետ և այս թշնամությունը, ինչպես կտեսնենք, անհետևանք չմնաց:

---

[1] **Theoph. Cont.**, 203.

Թեոկտիստոսը, այդ ապիկար զորավարը, կարողացավ հանցանքը բարդել ուրիշների վրա և մի անգամ ևս արդարանալ թագուհու առաջ: Քավության նոխազ դարձավ Վարդը, Թեոդորայի հարազատ եղբայրը: Թեոկտիստոսը չքաշվեց գործը այնպես ներկայացնել կայսրուհուն, որպես թե Վարդի սադրանքով է, որ զորքերը կրունկ են դարձրել և ցրվել[1]: Եվ կան պատմաբաններ, որ հնարավոր են գտնում հավատ ընծայել այս հրեշավոր ամբաստանության: Թեոկտիստոսը ոչ միայն համոզեց կայսրուհուն, այլև հաջողեց հրաման հանել, որ Վարդը անմիջապես հեռանար քաղաքից: Վարդը քաշվեց արվարձաններից մեկը և այնտեղ հաստատվեց, հեռու արքունիքից: Այսպիսով, նա ևս մատնվեց շնորհազուրկ վիճակի, ինչպես իր հորեղբայր Մանուելը:

Վատամարդ ներքինին նենգ և պատիր միջոցներով ամրապնդեց իր դիրքը պալատում և առավել ևս հաճոյացավ թագուհուն: Վտանգավոր հակառակորդներին հեռացնելուց հետո, պետական առաջին դեմքը դարձավ, միահեծան տեր՝ շնորհիվ իր հնության և կայսրուհու կույր վստահության:

Մի մեծություն, որ ձեռք է բերվում միջոցների անխտրությամբ, կայուն չէ և պատճառած երջանկությունը՝ կարճատև: Որքան բարձրանում էր Թեոկտիստոսը, այնքան սաստկանում էր նրա շուրջը ատելությունը: Որպեսզի իր անձը զերծ պահե սպառնացող փորձանքներից, արտոնություն ստացավ Թեոդորայից հատուկ տուն շինել Ափսիդ կոչված տեղում, առընթեր կայսերական ապարանքին: Շենքը պարսպափակ պարտեզի մեջ էր, բաղանիքով և ուրիշ հարմարություններով: Երկաթե մեծ դուռը կապում էր անմիջապես կից Դափնե պալատի հետ, որ մեծ ապարանքի մերձավոր բաժինն էր: Բացի դրանից դրան հսկողությունը հանձնված էր պալատական պահնորդին կամ ինչպես կոչում էին պապիասին (այսինքն՝ հայրիկին), առավել ապահովության համար[2]:

Ուր չկա բարոյական հեղինակություն, նյութական պատնեշները անզոր են սաստելու:

Թեոկտիստոսը պոստի լոգոթետ էր, որ համազոր էր գրեթե արդի ներքին գործոց մինիստրության: Թեոփիլոսի թագավորության սկզբում այս պաշտոնը գտնվում էր Միրոնի ձեռքին, որ թագուհու կրտսեր եղբոր, Պետրոնասի աներն էր: Նույն թագավորի վերջին տարին Թեոկտիստոսն արդեն ստանձնել էր լոգոթետությունը[3]: Նա էր այն լոգոթետը, որ խառն էր Թեոփոբոսի սպանության[4]:

---

[1] **Georg.**, 814-815. **Theoph. Cont.**, 203.

[2] **Ibid**, 815-816.

[3] **Theoph. Cont.**, 122.

[4] **Georg.**, 810.

Թվում է, որ Միրոնը ևս զոհ է եղել խարդախ ներքինու մեքենայության, որի հետևանքով տիրացել է նրա պաշտոնին: Թերևս այս է պատճառը, որ Միրոնի փեսան, Պետրոնասը, չի երևում հրապարակի վրա Թեոկտիստոսի իշխանության ժամանակ: Միևչդեռ Թեոփիլոսի օրով կարևոր դիրք ուներ և պաշտոն որպես վիգլայի դրունգար: Թե որքան հարգի էր այդ պաշտոնը, կարելի է դատել այնու, որ նրանից հետո նույն պաշտոնում տեսնում ենք Կոստանդին Բաբուցիկին, որ պատրիկ էր և թագուհու քեռայրը: Միմիայն Թեոկտիստոսի անկումից հետո է, որ Պետրոնասը նորից ասպարեզ ելավ անգործությունից և հռչակվեց որպես տաղանդավոր զորական:

Տեսանք, որ Պետրոնասի եղբայրը, Վարդը, նույնպես հալածվեց պալատից Թեոկտիստոսի ջանքով 843 թվին: Այս նշանավոր մարդու անունը պետք է վերջապես մաքրել այն սև գծերից, որոնցով բծավորել են նրա հիշատակը հակառակ բանակի պատմագիրները: Թեոկտիստոսը հաղթվեց պատերազմում, մեղավորը Վարդն էր: Թեոկտիստոսը գժտվեց Մանուելի հետ, հանցանքը դարձյալ Վարդի վրա է ծանրանում: Տակավին Թեոփիլոսի օրով որպես թե Վարդը մեղանչել է, ո՞ւր և ինչպես, հայտնի չէ և սրա համար ծեծ էր կերել կայսրից[1]:

Ամեն առթիվ պատրաստ են չարաբանելու այն մարդուն, որի տասնամյա կառավարությունը հանդիսանում է ամենափայլուն և ամենալուսավոր շերտերից մեկը բյուզանդական պատմության մեջ:

Կայսրուհու քույրերը ևս խրախուսված չէին, նման եղբայրներին: Սոփիայի ամուսինը, Կոստանդին Բաբուցիկ, նահատակվեց 845 թվին: Կալոմարիայի ամուսինը, Արշավիր Պատրիկը, նույնպես մեռել էր, թողնելով երկու որդի, Ստեփան և Վարդ: Սրանք ասպարեզի վրա չեն: Այրի Կալոմարիան ապրում էր քրոջ մոտ արքունիքում և իր անձը նվիրել էր ողորմածության: Հաճախում էր բանտերը և մխիթարում էր խեղճերին ոչ միայն բարոյապես, այլև նյութական օգնություն հասցնելով կարոտյալներին: Ժամանակակից **Կարմիր Խաչի** անդրանիկ գաղափարաբանը հեռավոր անցյալում և փաստացի հիմնադիրը պետք է համարել գեղանի Մարիային, Մամիկոնյան դշխոյի բարեսիրտ աղջկանը:

Կայսերական տան մերձավորների զսպված վիճակը վերագրելու է անշուշտ մեծազոր լոգոթետի քաղաքականության: Սակայն, սխալ կլիներ կարծել, որ այդ քաղաքականության դարբնոցն ինքն էր միայնակ: Թագուհի Թեոդորան անմասն չէր: Մամիկոնյան զավակ էր, ամբարհավաճ և ինքնավստահ, սիրում էր իշխել և հրամայել: Անկախության և ինքնիշխանության տենչը ստիպել էր նրան թոթափել խնամակալների ճնշող լուծը: Երկու, թե երեք խնամակալներից Թեոկտիստոս ներքինին նվազ վտան-

[1] **Theoph. Cont.**, 168.

գավոր էր, և համակերպվող հավատարիմ սպասավորի հլությամբ: Մանուելը և Վարդը, թեև ազգակից, երկյուղալի էին, որպես ինքնուրույն նկարագրի տեր և արդեն ազդեցիկ անձեր: Թեոկտիստոսի անձնավորությունը կասկածից դուրս էր, այն անձնվիրությունը, որով ծառայել էր Ամորյան տան թագավորներին, առանց զգալի հավակնության: Նրա համար դժվար չէր համոզել Թեոդորային, որ Մանուելի և Վարդի նման կարող և համբավավոր դեմքերը վստահելի հենարաններ չեն գահի համար: Կայսրուհուն մնում էր ընտրություն անել իր ազգականների և Թեոկտիստոսի միջև: Նա գերադասեց ներքինուն:

Այս հարցը արդեն գրված և վճռված էր 843 թվին պատկերապաշտության վերականգնումով: Պատկերամարտ քաղաքականությունը, որ վերսկսել էր Լևոն Հայը, և որին հետևել էին Ամորյան կայսրերը, լքեց Թեոդորան: Լոգոթետ Թեոկտիստոսը, շրջապատված հույն հոգևորականությամբ, հաջողեց 843 թվի հեղաշրջումը առանց դժվարության: Թեթև վարանումից հետո Թեոդորան զիջավ Թեոկտիստոսին, հակառակ իր ամուսնու բռնած գծին և թողած ավանդին, որ նույնն էր, ինչ որ ընդունուած էր հայ շրջաններում: Հայ ազգի Հովհաննես պատրիարքը գահընկեց եղավ, հավատալիմ մնալով իր համոզման: Թեոդորան երես դարձրեց յուրայիններից, հարեց Թեոկտիստոսի և հույն շրջաններին, հուսալով նրանց միջոցով ապահովել իր ղիրքը և գահը: Հույն եկեղեցին, ի տրիտուր, սրբերի կարգը դասեց նրան և ցայժմ էլ տոնում է հիշատակը:

Ունկնդրելով հավատարիս ներքինու շշունջներին, այնուհետև Թեոդորան չեզոքացրեց Մանուելին: Պատերազմական փողերին ընդել մարդը չկարողացավ տանել պալատական գաղտնի փսփսուքը և մի կողմ քաշվեց: Հերթը հասավ Վարդին: Սա ևս մեկուսացավ, բայց ոչ Մանուելյան ներողամտությամբ, այլ լի ցասումով ճակատ դնել այդ չար ոգուն, ամենակար ներքինուն, նրան կործանելու համար: Վարդը աշխատեց մոտենալ մանուկ թագաժառանգին: Թեոդորայի և Թեոկտիստոսի համար ևս Միքայելը մտահոգության նյութ էր:

Դահի բուն տերը աճել էր և արդեն թևակոխել այն տարիքը, երբ զբաղեցնում էին նրան որս, ձիարշավ և կյանքի մյուս զվարճությունները: Անգամ կարողացել էր սիրային կապեր հաստատել: Հափշտակության առարկան գեղանի Եվդոկիան էր, Մարտինյակ ընտանիքից, դուստր Ինգերի: Պատանի Միքայելը կաշկանդված էր բուռն սիրով: Եվդոկիան չքնաղագեղ էր և խելացի:

Թեոդորայի մեծագույն հոգսն էր՝ պահել իր ձեռքին որդու ղեկը և չթողնել, որ ուրիշների ազդեցության տակ ընկներ: Այլապես կվտանգվեր իր և իր մինիստրի՝ Թեոկտիստոսի, դրությունը: Պետք էր ջանալ նախ խզել Միքայելի կապը Եվդոկիայից, որը նրա կարծիքով պատշաճ ընկերուհի չէր թագաժառանգի համար և խորապես ատելի էր թագուհուն և Թեոկտիս-

տոսին իր **անպարկեշտության** պատճառով (*ἀναιδεία* անզգամություն): Մայրն ավելի ըղձալի հարս գտավ որդու համար: Անունը նույնպես Եվդոկիա էր, դուստր ոմն Դեկապոլիտես անձի: Պսակի հանդեսը կատարվեց Դափնե պալատի Ս. Ստեփանոս եկեղեցում, հարսանեկան առագաստը պատրաստված էր Մագնավրա պալատում, ծերակուտական կոչունքը՝ 19 օթոց (**accubitum**) անուն դահլիճում[1]: Այս մանրամասնիքը ցույց է տալիս, որ պատմագիրը տրամադրել է վավերական աղբյուր:

Ինչպես երևում է, Թեոդորան ընտրել էր իր հարսնացու Եվդոկիային նույն եղանակով, ինչպե՞ս ինքն էր ընտրվել: Պետության ամեն կողմերից գեղեցիկ աղջիկներ էր հավաքել արքունիք և նրանց միջից ընտրել Եվդոկիային: Թեկնածուների թվում հիշվում են նաև երկու կապպադովկիացի (իմա՝ Արմենիակյան թեմ) քույրեր, մեկը ամուսնացավ հետո Վարդի հետ, մյուսը, Իրինեն, ընտրեց միանձնական կյանք մտնելով Քրիստոբալանտ վանքը[2]:

Մայր թագուհու հաշիվները չարդարացան: Ամուսնությունը չանջատեց Միքայելին «անպարկեշտ» Եվդոկիայից: Թեոդորան հեռատես էր և իր նախազգացումը ճշմարիտ: Եվդոկիան խելքը գլխին աղջիկ էր, գիտեր ինչ էր անում: Ի զուր չէր Թեոդորայի վրդովը, «անպարկեշտ աղջիկը» չարագուշակ էր:

Միքայելն արդեն գիտակցության էր հասել, որ գահը պատկանում է իրեն, մինչդեռ իշխում էր մայրը, եթե ոչ Թեոկտիստոսը: Հիմք ուներ տրտնջալու: Ողոքել դեռատի արքային հնազանդության մեջ պահելու համար, մոր ջանքն էր: Այն ինչ քշնամիները շահագրգռված էին քաջալերելու նրա ընդվզումը: Պայքարն այժմ Միքայելի շուրջն էր:

Եթե կար մեկը, որ «մտքի լծակով» կշռում էր մոմենտի ամբողջ կարևորությունը, դա Վարդն էր: Արդարև օրինական գահակալն էր միակ հաստատուն հենակետը տապալելու ներքինի լոգոթետի գերիշխանությունը: Վարդը աշխատեց և հաջողեց մոտենալ Միքայելին: Սրա սենեկապանն էր ոմն Դամիանոս, ազգով սլավոն: Թվում է, որ այս ընտրությունը անխորհուրդ չէ և ոչ պատահական: Սլավոն անձնավորությունը նկատված է որպես մի անթափանցիկ պատնեշ հայ ազդեցությունների հանդեպ: Վարդը սեր և բարեկամություն հաստատեց սենեկապանի (պարակիմոմենոս) հետ: Սա էլ բարեխոսեց Միքայելի առաջ, որ թույլ տրվի վերջապես Վարդին վերադառնալ քաղաք: Ապա նվերներ տալով թագավորին շրջապատող անձերին նույն Դամիանոսի ձեռնտվությամբ հաջողեց մուտ գործել արքունիք Միքայելի մոտ:

Վարդը մտերմացավ նաև Միքայելի առաջին հանդերձապահի (պրոտովեստիարիոս) հետ, որ էր Թեոփանես Փարղանը կամ Փարղանցին, մի կտրիճ մարդ: Փարղանը - արդի Անդրկասպյան Ֆերգան կոչված երկիրն է: Եթե լոկ

[1] **Leo Gram.**, 225-230. **Georg.**, 816.

[2] **Vita Eirenes,** Acta Sanctorum, 28 julii.

մականուն չէ (ինչպես Վարդան Թուրքը), պետք է կարծել, որ Թեոփանեսը, իրոք, ֆերգանցի թուրք կամ պարսիկ էր[1]: Ուշագրավ է. թուրքը հանդերձապահ է կարգված նույն դիտավորությամբ ինչ որ սլավոնը՝ սենեկապան:

Վարդը խորհուրդ արեց Դամիանոսի հետ և որոշեցին Թեոկտիստոսին մեջտեղից վերացնել: Դամիանոսը խոսեց Միքայելի հետ, բացատրեց գործի նշանակությունը և նրա հավանությունն առավ: Վարդը սենեկապանի բերանով հասկացրեց դեռահաս թագավորին, որ ցորժամ Թեոկտիստոսը թագուհու հետ է, ունայն պիտի լինի երազել իշխել կամ ինքնագլուխ լինել[2]: Պարզեց նրան, որ գահի օրինական ժառանգը միշտ հեռու պիտի պահվի իշխանությունից, քանի որ կենդանի է նենգամիտ լոգոթետը, այդ անարգ ներքինին, որ մտադիր է ամուսին գտնել Թեողորայի կամ նրա դուստրերից մեկի համար և նրան հանձնել իշխանությունը:

Միքայելի սիրտը նետի պես խոցեց այս մերկացումը: Հրաման տվեց փութով գլուխ բերել դավադրական գործը:

Վարդն ուներ և ուրիշ կուսակիցներ: Նախ իր քույրը, այրի Կալոմարիան, ապա իր փեսան, Սմբատը, երևի, Բագրատունի իշխան, այլև Մելիսսեն տանից մի նախկին զորավար: Սպանության ներկա էր նաև Կոստանդին Մանիակը: Թեոկտիստոսը սովորություն ուներ Արիոբենդի բաղանիքը գնալ, հետո մտնում էր դիվանատուն, առնում օրվան թղթերը և ուղղվում կայսրուհու ապարանքը զեկուցման համար:

Կայսերական պալատը, որ բաղկացած էր մի շարք ընդարձակ շենքերից, գտնվում էր հիպպոդրոմի կամ կրկեսի (այժմյան Աթ-մայդանի) կողքին արևելյան կողմից: Թագուհին ապրում էր Քրիսոտրիկլինոն կամ Ոսկեսրահ կոչված բաժնում, որի մուտքը կամ գավիթը կազմում էր հորոլոգիոնը, (այսինքն՝ ժամատունը), ուր գտնվում էր արևի ժամացույց: Իսկ գավիթը մտնում էին Լավսիակոն սրահից: Թեոկտիստոսը, ուրեմն, թագուհու մոտ գնալու համար պետք է անցներ Լավսիակոն սրահից հորոլոգիոն: Երբ նա մտավ հիշյալ սրահը, տեսավ զարմացմամբ, որ Վարդը նստած էր այնտեղ: Կարծես թե Միքայելի մոտ էր գնում, կամ արդեն գնացել, դառնում էր տուն: Սաստիկ խռովեց, բայց ոչինչ չասաց, լուռ անցավ խորհելով հայտնել թագուհուն և նրա հրամանով քշել այնտեղից անկոչ և կասկածելի այցելուին:

Կալոմարիան վերնահարկ սենյակի լուսամուտից, որտեղից երևում էր Միքայելի բնակարանը նույն Քրիսոտրիկլինոնի բաժնում, պայմանավորված նշանը արեց Միքայելին, թե Թեոկտիստոսը գալիս է: Հազիվ ոտ դրավ լոգոթետը հորոլոգիոն, նրա առաջ դուրս եկան Միքայելը և Դամիանոսը, չթողին, որ թագուհու մոտ գնա և պահանջեցին, որ հերթական զե-

[1] **Georg.**, 715 և 820.

[2] **Leo Gram.**, 226-236. **Georg.**, 821-822.

կուցումը ներկայացնե Միքայելին: Հիշենք, որ Թեոկտիստոսը ոչ միայն պոստի լոգոթետ էր, այլև այսպես կոչված կանիկլինոի պետն էր: Բառացի նշանակում է թանաքաման կամ գրչաման պահող, և իմաստով համազոր է դիվանապետի պաշտոնին: Թեոկտիստոսը կարդաց թղթերը տհաճությամբ և բռնադատվեց չգնալ թագուհու մոտ, այլ հետ դառնալ: Դառնապես վիրավորված, արցունքն աչքերին, քրթմնջալով ընկրկեց և մտավ Լավսիակոն սրահը: Այդ միջոցին տեղից ցատկեց Վարդը, հարձակվեց Թեոկտիստոսի վրա, սկսեց հարվածել երեսին և փետտել մազերը: Վիգլայի դրունգարը, Մանիակը, միջամտել փորձեց, գոչելով, «Մի զարկիր լոգոթետին»: Դավաղիրները քարշեցին իրենց զոհին սոտիկ Սկիլա սրահը և անխնա խողխողեցին[1]:

Մի ուրիշ տեղեկությամբ, երբ Թեոկտիստոսը գնում էր զեկուցում տալու, Լավսիակոն սրահում Վարդը, որ նստած որպես թե հանգստանալու, հանկարծ, դարանամուտ առյուծի նման, նետվեց նրա վրա: Իսկույն օգնության վազեցին պաշտոնանկ զորավարներ (ապոստրատեգոս): Կալոմարիայի նշանի վրա Միքայելը ելավ իր բնակարանից և հրամայեց սպանել Թեոկտիստոսին: Մինչ այն գետնաքարշ տարան լոգոթետին Սկիլա սրահը և փակեցին այնտեղ: Թեոդորա կայսրուհին, լսելով որ սիրելի մինիստրի կյանքը վտանգի մեջ է, եկավ նրան փրկելու, բայց ի զուր ջանք: Պաշտոնանկ զորավարներից մեկը, Մելիսսեն տոհմից, կանգնեցրեց թագուհուն գոչելով բարկացայտ, «Հետ կաց, քաշվիր սենյակդ, այսօր կռվողների օր է»:

Կոստանդին հայ իշխանը, մարդասիրությունից մղված, պահեց Թեոկտիստոսին Սկիլայի մեջ փակված և չթողեց, որ ներս խուժեն զինվորները, որոնք սպասում էին կարգադրության հարևան շենքում: Կոստանդինը հույս ուներ, որ ընդհարումը կլուծվեր Թեոկտիստոսի աքսորով և պետք չէր լինի արյուն թափել տարապարտուց: Նույն կարծիքին էր նաև Վարդը: Սակայն Միքայելն ուրիշ խորհրդատուների ազդեցությամբ աճապարեց սպանել տալ նախքան թագուհին կկարենար աղմուկ բարձրացնել: Անմիջապես ներս թափվեցին զինվորները, որոնք տավրիկյան սկյութներ էին կամ խազարներ օտարական կոչված գնդից *ἑταιρεία*: Հակառակ Կոստանդնի ջանքերին, որ պահում էր դուռը նրանց դեմ, սուրացին ներս, բռնեցին դժբախտ ներքինուն, որ թաքնվել էր սեղանի տակ, և սրահար արին[2]:

Կոստանդին բարեսիրտ իշխանը, որ ուզում էր մի կերպ ղյուրացնել Թեոկտիստոսի վիճակը, նույն դերումն էր, ինչ որ վերոհիշյալ Մանիակը, ուրեմն միևնույն անձը: Դավաղրության մասնակից պաշտոնանկ զորավարը Մելիսսեն տանից Վարդի մերձավորներիցն էր և հավանորեն այն Փիլոթեոսն

[1] **Georg.**, 822.

[2] **Genes.**, 87-90.

էր, որ դավաղրությունից հետո պրոտոսպաթար նշանակվեց, անշուշտ, ի տրիտուր իր աջակցության[1]: Նա մնաց հավատարիմ Վարդին մինչև վերջը և հիշատակվում է վերջինիս սպանության ժամանակ որպես նրա բարեկամ, *προσφιλής*[2]:

Մելիսսեն տոհմը խնամի էր Վարդի հետ: Սրա հորեղբոր Մանուելի դուստրը ամուսնացել էր ոմն Թեոփիլոսի հետ, նույն Մելիսսեն տանից, մականունը Լիդիատես[3]: Այսպիսով, Փիլոթեոսի բարեկամությունը Վարդի հետ ավելի հասկանալի է դառնում:

Վարդի ոճիրը ավելի ևս ծանրացնելու նպատակով, նրան քշնամի պատմագիրները դիմում են Մանուելի բարձր հեղինակության և նրա բերանով Սիբիլյան մի անեծք են տալիս Վարդին: Որպես թե Մանուել Թեոկտիստոսի սպանության առթիվ ասած լինի. «սուրդ մերկացրիր, Վարդ, պալատում, պահիր վերադ մարմին կոտորելու համար»[4]:

Այս պյութիական պատգամը կրկնում է մի ուրիշ պատմագիր ավելի պարզելով. «սուրդ մերկացրիր սպանելու Թեոկտիստոսին, պահիր վերադ ամենօրյա, սպանության համար»[5]:

Ակնարկը վերաբերում է Վարդի սպանության, որ եղավ 866 թվին: Մանուել այդ ժամանակ արդեն մեռած էր և անտեղի է նրան վերագրել մի գուշակություն, որ այլ բան չէ, քան հերյուրանք **post eventum**: Հիշենք նաև, որ հայ զորավարը հիմք չուներ քնքույշ սեր տածելու դեպի մի ներքինի, որի պատճառով հեռացել էր արքունիքից, և ոչ էլ մեծ կարծիք ունենալու նրա վարչական կամ պետական կարողության մասին:

Թեոկտիստոսի կորուստը զգալի էր միմիայն Թեոդորայի համար, որը համարում էր նրան իր իշխանության սյունը: Գահազուրկ թագուհին ապրեց երկար և ականատես եղավ որդու և եղբոր անկման և աղետալի վախճանին: Նրան ևս վերագրում են հետևյալ գուշակությունը: Երբ լսեց սիրելի ներքինու մահը, Թեոդորան որպես թե վազեց հերարծակ իր ապարանքից դեպի սպանության տեղը, չկարողացավ զսպել սրտի դառնությունն ու խորին վիշտը և նետեց որդու և եղբոր երեսին վիրավորական խոսքեր, «անամոթ և ամբարիշտ գազաններ» անվանելով նրանց: «Դո՛ւ, ապերախտ ծնունդ,- ասաց իր որդուն,-Թեոկտիստոսը քեզ համար երկրորդ հայր էր և բարիքի փոխարեն չարիք հատուցիր»: Իսկ «դո՛ւ, նախանձոտ և չարախինդ դև,- դարձավ իր եղբորը, - դու արատավորեցիր իմ մաքուր և անբիծ իշխանությունս:

---

[1] **Ibid**, 91.

[2] **Georg.**, 830; **Symeon**, 678.

[3] Vita Nicolai, **Migne, P G**, 105, col. 916.

[4] **Genes.**, 90.

[5] **Theoph. Cont.**, 171.

Վերև Աստված կա, որ տեսնում է գործած ոճիրները և երկուսիդ համար էլ նույն բոնի մահ է նախապատրաստում»:

Լաց ու նզովք անօգուտ էին: Թագուհու խնամակալական իշխանության բախտը որոշված էր ընդմիշտ: Միքայել և Վարդ անմիջապես կանչեցին ծերակույտը և նրա հավանությամբ հայտարարեցին, որ Միքայելն այսուհետև միահեծան ինքնակալ է:

Թեոկտիստոսի երկու պաշտոնից մեկը, կանիկլիոնի քարտուղարությունը, ստանձնեց Վարդը և միևնույն ժամանակ նշանակվեց սքոլների դրմեստիկոս, այսինքն՝ պալատական գնդի պետ: Թեոկտիստոսի մյուս պաշտոնը, լոգոթետությունը, քիչ հետո տեսնում ենք Վարդի փեսայի, Սմբատի, ձեռքին: Պետք է կարծել, որ անմիջապես հաջորդել էր Թեոկտիստոսին:

Թեոդորան չէր ուզում հաշտվել իրականության հետ: Շարունակում էր արտահայտել իր տրտունջն ու ցավը: Միքայելը սկզբում աշխատեց մխիթարել մորը և ամոքել նրա վիշտը, բայց գահընկեց իշխանուհու բարկությունը չէր նստում և ավելի ևս սաստկանում էր որպես «հորձանք ծովի»:

Կայսրը հարկադրվեց փոխել իր վարմունքը և սկսեց նախատել մորը նույնչափ, որչափ առաջ ձևանում էր սփոփիչ: Ապա կտրուկ միջոցի դիմեց, բաժանեց նրան իր աղջիկներից: Երեք ավագ դուստրերին, Թեկլա, Աննա և Անաստասիա, հանեց Կարիանե կոչված պալատից, որ իրենց հայր Թեոփիլոս կայսրը հինել էր հատուկ նրանց բնակության համար մեծ պալատի շրջանում, և ուղարկեց համանուն մենաստանը Ոսկեղջուրի ափին Վլաքերնայի և Դեքսոկրատ դրան (այժմ Այա-Կապու) միջև: Իսկ կրտսեր աղջկան Պուլքերիային բնակեցրեց իր տատի վանքում, որ կոչվում էր Գաստրիա:

Թագուհի Թեոդորան առայժմ մնաց մեծ պալատում իր նախկին բնակարանում: Բայց շատ չանցած, սրան ևս հեռացրին Գաստրիա, ուր բերին և մյուս աղջիկներին և հրամայեցին ընդունել վանական սքեմ:

Այս բոնության պատճառը որոնելու է թագուհու անհանգիստ բնավորության մեջ: Նա դեռ չէր հրաժարվել իր կորցրած դիրքը վերականգնելու ունայն հույսերից: Բավականին վճռական էր դավեր նյութելու համար, թեև ժամանակակից պատմագիրը վճռականություն չէ տեսնում, այլ լրջմտության պակասություն այն վտանգավոր փորձում, որին խիզախեց թագուհին: Տակավին պալատում, եթե ոչ վանք քաշվելուց հետո, Թեոդորա մտածեց դավադրություն կազմել Վարդի կյանքի դեմ: Կարողացավ կուսակիցներ գտնել նույնիսկ կայսրի մոտիկ շրջապատում: Իր կողմը ձգեց ախոռապետին (պրոտոստրատոր): Վարդը քաղաքի արվարձանում կալված ուներ Կոսմիդիա կոչված: Դավադիրները վճռել էին հարձակվել նրա վրա կալվածից քաղաք գալուս և սպանել: Սակայն, դավադրությունը բացվեց նախքան գործի անցնելը և հանցավորները գլխատվեցին հրապարակավ կրկեսում: Սպանվեց

նաև ախոռապետը: Սրա տեղն անցավ Վասիլ Մակեդոնացի Հայը, այն անձը, որին վիճակված էր կործանել Վարդին և հիմը դնել կայսերական նոր հարստության: Վարդը արժանացավ կյուրապաղատության մեծ պատվին[1]:

Պատմում են, որ Թեոդորա սովորություն ուներ ստեպ այցելելու Վլաքերնայի Ս. Աստվածածնի եկեղեցին, որ քաղաքի հյուսիս-արևմտյան ծայրումն էր: Մի օր այնտեղ գնալիս, Պետրոնասը, Միքայելի և Վարդի հրամանով, բռնեց նրան և աղջիկների հետ փակեց Կարիաև պալատում: Քիչ հետո մեռավ Թեոդորան և աղջիկների հետ տեղափոխեցին Գաստրիա վանքը նաև նրա մարմինը, Վասիլ կայսեր կարգադրությամբ[2]:

Այստեղ անճշտություններ կան: Խոսքը Կարիաև պալատի մասին չէ, այլ համանուն վանքի, ինչպես տեսանք վերև: Թագուհին փոխադրվեց իր մայրական Գաստրիա վանքը իր դուստրերի հետ, երբ դեռ կենդանի էր, և ոչ թե մեռնելուց հետո մարմինը տարան այնտեղ: Շուտ չմեռավ, այլ ապրեց և տեսավ իր որդու սպանությունը: Ինչ որ կարևոր է այս պատմության մեջ, այդ Պետրոնասի հիշատակությունն է, որից հետևում է, որ Թեոդորան չէր վայելում նաև իր այս եղբոր համակրանքը:

Թեոդորայի տապալման տարին բացորոշ չէ: Պատմական տեղեկությունները հակասական են և խառնաշփոթ: Հաստատ է, որ Միքայելը և նրա հետ Թեոդորան գահ բարձրացան 842 թվի հունվարի 20-ին, երբ մեռավ Թեոփիլոսը: Միքայելը սպանվեց 867 թ. սեպտեմբերի 24-ին[3]: Ասել է, թե Միքայելը թագավորեց 25 տարի և ութ ամիս: Ստույգ է նաև, որ 866 թվի մայիսի 26-ից նրան թագակից դարձավ Վասիլը և միասին իշխեցին մի տարի և չորս ամիս: Հետևապես Միքայելը մոր հետ և միայնակ թագավորեց 24 **տարի և չորս ամիս:** Բայց քանի տարի տևեց մոր ընկերակցությունը կամ խնամակալությունը և երբ սկսվեց իր անկախությունը, այստեղ է, որ սկսվում են աղաղակող տարաձայնությունները: Տրամադրելի վեց աղբյուրներից յուրաքանչյուրն իր սեփական հաշիվն ունի, որ անհարիր են միմյանց:

Հաշտեցնել այդ թվերը միմյանց հետ առանց բռնազբոսիկ ճիգերի դժվար է: Նույնքան դյուրին է նկատել, որ աղբյուրներից և ոչ մեկը գոհացուցիչ չէ: Արդարև, Թեոդորային և Միքայելին զատ-զատ տալիս են այնքան տարիներ, որ գումարը գերազանցում է երկուսի թագավորության իսկական տևողությունը:

Ուշագրավ է, որ վեցերորդ աղբյուրը հատկացնում է Թեոդորային 15 տարի և ութ ամիս, իսկ Միքայելին 9 տարի, ուրեմն միասին 24 տարի և ութ ամիս: Գումարը չի համապատասխանում ո՛չ Թեոդորայի և Միքայելի տարիներին որ է 24 տարի և 4 ամիս, և ո՛չ իսկ Միքայելի ամբողջ թագա-

[1] **Georg.**, 822-823; **Symeon**, 657-658.

[2] **Theoph. Cont.**, 174.

[3] **Ibid**, 210.

վորության, այսինքն՝ Վասիլի մեկ տարի և 4 ամիս ընկերությունը ևս հաշված, որ կազմում է 25 տարի և 8 ամիս: Մի դեպքում ավելի է չորս ամիս, մյուս դեպքում պակաս մի տարի:

Ամեն պարագայիև կարևոր է 15 տարի և 8 ամիս թիվը, փոխանակ 14 տարի 1 ամիս և 22 օրվան: Իրավամբ ենթադրվում է, որ այստեղ հաշվի է առնված նաև այն ժամանակը, որ Թեոդորան մնացել էր պալատում, Թեոկտիստոսի սպանությունից հետո, մինչև որ քաշվեց Գաստրիա մենաստանը: Երկու թվերի տարբերությունը մոտ մեկ ու կես տարի է: Հետևապես թագուհին 856 թ. մարտի 12-ից հետո շարունակել է ապրել պալատում ևս մեկ ու կես տարի, մինչև 857 թվի սեպտեմբերի 12:

Ժամանակակից պատրիարքը, Իգնատիոսը, Հռոմի պապ Նիկողայոսին ուղղած գրության մեջ հաղորդում է, որ Միքայելը Վարդի դրդմամբ հրամայեց խուզել Թեոդորայի և դուստրերի մազը, բայց ինքը բացե ի բաց մերժեց, տեսնելով, որ թագուհին և իր դուստրերը ցանկություն չունեին կրոնավորական կյանքի և լոկ մի բռնություն էր, որ գործվում էր նրանց վրա: Պատրիարքը ավելացնում է, որ այս իսկ պատճառով իրեն ևս քշեցին աթոռից[1]:

Արդ՝ պատրիարքին հեռացրին 858 թվին նոյեմբերի 23-ին, որով և թագուհու մազ կտրելու հարցը ընկնում է նույն ժամանակները: Այստեղից հետևցնում են, որ Թեոդորան թողած պիտի լինի պալատը ոչ թե 857 թվին, այլ 858 թվին մինչև նոյեմբերի 23: Ուրիշ խոսքով, 15 տարի 8 ամիսը սրբագրվում է 16 տարի և 8 ամիս և ուրեմն պակաս տարին լրանում է[2]:

Հավանական կարծիք է: Սակայն ապացույց չունինք, որ պալատից արտաքսվելը և կրոնավորելու բռնությունը կատարված լինի միաժամանակ: Հնարավոր է, որ միմյանցից անջատ վայրկյաններ են: Թեոդորային նախ բնակեցնում են Գաստրիա, ուր բերվում են Կարիան վանքից երեք դուստրերն ևս, և բոլորը մի տարուց հետո բռնադատվում են հագնել վանականի սքեմ: Այս դեպքում պակասորդ տարին ավելցնելու է Միքայելի թագավորության թվին, ինչ ուղղելով տասն:

Իսկապես Թեոկտիստոսի սպանությամբ է, որ վերջ դրվեց Թեոդորայի կառավարության: Պալատից վտարումը և կամ կրոնավորելը երկրորդական պարագաներ են: Հուսահատ թագուհին ապրեց այնուհետև դեռ երկար տարիներ անզոր հանդիսատեսի համեստ դերում և անհաղորդ քաղաքական եռուզեռին:

---

[1] **Migne P G,** 105., col. 857

[2] **Bury,** History of the Eastern Roman Empire, App. VII.

X

Ի՞նչ է Թեոդորայի պատմական կշիռը:

Վերհիշենք, որ նա կայսերական տունը մտավ 821 թվին: Այդ օրվանից պետական և քաղաքական կյանքին հետևելու հնարավորության մեջ էր, մանավանդ, որ իր ամուսինը, Թեոփիլոսը, թագակից էր հորը նույն 821 թվից սկսյալ: Զինվորական առաջնակարգ ընտանիքից էր: Մամիկոնյան արյուն ուներ և զուրկ չէր տոհմական գծերից: Ինքնուրույն շարժվածքը, խիզախ ու հրամայական ոգին և իշխելու տենչը, հատկություններ, որ միայն ուռճանալ կարող էին նրա անբասիր գեղեցկության հովանու տակ: Կանացի արտակարգ հմայքը, կնոջ այդ տիրական զենքը, մնաց ընտանեկան սրբության շրջանում և հրապարակ չհանվեց փառասիրական և քաղաքական նպատակների սպասարկության համար: Թեոդորան առաքինի էր և այն ժողովրդական մեծ համարումը, որ վայելում էր, պարտական էր իր մաքրության: Թեոփիլոսը որ ի բնե հակում ուներ զեխության և շվայտության, սեղմվեց վայելչության սահմանների մեջ շնորհիվ իր ամուսնու սրբակեցության:

Պատմում են, որ մի անգամ միայն Թեոփիլոսը թուլություն ունեցավ սայթաքելու զգաստության ուղիից և մեղսասեր կապ հաստատեց իր կնոջ նաժիշտներից մեկի հետ, հափշտակված նրա սքանչելի գեղով: Վշտի և նախատինքի ամպերը նստեցին վիրավորված թագուհու դեմքին և զղջման բերին անառակ ամուսնուն: Դավաճանը ստիպված էր խոնարհել և թողություն խնդրել նրա տխրամած և վեհ պատկերի առաջ[1]:

Թեոդորան անպայման ազդեցություն ուներ իր մարդու վրա և անմասն չէր նրա գործունեության: Մի բնորոշ դեպք է հիշվում որպես թե ի փառաբանություն Թեոփիլոսի, բայց էապես Թեոդորան է, որ արժանի է գովքի: Մեծ պալատի ծովահայաց պատին հենված մի վայր կար, ուր առաջ ավազան է եղել, բայց այն օրից, երբ թագավորի մանուկը խեղդվել է այնտեղ (խոսքը Թեոփիլոսի և Թեոդորայի անդրանիկ երեխայի, Կոստանդնի, մասին է), ավազանը ոչնչացրել էին և նրան տեղը չինել բարձրադիր մի պալատեզ առանձին պատշգամբով: Այստեղից մի հրաշալի տեսարան էր բացվում դեպի քաղաքի շրջակայքը և ծովը, ուր հաճախ զբոսնում էր կայսրը ախորժանքով: Մի անգամ, երբ Թեոփիլոսը զբոսնում էր այնտեղ, կամ ինչպես ասողներ կան, ընթրում էր, նկատեց մի փարթամ նավ, ծանրաբեռնված, բարձրաբերձ կայմերով, որ ջրի վրա սուրալով արագորեն փոեց իր մեծության լայն ստվերը նավահանգստի վրա: Կայսրը զարմացավ, որովհետև նավահանգիստը պալատական Բուկոլեոնն էր, և հետաքրքրվեց իմանալ, ո՞ւմ էր պատկանում այն հարուստ նավը: Ասացին, որ նրա տերը ոչ այլ ոք է,

[1] **Theoph. Cont.**, 95.

եթե ոչ ինքը կայսրուհին: Թեոփիլոսը խռովվեց, բայց սքողեց իր վրդովմունքը, սպասեց մինչև այն օրը, երբ սովորություն ուներ շրջելով գնալ մինչև Վլաքերնա և ամեն ոք կարող էր մոտենալ և իր ցավը հայտնել երկրի տիրոջ: Երբ հասավ օրը, կայսրը շեղեց իր ուղին դեպի Բոսպոր (Վոսփոր), ուր կանգնած էր նավը և բարձրացավ մտավ նավը, անցավ ցռուկը և դառնալով իրեն ուղեկից ծերակուտականներին հարցրեց, թե նրանցից ով պետք ունի գինու, հացի, թե այլ մթերքի: Երկյուղածորեն պատասխանեցին, թե իրենք ոչ մի բանի կարոտություն չեն զգում, հորմե հետե գահի վրա է կայսրը: Թեոփիլոսը ստիպված էր պարզել իր միտքը. «մի՞թե չգիտեք, որ ես, աստվածընտիր կայսրս, դարձել եմ նավատեր շնորհիվ կնոջս», և հառաչելով ավելացրեց՝ «ես հռովմեական կայսրս և կինս առևտրով ենք զբաղած»:

Այսպես խոսելուց հետո հրամայեց տվավ կրակ դնել և այրել ամբողջապես նավը իր ապրանքներով հանդերձ: Միևնույն ժամանակ կշտամբեց թագուհուն և անգամ սպառնաց մահվան պատիժ տալ, եթե երբևէ ձեռնարկե նման մի գործի[1]:

Պատմագիրներից մեկը վկայում է, որ նավի ապրանքը մեծաքանակ էր և շատ հարգի և խնդրելի շուկայում, բայց և այնպես կայսրը չխնայեց ոչնչացնել բոլորը հանուն արքայական պատվիրասիրության, որի համար քանկ է այն հարստությունը, որ ձեռք է բերվում խնամելով ժողովուրդը և ոչ թե կլանելով[2]:

Այս խոսքերի իմաստն այն է, թե Թեոդորայի առևտրական ձեռնարկը մի տեսակ կեղեքումն էր, երևի, այն նկատումով, որ դրանով նա, ինչպես ասում են, ուրիշի հացն էր կտրում: Նեղմիտ հայացք է և հավանորեն խորթ Թեոփիլոսին: Կայսրի դժգոհության պատճառն այն էր, որ թագավորական տանը վայել չէր համարում վաճառականությամբ զբաղել:

Երկու տեսակետն էլ անհիմն են և անզոր ուղղելու կայսրուհու հասցեին որևէ պարսավ: Քաջալերիչ առևտուրը անհատական ձեռնարկությամբ և հարստացնելու պետական գանձարանը մի գովական ջանք է, որի դեմ զինվել կարող է միմիայն հնամենի նախապաշարմունքը: Արքայական կնոջ այս համարձակ քայլը, նախաձեռնող ոգին, բացառիկ երևույթ է այն ժամանակների համար և պերճախոս վկայական նրա մտավոր կարողության: Ընչաքաղցությունը չէր, որ մղեց նրան սեփական առևտրական նավ ունենալ: Թեոդորան խնայող էր և տնտես: Ելմտական աչալուրջ քաղաքականությամբ կարողացավ լցնել պետական գանձարանը, որ իր ամուսնու օրով գրեթե դատարկված էր: Թեոփիլոսի բազմաթիվ փառահեղ շենքերը ամենազնիվ և քանկ նյութերից կլանել էին հսկայական գումարներ:

---

[1] **Gen.**, 76-77; **Theoph. Cont.**, 88.

[2] **Gen.**, 76.

Երբ Թեոդորան թողնելով գահը պիտի քաշվեր մենաստան, հարկավոր դատեց, նախքան պալատից հեռանալը, կանչել ծերակույտը և գանձարանի հաշիվը ներկայացնել: Երևաց, որ թագուհին կարողացել է ամբարել բավականին խոշոր գումար, 1090 կենդինար ոսկեդրամ և երեք կենդինար արծաթ[1]: Կենդինարը հարյուր լիտր է, իսկ լիտրը պարունակում է 72 գրամ (նոմիսմա), որով 1090 կենդինարը հավասար է 7.848.000 դրամի, հաշվելով ոսկեդրամը կամ նոմիսմա մերձ 12 ոսկե ֆր. կստանանք 94.176.000 ֆր.: Այն ժամանակները ոսկին մոտ հինգ անգամ ավելի թանկ էր, քան ներկայումս, ուստի և Թեոդորայի պահեստի գանձը գնահատելու է մերձավորապես 470 միլիոն ֆրանկ: Եթե ի նկատի առնենք, որ պետական ընդհանուր մուտքը տարեկան 100 միլիոնի չուրջն էր, Թեոդորայի խնայողությունը պատկառելի էր և նախանձելի ժամանակակից ֆինանսիստների համար:

Պետական գանձարանի բավարար վիճակը իրավունք է տալիս ենթադրելու, որ Թեոդորայի նավի զրույցը պատմական հիմ ունի և եթե իսկություն չէ, գրական հավատարիմ ողողանջ է այն ջանքերին, որոնցով թագուհին խրախուսած պետք է լինի ծովային առևտուրը, գիտակցելով նրա կարևորությունը պետական տնտեսության բարգավաճման համար: Զրույցս ցույց է տալիս նաև, որ Թեոդորան հետաքրքրվում էր պետական գործերով դեռ ամուսնու օրով և ուրեմն այն վայրկյանին, երբ տերության բախտն իր ձեռքն անցավ, անփորձ և համբակ ոմն չէր: Պատասխանատու էր իր օրով տիրական քաղաքականության:

Թեոդորայի գործունեության հաշվեկշիռը բարդ չէ: Փայլուն գործեր չկան հրապարակի վրա: Արտաքին ճակատում պարծենալու հիմ չուներ: Թշնամուն չէր ըմբերանել կամ ծունկի բերել, թեև խոստովանելու է, որ խաղաղությունը չէր վտանգուել տարապարտուց և ոչ պետության սահմաններն էին տուժել:

Ի՞նչ որ կազմում է թագուհու փառապսակը, այդ իր եկեղեցական քաղաքականությունն է: Նա էր պատկերապաշտության ախոյանը: Երեսուն տարուց հետե անտեսած պատկերները նորեն եկան և շարվեցին պաշտամունքի սեղանի վրա, շնորհիվ թագուհու: Հների ասելով, բարեպաշտության հաղթանակն էր, և Թեոդորան արժանի ամեն փառաբանության, արժանի սրբերի դասը քառելու: Նույնը երկրորդում են, և նոր պատմագետներից շատերը:

Սակայն, հայտնի է, որ հակառակ բանակը ևս գործում էր բարեպաշտության անունով: Զգացումը, որքան և հարգի, բավական չէ պատկերների հանգույցը քակելու և մեկնելու համար: Մեր նպատակից դուրս է կրկտել հարցի տեսաբանությունը, կանգ առնել նրա ծագման և զարգացման վրա (3):

[1] **Gen.**, 90; **Theoph. Cont.**, 171-172.

Մեզ հետաքրքրում է այժմ հարցի հեղաշրջումը Թեոդորայի օրով և Թեոդորայի դիրքը: Արդյո՞ք լոկ բարեպաշտության մի տուրք էր պատկերների վերականգնումը, թե քաղաքական աստառ ևս կար նրա մեջ:

Սկսած 815 թվից եկեղեցական կյանքը հոսում էր խաղաղ իր ընդգրկած հունի մեջ: Ի՞նչ էր պատճառը, որ հանկարծ զարթնեցին հանգած կրքերը և խմբվեցին Թեոդորայի շուրջը:

Հին պատմագիրները լուրջ պատասխան չունին այս հարցին: Երևում է, որ իրենք ևս տեղեակ չէին գործի հանգամանքներին: Հարկադրված էին որոնել այս կամ այն մեկնությունը համաձայն իրենց հասկացողության: Տրամադիր են մեծ կշիռ տալու թագուհու և իր մերձավորների կրոնական համոզումներին:

Հավատացնում են, որ Թեոդորան և իր մայրը Թեոկտիստեն ի ծնե ջերմեռանդ պատկերապաշտներ էին, բայց ստիպված էին գաղտնի պահել իրենց զգացմունքը Թեոփիլոսի կենդանության: Մի ենթադրություն, իսպառ կամայական, որը հաստատելու համար պետք էր դիմել հնարածո և թեթևամիտ զրույցների օգնության:

Այսպես, պատմում են, որ պալատում ապրում էր մի խղճուկ արարած, մի ոչնչություն, նույնքան արհամարհելի, որքան Հոմերոսի Թերսիտեսը: Անունը Դենդերիս, ծաղրածու և զվարճախոս, որ կատակներով և անդուռն բերանով զվարթեցնում էր Թեոփիլոս կայսրին:

Մի անգամ մտնելով թագուհու ննջարանը, այս խեղկատակը նկատեց, որ թագուհին համբուրում է պատկերներ և դնում իր աչերին: Կեղծելով, որ իբրև թե ոչինչ չի հասկանում, հարցրեց թե այդ ի՞նչ է: «Իմ անույշ տիկնիկներս են, պատասխանեց թագուհին, որոնց ես այնքա՜ն սիրում եմ»:

Թեոփիլոսը ճաշի վրա էր, երբ մոտեցավ Դենդերիսը: «Ո՞ւր ես կորել», հարցրեց կայսրը: Միմոսը պատասխանեց, որ Մանայի մոտ էր (այդպես էր կոչում Թեոդորային) և պատմեց իր տեսածը, թե որպես կայսրուհին հանում էր բարձի տակից փոքրիկ տիկնիկներ և համբուրում:

Կայսրը բարկացած վեր կացավ տեղից և գնաց ուղիղ Թեոդորայի մոտ, սկսեց նախատինք թափել և անվանել նրա արածը կռապաշտություն: Ամուսնուն հանգստացնելու համար թագուհին ստեց, ասելով, որ կասկածներդ անտեղի են: «Ես և իմ նաժիշտներս նայում էինք հայելու մեջ և Դենդերիսը տեսնելով մեր փոքրիկ պատկերները հայելում, կարծել է, թե տիկնիկներ են և եկել հիմարաբար մոլորեցրել է քեզ»:

Թեոփիլոսի բարկությունն իջավ: Թեոդորան մի օր լավ ծեծել տվեց Դենդերիսին, սաստելով, որ խելքը գլխին պահե և տիկնիկների մասին չխոսի այլևս: Անցավ մի քանի ժամանակ և կայսրը հարցրեց ծաղրածուին, թե արդյոք Մանան դարձյալ փաղաքշո՞ւմ է տիկնիկներին: Մի ձեռքը

բերանին դնելով, մյուսը՝ ետևը, շշնջաց. ա՛ս, լո՛ւռ, լուռ կենանք տիկնիկների մասին[1]:

Նման կերպով ապացուցանել են փորձել և Թեոդորայի մոր, Թեոկտիստեի, բարեպաշտությունը պատկերների խնդրում: Արդեն առիթ ունեցանք հիշելու վերև, ինչպես Թեոկտիստեն, երբ իր թոռները այցելության էին գալիս, հանում էր արկղի մեջ պահած սուրբ պատկերները և համբուրել տալիս երեխաներին:

Մանուել զորավարը, Թեոդորայի հորեղբայրը, որ կրոնական խնդիրներից հեռու կանգնած զինվորական էր, նա ևս որպես թե հակվում է պատկերների կողմը հետևյալ առթիվ: Մի անգամ ծանր հիվանդացավ, գրեթե մահամերձ, և կանչեց Ստուդիոնի վանքի կրոնավորներից մեկին, որ թաղման պատրաստություն տեսնե: Վանականը համոզեց հիվանդին, որ անպայման կառողջանա, եթե խոստանա վերահաստատել հալածված պատկերները[2]:

Թե որքան շինծու է այս զրույցը, երևում է նրանից, որ մի ուրիշ տեղեկությամբ հիվանդացողը Մանուելը չէր, այլ իր կինը, Հեղինեն, և բուժողը՝ Նիկողայոս վանականը Ստուդիոնի միաբանությունից: Հիվանդությունն էլ այն էր, որ երեխաները մեռած էին ծնվում[3]:

Մանուելը բուժվեց հիվանդությունից հրաշքով և ջանաց կատարել իր հանճնառությունը: Նախ դիմեց թագուհուն, նրան համոզելու համար: Չնայելով այն հավաստիացումին, թե Թեոդորան, իր մայրը և քույրերն ու եղբայրները գլխովին համակիր էին պատկերապաշտության, Մանուելի առաջարկը չոգևորեց թագուհուն և չգայթակղեցրեց նրան իսկույն ևեթ: Պետք էր բեկանել նրա ընդդիմությունը: «Իմ ամուսինս, երանյալ կայսրը, բավականաչափ իմաստուն էր և գիտեր, ինչ որ հարկավոր էր անել, առարկում էր թագուհին: Արդ ինչպե՞ս մենք անտեսենք նրա սահմանած կարգը և հետևենք ուրիշ ուղղության»[4]:

Թեոդորայի վարանումը փայլուն փաստ է, որ պատկերների խնդրում նա համերաշխ էր իր սիրելի ամուսնու հետ և այլ համոզմունք չէ դավանել, քան ինչ որ ընդունված էր և հանրացած պետական շրջաններում նախորդ կայսրերի օրով: Ակներև է, որ նրա մասին հերյուրած զրույցները պատմական հիմ չունին: Թեոդորան խոնարհեց Մանուելի նախածեռնության առաջ, երբ լսեց նրա սպառնական նախազգուշացումը: «Եթե չհոգաս վերա-

[1] **Theoph. Cont.**, 91.

[2] **Gen.**, 79; **Theoph. Cont.**, 148.

[3] **Migne, P G**, 105, col. 916.

[4] **Gen.**, 80.

կանգնել պատկերների պաշտումը, խրոխտաց Մանուելը, այլ կերպ կտնօրինվի, Աստուծո օգնությամբ, այն ամենը, ինչ վերաբերում է ողջմտության և քո թագավորության»:

Այս խոսքերը մի ակամա խոստովանություն են, որ պատկերապաշտներն ունեին նաև քաղաքական շարժառիթներ: Կրոնական հեղաշրջումը նկատվում էր նրանց կողմից որպես միջոց ապահովելու գահը: Միայն մի բան ուղղելու է, որ այս տեսակետը չէր կարող պատկանել Մանուել զորավարին և սպառնալից խոսքերը իզուր են դրված նրա բերանը: Խնամակալի կոչումով գահը պաշտպանելու համար նա պետք չուներ որևէ կողմնակի նեցուկի: Բավական էր ժողովրդական ընդհանուր համակրությունը, որ նրա կողմն էր, ինչպես երևաց կրկեսի հանդեսում:

Մանուելի դերը անպայման չափազանցրած է պատկերապաշտության խնդրում: Նա ոչ մի կերպ չի կարող նախաձեռնող լինել: Իսպառ արժեք չի տալու այն տեղեկության, իբրև թե Մանուելին բժշկող վանականը նրա վաղեմի բարեկամն էր, ծանոթ տակավին այն ժամանակից, երբ նա Արմենիակյան թեմի սպարապետն էր, և կամ այն, որ Մանուելը նախ խորհրդակցել է իր ընկեր-խնամակալների հետ և նրանց հավանությունն առնելուց հետո դիմել Թեոդորային: Սրանք նոր աղբյուրի շիթեր չեն, այլ բանաքաղի ինքնաբուխ հավելումներ մեզ արդեն ծանոթ, և նրա կողմից կրկնված, տեղեկության[1]:

Մանուելին վերապահած դերը և այս առթիվ հյուսած պատմածները հեռու են իսկությունից: Անգամ վիճելի է, արդյո՞ք Մանուելը կենդանի էր այդ ժամանակ: Կասկածը, տեսանք վերև, հնարավոր է: Նրա վրա շատ բան է կուտակված: Պատկերապաշտության վերականգնումի պատիվն էլ ավելացրել են, ըստ երևույթին, այն պատճառով, որ հայ զորավարն իր բարոյական նկարագրով մի հեղինակավոր վեհություն էր, մի բարձունք, որտեղից դյուրին էր դիտել և նրա լույսով մեկնել այն երևույթները, որոնց համար բավարար բացատրություն չունեին այլուստ:

Բարեբախտաբար, տրամադրելի է մեզ անցքերին ժամանակակից հեղինակի մի կարևոր վկայությունը, որի համաձայն եկեղեցական նոր ուղղության մեջ որոնելու է առավելապես լոգոթետ Թեոկտիստոսի ազդեցությունը: Սրա «խորհրդով և հորդորով» էր, որ կայսրուհին հալածեց եկեղեցուց և քաղաքից Հովհաննես պատրիարքին[2]:

Թեոկտիստոսի հետ միաբան էր վանականների մի ոհմակ Մեթոդիոս եպիսկոպոսի առաջնորդությամբ: Մի տեղեկությամբ շարժման իսկական թելադրիչներն էին Օլիմպոս լերան ճգնավորները, Հովհաննիկ(իոս), Արշակ

[1] **Theoph. Cont.**, 148-149.

[2] **Georg.**, 811.

և Եսայի: Մեթոդիոս եպիսկոպոսի միջոցով սրանք որպես թե դիմեցին կայսրուհուն և առաջարկեցին վերահաստատել պատկերների պաշտամունքը[1]:

Պատմում են նաև, որ կայսրուհին և ծերակույտը հարցրել են Հովհաննիկին, թե ո՞վ է արժանի պատրիարքական գահին և նա պատասխանել է հանձնարարելով Մեթոդիոսին, մինչդեռ այդ ժամանակ ավելի ժողովրդական էր մի ուրիշ եպիսկոպոսի՝ Միքայել Սինկելլոսի, թեկնածությունը[2]:

Հարկավ, թեթևամտություն կլիներ հավատալ այն մեծ վարկին, որ հատկացրած է մի խղճուկ ճգնավորի: Ճշմարտությունն այն է, որ Մեթոդիոսը հաղթանակել է խլելով պատրիարքական գահը Միքայելից, և հաղթանակել է ոչ թե շնորհիվ Հովհաննիկ կրոնավորի, այլ թիկունք ունենալով լոգոթետ Թեոկտիստոսին: Երևում է, որ վերջինս փառասեր եպիսկոպոսին իր կողմն էր ձգել, գայթակղեցնելով նրան հայրապետական աթոռով:

Մեթոդիոս գիտնական անձն էր: Տակավին Լևոն Հայկազն օրով հայտնի էր իր ելուստներով ընդդեմ պատկերամարտության: Հնարավոր գտավ մինչև անգամ ապավինել Հռոմ և աշխատել ի նպաստ պապի միջամտության: Միքայել II-ի ժամանակ վերադարձավ Կ. Պոլիս, բերելով հետը պապի դավանաբանական մի գրությունը: Կայսրը զայրացած բանտ ձգեց Մեթոդիոսին, որը մնաց փակված մի մութ նկուղում 821 թվից մինչև 828 թիվը[3]:

Թեոփիլոսը գնահատելով նրա գիտությունը հանեց բանտից և պահեց պալատում իր մոտ: Անհավանական է, որ Թեոփիլոսը ևս նրան վերստին բանտարկած լինի[4]: Հավանորեն նախընթաց բանտարկության արձագանքն է: Հնարածո է նմանապես ազատության վերաբերյալ զրույցը: Իբրև թե Թեոփիլոս, ուսումնասեր անձ լինելով, մատենադարանում գտավ մի գիրք, որ ոչ ոք չկարողացավ հասկանալ: Ոչ Հովհաննես պատրիարքը, և ոչ Լևոն փիլիսոփան, որ Հովհաննեսի եղբորորդին էր և մեծ գիտնական, չկարողացան լուծել գաղտնիքը: Թագավորի սենեկապաններից մեկը, Հովհաննես անունով ասաց, որ միմիայն Մեթոդիոսը կարող է բավականություն տալ կայսեր: Անմիջապես գիրքը տարան բանտարկյալի մոտ: Մեթոդիոսը հեռվից արդեն հասկացավ գործի էությունը և գոչեց. «Սենեկապան Հովհաննես, գիտեմ, Թեոփիլոսի կողմից ես գալիս, բե՛ր թուղթ և մելան»: Եպիսկոպոսը առաջարկեց եռակի լուծում: Կայսրը շատ գոհ մնաց և պատվիրեց ազատ արձակել բանտից և առանձին բնակարան հատկացնել պալատում[5]:

Մեթոդիոսը մտերմացավ Թեոփիլոսի հետ: Արքայական փափուկ

---

[1] **De Theopilis,** Imp. absolutione, Analecta Byzantino-russica, p. 25.

[2] **Vita Michaelis Syncellis,** Izvestia Konst. Instituta, XI, 249 (ռուսերեն):

[3] Մեթոդիոսի կյանքը, **Migne, P G** 100, col. 1249.

[4] **Symeon**, 642.

[5] Նույն տեղում, էջ 643-645:

բազմոցների վրա նրա նախկին մոլեռանդությունը մեղմացավ: Պատկերապաշտության համար չարչարված եպիսկոպոսը կարողացավ պատկերամարտ կայսրի աչքը մտնել և նրա շնորհները վայելել: Անսպասելի մի համակեցություն, որ բնորոշում է Մեթոդիոսի բարոյական ճկունությունը ավելի, քան Թեոփիլոսի ներողամտությունը:

Բարերար կայսրի մահով եպիսկոպոսի դրությունը կարող էր խախտվել, մինչդեռ նա արդեն ընտելացել էր պալատական կյանքին և դժվարությամբ պիտի հաշտվեր վանական խուցի հետ: Պատրիարքական աթոռը մոտ էր և գրավիչ: Ճարպիկ Թեոկտիստոսը, երևում է, փայփայել էր նրա փառասեր ակնկալությունները և շլացրել խոստումներով: Մեթոդիոսը և Թեոկտիստոսը իրար մոտեցան և պարզեցին պատկերապաշտության դրոշակը: Համոզել սկսեցին թագուհուն, վախեցնելով, որ եթե պատկերապաշտությունը չվերականգնվի, գահը պիտի վտանգվի, «այլ կերպ պիտի տնօրինվի նրա թագավորության բախտը»: Այս սպառնալիքը տեղին է միմիայն Թեոկտիստոսի բերանում և ոչ Մանուելի, ինչպես թվացել է հետագայում բարեպաշտ ժամանակագիրներին:

Ի՞նչ է նշանակում այս սպառնալիքը և երկյուղը և կամ ի՞նչ վտանգի դեմ է, որ զրահ պիտի ծառայե պատկերապաշտությունը:

Գահի շրջապատը կազմում էին թագուհու մոտիկ ազգականները և մերձավորները՝ հորեղբայրը, եղբայրները, քույրերը, փեսաները և մի շարք այլ հայեր: Պատրիարքական աթոռի վրա էր Հովհաննես հայ պատրիարքը, Թեոփիլոսի և Թեոդորայի անձնական բարեկամը և նրանց երեխաների կնքահայրը:

Եթե գահին վտանգ կար, այդ կարող էր ծագել միայն այս շրջանից: Թեոկտիստոսի ակնարկը ուղղված է գահի շուրջը վխտացող ուժերի հասցեին և ամենից առաջ շոշափում է Մանուելի, Վարդի անձնավորությունները: Մյուս կողմից պալատական մթնոլորտը և պետական շրջանները տոգորված էին պատկերամարտ ոգիով: Եկեղեցու աչքում ևս պատկերամարտությունը համարվում էր կայունացած դրություն: Սակայն, Բյուզանդիան այնպիսի մի միջավայր էր, ուր փառքի և մեծության դռները բաց էին բոլորի առաջ, միայն խիզախել էր հարկավոր, ուստի և տևական երևույթները ճանճրալի էին թվում և ցնցումները պատրիչ. Կարելի էր նորից արծարծել պատկերների խնդիրը, դժգոհ ուժերը հրապարակ հանել: Հակառակորդներին ընկճելու և ոչնչացնելու միջոց է: Թեոկտիստոս հույս ուներ, որ Թեոդորային շրջապատող հայ կարող դեմքերը, որոնք վտանգավոր էին Թեոկտիստոսի համար և ոչ թագուհու, պաշտպան կհանդիսանան ընդունված դավանանքին և կընդդիմանան պատկերների ընդունելության: Այս դեպքում դժվար չէր նրանց ամբարիշտ հայտարարել

կայսերական հաճությամբ և այսպիսով հարվածել և վարկաբեկել նաև նրանց քաղաքական հռչակը:

Այնուհետև Թեոկտիստոսի դիրքը կամրանար արքունիքում և Մեթոդիոսը կարժանանար պատրիարքության: Այս հաշվի մեջ ենք տեսնում պատկերների անակնկալելի վերակենդանության քաղաքական շարժառիթը:

Մեթոդիոսը գործի գլուխ անցած սկսեց նախապատրաստական աշխատանքները՝ հաջողցնելու նոր ժողովի գումարումը: Նախապատրաստությունը տևեց մի տարի: Վերջապես կայացավ մեծ դատաստանը 843 թվի մեծ պասի առաջին կիրակին, մարտի 11-ին: Թողնենք մանրամասնությունները: Ժողովը հրաժարեցրեց Հովհաննես պատրիարքին և նրա տեղը ընտրեց Մեթոդիոս եպիսկոպոսին: Թագուհի Թեոդորայի հրամանով Կոստանդին Հայը, վիգլայի դրունգար և պատմագիր Գեննեսիոսի պապը, ներկայացավ Հովհաննես պատրիարքին և առաջարկեց միանալ ժողովին, ընդունել նրա որոշումները պատկերապաշտության մասին և մնալ պատրիարքական աթոռի վրա: Հակառակ դեպքում պետք է թողներ աթոռը: Հովհաննեսը գիտնական էր և սկզբունքի տեր, անհողդողդ մնաց կայսերական սպառնալիքի դեմ և իջավ աթոռից, պահելով իր համոզումը, համոթ բոլոր նրանց, որոնք ամեն ջանք ու ճիգ են թափել սևացնելու նրա հիշատակը: Հովհաննեսի հաստատամտության առաջ գունատվում է այն լուսապսակը, որ կեղծ ջերմեռանդությունը հյուսել է Մեթոդիոսի գլխին: Նրա թշնամիները արատավորեցին իրենք իրենց, ծանր և բիրտ վիրավորանք հասցնելով հրաժարված պատրիարքին: Չինվորներ ղրկեցին հեռացնելու նրան պատրիարքարանից: Նրանցից մեկը սրով վիրավորեց պատրիարքին: Հակառակորդները ասում են, որ Հովհաննեսը ինքն է իրեն դանակով վիրավորել և մեղը ուրիշների վրա ձգել[1]:

Ուրիշ լուրերի համաձայն Հովհաննես պատրիարքը իրոք, ցանկացել էր վերջ տալ իր կյանքին: Այնչափ խռովել և վրդովել էին նրան աղետալի դեպքերը[2]:

Պատրիարքին վիրավորել էին զինվորները, այս է ճշմարտությունը հակասական տեղեկությունների մեջ:

Մեթոդիոսի և ընդհանրապես ժողովականների հեղհեղուկ նկարագրի համար շատ բնորոշ է ևս մի հանգամանք: Երբ ժողովը որոշեց նզովք կարդալ բոլոր պատկերամարտներին, կայսրուհին պահանջեց, որ Թեոփիլոսի անունը հանվի ցուցակից և նրան մինչև անգամ ներումն շնորհվի: Ծառայամիտ հայրերը խոնարհեցին պահանջի առաջ: Թեոփիլոս ազատ արձակվեց իր պատկերամարտ մեղքերից: Նրանց հլությունը և ապօրինի

[1] **Theoph. Cont.** 151; Acta Davidis, Analecta Bollandiana, XVIII, 209.

[2] De Exsilio S. Nicephori, **Migne, P G** 100, col. 164.

վարմունքը արդարացնելու համար հյուսված են մի շարք զրույցներ, որոնցից մի քանիսը գոնե ավելի ծանրացնում են գործած հանցանքը, քան մեղմացնում: Նախ որպես թե Թեոդորան հայտնել է ժողովին, որ իր ամուսինը զղջացել է և վերջին շունչը ավանդելիս համբուրել է պատկերները, որ ինքը Թեոդորան մոտեցրել է նրա շուրթերին[1]:

Պատմում են նաև, որ թագուհին գաղտնի խոսակցության ընթացքում հավատացրել է Մեթոդիոսին և Լեսբոսցի երկու եղբայր Սիմեոն և Գևորգ կրոնավորներին, որ Մեթոդիոսի անձնական բարեկամներն էին, թե հանգուցյալ Թեոփիլոս կայսրը թողել է **eulogia**, այսինքն՝ աջահամբույր, նրանց համար այն պայմանով, որ իրեն չանիծեն որպես հերետիկոսի: Սիմեոնը համաձայնել է և նրան հետևել են մյուսները[2]:

Դարձյալ Թեոդորան համոզում է, որ երազ է տեսել, թե ինչպես Թեոփիլոսին շղթայակապ տանում են մի մարդու առաջ, որի ճակատին Քրիստոսի պատկերն էր: Թագուհին լալիս է և աղերսում իր ամուսնու համար և դատավորը հրամայում է հրեշտակներին քակել նրա շղթաները:

Աջահամբույրի խոստումը բավական էր, որ Մեթոդիոսը հնար գտներ սևը սպիտակացնելու: Մի անգամ նա կազմում է բոլոր հերետիկոսների ցուցակը և դնում սեղանի վրա: Թեոփիլոսի անունը նս մտցրած է լինում ցուցակի մեջ: Հանկարծ երազ է տեսնում, մի մարդ մոտենում է նրան և ասում, որ Թեոփիլոսին ներել է: Արդարև, երբ մոտենում է սեղանին, նկատում է, որ ցուցակի մեջ Թեոփիլոսի անունը անհայտացել է և տեղը մնացել է բաց[3]:

Այս և նման զրույցներ, որքան և տափակ և անարվեստ, մի մի հայելի են, ուր արտափայլում են ուղղափառության մասին ճառող, մեղավորն ու արդարը զատող, եկեղեցականության դեմքերն իրենց սեպուհ խորշոմներով դյուրաթեք բնավորություն, շողոմարար և հաճոյակատար հակումներ, ուր իր տեղն ունի նաև կաշառակերությունը և անգամ անբարոյականությունը:

Նրանց բարքերի մասին գաղափար տալու համար բավական է հիշել Մեթոդիոսի քստմնելի արկածը, որը պատմել իսկ խորշելի է: Նորընտիր պատրիարքին՝ Մեթոդիոսին վարկաբեկելու համար, պատկերամարտները լուր տարածեցին, որ նա սիրային հարաբերություն է ունեցել մի կնոջ հետ, որը խոստովանում է իր մեղսակցությունը: Թեոկտիստոսը և Մանուելը անհարմար դրության մեջ էին: Մեթոդիոսի բարեկամները հերքում էին մեղադրությունը, ասելով, որ կինը կաշառված է հակառակորդ բանակի կողմից և նրա վկայությունը ստահոդ է: Սակայն կինը անանուն ոմն չէր, այլ այն Մետրոփանեսի մայրն էր, որ հետո Զմյուռնիայի եպիսկոպոս եղավ: Հասարակությունը շվարած էր և հուզումը տարածվում էր:

[1] **Theoph. Cont.**, 153.

[2] Acta Davidis, **Analecta Bollandiana**, XVIII, 244.

[3] **De Theopilis** absolutione, **Analecta Byzantino-russica**.

Մեթոդիոս պատրիարքը չուզենալով ուղղափառության վարկը ձգել և գայթակղության քար դառնալ, ուրիշ ավելի վայելուչ միջոց չգտավ արդարանալու, քան մերկանալ հրապարակավ իր ամոթանքը և ցույց տալ, որ մարմնապես արատավոր լինելով, անատակ էր վերագրված հանցանքին: Սրբազան հայրը պատմեց նաև առանց ամոթխածության իր դժբախտության ծագումը, որ անվայել է մեզ կրկնել: Թագուհի Թեոդորան զիջեց, բայց փոխարենը հրամայեց երկու հարյուր հարված տալ մտրակով թշվառ պատրիարքին[1]:

Այսպիսի միջավայրում, ուր բարեպաշտության անունով կարելի էր ամեն ոճիր գործել, Թեոկտիստոս և Թեոդորան, հենվելով Մեթոդիոսի և նման հայրերի հեղինակության, գլուխ բերին պատկերապաշտության հաղթանակը:

Հույն եկեղեցին և հունամիտ պատմաբանները հին և նոր կարող են ողջունել 843 թվի հեղաշրջումը: Բայց բյուզանդական պետականության և քաղաքակրթության հետևող միտքը պետք է և իրավունք ունի մոտենալ հարցին այլ գնահատականով և չափով:

Պատկերամարտությունը ոչ այն ծամածուռ գծերով, ինչպես ներկայացնում են նրա ոխերիմ և աչառու թշնամիները, այլ իր իրական պատկերով սեփականություն էր այն ժամանակվա լուսամիտ և կիրք հասարակության: Պատկերապաշտությունը հրեշավոր կերպարանք էր ստացել: Բավական է հիշել, որ քահանաները քերում էին պատկերների ներկը, խառնում հաղորդության և տալիս հավատացյալներին:

Պատկերամարտությունը մի նախարձակ ճառագայթ էր պավլիկյան զորավոր շարժման: Իսկ այս շարժումը ըստ էության ի՞նչ էր, եթե ոչ անդրանիկ փորձ՝ մտցնել բանականության ճրագը եկեղեցու մեջ և նրա լուսով մաքրել, զտել կրոնական զգացումը եկեղեցական ծեսերի և անընմբռնելի խորհուրդների ծանրությունից: Պատկերների վերականգնումը դարձավ մի նշանաբան ընդդեմ մտքի և խղճի ազատության: Սկսվեց հալածանք:

Նույն Թեոդորան և Թեոկտիստոսը մեծ զորք ղրկեցին արևելք պավլիկյանների դեմ և ոչնչացրին մոտ հարյուր հազար մարդ, ինչպես արձանագրում են պատմագիրները: Հետևանքները շատ ծանր եղան պետության համար: Բռնությունն ու հալածանքը նետեցին պավլիկյաններին հարևան մուսուլման պետության գիրկը: Պավլիկյանները, որ բնական ամբարտակ էին արաբների դեմ, դարձան նրանց դաշնակիցներ և մեծամեծ հարվածներ հասցրին կայսրության:

---

[1] **Genesius**, 82-83.

Ինչ վերաբերում է հարցի քաղաքական կողմին, նա թաքնված է մեր աչքերից: Պատմագիրները լռում են, կամ ոչինչ չգիտեն: Նորագույն գիտնականները ևս կարծես թե տրամադիր չեն, գոնե վարանոտ են, քաղաքական նշանակություն տալ պատկերների շուրջը եռացող հակամարտության:

Դժվար թե կարելի է բաժանորդել այս տեսակետը: Ամեն մի երևույթ, որ ազդել է քաղաքական ուժերի դասավորման վրա, նպաստելով թե վնասելով, անպայման քաղաքական ազդակ է: Ուրանալ պատկերների հարցի նմանօրինակ ազդեցությունը դեմ է պատմության տվյալներին: Իր ծագումից մինչև անկումը այդ հարցը բոլոր քաղաքացիական կռիվների ժամանակ բեմի վրա է և գործոն դերում: Լևոն Իսավրացու մահից հետո, երբ Արտավազդ հայ իշխանը հափշտակել ուզեց գահը օրինավոր ժառանգի ձեռքից, հայտարարեց իրեն հետևորդ պատկերապաշտության և 742 թվին վերականգնեց նախորդի օրով խափանած պաշտամունքը: Այս գործողությունը ուրիշ նպատակ չուներ, քան քարշել իր կողմը ընդդիմադիր և դժգոհ տարրերը: Արտավազդը Լևոնի փեսան էր և մերձավոր գործակիցը: Նրա կենդանության չխոյացավ պատկերամարտության դեմ, պետք չուներ, կրոնական զգացումը չվրդովեց: Բայց ապստամբելով գահաժառանգի Կոստանդին Կոպրոնիմոսի դեմ, հանկարծ փոխեց իր կրոնական դեմքը: Պատճառը միմիայն քաղաքական նկատառումներն էին և ոչ եկեղեցական որևէ նախանձախնդրություն: Թովմաս Գազիրացին, որ շատ հեռու էր կրոնական խնդիրներից, ծառանալով Միքայել Ամորացու դեմ 821-824 թվերին, հնարավոր գտավ կոչ անել ուղղափառության ընդդեմ պատկերամարտ կայսրի:

Քաղաքական հաշիվ կար և Թեոկտիստոսի քայլի մեջ և ուղղված էր պալատական հայ շրջանների դեմ: Կրկնում ենք, հակամարտ բանակների բախումը չէ արձանագրված և վարագուրված է մեզնից: Բայց հաջորդող դեպքերը բարձրացնում են վարագույրը և ցույց են տալիս, որ Թեոկտիստոսի վարկը մեծապես շահեց նոր քաղաքականությունից: Դիրքը ամրացավ պալատում: Անհամեմատ ավելի փայլուն և վաստակավոր դեմքերը կամա թե ակամա քաշվեցան հրապարակից, թողին իրենց բարձր դիրքերը: Հովհաննես պատրիարքից հետո չքացան պալատական սրահներից և պետական դիվաններից պրոտոմագիստր Մանուելը, մեծ պատրիկ Վարդ և Պետրոնաս եղբայրները և մյուս հայ նշանավոր գործիչները:

Թեոկտիստոսը դարձավ Թեոդորայի ամենազոր մինիստրը: Սակայն նրան վիճակված չէր վայելել իր հաղթությունը լիովին:

Մամիկոնյան կտրիճները սովոր չեն անպատիժ թողնել ոչ ուրիշների անարգ հաղթությունները և ոչ իրենց անարժան պարտությունները:

Վարդ Մամիկոնյանը սպանեց Թեոկտիստոսին 856 թվին: Գրավեց նրա բարձը և սկսեց մի փայլուն գործունեություն, որպեսզի պանծացնի իր արյունոտ ձեռքը՝ գրելով նրանով իր անունը բյուզանդական քաղաքակրթության ոսկեմատյանի մեջ:

ՎԱՐԴ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

(856 866)

Թեոդորա կայսրուհու հարազատ եղբայրն էր Վարդը, պետական առաջնակարգ անձ, լուսավոր դեմք:

Պետք է զարմանալ, որ պատմությունն այնքան անարդար և ապերախտ է գտնվել այս մեծ, կորովամիտ մարդու նկատմամբ, ջանալով ամեն կերպ պղտորել, անփառունակել նրա հիշատակը, ստվերել նրա լուսափայլ ճակատը: Այսպես է եղած հերոսների վիճակը պատմության մեջ:

Վարդը խորտակվեց հակառակորդի դավադիր սրից այն պահին, երբ հասել էր փառքի գագաթնակետին և ձեռքը պարզել դեպի կայսերական գայիսոնը: Միքայել կայսրը անորդի էր, և Վարդը հռչակված էր կեսար և ուրեմն առանց ճիգի, իրերի բնական բերումով, կայսերական ծիրանին պիտի գար փաղփաղեր նրա ծանրավաստակ ուսերին:

Սակայն, Վոսփորի ափին քաղաքական կյանքի ելևէջները նույնքան հեղհեղուկ էին և անտևական, որքան խռովահույզ ծովի հորձանքները, որոնք մի ակնթարթում փշրվում, խորտակվում են չարախինդ հողմերից:

Վարդը Մամիկոնյան շառավիղ էր, սրով էր հարթել իր ճանապարհը: Թեոփիլոս կայսրի մահից հետո կառավարության ղեկն անցավ նրա կնոջ՝ Թեոդորայի ձեռքը: Թագաժառանգ Միքայելը դեռ եռամյա մանուկ էր: Մայրը՝ Թեոդորան իսկապես խնամակալուհի էր: Նրա առաջին մինիստրը և աջ ձեռքն էր ներքինի Թեոկտիստոսը: 856 թվին Միքայելը մտնում էր իր 17-18 տարին: Իշխելու, հրամայելու զգացումը արթնացել էր նրա մեջ: Ուզում էր տիրանալ իր գահակալական իրավունքներին:

Վարդը օգտվելով իր պատանի քեռորդու տրամադրությունից և առավել ևս գրգռելով նրա ինքնիշխանական տենչերը, համոզեց վճռական քայլ անել վերջ տալու տիրող կացության: Ամենակարող ներքինի և լոգոթետ Թեոկտիստոսը սուսերահար եղավ: Թեոդորայի իշխանությունն ընկավ: Նրա տեղն անցավ օրինական թագաժառանգը, Միքայելը, իսկ Թեոկտիստոսին փոխարինեց Վարդը:

Թեոկտիստոսը երկու պաշտոն ուներ, լոգոթետ էր պոստի և կանիկլիոնի (= կալամդանի) քարտուղար կամ դիվանապետ: Երկու պաշտոններն էլ ստանձնեց Վարդը: Հետագայում լոգոթետությունը զիջավ իր փեսային՝

Սմբատին: Վարդն իր ձեռքն առավ, ինչպես երևում է, նաև պալատական հեծյալ գնդերի հրամանատարությունը, սքոլների դոմեստիկությունը: Թեոդորան չխորշեց դավել իր եղբոր Վարդի դեմ, համաձայնության գալով Միքայելի պրոտոստրատորի կամ առաջին ախոռապետի հետ: Անհաջող մահափորձից հետո Միքայելը մեծարեց Վարդին կյուրապաղատության բարձր պատվով, իսկ դավաճան ախոռապետի պաշտոնը հանձնեց Վասիլ Հային, այն մարդուն, որին բախտը ղրկել էր կործանելու Վարդին և նրա վերաթռիչ ակնկալությունները:

Վարդն արդեն կյուրապաղատ էր, երբ Միքայելը ցանկացավ երիտասարդական կորովը փորձել պատերազմի դաշտում, և Վարդի առաջնորդությամբ արշավեց արաբների դեմ: Կայսերական զորքերը հառաջացան մինչև Եփրատի ափերը և շրջապատեցին Սամոսատ քաղաքը: Երեքօրյա պաշարումից հետո, մի կիրակի, երբ կայսրը զբաղված էր եկեղեցական պաշտամունքով, արաբները բացին բերդի դռները և սուրացին թշնամու վրա: Անսպասելի հարձակումով պարտության մատնեցին կայսերական զորքը և ի փախուստ դարձրին: Միքայել կայսրը հազիվ ճողոպրեց, թողնելով իր վրանը և գույքը հաղթական թշնամուն ավար[1]:

Երկու տարուց հետո Օմարը դարձյալ ասպատակեց երեք բյուր զորքով: Վարդը հավաքեց Թրակիայի, Մակեդոնիայի և Ասիական թեմերի զորքերը, քառասուն հազարանոց մի բանակ, և շարժվեց թշնամու դեմ: Մելիտինեի ամիրը Սեբաստիայի գծով գնում էր դեպի ծովափ Ամիսոսի (Սամսոնի) շրջանը: Նրա առաջը կտրելու համար Վարդը եկավ և բանակեց Դազիմոնի մոտ (այժմ՝ Թոկատ) Կելլարիոն կոչված դաշտում: Շուտով հասավ և Օմարի բանակը և դիրք բռնեց Դազիմոնից քիչ արևմուտք Զելա քաղաքի մոտ Խոնարիոն ասված վայրում: Կայսերական գնդի դրությունը վտանգված էր: Պարտության դեպքում չպիտի կարողանար նահանջել, ճանապարհը կտրված էր արևմուտքից:

Առաջին բախումից հետո կայսրը հետ քաշվեց վեց մղոն և օրվան տապից նեղված բարձրացավ մոտիկ բլուրը, Անզես (կամ Անզեն): Ամիրի զորքերը անմիջապես շրջափակեցին բլուրը: Կայսրի կյանքը վտանգի մեջ էր: Ահա մի օրհասական բլուր, ուր որոգայթի մեջ էր ընկել Միքայելի հայր Թեոփիլոսը 838 թվի արշավանքին և փրկվել շնորհիվ Մանուել զորավարի անձնվեր քաջության: Այժմս կրկնվում էր նույն աղետը և ազատարարը նորեն նույն արիասիրտ զորավարն էր: Միքայելը ի տես իր հուսահատ դրության ձայնեց.

«Ո՛վ Մանուել, ի՞նչ պիտի անենք, տե՛ս, կորչում ենք»:

Հայ զորավարը պատասխանեց. «Հանի՛ր, տե՛ր, ծիրանի տաբատդ, որ մատնում է կայսերական անձիդ ով լինելը, և հագի՛ր սևը, հանի՛ր, քեզնից

[1] **Genesius**, 91; **Theophanes Continuatus**, 176, հրատ. Bonn.

նաև կայսերական սպառազինությունդ: Ես կառնեմ հինգ հարյուր ընտիր, կտրիճ զինվոր, կճեղքեմ թշնամու գիծը և այս կերպ կփրկվենք»:

«Իսկ զո՞րքը, հարցրեց կայսրը, ի՞նչ կլինի նրա վիճակը»:

Մանուելն ասաց. «Կայսերական մեծությունդ ինչ կերպ և լինի պետք է, որ ազատվի և գերի չընկնի թշնամու ձեռքը: Եթե այս պատահի, վա՛յ քրիստոնեության: Ինչ վերաբերում է զորքին, կանենք ինչ որ Աստուծու կամքը սահմանել է»:

Մանուելն ընտրեց հինգ հարյուր հոգի քաջ զինվոր, ամբողջ ուժով ընկավ թշնամու գծի մի կետի վրա, և գոչելով «Փրկչի խաչը հաղթող է», պատռեց շարքերը և անցավ անվրեպ և անվնաս:

Սակայն, մեծապես զարմացավ, երբ հետ նայելով տեսավ, որ կայսրը չէ հետևել իրեն, այլ երկյուղից մնացել է կառչած տեղը: Անծնուրաց զորավարը ստիպված էր հետ դառնալ, նորեն ճակատել թշնամու դեմ, և աջ ու ձախ դիակներ սփռելով ճանապարհ հարթել դեպի կայսրը: Այս անգամ դժվար չէր հանել Միքայելին իր արշիլարանից: Արևի կիզիչ ճառագայթները, ջրի և խոտի պակասությունը նեղում էին արաբներին և հարկադրեցին նրանց քաշվել հարևան Դորա անուն մարգագետինը: Կայսրը կարող էր անարգել ելնել թշնամու օղակից և փախչելով ամբողջ օրը ազատվեց կորուստից:

Երկու տարի ևս անցավ: Միևնույն համառ թշնամին Օմար ամիրը քառասունհազարանոց բանակը վարեց դեպի Արմենիակյան թեմը և հասավ մինչև Ամիսոսի ծովեզրը: Զայրացած, որ ծովը խոչընդոտ էր իր հառաջխաղացման, արաբ իշխանը, նոր Քսերքսես ձևանալով, հրամայեց ծեծել ջուրը, որ հանդգնել էր կասեցնել իր արշավը:

Միքայել կայսրը լսելով անհանգիստ հակառակորդի նոր ասպատակությունը, հառաչեց. «Վա՛յ ինձ,- կրկնում էր ստեպ,- մի՞թե չկա մեկը, որ մեր թագավորության և քրիստոնեության սիրուն համար գնա և ջարդե այս անողորմ և ամբարիշտ անհավատին»:

Այս խոսքի վրա հառաչ եկավ հայազն զորավար Պետրոնասը, կայսրուհու եղբայրը և ասաց. «Տեր, մեծափառ տերությանդ Աստված տվել է շատ և շատ հպատակներ, որոնք սիրում են քեզ ջերմ սիրով և լի են բուռն ցանկությամբ մեռնել քո սիրուդ համար: Պատերազմը, հայրկավ, մերթ հաջող է լինում, մերթ ձախորդություններ են պատահում: Ոչ ոք չի կարող գուշակել, թե ելքը հաղթական կլինի, բայց եթե ոչ կամիւապետ Աստվածը»:

Կայսրը պատասխանեց. «Դնա, Պետրոնաս, դիմագրավե՛ թշնամուն և վտանգի՛ր անձդ, քրիստոնեության և իմ թագավորության սիրուն»:

«Պատրաստ եմ, արքա՛յդ իմ, -ասաց Պետրոնասը, թափել արյունս մինչև վերջին կաթիլը թագավորությանդ և հավատակիցներիդ համար»:

Կայսրը ոգի առավ: Իսկույն նեթ Պետրոնասին նշանակեց սքոլների

դոմեստիկոս, այսինքն՝ պալատական կանոնավոր և հեծյալ գնդերի զորապետ: Պետրոնասի ծրագիրն էր սակավաթիվ, բայց ընտիր ուժերով արագորեն հարձակվել թշնամու վրա և մի հարվածով ջախջախել նրան: Սակայն, մի փախստական հոռոմ հայտնեց ամեն ինչ ամիրին և նախազգուշացրեց, որ Պետրոնասը մեծ զորքով գալիս է նրա դեմ:

Ամիրի մերձավորները խորհուրդ տվին նահանջել խոհեմաբար և, եթե Պետրոնասը հետապնդեր, այն ատեն միայն ճակատել նրա դեմ: Ամիրը վանեց այս վեհերոտ առաջարկը և շարժվեց Ամիսոսից և բանակ զարկեց Պոսոն (կամ Պոսոնտա) վայրում, որ գտնվում էր Արմենիակյան թեմի և Պափլագոնիայի սահմանագծի վրա:

Պոսոնի տեղը ստուգիվ հայտնի չէ: Պատմագրի ցուցումը, թե հինգ հարյուր մղոն հեռու էր Ամիսոսից, սխալ է, գոնե անհարուչ է իր իսկ վկայության, թե Պոսոնը Պափլագոնիայի սահմանումն էր: Ամիսոսից (Սամսոնից) Պափլագոնիա 500 մղոն չի կարող լինել: Հավանորեն գրչագրի վրիպակ կա. (արդյոք հույն φ (= 500) տառի փոխարեն կարդալու չէ ρ (= 100): Հայտնի է միայն, որ Պոսոնը Ալիս գետի ձախ ափին էր:

Նույն տեղն էր բանակել և Պետրոնասը: Երկու բանակները բաժանված էին միմյանցից մի բլրով: Պետրոնասը հաջողեց գիշերային մի գրոհով գրավել բլուրը և ամուր դիրք բռնել: Սրանով արդեն նախորոշված էր պատերազմի հետևանքը: Կատաղի ճակատամարտում արաբները գլխովին պարտվեցին, գոռ ամիրը սպանվեց, իր որդին փորձեց փախչել, բայց Խարսիան թեմի պետը՝ ոմն Մախիրաս բռնեց նրան և հանձնեց Պետրոնասին[1]:

Արաբները այսպիսի ջարդ դեռ չէին կերել: Հաղթությունը վճռական էր և արդյունք Պետրոնասի ռազմագիտության: Հակառակ սկզբնական ծրագրին, Պետրոնասը գումարեց գրեթե բոլոր զորաբանակները և շրջապատեց թշնամուն: Արմենիակյան, Բուկելլարյան, Կոլոնիայի և Պափլագոնիայի գնդերը կտրեցին հյուսիսային կողմը: Անատոլիկյան, Օփսիկյան և Կապպադովկյան թեմերի սպարապետները, այլ և Սելևկիայի և Խարսիանի կլեսուրարխները (կապանապետները) իրենց ուժերով՝ հարավային կողմը: Կայսերական չորս գնդերը, Թրակեսյան, Թրակյան և Մակեդոնական զորքերի հետ Պետրոնասի հրամանատարության տակ՝ արևմտյան կողմը: Արաբները երկաթե օղակի մեջ էին. արևելքից բնական արգելք էր Ալիս գետը: Օմարը, ինչպես թակարդում փակված գազան, ելք էր որոնում: Հուսաբեկ եղավ մանավանդ, երբ գերիներից մեկին հարցրեց տեղի, դաշտի և գետի անունը և նա ասաց, տեղի անունն է **Պոսոնորա** (փոխանակ Պոսոնտա), գետի անունը՝ Լալակաոն և դաշտինը՝ Գյուրին:

[1] **Genesius**, 94-97.

Ամիրը նախազգաց, որ առաջին անունը ակնարկում է իր անկումը (**ptosis**) երկրորդը՝ իր զորքի փչացումը (**Laou Kakosiv**) և երրորդը՝ զորքի շրջապատումը հոռոմներից (**Juristhenai**). ժողովրդական բառախաղ է: Օմարը տեսավ, որ ուրիշ ճար չունի, քան ճակատ մտնել և չափել իր ուժերը Պետրոնասի հետ: Բայց շուտով դառն փորձերը համոզեցին նրան, որ անհնար էր պատռել շրջապատող զինվորական ամուր պատնեշը և խույս տալ կռվից: Սկսվեց մարտը և գոռոզ արաբը գերադասեց ընկնել սուրը ձեռքին: Որդին փորձեց փախչել, բայց ձախողեց և գերվեց:

Այսպես՝ Վարդի իշխանության միջոցին երեք արշավանք տեղի ունեցավ արաբների դեմ երկամյա ընդմիջումներով[1]:

Արաբական աղբյուրներից հայտնի է, որ Պոսոնի ճակատը սեպտեմբերի 3-ին էր 863 թ.: Հետևապես մյուս երկու արշավանքները պետք է կատարված լինեին 859 թվին և 861 թվին:

Արաբական աղբյուրներից երևում է, որ Վարդի օրով բյուզանդացիք երկու անգամ են արշավել Սամոսատ:

Առաջին արշավանքը վերաբերում է հիջրի 242 թ. (որ է 856 թ. մայիսի 10 սկսած մինչև 857 թ. ապրիլի 29): Ալի իբն Յահյա զորավարի ամարային ասպատակությունից դրդված կայսերական զորքերը հակահարձակումով հասան մինչև Սամոսատ քաղաքը, անցան Ամիղի մոտերքը, դարձին մտան Տեվրիկ (այժմ՝ Դյուրիկ) քաղաքը, որ պավլիկյան աղանդավորների առաջնորդ Կարբեասի նստոցն էր:

Կարբեասը և Օմարը, Մելիտինի ծանոթ ամիրը, նրանց ետևից ընկան, բայց չկարողացան հասնել: Արաբների ամարային ասպատակությունը սկսվում էր սովորաբար հուլիսի 15-ից հետո և հառաջ, քան 15 սեպտեմբերի: Սամոսատի արշավանքը կատարված պիտի լինի հետևապես ամառվան վերջը 856 թվին:

Երկրորդ անգամ Սամոսատի վրա արշավեցին հիջրի 245 կամ 859-860 տարին: Բյուզանդացիք ավերումներ գործեցին և դարձան 500 մարդ գերելով[2]:

Բյուզանդական հիշողության մեջ այս երկու արշավանքները ձուլվել են ի մի: Եթե արշավանքի ժամանակ Վարդը կյուրապաղատ էր, ինչպես վկայում է Թեոփանես պատմագիրը (Շար., 176), նշանակում է խոսքը 859 թվի արշավանքի մասին է, քանի որ Վարդի կյուրապաղատությունը 858 թվից էր, իր անձի դեմ ուղղված մահափորձից հետո, ինչպես տեսանք վերև:

Սակայն նույն պատմագիրը հավատացնում է, որ Սամոսատի կռվին

---

[1] Նկատելու է, որ Գեննեսիոսի (91, 94) «երկու տարի հետո» խոսքերը մյուս պատմագիրը, Թեոփանես Շար. (177, 179) փոխում է՝ «երկրորդ տարին», առանց հիմքի:

[2] **Վասիլև**, Բյուզանդիա և արաբներ (ռուսերեն), էջ 54-55:

թշնամու բանակումն էր Կարբեասը, որ մեծամեծ նշաններ ցույց տվավ քաջության և գերեց ավելի քան հարյուր սպաներ, որոնց թվում և Աբեսալոմ (Աբիսողոմ) և Սիոն զորավարները. **tzangotoubos** է կոչվում առաջինը և **palatinos** երկրորդը, որ անհայտ տիտղոսներ են[1]:

Տեսանք, որ արաբական տեղեկությամբ Կարբեասը մասնակցել էր Սամոսատի առաջին արշավանքին 856 թվին և ոչ թե երկրորդին, ինչպես ներկայացնում է բյուզանդացի պատմագիրը: Ասել է, թե երկու արշավանքները շփոթված են և ձուլված:

Արաբական աղբյուրներից չի հետևում, որ կայսերական զորքերը պարտված լինեն Սամոսատի պաշարման ժամանակ, ինչպես հաղորդում են բյուզանդացիք բավականին անհեթեթ պատճառաբանությամբ, անհաջողությունը վերագրելով ժամերգության: Առանց արաբական տվյալների ևս կարելի էր կասկածի տակ առնել այդօրինակ փաստաբանությամբ հերյուրած զրույցը: Քաղաքը պաշարված էր զորքերի կողմից և կայսրի անձնական ներկայությունն այնքան կարևոր հանգամանք չէր զինվորական տեսակետից, որ նրա բացակայությամբ, այն էլ ժամերգության առթիվ, պաշարված քաղաքի բախտը փոխվեր:

Հիրականին մենք գործ ունենք մի բարուրանքի հետ, որ նպատակավոր է, թեև զուրկ հնարամտության շնորհից: Այն շինված է ի հեճուկս Վարդի: Հաջողակ պաշարումը փոխելով ծախորդության ուզեցել են ընտմացնել Վարդի անունը, զլացել են հաղթական պսակ հյուսել նրա գլխին:

Նույն միտումը նկատելի է նաև Դազիմոնի կռվի պատմության մեջ: Միքայել կայսրը վտանգի մեջ էր: Նրան ազատելու համար բեմ է հանվում հանկարծ Մանուել զորավարը: Ոչ մի խոսք Վարդի մասին: Մանուելը, որ տակավին 813 թվին Արմենիակյան թեմի սպարապետն էր, Դազիմոնի արշավանքի ժամանակ լինելու էր 75-80 տարեկան ծերունի: Դժվար թե կարելի է վերագրել այսպիսի մի զառամ հասակի այն շահատակությունը, որի շնորհիվ փրկվեց Միքայելը: Թող որ անգամ տարակուսական է, արդյոք կենդանի էր այդ ժամանակ Մանուելը: Անտեսելու չէ այն վկայությունը, որի համաձայն Մանուել մեռել էր այն վերքից, որ ստացել էր Թեոփիլոս կայսրին նման փորձանքից ազատելու ժամանակ: Այս վկայությունը, որքան և տկար, ամեն պարագայում ցույց է տալիս, որ Մանուելի կյանքը շատ էլ երկարատև պետք չէ եղած լիներ: Մոռանալու չէ նաև, որ Դազիմոնի դեպքը ավելի դյուրին է ժխտել, քան պաշտպանել: Պարզ կրկնություն է Թեոփիլոսի հայտնի արկածի: Եթե անգամ եղելություն համարենք այդպիսի մի օրհասական զուգադիպություն, իրավունք ունենինք փրկարարի դերում տեսնելու ոչ թե Մանուելին, այլ Վարդին, որ Միքայելի հավատարիմն էր, մշտական ուղե-

[1] **Theoph. Contin.**, 176-177.

կիցը և անբաժան ընկերը տանը, թե արշավանքներին: Մանուելի անունը մեջ է բերված լոկ այն դիտավորությամբ, որ նրանով վարագուրվի Վարդի խիզախությունը, իրական թե վիպական:

Զարմանալի է, որ արաբ աղբյուրները չեն հիշատակում Դազիմոնի արշավանքը: Նրանցից գիտենք, որ հիջրի 246 թվին = 860 թ. մարտի 28 - 861 թ. մարտ 16, Մելիտինի ամիր Օմարը պավլիկյան Կարբեասը, Ալի իբն Յահյա և ուրիշները ասպատակեցին առանձին-առանձին կայսերական հողերը և գերիներով ու ավարով դարձան իրենց տեղերը: Օմարը հանեց մոտ յոթ հազար գերի, Կարբեասը՝ հինգ հազար, Ալին՝ ևս հինգ հազար գերի և տասն հազար գրաստ[1] (1):

Նույն 860 տարին էր, որ ռուսները առաջին անգամ երևացին Բյուզանդիոնի առաջ: Երկու հարյուր նավով անցան Սև ծովը, մտան Վոսփորը, սկսեցին ավերումներ գործել և սպառնալ մայրաքաղաքին: Այժմ արդեն հաստատված է, որ ռուսների արշավանքը դնելու է ոչ 866 թվին, ինչպես կարծվում էր հառաջ, այլ 860 թվին, համաձայն վերջերս հայտնված պատմական հիշատակարանի անսուտ վկայության: Անցքը տեղի է ունեցել արարչության 6368 թվին, ինդիկտիոնի 8 և Միքայելի 5-րդ տարին, հունիսի 18-ին[2]: Միքայելի կառավարությունը հաշված է նրա միապետության տարուց, այսինքն՝ 856 թվից, Թեոկտիստոսի սպանությունից: Մյուս թվերը համերաշխ են, 6368 հավասար է 860 թվին, ինչպես և ինդիկտիոն 8:

Արդ ռուսների հարձակման պահին Միքայելը բացակա էր մայրաքաղաքից: Վարդի ընկերակցությամբ ուղի էր ընկել դեպի Արևելք արաբների դեմ: Արդեն հասել էր Մավրոպոտամոն, որ Կեսարիայից հյուսիս Ալիս գետի հովտումն էր գտնվում, երբ լսեց ռուսական աղետի գոյժը: Անմիջապես կայսրը վերադարձավ մայրաքաղաք վանելու հանդուգն թշնամուն, վերադարձավ առանց «արքայավայել գործ» կատարած լինելու արաբների հանդեպ[3]:

Արդյոք Միքայելի արշավանքը պատասխան էր Օմարի, Կարբեասի և Ալի իբն Յահյայի նույն 860 թվի ամառվան ասպատակություններին, թե՞ ընդհակառակը, նախահարձակը կայսրն էր եղել, մնում է մութ:

Միքայելի այս ընդհատված ձեռնարկը չի կարելի նույնացնել Դազիմոնի արշավանքի հետ: Եթե չենք ուզում ուրանալ վերջինս գոյությունը, որ անխոհեմություն կլիներ, պետք է ընդունենք, որ Դազիմոնի ճակատը տեղի է ունեցել հետևյալ 861 տարին, համաձայն վերև հիշված պատմական ցուցումին:

Դեռևս հնում կարծում էին, որ Վարդը մասնակից էր Պոսոնի հաղթական ճակատամարտին, երբ հրամանատարն էր իր եղբայր Պետրոնասը, և

[1] **Վասիլև**, Բյուզանդիա և արաբներ (ռուսերեն):

[2] **Cumont**, Anecdota Bruxellensia, I, Chroniques Byzantines.

[3] **Georgius**, 326 (հրատ. Bonn).

որպես թե այս մասնակցության համար էր, որ կայսրը վարձատրեց Վարդին, նշանակելով նրան կեսար ինդիկտիոնի 10-ին, Զատկի օրերին, ավելի ստույգ, Նոր Կիրակիին[1]:

Սակայն ինդիկտիոնի 10 հավասար է 862 թվին: Զատիկը այդ տարին ապրիլի 19-ին էր և ուրեմն Նոր Կիրակին՝ մի շաբաթ հետո ապրիլի 26-ին: Իսկ տեսանք, որ Պոսոնի կռիվը պատահեց 863 թվին սեպտեմբերի 3-ին: Հետևապես, Վարդն արդեն կեսար լինելով այդ ժամանակ, չէր կարող կռվի հետևանքով ստանալ կեսարության պատիվը:

Անկախ այս շփոթությունից, պատմագրի վկայությունն ինքնին ուշագրավ է այն մտքով, որ Վարդի կեսար նշանակվելը կապվում է պատերազմական ծառայության հետ: Ո՞րն էր այդ ծառայությունը: Իրավունք ունենք կարծելու, որ խոսքը վերաբերում է Դազիմոնի ճակատամարտին, ուր Միքայել կայսրի կյանքը կախված էր մազից: Եվ ի՞նչ կասկած, որ այն անձը, որ ինքնազոհ արիությամբ փրկեց նրան մահից Մանուելը չէր, այլ Վարդը: Ճիշտ այս անձնվիրության համար էր, որ հայ զորավարն արժանացավ կայսերական գահը ժառանգելու մեծ պատվին, հռչակվելով կեսար, հաջորդ անզավակ Միքայելի:

Մուտավաքիլ պատերազմասեր ամիրապետը մեռավ 861 թվի վերջերին: Գուցե կայսերական կառավարությունը օգտվելով Բաղդադի խառնակ դրությունից պատերազմ էր հայտարարել 862 թվի սկիզբներին: Արդյո՞ք այս ժամանակ չէր Դազիմոնի կռիվը և Միքայելի դեպքը: Վարդը այս առթիվ կեսարության հասնելով, զիջեց իր պաշտոնը, պալատական այրուձի գնդերի դոմեստիկությունը, Պետրոնասին: Իբրև այդպիսին Պետրոնասը ստանձնեց ընդհանուր հրամանատարությունը 863 թվին Պոսոնի արշավանքին:

Վարդին ավելորդ անգամ խայթելու համար, նենգամիտ պատմագիրը ուզում է հավատացնել, որ Վարդը անհագ տենչ ուներ «ամեն ինչ լափելու, իրեն քաշելու», ուստի և սքոլաների դոմեստիկոս նշանակել տվավ իր մանկահասակ որդուն, Անտիգոնոսին, որ հազիվ 9-10 տարեկան էր: Իսկ Պետրոնասին նշանակեց ժամանակավոր փոխանորդ Անտիգոնոսին[2]: 863 թվի հաղթությունից հետո միայն Պետրոնասը տիրացավ նույն պաշտոնին կայսեր հրամանով[3]:

Իրողությունն այն է սակայն, որ Վարդի հաջորդը դոմեստիկության պաշտոնում եղավ Պետրոնասը և հաղթական արշավանքից հետո վարձատրվեց մագիստրոսության պատվով[4]:

---

[1] **Genesius**, 97. Զատկին, իսկ **Georgius**, 824, Նոր Կիրակի:

[2] **Theoph. Contin.**, 179-180.

[3] Նույն, 183:

[4] **Genesius**, 95, 97.

Պատերազմից հառաջ Պետրոնասը մի տեղեկությամբ Թրակեսյան թեմի ստրատեգ էր, մյուս տեղեկությամբ Անատոլիայի, այսինքն՝ Անատոլիկյան թեմի[1]: Հիմք կար կարծելու, որ Պետրոնասը տակավին 860 թվին պալատական կարևոր պաշտոնյա էր: Միքայել կայսրը 859 թվին մայիս ամսին ուղարկեց արաբների մոտ ոմն ծերունի Ատրուբիլիս (հավանորեն, Կոստանդին Տրիփիլիոս), որպեսզի բանակցե գերիների արձակման մասին[2]: Արաբների կողմից մայրաքաղաք եկավ նույն հանձնարարությամբ Նասր անունով արաբ դեսպանը (2):

Նասրը թողել է մեզ իր ընդունելության նկարագրությունը: Երբ արաբը սևազգեստ, փաթեթը գլխին, սուրը և դաշույնը կապած, եկավ պալատ և կամեցավ այդպես ներկայանալ կայսեր, Պետրոնասը չթողեց, առարկելով, որ օրենք չէ այդ կերպ մոտենալ կայսեր, այլ պետք է սև զգեստը փոխել և սպառազինությունը մերկանալ: Նասրը բողոքեց և գերադասեց հեռանալ: Պետրոնասը հետ կանչեց նրան, զիջանելով խալիֆի ներկայացուցչին: Նասրին քիչ սպասել տվավ, որովհետև կայսեր մոտ ունկնդրության էր բուլղարական դեսպանությունը, ապա հրավիրեց ներս: Կայսրը բազմած էր գահի վրա, պատրիկները շրջաբոլոր, և առաջին՝ կանգնած երեք թարգմանիչ: Նասրին նստեցրին կայսրի դեմ հանդիման գահի վրա, որի առաջ դրված էր իր բերած նվերները՝ հազար սրվակ մուշկ, մետաքսե զգեստեղեն, շափրան և թանկարժեք գոհարներ: Բանակցությունը վարում էր կայսեր ներկայության նրա քեռին: Նասրը հավատացնում է, որ ամբողջ ժամանակ ոչ մի խոսք չլսեց կայսրից: Սա բնավ չէր խոսում, այլ իր հավանությունը կամ մերժումը հայտնում էր գլխի շարժումով: Քեռին էր, որ տնօրինում էր գործերը:

Նասրը կատարեց իր առաքելությունը ամենայն հաջողությամբ քառամսյա աշխատությունից հետո: Գերեփոխությունը կայացավ 860 թվին մարտ ամսին:

Այդ պահին Պետրոնասը պալատում պաշտոն ուներ: Նասրը անվանում է նրան Միքայելի քեռի: Այդպես է կոչում նաև այն անձին, որ վարում էր բանակցությունը կայսեր անունով և նրա ներկայության: Արդյո՞ք խոսքը նույն Պետրոնասի մասին է, թե վերաբերում է Վարդին: Ի նկատի ունենալով այն դիրքը, որ վայելում էր պալատում Վարդը որպես Միքայելի մեծազոր մինիստր, հավանական է կարծել, որ բանակցողը Վարդն էր և թերևս նրա անունը ընկած է Նասրի հիշատակարանից և կամ շփոթված Պետրոնասի հետ, քանի որ երկուսն էլ կայսեր քեռիներն էին:

Պետրոնասին վերագրած դերը ներում է ենթադրել, որ նա սքոլաների դոմեստիկոս պիտի լիներ տակավին Նասրի ժամանակ: Այս դեպքում ստիպ-

[1] **Theoph. Contin.**, 179; **Georgius**, 825.

[2] **Ibid**, 122.

ված ենք ընդունել, որ Պետրոնասը դոմեստիկոս նշանակվեց այն պահին, երբ Վարդը բարձրացավ կյուրապաղատության աստիճանին, այն է՝ 857-855 թվերին:

Այս մանրամասնություններն ավելորդ բծախնդրություն չեն: Դոմեստիկոսությունը կամ պալատական հեծելազոր գնդերի, պետական միակ կանոնավոր զորքի հրամանատարությունը մի բարձր և պատասխանատու պաշտոն էր, որ հանձնվում էր միշտ կարող և առաջնակարգ անձերի: Այն հանգամանքը, որ դոմեստիկոս էր կարգված Պետրոնասը, ցույց է տալիս, որ նա բնավ հետին դեմքերից չէր: Մինչդեռ ոչ միայն հին, այլև նոր ժամանակվան հեղինակները դժվարանում են բարի խոսք ասել նրա հիշատակին, մինչև իսկ նվաստացրել են նրա գործերը պարսավելի ջանքով: Պոսոնի նշանավոր հաղթությունը 863 թ. Պետրոնասի սխրալի գործն էր: Եթե ուրիշ վաստակ չունենար, այս արդեն բավ էր ոլորելու նրա ճակտին անթառամ պսակ: Սովորական հաղթություններից չէր: Պոսոնը պատմական խոշոր երևույթ էր: Զինական երկարատև և փոփոխ մրցությունից հետո, առաջին անգամն էր, որ բյուզանդական զենքը գերիվերո փայլեց ռազմական ուժի և մանավանդ արվեստի առավելությամբ: Պետրոնասը կարողացավ արաբական բանակը ցանցի մեջ ձգել և ահեղ հարվածով ջարդել իսպառ: Կործանվեցին երեք մարտագոռ զորավարները, որոնք տարիների ընթացքում կատարյալ պատուհաս էին դարձել պետության համար: Օմարը և Կարբեասը ընկան Պոսոնի կռվում, իսկ Ալի իբն Յահյա սպանվեց մի ամիս հետո Նփրկերտի (Մուֆարղին) մոտ խոնվելով կայսերական զորքերի հետ, որոնք հաղթությունից հետո հառաջացել էին և մտել արաբական հողերը: Առաջին երկուսը ընկան 863 թ. սեպտեմբերի 3-ին (3), իսկ Ալին՝ ռամադան ամսում, որ է հոկտեմբերի 18-նոյեմբերի 16:

Պետրոնասի հաղթությունը սրբեց այն արատը, որ ծանրանում էր բյուզանդական անվան վրա Ամորիայի անփառունակ պարտությունից հետո: Սթափեցրեց արաբ աշխարհը և ապահովեց Արևելքի խաղաղությունը ընդերկար[1]: Պետրոնասը վերադարձավ մայրաքաղաք փառքով, տանելով իր հետ Օմարի գլուխը, այդ մեռյալ վկան իր կենդանի հաղթության: Չարակամ պատմագիրները լավ են համարել մունջ կենալ այն մեծ ընդունելության մասին, որ ցույց տված պիտի լինի մայրաքաղաքը հաղթական զորավարին: Դիպվածաբար պահվել է մի տեղեկություն, որից երևում է, որ կրկեսում մեծ հանդեսներ են տեղի ունեցել, ժողովրդական ցույցեր եղել: Եվ ինչ որ հետաքրքրական է իր նորությամբ, հատուկ երգ է հորինված եղել հզոր ամիր Օմարի սպանության առթիվ[2]:

---

[1] **Georgius**, 825,

[2] **Const. Porphyrogenetes,** De Cerimon., I, 332.

Կայսրը մեծարեց օրվան հերոսին, Պետրոնասին, մագիստրոսության պատվով, որ կյուրապաղատությունից հետո ամենաբարձր աստիճանն էր: Ժողովրդական երևակայությունը պարուրել է Պետրոնասի մահը առասպելի հրաշազան քողով: Պատմում են, որ պատերազմից հառաջ նա գնացել էր Հովհաննես անունով մի ճգնազգյաց և սրբակրոն վանականի մոտ, որ նոր էր հաստատվել Եփեսոսի շրջակայքում, Սուրբ Լեառն կոչված բարձրության վրա: Զորավարը խնդրել էր նրան աղոթել և մաղթել հաջողություն: Միայնակյացը գուշակել էր հաղթություն այն պայմանով, որ Պետրոնասը զորքի ասպարների վրա նկարել տա իր՝ Հովհաննեսի, պատկերը որպես մի տեսակ պահպանիչ հուռութք (թլիսիմ): Պատմում են, որ կռվից դառնալով Պետրոնասը հիշեց սուրբ հորը և գնաց շնորհակալություն հայտնելու, գովելով և ամենուրեք հռչակելով նրա անունը որպես մարգարե: Ճգնավորը ասաց Պետրոնասին, որ իր՝ ճգնավորի, վախճանը մոտեցել է և շուտով պիտի թողնե այս աշխարհը: Պետրոնասը վշտացավ և ասաց.

«Ինչպես ես թողնում ինձ, գառնդ, այս աշխարհում, ով սիրելիդ իմ հովիվ. վախենում եմ, որ առանց քեզ գլորվեմ նախկին զառիթափով և վերջս ավելի վատ լինի, քան հառաջ էր»:

Վանականը ասաց. «Կ'ուզես, հետևիր ինձ»:

«Ուրախությամբ», - պատասխանեց Պետրոնասը:

Այնուհետև հիվանդացավ Պետրոնասը և տուն դառնալով պատմեց իր զրույցը վանականի հետ, հայտնելով որ մոտ է իր վախճանը: Շատ չանցավ, մեռավ կանխատես սուրբ հայրը, մեռավ նաև Պետրոնասը: Մահն այնպես տարավ երկուսին, որ մեկը մյուսի վախճանի լուրը չառավ:

Ի՞նչ է այն զառիթափը կամ սայթաքումը, որ անհանգստացնում էր Պետրոնասին, մնում է մութ: Վանականի խորհուրդը, որ Պետրոնասը կրե նրա նկարը ասպարի վրա, կարծես թե մի խուլ ակնարկ է զորավարի պատկերամարտության: Այս մեկնությամբ Պետրոնասի երկյուղը հասկանալի կդառնա: Հայ զորականը վստահ չէր, որ վանականի մահից հետո նորից չէր ուրանա պատկերների զորությունը և սրբությունը:

Այս ցույց է տալիս, որ հայ գործիչների դիրքը պատկերների խնդրում առանձին վստահություն չէր ներշնչում անգամ պատկերապաշտության վերահաստատումից հետո: Պատմագիրների վճռական հավաստիացումները, որ Թեոդորայի ընտանիքը և մերձավորները մոլեռանդ պատկերապաշտներ էին, ամեն պարագային չի կարելի ընդունել առանց վերապահության:

Այսպես է ներկայանում Պետրոնասը պատմական տվյալների ճշմարիտ լուսաբանությամբ:

Տարօրինակ է տեսնել, որ նոր ժամանակների գիտունները ոչ միայն որդեգրել են հների կանխակալ կարծիքները, որ դժվար չէ հերքել նրանց իսկ

տված փաստերով, այլ հնարավոր են գտել ավելի ևս շեշտել ժխտական վերաբերումը բացեիբաց կամածին ենթադրություններով:

«Պետրոնասը ռազմիկ(?) չէր, - ասում է նրանցից մեկը, - բայց թափուր չէր խոհեմությունից: Նա առավ իր Նասարին որպես խորհրդատու, որ Գաղատիայի կառավարիչն էր և ավելի վարժ(?) պատերազմական գործողությունների, քան ինքը. և նրան մասնակից արեց հրամանատարության: Անտարակույս(?) նրա խորհուրդովն էր, որ Պետրոնասը գերադասեց կազմ զորքը բազմաթիվ զորքից և տարավ իր հետ միմիայն ընտիր և քաջամարտ զինվորներ»:

Պատմագիրը ասում է միմիայն, որ Պետրոնասի հետ էր նաև Բուկելլարյան թեմի ստրատեգ Նասարը[1]: Ուրիշ ոչինչ:

Ֆրանսիացի պատմաբանի հավելումները պատվաբեր են գուցե իր երևակայության, բայց ոչ ճշմարտասիրության: Պոսոնի ճակատում Պետրոնասի հրամանատարության տակ էին գտնվում կայսերական բոլոր թեմերի ստրատեգները և նրանց թվում Բուկելլարյան թեմի: Նասարի անունը հիշված է միմիայն նրա համար, որ հետագայում ևս հիշատակվում է:

Պատմական վկայությունը ամեն պարագայիս հիմ չի տալիս պարապ ենթադրությունների, որ Նասարը կարող մարտիկ ուժ էր և այն էլ բարձր Պետրոնասից և նույնիսկ նրա խորհրդատուն:

* * *

Պետրոնասից ավելի վաստակավոր և անհամեմատ բարձր էր իր երեց եղբայրը, Վարդը, որքան բարձր, այնքան առավել վատաբանված նույն պատմագիրների կողմից:

Այս վատաբանությունից իսկապես բամբասանքի երևույթ ունի, քան լուրջ ամբաստանության: Արձակված թունավոր սլաքները մնում են խոսքի, լեզվական եռանդի սահմաններում, անկարող անցնել և խոցել այս նշանավոր պետական մարդուն իր գործունեության մեջ: Երևում է, որ անվանարկումի ջանքերը հստակ համոզումի և կամ իրականության համակերպ մտածումի արդյունք չեն, այլ կողմնակի թելադրանքի ստիպողական մի հարկ, ինչպես կբացատրենք ստորև:

Վարդը առաջին դեմքն էր և միակ պատասխանատու անձը Միքայելի կայսրության ժամանակ, որպես նրա խնամակալ կամ ավելի ճիշտ, առաջին մինիստր: Միքայելը լոկ անունով էր կայսր: Ո՛չ ընդունակություն ուներ և ո՛չ ցանկություն զբաղվելու պետական գործերով: Զվարճությանց և խրախճանքների մարդ էր: Մանուկ հասակից անձնատուր էր ցոփ և անառակ կյանքի և, եթե բարի սերմեր էին եղել ի բնե նրա մեջ, խեղդվել էին

[1] **Georgius**, 828,

չվայտության և ախտավոր հակումների մեջ: Պետության բախտը թողել էր իր քեռուն՝ Վարդին, տածելով անհուն վստահություն և հավատ նրա հմտության:

Վարդն օժտված էր անպայման այն հատկություններով, որ պահանջում էր իր բարձր դիրքը: Թշնամի գրիչներն անգամ վկայում են, որ նա վարչական մեծ ձիրք ուներ, չեն ուրանում, որ իրավախոհ էր և արդարադատ: Անկաշառ մարդու համբավ ուներ: Հպարտ էր իր ուժի և արժեքների գիտակցությամբ և բավականին իմացական, որ խոհեմության չափերը պահեր: Կեսար էր, թագի մոտալուտ ժառանգորդ, և գիտեր, թե ի՞նչ է նշանակում ամբոխի աչքում իշխանավորի շուքն ու շքեղությունը, ուստի և սիրում էր պերճություն և փառահեղ շրջապատ:

Այս գծերը թվում են մի առ մի պատմագիրները, երևի, օգտվելով անկողմնակալ և հին աղբյուրներից: Բայց գտնվելով որոշ ներշնչումների ճնշման տակ, աշխատում են գունատել, թուլացնել Վարդի նկարագիրն իրենց անձնական վերապահ նկատողություններով: Այսպես, Վարդի անկաշառությունը շեշտելուց հետո ավելացնում է պատմագիրը, որ այդ կեղծ էր, առերևույթ, չինծու *Ἐπίπλαστος*, որովհետև Վարդը ընչաքաղց էր և սիրում էր ձեռք բերել կալվածներ և թանկարժեք իրեր:

Վարդի խոհեմությունը ևս կասկածի տակ է առնվում: Պատմագրին թվում է, որ Վարդի այս հատկությունը ցուցական էր, դերասանական, այսինքն՝ նա միայն ձևանում էր խոհեմ, բայց իրոք այդպես չէր:

Վարչական կարողության առթիվ ուրիշ ավելի կծու բան չէ կարողանում ասել, քան այն, որ այս կետում Վարդը «ստոր էր լավագույններից»: Խոստովանում են, որ մեծ խնամք ուներ, մեծ աշխատանք էր թափում պետության վրա, բայց կարծում են նսեմացնել նրա եռանդը, ասելով, որ նա գործում էր իրեն համար, որովհետև կայսրության վրա նայում էր որպես իր սեփականության վրա, որին կոչված էր տիրանալու վաղ թե ուշ:

Հարկավ, այս կարգի խայթոցներով կարելի չէ բծավորել մի անուն, որն իր փայլի համար ունի ավելի վստահելի և պերճախոս վկաներ, որպիսիք են իր լուսաշավիղ գործերը, իր իսկ հակառակորդների գրչով արձանագրված:

Իր միահեծան տասնամյա շրջանում Վարդը վարեց պետական գործերը, *τὰ πολιτικά*, տնօրինեց տերության բախտը այնպիսի հմտությամբ և այնպես հաջողակ, որ տհաճության և բողոքի մասին խոսք չէր կարող լինել:

Եզակի է իր տեսակի մեջ նրա բեղուն գործունեությունը լուսավորության ասպարեզում և իրապես արժանի ամենայն գովեստի և հիացման: Քրիստոնեությունը կործանելով հեթանոս աշխարհայացքը չէր խնայել նաև հեթանոս գիտությունները և մտավոր խոշոր հանգումները: Ս. Գիրքն էր հայտարարվել իմաստության հստակ աղբյուր և նրա հեղինակությունը մի

ուժ էր, որի առաջ պիտի նահանջեին և թաքնվեին ձեռագրական պահարանների մեջ որոնող մտքի լավագույն վաստակները, հելլեն իմաստության ավանդները: Հին Կտակարանը, իհարկե, խոտելի գիրք չէ բնավ: Այն մի տեսակ ավազան է, ուր ամբարված են Արևելքի հին քաղաքակրթությանց հոսուն գետերից շատ ջրեր, պիտանի և ընդունակ հագեցնելու ծարավ ոգիներ: Սակայն, մարդկությունն արդեն թևակոխել էր հառաջադիմության նոր և հելլենական շրջանը, գերազանց, քան բոլոր նախընթացները: Հելլեն միտքը անբավ նվաճումներ էր արել գիտության բոլոր մարզերում: Հին Կտակարանի տեսությունները հնացած էին իրենց նախնական պարզության մեջ:

Քրիստոնեական եկեղեցու կողմից, անտարակույս հետադիմական քայլ էր, երբ Ավետարանի գինու հետ պարտադրեց աշխարհին նաև Մեռյալ ծովի անկենդան ջրերը: Այն օրից նվազեց, հյուծեց հույն իմաստասիրությունը և իր ամբիոնից իջնելով դարձավ աղախին աստվածաբանության: Մեռավ գիտության կենդանի շունչը: Ծաղկեց և ուռճացավ աստվածաբանության անպտուղ ծառը, չորացան հին փիլիսոփայության ատոք սերմերը: Դարեր շարունակ մարդկային քննական և հառաջխաղաց միտքը մնաց շղթայված կրոնական նախապաշարումներին ստրկական նկուն վիճակի մեջ:

Առաջին անգամ ըմբոստության նշաններ երևացին իններորդ դարում: Ըմբոստության կարապետները հայ էին ազգով և նրանցից ամենանշանավորը, Լևոն մեծ փիլիսոփան: Վարդը ինքը ևս ուսյալ և կրթասեր անձ էր և քաջ գիտակցում էր դասական գրականության արժեքը: Տեսնելով հին, թաղված գիտության նորաբողբոջ ծիլերը, հարկ համարեց խնամել և պետության հովանու տակ առնել: Այս նպատակով հիմնեց առաջին բարձրագույն դպրոցը, անդրանիկ համալսարանը Բյուզանդիոնում: Նրան հատկացրեց Մագնավրա կոչված պալատը: Հրավիրեց Լևոն մեծ գիտնականին և նրա տեսչության հանձնեց նորաբաց դպրոցը (4):

Լևոն հայ էր և Հովհաննես պատրիարքի (832-843) եղբորորդին: Հովհաննեսը, ինչպես և իր եղբայր Արշավիր պատրիկը նմանապես ուսումնասեր և գիտուն անձեր էին: Լևոնի կյանքը և գործունեությունը զարդարված են հրաշապատումներով, որոնց կանդրադառնանք առանձին հոդվածով (5): Այստեղ հիշենք միայն այն, որ Լևոնը մեծ համբավ ուներ գիտությանց մեջ: Ոչ միայն հմուտ մասնագետ էր փիլիսոփայության, ճարտասանության, և քերթողական ու քերական արվեստների, այլև առաջինն էր, որ ուշք դարձրեց մոռացության տրված բնական գիտությունների վրա և այնպիսի կատարելության հասավ երկրաչափության, աստղաբաշխության, համարողության, այսինքն՝ մաթեմատիկայի և մինչև իսկ երաժշտության մեջ, որ սկսեց ուսուցչությամբ պարապել և վերջը կոչվեց Մագնավրայի համալսարանի պրոֆեսոր: Լևոնը շատ բան էր պարտական իր գիտուն

հորեղբոր. Հովհաննես պատրիարքին: Ոչ միայն Հովհաննեսը, այլև իր հայրը, Բագարատը, գիտության մեծ սեր են ունեցել և հայտնի են եղել մանավանդ աստղաբաշխության մարզում:

Անշուշտ Հովհաննեսի ազդեցության է վերագրելու և այն, որ Լևոնը հոգևոր կոչում ստացավ և Թեսալոնիկեի եպիսկոպոս եղավ մոտ երեք տարի (840-843): Սակայն. իր հորեղբոր անկումից հետո ինքը ևս ստիպված էր թողնել իր աթոռը: Ինչպես երևում է, անգամ հրաժեշտ տվավ եկեղեցական կոչումին, որի համար առանձին սեր և հակում չուներ, և նորից դարձավ դասատվության: Քիչ հետո ստանձնեց Վարդի համալսարանում ուսուցչության պաշտոն:

Լևոնի գործունեությունը բեղմնավոր էր: Շուտով նշանավոր աշակերտներ ունեցավ, որոնցից մի քանիսին պատրաստեց դասատվության նույն համալսարանում: Այսպես, Թեոդորոս անունով մեկը ուսուցանում էր երկրաչափություն, Թեոդեգիոսը՝ աստղաբաշխություն և Կոմիտասը՝ քերականություն: Լևոնի աշակերտներից էր նաև Կոստանդին, որ հետո հռչակվեց որպես սլավոնական առաքյալ Կիրիլ վերակոչումով:

Վարդը գովական հոգածությամբ համալսարանի ուսուցիչներին արքունի թոշակ կապելով ապահովեց մշտապես նրանց նյութական վիճակը և հնարավորություն տվավ ամբողջովին նվիրվել գիտական և մանկավարժական զբաղումների: Նա այնքան մոտ էր համարում իր սրտին նորաբաց կրթարանը, որ շարունակ այցելում էր դասախոսությունների, հետևում էր նաև աշակերտների հառաջադիմության, խրախուսելով նրանց պարապմունքները լավագույն հուսադրությամբ և խոստումներով: Այսպիսով, Վարդը կարողացավ ստեղծել գիտության մի հրաշալի պարտեզ, որը աճելով և ծաղկելով արդյունաշատ եղավ, արդարացնելով հիմնադրի հույսերը:

Մագնավրայի համալսարանը պատմական մի անժխտելի կոթող է Վարդի լուսավոր անվան:

Պատմագիրները խոստովանում են ոչ առանց դժկամության Վարդի արժանիքը գիտությանց մեկենասի պատվավոր դերում, ավելացնում են, որ այդ բավական չէր մոռանալ տալու նրա սխրագործությունները: Խոսքը գլխավորապես եկեղեցական քաղաքականության մասին է:

Հները կատաղի թշնամի են Վարդին և նրա բռնած ուղղության: Կարծում են, որ նա էր սկզբնապատճառը այն գժտությունների, որոնք վրդովեցին եկեղեցու անդորրությունը գրեթե տասը տարի (859-869): Հավատացնում են, որ շարժառիթն էր Վարդի ընդհարումը Իգնատիոս պատրիարքի հետ անձնական գետնի վրա:

Սակայն, խնդիրը ավելի խոր արմատներ ուներ և պատմագիրների լուսաբանությունն ու տեսակետը ներշնչված են կուսակցական նեղ և ըստ էության թյուր ոգով:

Հովհաննես հայ պատրիարքը գահընկեց եղավ 843 թվին պատկերապաշտության վերականգնումով: Նրան հաջորդեց Մեթոդիոսը, որ կառավարեց միայն չորս տարի: 847 թվին երեք արժանավոր թեկնածու կար, երեքն էլ արքայազն ծագումով, Միքայել Ռանգաբեի որդի Իգնատիոսը և Լևոն Հայկազն երկու որդիները՝ Վասիլ և Գրիգոր: Առավելություն տրվեց Իգնատիոսին ոչ այն հաշվով, որ ավելի արժանավոր էր, քան մյուս ընտրելիները: Իգնատիոսն իր հաջողությունը պարտ էր հատկապես ներքինի Թեոկտիստոսին, Թեոդորա կայսրուհու ամենազոր մինիստրին: Նրան բնավ ձեռնտու չէր և նրա քաղաքական նկատումների մեջ չէր մտնում հառաջ քաշել հայ ուժերին: Արտաքուստ կարող էր վարագուրել իր ընտրությունը այն բարեմիտ պատրվակով, որ Վասիլ և Գրիգոր պատկերամարտի որդիներ էին և ուրեմն անբաղձալի ժառանգորդներ հայրապետական աթոռին մի այնպիսի ժամանակ, երբ հաղթանակել էին պատկերները: Թեոկտիստոսը ինքն էր հեղինակը պատկերանպաստ քաղաքականության և այժմ էլ ինքն է Իգնատիոսի ընտրողն ու հովանավորը:

Վարդը որպես քաղաքական հակառակորդ Թեոկտիստոսի չէր կարող բարեկամ լինել նրա արբանյակներին, որոնց թվում և պատրիարք Իգնատիոսին: Հռչակավոր ներքինու տապալումից հետո բնական է, որ պատրիարքի դիրքը ևս պիտի խախտվեր:

Իգնատիոսը ջերմեռանդ կրոնավոր էր, ո՛չ խոր միտք ուներ և ո՛չ սուր աչք: Փոխանակ զգալու իր փափուկ դրությունը և ըստ այնմ շարժվելու, բավականին անշրջանկատ գտնվեց և ինքն իսկ պատճառ եղավ իր անկման և հաջորդող խռովությանց:

Ինչի՞ց պայթեց Վարդի և Իգնատիոսի ընդհարումը: Հները պատմում են և նորերը երկրորդում առանց քննության երկու դեպք, որոնցից մեկը մի ավելի զրպարտության մոտ է թվում, քան իսկության:

Վարդը երկու որդի ուներ և մի դուստր: Ավագ որդին, որի անունը չէ պահել պատմությունը, նշանակված էր մոնոստրատեգոս, այսինքն՝ մի քանի թեմերի սպարապետ, արևմտյան երկրներում: Այսպիսի պաշտոն ուներ մի ժամանակ Վարդան անունով հայ զորավարը արևելյան թեմերում: Կրտսեր որդին կոչվում էր Անտիգոնոս և մանուկ հասակից կարգված էր սքոլների դոմեստիկոս, պալատական հեծյալ գնդի զորապետ: Դստեր անունն էր Իրինե և ամուսնացած էր Սմբատ հայ իշխանի հետ, որ Թեոկտիստոսի սպանությունից հետո ստանձնել էր լոգոթետի բարձր պաշտոնը: Իրինեի դամբարանը գտնվում էր Գաստրիա վանքում, ուր թաղված էին նաև իր հորեղբայրը՝ Պետրոնասը, հորաքույրը՝ Թեոդորա կայսրուհին իր երեք աղջիկներով[1]:

[1] **Constantinus Porphyrogenetes,** De Cerimoniis I, 648.

Մայրաքաղաքում չարաշշուկ լուրեր էին պտտում, որ Վարդ Կեսարը կենակցում էր իր ննւի հետ, այն է ավագ որդու կնոջ հետ: Անփառունակ շշուկները հասան նաև պատրիարքին: Իգնատիոսը չհամբերեց, իսկույն կանչեց Վարդին և հորդորեց հետ կենալ պիղծ հարաբերությունից: Վարդը սովոր չէր նախատինքի: Իգնատիոսը զայրացավ և վճռական քայլ արեց: Հայտնության մեծ տոնին, երբ կեսարը մոտեցավ Ս. հաղորդության, պատրիարքը հնարավոր գտավ մերժել և այսպիսով հրապարակավ մեծ անարգանք հասցրեց ամենազոր կեսարին: Վարդը վրդովված եկեղեցու պետի թեթևամիտ և անխոհեմ վարմունքից, հանեց սուրը խելքի բերելու բարձրավիզ եկեղեցականին, բայց կարողացավ ինքն իրեն զսպել: Այն օրից վճռեց քշել պատրիարքին աթոռից:

Այս զրույցը գտնվում է բոլոր պատմագիրների մոտ[1]: Միայն մեկը վկայում է, որ Վարդը բաժանվեց իր կնոջից և ամուսնացավ իր ննւի հետ, արհամարհելով եկեղեցական օրենքները[2]:

Մեզ թվում է, որ ննւի պատմության իսկական աղբյուրը **Իգնատիոսի վարքն է**, գործ Նիկիտաս Պափլագոնացու[3]: Այստեղից են քաղել պատմագիրները: Արդյո՞ք կարելի է անպայման հավատ ընծայել մի ծանր ամբաստանության, երբ նա բխում է հակառակորդ բանակից: Եվ ո՞վ էր այս ննւն:

Թեոդորա կայսրուհին իր որդու Միքայելի համար հարս գտնելու նպատակով դիմել էր ննւյն միջոցին, ինչպես ինքն էր ընտրվել: Ամեն կողմից մատաղահաս աղջիկներ էր բերել տվել պալատ և նրանց միջից ընտրել Դեկապոլիտես անունով մի մարդու դստեր, Եվդոկիային: Հարսնացուների թվում էին նաև երկու կապպադովկիացի աղջիկներ, երկու քույրեր, որոնցից մեկի անունն էր Իրինե, մյուսինը հայտնի չէ: Մայրաքաղաք գնալիս քույրերը այցելել էին Օլիմպոս լերան վրա Հովհաննիկ մենակյացին, հայցել նրա օրհնությունը և աղոթքը հաջողության համար: Հովհաննիկը հիասթափեցրել էր Իրինեին, գուշակելով, որ նրան սպասում է ոչ կայսերական ծիրանին, այլ վանական սև զգեստը:

Արդարև, Իրինեն չարժանացավ հարսնության և կուսակրոնություն ընդունեց, մտնելով Խրիսոբալանտոս (Ոսկե պարկ) մենաստանը, Ասպարի ավազանի մոտ, ուրեմն հարևան Մանուել Մամիկոնյանի տան, որ ննւյն ավազանի մոտ էր գտնվում:

Իսկ ի՞նչ եղավ մյուս քույրը: Իրինեի **վարքից** իմանում ենք, որ քույրը «հետագայում ամուսնացավ Միքայել կայսրի մորեղբոր Վարդ Կեսարի հետ»[4]:

---

[1] **Genes.**, 99; **Georg.**, 826; **Leo Gram.**, 240; **Symeon**, 667.

[2] **Teoph . Cont.**, 193.

[3] Vita Ignatii, **Migne, P G** 105, col. 504.

[4] Acta Sanctorum, **Iulis**, 28, vol. VI, 602.

Իրինեի քրոջ ծանոթացած պետք է լիներ Վարդը Միքայելի փեսայության տարին, որ պատահեց Թեոկտիստոսի սպանությունից քիչ հառաջ: Սպանությունը 856 թվին էր, ուրեմն Միքայելի ամուսնությունը կընկնի 855 թվին, երբ նա 16-17 տարեկան էր: Սակայն, այդ ժամանակ Վարդն արդեն չափահաս աղջիկ ուներ, երկու որդի, որոնցից կրտսերը 9-10 տարեկան հասակ ուներ: Աղջիկը կարգված էր Սմբատ իշխանի հետ: Հասկանալի է, որ Իրինեի քույրը Վարդի առաջին կինը լինել չէր կարող: Նա երկրորդ կինն էր: Վերև հիշված վկայության համաձայն՝ Վարդը հեռացրել էր իր առաջին կնոջը և ամուսնության առել էր իր նուին, այն է որդու կնոջը: Այս կարծեցյալ նուն ոչ այլ ոք է ուրեմն, եթե ոչ Իրինեի քույրը, ուրեմն նուի քույրը:

Իրինեի վարքը ազատ է իգնատյան գրականության ազդեցությունից և նրա վկայությունը արժեքավոր: Այստեղ ոչ մի ակնարկություն չկա Վարդի ամուսնության արատավորության վրա: Անգամ խոսք չկա այն մասին, որ Իրինեի քույրը Վարդի նուն էր: Ապա ուրեմն որքա՞ն արժանահավատ են հակառակ բանակի ամբաստանությունները:

Վարդի երկու որդիներից միայն երեցը կարող էր փեսայացած լինել, կրտսերը տակավին տղա լինելով: Փեսայությունը կանուխ չէր 855 թվից, երբ Իրինե և իր քույրը մայրաքաղաք եկան ներկայանալու կայսերական հարսնատեսության: Հաջորդ տարիները Վարդի երեց որդին գտնվում էր պաշտոնով արևմուտքում և մնաց անդ և մեռավ հառաջ, քան 862 թիվը: Պետք է կարծել, որ եթե ամուսնացել էր, կինը իրեն հետ էր լինելու:

Վարդի մասին պտտող անհաճո լուրերը հառաջ էին, քան 858 թ. հունվարի վեցը: Նուն հազիվ երկու տարվան նորահարս էր, գուցե և պակաս: Եթե ամուսինը արևմուտք ղրկվեց Թեոկտիստոսի մահից հետո, ինքը նուն ևս արևմուտք պետք է լիներ 856-857 տարիները: Իսկ եթե 858 թ. հունվարից հետո գնացին արևմուտք, դժվար է ենթադրել, որ Վարդը որդու ներկայության ամոթալի սեր տածեր դեպի իր նուն, իր հարսը:

Չարամիտ զրույցները ծագել են հավանորեն այն գետնի վրա, որ Վարդը որդուն պաշտոն էր տվել արևմուտքում, և ենթադրել են, որ օգտվելով նրա բացակայությունից շնացել է նուի հետ: Մի բան ստույգ է, որ Վարդը իր որդու մահից հետո ամուսնացել է նրա կնոջ և կամ նշանածի քրոջ հետ: Այստեղից սկիզբ են առել զրպարտությունները, որոնք ամեն պարագային ոչ մի կապ չէին կարող ունենալ Իգնատիոս պատրիարքի անկման հետ, քանի որ անկումը 858 թ. նոյեմբերին էր, իսկ Վարդի ամուսնությունը հավանորեն քիչ առաջ էր, քան 862 թիվը իր կեսարության տարին:

Իգնատիոսի բերանից նրա արբանյակներից մեկը գանգատ էր գրել Հռոմի պապին Վարդի դեմ: Այստեղ ոչ մի խոսք չկա Վարդի արատավոր սիրո մասին: Պատրիարքի անկման պատճառը համարվում է այն, որ

հրաժարվել էր կտրել Թեոդորայի և իր դուստրերի մազը հակառակ Վարդի հրամանին[1]:

Այս պատճառաբանությունը ևս զուրկ է ճշմարտությունից: Թեոդորան ընկավ 856 թվին, և պալատից հանվեց առ առավելն մեկուկես տարուց հետո, ինչպես տեսանք վերև, ուրեմն 857 թվի կեսերին, արդեն վանք պիտի քաշված լիներ: Այնինչ պատրիարքի գահընկեցությունը վերաբերում է 858 թվի նոյեմբերին: Տարածությունը խիստ մեծ է, որպեսզի հնարավոր լինի պատճառական աղերս գտնել երկու դեպքի մեջ:

Մեզ թվում է, որ Վարդի և պատրիարք Իգնատիոսի թշնամության և ընդհարումի իսկական պատճառը թաքցնելու և կամ սքողելու համար է, որ հնարված են Վարդի ապօրինի սիրո և Թեոդորայի մազը կտրելու զրույցները: Եթե անգամ դրական հիմք ունեցած լինեն, խիստ աննշան դեպքեր են հասարակական տեսակետից, որպեսզի կարենային այնպիսի մեծ խռովություն հառաջ բերել: Ոչ բյուզանդական արքունիքը կարող էր պարծենալ բարոյական մաքրությամբ և ոչ իսկ պատրիարքը այնքան նրբազգաց էր և խստասիրտ, որ գլուխ բարձրացներ մեծազոր միհիստրի դեմ և իր դրությունը վտանգեր ընդունայնաբար:

Վարդի ատելությունը և ոխը Իգնատիոսի դեմ կարելի է բացատրել և հասկանալի դարձնել միայն այն դեպքում, եթե ենթադրենք, որ պատրիարքը խառն է եղել Վարդի դեմ լարած վերջին դավադրության: Գիտենք, որ գահազուրկ Թեոդորան էր դավադրության բուն հեղինակը և նպատակ ուներ իր եղբոր մահվան գնով վերստին տիրանալ գահին: Պատրիարքը Թեոդորայի և Թեոկտիստոսի մոտ բարեկամն էր և նրանց կողմից ընտրված: Թեոկտիստոսի սպանությունից հետո խեթ աչքով պիտի նայեր Վարդի վրա: Թեոդորայի հեռացումը ևս առավել պետք է դառնացներ պատրիարքին և լարեր Վարդի դեմ:

Խելագար Գեբեոնի օրինակը ցույց է տալիս, որ Իգնատիոսը անտարբեր հանդիսատես չէր այն նենգավոր փորձերին, որոնց նպատակն էր տապալել Վարդին: Անշուշտ Վարդը բանավոր հիմք ուներ, երբ որ պատրիարքին կոչում էր *Ἱεροβασιλευτός*, այսինքն՝ մի մարդ, որ տենչում է Գեբեոնի թագավորության[2]:

Գեբեոն անուն անձը Իլլիրիայի (այժմ Ալբանիա) Դիրաքիում քաղաքից եկել էր մայրաքաղաք և հայտարարել, որ ինքը Թեոդորա կայսրուհու որդին է, ծնված նախքան նրա ամուսնանալը Թեոփիլոսի հետ: Ամբոխի միտքը խմորող երևույթ էր: Կարող էր խռովություն հարուցանել: Վարդի հակառակորդների ձեռքին մի նոր գործիք էր գժտություններ սերմանելու և

[1] **Theognostus,** Libellus ad Papam, **Migne, P G** 105, col. 857.

[2] Vita Ignatii, **Migne, P G** 105, col. 504.

Վարդի կառավարությունը վարկաբեկելու համար: Խռովարար խենթը բռնվեց և իր պատիժը կրեց մահվան դատապարտվելով: Նույն օրը աթոռից ետվեց նաև Իգնատիոս պատրիարքը, 858 թ. նոյեմբեր ամսին:

Եթե իրոք սույն տարվան սկիզբը պատրիարքը մերժել էր հաղորդություն տալ Վարդին և կամ չէր կամեցել խուզել կայսրուհու մազերը, այս անհնազանդությունն որքան և անախորժ Վարդի համար, չէր կարող պատճառ համարվել պատրիարքի անկման:

Իգնատիոսի փոխարեն Վարդն առաջարկեց մի աշխարհիկ անձ: Այդ Փոտն էր: Իր դարու ամենից լուսավոր միտքը, ամենագետ, իբրև մարդ հաճելի շարժումներով և նիստուկացով: Այդ միջոցին նա պրոտոսպաթար էր (սուսերակիր) և պրոտոասեկրետ (առաջին քարտուղար): Փոտը Վարդի սիրելին էր որպես գիտուն և զարգացած գլուխ: Բացի դրանից Փոտը Արշավիր պատրիկի քրոջ Իրինեի որդին էր, իսկ Արշավիրը փեսա էր Վարդին, սրա քրոջ Կալոմարիայի ամուսինն էր: Ընտանեկան մերձավորություն ունեին:

Իգնատիոսի անկումից մի ամիս չանցած, նույն 858 թ. դեկտեմբերի 25-ին, Ծննդյան օրը, Փոտը բարձրացավ պատրիարքական աթոռ, մի քանի օրվան մեջ ստանալով եկեղեցական բոլոր աստիճանները: Իգնատիոս չհոժարեց եպիսկոպոս ձեռնադրել Փոտին: Դիմեցին Գրիգոր Ասբեստոս անունով եպիսկոպոսին, որ Իգնատիոսի ոխերիմ թշնամին էր, և նա ձեռնադրության կարգը կատարեց: Այս քայլը ավելի ևս գրգռեց վշտացած պատրիարքին:

Գրիգոր Ասբեստոսը Սիկիլիայի եպիսկոպոսն էր: Մի զանցառության հետևանքով կանչվել էր մայրաքաղաք համարատվության համար: Մի օր Ս. Սոֆիայի տաճարում, երբ հոգևորականները շարված, լուցյալ մոմերով սպասում էին պատրիարքին, և Գրիգորը ևս տեղ էր բռնել մյուսների թվում, Իգնատիոս նկատելով Գրիգորին, զայրացավ և հրամայեց հեռանալ եկեղեցուց և չհամարձակվել մասնակցել հանդեսներին, մինչև որ նրա գործը չքննվի: Գրիգոր եպիսկոպոսը խորապես վիրավորված, հանգցրեց իր մոմը և գետին ձգեց ասելով բարձրաձայն. «Սա հովիվ չէ, որ եկեղեցի է մտել, այլ գայլ»:

Եկեղեցականությունը բաժանվեց երկու բանակի, Իգնատիոսի և Գրիգորի շուրջը: Ուժը առաջնի կողմն էր: Թեոդորայի և Թեոկտիստոսի կառավարության ժամանակն էր և Իգնատիոսը ամուր պատվար ուներ իր ետև հանձին նրանց: Ժողով գումարեց պատրիարքը և դատապարտեց Գրիգորին իր կողմնակիցներով: Սրանք դիմեցին Հռոմ, պապի միջնորդության: Պապը պահանջեց ժողովի արձանագրությունը: Իգնատիոսը մերժեց: Գրիգոր Ասբեստոսի համակիրների թվում էր Փոտ, տակավին աշխարհական, որ հարգում էր Գրիգորի գիտությունը և որոշ խտրանք ուներ անուս և անխորագետ Իգնատիոսի նկատմամբ:

Վարդը Գրիգորի և Փոտի կողմն էր ընդդեմ Իգնատիոսի, Թեոդորայի և Թեոկտիստոսի: Կուսակցական կրքերը եկեղեցու շուրջը դասավորվել էին քաղաքական հակամարտության խողովակների մեջ:

Գրիգոր Ասբեստոսի մասնավոր հարցը դեռ լուծված չէր: Այսպիսով կուսակցական ներհակության սրերը արդեն սրված պատրաստ էին: Ասբեստոսի հարցը կախվել էր անորոշության մեջ: Կարգալույծ եպիսկոպոսի հանկարծական երևումը պատվավոր դերում ալեկոծեց հակառակորդներին: Աշխարհական մի մարդ եպիսկոպոսացել էր մի քանի օրվան մեջ և պատրիարքական աթոռի վրա բազմել: Այս ևս անհանդուրժելի էր իգնատիոսականների աչքում:

Փոտի ընտրության հաջորդ տարին Իգնատիոսը ժողով գումարեց իր կուսակիցներից: Ժողովը որոշեց հեռացնել Փոտին պատրիարքությունից: Նույն տարին Փոտը իր կողմից մի ուրիշ ժողով հրավիրեց և նույնպիսի վճիռ հանեց Իգնատիոսի դեմ:

Եկեղեցական կռիվները, հարկավ, վարվում էին քաղաքական պատճեշների վրա: Իգնատիոսի թիկունքում կանգնած էին հառաջ Թեոդորա և Թեոկտիստոս, այժմ Փոտի հենարանն է Վարդը: Համաձայն Փոտի ժողովի որոշման, Վարդը աքսորեց Իգնատիոսին:

Խնդիրը բարդացավ, երբ Ստուդիոնի հռչակավոր վանքի միաբանությունը բռնեց Իգնատիոսի կողմը, ավելի կնճռվեց մանավանդ Հռոմի միջամտությամբ: Ստուդիոնականները պաշտպանում էին եկեղեցու ազատությունն ընդդեմ պետության ճնշումի: Իսկ Հռոմա պապը ձգտում էր օգտվել հանգամանքից և պղտոր ջրում ձուկ որսալ: Այդ ժամանակ գահի վրա Նիկողայոս Ա պապն էր, որ երազում էր Հռոմի համաշխարհային տիրապետության մասին, և պատեհ առիթ համարեց ձեռք դնել Բյուզանդական եկեղեցու վրա:

Նոր պատրիարքի աթոռակալությունը հաղորդեցին, ընդունված սովորության համաձայն, Անտիոքի, Երուսաղեմի, Աղեքսանդրիայի պատրիարքներին, ինչպես Հռոմա պապին: Արշավիր սպաթարը (երևի Վարդի կամ Փոտի ազգականներից) երեք եպիսկոպոսի ուղեկցությամբ ներկայացավ պապին 860 թ. ամառը և հանձնեց Միքայել կայսրի և Փոտի նամակները: Պապն ի պատասխան, երկու եպիսկոպոս ղրկեց Կ. Պոլիս, որ մոտեն ծանոթանան գործի էության և իրեն զեկուցանեն: Միևնույն ժամանակ պապը Միքայել կայսրին ուղղած նամակում հասկացրեց, որ պատրաստ է վեճը լուծել նրա ցանկության համաձայն, պայմանով, որ իրեն, պապին, զիջանի Թեսալոնիկեի, Կալաբրիայի և Սիկիլիայի եկեղեցական վիճակները:

Հետևյալ 861 տարին մայիս ամսին Կ. Պոլսում բացվեց ժողովը պապի նվիրակների և 318 այլ եպիսկոպոսների մասնակցությամբ: Մի հայ պաշ-

տոնյա Վահան Անդորես կոչեցյալ ուղարկվեց Իգնատիոսի հետևից[1]: Հովհաննես պատրիկը, որ կոչվում էր Կոքսես, բերեց ծերակուտի նախագահին Լևոն պատրիկին, և Թեոդոտակես պատրիկին, որ հետո մագիստրոսության պատիվ ստացավ: Հավանորեն Թեոդոտակես ևս հայ ծագում ուներ, դատելով անվան ձևից, որ ավելի հայկական մասնիկ ունի, քան հունական: Յոթանասուն և երկու հոգի վկայեցին, որ ինքը Իգնատիոսն իր ժամանակին ընտրվել էր ոչ եկեղեցական կանոնի համաձայն, այլ Թեոդորա կայսրուհու ճնշմամբ, որպես նրա հովանավորյալը:

Նկատենք անցողակի, որ սրանով հաստատվում է վերև հայտնած մեր ենթադրությունը, որ Իգնատիոսը կայսրուհու և Թեոկտիստոսի թեկնածուն էր ընդդեմ Լևոն V-ի որդիների՝ Վասիլ և Գրիգոր եպիսկոպոսների:

Ժողովը եկավ այն որոշման, որ Իգնատիոսն անարժան է պատրիարքական աթոռին և նրա հեռացումը արդար է: Պապի նվիրակները ևս դրին իրենց ստորագրությունը ժողովի վճիռների տակ: Պապը դժգոհեց: Տեսանք, որ նրան հետաքրքրում են առանձնապես ոչ վեճերը ինքնին, այլ որոշ եկեղեցական թեմեր, որ Լևոն III Իսավրացին խլել էր Հռոմից և այժմ Նիկողայոս պապը պահանջում էր հետ դարձնել իրեն: Պապի այս աշխարհական ցանկությունը չէր հարգվել, ուստի և շրջաբերականներ ղրկեց արևելյան պատրիարքներին, իր զայրույթը արտահայտեց ընդդեմ մանավանդ Փոտի, անվանելով նրան չարագործ, պահանջեց նրա հրաժարումը և Իգնատիոսի վերահաստատումը աթոռի վրա:

Ճիշտ այդ ժամանակ Իգնատիոսի մերձավորներից Թեոգնոստոս անունով մեկը Հռոմ գնաց պապի մոտ, հետը տանելով Իգնատիոսի նամակը: Պապը ժողով գումարեց 863 թվին Լատերան եկեղեցու մեջ: Թեոգնոստոսի մերկացումները մի պատրվակ էին, որպեսզի ժողովը պահանջեր Փոտի հրաժարականը ի նպաստ Իգնատիոսի: Փոտը վճռական քայլ արավ և 865 թվին առանձին ժողովով նույն կերպ վարվեց պապի հանդեպ: Եկեղեցական խզումը կատարյալ էր: Գործը այնտեղ հասավ, որ Միքայել կայսրը, իմա՛ Վարդը, սպառնաց պապին, որ զենքի ուժով կհարկադրե նրան հնազանդել կայսերական ժողովների որոշման:

Վարդի անակնկալ սպանությամբ 866 թվին 21 ապրիլի Փոտի բախտը շրջվեց:

Վարդի աստղը թեքվեց այն օրից, երբ նա կործանեց իր վաղեմի բարեկամ Դամիանոսին: Սա Միքայելի սենեկապետն էր (պարակիմոմենոս) և Վարդից դժգոհ էր, երևի, այն պատճառով, որ Վարդը մեծ դիրքի հասնելով հոգ չէր տարել իր բարեկամին ևս հառաջ քաշելու:

[1] Vita Ignatii, **Migne, P G** 105, col. 577.

Մի օր Վարդը գույնզգույն սկարամանդը հագած (սկարամանդը մի տեսակ տունիկ էր, որ հագնում էին մանավանդ ձի նստած ժամանակ), ծերակուտականների և դրանիկ մեծամեծների ուղեկցությամբ անցնում էր ամենայն հանդիսավորությամբ հորոլոգիոնից (սրահ, ուր արևացույց կար) դեպի Ոսկեսրահը (խրիսոտրիկլինոն) Միքայել կայսրի մոտ: Դամիանոսը նստած էր հանգիստ հորոլոգիոնում և զլացավ վեր կենալ տեղից ու սովորական հարգանք մատուցանել կեսարին: Վարդը այլայլվեց և հազիվ զայրույթը զսպած մտավ կայսեր մոտ և պատմեց նրան իրեն հասցրած վիրավորանքը: Կայսրը իրավացի գտավ իր սիրելի քեռու տրտունջը և անմիջապես հրաման արձակեց բռնել Դամիանոսին և ղրկել մենաստան, նախապես մազը խուզելով:

Դամիանոսի տեղ սենեկապետության պաշտոնին անցավ, կայսեր հաճությամբ, հայազն Վասիլը[1]:

Ավելորդ չէ նկատել, որ Դամիանոսի դեպքը մեծ հավատ չէ ներշնչում: Դամիանոսը սկզբում դուրս է բերված որպես Վարդի բարերար: Նա էր որպես թե միջնորդել և հաշտեցրել Վարդին Միքայելի հետ: Կարծես Վարդի ապերախտությունը ցուցադրելու համար է, որ հնարված է նրա տխուր վախճանի զրույցը: Թերևս Դամիանոսին վերագրված ծառայությունը ևս չի համապատասխանում իրականության, այլ դիտավորյալ պատմություն է:

Սենեկապետությունը տրվում էր սովորաբար ներքինիներին: Միքայել կայսրը բացառաբար հանձնեց այդ պաշտոնը Վասիլին, որի ազդեցությունը հետզհետե զորանում էր: Վարդը իրավունք ուներ տրտնջալու այս կարգադրությունից: Վասիլը անկասկած ավելի վտանգավոր էր, քան թշվառ ներքինին, Դամիանոսը: Վարդին են վերագրում թևավոր խոսքը, թե հավատ ընծայելով ենթգամիտներին, «Աղվեսին հեռացրին և տեղը դրին մի առյուծ, որ բոլորիս լափելու և կլանելու է»[2]:

Ասպարեզի վրա էին այժմ երկու ահարկու մրցորդներ, Վարդ և Վասիլ, երկու նշանավոր հայորդիք: Միքայել կայսրը կարծես թե մրցության կշեռքի լծակն էր և նրա վերաբերումից կարելի էր գուշակել, թե որ կողմն է հակվում հաղթող ծանրությունը:

Վարդը ականատես էր, թե ինչպես կայսրի սիրելի տարփուհին Եվդոկիա Ինգերը և հարազատ քույրը, Թեկլան, անցան Վասիլի գիրկը: Անվիճելի հաջողություն էր: Վասիլը մտերմացավ կայսրին և ընկերակից էր նրա խրախճանքներին: Կարող էր կայսրի հետ խոսել մինչև անգամ նրա քեռու Վարդի դեմ: Վասիլ սկսեց կասկած ցանել Միքայելի սրտում, որ կեսարը այնքան էլ վստահելի անձը չէ և որ նրա մեջ փառասիրությունը գերակշռում

[1] **Leo Gram**, 241; **Georg.**, 828.
[2] **Theoph. Cont.**, 235.

է հավատարմության զգացումին: Կայսրը ընդդեմ էր քսության և ներգամիտ հղուկների: Արժեք չտվավ Վասիլի բացահայտ ակնարկներին: Անխոհեմություն կլիներ նրա կողմից երես դարձնել միանգամից իր բազմավաստակ քեռուց:

Վասիլ փորձեց խոսել Միքայելի հետ ուրիշ և ավելի վստահելի բերանով: Նա խորամանկորեն իր կողմը քաշեց Սմբատ լոգոթետին, որ Վարդի դստեր Իրինեի ամուսինն էր, և հավանորեն Բագրատունյաց տանից, դատելով անունից: Վասիլը գայթակղեց Սմբատին պատրիկ խոստումներով, հավատացրեց, որ եթե Վարդը մեջտեղեն վերցվի ինքը կբռնե նրա տեղը: Խորհուրդ տվավ հղնջալ կայսրի ականջին, որ Վարդը մի սպառնալիք է նրա կյանքի և իշխանության համար: Փեսայի խոսքը աներոջ դեմ այլ կշիռ կունենար կայսրի աչքում, քան Վասիլի նախանձավոր փսփսուքը: Միքայելի խելքը մտավ: Վարդի բախտը այլևս նախորոշված էր: Մնում էր սպասել հարմար առիթի:

Նախախնամությունը հների հասկացողությամբ պատմական գործոն էր, որ հաճախ ազդարարում էր գալիքը զանազան նշաններով, ինչպես տեսիլներ, երազներ, ասուպների երևումն և այլն: Այդպիսի նշաններ են գտել և արձանագրել պատմագիրները նաև Վարդի կորստյան վերաբերյալ:

Միքայել կայսրը ծրագրել էր արշավել Վարդի ուղեկցությամբ Կրետե կղզին արաբների դեմ: Զորքը եկավ և կանգ առավ Կեպի (Պարտեզ) կոչված տեղում Թրակեսյան թեմի մեջ Մենանդրոս գետի հովտում: Վարդը անձամբ ընդդեմ էր այս իջևանումին: Անշուշտ, լուրջ կասկածներ ուներ: Նախախնամությունն արդեն տեսակ-տեսակ նշաններով պաշարել էր նրա միտքը: Մի անգամ երազ տեսավ, որպես թե կայսրի հետ մտնում էր Ս. Սոփիայի տաճարը սովորական հանդիսավորությամբ: Երբ ներս մտան, Վարդի աչքին երևացին երկու լուսազգեստ էակ, կարծես հրեշտակներ էին: Ավելի հառաջանալով նկատեց, որ պատրիարքական աթոռի վրա նստած է մի ծերունի մարդ: Այն՝ Պետրոս առաքյալն էր: Նրա առաջ ծնկաչոք աղերսում էր Իգնատիոս պատրիարքը, որ իրեն հասցրած անիրավությունները անպատիժ չմնան: Առաքյալը խոստացավ և կանչեց իր կողքին կանգնած երկու հրեշտակներից մեկին և մեկնելով նրան մի սուր, ասաց. «Գնա՛ և խողխողիր այն մարդուն, որ ձախ կողմն է կանգնած, այն քեռրգիստին (ատելի Աստուծուն). գնա՛ և հայտնիր մյուսին, որ աջ կողմն է, այն ասեբոտեկնոն անձին (անիրավ որդի), որ նման մահ սպասում է և նրան»:

Առաջին զոհը Վարդն էր, երկրորդը՝ Միքայելը:

Մի ուրիշ հրաշք: Նախ քան պատերազմի ելնելը, Վարդը գնաց Հողիգի (Ուղևորաց) կոչված Տիրամոր վանքը: Երբ ծրագը ձեռքին աղոթում էր, հանկարծ քղամիդը սահելով ուսերից ընկավ գետին: Վարդը զգաց այս

չարագուշակ երևույթի խորհուրդը և արտասվաթոր աղերսեց Ս. Կույսին, որ խափանե չար վտանգը և փրկե իրեն փորձանքից:

Պատմում են նաև, որ Թեոդորա կայսրուհին, որ տակավին կենդանի էր, ուղարկեց Վարդին Կեպի բանակատեղը մի խորհրդավոր պարգև: Մի սիրուն, բայց կարճ զգեստ էր, վրան ոսկի թելով բանված կաքավի պատկեր: Տարօրինակ նվերը զարմացրեց Վարդին, որ չէր հասկանում, թե ինչո՞ւ հագուստը կարճ է և ի՞նչ է նշանակում կաքավը: Վշտով իմացավ, որ այդ քղչունը նենգության խորհրդանշան է և հիշեցնելու է ուղարկողի նենգավոր ոխակալությունը Թեոկտիստոսի մահվան պատճառով, իսկ զգեստի կարճությունը ակնարկ է, որ նրա օրերը կարճացել են: Երևում է, որ ո՛չ տարիների և ո՛չ էլ մենաստանի խաղաղությունը չէին մեղմել հիշաչար կնոջ վատախնդիր ոգին:

Ս. Աննա եկեղեցում, որ կոչվում էր Դևտերոն (երկրորդ), մի անդրի կար սյունի վրա դրած: Երկրաշարժից անդրին վայր էր ընկել: Ասում են, որ Լևոն մեծ փիլիսոփան այս դեպքի մեջ նախատեսել էր Վարդի անկումը. ով որ կայսրից հետո երկրորդն էր պիտի ընկներ, կործանվեր: Երկրորդը Վարդ կեսարն էր: Միևնույն ժամանակ փիլիսոփան մատնանշել էր, որ հաջորդը լինելու է Վասիլը:

Նման չարագուշակ երևույթները քաջալերիչ չէին Վարդի համար: Արշավանքի նախօրեին կանչեց իր մտերիմ բարեկամներին ընթրիքի և կարծես նախազգում էր, որ այլևս տեսնելու չէ նրանց, ուստի նվերներ բաշխեց բոլորին, խնդրեց, որ պահեն իր հիշատակը: Վերջին ընթրիքն էր բարեկամների շրջանում և իր տանը:

Այս զրույցները հավաքել է Վասիլի թոռը, Կոստանդին Ծիրանածինը և մեզ ավանդել, թե՛ իրը, գրելով իր պապի կյանքը, և թե՛ Գենեսիոսը, որ կազմել է իր պատմական գործը նրա պատվերով. զրույցներ, որ ոչ մի պատմական արժեք չունին[1]:

Վարդի երազը առնված է Իգնատիոսի կյանքից[2]:

Զրույցների իմաստն այն է, որ Վարդի սպանության պատասխանատվությունը բարդեն նախախնամության վրա և չքմեղ ձևացնեն իսկական ոճրագործին՝ Վասիլին: Նույն նպատակով այլայլված են և իսպառ եղծած սպանության տեսարանը: Նրանց ասելով, Վարդը ատելի էր պալատականներին: Կեսար դառնալով այնքան գոռոզացել էր, որ բարձրից էր նայում կայսրի և արքունի պաշտոնեության վրա: Միակ հոգսն էր հագուրդ տալ իր անսահման փառասիրության: Երբ կայսերական զորաբանակը հասավ

[1] **Genes.**, 103-105; **Const. Porphyr.**, Vita Basilii; **Theoph. Contin.**, 203-207.

[2] **Migne, P G** 105, col. 533-536.

Կեպի, Միքայելի վրանը զարկեցին հովտում, իսկ Վարդը ընտրեց իրեն համար մերձակա բլուրը:

Այս հանգամանքը, պատահական էր, թե գիտակցական, սրեց նրա թշնամիների չարախոս լեզուն: Կայսրին հասկացրին, որ Վարդը ի զուր տեղը չէ բարձրացել և դիրք բռնել բլրի վրա: Կեսարը որպես թե գաղտնի միտք ունի գրոհելու նրա վրա և կործանելու: Միքայելը հավատաց:

Դավադիրները գործի անցան: Նրանց առաջնորդն էր Սմբատը, Վարդի փեսան: Նախ ձիարշավ սարքեցին և սրանով ցրեցին Վարդի որդու Անտիգոնոսի ուշադրությունը: Անտիգոնոսը սխոլների, պալատական հեծելագնդի, դոմեստիկոսն էր և ահավոր իր ձեռքի տակ գտնված ուժերով: Նրան հեռացնելուց հետո Սմբատը մտավ Միքայելի մոտ հերթական զեկուցումի պատրվակով այն ժամանակ, երբ Վարդը նրա մոտ էր: Զեկուցումից հետո նշան արավ դավադիրներին երեսը խաչակնքելով, ինչպես պայմանավորված էր: Ներս խուժեցին անմիջապես թաքստոցում պահվածները և սրախողխող արին կեսարին Միքայելի աչքի առաջ: Սպանողների թվում էր ոմն Ցիփինարիտես, Խաղտյաց աշխարհից[1]: Այստեղ ոչ միայն Վասիլը անմասն է սպանության, այլ անունն անգամ չի հիշատակվում: Պատմողի զգուշությունը ծայրահեղ է:

Կոստանդին Ծիրանածին կայսրը այդքան հեռու չի գնում: Նա ընդունում է Վասիլի հանցագործությունը, միայն այլ գույն է տալիս: Դավադրության բուն հեղինակը Միքայելն էր: Երբ նրա միտքը թունավորեցին քսու և չարակամ անձեր, թե Վարդը մտադրություն ունի իր բարձրադիր վրանից հարձակվելու նրա վրա, Միքայել վճռեց կտրել Վարդի կյանքի թելը: Սակայն, չհամարձակվեց գործել բաց, ակնածելով կեսարի հեղինակությունից և ուժից: Իրեն հավասար անձ էր, զորքը իր հրամանատարներով նրա ձեռքի տակ էր: Անտիգոնոսը, սխոլների դոմեստիկոսը, պատրաստ էր պաշտպանելու իր հորը: Միքայելը ընտրեց նենգության ուղին: Խմբեց իր շուրջը կեսարի հակառակորդներին, որոնց թվում էր Սմբատը: Երբ վերջինս որպես լոգոթետ ներկայացավ Միքայելին հերթական զեկուցումի համար, կայսրը պայմանավորված նշանը տվավ, որ դավադիրները ներս թողնվին: Սմբատը կատարեց կայսրի պատվերը, բայց դավադիրները, թուլամորթ և վեհերոտ չէին խիզախում գործի անցնել: Մինչդեռ հապաղելը վտանգավոր էր: Վարդը կարող էր գլխի ընկնել և այնուհետև փրկություն չկար կայսեր համար: Առաջին զոհը լարված դավերի ինքը՝ կայսրը, պիտի լիներ: Խուճապը սկսվելու վրա էր, երբ Միքայելը անհրաժեշտ տեսավ դիմել Վասիլի օգնության: Մտերիմներից մեկին ուղարկեց նրա ետևից: Անմիջապես երևաց Վասիլը, հենց որ լսեց, որ կայսրի կյանքը վտանգի մեջ է:

[1] **Genes.**, 105-106.

Վախկոտներին ոգի տվավ, քաջալերեց և հարձակվեցին Վարդի վրա: Եվ նրան սուսերահար արին Միքայելի ոտքերի տակ[1]:

Այս պատմվածը ևս միտումնավոր է: Վասիլը որպես թե սուր բարձրացրեց ոչ թե սպանություն գործելու հնմար, այլ կատարելու իր պարտքը հանդեպ իր կայսրի:

* * *

Իսկական ճշմարտությունը որոնելու է հակառակ բանակի գրողների մոտ: Եղելությունը սովորական սպանություն էր քաղաքական բնույթով, մերկապարանոց և թափուր պարտաճանաչության թե ուրիշ որևէ վեհ զգացմունքի զարդերից:

Վարդ Կեսարի դեմ դավեր նյութողը Վասիլն էր, նրա մեծ ախոյանը: Չհամարձակվելով ձեռք բարձրացնել նրա վրա մայրաքաղաքում, անշուշտ, երկյուղ կրելով նրա զորությունից, Վասիլը խորհուրդ էր տվել Միքայելին դուրս գալ քաղաքից արշավանքի պատրվակով:

Ինչպես երևում է մայրաքաղաքում գոնե մի որոշ շրջանում գաղտնիք չէր արշավանքի իսկական աստառը: Վարդի անձնական բարեկամը, Լևոն մեծ փիլիսոփան, հակառակ էր, որ իր բարեկամը մասնակցե արշավին և աշխատեց կասեցնել այդ քայլից ասելով, «գնացողը չպիտի վերադառնա»: Վարդի մյուս բարեկամը, Փոտ պատրիարքը, ևս կասկածում էր, որ իր հովանավորի և մտերիմի համար մի ծուղակ էր պատրաստվում:

Պատմում են, որ արշավանքից քիչ առաջ, Ավետյաց տոնին, մարտի 25-ին, եկեղեցական կարգը ավարտելուց հետո պատրիարքը կանչեց խորան Միքայել կայսրին և Վասիլին: Ներկա էր նաև կեսարը: Պատրիարքը հանեց Ս. հաղորդության սկիհը: Կայսրը և Վասիլը թաթախելով Ս. արյան մեջ իրենց խաչերը ստորագրություն տվին և երդումով հաստատեցին, որ Վարդը կարող է մասնակցել արշավանքին անհոգ և աներկնյուն:

Վարդը թեթևամիտ չէր և ոչ դյուրահավատ: Եթե նա չանսաց իր մեծ բարեկամի խորհրդին և միացավ իր թշնամիներին, պատճառը այն մեծ վստահությունն էր, որ ուներ իր քեռորդու՝ Միքայելի վրա: Սա շատ բան էր պարտական Վարդին:

Ջատիկը, որ այն տարին ապրիլի 7-ին էր, տոնեցին մայրաքաղաքում և անմիջապես մեկնեցին պատերազմ: Հասան Կեպի կոչված տեղը և բանակեցին: Այստեղ Վասիլը վճռեց վերջ տալ Վարդի կյանքին: Դավադրությունը սարքեց իր համախոհների հետ, որոնց անունները պահվել են: Բոլորն էլ հայեր էին:

[1] Vita Basilii = **Theoph. Cont.**, 235-338.

Հովհաննես Նեստոկոմիտոս անունով մեկը իմացավ Վարդի դեմ պատրաստվելիք փորձանքը: Երեկոյան արևը մայր մտնելուց հետո գնաց կեսարի վրանը և ասաց Պրոկոպիոսն, որ Վարդի պրոտովեստիարն էր (հանդերձապետը), թե «Վաղը կտոր կտոր պիտի անեն ձեր տիրոջը, Վարդ Կեսարին»:

Պրոկոպիոսը հայտնեց անախորժ գաղտնիքը կեսարին: Սա բանի տեղ չդրավ, և ասաց. «Գնա՛, ասա՛ Նեստոկոմիտոսին, որ ցնորում ես. գիտցի՛ր, որ երիտասարդ ես և քեզ դեռ վայել չէ ձգտել պատրկության պատվին: Պատրկության համար է անշուշտ, որ որոմներ ես ցանում»:

Սակայն, կեսարը չհանգստացավ: Իր պատասխանը համոզիչ չէր: Գուցե գուժկանը հիմ ուներ: Գիշերը նինջ չեկավ աչքերին: Խռոված էր հոգին և երերուն: Դեռ լույսը չբացված՝ կանչեց իր մերձավորներին, հաղորդեց սոսկալի տեղեկությունը և խորհուրդ հարցրեց: Իր վաղեմի բարեկամ Փիլոթեոսը, որ պրոտոսպաթար էր և կառնիկլե (գանձապահ), առաջարկեց. «Վաղը ա՛ռ ուսերիդ, ո՛վ տեր, ոսկեճամուկ քղամիդդ և այդպես երևա՛ բշնամիներիդ, տեսքիցդ կփախչեն»:

Արևածագին ելավ Վարդը իր վրանից, և ուղղվեց դեպի կայսերական վրանը: Նստած ձիու վրա, փայլուն զգեստները հագին, մեծ շքախումբը իր շուրջը բոլորած, ուշեճալով իր մոտ որպես պրոտոստատոր ազնվատոհմ Արգիրին, կեսարը մոտեցավ Միքայելի վրանին: Կոստանդին Տոքսարասը, որ դավադիրներից մեկն էր, դիմավորեց կեսարին, և գնաց հաղորդելու Վասիլին նրա գալուստը: Վասիլն ընդառաջեց, ողջույն տվավ և ձեռքից բռնելով առաջնորդեց կայսեր մոտ: Վարդը բազմելով կայսրի կողքին ասաց. «Զորքերը կազմ ու պատրաստ են, օ՜ տեր, հրամայի՛ր, որ նավ նստեն դեպի Կրետե»:

Վասիլը կանգնած էր ետևը սպառնական դիրքում: Հանկարծ Վարդը երեսը դարձրեց և աչքն ընկավ Վասիլի վրա: Դեմքը խոժոռած էր: Մի ակնթարթում շողշողաց Վասիլի սուրը, վազեցին դավադիրները և պատառ պատառ արին անբախտ իշխանին: Միքայելը լուռ հանդիսատես էր: Օրվա երրորդ ժամն էր (մեր հաշվով առավոտյան ժամի 9-ը), 21 ապրիլի, 866 թվին:

Վասիլը մենակ չէր, այլ շրջապատված էր մի խումբ մտերիմներով, որոնք բոլորն էլ հայեր էին և մասնակից դավադրության: Նրանց անունները բարեբախտաբար պահված են: Նախ Վասիլի հարազատ եղբայրը՝ Մարիանոս (կամ Մավրիանոս), Վարդի փեսան՝ Սմբատը, ոմն Ասիլայոն, որը կոչվում է մերթ Սմբատի եղբորորդին, մերթ Վասիլի, Վարդ, եղբայր Սմբատի[1]: Ապա հիշվում են Պետրոս Բուլղար, Լևոն Ասորի, սրա եղբորորդին, Հովհաննես Խալդը և Կոստանդին Տոքսարասը:

[1] **Symeon**, 678; **Georg.**, 830. կոչում են Սմբատի եղբորորդի, իսկ քիչ հետո՝ Վասիլի եղբորորդի, **Georg.**, 837; **Symeon**, 688.

Բուլղար, ասորի, խալդ հորջորջումները որոշիչ չեն ազգության, այլ փութ անուններ են: Այլապես բուլղարի (Պետրոս) եղբորորդին չէր կարող ասորի կոչվել (Լևոն): Հովհաննեսը երևում է նույն անձն է, որ վերև կրում է Ցիփիճարիտես անունը (Ցիփիճարցի՞): Ցիփիճար և հավանորեն Տոքսար տեղի անուններ են, թերևս, Խաղտյաց աշխարհում: Այս անձերը ևս հայ են, հակառակ իրենց մոլորեցուցիչ հորջորջումներին:

Սպանությունից հետո կայսրը նամակ գրեց մայրաքաղաք, պատրիարք Փոտին, ուր բացատրում էր, որ Վարդը սպանվեց իր հանցավոր դիտումների պատճառով: Փոտի պատասխանը հասել է մեզ: Պատրիարքը շատ զգույշ է: Վարդի կորուստը մեծ ցավ էր, ոչ միայն անձնական բարեկամն էր և հովանավորը, այլև գլխավոր նեցուկը եկեղեցական վեճերում: Ավաղել նրա մահը դժվար էր առանց վտանգելու իր դրությունը արքունիքում: Զարմանք է հայտնում, որ Վարդը, գրեթե կայսր առանց անվան, անխոհեմ է գտնվել և կամեցել է ձեռք բարձրացնել իր տիրոջ դեմ: Միևնույն ժամանակ չի թաքցնում իր կասկածամտությունը և հարց է տալիս, արդյոք նամակը կեղծված չէ և եղելությունը իսկապես ճիշտ է ներկայացրած:

Ուշադրության արժանի է մանավանդ պատրիարքի հորդորը, որ կայսրը անմիջապես վերադառնա քաղաք: Ոչ միայն սենատը, այլև ժողովուրդը առանց խտրության սեռի և հասակի որպես թե ցանկանում են տեսնել փութանակի կայսրին իրենց մեջ[1]:

Պատրիարքը հեռատես էր և կասկածում էր, որ կայսրը ևս կարող էր զոհվել Վասիլի փառասիրական ձգտումին: Կայսրը ուղղվեց դեպի մայրաքաղաք: Ճանապարհին Ակրիտաս նավահանգստի մոտ մեծ բազմություն էր հավաքվել դիմավորելու կայսրին: Հանկարծ մի վանական, բառած մի քարաժայռի վրա, գոչեց բարձր ձայնով. «լավ արշավեցի՛ր, ո՛վ կայսր, սպանեցիր հարազատ քեռուդ, որ քեզ համար հոր տեղ էր, սպանեցիր, վա՛յ քեզ, վա՛յ քեզ, որ այդպես վարվեցիր»:

Կայսրը սրտմտեց և Մավրոթեոդորոս մանկլավիկին հրամայեց գնալ և հանդուգն վանականի գլուխը կտրել: Ամբոխը մեջ ընկավ և փրկեց թշվառականին, պատճառաբանելով, որ նա այսահար է[2]:

Եթե ճշմարտությունը խոսում է մանուկների բերանով, խղճի ձայնը լսելի է լինում, երևի, խենթերի, բախածների մոտ: Հասարակական կարծիքը թվում է, թե Վարդի կողմն էր: Այս էր պատճառը, որ դավադիրները չէին համարձակվել գործել քաղաքում և ստիպվել էին թատերական արշավանք ծրագրել և այդ պատրվակով քաղաքից դուրս քաշել զոհին: Մայրաքաղաքը կորցրել էր ցասումի և բողոքի ընդունակությունը: Քաղաքական բեմը

[1] **Migne, P G** 102, col. 717-719.

[2] **Georg.**, 831; **Symeon**, 679.

վաղուց դարձել էր նրա աչքում մի տեսակ կրկես, ուր դերակատարների փոփոխությունը բերում էր նոր զվարճություն: Անգիտակից բազմությունը թեքում է գլուխը հաղթողի առաջ:

Փոտի կասկածներն իրավացի էին: Հաջորդ տարին Միքայելը ևս ընկավ Վասիլի սրից, 24 սեպտեմբերի 867 թվի:

Վարդի մահից հետո Միքայելը պահեց եկեղեցական խնդիրը այն հունի մեջ, որ գծել էր մեծանուն կեսարը: 867 թվի ժողովը նզովեց պապին, պարսավելով նրա փառատենչ դիրքը Բյուզանդական եկեղեցու հանդեպ: Վասիլը գահ բարձրանալով բարվոք համարեց խաղաղասեր քաղաքականության հետևել և չխզել բարեկամական հարաբերությունները Արևմուտքի հետ: 869 թվին գումարեց մի նոր ժողով, այն, որ կոչվում է Ութերորդ Տիեզերական, և վերջ դրավ եկեղեցական պառակտումներին, հեռացնելով Փոտին և նորից առաջարկելով պատրիարքական աթոռը Իգնատիոսին:

Արևմտյան գիտնականները, հին և նոր, բացասաբար են վերաբերում Վարդի եկեղեցական քաղաքականության, մեկնելով լատին եկեղեցու շահերի հասկացողությունից: Սակայն, այլ է Բյուզանդական տեսակետը, որ միայն ողջունել կարող է ամեն մի ձեռնարկ և ջանք, որի նպատակն է հետ մղել պապերի հավակնոտ ձեռքը և պաշտպանել բյուզանդական եկեղեցու ազատությունն ու անկախությունը: Ապագան խոսում էր Վարդի նպաստին: Վասիլը միայն կասեցրեց այն, ինչ որ ի վերջո պիտի հաղթանակեր: 1042 թվի եկեղեցական խզումը այլ բան չէր, քան Վարդի և Փոտի քաղաքական գծի բոլորումը:

Վասիլյան պատմագիրները և կղերական գրիչները միացած ջանք չեն խնայել սևացնելու Վարդի անունը: Մինչդեռ նրա երկու գործերը՝ ժողովրդական լուսավորություն և հոգևոր ազատություն եկեղեցու անկախության մեջ՝ բավական են, որ պատվո տեղ տրվի նրա անվան պատմության մեջ: Անպայման պետական խոշոր դեմք էր: Մարդ էր, որին վիճակված էր հիմն դնել նոր հարստության, և զոհվեց խարդախության: Ընկավ անփառունակ մահով Մամիկոնյան որդին, մինչ արժանի էր փակել իր աչքերը փառքի անդորր բարձի վրա:

ՎԱՍԻԼ ՀԱՅԱՉՆ

(ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱՅՍՐ. 867-886)

I

Անողորմ սպանություն էր, որ կատարվեց սեպտեմբերի 4-ին 867 թվին:

Ս. Մամաս պալատում մեծ կոչունք էր: Պալատը գտնվում էր Ոսկեղջյուրի մյուս ափին, այժմյան Գալատայում, որն այն ատենները դեռ քաղաքի մեջ չէր, արվարձան էր: Երիտասարդ և զվարճասեր Միքայել կայսրը սիրում էր մերթ ընդ մերթ վրդովել մենավոր ապարանքի լռությունը աղմկալից խնջույքներով:

Այս անգամ վերջին խրախճանքն էր, որ վայելում էր կենսասեր թագակալը: Գինուց արբած, ախորժանքից թմրած, կայսրը քաշվեց ննջարան: Խոնջության նիրհը արդեն կոխել էր, երբ շառաչյունով ներս խուժեցին չարամիտ դավադիրները: Մի խումբ հայեր էին Վասիլի առաջնորդությամբ: Կայսրը արթնեց, կարծես նրա համար, որ տեսնե ողբերգական վախճանը իր տակավին երիտասարդ կյանքի: Մահապարտ սուրերը շողացին և թշվառ զոհն ընկավ անշնչացած:

Մինչ սպանվածի մայրը, գահազուրկ Թեոդորան, և սևազգեստ քույրերը արցունք էին թափում արենաշաղախ դիակի վրա, չարագործները շտապեցին անցնել Ոսկեղջյուրը: Մութ գիշեր էր, փոթորիկը ոռնում էր, ծովը խռովահույզ՝ զարկում էր կատաղի ալիքները նավին, որ տանում էր դավադիրներին մյուս ափը, ուր սպասում էին համախոհները: Միասին սուրացին և մտան Բուկոլեոն, մեծ պալատի նավամատույցը: Այնտեղ ևս սպասողներ կային: Շարժվեցին դեպի մեծ պալատը և անարգել գրավեցին:

Վասիլը հռչակվեց կայսր միահեծան:

Միքայելին շատ բան էր պարտական նոր կայսրը: Սպանել բարերարին ապերախտ, ծանր գործ է: Սակայն սովորություն է արմատացած՝ դատել գործն ըստ հետևանքների: Վասիլի ոճիրը տանում էր դեպի մեծություն, բաց էր անում պետության համար մի նոր և փառավոր շրջան, երբ բյուզանդական քաղաքակրթությունը հասավ իր գագաթնակետին: Արյունոտ ձեռքերը չգտան դատապարտողներ: Հասկանալի է: Պատմության լավագույն էջերը, փայլուն մեծագործությունները, վերասլացիկ երազները, գրեթե բոլորը ողողված են արյունով:

Վասիլը, շատերի նման, անպարտ էր: Ասում են, պատասխանատուն ինքը չէր իր գործերի համար, այլ նախախնամությունը, որի հլու գործիքը լինելով, կատարում էր միայն այն, ինչ որ թելադրում էր վերին անտեսանելի զորությունը: Այսպես է ներկայանում մեզ Վասիլը հենց սկզբից այն սքանչելի զրույցի մեջ, ուր նա երևում է առաջին անգամ պատմության բեմի վրա:

Տակավին պատանի, լքեց Վասիլը հայրենի տունը և ճանապարհ ընկավ դեպի մայրաքաղաք: Հույս ուներ աշխատանք գտնել և օգնության գալ իր մորը և դեռահաս եղբայրներին ու քույրերին: Ցույլը ձեռին, մախաղն ուսին, ոտով կտրեց երկար ուղին և կանգ առավ մայրաքաղաքի պարիսպների առաջ: Ոսկի դրան մոտ էր, ուր և Ս. Դիմեդեսի վկայարանը: Երեկոյան դեմ էր, արևը քաշում էր իր վերջին ճառագայթները: Շուտով մութը կոխեց: Ուղևորը, հոգնած ճանապարհի նեղությունից, պառկեց վանքի պատի տակ և քուն մտավ:

Գիշերը աստվածային մի ձայն արթնացրեց վանականներից մեկին. «Վե՛ր կաց, գնա, ներս հրավիրի՛ր կայսրին»: Կոստանդին Ծիրանածնի ասելով, վանականը մենաստանի վանահայրն էր և խորհրդավոր ձայնը Ս. Դիմեդես վկայինն էր: Վանականը գնաց, բայց դրանը կայսր չտեսավ, այլ մի գեղջուկ փոշոտ ճանապարհորդ: Դարձավ և քնեց:

Երկրորդ անգամ հնչեց միևնույն ձայնը նույն պատվերով: Վանականը նորից վեր կացավ, գնաց, բայց դարձյալ կայսր չտեսավ, փակեց դուռը և պառկեց քնելու: Շատ չանցավ և մի ուժգին հարված իջավ նրա կողքին և լսվեց նույն ձայնը. «Գնա՛ և ներս բե՛ր նրան, որ պառկած է դրան մոտ: Նա ինքն է կայսրը»:

Երկյուղած վանականը գնաց և հրավիրեց ներս աղքատ ուղևորին: Հաջորդ օրը տարավ բաղանիք, մաքրեց փոշուց, դարմանեց հոգածությամբ և եղբայրական ուխտ կնքեց նրա հետ:

Այսպես, նախախնամության ընտրյալը մտավ քաղաքը Ոսկե դռնից, ոսկե երազով և հառաջեց դեպի կայսերական մեծություն նույն անտես աջի առաջնորդությամբ:

Ո՞վ էր և ո՞րտեղից էր գալիս այս երկնառաք խորհրդավոր ճանապարհորդը, հայտնի չէ ստուգապես: Արդյո՞ք նրա անցյալը փայլուն չէր, ուստի և ծածկված դիտավոր անգիտության քողով: Կամ թե Վասիլը խոյացավ գահի վրա այնպիսի արագությամբ, առանց նախապես մեծ անուն հանելու քաջության, թե խոհականության մարզերում, որ ո՛չ ժամանակ և ո՛չ առիթ չտվեց հետաքրքրվելու իր անցյալով:

Ինչ և լինի պատճառը, Վասիլի կյանքի սկզբնական շրջանը, ծագումը, ընտանեկան պայմաններն և առաջին քայլերը մնացել են մութ կամ հազիվ նշմարելի աղոտ լույսի մեջ: Այս մասին շատ բան չգիտե նույնիսկ նրա թոռը՝ Կոստանդին Ծիրանածին կայսրը, որ պաշտում էր իր պապին և մեծ

ջանք է թափել գրելու նրա լիակատար պատմությունը: Պապի հոր անունն անգամ անծանոթ է պատմաբան և կենսագիր թողին (1): Անհայտն ու անորոշը թև են տալիս երևակայության, ծնում տեսակ տեսակ զրույցներ, արթնած հետաքրքրության գոհացում տալու համար: Այս կարգի զրույցներ, անհավաստի լուրեր, բռնի մեկնաբանություններ նախախնամության հաշվին, տեղ են գտել այն վավերական նյութերի մեջ, որ հավաքել է մեծ խնամքով Ծիրանածին պատմագիրը, կարգավորել և հյուսել մի կուռ և կազմ պատմություն, և վրան դրել իր հեղինակության դրոշմը:

Պապի պատմությունը գրված է հատուկ նպատակով, «որպեսզի հետնորդները չանգիտանան կայսերական տան, այդ երկարածիգ շառավիղի, բուն արմատն ու աղբյուրը», որ է Վասիլը: Նա «պետք է օրինակ ծառայե իր ժառանգորդներին, օրինակ արիության, մի տիպար, որին պիտի հետևեն և նմանեն»:

Նպատակավոր գրություններն անաչառ չեն լինում: Վասիլից գաղափարական դեմք ստեղծելու ձգտումով, իր անձնվեր թողը դիմել է երբեմն արհեստական միջոցների, վիպական շպարի: Որպեսզի իսկական դիմագծերը բացվին, հարկ է հանել հեռացնել անհարազատ վերադիրը, ներկերը: Բարեբախտաբար կան աղբյուրներ, որոնք միջոց են տալիս հետևելու Ծիրանածին պատմագրի գրչին, ինչ ինչ էջեր ուղղելու, կամ նորապես լուսաբանելու կարելիությամբ:

Հիշելի է մանավանդ Գեորգ վանականի պատմության շարունակողը: Գեորգ իր գործը հասցրել է մինչև Թեոդորայի առաջին տարիները՝ 842 թ.: Այնուհետև մի Անանուն հեղինակ շարունակել է մինչև 950 թվականները: Կարծում են, որ Սիմեոն Մետափրաստոսն է հեղինակը:

Ինչ որ պատմում են Վասիլի ծննդյան և մանկության մասին, նման է վեպի, քան ստույգ պատմության:

Վասիլը ծնված է որպես թե «Մակեդոնիայում», Ադրիանուպոլիս քաղաքի շրջակա գյուղերից մեկում, Միքայել Ռանգաբե կայսրի (811-813) օրով: Սրա ժամանակն էր, որ բուլղարները Կրում թագավորի առաջնորդությամբ հարձակվեցին կայսրության վրա և եկան պաշարեցին մայրաքաղաքը: Միքայել կայսրը կորցրեց թագը և նրա տեղն անցավ Լևոն Հայկազն 813 թվին: Բուլղարները ստիպվեցին հանել պաշարումը և հեռանալ: Երբ հասան Ադրիանուպոլիս քաղաքը, ավերեցին և գերեցին բնակիչներից տասնյակ հազար մարդ, չհաշված կանայք և երեխաներ, և տարան բնակեցրին Դանուբ գետի մյուս եզերքին: Գերիները, թեև Թրակիայի Ադրիանուպոլիս քաղաքից էին, կոչվում են մակեդոնացիք, ինչպես և քաղաքը համարվում է Մակեդոնիայում, և նոր գաղթավայրը Դանուբի ափին ևս կոչվում է Մակեդոնիա:

Վասիլի ծնողները գերիների թվում էին: Ինքը Վասիլը գերության ժամանակ խանճարուրապատ մանուկ էր: Կրումի արշավը 813 թվին էր, հետևապես Վասիլ ծնված պիտի լիներ այդ կամ նախընթաց տարում, 812-813 թվերին: Գերությունը հետ դարձավ Թեոփիլոս կայսրի օրով, դարձավ նաև Վասիլ իր ծնողների հետ: Այդ ժամանակ Վասիլը 25 տարեկան էր, ուրեմն դարձը տեղի է ունեցել 837-838 թվերին:

Հետաքրքրական է գերեդարձի պատմությունը, որ չէ հիշում Վասիլի թագակիր կենսագիրը:

Գերության պետը Դանուբի ափերին, կամ ինչպես կոչում է մեր աղբյուրը, Մակեդոնիայի զորավարը Կորդիլես (*Κορδύλης*) անունով մի անձն էր: Սա ուներ մի որդի, անունը Վարդ, հայտնի իր քաջությամբ: Կորդիլես թողնում է իր տեղը Վարդին, վստահելով նրա կարողության և ինքը մի հնարքով անցնում մայրաքաղաք հայտնելու Թեոփիլոս կայսրին, որ տարագիրները կուզեին դառնալ իրենց նախկին տեղերը: Կայսրը հրաման է տալիս, որ նավատորմը գնա դեպի գերիները, առնե և բերե մայրաքաղաք:

Բուլղարների թագավորն այդ ժամանակ «Վալդիմերն» էր, Կրումի թոռը: Երբ «Միքայել Բուլղարը» արշավում է Թեսալոնիկեի վրա, գերիները որոշում են օգտվել հանգամանքից և գլուխ բերել իրենց ծրագիրը: Անցնում են Դանուբ գետը, ուղղվելով դեպի ծովափ, ուր սպասում էին կայսերական նավերը:

«Մակեդոնացիք», ուրեմն, գերիները, առաջնորդ էին ընտրել Կորդիլեսին, որը, ինչպես երևում է, գաղտնի հանճարարարությունը կատարելուց հետո, վերադարձել էր մայրաքաղաքից իր տեղը: Բուլղարները փորձում են արգիլել գերիների փախուստը, բայց պարտվում են կռվում: Նրանց օգնության է գալիս հարևան մի ժողովուրդ, որ մի անգամ կոչվում է հունգար, երկրորդ անգամ՝ թուրք, և երրորդ՝ հոնն: Սրանց դեմ ևս արիաբար պաշտպանվում են փախստականները, կռվելով երեք օր շարունակ և չորրորդ օրը հաջողում են նավ նստել: Մի վերջին հարձակում է տեղի ունենում բշնամու կողմից, բայց մի կտրիճ երիտասարդ, Լևոն Գոմոստոս անունով, իր մի քանի ընկերներով դիմադրում է և քշում: Այս Լևոնը հետո նշանակվում է ֆեդերատների, կամ օտարներից կազմված գնդի պետ, հետերարք:

Ինչպես երևում է, այս պատմությունը քաղված է մի վավերական լավ աղբյուրից, բայց քաղողը շատ բան չփոթել է: Թեոփիլոսի ժամանակ բուլղարաց թագավորը Վալդիմերը չէր, այլ Մալամիր և սա էր Կրումի թոռը, մինչդեռ Վալդիմեր (Վլադիմիր) Բորիսի որդին էր և հաջորդը:

Հավանորեն Վալդիմեր սխալ ընթերցումի արդյունք է: Միևնույն ժամանակ հիշվում է և Միքայել Բուլղարը, այսինքն՝ Բուլղարաց թագավորը: Միքայել քրիստոնեական անուն է Բոգորիսի (Բորիսի), որ Մալամիրի

եղբորորդին էր և հաջորդը: Շատ կարելի է, որ Միքայել ընթերցումը ևս վրիպակ է փոխանակ Մալամիրի, եթե միայն չենք ուզում ենթադրել, որ Միքայել Բոգորիսը կարող էր արշավանքի վարող լինել ոչ իբրև թագավոր, այլ զորավար, Մալամիրի թագավորության ժամանակ: Միքայել Բոգորիս գահ բարձրացավ, հավանորեն, 852 թվին: Հետևապես չէր կարող մասնակից լինել 837 թվի անցքերին որպես թագավոր:

Գերության առաջնորդները հայեր են: Կորդիլեսը հայ է, ինչպես վկայում է որդու Վարդ անունը: Հայ է նաև *Τζάντζης*, որ երևում է հայ բառ է: Սա նշանակված էր Կորդիլեսի կողմից իրեն տեղապահ, և չի հիշատակվում հետագայում թե ի՛նչ եղավ: Իսկ փախուստի ժամանակ զորավարներ են հիշվում Կորդիլես և Ցանց թե Ճանճ:

Արդյո՞ք Վարդը սպանվել էր կռվում: Այս մասին հիշատակություն չկա: Հավանական է, Ցանց թե Ճանճ հենց նույն Վարդն լինի: Կրկնակի անուններից մեկն իսկական անունն է, մյուսը՝ մականուն, փութ անուն:

Ճշմարտությունից հեռու չենք լինի, եթե ասենք որ Լևոն Գռմոստոսը ևս հայ պետք է լիներ: Հետերարքները սովորաբար հայերից էին, և նրանց ձեռքի տակ գտնված գնդի մեջ հայերը նվազ թիվ չէին կազմում:

Բուլղարները գերեցին 813 թվին տասնյակ հազար մարդ Ադրիանուպոլսից: Ուրիշ աղբյուրից գիտենք, որ հետևյալ տարին նույնպես մեծ գերություն հանեցին, ասպատակ սփռելով մինչև Արկաղիոպոլիս և դարձին գերի տարան 50 հազար ամբոխ: Թե սրանց ոչ աննշան մասը հայեր էին, երևում է ոչ միայն նրանից, որ առաջնորդները, ինչպես տեսանք հայ էին, այլև որ ավարի և կողոպուտի մեջ հիշատակվում են հատկապես «հայկական բանվածներ և ազնիվ գորգեր, զգեստեղեն և պղնձեղեն»:

Ադրիանուպոլսի գերիների մեջ էր նաև քաղաքի եպիսկոպոսը՝ Մանուելը: Նրա հետ էին նաև Վասիլի ծնողներն ու ինքը մանուկ Վասիլը: Մանուել եպիսկոպոսը բուլղարներից շատերին դարձրեց քրիստոնյա: Սակայն, Կրումի հաջորդը Մուտրագոն թշնամացավ եպիսկոպոսին, փորձեց ուրանալ տալ քրիստոնեական հավատը և վերջը մարտիրոսական մահով սպանեց նրան: «Վասիլի ազգականներից շատերը ևս նահատակվեցին, անմասն չմնալով մարտիրոսության պատվից»,-ավելացնում է պատմագիրը:

Գերիների թվում էր և մի անձն Կինամոն անունով: Սկզբում սիրելի եղավ Օմուրտագին (որ նույն Մուտրագոնն է) բուլղարաց թագավորին, բայց հետո բանտարկվեց, չուզենալով կրոնափոխ լինել և սպանվեց հաջորդ թագավորի Մալամիրի օրով նմանապես մարտիրոսական մահով:

Կինամ(ոն) պարթևական անուն է, **Kinnama**, որ նշանակում է «մարդ, որի անունը քեն է», քինախնդիր: Պետք է ենթադրել, որ Կինամոնը ևս հայ էր: Հավանորեն Մանուել եպիսկոպոսն իսկ հայ էր: Անունը թեև սուրբգրենական

է, բայց այդ ձևով ավելի հայկական է, ընդունված շատ հնուց Մամիկոնյան տան մեջ: Նրա հետ են Վասիլի ծնողները և ազգականները, որոնցից ոմանք բաժնակից եղան նրա մարտիրոսության:

Գերության զոհերը, ինչպես երևում է, մեծ մասամբ հայեր էին:

Երբ Վասիլը վերադարձավ իր բուն երկիրը, մտավ ծառայության Մակեդոնիայի զորավարի մոտ, որ մեզ ծանոթ Ցանցն էր: Այստեղից հետևում է, որ Վասիլը Մակեդոնիայից էր:

Փոտի կազմած ծննդաբանության մեջ ևս Վասիլի նախնիք հաստատվում են Մակեդոնիայի Նիկե քաղաքում, հետո տեղափոխվում են Փիլիպպիոն քաղաքը, որ նույնպես Մակեդոնիայումն է: Երբ Վասիլը հարստացավ Դաճելիս կնոջ շնորհիվ, կալված գնեց Մակեդոնիայում և ապահովեց իր ազգականներին: Այս երևույթները ցույց են տալիս, որ Վասիլի սկզբնական բնակությունը եղել է Մակեդոնիայում: Գուցե այս է պատճառը, որ մակեդոնացի են կոչվում Ադրիանուպոլսի գերիները, որոնց մեջ էին Վասիլի ծնողները: Կարելի էր կարծել, որ Մակեդոնիա կիրարկված է լայն մտքով, մեջն ունենալով և Թրակիան, ինչպես հայերեն երկաթագիր մի Ավետարանում, գրված ՆԾՁ հ. թ. = 1011 թվին «ի գավառին **Մակեդոնիոյ** ի քաղաքն որ կոչի **Անդռնապալիս** ի թագաւորութեան Վասլին»:

Բայց IX դարում Մակեդոնիա և Թրակիա երկու զատ թեմեր էին և շփոթության հիմ չկար: Թվում է, որ Ադրիանուպոլսեցու և Մակեդոնացու նույնացումը կապ ունի Վասիլի ծննդաբանության հետ: Ըստ պատրիարք Փոտի, Վասիլի մայրը Ադրիանուպոլսեցի էր, հայրը՝ Մակեդոնիայից: Այս երկվությունը հնարամիտ պատրիարքի կողմից մի մեկնություն է հաշտեցնելու Ադրիանուպոլսեցու մակեդոնացի կոչումը: Նվազ ընդունելի է հակառակը, այսինքն՝ որ ծննդաբանական երկվությունը ազդած լինի գերեվարության պատմության վրա: Առաջնությունը այստեղ չի պատկանում պատրիարքին, որին հավանորեն ծանոթ էր այն սկզբնական աղբյուրը, որից մեր պատմագիրը քաղել է գերեվարության հատվածը:

Որտեղացի էր Վասիլը, պարզ չէ: Մակեդոնիան ամեն պարագայիս ավելի իրավունք ունի այդ պատվին, քան Ադրիանուպոլիսը: Նրա ծնողների գերեվարությունը, որքան որ կապ ունի Ադրիանուպոլսի անցքերի հետ, տարակուսելի է: Վասիլը չէր կարող ծնված լինել 812 թվին, եթե այս է պատմվածքի նպատակը: Ինչպես կտեսնենք ստորև, ավելի հիմ կա կարծելու, որ Վասիլը ծնված էր գերեդարձի ժամանակ 836-837 թվին:

Ուշագրավ է, որ Վասիլի կենսագիրը, Կոստանդին Ծիրանածինը, չգիտե կամ անտես է արել գերիների վերադարձի պատմությունը: Հիշում է, որ Վասիլի ծնողները գերիների մեջ էին 813 թվին և Վասիլը՝ մանուկ: Բայց նրանց վերադարձը կատարված է համարում խաղաղ պայմաններում և ոչ

այնքան ուշ: Բուլղար թագավորը թույլ է տալիս գերիներին վերադառնալ հայրենիք, «խոնարհելով կայսերական զորության առաջ»:

Երբ գերիները պատրաստվել էին հեռանալ, Բուլղարաց թագավորը նկատեց ամբոխի մեջ մանուկ Վասիլին, կայտառ և ազնիվ դեմքով, և մի արտասովոր մեծության խնճոր տվեց նրան: Երեխան առանց քաշվելու մոտեցավ թագավորին և փարելով ծնկան ցույց տվավ այնպիսի քնքշություն, բնածին և ազնիվ, որ թագավորը հիացավ, այն, ինչ իր շրջապատը դժգոհում էր: Այստեղից հետևում է, որ Վասիլը երեխա էր դարձի ժամանակ և ոչ գերեվարության:

Ծնողները վերադարձան իրենց տեղը մանկան հետ: Երբ մի անգամ դաշտ գնացին հսկելու հնձվորներին և միասին աշխատելու, մայրը տատասկներից հովոց պատրաստեց երեխային պաշտպանելու կիզիչ արևի դեմ: Հանկարծ մի արծիվ իջավ և թևարձակ հովանի եղավ երեխային: Մայրը երկյուղ կրելով, որ թռչունը կարող է վնասել երեխային, քարով քշեց: Բայց քիչ հետո նորեն եկավ արծիվը: Մայրը դարձյալ քշեց: Թռչունը երրորդ անգամ երևաց մանկան գլխավերևը: «Այսպիսի մարգարեական նշաններ շատ են պատահել,- ասում է կենսագիրը,- բայց ինքը չի ուզում կանգ առնել նրանց վրա»:

Վարդան, որ կայսր դարձավ Փիլիպպիկոս անունով 711-713 թվին, նախքան գահակալելը, նման երազ էր տեսել, թե ինչպես արծիվը փռել էր թևերը նրա գլխին: Նույնը պատմում է Խորենացին Արծրունիների մասին նրանց անվան ստուգաբանության առթիվ:

Վասիլը հազիվ մանկությունից ելած կորցրեց հորը: Ընտանիքի ծանրությունը մնաց նրա վրա: Պետք էր խնամել մորը և եղբայրներին: Տեսնելով, որ երկրագործությունից մեծ շահ չկա, մտածեց գնալ մայրաքաղաք: Մեծ քաղաքները հնարավորություն են տալիս երևան հանելու մարդու ընդունակությունները, նկատում է պատմագիրը, այն, ինչ գյուղերը կլանում, խեղդում են լավագույն ձիրքերը: Մայրը դժվարանում էր թողնել որդուն, բայց մի շարք երազներ ստիպեցին խոնարհել և օրհնել Վասիլին դեպի պանդխտություն:

Մի օր մայրը երազ տեսավ, ինչպես երբեմն Կյուրոսի մայրը, որպես թե մի մեծ ծառ էր բուսել: Ծառը բարձրացավ տանից վեր, ծաղկած էր և պտուղներով ծանրաբեռնված: Ծառի բունը ոսկի էր, ճյուղերն ու տերևները ևս ոսկեճման:

Իր մերձավորներից մեկը, որ գիտեր մեկնել երազներ, բացատրեց, թե այս զարմանալի երազը գուշակում է որդուն մեծ և փայլուն ապագա: Մի ուրիշ անգամ երազում տեսավ, թե ինչպես մի ծերունի մարդ, որի բերանից բոց էր ելնում, ասաց պարզ և որոշակի, թե սիրելի որդիդ Վասիլը մի օր պիտի առնե իր ձեռքը կայսերական իշխանության գայիսոնը: Մայրը ապշած՝

հարցրեց թե ո՞վ է խոսողը: Պատասխանեց, «Ես եմ՝ Եղիա» և չքացավ: Այս աստվածային ներշնչումներից հետո մայրը համաձայնեց թողնել որդուն օտարություն:

Վասիլի կենսագիրը չի հիշում, որ իր պապը, նախ քան մայրաքաղաք գալը, ծառայել է Մակեդոնիայի զորավարի՝ Յանցի, մոտ:

Վասիլն ուղևորվեց մայրաքաղաք «Թրակիական Մակեդոնիայից»: Ուշադրության արժանի է այս ասությունը, որով հեղինակն ուզում է հարթել ծանոթ աշխարհագրական դժվարությունը:

Պատանին կանգ առավ Ոսկե դրան մոտ Ս. Դիոմեդեսի եկեղեցում: Երազատես վանականի անունը Նիկողայոս էր: Սա մի եղբայր ուներ բժիշկ, որ դարմանում էր Թեոփիլիցես իշխանին: Թեոփիլիցեսը Վարդի և Թեոդորա կայսրուհու ազգականներից էր, ուրեմն՝ հայ: Թեոփիլիցես նշանակում է փոքրիկ Թեոփիլոս, այլապես Թեոփիլիկոս, կամ Թեոփիլիդիոն, մականուն էր **Paideuomenos:** Բժիշկը գալով Ս. Դիոմեդես իր եղբոր մոտ, տեսավ Վասիլին և հիացավ նրա արտաքին տեսքից: Հետաքրքրվեց իմանալ, ո՞վ է նա: Եղբայրը պատմեց իր տեսիլքը, խնդրելով գաղտնիք պահել:

Բժիշկը մի օր, երբ ճաշի էր Թեոփիլիցեսի մոտ, լսեց որ սա պետք ունի մի կտրիճ ծիապանի իր ախոռի համար: Առանց վարանելու հանձնարարեց Վասիլին: Տանտերը իսկույն նեթ մարդ ղրկեց նրա ետևից:

Թեոփիլիցես շատ հավանեց Վասիլին: Խոշորագեղ երիտասարդ էր, գանգուր մազերով, մեծ գլխով, որի պատճառով և անվանեց նրան **Kephalas**, մեծագլուխ: Ավելի հարմար ծիապան չէր կարելի երևակայել: Թեոփիլիցես կարգեց նրան պրոտոստրատոր, ախոռապետ:

Միքայել դեռահաս կայսրը նոր էր փեսայացել: Բուկելլարյան թեմի զորավարը նրան նվեր էր բերել մի քաջատոհմիկ և տաքարյուն նժույգ: Մտադրություն ունենալով արշավի հանել կրկեսում, կայսրը ուզեց նախապես քննել, նայել ատամներին և որոշել տարիքը, և ընդհանրապես ընտելանալ բնավորության: Սակայն, ո՛չ կայսրը և ո՛չ ուրիշ որևէ մեկը չկարողացան մոտենալ ձիուն, այնքան կատաղի էր: Թեոփիլիկոս, որ ներկա էր, ասաց կայսրին, թե իր մոտ մի պատանի կա, արի և քաջ ձիավարժ, նա միայն կարող է սանձահարել այս ապերասան կենդանուն:

Միքայելը պատվեր տվեց իր սենեկապանին, որ գնա Երկաթե դուռը (**Siderapyla** - Դեմիր կապու) և բերի Վասիլին շտապով: Վասիլ եկավ, մոտեցավ ձիուն, մի ձեռքով բռնեց սանձը, մյուսով սկսեց շփել ականջը: Կատաղի երիվարը հլու և խոնարհ էր որպես ոչխար: Կայսրը գոհ մնաց, առավ արի երիտասարդին իր մոտ ստրատորի, ձիապանի, պաշտոնով և միևնույն ժամանակ պատվիրեց հետերթք Անդրեասին ընդունել նրան օտարականներից բաղկացած գնդի մեջ:

* * *

Գեորգի Շարունակողը, առաջին անգամ հիշում է Վասիլիոս ծիու դեպքի առթիվ, Միքայելի ամուսնությունից հետո: Ձիու դեպքը տեղի է ունեցել ամուսնությունից «քիչ հետո»: Միքայել ծնված էր 839 թվին, ամուսնանալու համար պետք է գոնե 15 տարեկան լիներ, ընդունելով հանդերձ պատմագիրների վկայությունը, թե Միքայելը շուտ էր հասել արբունքի: Այս հաշվով ամուսնությունը կայացած պիտի լինի ոչ առաջ, քան 851-855 տարիները: Ենթադրենք, որ ծիու պատմությունը վերաբերում է նույն 855 թվին:

Թեոփիլիցեսը հանձնարարելով Վասիլիոս կայսրի ուշադրության, անվանում է սրան *νεώτερον*, այսինքն՝ պատանի, դեռահաս: Եթե Վասիլը ծնված էր 812 թվին, այդ պահուն, ուրեմն, 43 տարեկան պիտի լիներ: Արդ՝ ի՞նչպես կարող էր Թեոփիլիցես 43 տարեկան մարդուն կոչել *νεώτερον*, պատանի:

Հավանական չէ նաև, որ 15- ամյա մատաղ կայսրը ծիապան վերցնե 43 տարեկան, հասակն արդեն կոտրած մարդու: Ակներև է, որ Վասիլը չէր կարող ծնված լինել 812 թվին: Եթե ծնունդը դնենք գերեդարձի տարին, 836 թվին, համաձայն վերև հայտնած ենթադրությանս, Վասիլը մեծ կլինի Միքայելից միմիայն երեք տարով, 19 տարեկան պատանի, հասակակից և արդարև *νεώτερον*: Միքայելը, երբ ներկայացրեց իր նոր ծիապանին կայսրուհուն, ասաց. «Տե՛ս, մայր իմ, ինչ կտրիճ տղա եմ բերել, **agouron**»: Հասակավոր մարդ չէ նշանակում **agouron**, այլ երիտասարդ, դեռահաս: Այս առթիվ էր, որ կայսրուհին, ինչպես հավատացնում է պատմագիրը, մարգարեացավ, ասելով. «Սա է, որդյակս, որ պիտի ջնջե մեր տունը»:

Կոստանդին Ծիրանածինը ևս գիտե ձիու դեպքը, բայց այլ կերպ է պատմում: Միքայել կայսրը մի ձի ուներ, գեղեցիկ, բայց պնդագլուխ: Ամեն նկատումով ձին հրաշալի էր, բարձր, սիրուն, արագավազ և տոհմիկ: Մի թերություն ուներ: Երբ սանձը հանում էին գլխից, այլևս անհնարին էր մոտենալ, խրտչում էր:

Մի անգամ կայսրը նստեց այս ձին և գնաց որսի: Ձին քշեց և մկունդով զարկեց մի նապաստակի: Կայսրը ուրախացած՝ իջավ ձիուց, որ վերցնե սպանած որսը: Ձին փախավ, ազատ զգալով իրեն: Մարդիկ ետևից ընկան և չկարողացան բռնել: Միքայելը զայրացավ և հրամայեց անհնազանդ կենդանու հետին ոտները կոտրեն, եթե բռնվի: Վարդ Կեսարը խնդրեց կայսրին, այդպիսի ծանր պատիժ չտալ մի չնչին հանցանքի համար և չփչացնել ազնիվ ձիուն: Այդ միջոցին Վասիլը շշնջաց իր տիրոջ Թեոփիլիցեսին, արդյոք կայսրը չի՞ նեղանա, եթե ինքը քշե իր ձին և քշած ժամանակ ցատկե կայսեր ձիու վրա և այդպես բռնե նրան: Կայսրի հավանությամբ, Վասիլ

հաջողեց սանձահարել ձիուն: Հրաշացավ Միքայելը և խնդրեց Թեոփիլիցեսին զիջանել իրեն այդ քաջ տղային որպես կայսերական ստրատոր, ձիապան: Վասիլը գրավեց կայսրի սերը և կարգվեց պրոտոստրատոր, ախոռապետ:

Մի նմուշ է, թե ինչպես Ծիրանածին պատմագիրը փոխում է, զարդարում հնարածո մանրամասներով պարզ և անպաճույճ դեպքերը, որով և վտանգում է պատմական ճշմարտությունը: Չի սանձելու հասարակ և իրական դեպքը այնպես է այլանդակվել Կոստանդնի գրչի տակ, որ վիպական կերպարանք է ստացել, կորցնելով իրական գծերը: Այստեղ չի հիշվում, որ անցքը տեղի է ունեցել Միքայելի ամուսնությունից հետո: Մեզ հետաքրքրում է այն հարցը, թե ե՞րբ մտավ Վասիլ Միքայելի մոտ որպես ձիապան:

Որսի գնացող Միքայելը պետք է որ առնվազն 14-15 տարեկան լիներ, ուրեմն, մոտավորապես այն հասակում, երբ ամուսնացավ: Մյուս կողմից, եթե ճիշտ է, որ Վարդը ընկերացել էր Միքայելին որսի ժամանակ, այդ կարող էր պատահել ոչ առաջ, քան 856 թիվը, երբ Միքայելն ու Վարդը անցան իշխանության գլուխ, ներքինի Թեոկտիստոսի սպանությունից հետո: Գիտենք, որ 858 թվին, երբ մահափորձ եղավ Վարդի դեմ, Վասիլն արդեն պրոտոստրատոր էր: Հավանական է, որ Վասիլ ստրատորի պաշտոնը ստացած լիներ 856 թվին պալատական մեծ հեղաշրջումի հետևանքով, երբ Վասիլ, մեր հաշվով, մոտ 20 տարեկան երիտասարդ պետք է լիներ:

Թեոփիլիցեսի մոտ Վասիլը մնաց մի քանի տարի: Առաջին անգամ նա հռչակվեց պալատական շրջանում ըմբշամարտության առթիվ: Վասիլի այս քաջագործությունը պատմում է Կոստանդին կայսրը առաջ քան ձիու դեպքը:

Վարդի որդին Անտիգոնոսը հրավերք ուներ պալատական շենքում ի պատիվ իր հոր: Վարդի հետ եկան ծերակուտականներ, մոտիկ բարեկամներ և ի միջի այլոց մի քանի բուլղարացի, որ դեսպանության աղագավ գտնվում էին մայրաքաղաքում: Հրավիրված էր նմանապես Վասիլի տերը, Թեոփիլոս կամ Թեոփիլիցես որպես ազգական: Այնտեղ էր և Կոստանդին պատրիկը, Գենեսիոս պատմիչի պապը: Երբ բուլղարների գլուխը տաքացավ գինուց, սկսեցին մեծախոսել և պարծենալ, որ իրենց մեջ մի ըմբիշ կա, որի մեջքը դեռ գետնին չի կպել: Թեոփիլիցես մոտեցավ Վարդ Կեսարին և ասաց, որ մեզ համար խայտառակություն է նվաստանալ բուլղարների առաջ: Սրանք պիտի վերադառնան իրենց երկիրը և հոխորտան, որ անհաղթելի են: Ասաց և առաջարկեց թույլ տալ բերել Վասիլին, որ իր մոտ ձիապան էր, և որը միայն կարող էր խելքի բերել պոռոտախոս բուլղարներին:

Շուտով երևաց Վասիլը: Կոստանդին պատրիկը սիրով վերաբերեց Վասիլին որպես հայ և զգուշության համար պատվիրեց հարդ շաղ տալ հատակի վրա, որպեսզի մենամարտելիս իր հայրենակիցը չսայթաքի: Ըմ-

բիշները՝ իրար կպան թե չէ, Վասիլը սեղմեց հակառակորդին իր բազուկներով, բարձրացրեց, կարծես մի խուրձ խոտ լիներ կամ չոր ու թեթև բուրդ, և նետեց սեղանի վրա: Հանդիսականները զարմացան և Վասիլի համբավը քնդաց:

Պետք է կարծել, որ ճշմարտության կորիզ կա այս դեպքի մեջ, թեև մեր աղբյուրներն այնքան տարբեր կերպով են ներկայացնում իրողությունը, որ կասկածելի են դարձնում նույնիսկ ենթադրյալ կուրիզը:

Գենեսիոս պատմիչը երկու դեպք գիտի ըմբշամարտության: Առաջինը տեղի ունեցավ Թեոփիլիցեսի մոտ և ոչ Անտիգոնոսի: Թեոփիլիցեսն էր ճաշի կանչել Անտիգոնոսին և Կոստանդին պատրիկին, պատմիչի պապին: Թեոփիլիցես, ինչպես և Վարդն ու Միքայել կայսրը, ունեին հատուկ ըմբիշներ: Այդ օրը Թեոփիլիցեսի ըմբիշները պարտություն են կրում Վարդի և Միքայելի ըմբիշներից: Հանդես է գալիս Վասիլը և փրկում իր տիրոջ ինքնասիրությունը: Կոստանդին պատրիկը երևում է նույն դերում, ինչ որ հիշում է Կոստանդին [Ծիրանածին] կայսրը, այսինքն՝ հարդ է բերում և սփռում հատակի վրա, որպեսզի Վասիլի ոտքը չսահե և չընկնի: Բուլղարը չզորեց բարձրացնել Վասիլին, մինչդեռ վերջինս ոչ միայն բարձրացրեց, այլև արագ շարժումով պտտեց և գլորեց **kata podrezan** ձևով, այսինքն՝ ոտ տալով, այնպես ուժգին, որ բուլղարի ուշքը գնաց և ջրով սթափեցրին:

Վասիլի հաղթության մասին Անտիգոնոսը պատմում է իր հորը՝ Վարդին, սա էլ Միքայելին: Իսկույն կանչում է կայսրը Վասիլին երկու ուրիշ ըմբիշների հետ: Հավանում է մանավանդ Վասիլին, որի արտաքինը այնքան տպավորիչ էր: Վասիլ արժանանում է մեծամեծ շնորհների և կարգվում ստրատոր: Այդ ժամանակն էր, որ Թեոդորա կայսրուհին պիշ պիշ նայելով Վասիլին բացականչեց. «Որդի՛ս, իցիվ թե տեսած չլինեի այսօր սրան. այս մարդը քանդելու է մեր տունը, ինչպես որ հայրդ նախագուշակել է»:

Երկրորդ դեպքը, նույն պատմագրի ասելով, տեղի ունեցավ, երբ Վասիլն արդեն գահի վրա էր:

Բուլղար թագավորը մի հռչակավոր ըմբիշ ուներ, որ անպարտելի էր համարվում: Մի օր սրան ղրկեց մայրաքաղաք մրցության: Վասիլ կայսրը չկարողացավ տանել, որ մի օտար ըմբիշ արատավորե հռոմեական անունը: Ինքը ախոյան ելավ ծպտված: «Սկյութը», ուրեմն բուլղարացին, փորձեց բարձրացնել «Մակեդոնացուն», բայց չկարողացավ: Մինչ Վասիլը գրկեց ընդան ուժեղ ձեռքերի մեջ, բարձրացրեց և զարկեց գետին այնպիսի սաստկությամբ, որ բուլղարը ուշաթափվեց և «շատ ջուր ու գինու կաթիլներ և վարդաջուր սրսկեցին, մինչև որ ուշքի բերին: Ականջից և քթից արյուն էր հոսում»:

Կայսրի ըմբշությունն ինքն ըստ ինքյան անհավատալի է: Ամբողջ պատմությունը այլ բան չէ, քան արձագանք առաջինի: Պատմիչի պապը

Կոստանդին պատրիկը ներկա է եղել մրցության և կարելի էր հուսալ, որ իր թոռը ստույգ տեղեկություն կունենար եղելության մասին, հիմնված ընտանեկան ավանդության վրա: Թվում է, թե թոռը գերադասել է հաճոյակատար լինել, քան ճշմարտասեր: Կոստանդին Ծիրանածնին, որի պատվերով գրել է իր պատմությունը, դուր գալու համար, չափազանցրել է իր եռանդը գովաբանելու Վասիլին, հորինելով նոր փաստ նրա ըմբիշական կարողության:

Ուշադրության արժանի է, որ Թեոդորայի մարգարեական երկյուղը առաջին ըմբշամարտից հետո, Կոստանդին Ծիրանածինը հիշատակում է բոլորովին ուրիշ առթիվ և ուրիշ պայմաններում: Նրա ասելով մի անգամ որսասեր Միքայել կայսրը գնաց որսի Արմամենտարիա կոչված վայրը և հետո ճաշ պատվիրեց և հրավիրեց իր մորը, ազգականներին և ծերակուտական մեծամեծներին: Կանչեց նաև Վասիլին, որ այդ պահին պրոտոստրատոր էր: Երբ Վասիլ սեղան նստեց, կայսրուհի Թեոդորան աչքերը սևեռեց նրա վրա, կարծես քափանցել էր ուզում նրա ներսը: Հանկարծ ցնցվեց և ուշաթափ եղավ: Ջրով և վարդաջրով ուշքի բերին: Հյուրերը շփոթված հեռացան: Միքայելը մոտեցավ մորը և հարցրեց ուշագնացության պատճառը:

Ահա այդ ժամանակ էր, որ հուզված կայսրուհին հայտնեց իր նախազգացումը Վասիլի նկատմամբ: «Ինձ թվում է,- ասաց թագուհին, -որ սա է այն անձը, որ կործանելու է մեր տունը: Հորիցդ լսել եմ, որ մեկը պիտի մեզ խորտակի: Նշաններից երևում է, որ Վասիլն է լինելու մեր ժառանգորդը: Կարծես, աչքովս տեսնում եմ մեր անկումը: Այս զգացումը այնպես խռովեց ինձ, որ ուշքս կորցրի»:

Կայսրը հանգստացրեց մորը ասելով. «Կասկածդ անտեղի է, մա՛յր իմ: Այս մարդը հասարակ և անկիրթ ոմն է, օժտված միմիայն ուժով ինչպես հին Սամսոնը, և ուրիշ ոչինչ: Մի Ենոք է կամ Ներրովթ մեր ժամանակներում ծնած: Ավելորդ է երկյուղդ և կասկածներդ»:

Այսպես Վասիլը փրկվեց փորձանքից, Աստուծո խնամքով,- եզրակացնում է պատմիչ-թոռը:

Թեոփիլոսին վերաբերյալ ակնարկը կապ ունի այն գուշակության հետ, որ արաբ հարցուկ կինը արել էր Թեոփիլոսին, թե իրենից հետո թագավորելու են կինը և որդին և ապա իշխանությունը անցնելու է Մարտինյակ տան:

Խրատական է տեսնել, թե որպիսի ազատությամբ են վերաբերում պատմիչները միևնույն նյութերին, վավեր, թե անվավեր: Ամեն մեկն իր ճաշակի համաձայն շրջանակ է հորինել շրջուն զրույցները զետեղելու համար: Վիպական վերաբերում է, քան պատմական, և պատճառը Վասիլին գովաբանելու, հերոսացնելու ձգտումը չէ միայն, այլև ստույգ տեղեկությունների սղությունը, անիրազեկությունը:

Հարազատ չէ թվում մեզ նաև Վասիլի և տիկին Դանելիսի բարեկա-

մության միջադեպը, որ ավանդում է միմիայն իր քոռը, Կոստանդին Ծիրանածինը: Թեոփիլիցեսը մի անգամ գնաց Պելոպոնես պետական գործով Միքայելի և Վարդի հանձնարարությամբ: Վասիլ ուղեկցեց նրան: Աքայայի Պատրա քաղաքում Թեոփիլիցես այցելեց Անդրեաս առաքյալի տաճարը և աղոթեց: Վասիլ զբաղած լինելով, չկարողացավ ընկերանալ նրան, այլ այցելեց նույն տաճարը առանձին, քիչ հետո:

Հյուրընկալ վանականը ոչ մի հարգանք և ուշադրություն ցույց չտվեց Թեոփիլիցեսի և կամ նրա մյուս ուղեկիցների նկատմամբ: Իսկ երբ Վասիլն եկավ, վանականը դիմավորեց նրան և ընդունեց արքայավայել կերպով: Ներկաները զարմացան: Լուրը հասավ տեղացի հարուստ և ազնվական կնոջ, որ այրի էր և ամուսնու անունով կոչվում էր Դանելիս: Սա ճանաչում էր վանականին, գիտեր, որ մարգարեական շնորհ ունի: Կանչեց իր մոտ և հարցրեց, թե ի՞նչ է պատճառը, որ այնպես ուշադիր է եղել մի անծանոթ օտարականի, և այնպիսի մեծարանք ցույց տվել, որին երբեք չի արժանացրել ո՛չ իր որդուն և ո՛չ քոռին: Վանականը ասաց, թե հասարակ անձն չէ նա, որին ինքը տեսավ, այլ հռոմեական մեծ կայսրը, Աստուծո ընտրածը պետք է հարգվի և մարդկանց կողմից:

Թեոփիլիցեսը վերջացնելով իր գործերը դարձավ քաղաք, Վասիլը տկարության պատճառով չկարողացավ հետևել նրան և մնաց այնտեղ միառժամանակ: Տիկին Դանելիսը այդ միջոցին համակրության և հարգանքի նշաններ ցույց տվեց Վասիլին «որպես մեկը, որ բարի հողում սերմեր է ցանում, որպեսզի առատ հունձք ստանա ժամանակին»: Մեծամեծ նվերներով օժտեց, անթիվ ոսկի, հագուստեղեն, ծառաներ թվով 300, պարգևեց: Փոխարենը այլ բան չէր պահանջում, քան որ հոգևոր եղբայրության ուխտ հաստատել իր որդի Հովհաննեսի հետ: Վասիլը դժվարությամբ համաձայնեց ընդունել Դանելիսի շնորհները և խոստացավ նրան իր երկրի տեր դարձնել, եթե երբևէ կայսր դառնա, ինչպես գուշակել էր վանականը: Այս անսպասելի գանձն էր, որ հնարավորություն տվեց Վասիլին կալված դնել Մակեդոնիայում և ապահովել իր մերձավորներին: «Նա, որ հարուստ էր առաքինությամբ, այս կերպով ճոխացավ նաև ինչքով և դրամով»,- նկատում է պատմագիրը:

Որպիսի՞ զուգադիպություն: Վասիլի հայրը գործ ուներ Ադրիանուպոլսեցի մի այրի կնոջ հետ, ինքը Վասիլը՝ մի ուրիշ այրիի հետ հեռավոր Պատրաից: Մութ պատմություն է: Կարծես, թե այրի կնոջ մասին մի խուլ զրույց է եղել, բավականին անորոշ, մոռացված, որ հայտնի չէ եղել ստուգորեն, հոր հետ է կապ ունեցել, թե որդու: Կոստանդին Ծիրանածինը մշակել է այդ նյութը, ըստ իր սովորության մասն հանելով և հորը, և որդուն: Հայրը ամուսնանում է այրիի հետ, իսկ որդին միմիայն բարեկամ է, ավելի շուտով հոգևոր որդի Դանելիսի:

Արդյոք, որքա՞ն արժանահավատ է վերջինս: Պատմագիրն ինքը ևս վստահ չէ, թե ի՞նչ էր օտարուհու արտակարգ բարեսրտության շարժառիթը: Վախենալով, որ շահի կամ արգելված սիրո կասկածը չարատավորե նրանց հարաբերությունը, շտապում է կանխել, հավատացնելով, որ Դանելիսը «սերմում էր, որ հետո հնձի» և որ իր շնորհների փոխարեն այլ բան չէր պահանջում, քան որ Վասիլը եղբայրանա իր որդու հետ: Այս զգացումը ավելի ևս կասկած է հարուցանում: Երկու շարժառիթից և ոչ մեկը համոզիչ չէ: Վանականի գուշակությունը հնարված է հետին թվով Վասիլի թագավորելուց հետո, իսկ եղբայրության խնդիրը, հավանորեն, արձագանք է այն իրողության, որ Դանելիսի որդին պրոտոսպաթարի, առաջին սուսերակրի, պատիվ ստացավ Վասիլի օրով:

Պատմվածքի իսկական իմաստը կայանում է նրանում, որ բացատրվի Վասիլի հարստության պարագան: Այս պատճառով և Դանելիսի նյութական միջոցները առասպելական չափազանցության են հասցրած: Այստեղից մի բան է հետևում, որ Վասիլ իրապես խոշոր կալվածատեր է եղել Մակեդոնիայում: Այն, ինչ ժողովրդական երևակայության մեջ Վասիլ դուրս է բերված որպես չքավոր ընտանիքի զավակ, որ իր անձնական աշխատանքով և ձեռներեցությամբ նվաստ վիճակից բարձրանում է մինչև կայսերական գահը: Պատմագիրները ընդունել են այս վիպական պատկերը հերոսի մանկության և որպեսզի կարելի լինի մեկնել նրա հարստությունը, այսինքն՝ իրական վիճակը, Կոստանդին Ծիրանածինը հորինել է Դանելիսի զրույցը: Այս խնդրին նորեն կդառնանք ստորև: Այժմ հետևենք դեռ Վասիլի առաջադիմության:

Չիու դեպքից հետո, տեսանք, որ Վասիլ նշանակվեց կայսերական ստրատոր կամ ձիապան, մոտավորապես 856 թվին: Ըստ Գենեսիոսի, այս տեղի ունեցավ ըմբշամարտությունից հետո: Վասիլ արդեն ձիապան էր Միքայելի մոտ, երբ առիթ ունեցավ զսպելու, կայսրի պատվերով, նրա կատաղի ձին այնպիսի դյուրությամբ «որպես Ալեքսանդրը՝ Բուցիֆալին կամ Բելլերոֆոնը՝ Պեգասին»:

Երբ Վարդի դեմ մահափորձ եղավ Թեոդորայի թելադրությամբ և կայսեր պրոտոստրատորի մասնակցությամբ, վերջինս պատժվեց և նրա տեղն անցավ Վասիլը մերձ 858 թվին: Վասիլի կյանքի այս շրջանից պատմում են հետևյալ սխրալի գործը:

Մի անգամ Միքայել կայսրը որսի ելավ Փիլոպատիոն տեղը: Պրոտոստրատորը, ախոռապետ Վասիլն ընթանում էր առջևից, ընդունված սովորության համաձայն, գոտիից կախած վարզը (bardoukion): Աղմուկի վրա անտառից դուրս պրծավ մի ամեհի գայլ: Բոլորը շփոթված էին: Վասիլ նետեց վարզը և ճեղքեց գազանի գլուխը: Վարդ Կեսարը, որ կայսրի

ուղեկիցների թվումն էր, ասաց այս առթիվ իր մտերիմ բարեկամներին. «Այս մարդը վերջ պիտի տա մեր տոհմին»:

Պատմում են նաև, որ Վարդը անվստահ իր ապագային, հարցնում էր հաճախ Լևոն մեծ փիլիսոփային, որ հայ էր և համալսարանի տեսուչ, գալոց օրերի մասին: «Ես տեսնում եմ,- պատասխանում էր իմաստասերը,- որ ձեր տոհմը պիտի ջնջվի մի շատ երիտասարդ անձից» *νεανίσκος*»: Իսկ, երբ տեսավ Վասիլին, մատով ցույց տվեց Վարդին ասելով. «Սա է, որ պիտի լինի ձեր ժառանգորդը»:

Այնուհետև Վարդը սկսեց դավեր սարքել Վասիլի դեմ, բայց իզուր, որովհետև, ինչպես կարծում է պատմագիրը, անկարելի է փոխել, ինչ որ տնօրինված է վերին նախախնամությամբ: Այս զրույցի ատաղձը տալիս է Գենեսիոս, հիշելով համառոտակի, որ մի անգամ կայսրը որսի էր և հանկարծ անտառից դուրս վազեց մի եղջերու: Վասիլը ձգեց վարզը և ջարդեց ետի ոտները: Նույնն արեց և մի ահագին գայլի վերաբերությամբ:

Կարևորը զրույցը չէ, այլ Լևոն փիլիսոփային վերագրված այն խոսքը, թե Վարդի կործանողը պիտի լինի մի **շատ երիտասարդ** մարդ: Մի նոր փաստ, մի ակամա խոստովանություն, որ Վասիլն այնքան հասակավոր չէր, երբ գահ բարձրացավ: Մեր կասկածը և սրբագրությունը արդարանում է: Վերև պարզած հաշվով 866 թվին, երբ Վարդը սպանվեց, Վասիլ 30 տարեկան պիտի լիներ:

Պրոտոստրատոր Վասիլը առաջանալով ստացավ սենեկապետության բարձր պաշտոնը (parakoimomenos): Դամիանոս ներքինին, որ այդ պաշտոնն ուներ, նպաստել էր Վարդին սպանել Թեոկտիստոս ամենազոր մինիստրին և կառավարության ղեկը ստանձնել: Դամիանոսը, չստանալով ակնկալած պաշտոնն ու պատիվը, գժտվեց Վարդի հետ, որի հետևանքով պաշտոնանկ եղավ, կայսեր հրամանով, և քաշվեց մենաստան: Նրա տեղը բռնեց Վասիլ: Դամիանոսի արձակումին Վարդն արդեն կեսար էր, իսկ այդ պատվին արժանացել էր 862 թ. ապրիլի 26-ին: Վասիլի սենեկապետության հասնելը այս թվից հետո է, հավանորեն, ոչ շատ ուշ: Միևնույն ժամանակ նա ստացավ պատրկության աստիճան: Վասիլ շուտով շահեց կայսրի սերն ու համակրությունը: Վարդը բավականին փորձ ուներ և խորամտություն, որ զգար, թե որքան վտանգավոր ախոյան էր նոր սենեկապետը: Իսկ վերջինս տեսնում էր, որ երկրի իրական տերը կայսրը չէր, այլ մեծազոր կեսարը: Սա միայն կարող էր խոչընդոտ լինել իր փառատենչ ձգտումներին:

Սկսվում է սքողված մրցությունը երկու ախոյանների մեջ: Վասիլ հաջողեց նախ անջատել Վարդից Սմբատին, որ մեծ լոգոթետի պաշտոնն ուներ և Վարդին մոտ մարդ էր, որպես նրա փեսան: Սմբատը կուրացավ Վասիլի խոստումից, թե Վարդի տապալվելուց հետո կեսարի մեծ դիրքը կտրվի նրան:

Սմբատի միջոցով Վասիլ հասկացրեց Միքայելին որպես թե կեսարը գաղտնի դավեր է նյութում նրա դեմ, կամենալով հափշտակել գահը: Անհիմն ամբաստանությունը թուլավորեց կայսրի միտքը: Միամտորեն ձեռք տվեց իր հարազատ քեռու և ամուր նեցուկի թշնամիներին, կործանեց նրան առանց մտածելու, որ իր արածը ոչ միայն ոճիր էր, այլ մի օրհասական սխալ, որ տանում էր դեպի իր սեփական կործանումը:

Վարդի սպանության պարագան պժգալի է: 866 թվի գարնան Միքայել կայսրը շարժվեց զորքով դեպի Թրակեսյան թեմը և բանակեց Մեանդեր գետի հովտում Կեպի (Պարտեզ) կոչված տեղում: Հայտարարված էր, որ կայսրը գնում է Կրետե կղզու մուսուլման իշխանության վրա: Արդյո՞ք լուրջ արշավանք էր, թե լոկ պատրվակ նախագծած ոճրագործության համար, հայտնի չէ: Այստեղ Վարդը սպանվեց նենգորեն: Մանրամասնությանց մասին խոսել ենք ուրիշ հոդվածում (2): Հիշենք միայն, որ պատմագիրներից Գեորգի Շարունակողը սպանությունը վերագրում է Սմբատին և Վասիլին, Գենեսիոսը Վասիլի անունը չի տալիս, իսկ Կոստանդին Ծիրանածինը մեղապարտ է համարում Միքայելին: Վասիլը սուրը մերկացնում է որպես թե կայսրի հրամանով և նրան պաշտպանելու համար: Գենեսիոսը նույն դերը տալիս է Կոստանդին Հային: Երկու պատմիչներն էլ աշխատում են ի նպաստ իրենց պապերի, բայց ոչ ճշմարտության:

Սպանության մասին Միքայել կայսրը գրում է բանակից Փոտ պատրիարքին: Հեռատես պատրիարքը խորհուրդ է տալիս կայսրին վերադառնալ անմիջապես մայրաքաղաք: Անտարակույս, հավատ չուներ Վասիլի վրա և կասկածում էր, որ կայսրը ևս կարող է զոհ գնալ նրա փառասիրության: Միքայելը վերադարձավ: Մի ամիս չքաշեց և Վասիլը հռչակվեց կայսր, գահակից Միքայելին: Թագադրության հանդեսի նկարագրությունը հասել է մեզ:

Հոգեգալստյան շաբաթ երեկոյան, 866 թվին մայիսի 26-ին կայսրը առաջին հանդերձապետի՝ Ռենտակեսի միջոցով պատվիրեց Փոտ պատրիարքին, որ Վասիլին հայտարարե թագակից կայսր: Հետևյալ օրը եկեղեցում երկու գահ էր պատրաստված: Ժողովուրդը զարմացած էր, թե ի՞նչ է նշանակում այս անսովոր երևույթը: Շուտով երևաց կայսրը, ետևից գնում էր Վասիլը բռնած սկարամանդ և սուր, ինչպես հատուկ էր պարակիմոմենոսի պաշտոնին: Կայսրը մտավ կայսերական դռնից առանց հանելու թագը, ինչպես սովորություն էր, այլ այնպես անցավ մինչև սեղան: Թագը գլխին բարձրացավ աստիճանները, ստորև կանգնած էր Վասիլ և քիչ հեռու Վասիլից՝ Լևոն Կաստոր անունով քարտուղարը ձեռքին մի թուղթ, ապա Միքայելի սենեկապան Անգուրեսը, այլև ժողովրդապետներն իրենց կուսակիցներով:

Լևոն քարտուղարը սկսեց կարդալ թուղթը, որի բովանդակությունն էր.

«Վարդ Կեսարը դավեր էր սարքել ինձ սպանելու և այս նպատակով ինձ քաղաքից դուրս տարավ: Եթե պաշտպան չունենայի Սմբատին և Վասիլին, կենդանի չէի լինի: Մեռավ Վարդը իր իսկ ոճիրի հետևանքով: Այժմ ցանկանում եմ, որ պարակիմոմենոս Վասիլը, նա որ հավատարմությամբ պաշտպանեց իշխանությունս և փրկեց ինձ թշնամուց սիրելով ինձ, ցանկանում եմ, որ նա պահապան լինի տերությանս և հոգածու ու բոլորի կողմից փառաբանվի որպես կայսր»:

Վասիլը հուզմունքից արտասվեց: Կայսրը հանեց գլխից թագը և տվավ պատրիարքին: Պատրիարքը դրեց սեղանի վրա, օրհնեց: Սենեկապանները հագցրին Վասիլին դիետեսիոն զգեստը և ցանգիա կոշիկները: Վասիլը հանեց իր քղամիդը և ձգեց կայսրի ոտքերի տակ: Ելավ սեղանից պատրիարքը, առավ թագը և դրեց կայսրի գլխին, հետո հանեց և տվեց թագը կայսրի ձեռքը և սա պսակեց Վասիլին: Ամբոխը ողջունեց աղաղակելով՝ կեցցե՛ Միքայելը, կեցցե՛ Վասիլը:

III

Վարդի փեսան, Սմբատը, որ իր ողջ աջակցության փոխարեն հույս էր տածում ստանալ կեսարի պատիվ, հիասթափվեց, երբ տեսավ, որ խաղալիք է եղել Վասիլի ձեռքին և լցվեց ատելությամբ ու դառնությամբ: Խորհուրդ արին Գեորգիոս Ստրատելատի հետ, որ Պեգաևեսի որդին էր, և հաջորդ օրը խնդրեց, որ իրեն ստրատեգ կարգեն, այսինքն՝ թեմ տան: «Հաջորդ օրը» ասելով հասկացվում է խորհրդակցության հաջորդ օրը և ոչ թագադրության:

Սմբատի խնդիրը մնաց անհետևանք: Ընդհակառակը, նրանից խլեցին լոգոթետի պաշտոնը և հանձնեցին ոմն Գումերի: Գեորգիոսին տվին Օփսիկյան թեմը: Երկուսն էլ դժգոհ մնացին և ըմբոստացան իշխանության դեմ: Սկսեցին գրգռել ժողովուրդը, հրդեհել դաշտերն ու այգիները, բողոքելով Վասիլի կայսերացումի դեմ: Կայսրները հրաման արձակեցին մյուս ստրատեգներին, այսինքն՝ մյուս թեմերի զորավարներին, զսպել ապստամբությունը: Գործը հանձնեցին Նիկիփորոս Մալեին զորավարին: Սա խոհեմությամբ վարվեց, գրավոր շրջաբերականներ ցրեց զորքերին հանձնարարելով գործել գաղտուկ, աշխատել խեղդել ըմբոստությունը ավելի խորամանկությամբ, քան արձակ դիմադրությամբ, որպեսզի շարժումը մեծ ծավալ չստանա և քաղաքացիական խլրտումների առիթ չտա: Շուտով բռնեցին Գեորգիոս Պեգաևեսին: Բարձրագույն հրամանով մայրաքաղաքի եպարքոսը, Կոստանդին Միւարեսը (Myares), կուրացրեց նրան և բռնադատեց կանգնել հրապարակի վրա և մի աման ձեռքին ողորմություն հայցել անցորդներից:

Երեսուն օր անցած նույն Մալեինը ձերբակալեց Սմբատին Եկեղյաց գավառում մի պանդոկի մեջ և բերեց ներկայացրեց կայսրին Ս. Մամաս պալատում: Պատմում են, որ բերին նաև դժբախտ Գեորգիոս Պեգանեսին, ձեռը տվին մի խեցեմորթյա ծխանոց (բուրվառ), մեջը ծծումբ, և ստիպեցին ծխել Սմբատի առաջ: Սմբատի աչքի մեկը հանեցին, աջ ձեռքը կտրեցին, նստեցրին Լավսոս կոչված պալատի առաջ և մի ամաո դրին քևի տակ, որ անցորդները ողորմության լումաո ձգեն որպես մուրացիկի: Երեք օրից հետո արձակեցին երկու հանցավորներին իրենց տները, նշանակելով նրանց վրա հատուկ հսկողություն:

Ուրիշ տեղեկությամբ Սմբատը չուզենալով ապրել քաղաքում խնդրեց Թրակեսյան թեմի զորավարությունը և ստացավ: Իսկ Պեգանեսը նշանակվեց Օփսիկյան թեմը: Նիկիփորոս Մալեինի անունը չի հիշատակվում, ինչպես և Եկեղյաց գավառը: Սմբատը բռնվում է Լայնաքար կոչված բերդում *Πλατεῖα πέτρα*, որ հայտնի չէ թե որտեղ է գտնվում: Հավանորեն Թրակեսյան թեմում: Պեգանը փախավ Կոտիայոն *Κοτυαῖον*, երևի արդի Քեոթահիա: Այս տեղեկությանց հեղինակը, Կոստանդին Ծիրանածինը, հավատացնում է, որ Վասիլը հետո ներեց հանցավորներին և մինչև անգամ հրավիրում էր նրանց կայսերական սեղանին: Գենեսիոսը չէ հիշում Սմբատի և Պեգանի խռովությունը:

Երկար չտևեց միասնական կառավարությունը զույգ կայսրների: Մի տարի և մի քանի ամիս էր անցել, երբ Վասիլը սպանեց նաև Միքայելին և տիրացավ միայնակ կայսերական գահին:

Միքայելը նկարագրի տեր անձ չէր: Մանուկ հասակից անձնատուր էր ցոփ և զեխ կյանքի: Վարդի օրով քիչ էր պարապել պետական գործերով: Մոլի զվարճություններն ավելի մեծ տեղ էին բռնում նրա հոգսերի մեջ, քան կառավարչական գործերը: Սիրում էր հատկապես ձիարշավ: Ս. Մամաս պալատում մասնավոր արշավարան կար, ուր անձամբ մասնակցում էր վազքին: Պատմում են, որ մի անգամ խաղի ժամանակ հրանշանները ազդարարեցին, որ թշնամին մտել է երկիրը: Լևոն մեծ փիլիսոփան հնարել էր մի տեսակ ժամացույց, որի միջոցով նշան էր տրվում Կիլիկիայից մայրաքաղաք, երբ արաբները հարձակվում էին: Կայսրը հրամայել էր լռել և չհրապարակել գույժը, մինչև որ ձիարշավը չվերջանա:

Անհավատալի են թվում այն արտառոց զրույցները, որ հյուսվել են զվարճասեր կայսրի ժամանցի շուրջը: Տղայական խաղեր և կատակներ էր սարքում: Մոտիկ ընկերը և գործակիցը իր սիրելի խեղկատակն էր, անունը՝ Թեոփիլոս, իսկ փութ անունը՝ Խոզ *Γρύλλος:* Միքայելը կոչում էր նրան Հիմերիոս, որ նշանակում է հունարեն սիրելի: Խաղերը երբեմն անվայել և մինչև իսկ պիղծ բնավորություն էին կրում: Հիմերիոսը ձևանում էր պատ-

րիարք, Միքայել Կոլոնիո արքեպիսկոպոս, 11 հոգի հագնում էին եպիսկոպոսական զգեստ և միասին ներկայացնում էին ծաղրանքով պատարագը, ձեռնադրության թե կարգալուծության ծեսերը: Պատմում էին, որ նրանց լկտիությունն այնտեղ էր հասնում, որ ծաղրում էին անգամ հաղորդության խորհուրդը, մանանեխ և քացախ տալով որպես սրբություն: Չէին խնայում նույնիսկ պատրիարքին: Մի օր, երբ Իգնատիոս պատրիարքը եկեղեցական թափորով գնում էր դեպի մոտիկ արվարձանը, հանկարծ տեսնում է իր դեմ ծպտյալ ծաղրապատրիարք, նստած էշի վրա և շրջապատված ընկերակիցներով, որոնց մեջտեղը ինքը Միքայել կայսրը: Նվագով և երգեցողությամբ ելնում են պատրիարքի առաջ որպես թե սաղմոս են երգում և իրենց անճոռնի ձայներով խանգարում իսկական թափորը:

Միքայելը չէր խորշում վիրավորել մինչիսկ հարազատ և կրոնասեր մոր նվիրական զգացումները: Մի անգամ խաբեց մորը, թե պատրիարքը սպասում է նրան պալատում և խնդրում է գալ օրհնություն ստանալ: Այն ինչ, պատրիարքը այլ ոք չէր, բայց եթե ինքը Խոզ Թեոփիլոսը, կայսերական ծաղրածուն, որ պատրիարքի պես հագնված նստել էր գահի վրա, Միքայելի կողքին: Կայսրուհին արդարև եկավ և պատրիարքի տեղ ընդունելով անարգ միմոսին, չոքեց առաջը օրհնության համար: Այդ միջոցին կեղծ պատրիարքը շրջեց ետևը դեպի կայսրուհին... Թագուհին ամոթահար հեռացավ անիծելով իր անարժան որդուն:

Ասում են, որ Միքայելը սիրում էր կրկնել, թե Հիմերիոսը իր պատրիարքն է, Փոտը՝ կեսարի (Վարդի) և Իգնատիոսը՝ քրիստոնյաների:

Այսպիսի վատ գույներով է նկարագրում Միքայելին Կոստանդին Ծիրանածինը, որպեսզի արդարացնե Վասիլի գործած ոճիրը: Իր հավաքած զրույցները Միքայելի անվայել վարմունքների մասին, անշուշտ, գունավորված են, բայց անհիմն չեն: Ուրիշ և անկախ աղբյուրից վկայություն ունինք մայրաքաղաքում կատարվող նման այլանդակությունների վերաբերյալ: Ճիշտ այս խնդրին է նվիրված 869 թվի եկեղեցական ժողովի կանոններից մեկը, ուր հիշատակվում է կեղծ-թափորը, միայն Միքայելի անունը չի տալիս, այլ վերագրվում է ծերակուտական աշխարհականներին: Սրանք սանրում էին իրենց մազերը հոգևորականների նման, հագնում էին եպիսկոպոսական զգեստներ և ձևացնում էին, թե ինչպես են ընտրվում, ձեռնադրվում և կարգազուրկ լինում եկեղեցականները: Ժողովը հանցանքը բարդում է Փոտ պատրիարքի վրա, որ թույլ է գտնվել և կտրուկ միջոցներ չէ ձեռք առել այս խեղկատակությունների դեմ:

Գեորգիոս վանականի Շարունակողը, որ զերծ է կայսերական տան ազդեցությունից, չի հիշում Միքայելի անպատիվ խեղկատակությունները և տալիս է նրա սպանության մանրամասն նկարագրությունը:

Միքայելը ձիարշավ ուներ Ս. Մամասի պալատական կրկեսում: Մասնակցում էր ինքը, Կոստանդին պատրիկ Հայը՝ պատմագիր Գենեսիոսի պապը, և երկու ուրիշ անձ, Ագալիան և Կրուսաս անունով: Կայսրը կապույտ կուսակցության կողմից էր, Կոստանդինը՝ սպիտակ, Ագալիան՝ կանաչ և Կրուսաս՝ կարմիր: Հաղթողը կայսրն էր: Այս առթիվ ճաշ էր պատրաստված և հրավիրված էին նաև Վասիլ և իր կինը՝ Եվդոկիա Ինգերին, կայսրի նախկին սիրուհին: Ճաշի ժամանակ Վասիլիսկիան կոչված պատրիկը սկսեց շողոքորթել կայսրին, գովաբանելով նրա վարպետությունը կառարշավի արվեստում: Ավելի մեծ հրճվանք չէր կարելի պատճառել ունայնասեր կայսրին:

Գովքից հիացած, Միքայել հրամայեց Վասիլիսկիանին հանել իր ոտներից ցանգիա (zangia) կայսերական կարմիր կոշիկները և ինքը հագնել: Վասիլիսկիան քաշվում էր կատարել ինքնակալի հրամանը, հայացքը ձգելով Վասիլի կողմը: Կայսրը բարկացավ և սաստեց հնազանդվել իր հրամանին: Թեև Վասիլ հոժարության նշան ցույց չտվեց, բայց Վասիլիսկիան հագավ կոշիկները:

Կայսրը ծայրեց Վասիլին. «Աստված վկա, կոշիկները սրան ավելի են սազում, քան քեզ: Մի՞թե իրավունք չունեմ, ինչպես քեզ կայսր դարձրի, մի ուրիշին ևս նույնն անել»:

Եվդոկիա, տեսնելով, որ կայսրը զայրացած է Վասիլի վրա և անմիտ քայլ է անում, ասաց նրան արտասվաթոր. «Կայսերական պատիվը, օ՜ տեր իմ, վեհ բան է, և մենք անարժան ենք, որ կրում ենք այդ պատիվը, բայց և այնպես վայել չէ այդքան ստորացնել կայսերական պատիվը»:

Կայսրի պատասխանը մխիթարական չէր. «մի՛ վշտանար, -ասաց նա,- ես ուզում եմ Վասիլիսկիանին ևս կայսր հայտարարել»:

Վասիլի զայրույթն ու կսկիծը չափ չուներ: Երկու կայսրերի հարաբերություններն այդ օրից լարվեցին: Փոխադարձ վստահությունը կորավ: Այդ հողի վրա է ծագել, թերևս, այն զրույցը, թե երբ մի անգամ Միքայել որսի ելավ, մի անծանոթ վանական մոտեցավ և մի թուղթ տվեց նրան, որով զգուշացնում էր կայսրին Վասիլի դավադրությունից:

Միքայելի սիրտը ահ և ատելություն ընկավ: Ինքը ևս հետամուտ եղավ վերջ դնել վտանգավոր կյանքին: Վասիլն ավելի վճռական գտնվեց:

Սեպտեմբերի 24-ն էր, 867 տարին, և Միքայել նույն Ս. Մամասի պալատում ճաշի էր հրավիրել Վասիլին իր կնոջ Եվդոկիայի հետ: Միքայելը սիրում էր խմել (3): Գինու ազդեցությունն զգալի էր, երբ Վասիլ վեր կացավ սեղանից, գնաց կայսերական ննջարանը և ծռեց սողնակը իր ահռելի ուժով այնպես, որ այլևս չէր կարելի փակել դուռը: Դարձավ և շարունակեց ճաշը:

Միքայել բոլորովին գինովցած էր, ելավ սեղանից և կոթնած Վասիլի թևին ուղղվեց դեպի իր ննջարանը: Վասիլ համբուրեց ձեռքը և հեռացավ: Կայսրի

ննջարանումն էր Վասիլիսկիանը, որ կայսեր հրամանով փոխարինում էր առաջին հանդերձապահին, Ռենտակեսին: Սա բացակա էր, մյուս սպասավորների հետ գնացել էր որսի և պատվեր ուներ կայսրից արդյունքը տանել մայր թագուհուն՝ Թեոդորային, որի մոտ ճաշի էր հրավիրված հաջորդ օրը:

Սենեկապաններից Իգնատիոսը ուզեց փակել ննջարանի դուռը, բայց տեսավ, որ հնարավոր չէ: Կասկած ընկավ սիրտը, նստեց անկողնու վրա և սկսեց փետել իր մազերը:

Գինուց թուլացած կայսրը քնած էր արդեն խոր քնով որպես մեռյալ: Հանկարծ ներս մտավ մեծ աղմուկով Վասիլ իր ընկերներով միասին: Դուռը բաց էր: Իգնատիոսը դողահար՝ բարձրացավ տեղից, որ արգիլե մուտքը: Պետրոս Բուլղարը, դավադիրներից մեկը, առաջ անցավ Վասիլի քևի տակից դեպի կայսերական անկողինը, բայց արգելվեց նույն Իգնատիոսի կողմից:

Շփոթից արթնեց կայսրը: Դավադիրներից Հովհաննես Խալդը իսկույն վրա բերեց սուրը և կտրեց կայսրի ձեռքը: Մյուս դավադիրը՝ Հակովբիկ *Ταχωβίτζης* պարսիկ ապելատեսը *ἀπελάτης* վիրավորեց սրով Վասիլիսկիանին և հետ մղեց:

Վասիլի երկու եղբայրները՝ Մարիանոս և Սմբատ և եղբորորդին՝ Ասիլայոն՝ *Ἀσυλαῖος*, մի ուրիշ անձն Վարդ անունով, այլև Կոստանդին Տոքսարաս պահպանում էին գլխավոր մուտքը, որի հետևանքով Միքայելի սպասավորներից ոչ ոք չիմացավ, թե ի՞նչ է կատարվում ներսը, կայսեր ննջարանում:

Դավադիրները մի վայրկյան տատամսեցին, չգիտեին, ի՞նչ անեն, սպանեն կայսրին, թե թողնեն այդպես հաշմանդամ: Ասիլայոն այն միտքը հայտնեց, որ եթե Միքայել կենդանի մնա, դժվար թե իրենք կարողանան կենդանի մնալ: Վասիլին հաճելի լինելու համար, գնաց ննջարան, տեսավ, որ Միքայել թեև ձեռքերը կտրված էին, բայց անկողնում ընկած, աղաչում էր խղճալ, ողորմել իրեն: Ասիլայոն ուշ չդարձրեց, մոտեցավ և սրի հարվածով թափեց փորոտիքը:

Դավադիրները շտապեցին գնալ և գրավել մեծ պալատը: Ծովը ալեկոծ էր: Իջան Ոսկեղջյուրի ափը, մտան պարսիկ Եվլոգիոսի տունը, միասին շարժվեցին Բուկոլեոնի նավահանգիստը և այնտեղից մտան պալատը: Եվլոգիոս ասաց իր լեզվով Արտավազդին, որ օտարական գնդի պետն էր, հետերարք, թե Միքայել սուսերահար եղավ, բաց արեք դուռը ընդունելու կայսրին:

Արտավազդը վազեց և խլեց պալատի պահապանից *παπίας* բանալին և բացավ դուռը: Վասիլ ներս մտավ: Առաջին կարգադրությունն էր տալ բանալիները նոր պապիասին, Գրիգոր Փիլեմոն կոչված անձին:

Անմիջապես մարդ ղրկեց բերեց Ս. Մամասի պալատից իր կնոջ Եվդոկիային մեծ շքով և պատվով: Միևնույն ժամանակ մյուս Եվդոկիային, որ

Միքայելի կինն էր, ղրկեց Հովհաննես սենեկապանի հետ իր ծնողներին: Մյուս սենեկապանին, անունը Պողոս, պատվիրեց գնալ և թաղել տալ Միքայելի մարմինը: Պողոս Մամաս մտնելով տեսավ, որ դժբախտ զոհի մարմինը փաթաթված էր իր սիրելի ձիու տապճակի մեջ, փորոտիքը կախված: Տեսավ, որ մայրը և քույրերը լալիս էին և ողբում նրա մահը: Նավ դրեց մարմինը և տարավ թաղեց Քրիստոպոլսի վանքում, որ գտնվում էր Ասիական ափի վրա:

Այսպիսով Վասիլ դարձավ միահեծան տեր Բյուզանդական կայսրության:

Նոր կայսրը մայրաքաղաքի եպարքոս նշանակեց Պետրոնասի որդուն՝ Մարիանոսին և պատվիրեց նրան գնալ հրապարակ (ֆորում) և հայտարարել, որ միակ կայսրը Վասիլն է: Պետրոնասը Վարդ Կեսարի և կայսրուհի Թեոդորայի եղբայրն էր: Պետք է կարծել, որ Մարիանոսը ևս մասնակից էր դավաղրության:

Մեր պատմագիրը հավատացնում է, որ դավադիրները վատ վախճան ունեցան, կարծես պատժվելով նախախնամությունից:

Հակովբիկը, Վասիլիսկիանի սպանողը, որսի էր գնացել կայսեր հետ: Երբ իջնում էր ձիուց սուրը վերցնելու, ձին փախավ, ինքն ընկավ և անշնչացավ:

Հովհաննես Խալդը, նա, որ կտրել էր Միքայելի ձեռքերը, նշանակվեց զորավար Խաղտիքի: Համարձակվեց ըմբոստանալ կայսրի դեմ և վերջինիս հրամանով ցից հանվեց Անդրեաս ստրատելատի ձեռքով:

Ասիլայ(ոն) աքսորվեց մայրաքաղաքի Խարտոփիլակ անունով արվարձանը, գժտվեց ծառաների հետ և սրանք սպանեցին նրան գիշերը:

Ապելատես պարսիկը մեռավ որդնակեր: Կոստանդին Տոքսարասը ընկավ սրից: Կայսրի եղբայրը՝ Մարիանոսը, ոտքից վերք ստացավ և մեռավ որդնալից:

Կարևոր է նկատել, որ Վասիլի ընկերակիցները բոլորն էլ հայ են: Ոչ միայն Սմբատը՝ Վարդի փեսան, որ հետո բռնվեց Եկեղյաց գավառում, հայ իշխան էր, հավանորեն Բագրատունի տանից, այլ նրա համախոհը՝ Գեորգիոս Պեգանեսը ևս հայ էր: Պեգան, *Πηγάνης* պարսիկ **paigan** բառն է, որ նշանակում է հետևակ (զինվոր) և գործ է ածված որպես հատուկ անուն կամ մականուն:

Պետրոս Բուլղարը և իր եղբորորդին՝ Լևոն Ասորի նույնպես հայ են: Բուլղար և Ասորի կոչումները կապ չունին նրանց ծագման հետ: Բուլղարի եղբորորդին չի կարող Ասորի լինել:

Հովհաննես Խալդ և Կոստանդին Տոքսարաս, հավանորեն, նմանապես հայ են: Խալդ է կոչվում, Խաղտիքում ծնված, կամ ծառայած լինելու հա-

մար: Սա կրում է նաև *Τζιφιναοίτης* մականունը, որ տեղի անուն է: **Tziphi** երևի, Խաղտիքի (Լազերի) տեղական ձևն է, հայերեն ճփնի, վրացերեն **tsipéli** բառի, որ նշանակում է ոփի ծառը: **Tziphi-nari** (կազմված ինչպես **Mukh-nari** մուխ-նարի «կաղնուտ», **bucknari** բուչք-նար, «մացառուտ», **nadzv-nari** նածվ-նարի, «եղեւնուտ») նշանակում է ծիփի, ճփնի «ոփի ծառաստան», որ պարզապես տեղի անուն է:

Հովհաննես Խալդը կարող է իսկապես խալդ, այսինքն՝ լազ լինել, բայց որովհետև մյուս ընկերները հայ են, ավելի հավանական ենք համարում նրա հայ լինելը: Կոստանդինը կոչվում է Տոքսարաս, ավելի ճիշտ Տոքսարա: Լուկիանոս Սամոսատացին հիշում է մի հայտնի սկյութ գիտուն որպես Անաքարսիսը, նման անունով **Toxaris** Տոքսարիս: Եթե նույն անունն է, հավանորեն ծաղրական մականուն է, Կոստանդինին տված: Անտարակույս, իրանական բառ է, գուցե և ծանոթ խալդական ծովափում:

Դավադիրների մեջ կարևորագույն են Վասիլի եղբայրները՝ Մարիանոս, Սմբատ, և եղբորորդին Ասիլայ(ոն): Կարծում ենք, որ մի երրորդ եղբայր ուներ Վարդ անունով: Միքայել կայսրի սպանության մասնակից էին, ըստ պատմիչի՝ «Մարիանոս և Վարդաս, հայր Վասիլ ռեկտորի, և Սմբատիոս, եղբայր Վասիլի և Ասիլայոն, եղբորորդի Վասիլի»:

Վերջերս մի գիտնական այն միտքն էր հայտնել, թե այստեղ հիշված Սմբատը Վասիլ կայսրի եղբայրը չէր, այլ Վասիլ ռեկտորի, որ էր որդի Վարդի, և Ասիլայոնը ևս ռեկտորի եղբորորդին էր: Սխալ մեկնություն է: Նախ մի ուրիշ աղբյուր, Թեոդոս Մելիտինացի (Մալաքիացի) ասում է որոշակի. «Մարիանոս եղբայր նորա (Վասիլի), Սմբատիոս և Վարդաս եղբարք նորա, Ասիլեոն (Ասիլայոն) եղբորորդի նորա»:

Գեորգի Շարունակողը, Ասիլայոնի սպանության պատմությունը անելիս անվանում է նրան «եղբորորդի կայսեր»: Հետևապես վերև բերված տողերում «եղբորորդի Վասիլի» ասելով հասկացվում է Վասիլ **կայսրը** և ոչ Վասիլ **ռեկտորը:** Բացի դրանից հիշյալ գիտնականի ուշադրությունից սպրդել է այն հանգամանքը, որ Ս. Եվփիմե վանքում թաղված էին Վասիլ կայսրի մայրը և երկու եղբայրները՝ Մարիանոս և Սմբատ, որոնց մասին ասված է, անշուշտ տապանագիրների հիման վրա, թե Մարիանոսն էր դոմեստիկոս սքոլարների, Սմբատիոսը՝ եղբայր նորա, երկուսն էլ՝ **եղբարք Վասիլի կայսեր:**

Գիտնականի կասկածը ծագել է այն դիտողությունից, թե ինչու պատմագիրը հանճարարում է Վարդին, որպես հայր Վասիլ ռեկտորի և ոչ ուղղակի եղբայր Վասիլ կայսրի: Սակայն մեզ թվում է, որ քննելի հատվածում **եղբայր**-ի փոխարեն պետք է կարդալ **եղբարք**. այն ժամանակ կհարթվի երկու պատմագիրների առերևույթ հակասությունը: Այսպես՝ «Մա-

րիանոս և Վարդաս՝ հայր Վասիլ ռեկտորի, և Սմբատ **եղբարք** *ἀδελφοί* (և ոչ եղբայր *ἀδελφός*) Վասիլի», որով եղբարք բառը կվերաբերի ոչ միայն Սմբատին, այլ և Մարիանոսին ու Վարդին: Վարդը այլուստ հայտնի չէ և պատմագրի օրով նշանավոր անձն է եղած նրա որդին՝ Վասիլ ռեկտորը:

Ավելորդ չենք համարում նկատել, որ տապանագրերից ծանոթ է ոմն «Վարդ, որդի Վասիլի, Ծիրանածնի պապի»: Եթե միայն Վարդը Վասիլի որդիներից մեկի՝ Կոստանդինի հայկական անունը չէ, պետք է կարծել, որ խոսքը Վասիլի եղբոր Վարդի մասին է: Զարմանալի է, որ Ասիլայոնի մասին ասված է, որ Վասիլի եղբորորդին է, բայց հոր անունը չի հիշատակվում:

Ո՞ր եղբոր որդին էր: Արդյո՞ք, բացի Մարիանոսից, Սմբատից և Վարդից, մի ուրիշ եղբայր ևս ունեցել է Վասիլը: Ավելի քան հավանական է, որովհետև, եթե Ասիլայոնը այս երեքից որևէ մեկի զավակը լիներ, պատմագիրը զանց չէր անի հիշելու:

Դավաղիրներից երկուսը՝ Եվլոգիոս և Ապելատես կոչվում են պարսիկ, բայց սրանք պարսիկ չեն, այլ պարսկահայ: Այդպես էին կոչվում ոչ բյուզանդացի հայերը: Իններորդ դարում, արաբական իշխանության ժամանակ, դժվար է երևակայել, որ մի պարսիկ բյուզանդական ծառայության մեջ մտնե, քրիստոնեություն ընդունելով: Ապելատես հատուկ անուն չէ[1]:

Վասիլի հետ էր նաև Արտավազդը, որ հետերարք էր, այսինքն՝ օտարներից կազմված գնդի պետ: Արտավազդից առաջ նույն պաշտոնումն էր Անդրեասը, նա, որ Միքայել կայսրի հրամանով ընդունեց Վասիլիին օտարական գնդի մեջ: Անդրեասը հետո ստրատելատ էր նշանակվել, այսինքն՝ թեմ էր ստացել կառավարելու և այդ պաշտոնումն էր, երբ կալանավորեց ապստամբ Հովհաննես Խալդին, ինչպես տեսանք վերև: Հավանական է, որ Խաղտիքի մոտիկ թեմերից մեկի պետն էր:

Վասիլի եղբայր Մարիանոսը պալատական հեծյալ գնդերի, սքոլարների, դոմեստիկոս էր: Արտավազդը օտարական գնդի գլուխն էր: Պետական երկու կարևոր զորագնդերն էին և բնական է, որ նրանց աջակցությամբ դյուրին էր հեղաշրջում կատարել: Վերև թված անձերը Վասիլին ծանոթ և բարեկամ էին, անշուշտ, երբ ինքը ծառայում էր օտարական գնդում Անդրեասի օրով: Հեղաշրջումը պատահական արկած չէր, այլ ծրագրված գործ էր, որ համակրություն էր վայելում զինվորական շրջաններում: Պակաս չէին, հարկավ, և թշնամիները, որոնք աշխատել են ամեն միջոցով թե՛ աղավաղել հեղաշրջումի բնավորությունը և թե՛ եղծել Վասիլի պատկերը:

Խառն ու շփոթ տեղեկությունները և նպատակավոր զրույցները,

[1] Տե՛ս այս մասին մեր հոդվածը, «Les fonds historiques de l'épopée byzantine Digénis Akritas», «Byzantinische Zeitschrift», 1929-1930, Bd. XXIX, p. 198-227:

հորինված Վասիլի անվան շուրջը չար, թե բարի դիտավորությամբ, գովելու, թե դարսվելու ցանկությամբ, ծածկել են մեզնից նրա իսկական ծագումը և հաջողության պատճառներն ու պարագաները:

IV

Ծագման վերաբերվող զրույցները կապված են Փոտ պատրիարքի անվան հետ: Վասիլի իշխանության առաջին տարին Փոտը ընկավ պատրիարքական գահից և վերստին գրավեց 877 թվին, իր հակառակորդ Իգնատիոսի մահից հետո: Փոտի գահընկեցությունը հետևանք էր Վասիլի ընդգրկած եկեղեցական քաղաքականության: Հռոմի հետ հաշտ և խաղաղ ապրելու համար, նոր կայսրը չկասեց զոհել պատրիարք Փոտին, որ պապականության թշնամի էր և պառակտման գլխավոր պատճառը: Շնորհազուրկ պատրիարքը շատ ջանք թափեց վերականգնելու իր դիրքը, որի համար ամենից առաջ հարկավոր էր ձեռք բերել կայսրի սերն ու համակրությունը:

Իգնատիոսի, Փոտի ախոյանի, կենսագիրը, Նիկիտաս Պափլագոնացին, պատմում է, որ կայսրին հաճոյանալու դիտավորությամբ Փոտը կազմել էր կեղծ և կայսրի ինքնասիրությունը շոյող մի ծննդաբանություն:

Գահազրկությունից հետո նախկին պատրիարքը աքսորվեց Սկեպի վանքը: Այստեղ էր, որ նա գործեց հռչակավոր կեղծիքը, հնարելով մի զրույց, որի հիմամբ Վասիլը սերում էր Հայոց Տրդատ III թագավորից, Լուսավորչի նշանավոր գործակցից: Փոտը մտերիմ էր կայսերական մատենադարանի պետ ոմն Թեոփանես Սփենողեմոն կոչված վանականին, որ պալատական հոգևորականության մեջ էր հաշվում և հայտնի էր խորին գիտությամբ ու իմաստությամբ: Սրա միջոցով Փոտն իր կազմած ծննդաբանական գրությունը անցրեց կայսերական մատենադարան: Գրությունը մագաղաթի վրա էր, աղեքսանդրյան տառերով, այսինքն՝ երկաթագիր: Հեղինակը աշխատել էր տալ հնամենի գրքի ձև: Ծննդաբանությունը հասցրած էր մինչև Վասիլի հայրը, որի մասին ասված էր, թե մի որդի պիտի ունենա, որպիսին է Վասիլը և անունը պիտի լինի Բեկլաս (BEKLAS):

Նիկիտաս Պափլագոնացին մեկնում է թե Բեկլաս արվեստական բառ է, կազմված Վասիլի (B-), իր կնոջ Եվդոկիայի (E-), և նրանց Կոստանդին (K-), Լևոն (L-), Ալեքսանդր (A-) ու Ստեփան (-S) որդիների անվան սկզբնատառերից՝ **B-e-k-l-a-s**:

Մատենադարանապետ Թեոփանեսը մի օր, երբ որոնում էր կայսեր պահանջած մի գիրք, հայտնեց նրան, որ դիպվածով մի գիրք է գտել, հին գրերով գրված և դժվար վերծանելի: Թեոփանեսը ի նկատի ուներ Փոտի գիրքը: Ցույց տալով կայսրին նորագյուտ հնությունը, ավելացրեց, որ մի

մարդ կա միայն, որ կարող է կարդալ այս գիրքը: Այդ մարդը աքսորական Փոտ պատրիարքն է: Անմիջապես գիրքը ղրկեցին Փոտին: Սա պատրվակ բռնեց, թե մինչև կայսրին անձամբ չտեսնե, չի կարող ասել, թե ի՞նչ գիրք է և ի՞նչ է նրա բովանդակությունը: Վասիլ կայսրի հետաքրքրությունը շարժված էր: Պատվիրեց բերել աքսորական պատրիարքին արքունիք: Փոտը կարդաց խորհրդավոր գիրքը որպես թե հրեշտակի թելադրությամբ և մեծ բավականություն պատճառեց կայսրին: Այս առթիվ նորից սիրելի դարձավ Վասիլին:

Այս տափակ զրույցի մեջ մի բան կա ստույգ, որ Փոտ գիտնական պատրիարքը աշխատել է լուսաբանել Վասիլի ծագումը: Մնացածը անմիտ հերյուրանք է: Փոտը ոչ միայն որպես գիտուն անձ, այլև հայորդի լինելու հանգամանքով որպես Արշավիր Կամսարականի քրոջ որդի և Վարդ Կեսարի մտերիմը մոտիկ ծանոթ էր հայ շրջաններին և ուրեմն ի վիճակի էր ստուգել և պարզել Վասիլի ծննդաբանությունը:

Գիտությամբ հռչակված պատրիարքն այնքան զուրկ չէր հնարագիտությունից, որ չկարողացավ ավելի իմաստալից բան առաջարկել կայսրին, քան BEKLAS խղճուկ բառախաղը: Վասիլն էլ այնքան պարզամիտ չէր, որ հավատար և ուշադրության առներ այս ակներև խաբկանքը:

Զրույցը զուրկ է մինչև իսկ ինքնօրինակ լինելու թարմությունից:

Ճիշտ այդպիսի մի դեպք պատմում են Մեթոդիոս եպիսկոպոսի կյանքից: Թեոփիլոս կայսրի օրով Մեթոդիոսը բանտարկված էր մի նկուղի մեջ երկու ավազակի հետ և ազատվեց հետևյալ առթիվ: Կայսր Թեոփիլոսը, որ սիրում էր գիր ու գրականություն, մի անգամ պալատական մատենադարանում մի գիրք տեսավ, բայց չկարողացավ կարդալ: Դիմեցին Հովհաննես պատրիարքին և Լևոն նշանավոր փիլիսոփային, երկուսն էլ հայ էին: Սրանք խոստովանեցին, որ դժվարանում են վերծանել: Կայսրը շատ վշտացավ և անհանգստությունից կորցրեց ախորժակը: Այդ միջոցին սենեկապաններից մեկը խորհուրդ տվավ դիմել շնորհազուրկ և բանտի մեջ փակված Մեթոդիոս եպիսկոպոսին: Այդպես էլ արին: Երբ սենեկապանը մոտենում էր գիրքը ձեռին, Մեթոդիոսը գոչեց հեռվից. «ողջամբ գալդ, եղբայր Հովհաննես (այսպես էր սենեկապանի անունը), գիտեմ, որ ղրկված ես Թեոփիլոսի կողմից: Բե՛ր թուղթ և թանաք»: Մեթոդիոսը առավ գրիչը և գրեց երեք տեսակ մեկնություն: Թեոփիլոս կայսրը գոհ մնաց, ազատեց բանտից, բնակեցրեց իր մոր պալատում և շատ մտերմացավ հետը:

Այս պատմությունը ևս հեռու է վավերական լինելուց: Մեթոդիոսը և Փոտը մեծ գիտության տեր էին և այդպես էլ ճանաչված էին ընդհանրության կողմից, ուստի և միևնույն զրույցը կառչել է նրանց անվան որպես ապացույց նրանց անբավ գիտության: Զրույցի իմաստն է վեր հանել գիտության

նշանակությունը: Գիտությունը նկատվում է մի այնպիսի ուժ, որի առաջ բացվում են պալատական դռները նույն իսկ շնորհազուրկների համար: Մեթոդիոսի զրույցը, հավանորեն, նախագույն է, քան Փոտի: Ծանոթ զրույցը հարմարացրել են Փոտին, աշխատելով միևնույն ժամանակ շողոքորթության ստվեր ձգել նրա գիտության վրա:

Ինչպես երևում է, Փոտի թշնամիները զգացել են զրույցի տկարությունը, ուստի հնարել են մի ուրիշ և ավելի խակամիտ զրույց նույն խնդրի առթիվ, այսինքն թե ինչպես Փոտը վերագրավեց Վասիլի սերն ու բարեհաճությունը:

Փոտը մի բարեկամ վանական ուներ, անունը Թեոդորոս Սանդաբարեն: Ստուդիոն վանքի միաբաններիցն էր և Փոտի առաջին պատրիարքության ժամանակ (858-867) վանահայր էր կարգվել նույն հաստատության: Երբ Փոտը գահընկեց եղավ, Սանդաբարենը ևս քշվեց վանքից: Փոտի երկրորդ պատրիարքության ժամանակ Սանդաբարենը եպիսկոպոս նշանակվեց Եվխայիտա քաղաքի Արմենիակյան թեմում (Ամասիայի մոտ, այժմյան Չորում):

Պատմում են, որ Սանդաբարենը հրաշագործ էր և վիուկության ձիրք ուներ: Նա հաշտեցրեց Փոտին Վասիլ կայսրի հետ, դիմելով հետևյալ կախարդության: Սանդաբարենը խորհուրդ տվավ Փոտին մերձենալ կայսերական սենեկապաններից մեկն ու մեկին և նրա միջոցով սրսկել կայսեր անկողնու վրա այն ջուրը, որ ինքը կպատրաստե: Ազդեցությունը կլինի բարերար: Կայսրը կսկսե վերաբերել նրան առաջվան պես սիրով: Հետո պետք է աշխատեր, որ Սանդաբարենը տեսնե անձամբ կայսրին: Այն ժամանակ Փոտը կվերահաստատվեր իր նախկին դիրքում:

Փոտը կատարեց իր բարեկամի մոգական խրատները: Ներգործությունը անհապաղ էր: Հաջորդ առավոտյան կայսրը ղրկեց իր երեխաներին Փոտի մոտ ստանալու նրա օրհնությունը: Այնուհետև սկսեց շնորհել ոսկի և այլ պարգևներ, հրավիրեց Մագնավրա պալատը բնակության, և մտերմացավ հետը սերտ բարեկամության կապերով:

Կախարդ վանականը, Թեոդորոս Սանդաբարենը, երևում է, արևելցի էր: Վկա է ոչ միայն անունը, այլև այն պարագան, որ կոչվում է «մանիքեցի և որդի Մանիքեցու», «մոգպետ» (արքիմագոս): Նրա առաջարկած վիկությունը ծանոթ է և գործ է ածվում հայ ժողովրդի մոտ, սիրած տղայի կամ աղջկա փոխադարձ սերը գրավելու նպատակով: Հավանական է, որ Սանդաբարենը հայ է ծննդյամբ, թե ծագումով: Այս զրույցի համաձայն Փոտի և Վասիլի հաշտությունը պետք է վերագրել Սանդաբարենի վիկության:

Կեղծ ծննդաբանության մասին խոսք չկա: Ոչ մեկը և ոչ մյուսը արժանի չեն որևէ վստահության: Թվում է, որ Փոտը երբեք չէր գժտվել կայսրի հետ, որ հաշտության պետք ունենար: Պատրիարքական գահը թողնելուց հետո էլ

նա շարունակեց վայելել կայսրի սերն ու հարգանքը որպես գիտուն և առաքինի անձն: Կայսրի պատվերով, Փոտը հաստատվեց պալատում և ստանձնեց նրա որդիների դաստիարակությունը:

Վասիլը հեռացրեց Փոտին գահից քաղաքական նպատակներով, չուզենալով լարել իր հարաբերությունները պապի հետ, որի համակրությունը պետք էր ծրագրված նվաճումների համար: Անձնական թշնամություն չուներ, թեև հին ուներ կասկածով նայել նրա վրա, որպես Վարդ Կեսարի բարեկամ:

Այս բոլորը չեն ժխտում, որ Փոտը իրոք կազմել էր Վասիլի ծննդաբանությունը: Շարժառիթը ամեն դեպքում այն չէր, ինչ որ թելադրում են հիշյալ զրույցները: Նախ ծանոթանանք Փոտին վերագրած գործին: Ի՞նչ է նրա հնարած ծննդաբանությունը:

Փոտի իսկական գործը մեզ չի հասել: Թշնամիների ասելով, նա աշխատել էր ցույց տալ որ Վասիլը Հայոց Տրդատ թագավորի ցեղից էր: Նրան են վերագրում նաև **Beklas** անհանճար գյուտը:

Վասիլին մոտիկ պատմագիրները ևս նույն կարծիքին են, որ Վասիլը Արշակունյաց տոհմից է, բայց չեն հիշում Փոտի անունը: Գիբեսիոսը վկայում է, որ Վասիլ սերում էր Պարթևաց Արշակ և նրա շառավիղ Տրդատ թագավորներից և միևնույն ժամանակ ցեղակից էր Փիլիպպոս և Աղեքսանդր Մակեդոնացիներին: Վերջին կապը զուտ աշխարհագրական է:

Կոստանդին Ծիրանածինը միակ պատմագիրն է, որ տալիս է իր պապի ծննդաբանությունը, թեև դարձյալ առանց պատրիարք Փոտի անունը հիշելու: Բայց երևում է, որ քաղված է Փոտին վերագրված գործից:

Ըստ այդ ծննդաբանության Վասիլը ծագում էր «Մակեդոնների երկրից», իսկ ցեղով հայ Արշակունիներից էր: Առաջին Արշակը, որ թագավորեց պարթևների վրա և մեծ հռչակ ստացավ փառքի և առաքինության ասպարեզում որպես թե օրենք էր սահմանել, որ ոչ ոք չէր կարող իշխել պարթևների, հայերի և մարացիների վրա, եթե Արշակունի ծագում չուներ: Այս օրենքի համաձայն Արշակի սերունդները տիրեցին երկար ժամանակ հիշյալ ժողովուրդներին: Երբ մեռավ նա, որ թագավորում էր Հայոց վրա, խռովություն ծագեց ժառանգների մեջ:

Ահա այս միջոցին էր, որ Արտավան և Կլիեներս *Κλειένης* ոչ միայն զրկվեցին հայրական իշխանությունից, այլև զգացին, որ իրենց կյանքը վտանգի մեջ է: Հարկադրված թողին հայրենի երկիրը և չվեցին դեպի կայսերական մայրաքաղաքը: Գահի վրա էր Լևոն կայսրը (457-474): Սա ընդունեց փախստական իշխաններին, սիրալիր վերաբերում ցույց տվավ և իրենց ազնվական ծագման վայել բնակություն և ապրուստ տրամադրեց մայրաքաղաքում: Երբ Պարսից թագավորն իմացավ, որ իշխանները ապաստանել են կայսեր մոտ և բարեմիտ ընդունելություն գտել, ան-

միջապես ապսպրեց գրով, որ վերադառնան հայրենիք, խոստանալով դարձնել նրանց սեփական իշխանությունը: Թագավորը հույս ուներ այդ զիջումով պահել հայ ժողովուրդը հպատակության մեջ: Լուրը հասավ կայսրին: Սա հասկացավ Պարսից թագավորի գաղտնի նպատակները և կարգադրեց, որ ընթացք չտան իշխանների դարձի խնդրին, որ բնավ չէր համապատասխանում կայսերական շահերին: Կայսրի հրամանով նրանց փոխադրեցին ավելի հեռու և ապահով տեղ, Մակեդոնիայի Նիկե քաղաքը:

Անցան տարիներ: Սարակինոսների տերությունը զորացավ և Ամիր-ալ-Մումինը միևնույն փորձը կրկնեց հետ բերելու փախստական Արշակունի իշխաններին: Թղթով հրավիրեց նրանց գալ և տիրանալ իրենց նախնիքների ժառանգության:

Այդ ժամանակ կայսրը Հերակլեոն էր (610-641): Սա ևս ընդդիմացավ փախստականների դարձին, որը պիտի ծառայեր արաբների քաղաքական նպատակներին: Հայ ժողովուրդը կապված էր անխզելի սիրով Արշակունիների տան և եթե սրանց ժառանգները վերադառնային և հարեին արաբական իշխանության, կայսերության շահերը պիտի տուժեին: Այս նկատումով Հերակլես կայսրը հրամայեց Նիկեից տեղափոխել Մակեդոնիայի Փիլիպպիոն քաղաքը, ավելի հեռու և ավելի անդորր բնակավայր: Մի առժամանակ այդտեղ մնացին, հետո անցան և հաստատվեցին Ադրիանուպոլիս քաղաքում, ավելի լուսավոր կենտրոնում:

Տարիներ հետո, երբ գահի վրա էր Կոստանդին կայսրը իր մոր Իրինեի հետ (780-797), **Maiktes** անուն մի անձ, Արշակի արյունից, եկավ մայրաքաղաք դեսպանության, թե ուրիշ գործի աղագավ: Սա պատահեց Լևոն անունով մի հայի և տեսնելով, որ նա ևս հասարակ ոմն չէ, այլ ազնվական նշանավոր ծագում ունի, մտերմացավ հետը: Լևոնը ընդունեց նրան իր ընտանիքը և վերջը իր աղջիկներից մեկին փեսայացրեց: Այդ ամուսնությունից ծնեց Վասիլի հայրը:

Վասիլի հայրը մարմնով գեղեցիկ էր և ուժեղ, հոգով առաքինի, շատ շատերի համար նախանձելի փեսա: Ադրիանուպոլիս կար մի ազնվական և գեղանի կին, որ ամուսնու մահից հետո ապրում էր անբասիր այրիության մեջ: Լուրեր էին պտտում, ո՛չ արհամարհելի, որ նա Կոստանդին Մեծի արյունից էր: Այրին շատ հավանեց Վասիլի հորը և իր դստերն կնության տվավ նրան: Ազնիվ և ամոթխած կին էր:

Ահա այս զույգից ծնեց Վասիլը, հոր կողմից Արշակի շառավիղներից, մոր կողմից՝ Մեծն Կոստանդինի, երկու կողմից էլ՝ Աղեքսանդր Մեծի փայլն ուներ: Ծննդյան ժամանակ նախագուշակ նշաններ երևացին ապագա փառքի: Առաջին մազի հետ տեսան գլխի շուրջը կարմիր թելեր, և խանձարուրքը՝ ծիրանագույն: Մինչև այդ ժամանակ Արշակի սերունդները

պահել էին Ադրիանուպոլսում իրենց ազգային բնույթը, կազմելով առանձին տուն, թեև հաճախ խառն ամուսնություններ էին կայացել: Պատմում է ապա Կրումի արշավանքը Ադրիանուպոլիս քաղաքի վրա և Վասիլի ծնողների գերությունը և դարձը, որին արդեն ծանոթ ենք:

Անվստահելի պատմություն է: Պատմողն ինքը անհավանական է գտել, որ Արտավանի և Կլիենեսի սերունդը հայ մնային օտար միջավայրում դարերի ընթացքում, ուստի կանխում է ցրել ամեն տարակուսանք, ասելով, որ Արշակի սերունդները պահել էին իրենց ազգությունը Ադրիանուպոլսում հակառակ խառն ամուսնության դեպքերին: Թրակիայում, անտարակույս, շատ հայ կար: VI դարու վերջերը Մորիկ կայսրը հոծ գաղթականություն հանեց Հայաստանից և հաստատեց Թրակիա հայ իշխանների հրամանատարության տակ: Նույնն արեց VIII դարում Կոստանդին կայսրը (741-775), Կարինի շրջանից հայեր տեղափոխելով Թրակիա:

Բազմաթիվ հայ գործիչներ կային պետական բոլոր ասպարեզներում, մասնավորապես զինվորական: Երկու դեպք գիտենք միայն, երբ հիշվում են հատկապես Արշակունի իշխաններ: Հուստինիանոսի դարաշրջանում հայտնի եղավ Արտավանը, Հովհաննես Արշակունի թագավորազնի որդին, որ տիրում էր Կարինի շրջանում: Արտավանը սկզբում թշնամի էր կայսերական իշխանության, հետո հաշտվեց և անցավ մայրաքաղաք, ուր այնքան յառաջացավ, որ անգամ փորձեց տիրանալ կայսերական գահին:

Հաջորդ VII դարում ծանոթ է Վաղենտիանոս կամ Վաղենտին պատրիկը, որը պաշտպանեց Հերակլեսի թոռի Կոստանդինի գահակալական իրավունքը և հաջողեց նրան գահ նստեցնել: Շուտով սակայն ըմբոստացավ նրա դեմ, և ուզեց գահը խլել, բայց ձախողեց զոհվելով իր հանդուգն ձեռնարկին:

Բյուզանդական պատմիչները, որ մեծ ուշադրության են արժանացրել Վաղենտինին, չեն հիշում նրա հայ ծագումը: Բարեբախտաբար Սեբեոսը պահել է մեզ նրա հիշատակը և անվանում է նրան Արշակունի. «կարգէ ի վերայ զաւրաց իւրոց զաւրավարս զՎաղենտիանոսն, որ կոչէր Արշակունի»:

Արշակունյաց տանից էր նաև Մանուել զորավարը, որ ժամանակակից էր Վաղենտինին: Նույն հայ պատմագիրն ասում է, որ Կոստանդին կայսրը սիրեց Սմբատ իշխանին, որ Բագրատունի էր և որդի Վարազտիրոցի, որդվո Սմբատի Բազմահաղթի: Կայսրը Սմբատին դրուճգար նշանակեց և «ետ նմա կին ի տանէն Արշակունեաց եւ յիւրոց մերձաւորաց»: Սմբատի կինը Մանուելի դուստրն էր, ինչպես վկայում է նույն Սեբեոսը անվանելով Մանուելին աներ Սմբատի. «սպանեն զԳէորգ մագիստրոս եւ զՄանուէլ զայրն առաքինի որ էր աներ Սմբատայ ասպետի որդւոյ մեծի Սմբատայ Խոսրովայ Շումն կոչեցելոյ»: Սմբատ ասպետը Վարազտիրոցի որդին էր, և

սա որդի էր Սմբատ Խոսրով-Շումի, այսինքն՝ Բագմահաղթի: Ուստի բնագիրը պետք է ուղղել՝ «աներ Սմբատայ ասպետի որդւոյ Վարազտիրոցի որդւոյ մեծին Սմբատայ» և այլն:

Ուրիշ Արշակունի անձեր չեն հիշվում ո՛չ Հայաստանում և ո՛չ դուրսը: Բյուզանդական հայերի տոհմական ծագումը դժվար է որոշել հաստատապես, եթե օգնության չեն գալիս հայ աղբյուրները դրական ցուցումով: Նախարարական տները տոհմական անուններ ունեին մի հայտնի չափով յուրահատուկ, որոնց միջոցով կարելի է երբեմն որոշել, թե ով ո՞ր տոհմին է պատկանում: Սակայն հաճախ անունները փոխանցվում են ամուսնության հետ, որով ավելի դժվարանում է օգտվել անունների ուղեցույցից: Լևոն Իսավրացու փեսան Արտավազդը, որ նրա մահից հետո թեկնածեց գահին 742 թվին, մի հորեղբոր որդի ուներ, անունը Տրդատ: Արդյո՞ք Արտավազդն ու Տրդատը Արշակունի տան շառավիղ էին:

Արտավազդը, ճշմարիտ է, Մամիկոնյան անուն է, բայց կարող էր անցած լինել Արշակունի իշխանի: Տոհմական անունները երբեմն ցատկում էին մի տոհմից մյուսը, հավանորեն, ամուսնության միջոցով: Սմբատ ասպետի աները, ինչպես տեսանք, Արշակունի լինելով հանդերձ, կրում էր Մամիկոնյան անուն՝ Մանուել: Հայտնի է այս անունով և մի Բագրատունի իշխան, որ էր հայր Սմբատ ասպետի, այն իշխանի, որ 591 թվին ապստամբեց կայսեր դեմ և կրկեսում հռչակվեց անօրինակ սխրագործությամբ:

Ըստ անունների որոշել տոհմը կարելի է փոքր ի շատե վստահորեն միայն այն ժամանակ, երբ հայտնի են հոր և որդու և կամ եղբայրների անունները: Այլապես եզրակացությունները կմնան միշտ խնդրական, ինչպես Արտավազդի դեպքում:

Ինչ և լինի, բացի Արտավանից և Վաղենտինյանից, այլև Մանուելից, ուրիշ Արշակունի դեմքեր ծանոթ չեն ո՛չ ազգային և ո՛չ օտար մատենագրության մեջ:

Վասիլի ծննդաբանության մեջ հիշված երկու անձերից Արտավանը, հավանորեն, արձագանք է Հովհաննեսի որդու Արտավան Արշակունու: Ժամանակով իրարից հեռու չեն: Ըստ ծննդաբանության, Արտավանը փախավ Հայաստանից Բյուզանդիա Լևոն կայսրի (457-474) ժամանակ: Իսկ պատմական Արտավանը ապրում էր VI դարի առաջին կեսին:

Արտավանի ընկերն էր ոմն Կլիենես, *Κλειένης* անծանոթ այլուստ, և անունը խորթ, անպայման խաթարված: Հայտնի են Արտավան և Դղակ, ուղղելի Գղակ, **Gylakes** իշխանները, որոնց սպանեց Պապ թագավորը: Սրանք համապատասխանում են Փավստոսի Մուշեղ Մամիկոնյանին և Գղակ մարդպետին և, իհարկե, չեն կարող նույնանալ Արտավանի և Կլիենեսի հետ: Մի ուրիշ **Gilakios** Գղակ հայ իշխան ժամանակակից էր VI

դարի Արտավան Արշակունուն, նույնպես բյուզանդական բանակի մեջ: Վասիլի ծննդաբանության հեղինակը կարող էր այստեղից առած լինել Արտավան և Կլիեներես անունները, եթե միայն վերջինս աղավաղ և կամ սխալ ընթերցում է Գիլակի:

Նույն ծննդաբանության մեջ Արշակունիների նախահավին վերագրվում է մի օրենք, որ մտացածին է, բայց համապատասխան իրական դրության, որով պարթևների ժամանակ պարսից, մարաց և հայոց թագավորները Արշակունյաց տոհմից էին: Արտավան Արշակունին նախքան Բյուզանդիա անցնելը իր փեսա Վասակ Մամիկոնյանի հետ, կռվել էր Հուստինիանոսի դեմ, դժգոհ նրա քաղաքականությունից: Այս առթիվ դիմել էին Պարսից թագավոր Խոսրովի օգնության, որին ի միջի այլոց գանգատվում էին, որ վերջին Արշակունի թագավորը զիջել է Թեոդոսիոս կայսրին իր իշխանությունը մի պայմանով, որ իր մերձավորները մնան ազատ և չենթարկվեն որևէ հարկատվության:

Թվում է, թե այս տրտունջի մի այլ ձևակերպումն է այն օրենքը, որ վերագրվում է առաջին Արշակին և որի համաձայն նրա սերունդը պիտի թագավորեր, բայց վերջին հայ Արշակունի թագավորի մահից հետո խլրտումներ ծագեցին և պատճառ եղան Արտավանի և Կլիեներեսի տարագրության: Վասիլի կենսագիրը թագավորի անկումը և խռովությունները դնում է Լևոն կայսրի ժամանակ (457-474), այսինքն՝ Վարդանանց շարժումից հետո և Վահանանցի սկիզբը: Գյուտ կաթողիկոսի օրով պարսիկ կարգերից դժգոհ հայ իշխանները գաղտնի ժողովներ էին ունենում կաթողիկոսի մոտ, որպեսզի մի հնար գտնեն օրվան չարիքի դեմ: Ծրագրում էին «փախչել յօտարութիւն եւ երբեմն ի խնդիր լինել օգնականութեան եւ ապստամբել: Առաքեին գաղտ եւ պատգամաւորս միանգամ եւ երկիցս առ թագաւորն Յունաց Լեւոն, որոյ թէպէտ եւ յանձն առեալ կամէր օգնել յերկարէր ժամն եւ խափանէին խորհեալքն»[1]:

Գործի ղեկավարները էին Բաբիկ Սյունի և Առնակ Ամատունի: Հավանորեն, սրանք էին նաև Լևոն կայսրի մոտ գնացող պատգամավորները: Եթե Արտավան և Կլիեներես պատմական անձերի ստվերներ լինեին, կարող էինք նրանց համեմատել Բաբիկի և Առնակի հետ: Սակայն, ոչ մի երաշխիք չկա պատմական համարելու այս անձերը և եթե անգամ համարենք, անկարելի է ընդունել, որ նրանց սերունդն հարատևեր Բյուզանդիայում մինչև Հերակլեսի ժամանակ, այնուհետև տեղափոխվեր մակեդոնական Նիկե և Փիլիպպիոն քաղաքները, ապա անցներ Աղրիանուպոլիս, և երեք դար շարունակ օտարության մեջ դեգերելով, պահեր անաղարտ ոչ միայն իր հայ ազգությունը, այլև Արշակունի արյունը: Այս կատարյալ առասպել է:

[1] **Ղազար Փարպեցի**, Թիֆլիս, 1907, էջ 247:

Կենսագիրը հավատացնում է, որ Ադրիանուպոլսի Արշակունիներից *Μαίχτης* եկավ մայրաքաղաք և ծանոթացավ Լևոն Հայի հետ և ամուսնացավ նրա դստեր հետ: Այս պատահեց Կոստանդինի և Իրինեի օրով, պետք է կարծել, նրանց միասնական կառավարության տարիներին՝ 780-797 թվին: **Maiktes**, անկասկած, Հմայակ անվան սխալ ընթերցումն է: Պետք է կարդալ **Maiakes** կամ **Maikes**, Հմայակ կամ Հմայեկ (ժողովրդական ձև): Արդյո՞ք Հմայակը և Լևոնը նույնպես հնարած անձնավորություններ են, ինչպես Արտավան և Կլիենես, թե առնված են իրականությունից:

Կոստանդինի հոր Լևոն կայսրի (775-780) օրով հարյուր հազարանոց բանակը շարժվեց դեպի արևելք արաբների դեմ: Հինգ զորավարներից չորսը հայ էին. Արտավազդ, ստրատեգ Անատոլիկյան թեմի, Տաճատ Անձևացի՝ Բուկելլարյանի, Վարազտիրոց Բագրատունի՝ Արմենիակյանի և Գրիգոր Մուշեղակ՝ Օփսիկյանի: Արտավազդը Հմայակ Մամիկոնյանի որդին էր: **Maiktes** կարծես թե պահել է այս Հմայակ Մամիկոնյանի հիշողությունը: Իսկ եթե ուզենք արժեք տալ այն ցուցումին, թե **Maiktes** -ը մայրաքաղաք եկավ Կոստանդինի և Իրինեի (780-797) ժամանակ, ապա պետք է ենթադրել, որ խոսքը Արտավազդի որդու մասին է, որը կարող էր իր պապի անունով Հմայակ կոչված լինել:

Գալով Հմայակի աներոջ Լևոնին, թվում է, թե այլ ոք չէ, եթե ոչ այն անձը, որ հետո գահ բարձրացավ Լևոն V անունով: Լևոնը Արմենիակյան թեմի ստրատեգ Վարդ պատրիկի որդին էր: Վարդն ընկավ 791 թվին բուլղարական ճակատում: Նրա որդին Լևոնը մասնակից էր Միքայել Ռանգաբե կայսեր արշավանքին ընդդեմ Բուլղարաց Կրում թագավորի 813 թվին:

Միքայելը պարտություն կրեց Ադրիանուպոլսի ճակատամարտում, զորքերը ձգեցին նրան գահից և կայսր հռչակեցին Լևոն Հայկազնին 813 թվին: Հավանական է կարծել, որ Հմայակը, Լևոնի փեսան, նրա բանակում լիներ և մասնակից Ադրիանուպոլսի կռիվներին: Թերևս այս է պատմական հիմ ծառայել այն ավանդության որով Հմայակը համարվում է ադրիանուպոլսեցի և շառավիղ հնում աստ հաստատված Արշակունի իշխանների:

Ադրիանուպոլսումն է, որ Հմայակի որդին ամուսնացավ տեղացի մի այրի կնոջ աղջկա հետ, որից ունեցավ Վասիլին: Շատ զարմանալի է, որ Վասիլի կենսագիրը չգիտե կամ գոնե չի տալիս նրա հոր և մոր անունը: Մակեդոնացի գերության դարձի հերոսների՝ Կորդիլեսի, իր որդու Վարդի, Ցանցի և Լևոն Գոմոստոսի անունները պահվել են, բայց Վասիլի ծնողների անունը անտես է արվել, մինչդեռ գերության ամբողջ պատմությունը ուրիշ նպատակ չունի, քան ցույց տալ, որ Վասիլի ծնողները գերիների թվում էին և ինքը՝ Վասիլը, այդ ժամանակ նորածին մանուկ էր:

Վասիլի մոր անունը գիտենք նրա տապանագրից: Նա կոչվում էր

ՊաՆկալո՝ Ամենագեղ և թաղված էր Ս. Եվփիմեի եկեղեցում իր մյուս երկու որդիների՝ Սմբատի և ՄարիաՆոսի հետ: Հնարավոր է, որ ՊաՆկալո աղրիաՆուպոլսեցի այրի կՆոջ դուստրն էր, բայց այրին, հարկավ, ոչ մի կապ չուներ ԿոստաՆդին Մեծի հետ: Հոր կողմից արենակից Տրդատ թագավորի, ի՞նչ արգելք, եթե մոր գծով էլ սերեր Տրդատի ժամաՆակակից ԿոստաՆդին Մեծից: Ավելի պաՆծալի ծՆդական չէր կարելի հորինել Վասիլի համար, սերելով ՆրաՆ երկու աՆդրաՆիկ քրիստոՆյա թագավորներից: Դժվար է հավատալ այս վառ երևակայության թռիչքին:

ՊաՆկալո, աՆպայմաՆ, հայ էր ծագումով, ինչպես երևում է իր որդիների աՆուՆներից, որոՆցից Սմբատը զուտ հայկական է, իսկ ՄարիաՆոսը՝ ընդուՆված ՄամիկոՆյաՆ տաՆ: ՄաՆուել, Վարդ Կեսար և ՊետրոՆաս եղբայրների հայրը կոչվում էր ՄարիաՆոս: ՆույՆ աՆուՆը կրում էր ՊետրոՆասի որդին, որին Վասիլ եպարքոս ՆշաՆակեց մայրաքաղաքի: Բացի դրաՆից, հայ աղբյուրից դրական տեղեկություՆ ուՆինք, որ Վասիլի **մայրը հայ էր:** «ՎահաՆ ոմՆ եպիսկոպոս Տարօնոյ ասէր Նմա թէ ԱրշակուՆի իցէ, զի մայրՆ հայ էր եւ կատարել թուէր տեսլեաՆՆ Սահակայ սրբոյ՝ ՆստիլՆ թագաւոր ԱրշակուՆի» (4):

Այս վկայությունՆ այՆ իմաստը չուՆի, թե Վասիլը հայ էր միայՆ մոր կողմից: Հոր ծագումը վեճի ՆյութՆ չէր, ուստի և պատմագիրը ոչինչ չէ ասում այս մասին: ՏարաձայՆությունը վերաբերում էր մորը, որը ծՆված լինելով ԱղրիաՆուպոլիս, կարծվում էր ոմաՆց կողմից, թե հայ չէ: Ահա այս կարծիքը հերքելու և ամեՆ կասկած փարատելու համար շեշտում է, որ մայրը ևս հայ էր, համաձայՆ Տարոնի եպիսկոպոս ՎահաՆի վկայության:

Ո՞վ էր Վասիլի հայրը և ինչո՞ւ ՆրաՆ աՆուՆը չգիտե կամ չի հիշում ԿոստաՆդին ԾիրաՆածինը: ՉարմաՆալի չէ, որ պապի աՆուՆը գիտե, թե՛ հոր, թե՛ մոր կողմից, բայց հոր աՆուՆը չգիտե: Արդյո՞ք գերության զրույցի մեջ հիշված Կորդիլեսն ու իր որդին Վարդը ազգական չէին Վասիլին:

Եթե ԼևոՆը, Վասիլի հավը, իրավ Լևոն V կայսրն է, ինչպես մեզ թվում է, հասկաՆալի է, թե ինչո՞ւ Վասիլի կեՆսագիրը սքողել է իր պապի արենակցությունը պատկերամարտ կայսրին: ՔՆավ ցաՆկալի չէր բարեպաշտ Վասիլին կապել ավելի, քաՆ ամբարիշտ համարված Լևոն V-ի հետ: Բայց որ հավաՆական է ՆրաՆց մեջ ցեղակցություն որոՆել, որոշ հիմ եՆ տալիս Նաև հատուկ աՆուՆները, որ ընդհաՆուր եՆ երկու տներին: Լևոն V-ի որդիներից մեկը կոչվում էր Սմբատ, մյուսը՝ Վասիլ: Երբ Սմբատը հայտարարվեց գահաժառաՆգ, աՆուՆը փոխեց ԿոստաՆդին: Արդ՝ Լևոն, Սմբատ, ԿոստաՆդին, Վասիլ աՆուՆները սեփական եՆ Վասիլի տաՆ: Նրա եղբայրը կոչվում էր Սմբատ, ավագ որդին՝ ԿոստաՆդին, որի ծՆդյաՆ աՆուՆը թերևս Վարդ էր, ինչպես մեկՆեցինք վերև: Լևոն V-ի հոր աՆուՆը ևս Վարդ էր:

Ավելորդ չէ թերևս հիշել Նաև այՆ հաՆգամաՆքը, որ Լևոն V թավ մորուս

ուներ և **գանգուր մազեր**: Վասիլի մասին ևս ասված է, որ մազերը **գանգուր** էին: Արդյո՞ք դիպվածական երևույթ է, թե ժառանգական նշան:

Եթե իրավացի է մեր ենթադրությունը, որ Վասիլ Լևոնի աղջկա թոռն էր, ապա նա չէր կարող ծնված լինել 812 թվին: Պատմում են, որ 866 թվին մայիսի 25-ին, երբ Միքայել կայսրը հաջորդ օրը պիտի հռչակեր Վասիլին թագակից, կատակասեր կայսրը հրամայեց պառկեցնել նոր կայսրին և 30 հարված տալ մտրակով: Կատակը ծանր եկավ Վասիլին, բայց դիմացավ, որովհետև երիտասարդ էր, ասում է պատմագիրը:

Որքան և արտառոց է թվում այս կատակը, բայց պատշաճում է թեթևսոլիկ և տղայամիտ Միքայելին, և տարակուսանքի տեղիք չի տալիս: Պատմողը լսել է, անշուշտ, իրենց տանը, իր Կոստանդին պապից, որ Վասիլի բարեկամն էր և ականատես նրա հաջողության: Թվում է, թե կատակը մի իմաստ ուներ. Վասիլը, հավանորեն, թևակոխում էր 30 տարին, և 30 հարված նրա 30 տարվան թիվն էր: «Երիտասարդ լինելով, դիմացավ ցավին» խոսքերը ապացուցանում են, որ ամեն պարագային «երիտասարդը» 30 տարուց ավելի չէր կարող լինել:

Այս հաշվով Վասիլ ծնված պիտի լիներ 836 թվին, հակառակ որ ավանդությունը տալիս է 812 թիվը: Իսկ Միքայել ծնված էր 839 թվին, ասել է, թե երեք տարով միայն կրտսեր էր Վասիլից: Գրեթե հասակակից էին, որով հասկանալի է և նրանց ընկերական մերձավորությունը և միասնական զվարճություններն ու խաղերը:

V

Վասիլը, եթե իրոք Հմայակի և Լևոնի սերնդից էր, չէր կարող Արշակունի համարվել: Հմայակը Մամիկոնյան տանից էր և Լևոնը Արծրունյաց: Գիտնական պատրիարքը, անպայման, մեղանչել է ճշմարտության դեմ, և ստիպված է եղել դիմելու մարգարեական տեսիլի օգնության: Վասիլի թագադրության առթիվ 866 թվին, նրա կենսագիրը նկատում է. «Եվ այսպիսով կատարվեց այն մարգարեությունը, որ արել էր 350 տարի առաջ Իսահակ նշանավոր հոգևորականը, նա որ ինքն ևս Արշակունյաց ցեղից ծագելով տեսել էր երազ, թե այնքան տարուց հետո Արշակի սերնդից մեկը պիտի առնե Հռովմեական կայսրության գայիսոնը»:

Հայ մատենագիրը ևս պատմում է, որ 325 Հայոց թվականության = 876 Վասիլի կողմից եկավ Աշոտ իշխանաց իշխանի մոտ Նիկիտաս անուն կայսերական ներքինին խնդրելու Աշոտից թագ: Տարոնի եպիսկոպոս Վահանը «ասէր նմա թէ Արշակունի իցէ եւ կատարիլ թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր Արշակունի եւ կամէր պսակիլ ի Բագրատունւոյն»:

Ս. Սահակի տեսիլը հայտնի է (5): Վերջին Արշակունի թագավորի Արտաշեսի հետ ընկավ նաև Ս. Սահակը: Երբ նախարարները եկան նորից խնդրելու, որ ստանձնեն հայրապետությունը, Ս. Սահակը հրաժարվեց, ասելով, որ շատ վաղ տեսիլ է երևացել իրեն, որով վերին կանխասացությունը հայտնում է, թե թագավորությունը, և հայրապետությունը դադարելու են Արշակունի և Գրիգորի տանից, «լռեսցէ մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց եւ քահանայութիւն ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Գրիգորի»: Տեսիլն երևացել է «յառաջ, քան զծեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւն», այսինքն՝ նախքան կաթողիկոսանալը:

Սակայն, միևնույն տեսիլն ավետել է, որ դարձյալ պիտի նորոգվեր թե՛ Արշակունի թագավորությունը և թե՛ հայրապետությունը Գրիգորի տան. «մերձ յերեւումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի»: Թե երբ պետք է կատարվի, որոշված է ճշտիվ. «Յայսմհետէ մինչեւ ի վախճան աշխարհիս երեք տասներեակք ամաց և կէս տասներեկի համառօտեսցի ի վերայ ամենայն աշխարհի մինչեւ յերեւումն պղծոյն անապատի եւ լինին սոքա յայտնապէս թուով ամք երեքհարիւր յիսուն»:

Ս. Սահակի տեսիլի աղերսը Վասիլի թագավորելուն ավելի, քան խորհրդավոր է: Շատ կարևոր է բանասիրական տեսակետից: Խնդիրը կնճռոտ է: Վասիլ գահ բարձրացավ 866 թվին: Այստեղից 350 տարի հետ հաշվելով, կստանանք 516 թիվը, այն ինչ Սահակը ապրում էր մի դար առաջ: Եթե առաջանանք տեսիլից, որ երևացել է նախքան Սահակի հայրապետանալը, ուրեմն ոչ ուշ, քան 400 թիվը, կհասնենք մինչև 750 թվականը: Այս դեպքում տեսիլի ակնարկը չի կարող վերաբերվել Վասիլին:

Ուշադրության արժանի է, որ ութերորդ դարի կեսերին, հայ-արաբական ընդհարումների սուր վայրկյանին, լուրեր էին տարածված թե արաբական պետության վերջը հասել է. «մի ոմն Մոնոզոն, մոլորութեան հոգւոյ շարժեալ, մարգարէանայր սնոտիս եւ ընդունայն ասելով. «ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ, զի այժմ ընդհուպ դարձցի գաւազան թագաւորութեանն միւս անգամ ի տուն Թորգոմայ»:

Ութերորդ դարի կեսին, ուղիղ 750 թվականին Օմմայան տունը զիջավ իշխանությունը Աբբասյաններին ներքին կռիվներից հետո: Այս հեղաշրջումի շրջանին է վերաբերում կամ ավելի ճիշտ այստեղից են ծայր տվել հիշյալ լուրերը արաբական իշխանության մասին: Հայոց ապստամբական շարժումը 750-775 տարիներին գուցե սնված էր մասամբ այն հավատով, որ արաբների վերջը մոտենում է: Հիմք կա կարծելու, որ այս ատենները հորինված լինի մեզ հետաքրքրող տեսիլը Ս. Սահակի անունով:

Վասիլի շրջապատում, գլխավորապես Փոտի ջանքերով, փորձել են

տեսիլը հարմարեցնել Վասիլի դեպքին և նրանով հիմնավորել նոր կայսրի Արշակունի ծագումը:

Տեսիլի թելադրանքն այն է, թե Արշակունի և Լուսավորչի տոհմերը պիտի վերստին ծաղկեն Հայաստանում: Եթե ընդունենք, որ Բյուզանդիան ևս խնդրի նյութ է, այն ժամանակ կարելի է ավելի առաջ գնալ և ենթադրել, որ տեսիլը պարտական է իր ծագումը Վասիլի գահակալության:

Ուրիշ խոսքով՝ Փոտին վերագրված գաղտնի գրությունը, որ կայսերական գրադարանի մեջ պահել էր, այլ բան չէր, եթե ոչ Սահակի տեսիլը, որ հորինել էր գիտուն պատրիարքը ցույց տալու համար, որ Վասիլը արքայական և այն էլ պարթևական ծագում ուներ և արժանի էր իրեն վիճակված մեծության:

Այս կեղծիքը Փոտը կատարած պիտի լիներ 867-875 տարիների ընթացքում, այսինքն՝ գահընկեցությունից մինչև Նիկիտասի գալուստը Աշոտի մոտ: Վենետիկի հայրերից Կարապետ Տեր-Սահակյան, որ նահատակվեց Տրապիզոնում Մեծ եղեռնի օրերին, այն կարծիքն էր պաշտպանել իր մի ուշագրավ հոդվածում, թե Սահակի տեսիլը հորինված է Բյուզանդիայում Վասիլի գահակալության առթիվ (6):

Այս կարծիքին դեմ է թվում, սակայն, այն պարագան, որ տեսիլն արդեն ծանոթ է Սահակ Չորոփորեցի կաթողիկոսի օրով խմբագրված մի գործի, որ հասել է մեզ հունարեն թարգմանությամբ (7): Սահակի տեսիլը, *ὁπτασία*, հիշատակված է այնտեղ: Խորենացին ևս տեղյակ է տեսիլին. «հարկաւորեալ պատմեաց զտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա ի քուն ապագայիցն յայտնութիւնք»:

Սակայն ո՛չ հույն գործի և ո՛չ Խորենացու հակիրճ խոսքերից չի երևում, թե ի՞նչ էր տեսիլի էությունը: Արդյո՞ք նրանց գիտցած տեսիլի մեջ հիշատակություն կար Արշակունյաց գահի և Լուսավորչի տան վերանորոգման մասին, թե խոսքը վերաբերում էր միմիայն այդ երկու տոհմերի մոտալուտ անկման: Այս է կարևորը:

Մեզ թվում է, որ տեսիլքի հին հարազատ խմբագրության մեջ ո՛չ Արշակունի և ո՛չ Լուսավորչի տոհմի վերերևման մասին խոսք չէր կարող լինել, այլ միմիայն նրանց անկման: Ս. Սահակ իր հրաժարականը հիմնավորելու համար պատմում է թագավորության և հայրապետության տխուր վախճանը և բնավ պատճառ չուներ սփոփել ըմբոստ աղերսողներին լավագույն ապագայի հուսով:

Տեսիլը կարող էր վերախմբագրված լինել Վասիլի գահակալության առթիվ և հետևապես Փոտին վերագրելու միտքը բնավ անհավանական չէ:

Ամեն պարագային Վասիլի Արշակունի ծագումը երկբայելի է: Իհարկե հայ նախարարական տներից շատերը արենակցական կապեր ունենալով

Արշակունի տան հետ կարող էին հավակնել արքայական ծագման, ինչպես օրինակ Սեներքերիմ Արծրունու դուստրը, որ հարս գնաց Վրաց արքունիք, իրեն համարում էր Արշակունի: Գոնե վրաց ավանդությունն այդպես է ներկայացնում (8): Թերևս նման երևույթով Վասիլը ևս իրեն Արշակունի էր հռչակել: Իր որդի և հաջորդ Լևոն կայսրը ակնարկում է իր հոր ազնվական ծագումը իր դամբանականի մեջ: Կայսերական տան մեջ, երևում է, ընդունելություն էր գտած, որ Վասիլ սերում է Տրդատից: Ժամանակները մեծ հավատ չէին ընծայում այս հավակնության և գաղափարը վերագրում էին Փոտ պատրիարքին:

Միայն արաբացի մատենագիր Տաբարին է թվում համամիտ Փոտին, ընդունում է, որ Վասիլն արքայական շառավիղ էր, բայց անվանում է նրան սլավոն, «որովհետև մայրը սլավոն էր»:

Տաբարին գտնվում է, անտարակույս, Փոտի կազմած ծննդաբանության ազդեցության տակ: Սլավոն բառով ակնարկում է Վասիլի մոր աղրիանուպոլսեցի լինելը: Թրակիան և Մակեդոնիան ողողված էին այդ ժամանակները սլավոնական ազգաբնակությամբ, ուստի և հաճախ Սլավոնիա անունն են տալիս այդ երկրներին:

Տաբարիին (923) ժամանակակից էր Եվտիքիոս Աղեքսանդրիո պատրիարքը, հայտնի Սայիդ-իբն-ալ-Բաղրիկ անունով (940): Սա ասում է, որ Վասիլը «արքայական ծագում չուներ, որովհետև սլավոն էր»: Նույնը կրկնում է և Մասուդի (950), որ Վասիլն արքայական տնից չէր, այլ սլավոն էր, կամ երկրորդում է Տաբարիի խոսքերը, թե Վասիլը սլավոն էր կոչվում, որովհետև մայրը սլավոնուհի էր (9):

Սլավոն այս գործածությամբ նույնանիշ է Վասիլի **մակեդոնացի** կոչման: Նման վկայություններն առանձին արժեք չունին, քանի որ սոսկ ենթադրություններ են բացատրելու, թե ինչո՞ւ մակեդոնացի էր կոչվում Վասիլը: Պատճառը միայն այն չէր, որ մայրը որպես թե մակեդոնացի էր, այլ Աղեքսանդր Մակեդոնացուն նմանելու հավակնությունն ևս կար: Մայրը ամեն պարագային սլավոն չէր ազգով, այլ՝ շատ շատ սլավոն երկրից էր, այսինքն՝ աղրիանուպոլսեցի: Այս լուրերի դեմ էր բողոքում Վահան եպիսկոպոսը, ինչպես վերև հիշեցինք, հայտարարելով, որ Վասիլն Արշակունի էր, «զի մայրն հայ էր»:

Վասիլի ծագման մասին մի ուրիշ ավանդություն է եղել հայ շրջաններում, որ պահվել է Ասողիկի մոտ. «զՍա ասեն ի Տարօնոյ ի գեղջէն Թլայ»: Այս խոսքերն այնպես չպիտի հասկանալ, թե Վասիլ հասարակ գյուղացի էր: Մի անգամ ընդմիշտ թողնելու է այն միտքը, թե Վասիլն աննշան ծագում ուներ, ինչպես տրամաղիր են ցույց տալու և բյուզանդական աղբյուրները: Բոլոր այն հայերը, որոնք դերակատարներ են հանդիսանում

բյուզանդական պատմության մեջ, գրեթե բացառապես պատկանում էին հայ ազնվականության դասին: Նրանց խոշոր մասը Մամիկոնյան տանիցն էին: Ութերորդ դարից, երբ ասպարեզը զիջան Բագրատունիներին, ստիպվեցին քաշվել Բյուզանդիա: Իսկ դրանից առաջ Մամիկոնյաններին մղում էր արևմուտք իրենց հակումը դեպի քրիստոնյա մեծ պետությունը:

Տարոնը Մամիկոնյանների սեփականություն էր հնուց, բայց հետագայում անցավ Բագրատունի տան: Ութերորդ դարի քաղաքական շարժումների ժամանակ Տարոնը արդեն Բագրատունիների իշխանության տակ էր: Այստեղ տիրում էր Աշոտ Բագրատունին, որդի Իսահակի, այն Աշոտը, որ հակառակ կացավ ապստամբության: Տարոնի շրջանի նոր կենտրոնն էր Խլաթ քաղաքը: Տակավին նախընթաց դարում Բագրատունիները ոտ էին դրել Տարոնում: Այստեղ փախավ Վարազտիրոց ասպետը պարսկական հալածանքից, անշուշտ ապաստան որոնելով իր կալվածում:

Հավանական է, որ Մամիկոնյան հանգչող տան վերջին կայծերը մնացած լինեին Թիլ ավանում, և այստեղից քաշված Բյուզանդիա, Բագրատունիների ճնշման տակ: Եթե Փոտի հիշած Հմայակ անձը երևակայության պտուղ չէ, նա է, որ հեռացած պիտի լինի Տարոնի Թիլ գյուղից: Հակառակ դեպքում, այսինքն՝ եթե Հմայակը պատմական դեմք չէ, պետք է կարծել, որ Թիլից գաղթած ընտանիքը Բագրատունի տոհմից էր:

Այսպիսով, Վասիլի Արշակունի ծագումը անպաշտպանելի է պատմականորեն, քանի որ այդ տոհմը վաղուց մարած էր:

Հրապարակի վրա էին երկու հիանավուրց և ականավոր իշխանական տները՝ Մամիկոնյան և Բագրատունի, մինը փայլում էր Բյուզանդիայում, մյուսը՝ Հայաստանում: Սրանցից էր ծագում հավանորեն և Վասիլի ընտանիքը: Հմայակ անունը ի նպաստ Մամիկոնյան արյան է, իսկ Սմբատ, որ Վասիլի եղբոր անունն էր, թեքում է դեպի Բագրատունի տունը:

Մակեդոնական քաղաքները և Ադրիանուպոլիսը լոկ առժամյա բնակավայր էին Վասիլի ծնողների համար: Այստեղի ռազմական ճակատներում սովորական էր զորականների համար սրել իրենց սրերը և ապա ճանապարհ բաց անել դեպի պետական բարձր պաշտոնները, անգամ դեպի կայսերական գահը:

Կան գիտնականներ, որոնք ժխտելով Վասիլի Արշակունի ծագումը, պատրաստ են ուրանալու անխոհեմաբար և նրա հայ լինելն ընդհանրապես: Մանավանդ սլավոն պատմագետները դյուրաթեք են տեսնելու Վասիլի մեջ սլավոնական արյուն: Մի շարք գիտուններ, ինչպես Շաֆարիկ, Խոմյակով, Դրինով, Չերակով և այլն, չեն քաշվել հայտարարելու, որ Վասիլը զուտ սլավոն էր կամ հունացած սլավոն ընտանիքից:

Այս կանխակալ կարծիքներին մի անգամ ընդմիշտ վերջ տվեց մի նոր

աղբյուր, Եվթիմիոսի Վարքը, որտեղ ասված է. «Ստիլիանոսը, որ կոչվում էր հայերեն *Զաούτζης* մակեդոնացի էր, բայց ծագումով հայ, **ինչպես և ինքը կայսրը**»:

Այս անձը Վասիլի և իր որդու և հաջորդի՝ Լևոնի սիրելին էր և վերջնիս օրով հասավ պետական բարձր դիրքի, կոչվելով թագավորահայր: Այլև դուստրը ամուսնացավ Լևոն կայսրի հետ: Ստիլիանոսի հայ անունը՝ Զաուցաս, կարծում են, որ չավուշ բառն է: Սխալ է: Թվում է, թե Ստիլիանոսը մեզ ծանոթ *Τζάνζης* զորավարի որդին կամ մոտ ազգականն է և *Զաούτζης* կարդալու է *Τζάνζης*: Տեսանք, որ նա Մակեդոնիայի ստրատեգոս էր և նրա մոտ ծառայել էր պատանի Վասիլը:

Եվթիմիոսի Վարքի բացորոշ վկայությունը, այլևս կասկած և դեղևումն չի թողնում Վասիլի հայ ծագման նկատմամբ:

Տարաձայնություններ կան հնուց նաև Վասիլի ընտանեկան կամ ավելի ճիշտ ամուսնական կյանքի մասին: Վասիլ գահ բարձրացավ այնպիսի պայմաններում, որ համակրություն վայելել չէր կարող լայն շրջաններում: Գործած ոճիրը ծանր էր և տպավորությունը դեռ թարմ: Նպաստավոր գետին կար չար սերմնացանների համար: Վասիլի թշնամի բերանները չհամեցին վայրահաչ զրույցներով և ստահոդ լուրերով արատավորել նրա անունն ու ընտանեկան պատիվը:

Վասիլը ամուսնացած էր, երբ մտերմացավ Միքայել կայսրի հետ: Պատմում են, որ Միքայել բաժանեց նրան իր կնոջից, որի անունն էր Մարիամ, և ամուսնացրեց Եվդոկիա Ինգերի հետ, որ իր հարճն կամ սիրուհին էր: Ասում են, որ Միքայելը պայման էր դրել Վասիլին, որ սա լոկ անվանական ամուսին լիներ, թողնելով ամուսնական իրավունքը Միքայելին: Ի տրիտուր վերջինս դրեց Վասիլի տրամադրության տակ իր քրոջը՝ Թեկլային:

Վասիլ չորս որդի ուներ և չորս դուստր: Չար լեզուները զրպարտում էին, որպես թե առաջին երկու որդիները Կոստանդին և Լևոն Միքայելից էին և ոչ Վասիլից:

Կոստանդինը համարվում էր Լյուդովիկոսի դստեր Իրմինգարդի փեսա: Այս առթիվ Կ. Պոլիս էր եկել Լյուդովիկոսի դեսպանը:

Կոստանդին մեռավ 879 թվին, խնամախոսությունը վերաբերում է 870 կամ 871 տարիներին: Այս միջոցին Կոստանդինը գոնե 15 տարեկան պիտի լիներ, որպեսզի փեսայացու համարվեր: Ասել է, թե ծնված պետք է լիներ 855 թվին, մինչդեռ Վասիլ ամուսնացավ Եվդոկիայի հետ Վարդ կեսարի սպանությունից քիչ առաջ, մերձ 865 թ.: Վարդի և Վասիլի թշնամությունը ծագեց Միքայելի և Վասիլի մտերմական հարաբերության պատճառով և հանգեց Վարդի սպանության: Արդ Վասիլի և Եվդոկիայի ամուսնությունից 10 տարի առաջ ծնված Կոստանդինը ինչպե՞ս կարող էր կապ ունենալ այդ

ամուսնության հետ: Պարզ է, որ Կոստանդինը առաջին կնոջից էր, Մարիամից, և ո՛չ Եվդոկիայից և հետևապես անտեղի և անհիմն էին տարածված չարամիտ լուրերը: Պատմագիրները, արձանագրելով հանդերձ այս լուրերը, ավելի հավանական են համարում, որ Կոստանդինը Վասիլի որդին է:

Նույնչափ և անհիմն է և Լևոնի վերաբերյալ լուրը: Եթե հավատանք պատմագիրներին, Միքայել կայսրը մերձավոր կապեր ուներ Եվդոկիա Ինգերի հետ նախքան իր օրինավոր ամուսնությունը: Այս կապը խզելու համար էր, որ Թեոդորա կայսրուհին և ներքինի Թեոկտիստոսը որոշեցին ամուսնացնել դեռահաս Միքայելին մի ուրիշ Եվդոկիայի հետ, որ ավելի համեստ էր, Դեկապոլիտես ընտանիքից: Թեոկտիստոսը սպանվեց 856 թվին: Ուրեմն Միքայելի ամուսնությունը դնելու է գոնե 855 կամ 854 թվին: Իսկ Վասիլն կնության առավ Եվդոկիա Ինգերին, ինչպես հիշեցինք, 865 թվին կամ քիչ առաջ: Արդ Միքայելն ապրում էր Եվդոկիայի հետ ավելի քան 10 տարի և ոչ մի զավակ չունեցավ նրանից, և ոչ մի օրինավոր կնոջից: 865 թվին Եվդոկիան անցավ Վասիլի գիրկը և հետևյալ 866 թվին սեպտեմբերի 1-ին ծնեց Լևոնին: Եվ այնուհետև պարգևեց նրան ևս երկու որդի և չորս դուստր: Կարելի՞ է կասկածել, որ հայրը Վասիլը չէր, այլ Միքայելը: Հարկավ ոչ, եթե միայն չենք ուզում մեղանչել ուղղամտության դեմ:

Ավելին կասենք: Եվդոկիայի պատմությունն ամբողջապես զրպարտություն է: Վասիլի պատճառով ատելի են դուրս բերել և Եվդոկիային, որ իր բախտը կապել էր Վասիլին: Վերջնիս վիրավորելու և ստորացնելու նպատակով է, որ նրա կնոջը ներկայացնում են որպես Միքայելի հարճ: Եթե Միքայել կայսրը այնպես սիրում էր Եվդոկիային, ի՞նչն էր արգելում ուղղակի կին առնել նրան և ոչ թե զիջանել ուրիշին, վերապահելով իրեն կենակցելու գաղտագողի իրավունքը մի անբնական և ավելի քան կատակերգական ձևի տակ:

Մայրաքաղաքի թեթևամիտ զրույցները հասել էին մինչև Աղեքսանդրիա: Եվտիքիոս պատրիարքը պատմում է, որ Վասիլին հարցրին, թե ինչո՞ւ սպանեց Միքայելին և պատասխանն եղավ հետևյալը: Միքայելը որպես թե սիրահարվել էր մի կնոջ և Վասիլին հրամայեց ամուսնանալ նրա հետ, պայմանով, որ մերձենալու իրավունքը պատկանի իրեն Միքայելին: Չէր ուզում, որ իր կինը իմանա իր ապօրինի կապը, իսկ պսակվել նրա հետ չէր կարող իր կնոջ կենդանության: Վասիլը կատարեց կայսրի պատվերը, բայց հետո զղջաց և սպանեց նրան:

Այս պատճառաբանությունը ոչ մի արժեք չունի: Բյուզանդական արքունիքը առաքինության պարտեզ չէր և ոչ էլ օրինապահության: Ինքը Միքայելը ցոփ ու անառակ իշխանի տիպար էր: Եթե լուրջ ցանկություն ունենար, կթողներ կնոջը և այլ կին կառներ, ինչպես արել են ուրիշ կայսրեր

իրենից առաջ և հետո: Կինը, մայրը անզոր էին խափանել նրա քմահաճույքը: Պատրիարքներն անգամ խաչով ու անեծքով ճահանջում էին կայսերական կրքերի առաջ:

Եվտիքիոսի պատմությունը մի բան է ցույց տալիս, որ շրջուն լուրերի համաձայն քաղաքական հեղաշրջումը տեղի է ունեցել սիրային հողի վրա: Ուրիշ խոսքով, Միքայել արգելյալ տոփանք է տածել դեպի Վասիլի կինը և պատժվել է իր ապօրինի վարմունքի համար ամուսնուց:

Այս պարագան ևս առավել ուժ է տալիս մեր տարակուսանքին, որ Եվդոկիան բնավ այնպիսի թեթևամիտ կին չէր, ինչպես մեզ ավանդում են, և գուցե երբեք հարճ չէ եղած Միքայելի: Եվդոկիան հոժարակամ և ոչ Միքայելի հրամանով ընտրել էր Վասիլին: Հակառակ դեպքում, վերջինս, գահ բարձրանալուց հետո, նրան չէր պահի:

Վասիլի կյանքը պետք ունի ավելի քննական ուսումնասիրության և անկողմնակալ լուսաբանության, քան եղել է ցարդ (10): Մեզ հասած պատմությունը մի ստամած կույտ է զրույցների, ամբաստանությունների և խեղաթյուրումների: Պետք է քրքրել, քննել անաչառ աչքով, նպատակավոր հերյուրանքներից պատմական եղելությունները հստակորեն վեր հանելու համար: Վասիլի և նման գործիչների ծագման խնդիրը ավելորդ մանրակրկտկրտանք չէ պատմության համար, ինչպես կարող է թվալ շատերին: Բյուզանդականությունը ինչով որ զանազանվում էր իր նախորդ քաղաքակրթություններից պարտական էր այլացեղ ազգերի միահամուռ գործակցության միևնույն պետական օղակում: Որոշել այս կամ այն ազգային տարրի բերած նպաստը նշանակում է լուսաբանել, հասկանալ բյուզանդականությունը (11):

Մասնավորելով խոսքս հայերի վրա, մեր նպատակն է պարզել, թե ի՞նչ էին ներկայացնում հայ գործիչները, որ փայլում էին պետության պատասխանատու դիրքերում արտասովոր և անօրինակ կորովով մտքի և զենքի: Արդյո՞ք բախտի ստահակներ էին, թափառաշրջիկ ասպետներ, որ հայրենիքից հալածական, արկածներ էին որոնում մեծ ճանապարհների վրա, առանց փույթ ունենալու հետևանքների մասին, թե ընդհակառակը հայ շինարար ոգու կրողներն էին, գիտակից աշխատավորներ, որ ջանք չէին խնայում պետական նոր շենքի կառուցման համար և իրավամբ հանդիսանում են նրա իսկական ճարտարապետները:

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓԱՌՔԸ[1]

Հազվագյուտ են պատմության մեջ այնպիսի իշխանական տներ, որպիսիք են Բագրատունիք, հազվագյուտ Արևելքում, թե Արևմուտքում: Տոհմ է բազմադարյան, աշխարհաշեն և աշխարհակալ և փայլեց իր հանճարով հատկապես արաբական շրջանում:

Իններորդ դարը ընկճված ազգությունների սթափումի և զարթումի դար էր: Արաբական պետությունն այլևս ահարկու չէր թվում: Ամիրապետների երեկվան հուժկու ձայնը սկսել էր նվազել: Նրանց կուսակալներն անգամ անջատական հակումներ էին ցույց տալիս և պատրաստ էին պատեհ առթիվ խզել իրենց կապերը կենտրոնական իշխանությունից: Խալիֆների պետությունն անպայման քայքայման մեջ էր, մինչ նրա ախոյան Բյուզանդական կայսրությունը նոր ոգի առած ընթանում էր դեպի բարձրություն:

Քաղաքական մթնոլորտի լուծ դրությունը գաղտնիք չէր: Խլրտումներ ու խռովություններ անպակաս էին որպես բնական հետևանք: Ազգային ճնշված զգացումներն արթնացած հետամուտ էին իրենց օրինական իրավունքների: Պարսկաստանը, կրոնական աղանդավոր պատրվակի տակ, սնում էր և ծավալում քաղաքական ազատագրության ծրագիրներ: Ջորավոր շարժումը ծայր էր տվել Հայաստանի սահմանագլխում, Ատրպատականի մեջ: Մուսուլման ներքին գժտությունները հնարավորություն տվին հայերին հանգիստ առնել և վերակազմվել մերձավոր անցյալի ահավոր հարվածներից:

Տարաժամ ապստամբությունն, որ պայթեց ութերորդ դարի երկրորդ կեսին (1), ջլատել էր հայ մարտիկ ուժերը: Մամիկոնյան առյուծները, ըմբոստության այդ աներկևան դրոշակակիրները, վերջին հրաժեշտն էին տվել հայ կյանքին: Ասպարեզը մնացել էր նրանց հակառակորդ և մրցորդ Բագրատունի իշխաններին: Խոհեմություն չէր, անշուշտ, Մամիկոնյանների կողմից՝ կանխել ապագան և բաց ճակատ հարդարել թշնամու դեմ մի այնպիսի ժամանակ, երբ սա, թեև արդեն անկման ճանապարհի վրա, բայց տակավին բավականին զորեղ էր սանձելու անհնազանդության ճիգերը: Պետք էր սպասել հյուծման վերահաս ժամին, որպեսզի կարելի լիներ հանգել հաջողության, հանգել մանավանդ առանց մեծ զոհողության:

[1] Ներկա հոդվածս հիմնովին վերամշակումն է այն գրության, որ երևաց «Հայրենիք»-ի մեջ նույն վերնագրի տակ: Վերջնիցս հազիվ քանի մի էջեր են մնացել անփոփոխ:

Բայց և այնպես 775 թվի ապստամբության խիզախ փորձն անպտուղ չանցավ: Պարտությունները, ռազմական դաշտերի անհաջողություններն ևս իրենց հատուկ խորհուրդն ունեն: Մամիկոնյան ընդվզումը թողեց այն կտակը, որ հաղթական արաբը բնավ անպարտելի չէ և ո՛չ էլ հայ քաղաքական տենչանքը՝ սին երազը:

Երազն իրականացավ շնորհիվ Բագրատունիների, որոնք հետևեցին և պսակեցին հաջողությամբ մի քաղաքականություն, որի հիմը դրել էր Բագրատունի Աշոտ Կույրը, նա, որ զոհեց հայրենիքին իր աչքերի լույսը: Տոկուն աշխատանքով, շրջանկատ հեռատեսությամբ, կշռելով հանգամանքները, չանտեսելով ո՛չ մի միջոց, նաև զենքի դիմելով ի հարկին, Աշոտ Կույրի սերունդը կարողացավ պատկառանք ազդել հայ անվան և թագեր կապել ոչ միայն հայրենի երկրում, այլև նրանից դուրս: Բագրատունի տոհմը, որպես հինավուրց մայրի, փռեց իր լայնատարած ճյուղերը հայ և հարևան երկիրների վրա: Առաջին փորձն էր կապել հայ, վրացի, աղվան և մյուս դրացի ժողովուրդները համերաշխության օղակով Բագրատունի հարստության հովանու ներքո:

Մեծախորհուրդ է, որ Վրաց ազգային հիշատակարանը, հայտնի «**Քարթլիս ցխովրեբան**», բացվում է այն նշանավոր հայտարարությամբ, թե հայ, վրացի, աղվան, մինգրել, լեզգի և մյուս կովկասյան ժողովուրդները կազմում են մի ընտանիք և սերում են հսկա Թորգոմից, որ հաղթեց Նեբրովթին և հաստատվեց Արարատի ստորոտում:

Վրաց հիշատակարանը խմբագրված է ոչ առաջ, քան XI դարը, մի այնպիսի ժամանակ, երբ վրաց ազգային ինքնագիտակցությունն ու քաղաքական կյանքը մեծ խոյանքի մեջ էր: Շատերին խորթ է թվում, որ այսպիսի պայմաններում վրացի գրիչը հնարավոր է գտել խոստովանել և տալ հային առաջնության պատիվ: Սակայն պետք չէ մոռանալ, որ հիշատակարանի հեղինակը եկեղեցական անձ է: Որքան և կաշկանդված լիներ նրա միտքն ազգային ինքնասիրությամբ, նա չէր կարող, վանականին հատուկ բարեպաշտությամբ, ուրանալ Սուրբ Գրքի հեղինակությունը, որի համաձայն նորոգ մարդկության օրորանը Արարատն է, Հայաստանը, չէր կարող անտեսել պատմական ճշմարտությունը, որ Հայաստանը, թե՛ իր տարածությամբ, և թե՛ անցյալ կյանքով «հանուրց հիւսիսականաց վեհագոյնն» է: Նա քաջածանոթ էր հայ պատմական մատենագրության, որի նմանը չունեին դրացիները և որից քաղած նյութերն և ներշնչումները զգալի են նրա առասպելական երկի մեջ: Այս բոլորի հետ հաշվի է առնելու և Բագրատունյաց կատարած խաղարար դերը, նրանց շաղկապող քաղաքականությունը: Հայ զավակ լինելով, գործեցին Վրաստանում որպես վրացի, և Աղվանքում ծառայեցին տեղական շահերին: Այն

գիտակցությունն, որ միևնույն կոճղի արեւնակից ոստերն են, պահեց նրանց մեջ հաշտ համակեցության ոգին և սովորական մրցության եռանդը երբեք չարատավորվեց արյունահեղ տեսարաններով և ո՛չ էլ երբեմնակի ընդհարումները ավելի մեծ ծավալ ստացան, քան այն հուզումները, որ պայթում էին, ֆեոդալական միջավայրի հատուկ ելևէջներով, միևնույն երկրի զանազան տարրերի մեջ: Բագրատունյաց շրջանի բարի հարևանությունը եզակի երևույթ է, երբ հիշենք մարդկային այն տկարությունը, որ ամեն տեղ և ամեն ժամանակներում դրացի ժողովուրդները համակված են փոխադարձաբար անբարի զգացումներով:

I

Բագրևանդի արյունահեղությունը 775 թվին հիմք դրեց նոր քաղաքականության: Ըմբոստական ցույցերը տեղի տվին խոհեմության: Մամիկոնյան կարմիր զինվորները իջան պատմության ասպարեզից: Մուշեղն ընկավ մարտի դաշտում: Նրա երկու որդիները փախան Վասպուրական: Վրիժառու թշնամին հալածում էր նրանց: Մեհրուժան Արծրունին սպանեց տմարդաբար Մամիկոնյան պատանիներին, սև անուն թողնելով պատմության մեջ: Նրանց քույրը ստիպվեց ամուսնանալ Ջահապ մուսուլման իշխանի հետ, վերահաս վտանգից փրկվելու համար:

Մամիկոնյան իշխանուհին արաբի հարսանեկան առագաստում՝ որպիսի ողբերգություն է Մուշեղների մարող տան մեջ:

Քիչ հետո կորավ Կամսարական նշանավոր տունը: Խազրաց արշավանքին, նրանց դեմ ելնելով, մեռավ Ներսեհ Կամսարականը 785 թվին և նրանով վերջացավ Կամսարական տոհմը, Մամիկոնյանների ազգական և հավատարիմ դաշնակիցը: Այս երկու փայլուն աստղերն ընկան գրեթե միաժամանակ հայ երկնակամարից:

Մնացին Բագրատունիք պատասխանատու դերում միգապատ ապագայի հանդեպ: Ուղին դժվարակոխ էր, թեև նրանց ընտրած քաղաքական թելը թվում էր հաստատ: Քանի մի սերունդ նույն ուղիով էին ընթացել: Աշոտ Կույրի թողած ավանդին հետևեցին նրա հորեղբորորդի Սահակը, և սրա որդի Աշոտը, և այն Բագարատը, որ ընկավ Ներսեհ Կամսարականի հետ խազարաց և հոնաց դեմ ճակատելով 785 թվին:

Աշոտ Կույրի որդին Սմբատ սպարապետ մասնակցեց 775 թվի ապստամբության, թերևս, այն պատճառով, որ Մամիկոնյան փեսա էր: Մի քայլ էր, որ կարող էր վարկաբեկել արաբական իշխանության առ Բագրատունիներն ունեցած վստահությունը: Իշխանաց իշխան կարգվեց արաբների կողմից Տաճատ Անձևացին, որ այդ միջոցին, 782 թվին, թողել էր բյուզանդական ծառայությունը և անցել արաբների կողմը: Օթման

ոստիկանը դժվարանում էր կատարել ամիրապետի կարգադրությունը, տեսնելով հայ իշխանների ընդդիմությունը: «Յղէր դեսպանս առ իշխանն իւրեանց,- ասում է Ղևոնդ,- եթէ ոչ է կամք միաբանութեան նախարարաց Հայոց, եթէ զայր մի ապստամբեալ յիշխանութենէդ քումմէ և ձեռն տուեալ առ արքայն Յունաց կացուցանել իշխան ի վերայ այսոցիկ, որ նուաճեալ են ընդ իշխանութեամբ քով, գուցէ եւ դաւաճան զօրաց մերոց լինիցի»[1]:

Տաճատ Անձևացին առաջին ապստամբության ժամանակ թողել էր հայրենիքը, մտել բյուզանդական բանակը և մեծ հռչակ ստացել քսաներկու տարվա ծառայության ընթացքին: Սրա թեկնածության ընդդիմացող իշխանները, հարկավ, Բագրատունիներն էին, որ իրենց ժառանգական իրավունքն էին համարում իշխանաց իշխանի կոչումը: Ոստիկանը ստիպված էր տեղի տալ բարձր հրամանին և իշխանությունը տալ Տաճատին, որ Հարրունի անձնական բարեկամն էր:

Տաճատ սպանվեց Խազարաց արշավանքին Բագարատ Բագրատունու և Ներսեհ Կամսարականի հետ 785 թվին: Ասպարեզը մնաց Սմբատի որդիներին:

Սմբատի եղբայրը, ուրեմն Աշոտ Կույրի մյուս որդին, որ կոչվում էր Վասակ, հիշվում է 775 թվի ապստամբության ատեն, բայց հայտնի չէ, թե անմիջական մասնակցություն ունեցավ Բագրևանդի կռվին: Վասակ թողեց հայրենի ամրոցը Դարոյնք, այժմու Բայազիտը, և հեռացավ Տայք: Սա է, այս Վասակը, Վրաց Բագրատունիների նախահայրը, ինչպես կտեսնենք:

Սմբատ երկու որդի ուներ, Աշոտ, որ կոչվեցավ Մսակեր, և Շապուհ: Սրանք են, որ սկիզբ դրին Բագրատունյաց մեծության: Ի՞նչ պայմաններում և ինչպե՞ս գործեցին երկու եղբայրները և իրենց հետնորդները, հայ աշխարհի նորոգ շինարարները:

Խոռվարար ցույցերի հետևանքով արաբ իշխանությունը հետամուտ եղավ զորացնելու արաբական գաղութները Հայաստանում:

Ինչպես արևելյան բոլոր աշխարհակալները, ամիրապետները սովորություն ունեին ցեղակից գաղութներ հաստատել նվաճված երկրներում, որպես բնական նեցուկ իրենց տիրապետության: Հարկավ, ամենից առաջ աշխատում էին բռնել խոշոր կենտրոնները և ռազմական նշանակություն ունեցող ամրոցները ստվար զինվորական ուժերով, որոնց հարում էին անմիջապես իրենց ընտանիքները և այսպիսով կազմում էին մուսուլման ազդեցիկ համայնքներ:

Հայաստանի, բառիս լայն, արաբական ըմբռնումով, բոլոր գլխավոր քաղաքները հոծ արաբական բնակչություն ունեին: Ոչ միայն վարչական և

[1] **Ղևոնդ**, Գ.Լ. 39, Ս. Պետերբուրգ, 1887:

զինվորական կենտրոնները, Դվին, Պարտավ, Թիֆլիս, Կարին, Խլաթ, այլև մյուս խոշոր ավանները, Արճեշ, Բերկրի, Դատվան, Նախճվան, Հեր, Սալմաստ, մուսուլմանների ձեռքին էին:

Ղևոնդ Վարդապետի ասելով, Եզիդ որդի Ուսադի, որ ոստիկան եկավ խալիֆ Մանսուրի առաջին տարին, ուրեմն 754 թվին, «ածեալ արս յորդւոցն Իսմայէլի բնակեցոյց ի նմա նոցին ընտանեօք պահել զքաղաքն եւ զգուշանալ ի թշնամեացն: Եւ կարգեաց նոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհէս Հայոց»:

Երբ Մուշեղ Մամիկոնյան ապստամբելով սպանեց Բագրևանդում Ապումճուր անուն արաբ պաշտոնյային, նրա վրա եկան «յորդւոցն Իսմայէլի ի քաղաքէն Կարնոյ որք էին արք իբրեւ երկերիւր վառեալք կուռ սպառազինութեամբ»:

Սրանց պարտության լուրը Դվին հասնելուն պես, քաղաքի մուսուլմանները շտապեցին օգնության ոմն Ապունջիպ արաբացու առաջնորդությամբ և ունենալով «ընտիրս հեծելոց իբրեւ արս չորս հազար» հարձակվեցին Մուշեղի վրա:

Հայ ապստամբները պաշարեցին Արճէշ, անշուշտ, որովհետև արաբների կենտրոն էր: Բնակիչները իմաց տվին Խլաթ արաբ ուժերին քաղաքի պաշարման մասին: Արաբական զորքը, խորասանյան մեծ բանակը, մոտ 30 հազար մարդ, արդեն ժամանել էր Խլաթ: Ապստամբությունը ճնշելուց հետո, հավանական է, որ հազարավոր խորասանցիների մի մասը ևս մնաց Հայաստանում, որպես մշտական բնակիչ:

Ութերորդ դարի վերջին քառորդին արաբ իշխանությունը մեծաքանակ ցեղեր գաղթեցրեց Հայաստան և ետևե եղավ նրանցից կազմելու հողատիրական միություններ, որպես հակակշիռ նախարարական կարգերին:

Արաբական հայտնի և ազդեցիկ ցեղերը վաղուց բույն էին դրել հայկական Միջագետքում, Ամիդի, Եղեսիայի և Մծբնի շրջաններում: Անապատի որդիները դյուրավ տապալեցին Սասանյանների աշխարհասասան պետությունը մասամբ այն պատճառով, որ ցեղական հենարաններ ունեին գլխավոր ճանապարհների վրա: Դարերի ընթացքում արաբական հեղեղը հոսել էր կամացուկ և լճացել Եփրատ և Տիգրիս գետերի տափաստաններում, ծնունդ տալով մեծամեծ իշխանական տների, որ բնական հանգրվաններ դարձան նորեկ աշխարհակալների համար:

Հյուսիսայինն Միջագետքը, հին Ասորեստանը, որ արաբները կոչում էին Ջեզիրա՝ «կղզի», բաժանված էր երեք շրջանի՝ Դիար-**բակր,** Դիար-**Ռաբիա** և Դիար-**Մուդար: Դիար** հոգնակի ձևն է **Դար** բառի, որ նշանակում է «բնակություն», իսկ բակր, ռաբիա և մուդար արաբական նշանավոր ցեղեր են, որ գրավել էին այդ շրջանները: Առաջնի կենտրոնն է Ամիդ, որ ցայժմ էլ

պահել է արաբական Դիարբակր կամ թուրք արտասանությամբ Դիարբեքիր անունը, երկրորդի՝ Մծբին և երրորդի՝ Եդեսիա կամ Ուռհա (թուրքերեն՝ Ուրֆա):

Արաբները, հայտնի է, բաժանված էին երկու մեծ հատվածի՝ հյուսիսայինի, որ կոչվում է **նիզար**, և հարավայինի՝ **եաման** կամ հին գրությամբ **յաման:** Հիշյալ երեք ցեղերը պատկանում են հյուսիսայինի հատվածին: Սրանցից շատ առաջ Միջագետքում հաստատվել էին եաման կամ եմեն հատվածին պատկանյալ ցեղեր, որոնց թվում **տայ** ցեղը: Այսպես են կոչում ասորիները արաբներին: Նույն տայ անունից է ծագում և պարսկական **տաճիկ** բառը, ընդունված մեզ մոտ:

Թվում է, թե ամենահին գաղթականությունը Հայաստանում հարավայինի կամ եաման ցեղիցն էր: Սրանք կողմնակից էին Օմմայան տան, մինչդեռ նիզար ցեղը պաշտպան էր Աբբասյան խալիֆներին:

Մեր պատմագետները հիշում են Յամանիկ իշխան արաբացի Պարտավ քաղաքում: Երևում է, որ յամանիկ գաղութ է եղել Աղվանից մայրաքաղաքի շրջանում: Հավանական է նաև, որ գաղութը Օմմայանների ժամանակներից լինի, նկատի առնելով այդ ցեղի համակրությունը Օմմայան խալիֆներին:

Ավելի դրական տեղեկություն կա նիզար ցեղի մասին: Հարուն ալ Ռաշիդի առաջին տարին, ուրեմն 786 թվին, ոստիկան եկավ Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամի, որը մեծ գաղթականություն բերեց նիզար ցեղից: Մեծ հատվածներ կային նմանապես բակր և մուդար ցեղերից: Բակրի արյուն ուներ շայբանի տոհմը, որ հաստատված էր Ամիդ և զորանալով ձգտում էր ձեռք դնել մերձակա հայ հողերի վրա: Կուսակալության պաշտոնը, որ հաճախ տրվում է այդ տոհմի ներկայացուցիչներին, նպաստավոր միջոց էր նրանց զորացման:

Շայբանի տոհմից էր Եզիդ իբն Մազիադ, որ երեք անգամ կուսակալ նշանակվեց Հայաստան 775-800 տարիների ընթացքին: Առաջին կուսակալության ժամանակ, մոտ 787 թվին, տեղափոխեց Հայաստան ռաբիա ցեղից մեծ բազմություն: Բակր ցեղը, որին պատկանում էր ինքը, մի ճյուղավորումն էր ռաբիայի, ուրեմն, իր ցեղակիցներին էր բերել հաստատելու Հայաստան, ամրացնելով նրանց միջոցով և իր տոհմի ազդեցությունը:

Իսկ Եզիդի հաջորդ Աբդ ալ Կաբիրը գաղթականություն հանեց մուդար ցեղից նմանապես մեծ չափով: Այս ցեղը մի քանի ճյուղեր ուներ, որոնց մեջ հայտնի էին մանավանդ **կայս** և **ութման:** Կայս տարածված ցեղ էր և այնքան ազդեցիկ, որ երբեմն նրա անունով էր կոչվում ամբողջ նիզար խումբը:

Աբդալ Կաբիր ոստիկանի բերած գաղթականները կայս և ութման ցեղերիցն էին, որ մեր հեղինակների մոտ կոչվում են կայսիկ և ութմանիկ (ինչպես տաճիկ, պարսիկ, խուժիկ): Կայսիկները հաստատվեցին Ապահունյաց

գավառում, կենտրոն ունենալով Մանազկերտ, այժմ Մելազկերտ քաղաքը, իսկ ութմանիկները՝ նրանց հարևան Առբերանի գավառում, Բերկրի քաղաքի և Ամյուկ բերդի սահմաններում:

Սեբեոս պատմիչը հավատացնում է, որ տակավին Թեոդորոս Ռշտունիի օրով արաբ զինվորները հաստատվեցին Առբերանի գավառում: Բյուզանդական Մավրիանոս զորավարի դեմ Ռշտունի իշխանը որպես թե խնդրած էր արաբներից օգնական զորք և Մավրիանոսին վանելուց հետո բնակեցրել էր յոթն հազար արաբ զինվորներ Առբերանի և Աղիովիտ, այսինքն՝ այն շրջանում, ուր ոտ դրին կայսիկ և ութմանիկ ցեղերը:

Դժվար թե Ռշտունի իշխանի ժամանակակից արաբական գաղութը հարատևած լինի մինչև կայսիկների գալուստը: Հավանորեն, երբ Ռշտունուց հետո Հայաստանը նորեն Բյուզանդիոնին անցավ, արաբները հեռացան կամ ոչնչացան: Նրանց մասին խոսք չկա հետագա դարերի շարժումների ժամանակ:

Յամանիկ և նիզար ցեղերը բերել էին իրենց նոր բնակավայրը իրենց հին փոխադարձ ատելությունը և թշնամությունը: Ի՞նչ գժտություններ էին ծնել նրանց մեջ, հայտնի չէ: Հավաստի է միայն այն, որ նույն Եզիդ իբն Մազիադ ալ Շայբանի, որ նիզարներին բերել էր Հայաստան, նորեն կուսակալ գալով, մերձ 799 թվին, ստիպված էր մեղմացնել և հաշտեցնել նիզար և յաման ցեղերը:

Այս տեղեկությունները ստույգ են, որովհետև ծագում են արաբ Յակուբի մատենագրից, որ երկար տարիներ ապրել է Հայաստանում և քաջածանոթ է տեղական պատմության[1]:

Այսպես, ուրեմն, Հարուն ալ Ռաշիդի օրով (786-809) երեք հաջորդական ոստիկան բերեցին Հայաստան երեք ցեղերից զանգվածներ, նիզար, ռաբիա և մուդար:

Թվում է, որ հոսանքը չդադարեց և հետևյալ դարում: Նույն Եզիդի որդին Խալիդ երկու անգամ ոստիկան նշանակվեց Հայաստան 830 և 843-844 թվերին և երկու անգամն էլ իր պաշտոնատեղին եկավ ռաբիա ցեղի բազմությամբ: Սրանց մի մասը, հավանական է, մնացած լինի երկրում: Նրան է վերագրվում Գանձակ քաղաքի շինությունը, որ պետք է հասկանալ վերաշինության մտքով[2]: Անբնական չէ, որ նոր քաղաքում արաբ բնակչություն թողած լիներ:

Տխրահռչակ Բուղա զորավարը ևս իր հետ արաբ գերդաստաններ էր բերել, ինչպես վկայում է Թովմա Արծրունին. «սկսան այնուհետեւ աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն

---

[1] **Marquart,** Osteuropäische und Ostasiatische Streifzüge, p. 453.

[2] **Մովսես Կաղանկատվացի.** Գ. գլ. 20:

ազգքն տաճկաց, որ ելեալ էին զհետ նորա (Բուղայի) ընտանեօք իւրեանց, եւ ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս»[1]:

Ամիդ քաղաքի շայբանի տոհմին հարևան էր մի ուրիշ մուսուլման իշխանական տուն, որ մեր մատենագիրները կոչում են Զորահա, իսկ արաբացիք՝ Զուրարա: Այս տան ոստանն էր Արզն, Աղձնիքի գլխավոր քաղաքը, նրա ձեռքն էր նաև Նփրկերտ (այժմ՝ Մուֆարղին) և Բաղեշ: Շայբան տոհմի հարևանությունը վտանգավոր էր և մշտական սպառնալիք, ուստի Զուրարի որդիք հակամետ էին մշակելու բարի հարաբերություն հայ իշխանների հետ:

Արաբները միակ օտարամուտ տարրերը չէին:

Ութերորդ դարի կեսին **Հունգար** կամ Մաջար ժողովրդյան մի հատված, ճեղքելով կովկասյան շղթան, եկավ հեռավոր հյուսիսից և հաստատվեց Ուտյաց աշխարհի սահմաններում: Դրանք հայտնի են մեր մատենագիրների մոտ Սևորդիք անունով: Սակայն, հաջորդ IX դարում սրանք արդեն ձուլվել էին հայերի հետ և ավելի դաշնակից էին ընդդեմ արաբների, քան թշնամի:

Իններորդ դարի կեսին զորավար Բուղա բաց արավ Դերբենդի պահակը և 300 ընտանիք **խազար** ժողովրդից բերեց և բնակեցրեց Շամքորի շրջանում: Իսկ Դարիալի (Ալանաց դուռն) մոտերքից բերեց նույնքան օս ընտանիք և հաստատեց Դմանիս[2]:

Կարևորը և վտանգավորը, սակայն, արաբ բնակչությունն էր, թե՛ քանակով, և թե՛ քաղաքական արժեքով: Քաղաքները, երկրի այդ զարկերակները, նրանց ձեռքն էին: Եվ որովհետև քաղաքները կապված էին միմյանց կանոնավոր ճանապարհներով, ուստի արաբ գաղթականությունն ավելի սերտ և կազմ միություն էր, քան անջատ և անմատույց ամրոցներում փակված նախարարական ուժերը:

Ղևոնդ Վարդապետը հիշում է **արքունի պողոտա,** որով հասկանալու է պետության կողմից խնամված ճանապարհ: Ուստիկանական մայրաքաղաքից, Դվինից, մի շարք գծեր տանում էին դեպի երկրի ծայրերը:

Դվին, Մանազկերտ, Արճեշ, Խլաթ:

Դվին, Նախճվան, Հեր, Արտավիլ:

Դվին, Սիսական, Կաղանկատու, Պարտավ:

Դվին, Բագարան, Կարին:

Պարտավ միացած էր նաև կարևոր կենտրոնների՝ Թիֆլիսի, Դերբենդի, Վարդանակերտի և Արտավիլի հետ:

---

[1] **Ծովմա Արծրունի**, Գ, 5, էջ 170 (Կ. Պոլիս, 1852):

[2] **Brosset**, Histoire de la Géorgie, I, 266.

Հայկական բարձրավանդակի երկու նշանավոր դռները, Խլաթ և Նախճվան, բաց էին և դյուրին էր ի դեպ հարկի զորամասեր հանել Ատրպատականի և Միջագետքի բանակներից և շարժել երկրի ներսը:

Մոռանալու չէ նաև, որ քաղաքացի արաբները լավ կազմակերպված էին: Յուրաքանչյուր քաղաք ինքնավար համայնք էր հատուկ ազգապետի և դատավորի առաջնորդության տակ: Իսկ հողատեր բազմությունները, ինչպես կայսիկ և ութմանիկ ցեղերը, հաստատեցին իշխանական տներ: Կայսիկների իշխանական տոհմը կոչվում էր Ջահապ, արաբերեն Ջահաֆի (որ իսկապես իրանական Շահապն է), սկիզբն առնելով այն անձից, որ փեսայացավ Մամիկոնյանց:

Օտարամուտ համայնքները բարեկամ չէին տեղական շահերի: Նրանք պտուտակներ էին պետության վարչական մեքենայի և պատրաստ էին ամեն կերպ պիտանի լինել երկրի արաբ պաշտոնեության: Երբ խուժում էին արաբական զորքերը, նրանք էին առաջնորդում: Եթե հարկավոր էր ամբաստանել կառավարության առաջ որևէ անախորժ հայ իշխան, հոժարակամ վկաները դարձյալ տեղացի արաբ բնակիչներն էին: «Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս աշխարհիս առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս», - գրչում է Թովմա Արծրունին: «Ամբաստան յոյժ լինէր (Աբուսեթ) զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց որք էին ի կողմանս Հայոց»,- վկայում է դարձյալ նույն պատմագիրը:

Արաբ գաղութները կատարյալ որոգայթներ էին, լարած երկրի սրտում (2): Առանձին կեցվածք ու քայլվածք, առանձին շարժ ու ձև էր հարկավոր հայ ղեկավար ուժերի կողմից այն կատաղի պայքարում, որ սկսվեց Հայաստանում ընդդեմ արաբական բռնության իններորդ դարու սկզբում և որ նույն դարու վերջում հանգելու էր քաղաքական ազատության:

II

Աշոտ Մսակերն էր այն մեծ անձը, որ իր եղբոր Շապուհի հետ հանեց երկիրը վհատ և լքված վիճակից և մեծագործ հիմնաղիրն եղավ նոր և լուսավոր շրջանի:

Սմբատ սպարապետի, 775 թվի զոհերից մեկի, որդիքն էին: Երկար ժամանակ ապրում էին անհայտության մեջ: Արդյոք պատա՞նդ էին ամիրապետի արքունիքում, թե ապաստանել էին հեռու Սպեր գավառը, խուսափելով արաբների վրեժխնդրությունից, և խոհուն լռության մեջ պատրաստվում էին առաջիկա պայքարին: Նրանց հորեղբայր Վասակը նմանապես քաշվել էր Տայք, որտեղից հիմը պիտի դներ Վրաց քաղաքական վերածնունդի:

Աշոտը կոչվում է Մսակեր գուցե այնպես, ինչպես Արծրունի իշխաններից մեկը կոչվում էր Կովակեր: Հնարավոր է նաև, որ հակապահեցողական

ազատամտության արդյունք է այս հորջորջումը: Հայտնի է Աշոտի հարաբերությունը Խառանի եպիսկոպոս Թեոդոր Աբիկուրայի հետ կրոնական խնդիրների առթիվ:

Աշոտի առաջին գործը եղավ նոր և ապահով ոստանի հոգսը: Բագրատունյաց բնիկ ոստանը Դարոյնքն էր, այժմյան Բայազիտը, Կոգովիտ գավառում, Մասիսի ստորոտում: Դարոյնքի ապահովությունը վտանգվել էր և ռազմագիտական արժեքը նսեմացել այն օրից, երբ արաբ ցեղերը, կայսիկ և ութմանիկ, եկել և հաստատվել էին հարևան Հարք և Ապահունիք գավառներում: Մի կողմից սրանք, մյուս կողմից ոստիկանական Դվինը մշտական պահակազորքով, մեջտեղը Դարոյնքն էր երկուստեք հարվածի տակ: Հայրենի մյուս կալվածը՝ Սպեր հեռու էր և անապահով Բյուզանդիայի կողմից:

Դարոյնք և Սպեր, մեկը մոտ Արևելյան մեծ պետության, մյուսը՝ Արևմտյան, Բագրատունի տոհմի երկու ոտներն էին, ամուր կռվանները, որոնց հենվում էին փոփոխակի, նայելով թե ո՞ր պետության դեմ էին ծառանում և որի՞ն ծառայում: Դարոյնք այժմ կորցրել էր իր նշանակությունը հիշյալ պատճառով:

Տեսանք, որ 785 թվին մեռավ Խազրաց դեմ պատերազմելիս Ներսեհ Կամսարական: Այնուհետև Կամսարական իշխաններ չեն հիշվում: Պետք է ենթադրել, որ տոհմը սպառվել էր: Աշոտ Մսակերն օգտվեց այս հանգամանքից և Կամսարականների ժառանգներից գնեց Արշարունիքի մի մասը, ուր Բագարանն էր, և հաստատվեց այնտեղ:

Անակնկալ խոչընդոտ: Արշարունիքի մի մասը Արտագերս հռչակավոր ամրոցով պատկանում էր Մամիկոնյաններին: Այստեղ էր ամրացած Մուշեղ Մամիկոնյան իր ընտանիքով, Բագրևանդի ճակատի հերոսը: Արաբ Ջահապ իշխանը, այն, որ ամուսնացել էր Մուշեղի դուստրերից մեկի հետ, «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց եւ խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»:

Ջահապ եկվոր արաբ ցեղերի պետն էր, որոնց պատճառով Աշոտ իր հայրենի ոստան Դարոյնքից քաշվել էր Բագարան: Այս անախորժ հարևանությունն այժմ հետապնդում էր նրան, որ անհանդուրժելի էր: Աշոտ, իր եղբոր Շապուհի հետ, ընդդիմացան Ջահապի հավակնության: Ոչ միայն տիրացան Արշարունիքին, այլև «ելեալք զկողմամբքն Շիրակայ հարին զզօրսն Իսմայէլի, որ անդ եւ գրաւեցին յինզքեանս զՇիրակ եւ զԱշոցք եւ զգաւառն Տայոց»[1]:

Ասել է, թե Բագրատունի եղբայրները ձեռք բերին Ախուրյանի ամբողջ հովիտը և Տայք, և քանի որ Դարոյնք ևս չթողին, ուրեմն նրանց երկիրը տարածվում էր Կոգովիտից մինչև Սպեր: Այս հաջողության համար է, որ Աշոտ կոչվում է նաև **քաջ**:

[1] **Վարդան,** ԽԱ (= Շապուհ Բագրատունուց):

Ուղիղ հարյուր տարի առաջ Աշոտի նախնիքներից մեկը, Սմբատ Բյուրատյան, թողել էր Դարոյնք և հաստատվել Տայքի Թուխարք բերդում, «որպէս զգուշութիւն ի Իսմայելացւոց»[1]:

Կայսիկ և ութմանիկ արաբները ցանկալի հարևաններ չէին քնավ:

Գնունյաց տունը, որ ապրում էր Աղիովիտ գավառում, շուտով զգաց նոր դրացիության դառնությունը և դիմեց Աշոտին: Հազար մարդով Աշոտ մտավ Աղիովիտ, հանեց Գնունյաց տոհմը, տարավ բնակեցրեց Տայք:

Այս կտրուկ միջոցը բացատրելու է նրանով, որ Գնունիք նեղվում էին ոչ միայն հարևան արաբացիներից, այլև արաբ իշխանությունից: Մոռանալու չէ, որ նրանք ևս մասնակցել էին Մամիկոնյանց ապստամբության ի դեմս Վահան Գնունու, որ կոչվում էր Դաշնակ (երաժի՞շտ):

Նույն ժամանակները տեղի ունեցավ նաև Շապուհ և Համամ Ամատունյաց իշխանների գաղթը 12 հազար մարդով դեպի Տայք, այնտեղից Պարխար լեռները: Այրուձին և իշխանները մտան բյուզանդական բանակը, իսկ հասարակ ժողովուրդը հաստատվեց այնտեղ, որ ցայժմ էլ կոչվում է Համշեն, այսինքն՝ Համամաշեն, Շապուհի որդու Համամի անունով: Եթե ստույգ է, որ Ամատունիք ապրում էին Արտազի շրջանում, անհավանական չէ ընդունել, որ այս չուն ևս արդյունք էր նույն վատ հարևանության մի կողմից կայսիկ ցեղի, մյուս կողմից Դվինի արաբների:

Աշոտի և Շապուհի առաջին նվաճողական փորձերը հաջողեցին: Հանգամանքները նպաստավոր էին: Հայ շարժման հետ զուգաբար ընթանում էր պարսկականը: Հուզումները բազմանում էին և պատրաստում էին մեծ փոթորիկ: Աբբասյան հարստության հաղթանակը կատարված էր պարսիկ ուժերի օժանդակությամբ: Իրանական ազդեցությունը աճում էր հետզհետե:

Առաջին խռովությունն ընդդեմ Օմմայան տան ի նպաստ Աբբասյանների, որ տեղի ունեցավ Խորասանում, ոմն Աբու-Մուսլիմ պարսիկի գործն էր: Հարուն ալ Ռաշիդի օրով Աբու-Մուսլիմի քարտուղարը Ատա ալ Մոկանա խմորեց քաղաքական մեծ շարժում ընդդեմ արաբների, թաքնվելով կրոնական վարագույրի ետև:

Ատա հռչակեց ինքն իրեն որպես մարմնացյալ աստված: Նրա գործունեության ասպարեզը արաբական Հայաստանի արևելյան ծայրերն էին ավելի, քան բուն Ատրպատականը: Փայտակարանն էր նոր աստուծու ընտրյալ վայրը, արաբական Բայլական քաղաքը, որ գտնվում էր Պարտավից 14 փարսախ հեռավորության վրա դեպի Երասխի ուղղությամբ:

Արաբ փորձառու զորավարները եկան պատժելու օտարոտի աղան-

[1] **Ղևոնդ**, էջ 26:

դավորին: Չկարողացան: Վարդանակերտի մոտ ճակատեցին, հաղթեց Ատա ալ Մոկանա և գնաց ու առավ Քալաթ ալ Կիլաբ (շների բերդ) կոչված ամրոցը, որ Սյունիքի սահմաններում է որոնելու: Պարտավից նոր զորք եկավ, դարձյալ ձախողեց և զորապետները ընկան կռվում:

Ատա ալ Մոկանա խրախուսված արշավեց Դվին և պաշարված պահեց չորս ամիս: Եվ դարձավ Բայլական:

Հարուն ալ Ռաշիդ ղրկեց իր երկու նշանավոր զորավարներին, մեզ ծանոթ Եզիդ իբն Մազիադ ալ Շայբանի և Յահյա ալ Հարաշի: Մեկը մտավ Ատրպատական 12 հազարանոց գնդով, մյուսը՝ Հայաստան 10 հազար մարդով: Երկուսը միացան հարձակվելու աղանդավորի վրա: Սակայն Ատա մեռել էր արդեն և նրան հաջորդել Բայլականցի ոմն Սական, աղանդավորի մերձավոր բարեկամը:

Առաջին անհաջողությունից հետո բայլականցիք լքեցին ապստամբներին և ընդունեցին քաղաք ամիրապետի զորավարներին: Սակայն փախավ Քալաթ ալ Կիլաբ ամրոցը, բայց հետո ստիպվեց զենքը վայր դնել և ներում խնդրել խալիֆի զորավարներից: Եզիդ իբն Մազիադ բարվոք համարեց ղրկել նրան ամիրապետին: Երկիրը խաղաղեց:

Խառնակ դրությունից օգտվելով անձնական հաշիվներ էին հարդարում իրար հաջորդող կուսակալները և քաղաքապետները: Հյուսիսային անհանգիստ հարևանները՝ խազարները և ծանարք ևս գլուխ բարձրացրին և պատեհ առիթ համարեցին հարավ սուրալու ավարառության նպատակով:

Այս պայմաններում, երբ խալիֆի մտահոգությունը կենտրոնացած էր այլուր, Աշոտ և Շապուհ կարող էին հարվածել մուսուլման Ջահապին, առանց վախենալու խալիֆի բարկությունից:

Ռաշիդի մահից հետո ծագեցին գահակալական աղմուկներ: Նրա ցանկությունն էր բաժանել պետությունը իր երեք որդիների մեջ: Սակայն Ամին, որ ծնված էր իշխանուհի մորից, հաջողեց գրավել գահը (809-813): Մամուն սպանեց նրան և խլեց իշխանությունը: Նոր խռովության դուռը բացվեց:

Նոր գահակալը Հայաստանի և Ատրպատականի կուսակալությունը հանձնեց Տահիր իբն Մուհամմատ աս Սանանի: Այդ ժամանակ Հայաստանում կուսակալ էր Իսհակ բին Սոլիման ալ Հարաշի, նշանակված սպանված ամիրապետի կողմից: Սա չանսաց նոր խալիֆի հրամանին և չուզեց զիջանել երկիրը նորեկ կուսակալին: Կուսակալական հուզումներ բարձրացան նոր և հին խալիֆի, նոր և հին կուսակալների շուրջը:

Տահիր աս Սանանի Ատրպատականի Վարդանակերտ կամ Վարքան, ինչպես արաբներն են ասում, քաղաքը ժամանելով, բանակցության մեջ մտավ հայ սպարապետների և իշխանների հետ և սրանք ընդունեցին Մամունի իշխանությունը: Հավանորեն, խոսքը Աշոտի և Շապուհի մասին է:

Սրանց հակառակ, Իսհակ բին Սոլիմանի կողմը բռնեցին այն քաղաքները, որ աղանդավոր Ատա ալ Մոկանայի առաջնորդությամբ ապստամբել էին խալիֆի դեմ, և ամենից առաջ Բայլականը: Իսհակի կուսակից հայտարարեցին իրենք իրենց նաև Ներսեհ և Աբդ ալ Ռահման տեղական իշխանները[1]:

Ոստիկանական մայրաքաղաք Պարտավ Տահիրի կողմն էր: Ուստի Իսհակ բին Սոլիմանը հարձակվեց Պարտավի վրա, բայց պարտվեց Տահիրի ղրկած զորքերից և փախավ, թողնելով իր որդուն թշնամու ձեռքին գերի:

Ահա այդ ժամանակ է, որ Տահիրի դեմ դուրս եկավ Աբդ ալ Մելիք ալ Ջահաֆի, որ ոչ այլ ոք է, բայց եթե որդի մեզ արդեն ծանոթ Ջահապ իշխանի, հակառակորդի Աշոտի և Շապուհի:

Բայլականցիք քաջալերված արշավեցին Պարտավի վրա և պաշարեցին այնտեղ Տահիրին: Շուտով օգնություն հասավ ամիրապետից: Տահիր ազատվեց: Ինչ որ զարմանալի է, Աբդ ալ Մելիք ալ Ջահաֆի պատիժ չկրեց իր ըմբոստության համար, այլ ներման արժանացավ: Կարգը վերահաստատվեց երկրի մեջ:

Այս թանկագին տեղեկությունները, որ պարտական ենք նույն արաբ Յակուբի մատենագրին, լույս են սփռում Վարդան պատմիչի հակիրճ խոսքի վրա, որ քաղված է Շապուհ Բագրատունու, անցքերին ժամանակակից հեղինակի, պատմական երկից. «Իսկ Ջահապն ապստամբեալ յիւրմէ իշխանէն գայ նստի ի Դուին բռնութեամբ որդւով իւրով Աբդլայիւ»[2]:

Քիչ հետո պատմագիրը դառնալով Ջահապին հաղորդում է, որ Ջահապի տունը զորացավ Դվինում այնքան, որ հինգ հազար զորքով կամեցավ գնալ Տարոնի վրա, որ պատկանում էր Աշոտ իշխանին, այսինքն՝ Մսակերին: «Ողջախոհ եւ քաջ» Աշոտ առանց սպասելու զորքերի հավաքման, երկու հարյուր ձիավոր և երեք հարյուր հետևակ մարդով հարձակվեց Ջահապի որդու վրա, կոտորեց նրա զորքերից երեք հազար հոգի և ավարի տվավ բանակը: Միևնույն ժամանակ Շապուհ, Աշոտի եղբայրը, ասպատակեց Դվինի կողմերը և ավարով դարձավ: Մինչ քաղաքից դուրս են տալիս զորքերը հետապնդելու Շապուհին, քաղաքացիք հարձակվում են Աբդ ալ Մելիքի վրա և սպանում: Լքված զորքերը ցրվում են:

Ջահապ իշխանը հաստատված էր Ապահունիք: Մամունի գահակալության առթիվ ծագած կուսակալական հակառակություններից օգտվելով Ջահապի որդին, Աբդ ալ Մելիք, ձեռք էր դրել Դվինի վրա, կամենալով

---

[1] Սրանց հետ էին նաև Օմար և Հազուն, որ թերևս մի անձի անուն է և խանգարված: Գուցե կարդալու է Համզա Արզուն, այսինքն՝ Համզե Արծրունի: Հայտնի է, որ Աշոտ Արծրունին, Բուղայի զոհերից մինը, կոչվում էր որդի Համզայի: Թերևս, խոսքն այս անձի մասին է:

[2] **Վարդան**, էջ 77:

ապահովել իր բնիկ կալվածը Ապահունիք, նաև արևմտյան կողմից, ուր ընկնում էր Տարոն նույն Արածանի գետի հովտում: Աբդ ալ Մելիք աչք է ածում Տարոնի վրա: Բայց չի հաջողում և ինքն էլ զոհ է գնում իր բռնության:

Այստեղից հետևում է, որ Աշոտի և Ջահապի մրցությունը տիրանալու հայ երկրին, շարունակվում էր և ներքին խուլ մաքառումը պայթում էր երբեմն պատերազմով: Երևում է նաև, որ բախտի ժպիտը Ջահապի երեսին չէր, և որ Աշոտ հաջողել էր տիրանալ Տարոն գավառին:

Հաջորդ հերթական ընդհարումը Աբդ ալ Մելիքի ժառանգ Սևադայի հետ էր: Հաշիմից հետո, կուսակալ է գալիս Հատիմ իբն Հարթամ իբն Այան: Քիչ հետո նա լսում է, որ Մամուն ամիրապետը սպանել է իր հորը՝ Հարթամին: Մամուն հաղթել էր իր եղբորը շնորհիվ պարսիկների: Նրա արքունիքում զորացել էր պարսկական ազգային հոսանքն ընդդեմ արաբական կուսակցության: Հարթամի մահը վերագրվում էր պարսիկ ազդեցության: Սպանվածի որդին՝ Հատիմ, ապստամբեց խալիֆի դեմ, թողեց Պարտավ քաղաքը և քաշվեց Վրաստան: Հոր սպանությունը տեղի ունեցավ 201 հիջրի = 816-817 թվին: Ապստամբությունն, ուրեմն այս ժամանակներն էր, հավանաբար հետևյալ 817-818 թվին:

Հատիմ կոչ է անում երկրի իշխաններին և «հայ ժողովրդի պետերին», այլև բանակցության մեջ է մտնում Բաբեկ, հայ հեղինակների Բաբան, աղանդավորի հետ, որ Խուռամյան կոչված կրոնական շարժման գլուխն անցած սպառնում էր արաբ իշխանության նոր և վտանգավոր ցնցումով:

Ապստամբ Հատիմի տեղ եկավ կուսակալության պաշտոնով Յահյա իբն Մուաղ 204 հիջրի = 819-820 թվին քանի անգամ ճակատեց, բայց միշտ անհաջող: Օգնական զորքով ղրկվեց խալիֆ Մամունի կողմից Իսա իբն Մուհամմադ 205 հիջրի = 820-821 թվին: Սա ևս պարտվեց և թողեց Ատրպատականը, ուր տեղի ունեցան կռիվներ ընդդեմ Բաբեկի և եկավ Հայաստան:

Այստեղ Սևադա իբն Աբդ ալ Համիդ ալ Ջահաֆի նույնպես ըմբոստացած էր կենտրոնական իշխանության դեմ: Իսա իբն Մուհամմադ խոստանում է նրան տալ Հայաստանի կուսակալությունը, միայն թե ետ կենա չար մտքից: Սակայն Սևադա խուլ մնաց: Իսա ելավ նրա դեմ և ընկճեց զենքի ուժով[1]:

Սրանից հետո է, որ Սևադան ընդհարվեց Աշոտի և Շապուհի հետ: «Իսկ Սեւադա ոմն ի տանէ Ջահապայ չորիւք հազարօք կոռւեալ ընդ Աշոտոյ եւ ընդ եղբօր իւրում Շապհոյ, մեռաւ Շապուհ ի պատերազմին եւ զկնի երկուց ամաց մեռաւ Աշոտ ի տան իւրում եւ ա՛ռ զիշխանութիւնն Սմբատ որդի նորա»:

Ասողիկի վկայությամբ Աշոտ իշխեց քսան տարի: Աղբյուրը Շապուհ

[1] **Յակոբի,** II, 562; **Marquart**, Streifzüge, էջ 458:

Բագրատունին է, ուրեմն, վստահելի: Հարուն ալ Ռաշիդ մեծ արշավանք սկսեց Բյուզանդիայի դեմ 806 թվականին[1]: Անհավանական չէ, որ իր թիկունքը ապահովելու համար Հայաստանում, իշխանությունը հանձնած լինի Աշոտին հենց նույն տարին: Այս հաշվով Աշոտը մեռած պիտի լինի, քսան տարի իշխանությունից հետո 826 թվին: Նրա եղբայր Շապուհը մեռավ երկու տարի առաջ Սևադայի դեմ կռվելիս, ուրեմն կռիվը և մահը տեղի ունեցան 824 թվին:

Դարձյալ Ասողիկից գիտենք, որ Աշոտի որդին Սմբատ պատանդ էր դրված խալիֆի դրան և վերադարձավ հայոց 275 թվին, որ է Քրիստոսի 826 թիվը: Եթե իշխանի դարձը կապ ունի հոր մահվան հետ, ապա իրավ է, որ Աշոտ մեռել է նույն տարին:

Որպեսզի Հարուն հիմ ունենար Աշոտին իշխանության կոչելու 806 թվին, պետք է, որ նա արդեն անուն հանած և ազդեցիկ անձն լիներ երկրում: Սխալ չէր լինի ենթադրել, որ Աշոտի առաջին գործերը, մանավանդ Ջահապի դեմ մղած կռիվը Արշարունիքի համար, առաջ են, քան 806 թիվը և կատարվել են, ինչպես հիշեցինք վերև, Ատա հերձվածողի շարժման նպաստավոր մթնոլորտում:

Վարդանի ասելով, Աշոտ և Շապուհ «հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց»: Շապուհին բաժին էր ընկել Սպեր գավառը, ուր 837 թվին Թեոփիլոս կայսրը նրա որդի Աշոտին պատրկության պատիվ տվավ: Տարոնը Աշոտի իշխանության մեջ էր:

Երբ Ջահապը իր որդի Աբդ ալ Մելիքի հետ բռնացել էր Դվինում, Վրաց երկրի իշխան Աշոտը, որ կյուրապաղատության պատիվ ուներ, Լևոն Հայկազն (813-820) կայսրին դիմեց օգնության ընդդեմ արաբ իշխանների, բայց չհաջողեց: Սա Մսակերի ազգակիցն էր, նրա հորեղբոր թոռը և իշխում էր Կղարջքում:

Արդյո՞ք սրա խեթալը Դվինի բռնավորի վրա արենակցական պարտք էր հանդեպ Մսակերի, թե որևէ հավակնություն ուներ մերձակա հողերի վրա: Հավանական է առաջին ենթադրությունը, քանի որ Մսակերը հաստատված էր Բագարան: Աշոտի միջամտությունը նշան է, որ տոհմական կապերը տակավին սերտ էին Կղարջքի և Շիրակի Բագրատունիների մեջ:

Աշոտ Մսակեր և Շապուհ տիրացել էին ոչ միայն Տարոնին, այլև Մոկաց աշխարհին: Թովմա Արծրունին գիտե Սմբատ և Մուշեղ Մոկաց իշխեցողք: Սմբատից առաջ թվում է, թե նույն գավառի իշխան էր Մսակերի որդի Սահակը:

Ասորի մատենագիր Դիոնիսիոս Թելմահարացի Հակոբիկ եկեղեցու

[1] **Theophanes**, էջ 747-748:

պատրիարք (812-845) իր պատմական երկում, որից միայն քաղվածներ են մնացել Միքայել Ասորի ժամանակագրի մոտ, հաղորդում է հետաքրքիր միջնադեպ պարսիկ խուռամյան կոչված աղանդավորական շարժումից, ուր հիշատակվում է Իսհակ որդի Աշոտի, որպես իշխեցող Կորդվաց աշխարհին սահմանակից երկրի, որ կարող է լինել Մոկաց աշխարհը:

Խուռամյան շարժումը շարունակություն էր Ատա ալ Մոկանա աղանդավորի գործի, ավելի սուր կերպարանք ստացած: Քաղաքական և անգամ ընկերվարական հույզեր էին կրոնական կեղավորումով: Կարելի է ասել, որ խուռամյանք այն ժամանակվա կոմունիստներն էին: Քարոզում էին ինչքի և կանանց ընդհանրություն, ժխտելով սեփականության իրավունքը: Հավատ ունեին, որ մի օր իրենցից մի թագավոր է ելնելու, մի Մահդի, որ վստահություն ներշնչելով դեպի իր անձը, պիտի հռչակվի աստված: Ով նրան հավատա, մեռնելուց 40 օր անցած հարություն պիտի առնե և վերադառնա իր ընտանիքը, որպեսզի հետո անհայտանա մի գաղտնի անկյունում:

Հարուն ալ Ռաշիդի վերջին տարիներին երևան եկավ ակնկալված Մահդին, որ երեսին քող ձգած, հռչակում էր իրեն մերթ Քրիստոս, մերթ սուրբ հոգի: Շատ չանցավ և խուռներամ բազմությունը շրջապատեց նոր մարգարեին: Կողոպուտի և ավարի հույսն էր մանավանդ, որ ոգևորում էր շատերին: Մահդի հաստատվեց Կորդվաց լեռներում և սարսափ տարածեց իր շուրջը Ծավդեք և Տուր-Աբդին: Մամուն խալիֆն անգամ երկյուղ էր կրում նրանցից: Քրիստոնյա մի վանք կողոպտելու ժամանակ մեծ հարված ստացան զորավար Հասանից: Մահդի, քողը մի կողմ նետելով, փախավ Աշոտի որդի Սահակի երկիրը: Սահակ բռնեց և շղթայեց կարծեցյալ մարգարեին: Խուռամյանները հարձակվեցին գիշերով Սահակի վրանի վրա ազատելու իրենց թագավորին: Սահակ շտապեց գլխատել Մահդիին և առնելով նրա գլուխը, իր գույքը և ընտանիքը փախուստ տվավ:

Քիչ հետո, երբ Սահակ զորքով գնացել էր կռվելու արաբների դեմ, Խուռամյանք ուզեցին Սահակի ընտանիքը և որդիները բռնել: Գաղտնիքը բացվեց: Սահակի կնոջ եղբայրը, որ կրոնավոր էր, ժողովրդյան բազմության հետ մտավ ամրոցը, ուր Սահակի ընտանիքն էր, դիմադրելու թշնամու հարձակման: Մեծ հույս ունեին բարեպաշտ կրոնավորի աղոթքի վրա: Սահակի կինը ստնդի մանուկը գրկին աղաչում էր Աստուծուն, որ գոնե անմեղ մանկան համար օգնե և փրկե վտանգից: Պաշարողները բերդի դուռն այրեցին և ներս խուժեցին: Մի ուրիշ կրոնավոր նիզակը ձեռքին առաջ նետվեց և մի հարվածով տապալեց նրանց առաջնորդին: Սահակի կինը վճռել էր մեռնել, քան ընկնել ամբարիշտների ձեռքը: Ամբողջ գիշերը չքնեց և առավոտյան զենքի պահեստից առավ մի ոսկեզօծ թուր, հուսալով, որ նրա փայլի վրա կգան թշնամիները և կսպանեն իրեն: Փորձանքն անցավ: Ամ-

բոխը՝ անուշադիր տիկնոջ սկսեց կողոպուտի ետևե լինել և հետապնդել փախչողներին: Մինչ այս, մինչ այն, վրա հասան Սահակի մարդիկը, ապա ինքն իր բանակով, և հալածեցին թշնամիներին:

Նույն պատմագիրը հավատացնում է, որ Մահդիից հետո խուռամյան աղանդավորների պետը եղավ մի ոմն Հարուն և նրա սպանությունից հետո Բաբեկ[1]:

Վերև տեսանք, որ Բաբեկի մասին առաջին անգամ լսվում է Հատիմ իբն Հարթամի ապստամբության ժամանակ 816-817 թվին: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ, Հայաստանի սահմաններում, Սյունիքում, երևում է Բաբան (այսինքն՝ Բաբեկ) 270 h. = 821 թվին: Եթե արդարև այն անձը, որ սպանվեց Սահակի ձեռքով, Բաբեկի նախորդներիցն է, ապա սպանությունը տեղի է ունեցել 821, գուցե և 817 թվից առաջ:

Ո՞վ է Մահդին և իրոք նրա բնակավայրը Կորդվաց լեռներումն է՞ր, թե Ատրպատական, ինչպես հավատացնում են արաբ մատենագիրները, դժվար է ասել:

Մեր նպատակի համար բավ է այսքանը, որ Սահակի միջնադեպը դասելու է հավանորեն 820 թվից ոչ ուշ: Կորդվաց աշխարհի մոտերքը իշխում էր այդ ժամանակ Սահակը, Աշոտ Մսակերի որդիներից մեկը: Խոսքը Մոկաց գավառի մասին է, որ իրապես սահմանակից է Կորդուքին և Բագրատունյաց ձեռքին էր:

Այս Սահակի որդին պետք է լինի Սմբատ Մոկաց իշխեցողը, որ Բուղայի ձեռքից ազատեց Վասպուրականի գերիներին[2]: Սա Բուղայի բարեկամն էր: «Յոյժ սիրեցեալ եղեւ ի զօրավարէն», ուստի և շատերը շփոթում են Մսակերի որդու և հաջորդի՝ Սմբատ-Աբլաբասի հետ, մինչդեռ սրա մասին առաջին անգամ խոսում է պատմագիրը, երբ սկսում է պատմել Բուղայի գալստյան երկրորդ տարվան անցքերը[3]:

Սմբատ Մոկաց իշխեցողի որդին է թերևս Մուշեղ Մոկաց **իշխեցող** (և ոչ իշխեցողք, ինչպես տպված է), որ հիշվում է Թովմա Արծրունու մոտ և սպանվեց ծեր հասակում Անձևացյաց Գուրգեն իշխանի ձեռքից[4]:

Բյուզանդական սահմանների վրա հաստատված էին Մսակերի եղբայրը Շապուհ Սպերում և Մսակերի հորեղբոր թոռը (կամ որդին) Աշոտ Կյուրապաղատ Կղարջքում: Շապուհ ընկավ, ինչպես տեսանք, Սևադայի դեմ կռվելիս 824 թվին, թողնելով իշխանությունը իր Աշոտ որդուն: Սրա սերնդից

---

[1] **Michel le Syrien** (éd. Chabot), III, էջ 50:

[2] **Թովմա Արծրունի**, Գ, 2, էջ 154, 155:

[3] Նույն, Գ, 9:

[4] Նույն, Գ, 17 և 19:

էր Շապուհ Բագրատունի պատմագիրը: Հավանական է, որ առաջին Շապուհը, Մսակերի եղբայրը այն Շապուհ Բագրատունին է, որի պատվերով Ղևոնդ Վարդապետ գրեց իր պատմությունը:

Շապուհի դրացին էր Աշոտը, որ Լևոն Հայկազն կայսրից կյուրապաղատության պատիվ ստացավ: Սրա պապ Վասակ Բագրևանդի խռովության ժամանակ քաշվել էր Տայք և Կղարջք: Աշոտ կարողացավ ընդարձակել իր իշխանությունը և «տիրեաց ի Կղարջաց մինչեւ ի Տփխիս լեռնակողմամբ հանդերձ»[1]: Աշոտ փորձեց իր ազգակիցներին՝ Մսակերին և Շապուհին օգնել ընդդեմ Ջահապի, երբ սա Դվինը գրավել էր:

Ըստ «Վրաց տարեգրքի», Աշոտ սպանվեց Քրոնիկոնի 46, այսինքն՝ (780 + 46)= 826 թվին: Մսակեր ևս մեռավ նույն տարին:

Աշոտ Մսակեր ուներ չորս որդի և երկու դուստր: Ավագ որդիները Դավիթ և Բագարատ հաստատվել էին Տարոն, իսկ Սահակ և Մուշեղ՝ Մոկաց աշխարհում: Մուշեղ Մոկաց իշխեցող, որոշ չէ թե Մսակերի՞ որդին է, թե Սահակի: Մսակերի կրտսեր որդին Սմբատ ժառանգեց կենտրոնական իշխանությունը:

Հին աշխարհին ևս ծանոթ էին քաղաքական ամուսնությունները: Մսակեր իր մեկ դուստրը տվավ կնության Աղձնիքի հայտնի մուսուլման իշխան Մուսեին, Ջորահայի որդուն: Այս ծայրագավառի իշխանությունը դժվար հարվածելի էր և մշտական վտանգ հարևան Տարոնի համար: Աշոտ հույս ուներ խնամիական կապերով սանձելու և չեզոքացնելու հնարավոր սպառնալիքը: Վարդանը հիշատակում է, որ Մսակերի որդիք «Դաւիթ եւ Սահակ եւ Մուշեղ եւ Բագարատ առեալ զմայրն իւրեանց չոգան ի Նփրկերտ առ Խալիֆն ամիրայ, սիրով ընկալեալք ի նմանէ»[1]:

Նփրկերտ, ինչպես Բաղեշ, մտնում էին Մուսեի իշխանության մեջ: Արդյոք ընտանեկան այց էր մոր կողմից իր դստեր, թե ավելի լուրջ պատճառ կար, ինչպես կարելի է ենթադրել որդիների ուղեկցությունից:

Աշոտի մյուս դուստրը, Հռիփսիմեն, ամուսնացավ Արծրունյաց իշխանի հետ, որի անունը մեր մատենագիրները չեն պահել: Հռիփսիմեն երեք որդի ունեցավ, Աշոտ, Գուրգեն և Գրիգոր: Արաբները Աշոտին անվանում են Աշոտ իբն Համզե իբն Գագիկ: Ուրեմն Աշոտի հայրը և Հռիփսիմեի ամուսինը Համզեն էր և սա որդի Գագիկի:

Ութերորդ դարու սկզբում, հայտնի են Գրիգոր և Կորյուն Արծրունիք: Աշոտ Կույրի ժամանակ Վահան Արծրունու որդիք, Սահակ, Համազասպ, Գագիկ և վերջնիս զավակները, Համազասպ, Սահակ և Մեհրուժան, նշա-

[1] **Վարդան**, էջ 78:

նավոր դեմքեր էին հրապարակի վրա, մարտնչող արաբական բռնության դեմ, թևակից Մամիկոնյան կտրիճներին: 786 թվին հայտնության օրը, մարտիրոսության պսակ ստացան Համազասպ և Սահակ: Արաբ բռնակալի վրեժխնդրությունն էր, որ ճայթեց հետին և դավող ժամին ընդդեմ խռովարար եղբայրների: Մեհրուժանը ուրացավ հայրենի հավատը, «զգենոյր զկերպարան գայլոց» և փրկեց իր կյանքը: Գուցե սիրելի եղբայրների մահն էր այն «մեծ աղէտը», որի համար Մեհրուժան սպանեց Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներին, որ ապաստանել էին Վասպուրական, սպանեց, ուզենալով վրեժ լուծել նրանց հորից, որպես աղետի պատճառից: Նահատակված իշխանների վարքում հիշվում է, որ Մեհրուժան անպատիժ չմնաց: Դավիթ Մամիկոնյան խողխողեց նրան: Դյուրին բան չէր խթել Մամիկոնյաններին:

Մամիկոնյանների անկումից հետո միակ ակնածելի տունը, որ կարող էր մրցել Բագրատունիների հետ Արծրունիք էին: Հեռատեսություն էր Մսակերի կողմից՝ ամուսնական կապերով պահել կասկածելի ախոյանին քաղաքական համերաշխության շրջանում:

Բագրատունի իշխանուհին Հռիփսիմե վերածնեց Արծրունի տոհմը, պարգևելով երեք քաջարի զավակ: Նրանցից Աշոտը եղավ Արծրունիների համար այն, ինչ որ իր պապ Մսակերը՝ Բագրատունիների:

Աշոտ Մսակերը բոլորեց իր կյանքի ընթացքը պատմական խոշոր գործիչի՝ պատասխանատու դերում, և բոլորեց փայլով և փառքով: Արաբական բռնության ծանրագին օրերն էին, երբ Աշոտ հրապարակ իջավ: Երկիրը ավեր, կազմալույծ նյութապես և բարոյապես, լավագույն ուժերը քամված, մնացորդները քաշված ասպարեզից: Հագարացիք սպառսպուռ տիրել բռնել էին Հայաստանյայց, հեծեծում է ժամանակակից պատմագիրը, աշխարհիս մեծամեծները նվազել, իսկ «մնացեալք ղօղեալք դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա»:

Այս դրությունից հանեց երկիրը Աշոտ, հանեց իր բազուկներով և ծանրախոհ գլխով: Իր օգնականները իր մերձավորներն էին՝ իր ընտանիքը, եղբայրը, չորս որդին, երկու դուստրը, բոլորն էլ ծառայեցին միևնույն գործի: Մի քանի տարվա ընթացքում հաջողեց ամուր դիրք բռնել մայր երկրի սրտում, մի ոտը Շիրակ, մյուսը՝ Տարոն, մի բազուկը դրած Սպերի և Տայքի վրա, մյուսը՝ պարզած դեպի Վասպուրական:

Քաջ և իմաստուն իշխանը շինավորեց երկիրը, վերականգնեց բեկված հավատը դեպի ապագան, աշխուժեց գործունեության նոր տենդով:

Հաջորդներին մնում էր շարունակել սկսած գործը արթնության մեջ, աչքերը հառած գալիք արշալույսին: Գիշերն անցել էր և վերացող աղջամուղջը խոստանում էր հուսալից պայծառ օրեր:

III

Բուղայի շահատակությունները տևեցին երեք տարի՝ 852-855 թվականները:

Յուսուփը եկավ Հայոց 300 թ., որ սկսվում է 851 թ. ապրիլի 28-ից, իսկ ըստ արաբական տեղեկության, հիջրի 237, որ գալիս է նույն 851 թ. սկսած հուլիսի 5-ից: Եկած պիտի լինի ուրեմն հուլիսի 5-ից հետո: Նենգությամբ ձերբակալեց Բագարատ իշխանին և գնաց Մուշ ձմերելու: Այստեղ նրան սպանեցին խութեցիք, ըստ արաբական վկայության հիջրի 237 ռամազան ամսին, որ է 852 փետրվար-մարտ: Նրա վրեժը առնելու եկավ Բուղան 852 թ. թվի ամառը, «ի հասանել ամառնային ջերմութեան»[1]: Կռվեց Արծրունի Աշոտ և Գուրգեն իշխանների դեմ, բռնեց նրանց և անցավ ձմերելու Դվինում:

Հաջորդ 853 թվի գարնան ելավ Թիֆլիսի և Ծանարքի դեմ և գնաց անցնելու ձմեռը Պարտավ:

Հետևյալ 854 թվին գարնան սկսվեցին պատերազմական գործողությունները Աղվանից իշխանի դեմ: «Եւ եղեւ մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա, ել գնաց ի կողմանս Աղուանից»:

Բուղան եկել էր 852 թ. ամառն, հետևապես 854 թվի գարնան մոտ էր լրանալու նրա գալստյան երկրորդ տարին: Աղվանից կռիվները տևեցին ամբողջ տարի, ուրեմն մինչև 855 թվի գարունը, եթե չափազանցություն չէ պատմագրի խոսքը՝ «յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իբրեւ մօտ ի լնուլ ամի միոյ»[2]:

Եսայի ձերբակալությունը, հետևապես, պիտի պատահած լիներ 855 թվին: Նույն տարվա մեջ է նաև մյուս հայ իշխանների կալանավորումը: Սրանց բոլորին ուղի ձգեց դեպի Սամառա, իսկ ինքը «եմուտ ի Պարտաւ ձմերել անդ»:

Բուղայի Հայաստանից մեկնումն ընկնում է այսպիսով 856 թվի սկիզբը:

Սույն 856 տարին համարելու է Աշոտ Բագրատունու իշխանության առաջին տարին:

Բուղան հետ կանչվեց: Նրա փոխարեն ոստիկան եկավ Մուհամեթ իբն Խալիդ Շայբանի Բուղայի գալու չորրորդ տարին. «ապա ի չորրորդ ամին եղեւ գալն Մահմետայ Խողջի (կարդա՝ Խալթի) որդւոյ»[3], ուրեմն 856 թվին:

Սա պատվեր ուներ խաղաղացնել երկիրը, ներումն շնորհելով ըմբոստացած ուժերին: Արաբական քաղաքականությունը փոխում էր իր վերաբերումը դեպի հայերը, ընտրելով հաշտության ուղին: Պետք էր օր առաջ վերականգնել անդորրությունը, մեղմել հուզված կրքերը խաղաղ և զիջող միջոցներով: Գերված իշխանների դարձը ևս ուշանալու չէր:

---

[1] **Թովմա Արծրունի,** Գ, 8, էջ 188:

[2] Նույն, էջ 206:

[3] **Մովսես Կաղանկատվացի,** Գ, 20:

Բռնության այս նահանջը մի նշան էր, որ արտաքին վտանգ կա և պետությունը պետք ունի ոչ միայն ներքին խաղաղության, այլև հայերի համակրության: Արդարև, Բյուզանդական բանակն արդեն հասել էր Եփրատ և հրամանատարը ոչ այլ ոք էր, եթե ոչ Պետրոնաս, Թեոդորա կայսրուհու եղբայրը և Մամիկոնյան շառավիղը: Ճիշտ 856 թվին առել էր Սամոսատ և Ամիդ[1]: Պատերազմական գործողությունները շարունակվեցին մինչև 863 թիվը: Մելիտինեի արաբ ամիրան և նրա դրդմամբ պավլիկյան աղանդավորները, բույն դրած այժմյան Դերսիմում, հաճախակի ասպատակությամբ վրդովում էին խաղաղությունը: Կայսերական զորքերը գալիս էին նրանց պատժելու:

859 թվին ինքը Միքայել կայսրը արշավանքի գլուխն անցավ, բայց իսկական հրամանատարը հռչակավոր Վարդասն էր, Պետրոնասի եղբայրը[2]: Երկրորդ անգամ եկավ Պետրոնաս, և հաջողեց հաղթական վերջ դնել պատերազմին 863 թվին: Սույն թվին ընկավ Նփրկերտի (Մուֆարղին) մոտ արաբական զորավարներից Ալի իբն Յահյա ալ Արմանի: 862 թվին հոկտեմբեր-նոյեմբեր ամսին Ալի եկած էր Հայաստան որպես ոստիկան, բերելով իր հետ խալիֆի հրամանը՝ նշանակել Աշոտ Բագրատունուն իշխան իշխանաց: Դարձին Նփրկերտի մոտ ընդհարում ունեցավ բյուզանդական մի գնդի հետ և սպանվեց:

Արաբների պարտությունը նշանակալից էր: Խալիֆայական աստղը թեքվել էր: Թուրք վարձկան գնդերը, որոնք սկզբում մեծ ծառայություն մատուցին ամիրապետներին, հետագայում այնքան ուժ և ազդեցություն ձեռք բերին, որ իրենց սանձարձակության խաղալիք չինեցին արքայական գահը: Մուտավաքիլ սպանվեց 861 թվին իր որդու ձեռքով և թուրք զորքերի թելադրանքով: Այնուհետև խալիֆայական գահը արյունահեղ դավերի առարկա դարձավ: Իրար ետևից արյունոտ ձեռքերով գահ բարձրացան տասն տարվա ընթացքում հինգ հոգի: Մուտավաքիլին հաջորդեց իր որդին Մունտասիր 861-862, հետո եղբորորդին, Մուստային 862-866, և ապա իր որդիք, Մուտազ 866-869, Մուհտադի 869-870 և Մուտամիդ 870-892:

Իսկապես խառնակ շրջան էր, արաբական աչքը չէր սևեռված Հայաստանի վրա: Հայ իշխաններն օգտվեցին բարենպաստ պայմաններից բուժելու իրենց վերքերը, կազդուրվելու Բուղայի հասցրած հարվածներից: Կարճ միջոցում Հայ երկիրը նորից թևավորվեց քաղաքականապես: Արաբների ձախորդությունները օգտագործեց մանավանդ Աշոտ Բագրատունին: Նրանց յոթնամյա պատերազմը (856-863) Բյուզանդիայի հետ բերեց

[1] Theoph. Cont., 167.

[2] Gen., 91.

Աշոտին իշխանաց իշխանի պատվավոր դիրքն ու կոչումը 862 թվին, իսկ հաջորդող գահակալական գժտությունները հարդարեցին ուղին դեպի արքայական թագը 885 թվին:

Քաղաքական մեծ հաղթանակ էր, որ տարավ Աշոտ Բագրատունին, գործելով իր տոհմին հատուկ խոհականությամբ: Մեծամեծ դժվարություններ կային, որ բխում էին երկրի ներքին և արտաքին կացությունից, ծանր պայմաններ, որ սեփական են ֆեոդալական միջավայրերին, լի մրցող և հակամարտ սլաքներով: Հարթել բոլոր այլազան բախումները, քայլելով անվրեպ դեպի որոշ նպատակ, մի գործ էր, որ պահանջում էր առանձին կարողություն և վարպետություն: Բագրատունի իշխանը եղավ այդ վարպետը:

Բուղայի դարձի կարավանը մեծ էր և հարուստ կալանավոր խոշոր դեմքերով, բայց և այնպես երկիրը դեռ չէր զսպված, հակառակ նրա բռնության և խստասիրտ նենգության: Թափած արյան և ավերակների մեջ հևում էր տակավին ապստամբության ոգին: Վասպուրականի իշխանները, նրանք, որ հավատ չընծայեցին Բուղայի երդումներին, ազատ էին մնացել, կառչած իրենց ամրությանց, հենց որ լսեցին Բուղայի անհաջողությունը Ծանարքի դեմ, նորից սիրտ առան, չորս հազարանոց բանակ կազմեցին և Աբուջափր Արծրունու առաջնորդությամբ ասպատակեցին Ճվաշ և Թոռնավան գավառները: Նրանց վրա եկավ Նախճավանի արաբ ամիրան, ոմն Աբրահամ: Ընդհարումը տեղի ունեցավ Խոզաղբերք գյուղի մոտ և չնայելով, որ արաբ գնդին օգնության հասավ Բերկրի արաբ ազգաբնակչությունը, հայերն հաղթեցին: Արաբներն արդեն նահանջում էին, երբ Աբուջափրի քեռորդի Սահակ Աբումկղեմ իշխանը, որ կռվի ղեկավարն էր, ձիուց ընկնելով, տեղն ու տեղը սպանվեց թշնամու սրից: Նրա մահվամբ հայ զորքերը ցրվեցին:

Երկրորդ անգամ Աբուջափր կազմեց նոր գունդ Վասակ Կովակեր իշխանի հրամանատարության տակ:

Սմբատ Բագրատունին կողմնակից չէր ապստամբական ցույցերի: Թովմա Արծրունու ասելով, Սմբատն էր, որ դրդեց արաբ Աբրահամին ելնել Աբուջափրի դեմ: Նույն պատմագիրը հավատացնում է, որ դարձյալ Սմբատն էր, որ ուղարկեց Գուրգեն Արծրունուն Վասակ Կովակերի դեմ:

Վասպուրականի նշանավոր իշխաններից էր Գուրգեն, Արծրունի տոհմից, որդի Աբուբելջի: Բուղայի բռնության ժամանակ, չուզենալով «կալ հակառակ չարի», քաշվել էր Բագրևանդ իր քեռի Քուրդիկ Մամիկոնյանի մոտ: Այնտեղից անցնում է Սպեր, ուզում է կայսեր ծառայության մեջ մտնել, բայց հետո միտքը փոխում է և գալիս է Սմբատ սպարապետի մոտ:

Ահա այս իշխանն է, որի միջոցով Սմբատ ձգտում է խեղդել Վասպուրականի շարժումը: Գուրգեն եկավ ամրացավ Ջղմար և Սրինգ բերդերում, ձերբակալեց Վասակ Կովակերին և գրավեց Վասպուրականի տերությունը:

Սակայն, Գուրգեն չարդարացրեց Սմբատի բոլոր հույսերը: Նա ևս արաբների դեմ ելավ, հարձակվեց նախապես այն արաբ ազգաբնակչության վրա, որ Բուղայի հետ եկել և հաստատվել էր երկրում, սրի անցրեց, իսպառ ջնջելով «զամենայն ազգս տաճկաց, որ բնակեալ էին ի Վասպուրական տէրութեան»

Բուղայի հրամանով Գուրգենի դեմ եկավ ոմն Բուտել զորավար, որ միանալով ութմանիկ արաբների հետ, այլև թիկն ունենալով մի քանի հայ ազատներ՝ թշնամի Գուրգենի, հարձակվեց վերջինիս վրա Որդոք գյուղի մոտ, Հայոց Ձորի արևմտյան սահմանագլխում: Գուրգեն 400 մարդով ջարդեց արաբ երկու հազարանոց գունդը և քշեց իր սահմաններից: Բուղան ստիպված էր ճանաչել պաշտոնապես Գուրգենի իշխանությունը: Մինչև անգամ բերել տվեց նրա համար խալիֆայի կողմից «սուսեր իշխանական, գոտի արիական, քուրք խիզախողք եւ երիվար բարձրավիզ»:

Ինչպես որ Սմբատի կալանավորումից հետո նրա իշխանությունը անցավ Աշոտին, այնպես էլ Աշոտ Արծրունու գերությամբ Վասպուրականի իշխանության տեր դարձավ Գուրգեն Աբուբելջը:

Գերեվարության վեցերորդ տարին, Հայոց 306 թիվը լրացած, յոթերորդ տարու, ուրեմն 307 թվի, սկիզբը, դարձան կալանավորված իշխանները: Հայոց 307 թիվը սկսվում է 26 ապրիլ 858 տարին: Այս հաշվով գերիների դարձը ընկնում է 858 թվի ամառը: Ըստ Թովմա Արծրունու այս ժամանակն էր, որ եկավ գերությունից Գրիգոր իշխանը, որ կոչվում էր Դերենիկ, Աշոտ Արծրունու որդին, եկավ արքունի հրամանով տիրելու աշխարհին իր հոր փոխարեն: Գրիգոր հազիվ 12 տարեկան էր, երբ հաջորդեց հորը: Նախորդ 857 տարին դարձել էր Ափխազաց աշխարհից Աշոտ Արծրունու եղբայր Գրիգորը: Իսկ 859 թվին գերությունից ազատ արձակվեց Աշոտի մյուս եղբայրը՝ Գուրգենը: Ինքն Աշոտը մնաց գերության մեջ երկար տարիներ, և վերադարձավ միմիայն 868 թվին:

Սոքա բոլորը թեկնածու էին Վասպուրականի իշխանության և ընդհարումը Գուրգեն Աբուբելջի հետ անխուսափելի էր: Գրիգոր և Գուրգեն եղբայրները շուտով մեռան, առաջինը 858 թվին, երկրորդը 860 թվին, այսինքն՝ իրենց գալուց մի տարի հետո: Վեճը այսպիսով սահմանափակվում էր Դերենիկի և Գուրգեն Աբուբելջի միջև: Վերջինս պատրաստ էր իշխանությունը զիջանել Դերենիկին և հեռանալ Բյուզանդիա մտնելու կայսեր ծառայության մեջ և արդեն ուղի էր ընկել, երբ ձերբակալվեց Աշոտ Բագրատունու դրդմամբ և հանձնվեց Ատրպատականի արաբ կուսակալին, որ և բանտարկեց նրան:

Այնուհետև Գուրգենի կյանքը նմանում է արկածավոր վեպի, ուր նա ներկայանում է որպես ժողովրդական հերոս և այդ ոգով գրի է առել նրա կյան-

քը, հավանորեն, Շապուհ Բագրատունին, որից քաղում է Թովմա Արծրունին:

Գուրգեն փախչում է բանտից և գալիս Վասպուրական: Դերենիկ զինվում է նրա դեմ և նորից կալանավորում և ձգում Հաղամակերտի բանտը: Այստեղից ևս փախչում է, գիշերում մի վանքում, բայց վանահայրը նենգորեն մատնում է նրան Դերենիկին: Ջաքարիա կաթողիկոսի և Աշոտ Բագրատունու միջնորդությամբ հաշտություն է կնքվում Դերենիկի և Գուրգենի միջև: Գուրգեն բաժին է ստանում Մարդաստան գավառը, որպես «բուն բաժին Գուրգենայ»:

Թվում է, թե Գուրգեն Արծրունյաց տան Մարդպետական ճյուղի շառավիղն է: Սրա հայրը Աբուբելջը սպանված է եղել Դերենիկի պապի ձեռքով: Ի՞նչ է եղել գժտության պատճառը, հայտնի չէ: Գուրգեն հիշում է ընտանեկան թշնամությունը, բայց ոխակալ չէ ուզում լինել: Նա ավելի կասկած ունի Աշոտից, թե «գուցէ իբրեւ զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց», ուստի և չմնաց Մարդաստանում, այլ գերադասեց ապրել շրջիկ կյանքով, «շրջաբերական յեղափոխմամբ»:

Գուրգենի կասկածն անհիմն չէր: Աշոտ Բագրատունին աշխատում էր գրավել արաբ կառավարության վստահությունը իր քաղաքական ծրագիրների համար: Հավատարմության հաստատուն ապացույց էր արաբների աչքում թշնամական վերաբերումը դեպի կայսրը և նրան համակիր անձերը: Գուրգեն Աբուբելջը հարաբերության մեջ էր Միքայել կայսրի հետ և ցանկություն ուներ անցնելու սահմանը: Կայսրը շրջապատված էր Մամիկոնյան իշխաններով, իր մայրն իսկ Մամիկոնյան իշխանուհի էր: Գուրգենի երակների մեջ ևս Մամիկոնյան արյուն կար: Նրա մայրը Բագրևանդի Քուրդիկ իշխանի քույրն էր: Քուրդիկն արդեն անցել էր Բյուզանդիա և մեծ հռչակ հանել: Գուրգեն ուզում էր նրա օրինակին հետևել:

Աշոտ Բագրատունին արգելք հանդիսացավ, ինչպես որ անհաջող անցավ և նրա առաջին փորձը Աշոտի հոր Սմբատի օրով: Բագրատունի իշխանը հասկանում էր, որ բյուզանդական բանակում ընդդեմ արաբների գործող հայ ուժերը մեծապես վարկաբեկում էին և դժվարացնում այն հայ գործիչների դրությունը, որոնք երկրի ներսը մաքառում էին իրենց վիճակը բարվոքելու համար: Աշոտ քաղաքական հակառակորդ էր այսօրինակ փախստականների: Նա խափանեց Գուրգենի փախուստը, խափանեց նաև մի ուրիշ իշխանի նման քայլը շատ արատավոր պայմաններում: Դա Գրիգոր Մամիկոնյանն էր, հիշյալ Քուրդիկ իշխանի որդին: Գրիգորը գերված իշխանների մեջ էր և մինչ բոլորը ազատություն ստացան հավատուրացության սև գնով, Գրիգորը մնաց անդրդվելի իր կրոնի մեջ և բանտից փախավ եկավ Բագրևանդ իր կալվածը:

Արժե բերել պատմագրի եղերական տողերը. «Եւ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն, ելանէ ի բանտէն և գայ մտանէ ի գաւառն իւր Բագրեւանդ, և կամէր ամրանալ ի գաւառն Գաբեղինից ի Գազանածակսն, որ եւ զկնի յոթն ավուրց մեռանի: Եւ իմացեալ ոստիկանին Մահմետի, որ ի Հայս, առաքէ առ Աշոտ որդի Սմբատայ, զի ուր եւ իցէ ըմբռնեալ առ նա տարցի: Եւ նորա հատեալ զգլուխ մեռելոյն, առաքէ առ նա ասելով թէ կամեցաւ անցանել առ Յոյնս եւ իմ զկնի առաքեալ սպանի եւ ահա գլուխ նորա: Եւ խնդաց Մահմետ և զգացուցանէ Ջափրի և նորին հրամանաւ պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրեւանդ եւ արծաթ բիւրս հինգ: Եւ յայնմհետէ բարձաւ ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից»[1]:

Մահմետը Մուհամետ իբն Խալիդ Շայբանին է, որ ոստիկան եկավ Բուղայից հետո և նույն պաշտոնին էր դեռ, երբ բանտից փախած՝ եկավ Գրիգորը: Մահմետը պատվեր ուներ բռնել փախստականին և այդ ծանր գործը հանձնվում է Աշոտին, որ և կատարում է այնպես, ինչպես ինքն է հաղորդում իր իշխանավորին:

Այս տեղեկությունը Վարդան պատմագիրը պարտական է Շապուհ Բագրատունուն: Սա իր ազգակցին՝ Աշոտին (Աշոտի հետ Շապուհ երկու եղբոր թոռներ էին) արդարացնելու համար տալիս է Գրիգոր Մամիկոնյանի սպանության տարօրինակ բնույթ, կամ կրկնում է ժողովրդական մի զրույց, հորինված նույն նպատակով: Աշոտը խառն էր անբախտ իշխանի սպանության մեջ: Քաղաքագետը գուցե և արդարացնե այս ոճիրը, բայց այլապես երբեք չպիտի ներվի մեծ իշխանին այս եղբայրասպան սուրը և ոչ այն անարգ արծաթը:

Ավելի պերճախոս վկայական չէր կարող լինել Աշոտի հավատարմության, քան այս արյունոտ գլուխը: Հայոց 311 թվին նստավ գահ Ամիր ալմումին Ահմատ, ասում է Ասողիկ, և «տայ զերկիրս Հայոց Ալեայ՝ որդւոյ Յահէի. սա կացուցանէ իշխանաց իշխան զԱշոտ»:

Ահմատ՝ Մուստայինի խալիֆի անունն է, որ գահ բարձրացավ հիջրի 248 թ. ռամազան ամսին, որ է 862 թ. հոկտեմբեր 18-ից նոյեմբեր 17-ը: Հայոց 311 թվականը համապատասխանում է 862 թ. ապրիլի 25 մինչև 863 թ. ապրիլի 24: Ալի որդի Յահեի մեզ ծանոթ Ալի իբն Յահյա ոստիկանն է, որի գալուստը հետևապես ընկնում է 862 թ. հոկտեմբերի 18 մինչև 863 թ. ապրիլի 24 ժամանակամիջոցը: Հավանական է, որ եկած լինի Մուստայինի գահակալությունից անմիջապես հետո, 862 տարին դեռ չբոլորած: Սույն այս 862 թվին պետք է նշանակված լինի Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան: «Եւ այսպես ապա զկարգ սպարապետութեան քաղաքավարեալ-

[1] **Վարդան**, էջ 81:

ասում է Հովհաննես Կաթողիկոսը,- մինչեւ համբաւ բարւոյն ի դուռն արքունի հասանէր»: Ապա Ալի Արմանի ոստիկանը գալիս է և Աշոտին նշանակում է իշխանաց իշխան ամիրապետի հրամանով «բազում զգեստիւք եւ արքունական պատուով ճոխացուցեալ, ի նա հաւատալով զսակս Հայոց եւ զամենայն բեկար արքունի»:

Այսպիսով Աշոտը եղավ «պատուականագոյն եւ առաջին քան զամենայն նախարարութիւնս Հայոց», և բոլորը դաշինք էին կնքում նրա հետ որպես «արդարեւ ընդ թագավորական զարմի»[1]:

Թովմա Արծրունին հաղորդում է, որ երբ Աշոտ ստանձնեց Հայոց աշխարհի վերակացությունը որպես իշխան իշխանաց, հետամուտ եղավ նվաճելու «զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ»:

Այստեղից երևում է, որ Աշոտին հանձնած Հայաստանը հասկանալու է ավելի ընդարձակ, արաբական, իմաստով, այսինքն՝ նրա մեջ մտնում էին նաև Վրաց և Աղվանից երկրամասերը:

Երկրի ներսը իր դրությունը ամրապնդելու համար, Աշոտ հաշվի պիտի առներ մանավանդ Վասպուրականի և Սյունյաց զորավոր իշխանական տները: Թովմա Արծրունին պատմում է, որ իշխանաց իշխանը գնաց Դերենիկի վրա և կալանավորեց նրան, որպես անհնազանդի: Լսելով այս լուրը, Գուրգեն Աբուբելջ, որ Վասպուրականից հեռացած աստանդական կյանք էր վարում, իսկույն վրա հասավ Տարոնի կողմերից պաշտպանելու Դերենիկին ընդդեմ Աշոտի: Սա ստիպված էր ազատ թողնել Դերենիկին և հաշտություն կնքել: Հաշտությունը սրբագործվեց ընտանեկան մերձեցումով: Իշխանաց իշխանը իր դուստրը Սոփին տվավ կնության Դերենիկին, որը թեև հազիվ 15, թե 17 տարեկան էր, բայց արդեն այրի էր: Փեսան գնաց Աշոտի հետ Բագարան և այնտեղ կատարվեց հարսանեկան հանդեսը 311 թվին Հայոց, որ է 862-863 թիվը:

Քանի որ հարսանիքի ժամանակ Աշոտ հիշվում է Թովմայի մոտ որպես իշխանաց իշխան, ուրեմն և այս պարագան վկայում է, որ Աշոտ իրոք, իշխանաց իշխան նշանակված պիտի լիներ 862 թվի վերջերին:

Արծրունիների մեջ ազդեցիկ էր այդ ատենները Վահան իշխանը, Վասակ Կովակերի եղբայրը: Վահանին իրեն քաշելու նպատակով Աշոտ իր մյուս դուստրը ամուսնացրեց նրա հետ:

Միևնույն ժամանակ Գուրգեն Աբուբելջ վերջնականապես հաստատվեց Անձևացյաց աշխարհում: Մուշեղ Անձևացու մահվամբ, նրա այրին՝ Հեղինեն, առաջարկեց Գուրգենին իր ձեռը և Անձևացյաց իշխանությունը: Այսպիսով Վասպուրականի տեղական վեճերն ու խռովությունները առայժմ դադարեցին:

[1] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 74:

Աշոտը բարեկամական հարաբերություններ հաստատեց նաև Սյունիքի հետ: Գրիգոր Սուփանին հաջորդել էր իր որդին Վասակ Գաբուռը Գեղարքունիքում: Վայոց Ձորի իշխանն էր Վասակ Իշխանիկ վերակոչվածը: Գաբուռին Աշոտ փեսայացրեց իրեն, տալով նրան իր Մարիամ դուստրը, և պաշտոնապես ճանաչել տվավ նրա իշխանությունը խալիֆի կողմից: Գաբուռ շուտով մեռավ, թողնելով մի ժառանգ, որ կրում էր իր պապի անունը, Գրիգոր Սուփան:

Վասակ Իշխանիկը ևս մեծ պատկառանք ուներ դեպի Աշոտը և ինչպես ասում է պատմագիրը, «խրատու նորա զունկն մատուցանէր խնամով իբրեւ զօրէնս ի սրտի իւրում պահելով»:

Աշոտի աչքը նմանապես Տարոնի վրա էր, ուր գերված Բագարատի փոխարեն իշխում էին իր երկու որդիք Աշոտ և Դավիթ: Դավթի որդին, Աշոտ, ամուսնացավ հետո Շապուհի դստեր հետ, որ Աշոտի որդին էր[1]:

Այսպիսով բարեկամական և խնամիական ցանցով կապված էր Աշոտ իր շրջապատի հետ: Ըմբոստ իշխաններին սաստելու հմտությամբ Աշոտ հեղինակություն էր: Հարկերի կանոնավոր վճարումով ապահովել էր իր դիրքը նաև բարձրագույն իշխանության առաջ: Ներքին վեճերը և գժտությունները վերացան: Երկիրը խաղաղեց հուզումներից և սկսեց ազատ շնչել: Տասն տարին 862 թվից մինչև 871 թիվը, անդորրության շրջան էր:

Իշխանաց իշխանի վարչական ճիրքերը, արդյունավետ հանգումները, երաշխիք էին լավագույն օրերի: Շատերն արդեն զգում էին մոտիկ ապագան: Ոչ միայն «ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին», այլ խորհում էին, որ «եթէ դէպ ինչ պիտոյից գտցէ», այսինքն՝ եթե առիթը ներկայանա, առաջարկեն նրան արքայական գահ:

Առիթը մոտալուտ էր: Թագակիրները դյուրությամբ չեն զիջանում թագը ուրիշներին: Հարկավոր էր մի վերջին փորձություն նախքան թագ կապելը:

Իշխանաց իշխանական տասնամյա շրջանի վերջերին քաղաքական հորիզոնը սկսեց պղտորվել: Բյուզանդական զորքերը նորից Եփրատի ափերին էին: Պատերազմը սկսվեց 871 թվին և շարունակվեց մինչև 874 թիվը: Կայսրը, հայազգի Վասիլը, ինքն էր ղեկավարում շարժումները: Մի տարի ընդհատվեց կռիվը և վերստին արծարծվեց 876 և 877 թվերին:

Ամիրապետական գահի շուրջը տարիներից ի վեր սաստկացող խռովարար մրցությունը վերջացավ Մուտամիդի գահակալությամբ (870-892): Կայսեր պատերազմը, ճիշտ է, պավլիկյան իշխանության և Մելիտինեի արաբ ամիրայի հետ էր, բայց գաղտնի չէր, որ սրանց ետևը կանգնած էր

---

[1] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 96:

արաբ պետությունը: Սահմանագլխի ընդհարումները կարող էին հուզումներ խմորել հայ իշխանական միջավայրում, ուր կրքերը հազիվ զսպված՝ պատրաստ էին հրդեհվել ամեն պատեհ առթիվ:

Մուտամիդ խալիֆը, այս վտանգավոր հնարավորությունը նկատի ունենալով, պատերազմի սկզբից նեթ Հայաստան ղրկեց Հիսե որդի Շեխի: Սա քաջածանոթ Շայբանի ցեղից էր:

Ամեն անգամ, երբ Հայաստանում քաղաքական կացությունը երկյուղ էր ազդում, ամիրապետները դիմում էին Շայբանի իշխանական տան աջակցության: Տիրելով Ամիդի շրջանին, սրանք սահմանակից էին հայերին և հարմարագույն գործիք խալիֆի ձեռքում ընկճելու ըմբոստությունը:

Ի՞նչ էր Հիսեի պաշտոնը, մոտեն հայտնի չէ: Թովմա Արծրունին ասում է, որ Հիսե «զզօրապետութիւնն Հայոց ունէր»[1]: Արաբները պահակ զորքեր ունեին կարևոր դիրքերում: Հավանական է, որ Հիսե նրանց հրամանատար էր նշանակված: Նա եկավ ճիշտ պատերազմի տարին 871 թվի գարնան[2]:

Հիսե Հայաստան մտավ թե չէ, կռվի բռնվեց Աշոտ Արծրունու հետ: Աշոտը նոր էր վերադարձել գերությունից: Կալանավորված 852 թվին, արձակվեց միայն 868 թվին, գերության մեջ մնալով 17 տարի: Թովմայի բնագրի մեջ գրչագրական սխալներ են սպրտված և խանգարած ժամանակագրությունը: Ստույգ ընթերցումը վերականգնելու համար ինքը Թովման հաստատուն ելակետ է ընծայում: Նա պատմում է, որ Աշոտն ընկերացավ Բուղայի որդի Մուսեին, երբ սա գնում էր Կզվին քաղաքացիների դեմ, որ ապստամբել էին տաճիկներից: Մուսեն խոստացել էր Աշոտին արշավանքից հետո միջնորդել և նրան ազատ արձակել իր հայրենիքը: Մուսեն հաջողությամբ վերջացրեց կռիվը, բայց զլացավ կատարել իր խոստումը: Աշոտը փախավ և եկավ հայրենիք: Ապստամբ Կզվինը Ատրպատականի Կազվին քաղաքն է, ուր ըմբոստացել էր Աբումուլիք իշխանը և սրան սանձելու ուղարկվեց արդարև Մուսե:

Կռիվը տակավին շարունակվում էր, երբ գահակալական խռովությունները ստիպեցին Մուսեին հետ դառնալ Բաղդադ: Խալիֆ Մուհտադի սպանվեց 870 թվին հունիս ամսին[3]: Մուսեի դարձը այդ թվից առաջ է:

---

[1] **Թովմա Արծրունի**, էջ 542:

[2] Կաղանկատվացին խոսում է Հիսեի մասին 318 թվի շարժը հիշելուց անմիջապես հետո, 318 Հայոց թվականության = 869 թ. ապրիլից - 870 թ. ապրիլ: Արաբական տեղեկությամբ նա նշանակվեց հիջրի 256 թվի վերջը, 870 թ. նոյեմբեր, **Tabari III**, 3 էջ 1841: Ըստ **Յակուբի**, 621, Հիսե եկավ 257 ջումմատ բ. ամսում, որ է 871թ. ապրիլ: Երևի, նշանակումը տեղի է ունեցել 870 նոյեմբերին, իսկ գալը՝ 871 թ. ապրիլին:

[3] **Masudi**, Prairies d'Or, VII, 12.

Բուղան ինքը սպանվեց 868 թվին: Այս ժամանակներն է տեղի ունեցել Աշոտի դարձը[1]:

Աշոտ Արծրունի տուն դառնալով, սկսավ խեթ աչքով նայել այն հանգամանքի վրա, որ Գուրգեն Աբուբելջը հաստատվել էր հարևան Անձևացյաց աշխարհում: Աշոտը պահանջում էր, որ Գուրգենը իր երկրի մի մասը զիջանի Դերենիկին: Գործը արյունահեղության պիտի հասներ, եթե իշխանաց իշխանը իր որդի Սահակի միջոցով չմիջամտեր վեճին և հաշտությամբ վերջ չդներ եղբայրասպան կռվին:

Աշոտ Արծրունու հետևյալ ընդհարումն եղավ արաբ ութմանիկ ցեղի հետ: Այս անհանգիստ տարրը սպանել էր Ռոստոմ Վարաժնունի իշխանին և գրավել Ամյուկ բերդը: Տիրացել էր նաև Վարագ վանքին, բանտարկելով վանահոր: Արծրունյաց իշխանը պատրաստվում էր զենքի ուժով պատժել ութմանիկ գերփիչներին, երբ սրանց օգնության հասավ Հիսե՝ տասն և հինգ հազար հեծելազորի գլուխ անցած: Այս անգամ միջնորդ հանդիսացավ իշխանաց իշխանի փեսան, Վահան Արծրունին իր որդի Գագիկ Աբումըրվանի հետ և ստիպեց զենքը վայր դնել: Հիսե թվում է մտադիր է եղել խուժելու Վասպուրական, ինչպես կարելի է եզրակացնել պատմագրի այն նկատողությունից, թե Աշոտ և Դերենիկ հանձնառու եղան Հիսի առաջ արքունի հարկերը վճարել և «դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարհն Վասպուրական»: Հիսե թողեց գնաց Պարտավ և «այլ ոչ եւս այնուհետեւ համարձակ յանձն առնոյր մտանել ընդ աշխարհս Վասպուրական»[2]:

Հիսե երկար չմնաց Աղվանից մայրաքաղաքում: Երևի ձմեռելուց հետո, հաջորդ 872 թվին, հեռացավ, թողնելով այնտեղ քաղաքապետ մի ոմն Յամանիկ իրեն հավատարիմ մի անձն: Սակայն Յամանիկ չարդարացրեց նրա վստահությունը և Արծրունի իշխանների նման սա ևս ծառացավ իր տիրոջ դեմ, ձգտելով անկախության: Հիսեն հարկադրված էր զենքի դիմել անհնազանդ Յամանիկին սաստելու համար: Հայ իշխանների օգնությամբ պաշարեց Պարտավը, պատերազմեց Յամանիկի դեմ գրեթե մի ամբողջ

---

[1] **Թովմա Արծրունի**, էջ 236, տալիս է դարձի ստույգ թվականը. «ի ՅԷ ամի Հայոց թուականութեանս եկն Աշոտ Վասպուրական իշխան ի գերութենէն»: Անտարակույս, ՅԷ = 307, ուղղելու է ՅԺԷ 317, որ է 868-369 թիվը: Արդարև, նույն պատմագիրը, էջ 244, վկայում է, որ Աշոտը ապրեց հետ գերեդարձի 6 տարի և մեռավ ՅԻԳ թվականությանն Հայոց հինգշաբթի օր 6 հոռի, որ է 874 թիվը մայիսի 27: Հետևապես դարձել էր 868 թվին: Թովմայի խոսքերը, էջ 243, «ե ամ ի գերութեան արարեալ եւ զ ամ կեցեալ յետ գերեդարձն լինելոյ» հայտնի հայագետ **Dulaurier**, Recherches de la Chronologie, p. 265, սրբագրում է «է ամ ի գերութեան եւ ժզ ամ յետ գերեդարձն լինելոյ»: Սինչդեռ ուղղելու է միայն գերության **ե** տարին **ժե** (կամ **ժէ**): Աշոտ կալանավորվեց 852 թ. և ազատվեց 868 թ., հետևապես մնաց գերության մեջ 853-867 թթ., այսինքն՝ 15 տարի:

[2] **Թովմա Արծրունի**, էջ 243:

տարի և առանց հաջողելու հեռացավ Ասորիք: Նորեն եկավ, կռվեց և դարձյալ ձախողեց:

Մովսես Կաղանկատվացին պահել է մեզ Յամանիկի անունը՝ որ էր «Մահմուտ որդի Ապղմեհդի և կոչիւր Եմեմիկ (կարդա՛ Եմենիկ)»: Այս Եմենցի Մահմետի դեմ եկավ Ասորեստանից Եսայի որդի Շեխա, այսինքն՝ Հիսե, արաբերեն Իսա իբն Շեյխ, կամակից ունենալով իշխանաց իշխան Աշոտին: Ասորիք կամ Ասորեստան ասելով հասկանալու է այս դեպքում Ամիդի շրջանը, Շայբանի ցեղի տունը:

Պարտավի վրա գնացին Հիսե և Աշոտ և «քաջամուխ կան ի մարտի զամս 13»[1]: Նույն օրերում վախճանվեց Աղվանից հայրապետը: Սամուել եպիսկոպոսը Աշոտի հավանությամբ ընտրվեց հաջորդ 326 թ. Հայոց, այսինքն՝ 877-878 թվին:

Ասել է, թե Յամանիկի և Հիսեի կռիվը պատահել է այս ժամանակ և թերևս երկրորդ կռիվն է: Ուշադրության արժանի է պատմագրի նկատողությունը, որ մարտը տևեց 13 տարի: Եթե ներելի է կարդալ **զամիսս** 13 փոխանակ **զամս,** 13 ամիսը կհամապատասխանե Թովմայի մի տարվան, «տուեալ պատերազմ ընդ քաղաքին զտարի մի»[2]: Իսկ եթե այնպես հասկացվի, որ Յամանիկ մնացել է սանձարձակ ըմբոստ 13 տարի շարունակ, պետք է ենթադրել, որ ընդվզումը սկսվել է Հիսեի հեռանալուց հետո 872 թվին և տևել է մինչև Աշոտի թագավորելու նախօրյակը, ուրեմն իրոք 13 տարի:

Պարտավի ապստամբ իշխանի փառասիրական ձգտումներն ավելի հեռուն էին գնում: Նա ուզում էր ձեռք դնել ամբողջ Հայաստանի վրա: Հիսեն հեռացավ 878 թվին: Հաջորդ տարին նա Միջագետքում կռվում էր Կունդաջիկ իշխանի դեմ հիջրի 266 = 879-880 թվին:

Յամանիկ երազում էր նրա տեղը բռնել և «թուղթս եւ դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ իշխանս աշխարհիս», առաջարկում էր իր թեկնածությունը «ի վերակացութիւն Հայոց»: Հայերը սակայն գերադասեցին իրենց մեջ տեսնել Ահմատ որդի Հալթի, որ է արդեն ծանոթ Մուհամետ իբն Խալիդ, այն անձը, որ Բուղայից հետո կուսակալ եկավ և մեղմ քաղաքականությամբ վերականգնեց խաղաղությունը խռովված երկրում: Իշխանների ցանկությունը հարգվեց և Մուհամետ նշանակվեց Հայաստան:

Արաբական իշխանությունը իր զորության վայրէջքին հասած՝ ստիպված էր հարմարվել երկրի տրամադրության, երբ կուսակալ էր նշանակում: Տրամադրության հայտարարը Աշոտ իշխանաց իշխանն էր: Ակնածելի ուժ ոչ միայն տեղացի արաբ իշխանավորների աչքում, այլև խալիֆի ներկայացուցիչ կուսակալի: Իրերի ընթացքը ցույց էր տալիս, որ կամ պետք էր զիջանել ասպարեզը նրան, կամ փորձել տապալելու և մեջտեղեն հանելու վտանգավոր իշխանին: Բախումը անխուսափելի էր:

[1] **Մովսես Կաղանկատվացի**, Գ, գլ. 21.

[2] **Թովմա Արծրունի**, էջ 245:

Նոր կուսակալը ոտ կոխեց Հայաստան: Ընդառաջ ելան մինչև Դատվան ազդեցիկ իշխանավորները, Դերենիկ Արծրունին իր իշխաններով, Տարոնի Աշոտ Կյուրապաղատը, Մոկաց իշխան Մուշեղը, Ապահունյաց բոնավոր Աբլբաո Կայսիկը: Միայն իշխանաց իշխանը չշարժվեց տեղից, այլ իր կողմից ուղարկեց Շապուհ եղբորը: Այսպիսի շքախումբով Մուհամեթ իբն Խալիդը ուղղվեց դեպի Դվին:

Խալիդի որդին չարդարացրեց այն մեծ վստահությունը, որ ցույց էր տվել դեպի նրա անձը Հայ երկիրը և ամենից առաջ իշխանաց իշխան Աշոտը: Արդյոք բարձրից հանճնարարություն ուներ, դժվար է ասել, բայց փաստ է, որ ընտրված կուսակալը Աբլբաո Կայսիկի հետ միասին ծրագրում են նենգությամբ բռնել հայ իշխաններին և զինաթափ անել երկիրը: Այս նպատակով գաղտնի հարաբերության մեջ են մտնում Պարտավի ըմբոստացած Յամանիկ բռնավորի հետ և խորհուրդ տալիս, որ նա՝ թշնամի ձևանալով դուրս գա որպես թե կռվելու նորեկ կուսակալի դեմ, բայց իրոք միանալու նրա և Աբլբառի ուժերին ընդդեմ իշխանաց իշխան Աշոտի և մյուս հայ իշխանների:

Ահա այս ճգնաժամին է, որ Աշոտը փայլեց իր խորհմաց կարողությամբ և հեռատեսությամբ: Պատմագիրը իրավամբ կոչում է նրան «առաւելեալն իմաստութեամբ»: Տարիների փորձառությունը գանձարան էր բարի խորհուրդների, որ շշնջում էին, թե արաբական միջավայրում պետք է միշտ արթուն մնալ, որովհետև գողը կարող էր գալ ամեն ժամու: Աշոտ անհոգ չէր նստած: Մուհամեթի գալու օրից նա բռնել էր վաղօրոք բոլոր կարևոր դիրքերը, «կամուրջների խելերը եւ ձորերի կիրճերը» և հաջողել էր ձեռք ձգել այն նամակը, որ Մուհամետ և Աբլբաո գրել էին և հատուկ սուրհանդակով ղրկել Յամանակին:

Արաբ դավադիրները սկսել էին արդեն իրենց մութ գործը, ջանալով միևնույն ատեն պառակտել հայ ուժերը: Բանսարկությամբ գժտեցին Դերենիկ Արծրունուն Տարոնի իշխանի՝ Աշոտ Կյուրապաղատի հետ:

Քսու մարդիկ հավատացրել էին Դերենիկին, որ Աշոտ ձգտում է խլել նրանից իշխանությունը: Ամբաստանության զոհ եղավ Կյուրապաղատը, որ հանկարծակի կալանավորվեց Դերենիկի հրամանով: Ասում են, որ Դերենիկի հավելյալ շարժառիթը էր, Կյուրապաղատի տեղ, Տարոնի իշխանությունը տալ նրա եղբորը Դավիթին, որ կոչվում էր Արքայիկ և որ իր՝ Դերենիկի քրոջ Մարիամի ամուսինն էր: Արծրունի իշխանն արդարև նոր կուսակալի ձեռքով հաստատեց իր փեսային Տարոնում[1]:

[1] Ըստ Թովմայի (էջ 248) Դավիթ Արքայիկը իշխեց Տարոնում «ամս է»: Սմբատ թագավորի «յերրորդ ամի» Դվինի շարժը եղավ,և «յետ այսր յերկրորդ ամի», հույները պաշարեցին Կարին քաղաքը: «Եւ ի նմին ամի մեռաւ Արքայն իշխան Տարօնոյ» (**Թովմա Արծրունի**, էջ 260): Սմբատի երրորդ տարին է 892, սրանից 2 տարի հետո, կլինի 894 թիվը: Այս թվին մեռած Արքայիկը եթե յոթն տարի է իշխել, նշանակում է սկսել է 894-7 = 887: Ակնհարիև է, քանի որ

Ահմատ կամ Մուհամետ իբն Խալիդը և Աբլբառ Կայսիկը Դվինում ետևե եղան չար ծրագիրն իրագործելու: Իշխանաց իշխանը, որ «բարձրագոյն եւ հանճարեղագոյն էր քան զբնաւ Հայաստանեայս եւ զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից», անգետ ձևանալով դավադրության, եկավ ներկայացավ արաբ ամիրային առատաձեռն պարգևներով: Բարեմիտ և զգույշ իշխանը, երևում է, հույս ուներ մի կերպ վանել սպառնացող փոթորիկը հայ երկնքից: Երբ համոզվեց, որ խաղաղ միջոցները ի դերև պիտի ելնեն, դիմեց զենքի: Նա պատվեր տվավ իր քաջարի եղբոր Աբասին, որ սպարապետն էր, պատրաստ լինել: Առավոտյան մինչ արաբ կուսակալը սպասում էր իշխանների ողջույնին, Աբասը մտավ մենակ կուսակալի մոտ և հանձնեց նրան այն թուղթը, որ ինքը կուսակալը գրել էր Յամանիկին դավադրական նպատակով: Ապա սպարապետը բռնելով նրա ձեռքից, հանեց դուրս, սիրտ տվավ նրան, որ չվախենա և նստեցրեց ջորու վրա ու հրամայեց դառնալ այնտեղ, որտեղից եկել էր: Իշխանաց իշխանի որդին Շապուհ ուղեկցեց արտաքսված կուսակալին մինչև Ասորեստանի սահմանները: Վեհանձն հաղթություն առանց կաթիլ արյունի:

Կուսակալի դաշնակից Աբլբառ Կայսիկ իշխանը ևս արժանի էր պատժի: Աշոտ իշխանաց իշխանը պաշարեց Մանազկերտը, Աբլբառի ոստանը: Այդ ժամանակ եկավ գուժկան, որ Աշոտ Կյուրապաղատ ազատվել է բանտից և ձերբակալել Դերենիկին: Իշխանաց իշխանը թողեց Մանազկերտի պաշարումը և գնաց իր փեսա Դերենիկին օգնության և հանեց նրան բանտից ոչ առանց դժվարության:

Դավադրության երրորդ անդամը Յամանիկը կուսակալի անարգալից արտաքսումից հետո փորձեց միայնակ գլուխ հանել մշակված ծրագիրը: Երկպառակության որոմն ցանեց իշխանների մեջ, գրգռելով Դերենիկին իշխանաց իշխանի դեմ, ինչպես և Աբլբառ Կայսիկին: Մյուս կողմից բանտարկեց, որպես թե Դերենիկը դավեր է սարքում Աշոտի դեմ: Դերենիկը սպանվեց, երբ գնում էր Ճվաշ գավառը ձմերելու Մառական ավանում: Ճանապարհին Հեր քաղաքի պետը՝ ոմն Աբլբերս, դարան մտնելով հարձակվեց Արծրունի իշխանի վրա, երբ սա անցնում էր Անծախի ձորից, և սրով խողխողեց:

Լուրեր էին պտտվում, որ իշխանաց իշխանի մատը խառն էր այդ սպանության մեջ: Դերենիկի մահվան մի երկրորդ պատմության մեջ, Հերի

այս ժամանակ Աշոտ արդեն թագավոր էր, մինչդեռ Արքայիկի Տարոն հաստատվելը Մուհամետ իբն Խալիդի գալստյան տարին էր: Նրա հալածվելուց հետո է, որ Ահմատը, Հիսեի որդին, թագը բերեց: Պարզ է, որ է ընթերցելու է ժէ, կամ գուցե աւելի ճիշդ ժե: Այս հաշվով Արքայիկի իշխանության սկիզբը կստացվի 894-17/15= 880 և միևնույն ժամանակ կորոշվի Մուհամեդ իբն Խալիդի գալստեան տարին:

քաղաքապետը կոչվում է որդի Ապումսարա, և դավադրության մասնակից է համարվում Գագիկ Աբումրվան, որ իշխանաց իշխանի դստեր որդին էր: Կարելի է կարծել, որ Գագիկի մասնակցությունը թելադրանք էր իշխանաց իշխանի կողմից:

Մի ուրիշ տեղեկությամբ, Դերենիկի սպանիչները Իսմայելյան ազգի գլխավորներն էին, որ սեփականել էին Հեր և Ջարևանդ գավառներում ինչ ինչ հողեր Դերենիկին պատկանյալ[1]:

Ինչպես վերջացան Աշոտի հաշիվները Յամանիկի հետ, ի մոտո հայտնի չէ, բայց պետք է ենթադրել, որ Աշոտը կարողացավ ընկճել այս խարդախ և խռովասեր բռնավորին: Սանձված էր նաև Մանազկերտի Կայսիկ իշխանը, ինչպես տրամադրում է կարծել Կոստանդին Ծիրանածնի վկայությունը[2]:

Այսպիսով Աշոտի հակառակորդները, երկրի խաղաղությունը վրդովող արտաքին, թե ներքին ուժերը, պարտվեցին: Աշոտ միակ խոշոր անձն էր հրապարակի վրա, առանց ախոյանի, առանց հայ, թե արաբ մրցորդի: Բարոյական հեղինակությունը և զինվորական ուժը լռության և անգործության էին մատնել խռովարար հույզերն ու ձգտումները: Անպայման Աշոտ երկրի տեր ու տիրական էր: Եթե արաբ և պարսիկ ամիրաների համարձակությունն ու վճռականությունը ունենար, Բագրատունի իշխանը կարող էր խզել իր կապերը ամիրապետի հետ և հայտարարել իրեն ինքնիշխան: Սակայն, Աշոտի ամենամեծ արժանիքը խոհեմությունն ու զգուշությունն էր և չէր սիրում խաղալ անհայտության հետ: Ուստի միշտ գերադասելի էր նրա համար պահել և չկորցնել ծանր աշխատությամբ վաստակած վստահությունն ու հավատը ամիրապետի: Առանց աղմկարար ցույցերի, առանց դրժելու խալիֆի հետ ունեցած հարաբերությունը, իշխանաց իշխանը չտատանվեց մի կարևոր և գործնական քայլ անել, ստեղծած դրությունը սրբագործել արքայական ծիրանիով: Ընդհանուր ցանկությունն էր:

Պատմագրի խոսքերի մեջ ճշմարտություն կա, թե հայ իշխաններն ու նախարարները տեսնելով Աշոտի «քաջատոհմիկ պերճութիւնը», խորհուրդ արին և որոշեցին թագավորացնել նրան իրենց վրա: Այս մասին հայտնեցին ամիրապետին և սա ընդունեց «արժանահայց խնդիրը» և ղրկեց Աշոտին արքայական թագ: Խալիֆ Մուտամիդ չէր կարող այլ կերպ վարվել առանց վախենալու նորանոր փորձանքներից: Կայսերական քաղաքականությունը անգործ չէր: Տարոնի Բագրատունի իշխանը արժանացել էր պալատական բարձրագույն տիտղոսի՝ կյուրապաղատության: Բյուզանդական գահի վրա բազմած էր հայազն Վասիլ:

---

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, էջ 79:

[2] De Administrando Imperio, p. 44.

Ոչ ոք չէր կարող երաշխավորել, արդյոք իշխանաց իշխանը, եթե մերժում ստանար ամիրապետից, երեսը չէ՞ր դարձնի արաբներից, և կայսեր հովանավորության հետ միասին չէր ստանա ղրծալի թագը Բյուզանդիայից: Այս դեպքում Հայաստանը պետք է ընկներ ընդմիշտ արաբների ձեռքից և անցներ նրանց ոխերիմ թշնամիներին:

Մուտամիդ գոհացում տվավ երկրի բաղձանքին: Գեորգ կաթողիկոսը հոգևոր օրհնությամբ պսակեց Աշոտին թագավոր Հայոց թ. 334 = 885-886 թվին: Վասիլ կայսրը շտապեց շնորհավորել Աշոտի հաջողությունը, «խաղաղութեան, նուաճութեան եւ սիրոյ» դաշինք հաստատելով և «որդի սիրելի անուանելով» և «հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ»: Վերջին խոսքերիս իմաստն է՝ առնել Աշոտին կայսերական հովանավորության տակ:

Քաղաքական ոգորումները պսակվեցին հաղթանակով: Բագրատունի իշխանի համար թագ բերողը ոչ այլ ոք էր, եթե ոչ Շայբանի տան զավակ՝ Ահմատը, որդի Հիսեի (և ոչ Հիսե, ինչպես մեր մատենագիրների մոտ է): Այս ևս մի խոշոր հաջողություն էր: Աղծնիքում բույն դրած և կենտրոնական իշխանության կոթնած արաբ իշխանական տունը, Բագրատունիների կատաղի հակառակորդը, ստիպված էր հրաժարվել պայքարից: Աշոտի թագավորելովը փակվում է քաղաքական ապրումների մի ամփոփ շրջան, մի ամբողջություն: Ձգտումները հանգել էին իրենց նպատակին:

Այստեղ կարող ենք կանգ առնել և հետևել Բագրատունյաց երկրորդական ճյուղերի գործունեության դրացի երկիրներում:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԾԳՐՏՈՒՄՆԵՐ

Աշոտի թագավորության տարին հայտնի չէ հաստատապես, ուստի և տարաձայնության նյութ: Մատենագրական տեղեկությունները, տարաբախտաբար, աղքատ են: Եղածները բխում են մի աղբյուրից, որ է Թովմա Արծրունի: Աչքի անցնենք բոլոր հայտնի տեղեկությունները նրանց ծագումը և փոխադարձ կապը պարզելու համար:

1. Հովհաննես Կաթողիկոս, ժամանակակից և քերևս ականատես Աշոտի թագադրության, զլացել է ավելի բան հաղորդելու, քան որ Աշոտին պսակեց Գեորգ հայրապետը և որ այս առթիվ Բարսեղ (Վասիլ I) կայսրը հարաբերության մեջ մտավ Աշոտի հետ սիրո և խաղաղության անունով[1]:

2. Թովմա Արծրունի հաղորդում է, որ Աշոտ ապրեց «ե ամ յիշխանական ճոխութեան, իե ամ յիշխանաց իշխանական պետութեանն, ղ ամ ի թագակապ շքեղութեանն, եւ մեռաւ լիբ թուականութեանն Հայոց և ի ծե ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի»: Ուրեմն իշխան եղավ

[1] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 78:

հինգ տարի, իշխանաց իշխան՝ քսանհինգ տարի, թագավոր՝ չորս տարի և մեռավ 339 թվին Հայոց, Գեորգ կաթողիկոսի 15-րդ տարին[1]:

3. Ասողիկ հայտնում է, որ Աշոտի թագադրությունը տեղի ունեցավ Հունաց Վասիլ թագավորի օրով և կամքով յիզ թվականությանս Հայոց և ի գալստենէ Փրկչին մերոյ Տեառն Աստուծոյ ամք պկծը, յաւուրս տեառն Գէորգայ յծբ ամի հայրապետութեան նորա»: Այլև որ «նախ քան զթագաւորութիւնն, երեսնամեայ ժամանակօք իշխան եւ իշխանաց իշխան եղեալ Հայոց եւ Վրաց»[2]:

4. Սամուել Անեցի ունի. «պծէ (կարդա՝ պծն), յիդ ի բառնալոյ Արշակունեաց թագաւորացն մինչեւ զթագաւորութիւնս Բագրատունեաց լինին ամք ՈՂդ: Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս ե»[3]:

5. Կիրակոս կրկնում է Սամուելին. «ի բառնալոյ թագաւորութեան Արշակունեաց մինչեւ զթագաւորութիւն Բագրատունեաց լինին ամք ՈՂդ. որ յիդ թուին թագաւորեաց Աշոտ» ավելացնում է «զամս լ եւ թ իշխանաց իշխան կացեալ եւ ե ամ թագաւորեալ»[4]:

6. Վարդան քաղում է Ասողիկից. «Զնոյն (զթագն) և կայսրն Վասիլ առաքէ և օրհնէ զթագն տէր Գէորգ յիզ թուին և յծբ ամի հայրապետութեան իւրում և յպծը ամի ծննդեան տեառն: Որ բարիոք կարգաւորեաց զյօրինուածս թագաւորութեանն ամս ե... կատարի ի Քրիստոս հա ամաց»[5]:

Արդ այս տեղեկություններից կարևոր է առաջին երկու պատմագիրների՝ Հովհաննես Կաթողիկոսի և Թովմա Արծրունու հաղորդածը: Ասողիկ ավելի բան չգիտե, քան ինչ որ հանել է Թովմայից: Արդարև, ըստ Թովմայի Աշոտ մեռավ 339 թվին, չորս տարի թագավորելուց հետո: Ասել է, թե թագավորել է 336 թվին, ինչպես հաշվել է Ասողիկ: Եթե մահվան տարին, 339 համապատասխանում է Գեորգ կաթողիկոսի 15-րդ տարվան, գահակալության տարին 336 կգա ուղիղ նույն կաթողիկոսի 12-րդ տարին: Ասողիկ ավելցրել է իր կողմից միմիայն Քրիստոսի համապատասխան թվականը, 336= 887-888: Թովմա տալիս է Աշոտին հինգ տարի որպես իշխանի և 25 տարի որպես իշխանաց իշխանի: Ասողիկ գումարել է երկու թվերը հաշվելով 30 տարի իշխանի և իշխանաց իշխանի համար:

Ասողիկ մի նոր բան է հայտնում, որ չկա Թովմայի մոտ. «Աշոտ կեցեալ ամս լը, թագաւորեալ ամս ե մահուամբ փոխի առ Քրիստոս»: Աշոտ, որի իշխանությունը հաշվում է 34 տարի, չէր կարող 32 տարի ապրած լինել: Ակներև է, որ 32 թիվը հարազատ չէր: Վարդան այստեղից գիտե, որ Աշոտ

---

[1] **Թովմա Արծրունի**, էջ 258:

[2] **Ասողիկ**, էջ 157:

[3] **Սամուել Անեցի**, էջ 95:

[4] **Կիրակոս Գանձակեցի**, Վենետիկ, 1865, էջ 45:

[5] **Վարդան**, էջ 86:

71 տարի է ապրել և հինգ տարի թագավորել: Հետևապես 32 ուղղելու է 71: Ասողիկի առաջին հրատարակության մեջ 32-ի փոխարեն կարդացվում է 21, որ հաստատում է 71-ի միավորը ընդդեմ 32-ի միավորի: Ստորև կտեսնենք, որ 71 ևս հարազատ չէ, և պետք է լինի 61: Ամեն պարագային կարևոր տեղեկություն է, անկախ Թովմայից և առնված հավանորեն Շապուհ Բագրատունու կորած գործից: Ասողիկ հարկ է համարել հիշել, որ Աշոտ թագավորեց հինգ տարի, թեև այս հակասում է Թովմայից քաղած տեղեկության, որի համաձայն Աշոտ թագավորել է չորս տարի՝ 336, 337, 338 և 339 տարիները:

Սամուել տալիս է Աշոտին հինգ տարի թագավորություն, անշուշտ Ասողիկի ազդեցության տակ, ուստի և թագավորության սկիզբը դնում է 334 թ. Հայոց = 885, ընդունելով մահվան 339 թվականը, 339 - 5 = 334: Արշակունյաց անկումը համարում է Սամուել 451 թվին[1], որտեղից մինչև Աշոտի գահակալությունը 885 թվին հաշվում է ուղիղ 434 տարի:

Կիրակոսը հետևում է Սամուելին[2], Վարդանը՝ Ասողիկին: Սրանց տեղեկությունները ուրեմն անկախ արժեք չունին, ինչպես չունին և իրենց աղբյուրները, Ասողիկ և Սամուել: Միակ հիմնական աղբյուրը մնում է Հովհաննես Կաթողիկոս և մանավանդ Թովմա Արծրունի:

Տարաբախտաբար Թովմա Արծրունու մոտ մի գրչի վրիպակ կա, որ չէ նկատել Ասողիկ և որ դյուրին է վեր հանել: Արծրունյաց պատմագիրը դնում է Աշոտի մահը 339 թ. Հայոց և Գեորգի 15-րդ տարին: Հետևապես Գեորգի առաջին տարին գալիս է 324 թ. Հայոց, ինչպես հաշվել է Ասողիկ: Գեորգի նախորդ Զաքարիա կաթողիկոսը, նույն Թովմայի վկայությամբ, վարեց հայրապետական աթոռը 15 տարի[3], ուրեմն աթոռակալած պիտի լինի (324-18=) 306 թվին Հայոց: Սակայն այս հակասում է նույն պատմագրի այն վկայության, թե 306 թիվը կշռում է Զաքարիայի երրորդ տարին. «և եղեւ ի լնուլ վեցերորդ ամի գերութեանն Հայոց որ է ՅԶ ամ ըստ թուոյ հայերէն տումարին և ունի յորելեանք զ եւ օլոմպիադք (կարդա՛ օլիմպիադք) և ընդիքտիոնք<ի>, եւ զ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, եւ մուտ եօթներորդ ամի»[4]:

Եթե 306 թ. լրացած և 307 թ. սկսած համապատասխանում է Զաքարիայի 3-րդ տարուն, ուրեմն առաջին տարին կգա 304 լրացած և 305 սկսած տարին: Արդ 304 թ. Հայոց սկսվում է 855 թ. ապրիլ 26, լրանում 856 թ. ապրիլ

---

[1] **Սամուել**, էջ 70:

[2] Կիրակոսի՝ 32 տարին հետևանք է հնգի (ե) յոթ (է) սխալ ընթերցման, որով 30 փոխարեն 32:

[3] **Թովմա Արծրունի**, Գ, գլ. 19, էջ 245:

[4] Նույն, Գ, գլ. 14, էջ 226: Հոբելյան հաշվում է 50 տարի, ուրեմն 6 հոբելյան, 300 տարի: Ինդիկտիոն՝ 15 տարի, բաց է թողած 20=ի, 20×15=300:

26, որտեղից սկսվում է հետևյալ 305 տարին: Կարելի է ասել, որ Զաքարիա գահակալել է 855 թ. վերջը, կամ 856 թ. սկիզբը, և որովհետև աթոռը վարել է 18 տարի, նրա վերջին տարին կհասնե մինչև 321 թվի վերջը և 322 թվի սկիզբները, այսինքն՝ 873 թ. ապրիլ 22-ից հետո:

Զաքարիայի հաջորդ Գեորգ կարող էր գահ բարձրանալ 873 թվի վերջերը կամ 874 թ. սկիզբները: Հետևապես Աշոտի մահվան տարին, 339 Հայոց թ. որ է 890 թ. մինչև 891 թ. ապրիլ, չի համապատասխանի Գեորգի 15-րդ տարուն, այլ 17-րդ: Պետք է ենթադրել, որ Թովմայի **ժե** գրչական սխալ է փոխանակ **ժէ**-ի:

Հովհաննես Կաթողիկոս տալիս է Զաքարիային 22 տարի[1] և ոչ 18 ինչպես Թովմա Արծրունին: Ասողիկ նախընտրել է 22 տարին և չորս հավել տարիները շահելու համար, երկու տարով առաջացրել է Զաքարիայի ընտրությունը և նույնչափ տարով հետաձգել նրա մահը, հաշվելով նրա աթոռակալությունը 302 Հայոց թ. մինչև 321 թ. կամ 853 թ. մինչև 875 թ.:

Հովհաննես Կաթողիկոսի վկայությամբ, Զաքարիայի նախորդ Հովհաննես Ովայեցի կաթողիկոս կենդանի էր տակավին 302 թվին մեհեկան ամսին: Սույն ամսի 25-ին նա սահմանեց տոնել Բուղայի զոհերից Ատոմյան 150 վկաների հիշատակը: Այնուհետև կաթողիկոսն ելավ շրջագայելու Գեղարքունյաց վիճակը և վախճանվեց Մաքենոց վանքում:

Ասողիկ այստեղից հետևցրել է, որ Հովհաննես Կաթողիկոս մեռել է նույն 302 թվին և նույն տարին հաջորդել է Զաքարիա: Սակայն 302 Հայոց թ. մեհեկան 25 կշռում է փրկչական 853 թ. նոյեմբերի 17: Ծերունի կաթողիկոսը չէր կարող ճմրան ցրտերին շրջագայության գնալ մինչև Մաքենոց վանքը: Հարկ է կարծել, որ հայրապետի զբոսանքը կատարվել է ոչ առաջ, քան գարուն 874 տարվան: Սույն տարին Բուղան կռիվ էր մղում Աղվանից Աբու Մուսե իշխանի դեմ: Արաբ զորավարի բանակումն էր Սմբատ սպարապետը իր որդի Մուշեղի հետ: Կռիվը տևեց գրեթե մի ամբողջ տարի: Հետևյալ 855 տարին էր, երբ Բուղան հեռանալով Հայաստանից, հրամայեց Սմբատին միանալ իր կարավանին: Սմբատ նախքան հեռանալը ժողով գումարեց Երազգավորք և ընտրել տվեց Զաքարիային: Սա աշխարհական էր և մի օրվան մեջ բարձրացավ մինչև կաթողիկոսական աթոռը: Հիմք կա կարծելու, որ Ովայեցու մահից հետո հայրապետական աթոռը թափուր մնաց մի առ ժամանակ մինչև Զաքարիայի ընտրությունը, որ չէ կարող առաջ լինել, քան 855 թ.: Տեսանք, որ Թովմա Արծրունին նրա գահակալության առաջին տարին համարում է 304 Հայոց թ., որ է 856 թ., սկսած ապրիլից: Ակներև է, որ Ասողիկի հաշիվները ստույգ չեն: Ստույգ չէ նաև նրա ցուցումը, թե Աշոտ թագավորեց Գեորգի 12-րդ տարին, որ հիմնված է Թովմայի բնագրի հին վրիպակի վրա, ինչպես տեսանք:

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, էջ 76:

Աշոտի թագավորության սկզբնավորության մասին այլ աղբյուր չունինք հայ մատենագրության մեջ, քան Թովմա Արծրունին: Սա է միակ և հիմնական աղբյուրը, որից քաղել են մյուսները:

Արդ Թովմայի գիտությամբ Աշոտ մեռավ 339 թվին Հայոց, որ է 890 թ. ապրիլ 18 մինչև 891 թ. ապրիլ 18: Եվ որովհետև թագավորեց չորս տարի, այստեղից սխալ կլիներ հետևցնել, թե թագ կապեց 336 Հայոց թ. 887-888, սխալ որովհետև հայտնի չէ որոշակի, թե 339 թվի ո՞ր ամսին վախճանեց: Եթե մեռած է 890 թվին չորս տարին կհաշվի 886 թվից: Հովհաննես Կաթողիկոս մի նեցուկ է տալիս իր տեղեկությամբ, թե Վասիլի կենդանությանն է թագ կապել Աշոտ: Վասիլ մեռավ 29 օգոստոս 886 թ., հետևապես Աշոտի թագադրությունը կանուխ է, քան այս թիվը, և մահը կանուխ, քան 890 թ. օգոստոս 29: Ոչ մի հիմ չկա կասկածի ենթարկելու ո՛չ Թովմայի, և ո՛չ Հովհաննես Կաթողիկոսի արժանահավատությունը: Մնում է ներդաշնակել, հաշտեցնել: Եթե ենթադրենք անգամ որ թագադրությունը տեղի է ունեցել 886 թ. գարնան, թե ամառը, առաջ, քան 29 օգոստոսի, մահը կգա չորս տարի ուշ՝ 890 գարնան, թե ամառ, այսինքն՝ 339 Հայոց թ. ընթացքին, որ սկսվում է 890 թ. ապրիլ, ամսից, համաձայն Թովմայի:

Սակայն մի արգելառիթ հանգամանք կա: Հայ հնագույն գրչագիրներից մեկը, Լազարյան Ճեմարանի Ավետարանը գրված է ճիշտ 336 թվին Հայոց և գրիչն ասում է. «Գրեցաւ ի հայրապետութեան Գէորգայ Հայոց կաթաւղիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի **իշխանաց իշխանի,** ի տէրութեան Սմբատայ Բագրատունւոյ»: Ահա մի ժամանակակից, որ Աշոտին անվանում է **իշխանաց իշխան** 336 Հայոց թ. = 887 թվին: Նշանակում է Աշոտի թագավորությունն ուշ էր, քան 887 թիվը: Այս չէ հակասում Թովմայիին, բայց ընդհարվում է Հովհաննես Կաթողիկոսի վկայության հետ, որի համաձայն Վասիլ կենդանի էր թագադրության ժամանակ, այն ինչ եթե թագադրությունը 887 թվին դեռ չէր կայացել, նշանակում է Վասիլի մահից հետո է կայացել:

Այս հիշատակարանի դեմ խոսում է մի ուրիշ հիշատակարան: 1910 թվին Էջմիածնի մատենադարանը մտավ մի ձեռագիր Ավետարան XIV թե XV դարուց, բայց գրիչը գովական ջանքով արտագրել է նաև իր օրինակի հիշատակարանը, որ է. «Գրեցաւ ի սկիզբն թագաւորութեան Բագրատունեաց Աշոտոյ ձեռամբ անարժան Գրիգոր Մաշկեւորի ի ժամանակս հայրապետութեան Գէորգա կաթողիկոսի որ օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց ի թվ. մերում **զճկգ**, եւ քաղոց ամսոյ Ժ ի աւուր սրբոյն Սքանչելագործին վանիցն»[1]:

Գրչության թերությունները պատկանում են հավանորեն անփույթ արտագրողին, ինչպես օծեաց փոխանակ աւծեաց: Վերջին նախադասությունը կրճատված է: Հին Ավետարանը գրված է եղել քաղոց **Ժ** և ի վանս հանուն

[1] **«Արարատ»,** 1910, հուլիս, էջ 623:

սրբոյն Սքաճչելագործի, կամ ձեռագիրը ընդօրինակողի ձեռքն է ընկել ի վանից որ հանուն սրբոյն Սքաճչելագործին: Կասկած չկա որ հիշատակարանը հին է և հարազատ: Մեզ հետաքրքրում է գրության ժամանակը, որ է 334 Հայոց թ. (**գճլդ** և ո՛չ **գճկգ**), այսինքն՝ 885 թ. ապրիլ - 886 թ. ապրիլ: Ահա մի անակնկալելի վկայություն, որ Աշոտ օծվել է թագավոր այս թվին: Ասողիկի խոսքը թե Աշոտ թագավորեց հինգ տարի առանձին արժեք է ստանում, մանավանդ, եթե ծագում է, ինչպես ենթադրեցինք, Շապուհ Բագրատունի պատմագրից: Հինգ տարին կբերե թագավորության սկիզբը 334 տարին, ինչպես հաշվի էր առել նաև Սամուել Անեցի: Հավանական է, որ Աշոտ թագավորած լինի եթե ոչ լրիվ հինգ տարի, ամեն պարագային ավելի քան չորս տարի: Ամիրապետից թագ ստանալը և օծումը կամ թագադրության հանդեսը, հարկավ, միաժամանակ չեն կատարված: Թերևս ժամանակագրական տարածայնությունը բացատրելու է նրանով, որ մի դեպքում Աշոտի թագավորությունը հաշված է օծման հանդեսից, մյուս դեպքում՝ թագը ստանալու օրից: Կարծում ենք, որ 886 թվի սկիզբները կարող են ծառայել հաշտության կետ տարածայնությունների:

Սակայն մեծագույն խոչընդոտը մնում է Լազարյան Ճեմարանի ձեռագրի հիշատակարանը: Խոչընդոտը կարելի է հարթել կամ ենթադրելով, որ թագադրության հանդեսը տեղի է ունեցել 887 թվից հետո, ուստի գրիչը տակավին թագավոր չէ անվանում Աշոտին, կամ իշխանաց իշխան զուգակշռում է Աշոտի պաշտոնական տիտղոսը *ἄρχων τῶν ἀρχόντων*, ընդունված բյուզանդական արքունիքից: Տարածայն վկայությունների մեջ դժվար է ժխտել մի կետ, որ Աշոտի թագադրության ժամանակ Վասիլ տակավին կենդանի էր: Այս կետը համարում ենք հաստատուն: Հովհաննես Կաթողիկոս չէր կարող հերյուրել այնպիսի մի նշանավոր փաստ, որպիսին Վասիլի հարաբերությունը նորապսակ Աշոտի հետ: Թվական հաշիվները կարող են շփոթվել մանավանդ, երբ զանազանությունը մեծ չէ, բայց մեծազոր կայսրի անունը չէ կարող երևակայության պտուղ լինել:

Աշոտի տարիքը ևս քննության պետք ունի: Վարդան վկայում է, որ Աշոտ մեռած է 71 տարեկան հասակում[1]: Տեղեկությունն առել է Ասողիկից, իսկ սա՝ Շապուհ Բագրատունուց: Ասողիկի բնագիրը խաթարված է: Վարդան ավելի լավ օրինակ է ունեցել, բայց ոչ բոլորովին հարազատ:

Աշոտի հայրը, Սմբատ, պատանդ էր արաբական արքունիքում և ազատ արձակվեց 275 Հայոց թ. = 826-827[2]: Արդ վերադարձից հետո էր, որ Սմբատ ամուսնացավ Դավթի քրոջ հետ և ունեցավ երկու զավակ, Աշոտ և Շապուհ,

[1] **Վարդան**, էջ 86:

[2] **Ասողիկ**, էջ 106:

նաև մի դուստր, որ կնության գնաց Տայքի և Կղարջքի Բագարատ իշխանին[1]: Այս հաշվով ավագ որդու, Աշոտի, ծնունդը կարող էր պատահել առառավելն հետևյալ 827-828 տարվան: Ապա մահվան տարին, 890 թվին Աշոտ չէր կարող 71 տարեկան լինել: Կարծում ենք, որ ՀԱ սխալ ընթերցված է փոխանակ ԿԱ= 61: Արդարև 890-61 = 829, որ է ծննդյան ստույգ տարին:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վասակ Բագրատունին թողեց խռովահույզ Հայաստանը 775 թվի ապստամբության օրերին, անցավ Կղարջք և հիմը դրեց Բագրատունյաց վրացի ճյուղին: Մի նոր և փառավոր շրջան բացվեց Վրաց պատմության մեջ:

Մինչև Բագրատունիների երևումը Վրաստանի անցյալը բավականին մութ է և, որքան հայտնի է, անգույն է: Հիշվում են ցանուցիր իշխանական թե թագավորական անուններ, որոնք վկայում են, որ նման կարգեր են տիրել, ֆեոդալական կարգեր, ինչպես Հայաստանում և քաղաքական թե քաղաքակրթական կյանքը հոլովել է համաշավիղ ընթացքով և կրել հարափոփոխ պայմանների նույն վերուվայրը ինչ որ Հայաստան: Նյութերի պակասությունը, տրամադրելի ցանցառ տեղեկությունները չեն ներում որևէ գաղափար կազմել անցյալի ամբողջական պատկերի մասին: Այս տարտամ վիճակը վերանում է, երբ Բագրատունիք ոտ են կոխում Վրաստան: Երկիրը վերածնվում է քաղաքականապես, մտնում նոր փուլի մեջ և ընթանում ուրույն և փայլուն ուղիով:

Մեծ է Բագրատունյաց դերը հայ պատմության մեջ, բայց անհամեմատ ավելի նշանավոր գործոն եղան նրանք վրական հողի վրա: Բավական է հիշել, որ վրական տոհմածառը հաշվում է երեքհարյուրից ավելի անձ, որից վաթսունը՝ թագավոր: Ոստեր արձակելով ամեն կողմ Վրաց Բագրատունիք կարողացան իրենց հովանու տակ առնել վրական ցեղերի ամբողջությունը: Մեզ հետաքրքրում է մասնավորապես նրանց Վրաստանում հաստատվելը և վրաց քաղաքական վերածնության սկզբնավորությունը նրանց շնորհիվ:

Ո՞վ էր Վրաց Բագրատունիների նախահայրը:

Երեք կարգի նյութեր կան այս մասին, հայ, հույն և վրացի: Հակասական չեն, բայց նրանց համերաշխությունը պարզելու համար պետք կա մասնավոր քննության: Հայ աղբյուրը որոշ է և դրական[2]: «Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց եւ Վրաց, - ասում է Վարդան, - որք ի Բագրատունեաց անտի սերեցան: Քանզի, որպէս ասացաւն, զկնի քաջին

[1] **Վարդան**, էջ 79:

[2] «**Հայրենիք**»-ի մեջ լույս տեսած հոդվածիս մեջ մի անախորժ վրիպակ կա. փոխանակ «**ծնության** տեսակետից» տպված է «**հայության** տեսակետից»:

Վարդանայ իշխանք Հայոց կացին ըստ դիպելոյ մինչեւ ի Սմբատ Բագրատունի, եւ զկնի նորա **Աշոտ**, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն: Սմա լինին երկու որդիք, Սմբատ՝ նախնի թագաւորացն Հայոց եւ Վասակ՝ սկիզբն թագաւորացն Վրաց, որոյ որդին Ատրներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայր՝ Գորգամ: Հետ սմա Դաւիթ որդի Բագարատայ, որ սպանաւ ի Գորգամայ հորեղբօրէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդին Դաւիթ: Սմա եղբօրորդի Գուրգէն որոյ որդին Բագարատ որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի: Այս է կարգն:

«Իսկ Հայոց նախնւոյն Սմբատայ՝ որդի Աշոտ Մսակեր, որոյ որդին Սմբատ Խոստովանողն, որոյ որդին այս Աշոտ Քարեպաշտ, որ անուանեցաւ իշխանաց իշխան ի յԱլեայ որդւոյ Վահէի հրամանաւ ամիրապետին Ջափրայ»[1]:

Այս սերնդաբանությունը կարտահայտվի հետևյալ պատկերով:

Աշոտ Կույր († 762)

Սմբատ († 775)	Վասակ
Աշոտ Մսակեր († 826)	Ատրներսեհ
Սմբատ Խոստովանող († 857)	Աշոտ Կյուրապաղատ († 826)
Աշոտ թագավոր († 890)	Բագարատ Կյուրապաղատ († 876)
	Դավիթ Կյուրապաղատ († 881)
	Ատրներսեհ թագավոր († 923)

Տարաբախտաբար հայտնի չէ, թե Վարդան ո՞ւմ է պարտ այս կարևոր տեղեկությունը Վրաց Բագրատունիների ծագման մասին[2]: Տեղեկությունը քաղված է լավ աղբյուրից և հաստատվում է ուրիշ նյութերի քննությամբ:

Կոստանդին Ծիրանածին կայսրը պատմում է, որ Վրաց կյուրապաղատները պարծենում են, որ սերում են Դավիթ մարգարեից և Ուրիհոսի կնոջից և որովհետև նույն սերնդից է Մարիամ Աստվածածին, ուստի և ազգա-

[1] **Վարդան**, էջ 81-82:

[2] Մարկվարտի հետ մենք ևս կարծում էինք, որ աղբյուրը Շապուհ Բագրատունու կորած երկն է: Սակայն դժվար է պնդել այս ենթադրության վրա: Վարդան առել է մի աղբյուրից ուր թված են եղել Վասակից մինչև Սենեքերիմի փեսան, որ էր ոչ թե Բագարատ, այլ սորա որդի Գեորգի: Ինչպես երևում է Վարդանի քննագիրը կամ խանգարված է կամ ինքն է սխալ ընդօրինակել իր աղբյուրը: Պետք է կարդալ. «սորա որդի Դաւիթ, սմա եղբօրորդի <Բագա-

կան են համարվում Ս. Կույսին: Ասում են, որ երկու եղբայր, Դավիթը և Սպանդիատ, տեսիլ են տեսնում և թողնում Երուսաղեմ և հեռանում Պարսից կողմերը ուր այժմ ապրում են վրացիները: Աստված մի զարմանալի հատկություն էր շնորհել Սպանդիատին: Սրա մարմինը բոլորովին անխոցելի էր պատերազմներում: Վիրավորել կարելի էր միմիայն սիրտը, որ սակայն պաշտպանված էր զրահով: Այս կարողությամբ եղբայրներին դյուրին էր հաղթել պարսիկներին և տիրանալ երկրին: Երբ Հերակլ կայսրն արշավեց պարսից դեմ, երկու եղբայրները հարեցին նրան և նրա ձեռնատվությամբ ձեռք բերին շատ հողեր:

Սպանդիատ մեռավ անզավակ, իսկ Դավթից ծնեց Բագարատ, Բագարատից՝ Աշոտ, Աշոտից՝ Ատրներսեհ, որին Լևոն կայսրը մեծարեց կյուրապաղատության պատվով: Երուսաղեմից գաղթելե հետե այն երկիրը ուր ապրում են ցայժմ անցել է չորս թե հինգ հարյուր տարի, մինչև ինդիկտիոն 10, արարչության 6460 թիվը, Կոստանդին և Ռոմանոս Ծիրանածին կայսրերի թագավորությունը[1]:

Այս հետաքրքրական զրույցը ազատ չէ տարաբախտաբար անհարթություններից: Անտարակույս պատմողը, թե գրի առնողը շատ բան շփոթել է: Ուրիոս Քետացին Դավթի զորականներիցն էր, որին Դավիթ սպանել տվեց և առավ նրա գեղեցիկ կնոջ Քերսաբեին[2]: Դավիթ և Սպանդիատ ուրեմն սրանց սերնդից էին, *ἐκ τῶν παίδων*, որ չի նշանակում անհրաժեշտորեն, որ անմիջական զավակներն էին: Ստորև կքննենք այս երկու կարծեցյալ նախահայրերի ավանդությունը: Այժմ մեզ հետաքրքրում է նրանց սերունդը:

Արարչության տարին և ինդիկտիոն համապատասխանում է Քրիստոսի ծննդյան 952 թվին, երբ Կոստանդին գահի վրա էր, թագակից ունենալով իր որդի Ռոմանոսին: Դավիթ և Սպանդիատ եկած պետք է լինեն այս թվից չորս կամ հինգ հարյուր տարի առաջ, այսինքն՝ 452 կամ 552 թվին: Զարմանալի է, որ այսքան ժամանակամիջոցում Դավթին վերագրվում է միմիայն երեք սերունդ, որդի, թոռն և թոռնորդի: Գիծը չի հասցրած մինչև 952 թ. հակառակ խոստումի, այլ մինչև Լևոն կայսր (886-912), որից Ատրներսեհ ստացավ կյուրապաղատություն: Ատրներսեհից հետո հայտնի էր Աշոտ Կյուրապաղատ, որին քաջ ծանոթ է մատենագիր կայսրը, բայց այստեղ չէ հիշված: Ատրներսեհ այցելել էր մայրաքաղաք մերձ 822 թվին և մեծ ընդունելություն

րատ, որոյ որդի> Գուրգեն, որոյ որդի Բագարատ, <որոյ որդի Գիորգի> առ իւր կին զդուստր Սենեքերիմայ»: Այս ծննդաբանությունը չէ կարող լինել Մխիթար Անեցուց, որին Վարդան հիշում է քանի մի էջ հետո և որից առնելով պատմում է «յաղագս Վրաց թագաւորացն սկզբանց», էջ 91, ուր Գուրգեն համարվում է որդի Աշոտի Ողորմածի, մինչդեռ անծանոթ աղբյուրից քաղած ծննդաբանության մեջ Գուրգեն Դավթի եղբորորդին է:

[1] **De Administrando Imperio,** գլ. 45, էջ 197-199:

[2] **Թագավոր.,** ժա:

գտել Ռոմանոս Լեկապենոս կայսրի կողմից: Կարելի է կարծել, որ այս զրույցը գրի առնված լինի Ատրներսեհի կամ իր ուղեկիցներից մեկի բերանից նույն 922 թվին և Կոստանդին գտած լինի պալատական դիվանում և մտցրած իր երկի մեջ առանց ուշադիր լինելու նշանակել նաև հաջորդ կյուրապաղատների անունները մինչև իր ժամանակ: Կամ Կոստանդին կայսրի բնագիրը հարազատ վիճակի մեջ չէ հասած մեզ, կամ պետք է ընդունել, որ օգտվել է մի թղթից, որ գրված է եղել Ատրներսեհի այցելության տարին:

Աշոտ Կյուրապաղատ ևս մայրաքաղաք էր գնացել կյուրապաղատության պատիվն ստանալու առթիվ և Կոստանդինի ու Ռոմանոս Լիկապենոսի օրով: Այնուհետև հողային վեճեր ունեցավ Աշոտ Կյուրապաղատը կայսրության հետ: Պետք եղավ ուղարկել կայսրի մոտ իշխան Չորտվանելին, որ նշանավոր վանական Թոռնիկի հայրն էր: Չորտվանել մայրաքաղաք էր մոտավորապես 949-950 թվականներին: Հավանական էր ենթադրել, որ հենց այս վեճերի առթիվ է, որ Կոստանդին կայսրը հետաքրքրվել է կյուրապաղատների պատմությամբ և թերևս նույն Չորտվանելից գրի անցրել ինչ որ մեզ պատմում է: Սակայն այս հավանականության արգելք է այն պարագան, որ կյուրապաղատների գիծը հասցրած է մինչև Ատրներսեհ: Կրկնում ենք կամ բնագիրը աղճատ է կամ զրույցը գրի է առնված ավելի առաջ, քան Կոստանդինի ժամանակ, 952 թիվը[1]:

Մի ուրիշ և ավելի ծանր սխալ, որ նկատվում է զրույցի մեջ և որ չէ սպրտել Մարկվարտի սուր աչքից: Դավթի սերնդի շարքը՝ Դավիթ, Բագարատ, Աշոտ, Ատրներսեհ ուղիղ չէ: Առաջին և երրորդ անդամները փոխել են իրենց տեղերը, այսինքն՝ պետք է կարդալ՝ Աշոտ, Բագարատ, Դավիթ, Ատրներսեհ: Այս է շիտակը, համապատասխան Վարդանի և «Վրաց տարեգիրք»-ի տեղեկության: Անշուշտ, Դավիթ մարգարեի, կյուրապաղատների կարծեցյալ նախահոր, անվան ազդեցությամբ է բացատրելու տեղի ունեցած շփոթությունը պատմողի, թե գրի առնողի կողմից:

Դավթի (իմա՛ Աշոտի) հոր և պապի, Ատրներսեհի և Վասակի մասին հիշատակություն չկա: Խոսք չկա նաև կյուրապաղատի հայկական ծագման մասին: Արդյոք զրույցին անծանոթ էին այս կետերը, թե սղված են այնքան սեղմ պատմվածքի մեջ, դժվար է ասել: Դավիթը ոչ 452 թ. և ոչ 552 թվի անձ

[1] Կոստանդին հիշատակում է Աշոտին նույն De Adm. Imp. գործի հաջորդ 46 գլխի մեջ, էջ 207, *τοῦ Ἀδρανασῆ τοῦ κουροπαλάτου, τοῦ πατρὸς τοῦ ἀρτίως Ἀσωτίου τοῦ κουροπαλάτου*, այլև էջ 213, *Ἀσώτιον τὸν υἱὸν Ἀδρανασῆ τοῦ κουροπαλάτου*, «Վրաց տարեգիրք»-ի համաձայն, Ատրներսեհին հաջորդեց իր որդի Դավիթ († 937) և ապա սորա եղբայր Աշոտ: Մարկվարտի կարծիքը, թե Աշոտ որդին էր ոչ այս Ատրներսեհի, այլ մի ուրիշ համանուն անձի, հիմնավոր չէ:

չէր, այլ ութերորդ դարու վեջի և իններորդի սկզբի: Զրույցի մեջ տեսնում ենք, թերևս առաջին փորձը հնացնել կյուրապաղատների ծագումը, բայց տակավին չկա այն կեղծ ծննդաբանական շղթան, որ պիտի հորինվեր հետագայում՝ ապացուցանելու ծագման հնությունը: Սպանդիատի մասին կխոսենք ստորև: Հետևենք առ այժմ նրա եղբոր Դավթի բախտը:

Բարեբախտաբար վրաց մատենագրությունը պահել է Բագրատունիների ծագման հնագույն վարկածը: Ճիշտ է վրական տեղեկությունները շատ խառնակ են: Բայց չինծու զրույցները չեն խեղդել իրենց ծալքերի մեջ պատմական սաղմը:

Արքայազն Վախուշտի կազմել է «Վրաց կյանքը», օգտվելով զանազան ձեռագրական նյութերից, աշխատել է հարթել տարբերությունները և մի ուղիղ գծի վերա շարել Վրաստանի իշխողների հաջորդությունը: Սակայն դժվար չէ նկատել, որ կան հին տեղեկություններ, որ հետագա գրիչները խաթարել են: Այդ կարգի տեղեկություն ենք համարում ինչ որ պատմված է Արչիլ թագավորին նվիրված հատվածում: Արչիլի պատմությունը պատկանում է Ջևանշերի գրչին, որ իրեն համարում է ժամանակակից և անգամ փեսա Արչիլի: Այս հավակնությունը պարզ կեղծիք է: Գեթ այն ձևով, ինչպես որ իր գործը հասել է մեզ չի կարող վերագրվել ժամանակակից գրչի, առասպելականը մեծ տեղ բռնելով այնտեղ[1]: Կեղծ-Ջևանշերը պահել է մեզ ամեն պարագային Բագրատունիների ծագման վրական հնագույն և ստույգ վարկածը:

Վրաց ազգային հինավուրց իշխանական տունը սպառեց ութերորդ դարու վերջին Ջևանշեր իշխանի մահվամբ, ըստ Վախուշտի, 787 թվին: Ջևանշերի հայրը և նախորդը Արչիլն էր, որի մասին պատմվում է հետևյալը: Արչիլ վերադառնում էր Եգերքից, երբ Խիդար իջևանում իրեն ներկայացավ Դավիթ մարգարեի սերնդից մի իշխան, որ էր Ատրներսեհ Կույրի եղբորորդի Ատրներսեհը: Եկվորի հայրը ազգակից էր Բագրատունի տան և հույներից իշխան կարգված Հայոց կողմերում, ապա ապաստանել էր Կղարջք Մրվան Ղրուի արշավանքների միջոցին և մնացել այնտեղ Գուռամ Կյուրապաղատի զավակների մոտ: Սրա որդին, եկվոր Ատրներսեհը, այժմ խնդրում էր Արչիլից մի կալված հպատակության պայմանով: Արչիլ նրան զիջեց Շուլավեր և Արտան (= Արտահան):

Արչիլի մոտ եկան նմանապես նույն Ատրներսեհ Կույրի երեք եղբոր-

---

[1] **Brosset**, էջ 253, ծանոթ. 1, բերում է մի հիշատակարան, ուր ասված է, թե «Արչիլի վկայաբանությունը, Վրաց թագավորների պատմությունը և վրաց դարձը գրել է Լեոնտի Մրովել, Ռուիսի եպիսկոպոսը, և այժմ գրում եմ ես Յոհաննես Դեկանոս»: Հետևապես վրաց պատմության հնագույն շրջանի, սկզբեն մինչև Արչիլ, բուն հեղինակն է Լեոնտի եպիսկոպոսը: Յոհաննես, հավանորեն, սոսկ գրիչ չէ, այլ հեղինակ՝ Արչիլի որդիների՝ Յովաննեի և Ջևանշերի պատմության, որ հետևում է Արչիլի վկայաբանության:

որդիները, նրանք որ խարել էին իրենց հորեղբոր աչքերը, եկան Տարոնից Շաքի և հաստատվեցին այնտեղ Արչիլի հավանությամբ, ու գրավեցին երկիրը մինչև Գուլդուլա:

Նույն ժամանակները մի քանի բդեշխ տեղ չգտնելով Կղարջքում, գնացին Տայք և բռնեցին Կալմախ ժայռը, մի մասն էլ գնաց Կախեք[1]:

Արդ կասկած չկա, որ Ատրներսեհի Կույրը այլ ոք չէ, քան Աշոտ Կույրը: Հոր և որդու փախուստը միևնույն անցքի կրկնությունն են, ինչպես նկատել է Մարկվարտ: Մեր կարծիքով ոչ միայն անցքն է կրկնված այլև անձը, այսինքն՝ հայր և որդի միևնույն անձն են, Վասակ Բագրատունին: Սակայն թվում է, թե այստեղ լսվում է և մի հին դեպքի արձագանք: Ատրներսեհի հայրը որպես թե փախել էր Կղարջք Մրվան-Ղրուի ժամանակ: Մրվան-Ղրու կրկնակի անունը կրկնակի դեմք է ներկայացնում: Վրացերեն **ղրու** նշանակում է խուլ: Այս արատն ուներ Աբդլազիզ ոստիկանը, որ ուղարկվեց Հայաստան Վալիդի օրով (705-715) և որին Ղևոնդ պատմագիրը կոչում է **խուլք** լսելեօք: Ութերորդ դարու սկզբում մեծ խռովություններ ծագեցին Հայաստանում արաբների դեմ և Հունաց կայսրի դրդմամբ: Խռովությունների հետևանքն եղավ Նախճվանի և Խրամի ահավոր աղետը: Հայ նախարարները զոհ գնացին արաբական նենգության և ողջակեզ եղան եկեղեցու մեջ: Ապստամբության ոգին Սմբատ Բագրատունին էր, որ արժանացել էր կյուրապաղատության պատվի և որ կարողացավ մի քանի նախարարների հետ փախչել և ապավինել կայսեր: Սա տվեց նրանց «զքաղաքն որ անուանեալ կոչի Փոյթ ի կողմանս Եգեր աշխարհին եւ բնակեցան ի նմա ամս զ»:

Նոր ոստիկանը, խուլ Աբդլազիզ, պատվեր ուներ խաղաղացնել երկիրը: Սա հարաբերության մեջ մտավ Սմբատ կյուրապաղատի հետ և համոզեց վերադառնալ: Փախստականները վերադարձան մոտ 712 թվին:

Արդ եթե չենք ուզում Ատրներսեհի հոր փախուստը ծուլել իր որդու փախուստի հետ, պետք է ընդունել, որ Սմբատ Բագրատունու Եգերքի Փոթի քաղաք ապաստանելն է, որ անդրադարձել է որպես Ատրներսեհի հոր փախուստ Կղարջք: **Ղրու** «խուլ» մակդիրը, որ վերաբերում է Աբդլազիզին և ոչ Մրվանին երաշխիք է այս ենթադրության:

Մրվան նշանակվեց ոստիկան 732 թվին և Աշոտին կարգեց իշխանաց իշխան: Աշոտի հակառակորդները նրան կուրացրին 17 տարի իշխանություն վարելուց հետո, ուրեմն 749 թվին: Նրա հովանավոր ոստիկան Մրվան գրավեց խալիֆայական գահը 744 թ. և սպանվեց 749 թ.: Հավանական է, որ նրա մահից անմիջապես հետո տեղի ունեցավ և Աշոտի աղետը:

«Վրաց տարեգիրք»-ն ևս գիտե, որ Մրվան եկավ Էշինի, այսինքն՝ Հիշամի (724-743) կողմից: Այլևլի պատմության մեջ հիշվում է, որ Մրվան-Ղրուից 50 տարի հետո արաբները մտան Վրաստան և մտնողը մի

կուսակալ էր, անունը Ջիջում, որ կոչվում էր նաև Ասիմ: Սա էր, որ նահատակել տվեց Արչիլին: Եթե հիսուն տարին հաշվենք 732 թվից, երբ եկավ Մրվան, կստանանք նահատակության տարին մոտ 781 թիվը: Ղևոնդ պատմագրից հայտնի է, որ Խազմ անուն արաբ ոստիկան սպանեց մարտիրոսական մահով Համազասպ և Սահակ Արծրունի իշխաններին Դվինում **մլգ** (կարդա՛ **մղ**) Հայոց թվին, հայտնության օրը, այսինքն՝ 786 թ. հունվար 6, Մուսե խալիֆի օրով: Այս խալիֆի ժամանակ սպանեցին նաև «զիշխանն Վրաց չարաչար մահուամբ, զի վերամբարձ առեալ զոտիցն եւ զձեռացն ընդ մէջ կտրէր զմատաղութիւն հասակի նորա»[1]:

Այս անանուն իշխանն, անտարակույս, Արչիլն է, ինչպես արդեն նկատել են Բրոսսե և Մարկվարտ: Նահատակության տարին և ոստիկանի անունը երաշխիք են: Հայ պատմագրի Խազմ ոստիկանը Խուզիմա բին Խազիմ արաբն էր, նույն ինչ որ Ջիջում-Ասիմ, որ աղավաղված է թերևս սխալ ընթերցումի հետևանքով, փոխանակ Խիզում-Ասիմի:

Այսպիսով, որոշվում է Արչիլի ժամանակը: «Մատաղութիւն հասակի» խոսքը ցույց է տալիս, որ Արչիլ չէր կարող հիսուն տարի իշխած լինել, որպիսին հաշվում է նրա վկայաբանության հեղինակը, անշուշտ, կամենալով ուղղել սխալ ժամանակագրությունը և հասցնել նրան մինչև 786 թիվը:

Արչիլի մոտ Ատրներսեհ եկավ 775 թվին: Ատրներսեհ ինքը Վասակն է: Արճեշի ճակատի հերոսը Մուշեղ Մամիկոնյանն էր, որ իր կողմը քաշեց Սմբատ Բագրատունի իշխանին, որ սպարապետ էր և Մուշեղի փեսան: «Կոչէին ի թիկունս օգնականութեան զՎասակ որդի Աշոտոյ, զեղբայր Սմբատայ սպարապետի ի տոհմէ Բագրատունեաց եւ զզօրսն նորին»[2]: Վասակ այդ միջոցին Դարոյնք էր, արդի Բայազիտ, որ Բագրատունյաց կալվածն էր: Հայտնի չէ թե Վասակ արձագա՞նք տվեց կոչին և գնաց եղբորն օգնության, թե մեկուսացավ մյուս Բագրատունիների նման: Ամեն պարագային 775 թվի ճակատից հետո այլևս չի հիշվում: Ապստամբ իշխաններից, որոնք կենդանի մնացին արյունահեղ մարտից հետո, հետապնդվեցին արաբ իշխանության կողմից և մահվան դատապարտվեցին, ինչպես Արծրունի եղբայրները: Ակներև է, որ Վասակ հեռացել էր Հայաստանից և իր ուժերով քաշվել հավանորեն Սպեր, իրենց տոհմական կալվածը: Այստեղից էլ պետք է անցներ Կղարջք: Ի՞նքը գնաց Կղարջք, թե իր որդի Ատրներսեհը, որոշ չէ: Եթե Ատրներսեհը, որ Արչիլին դիմեց, եկել էր Հայաստանից, նա միայն Վասակ կարող էր լինել: Իսկ եթե ճշմարիտ է, որ Ատրներսեհի հայրը ևս փախած է եղել Կղարջք, պետք է կարծել, որ խոսքը վերաբերում է Վա-

[1] **Ղևոնդ**, գլ. Խ:

[2] Նույնը, գլ. ԼԴ:

սակին, որ 775 թվին ապաստանել էր Սպեր, որտեղից հետագայում իր որդին գնաց Արչիլի մոտ: Հոր փախուստը տեղափոխած է Մրվան-Ղրուի ժամանակ, հավանորեն, շփոթելով Սմբատ Կյուրապաղատի համանման արկածի հետ, ինչպես վերև հիշեցինք:

Դժվար է անտեսել Վարդանի կրկնակի վկայությունը, թե Վասակ ուներ Ատրներսեհ անունով որդի: Մեկը հիշեցինք վերև: Երկրորդ անգամ կրկնում է նույնը Ատրներսեհի որդու Աշոտի Վրաց իշխան կարգվելու առթիվ: «Եւ տայր իշխանն Իսմայէլի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի զերկիրն Վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան եւ կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»[1]:

Կայսրը Լևոն V Հայկազն է (813-820): Վասակ և Ատրներսեհ այնքան առաջացել էին, որ երկու հարևան մեծ պետությունները հնարավոր գտան Ատրներսեհի որդուն Աշոտին բարձր դիրքի կոչել: Վարդան այս տեղեկությունը պարտական է Շապուհ Բագրատունուն, ուստի և անպայման հարգի է: Ատրներսեհը հետևապես ո՛չ թե Ատրներսեհ Կույրի, այսինքն՝ Աշոտ Կույրի եղբորորդին է, այլ քոռը: Վասակի անունը մոռացության է տված:

Մյուս կողմից վրաց մի ուրիշ աղբյուր համարում է Ատրներսեհին որդի Ատրներսեհի: Արչիլի որդու և հաջորդի՝ Ջևանշերի պատմության մեջ ասված է, որ Ջևանշեր առավ Ատրներսեհի դուստրը Լատավրե: Ջևանշերի մայրը ընդդիմանում էր այս ամուսնության, բայց երբ իմացավ, որ Ատրներսեհ Դավիթ մարգարեի ցեղից է, հավանություն տվեց և օրհնեց պսակը: Ջևանշեր դեռ կենդանի էր, երբ Ատրներսեհ տեր դարձավ Կղարջքի, Շավշեթի, Աջարայի, Նիգալի, Ասեաց-Փորի, Արտահանի և ստորին Տայքի: Մինչ այդ բոլոր այս երկիրները Վախթանգի սերունդի ժառանգությունն էր: Ատրներսեհ հաստատվեց Կղարջք, ուր և մեռավ: Իր որդին Աշոտ Կյուրապաղատ հաջորդեց Ջևանշերին և հիմ դրեց Բագրատունյաց հարստության: Հետևում է մի նորալուր ծննդաբանություն Ատրներսեհի, որպես թե սրա հայրն էր Ներսեհ, Ներսեհի հայրը՝ Վարազբակուր, սրա հայրը՝ Գուռամ և վերջինիս հայրը՝ Ստեփան I[2]:

Ջևանշերի կենսագիրը չէ հորինել այս ծննդաբանությունը, այլ առել է մի երկից, որի հեղինակն է Սմբատ: Միայն Սմբատի գործում չէ ասված, որ Ներսեհի հայրը Վարազբակուրն էր: Ներսեհ, իր որդի Ատրներսեհ և սրա որդի Աշոտ Կյուրապաղատ կազմում են ուրույն գիծ: Սմբատի նպատակն է եղել իսկապես կապել Ներսեհին Վարազբակուրի և նրա նախնիքների հետ, և Ջևանշերի կենսագիրը իրավունք ուներ Ներսեհին Վարազբակուրի որդի


---

[1] **Վարդան**, էջ 77:

[2] **Վախուշտի**, I, էջ 259:

անվանելու, բայց և այնպես ուշադրության արժանի է, որ Սմբատ այդպես չէ վարվել: Թվում է, թե սա հավատարիմ է մնացել մի ստույգ ավանդության: Ներսեհ անունն այստեղ համազոր է Ատրներսեհի, սրա կրճատումն է: Ճիշտ այսպես Վարդան պատմագիրը Սմբատ թագավորի ժամանակակից Վրաց Ատրներսեհ թագավորին մի անգամ անվանում է Ատրներսեհ, մյուս անգամ Ներսեհ[1]:

Արդ՝ Ատրներսեհի հայր Ներսեհը (իմա՛ Ատրներսեհը) ո՞վ կարող է լինել: Տեսանք, որ Ատրներսեհն եղբորորդի է կոչված Ատրներսեհ Կույրի: **Եղբորորդի** գրչի սխալ է փոխանակ **որդի:** Ատրներսեհի եղբորորդիք էին Տարոնից եկած երեք եղբայրները, որոնց համար չէ ասված, թե Ատրներսեհի եղբայրներն էին: Ասել է, թե Ներսեհ-Ատրներսեհը նույն Ատրներսեհ Կույրն է: Սրանով ուժ է ստանում վերև հայտնած կասկածս, որ Արչիլին դիմող Ատրներսեհը ոչ թե Վասակի որդին է, այլ ինքը՝ Վասակը: Արդարև հետևյալ ճյուղագրությունը՝



ևս վկայում է, որ Ատրներսեհ նույն Վասակն է, սրա վրական անունը: Ստիպողական չէ համառել այս ենթադրության վրա, եթե Վարդան Շապուհից է քաղել այն տեղեկությունը, թե Վասակ և Ատրներսեհ հայր և որդի են: Բայց և անտեսել չենք ուզում վրական կրկնակի ավանդությունը, որ պատահաբար պահվել է որպես վերջին ղողանջ անհետացող ստույգ պատմական հիշողության:

Վրաց Բագրատունիների հայկական ծագումը մոռացվում է կամա, թե ակամա, տեղի տալով նոր զրույցների: Խորենացու տեսությունը, թե Բագրատունիք հրեական ծագում ունին թևավորում է վրաց միտքը հայ և վրացի Բագրատունիների համար ընդհանուր նախահայր գտնելու ջանքի մեջ: Այդ նախահայրը Դավիթ մարգարեն է: Այս միտքը ևս ծագած է նախ հայ գետնի վերա: Ճշմարիտ է, Խորենացին չէ տալիս Դավթի կամ նրա որդու Սողոմոնի

[1] **Վարդան**, էջ 82՝ **Ատրներսեհ**, էջ 87՝ **Ներսեհ:**

անունը, բայց հրեական ծագումն ավետելուց հետո խիստ գայթակղիչ է դառնում կանգ առնել սաղմոսերգու Դավթի և Իմաստուն Սողոմոնի վերա:

Աշոտ Մսակերի որդու Բագարատի որդիներից մեկը կրում էր արդեն Դավիթ անունը: Բագարատ կալանավորվեց 851 թվին, ուստի Դավթի անունը այս թվից առաջ է: Թերևս ավելի հին է Աշոտ Սահակյանի որդու Դավթի անունը, եթե ընդունենք հայր Ակինյանի հետ, որ Վարդանի հիշած Աշոտը չէ Մսակերը, այլ Աշոտ Կույրի հորեղբոր որդի Սահակի զավակը: Նույն 851 թվի շարժումների միջոցին ծանոթ է նաև Սողոմոն անունով մի Բագրատունի իշխան[1]: Վրաց Բագրատունիների մեջ Դավիթ անունը երևան է գալիս առաջին անգամ Աշոտ Կյուրապաղատի որդու Բագարատի († 876) օրով, որի որդին կոչվում էր Դավիթ († 881) և ծնված էր Սմբատ Խոստովանողի դուստրից:

Դավիթ և Սողոմոն անունները արդեն ապացույց են, որ Խորենացու ենթադրությունը հաստատուն հող է գտել և անգամ ճգտում առաջ բերել հրեական ծագումը հասցնելու մինչև Դավիթ մարգարեն և Սողոմոն Իմաստունը, հրեական անցյալի ամենափայլուն դեմքերը:

Այստեղից օգտվել է վրաց ազգայնական միտքը և հերյուրել մի զրույց, նպատակ ունենալով ցույց տալ, որ վրաց Բագրատունիները չեն սերում հայ Բագրատունիներից, այլ որ երկու ճյուղերն էլ միևնույն ծագումն ունեն և միևնույն հնությունը: Ի՞նչ կերպով: Պատասխանը տալիս է Սմբատ որդի Դավթի, անվանենք Սմբատ Դավթյան, որի գործը հրապարակ հանեց վրաց հայտնի բանասեր Ե. Թաղայշվիլի[2]:

Սմբատ սկսել է Ադամից և սրա սերունդն ուղիղ գծով հասցրել մինչև Դավիթ և իր որդի Սողոմոն, որ Ադամի 33-րդ սերունդն է ներկայանում: Այնուհետև շարունակել է գիծը մինչև Քրիստոս, մինչ Հովսեփ և իր եղբայր Կլեոպ, 60-րդ սերունդ: Անունների շարքը համաձայն է Հին և Նոր Կտակարանի տվյալներին: Բրոսսեի հրատարակության մեջ պակաս անուններ կան, բայց խնդիր չէ: Շարքը շարունակել է մեր հեղինակը, հնարել նոր անուններ և հասցրել մինչև ոմն Սողոմոն 88-րդ սերունդ Ադամից: Ահա այս Սողոմոնի յոթ որդիներն են, որ դարձան Բագրատունիների նախահայրեր:

Ուշադրության արժանի է Սողոմոն անունը: Սմբատ ընդունել է շրջուն կարծիքը, թե Բագրատունիք սերում են Սողոմոնից, բայց որովհետև դժվար էր Բագրատունիների սերնդական գիծը տանել մինչև Սողոմոն, նախընտրել է Սողոմոնի գիծը իջեցնել մինչև մի շատ ավելի մերձավոր Սողոմոն,

---

[1] **Թովմա Արծրունի**, Գ, գլ. 14, էջ 230:

[2] **«Ծրնք ժամանակագրության»** (Տրի խրոնիկի) ռուսերեն նյութերի ժողովածու Կովկասի ցեղերի և տեղերի նկարագրության համար (= Սբորնիկ մատերիալով) ռուսերեն պարբերականի 28-րդ (1900) հատորում:

որպեսզի Բագրատունյաց հավակնությունը խելքի մոտ երևա, առանց խախտելու Սողոմոն Իմաստունից սերելու գաղափարը:

Սողոմոնի յոթն որդիները գալիս են Փղշտացվոց աշխարհից Եկլեց գավառը Ռաքայել թագուհու մոտ: Սա նախ մկրտել է տալիս նրանց և փոխում է երեքի անունները, մեկին անվանելով Մոշալե (Մուշեղ), մյուսին՝ Բագարատ, և երրորդին՝ Աբգավար (Աբգար): Սրանցից մեկին թագուհին իր դուստրը կնության է տալիս, մյուս երկուսին խնամեցնում է Հայոց թագավորների հետ: Յոթ եղբայրներից չորսը գնում են Վրաստան: Նրանցից Գուռամը դառնում է իշխան Վրաստանի, Սահակ մեկնում է Կախեթ, և Ասամ[1] ու Վարազվարդ գնում են Կամբեճան, սպանում պարսիկ զորավարին և տիրանում երկրին: Ահա այս Գուռամից է, որ սերում է Վրաց Բագրատունի տոհմը: Գուռամ կյուրապաղատ էր, նրան հաջորդեցին որդուց որդի հետևյալ անձերը.

1 Գուռամ Կյուրապաղատ
2 Ստեփան (եղբայր՝ Դիմիտրե)
3 Ատրներսեհ
4 Ստեփան II
5 Գուռամ II Կյուրապաղատ
6 Վարազ-Բակուր
7 Ներսեհ
9 Ատրներսեհ (եղբայրներ՝ Փիլիպպոս, Ստեփան)
6 Աշոտ Կյուրապաղատ (եղբայր՝ Գուռամ)

Այս շարքի մեջ միայն վերջին երեք անուններն են պատմական և Բագրատունի, ինչպես տեսանք վերև: Մյուսները հնարածո են և առնչություն չունին Բագրատունիների հետ: Միայն մի դեպք է հայտնի, երբ Եկեղյաց գավառը երևան է գալիս նրանց պատմության մեջ: Այս մասին պարագայորեն խոսել ենք այլուր[2]: Այստեղ բավ է հիշել, որ X դարու սկզբում Տարոնում իշխում էր Գրիգոր, կամ ինչպես բյուզանդացիք են անվանում Գրիգորիկ, Բագրատունի իշխանը: Կարող և քաղաքականապես ազդեցիկ մի դեմք էր: Լևոն (886-912) և Ռոմանոս Լեկապենոս (920-945) կայսրերը աշխատում էին թուլացնել նրա արաբական կապերը և ծառայացնել կայսրության շահերին: Գրիգոր ընդունեց, երկար տատանումից հետո, կայսերական հրավերը և գնաց մայրաքաղաք: Լևոն կայսրը ամեն ուշադրություն

[1] Ասամ, թերևս Արշամ անունն է, կամ Սամ:

[2] «Les Taronites en Arménie et à Byzance», «**Byzantion**», t. IX, 1934.

ցույց տվեց, մագիստրոսության մեծ պատվի հետ թոշակ կապեց և մի ապարանք շնորհեց մայրաքաղաքում: Ռոմանոս կայսրի օրով Գրիգոր ցանկություն հայտնեց ապարանքի փոխարեն ստանալ մի կալված Եկեղյաց գավառում: Գրիգոր ստացավ *τὸ προάστειον τοῦ Γρηγορᾶ ἐν Κελτζηνῇ*, այսինքն՝ Գրիգորասի կալվածը Եկեղյաց գավառում:

Գրիգորի հաջորդ և որդի Բագարատը ևս այցելեց մայրաքաղաքը, պատրիկության պատվի արժանացավ և կնության առավ Թեոփիլակտոս բարձրաստիճան պալատականի դուստրը: Այս առթիվ Բագարատ խնդրեց հաստատել իր վերա հիշյալ կալվածը, որ Գրիգորի մահից հետո վեճի նյութ էր դարձել իր և իր եղբորորդիների մեջ: Գրիգորի բացատրությամբ, կալվածն անհրաժեշտ էր որպեսզի արաբական արշավանքների ժամանակ, որոնց ենթակա էր Տարոնը, կարելի լինի այնտեղ ապաստանել: Բագարատը մի հավելյալ հիմ ևս ուներ պնդելու նույն կալվածի վերա, որպես մի ապահով տեղի իր կնոջ, բյուզանդական այդ իշխանուհու համար:

Այս կերպով Տարոնի Բագրատունիները ոտ դրին Եկեղյաց գավառում: Հետևանքը հայտնի չէ: Ուրիշ շոշափման կետ չեն ունեցել նրանք այս գավառի հետ:

Այդ յոթ եղբայրների Եկլեց գալը, եթե միայն ունայն երևակայության պտուղ չէ, այլ խուլ արձագանք որևէ իրողության, այդ իրողությունը կարող է լինել միմիայն հիշյալ դեպքը, մանավանդ որ, մյուս ավանդության մեջ, Ատրներսեհ Կույրի երեք եղբորորդիք տարոնցի էին: Այս պարագային մեր զրույցը պետք է հորինված լինի ուշ, քան Լեկապենոսի ժամանակը և այնքան ուշ որ իրողությունն աղոտանար հիշողության մեջ և տեղափոխվեր մոտիկ անցյալից հին դարերը:

Հնության նշան չէ բնավ ևս այն, որ յոթ եղբայրներից երեքը գնում են Կախեթ և Կամբեճան: Կախեթի իշխանները, որ քորեպիսկոպոս էին կոչվում հայտնի են հանվանե IX դարից մինչև XI: Նրանք Բագրատունի ծագում չունեին: Բագրատունիք կոխեցին Կախեթի և Հերեթի հողը և նվաճեցին Բագարատ III և IV թագավորների օրով XI դարի առաջին կեսում[1]: Զրույցը նպատակ ունի հաստատելու թե Բագրատունիք հնուց ժառանգական իրավունք ունեն հիշյալ երկրների վրա:

Հայ Բագրատունիների նախահայրերն իրենց Մուշալե, Բագարատ և Աբգավար անուններով այլ բան չեն հաստատում, քան հեղինակի կատարյալ անգիտությունը: Աբգավար, աղճատումն Աբգարի, ծանոթ է նրան անտարակույս Խորենացուց: Մուշալե, հունական ձևն է Մուշեղի, *Μωσαλέ*, որ Մամիկոնյան անուն է և հայտնի է հեղինակին երևի *Διήγησις* գրվածքի վրացերեն թարգմանությունից: Մեծ հնարագիտություն չկա Բագրատունի-

[1] **Brosset**, I, էջ 299 և 317-318:

ների նախահոր Բագարատ անվանելուն մեջ: Զարմանալի է, որ Վրաց Բագրատունիների նկատմամբ համապատասխան անունով նախահայր չէ նշանակել և ոչ էլ բացատրել, թե ինչո՞ւ Գուռամի սերունդը պիտի Բագրատունի անունը կրեր: Թագավորազն Վախթանգ նկատել է այս բացը և փորձել է լրացնել իր անձնական ենթադրությամբ, ինչպես կտեսնենք ստորև:

Այսպես, թե այնպես Բագրատունիների նախահայրը Գուռամն է, հրեա Սողոմոնի որդին: Կեղծիքը կանգ չէ առել: Լավ չէ՞ր լինի, որ Գուռամ մի կերպ ազգակից, արենակից լիներ նաև մեծ թագավոր Վախթանգին: Հարկավ ցանկալի էր ազգային զգացումի տեսակետից: Գայթակղիչ միտքը իրականացել է: Գտել են, որ Գուռամ հրեա էր միայն հոր կողմից, իսկ մոր գծով բուն վրացի էր, լինելով Վախթանգի դստեր որդի, այսինքն՝ աղջկաթոռը: Հետևապես Սողոմոն հրեան ամուսնացած է եղել Վախթանգի դստեր հետ: Սակայն Սողոմոնը չէր եկել Փղշտացվոց աշխարհից Վրաստան, այլ միմիայն իր յոթ որդիք: Կեղծարարի փույթը չէ: Այս գյուտն անելուց հետո, բնական է, որ Գուռամ իշխած լիներ Վախթանգի հաջորդների կարգին: Արդարև նա հաջորդ է նշանակված Բակուր III-ի, որ Վախթանգի թոռան թոռնորդին էր, այսինքն՝ հինգերորդ սերունդը: Գուռամի միջամտությունը խանգարում է Վախթանգի հաջորդների կարգը և շփոթություն է ծագում սրանց և Գուռամի սերունդի հաջորդականության մեջ, ինչպես կտեսնվի հետևյալ աղյուսակից:

Վ ա խ թ ա ն գ

1 Դաչի	Դուստր
2 Բակուր II	
3 Փարսման V	
4 Փարսման VI	
5 Բակուր III	
	6 Գուռամ Կյուրապաղատ
	7 Ստեփան I
8 Ատրներսեհ	8 Ատրներսեհ
9 Ստեփան II	9 Ստեփան II
10 Միհր	10 Գուռամ Կյուրապաղատ
11 Արշիլ	11 Վարազբակուր
12 Յոհան և Ջևանշեր	12 Ներսեհ
	13 Ատրներսեհ
	14 Աշոտ Կյուրապաղատ

Ութերորդ և իններորդ անունները, Ատրներսեհ և Ստեփան գտնվում են թե՛ մեկ, թե՛ մյուս գծի վրա: Ո՞րն է ճիշտը: Ատրներսեհ Բակուր III-ի որդի՞ն է, թե Ստեփանի: Ուրիշ խոսքով, ո՞վ ումնից է առել: Վախթանգի սերնդաբանության հեղինակը Լեոնտիոս եպիսկոպոսն է, մյուսինը՝ Սմբատ Դավթյան: Տարաբախտաբար սրանց հարաբերական հնությունը հայտնի չէ ստուգորեն: Լեոնտիոսի գործի հայ թարգմանության մեջ Գուռամ չի հիշվում: Ստեփան ընկնում է Թիֆլիսի պաշարման ժամանակ: Իսկ Ատրներսեհի մասին ասված է «յազգէ Դաչէի», ուրեմն որդի Բակուր III-ի (որ ևս չի հիշվում, երևի մոռացված է): Յոհան և Ջևանշեր իշխանների նայող հատվածի մեջ ևս Ատրներսեհ և Ստեփան չեն հիշատակված Գուռամի գծի վերա. և Վարազբակուրը համարվում է Ստեփան I-ի որդին: Այս երկու պարագաները հիմ են տալիս կարծելու, որ վիճելի անուններն առաջին գծից են անցել երկրորդը: Վախթանգյան Ատրներսեհին և Ստեփանին զուգակշռում են իսկապես Գուռամյան Գուռամ II և Վարազբակուր, և հետևյալ երեք անձերին, Միհրին, Արչիլին և Ջևանշերին՝ Գուռամյան Ներսեհ, Ատրներսեհ և Աշոտ Կյուրապաղատ. Ատրներսեհ և Ստեփան անցել են Գուռամի գիծը և Ներսեհ, Ատրներսեհ և Աշոտ գրավել են Միհրի, Արչիլի և Ջևանշերի տեղերը:

Այս կետում Սմբատ Դավթյանի և Լեոնտիոս եպիսկոպոսի մեջ ներքին մի կապ կա: Եվ կապը նշմարվում է նաև այլուր: Լեոնտիոս հաշվում է Ադերկ իշխանից մինչև Գուռամ I երեսուն իշխան: Ադերկ Փառնավազի 10-րդ հաջորդն է, իսկ Գուռամ 39-րդ: Ադերկ ապրում էր Քրիստոսի ծննդյան տարիներին: Արդ Սմբատ Դավթյանի հաշվով, Սողոմոն հրեաց 29-րդ սերունդ կամ ծունկ էր աստվածահոր Հովսեփից և սրա եղբոր Կլեոպից սկսած, Գուռամ I, ուրեմն 30-րդ սերունդը: Այս զուգադիպությունը դիպվածական լինել չի կարող, մեկը ձևած է մյուսի վերա: Եթե ամեն մի ծունկ համարենք քսան տարի կստանանք Քրիստոսի ծննդից մինչև Գուռամ 600 տարի և որովհետև Լեոնտիոս տալիս է նրան 25 տարի իշխանություն, ուրեմն Գուռամ իշխել է 575-600 թթ.: Այս է Լեոնտիոսի կեղծ ժամանակագրության բանալին: Երեսուն ծունկների մերձավոր վեցհարյուր տարին բաժանել է երեսուն առասպելական թագավորների մեջ, տալով ամեն մեկին կամայական մի թիվ, մեծ մասամբ տասնևհինգական տարի, ավելի երկար իշխանություն վերապահելով քանի մի նշանավոր անձերի:

Լեոնտիոսի երեսուն թագավորները և Սմբատ Դավթյանի նույնաչափ թվով հրեա ծունկները մինչև Գուռամ ելած են միևնույն մտավոր գործարանից: Ակամայից կասկած է ծագում, արդյո՞ք Սմբատ Դավթյանը մի ուրիշ կեղծանուն չէ նույն հնարագետ Լեոնտիոս եպիսկոպոսի, ինչպես էր Ջևանշեր Ջևանշերյանը:

Գուռամ պատմական դեմք չէ, այլ երևակայության ծնունդ, իսկ նրա

Բագրատունի ծագումը հերյուրված է այնպիսի անարվեստ կերպով, որ կեղծարարն անտեսել է, թե ինչո՞ւ Գուռամի սերունդը Բագրատունի է կոչվում: Այս անպատեհ լռությունը շփոթել է Վախուշտին և սա պատրաստ է լրացնել պակասը, իր կողմից նոր դեմքեր ստեղծելով: Հավանական է համարվում, որ Գուռամ Կյուրապաղատը չէր Վախթանգի փեսան, այլ իր պապը, որ, երևի, նույնպես Գուռամ էր կոչվում և որի որդին էր Բագարատ: Գուռամ Կյուրապաղատը լինելով այս Բագարատի որդին կրել է հոր անունը և ավանդել իր տոհմին:

Սողոմոն հրեայի զրույցը նմանություն է Խորենացու հիմնովին սխալ տեսության, թե Բագրատունիները հրեական սերում ունին: Զրույցը հորինված է ոչ առաջ, քան XI դար: Յոթ եղբայրներից երեքը, որ Հայք են գնում, ներկայացնում են Բագրատունի երեք ճյուղը Հայաստանում, Անի, Կարս և Տաշիրք (Կյուրիկյան): X դարու երկրորդ կեսին երևան եկան Կարսի և Տաշիրքի Բագրատունիք: Իսկ Վրաստան ուղղված չորս եղբայրները արձագանք են նույն տոհմի չորս ճյուղավորման, որ վերաբերում է XI դարու սկիզբներին:

Պատմության համար միակ արժեքավոր նյութ մնում է այսպիսով միմիայն Ատրներսեհ Կույրի ավանդությունը: Ստույգ արտացոլք է պատմական իրողության, Ատրներսեհ Կույրը անդրադարձումն է Աշոտ Կույրի, և Կույրի որդին (և ո՛չ եղբորորդի) Ատրներսեհը ինքը Վասակն է: Ինչո՞ւ Աշոտ և Վասակ անունները տեղի են տվել Ատրներսեհի: Կույր դիպվածո՞վ թե որևէ հիմ կա: Վասակի Վրաստան քաշվելու միջոցին այնտեղ իշխում էր Ատրներսեհ անունով մի իշխան և որի որդին կոչվում էր Ներսեհ: Սա մի արաբ ծառա ուներ, որ քրիստոնեություն էր ընդունել և մեռավ մարտիրոսական մահով հունվարի 7-ին 786 թվին: Անունը Աբո էր, որի հիշատակը ցայժմ տոնում է վրաց եկեղեցին[1]: Ինչպես տեսանք ուղիղ նույն օրը նահատակվեցին և Արծրունի երկու եղբայրները ու նաև վրաց մի իշխան: Արդյո՞ք Արչիլն էր այս իշխանը, թե Աբո, խնդիր չէ: Հնարավոր է, որ երկուսն էլ նահատակված լինեն միաժամանակ: Արչիլ թերևս իշխում էր Վրաստանի մի մասի վերա, իսկ Ատրներսեհ՝ մի ուրիշ մասի: Եթե անգամ հավատանք, որ Ատրներսեհ Կույրի որդուն ընդունողն Արչիլն էր, ներելի է մտածել, որ ժամանակակից վրաց Ատրներսեհ իշխանի և իր որդու Ներսեհի անունները կառչել են Աշոտի և Վասակի վերա, ձուլելով այսպես այս անձերը:

Ուշադրության արժանի է նաև Վասակ-Ատրներսեհի դստեր անունը, Լատավրե: Ի՞նչ է նշանակում այս խորք անունը: Որքան մեզ հայտնի է որևէ մեկնություն չէ առաջարկված, ուստի ավելորդ չենք համարում, հարկ եղած վերապահությամբ, հայտնել մի ենթադրություն:

[1] **Brosset**, I, էջ 262:

Հայ-պարթև **հրապարակ** բառը դարձել է վրացերենում **լապարակի**, այսինքն **հր** փոխվել է **լ**-ի: Հետևապես Լատավրե կարող է կշռել հայ-պարթև **Հրատավրի**, ուր առաջին մասը սղումն է Հրահատ անվան, որ ավելի սեղմ Ռատ ձևով ընդունված էր Օրբելյան տոհմի մեջ[1]: Այդպես էր կոչվում Լիպարիտի որդին: Կեդրինոսի մոտ Ռատ դարձել է *Ὀράτιρ* անշուշտ, Հորացիոս անվան ազդեցության տակ: Հրահատ Կամսարականի անունը Պրոկոպիոս տառադարձել է *Ἀράτιος*[2] Հրատ-ավրի երկրորդ մասը այլ բան չէ, քան հայ-պարթև **-ուհրի**: Հայ թարգմանության մեջ կարդացվում է Լատորի: Այսպիսով կստանանք Հրատուհրի, այսինքն՝ Հրահատուհրի (հետագայում Հրահատուհի) իշխանական անունը:

Ստուգաբանության նպաստավոր է նաև այն պարագան, որ Վասակի եղբայր Սմբատ ամուսնացած էր Հրահատ Մամիկոնյանի թոռան հետ, դուստր Մուշեղի և քույր Սամուելի, որ ընկած 775 թվի կռվին: Սմբատի կինը կարող էր կոչված լինել իր պապի անունով Հրահատուհրի, կամ Հրատուհրի, ինչպես սովորություն էր: Նույն անունը կարող էր անցնել և Վասակի ընտանիքին, նախարարական միջավայրում տիրական սովորույթի համաձայն:

Հրեա Սողոմոնի երկրորդ որդին Սպանդիատ ևս համարվում է Բագրատունիների նախահայր: Սպանդիատ հրեական անուն չէ և իր կրողը չէ կարող հրեական ծագում ունենալ և Հրեաստանից եկած լինել Վրաստան: Անտարակույս մի շփոթություն կա այս ավանդության մեջ: Դավիթ մարգարեն Աբիտալա (մեր թարգմանության մեջ Ամիտալա) կնոջից մի որդի ուներ Սափատիա անունով: Մարկվարտ կարծում է, որ վրացիք Սափատիա անվան մեջ տեսել են Սպանդիատ և հերյուրել սրա նախահայր լինելու գրույցը: Սակայն Խորենացու մոտ Սպանդիատի մասին հիշատակություն չկա: Հրեական օրենքը թողնելուց հետո Բագրատունիները, մեր Հոր (3) ասելով, խժական անուններ էին կրում, ինչպես Բյուրատ, Տրդատ (և ո՛չ Սմբատ, ինչպես տպագրված է)[3]:

Առաջ նրանց սովորական անուններն էին՝ Բագաղիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Եճանոս: Ապա այն կարծիքն է հայտնում, որ այս անուններից մնացել են Բագաղիա, Ասուդ, Վազարիա և Շամբաթ, այլափոխված՝ Բագարատ, Աշոտ, Վարազ և Սմբատ ձևով:

---

[1] Թալինի մի արձանագրությունից ծանոթ է **Հատ**., սղումն Հրահատի, **«Վիմական տարեգիր»**, էջ 2:

[2] **Կեդրենոս**, II, 572, **Պրոկոպիոս**, II, 59:

[3] Այս անունների մասին խոսում է Խորենացին Տրդատ Բագրատունի ոմն ցոփ իշխանի արարքի առթիվ հանդեպ Նազենիկ վարձակ կնոջ: Ահա այս Տրդատ անունն է խժական համարում նման Բյուրատի: Տպագրի Բյուրատ և Սմբատ պետք է ուղղել Բյուրատ և Տրդատ, ինչպես ունեն քանի մի ձեռագիրներ:

Սպանդիատ անունով Բագրատունի անծանոթ է Խորենացուն, ինչպես վրաց մատենագրության մեջ: Մի Սպանդիատ Բագրատունի է հիշվում անցյալում, 505 թվին ժողովի ժամանակ, և միմիայն: Այս միակ օրինակով Սպանդիատ չէր կարող Բագրատունի տոհմական անունների կարգն անցնել և նյութ տալ զրույցի:

Ավելի հավանական է կարծել, որ Սպանդիատ գործ չունի Դավթի հետ, այլ մի ավելի հին զրույցի բեկոր է նույն Բագրատունիների ծագման վերաբերյալ: Սպանդիատ միջին պարսիկ ձևն է Ավեստայի Սպենտադատա անվան, որ նշանակում է սրբատուր, ուր սուրբը ինքն Արամազդն է: Նույն անվան պարթև համազորն է Սպանդարատ: Իրանի մեծ հերոսներից մեկն է Սպանդիատ, Վշտասպի եղբայրը և որին սպանեց Ռուստամ: Այս հերոսն իր տեղն ունի Արշակունիների և անգամ Սասանյանների սերնդաբանության մեջ: Սպանդիատ կրում է Պահլավ մակդիրը, որով վկայում է իր հավակնությունը նախահայր լինելու Արշակունի տոհմին: Հայ Կամսարականների մեջ ընդունված է, Սպանդարատ անունը: Կամսարական տունը պահլավ ծագում ուներ և, թերևս, նոքա նույնպես արենակից էին համարվում Սպանդիատ հերոսին:

Արդ անսպասելի չէ, որ նախքան Խորենացու գայթակղիչ գյուտը, Բագրատունիները նախահայր ընտրած լինեին նշանավոր իրանական հերոսին, Սպանդիատին: Իշխանական տոհմերը՝ հայ, պարսիկ, անգամ արաբ, սնապարծ սովորություն ունեին, կեղծ ծննդաբանությամբ հանել իրենց ծագումը որևէ հինավուրց և ժողովրդական դյուցազնից: Բագարատ անունը հնագույն Բագադատա ձևով երևան է գալիս առաջին անգամ բուն Պարսկաստանում, այսինքն՝ Փարսիստանում, 220 թ. նախքան Քրիստոս: Փարսիստանը լինելով Աքեմենյան հարստության օրրան, հնուց վայելել է արտոնյալ վիճակ, և պահել հայտնի չափով ինքնավարություն ոչ միայն Աքեմենյան, այլև Պարթևական շրջանում: Առաջին իշխանը կոչվում էր Բագադատա, որտեղից պարթև Բագարատ ձևը: Սա ևս նշանակում է Բագա-տուր, ինչպես Սպանդիատ՝ սրբատուր, ուր **բագա** «աստված» նույն Արամազդն է: Դարեհ Նախշ-ի-Ռուստամի արձանագրության մեջ կոչում է Արամազդին **Բագա վազրակա,** «աստված մեծ»:

Բագրատունիների անունը շոշափման կետ ունի Սպանդիատի հետ և այս կարող էր թելադրել արենակցական վերջավորության համապատասխան զրույց:

Վրացի կյուրապաղատները գուցե և աղոտ հիշողություն ունեին Սպանդիատի նայող հին զրույցի և բնականորեն ձուլել են հին հերոսին Խորենացու առաջարկած նոր և հրապուրիչ Դավթի հետ և ստեղծել զույգ նախահայրեր: Բնական է հարց տալ, արդյո՞ք այս կարգի շշունջների դեմ չէ

ուղղված Անանունի այնքան վճռական ձայնը, թե Բագրատունիք սերում են Արամանյակի որդիներից: Ասել է, թե այս նշանավոր տոհմը օտարածին չէ, այլ բուն ազգային: Ափսոս որ Անանուն չէ բացատրում, թե ի՞նչ հիմ ուներ իր տեսակետը: Այս պակասը, հարկավ, պիտի դյուրացներ Խորենացու հերքումը, թեև Պատմահոր նոր կարծիքն ևս այլ հիմ չունի, քան ստուգաբանական սխալ մերձեցումներ:

Անանունի տեսությամբ, Արայի մահից հետո Հայաստան ընկավ Ասորեստանի իշխանության տակ մինչև Սենեքերիմի սպանությունը: Այս միջոցին հայերն ապստամբեցին և երկրի տեր դարձավ Արամանյակի որդիներից Զարեհ և ապա հաջորդաբար Արմոգ, Սարհանգ, Շավարշ և Փառնավազ: Վերջինս հնազանդվեց Նաբուգոդոնոսորին, և մնացին Բաբելացիների, հետո Մարաց և Մակեդոնացիների իշխանության տակ մինչև Պարթևաց երևալը: Երբ առաջին Արշակունի թագավորն եկավ Մծբին, նրան ընդառաջեց Բագարատ Փառազյան և պսակեց հայրենի թագով, տալով նաև իր դուստրը կնության:

Անտարակույս Ս. Գրքի ազդեցությամբ է, որ Անանունը հինգ թագավոր, թե իշխան է նշանակում Սենեքերիմից մինչև Նաբուգոդոնոսոր, որպիսի ժամանակամիջոցում հրեաները ունեցան նույնչափ թագավոր՝ Եզեկիա, Մանասե, Ամոն, Հովսիա և Հովակիմ:

Զարմանալի է, որ Բագարատ Փառազյան, որ ժամանակակից էր Նաբուգոդոնոսորի, ուրեմն ապրում էր յոթներորդ դարում նախքան Քրիստոս, տակավին կենդանի էր Արշակունի թագավորի Մծբին ժամանելու միջոցին, մոտավորապես երկրորդ դարի կեսերին: Անանուն չգիտե Արտաշեսյան կամ Տիգրանյան հարստությունը, կամ ավելի ճիշտ, ձուլել է Արշակունյաց հարստության հետ: Փառնավազի որդիք են Բագամ և Բագարատ. Բագարատի որդին Բյուրատ և սրա որդին Ասպատ: Բագարատի որդիք ժառանգեցին արևմտյան կողմում Անգեղ տուն. Բագարատը կոչեցավ և Անգեղ, որ է բարբարոսների աստված:

Չնայելով, որ Բագարատի որդիք սերում են Զարեհից, նրանք չեն կրում Զարեհի անունը: Բագարատը Փառազյան (այսինքն՝ Փառնավազյան) է կոչված, բայց նրա որդիք, այսինքն՝ Բագրատունիք, որակված են որպես որդիք Բագարատի և ո՛չ Փառնավազի և ո՛չ էլ Զարեհի: Ակներև է, որ հեղինակի աչքում ևս Բագարատն է իսկապես նախահայր իր անունը կրող տան Բյուրատ և Ասպետ պատվանուններով, իսկ Բագարատ - Զարեհ գիծը արվեստական շենք է:

Մեզ հետաքրքրում է Փառնավազ անունը, բայց նրա արժեքը գնահատելու համար պետք է գաղափար ունենալ նաև մյուս անունների էության վերա:

Զարեհ որպես հայ անկախության հիմնադիր հիշեցնում է պատմական մի պատկառելի դեմք, Զարիադրեսը (այս անվան պարթևական ձևն է Զարեհ), որ հիմնեց Ծոփաց թագավորությունը այն ժամանակ, երբ իր զինակից Արտաքսիաս (Արտաշես) անկախ հռչակեց Արևելյան Հայաստան: Դեռ ևս չորրորդ դարում Ծոփաց մի իշխան կրում էր նույն Զարեհ անունը: Երկիրը չէր կորցրել իսպառ անցյալի հիշողությունը:

Մյուս կողմից Զարեհ որպես ժամանակակից Սենեքերիմի, ուրեմն շատ ավելի հին դեմք, կարող է համեմատվել իրանական մի հռչակավոր հերոսի հետ, որ կոչվում էր Զարիադր: Սա Վշտասպի եղբայրն էր, ինչպես Սպանդիատը: Ալեքսանդր Մակեդոնացու պատմագիրներից մեկը[1] ավանդում է, որ Վշտասպը թագավորեց Մարաստան և ստորին երկիրների վերա, իսկ Զարիադր, որ կրտսեր եղբայրն էր, ուներ իր իշխանության տակ Կասպից պահակից վեր մինչև Տանայիս գետը (= Դոն գետը), ուրեմն Կովկասյան երկիրները:

Կարելի էր կարծել, որ Զարեհ այս երկու Զարիադրների, հեռավոր անցյալի այս երկու դեմքերի, միացյալ ստվերն է, որ մի հրաշքով հասել է մինչև Անանուն: Սակայն վերջինս մեծ վստահություն չէ ներշնչում, նրա հորիզոնը սահմանափակ է և կարողությունը այնքան հեռուները չէ գնում:

Ավելի հավանական է ընդունել Մարկվարտի հետ, թե Անանուն հանել է Զարեհ անունը Զարեհ - ավանից, որ գտնվում էր Բագրատունյաց կալվածում, Բագավանի մոտ: Այս վերջնից էլ հանել է Բագամ անունը: Շավաշ, կամ Շավարշ նույն կերպով կապված է Շավարշան-ի հետ[2]: Համամիտ չենք Մարկվարտին, թե Անգեղ տուն ասելով Անանուն հասկանում է Անգղ բերդը Ծաղկոտ գավառում: Անանուն գիտե Անգեղ տուն արևմուտքում, որ բյուրիմացության տեղիք չի տալիս: Ս. Գրքից նրան հայտնի է, որ Անգեղ անունով աստված կար բարբարոսների մոտ: Բագարատ համեմատելով բագին բառի հետ դժվար չէ նրան կռահել, որ Բագարատ անվան մեջ աստուծո գաղափար կա, ուստի և նույնանիշ է համարում Անգեղ և Բագարատ: Անգեղ տնից է, որ Բագարատ Փառազյան գնաց դիմավորելու Արշակունի թագավորին Մծբնում: Նկատենք անցողակի, որ Անանունի արտահայտությունից հետևում է, որ ինքն ապրում է Հայաստանի արևելյան մասում, հավանորեն Բագրատունյաց ոստանի, Դարոյնքի շրջանում: Բագրատունիք լքեցին Դարոյնք (այժմյան Բայազիտ) Աշոտ Մսակերի օրով († 826): Եթե ճիշտ է, որ Անանունի ստեղծած Զարեհ, Բագամ, Շավարշ

---

[1] **Զարեհ Միտիլենցի**, Fontes historiae religionis Persicae coll. **C. Clemen**, էջ 25:

[2] Շավարշ կրճատ ձևն է Շավարշունի, որ նշանակում է «սև արու ձի ունեցող», ինչպես Շավասպ նշանակում է «սև մատակ ձի ունեցող»

անունները կապ ունին Դարոյնքի շրջանի ավանների հետ, ինչպես ընդունում է Մարկվարտ, ապա ընդունելի չէ նրա կարծիքը, թե Անանուն ժամանակակից էր Բագարատին († 851)[1]: Անանուն առաջ է, քան Մսակեր, առաջ, քան Դարոյնքից տեղափոխվիլն Արշարունիք:

Ուշագրավ են մեր նյութի համար Արմոգ և Փառնավազ անունները: Սարհանգ, որ պարսկերեն հերոս է նշանակում, առանձին հետաքրքրություն չունի: Ուշագրավ է որովհետև Արմոգ եթե սրբագրվի Արտոգ կիիշեցնի Վրաց թագավորի անունը *Արտώκης*: Այսպես էր կոչվում Տիգրան Մեծի ժամանակակից Վրաց թագավորը: Փառնավազ, հին ձևը Փառնաբազ, ևս Վրաց թագավոր էր Տիգրան Մեծի որդի Արտավազդի ժամանակ, *Փարνάβαζος* որ նշանակում է փառաբազուկ: Արմոդ անունը կարելի է անտեսել, քանի որ հավաստի չէ, մանավանդ որ *Արտώκης* ևս հաստատուն ընթերցուած չէ, այլ վիճելի է, *Արտώκης* է՞, թե *Արտάκης*: Կանգ առնենք Փառնավազի վերա:

Փավստոս միակ պատմագիրն է, որ ծանոթ է այս անվան. «զՓառաւազեանսն հրամայ տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց»: Նա է դարձյալ, որ պահել է ինչ-ինչ հիշողություններ Տիգրան Մեծի մասին: Որտեղի՞ց է քաղել այդ հիշողությունները, հայտնի չէ: Հավանորեն միևնույն գրավոր, թե բանավոր աղբյուրից գիտե և Փառավազյան անունը: Թերևս մի ավելի հին Փառավազ է եղել, քան այն, որ ժամանակակից էր Արտավազդին և նա՛ է, որ տվել է իր անունը տոհմին:

Արտաշեսյան հարստությունը, Անանունի մոտ, ծուլված է հաջորդ Արշակունի տան հետ և համարված Արշակունի: Ավելի հին է կարծում նույն հեղինակը Բագրատունի տոհմը, որ թեև սերում է Արմանյակյան Զարեհից, բայց բուն նախահայրը Բագարատն է, որին անվանում է որդի Փառնավազի: Ի՞նչ է նշանակում այս արենակցությունը, եթե այս Փառնավազը Վրաց թագավորական տան անդամ է: Տիգրան Մեծ Ասորիքը նվաճելուց հետո փոխարքա կարգեց այնտեղ մի անձ, որ կոչվում էր Բագադատ, այսինքն՝ Բագարատ, որ հավանորեն Բագրատունիների նախահայրն է: Փառնաբազ Վրաց թագավորն էլ այդ ժամանակներն էր ապրում: Անանունի տրամադրած նյութերը այնպիսի որակի չեն, որ կարելի լինի ենթադրել նրա մոտ հեռավոր անցյալի մի հավատարիմ ղողանջ և Փառնավազի մեջ տեսնել հին Փառնաբազի պատկերը կամ կարծել, որ առաջին Բագարատն այդ անունն հայր կարող էր ունեցած լինել: Անանունի Փառավազյանն իրապես այլ ոք չէ, քան Փավստոսի ծանոթ Վրաց թագավորական տունը և այստեղից գիտե նա այդ անունը: Իսկ թե ինչո՞ւ Փառավազին Բագարատի հայր լինելու

[1] «Caucasica», fasc, 2, 1930.

պատիվն է տված, պետք է կարծել, որ այս դեպքում ևս Անանուն, իր սովորության համեմատ, աշխարհագրական մերձավորությունը վեր է ածել ցեղականի: Հայտնի է, որ Սպեր գավառը Ճորոխի հովտում կազմում էր Բագրատունիների սեպհականությունը, որով նրանք դրացի էին վրական հողերին: Հնագույն վրական իշխանական տունը հայ մատենագրության մեջ Փավստոսի հիշած Փառավազյանն է: Սպերը, վրական հողերի մի անկյունը, թարգմանվել է Անանունի մտքում որպես թե նրա տեր Բագարատը լիներ որդի նույն հողերի տեր Փառնավազի: Ուրիշ մեկնություն չենք գտնում, ինչպես չէ գտել և Մարկվարտ: Բախտախնդրություն կլիներ բառացի հասկանալ և արյան կապ դրտնել Բագրատունիների և Փառավազյանների մեջ և կամ հետևցնել, թե Անանունին ծանոթ էր Բագրատունիների հաստատվելը Կղարջքում:

Անանունի առեղծվածը դեռ լուծված չէ, բայց նա այդքան ուշ հեղինակ չէ: Նրա հարցը կապված է Խորենացու խնդրի հետ: Պատմահայրը շատ բան է պարտական Անանունին: Սրա պարզ, բայց հանճարեղ մտքի սերմերն են, որ այնպես խնամքով հնձել է Խորենացին, հակառակ իր արհամարհական վերաբերումին:

Անանուն գիտակցորեն շեշտում է Բագրատունիների Հայկյան ծագումը և զգուշությամբ հակադրում Մամիկոնյանների օտարածին ծագման, «քանզի ոչ են սոքա որդիք ազգածնինն Արամանեկայ, այլ են եկեալ ի Ճենաստանէ»: Ինչ որ Անանուն պատմում է Մամիկ, Կոնակ և Ճենբակուրի մասին պատմական երաշխիք չունի: Մամիկոնյան տան ճենական ծագումի լուրը գիտե նա Փավստոսից: Մամիկ և Կոնակ անունները հանած են **Մամ**-*ի*-**կոն** անվան ընդգծված մասերից: Մամիկոնյանների նախահայր եղբայրները որպես թե եկած են Հայաստան Խոսրով Հայոց թագավորի և Արտավան Պարթևի ժամանակ: Անանուն որպես թե առիթ է ունեցել խոսելու այս մասին Խոսրով արքայի մոտ եկած ճենական մի պատգամավորի հետ: Եթե այս Խոսրովը Պարսից թագավոր հռչակավոր Ապրվեզն է, Անանուն պետք է VII դարու հեղինակ համարվի:

Փավստոս հիշում է Մամիկոնյանների ճենական ծագումը նրանց գովելու, պանծացնելու նպատակով: Լինելով ճենական թագավորի ցեղից նրանք ոչնչով պակաս չեն Արշակունիներից: Մինչդեռ Անանունի աչքում օտարածին Մամիկոնյանն այնքան վստահելի չէ, որքան ազգածին Բագրատունին: Վեցերորդ դարու վերջերին ծագած ապստամբական շարժումները, որոնց առաջնորդները Վարդան և Մուշեղ Մամիկոնյաններն էին, հաճելի չեն Անանունին: Այդ խռովությունները իրենց աղետաբեր հետևանքներով հակապատկեր են Սմբատ Բագրատունու պարսկական հաշտ քաղաքականության միջոցով ստեղծած խաղաղ վիճակին: Կարելի էր

հավատալ, որ Անանուն իրոք Սմբատի և իր հովանավոր Խոսրով Ապրվեզի ժամանակակից գրիչ է:

Սակայն կան երևույթներ, որոնք չեն արդարացնում այս եզրակացությունը: Բավական է հիշել Բյուրատ և Ճենքակուր անունները: Բյուրատ անունը երևան է գալիս առաջին անգամ ութերորդ դարի սկզբներին: Ասողիկ մի անծանոթ աղբյուրից հայտնում է, որ բյուրատյան էր կոչվում Սմբատ Կյուրապաղատ, այն իշխանն, որ Կաղանկատվացու վկայությամբ մեռավ 727 թվին: Անանուն և նրա հետևությամբ Խորենացին ըմբռնել են բյուրատյան որպես որդի Բյուրատի և վերջինս դարձել է նրանց մոտ հատուկ անուն: Զարմանալի է, որ վրացիք պահել են Բիվրիտիան, այսինքն՝ Բյուրատյան ձևը, թեև Խորենացուց գիտեն այդ անունը[1]: Խնդիրը մնում է բաց, թե Սմբատ Կյուրապաղատ ինքն էր վաստակել Բյուրատյան տիտղոսը, թե ժառանգել էր իր հորից, ուրեմն ենթադրելով, որ հայրը կոչվել է Բյուրատ: Սմբատի հայրը Վարազտիրոցն էր և ոչ Սմբատ, ինչպես սխալմամբ նշանակում է Հովհաննես Կաթողիկոսը: Այս Վարազտիրոցի մասին ուրիշ բան չէ հայտնի, քան այն, որ սպանվել է հոռոմների կողմից և հետևապես անկարելի է որոշել, թե ի՞նչ գործերի համար պետք է տիտղոս ստանար: Գիտենք, որ Սմբատ Գուրգան մարզպան արժանացավ Խոսրով-Շում պատվավոր տիտղոսի, որ նշանակում է Խոսրովի ուրախություն: Նրա որդին Վարազտիրոց ստացավ նույն Պարսից թագավորից ավելի շողշողուն կոչում, որպիսին է Ջավիտյան-Խոսրով, «հավիտյան-Խոսրով»: Վարազտիրոցի որդին Սմբատ ևս կարժանանար նման պատվի, եթե չխորտակվեր Պարսից պետությունը: Սմբատ սկզբում գտնվում էր կայսերական ծառայության մեջ և կարգվեց դրունգար, ապա բռնեց Թեոդորոս Ռշտունու տեղը, հետո Գրիգոր Մամիկոնյանի հետ պատանդ գնաց արաբների մոտ և վերադարձավ 662 թվին: Սրա որդին էր Վարազտիրոց «զոր սպանին Հոռոմք», Սմբատ Բյուրատյանի հայրը[2]:

Անանուն և Խորենացի Բյուրատյան հասկացել են որպես որդի Բյուրատի: Վերջնիս մոտ Սմբատ Բագրատունին որդի է «Բիւրատայ Բագրատունւոյ»: Եթե այսպես հասկացվի, պետք է ընդունել, որ Սմբատ Բյուրատյանի հայրը՝ Վարազտիրոց կոչվել է Բյուրատ: Նրա բոնի մահը թերևս

---

[1] **Brosset**, I, 66, Սմբատ **Բիվրիտիան** սպանեց Երվանդին և հաստատեց Արտաշանին գահի վերա: Վրացին ծանոթ է Խորենացուն, որտեղից քաղում է այս տեղեկությունը, միայն ուշագրավ է, որ խուսափում է Սմբատին, որ Բյուրատ Բագրատունու որդին է, անվանել Բագրատունի, այլ որակում է **Բիւրատեան** անունով: Նպատակն է չհակասել ինքն իրեն Բագրատունիների ծագման խնդրում: Մի ուրիշ տեղ, էջ 163, Վախթանգի բերանով ասում է. «Դուք, Հայերդ, Արշակունիք, **Բիվրիտյան** բդեշխներ, մոռացե՞լ եք Գրեգոլ Պարթևին»: Վախթանգի մեծամեծներից մեկը, Օձխրեի տերը ոմն **Բիվրիտիան** է, էջ 183, 200:

[2] Այս ծննդաբանությունը հետևում է **Սեբեոսի** և **Ղևոնդի** վկայություններից:

ապացույց համարվի, որ նա արիական ելևել է ունեցել կայսերության դեմ, քաջագործություններ գործել և կոչվել բյուրատ:

Բյուրատյան հիշեցնում է արտաքուստ ջավիտյան, բայց իմաստ չունի պարսկերեն: Հավանական է, որ բյուրատ կազմուած է բյուր և հատանել բառերից փոխան լրիվ բյուրահատ, ինչպես կա փայտատ փոխան փայտահատ, և կնշանակե բյուր մարդ կոտորող, շատ հաղթությունների տեր անձ: Պատշաճում է նման վիպական մակդիր մանավանդ Սմբատ Խոսրով-Շումին, որի անօրինակ ուժը և կարող զենքը փառաբանել է Սեբեոս. «Եւ էր սա այր անհեթեթ անձամբ եւ գեղեցիկ տեսլեամբ եւ բարձր եւ լայն հասակաւ եւ բուռն եւ ցամաք մարմնով»: Հայտնի է, թե մարմնական ուժի և բարոյական անվեհերության որպիսի հրաշքներ կատարեց բյուզանդական մայրաքաղաքում կրկեսի մեջ վայրի գազանների դեմ կռվելիս, ապշություն և հիացում պատճառելով հանդիսականներին: Պակաս նշանավոր չէր նրա քաջարի մենամարտը Հեփթաղաց թագավորի հետ, որին նիզակի կուռ հարվածով գետին տապալեց[1]: Տարիներ շարունակ ճակատեց պետության հյուսիս-արևելյան սահմանագլխում քուշան և հեփթաղ հրոսակների դեմ և միշտ հաղթական եղավ: Ահա մի կյանք, որ իրական վեպ է: Մ. Չամչյան անվանել է նրան Բազմահաղթ: Նույն իրավամբ հները կարող են կոչել Բյուրատ այն իմաստով ինչ որ մենք ենք: Նույն անունը կարող էին կրել և իր ժառանգորդները և մանավանդ վերջին ծանոթ շառավիղը Սմբատ Կյուրապաղատ: Այս բոլորը, հարկավ, որպես սոսկ ենթադրություն, չեն կարող մրցել հաստատուն փաստի հետ, որ Բյուրատյան անունը հայտնի է միայն Սմբատ Կյուրապաղատի անվան կից: Այս փաստը հարկադրում է ընդունել, որ Անանուն այստեղից գիտե Բյուրատ անունը և ապա ուրեմն ուշ է, քան Սմբատ Բյուրատյանի մահը 727 թ.:

Ճենբակուր անունն ևս նպաստավոր չէ Անանունի հնության: Առաջին անգամ հանդիպում ենք Ճենբակուր անունը Ղևոնդի մոտ: Վալիդի օրով (705-715) Մահմետ զորավարը արշավեց Ճենաց աշխարհի վերա և պահանջեց 35 հազար աղջիկ: Ճենաց թագավորը կոչվում էր Ճենբակուր: Աղջիկների փոխարեն ղրկեց նույնչափ ծպտյալ զինվոր, և ամբարտավան զորավարը պարտություն կրեց և նահանջեց: Խորենացու անունով հասած Աշխարհագրությունը ևս հիշում է «արքայն Ճենբակուր» Ճենաց աշխարհի նկարագրության մեջ[2]: Բայց այս երկը Ղևոնդից հին չէ: Եթե Անանուն Ղևոն-

[1] **Սեբեոս,** էջ 107 (Թիֆլիս, 1912) ասում է այս երկու ախոյանների մասին. «զի արք սկայազարք (եւ ո՛չ սակաւազարք, ինչպես տպուած է) էին երկոքինն եւ կուռ սպառազինեալք»:

[2] Մարկվարտի բացատրությամբ Բակուր կազմված է **բաղ** և **ֆուր** բառերից, որ նշանակում է «աստուծոյ որդի» և թարգմանություն Չինաց թագավորի տիտղոսի:

դից գիտե Ճենքակուր անունը, նա չէ կարող ութերորդ դարու վերջերից հառաջ լինել: Առառավելն կարող էր նույն դարու մարդ լինել և Ղևոնդի հետ մի ընդհանուր աղբյուրից ծանոթ լինել նույն անվան: Անանունի փոքրիկ, անշուք, բայց նորաշունչ գրվածքը ոգով և գաղափարաբանությամբ համապատասխանում է ութերորդ դարու կեսերից սկսված քաղաքական շարժման հիմը կազմող ակնկալությանց, այն շրջանին, երբ ոգեշունչ մոնոզոնները գոչում էին, թե «ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ, զի այժմ ընդհուպ դարձցի գաւազան թագաւորութեանն միւս անգամ ի տուն Թորգոմայ»: Անանուն հասկացնում է, որ գավազանի իրավունքը պատշաճում է ազգածին Բագրատունիներին, քան օտարազգի Մամիկոնյաններին: Ոչ միայն իր այս գաղափարով, այլև ժամանակով թվում է, թե հեռու չէ Խորենացուց:

Անանունի մոտ Բագրատունի տոհմը ներկայացնում է Արամանյակի, այսինքն՝ Հայոց ազգը և Փառնավազյանները՝ վրաց ազգը: Բագարատի և Փառնավազի արենակցությունն այլ բան չէ նշանակում, քան որ երկու ազգերը եղբայրակից են և համերաշխ քաղաքական ազատության ճանապարհի վերա, և գործակից արաբական լուծը թոթափելու ջանքերի մեջ:

Այսպես, ո՛չ Անանունի ծննդաբանությունն և ո՛չ վրական ավանդությունները, որոնք բացառապես գրական հողի վերա են զարգացած, ո՛չ մի արժեք չունեն Բագրատունիների ծագման խնդրում: Միակ ճշմարիտ տեղեկությունն է, ինչ որ պահված է Վարդանի մոտ, այսինքն՝ որ վրաց Բագրատունիք ծագում են հայ Բագրատունիներից և նրանց նախահայրն է Վասակ որդի Աշոտի: Վասակի որդին էր Աշոտ, որ խելացի քաղաքականությամբ կարողացավ շահել արաբական իշխանության վստահությունը և Վրաստանի իշխան կարգվեց: Այս հաջողության անմասն չէր անտարակույս այն վարկը, որ Բագրատունիք ձեռք էին բերել Հայաստանում: Լևոն V Հայկազն կայսրը շնորհեց Աշոտին կյուրապաղատության պատիվ, անշուշտ, հակակշռելու համար արաբական ազդեցությունը: Աշոտ ստանձնելով Վրաստանի իշխանությունը, սկիզբը դրեց նրա քաղաքական վերածնության, եղավ Վրաստանի համար այն, ինչ որ Աշոտ Մսակեր Հայաստանի համար: Երկու Աշոտների սերունդը գրեթե միաժամանակ թագ կապեց: Տեսանք, ինչպես Մսակերի թոռը Աշոտ թագավորեց 885 թվին: Աշոտ Կյուրապաղատի թոռնորդին Ատրներսեհ նույն պատվին հասավ 899 թվին:

Ինչպես հիշեցինք վերև, երբ Ջահապ արաբ իշխանը գրավեց Դվինը, Աշոտ Մսակերի ժամանակ, Աշոտ Կյուրապաղատը դիմեց Լևոն կայսրին և խնդրեց օգնել նրան ազատելու Դվինը: Բայց Լևոնի վերահաս մահը Միքայելի ձեռքով Աշոտի խնդիրը անկատար թողեց: Պետք է կարծել, որ Աշոտ Կյուրապաղատը իշխան ճանաչվեց այլաբների կողմից Աշոտ Մսակերի

հետ միաժամանակ: Կարճ միջոցում խոհուն գործունեությամբ կարողացավ «տիրել ի Կաղրջաց մինչեւ ի Տփղիս լեռնակողմամբ հանդերձ»[1]:

«Վրաց տարեգիրք»-ը համաձայն է այս կետում, երբ վկայում է, որ Աշոտ նվաճեց Կղարջեթից մինչև Քսան գետը: Նվաճումը, ըստ «Տարեգիրք»-ի, հետևանք էր այն հաղթության, որ Աշոտ տարավ Թիփլիսի արաբ ամիրայի վրա:

Արդարև այդ ժամանակները Թիփլիսը գտնվում էր Մուհամատ իբն Հաթաբ արաբ ամիրայի ձեռքին: Հյուսիսից Աշոտ Կյուրապաղատին հարևան էր Ափխազաց թագավորությունը: Ափխազները օգտվելով Բյուզանդիայի և խազարների մրցությունից հաջողել էին արդեն հիմնել նոր իշխանական հարստություն և բավականին ընդարձակել իրենց տերության սահմանները, որոնց մեջ մտնում էին ոչ միայն բուն Ափխազիան, այլև Մինգրելիան և Գուրիան՝ գրեթե ամբողջ ծովափնյա աղեղը:

Աշոտի կողմից պարզ հաշիվ էր բարեկամական հարաբերություն ստեղծել այս հարևանի հետ, որ հակառակ դեպքում կարող էր ահավոր լինել: Աշոտ Կյուրապաղատը բարի համարեց Ափխազաց Թևդաս թագավորին փեսայացնել իր դստեր: Այս կերպ կարողացավ իրեն զինակից անել Թևդասին և միասին դեմ դնել Թիֆլիսի ամիրային:

«Տարեգիրք»-ը հավատացնում է, որ կյուրապաղատը Քսան գետի մոտ ճակատեց ամիրային, որին օգնական էր Կախեթի իշխանը, և հաղթեց: Շուտով Աշոտի վրա եկավ Խալիդ՝ Եզիդի որդին, և Աշոտ փախավ իր ընտանիքով դեպի Հունաստան: Ջավախքի լեռներում, Փարվան լճի ափին հանգստանում էր, երբ հարձակվեցին նրա վրա արաբները, բայց Աշոտ հետ մղեց նրանց և գնաց Կղարջք և հաստատվեց Արտանուջ: Վերանորոգեց հին ավեր բերդը, շինեց Ս. Պետրոս և Ս. Պողոս առաքելոց անունով մի եկեղեցի, ջանաց երկիրը շենցնել, խմբել բնակչությանը, որ տակավին Մրվանի գործած ավերածության ծանր հետևանքների տակ էր գտնվում: Քիչ հետո նենգությամբ սպանվեց 826 թվին, հունվարի 29-ին:

Այս պատմության մեջ ճշմարտությունն այն է, որ Աշոտ Կյուրապաղատը Ջավախքից հետզհետե առաջ է գնացել և հաստատվել Արտանուջում, և չի կարողացել շարժվել դեպի Վրաստան, դիմադրության հանդիպելով Թիփլիսի ամիրայի և Կախեթի իշխանների կողմից: Խալիլ, որդի Եզիդի, սխալ ընթերցումն է, փոխանակ Խալիդի (վրացերեն լ և դ տառերը շփոթելի են), որ մեզ հայտնի Շայբանի իշխանն է, կուսակալ Հայաստանի 827-832 տարիները: Որովհետև Աշոտ Կյուրապաղատի մահը «Տարեգիրք»-ը դնում է 826 թվին, ուստի սխալ է գործում Խալիդ Շայբանի կուսակալին

[1] **Վարդան**, էջ 78:

Աշոտի դեմ հանելով: «Տարեգիրք»-ի օրինակներից մեկում չի հիշվում այստեղ Խալիդը հանվանե: Հավանական է, որ և այս ընդհարումը նույն Մուհամատ իբն Հատաբի հետ է եղած: Կամ պետք է ընդունել, որ Աշոտի մահվան տարին սխալ է, ինչպես Մարկվարտն է ընդունում, որ քիչ հավանական է:

Խալիդ ընկճեց Թիփլիսի ամիրային և նրա տեղ նշանակեց Ալի՝ որդի Շուաբի, ինչպես վկայում են «Տարեգիրք»-ը և արաբ աղբյուրները: Ալի եղբայր էր Իսմայելի, որ Հատաբից առաջ նույն քաղաքի տերն էր: Ալիից հետո հաջորդեց Իսմայելի որդի Իսահակը:

Կյուրապաղատի որդիները մանկահասակ էին, երբ ինքը մեռավ: Երեց որդին կոչվում էր Ատրներսեհ (վրացերեն Ադարնասե), կրտսերը՝ Բագարատ: Իշխանության գլուխն անցավ Բագարատ: Ինչ վիճակի մեջ էր Արտանուջի մանուկ իշխանությունը կյուրապաղատի որդիների անչափահասության ժամանակ, անորոշ է: Գիտենք, որ Խալիդ Շայբանի այնուհետև վերստին և վերստին եկավ կուսակալության պաշտոնով և կռիվներ մղեց Վրաստանի սահմաններում Ծանարքի դեմ, ինչպես Իսահակ ամիրայի: Սրա վրա էր գնում, երբ ճանապարհին մեռավ Ջավախքի Խոզաբիր գյուղում 844 թվին, որ այժմ էլ կանգուն գյուղ է: Խալիդից հետո կուսակալ եկավ իր որդին՝ Մուհամետ: Սրա օրով է, որ հրապարակ է գալիս Բագարատը, նույնպես կյուրապաղատի կոչումով:

Բագարատ առավ կնության Սմբատ Աբլաբասի դուստրը: Քաղաքական ասպարեզում որդեգրեց մի ուղեգիծ, որ հար և նման էր Սմբատի վարելակերպին: Ի՞նչ դիրք էր բռնել նա Բյուզանդիայի հանդեպ, հայտնի չէ: Բայց արաբների նկատմամբ նրա քաղաքականությունը որոշ էր: Առանց վարանելու Բագարատ հարեց ոստիկան Մուհամետ Շայբանիին, երբ նա կռվում էր Թիփլիսի ըմբոստ ամիրայի դեմ: Արաբների ձեռքով իսկ կործանել վտանգավոր հակառակորդին պարզ հաշիվ էր:

Նույն գործելակերպին հավատարիմ մնաց և Բուղայի արշավանքի ժամանակ: Տարոնը և Վասպուրականը պատժելուց հետո, տեսանք, որ Բուղան գնաց Թիփլիսի Իսահակ Շուաբի վրա, և բռնեց ու սպանեց ամիրային: Ափխազաց թագավորը՝ Թևդասը, փորձեց պաշտպանել Իսահակին: Բուղան նրա դեմ ղրկեց ուրիշ ուժերի հետ նաև Բագարատ Կյուրապաղատին: Չնայելով, որ Թևդասը Բագարատի քեռայրն էր, բայց և այնպես կյուրապաղատը ելավ նրա դեմ կռվելու: Իսկ երբ Բուղան բանակը շարժեց դեպի լեռնականները, Բագարատն իր եղբոր Գուռամի միջոցով, ինչպես և Սմբատ Խոստովանողը կամ Աբլաբասը զգուշացրին նրանց, որ արաբ զորքերը ներս չթողնեն: Լեռնականները ճանապարհները կտրեցին և արաբ բանակը ստիպվեց հետ քաշվել խոստովանելով իր անհաջողությունը: Բուղայի ձեռքով Իսահակին կործանելուց հետո, հերթական հարցն էր ազատվել

Բուղայի ճիրաններից: Լեռնականների դեմ ունեցած ձախորդությունը կոտրեց թյուրք զորավարի վարկը և հետ կանչվեց: Նրա տեղը եկավ սույն Մուհամետ Շայբանին հուզված երկիրն անդորրացնելու:

Բագրատունյաց քաղաքական ծրագիրների տեսակետից Թիփլիսի ամիրայի անկումը վճռական նշանակություն ուներ: Շուաբի տունը վտանգավոր էր ոչ միայն Վրաստանին, այլև արգելառիթ Հայաստանի բարգավաճման: Չէր կարելի վստահել, որ մի օր իրական տեր չէր դառնա երկու երկրներին էլ: Թվում է, որ նա զուրկ չէր շրջապատի համակրությունից: Խսահակի կինը քրիստոնյա դչխուհի էր, նրա զորքերի մեջ կար խութեցիներից կամ սասունցիներից կազմված հատուկ գունդ[1]:

Անուրանալի է, որ Շուաբի տունը բարեբեր եղավ այն մտքով, որ կենտրոնական իշխանության ուշադրությունը իր վրա առնելով, հարմարություն տվավ Բագրատունիներին հաստատուն ոտ դնել Կղարջք, հենվելով բյուզանդական պատվարին: Սակայն, Ճորոխի հովտից հառաջանալ դեպի Վրաստան և գրավել բուն վրական հողերը անկարելի էր Բագրատունիների համար, քանի որ Թիփլիսում բուն էր դրել Շուաբի տունը: Ճշմարիտ է Մարկվարտի կարծիքը, որ Բագրատունիները միմիայն Կղարջքի իշխաններ էին և Վրաստանի հետ կապ չունեին որչափ ատեն որ Թիփլիսի մեջ նստած էին Շուաբի բռնավորները:

Սրանց անկումից հետո Վրաստանը դառնում է կռվախնճոր հայ Բագրատունիների և Ափխազի տերերի մեջ: Բուղայի հեռանալով, Հայաստանի իշխանությունը ստանձնեց Սմբատ Խոստովանողի որդին Աշոտ, որ 862 թվին եղավ իշխանաց իշխան և 886 թվին թագավոր:

Վերև տեսանք, որ Աշոտն իշխանաց իշխան նշանակվելուց հետո ձեռնամուխ եղավ նվաճելու և հնազանդեցնելու «զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից»: Պատմագիրն ասում է՝ «որ եղեւ իսկ»: Պետք է կարծել, ուրեմն, որ Աշոտի գերիշխանության տակ էր նաև Արտանուջի իշխան Բագարատ Կյուրապաղատը: Արդյոք սա ևս գերվե՞ց Բուղայի կողմից նման Սմբատ Խոստովանողի, և հետո վերադարձավ, հայտնի չէ: «Վրաց տարեգիրք»-ը նրա մահը դնում է 876 թվին: Բագարատը Աշոտի կողմնակից էր, երբ վերջինս պատերազմի բռնվեց Ափխազաց Գիորգի I թագավորի հետ Վրաստանի պատճառով: Բագարատի եղբայր Գուռամ իր որդի Նասրա (= Ներսեհի) հետ Ափխազաց համակիր էր, մինչդեռ Բագարատի որդին Դավիթ և Լիպարիտ, Օրբելյանների նախահայրը, որ առաջին անգամ երևում է պատմության մեջ, Հայոց կողմն էին: Կռվի մանրամասնությունները հայտնի չեն, բայց արդյունքը կասկածից դուրս է, որ հօգուտ Հայոց էր: Աշոտ հաղ-

[1] **Տարսի**, III, 1416. **Marquart**, Streifzüge, 460.

քանակեց և իր իշխանության տակ առավ Վրաց և Աղվանից երկրները և Կովկասյան լեռնականները:

Հավանորեն այս կուսակցական պայքարի հետևանքով էր, որ Գուռամ սպանեց իր որդու Նասրի ձեռքով Դավիթ Կյուրապաղատին՝ Բագարատի որդուն և հաջորդին, ըստ «Տարեգրքի», 881 թվին: Որ Գուռամը կուսակից էր Ափխազաց, երևում է նաև նրանից, որ իր դուստրը տվել էր Ափխազաց Ատրներսեհ թագավորին կնության:

«Տարեգիրք»-ը շփոթում է Գուռամին Բագարատի հետ, երբ Աշոտ իշխանաց իշխանին անվանում է եղբայր Գուռամի կնոջ (մի տեղ սխալմամբ եղբայր Գուռամի, բաց թողնելով **կնոջ** բառը)[1]:

Բագարատն էր Աշոտի քրոջ ամուսինը և ոչ Գուռամը, ինչպես գիտենք Վարդանից: Սա ասում է, որ Աշոտը Բագարատի մահից հետո «դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր», այն է Բագարատի որդուն՝ Դավթին: Սրա սպանությունից հետո հաջորդեց իր որդին՝ Ատրներսեհը, երբ հայերի օգնությամբ քշվեց նրա հակառակորդ և հորը մահվան պատճառ Նասրը:

Ատրներսեհը վայելեց և իշխանաց իշխանի որդու՝ Սմբատ թագավորի հովանավորությունն ու բարեկամությունը և նրա շնորհիվ արժանացավ թագավորական թագի: Ահա ինչ է ասում ժամանակակից պատմագիրը. «Մեծ Կուրապաղատն Վրաց՝ Ատրներսեհ անվրդով եւ անշուշտ ուխտ խաղաղութեան եւ սիրոյ միաբանութեան ընդ արքայի Սմբատայ պահէր ի բոլոր մասունս առ ի բովանդակ մտաց եւ ի զօրութենէ իւրմէ մեծաւ պատկառանօք իբրեւ **հօր հնազանդ լեալ,** կամ թէ եւս առաւել քան զայս, իբրեւ **զծառայ ի տեառնէ իւրմէ** կամաւ կրեալ զսահման երկիւղի չափաւոր մոլութեամբ եւ զաչս իւր մշտակարկառ յարքայ հարեալ համակեալ մեծաւ զգուշութեամբ եւ նմա զանձն եւս հաւատացեալ: Ընդ որ յաւէտ իմն հաճեալ հաւանեալ արքայն Սմբատ բազմազեղ նախախնամութեամբ յինքն զնա ածէր յանձանձէր: Ապա **թագ կապեալ** նմա մեծապատիւ ճոխութեամբ եւ գեղեցկայարմար զարդու, նաեւ զինու զարդարեալ ըստ օրինի թագաւորաց, կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին եւ երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ»[2]:

Ըստ «Վրաց տարեգիրք»-ի, թագադրությունը կատարվեց 899 թվին:

Այսպիսով Բագրատունյաց վրական ճյուղը ևս հասավ արքայական թագի և տեր դարձավ Վրաստանի: Ատրներսեհ շարունակեց զգալ և պահել ստեղծված դրությունը հանդեպ Հայոց թագավորի Սմբատի: Միևնույն ծառի երկու ոստերն էին և Սմբատ միայն ավագության կապակից մեծարանքն էր, որ վայելում էր: Երբ Եգերաց թագավոր Կոստանդինը, որ ամուսնացել էր

[1] **Brosset**, I, 191.

[2] **Հովհաննես Կաթողիկոս**, էջ 101-102:

Ատրներսեհի դստեր հետ, փորձեց գրավել սրա հողերը Ալանց դրան շուրջը, Սմբատ ընդդիմացավ և Ատրներսեհի հետ միաձալով սանձեց Կոստանդինին: Այն ազգերը «հաւաճեալք եւ հնազանդեալք եւ նուաճեալք էին ընդ ձեռամբ արքային Սմբատայ», - ասում է պատմագիրը, մինչ սպասելու էր, որ այս հողերը պատկաներին Ատրներսեհ թագավորին:

Տոհմական ընդհանուր սեփականության գիտակցությունը տակավին արթուն էր այդ ժամանակ: Արդարև, Սմբատ իր տերության սահմանները հաշվում էր «մինչեւ ցԿարնոյ քաղաք եւ անդր եւս քան զԿղարջս քերեալ մինչեւ առ ափն ծովուն մեծի եւ մինչեւ ցսահմանս Եգերացւոց եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս, եւ զԾանարս մինչեւ ցդուռն Ալանաց առեալ եւս յինքն եւ զամրոց դրան պահակի նոցա. եւ անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչեւ ի քաղաքն Տփղիս եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»[1]:

Սմբատ իր տերության մեջ էր համարում գրեթե բոլոր այն երկիրները, որոնք պատկանում են Վրաց Բագրատունիներին, և անգամ գրավել էր Դարիալի պահակը պաշտպանող ամրոցը, ասել է, թե հյուսիսային սահման էր Կովկասյան շղթան: Սմբատը նայում էր Ատրներսեհի վրա, որպես միևնույն ընտանիքի անդամի: Հակառակ կրոնական խտրության Ատրներսեհ հնարավոր էր գտնում Զատիկը անցնել Սմբատի մոտ և նրա հետ միասին: Սմբատ և Ատրներսեհ, երկու եղբոր թոռան թոռներ էին. բացի դրանից Ատրներսեհ Սմբատի հորաքրոջ թոռն էր (4):

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ ԱՂՎԱՆՔՈՒՄ

Տեսանք, որ Ատրներսեհ Կույրի երեք եղբորորդիք Տարոնից եկան Շաքի և հաստատվեցին այնտեղ: Ատրներսեհ Կույրը Աշոտ Բագրատունին է և ուրեմն նրա եղբորորդիք նույն տոհմիցն են: Նրանք խարել էին իրենց հորեղբոր աչքերը: Այս ոճիրի իսկական հեղինակը, գիտենք, որ Գրիգոր Մամիկոնյանն էր: Սակայն Բագրատունիք ևս անպարտ չէին: Աշոտի ոսոխներն ոչ միայն Մամիկոնյան Դավիթ և Գրիգոր եղբայրներն էին, այլև «Սմբատայ որդիք», որոնց անունները պատմագիրը չէ տալիս: Այս կետը պետք ունի բացատրության:

Վևոնդ պատմագրի արտահայտությունն այնքան անորոշ է, որ անուշադիր ընթերցողը կարող է այն տպավորությունն ստանալ, թե Սմբատի որդիք նույն Մամիկոնյան եղբայրներն էին: Մինչդեռ Սմբատ անունը հատուկ է Բագրատունի տան և նրա որդիները զատելու է Մամիկոնյան եղբայրներից:

Արաբական ոստիկանի հրամանով, Աշոտի հակառակորդները կալա-

[1] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 89-90:

ճավորվեցին որպես խռովարարներ և դրկվեցին Դամասկոս: Երբ Օմմայան տան դեմ ելան Աբբասյանները և գահակալական խռովություններն սկսվեցին, Մրվան ստիպվեց հեռանալ Հայաստանից: Առիթից օգտվեցին և փախան «զերծեալ որդիքն Սմբատայ ի կալանաւոր պատանդէն» և եկան Վասպուրական: Լի վրեժխնդրությամբ, սրանք աղմկեցին Աշոտի դեմ և մինչև անգամ հարձակում գործեցին Աշոտի վրա և կամենում էին սպանել: Աշոտը դիպվածով փրկվեց փորձանքից:

Երբ Աշոտի հովանավոր Մրվան հաղթեց և ամիրապետ դարձավ, Աշոտի դիրքը նորից ամրացավ: Մրվան, «տեղեկացեալ զամբաստութիւնն զորդւոցն Սմբատայ և զոր ինչ արար ընդ նա (այսինքն՝ ընդ Աշոտ) Դաւիթ եղբայր Գրիգորի», հրամայեց բռնել Դավթին և ձեռքն ու ոտը կտրելով սպանել: Խոսքը Աշոտի սպանության փորձի մասին է: Հարձակվել էին Սմբատի որդիք, բայց մեղադրվում է և տուժում միայն Դավիթ: Եթե Սմբատի որդիք Դավիթ և Գրիգոր եղբայրները լինեին, պետք է որ Գրիգոր ևս պատիժ կրեր: Բնագիրը երկդիմի է և ավելի հավանական է, որ Սմբատի որդիների ամբաստանությունը հակադրվում է Դավթի գործին: Պատմագիրն անաչառ չէ Մամիկոնյանների հանդեպ: Գրիգոր կազմակերպեց նախարարների համաձայնությամբ ապստամբություն արաբների դեմ: Գրիգոր առաջարկեց Աշոտին միանալ ընդհանուր գործին: Սա հավանություն տվեց, բայց հետո հրաժարվեց: Գրիգոր չարացավ, բռնեց Աշոտին և հանձնեց Դավթի ծառաներին, որոնք և խարեցին նրա աչքերը:

Ղևոնդը չէ քաշվում հայտարարելու, որ Գրիգորի ապստամբական քայլը մի «խորամանկութիւն էր վասն հանելոյ զիշխանութիւնն Աշոտոյ»: Այսպիսի միակողմանի և աչառու պատմագրից բնական էր սպասել, որ կատարված ոճիրը բարդվեր միմիայն Մամիկոնյանների վրա: Մինչդեռ վրական ավանդությամբ ոճրագործները անբախտ իշխանի եղբորորդիքն էին, ուրեմն Բագրատունիներ: Բնական է սրանց մեջ տեսնել Սմբատի որդիներին: Երկու հակառակ վկայությունները կարելի է հաշտեցնել, ընդունելով, որ հանցանքը գործել էին Մամիկոնյանները, գործակից ունենալով Բագրատունի Սմբատի որդիներին: Ղևոնդ անվանում է Գրիգորին «ի Մամիկոնեան տոհմէ», «ի տանէն Մամիկոնեան», և ո՛չ երբեք որդի Սմբատա, որ սպասելի էր եթե իրոք Գրիգոր Սմբատի որդին լիներ:

Սմբատի որդիք, որոնք նախանձում էին Աշոտի հաջողության, կարծում ենք, նշանավոր Սմբատ Կյուրապաղատ Բյուրատյանի որդիներն են: Սրանք ամենայն իրավամբ կարող էին թիկնածել այն պատվին, որին արժանացել էր Աշոտը: Սմբատ Բյուրատյան, սակայն, Աշոտի ո՛չ եղբայրն էր և ո՛չ հորեղբայրը: Եթե, իրոք, մերձավոր կապ կար Աշոտի և Սմբատի որդիների մեջ, ինչպես վկայում է վրական ավանդությունը, հնարավոր է

մտածել մի ուրիշ Սմբատ Բագրատունու մասին: Ղևոնդի ասելով, Սմբատի որդիք ազատվելով պատանդությունից եկան մտան Վասպուրական և այստեղ սկսեցին իրենց շահատակությունները: Արդյո՞ք խոսքն այն Սմբատի մասին չէ, որ Վասպուրական իշխան է կոչվում և ընկավ Նախճվանի աղետի ժամանակ 705 թվին: Թերևս, այս Սմբատը Աշոտի հորեղբայրն էր: Աշոտի հայրը Վասակն էր և սրա եղբայրը՝ Բագարատ: Աշոտից հետո Բագարատի որդին Սահակ կարգվեց իշխան Հայոց: Եթե Սմբատն ևս Աշոտի հորեղբայրն էր, հնարավոր էր, որ նրա որդիք իրավունք ունեին թեկնածու համարվել այն պատվին, որ վիճակվել էր Աշոտին, իրենց հորեղբոր որդուն:

Տարաբախտաբար, հայտնի չէ այս զույգ Սմբատների որդիների և ընդհանրապես հետագա սերնդի վիճակը: Իններորդ դարի սկզբում մի Բագրատունի զորեղ ձայն է լսվում հեռավոր Աղվանքից: Հայոց 270 = 821-822 թվին Պարտավից արաբ մի գունդ արշավեց Ամարաս գավառը, գերեց հազար մարդ և դարձավ ամրացավ Մեծիրանց գավառի սահմանում Շիկաքար կոչված տեղը: «Արի եւ շքեղատեսակն Սահղի Սմբատեան Եռանշահիկն տէր քաջազօր եղբօրօքն (sic) իւրովք եւ զօրօք» հարձակվեց լուսադեմին ասպատակավորների վրա, ցիրուցան արեց և ազատեց գերիներին[1]:

Սահղի Սմբատյան ուղղելի է Սահլի Սմբատյան, այսինքն՝ Սմբատի որդի Սահլ: Սա այն նշանավոր իշխանն է, որ 837 թվին ձերբակալեց հռչակավոր ապստամբ աղանդավոր Բաբեկին կամ Բաբանին, ինչպես անվանում են մեր մատենագիրները, և հանձնեց արաբ զորավար Ափշինին[2]: Այս մասին խոսում են ոչ միայն արաբ, այլև հայ պատմագիրները: Հայոց 286 թվին = 837-838 Բաղդադից ղրկված 12 հազարանոց հեծյալ մի գունդ մտավ Աղվանից աշխարհ, պատմում է Կաղանկատվեցին, և Սահլ Սմբատյան, որ «յարքայից Զաոմիհրական տոհմէն էր», հարձակվեց ինչպես արծիվ, որ խոյանում է տկար թռչունների վրա և հալածեց արաբներին: Նույն տարին Սահլ Սմբատյան ձերբակալեց աշխարհավեր Բաբանին և տվեց ամիրապետի ձեռքը և որպես վարձատրութիւն ստացավ «իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից տիրել արքայաբար»[3]:

Չնայելով իր մատուցած ծառայության և բարձր դիրքին, նենգավոր Բուղան չկասեց Սահլին ևս կցել կալանավոր իշխանների կարավանին 855 թվին, ինչպես վկայում է Թովմա Արծրունին: Կարևոր է այս վկայության մեջ այն, որ էր «Սահլ Սմբատայ որդի Շաքեոյ տէր, որ զԲաբան կալաւ»[4]:

---

[1] **Մովսես Կաղանկատվացի,** Գ, գլ. 19, էջ 53, 54:

[2] **Marquart**, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, p. 460.

[3] Կաղանկատվացու նորագյուտ հատված, հրատ. **Խաչիկ** վարդապետի, **«Արարատ»**, 1897, ապրիլ:

[4] **Թովմա Արծրունի,** Գ, գլ. 11, էջ 214: Այս տեղեկությունն այնքան վստահելի չէ

Արդ Սահլ միակ հայ իշխանն է, որ հիշվում է որպես Շաքիո տեր: Ի՞նքն էր գրավել այդ երկիրը, թե իր հայր Սմբատը կամ անծանոթ պապը, հայտնի չէ: Անտարակույս, Սահլի ընտանիքը ներկայացնում է Ատրներսեհ Կույրի եղբորորդիներին, որոնք եկան Շաքի: Ապա ուրեմն գործ ունենք Բագրատունյաց մի ճյուղի հետ, որ հաստատված է Շաքի, որ է արդի Նուխի քաղաքի շրջանը:

Կաղանկատվացու խոսքը, թե Սահլ Եռանշահիկ և կամ Զառմիհրական տոհմից էր արժեք չունի: Եռանշահիկ ասելով հասկանում է հին Հայկազնյան տունը, որ սակայն, իր իսկ վկայությամբ, տեղի տվեց Միհրական տոհմին: Միհրան նենգորեն կոտորեց նախկին տոհմի բոլոր ներկայացուցիչներին, խնայելով միայն Զառմիհրին, որը փեսայացել էր նորեկ տան: Ի՞նչ եղավ Զառմիհրի սերունդը, հայտնի չէ: Պատմագրի որակումն այն իմաստն ունի, թե Սահլ չէր պատկանում Աղվանքում տիրող Միհրական տոհմին: Իսկ՛ վրական ավանդությունը Շաքի գաղթող հայ իշխաններին համարելով Ատրներսեհ Կույրի, այսինքն՝ Աշոտ Կույրի, եղբորորդիք, վկայում է նրանց Բագրատունի ծագումը: Սահլի հոր Սմբատ անունը, որ զուտ Բագրատունի է, հաստատում է նրա ծագումը: Ո՛չ Աղվանքի և ո՛չ Սյունյաց իշխանական տոհմերի մեջ չէ պատահում Սմբատ անունը նախքան նրանց Բագրատունիների հետ խնամություն հաստատելը:

Առանց վարանելու կարելի է պնդել, որ Սահլի հայր Սմբատ սերում էր «Սմբատայ որդիներից», սրանցից մեկի որդին էր հավանորեն և իր անունը պարտական իր պապին, Սմբատ Կյուրապաղատին կամ Սմբատ Վասպուրականի իշխանին: Բաբեկի ձերբակալումով Սահլը կարգվեց Հայոց, Վրաց և Աղվանից իշխան 838 թվին: Բուղայի խարդախության զոհվեց 855 թվին:

Սահլ արաբական անունն է: Նրա բուն հայ անունը մոռացված է: Սահլ ղրկեց կալանավորված Բաբեկին Բաղդադ իր որդու Մուավիայի միջոցով: Հիջրի 238 = 852 թ. հունիս - 853 թ. հունիս Մուավիա հիշատակվում է որպես պատրիկ, այսինքն՝ իշխան, իր հոր նման, Հայոց, Վրաց և Աղվանից[1]:

Մեծարանց Ս. Հակովբի վանքի մի արձանագրության մեջ հիշվում է Հովհաննես անունով մի իշխանի անուն. «ՅԲ թուականութե<ա>ն Հայո<ց>ի ժամանակ Յովանիսի Աղվան<ից> իշխանի ես Սողոմ<ոն> Մեծարանց եպիսկ<ոպոս> կանգնեցի զս<ուրբ>»...[2]:

երևում: Կալանավորների թվում Թովման հիշում է «Գրիգոր Սիւնեաց տէր», որ է Սուփան, իսկ ըստ Կաղանկատվացի (հր. Էմինի) Գ, գլ. 20, էջ 60, «Սուփան վախճանեցաւ ի Վայոց ձոր 852 թուին եւ ի միւս տարին եկն Բուղա ի Հայս»:

[1] Բուղան հեռացավ Հայաստանից, տանելով իր հետ գերված իշխաններին, 241 հիջրի = 855-856: Եթե գերիների մեջ էր նաև Սահլ, ի՞նչպես մեկնել, որ 852 թվին արդեն իր որդին պատրիկ էր, այսինքն՝ իր տեղն էր բռնել:

[2] **Խաչիկ** վարդապետն է ընդօրինակել և հրատարակել, «Արարատ», 1897, ապրիլ:

Հայոց 302 թ. համապատասխանում է 853-854 թ.: Այս ժամանակ Աղվանից իշխան էր Մուավիա: Թվում է, որ Հովհաննես Մուավիայի հայ անունն է, ուրեմն Սահլի որդին: Արդարև, Կաղանկատվացու վերև հիշված նորագյուտ հատվածի մեջ, Ամորիայի արշավանքը հիշատակելուց հետո Հայոց 287= 838 թվին, կարդացվում է հետևյալը. «ի սոյն ամի տերանց տէրն Յովաննէս, որ Հայոց Վրաց եւ Աղուանից եղեւ տէր, խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲու(ղ)խար Խոյտա Փատդոս երիցս այսոցիկ աշխարհաց»:

Նույն 287= 838 տարին, տեսանք, որ Սահլի որդի Մուավիան էր հրապարակի վրա: Այստեղից ևս հետևում է, որ Հովհաննես նույն Մուավիան է: Հովհաննես 838 թ. տերանց տեր էր, իսկ հետագայում տեր, այսինքն՝ պատրիկ կամ իշխան եղավ երեք աշխարհների: Վահեվանի մի արձանագրության մեջ Շապուհ Բագրատունին, Աշոտ I թագավորի որդին և Սմբատ թագավորի եղբայրը իրեն անվանում է «Հայոց սպարապետ, տէրանց տէր, որդի Աշոտոյ, թագաւորի ի ժամանակս Հայոց թագաւորի մեծին Սմբատայ, հարազատ եղբայր իմոյ»[1]:

Ինչպես, որ Շապուհ, իր եղբոր թագավորության ժամանակ, «տէրանց տէր» է, նույն մտքով և Հովհաննես «տերանց տէր» է իր հոր Սահլի իշխանության ժամանակ: Արուճի մի արձանագրության մեջ, 869 թվից, գրված է «յիշխանութեան Աշոտոյ եւ ի տէրութեան Սմբատայ Հայոց սպարապետի Բագրատունւոյ»[2]:

Այստեղ տերություն նույն իմաստն ունի ինչ որ տերանց տերություն:

Մխիթար Այրիվանեցին Հայոց 320=871 թվի տակ ունի մի արտաքո կարգի կարևոր նկատողություն, այն է «Համամ որ եւ Յոհաննէս Բագրատունի»: Սրանով հաստատվում է նախ մեր տեսությունը Սահլի Բագրատունի ծագման մասին: Սոսկ մի ենթադրություն դառնում է գրական փաստ: Ապա հայտնվում է, որ Մուավիա-Հովհաննեսը մի երրորդ անուն ևս ուներ, Համամ: Եռակի անվանակոչումը հավանական չենք համարում և կարծում ենք Համամ անունն իրավունք է տալիս սրբագրելու արաբ հեղինակների Մուավիա որպես աղավաղում հայ Համամի: Արաբ գիրը գայթակղիչ է այս կարգի շփոթությունների համար: Աբուլ Կասիմ Մուհամետ ալ Հավկալ ամիրապետի կողմից ղրկվեց բուլղարների մոտ դեսպանությամբ 948 թվին: Հավկալ անցավ Հայաստանից, այցելեց Աղվանից երկիր և, ինչպես սովորություն ունեին արաբ ճանապարհորդները, գրի առավ հետաքրքրական տեղեկություններ կովկասյան ժողովուրդների մասին: Այս հեղինակն ասում

[1] **Ստեփաննոս Օրբելյան,** գլ. 36. **Կ. Կոստանյանց,** Վիմական տարեգիրք, էջ 6:

[2] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիրք, էջ 3, արտատպած **Հ. Շահխաթունիի** «Ստորագրութիւն»-ից, էջ 384:

է, որ Կուր գետի և Շիրվանի միջև մի երկիր կա, որ կոչվում է Շաքի և որի ժողովուրդը քրիստոնյա է, թեև կան նաև մուսուլման առևտրականներ և արհեստավորներ: Իր այցելած պահին Շաքի երկրի իշխան էր Ադեր իբն Սիմա իբն Համայան[1]: Դժվար չէ նկատել, որ իշխանի անունը սխալ է կարդացված և որ պետք է կարդալ Ատրներսեհ իբն Համամ, այսինքն՝ Ատրներսեհ որդի Համամա: Ինչպես որ Համամ դարձել է այստեղ Համային, անհնար չէ, որ Տաբարի[2] մոտ նույն անունը աղճատվեր և դառնար Մուավիա:

Թե արդարև Համամ Ատրներսեհ անունով որդի ուներ, այդ գիտենք Անանիա կաթողիկոսի վկայությունից: Տասներորդ դարու կեսին, Իբն-Հավկալից քիչ հետո, Անանիա հայրապետը գնաց Աղվանից աշխարհը եկեղեցական վարչական գծտությունները վերացնելու նպատակով: Այս առթիվ հիշում է տեղական իշխանների անուններն իր «**Յաղագս ապստամբութեան տան Աղուանից**» գրության մեջ: «Ունէր զաթոռ թագաւորութեան, ասում է ի միջի այլոց,-յայնժամ Իշխանակ, որդի տեառն Ատրներսեհի, բռնե երանել<ւ>ոյն Համամայ, բարեպաշտ թագաւորին Աղուանից եւ էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զիարցն դաւանութիւն»[3]: Այստեղից իմացվում է, որ Համամի որդին էր Ատրներսեհ և սրա որդին՝ Իշխանակ: Այսպիսով գիտենք Սահլ Սմբատյանի երեք հաջորդական սերունդը:

Համամ Հովհաննեսը հարգելի դեմք է հայ հեղինակների մոտ: Նկատենք նախ, որ Մխիթար Այրիվանեցու **յի** = 320 թիվը վրիպակ է իր, թե գրչի կողմից: Եթե կարդանք **յբ** = 302 կստանանք Մեծարանց Ս. Հակովբ վանքի արձանագրության թիվը: Հովհաննես Կաթողիկոսը պատկառանքով է խոսում Համամի մասին: Երբ Գեորգ կաթողիկոսը Սմբատ թագավորի հրահանգով գնաց Ատրպատականի Էմիր Ափշինի մոտ հաշտության առաջարկով, Ափշին ձերբակալեց կաթողիկոսին և ազատելու համար փրկանք էր պահանջում: Հովհաննես Կաթողիկոսը, որ այն ժամանակ դրան եպիսկոպոս էր, հավաքեց պահանջած գանձը և ուղարկեց «առ մեծ իշխան Արեւելից Համամ»: Սա իր կողմից լրացրեց փրկագինը և ազատեց մուսուլման իշխանի կապանքներից թշվառ հայրապետին[4]:

Կաղանկատվացու վկայությամբ, Ափշինի գրոհը և կաթողիկոսի կալանավորումը տեղի ունեցավ Հայոց 342 թ. = Քրիստոսի 893 թվին և ազատողը «բարեպաշտն Համամ որ եւ Աղուանից եղեւ թագաւոր»: Այս միջոցին

---

[1] **M. C. D'Ohsson,** Des peuples du Caucase, 1828, p. 18-19.

[2] **Tabari**, III, 1232.

[3] Հրատ. Գ. Տեր-Մկրտչյան, «Արարատ», 1897, մարտ:

[4] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 94 (հրատ. Մ. Էմինի):

Համամ թվում է, թե դեռ թագավոր չէր, թեև հետևյալ խոսքերն կարծես հակառակն է ցույց տալիս. «զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից Համամ նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի՝ զհայոց թագաւորութիւնն: Այսք ի միում ժամանակի գործեցան»[1]: Չնայելով այս վերջին խոսքերին, կարծում ենք, որ Համամ տակավին թագ չէր կապել 893 թվին: Հովհաննես Կաթողիկոս «մեծ իշխան» է անվանում նրան Գեորգ կաթողիկոսի դեպքի առթիվ խոսելիս, մինչդեռ Ատրներսեհին կոչում է թագավոր: Ասողիկի մոտ, Համամ թագավոր է, երբ ազատեց Գեորգ կաթողիկոսին, թերևս հետին թվով է թագավոր անվանված[2]:

Աղվանից պատմագրի մի խուլ նկատողությունն արժանի է ուշադրության: Համամ հանցանք էր գործել, «վասն սնոտի այս կենացս զպարտ արեան եղբօրն ժողովեալ յանձին իւրում»:

Ասել է, թե Համամ սպանել էր իր եղբորը, արդյո՞ք իշխանությունը գրավելու համար, թե որևէ ուրիշ պատճառով, հայտնի չէ:

Համամին ժամանակակից է Համամ Արևելցի անունով ծանոթ հեղինակը, որին Ասողիկ վերագրում է մի շարք երկեր[3]: Շատ հավանական է, որ այս հեղինակը նույն Համամ թագավորն է, թեև մատենագիրների լռությունը այս մասին երաշխիք չէ այս ենթադրության:

Համամ ուշագրավ դեմք է և իր գործունեության ոգով շատ նման իր ժամանակակից Աշոտ թագավորին: Աշոտի հայրը Սմբատ գերի ընկավ Բուղայի ձեռքը, բայց ինքն Աշոտ մնաց իր դիրքում և մտացի քաղաքականության հետևելով հասավ արքայական թագի: Համամի հայրը Սահլ Սմբատյան ևս չկարողացավ վրիպել Բուղայի կապանքներից, չնայելով այն խոշոր ծառայության, որ ինքնաբերաբար բերել էր արաբ իշխանության, ձերբակալելով այնպիսի մի վտանգավոր թշնամու որպիսին էր ահավոր Բաբեկը: Սահլի որդին Համամ, Աշոտի նման, զերծ մնաց աղետից և խոհուն քայլերով առաջացավ մինչև արքայական գահ: Մեծ արժանիք էր, որ կարողացավ լեզու գտնել Ատրպատականի Էմիր Ափշինի հետ, երբ սա կռիվ էր մղում Սմբատ թագավորի դեմ:

Համամի որդու՝ Ատրներսեհի և թոռան՝ Իշխանակի մասին շատ բան չգիտենք: Հովհաննես Կաթողիկոս անձամբ ճանաչում էր Ատրներսեհին և Յուսուփի ու Սմբատի կռիվների փոթորկալից շրջանին, երբ կաթողիկոսը ստիպված էր աստանդական կյանք վարել, այս կամ այն իշխանի մոտ

[1] **Մովսես Կաղանկատվացի**, Գ, գլ. 21:

[2] **Ասողիկ**, Գ, գլ. 3:

[3] **Ասողիկ**, Գ, գլ. 2: հաշվում է՝ «Վերլուծութիւն Առակաց», «Մեկնութիւն Յովբայ»՝ Ո՞վ է դա հատվածի, Սաղմոսագլուխների «Օրհնութիւնք», «Ամբիծք» և «Վերլուծութիւն քերականի»: Վերջինս հրատարակված է մեր **«Արվեստ Դիոնիսյա և հայ մեկնություններ»** ռուսերեն աշխատության մեջ (1):

ապավինել, վայելեց նաև Ատրներսեհի հյուրընկալությունը: Կաթողիկոսը գնաց նախ Աղվանից մեծ իշխան Սահակի մոտ, և ապա «առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արեւելից հիւսիսոյ Կովկասու, զի եւ նոքա ի ժողովրդեն էին մերմէ եւ խաշն արօտի մերոյ էին»[1]:

Իբն-Հավկալի այցելության 948-949 թվերին Ատրներսեհ տակավին կենդանի էր: Իսկ երբ Անանիա կաթողիկոս երկրորդ անգամ գնաց Աղվանք 958 թվին, Ատրներսեհին արդեն հաջորդել էր յուր որդի Իշխանակը, որ «էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զհարցն դաւանութիւն»: Այս անձը ծանոթ է նաև «Վրաց պատմությունից» ուր կոչվում է Իշխանիկ: Սա Հերեթի իշխանն էր և հայտնի դարձավ նրանով, որ Հերեթը, որ մինչև այն ժամանակ աղանդավոր էր, ընդունեց ուղղափառություն շնորհիվ Իշխանիկի մոր՝ Դինարի[2]: Վերջինս Գուրգենի քույրն էր, իսկ Գուրգեն Աջարայի և Կուելի իշխան իշխանաց էր (896-941), ժամանակակից Աղվանից Ատրներսեհի: Դինար և Գուրգեն, քույր և եղբայր, Աշոտ Կյուրապաղատի թոռան թոռներն էին: Դինար, վրացի իշխանուհի, հարս գալով Համամ թագավորի տունը, պատվաստեց վրական դավանանքը, այսինքն՝ քաղկեդոնականությունը, նախ իր որդուն Իշխանիկին և ապա նրա միջոցով ամբողջ երկրին, Հերեթին որ է Շաքի: Հովհաննես Կաթողիկոս համարում էր Ատրներսեհի ժողովուրդը «մեր արօտի խաշն», քանի որ այն ժամանակ դեռ հայ դավանություն ուներ, եւ յետոյ, Իշխանիկի մոր ջանքով, խորթացավ, միանալով վրաց: Կրոնափոխությունը համանիշ էր ազգուրացության:

Վրական տեղեկությամբ, Կախեթի տերը Կյուրիկե († 918), որ քորեպիսկոպոս էր կոչվում, և Ափխազի թագավոր Կոստանդին († 920) միասին գնացին Հերեթի Վեջին քաղաքի դեմ և պաշարեցին: Քաղաքն ընկնելու մոտ էր, երբ Ատրներսեհ պատրիկը բանակցության մեջ մտավ և հաշտություն առաջարկեց, համաձայնելով զիջանել պաշարողներին քանի մի վայրեր և նրանց թվում Գավազնի քաղաքը[3]:

Հերեթի իշխանը, պատրիկ Ատրներսեհը, ոչ այլ ոք է, քան մեզ ծանոթ Ատրներսեհ, Համամի որդին և հաջորդը, և Իշխանիկի հայրը ու նախորդը: Անցքը տեղի ունեցավ 915 թվին, երբ Հերեթի-Շաքիի իշխանն Ատրներսեհն էր: Այս տեղեկությունը խիստ հարգի է ուրիշ նկատումով: Շաքի բոնում է այժմյան Նուխի քաղաքի շրջանը, Այրի գետակի ավազանը: Սա ստորին Ալազանի գլխավոր վտակն է: Գավազնի քաղաքը գտնվում է Ալազանի վերին հովտում, Թելավ քաղաքի հանդեպ, գետի արևելյան ափի վրա:

---

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, էջ 119:

[2] **Brosset**, I, 279.

[3] Նույնը, I, 277-278:

Հետևապես Շաքիի Բագրատունիների իշխանությունը ընդգրկում է Ալազանի ձախակողմյան եզերքը գրեթե ամբողջապես, այսինքն՝ Ալազանի և Կովկասյան շղթայի մեջ սեղմված երկայնածիգ հովիտը:

Իշխանակի հետ Անանիա հիշում է 958 թվի ժողովի անդամներից նաև մի «Սենեքերիմ իշխանաց իշխան», որ տարբեր անձ է համանուն իշխանից, որ Խաչենի Գրիգորի որդին էր: Իշխանակը թագավոր էր, ուստի իշխանաց իշխան Սենեքերիմ կարող էր լինել նրա որդին և գահաժառանգը: Ինչպես վերև հիշեցինք թագաժառանգները կոչվում էին իշխան իշխանաց կամ տեր տերանց: Կարծում ենք, որ այս տոհմին են պատկանում նաև Համամ և իր որդի Գագիկ, որ հիշում է Վարդան մի բավականին շփոթ պատմության մեջ: Մամ անուն մի պարսիկ կնոջ երեք որդիները հաջողում են գրավել տեղական մուսուլման իշխաններից Գանձակ, Պարտավ և Շամքոր քաղաքները: Կրտսեր եղբայրը Փատլուն ձեռնամուխ է լինում մոտիկ հայ իշխանների հողերին, ձերբակալում է Խաչենի իշխանին և խլում ինչ ինչ վայրեր, որի մասին խոսք կլինի ստորև: Նաև կանչում է իր մոտ Համամի որդուն Գագիկին, «զԳագիկ որդի Համամայ զտէրն Տանձեաց», սպանում և տիրանում նրա երկրին:

Այս Փատլունը Շեդադյան համանուն իշխանն է (985-1030): Համամ և Գագիկ ապրում էին ուրեմն 985-1030: Այս պարագան նպաստավոր է համարելու Համամին որդի կամ հաջորդ Սենեքերիմի, եթե միայն Համամ իրոք, պատկանում է նույն տոհմին: Այս վերապահությունը ծագում է այն հանգամանքից, որ Համամ և Գագիկ հիշվում են որպես տեր Տանձայաց, մինչդեռ իրենց ենթադրյալ տոհմը տիրում էր Շաքե: Տարաբախտաբար Տանձիքի տեղը հայտնի չէ[1]: Մինչև անգամ եթե Շաքեի շրջանում չգտնվի, կարելի է, որ Շաքեի տոհմը հետզհետե տկարանալով, պահել է իր հին կալվածներից միայն Տանձիքի շրջակայքը ավելի մոտ հայ սահմաններին, քան Շաքե: Արցախի մի արձանագրությունից 997 թվից հայտնի է Գագիկ իշխանաց իշխան: Թվականը ներում է նույնացնել նրան Համամի որդու հետ, երբ նա տակավին իշխանաց իշխան էր, բայց դժվար է պնդել: Եթե մեր այս թեական վարկածները ընդունելի են, Շաքեի Սահլի վերջին շառավիղները կլինեն՝ Սենեքերիմ, Համամ և Գագիկ, և շարունակված մինչև 1030 թվականները:

Թվում է, թե Սահլի սերունդը թևակոխել է մինչև Խաչեն և Սոթք և այստեղ հիմ դրել տոհմական մի նոր գծի, որ կարելի է անվանել Արցախի գիծ:

---

[1] **Մովսես Կաղանկատվացի,** Բ, գլ. 50, հիշում է Տանձիք, որտեղից էր Հովսեփ Անապատական: Կարծես, թե այս Տանձիքը Արցախի շրջանումն էր: Սույն անունով գյուղ կարող է նաև այլ տեղ լինել:

Հնում Արցախ էր կոչվում Խաչեն և Տրտու (Թարքաո) գետերի լեռնակողմը, որի էական մասը կազմում է այսօր Լեռնային ինքնավար Ղարաբաղը: Մովսես Կաղանկատվացին և հետագա պատմագիրները Աղվանիք ասելով հասկանում են առավելապես Արցախ և Ուտիք: Նույն ըմբռնումն ունի նաև Խորենացին: Անանունի մոտ չկան Սիսակ և Առան էպոնիմները: Պարսիկները կոչում էին Սյունիք Սիսական և Աղվանք՝ Առան: Այստեղից մեր Պատմահայրը ստեղծել է Սիսակ և Առան որպես նախահայրեր երկու երկիրների: Առան «ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն Հնարակերտ»[1]: Վերջինը գտնվում էր մոտավորապես արդի Աղստևի (Աղստափայի) շուրջը: Ասել է թե, ըստ Խորենացու, Աղվանիք կամ Առան բռնում էր դաշտային և լեռնային Ղարաբաղ և Ուտիք, որ ձգվում էր Պարտավից (Բարդա) մինչև Աղստևի շրջանը:

Առանը սերում էր Սիսակից, ուստի և Առանի իշխանական տունը Կաղանկատվացին կոչում է Հայկազյան[2]: Այս տունը իշխեց հնուց մինչև վեցերորդ դարի վերջերը, երբ Միհրան Պարսիկը գրավեց երկիրը և հիմ դրավ Միհրական հարստության: Վերջին շառավիղը Միհրական տան, Վարազ-Տրդատ սպանվեց Փիլիպպոս Սյունյաց իշխանի որդու Ներսեհի կողմից 821 թվին, ուղիղ այն տարին, երբ Սահլ Սմբատյան հալածեց Պարտավի հրոսակներին Մեծիրանց գավառի Շիկաքար գյուղից: Ներսեհ չխնայեց նաև Վարազ-Տրդատի մանուկ որդուն՝ Ստեփանին: Վարազ-Տրդատի կինը կարողացավ փրկել իր դուստր Սպրամին, ապավինելով Խաչենի բերդը, ուր ամուսնացրեց նրան «Ատրներսեհի Սահլի որդոյ որ է ի Տոհակայ եւ տէր Սիւնեաց, եւ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ եւ որդին իւր Ատրներսեհ հանդիպեցաւ կնոջ զգաստի»[3]:

Ո՞վ է այս Սահլը: Մեզ թվում է, որ նույն քաջածանոթ Սահլ Սմբատյան, Շաքեի տեր: Արդարև, ուրիշ համանուն իշխան հայտնի չէր ո՛չ առաջ, և ո՛չ հետո: Շաքեի տերը միակն էր, որ կրում է այս անունը: Ատրներսեհ Սահլյան ժամանակակից էր Սահլ Սմբատյանին: Այս պարագան ևս նպաստավոր է Ատրներսեհի հոր Սահլի և Սահլ Սմբատյանի նույնության:

Տոհակ աշխարհագրական անունն անծանոթ է այլուստ: Կարելի էր կարծել, որ սխալ ընթերցում է փոխանակ «Սահակայ», այսինքն՝ Սահլի հայ անունն է: Բայց ավելի հավանական է, որ Տոհակ, իրոք, տեղի անուն է:

[1] **Մովսես Խորենացի**, Բ, գլ. 8:

[2] **Մովսես Կաղանկատվացի**, Բ, գլ. 17՝ «զնախնական ազգն Հայկազեանց»:

[3] Նույնը, Գ, գլ. 22:

Այնտեղից Սահլ եկել և բռնի գրավել էր «Գեղամայ գաւառը»: Խոսքը Գեղարքունյաց գավառի մասին չէ: Այս գավառի ժամանակակից իշխանը Սյունյաց Վասակն էր, որ մեռավ 821 թվին, և որին հաջորդեց իր որդի Սահակը († 831): Վայոց Ձորում և բուն Սյունիքում իշխում է նույն միջոցին Վասակի մյուս որդին՝ Փիլիպպոսը: Ապա ուրեմն Սահլ չէր կարող տեր համարվել ո՛չ Գեղարքունիքի, և ո՛չ Սյունիքի: Նրա գրաված «Գեղամայ գաւառը» նույնանիշ է Սոթքի, Սևանա լճի նիստի աջ անկյունը[1]: Սոթք, ավելի ճիշտ Սողք, անունը պահվել է ցայժմ. այսպես է կոչվում Թարթառի ակունքները Սևանա լճի ավազանից զատող լեռշնադաշտակը:

Արդարև, Սոթքումն էր որ Ատրներսեհ, իր ամուսնությունից հետո, շինեց Հանդու բերդը: Այնտեղ էր և Վայկունիք, ուր հաստատեց իր ապարանքը: Բուղայի վայրագության ժամանակ, Ատրներսեհ ևս տուժեց և տարվեց Սամառա մյուս գերված իշխանների հետ: Սպրամ չվհատեց, տոկունությամբ վարեց իշխանությունը և շինեց Նորավանք նույն Սոթից գավառում:

Ատրներսեհ վերադարձավ գերությունից 858 թվին և շուտով մեռավ: Երկու որդի թողեց, Գրիգոր և Աբուսեթ: Գրիգոր շինեց Հավախաղացի բերդը և «յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»: Հավախաղաց բերդը, հավանորեն, նույնն է ինչ-որ հետագայում և ցայժմ կոչվում է Հավապտուկ, Մեծիրանց գավառում, որ Խաչենի մի մասն է[2]:

Գրիգոր երկու որդի ունեցավ: Ավագ որդին Աբուալի սպանվեց իր ազգակից Սմբատից 898 թվին, իսկ կրտսերը՝ Սահակ Սևադա, «այր քաջ եւ յաջող», նվաճեց Գարդմանա և Քուստի-Փառնա գավառները և ընկճեց Ձորը գետի «աւազակապետներին»: Կաղանկատվացու ասելով Սահակ բախում է ունեցել Սմբատ թագավորի հետ: Իսկ Հովհաննես Կաթողիկոսից գիտենք, որ Սմբատի որդին Աշոտ Երկաթ ամուսնացավ Սահակի դստեր հետ և սկզբում համերաշխ էին Սահակ և Աշոտ, բայց հետո գժտվեցին գլխավորապես Ուտի և Ձորափոր գավառների առթիվ: Աշոտ բռնեց Սահակին և իր որդի Գրիգորին և երկուսի աչքերը խարանել տվեց: Հովհաննես Կաթողիկոս հյուր եղավ Սահակին 910 թվին, Կաղանկատվացին գովում է այս իշխանին որպես հովանավոր «գրագիտութեան»:

Սահակի որդիներն են Գրիգոր և Դավիթ: Գրիգոր ունեցավ երկու որդի,

---

[1] Համեմատել **Մտեփաննոս Օրբելյան**, գլ. ծա. «Էր գիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սողից սահմանին»:

[2] **Մովսես Կաղանկատվացի**, Գ, գլ. 22՝ Հավախաղաց կամ Հավքախաղաց, Հանդաբերդի, Խաչենաբերդի և Հաթերքի հետ հիշատակվում է 1182 թ. արձանագրության մեջ որպես կալված Սակոեցի Հասան Վախթանգյան իշխանի: 1289 թվին Հասանի որդի Գրիգոր մեծ իշխան է Ականո, Հանդաբերդո, Սոթից, Շողգահո և Ծար գյուղի: Ավելի ուշ, 1430 թվին, Շանշի որդի Սայտի տեր էր «Փոքր-Սիւնեաց Ականայ Հաթերքոյ, Հանդաբերդոյ եւ ծովակին Գեղամայ մինչեւ Շաղվաքայ»: Վակուհիս հիշվում է 1241 թվի արձանագրության մեջ, տե՛ս **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 34, 130, 172 և 84:

Սևադա Իշխան և Ատրներսեհ: Սևադա Իշխանը՝ չորս որդի, Հովհաննես, Գրիգոր, Ատրներսեհ և Փիլիպպե: Հովհաննես, որ կոչվում էր նաև Սենեքերիմ արքայական թագ կապեց Պարսից թագավորի հաճությամբ, որ տվեց նրան իր հոր թագն ու երիվարը: Հունաց Մագիստրոս Դավիթ ուղարկեց թագ և ծիրանի:

Արցախի Բագրատունի գիծը կներկայանա այսպես.

1 Սահլ
2 Ատրներսեհ, կինը՝ Սպրամ
3 Գրիգոր, Աբուսեթ
4 Սահակ-Սևադա, Աբուալի
5 Գրիգոր, Դավիթ
6 Սևադա-Իշխան, Ատրներսեհ
7 Հովհաննես-Սենեքերիմ, Գրիգոր, Ատրներսեհ, Փիլիպպե

Անանիա կաթողիկոսը, ինչպես առիթ ունեցանք հիշելու, 949 թվին այցելեց Խաչեն: Երկրի իշխանն այդ միջոցին Գրիգորն էր, որն ընդունեց կաթողիկոսին և խնդրեց, որ ներողամտաբար թողնե Գագիկ եպիսկոպոսին իր աթոռի վրա: 958 թվին կաթողիկոսը նորից անցավ այն կողմերը, մտավ նախ Բաղք, կարգավորեց եկեղեցական գործերը և մտադրություն ուներ գնալ Աղվանք, բայց լուր ստացավ Սենեքերիմ իշխանից, թե իսմայելացիք մտել են իր աշխարհը և որ հայրապետի ճանապարհորդությունը վտանգավոր է: Այս իշխանը նույն է ինչ որ հետո կաթողիկոսը կոչում է «Սենեքերիմ որդի Գրիգոր Խաչեան իշխանի»:

Սենեքերիմ, անտարակույս, Հովհաննես-Սենեքերիմն է: Սակայն վերջինս Սևադա իշխանի որդին էր, մինչդեռ Անանիայի հիշած Սենեքերիմը Գրիգորի որդին է: Արդյո՞ք Գրիգոր Սևադա-Իշխանի բուն անունը չէ: Ուրիշ հնար չկա հաշտեցնելու երկու տարակարծ վկայությունները[1]:

[1] **Ստեփաննոս Օրբելյան,** գլ. խգ, բերում է Տաթևի սահմանների մի վկայագիր Հայոց 355 = 906 թվից, ուր վկաների թվում հիշվում են ի միջի այլոց «մեք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրներսեհ Աղուանից իշխանք», այլև «մեք Սահակ Գարդմանայ տէր եւ Աշոտ եւ Վասակ Գնթունի»: Վերջին երկու իշխանները հայտնի են Հովհաննես Կաթողիկոսից, էջ 160 և 171: Գարդմանա, տեր Սահակը, անշուշտ, Սահակ-Սևադան է: Հակառակ Կաղանկատվացու, Միհրական տոհմը չսպառեց բոլորովին Վարազ-Տրդատի սպանությամբ 821 թվին: Բուղայի գերիների մեջ հիշվում է Ներսեհ իշխան Գարիքայանից, որ պետք է կարդալ Գարդմանից: Սահակ-Սևադան է, որ «տիրեաց Գարդմանայ եւ Քուստի-Փառնայ»: Առաջին երեք իշխաններից, Եսայիս՝ նշանավոր

Հովհաննես-Սեմեքերիմ և իր եղբայր Գրիգոր ծանոթ են Ասողիկին: Սրանք են Փառիսոսի թագավորներ Սեմեքերիմ և Գրիգոր, որոնց քույրը Կարսի թագավոր Մուշեղի (953-984) կինն էր, Աբասի մայրը[1]: Գագիկ թագավորը, որ գահ բարձրացավ 989 թվին գրավեց շատ բերդեր և գավառներ «ի սահմանացն Վայոց Ձորոյ եւ Խաչենոյ եւ Փառիսոսոյ»[2]: Իսկ Հայոց ցնդ = 1003 թվին, Սեմեքերիմ և Գրիգոր իշխանների մահվամբ, Գագիկ և Գանձակի Փատլուն ամիրան բաժանեցին նրանց աշխարհը[3]:

Սեմեքերիմ և Գրիգոր միաժամանակ չմեռան: Գրիգոր շարունակեց իշխել իր եղբոր մահից հետո և իշխեց իր որդու հետ, որի անունն է Փիլիպպե: Վարդան պատմում է Փատլունի ծագումն և առաջադիմությունը «Փառիսոսի Գրիգոր փառաւոր իշխանի» ժամանակ: Սրա մահից հետո, իր որդին Փիլիպպե հյուր գնաց Փատլունի մոտ, բայց վերջինս նրան կալանավորեց և «առնու ի նմանէ զՇաշուազ եւ զՇօթս»[4]: Շաշվազ կարդալու է Շաղվագ, և Շոթք, թերևս, նույն Սոթքն է:

Անանիա կաթողիկոս անվանում է այս Սեմեքերիմին իշխան և ո՛չ թագավոր, ինչպես Ասողիկ: Պետք է կարծել, որ 958 թվին Սեմեքերիմ տակավին թագավոր չէր հռչակված: Տարաբախտաբար, հայտնի չէ ստուգորեն, թե ո՞վ էր «թագաւորն Պարսից» և ո՞վ «Յունաց Մագիստրոս Դաւիթ», որ թագ ղրկեցին Աղվանից իշխանին: «Պարսից» բառը, հարկավ, տաճկաց չէ նշանակում, այլ պետք է հասկանալ բուն իմաստով: Հայտնի է, որ Բոյյան (կամ

Աբու Մուսան է, Ատրներսեհը՝ Համամի որդին, իսկ Գրիգորը հավանորեն Սահակ-Սևադայի հայրն է:

[1] **Ասողիկ**, Գ, գլ. ժէ:

[2] Անդ, Գ, գլ. Լ:

[3] Անդ, գլ. խը:

[4] **Վարդան**, ծզ. Փատլունի հաջողությունները պատմում է 1048 թվից հետո, ինչ որ չփոթության տեղիք է տալիս: Իրականին ծզ գլուխը շարունակություն է ծբ-ի: Փատլուն զորանալով, ըստ պատմագրի, «զոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Ձորագետոյ եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց»: Ո՞վքեր են այս անձերը: Վրաց տեղեկությամբ, (Բրոսսե, Ա, 299), Փատլուն ուժ առնելով սկսեց ասպատակել Հերեթ և Կախեթ: Բագարատ III թագավորը (980-1014) բարկացավ և առաջարկեց Գագիկ Շահնշահին (989-1021) գնալ միասին սանձելու հանդուգն իշխանին: Գնացին և պաշարեցին Շամքոր, և Փատլուն ստիպված խնդրեց խաղաղութիւն: Այստեղից հետևում է, որ Վարդանի հիշած Բագարատ և Գագիկ Ձորագետցին Բագրատ III և Գագիկ Շահնշահն է: Կյուրիկեն հավանորեն Կախեթի իշխան մեծ Կյուրիկեն է (1010-1039): Անցքը պետք է տեղի ունեցած լինի ուրեմն 1010-1011 թվին և ոչ մի կերպ 1048 թվից հետո, երբ Փատլուն մեռած էր շատուց: Բագարատ III (1027-1072) ևս ընդհարում ունեցավ Փատլունի հետ Մեծ Կյուրիկեի մահից անմիջապես հետո և դաշնակցությամբ Դավիթ Անհողինի որդու Գագիկի հետ, **Բրոսսե**, Ա, 317: Սակայն, այստեղ հիշված Փատլուն չի կարող վերոհիշյալ անձը լինել, որ մեռել էր 1030 թ., և որովհետև Կախեթի Մեծ Կյուրիկե ևս մեռել էր 1039 թ., ուրեմն անցքը վերաբերում է 1039-1040 թվերին: Վարդան, հավանորեն, ծուլած է Փատլունի և նրա հաջորդի օրով կատարված միանման պատերազմական գործողությունները:

Բոյեկեան) իշխանական տոհմը, որ տիրում էր Պարսկաստանում ազդեցիկ դիրք ստեղծեց Բաղդադի արքունիքում Ահմետ Բոյյան իշխանի օրով այն աստիճան, որ իր որդին Աբումանսուր Բախտիար խալիֆ հռչակվեց (967-977): Սրան հաջորդեց իր հորեղբոր որդին իբն Խոսրով, այն անձը, որի մասին գովասանքով է խոսում Ասողիկ և հայտնում, որ «թագ եդեալ թագաւոր թագաւորաց կոչեցաւ», այսինքն՝ ամիր-ալ-ումարա կամ խալիֆ (977-982): Այս երկուսից մեկը պետք է լինի ակնարկած «Պարսից թագավորը»: Դավիթ Մագիստրոսի անձնավորությունը ևս անորոշ է: Հարկավ, Հունաց մագիստրոս չի նշանակում հույն մագիստրոս, այլ Հունաց կողմից մագիստրոսության տիտղոս ստացած անձ: Դավիթը վրական Բագրատունիներից է: Մեր նյութին նայող ժամանակամիջոցում միայն մի Դավիթ կա մագիստրոսական տիտղոսով, Ատրներսեհ թագավորի († 923) թոռնորդին: Մյուս թոռնորդին է հռչակավոր Դավիթ Կյուրապաղատ:

Ատրներսեհ († 923)

Բագարատ († 945)	Սմբատ († 958)
Ատրներսեհ († 961)	Ատրներսեհ († 983)
Դավիթ Մագիստրոս	**Դավիթ Կյուրապաղատ**
	† 1000 (ոչ 1001)

Դժբախտաբար, Դավիթ Մագիստրոսի մասին տեղեկությունները, ներդաշնակ չեն: Մի տեղեկությամբ, Դավիթ Մագիստրոս էրիսթավ էրիսթավաց (այսինքն՝ իշխան իշխանաց) էր և մահացավ 966 (կամ 969) թվին: Մյուս տեղեկությամբ, «Դաւիթ կիւրապաղատ էր եւ դարձաւ մեծ», ուրեմն նույն անձն ինչ որ Դավիթ Կյուրապաղատ († 1000)[1]: Այսպիսով, խնդիր է ծագում, թե նշանավոր կյուրապաղատն Ատրներսեհի թագավորի ո՞ր որդու թոռն էր, Բագարատի, թե Սմբատի: Ավելի հիմ կա Բագարատի թոռն համարելու, քան Սմբատի: Արդարև Դավիթ Կյուրապաղատ հրապարակի վրա էր արդեն 978 թվին, երբ ապստամբ Վարդ Սկլերոսը օգնության դիմեց նրան: Եթե այն Ատրներսեհի որդին լիներ, որը մեռավ 983 թվին, Դավիթ չէր կարող ինքնուրույն դիրք ունենալ 978 թվին, իր հոր կենդանության ժամանակ: Մինչդեռ մյուս Ատրներսեհը մեռավ 961 թվին և երկու որդի ուներ,

[1] **Brosset**, I, 280 և 285: Տարբեր աղբյուրներ չեն, այլ միևնույն հեղինակի գործի տարբեր ձեռագիրներ:

Բագարատ, որ մեռավ 966 թ. և Դավիթ, որ հաջորդեց եղբոր 966 թ. (կամ 969 թ. համաձայն կենսագրական տարբեր ցուցումի), սկզբում որպես մագիստրոս, հետագայում նաև կյուրապաղատ: Դավիթ Կյուրապաղատ մեծ հռչակ ունի հայ հեղինակների մոտ և շատ հավանական է, որ այդ բարյացակամ իշխանն էր, որ թագ ղրկեց Սենեքերիմին:

Բախտիար գահ բարձրացավ 967 թվին, ուրեմն գրեթե միաժամանակ Դավթի հետ: Այս թվից հետո է, որ Սենեքերիմ թագ կապեց, բայց ե՞րբ, մնում է անորոշ: Հետևապես Անանիա կաթողիկոսի կողմից զանցառություն չէր, որ նրան թագավոր չէ անվանում 958 թվին, ինչպես անվանում է Իշխանիկին: Սենեքերիմ թագավոր հռչակվեց, ինչպես թվում է, միևնույն ժամանակ և միևնույն պայմաններում, ինչ որ իր փեսա Սմբատ Սյունյաց իշխանը: Սա ամուսնացած էր Շահանդուխտի հետ, որ էր դուստր Սևադայի, ուրեմն քույր Սենեքերիմի: Սմբատ տակավին թագավոր չէր 963 թվին, և մեռավ թագավոր 998 թվին: Խաչենի տոհմը չսպառեց Սենեքերիմի եղբոր Գրիգորի որդու Փիլիպպեի սպանությամբ: Ժամանակագրական նկատումները ներում են Փիլիպպեի որդին համարել այն Սևադան, որի դուստրը, որ կոչվում էր նույնպես Շահանդուխտ, հարս գնաց Սյունյաց տուն: Սմբատ թագավորին հաջորդեց իր որդի Վասակը, որ 1026 թվին դեռ կենդանի էր: Սա որդի չուներ, այլ մի դուստր, հռչակավոր Կատրամիտե, որ կին եղավ Գագիկ Շահնշահի: Վասակից հետո իշխանությունն անցավ իր քրոջ որդիներին, Սմբատին և Գրիգորին: Սմբատ թագավոր է հիշվում 1043 թվին: Սրանից հետո էր իր եղբայր Գրիգորը: Ահա այս անձն էր, որ կին առավ Շահանդուխտին: Գրիգոր և Շահանդուխտ անզավակ էին, ուստի հաջորդ ընտրեցին Շահանդուխտի եղբոր Սենեքերիմին, Սևադայի որդուն: Սենեքերիմ և իր երկու որդիները, Գրիգոր և Սմբատ, իշխեցին Սյունիք: Գրիգորի դուստրը Կատա ամուսնացավ Խաչենցի Հասանի հետ, որպեսզի հաջորդե Գրիգորին, բայց Հասան իր կնոջ հետ հեռացավ իր հայրենի Խաչեն 1170 թվին[1]:

Մոնղոլները պաշարեցին 1260 թվին Մարտիրոսաց քաղաքը, այժմյան Մուֆարղին: Նրանց բանակումն էր «Սեւադա Խաչենցի, որդի մեծ իշխանին Գրիգորի», որ ընկավ քաջի մահով: Ասել է, թե Խաչենի իշխանական տոհմը չէր սպառել: Խաչենցի Սենեքերիմը, Շահանդուխտի եղբայրը, որ Սյունյաց իշխան դարձավ, ուներ բացի Գրիգորից և Սմբատից, որ իրեն հաջորդեցին, նաև մի երրորդ որդի, Սևադա: Մեզ թվում է, որ այս Սևադայի որդին է Գրիգորը, մոնղոլների դաշնակից Սևադայի հայրը: Սևադա կրում էր ուրեմն իր պապի անունը: Խաչենի գիծը կլրացվի հետևյալ կերպով:

---

[1] **Ստեփաննոս Օրբելյան**, գլ. ծթ-կ:

7 Հովհաննես-Սենեքերիմ, Գրիգոր, Ատրներսեհ, Փիլիպպե

8 Փիլիպպե († 1003)

9 Սևադա

10 Սենեքերիմ

11 Գրիգոր (1166), Սմբատ (1166), Սևադա

12 Գրիգոր

13 Սևադա († 1260)

Մատթեոս Ուռհայեցին շփոթել է հայտնապես Խաչենի Փիլիպպեն կամ Փիլիպպոսը մի ուրիշ իշխանի հետ և սխալ ծննդաբանություն կազմել: Կարևոր է պարզել այս երկրորդ Փիլիպպեի ինքնությունը: Սա պատկանում է մի այլ իշխանական տան, որ կապ չունի Խաչենի գծի հետ:

Ուռհայեցին պատմում է, որ Հայոց ԾԺ = 961-962 թվին Անի քաղաքում գումարված ժողովին մասնակցելու հրավիրվեցին Աղվանից Հովհաննես կաթողիկոսը և Աղվանից թագավոր Փիլիպպոսը, «որդին Գոշազգակայ, որդւոյ Վաչագանայ»: Ժողովը նպատակ ուներ որպես թե տալ «զօծումն թագաւորութեանն Աշոտ Գագկայ» (sic): Աշոտ «օծաւ եւ նստաւ ի գահոյս» և ժողովականները «ուրախ լինէին յաղագս քաջութեանն Գագկայ»[1]:

Այս տեղեկությունները շատ խառնակ են: Նախ 961-962 թվին Աղվանից կաթողիկոս Հովհաննես չէր, այլ Դավիթ, որին ձեռնադրեց Անանիա կաթողիկոսը 958 թվին, երբ մեռավ նախորդ Գագիկ կաթողիկոսը: Դավիթ վարեց իր աթոռը վեց տարի, ուրեմն 958-964: Նրա մերձավոր հաջորդների մեջ Հովհաննես անունով կաթողիկոս չկա: Ապա Աշոտ գահ բարձրացավ 953 թվին և դժվար թե իր օծումը հետաձգված էր մինչև 961 թիվը[2]: Աշոտի հետ հիշվում է Գագիկ, որ գահակալեց 989 թ., իր եղբոր Սմբատից հետո: Ակներև է, որ մեր պատմագիրը իրազեկ չէ անցքերին: Հավանական է, որ 961թվի հանդեսը կազմակերպված էր արքայական գահը Երազգավորից Անի տեղափոխելու առթիվ: Մեր նպատակի համար կարևոր է ամեն պարագային, որ այս միջոցին, թե հետո Աղվանից թագավորն էր Փիլիպպոս, որդի Գոշազգակի և թոռն Վաչագանի:

Փիլիպպոս հիշատակվում է նույն պատմագրի մոտ Չմշկիկ կայսրի

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** գլ. ե և զ:

[2] **Սմբատ Սպարապետ,** որ հետևում է Ուռհայեցուն, պահել է 961 թիվը, բայց Աշոտի փոխարեն գրել է Գագիկ:

Հայաստան գալու առթիվ 975 թվին: Կայսրին դիմավորող իշխանների թվում կային «թագաւորն Կապանից Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն»[1]: Կապանք Սյունիքի Կապան գավառը չէ, այլ Դերբենդ, ինչպես հեղինակը բացատրում է մի ուրիշ տեղ, ուր խոսելով հայրապետական աթոռի միաժամանակ չորս գահակալ ունենալու մասին՝ Գրիգոր, Թեոդորոս, Բարսեղ և Պողոս, հակադրում է այս քայքայուն վիճակը Աղվանից կաթողիկոսության և հիշում է այս առթիվ Աղվանից վերջին հայրապետները, Հովհաննես, Գեորգ, Հովսեփ, Մարկոս, Ստեփանոս թագավորները, Գագիկ, Դավիթ և Կորիկե, «որ նստէին այժմուս ի Լօռէ քաղաք Հայոց», նույնպես այն թագավորները, որ «էին ի Դարբանդ աշխարհին, Վաչական, եւ նրա որդի Գուշակտակ, Փիլիպպէ՝ որդի Գուշակտակին, Սեւադա՝ որդի Փիլիպպէի, Սենեքերիմ՝ որդի Սեւադայի, Գրիգոր՝ որդի Սենեքերիմայ, «որ դեռ եւս կենդանի էր մինչեւ գրէաք զայս մատենագրութիւնս մեր»[2]: Ուրեմն.

Վաչագան
|
Գուշակտակ
|
Փիլիպպե
|
Սևադա
|
Սենեքերիմ
|
Գրիգոր:

Պատմագիրը սխալ է: Վերջին երեք անձերը չեն սերում այս Փիլիպպեից, այլ Խաչենցի Գրիգորի որդի Փիլիպպեից, ինչպես տեսանք վերև:

Առաջին երեքը նույն Վաչագան, Գոշազգակ և Փիլիպպոս անձերն են, որոնք հիշված են 961 թ. ժողովի առթիվ: Գոշազգակ, թե Գուշակտակ, երկուսն էլ այլուստ անծանոթ անուններ են, հավանորեն աղավաղված: Սրանք Դերբենդի թագավորներ չեն: Ուռհայեցին տկար է իր ծննդավայրից հեռու աշխարհների գիտության մեջ: Բավական է հիշել, որ Պարտավ քաղաքը նույնացնում է Փայտակարանին:

Անանիա կաթողիկոսի քանիցս հիշատակած թղթից գիտենք, որ 958 թվի ժողովին ներկա էր ուրիշ իշխանների թվում «Վաչագան Գորոզուաց իշխան»: Սա Ուռհայեցու Վաչագանն է: Իբն-Հավկալի մի թանկագին

[1] **Մխթար Սպարապետ**, գլ. ժդ:

[2] Նույնը, գլ. ճիզ:

տեղեկությունը պարզում է Վաչագանի ինքնությունը: Արաբ մատենագիրը գիտե Վաշաղիան իբն Մուսի: Տակավին Սեն-Մարտեն[1] գուշակել է, որ Վաշաղիան է Վաչագան անունը, բայց չէր նկատել, որ նրա հայր Մուսի Ուտիացվոց հայտնի իշխան Մովսեսն է:

Աշոտ Երկաթ իր աներոջ Սահակ Սևադայի հետ արշավանք գործեց Ուտիք ընկճելու «զբիրտ ապստամբութիւնն Մովսիսի զոր իւր իսկ կացուցեալ էր զնա իշխան եւ հրամանատար ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառի»: Օգնության եկավ թագավորին նաև մեծ քորեպիսկոպոսը, որ ուներ «զմասն Գուգարաց մերձ ի դրունս Ալանաց»: Մովսես փախավ Սյունյաց Սմբատ իշխանի մոտ: Սա Սյունյաց համանուն թագավորի հորեղբայրն էր և իր որդու Վասակի հետ հիշված է Անանիայի առաջին ճանապարհորդության, 943 թվին: Մինչ Աշոտ Երկաթ զբաղած էր նվաճելու «խստապարանոց աւագակուտ» ուտիացիներին, Մովսես փորձեց Սյունիքից փախչել գնալ «առ մեծ քորեպիսկոպոսն Ծանարաց», հուսալով նրա օգնությամբ ազատել իր երկիրը: Բայց Երկաթը հաջողեց բռնել նրան և խարանել աչքերը[2]:

Ծանարաց քորեպիսկոպոսը նույնն է ինչ որ Գուգարաց: Պատմագրի աշխարհագրական ծանոթությունը փայլուն չէ: Գուգարաց աշխարհը, ըստ Կեղծ Խորենացու Աշխարհագրության, Հայաստանի 15 աշխարհներից մեկն էր Հայաստանի և Վրաստանի միջև, Կուր գետի աջակողմը Բերդույջ գետից մինչև Ճորոխ: Ծանարք ընկնում է Ալազան գետի ակունքների ծախակողմյան լեռները, Գուգարքից հեռու: Այնտեղ տիրող իշխանները կոչվում էին քորեպիսկոպոս: Մովսեսի դիմելը քորեպիսկոպոսին նշանակում է, թերևս, որ Ուտիացվոց իշխանը հողեր ուներ նաև Կուրի մյուս ափին, Կամբեճանի կամ Հերեթի շրջանում:

Մովսեսի անկումով, նրա իշխանությունը չոչնչացավ: Սահակ Սևադան իր որդու Գրիգորի հետ նույնպես ծանր պատիժ կրեց Աշոտ Երկաթից, բայց Գրիգորի որդին ժառանգեց հայրենի իշխանությունը: Մեզ թվում է, որ արաբ մատենագրի Վաշազիանի հայր Մուսե Ուտիացի Մովսեսն է, իր որդին՝ Վաչագան Գորոզուաց իշխանը: Իբն-Հավկալ կոչում է Վաշազիան Իբն Մուսեին իշխան Հարարի: Այսանուն աշխարհագրական վայր հայտնի չէ: Կեղծ Խորենացու Աշխարհագրության համառոտ խմբագրության առաջին հրատարակության մեջ, որ լույս տեսավ Լոնդոն, Վիստոն եղբայրների ջանքով (1), հիշված է Աղվանից գավառների թվում **Էռոռ**, որ նման է **Հարարի:** Արդյո՞ք նույն անունն է: Տեղը հայտնի չէ:

---

[1] **«Mémoires sur l'Arménie»**, I, 231.

[2] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 163-164:

Գորոզուքի դիրքը ևս ծանոթ չէ: Կաղանկատվացին գիտե Գորոզու բերդը և հիշում է հետևյալ առթիվ: Դավոն և Շապուհ անձերը սպանում են Ստեփանոս Աբլ-Ասադ իշխանին, որը կանչել էր Բաբանին, այսինքն՝ հռչակավոր աղանդապետ Բաբեկին, և նրա օգնությամբ հարվածել բաղակացիներին: Սպանիչներն ավերում են քանի մի վայրեր, որոնց թվում և Հակարի: Այնուհետև ըմբոստանում են Բաբանի դեմ և ամրանում «ի բերդն Գորոզու», և բռնանում 12 տարի հետևյալ գավառների վրա, Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պաղկանք, Մխանք, Սոթից գավառ: Աբլ-Ասադի մերձավորները վրեժ են լուծում, սպանելով Դավոնին և Շապուհին: Աբլ-Ասադի քեռորդին «Յիսայի անուանեալն Աբու-Մուսէ» տիրանում է նույն գավառներին: Բաբան գալիս է Ամարաս, խաղաղության կոչ է անում և առաջարկում հնազանդություն: «Ոմանք հնազանդեցան եւ յետոյ դաւեալք անհնազանդ եղին»: Բաբան թողնում է Ռոստոմ անունով մի զորավար և ինքը հեռանում Ատրպատական[1]:

Դավոն և Շապուհ սկսեցին խռովությունները Հայոց 276 թվից երկու տարի հետո, ուրեմն 278 = 829 թ. մայիս - 830 թ. մայիս, իշխեցին 12 տարի, ուրեմն մինչև 841-842 տարին, երբ նրանք սպանվեցին: Նույն տարին որպես թե Բաբան մտավ Ամարաս: Սակայն հայտնի է, որ Բաբան ձերբակալվեց օգոստոս - սեպտեմբեր 837 թվին: Հետևապես կամ 12 տարին է սխալ, կամ պատմագիրը ձուլել է Բաբանին իր որդու Աբդ-Ալլայի հետ, որին ձերբակալեց Խսա իբն Յուսուֆ իբն Ստեփանոս, այսինքն՝ Եսայի Աբու-Մուսե: «Ոմանք դաւեալք» ակնարկը վերաբերում է թերևս այս սպանության: Մեր պատմագիրը շատ փափկանկատ է Եսայի Աբու-Մուսեի վերաբերմամբ: Դավոնի և Շապուհի սպանողն էլ ինքն է, բայց պատմագիրը վերագրում է մերձավորներին: «Խաղաղութեան այր է» անվանում Եսային, մինչդեռ սա գոռ պատերազմող էր և պանծացավ այն հերոսական դիմադրությամբ, որ ցույց տվեց Բուղայի հանդեպ և հաղթեց արաբ զորավարին, ինչպես Թովմա Արծրունին պատմում է, քսան և ութ ճակատում, թեև ի վերջո զոհ գնաց պարտյալի նենգության, կալանավորվեց և ղրկվեց Սամառա: Թովման անվանում է նրան Եսայի կամ Ապումուսե երիցու որդի, իշխան Աղվանից: Ստեփանոս Աբլ-Ասադի քեռորդին էր, հոր անունը Հովսեփ էր, իսկ պապինը՝ Ստեփանոս: Կարծում եմ, որ սա մոր կողմից է պապ, այսինքն՝ նույն Աբլ-Ասադ:

Արաբական տեղեկությամբ Եսային Բայլականի իշխան էր: Բայլական, հին Փայտակարանն է, որի գլխավոր քաղաքն արաբական շրջանում կրում էր նույն անունը և գտնվում էր Պարտավից դեպի Երասխ տանող

[1] **Մովսես Կաղանկատվացի,** Գ. գլ. 19:

ճանապարհի վրա, հավանորեն Ամարասի շրջանում: Կաղանկատվացու Բաղակացիք (Բաղական-ցիք) նույն Բայլականի բնակիչներն են[1]: Խոռվարար իշխանների՝ Դավոնի և Շապուհի գրված վայրերից հայտնի են իրենց դիրքով Հաբանդ, որ է Ամարասի շրջանը, այժմյան Քեռնդալան կոչված գետի ավազանը, և Սոթից գավառը, Սևանա լճի արևելյան անկյունը: Այս սահմաններում էր գտնվում և Գորոզու բերդը, մեր հետաքրքրության բուն առարկան: Եթե Սողքի մոտ էր, կարող էր պատկանել Ուտիքի իշխանին: Իսկ եթե Բայլականի մոտերքն էր, պետք է ընդունել, որ Վաշազիան իբն Մուսե ոչ թե Ուտիքի, այլ Բայլականի իշխան էր, և որ Մուսե կապ ունենալու է Աբու-Մուսեի հետ: Աբու-Մուսե նշանակում է բառացի Մուսեի հայր, և իբն-Մուսե՝ Մուսեի որդի: Այս վերջինը, որ Վաշազիան, կամ Վաչագան էր, ուրեմն որդի էր Եսայի Աբու-Մուսեի: Հարցը մթագնում է և մնում երկբայելի, արդյո՞ք Վաչագան, Գոշազգակ, թե Գուշակտակ և Փիլիպպե Կապանից թագավորները Մովսես Ուտիացու սերնդից են, թե Եսայի Աբու-Մուսեի: Մեկը Ուտիքի և մասամբ Հերեթի իշխան է, մյուսը՝ Բայլականի: Եթե կշիռ տանք Ուռհայեցու խոսքին, թե նրանք իշխում էին «ի Դարբանդ աշխարհի», պետք է առավելություն տալ Ուտիքի:

Կարևոր է նաև դիտել, որ Ուտիք մեզ հետաքրքրող ժամանակում կոչվում էր Սևորդյաց աշխարհ և տարածվում էր Գանձակի և Գարդմանի շրջանից մինչև Տաշիր: Հաղբատ և Սանահին վանքերը, ըստ Ասողիկի, գտնվում են Սևորդյաց աշխարհում: Կոստանդին Ծիրանածնի օրով, բյուզանդական արքունիքը ճանաչում էր և պաշտոնական հարաբերություն ուներ մի շարք հայ իշխանությանց հետ, որոնց թվում հիշատակվում են Սյունիք, Խաչեն և Սևորդյաց երեք իշխանություն: Բուղայի շահատակությանց ժամանակ Սևորդյաց իշխան էր Ստեփանոս Կոն, որ մարտիրոսացավ 855 թվին, իսկ Գարդմանի իշխանն էր Կտրիճ, ըստ Հովհաննես Կաթողիկոսի, իսկ ըստ Թովմա Արծրունու՝ Ներսեհ իշխան (Գարիբայանից կարդալ Գարդմանից), որից հետևում է, որ Կտրիճ նույն Ներսեհն է: Ստեփանոս Սևորդին ձերբակալվեց Տուս գյուղում[2], որ է Տավուշ, այժմ, բրքական արտասանությամբ, Թովուզ, Աղստև և Չեգամ գետակների միջև, համանուն գետակի վրա: Բուն Գարդման կազմում էր Շամքոր գետի վերին հովիտը, ուր ցայժմ Կրամանըք գյուղը պահել է հին անունը բրքական երևույթի տակ: Տեսանք, որ Խաչենցի իշխան Սահակ-Սևադա նվաճեց Գարդման և Փառիսոս: Հավանորեն Ծիրանածնին ծանոթ Սևորդյաց երեք իշխանություններն էին Գարդման, Փառիսոս և Ուտիքի արևմտյան մասը:

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, գլ. լգ, Բաղակաց-ի փոխարեն ունի Բաղասականաց, որ զատ է Բայլականից, բայց նրան կից է արևելյան կողմից, ընդգրկելով Երասխի երկու ափերը:

[2] **Հովհաննես Կաթողիկոս**, էջ 71:

Իբն-Հավկալ հիշում է նաև Քաբալա որպես առանձին իշխանություն և անվանում է «ավազակների եւ մուրացիկների որջ»: Քաղաքի բնակիչները մեծ մասամբ մահմեդականներ էին, իսկ գավառի՝ քրիստոնյաներ: Քաբալայի իշխանը կոչվում էր Անբասա ալ-Ահվեր: Առաջին բառը արաբերեն նշանակում է առյուծ, երկրորդը՝ միականի: Քաբալա կամ Կապաղակ իսկապես Շաքեի քաղաքն էր և հին բերդի ավերակների մոտ այժմս էլ կա թրքական մի գյուղ նույն Ղաբալա անունով, Տուրիան գետի և իր Ջուղա վտակի խառնուրդի մոտ: «Միականի առյուծ» անունը արդյոք թարգմանություն է տեղական որևէ անվան, դժվար է ասել: Հետաքրքրական է, որ Խորենացուն վերագրած Աշխարհագրության համառոտ խմբագրության մեջ, որ հրատարակեցին Վիստոն եղբայրները 1726 թվին (5) Լոնդոն հիշատակված է Աղվանից գավառների թվում նաև Համբասի, որ անտարակույս, նույն Անբասա անունն է: Արդյոք իշխանն էր տվել իր անունը գավառին, թե ընդհակառակը, իշխանը այդպես էր կոչվում գավառի անունով, մնում է անորոշ: Իշխանի ազգությունը ևս մութ է:

Շաքեից հյուսիս, Ալազանի գետի արևելյան կողմը բարձրացող լեռնադաշտակի վրա ապրում էր Ծանարք կոչված ժողովուրդը: Իբն-Հավկալ նշանակում է Սանարիա իշխանությունը Ալանաց դրան և Վրաստանի միջև: Սանարիա նույն Ծանարքն է և իշխանը կրում է քորեպիսկոպոս տիտղոսը, Իբն-Հավկալի և Հովհաննես Կաթողիկոսի համերաշխ վկայությամբ: Ըստ վերջինիս, մեծ քորեպիսկոպոսը «պայազատէր իսկ զմասն Գուգարաց մերձ ի դրունս Ալանաց»[1]: Տեսանք, որ քորեպիսկոպոսն օգնության եկավ Աշոտ Երկաթին 918 թվին և հետո Ուտիացի Մովսես փորձեց փախչել նրա մոտ: Իբն-Հավկալ հաղորդում է, որ քորեպիսկոպոսը կոչվում էր Սենեքերիմ 950 թվի մոտերքը: Հավանական է, որ Աշոտ Երկաթի և Ուտիացի Մովսեսի ընդհարման միջամտող քորեպիսկոպոսը ինքը Սենեքերիմն էր[2]: Անունս վկա է նրա հայ ծագման:

Ծանարների մասին մի ուշագրավ զրույց է պահված Վարդանի մոտ: Մի քանի քաղդեացի գալիս են Գարդման և խնդրում Հերակլի նվիրած խաչից մի բեկոր: Նրանց խնդիրը կատարվում է: Սակայն վախենալով Բաղդադի ամիրապետից թողնում են Գարդման և հեռանում «յոտն Կովկասու» և տիրում այնտեղի երկրներին: Նրանցից մեկը թագավորում է և խնամենանում Չոր գետի թագավորի հետ: Զրույցիս հեղինակը կարծում է, որ նրանք Ծանարք կոչվեցին «զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց»:

---

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, էջ 163-164:

[2] Նաև **Մատենի**, I, 233:

Գարդմանի իշխանը կոչեց նրանց իշխանին քորեպիսկոպոս «ըստ լեզուին վրաց (իմա՛ հունաց, դավանաբանական տեսակետից)[1]:

Վերջին մեկնություններն արժեք չունին, բայց Ծանարքի կապը Գարդմանի հետ արժանի է ուշադրության: Հերակլի նվիրած խաչի մասը Հացունյաց խաչն է, որի պատմությունը հայտնի է (6): Նվերն ստացավ Սյունյաց իշխանուհի Բյուրեղ: Գարդմանն, ինչպես երևում է, բաժին էր ստացել այդ սրբությունից, բայց ե՞րբ և ի՞նչպես, զրույցը լռում է այդ մասին: Ծանարք ևս անբաժին չեն մնացել: Այս վերջին պարագան, իհարկե, ուրիշ բան չէ նշանակում, քան որ Ծանարքի առաջին քրիստոնյա քարոզը եկել է Գարդմանից: Քաղղեացիների Գարդման գալը կարող է արձագանք լինել մի հին դեպքի, որ հիշատակվում է Կաղանկատվացու մոտ: Եղիա կաթողիկոսի օրով Պարտավում գումարված ժողովի անդամներից մեկը պատկանում էր Հակովբիկ համայնքին, որ եկել հաստատվել էին Կամբեճան, «ի Մագիանացւոցն պարսից Յակոբիկ հաւատով, որք եկեալ ի Կամբիճան բնակեցան»[2]: Մագիանացիք արաբական ցեղ էին Կարմիր ծովի ափին, Սինայի մոտ, և կապ չունեն Պարսից հետ և ոչ Հակովբիկ համայնքի հետ: Խոսքը ասորական Հակովբիկների մասին է, որ թերևս խուսափելով նեստորական հալածանքներից, գաղթել էին Կամբիճան:

Քրիստոնեացած Ծանարքի հոգևոր տերերը համարվել են եպիսկոպոսներ կամ քորեպիսկոպոսներ Գարդմանի աթոռի և պահել են այդ կոչումը անգամ, երբ հոգևոր տեսչությունը տեղի է տվել զուտ աշխարհիկ և քաղաքական իշխանության: Երկիրն էլ Մայր աթոռ Գարդմանի անունով կոչվել է Գարդման: Այս է պատճառը, որ Ծանարաց երկիրը հայտնի է վրաց մոտ Գարդաբան անունով: Գարդաբան վրական հնչյուն է հայ Գարդմանի և գործ է ածվում կրկնակի իմաստով, նշանակելով բուն Գարդման[3] և Ծանարաց աշխարհ:

Առաջին քորեպիսկոպոսն էր Դաչի, որ ընտրվեց գարդաբանցիների կողմից 827 թվին և որին հաջորդեցին Սամուել և Գաբրիել մինչև 881 թիվը: Այնուհետև ոմն Գաբլուց, «Թիփլիսի Սահակ ամիրայի ազգական և Աշոտ I թագավորի հորեղբորորդին»[4], գրավեց Գարդաբան:

---

[1] **Վարդան**, գլ. **ծզ**, էջ 101:

[2] **Մխվսես Կաղանկատվացի**, Գ, գլ. 10:

[3] Ավելի ճիշտ, Գարդմանի արևմտյան մասը, որ հարում էր Բերդույջ գետին: Գարդմանի Սևորդյաց իշխանությունը տարածվում էր մինչև այս գետի հովիտը: Վրաց հասկացողությունը Գարդմանի մասին վերաբերում է այն շրջանին, երբ բուն Գարդմանը և նրա արևելյան մասը անցել էր Խաչենի և հետագայում Գանձակի տեր Փատլունին, ուստի և վրաց Գարդաբանը ընդգրկում է միմիայն մեծ Գարդմանի արևմտյան մասերը:

[4] Շփոթ տեղեկություն է: Սահակ ամիրան մահմետական էր, որի ազգակցությունը

Սրանից հետո՝ Փաղլա Արևմանելի եղավ քորեպիսկոպոս: Այս անձի, ինչպես և իր նախորդի ծագումն անհայտ է: Պարտավի 707 թվի ժողովին ներկա էր Աղվանից իշխաններից Թեոդորոս Վստամ յԱրևմանյան[1]. իշխանությունը անցավ Կորիկեի (893-918) և ապա իր որդուն Փաղլային (918-929): Սրանց ծագումը նույնպես անորոշ է:

Կորիկե II-ի օրով (929-976) Գարդաբանն ըմբոստացավ: Սա Կախեթի իշխան էր իսկապես, ինչպես և իր հաջորդն և որդին Դավիթ (976-1010), որ կոչվում է «քորեպիսկոպոս Կախեթի»: Կորիկե III կամ Մեծ (1010-1039) ընդհարվեց Վրաստանի թագավոր Բագարատի հետ, որ խլեց նրանից Հերեթ և Կախեթ և, ինչպես թվում է, նորից տիրացավ իր գահին Բագարատի մահից (1014) հետո: Սա թագավոր էր Ռանի, այսինքն՝ Առանի և Կախեթի, երբ սպանվեց 1039 թվին: Այս Կորիկեի քույրը Դավիթ Անհողինի կինն էր: Կորիկեի մահից հետո, Անհողինի որդին Գագիկ ժառանգեց իր քեռու իշխանությունը:

Որքան ստույգ են «Վրաց տարեգրքի» այս տեղեկությունները, դժվար է կշռել[2]: Թվում է, թե այստեղ շփոթություն կա Կախեթի և Գարդաբանի մեջ: Եթե ոչ բոլորը գեթ մի քանիսը իրապես Կախեթի իշխաններ էին և հաջողել էին տիրանալ նաև Գարդաբանին և նրա իշխանական տիտղոսին, քորեպիսկոպոսության: Արդարև, տեսանք, որ արաբական անսխալ վկայությամբ, Ծանարաց, այսինքն՝ Գարդաբանի քորեպիսկոպոսն էր 950 թվականներին ոմն Սենեքերիմ, մինչդեռ այս անունը հայտնի չէ վրաց աղբյուրին և նրա փոխարեն Գարդաբանի իշխան է նույն միջոցին Կյուրիկե II (929-976): Պետք է կարծել, որ վերջինս իրապես Կախեթի իշխան էր և գրավել էր կամ իր նախորդից ժառանգել էր նաև Գարդաբանը: Կյուրիկեի օրով Գարդաբանն ապստամբեց և հավանորեն վերականգնեց իր անկախությունը: Ապստամբը, հետևապես, նույն Սենեքերիմը պետք է լիներ, 950 թվի քորեպիսկոպոսը:

Անանիա կաթողիկոսից հայտնի է, որ 958 թվի ժողովի անդամների մեջ կար մի իշխան, որ կոչվում է Գուրգեն Արևելից իշխան և որի ինքնությունը մինչև այժմ պարզված չէ: Մեզ թվում է, որ այս Գուրգենն ոչ այլ ոք է, եթե ոչ Կյուրիկե II, Կախեթի ժամանակակից իշխանը: «Արեւելից իշխան», խորք

Գաբլուցի հետ խնդրական է, եթե իրոք, Գաբլուց հայ առաջին Բագրատունի թագավորի հորեղբորորդին է: Աշոտ I-ի հորեղբայրները հայտնի են, բայց Գաբլուց անունով հորեղբորորդի անծանոթ է:

[1] Մովսես Կաղանկատվացու այս հատվածը պակասում է տպագրի մեջ և հրատարակված է **Սամուել Երեցի** «Քրոնիկոն»-ի (5) հավելվածում, էջ 286:

[2] Սամուել և Գաբրիել անունները պատկան են քորեպիսկոպոսի և ավելի պատմական են թվում, քան Դաչի և մանավանդ Փաղլա: Վերջին անունս, որ նույն է ինչ որ Փաղլուն, երևան է գալիս առաջին անգամ տասներորդ դարու վերջերին:

որակում չէ: Հովհաննես Կաթողիկոսը Շաքեի Ատրներսեհ թագավորին կոչում է իշխան «Արեւելից հիւսիսոյ Կովկասու»: Նույն իրավունքով և Անանիա կարող էր Շաքեի հարևան Կախեթի թագավորին համարել «Արեւելից»:

Կորիկեի - Գուրգենի մասնակցությունն 958 թվի ժողովին մատնում է նրա հայ ազգությունը: Կարծում ենք, որ Կախեթի Կյուրիկե I (893-918) սկսած տոհմը հայ Բագրատունի ծագում ունի: Կորիկե III-ի ժառանգության անցնելը հայ Դավիթ Անհողինի որդուն Գագիկին միանգամայն բնական է: Այսպիսով, Շաքեի Ատրներսեհը և իր որդի Իշխանակը, Ծանարք - Գարդաբանի Սենեքերիմը, այլև Կախեթի Կորիկե - Գուրգենը հայ իշխաններ էին: Հայ ազդեցության զորացումը այս երկրների մեջ նոր թափ ստացավ մանավանդ Սմբատ I-ի թագավորության ժամանակ: Հովհաննես Կաթողիկոսը չէ չափազանցնում, երբ գծում է Սմբատի տերության սահմանները, նրանց մեջ առնելով Գուգարք, Ծանարք մինչև Ալանաց Դուռն: Բերենք իր խոսքերը. «եւ այսպէս ձգեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարեւմտից հիւսիսոյ մինչեւ ցԿարնոյ քաղաք եւ անդր եւս, քան զԿղարջս, քերեալ մինչեւ առ ափն Ծովուն մեծի և մինչեւ ցսահման Եգերաւոց. եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու, **ցԳուգարացիս եւ զԾանարս մինչեւ զԴուռն Ալանաց,** առեալ եւս յինքն և զամրոց դրան պահակի նոցա: Եւ անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչեւ ի քաղաքն Տփղիս եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր»[1]: Իշխանակը, տեսանք, որ իր մոր Դինարի շնորհիվ, ուրացավ հայրենի հավատը: Բայց պետք չէ կարծել, որ հայ դավանությունը վերացավ անհետ այս երկիրներից: Արտակարգորեն ուշագրավ է հույն 1673 թվին գրած մի ձեռագրի հետևյալ նկատողությունը, որ ավելորդ չենք համարում բերել ամբողջապես *εἶναι οἱ Ἰακωβῖται ὁποῦ ὀνομάζονται Χεψοῦροι, ὁμοίως εἶναι καὶ ἄλλη φυλὴ ὁποῦ λέγεται Τοῦχοι, καὶ εἶναι χριστιανοὶ καθολικοί. Εἶναι καὶ ἄλλη φυλὴ ὁποῦ λέγονται Δίδο καὶ ἑτέρα ὁποῦ λέγεται Καιστή* այսինքն, «Կան Հակոբիկներ, ուր նրանք կոչվում են Խևսուրք, կա նաև մի ուրիշ ցեղ, որ կոչվում է Թուշք, որոնք կաթուղիկյա քրիստոնյայք են: Հայտնի է մի այլ ցեղ, որ կոչվում է Դիդոյք և մի ուրիշը, որի անունն է Քիսաք»[2]:

Այստեղ թված ցեղերը, Խևսուրք, Թուշք, Դիդոյք և Քիսաք, ծանոթ են և ցայժմ ապրում են հին Ծանարաց աշխարհի սահմաններում: Խևսուրները կոչված են Հակովբիկ: Այսպես է կոչվում հականեստորական և հակաքաղկեդոնական Ասորական եկեղեցին, որ գաղափարակից է Հայ եկեղեցուն

---

[1] **Հովհաննես Կաթողիկոս,** էջ 89-90:

[2] **Վ. Բենեշևիչ,** «Օպիսանիե գրեչեսկիխ ռուկոպիսեյ» (ռուսերեն), Ա, 449:

դավանաբանական խնդիրներում: Անշուշտ, խոսքը ութերորդ դարու սկզբին Կամբեճան գաղթած հակովբիկների մասին չէ: Եթե անգամ նրանց մի հատվածը տեղափոխված լինի Ծանարք, ապաստան գտած Դաղստանի լեռներում, դժվար թե այդպիսի մի չնչին բեկոր կարենար իր ինքնակացությունը անխախտ պահել մինչև XVII դարը: Կարծում ենք անհայտ գրիչը հակովբիկ ասելով ակնարկում է հավանորեն Հայոց եկեղեցուն: Իսկ այս՝ այլ բան չէ նշանակում, քան հին հայ գաղթականությունը ձուլվել է տեղական ցեղերի հետ, մասնավորապես խևսուրների հետ, բայց պահել իր կրոնական ինքնությունը:

* * *

Այսպես Բագրատունյաց տոհմային ծառը, վերընձյուղելով հինավուրց արմատից, ծաղկեց և զարգացավ ամբողջ IX դարու ընթացքում, և փարթամ ոստերով փռվեց երեք երկիրների վրա, Հայք, Վիրք և Աղվանք:

Հարավում Բագրատունի աշխարհաշենները չկարողացան թևակոխել Տավրոսյան շղթան: Ամիդում հաստատված Շայբանի մուսուլման իշխանական տունը կանգնեցրեց նրանց առաջխաղացությունը: Արևելքից մրցորդ հանդիսացան Արծրունի իշխանները և տիրացան Վասպուրականին, սահման դնելով Բագրատունիների ծավալուն ազդեցության: Սյունյաց իշխանական տունը ևս վերածնված՝ հակամետ չէր ասպարեզը թողնել Շիրակի տերերին: Բագրատունիների թափը բնականորեն ուղղվեց դեպի հյուսիս, Վրաստան և Աղվանք: Նրանց շարժումը դյուրացրեց այն հանգամանքը, որ ամուր կռվան ունեին Սպերում հնուց ի վեր և նորը ձեռք բերին հարևան Տայքում: Այստեղից, որպես մի անառիկ ամրությունից, Բագրատունյաց զորությունը ծավալվեց և ողողեց ամբողջ վրական երկիրները մինչև Կովկասյան շղթան: Մի դար աշխարհավաք գործունեությունը նրանց ձեռքը տվեց Մոկաց աշխարհից և Տարոնից մինչև Ծանարք և Ափխազից ու Կարինից մինչև Շաքե:

Դեպի Վրաստան պարզված ճյուղը չհապաղեց անցնել կրոնական խտրության կամուրջը և ապազգայնացավ, դառնալով վրական ազգային հարստություն: Վրաց ազդեցությամբ Աղվանից ճյուղը ևս շրջեց իր երեսը նույն ուղիով դեպի ապազգայնացում:

Բնական երևույթ: Երկու երկիրներն իրենց սեփական ժողովուրդն ունեին, լեզուն ու բարքերը և ինչպես որ պարթև իշխանները հայացան հայ միջավայրում, այնպես էլ հայ Բագրատունիները համակերպվելով պետք է դառնային վրացի վրական շրջանում և աղվան՝ աղվանականում:

Սակայն, գլխավոր գործոնը հայ Բագրատունիների օտարացման Վրաստանում և Աղվանքում որոնելու է բյուզանդական քաղաքականության

մեջ: Կայսրերն էին, որ իրենց մեքենայությամբ խափանեցին երեք դրացի երկիրների քաղաքական հավաքումը Բագրատունյաց տոհմի ղեկավարության և հովանու տակ, նախ կրոնական խտրոցով, ապա և քաղաքական, անջատելով հայերից վրացիներին և աղվաններին և այդպիսով տապալեցին Բագրատունյաց ջանքերը՝ ստեղծելու միահեծան պետություն երեք երկիրներից:

Հայտնի է, որ Բյուզանդիոնը վաղուց բարեկամական հարաբերություններ էր մշակել կովկասյան լեռնականների, և նրանցից հյուսիս հաստատված խազարների և նման անհանգիստ ցեղերի հետ: Հարկավոր դեպքում դրդում էր նրանց սուրալ դեպի արաբական երկիրները և իրենց ասպատակություններով ջլատել թշնամու ուժերը:

Բագրատունյաց դարում կայսրերի ազդեցությունը հյուսիսաբնակ ցեղերի վրա ավելի զորացավ: Երբ նրանք համոզվեցին, որ անճարակ են Եփրատի ափերին հրամայական դիրք բռնել հանդեպ արաբների, և ընդհակառակը շնորհիվ արաբական սահմանների զինվորական կուռ կազմակերպության, ոչ միայն բյուզանդական փորձերն էին հետ մղվում, այլև հաճախ արաբներն իրենք էին նախահարձակ լինում և սրի, ավերածության ու կողոպուտի ենթարկում բյուզանդական հողերը, կայսրերը հետամուտ եղան ամուր ոտ դնել Սև ծովի արևելյան եզերքին, հենվելով Կովկասյան շղթային և լեռնականներին:

Այս է պատճառը, որ ափխազները հանկարծ երևան են գալիս քաղաքական ասպարեզում որպես առաջնակարգ ուժ: Ամենից առաջ նրանք կազմակերպվեցին և գրավեցին ծովափնյա հողերը մինչև Տրապիզոնի շրջանը, վերականգնելով նախնի լազական պետությունը: Իրապես ափխազները ենթակա էին բյուզանդական գերիշխանության:

Դարձյալ նույն Բյուզանդիայի տեսանելի թե անտես աջն էր, որ նպաստեց Տայքի Բագրատունի կյուրապաղատության առաջանալուն և խրախուսեց նրա մեկուսացումը Հայաստանից: Այս քաղաքագիտության անմիջական արդյունքն էր, որ արաբները չկարողացան մոտենալ Սև ծովի ափերին կամ Ճորոխի հովտին և ոչ արմատ ձգել Ափխազիա:

Մյուս կողմից, կայսերական ազդեցությունը հեռու մնաց Հայաստանից: Արաբ-բյուզանդական հակամարտը ծնավ համապատասխան տրամադրություններ. Բագրատունիք Հայաստանում անպայման թեքված էին արաբների կողմը առավելապես, մինչ Տայքում նրանք համակիր էին Բյուզանդիային: Նույն քաղաքական թեքումն ուներ և Ափխազյան իշխանությունը: Շահերի այս ներհակությունը սաստկացավ, ստանալով ազգային և կրոնական գունավորում, ճեղքեց Բագրատունյաց տոհմը, բաժանելով միմյանցից նրա հատվածների քաղաքական ուղիները:

Կրոն և եկեղեցի բյուզանդական քաղաքականության մեջ հետին գործոններից չեն: Աշխարհական ծրագիրներ առաջ վարելիս, նա բնավ չի անտեսել հենարան գտնել կրոնական և դավանաբանական համերաշխության մեջ: Փորձության մատնված եկեղեցիները հաճախ ընկճվել են, խոնարհել կայսերական հարկադրանքի առջև և հարմարվել տիրող քաղաքական կացության:

Ճշմարիտ է, եկեղեցին բարոյական խոշոր հաստատություն է, որի պատմությունը և կյանքն իր սեփական անիվներն ունին, բայց անուրանալի է, որ նրանց պտույտները կատարվել են գրեթե միշտ քաղաքական ելևէջների շրջանակի մեջ: Հայ-վրական և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները, նրանց բեկումները և վերջնական դասավորումը, անկախ տեղական բովանդակությունից, դավանաբանական, վարչական և ազգային խթաններից վերջին հաշվով շիտակ անդրադարձումներ են երկու հարևան մեծ պետությունների մրցության և նրանց քաղաքական գերակշիռ ազդեցության:

Հայ եկեղեցու ուրույնությունը պարտական ենք Պարսից պետական քաղաքականության, որ ձգտում էր անջատել հայերին քրիստոնյա Բյուզանդիայից, խրամատել հայ և բյուզանդական, և ընդհանրապես արևելյան և արևմտյան քրիստոնեությունը: Երբ VI դարում բյուզանդական զորքերը մտան Հայաստան և 591 թվին դաշնագրով մեր երկրի մեծագույն մասը անցավ քրիստոնյա կայսեր, հայ եկեղեցականությունը ցնցվեց և հակամետ էր ընդհանուր գետին գտնել արևմտյան մեծ քրիստոնեության հետ:

Վրացիք ավելի վճռական գտնվեցին և օգտվեցին առիթից խզելու իրենց կախումը Հայ եկեղեցուց և կապվելու բյուզանդական եկեղեցուն: Քիչ հետո, ինչպես «Վրաց տարեգիրք»-ն է հայտնում, Հերակլ կայսրը մկրտեց Գարդաբանի, իմա Գարդմանի, իշխանին: Խոսքը, անշուշտ, վերամկրտության մասին է քաղքեդոնական դրոշմով: Գարդմանը վաղուց քրիստոնյա էր և պետք չուներ մկրտության: Եթե հայերը պահ մի Հերակլի և Կոստանդինի առաջ խոնարհելուց հետո, շարունակեցին տատամսել և երկբայելի դիրք բռնել, պատճառն այն էր, որ նոր ուժ էր երևան եկել հանճին արաբների: Արևելքի և արևմուտքի զինական մրցությունը Հայաստանի շուրջը նորից արծարծվեց և հայտնի չէր, թե որ կողմին է ընծայելու բախտը իր վերջին ժպիտը:

Ութերորդ դարու սկիզբը քաշվեց մթությունը քաղաքական հորիզոնից և այլևս կասկած չկար, որ Հայաստանի մեծագույն բաժինը մնալու է արաբական իշխանության տակ: Հիշամ խալիֆայի հրամանով 724 թվին կազմեցին պաշտոնական աշխարհագիր, այսինքն՝ վիճակագրություն Հայաստանի, երկրի վարչական ձևակերպումը հաստատելու համար:

Այդ նույն ատեն էր, 726 թվին, երբ Հովհան Օձնեցի կաթողիկոսը գումարեց Մանազկերտի հայտնի ժողովը և վերջ դրավ երկարատև վարանումին, թոթափեց ընդմիշտ բյուզանդական եկեղեցու հավակնությունն ու քաղկեդոնական համակերպության խմորը և վերահաստատեց Հայ եկեղեցին իր հինավուրց հունի մեջ: Աշոտ պատրիկն արդեն հրապարակի վրա էր, նա որ 732 թվին նշանակվեց իշխան արաբների կողմից, հռչակավոր Աշոտ Կույրը, Բագրատունյաց վերածնունդի հայրը: Հայ քաղաքականությունը թեքվում էր արաբների կողմը կամավ, թե ակամա: Եկեղեցին շտապեց ճշտել իր դիրքը նոր կացության հանդեպ: Մանազկերտի ժողովը երկրի տրամադրության անխաբ հայտարարն էր և այս մտքով արժեքավոր ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական պատմության տեսակետից:

Վրաց եկեղեցու վիճակը այնքան էլ պարզ չէ: Յոթներորդ դարու վերջերից ընդհատվում է վրաց կաթողիկոսների շարքը երկար ժամանակով: Սակայն, անկասկած է, որ Վրաստանը, ինչպես և Բյուզանդական Հայաստանը մնացին փարած պետական դավանության: Արաբական ազդեցությունը երբեք չթանձրացավ Տայքի և Կղարջքի շրջանում, իսկ Ափխազական երկիրները մնացին ազատ: Ինչ և լիներ այս կողմերում եկեղեցու վիճակը, կարելի էր նախատեսել, որ պիտի կլանվեր կայսերական եկեղեցու կողմից, մանավանդ այն օրից, երբ Բյուզանդիան սկսեց ծանրանալ այս շրջանի վրա և ստեղծեց կյուրապաղատական իշխանություն:

IX դարում Ճորոխի հովիտն արդեն նուաճուած էր քաղկեդոնական եկեղեցու կողմից: Կրոնափոխության առաջին հետևանքն եղավ ազգափոխություն: Դավանությունն էր ազգության հատկանիշը, և քաղկեդոնիկ հայը համարվում էր հոռոմ, վրացի, բայց ոչ հայ: Երբ Բագրատունիները հանձին Վասակի մտան և հաստատվեցին Տայք և Կղարջք, երկրի բնիկ ազգագրական պատկերը փոխված էր կրոնական գետնի վրա: Նոր իշխանական տունը համակերպվելով տեղական միջավայրին, նույն ուղիով ընթացավ, մանավանդ որ կենդրոնն էր ընտրել Արտանուջ, վրական շրջանը: Շուտով դարձավ վրական ազգային հարստություն:

Այս հանգամանքով Բագրատունյաց տան միությունը ջլատվեց և նրանց քաղաքական հղացումները կանգ առան կես ճանապարհին:

Բագրատունյաց գործունեության դաշտն էր Հայաստանն արաբական լայնարձակ մտքով, այսինքն՝ ամբողջ Կովկասը, որի աշխարհագրական և քաղաքական կենտրոնն էր իրապես Շիրակը, իշխանական նոր ոստանը: Այստեղից բխած կամ ներշնչված ջանքերը տանում էին դեպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հավաքել, խմբել կովկասյան բոլոր ցեղերը մի և հանուր քաղաքական հարկի տակ, ներդաշնակել նրանց կյանքն ու գոր-

ծուներությունը համագործակցության և համերաշխության գետնի վրա, Բագրատունի ծառի հովանու ներքև:

Արևելքի բոլոր պետությունները միշտ հարստեճական (դինաստիկ) են եղել, ոչ միայն Իրանում, այլև Ասորեստան-Բաբելոնում: Բազմացեղ և բազմալեզու ժողովուրդները պետական օղակով շաղկապելու ուրիշ միջոց չի գտել հին պատմությունը: Բագրատունյաց ձգտումները եզակի երևույթ չէին: Նրանց ժամանակ նման տենչանքով տոգորված էին և Տաճիրյանք, Սաֆֆարյանք և Սամանյանք, որոնք IX-XI դարերի ընթացքին գուն գործեցին վերականգնել Իրանի միությունը համաձայն նրա պատմական ավանդությունների:

Բագրատունիք հաջողեցին իրենց ծրագիրը մինչև մի որոշ աստիճան: Բավական է վերհիշել «Վրաց տարեգրքի» զրույցը, որ Թորգոմի ութ որդիները, գլուխ ունենալով Հայոսին, կազմում էին մի ընտանիք, որ նրանք բոլորը խոսում էին մի լեզու և այդ լեզուն հայերեն էր:

Եթե չենք ուզում արհամարհել այս զրույցները, որպես անարժեք և մտացածին առասպելներ, ապա պետք է ընդունենք, որ նրանք պատմական հայտնի շրջանի ոչ միայն գաղափարական որոնումների, այլև իրական հասումների արձագանքն են:

Այդ շրջանը Բագրատունյաց դարն է: Բագրատունի կորովի գործիչներն էին, որ հարթեցին, պատրաստեցին այն հողը, որի վրա իրավ կարող էին բողբոջել կովկասյան եղբայրակցության սերմերը և նրանց ճայնատու և գաղափարախոս զրույցները:

Սակայն, կրոնական և ֆեոդալական խրամատները, որ ինքնին բարեբաստիկ չեն պետական խոշոր կազմակերպությանց, դառնում են որոշ պայմաններում պայթուցիկ նյութ ամեն մի հավաքարար գործի համար: Բյուզանդ և արաբ հոշոտիչ քաղաքականությունը բորբոքեց կրքերը, խրախուսեց ինքնիշխանության անջատիչ տենչերը և ցրեց դարավոր ճիգերի արդյունքը, խափանելով գլուխ բերել քաղաքական մեծ շենքը: Այն թագերը և կամ կիսաթագերը, որ ամիրապետները բաշխում էին Բագրատունի, թե այլ իշխաններին և կայսրներն ողջունում, իրապես այլ խորհուրդ չունեին, քան արգելել, խանգարել իսկական թագի երևումը: Թագերը դարձան անջատ ուղիների գլխաքարեր:

Բագրատունյաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը, ինչպես մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցության շաղկապի մեջ, ներկայանում է մեզ որպես մի խիզախում՝ գաղափարական լայնությամբ անօրինակ միջնադարյան նեղսիրտ մթնոլորտում և կազմում է այս նշանավոր տոհմի պատմական փառքը:

ՀԱՅ-ԾԱԹԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

Հայ պատմիչները խոսում են մի ինչ- որ ժողովրդի մասին, անունով ծաղ կամ ծաթ, որի ծագումը մինչև այժմ մի առեղծված է տակավին: Այս հարցը ի միջի այլոց հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ ծաթերը որոշ առնչություն ունին հայ եկեղեցու պատմական կյանքի դավանաբանական հոսանքներից մեկի հետ:

Քաղկեդոնական հարցին նվիրված, մի ընդարձակ հոդվածի մեջ[2] Ն. Մառ կանգ է առնում նաև ծաթերի հարցի վրա և քննելով նրանց մասին եղած պատմական տեղեկությունները, գալիս է այն եզրակացության, որ ծաթ կոչվում էին հայ քաղկեդոնականները: Ծաթերի կայսերական եկեղեցուն պատկանելը կասկածից դուրս է. ի՞նչ էին ներկայացնում նրանք սակայն ցեղական տեսակետից, արդյոք նրանք իսկապես հայե՞ր են. ահա այս հարցի լուսաբանության նվիրված են հետագա տողերը:

Պատմական վկայությունները համաձայն չեն իրար հետ. ըստ մի քանիսի՝ ծաթերը առանձին ժողովուրդ են, տարբեր հայերից, ըստ մյուսների՝ դա լոկ մի մականուն է հայ-քաղկեդոնականների: Առաջին անգամ՝ ծաթերի մասին հիշում է Ուխտանես X դարում: Դժբախտաբար՝ նրա աշխատության ծաթերին վերաբերվող մասը մեզ չի հասել: Այդ մասին մենք գիտենք հեղինակի ընծայականից, ուր նա հաշիվ է տալիս յուր աշխատության բովանդակության մասին և ի միջի այլոց՝ մի քանի կարևոր տեղեկություններ է հայտնում ծաթերի մասին: Դիմելով Անանիա Նարեկացուն, որի խնդրանքով նա կազմել էր իր աշխատությունը, Ուխտանեսը, ասում է, որ վրաց բաժանման պատմությունից հետո պիտի պատմի նաև «Զմկրտութիւն ազգին՝ որ Ծաղն կոչի, նաեւ զգաւառս եւ զգեղս գլխաւորս եւ զքաղաքս եւ զբերդս իւրաքանչիւր գաւառօք՝ որ են յաշխարհին յայնմիկ, որպես եւ կամք քո հրամայեցին, եւ զվանորայս հանդերձ վանականօք՝ անուամբ իւրաքանչիւրոց, եւ զանապատս միայնաւորաց, եւ որք բազմակիցք եւ որք

[1] "О происхождении Армян-Цатов" տե՛ս "Журнал Министерства народного просвещения", 1911, 238-249.

[2] **Н. Марр,** Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах- халкедонитах, СПб., 1905.

միայնակեացք բնակեալ յապատս եւ յանապատս, եւ զօրինակ ցուցանել զօրութեանն Աստուծոյ, որ ի ծածուկս եւ ի յայտնի գործէր ի մկրտեալսն՝ երեւմամբ նշանաց եւ արուեստից՝ տեսլեամբ եւ յայտնութեամբ, միանգամայն եւ զգործս հոգեւորս եւ զբան եւ զջան եւ զվաստակ եւ զհանդէս երանելի եպիսկոպոսացն Գրիգորի եւ իւրոյ պաշտօնէիցն, զգործակցութիւն եւ զհրաման թագաւորին Սմբատայ, եւ զնախանձ նախարարացն ի հոգեւոր գործն, եւ զհանդէս իշխանացն ըստ իւրաքանչիւր իշխանութեան, եւ զայլ եւս պատուաւորացն ըստ իւրաքանչիւր պատուոյ, որք գործակիցք լինէին մեզ ի բանս եւ ի գործ հոգեւոր: Նաեւ զահ եւ զերկիւղ եւ սպառնալիս գանանամիտ եւ թեթեւահաւատ (եւ) ճիւաղաբարոյ մարդկան այնոցիկ ի վերայ մեր: Վասն զի այսոցիկ հրամայեալս ի քէն զտուգութիւն բերէ պատմութիւնս, քէպէտ եւ մեզ աշխատութիւն հասուցանէ յերկարութիւն բանիցս: Այլ քանզի եւ ոչ այսու եւեթ բաւականանային չարութեամբ, այլ ի մարտ մտանէին եւ ի կռիւ, եւ որսային ազգի ազգի հնարիւք մեքենայից հրացանութեամբ, եւ այլ եւս բազում եւ պէս պէս չարութեամբ անցնի եւ դաւաճանութեամբ. արդ զայսոսիկ խնդրեցեր ուսանել: Դարձեալ եւ սկիզբն եւ զբնակութիւն եւ զպատճառս ասացից, եթէ ուստի՞ կամ զի՞նչ եւ կամ զիա՞րդ եւ կամ է՞ վասն, եւ կամ որէ՞ս, եւ կամ որպո՞վ օրինակակաւ» (Ա, 14-15):

Այս ամենը Ուխտանեսի աշխատության երրորդ և գլխավոր մասի բովանդակությունն էր կազմում: Առաջին գիրքը պարզ քաղվածք է՝ գլխավորապես Խորենացուց. երկրորդը՝ կազմած է մեզ լավ ծանոթ «Գիրք թղթոց»-ի հիման վրա: Ինքնուրույն է միայն վերջին գիրքը, որ նվիրված էր ծաթերի մկրտության պատմության: Նարեկացի գիտնական Անանիա վարդապետի խնդիրքը վերաբերվում էր հենց ծաթերին, մնացածը նրան հայտնի էր աղբյուրներից Ուխտանեսից ոչ պակաս: Թե ինչպես կատարեց Ուխտանեսը Անանիայի հանձնարարությունը՝ չգիտենք, որովհետև նրա աշխատության այդ մասը մեզ չի հասել: Ուխտանեսը գրում էր X դարի վերջը, իսկ XII դարի սկզբին ապրող Պողոս Տարոնեցի, որ նույնպես հետաքրքրվում էր ծաթերով, երևան չի հանում որևէ ծանոթություն Ուխտանեսի աշխատության հետ: Հազիվ թե կարելի է Պողոսի անտեղյակ լինելուն վերագրել այդ. նա գիտնականի հռչակ ուներ և նրա դավանաբանական աշխատությունը, որ հասել է մեզ, ապացուցանում է նրա լավ ընթերցված լինելը պատմական գրականության մեջ: Հավանականաբար Ուխտանեսի ծաթերի պատմությունը վաղ է կորել, Պողոսի ժամանակից առաջ: Դրանով է բացատրվում, որ հետագա հեղինակները գրեթե ոչինչ չգիտեն ծաթերի մասին և այն սակավ տեղեկությունները, որ հաղորդում են նրանցից մի քանիսը հիմնված են ենթադրությունների վրա: Բացի Պողոսից ծաթերի մասին խոսում են Մխիթար Այրիվանեցին XIII դարում և Մխիթար

Ապարանցին XV դարում: Պողոսի մեկնությամբ՝ ծաթերը ի Հռոմա աշխարհն բնակվող հայեր են. «երբ կաթողիկոս Հովհաննես 726 թվին ժողով գումարեց և հայերին քաղկեդոնականությունից դեպի ճշմարիտ հավատքը դարձրեց, Հռոմի հողերի վրա ապրող հայերը իրանց հավատքի մեջ հաստատ մնացին, և ահա նրանցիցն են ծագում ծաղերը»[1]:

Մխիթար Այրիվանեցին ծաթերին նույնացնում է ծավդեացվոց հետ: Նա գրում է.

«Յաւուրս տէր Դաւթի (828-853) Գարաման քահանայ Կակաղեցի որոշեալ ի Հայոց՝ ի Վիրս դարցոյց զԾոնդէացիսն, այս է Ծաղն, որ կան այժմ ի Հռոմս» (էջ 69):

Ավելի հետաքրքրական են մյուս Մխիթարի XV դարի հեղինակի տեղեկությունները: Մի փոքրիկ գրվածքի մեջ, Հայաստանում՝ եղած զանազան աղանդների և հերետիկոսական ուսմունքների պատմության նվիրված, նա հիշում է ի միջի այլոց ծաթերի մասին. «...քանզի ոմանք կոչին Սոնթ, ըստ Սրասցոց կոչելոյն եւ բարբառոյն, որ ասի Բաժանեալք կամ թափեալք. վասն զի բաժանեալ թափեցան ի Սրսոյ միաբանութենէն որ ընդ Սուրբ եկեղեցւոյ: Եւ ոմանք կոչին Ծաթ Հայեր, որ լեզուով եւ գրով ազգաւ են Հայք, բայց դաւանութեամբ եւ ամենայն օրինօք են Յոյնք»... Նույն հեղինակի խոսքով մոլորության մի ոմն Անդրեասա (Կայանագրաց) հետևեցին «ոմանք ի Յունաց եւ ոմանք ի Հայոց, որք մերձակայք են այնմ գաւառին (Կեսարիո) եւ երկրին, որք կոչին Ծայթ Յոյնք եւ Ծայթ Հայք, որք ամենեւին դաւանութեամբ եւ օրինօք եւ պարագայիւք նոյն են Ծայթ Հայքն ընդ նոյն Յունաց, եւ յոյժ ատեն եւ բամբասին զՀայսն, որք ոչ հաւանին վերոյգրեալ աղանդեացն միայն լեզուով եւ գրով են Հայք, եւ այլոց ամենայնիւ միաբան ընդ նոյն Յունաց»[2]:

Բացի հայ հեղինակներից, ծաթերի մասին տեղեկություններ կան նաև Նիկոն Սեավլեռնցու մոտ, որ ապրում էր XI դարի երկրորդ կիսում: Նրա «Տակտիկօն»-ի 35-րդ գլխի մեջ երեք փաստաթուղթ է բերվում:

1. Անտիոքիայի պատրիարքի Երուսաղեմի Եվփիմիոս պատրիարքին ուղղած գրության պատճեն:

2. Ս. Սիմոնի վանքի Պետրոս վանահոր գրության պատճեն, նույն պատրիարքին:

---

[1] **Պողոս Տարոնեցի,** էջ 26 դ:

[2] **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 552-553: Ն. Մառ իր վերոհիշյալ հոդվածի մեջ օգտվել է Մխիթարի գրվածքի քաղվածքներից, որոնք բերված են Ղ. Ինճիճյանի մոտ (նույն տեղից օգտվում է և Ճանիկյան) և աչքից թողել է իսկական բնագիրը, տպված Ալիշանի մոտ, այդ պատճառով նրան անհայտ է մնացել ամենակարևորը հիշյալ հեղինակի վկայության մեջ ծաթերի վերաբերյալ:

3. Նիկոնի՝ Երուսաղեմի վարդապետ-աբբա Գերասիմին ուղղած գրության պատճեն[1]:

Առաջին փաստաթուղթն է.

Τοῦ αὐτοῦ περὶ τῶν πνευματικῶν ἡμῶν ἀδελφῶν τῶν ἐπιλεγομένων τζάτων τὸ ἴσον τοῦ πατριαρχικοῦ πιττακίου τοῦ ἀποσταλέντος πρὸς τὸν κύριον Εὐθύμιον πατριάρχην Ἱεροσολύμων...

223α ἠκηκόημεν γὰρ ὅτι τῶν τζάτων Ἀρμενίων τινῶν ἤτοι τῶν ἀναχωρητῶν τῆς τῶν Ἀρμενίων θρησκείας οὐτ' οὔπου ποιησαμένων τὴν κατοίκησιν καὶ ἡσυχάζειν αὐτόθι προεχομένων τινὲς πάντων <ἐπηρείᾳ> τοῦ μισοπάλου ἐχθροῦ ἐπιτίθενται τούτους καὶ ὡς οὐκ ὀρθοδόξους διαβάλλουσιν καὶ παντοίῳ τρόπῳ λυποῦσιν αὐτούς. οἱ γὰρ τοιοῦτοι καὶ δεκτέοι ἡγοῦντο παρὰ τῶν προηγησαμένων ἁγιωτάτων πατριαρχῶν ἡμῶν καὶ τινες αὐτῶν ἀδελφοὶ ἐντεταγμένοι εἰσίν ἔν τε τῇ σεβασμίᾳ μονῇ τοῦ ἁχράντων μυστηρίων τοῖς ὀρθοδόξοις συρμεῖα λαμβάνουσιν καὶ οὔτε ἐκ πάλαι τῶν χρόνων μέχρι τοῦ νῦν ἐνέσκυψεν ἀμφιβολία περὶ τὴν δόξαν αὐτῶν. ταῦτα οὖν ἡμεῖς ὡς εἰδότες ἐδηλώσαμεν τῆς σῆς δὲ βουλήσεως ἐστὶν ἥ τῇ γνώμῃ τῶν προηγησαμένων μακαριωτάτων πατριαρχῶν ἑπακολουθῆσαι ἤ ἄλλως πως κατὰ τὸ δοκοῦν καί ἀρέσκον θεῷ διαπράξεσθαι αἱ οὖν τίμιαι καί ἅγιαί σου εὐχαὶ χαρισθείησαν ἡμῖν διὰ βίου παντός.

...մենք լսել ենք, որ ոմանք՝ բարեատյաց թշնամու չարախոսությամբ ամեն կերպ հարձակվում են ծատ հայերի վրա, հայ սպասի այն անապատականների վրա, որոնք հաստատվել են այնտեղ՝ ընտրելով ճգնավոր կյանք, և զրպարտում են՝ իբր թե նրանք ուղղափառ չեն և ամեն կերպ վշտացնում են նրանց: Այն ինչ նրանք՝ առաջինը՝ ընդունված էին մեր առաջնորդներից, սուրբ պատրիարքներից, և բացի այդ՝ նրանցից ոմանք եղբայր էին կարգված սուրբ Սիմոն Հրաշագործի և ուրիշ վանքերի մեջ, ուր նրանք պատարագ են կատարում և սուրբ հաղորդություն են ընդունում ուղղափառների հետ միասին: Հնուար մինչև այժմ՝ նրանց հավատքի մասին ոչ մի կասկած չի ծագել: Այս ամենը հայտնում ենք իբրև լավատեղյակ. քո կամքն է՝ կամ հետևել հին երանելի պատրիարքների կարծիքին, կամ այլ կերպ գործել՝ ինչպես Աստծուն հաճո կլինի:

---

[1] Հունարեն բնագիրը դեռ չի հրատարակված, նա պատրաստված է տպագրության (ըստ՝ Син. рук., թիվ 41) Վ. Ն. Բենեշևիչի կողմից, որ սիրալիրաբար տրամադրությանս տակ դրեց իր ունեցած ձեռագիրը, դրա համար ես հայտնում եմ այստեղ շնորհակալությունս (I): Ն. Մառ օգտվում էր «Տակտիկոն»-ի սլավոներեն թարգմանությունից ըստ կայսերական գրադարանի (Имп. публ. библ.) ձեռագրի: Ծաթերին վերաբերյալ նյութերի վրա մեր այս ակնարկի լիակատարության համար՝ ավելորդ չենք սեպում՝ բերել այստեղ «Տակտիկոն»-ի մեզ հետաքրքրող տեղերը հունարեն, մանավանդ որ որոշ տեղեկություններ կան սլավոներենից:

Երկրորդ փաստաթուղթը՝ Պետրոս վանահոր Սուրբ Սիմոնի վանքից ուղարկած գիրը ոչինչ նոր բան չի պարունակում, այլ կրկնություն է Անտիոքիայի պատրիարքի գրության:

Շատ կարևոր տեղեկություններ կան երկրորդ գրության մեջ, Նիկոնից՝ նախընթաց գրությունների պատճեններով հանդերձ աբբա Գերասիմին ղրկած:

Τοῦ αὐτοῦ εἰς τὸν ἀββᾶν Γεράσιμον περὶ τῶν αὐτῶν καὶ τὸ ἴσον τοῦ πιττακίου τὸ ἀπόλυθεν εἰς τὰ Ἱεροσόλυμα πρὸς τὸν ἀββᾶν Γεράσιμον ὅπως ἀναγνωσθῇ ἐπὶ μέσεως μετὰ τῶν δύο πιττακίων τοῦτε πατριάρχου καὶ τοῦ ἁγίου Συμεὼν τοῦ θαυματουργοῦ τῆς μονῆς.

234b... τούτους δὲ τοὺς ἀδελφοὺς ἡμῶν τοὺς λεγομένους τζάτους ὅπου ἄν εἰσὶν καὶ εἰς οἱον κατοικοῦσιν τόπον ἀπὸ πανταχόθεν ἐξερευνήσαντες εὕρωμαι αὐτοὺς χάριτι Χριστοῦ ἀνεπιλήπτους εἰς τὰ τοιαῦτα εἰς τε τὰ περὶ πίστεως. ὁμοίως καὶ γὰρ ὁ μητροπολίτης τῆς ἐνορίας αὐτῶν καὶ τῆς χώρας Μεσοποταμίας ἐν ᾧ καὶ οἰκοῦσιν ἀπὸ τῶν ἄνωθεν χρόνων. οἳ καὶ διὰ τὰς ἐπιδρομὰς τῶν ἐθνῶν ἐσκορπίσθησάν τινες ἐξ αὐτῶν εἰς διαφόρους χώρας ἀλλ' ὅμως καθὼς καὶ εἴπαμεν ὁ μητροπολίτης αὐτῶν ἐκ τῆς Ἀντιοχείας πατριαρχοῦντος χειροτονεῖται ὡς θρῶνος ὑπάρχων πάσης ἀνατολῆς καὶ ἔνδεσμον καὶ κανονικὸν αὐτῶν ἐστιν τὸ ἱερατεῖον καὶ ὅλον αὐτὸν τῷ συστήματι καὶ ἔξω πάσης χάριτι Χριστοῦ ὑποψίας καὶ ὅμως αὐτοῦ πάλιν τὸν βίον τοῦ μεγάλου πατρὸς ἡμῶν Σάββα ἐντύχόντες εὑρήσεται τούτους συνοικοῦντας τὸν μέγα καὶ εἰς τὴν θεοκτίστον ἐκκλησίαν ἐπιτραπεῖναι παρὰ τοῦ ἁγίου ἐν τῇ Ἀρμενίῳ διαλέκτῳ ψάλλεσθαι τὴν ἀκολουθίαν τοὺς δὲ ἑλληνιστὰς πάλιν παρὰ μίαν ψάλλειν καθῶς καὶ οἱ ἐνταῦθα ἀδελφοί ἡμῶν ψάλλουσιν τῇ τῶν Ἀρμενίων διαλέκτῳ καὶ οἱ ἑλληνισταὶ παρὰ μίαν εἰς διαφόρους δέ χοροὺς διὰ το μὴ ἔχειν δύο ἐκκλησίας μόνον τὸν τρισάγιον ὕμνον ἑλληνιστὶ λέγουσιν καθὼς καὶ εἰς τοῦτο ὁ ἐν ἁγίοις πατὴρ ἡμῶν Σάββας παρέδωκεν διὰ τὴν προσθήκην καὶ 235a ὑπόληψιν Πέτρου τοῦ Γναφέως τὸ ὁ σταυρωθεὶς δι ἡμᾶς καὶ αὐτοῦ πάλιν τὸν βίον τοῦ μεγάλου πατρὸς ἡμῶν Θεοδοσίου ἐντύχοντες εὑρήσεται τούτους μετ' αὐτὸν συνοικοῦντας καὶ εἰς ἐκκλησίαν τὴν τῶν Ἀρμενίων διαλέκτῳ παρὰ μίαν ψάλλειν τὴν ἀκολουθίαν καὶ ἀρκετὸν ὑμῖν μιμεῖσθαι τούτους τοὺς δύο μεγάλους φωστῆρας.

... այս մեր եղբայրները, որ կոչվում են՝ ծատ, ամեն տեղից, որտեղ նրանք գտնվում են և բնակվում տեղեկություններ հավաքելով, մենք գտանք, որ

նրանք՝ Քրիստոսի ողորմությամբ անթերի են հավատքի մեջ, ինչպես և ամեն բանի մեջ, որ վերաբերվում է հերձվածողության և ժողովուրդին: Նրանց գավառի միտրոպոլիտն նույն ժամանակ միտրոպոլիտ է և Միջագետքի աշխարհի, ուր նրանք բնակվում են հնոց. և հեթանոս ժողովուրդների արշավանքների պատճառով նրանք մասամբ ցրվեցին զանազան երկիրներ: Բայց նրանց միտրոպոլիտն, ինչպես ասեցինք, ձեռնադրվում է Անտիոքիայի պատրիարքից, որովհետև նա է ամբողջ Արևելքի գահը: Նրանց մոտ օրինավոր է և ըստ կանոնների՝ քահանայությունը և ամեն բան տարվում է կանոնաղրության համապատասխան և Քրիստոսի ողորմությամբ դուրս է որևէ կասկածից: Եթե ընթերցեք մեր մեծ հոր՝ Սաբբայի վարքը, դուք կտեսնեք, որ նրանք ապրել են մեծի հետ և թույլտվություն ունեին սրբից Աստծու շինած եկեղեցու մեջ կանոնը հայերեն լեզվով երգել, իսկ հունախոսները երգում էին առանձին, ինչպես և այստեղ մեր եղբայրները երգում են հայերեն, իսկ հունախոսները՝ առանձին՝ տարբեր դասերի վրա, երկու տարբեր եկեղեցիներ չունենալու պատճառով: Միակ երեքսրբյան երգը երգում են հունարեն, ինչպես այդ կտակել է մեր Սուրբ Սաբբա հայրը Պետրոս Գնափեացու (թաղեգործ) հավելման և տարակուսանքի պատճառով, «որ խաչեցաւ վասն մեր»: Կարդալով նույնպես մեր մեծ հոր՝ Թեոդոսիոսի վարքը, դուք կգտնեք, որ նրանք ապրել են նրա հետ ևս ու երգում էին իրանց կանոնը եկեղեցու մեջ առանձին՝ հայերեն լեզվով: Չեզ մնում է հետևել այս երկու մեծ լուսավորներին»:

Սրանով սպառվում է պատմական գրականության մեջ ծաթերի մասին ունեցած բոլոր տեղեկությունները[1]: Այս տեղեկությունները չեն կարող լուծել ծաթերի ծագման հարցը, ամենից առաջ այն պատճառով, որ նրանք ոչ բոլորովին համապատասխան են իրար: Հունական պատմիչը համաձայն է Պողոս Տարոնեցու հետ, որ ծաթերը հայ են և հայ քաղկեդոնականներ: Բայց ավելի հին հեղինակ Ուխտանեսի մոտ, որ X դարի վերջն էր ապրում, ծաթերը ներկայացված են իբրև առանձին մի ազգություն[2], որ քրիստոնեություն ընդունեց առաջին անգամ հենց նրա օրով, Սմբատ [II] թագավորի ժամանակ (977-989)[3]:

---

[1] Ծաթերի մասին հայ պատմական գրականության մեջ մեր ունեցած տեղեկությունները ավելի մանրամասն լրիվ առաջ են բերած հայր Ներսես Ակինյանի, «Կյուրիոն կաթողիկոս վրաց» աշխատության մեջ (էջ 71-81): Նույնպես մատենագրական մի ցանկ ծաթերի վրա եղած գրածների (էջ 73):

[2] Հմմտ. **Ներսես Ակինյան,** Կյուրիոն կաթողիկոս վրաց. Պատմություն հայ-վրական հարաբերության Ջ-րդ դ. մեջ (567-610): Վիեննա, 1910: Ըստ իս Ուխտանեսի ակնարկած «ծաղ ազգն» նույն է բոլորովին «ծայթ» (հերձվածող) հայերու հետ, ազգ կոչուած է շեշտելու համար պարզապես ծայթերու բազմությունը, էջ 79:

[3] Պատմագրի գործածած բառն «մկրտություն պետք չէ պղտորել մեր միտքը, իբր թե հեթանոս ժողովրդյան մը մասին ըլլա խոսքն: Ժամանակակից հայ կաթողիկոսաց (Անանիա

Իսկ Մխիթար Այրիվանեցին մատնանիշ է անում, որ ծաթերը (ծադ) նույն են, ինչ որ ծողեացիք (ծոնդեացիք), որոնք X դարում Հայոց եկեղեցուց վրաց եկեղեցու ծոցը անցան: Պատմագիրների հակասական վկայությունները քննելով, Ն. Մառ Պողոս Տարոնեցու և Նիկոն Սեավլեռնցու կողմն է թեքվում և պնդում է, որ «ծաթ»՝ հայ-քաղկեդոնականների անուն է: Այս եզրակացությունը համաձայնեցնելու համար Ուխտանեսի հետ, որի մոտ ծաթերը դուրս են բերված իբրև առանձին ժողովուրդ, Ն. Մառ ենթադրում է, որ «Ուխտանեսի գրության մեջ խոսքը ոչ թե ծաթերի այլ ծողեացիների մասին էր», իսկ Ուխտանեսի մոտ կանխիկ «ծադ» գրածը նա բացատրում է՝ «իբր մի նոր շտկում, ծադերին՝ ծողեացիներին նույնացնելու հետագա մի փորձի վրա հիմնված»: Այս փորձը, Ն. Մառի կարծիքով, մենք առաջին անգամ պատահում ենք XII (իմա՝ XIII) դարում Մխիթարի մոտ[1]: Այս բացատրությունը անկասկած հակասում է այն ամենին, որ հաղորդում է Ուխտանեսը՝ հեղինակ, որն անպայման արժանի է մեր վստահության: Իրապես ծողեացիք ոչ մի առնչություն չունին ծաթերի հետ: Նրանք բնակվում էին Հայաստանի սահմաններում՝ Աղվանների երկրին կից և հայտնի են դասական հեղինակների մոտ **sodi** անվան տակ: Նրանք հնուց հայոց կրոնն էին դավանում և եթե հավատալ Մխիթարին, միացել են քաղկեդոնականներին X դարում: Մխիթարը կամ մեկ ուրիշը, ում կպատկանար «գլոռան», սխալվում է՝ նույնացնելով նրանց ծաթերին, խաբված երևի երկու բառերի համահնչյունությունից: Այս երկու ազգերն ու տերմինները չպետք է խառնել իրար. ծողեացիք քրիստոնյաներ էին և IX դարի մեջ վրաց եկեղեցու ծոցն անցան, այն ինչ ծաթերը, որոնց մասին խոսում է Ուխտանես, միայն X դարի վերջերը քրիստոնյա դառան, որ և առիթ էր Ուխտանեսի գրական ձեռնարկության:

Նույնպես չի կարելի ծաթ խոսքի մեջ հայ- քաղկեդոնականների անունը նշմարել: Աչքից պետք չէ թողնել, որ, ինչպես երևում է Մխիթար Ապարանցու գրվածքից, բացի ծաթ-հայերից գոյություն ունեին նաև ծաթ-հույներ: Ուրեմն ծաթերի հարցը չի սահմանափակվում հայ-քաղկեդոնականներով միայն: Այս պարագան ապացուցանում է, որ **ծաթ** կամ **ծադ** - խոսքի գոյություն ունեցող մեկնությունները՝ սխալ են:

Մոկացվո, Խաչկա) և եկեղեցականաց անհանդուրժող աստուածաբանությունն անվան նկատած էր քաղկեդոնականներու մկրտությունը... «Որ ամենեքեան (այս է X դարու նշանավոր վարդապետք, որոնք կթվե պատմագիրն) խորհրդական քննութեամբք ընտրութեամբք գրովք աստուածայնովք հրամանաւն Տեար Աստիայի զքաղկեդոնական մկրտեալսն կրկին անգամ հրամայեցին մկրտել», Ասողիկ, էջ 178: Աչքե պետք է հեռացնել այն պարագան ալ որ պատմագիրն կխոստանար թվարկել նաև «զվանորայսն հանդերձ վանական» և այլն, բան մը, որ լիով կճշգրտվի Կիլիկյան Հայաստանի համար, մինչ նորադարձ նորատունկ ժողովրդյան մեր ժամանակի կկարոտեր այնչափ բարգավաճելու համար (անդ, էջ 79-80, **ծանոթ. թարգմ.**):

[1] Անդ, էջ 31:

Իմ կարծիքով՝ ծաք - ազգային տերմին է, համաձայն Ուխտանեսի ամենահին վկայության: Նրա մեջ անկարելի է չճանաչել այն ազգության անունը, որ հիշվում է արաբ հեղինակների մոտ՝ **զոտտ** կամ **զուտտ** կոչված: IX դարում զատերը[1] (կամ նրանց մի մասը) բնակվում էին Անազարվայի սահմաններում արաբ-բյուզանդական սահմանագլխի վրա և բավականին մեծ դեր էին խաղում երկու տերությունների քաղաքական հարաբերությունների մեջ: Պահվել են մի քանի տեղեկություններ նաև այս ազգության ծագման և պատմության մասին: Զատերը այսօրվա Եվրոպայում ու Ասիայում ցրված ցիգանների նախնիքներն են համարվում: Ըստ պատմագիրների մոտ պահված ավանդության, նրանք եկվորներ են Հնդկաստանից և պատկանում էին Հինդոսի ստորին հոսանքներում բնակվող բազմաթիվ ցեղերի թվին: Այստեղից նրանք գաղթել են դեպի Միջագետք և ցրվել ավելի հեռու՝ արևմտյան Ասիայում և այլ երկիրներում: Հռչակավոր Ֆիրդուսին պատմում է, որ նրանց բերել է տվել Հնդկաստանից Վռամ V թագավորը (420-448) իբրև լավ երաժիշտների՝ թվով 12 հազար մարդ ու կին: Այդ մասին պատմում է և Գամզա Իսփահանցի, որ ապրում էր Ֆիրդուսուց առաջ: Այդ ավանդությունների ճշտությունը դժվար է ստուգել. համենայն դեպս՝ ստույգ է, որ մենք հանդիպում ենք զատերին Բասրայում արդեն VII դարին:

Արաբական գրող՝ Բալաձորին հաղորդում է, որ 670 թվին խալիֆ Մուավիան զոտերի մի մասը տեղափոխում է Բասրայից Անտիոքիա և Սիրիայի ծովեզրյա այլ քաղաքները: Դեռ XIII դարին Անտիոքիայի քաղաքամասերից մեկը **mahalat-uz-zott** էր կոչվում, այսինքն՝ զոտտերի քաղաքամաս. նրանց թիվը շատ էր նաև քաղաքի շրջակայքում: Զոտերի և նրանց ազգակից գաղթականների նոր հոսանք Հնդկաստանից դեպի Խուժիստան գտնում ենք VIII դարի սկզբին, Վալիդ I ժամանակ († 715): Նրանցից մի մասը տեղափոխված էր Անտիոքիա ու Մոպսուեստիա:

Նոր հայրենիքում զոտերը շատ առաջադիմեցին և կարճ ժամանակվա ընթացքում այնչափ ուժեղացան, որ բռնեցին Տիգրիսի ստորին հոսանքների երկիրները, հողի տերը դառնալով: Հարուն-ալ-Ռաշիդի մահից հետո անիշխանական ժամանակաշրջանին զոտերը իրանց գրեթե անկախ հայտարարեցին արաբներից: Խալիֆները ստիպված էին զենքի ուժի դիմել նրանց հնազանդեցնելու համար: Մի շարք արշավանքներ զուր եղան: Վերջապես 835 թվին խալիֆներին հաջողվեց կոտրել նրանց ուժը և ջարդից հետո գերի էին տարված մոտ 27 հազար զոտեր: Որքա՜ն վտանգավոր էր թշնամին և ի՜նչ

[1] Զոտտերը կամ զուտտերը: Ուղղագրությունը ամեն տեղ պահում ենք ռուս բնագրի համապատասխան (ծ. թ.):

մեծ նշանակություն էին տալիս արաբներն իրանց հաղթանակին, կարելի է տեսնել այն բանից, որ այդ հաղթանակը տոնվում էր Բաղդադում ամբողջ երեք օր: Գերյալները տեղավորված էին Անազարվայի ու Մոպսուեստիայի սահմաններում:

Մի քիչ անցած, այն է՝ 855 թվին, բյուզանդացիք հարձակում գործեցին Անազարվայի վրա և գերեցին այնտեղ ապրող բոլոր զատերին: Արաբները բանակցության մեջ մտան բյուզանդացիների հետ և վերջապես կարողացան համաձայնության գալ և գերիներին իրանց տեղերը վերադարձնել[1]:

Հազիվ թե կարող է կասկած լինել, որ զատերը հենց այն ժողովուրդն են, որի մասին խոսած են հայ պատմիչները, նրանց **ծաղ** կամ **ծաթ** անվանելով: Այս անունը Հինդի ափերին հնչում էր՝ **jat,** իբրև Մուլթան և Սինդ բնակվող ցեղերից մեկի անուն, **sindi** ցեղին ազգակից: Հնդկական **ջաաթը** դառել է պարսիկ արաբական հողի վրա՝ **զաթ**, բոլորովին համապատասխան լեզվաբանական կանոնների: Հայկական ձևը՝ **ծաթ** երևի ընդհանուր է նաև Ասորիքի և Միջագետքի համար: Հնչյունաբանական տեսակետից ջի՝ **զ** այլակերպումը, և զի՝ **ծ** - ոչ մի դժվարություն չի ներկայացնում:

Ոչ միայն հնչյունաբանական, այլև իրական-պատմական տեսակետից ծաթերի և զատերի համադրությունը չի կարող հակաճառության հանդիպել: Վեճ և տարբեր կարծիք կարող է լինել միայն այն հարցի վերաբերմամբ, թե ե՞րբ և ինչպե՞ս են ընկել նրանք Հայաստան և ո՞ւր էին կենում Ուխտանեսի օրով, հայ քարոզիչներից քրիստոնեություն ընդունելու միջոցին: Արդյոք զատերը Հայաստան եկան Անազարվայից, թե՞ Միջագետքի ուրիշ տեղերից, այս հարցը մութ է մնում[2]: Պետք է ենթադրել, որ նրանք հաստատվեցին Հայաստանի սահմաններում՝ իրանց մկրտությունից (X դարի վերջը) շատ ավելի վաղ: Ինչպես երևում է, նրանք արդեն հայերի հետ ձուլվելու ճանապարհի վրա էին, յուրացրել էին նրանց լեզուն, թեև նրանց լիովին հայացումը կատարվել է, երևի, քրիստոնեություն ընդունելուց հետո կամ զուգաղիպվել է մկրտության հետ:

---

[1] **Macritchie David**, Accounts of the Cypries of India. London, 1886. Հմմտ. **А. А. Васильев,** Византия и Арабы. Полит. отнош. за время Аморийской династии, էջ 177-180.

[2] Ըստ Նիկոնի՝ ծաթերը բնակվում էին Միջագետքի մետրոպոլիտի եպարքիայում: Բյուզանդական եկեղեցու վարչական կազմակերպության նայելով, որ ներկայացրած է Գրիգոր Կիպրացու աշխատության մեջ, Միջագետքի կայսերական հողերը երկու թեմ էին կազմում՝ Օսրոենաց Եդեսիայով և **Միջագետք** (*ἐπαρχία Μεσοποταμίας ἄνω μητρόπολις Ἀμίδα*, **Georg. Cyp**. p., 46, ed. Gelzer.) Ամիդայով: Այս բաժանումը պահվել էր նաև արաբական շրջանի մեջ և հավանականաբար՝ այսպես էր նաև Նիկոնի ժամանակ: Այդ դեպքում ծաթերը ընկնում են Ամիդայի շրջանի վրա, հին Սոֆենայի (Ծոփք) սահմաններում: Արդյոք ա՞յս տեղերի մասին է Ուխտանեսի խոսքը՝ հայտնի չէ:

Ավելի ուշ ժամանակվա գրողները ճանաչում են ծաթերին, բայց կարծում են նրանց ոչ թե հայ, այլ կայսերական եկեղեցու կողմնակից: Այս բանի մեջ համաձայն են իրար հետ թե՛ հայ, և թե՛ հունական աղբյուրները, Պողոս Տարոնեցին և Նիկոն Սեավլեռնցին: Ծաթ հայերի Հայոց եկեղեցուց դեպի քաղկեդոնականություն անցնելը կատարվեց երևի Բագրատունյաց թագավորության թուլացման վերջնական անկման միջոցին: Հայաստանում գոյություն ուներ հայ եկեղեցուն կից նաև քաղկեդոնական մի համայնք, որ մտնում էր կայսերական եկեղեցու կազմի մեջ. դավանաբանական վեճերի ու խառնակությունների շրջանին X դարուց հետո, ծաթերը անջատվեցին իրանց հավատքից և միացան հայ քաղկեդոնականներին ու հոռոմներին: Որոշ մտքով իրավացի է Պողոս Տարոնեցին, որ կապում է ծաթերին այն հայերի հետ, որոնք հունական հավատքի մեջ մնացին 726 թվի դավանական հեղաշրջումից հետո, սա ծաթերի ծագումն է ըստ դավանության, բայց ոչ ըստ ցեղի: Նույն մտքով պետք է հասկանալ նաև Նիկոնի խոսքերը Սուրբ Սաբբայի և Թեոդոսիոսի գործունեության մասին հայերի մեջ և նրանց՝ ծաթ հայերի հետ միասին ապրելու մասին: Նրանց ժամանակ ծաթ հայեր գոյություն չունեին. նրանք կարող էին կապ ունենալ միայն հայ-քաղկեդոնականների, բայց ոչ ծաթ հայերի հետ: Դժվար է ասել՝ արդյոք ծաթ հայերը, որոնց մասին խոսում են Նիկոն և Պողոսը, իրո՞ք ծագում էին ծաթերից, այսինքն՝ հայացած ծաթերի սերունդն էին, թե՞ այդ անունը դառել էր արդեն անվանական, ոչ միայն իսկական ծաթերին, այլև բոլոր՝ իրանց դավանությամբ ծաթերին նման, հայերին որոշելու համար:

Մխիթար Ապարանցին զանազանում է ծաթ-հայերին ծաթ-հույներից: Այս տեղեկությունները նա քաղում է ավելի հին մի աղբյուրից, որ նրա տրամադրության տակն էր: Նմանօրինակ զատերի մի մասը հայացել էր, իսկ մյուս մասը՝ ձուլվել հույների հետ: Զատերի ազգային անհատականության չքացումը պայմանավորվում էր ամենից առաջ իրանց մայրենի լեզվի կորստով և նրա տեղ հայերենի և հունարենի գործածությամբ: Հայերեն լեզվի տարածվելը զատերի մեջ հող էր պատրաստել նրանց հայ եկեղեցու ծոցը մտնելու համար:

Զատերի[1] հայ եկեղեցուց անջատման ժամանակը և նրանց ճակատագիրը այնուհետև - մեզ անհայտ են: Նույնպես հայտնի չէ, ինչպես են նրանք ընկել Սիմոն Հրաշագործի, Սաբբայի և Թեոդոսիոսի վանքերը: Ծաթերի ցրվելը կապ ունի, երևի, քաղկեդոնականության պարտության հետ Հայաստանում, և նրանք ուղևորվում էին դեպի այն վանքերը, ուր հնուց ապրել են հայ-քաղկեդոնացիք:

---

[1] Ուղղագրությունը ամեն տեղ պահպանում ենք ռուս բնագրի համապատասխան (ծ. թ.):

Այդպիսով՝ ծաթերին զատերի հետ նույնացնելով և նրանց անկախ ցեղական ծագումը ընդունելով, հարթվում են և վերանում հիշված հակասությունները պատմագրականական տեղեկությունների մեջ: Ուխտանեսի վկայությունը ճշտվում է և ամենը, ինչ որ նա պատմում է իր ընծայականի մեջ ավելի հասկանալի է դառնում: Հարկ չկա ասել, որ նա ծռդեացվոց մասին էր պատմում, ծաթերի մասին ուրիշ տեղեկությունների ճշտությունը պաշտպանելու համար: Պարզվում է նաև «Ծաթ (Ծայթ) - Յոյնք» դարձվածքը «Ծաթ (Ծայթ) - Հայք»-ի կողքին:

Ինչ վերաբերում է զատերի հարաբերությանը ցիգանների հետ, այս հարցի քննությունը չի կազմում մեր նպատակը: Մի քանի հետազոտողներ ժխտում են, կարծես, արդեն հաստատված կարծիքը ժամանակակից ցիգանների զատերից ծագման մասին: Հօգուտ ընդունված կարծիքի խոսում է Մխիթար Ապարանցու մի ցուցմունքը. պատմելով ծաթերի մասին, նա հայտնում է ի միջի այլոց, որ հայ-քաղկեդոնականներից մի քանիսը կոչվում են **ունք**, որ նրա կարծիքով նշանակում է՝ **հերձվածող, անջատական:** Այս բացատրությունը հիմք չունի, ինչպես և **ծաթ** բառի մեկնությունը իբրև - կիսատ, անբավարար, ասում որ տվել էին հայ-քաղկեդոնականներին իբրև նշավակում նրանց հակառակորդները: **Ունք** խոսքը անպայման կապ ունի **sinte** անվան հետ, ինչպես կոչում են ցիգանները իրանք իրանց[1]: Երևի սա նույն խոսքն է ինչ որ **sindi**, հնդկական ցեղի անունը, որին ազգակից են և ծաթերը: Ուրիշ խոսքով՝ **sont, sinte,** մեկն է այն անուններից, որ տալիս են զատ-ցիգաններն իրանք իրանց:

Ես չեմ շոշափում այն հարցը, թե ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում պատմական ծաթերը այսպես կոչված՝ հայ ցիգանների հետ, որ ապրում են Հայաստանում և կոչվում են **բօշա**, իբրև տարբեր մահմետական ցիգաններից՝ **կարաչիներից** և **մուտրուբներից:** Նրանց կենցաղն ու լեզուն դեռ չեն ուսումնասիրված. նույնպես անհայտ է նրանց հարաբերությունը եվրոպական ցիգանների հետ: Ցիգանական լեզվի հետազոտողները բերում են խոսքեր, որոնք, նրանց ասելով, պատահում են ցիգանական բոլոր բարբառներում. օրինակ՝ **choro** = խոր, **kotor** = կտոր, բեկոր, **handako** = խրամ, քանդակ, **jar** = ջերմ: Բացատրություն այս բառերի համար նրանք փնտրում են արաբերենի մեջ[2], այն ինչ այս խոսքերը գտնվում են հայերեն լեզվի մեջ նույն նշանակությամբ: Այս խոսքերի թվին են պատկանում նաև՝ **oqi** = ոգի,

---

[1] **Max Ritchie,** անդ, էջ 39. **К. П. Патканов,** Цыганы; несколько слов о наречиях закавказских циган: боша и карачи, СПб., 1887, էջ 19:

[2] **Max Ritchie,** անդ, էջ 54-55:

հոգի, temm = երկիր (յուն. *θέμα*, հայերեն՝ թեմ), **grart graiz-**ի (գրաստ-բեռնակիր անասուն), **patibu, pativ** = պատիվ[1]: Այս զուտ հայկական խոսքերի եվրոպական ցիգանների բերնում գտնվելը ցույց է տալիս, որ նրանց հետ ձուլվել են մի ժամանակ արևելքում, հայերին կից ապրող տարրեր: Գուցե հայ ծաթերը և սոնթերը, հենց նրանք, որ ապրում էին Կիլիկիայում, հայ թագավորության կործանումից հետո շարժվեցին դեպի կայսրության մայրաքաղաքը և այնտեղից ցրվեցին արևմտյան Եվրոպայի զանազան երկիրները: Ցիգանների առաջին հայտնվելը Եվրոպայում, թվով «300 ճամբորդներ՝ թաթարների պես սև, իրանց **Սեկանի** կոչող», կատարվեց 1417 թվին[2], այսինքն՝ Կիլիկիայի հայ թագավորության անկումից քիչ հետո: Եթե ոչ ծաթերի միջոցով, համենայն դեպս, նրանց միջնորդությամբ են մտել հայ բառերը եվրոպական ցիգանների բարբառների մեջ[3]: Այս պարագայի մեջ չի կարելի չնշմարել մի ապացույց ևս հօգուտ ցիգանների զատերից կամ զուտտերից ծագելու տեսության: Իրանց տիպով ու լեզվով ցիգանները այնպիսի մի խայտաբղետ պատկեր են ներկայացնում, որ հազիվ թե կարելի լինի նրանց ծագումը միակերպ բացատրել: Ինչ ձևով բացատրեին նրանց ցեղական բարդ կազմը, անկասկած, այդ կազմի մեջ չի կարելի հերքել այն հոսանքը, գուցե ամենայն էականը, որ գալիս էր արևելքից: Այս տեսակետից հնդկական կամ զոտական տեսությունը ամբողջովին ընդունելի է (2):

---

[1] **К. Патканов**, անդ, էջ 47.

[2] Նույնը, էջ 24:

[3] Ռուս բնագիրը (էջ 248): «Если и не цатами, то во всяком случае при их посредничестве проникли армянские слова в европейские цыганские наречия (ծ. բ.):

ԴԱՎԻԹ ԲԵԿ ԵՎ ՏԵՐ ԱՎԵՏԻՔԻ ՍԵՐՈՒՆԴԸ

Ստեփան Շահումյան, Դավիթ բեկի գործակիցը և պատմագիրը[1] (1), գրեթե ոչինչ չի հայտնում նրա ծագման և ընտանեկան պայմանների մասին:

Ինչու էր բեկ կոչվում, արդյոք մելիքական տնից էր, թե բեկ լոկ տիտղոս էր **titulus ornans,** որպես այժմ հայ գյուղացիների մեջ սովորություն է այդպես անվանել փոքր ի շատե դիրք ունեցող անձերի: Հայտնի չէ նաև, թե Դավիթ Բեկ ամուսնացա՞ծ էր, թե ամուրի:

Բաֆֆին կարծում էր, որ նա ամուսնացած չէր: Բայց իր գործի վերջում հրատարակել է մի վավերագիր, որ հակառակն ենք տեսնում: Վավերագիրը կրում է **«Վկայագիր Ուռպէէանց»** վերնագիրը (2) և բեռնավորված է շատ պատկառելի ստորագրություններով, ինչպես՝ արքեպիսկոպոս Սիմեոն Տաթևացի, արքեպիսկոպոս և մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյան, արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյան, Ղարաբաղու թեմի առաջնորդ, Մելիք-Մանուչար Ուռպելյանց Տաթևացի և այլն: Թուղթը հորինված է 1835 թվին, սեպտեմբերի 25. «ի Սիւնիս»:

Ստորագրողները վկայում են, որ Դավիթ Բեկ որդի էր Աստվածատուր իշխանին Սյունյաց և ուներ երկու հորեղբայր՝ Սարգիս բեկ և մելիք Եղիա, «որոց բնակութիւն էր ի Ղափան գաւառի ի բերդին Հալիձորոյ»: Ահա երեք եղբայրների ծննդաբանական տախտակը՝

1. Աստվածատուր իշխան
Դավիթ Բեկ
Սարգիս բեկ
Էյվազ = Սարգիս քահանա

2. Սարգիս բեկ
մելիք Պալի
մելիք Փարսադան
մելիք Հովհաննես

[1] Տե՛ս այս մասին մեր հոդվածը՝ «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը և գաղափարախոսական արժեքը», Րաֆֆու հոբելյանական ժողովածուի մեջ (Փարիզ, 1937, էջ 122-148):

3. Մելիք Եղիա
մելիք Հարություն
մելիք Ստեփան
Կարապետ քահանա:

Երեք եղբայրների թոռնորդիները՝ Սարգիս քահանա, մելիք Հովհաննես և Կարապետ քահանա իր երկու զավակներով՝ մահտեսի Հովհաննես և Հակովբ, կենդանի էին 1835 թվին և վկայագիրը տրված էր սրանց՝ հաստատելու, թե «իշխանազն են և ազնվատոհմ»:

Դավիթ բեկն «հասեալ ի յարբունս հասակի», թողնում է տուն տեղ և գնում Թիֆլիս «առ Շահնաւուզ իշխանն վրաց, որոյ եւ սիրով ընկալեալ զնա կարգեաց զօրապետ ի վերայ զօրաց իւրոց»: Սյունեցիների խնդրով Դավիթ բեկ գալիս է հայրենիք 1722 թվին, վանում թշնամիներին և նստում «զորապետ և իշխան Սյունյաց»: Շահթամրազ թագավորը «ընծայամատոյց եղեւ նմին **վերստին** զիշխանութիւն ի վերայ Սիւնեաց եւ ամենայն գաւառաց մինչեւ ցԿուր գետ», և բեկի կրտսեր հորեղբայրը՝ Եղիան ստանում է մելիքություն իշխելու «ի վերայ գաւառաց»:

Դավիթ բեկ, ուրեմն, հեռացել էր Վրաստան պատանեկան հասակում: Երեք վրացի թագավորներից, որ Շահնավազ վերանունն են կրում, առաջինը՝ Վախթանգ V թագավոր էր 1658-1676, երկրորդը՝ նրա որդին Գեորգի, 1676-1688, երկրորդ անգամ 1691-1695, և մեռավ Պարսկաստան 1709 թվին: Երրորդ Շահնավազը Բակուր գահի վրա նստեց 1714-1716 թթ. փոխան իր հոր Վախթանգ VI և 1722 թվին կենդանի էր և գործակից իր հոր: Պատանի Դավիթ բեկին ընդունող Շահնավազը եթե I կամ II էր, նա չէր կարող 1722 թվին ղրկել Դավթին Սյունիք: Այս թվին կար մի իշխան Շահնավազ, որ սակայն թագավոր չէր: Հայոց հետ հարաբերության մեջ էր հայրը՝ Վախթանգը:

Թվում է, թե «Վկայագրի» խմբագրողի ենթադրությունն է, որ Դավիթ պատանի օրերին է գնացել Վրաստան, և Շահնավազ անունը հայտնի է նրան Շահումյանի պատմությունից: Դավիթ բեկ իր հաղթություններից հետո ստանում է շահից Սյունյաց իշխանությունը և ստանում է «վերստին», այսինքն՝ ստանում է ինչ որ իրեն էր պատկանում, քանի որ իր հայր Աստվածատուրը «իշխան էր Սիւնեաց»:

Ինչ է նշանակում իշխան Սյունյաց: Ուրիշ ոչինչ, քան **մելիք**, եթե միայն հավատանք, որ Աստվածատուրը գոյություն է ունեցել և բարձր դիրք վայելել: Նույն թղթի համաձայն, Եղիան ստացավ մելիքություն Դավիթ բեկի օրով: Առաջ նրանց տան մելիք չկար: Կարծում ենք, որ հեղինակին հայտնի լինելով Շահումյանի պատմությունից, թե Դավիթ բեկ կարգվել է իշխան Սյունյաց, կամեցել է ցույց տալ, որ այդ պաշտոնն ուներ նաև նրա հայրը:

Ավելի քան կասկածելի է, որ Դավիթ բեկ Հալիձորցի լիներ (3): Նա եկավ Սյունիք, բանակեց Ուչքեփե, Հալիձորից վերև մի սարահարթ, և այնտեղից գնաց Շնհեր և ոչ Հալիձոր, որ իր ճանապարհի վրա էր: Պատճառն այն էր, որ Հալիձորի մելիքն էր Փարսադանը, որի հետ ընդհարում ունեցավ Դավիթ բեկ, կալանավորեց և բանտարկեց Շնհեր Տեր Ավետիք քահանայի հետ, որ մելիքի փեսան էր:

Զարմանալի է, որ Դավթի ազգականներից և ոչ մեկը չէ հիշվում նրա կռիվների մեջ, չէ հիշվում Հալիձորի բերդի շինության առթիվ Դավիթ բեկի ձեռքով:

Թուղթը նպաստավոր տպավորություն չէ թողնում նաև իր ստորագրություններով: Տաթևի առաջնորդն իրավ է, որ Սիմեոն արքեպիսկոպոսն էր, ինքը Տաթևի Ուստաքոլունց տնից հայտնի և այժմ հաջորդել էր 1830 թվին Մարտիրոս արքեպիսկոպոսին, որն ևս Տաթևացի էր և պապ Տիգրան Տեր-Հակոբյանի, ճեմարանի անդրանիկ ավարտողներից, որ հետո ուսուցիչ էր Տաթևի վանքի դպրոցում և մեռավ եղերական մահով: Բաղդասար արքեպիսկոպոսը, «մետրոպոլիտ համայն Հայոց Աղուանից», նույնպես 1835 թվին կենդանի էր, մեռավ 1854 թվին:

Սարգիս արքեպիսկոպոսի ստորագրությունը խիստ կասկածելի է: Նա իրեն անվանում է Հասան- Ջալալյան, մինչդեռ այդ տոհմից չէր և 1835 թվին չէր կարող Ղարաբաղի թեմի առաջնորդ լինել: Նա Ջալալյան էր (առանց Հասանի) և առաջնորդ նշանակվեց Բաղդասար մետրոպոլիտի մահից հետո, ուրեմն 1854 թվից հետո: Նրա «Ճանապարհորդութիւնը» հրատարակված է 1842 թվին, կրում է հեղինակի ստույգ անունը՝ Սարգիս վարդապետ Ջալալյան: Եթե 1842 թվին նա դեռևս վարդապետ էր, ինչպես կարող էր 1835 թվին իրեն անվանել՝ արքեպիսկոպոս, այլև առաջնորդ թեմին Ղարաբաղու, և Հասան-Ջալալյան:

Բաֆֆին տրամադրել է նաև մի ուրիշ աշխատություն՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» կրկնակի խմբագրությամբ, ուր հեղինակն իրեն կոչում է Սարգիս Ջալալյան (և ոչ Հասան-Ջալալյան):

Ստորագրողները հայտարարում են, որ իրենք 60, 70 և 80-ամյա ծերունիներ են, հարկավ ցույց տալու համար, որ գործին տեղյակ մարդիկ են: Բաղդասարը ծնված էր 1775 թվին և ուրեմն 1835 թվին, ուներ 60-ամյա հասակ: Չեմ կարծում, որ Սարգիս Ջալալյան հասակակից լիներ մետրոպոլիտին, անտարակույս, ավելի պակաս տարիք ուներ, պակաս, քան 60: Մելիք Մանուչար նույնպես չէր կարող 1835 թվին լինել 60-ամյա: Նա իմ պապս է, ավելի ճիշտ պապիս՝ Ռուստամ բեկի ավագ եղբայրն է (4), և կենդանի էր 1870-ական թվականներին և երկրորդ կնոջից երեխաներ ուներ ծնված 1867-1868 թվին:

Այս նկատողությունները տանում են մեզ այն ենթադրության, թե Հալիձորի երկու քահանաները՝ Սարգիս և Ստեփաննոս աշխատել են հայթայթել այս վկայագիրը ներկայացնելու ռուսաց կառավարության, ազնվական և թերևս իշխանական կարգը դասվելու համար:

Ինչպես են ձեռք բերել վկայագիրը, մնում է իրենց գաղտնիքը: Մի բան ամեն կասկածից դուրս է, որ նրանք Դավիթ բեկի սերունդից չեն, և որ Դավիթ բեկ բնավ Հալիձորցի չէր: Գուցե Շնհերից էր, կամ Տաթևից, եթե իրավ մելիքական տոհմից էր, որ ևս խնդրական է:

* * *

Դավիթ բեկի զինակիցների մեջ Տեր Ավետիք քահանան կարևոր տեղ ունի: Նրա քաջասրտության է պարտ Ջևու բերդի առումը, Դավթի ամենեն նշանավոր հաղթությունը: Տեր Ավետիքը փեսա է մելիք Փարսադանի և հավանորեն ինքն ևս Հալիձորցի էր: Մելիք Փարսադանի սերունդը հասած է մինչև մեր օրերը: Հալիձորից անցած են Բեխ (Պեխ) գյուղը, մի ճյուղն էլ՝ Դավալլու գյուղը, այժմյան Հայաստանի և Նախճվանի սահմանագլուխը[1]:

Դավիթ բեկի զինակիցները՝ թվով քառասուն, անհայտ են մնացել իրենց ժառանգներով: Բացի մելիք Փարսադանից, միայն Տաթևի երկու զորավարների սերունդն է ցայժմ հայտնի: Դրանք են՝ Ղիչի և Այտին (Գիչի և Այդին): Տաթև գյուղում, որ վանքից հեռու չէ, այժմ էլ կան Գիչունց և Այդինանց տները, որ անձամբ ճանաչում եմ իմ մանկության օրերից:

Տեր Ավետիք կռիվներից հետո գնում է Երուսաղեմ քավելու իր մեղքերը և վերադառնում Սյունիք, բայց տեսնելով, որ Հալիձորում տրամադրությունները փոխված էին, որի հետևանքով Մխիթար սպարապետ, իր զինակիցը, հեռացել էր Խնձորեսք, ուր և սպանվեց, Տեր Ավետիքը թողնում է Հալիձորը, բայց ուր է գնում, հայտնի չէ:

Ինչ վերաբերում է նրա սերնդին, դարձյալ հաստատ տեղեկություն չունենք, բայց կա ավելի քան հավանական ենթադրություն, որի մասին ավելորդ չենք համարում խոսել:

Տաթևի եպիսկոպոս Հովակիմի օրով Բռնակոթ գյուղի մի քանի անձեր շինել են իրենց ծախքով մի դամբարան Գրիգոր Տաթևացու գերեզմանի

---

[1] Րաֆֆին «Դավիթ բեկ» վեպի վերջը հրատարակել է Մելիք-Փարսադանյան եղբայրների կարևոր մի նամակը, ուր պատմված է, թե ինչպես են Մելիք-Փարսադանյանները ընկել Դավալլու գյուղը (այժմյան Խորհրդային Հայաստանի և Նախճվան ինքնավար շրջանի սահմանագլուխ): Միայն, կարծեմ, սխալվում են Մակուի շրջանի գյուղ անվանելով Դանալու: Պետք է լինի Դավալլու: Արդի Դավալլուն պարտական է իր անունը այդ Դավալլուին, որի բնակիչները գաղթած են 1827 թ.: Ամեն տեղ հայ գաղթականներ, եկած Պարսկաստանից, թե Թուրքիայից, պահած են, դժբախտաբար, իրենց նախկին բնակության օտար և տգեղ անունները:

վրա: Հովակիմ ծագումով Անգեղակոթցի էր և եպիսկոպոս գահակալ Տաթևու 1775 թվից մինչև 1796 թ., երբ Աղա Մահմեդ խանի արշավանքի հետևանքով թողեց վանքը և գնաց Էջմիածին, ուր և մեռավ: Հավանորեն նրա խորհրդով են բռնակոթցիք հանձն առել հիշյալ շինությունը 1787 թվին: Դամբարանի վրա կա երկար արձանագրություն, որ բերում ենք ամբողջապես.

«Ընորհիւն ԱՅ. շինեցաւ Սբ. մատուռս եաւթնալոյս ըաբունապետին եւ երկրորդ Ոսկեբերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին ՍԲՆ. Գրիգորի Տաթեւացւոյն ծեռամբ բազմաշխատ և աւգտաջան Սիւնեաց պետի տն. Յովակիմայ Սիւնեցւոյ արդեամբ եւ ծախիւք բռնակոթեցւոց, այսինքն՝ տր. Գէորգ, տր. Յակոբ եւ տր. Յարութիւն քահանայիցն. նաեւ Կարապետին եւ Մկրտչին, Յակոբջանին, Սիմիոնին, **Աղդէին**, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին, Քարամղուլոյն (Քարամօղլոյն, հավանորեն)», Ստեփանին եւ Յաւնանին, Մօսեսին, Մկրտչին, Շահնազարին եւ Ածատուրին. այլ եւ բարեպաշտուհի կանանցն Նազլուին, Հուրիզատին, Մարիամին, Գուլփարիին, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի եւ աղաւթք Սրբոյս Գրիգորի ի վերա նոցա լիցի, ամեն: Կառուցաւ ՍԲ. մատուռս ի հայրապետութեան ՍԲՅ. գահին Էջմիածնի Տն. Ղուկասու ի ոմլչ թուոջս մերում յաւուրս Փանահեան Իբրահիմ խանին» (**Կ. Կոստանյանց,** Վիմական տարեգիր, էջ 217):

Այստեղ թված անձերի ժառանգները կան մինչև այժմ: Տեր Գեորգի թոռան թոռն է ուսուցիչ Խորենի, որ սպանվեց Գորիսում (5), որդի Տեր Խորեն քահանայի Տեր-Գեորգյան: Տեր Հարությունի տունն էլ քահանայական մնացել է մինչև այժմ: Այս տանն է պատկանում Տաթևի հոգևոր կառավարության երկարամյա քարտուղար Պետրոս Տեր-Հարությունյան: Հակոբջանանց, Կարապետանց, Ավակիմանց (Աղակիմոնց), Քերամանց և այլն տներ, որ ցայժմ հայտնի են Բռնակոթում հիշված անձերի անուններն են կրում:

Աղդեի՝ նախահայր է այն տոհմի, որ կոչվում է Աղդոնց: Արդյո՞ք **Աղի**՝ կրճատ ձևն է **Աղդեի**-ի, թե այլ ծագում ունի, թողնենք: Ամեն պարագային արձանագրության գրողն այդպես է հասկացել և, հավանորեն, որևէ հիմք ունեցել: Այս Աղդեիի որդին քահանա էր և անունը Տեր Ավետիք: Սա երեք որդի ուներ՝ Առաքել, Գրիգոր և Մեհրաբ: Վերջինիս որդին ևս կոչվում էր Ավետիք (Ավետիս):

Տեր Ավետիք սպանված է թուրքերից և որպես նահատակ թաղված է հին Գորիսի եկեղեցու դրան: Այս տեղեկությունն ինձ հայտնել է ժամանակով Տաթևի քարտուղար Պետրոս Տեր-Հարությունյան՝ մի բանիմաց անձ, որ իր պաշտոնի բերումով հաճախ շրջագայել էր Տաթևու վիճակը և լավ ծանոթ էր տեղական հնություններին և ավանդություններին: Հայր Ալիշանին ևս պիտանի է եղել ինչ ինչ նյութեր հայթայթելով Սիսականի համար:

Ադոնց տան պաշտոնական ազգանունն է Տեր-Ավետիքյան: Այդպես էի կոչվում նաև ես Ս. Էջմիածնի ճեմարանում աշակերտելիս: Երբ հետո ռուսական գիմնազիոն մտա՝ Թիֆլիսի երկրորդ գիմնազիոնը, դպրոցի դիվանը, ռուսական սովորությամբ, փոխեց անունս, Տեր-Ավետիքով: Տեսուչը՝ չեխ մարդ էր, Դրբոգլավ, հեռու ռուսամոլությունից: Վստահանալով նրա բարյացակամ վերաբերումին, նկատեցի, որ անունս աղավաղել են և չեն ուզում ուղղել: Շատ սառը պատասխանեց, որ տրտունջի տեղը չէ և պետք է հնազանդվել դպրոցական կարգերին: Գիմնազիոն ավարտելիս չուզեցի բնավ որ վկայականի մեջ Ավետիքով գրեն, որով ընդմիշտ պաշտոնական ձև պիտի առներ և համալսարանում և հետո, ուստի գրեցի Երևան կոնսիստորիա և ստացա վկայաթուղթ, թե Տեր-Ավետիքյան է նույն Ադոնց: Ավարտական քննությունների ժամանակ ես արդեն Ադոնց էի և ոչ Ավետիքով:

Ահա այս փոփոխության առթիվ էր, որ բարեկամս Պետրոս քարտուղարը ժպիտով նկատեց, որ Տեր-Ավետիքյան ավելի հարգի անուն է, երբ 1897 թ., թե 1899 թ. ամառը տեսա նրան Տաթև: Գորիսի գերեզմանի մասին հայտնեց նաև, որ ասողներ կան, թե գերեզմանը ոչ թե Ադու որդու Տեր Ավետիքինն է, այլ Ադու հոր՝ Տեր Ավետիքին և որ այս Տեր Ավետիքը Դավիթ բեկի հերոսներից է:

Այն ժամանակվան հետաքրքրությանս շրջանից դուրս էին նման խնդիրները, ուստի և լուրջ ուշադրություն չդարձրի և հետամուտ չեղա անգամ ստուգելու գերեզմանի ինքնությունը: Անտարակույս վրան արձանագրություն կա և այնտեղից գիտե քարտուղարը նահատակության պարագան:

Հետագայում հոգևոր կառավարությունը տեղափոխեցին Տաթևից Գորիս: Քարտուղարն ևս հաստատվեց Գորիս, ուր ապրում է և այժմ և, հուսամ, տակավին կենդանի է: Ով գիտե, գուցե դիպվածով ներկա տողերս հասնին իրեն և պարտավորեն պարզաբանել խնդիրը:

Բացի այս աղոտ ակնարկից, ուրիշ դրական փաստ չկա վկայելու, թե Ադին իրոք զավակ էր Տեր Ավետիք զորավար-երեցին: Սակայն կողմնակի նշաններ կան, որ խոսում են ի նպաստ այս ակնարկին: Ամբողջ Զանգեզուրում (= Սիսիան, Ղափան, Զանգեզուր) չկա ուրիշ տոհմ, որ կրեր Տեր-Ավետիքյան անունը: Կան Տեր-Ավետիքյաններ Գանձակի Բանանց գյուղում, բայց սրանք խնդրից դուրս են[1]: Դավիթ բեկ ամուսնացած էր, թե չէ, հայտնի չէ, բայց Տեր Ավետիքը քահանա էր և, ուրեմն հաստատապես ընտանիքի տեր էր և որդին կարող էր կենդանի լինել 1785 թվին: Տեր Ավետիքի վերջին բնակավայրը հայտնի չէ. Հալիձորից հեռացել էր:

Ադոնց տոհմը բնիկ չէ Բռնակոթում, այլ եկվոր և եկողն հենց ինքն **Ադին** է, որի անունով և իր սերունդ կոչվել է Ադոնց: Ես լսել եմ, որ Ադին եկել է Անգեղակոթի կողմերից: Ստորև կհիշեմ, թե ումից եմ լսել: Անհիմն չէ այս

[1] Ինչպես և Շուշի քաղաքի Տեր-Ավետիքյան տունը:

տեղեկությունը: Անգեղակոթից է գաղթած Բռնակոթ մելիք Սաֆրազի տունը Իսրայել Օրու ժամանակ, 1699 թվին մելիք Սաֆրազ Անգեղակոթ էր: Բռնակոթի Սաֆրազբեկյան տոհմը սրա սերունդ է, և մեր, այսինքն՝ Աղոնց տան ավանդական կնքահայրն են կամ տեղական բառով՝ **պեղի** են: Գաղթողը մելիք Սաֆրազ չէ, այլ իր սերնդից ոմն Աղասի, ուստի և տոհմը հայտնի է Աղասոնց անունով, իսկ պաշտոնական ազգանունն է Սաֆրազբեկյան, նախնի մելիքի անունով: Այս տան մի ճյուղը հաստատված է Ղարաքիլիսե գյուղում, Որոտն գետի ափին: Ջիլֆիղար բեկ 1800-ական թվականների վերջերը Տաթևի կալվածների կառավարիչն էր և չար լեզուների ասելով, հաջողել է գրավել վանքի հողերը Ղարաքիլիսում և հաստատվել է այնտեղ, թողնելով Բռնակոթը:

Եթե ոչ Տեր Ավետիք, իր ենթադրյալ որդի՝ Աղդեհ = Աղին, ապրել է մի առժամանակ Անգեղակոթի մեջ և այնտեղից, թերևս, Սաֆրազբեկյանների հետ, գաղթել Բռնակոթ: Մելիք-Թանգյան տոհմը ևս բնիկ չէ և թվում է, թե գաղթած է Խաչենից:

Կա մի արձանագրություն 1682 թվից, ուր ասված է հետևյալը.

«Ես Յակոբ վարդապետ, աշակերտ Եսայայ վարդապետի Կրճոնեցւոյ յազգէ Թանկոնց, առաջնորդ կարգեալ հայրապետէն Աղուանից տեառն Երեմիայի քանի մի գիւղաւրէից ղուզայենւոյ ոչ թողին մեզ բնակիլ ի հայրենի աթոռս մեր»... (**Ա. Ջալալյան,** հատ. Բ, էջ 262; **Կ. Կոստանյանց**, էջ 195): Եվ վերջը ստիպված է լինում հաստատվել Ծակ Ուռի կոչված տեղում: Հակոբն էր Թանկոնց ազգից, թե իր ուսուցիչ Եսային, որոշ չէ: Եթե Եսային է, նա Կրճոնեցի է և ոչ Բռնակոթցի. եթե Հակոբն է, սրա հայրենի երկիրը Երեմիա կաթողիկոսի զիջած գյուղերի շրջանումն է, որ գտնվում է Խաչեն, հավանորեն, Գանձասարի մոտերը, ուրեմն և նա Բռնակոթից չէ:

Հիշեցինք, որ Տեր Ավետիք երեք որդի ուներ: Մեծի՝ Առաքելի որդին է հայրս Գեորգ, Գրիգորի որդին է Ստեփան և Մեհրաբի որդին՝ Ավետ: Լսել եմ, որ ինքը մի թուղթ ունի, որտեղից երևում է, որ մեր պապը՝ Աղին եկել է Բազարչայի կողմերից: Բազար չայը այժմ ռուս աղանդավորների գյուղ է: Ռուսները Բազար չայ են անվանում, թուրքերից առնելով, Որոտն գետը: Նույնանուն ավանը գտնվում է Անգեղակոթից վերև Որոտնի հովտում: Ինչ է եղել նախ քան ռուսները, ինձ հայտնի չէ: Թերևս հին բնակություն է եղել: Ամեն պարագայում հաստատ է երևում, որ Աղոնք եկած են Անգեղակոթ՝ Բազար չայ շրջանից:

Ստեփանը խոստացել էր ցույց տալ ինձ այդ թուղթը, բայց այնպիսի անկարգ կյանք էր վարում, որ նրան բռնել և խնդրել, որ խոստումը կատարի, դժվար էր:

Ավելորդ չեմ համարում քանի մը խոսք ասել այս անձի մասին, որի կյանքը շոշափման կետ ունի Դավիթ Բեկի գործունեության հետ:

Հայտնի է, որ Դավիթ Բեկի զենքն ուղղված էր հատկապես թուրքմենթարաքյամա քոչվորների դեմ: Առաջին բախումը տեղի ունեցավ Ուչթեփե, Գորիսից դեպի Սիսիան տանող ճանապարհի վրա: Այժմ էլ վատահամբավ վայր է. այդտեղ սպանեցին դարանակալ թուրքերը հայ-թուրքական կռիվների շրջանում վերոհիշյալ Զիլֆիղար բեկին իր որդի Աղեքսանդրի հետ, Մելիք-Թանգյան Պարոնբեկին, եղբայր՝ մեր սիրելի արքեպիսկոպոսին (6), Սաֆրազբեկյան Ջավադ բեկին, բոլորն էլ մոտիկ անձեր: Աղեքսանդր բեկը մորաքրոջս որդին է: Քոչվորների հետ ընդհարումները շարունակվում են ցայժմ Ուչթեփեից անցնելիս: Վերջին աղետալի դեպքը, ինձ հայտնի, տեղի ունեցավ անցյալ դարու վերջերը, թե այս դարու սկզբի տարիներին: Թուրքերից մարդ էր սպանվել և Գորիսի ոստիկանապետ (Համբարձում բեկ Խուրշուդյան, Խնձորեսքցի) մեղադրվելով եղած արյունահեղության համար, պաշտոնանկ էր եղել և եկել էր Պետերբուրգ, հուսալով արդարանալ և վերստանալ իր պաշտոնը:

Քոչվորները մեծ վնասներ են պատճառում հայ գյուղերին, արտերը արածացնելով, և աշնան սարից իջնելիս խառնում են իրենց ապրանքին հայ գյուղացիների անասուններին և քշում դեպի իրենց ձմերանոցը: Կուրի ափերից լեռնային Արցախի վրայից բարձրանում են մինչև Սիսիանի և Նախճվանի սահմանագլուխ սարերը:

Արդ՝ մեր Ստեփանը գտել էր քոչվորներին դաս տալու լավագույն եղանակը: Լինելով պատվավոր հոր՝ Խոջա Գրիգորի միակ զավակ, մանկությունից «երես առած», անընդունակ լուրջ աշխատանքի, սովորություն էր արել գարնան-աշնան հարձակվել թուրք վրանների վրա, հափշտակել անասուններ, մասնավորապես ձիեր, որ իր գործակալների միջոցով վաճառում էր հեռու գյուղեր և այդպիսով գլուխ պահում: Թուրք քոչվորները, քանի մը փորձերից հետո, անօգուտ համարեցին գանգատներ և գերադասում էին հաշտությամբ վերջացնել Ստեփանի հետ: Գալիս էին մոտը և խնդրում, որ գտնե «գողացած» ապրանքը, պայմանով, որ կեսն իրեն մնա: Ստեփանը, հարկավ, գտնում էր «գողը» և կիսում: Վերջին անգամ, սակայն Ստեփանի հարձակումը մարդկային զոհեր է տալիս: Գորիսի ոստիկանությունը գալիս կալանավորում է Ստեփանին և ձգում Գորիսի բանտը, մինչև որ գործը քննվի: Ստեփան բանտում նստող մարդ չէր: Հաջողում է և փախչում մի գիշեր և անհետ կորչում: Այն կորչելն էր, որ կորավ, ինչպես ասում են հեքիաթներում:

Պատերազմի տարիներին Ռոստոմ Զորյան (7) Պետերբուրգ էր եկել և հաճախ հանդիպում էինք: Մի օր ժպիտով դարձավ ինձ, թե մոռանում եմ մի լավ բան պատմել ձեր Ստեփանի մասին:

«Ստեփանը բանտից փախչում է Պարսկաստան, Թավրիզ: Մի օր էլ

մտնում է Դաշնակցության մեջ, բայց բռնանալով մի քանի գյուղերի վրա, ապրում է պարսիկ խանի նման: Վերջը բողոքներ են գալիս Դաշնակցության բյուրո, տարօրինակ դաշնակցականի անվայել բարքի դեմ: Զորյան ստիպված է լինում կանչել և խրատ տալ, որ գաղափարական դաշնակցականի վայել կյանք չէ վարում:

«Մի օր, - շարունակում է Զորյան,- մենակ էի բյուրո և մեկ էլ տեսնեմ մի վիթխարի մարդ ներս է մտնում: - Ո՞վ ես: - Ստեփանն եմ, ինչ կա, ինչու ես կանչել: Ով է գանգատավորը»: «Արտաքին տեսքը, խոստովանում եմ,- ասում է Ռոստոմ, - և՛ սարսուռ, և՛ հիացում պատճառեց ինձ: Հազվագյուտ տղամարդ, հաղթանդամ և իսկապես գեղեցիկ: Այլևս խրատի տեղը չէր. թզուկ էի նրա առաջ: Բավական է ձեռքը գլխիս դներ, կկորչեի»:

Ռոստոմ ասում է նրան, որ կանչել է, որ հայտնե, որ մոտիկ ապագայում մտադիր է նրան մի մեծ հանձնարարություն անել: Ասելիքն այս էր: Եվ իրապես Ռոստոմը ափսոսացել է, որ ցայժմ անգործ են թողել այդպիսի մի մարդու և մտադիր է եղել լծել նրան: Մինչ այս, մինչ այն, Զորյան լուր է ստանում, որ Ստեփանի թուրք ծառան կաշառված, ինքը թե կաշառողները հրացանով խփել են գետի մեջ լողալիս:

Ստեփանը սիրելի չէր ո՛չ յուրայինների շրջանում, և ո՛չ իր գյուղում: Բոլորը խեթ էին նայում և համարում վտանգավոր «Ադոնց **շեթը**», ինչպես որակում էին նրան: Շեթ նշանակում է այն, ինչ որ Սասնո **ծռերը**, գիժ, բայց կտրիճ գիժ: Իր նախնին՝ Ադին ևս արժանացել էր այդ կոչման. նա էլ էր շեթ: Արդյոք այդ շեթությունը Ադին չէ՞ր ժառանգել Տեր Ավետիք քահանայից, եթե ինքը նրա զավակն էր: Մի քահանա, որ խաչը թողած, սուր է առնում ձեռքը, անպայման շեթ է...

Ստեփանի կյանքը խորհրդավոր է. քոչվորական ախոյանը դառնում է դաշնակցական: Արդարև, դաշնակցական համբավավոր խմբապետերն ի՞նչ են, եթե ոչ քոչվոր զարկող Դավիթ բեկի հոգևոր շառավիղները...

Թո՛ղ այս տողերը պահեն Ստեփանի հիշատակը: «Շեթերը» ևս հարգ ունին և հարգանքի բաժին: Մաճի վրա կքած և աշխատանքի գերի հայ գյուղացու կից հարկավոր են նաև այլ կառուցվածքի անձեր, որոնց օրինակ կարող է ծառայել Ստեփանի առնական պատկերը ոչ կորացած, այլ ուղեշ, բարձրագլուխ, քաջ՝ քաջի նման, զինված զինվորի նման, առանց երկյուղի, տեր իր ցանկությունների և խիզախ՝ արհամարհելու չափ և՛ կյանքը, և՛ մահը:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ-Գ. ԳԱԼԵՄՔԵԱՐՅԱՆ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՐԱՖՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԱՑՔ: ՎԻԵՆՆԱ, 1908

Սարգիս արք[եպիսկոպոս] Սարաֆյանը (1) XVIII դարու հայ նշանավոր եկեղեցականներիցն է, միևն այն դեմքերից, որոնց կյանքը արտացոլում է նոր դարուց մեր մտավոր շարժման բնորոշ կողմերը և հենց այս տեսակետից կարևոր էջ է պատմության: Սարաֆյանի կենսագրությունը գրված է նրա ձեռնասուն աշակերտի՝ Հովհ[աննես] Նուրտինյան վարդապետի ձեռքով (2) 1779 թ. նրա մահից չորս տարի հետո: Իսկական ձեռագիրը գտնվում է Անտոնյան միաբանության դիվանում (3): Նուրտինյանի երկը հանգավոր գրվածք է, բաժանված 10 գլուխների կամ, ինչպես հեղինակն է անվանում, երգերի: Վերջին՝ 11-րդ երգը նվիրված է հեղինակի կենսագրության: Ահա այս ձեռագիր հիշատակարանն է, որ լույս է տեսնում առաջին անգամ [հայր] Գալեմքեարյանի ջանքով և բռնում է 1-140-րդ էջերը: Հրատարակության կցած է մի ընդարձակ հետազոտություն, ուր հիմն ունենալով Սարաֆյանի կյանքը, հայր Գալեմքեարյանը շոշափում է նրա ժամանակակից մյուս հայ կաթոլիկ եկեղեցականների գործունեությունը: Հետևությամբ Նուրտինյանի, հայր Գ[ալեմքեարյանը] ևս իր աշխատությունը բաժանում է 10 գլուխների, ուր բերում է բնագրի համապատասխան բաժանմունքների բովանդակությունը՝ ընդլայնելով կամ ավելի պարզելով Նուրտինյանի տեղեկությունները նորանոր աղբյուրների հիման վերա: Պատմվածքը հաճախակի ընդմիջվում է կողմնակի անձանց կենսագրությամբ, որ շատ անգամ ոչինչ առնչություն չունի բուն գործի հետ, կամ այնքան կապ ունի, որքան որ խնդիրը վերաբերում է կաթոլիկության: Այս կարգի ընդմիջումները վնասում են պատմության կանոնավոր և ամփոփ ընթացքին և դժվարացնում ընթերցանությունը, որ զգալի թերություն է: Հեղինակը հավատացնում է, որ դիտմամբ է այսպես վարվել՝ նպատակ ունենալով ներկայացնել միևնույն ժամանակի հայ կաթոլիկ հասարակության սկզբնավորումը և կազմակերպությունը: Հարկավ, նույն նպատակին կարելի էր հասնել և զետեղելով բուն խնդրին՝ Սարաֆյանի կյանքին վերաբերություն չունեցող կենսագրություններն առանձին:

Ներկա աշխատության անվիճելի արժանիքն այն է, անտարակույս, որ լույս են հանում նոր ձեռագրական նյութեր, նոր վավերագիրներ և հիշատակարաններ: Թարմ նյութեր են՝ 1) Նուրտինյանի երկը՝ 1-140-րդ էջ, 2) Սարաֆյանի նամակները Մխիթար Աբբային 201-206 և 220-226-րդ էջեր, 3) Սարաֆյանի հավատափոխության վավերագիրը՝ էջ 175, 4) նրա եպիսկոպոսության կոնդակը և այլն: Հիշելու են նաև մի շարք վավերագրեր, որոնք վերաբերում են Սարաֆյանի ժամանակակից և կաթոլիկ աշխարհի մեր շփված այլևայլ եկեղեցականների:

Ցանուցիր տեղեկություններ և փաստեր ի մի հավաքելով, հեղինակն նպատակ ունի ցույց տալու, թե որքան սաստիկ է եղել հոսանքը դեպի կաթոլիկություն: Կասկած չկա, որ վերջին դարում օտարադավան քարոզչությունը հաջողություն ուներ հայ հասարակության մեջ: Այս երևույթն ունի իր պատմական հիմքն ու բացատրությունը:

Ափսո՜ս, որ հայր Գալեմքեարյանը տրամադրություն անգամ չէ ցույց տալիս ուրվագծելու այն իրական հողը, որ ծնունդ էր տալիս հավատափոխական երևույթներին: Դավանաբանական վեճերի վերա այնպես է նայում, կարծես խնդիրն միայն կրոնական ճշմարտության որոնումն է և սրա համար են այնքան աղմուկ ու գժտություններն. և որովհետև ճշմարտությունը, հեղինակի համոզմամբ, կաթոլիկության կողմն է, ուստի բոլոր կրոնափոխ կամ կրոնափոխության միտող հայերը միայն նրա համար են թողնում մայրենի եկեղեցին և գրկում կաթոլիկությունը, որ վերջապես վերահասու են լինում որոնելի և ըղծալի ճշմարտության: Հայր Գալեմքեարյանի աշխատության մեջ աչքի է ընկնում, գուցե և հակառակ նրա ջանքերին, այն, որ հեղինակը նախ և առաջ կաթոլիկ է և նրա համար բանկ են կաթոլիկության շահերը: Այսօրինակ ներացի վերաբերում ինքնըստինքյան թերություն է պատմական աշխատության համար, ավելին կասեինք՝ հավատափոխության հաջողությունը վերագրել լոկ կրոնական համոզմունքի հեղաշրջման, մեր կարծիքով, նշանակում է նսեմացնել, եթե ոչ՝ ժխտել կաթոլիկական հոսանքի պատմական նշանակությունը հայ կյանքում: Մեր վերածնության գործում կաթոլիկությունը խոշոր դեր է կատարել իր բոլոր պակասավոր կողմերով հանդերձ: Հայ հասարակության զարթումի առաջին տարիներից ի վեր նրա բարձր տենչանքները հանգում էին երկու կարապետող ձգտումների՝ քաղաքական ազատության և մտավոր վերակենդանության, այս էր մեր հասարակության բաղձանքների ամփոփումն: Առաջին ձգտման ողջակեզ եղան անձնվեր ուժեր և տենչանքը մնաց և մնաց իբր երազանք: Իսկ կրթական կենդանությունը հետզհետե իրականացավ: Խավարի մեջ խարխափող հայ կյանքն անզոր էր ծնել և սնել այնպիսի ձգտումներ, որոնք իրապես օտար ներշնչումներ էին և

ծագում էին առավելապես կաթոլիկ քարոզիչներից: Պատրաստությամբ բարձր լինելով հայ մակարդակից, լատին թե մերազնյա քարոզիչները բնականորեն մեծ ազդեցություն և համակրություն պիտի գրավեին ուսումնատենչ խավերում: Սրանց գոհությամբ և երբեմն նույնիսկ նրանց դեմ հակազդեցիկ լինելու նպատակով հայ եկեղեցականներն ևս հետամուտ էին լինում ուսման և գիտության՝ օգտվելով կաթոլիկ հրատարակություններից և կամ նրանց օգնությամբ ձեռնարկելով նոր հրատարակության: Գիտության և լուսավորության անհագ տենչման զոհում էին երբեմն և դավանությունը, երբ նկատում էին, որ կրոնափոխությունը կարող է նրանց ընծեռել դյուրություններ ուսանելու կամ ուսուցանելու:

Կաթոլիկ սաղրիչները հուսադրում էին հայերին Հռոմա գահի անունով և խոստանում էին քաղաքական ծրագիրներն իրագործելու եվրոպական պետության միջոցով: Նրանց թև և թիկունք էր ֆրանսական պետությունը, որի քաղաքական շահերն էլ նույն էին պահանջում: Բարձրագույն Դուռը վարանոտ դիրք էր բռնում, երբեմն հօգուտ կաթոլիկության, երբեմն Հայ եկեղեցուն: Տաճկական իշխանության տրամադրությունը, ինչպես և Ֆրանսայի քաղաքականությունը, անտարակույս, առաջնակարգ նշանակություն ունին հայ կաթոլիկ հասարակության զարգացման պատմության մեջ:

Այսպես, հայ առաջավոր դասի ազատագրական և կրթական ձգտումները և քաղաքական աշխարհի այնժամանակյա կացությունը իրենց փոխադարձ հարաբերությամբ կազմում են այն պատմական կռվանը, որին հենվելով կարելի կլինի լուսավորել կաթոլիկ և հայ համայնքների ընդհարումն իր գլխավոր ելևէջներով:

Կրոնափոխությունն անպայման հարմարություններ էր տալիս նրանց, որոնք ուզում էին վերածնության գործին ծառայել՝ կապելով նրանց անմիջապես լուսավոր կենտրոնների հետ և ստեղծելով որոշ հովանավորություն: Անշուշտ, մայրենի եկեղեցուն հավատարիմ մնալն էլ ուներ իր առավելությունները, որոնցից չէին ուզում զրկվել դավանափոխները: Այստեղից ծագում էին երկդիմի և անորոշ դրություններ՝ հավատափոխ համարվողը այլ գույն ուներ Հռոմում՝ և այլ՝ Կ. Պոլսում կամ գավառներում: Այս կողմի վերա միայն կարելի է բացատրել կաթոլիկ հետևորդներից շատերի երերուն կյանքը և տատամսոտ գործունեությունը, եթե միայն չենք ուզում համարել նրանց բախտախնդիրներ և շահասեր արկածավորներ:

Ներկա աշխատության մեջ չի նկատվում այս կամ նման մի պատմական հայեցողություն. դավանափոխների գործունեությունը հիմնվում է լոկ անձնական հատկությանց վրա, պայմանավորվում է այս կամ այն բարեմասնությամբ, և որքան անձը մոտ է Հռոմին, այնքան նախանձելի է նրա նկարագիրը: Սարգիս Սարաֆյանի հակառակորդները, ըստ հայր

Գալեմքեարյանի, բռնկված էին նախանձով: Սահակ Ահագինը (4) նրա փառքին էր նախանձում, Հակոբ պատրիարքը (5) կասկած և երկյուղ էր կրում, չլինի թե Սարաֆյանը պատրիարքությունը խլե նրանից և այլն: Անհատական որպեսությունը, անշուշտ, իր հարգն ու նշանակությունն ունի պատմության մեջ, բայց զարմանալի է, որ բարեմասնությամբ օժտված են հանդիսանում, ըստ հեղինակի, միայն առավելապես կաթոլիկության հակվածները, եթե մինչև իսկ հակումը տեղի է ունենում զառամյալ հասակում: Պետք է խոստովանել, որ անձնական որակի վրա հիմնված տեսակետը հայր Գալեմքեարյանը առնում է իր բնագրից՝ Հովհ. Նուրտինյանի գրությունից: Սակայն այս հանգամանքը բնավ չէ թեթևացնում նրա պատասխանատվությունը: Իրավ է, հայր Գալեմ[քեարյանը] խոստովանում է, «մատչելի վավերագիրներով անոր ստուգությունը փորձի տակ դնել» (էջ 144), պահել նրա պատմական կետերն առանց Նուրտինյանի խորհրդածություններին և դատողություններին, սակայն խոստումն մնում է սին խոստում, և մեր հեղինակն իրոք խոսում է այնպես, ինչպես թելադրում է բնագիրը: Հովհաննես Նուրտինյան, իբր Սարգսի ձեռնասուն աշակերտ, թերևս չէր կարող այլապես վերաբերել իր ուսուցչի դալար հիշատակին, քան մերձավորի աչառությամբ: Նրա գործն իսկապես մի ներբող է: Սարգսի անվան, ուր ոգի ի բռին աշխատում է անպարտ կացուցանել իր հոգևոր հոր և այն դեպքում, ուր ըստ երևույթին լուրջ հիմքեր ունեին նրա հակառակորդները: Հովհ. Նուրտինյանի ճշմարտությունը հայր Գալեմքեարյանի աչքում ամեն կասկածից վեր է:

Ուշի-ուշով դիտելով Սարգսի կյանքի՝ նրա կրթության և գործունեության պայմանները, կարելի է վիճելի համարել նրա կենսագիրների լուսաբանությունները շատ պարագաներում: Նուրտինյանին թվում է, որ Սարգիս ի բնե տրամադիր էր կաթոլիկության, նրա կյանքի միակ խնդիրը կաթոլիկ հավատի տարածումն և բարգավաճումն էր, որին նվիրել էր նա իր բոլոր ուժերը իբրև առաջնորդ, քարոզիչ, թարգմանիչ և հրատարակիչ: Հայր Գալեմքե[արյան] ընդունում է նրա վարկածներն առանց վերապահության, և թեև իր ձեռքին ունի ստույգ վավերագիր, որից երևում է, որ Սարգիս կաթոլիկությունն ընդունել է 1743 թվին, բայց և այնպես ասում է. «Կարելի չէ որոշել՝ ո՛ր թվականեն սկսյալ Սարգիս արքեպս. հարած էր կաթողիկյա վարդապետության և հասարակության» (էջ 166) և ապա Նուրտինյանի ազդեցության տակ պնդում է. «Արդեն հառաջ քան զառաջնորդություն Կեսարիո՝ որ է 1730, պետք է որ ընդգրկած ըլլա կաթողիկե հավատքը» (էջ 172): Կեսարիա առաջնորդ եղած ժամանակ Սարգիս գնում է Էջմիածին 1734 թվին և եպիսկոպոսության աստիճան ստանալուց հետո դառնում է իր թեմը: Սարգսի շիտակության մասին վատ գաղափար պետք է ունենալ

կարծելով, որ կաթողիկյա հավատը ընդգրկելուց հետո նա ընդունակ էր Էջմիածին գնալ և խաբեությամբ եպիսկոպոսանալ: Շուտով Սարգիս Կեսարիայից հրաժարվում է, և Հովհաննես Կոլոտ պատրիարքն (6) ուղարկում է նրան Անկյուրա: Այստեղ դավանաբանական վեճերը և կուսակցական կրքերը խիստ սուր կերպարանք էին ստացել: Կաթոլիկները զորանալով՝ յոթ եկեղեցիներից չորսը գրավել էին. «Այս ինչ տհաճ չէր Սարգսի», խորհրդածում է Հովհ. Նուրտինյան (էջ 39), և նույնը կրկնում է հայր Գալեմքեարյանը (էջ 180), որ Սարգսին թեև հաճելի էր կաթոլիկների զորացումը, բայց չէր ուզում այնտեղ գնալ, վերջը համաձայնեց գնալ և աշխատեց մեղմել կրքերը: Այնտարակույս, որ եթե Սարգիս այդ ժամանակները հարած լիներ կաթոլիկության կամ նույնիսկ աննշան համակրություն ցույց տված լիներ, Կոլոտի նման պատրիարքը երբեք նրան Անկյուրա չէր ուղարկիլ: Բացի սորանից, Ավգերյան Ստեփ[անոս] եպիսկոպոսը (7) վկայում է, որ Անկյուրայում եկեղեցիներում ուղղափառների (իմա՛ կաթոլիկների) դեմ էին քարոզում, և պատրիարքը հրամայել էր, որ քահանաները հնազանդվեին Սարաֆյանին, չորս եկեղեցիների բանալիները հանձնում են նրան և հակառակող քահանաները աքսորվում են (էջ 182): Այս խոսքերից հետևում է, որ Սարգիս Անկյուրայում դեռևս հավատարիմ էր Հայ եկեղեցուն: Նրա կենսագիրների պնդումները հակառակ հաստատության հիմն չունեն, եթե այդպիսին չհաշվենք նրանց ցանկությունը՝ Սարաֆյանին ի ծնե համարել կաթոլիկ:

1740 թվին Կոլոտ պատրիարքի մահվան լուրն (8) առնելուն պես Սարգիս շտապում է Կ. Պոլիս: Պատրիարք է ընտրվում Սարգսի դասընկեր Հակոբ Նալյանը: Որ Սարգիս աչք է ունեցել պատրիարքական գահին, ավելի քան հավանական է: Հակոբ պատրիարքի և Սահակ Ահագնի կասկածներն այս մասին, անշուշտ, անհիմն չէին: Հայր Գալեմքեարյան ժխտում է այս հանգամանքը այն համոզմամբ, որ Սարգիս փառասեր չէր և նույնիսկ փառքեն կփախչեր: Անկողմնակալ վերաբերումը, թերևս, պահանջեր ենթադրել, որ բարձր աթոռի հավակնության անհաջողությունից հետո, հավանորեն Սարգիս որոշում է թողնել վարչական ասպարեզը և պարապել գրական-հրատարակչական գործով: Ձախորդ թեմավարությունը կարող էր նրան տանել դեպի այս վճիռը: Հետևյալ՝ 1741 թ. նրան տեսնում ենք Զմյուռնիա իբր նվիրակ Երուսաղեմի վանքի: Այստեղ Սարգիս գաղտնի ընդունում է կաթոլիկություն տեղվույն պապական փոխանորդի (9) միջոցով, ինչպես երևում է Հավատո տարածման գահերեց կարդինալի պաշտոնական գրությունից (էջ 175): Այսպես, Սարգիս 45 տարեկան հասակում, 25 տարուց ավելի Հայ եկեղեցուն ծառայելուց հետո, «մի բարի օր» գալիս է այն եզրակացության, ինչպես հավատացնում են նրա կենսագիրները, որ մինչև

այդ դավանած ճշմարտությունը մոլորություն է եղել, և ճշմարտությունը կաթոլիկության մեջ է:

Նորադավան եպիսկոպոսը, 1744 թ. ծածուկ նավ նստելով, անհետանում է Զմյուռնիայից: Վենետիկի վրայից անցնում է Հռոմ և վերստին դառնում Վենետիկ: Ի՞նչ էր այս գաղտնի ճանապարհորդության միտքն ու նպատակը: Հայր Գալեմ[քեարյան] կրկնում է Նուրտինյանին խոսքերը, որ Սարգիս ուխտ ուներ Հռոմ երթալու և սրբազան քահանայապետին հպատակելու, և ապա Վենետիկի մեջ տպարան և վարժարան հաստատելու՝ կաթոլիկություն տարածելու համար: Հետագա հանգամանքները ցույց են տալիս սակայն, որ Սարգսի նպատակն է ընդհանրապես հայ ազգի կրթությանը ծառայել և նրա ձեռնարկներին կրոնական գույն տալ՝ կաթոլիկ կենսագիրների անձնական տեսողության արդյունքն է:

Սարգիսն իրոք հաստատեց տպարան և վարժարան, բայց չուտով փակեց՝ միջոցների սղության պատճառով: Անհաջողությունը ստիպեց նրան վերստին դառնալ հայրենիք: Կենսագիրների կարծիքով, Սարգիս «կաթողիկյա հավատքը տարածելու միսիոնի որոշած էր ինք զինք, յուր պերճաբան քարոզությամբը. և այս հոգվով մտավ դարձյալ հայ հասարակության մեջ» (էջ 55 և 257): Նախքան Կ. Պոլիս ուղևորվելը, Սարգիս մեկնում է Հռոմ, գաղտնի հանձնարարականներ է ձեռք բերում, մասնավորապես մի վկայական՝ ուղղված և Կ. Պոլսի լատին եպիս[կոպոսին], որի մեջ «զՍարգիս կհանձնարարե անոր մասնավոր խնամքին և հոգացողության» (էջ 253): Միևնույն ժամանակ Սարգիս միջոցներ է որոնում հայոց պատրիարքի աչքը քաղցրացնելու իր վրա: Մինչդեռ հույս ուներ Վենետիկ մնալ, Մխիթար Աբբային գրած նամակներում Սարգիս եպիս[կոպոս] կծու ակնարկներ էր անում պատրիարքի հասցեին («փաթրիկն հայոց ըստ անվան, և ըստ գործուն համանման Հակոբկա» (էջ 215, հմմտ. էջ 224)): Իսկ Կ. Պոլիս դառնալու որոշումից հետո, փոխում է իր լեզուն և նույնիսկ նամակներ է գրում նրա համակրությունը գրավելու համար: Շատ խրատական է «Հայաստան» լրագրի մեջ հրատարակած նամակը (10), որ բերում է հայր Գալեմքեարյանը՝ առանց ուշ դնելու նրա վերջին տողերին: Նամակը գրած է Սարգիս իր մի բարեկամին, որտեղ ի միջի այլոց գրում է. «յանցելումն ողջունագիր իմն գրեցի առ հոգւոյս ցանկալի Պատրիարք վարդապետն ի ձեռն Յոհաննէս Չէլեպւոյն (11), որոյ զպատասխանն ոչ ընկալայ: Եւ միայն թէ ի ձեռն տիրացու Յարութիւնին ազդեալ էր, թէ կամեցեալ իցէ առ ի տալ տպագրել զԴիոնիսիոսն՝ ինձ. որոյ վասն պատրաստեցի եւ զպիտոյս ոմանս. սակայն այնուհետեւ այլ զրոյց ինչ ոչ տեսի: Ուստի եթէ կարելի իցէ սիրազնոյդ գնալ առ նա. եւ յիմէն ողջոյն ընծայել մեծագունին սիրով, եւ քաղցրագունեւ զսիրտ նորին առ իս, զի իմ

աչաց լոյս եւ սիրելի եղբայրս է. եւ մանաւանդ ի տեղի հօր եւ երախտաւորի կու ճանաչեմ զնա: **Զի՞նչ ասեմ. պիտոյ չէր այսպէս լինել, բայց եղեւ:** Եւ յայս մօտերս վերստին գիր գրելոց եմ առ ինքն» (էջ 232): Հայր Գալեմքեարյան, որ Սարգսի կաթոլիկության վերաբերյալ ամեն մի ակնարկ խորհրդածության նյութ է շինում, տարօրեն լռությամբ է անցնում այս տողերը և չի բացատրում, թե ինչ է նշանակում ընդգծյալ նախադասությունը: Մի՞թե պարզ չէ, որ մութ ապագայի հանդեպ Սարգիս երկդիմի քաղաքականության էր հետևում, և Հռոմի հետ բարեկամական հարաբերություն հաստատելով, չէ ուզում Հայ եկեղեցուց անջատված համարվել. «Սարգիս հազիվ ոտքը Զմյիւռնիա կոխեց,- շարունակում է հայր Գալեմ[քեարյանը],- տեղվույն հայերեն մեծավ շուքով և համակրությամբ ընդունվեցավ և մեծավ խոհեմությամբ կաթուղիկյա հավատքը քարոզեց» (էջ 260):

Քարոզության արդյունքը մեծ չէր, բայց հայր Գալեմքեարյանը չի ուզում հավատալ և կարծում է, որ «արդյունքներն իր **զգուշավոր** կենսագրին մեզի ավանդածներեն շատ ավելի եղած պիտի ըլլան» (էջ 259): Անհիմն ենթադրություն է: Նուրտինյան ջանք չէ խնայում շեշտելու այն ամենը, ինչ վերաբերում է կաթոլիկության:

Զմյուռնիայի առաջնորդ Սահակ Ահագինը, տեսնելով Սարգսի համբավն, «սկսավ նախանձիլ իրեն և ատել իսկ զինքն ու վարդապետությունը» (էջ 260): Սահակ այնքան թշնամացավ, որ գրեց Հակոբ պատրիարքին՝ աքսուրելու Սարգսին, բամբասելով, որ իբր թե «ֆռանկներու դեսպաններուն պատվեր գացած է իրենց մեծերեն, որ Սարգիսը՝ միտող ֆռանկներու, պատրիարք ընեն» (էջ 261) և իբրև թե այս բանը խոստովանել է ինքը՝ Սարգիսը, գինովության ժամանակը: Մեր հեղինակը հաչաղկոտ զրպարտություն է համարում Սարգսի գրությունը. «Վասն զի Սարգիս գինարբու չէր բնավ և որևէ դեսպանի ուղղած թուղթ չուներ, և ոչ ալ փառաց հետամուտ էր, և ի սկզբանե անտի փառքե կփախչեր» (անդ): Նուրտինյանի ասելով Սահակ իր գրությունն անխոհեմությամբ թողնում է սենյակի մեջ և Սարգսի մեկ բարեկամի կարդալով հաղորդում է նրան: Հայր Գալեմ[քեարյան] անհիմն է համարում գինովության մասին պատմածը, բայց հավատում է այս տղայամիտ զրույցին: Որ Սարգիսը գինարբու չէր, թերևս հավատանք նրա կենսագրին, բայց որ Սարգիս «որևէ դեսպանի անուն ուղղած թուղթ չուներ», անհիմն է պնդել: Եղած տեղեկությունները հակառակն են վկայում: Գիտենք, որ Սարգիս Ֆրանսայի և Նապոլեոն դեսպանների հետ մոտ հարաբերություններ ուներ և նրանցից վկայականներ էր վերցրել՝ ի հաստատություն իր շահավոր գործունեության (էջ 259): Տեսանք նաև, որ Վենետիկից դառնալուս Հռոմից հանձ-

նարարական էր առել Կ. Պոլսի լատին եպիսկոպոսի անունով. ավելի քան հավանական է, որ նույնպիսի հանձնարարականներ ունեցել է ևս դեսպաններին ուղղված: Սահակ եպիսկոպոսը, որ Սարգսի ընկերն և բարեկամն էր և մինչև անգամ նրա մի հրատարակության ծախսը յուր վրա էր առել, լոկ նախանձից գրգռված, չէր կարող այսպիսի զրպարտություն հերյուրել Սարգսի վերաբերյալ, եթե իրական հիմն չունենար: Բնական է, որ Սահակը կասկածով պիտի նայեր մի եպիսկոպոսի, որ գաղտնի Հռոմ է փախչում, անսպասելի դառնում և նույն ժամանակ խուսափում է շիտակորեն հայտնել իր դավանանքը: Սահակի գրության առթիվ Սարգիս դիմում է Հակոբ պատրիարքին, սա սիրով ընդունում է նրան՝ տեսնելով նրա «անկեղծությունը և անմեղությունը» (էջ 262): Դ-ժբախտաբար, հայր Գալեմ[քեարյան] չի պարզում, թե ինչ էր Սարգսի անկեղծությունը. արդյո՞ք այն, որ նա պատրիարքության չէր ձգտում: Բայց միթե խնդիրն այդ չէ, այլ այն, թե Սարգիս իրոք կաթոլիկացած է, թե հավատարիմ է ազգային եկեղեցուն:

Գործի էությունը հայերի համար մութ մնաց մինչև Սարգսի երկրորդ ուղևորությունը Հռոմ:

Հակոբ պատրիարքի թույլտվությամբ Սարգիս հաստատվեց Կ. Պոլսում: Հայերը տեսնելով, որ «Սարգիս Հռոմեն դարձավ և հայոց հարեցավ, կուզեին, որ անիկա նզովե Հռովմա օրհնյալ գահը և հռովմեական հայերը: Բայց Սարգիս գիտեր խոհեմաբար և **ըստ խղճի** վարվիլ» (275): Հասարակությունը երկուսի պառակտված՝ մի մասը գոչում էր «ասիկա տակավին **ֆռանկ** է», մյուսը՝ «չէ, այլ ևս **ֆռանկ** չէ»: Կարծում ենք, որ այդպիսի հանգամանքներում եթե Սարգիս իրոք ուզում էր ըստ խղճի վարվել, պետք է հասարակության պահանջին գոհացում տար և պարզորեն հայտներ իր դավանությունը և ոչ թե երկդիմի և կեղծ խաղեր խաղար և աղմուկների պատճառ լիներ:

Պատրիարքն անգամ վստահություն չուներ դեպի Սարգիսը: Կենսագիրների կարծիքով, Հակոբն ուզում էր, որ Սարգիսը ֆռանկ համարվի, և այսպիսի հնարք մտածեց: Սարգսին պատվիրեց քարոզել եկեղեցում այնպիսի տոներին, երբ անպատճառ պետք է շոշափել դավանաբանական խնդիրներ և այնպիսի կետեր, որոնցով Հայոց եկեղեցին զանազանվում է հռովմեականից: Սարգիս պիտի շիտակ վարվեր, «եթե չէր այր կեղծավոր», ասում է իրավամբ Նուրտինյան: Անաչառ մարդուն ցավալի պիտի թվա, որ հայոց պատրիարքը ուրիշ հնար չուներ իմանալու ստուգությունը իր դասընկեր Սարգսից: Սակայն այլ կերպ է կաթոլիկ մտածությունը. «Սարգիս, որ հեռատես և շրջահայաց էր, այս դավեն չբռնվեցավ, հապա իր բնաբանն ու վկայությունները հայ վարդապետներեն

և հեղինակներեն առնելով ուղղափառ վարդապետությունը կքարոզեր հուրախություն ուղղափառաց» (էջ 276): Չենք հասկանում, թե Հակոբի արածի մեջ ի՞նչ դավ կար, և թե ի՞նչ է նշանակում՝ Սարգիս չբռնվեց: Եթե Հակոբի ցանկությունն էր, որ Սարգիսը ֆռանկ համարվի, ինչպես հավատացնում է հայր Գալեմ[քեարյանը], և Սարգիսն էլ իրոք նույնն էր ցանկանում, իբրև կաթողիկյա, ուրեմն ի՞նչ կարիք կար դավից խոսելու: Սարգսին մնում էր բացեիբաց հայտնել իր գույնը, որ հայերն էլ վերջապես որոշեին իրենց դիրքը և հարաբերությունը: Հայր Գալեմքեարյանը կրկնում է Հովի. Նուրտինյանի անհեթեթ խոսքերը, թե Սարգիս հայ հեղինակներից վկայություններ բերելով ապացուցեց ուղղափառությունը (իմա՛ կաթոլիկ դավանությունը)՝ առանց պարզելու, թե ո՞ր հեղինակներն էին: Խիստ կասկածելի է, որ Սարգիս հայտնորեն ուղղափառություն քարոզած լիներ. նախ՝ Սարգիս աշխատում էր միջին ուղիով ընթանալ, երկրորդ՝ Հակոբ պատրիարքը իր «դավից» հետո նրան առաջարկեց Ռոդոստոյի առաջնորդությունը: Եթե Սարգիս մինչև այդ իրեն կաթոլիկ հայտարարած լիներ, Նալյան պատրիարքը նրան թեմ չէր տալ կառավարելու: Պետք է ենթադրել, որ Հակոբի փորձությունը բոլորովին հակառակ արդյունքն է տվել, քան հավատացնում են Սարգսի կենսագիրները: Սահակ Ահագինը ևս թողնում է իր թշնամական վերաբերմունքը դեպի Սարգիսը: Հայր Գալեմ[քեարյանը] ասում է, որ երբ Սահակ նկատեց, որ Հակոբ պատրիարքը չի հալածում Սարգսին, «այն ատեն սկսավ Սարգսի քծնիլ» (էջ 276): Սահակը բնավ պետք չուներ քծնելու Սարգսին, եթե կար մեկը, որի մասին կարելի էր այդպիսի խոսք գործածել, դա Սարգիսն էր: Եթե իրոք կաթոլիկ էր, առաջնորդությունը կարող էր ստանալ լոկ քծնության գնով, իսկ եթե Հակոբին հավատացրել էր, որ հավատարիմ է Հայոց եկեղեցուն, այն ժամանակ հասկանալի է և Սահակի վերաբերմունքը:

Ռոդոստո գնալու պարագաները և այստեղից ծագած տարաձայնությունները Սարգսի և Հակոբ պատրիարքի միջև, որի հետևանքն եղավ Սարգսի աքսորը, թույլ և միակողմանի են բացատրված: Ոչ մի բանավոր հիմք չկա հավատալու Նուրտինյանին, որ պատրիարքը խոստացել էր Աթոռի տարևոր հարկը բաշխել Սարգսին, իսկ հետո դրժում է իր խոսքին և նրանից պահանջում գումարը: Նույնքան հավանական է կարծել, որ Սարգիս ինքն զլանում է սովորական տուրք վճարել և կրում է իր պատիժը: Աքսորանքից նամակներ է գրում Սարգիս իր բարեկամներին, որ բարեխոսեն նրա համար, գրում է նաև պատրիարքին՝ հայտնելով սրտի ցավերն ու կրած զրկանքները: Հակոբ ուղարկում է 100 ոսկի և մխիթարական նամակ: Շուտով [Հակոբ] ևս ազատում է նրան և նշանակում Եվդոկիո առաջնորդ: Հայր Գալեմքեարյան հավատում է, որ

Սարգիս աքսորից դառնալուց հետո, երբ այց գնաց Հակոբին, վերջինս «բազկատարած ներողություն խնդրեց իր ըրածներուն. իսկ Սարգիս ներելով գրկեց և համբուրեցավ» (էջ 299): Իրողությանց հետևողությունը, նրանց տրամաբանական ներքին թելը պահանջում է պնդել հակառակը, որ Սարգսի ազատությունը և առաջնորդ նշանակվելը կարող էր հետևանք լինել միմիայն զղջման և պատրիարքին ուղղված գրությանց: Հակոբ Նալյան Կ. Պոլսի նշանավոր պատրիարքներիցն է և թեթևամիտ և կամայական գործողությանց անընդունակ: Սարգիս ստիպողական պետք ուներ հաշտվելու պատրիարքի հետ: Շնորհիվ հաշտության պատրիարքը վճարեց նրա պարտքերը: Եվդոկիո թեմից հրաժարվելուց հետո Սարգիս ապրում էր Կ. Պոլիս՝ պատրիարքի մոտ: Հակոբի և Սարգսի հարաբերությունները հայր Գալեմ[քեարյանը] այնպես է ներկայացնում, որ կարծես Հակոբն է հանցավոր Սարգսի նկատմամբ. Երբ «Յակոբ պատրիարք, մահացու հիվանդ կպառկեր,- գրում է հայր Գալեմք[եարյանը],- Սարգիս արքեպիսկոպոս ստեպ կայցելեր, կմխիթարեր, և զինք հավիտենական կենաց կպատրաստեր, անցյալ գործերը հիշեցնելով զղջման կհորդորեր: Հառաջ կբերեր այն գրքերը՝ զոր ընդդեմ ուղղափառության տպած էր, թեպետ ինքն Հակոբ ալ ըրածներուն վրա գոհ չէր» և այլն (էջ 306): Այսօրինակ դատողություններ միայն ստորացնել կարող են հետազոտության արժեքը:

Ոչ նվազ մոլորություն է կարծել, որ Սարգիս ջանալով «ազգն ուղղափառության բերել հաջողեցավ շատերը վաստրկիլ» և ավելի հաջողություն կունենար, «սակայն այլևայլ նկատումներ թույլ չէին տար ամենուն այս քայլն առնելու» (էջ 312-313): Այդ «կեսք առ ահին, ոմանք առ փառաց, և այլ սյուն պատճառանաց» (էջ 119): Այս մտքին անհեթեթությունն ևս ակներև է: Փառք որոնողները, ընդհակառակն, շքեղ Հռոմի ուղին էին բռնում և ոչ աղքատիկ Էջմիածնի: Ինքն՝ հայր Գալեմք[եարյանը] հիշում է, որ այն ժամանակ հաճախակի դեպքեր էին տեղի ունենում, երբ բախտախնդիր անձինք, նույնիսկ աշխարհականներ, կեղծ հոգևորականներ էին ձևանում և Հռոմ երթալով աշխատում էին փառքի և պատվի արժանանալ:

1772 թ. Սարգիս իր աշակերտ Նուրտինյանի հետ ծածուկ փախչում է Արևմուտք, «իբրև ուղղափառ ուղղափառների մեջ ապրելու» ցանկությամբ: Լիվոռնոյից մի խորհրդավոր թուղթ է գրում Հռոմ, թույլտվություն խնդրելով գնալ այնտեղ: Հետև ուներ այլևայլ հանձնարարականներ. նշանավոր են մանավանդ գրության վերջին պարբերությունները Սարգսի նկարագրի համար. «Հուսկ հետո ծանուցանեմ, զի այժմ ի Կ. Պոլիս երկոքին կողմունքն հայոց, այսինքն՝ ուղղափառաց եւ ճիզմատիքաց և մեծամեծաց մինչև վճռքունս ակնապուշ եղեալ նկատեն ի կայմունս յայս առ ի գիտել

զգիարդութիւնն, եւ ուր կայանալն որպիսութեան մերոյ» (էջ 372): Հայր Գալեմքեարյանը խոհեմությամբ լռելայն է անցնում այս նենգավոր տողերը:

Զարմանալի է, որ Սարգիս, որ թեև ըստ կենսագիրների, հայտնապես ուղղափառություն է քարոզել 1754-1772 թթ. և հանճարարականներ ևս ուներ, բայց և այնպես ստիպված էր երկար գրությամբ համոզել Հռոմին, որ ինքը վաստակավոր անձն է: Փորձված Հռոմը այլ կերպ էր նայում 73-ամյա ծերունու գալստյան վրա և պատասխանում է, որ «ժողովո արկղը շատ ծանրաբեռնյալ է» (էջ 373) և թե «նախ՝ եպիսկոպոսունս որք են աստ տեղաւորեցից եւ ապա հոգասցուք զնա» (էջ 375): Իզուր էր Սարգիս հավատացնում, թե «գալուստն իմ ի Հռոմ ոչ դիտէր զօգուտն անձին իմոյ ի կողմանէ դրամոյ» (էջ 373): 1773 թ. մեռավ՝ փափագին չհասած: Մահից հետո երևաց, որ Սարգիս բավականի հարստություններ էր դիզել իր քարոզչության ժամանակ: Քայլ առ քայլ հետևելով Սարաֆյանի կենսագրության, գալիս ենք հաստատելու ինչ որ ասացինք սկզբում՝ Սարգսի վերաբերումը դեպի կաթոլիկության այնքան որոշ չէ, որ տարածայնության տեղիք չտա: Ճշմարիտ է, 1743 թ. պաշտոնապես ընդունում է կաթոլիկ դավանությունը և ուղևորվում Արևմուտք, բայց հույսերը ի դերև ելնելուց հետո դառնում է հայրենիք և հարում մայրենի եկեղեցուն: Որ Հակոբի պես պատրիարքը թեմեր էր առաջարկում նրան կառավարության, և Սիմեոն կաթողիկոսը (12) բարեկամ էր Սարգսին և տակավին 1771 թ. ասել է վերջին փախուստի նախօրեին, առաջարկում է նրան Էջմիածնի ընդիրատվություն, պերճ ապացույցներ են, որ Սարգիս չէր նկատվում «սրտով և վարդապետությամբ կաթողիկյա»: Համենայն դեպս, հայ եկեղեցականությունը նրան չէր համարում խորթացած Հայ եկեղեցուց: Հավանականն այն է, որ Սարգիս ազգի լուսավորության ծառայելու տենչով տոգորված, մտադրություն է ունեցել հաստատվել Վենետիկ՝ նման Մխիթար Աբբայի, որի համար պատրաստ է եղել անգամ զոհելու ազգային եկեղեցին՝ հուսալով, որ այս զոհաբերությամբ գլխավոր նպատակը կշահվի: Սակայն անհաջողության դեպքից հետո, հիասթափվում է և դառնում է հայրենիք և մտնում վերստին Հայ եկեղեցու ծոցը: Ծերության հասակում նախկին ծրագիրները նորից նրան տանում են Արևմուտք, ունենալով հետը մեծ գումար, հույս ուներ, որ այս անգամ ավելի հաջող կերթան նրա ձեռնարկությունները:

Իսկ եթե կանգ առնենք այն տեսակետի վրա, որ պաշտպանում են նրա կենսագիրները, պիտի հանգենք ամենատխուր եզրակացության Սարգսի անձնական հատկության վերաբերյալ: Եթե հիրավի Սարաֆյանը ծարավի էր կրոնական ճշմարտության, պետք է որ ամենից առաջ բացարձակ հայտներ իր գտած ճշմարտությունը և ոչ թե մութ խաղ խաղար հայ

եկեղեցականության հետ՝ սքողելով նրանից և ժողովրդից իր էությունն: Երկուց տերանց ծառայելը կրկնակի անտանելի է, մանավանդ խոճի խնդիրներում, այն էլ կրոնականի համար: Երբ մարդու մեջ պակասում է շիտակությունը, մյուս առաքինի կողմերն անգամ կորցնում են իրենց արժեքը կամ փայլում են կեղծ փայլով: Հայր Գալեմքեարյանը պետք է կշռի դներ, որ Նուրտինյան ներկա լինելով իր ուսուցչի մահվան և նրա վերջին օրերին, երբ Սարգիս իրոք ջանք չէր խնայում իր ջերմ կաթոլիկությունը ցուցանելու Հռոմի հանդեպ, ակամայից հետադարձ լույսով է ներկայացնում Սարգսի կյանքն ընդհանրապես: Նուրտինյանի կարծիքով, Սարգիս ի բնե կաթոլիկ էր, նույնը ասում է և իր հոր համար, որից թեև զրկվել էր 7-ամյա հասակում, բայց գիտե, որ «դավանությամբ ուղղափառ կաթողիկյա էր, բայց նեղչաց վախեն ծածուկ կպահեր» (էջ 148):

Նկատված թերությունները հստակ են և մյուս անձանց կենսագրություններում. նույն միակողմանիությունը և նեղ կրոնական հայեցակետը: Հարկավոր ենք համարում շեշտել, որ թերի և անբավարար լուսաբանությունը ընդգծելով, չենք կարող ուրանալ գրքի՝ հայր Գալեմքեարյանի աշխատության մեծ արժեքը: Այստեղ ամբարված են հարուստ նյութեր, տքնաջան աշխատանք, մանրակրկիտ դիտողություններ, որոնք իրենց նշանակությունն ունեն և կպահեն, անկախ լուսաբանությունից և ըստ ամենայնի արժանի են խրախուսանքի, մանավանդ որ արժ[անապատիվ] հայրը խոստանում է լույս ընծայել ստվար աշխատությունը՝ նվիրված հայ կաթոլիկ հասարակության 1800-1830 թթ. պատմության (13):

Սրտով ցանկանում ենք, որ նոր երկը զերծ լինի նկատված թերություններից և փոխան կաթոլիկ տեսակետի, առաջ բերվի որևէ պատմական ճշմարիտ տեսություն, որպեսզի գիտական հիմք չլինի կրկնել կաթոլիկ հետազոտողների հասցեին այն, ինչ որ հայր Գալեմքեարյանը ասում է ոչ կաթողիկյա մասին. «Դժբախտաբար կաթողիկյա հասարակության վերա ոչ-կաթողիկեից գրածները գրեթե ամենքն այսպես սխալ կամ խեղաթյուրյալ են» (էջ 363-364):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ
(էջ 13)

Գրված է 1926-1927 թթ. Փարիզում: Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1926, 4-րդ տարի, № 12, էջ 37-45: 1926, 5-րդ տարի, № 1, էջ 78-88, № 2, էջ 70-82: 1927, 6-րդ տարի, № 3, էջ 109-121): Երկրորդ անգամ հրատարակվել է Ա. Խոնդկարյանի աշխատասիրությամբ լույս տեսած Ն. Ադոնցի «Պատմական ուսումնասիրություններ» ժողովածուում (Փարիզ, 1948, էջ 223-293):

Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի Գր. Խալաթյանցի "Армянский эпос в истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников. Ч. I. Исследование. Ч. II. Материалы, М., 1896" մենագրությունում Մովսես Խորենացու ոչ այնքան տեղին ու պատշաճ քննադատության իրողությունը: – Էջ 23:

2. «Ծերունի պատմաբանը» - Ակնարկում է Մովսես Խորենացուն: – Էջ 23:

3. Տե՛ս՝ «Diodori Bibliotheca Historica», vol. II, XI, 4. – Էջ 23:

4. Խոսքը Աքեմենյան Արտաքսերքսես II Հիշար թագավորի (404-358) մասին է: – Էջ 25:

5. Հետևելով իր ժամանակների պատմագիտության և համեմատական լեզվաբանության մեջ տիրապետող տեսակետներին՝ Ադոնցը ևս տուրք է տվել հայ ժողովրդի ծագման **միգրացիոն** տեսությանը: Ադոնցի կարծիքով, հայկական ցեղերը Հայկական լեռնաշխարհ մուտք են գործել Ք. ա. VII դ. վերջերին – VI դ. սկզբներին: Չնայած այս հանգամանքին, Ադոնցը Ուրարտուի պատմությունը դիտում է որպես հայ ժողովրդի պատմության անբաժան մաս, իսկ ուրարտացիներին՝ հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած ցեղային միություններից մեկը: Լավագույն ապացույցը Ադոնցի բազմահատոր ֆրանսերեն «Հայոց քննական պատմության» առաջին հատորի (Փարիզ, 1946) անվանումն է՝ «Հայաստանի պատմություն. ակունքները X-VI դ. Ք. ա.» (հայերեն թարգմանությունը՝ Երևան, 1972): Էջ 34:

6. Վանի հնագիտական արշավախումբը, որի կազմում էին պրոֆ. Ն. Ադոնցը, մագիստրոս Ա. Լոռու Մելիք-Քալանթարը, ճարտարապետ Ուղալենիկովը և լուսանկարիչ Միշելը, 1917 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Վանի շրջակայքում և

ռուսական զորքերի գրաված հարևան վայրերում հնագիտական լայնածավալ աշխատանքներ է կատարել և հավաքելով մեծաքանակ արժեքավոր նյութեր՝ հետ վերադարձել Թիֆլիս (տե՛ս «Հորիզոն», օրաթերթ, Թիֆլիս, 1917, 16 հուլիսի, № 148, էջ 3; հմմտ. նաև՝ նույնը, 1917, 3 սեպտեմբերի, № 189, էջ 3): – Էջ 34:

7. Ավ. Իսահակյանի մշակած «Իրիցկնկա աղբյուրը» ավանդավեպն առաջին անգամ լույս է տեսել «Տարազ» ամսագրում (1897, նոյեմբերի 16, № 44, էջ 689-691): Ավանդավեպի նյութը բանաստեղծը քաղել է Շիրակի ժողովրդական զրույցներից, որն ակներև է նրա հետևյալ ծանոթագրությունից. «Այս աղբյուրը խափանված ջերմուկ է Շիրակում, Երազգավորսի մոտերքը»: Թվում է, թե Իսահակյանին անծանոթ է մնացել Գ. Սրվանձտյանցի գրի առած տարբերակը: Սույն ավանդավեպին Ադոնցն անդրադարձել է նաև ավելի ուշ շարադրած «Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում» աշխատության մեջ (տե՛ս «Հայաստանի պատմություն», հավելվածներ, էջ 370-382): – Էջ 35:

8. Հավատարիմ իր որդեգրած սկզբունքի, Ադոնցը հայերին և թրակացիներին համարում է արենակից ժողովուրդներ, հայերի նախահայրենիք՝ Թրակիան: Նա զարգացնում է այն տեսակետը, թե Ք. ա. XIII դարի վերջերին սկսվել է ցեղերի մեծ տեղաշարժը Էգեյան աշխարհից և Բալկաններից դեպի Փոքր Ասիա: Հենց այդ ժամանակ է, որ հայերի հնդեվրոպական նախնիները՝ արմենները, տեղափոխվել են Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները և այդտեղից դանդաղ շարժվել դեպի Հայկական լեռնաշխարհ [տե՛ս Ն. Ադոնցի՝ «Հայերի ծագումը» անավարտ աշխատությունը (**Ն. Адонц,** նշվ. աշխ., էջ 287-346)]: Արդի հայ պատմագիտական միտքը թեև մերժում է հայերի ծագման թրակիական վերսիան, սակայն արժանվույն է գնահատում լեզվաբանական ու պատմագիտական նյութերի Ադոնցի կատարած քննահամեմատական հսկայական աշխատանքը, որը չափազանց օգտակար է դառնում նշված հարցերի նորովի վերլուծության ժամանակ: Հայ ժողովրդի ծագման պրոբլեմին նվիրված վերջին լավագույն ուսումնասիրություններից տե՛ս **О. С. Широков**, Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины (автохтонность армян по данным сравнительно-исторического языковедения), «Լրաբեր», հասարակ. գիտ., 1980, № 5: – Էջ 44:

9. Ակնարկում է Մուշեղ Մամիկոնյանի հարազատների ակնկալությունը՝ սպանված սպարապետին վերակենդանացնելու ուղղությամբ. «Եւ եղև իբրև տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ՚ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընդանիք նորա մառն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ՚ի մարմնոյն անտի: Զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբէք, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա: Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ՚ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եղին ՚ի տանիսն աշտարակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Առալեզք իջանեն և յարուցանեն

զդա: Պահապան կային, և ակն ունէին յառնելոյ մինչև նեխեցաւ մարմինն: Ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին քաղեցին զնա որպէս օրէն էր» (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 362): – Էջ 46:

10. Նկատի ունի Ա. Գուտշմիդի՝ «Agathangelos» ուսումնասիրությունը (Leipzig, 1877): Տե՛ս նաև սույնի հայերեն քաղվածո բարգմանությունը («Բազմավեպ», 1878, էջ 297-304: 1879, էջ 10-16, 97-101): – Էջ 60:

11. Հայոց թագավոր Սոհեմոսը սերում էր Կոմմագենեի Երվանդունիների արքայատոհմից: Նախապես եղել էր Ասորիքի Եմեսա քաղաքի թագավորը, այնուհետև երկու անգամ՝ 144-161 և 164-188 թվականներին, գահակալել է որպես Հայոց թագավոր: Մովսես Խորենացին նրան անվանում է՝ «Տիգրան Վերջին»: – Էջ 62:

12. Սուրբ Սարգիսը եղել և մնում է հայերի ամենասիրված ու պաշտված սրբերից: Սույն իրողությունը մի անգամ ևս հավաստում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2002 թ. հրավիրած «Սուրբ Սարգիս» գիտաժողովի նյութերը (տե՛ս նաև **Մ. Աշճյան,** Արագահաս Սուրբ Սարգիս, Երևան 2002): – Էջ 77:

13. Այդ հայտնաբերումների մասին տե՛ս **Н. Марр и Я. И. Смирнов**, Вишапы, "Труды Гос. Академии истории материальной культуры", т. I, 1931:– Էջ 78:

14. Ն. Ադոնցի բեյրության թողնում առկա է ձեռագիր ռուսերեն մի ընդարձակ, սակայն անավարտ աշխատություն՝ նվիրված փոքրասիական աստվածությունների, մասնավորապես՝ Կիբելե աստվածուհուն (տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական արխիվ, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Թ, թղթածրար Ա-8, էջ 5-43): – Էջ 78:

ՏՈՐՔ ԱՍՏՎԱԾ ՀԻՆ ՀԱՅՈՑ

(էջ 79)

Գրված է 1911 թ. հոկտեմբերին Ս. Պետերբուրգում: Բնագիրը պահվում է Վիեննական Մխիթարյան միաբանության արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Յուշարձան» ժողովածուում (Վիեննա, 1911, էջ 389-394):

Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Զարմանալի է, սակայն Մովսես Խորենացու առկա քննական բնագրում խոսք չկա Հայկակի մասին: Պատմահայրը հետևյալն է արձանագրում: «Ի զաւակէ Պասքամայ, ի Հայկայ թոռնէ, Տորք անուն կոչեցեալ» (տե՛ս Մովսես Խորենացի, քննական, 1913 թ., էջ 114): Այստեղից ակներև է, որ Տորքը սերում է Հայկի թոռ Պասքամայից: Անշուշտ, Ադոնցը հիմք է ընդունել տարընթերցվածը, որն

արձանագրում է՝ «Ի Հայկակայ թոռնէ» տարբերակը: Ի դեպ, մինչև քննական հրատարակությունը լույս տեսած Խորենացու բնագրերն ու օտարալեզու թարգմանություններում «Ի Հայկակայ» ընթերցվածը համարվել է տեքստային (տե՛ս Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 79, նաև «История Армении Моисея Хоренского». Новый перевод Н. О. Эмина, М., 1893, стр. 59 և այլն):

2. Հավանաբար Ն. Ադոնցի ուշադրությունից վրիպել է նույն խնդրին նվիրված Ն. Մառի չափազանց ուշագրավ մի այլ հոդված ևս՝ "Фрако-армянский Sabadios-asvat' и сванское божество охоты", տե՛ս "Бюллетень Императорского АН", СПб., 1912, стр. 827-830: – Էջ 85:

ՏԱՐԿՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՄՈՏ
(էջ 86)

Գրված է 1926 թ. Փարիզում: Որպես զեկուցում նախապես ընթերցվել է Ֆրանսիայի «Ասիական» ընկերության 1926 թ. նոյեմբերի 12-ին տեղի ունեցած № 12-րդ նիստում: Առաջին անգամ տպագրվել է «Revue des E'tudes Arméniennes» հանդեսում (tome VII, fascicule 1, Paris, 1927, p. 185-194): Հայերեն թարգմանությունը (Օ. Վարդազարյան) կատարվել է այս առաջին տպագրությունից:

1. Ուսումնասիրողները ենթադրում են, որ Անգեղ տուն նախարարությունը գտնվել է Աղձնիք նահանգում՝ կենտրոն ունենալով Անգղ բերդաքաղաքը: Այն համապատասխանել է, ինչպես ինքը՝ Ն. Ադոնցն էլ էր առաջարկում, հետագայի Դիարբեքիրի գավառի Ակլ (Էգիլ) գավառի համանուն կենտրոնին (տե՛ս **Ն. Ադոնց**, Տորք աստված հին Հայոց, էջ 392. նույնը՝ աստ, էջ 83): – Էջ 87:

2. Որոշ հետազոտողների կարծիքով, Թորգոմի եղբայր Ռիփաթը հանդիսանում է պափլագոնացիների նախնին: – Էջ 93:

3. Վերջին ուսումնասիրությունները Թորգոմի տունը նույնացնում են խեթական արձանագրությունների Թեգարամա և ասորեստանյան արձանագրությունների Թիլ-Գարիմմու երկրներին: «Թորգոմ տուն» երկրանվան վերաբերյալ տե՛ս Ա. Քոսյան, Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Երևան, 1998:– Էջ 93:

4. Նկատի ունի Գ. Օտրանին:

5. Տորքին նվիրված Ադոնցի սույն ուսումնասիրությունները մեծապես նպաստեցին հիմնահարցի հետագա մշակմանը: Նախ լույս տեսավ պրոֆ. Ն. Մարտիրոսյանի («Altarmenische Volksüberlieferungen über Tork, den. Gott der übermenschlichen Kraft», տե՛ս «Archiv Orientalni», Prague, 1930, vol. II, № 2, p. 292-298),

ապա՝ Ա. Խաչատրյանի («Տորք Անգեղեայ» հայ հին մատենագրության և նոր բանասիրության մեջ», տե՛ս «Տեղեկագիր» Գիտության և արվեստի ինստիտուտի, Երևան, 1931, № 5, էջ 40-64) ուսումնասիրությունները: Միայն տարակուսանք են առաջացնում Ա. Խաչատրյանի՝ ինքնարդարացում հիշեցնող խոսքերը, թե ինքը «Ադոնցից բոլորովին անկախ է կատարել Տարքու-ի և Տորքի նույնացումը իբր աստված» (**Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 42, ծան. 2): Խնդրի վերաբերյալ վերջին ուսումնասիրություններից տե՛ս **Г. Д. Вардумян,** Дохристианские культы армян, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հատ. 18, Երևան, 1991:– Էջ 96:

ՀԱՅ ՀԻՆ ՇԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(էջ 97)

Գրված է 1927 թ. Փարիզում: Ընագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հին հայոց շինականությունը» խորագրի ներքո՝ «Հայրենիք» ամսագրում (1927, 5-րդ տարի, № 12, էջ 81-85: 1927, 6-րդ տարի, № 1, էջ 147-154, № 2, էջ 94-100): Երկրորդ անգամ լույս է տեսել «Պատմական ուսումնասիրություններում» (Փարիզ, 1948, էջ 157-205): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Հ. Մանանդյանի ուսումնասիրությունը, որի լրիվ վերնագիրն է «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» լույս է տեսել Երևանի պետական համալսարանի «Գիտական տեղեկագրի» առաջին համարում (1925, № 1, էջ 3-45, տե՛ս նաև առանձին հրատարակությամբ՝ Երևան, 1925): Ն. Ադոնցի «Հայ հին շինականությունը» փաստորեն Հ. Մանանդյանի նշված աշխատության գրախոսականն է: – Էջ 97:

2. Ակնարկում է այն իրողությունը, որ Հ. Մանանդյանը սկզբունքային շատ հարցերում տարակարծիք էր իր "Армения в эпоху Юстиниана" մենագրությունում առաջ քաշված համապատասխան տեսակետներին. «Նիկ. Ադոնցի մեկնաբանությունը, - գրում է Հ. Մանանդյանը, - թեև շատ հետաքրքիր է ու հրապուրիչ, սակայն ունի առարկելի կետեր և թվում է ինձ խիստ վիճելի»: – Էջ 99:

3. Խոսքն իր "Фауст Византийский как историк" ուսումնասիրության մասին է (տե՛ս "Христианский Восток", 1922, т. 6, стр. 235-272): Սույն ուսումնասիրությունը նախատեսված է լույս ընծայել Ադոնցի Երկերի երկրորդ հատորում: – Էջ 114:

4. Ակնարկում է Նորայր Բյուզանդացու «Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունք» ուսումնասիրության (Տփղիս, 1900) համապատասխան բառաքննությունները: – Էջ 122:

5. Նկատի ունի հետևյալ ուսումնասիրությունները "И. М. Кулишер, Лекции по истории экономического быта Западной Европы, Петроград, 1918. G. Knapp, Bauernbefleing, B. I, Einleitung, 1887: – Էջ 129:

6. Ակնարկում է գերմանացի գիտնական Գեորգ Կնապպին: – Էջ 132:

7. Հին և միջնադարյան Հայաստանի շինական դասի դրության մանրամասն հետազոտությունը կատարել են Խ. Սամուելյանը, Թ. Ավդալբեգյանը, Բ. Հարությունյանը, Ս. Երեմյանը, Ս. Պողոսյանը, Ս. Հակոբյանը, Լ. Բաբայանը և ուրիշներ: Հարցի պատմագրությունը տե՛ս **Լ. Հ. Բաբայան,** Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970: – Էջ 140:

8. 1935 թ. հունիսի 15-ին և 1936 թ. հոկտեմբերի 16-ին Ն. Ադոնցը «Ճորտատիրության իրանական դրսևորումը» խորագրով զեկուցումներ է կարդացել «Ժան Բոդեն» ընկերության գիտական նստաշրջաններում: Հետագայում այդ զեկուցումների համառոտագրությունը, որպես հոդված, լույս է տեսել նույն ընկերության գիտական հոդվածների ժողովածուում (Բրյուսել, 1937, էջ 135-153): Այդ հոդվածի հայերեն թարգմանությունը ծրագրվել է լույս ընծայել Ադոնցի Երկերի լրացուցիչ 6-րդ հատորում:– Էջ 140, ծան. 1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԸ

(էջ 141)

Գրված է 1928 թ. Փարիզում: Բնագիրը գտնվում է Բոստոնում՝ «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1928, 6-րդ տարի, № 3, էջ 86-95): Այնուհետև լույս է տեսել «Պատմական ուսումնասիրություններում» (Փարիզ, 1948, էջ 206-222): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը վերաբերում է Երևանի պետական համալսարանի «Գիտական տեղեկագրում» լույս տեսած Աստվածատուր Խաչատրյանի «Հույն պատմիչների վկայությունը հին Հայաստանի ոսկեհանքերի և նրանց տեղի մասին. տեղագրական ուսումնասիրություն» (1925, № 1, էջ 47-69) հետազոտությանը: – Էջ 141:

2. Ակնարկում է ավստրիացի պատմաբան Հ. Մոնցկայի (H. Montzka) «Die Landschaften Grossarmeniens bei griechischen und römischen Schriftstellern, Wien, 1906» աշխատությունը: – Էջ 141:

3. Նկատի ունի "Армения в эпоху Юстиниана" մենագրության առաջին՝ «Հայաստանի քաղաքական բաժանումը» գլխում քննարկման առարկա դարձած համապատասխան նյութը (մասնավորապես տե՛ս անդ, էջ 24-26): – Էջ 142:

4. Ստորև տրվող թարգմանությունը, որ պատկանում է Ն. Ադոնցին, էական տարբերություն ունի մենագրութան հայերեն թարգմանության համապատասխան հատվածից (տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունն ըստ նախարարական կարգերի, ռուսերենից թարգմանեցին Ա. Թ. Խոնդկարյանը և Է. Հ. Խոնդկարյանը, Երևան, 1987, էջ 33): – Էջ 145:

5. Նկատի ունի հայր Ն. Սարգիսյանի «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» (Վենետիկ, 1864) մենագրությունում զետեղված քարտեզը: – Էջ 146:

ՄԻՀՐԴԱՏ ԵՎՊԱՏՈՐ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
(էջ 156)

Գրված է 1940 թ. Բրյուսելում: Ֆրանսերեն բնագիրը գտնվում է Համազգայինի Բեյրութի գրական արխիվի պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդում (Պահարան I, գզրոց Բ, թղթածրար 2, № 12 և 14): Առաջին անգամ հրատարակել ենք մենք (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 2001, № 2, էջ 277-290, թարգմանությունը ֆրանսերենից՝ Ա. Շահումյանի): Տպագրվում է այս հրատարակությունից:

1. Ըստ նորագույն ուսումնասիրությունների, Փոքր Հայքը Պոնտոսի տիրապետությանն է ենթարկվել Ք. ա. 112 թվականին: – Էջ 161:

2. Ք. ա. 163 թվականին Կապպադովկիան և Մեծ Հայքը կանգնած էին միմյանց պատերազմ հայտարարելու իրողության առջև: Պատճառը Ծոփքի ճգնաժամն էր: Արտաշես I-ը ցանկանում էր այստեղ գահ բարձրացնել իր թեկնածուին, իսկ Կապպադովկիայի թագավոր Արիարաթես V-ը՝ Մեհրուժան Զարեհյանին: Ի վերջո կողմերը պայմանավորվեցին, որ Ծոփքում կիշխի Մեհրուժանը, որի հետևանքով Ծոփքի միացումը Մեծ Հայքին հետաձգվեց 70 տարով: – Էջ 163:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵՎ ԱՆԱԿ ՊԱՐԹԵՎ
(էջ 169)

Գրված է 1928 թ. Փարիզում: Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1928, 6-րդ տարի, № 9, էջ 73-80): Թարգմանվել է ֆրանսերեն («Grégoire L'Illuminateur et Anak Le Parthe», տե՛ս «Revue des E'tudes Arméniennes», Paris, 1928, t. VIII, p. 233-245): Արտատպվում է «Հայրենիք»-ի հրատարակությունից:

1. Ագաթանգեղոսին նվիրված Ա. Գուտշմիդի ուսումնասիրությունը լույս է տեսել

1877 թվականին: Այդ ժամանակ շրջանառության մեջ էին Ագաթանգեղոսի Պատմության լատիներեն (1835), իտալերեն (1843) և ֆրանսերեն (1867) թարգմանությունները: – Էջ 170:

2. Ակնարկում է Գ. Տեր-Մկրտչյանի՝ «Ագաթանգեղոսի աղբյուրներից. Յիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից որ վկայեցան յՈւռհա» ուսումնասիրությունը (տե՛ս «Արարատ», 1896, № 8, էջ 385-392, № 9, էջ 425-440): – Էջ 171:

3. Տե՛ս «Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց», գրեց Հ. Տաշյան, Վիեննա, 1891: – Էջ 179:

ՄԱՐԶՊԱՆ ՎԱՍԱԿԸ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

(էջ 180)

Գրված է 1904 թ. Ս. Պետերբուրգում: Որպես զեկուցում Աղոնցը այն նախապես ընթերցել է Ս. Պետերբուրգի համալսարանի գիտական նստաշրջանում, ապա հրատարակել "Записки восточного отделения императорского русского археологического общества" պարբերականում (СПб., 1904, № 15, стр. 0122-0130): Երկրորդ անգամ լույս է տեսել Շ. Դավթյանի աշխատասիրությամբ (տե՛ս «Հայրենի տուն», 1993, 2-8 հունիսի, № 9, էջ 6-7): Հոդվածը Վ. Ա. Դիլոյանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Բեյրութի «Ազդակ» օրաթերթում (1993, 18 փետրվարի, № 283, էջ 4; 20 փետրվարի, № 284, էջ 4, նույնը տե՛ս նաև «Հանրապետական», պաշտոնաթերթ Հայաստանի հանրապետական կուսակցության, 1996, № 10, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 6-7; № 11, դեկտեմբեր, էջ 5-6): Տե՛ս նաև Շ. Դավթյանի հայերեն թարգմանությունը՝ «Մարզպան Վասակը պատմիչների դատի առջև» վերտառությամբ, **Շ. Բ. Դավթյան**, Սիսիանի բնակավայրերի պատմությունը, Երևան, 1997, էջ 115-121, նաև՝ **Շ. Բ. Դավթյան,** Ականավոր սյունեցիներ, Երևան, 1998, էջ 17-24:

Տպագրվում է ըստ Վ. Ա. Դիլոյանի թարգմանության:

1. Ակնարկում է Վասակին բնութագրող Կորյունի հետևյալ գնահատականը. «Յորում ժամանակի պարգեւեալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր Աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ Ավետարանին վայելչութեան, մինչ ի վախճան գիրամայեալսն ի գործ բերէր» (տե՛ս **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 62): Էջ 181:

2. 748-750 թթ. հակաարաբական ապստամբության իրադարձությունները քննելիս Ադոնցը համերաշխության եզրեր է մատնանշում Աշոտ Բագրատունու և Վասակ Սյունեցու քաղաքական ուղեգծերի միջև. «Պետք կա՞ նկատելու, որ Աշոտ [Բագրատունին] իր վարմունքով նվազ ուխտանենգ չէր Գրիգոր [Մամիկոնյանի] նկատմամբ, քան Վասակ Սյունին՝ Վարդան [Մամիկոնյանի]: Բայց տե՛ս, որ [Ղևոնդ] պատմիչը «որդիք յանցանաց» է անվանում Գրիգորի կուսակից ուխտապահներին»..., իսկ Աշոտին՝ «պսակ պերճութեան եւ փառք ազգիս Հայոց» (տե՛ս սույն հատորը, էջ 235): – Էջ 186:

3. Վարդան-Վասակ հարաբերության և աղերսվող հարցերը բավականին անդրադարձ են ունեցել պատմագիտության մեջ, որոնց համառոտ վերլուծությունը տե՛ս **Հ. Մուրադյան,** Վարդանանց ապստամբության մասին, Երևան, 1989: – Էջ 187:

ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՆԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ (Ջ ԴԱՐ)

(էջ 189)

Գրված է 1902 թ. ապրիլին Լոնդոնում: Առաջին անգամ տպագրվել է «Արարատ» ամսագրում (1902, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 262-274): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Զաքարիա Հռետորի (Միտելենացի) ժամանակագրության այս հատվածի, ինչպես նաև ամբողջ երկասիրության հայերին ու Հայաստանին վերաբերող հատվածների հայերեն թարգմանությունը տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». 8. Ասորական աղբյուրներ. Ա. թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 311-317:– Էջ 193:

2. Ն. Պիգուլևսկայան ("Сирийские источники по истории народов СССР", Москва-Ленинград, 1941, стр. 85) ենթադրաբար ընթերցում է՝ «Մակար»: – Էջ 195:

3. Հոների ծագման մասին առկա գրականության վերլուծությունը տե՛ս՝ **Г. В. Хауссиг,** К вопросу о происхождении гуннов, "Византийский временник", 1977, № 38, стр. 59-71: – Էջ 197:

ԱՐՏԱՎԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

(էջ 198)

Գրված է 1929 թ. Փարիզում: Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամ-

սագրում (1929, 7-րդ տարի, № 11, էջ 96-109): Երկրորդ անգամ լույս է տեսել Ն. Ադոնցի Երկերի ժողովածուում (Փարիզ, 1948, էջ 297-319): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ինչպես նկատել է Հր. Բարթիկյանը, Պրոկոպիոսի այս հատվածը որևէ աղերս չունի հայկական սկզբնաղբյուրների հետ: Հավանաբար խոսքն այստեղ վերաբերում է Արշակ III-ին, որ 387 թվականի Հայաստանի առաջին բաժանումից հետո իշխում էր Արևմտյան Հայաստանում: Պրոկոպիոսի այս հատվածների հայերեն թարգմանությունը տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». 5. Բյուզանդական աղբյուրներ. Ա. Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից, առաջաբանն ու ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 80 և հտ.: – Էջ 201:

2. Ակնարկը վերաբերում է 532 թ. պարսկա-բյուզանդական «Հավիտենական» հաշտության պայմանագրին: – Էջ 201:

3. Ինչպես ակներև է Ն. Ադոնցի արխիվի նյութերից, նա հատուկ ուսումնասիրություն է գրել նվիրված Հուստինիանոս I -ի դարաշրջանի նշանավոր հայերի գործունեությանը: Աշխատությունը, որ կրում է «Հուստինիանոսի ժամանակաշրջանի նշանավոր հայերը» խորագիրը, բաղկացած է հետևյալ հատվածներից՝ ա. Արտավազդ, բ. Արտավան Արշակունի, գ. 548 թ. դավադրությունը, դ. Ներսեհ և Իսահակ Կամսարականներ, ե. Վարազտիրոց, զ. Հայկական հեծելազորը Իտալիայում, է. Իսահակ Կամսարականն ու նրա բանակը, ը. Գլակ Հայ, թ. Հովհաննես Արշակունի (ռուսերեն անավարտ այս ուսումնասիրությունը տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական արխիվ, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Թ/Ա-8):

Նույն թողոնի նյութերի ուսումնասիրությունը հավաստում է նաև այն իրողությունը, որ պատմաբանը նպատակ է ունեցել հատուկ ուսումնասիրություն գրել Բյուզանդիայում հաստատված հայ Արշակունիների մասին: Ցավոք, պահպանվել են միայն «Հայոց վերջին Արշակունիների ճակատագիրը» ռուսերեն ուսումնասիրության առաջին երեք էջերն ու առանձին ցաքուցրիվ նյութեր:– Էջ 217:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(էջ 218)

Գրված է 1927 թ. Փարիզում: Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1927, 5-րդ տարի, № 4, էջ 68-77, № 5, էջ 84-96), երկրորդ անգամ՝ «Պատմական ուսումնասիրություններում» (էջ 17-48), երրորդ անգամ՝ Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթում (1963, 26, 27, 28, 29, 30 նոյեմբերի; 2, 3,

4, 5, 6, 7 դեկտեմբերի, № № 203-213): Հոդվածը երկիցս թարգմանվել է անգլերեն (ա. «Political Currents in Old Armenia», տե՛ս «Massis», an organ of Armenian interests, 1929, vol. II, № 1, Nov., p. 3-9; № 2, Dec., p. 29-33; բ. «Political currents in Ancient Armenia», տե՛ս «Armenian Review», Boston, 1955, vol. 8, № 1, p. 11-29):

Արտատպվում է «Պատմական ուսումնասիրություններ» ժողովածուից:

1. Անկասկած ակնարկ է XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Արևմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մեջ տեղ գտած հակոտնյա դիրքորոշումներին, որոնց վերաբերյալ պատմաբանն արտահայտել է իր հստակ դիրքորոշումը. «Վաղաժամ էին և՛ **հնչակների** դողանջը և՛ **դաշնակների** ծածանումը» (տե՛ս «Հայրենիք», ամսագիր, 1928, 6-րդ տարի № 8): – Էջ 219:

2. Նկատի ունի 705 թ. Նախիջևանի և Խրամի ողբերգական իրադարձությունները, երբ արաբները ողջակիզեցին 800-ից ավելի հայ նախարարների: – Էջ 220:

3. Համաձայն իր որդեգրած սկզբունքի, Ադոնցը Պատմահորը տեղափոխում է VIII դար՝ 774-775 թթ. հակաարաբական մեծ ապստամբությունից հետո ընկած շրջանը: Նշված Սահակ Բագրատունին, որ Աշոտ Կույրի հորեղբայր Բագարատի որդին էր, եղել է Հայոց իշխան (753-770): Հետևաբար, ժամանակագրական առումով, հնարավոր չէ համերաշխել Ադոնցի հետ, թե իբր այս Սահակն է եղել Պատմահոր մեկենասը: Եթե անգամ ընդունենք, որ Սահակը «Հայոց պատմությունը» հանձնարարել է շարադրել մահվանից քիչ առաջ՝ 770 թվականին, ապա դա հակասում է Ադոնցի այն տեսակետին, թե Խորենացին իր գործը գրել է 774-775 թթ. դեպքերից հետո, այսինքն՝ Սահակի մահվանից 5-6 տարի անց: Այլ կապակցությամբ Ադոնցը պնդում է, թե դա տեղի է ունեցել Աշոտ Մսակերի օրոք: Հետևաբար, այս Սահակ Բագրատունին երբեք չէր կարող լինել Խորենացու մեկենասը: Խորենացու վերաբերյալ Ադոնցի տեսակետների մանրամասն քննությունը տե՛ս մեր «Մովսես Խորենացի և Նիկողայոս Ադոնց» հոդվածում («Հայոց պատմության հարցեր», թիվ 6, Երևան, 2005, էջ 307-316): – Էջ 235:

4. Պարզ թյուրիմացություն է: Իրականում Աշոտ Բագրատունին Սամառա է ուղարկել ոչ թե Կուրդիկ Մամիկոնյանի կտրած գլուխը, այլ Գրիգոր Մամիկոնյանի, որ Կուրդիկի որդին էր: Այլ կապակցությամբ հեղինակն իրավացիորեն գլխատված իշխանին անվանում է Գրիգոր Մամիկոնյան: – Էջ 239:

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ
(էջ 246)

Գրված է 1930-ական թվականների երկրորդ կեսին Բրյուսելում: Բնագիրը պահվում է Համազգայինի Բեյրութի գրական արխիվի պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդում (պահարան Ա/Ա8, թ. 1-65): Լույս է տեսել մեր աշխատասիրությամբ՝ **Նիկողայոս Ադոնց,** Պատկերների խնդիրը, Երևան, 2003: Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Արևելաքրիստոնեական աստվածաբանական գիտակցությունը զատորոշում է պատկերի ընկալման հինգ մակարդակ՝ ուսուցողական, նշանագիտական, նվիրական-խորհրդապաշտական, ծիսական և գեղարվեստական, **տե՛ս Р. Р. Бычков,** Из истории византийской эстетики, "Византийский временник", 1976, № 37, стр. 187:– Էջ 246:

2. Դա Տիրոջ չորրորդ պատվիրանն էր Մովսեսին. «Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես» (**Ելք**, Ի, 4): – Էջ 247:

3. Նկատի ունի VI դարի երկրորդ կեսի հայ նշանավոր մատենագիր, եկեղեցական գործիչ Վրթանես Քերթողին: Հեղինակ է բազմաթիվ երկերի, որոնց մեջ գլխավորը «Յաղագս պատկերամարտից» գործն է: Այստեղ հեղինակը դատապարտում է պատկերամարտությունը և հիմնավորում պատկերների օգտագործման անհրաժեշտությունը (տե՛ս **Ե. Մեյքոնյան,** Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը, «Էջմիածին», 1970, № Զ-Է, էջ 89-90): – Էջ 247:

4. Փիլոքսենոս (**Քսենայա**, V դ. կես - 523), եկեղեցական նշանավոր գործիչ, մտածող, մատենագիր: Ծայրահեղ միաբնակ, նզովելով մերժել է Քրիստոսի նյութական մարմինն ընդունելը: – Էջ 248:

5. Եվտիքյանների հերձվածողական վարդապետության հիմնադիրն է Եվտիքես Կոստանդնուպոլսեցին: Փորձել է հիմնավորել, թե Քրիստոսը, մարդկային բնության համաձայն, մարմին չի ունեցել, այլ այնպիսի, ինչպես կար մարդկանց ստեղծագործությունից առաջ՝ աստվածային և հավիտենական: – Էջ 248:

6. Բեսեր (Բեշեր, Բշիր) Ուրացող, բյուզանդացի պատրիկ, որ Ասորիքում ռազմական գործողություններից մեկի ժամանակ գերի էր ընկել արաբների ձեռքը և ուրանալով ընդունել մահմեդականություն: Գերությունից ազատվելուց հետո ծառայության է անցել Լևոն III-ի մոտ՝ դառնալով վերջինիս պատկերամարտ քաղաքականության հիմնական գործակիցն ու կիրառողը: – Էջ 249:

7. Ակնարկում է Բյուզանդիայի բռնատիրող Արտավազդ կայսրին (741-742): Հավանաբար Մամիկոնյան ընտանիքից. նախապես Արմենիակների, ապա՝ Օպսիկիոն բանակաթեմների զորավար, կյուրապաղատ: Դառնալով կայսր, Արտավազդն անմիջապես վերականգնել է պատկերների պաշտամունքը: – Էջ 251:

8. Խոսքը եկեղեցական ու քաղաքական նշանավոր գործիչ, պատմագիր, Կ. Պոլսի պատրիարք Նիկեփորի մասին է: – Էջ 256:

9. Խոսքը IX դարի սկզբներին Փոյուգիայում և Լիկաոնիայում տարածված աթինգանների աղանդավորական շարժման մասին է:– Էջ 257:

10. Ակնարկում է Անատոլիկոն բանակաթեմի հրամանատար, Արևելքի զորքերի դոմեստիկոս, Վարդան (մականվանյալ «Թուրք») զորավարին: 803 թ. հուլիսին հռչակվել է կայսր: – Էջ 257:

11. Նկատի ունի աստվածաշնչային Յաևես մոգին. «Եվ ինչպես Յաևեսն ու Յամբրեսը հակառակվեցին Մովսեսին, այնպես էլ սրանք հակառակում են ճշմարտությանը. ապականված մտքով մարդիկ, անպետք՝ հավատի մեջ» (տե՛ս **Թ. Տիմոթ.**, Գ, 8): – Էջ 260:

12. Լեկանոմանտես, բառացիորեն նշանակում է տաշտագուշակ: Մարդ, որ տաշտակի կամ լականի մեջ գուշակություններ անելով կանխատեսում էր ապագան: – Էջ 210:

13. «Արդ, ո՞ւմ նմանեցրիք Տիրոջը, ո՞ւմ նման համարեցիք նրան: Միթե կո՞ւռք է նա, որին կերտել է արվեստավորը, և կամ ոսկերիչը, ձուլելով ոսկին, պատել է նրան ոսկով՝ պատկերի նմանություն ու կերպարանք տալով նրան» (**Եսայի**, գլ. 40, 18, 19):– Էջ 260:

14. Նկատի ունի Կ. Պոլսի, Երուսաղեմի, Ալեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքներին – Էջ 269:

15. Սրբապատկերի նկատմամբ այսօրինակ «նյութապաշտ» մոտեցումը առհասարակ հատուկ էր ժողովրդական զանգվածների ըմբռնումներին, որոնց համաձայն պատկերի ներկը օժտված է բուժող ներգործությամբ (տե՛ս **В. В. Бычков,** Византийская эстетика, М., 1977, стр. 60): – Էջ 270:

16. Ս. Հեղինեն (մոտ 250-330) Կոստանդին Մեծ կայսեր մայրն է: Նրան է վերագրվում Ս. Խաչի գյուտը, Բեթղեհեմի, Ձիթենյաց լեռան Ս. Համբարձման, Գեթսեմանի Ս. Աստվածածին եկեղեցիների շինությունը, ինչպես նաև Երուսաղեմի Ս. Հարության տաճարի հիմնարկեքը: – Էջ 273:

17. Հայ առաքելական եկեղեցին որդեգրեց ճշմարտությունը հայելացնող միջին ուղին՝ **պատկերիարգություն** (մանրամասն տե՛ս **Ա. Մեղրակյան,** Հայաստանյայց եկեղեցու պատկերիարգությունը, մասն Ա, Ս. Պետերբուրգ, 1904): – Էջ 280:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԳԱՀԻ ՎՐԱ
(էջ 281)

Գրված է 1930 թ. Փարիզում: Ընագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1930, 8-րդ տարի, №5, էջ 71-79, № 6, էջ 105-116, № 7, էջ 81-90, № 8, էջ 96-105, № 10, էջ 92-108): Երկրորդ անգամ լույս է տեսել «Պատմական ուսումնասիրություններում» (էջ 354-451): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ն. Ադոնցի սույն հոդվածը («Հանդես ամսօրյա», 1901, էջ 129-132) գրված է իր ուսուցիչ Կարլ Կրումբախերի՝ նույն անձին նվիրված հետազոտության (տե՛ս **K. Krumbacher,** Kasia, München, 1897) վիճահարոյց եզրակացությունների առթիվ: – Էջ 283, ծան. 1:

2. Տե՛ս «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ. ի լոյս ածին Գալուստ Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921», տե՛ս նաև "История Анонимного повествователя. Псевдо-Шапух Багратуни, перевод с древнеармянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ереван, 1971": – Էջ 337:

3. Այնուհանդերձ, ինչպես տեսանք, տարիներ անց՝ 1930-ական թվականների երկրորդ կեսին, Ադոնցը անդրադարձել է հարցի տեսաբանությանը և գրել հատուկ աշխատություն (տե՛ս սույն հատորը, էջ 246-280): – Էջ 356:

ՎԱՐԴ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (856-866)
(էջ 367)

Գրված է 1930 թ. Փարիզում: Ընագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1930, 8-րդ տարի, № 11, էջ 98-105, № 12, էջ 57-68): Երկրորդ անգամ լույս է տեսել «Պատմական ուսումնասիրություններում» (էջ 320-353): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Արաբական այս արշավանքի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Իբն ալ-Ասիրը (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»). 11. Արաբական աղբյուրներ. Բ. Իբն ալ-Ասիր, թարգմանություն ընագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 161-162: – Էջ 373:

2. Խոսքը Նասր իբն-ալ-Ազհարի դեսպանության մասին է, որի արդյունքների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Տաբարին (տե՛ս **А. А. Васильев,** Византия и арабы, ч. I, СПб., 1900, приложение, стр. 57) : – էջ 375:

3. Աղբյուրագիտական մանրազնին պրպտումների հիման վրա Հր. Բարթիկյանը ցույց է տվել, որ Կարբեասը մահացել է ոչ թե Պոսոնի ճակատամարտի ժամանակ, այլ՝ հիվանդության հետևանքով (տե՛ս **Р. М. Бартикян,** Источники для изучения истории павликянского движения, Ереван, 1961, стр. 92): – էջ 376:

4. Վարդ Կեսարը Լևոն Մաթեմատիկոսին Մագնավրայի համալսարանի ուսուցչապետ է նշանակել 863 թվականին: Լևոն Մաթեմատիկոսի մասին մանրամասն տե՛ս **Е. Э. Липшиц,** Византийский ученый Лев-математик, "Византийский временник", т. II, М.-Л., 1949, տե՛ս նաև նույնի՝ "Очерки истории византийского общества и культуры VIII первой половины IX в.", М.-Л., 1961, стр. 338-366 և այլն): – էջ 380:

5. Այնուհանդերձ, Լևոն Մաթեմատիկոսի մասին Ադոնցն առանձին ուսումնասիրություն չի գրել, սակայն նրա գործունեությանը լայնորեն անդրադարձել է «Հայերը բյուզանդական գիտությանց մեջ», հոդվածում (տե՛ս «Հայրենիք», 1930, 9-րդ տարի, № 2, էջ 93-105: 1931, № 3, էջ 88-96: Տե՛ս նաև նույնը՝ «Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում» վերտառությամբ, «Պատմական ուսումնասիրություններ» ժողովածուում, էջ 501-537): – էջ 380:

ՎԱՍԻԼ ՀԱՅԱԶՆ
(ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱՅՍՐ. 867-886)
(էջ 397)

Գրված է 1931 թ. Փարիզում: Բնագիրը պահվում է Բոստոնում՝ «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1931, 9-րդ տարի, № 8, էջ 87-98, № 9, էջ 135-141, № 10, էջ 110-116, № 11, էջ 120-126): Երկրորդ անգամ լույս է տեսել «Պատմական ուսումնասիրություններում» (էջ 452-500): Տե՛ս նաև այս աշխատության ֆրանսերեն տարբերակը՝ «L'âge et L'Origine de L'empereur Basile I (867-886), «Byzantion», 1933, t. VIII, fasc. 2, p. 475-500: 1934, t. IX, fasc. 1, p. 223-260, նաև առանձին հրատարակությամբ (Bruxelles, 1934, p. 62): Վերջինս վերահրատարակվել է Երկերի ֆրանսերեն ժողովածուում («Études Arméno-Byzantines», Lisbonne, 1965, p. 47-109): Արտատպվում է «Պատմական ուսումնասիրություններից»:

1. Ակնարկում է Կոստանդին VII Ծիրանածինի «Երանելի կայսր Վասիլի կյանքի և գործունեության պատմությունը» աշխատությունը (հայերեն թարգմանությունը

տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». 6. Բյուզանդական աղբյուրներ. Բ. Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 33-120): – Էջ 399:

2. Տե՛ս **Ն. Ադոնց,** Վարդ Մամիկոնյան, աստ, էջ 367-396: – Էջ 412:

3. Ժամանակակիցները նրան հորջորջել են անգամ «Հարբեցող» մականունով (տե՛ս "История Византии", т. 2, М., 1967, стр. 172): – Էջ 416:

4. Տե՛ս **Վարդան Վարդապետ,** Համաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 85: – Էջ 430:

5. Տե՛ս **Ղազար Փարպեցի,** Տեսիլ Սրբոյն Սահակայ Պարթեւի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 29-37: Տեսիլի քննությանն է նվիրված Ն. Ակինյանի՝ «Քննություն տեսլյանն Ս. Սահակա», ուսումնասիրությունը «Հանդես ամսօրյա», 1936, № 10-12):– Էջ 432:

6. Կ. Տեր-Սահակյանի կարծիքով տեսիլի իրական հեղինակը Փոտ պատրիարքն է: – Էջ 433:

7. Խոսքն անանուն «Narratio de rebus Armeniae» («Պատմություն հայոց գործերի մասին») հայ-քաղկեդոնական փոքրածավալ երկասիրության մասին է: Հայերեն բնագիրը չի պահպանվել, որի մասին կարելի է գաղափար կազմել հունարեն թարգմանության միջոցով (հունարեն թարգմանությունը տե՛ս **Migne**, PG, t. 132, col. 1237-1253): Հունարեն քննական բնագրից կատարված հայերեն թարգմանությունն իրականացրել է Հ. Բարթիկյանը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1962, էջ 457-470): Սույն բնագրի հունարեն տեքստը՝ Ադոնցի ուղղումներով, տե՛ս նրա թողնում (Է/Ա-8): – Էջ 433:

8. Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան 1934, էջ 138՝ («... երանելի Մարիամ թագուհին՝ Բագրատ թագավորի մայրը, որը կորովամիտ և քաջարի էր իբրև պայծառագեղ, հզոր և մեծ Արշակունյաց թագավորների շառավիղ»): – Էջ 434:

9. Վասիլ I կայսեր սլավոնական ծագման վերսիան վճռականորեն մերժվել է Հ. Բարթիկյանի կողմից: Բյուզանդական, հայկական և այլ աղբյուրների մանրակրկիտ վերլուծության միջոցով նա ցույց է տվել, որ մի շարք սլավոնագետների և բյուզանդագետների կողմից պաշտպանվող այս վարկածը, որ հենվում է արաբական որոշ աղբյուրների կամայական մեկնաբանությունների վրա, պարզ բյուրիմացության արդյունք է (տե՛ս **Гр. Бартикян,** К разгадке загадки о "Славянском" происхождении основателя Македонской династии Василия I (867-886 гг.)», «Լրաբեր», հասարակ. գիտ., 1985, № 7: – Էջ 434:

10. Վասիլ I-ին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ առավել ան-

կողմնակալ է ներկայանում Ա. Վասիլևի աշխատությունը (տե՛ս **А. Васильев**, Происхождение императора Василия Македонянина, "Византийский временник", т. XII, вып. 1-4, СПб., 1906, стр. 148-165: Տե՛ս նաև **G. Ostrogorsky,** Histoire de L'Etat Byzantin, Paris, 1956 և այլն): – Էջ 438:

11. Բացի նշվածներից, Ն. Ադոնցը Վասիլ I կայսեր գործունեության վերաբերյալ հրապարակել է նաև այլ աշխատություններ [«Nicéphore et L'origine de Basil I», տե՛ս «Byzantion», Bruxelles, 1933, t. VIII, p. 203-212 (Հ. Գրեգուարի հեղինակակցությամբ). «La portée historique de L'Oraison funebre de Basile I par son fils Léon VI le Sage», «Byzantion», 1933, t. VIII, fasc. 2, p. 501-513]: Պատմաբանի արխիվի նյութերի հետազոտությունից պարզվում է, որ նա ցանկացել է առանձին ուսումնասիրություն նվիրել նաև Վասիլ I-ի արքայական ընտանիքին: «Հայ-Մակեդոնական հարստության պատմությունը» խորագիրը կրող հայերեն ձեռագիր աշխատությունից պահպանվել է շուրջ 70 էջ: Այստեղ կանոնավոր շարադրանքով (էջ 28-53, 59-64) ներկայացված է «Վասիլ Հայկազն» գլուխը, մնացածները անկանոն են, թափված են բազմաթիվ էջեր (1-27, 54-58, 65-74 և այլն, տե՛ս պահարան I, գզրոց Բ, թղթածրար 3): – Էջ 438:

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՓԱՌՔԸ
(էջ 439)

Գրված է 1928-1929 թթ. Փարիզում, լիովին վերակառուցված ու վերաշարադրված 1930-ական թվականների վերջերին Բրյուսելում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1928, 7-րդ տարի, № 1, էջ 61-70, № 2, էջ 47-55: 1929, № 3, էջ 78-89, № 4, էջ 60-69, № 5, էջ 147-156, № 6, էջ 79-88): Երկրորդ անգամ լույս է տեսել «Պատմական ուսումնասիրություններ» ժողովածուում (էջ 49-156), իսկ երրորդ անգամ՝ Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթում (1963, 9, 10, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 24, 25, 26, 27, 28, 30, 31 դեկտեմբերի, № 214-233: 1964, 2, 3, 4, 7, 8, 9, 10, 11,13, 14, 15, 16, 17, 18, 20, 21, 22, 23, 24, 25, 27, 28, 29, 30, 31 հունվարի; 1, 3, 4, 5, 6 փետրվարի, № 234-263): Արտատպվում է 2-րդ հրատարակությունից:

1. Ակնարկում է 774-775 թթ. հակաարաբական ապստամբությունը: – Էջ 439:

2. Հայաստանի արաբական ամիրայությունների և արաբ գաղթականության մասին հատկապես արժեքավոր է Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնասիրությունը (տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965): – Էջ 447:

3. Նկատի ունի Մովսես Խորենացուն: – Էջ 493:

4. Վրաց Բագրատունիների ծագման ու հարակից հարցերի մասին տե՛ս նաև՝ **Ա. Սարուխան,** Բագրատունյաց արքայական հարստությունը Վրաստանում, «Հանդես ամսօրյա», 1939, № 7-12; **C. Toumanoff,** The Bagratids of Iberia from the eigth to eleventh century, «Le Muséon», Louvain, 1961, t. LXXIV, № 1-2; նույնի՝ «Studies in Christian Caucasian History», Ceorgtown, 1963 և այլն: – Էջ 506:

5. Պարզապես վրիպակ է, պետք է լինի՝ 1736 թ.: – Էջ 526:

6. Տե՛ս «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին **Գ. Տեր-Մկրտչեան** եւ **Մեսրոպ Եպիսկոպոս,** Էջմիածին, 1921: Հմմտ. նաև «Արարատ», 1888, էջ 399-404; **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 221-222: – Էջ 527:

7 Խոսքը վերաբերում է Սամուել Անեցուն (տե՛ս «Սամուելի քահանայի Անեցւոյ հավաքմունք ի գրոց պատմագրաց», աշխատասիրությամբ **Ա. Տեր-Միքելյանի,** Վաղարշապատ, 1893): – Էջ 528, ծան. 2:

ՀԱՅ-ՑԱԹԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ
(էջ 535)

Գրված է 1911 թ. Ս. Պետերբուրգում: Տպագրվել է նույն թվականին (տե՛ս **Н. Адонц,** О происхождении Армян-цатов, "Журнал Министерства народного просвещения", 1911, т. 32, стр. 238-249): Մեկ տարի անց՝ Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ լույս է տեսել հայերեն (տե՛ս **Ն. Ադոնց,** Հայ-ծաթերի ծագման մասին, «Հանդես ամսօրյա», 1912, № 5, մայիս, էջ 257-271): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Վ. Բենեշևիչի հրապարակումը լույս է տեսել նույն՝ 1911 թվականին (տե՛ս **"Из** "Тактикона" Никона Дивногорца. Описание греческих рукописей монастыря Святой Екатерины на Синае", т. 1, доп., под ред. **В. Н. Бенешевича,** СПб., 1911, стр. 584-588): – Էջ 538:

2. Ն. Ադոնցի սույն հոդվածի առթիվ 1925 թ. Ն. Մառը հատուկ ընդդիմախոսական է գրել, որը, սակայն, ինչ-ինչ հանգամանքների բերումով մնացել է անտիպ (տե՛ս Ռուսաստանի ԳԱ, արխիվ, Լենինգրադի բաժանմունք, Ն. Մառի ֆոնդ 800, ց. 1, № 147): Ն. Մառի հոդվածը, որ կրում է "Цаты (ѣаѳ) палеонтологически" խորագիրը, աշխատասիրել և հրատարակել է Պ. Մ. Մուրադյանը (տե՛ս «Մառը և հայագիտության հարցերը», Ժողովածու, Երևան, 1968, էջ 195-204): Ն. Ադոնցի համապատասխան եզրակացությունները վիճարկվել է Հր. Բարթիկյանի կողմից (տե՛ս **Р. М. Бартикян,** Еще раз о цатах (армянах-халкедонитах), «Պատմաբանասիրական հանդես», 1987, № 4, стр. 183-212):– Էջ 546:

ԴԱՎԻԹ ԲԵԿ ԵՎ ՏԵՐ ԱՎԵՏԻՔԻ ՍԵՐՈՒՆԴԸ
(էջ 547)

Գրված է 1937 թ., Բրյուսելում: Բնագիրը պահվում է Բոստոնում՝ «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1937, 15-րդ տարի, № 2, էջ 66-72): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Արդի հայագիտական գրականության մեջ Դավիթ Բեկի պատմության հեղինակ է համարվում Ղուկաս Սեբաստացին, իսկ Ստեփանոս Շահումյանը՝ պատմող (մանրամասն տե՛ս «Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց». առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Արամյանի, Վենետիկ, 1978: Հմմտ. նաև Ա. Մադոյանի առաջաբանը՝ «Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց», Երևան, 1992): – Էջ 547:

2. Իրականում «Վկայագիր Ուտպէլեանց»-ը հրատարակել է ոչ թե Րաֆֆին, այլ գրողի այրին՝ Աննա Րաֆֆին «Դավիթ Բեկի» 1903 թ. վիեննական հրատարակության վերջում: – Էջ 547:

3. Դավիթ Բեկի կենսագրության վերաբերյալ նորագույն ուսումնասիրություններից առավել ուշագրավը Ա. Գ. Հովհաննիսյանի՝ «Դավիթ Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը» հոդվածն է (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1): – Էջ 549:

4. Ն. Ադոնցի մայրը՝ Դանա Ռոստոմբեկյանը, դուստրն էր Մելիք Մանուչարի եղբայր Ռուստամ բեկի: – Էջ 549:

5. Խոսքը հասարակական-քաղաքական գործիչ, Հայաստանի առաջին Հանրապետության Խորհրդի անդամ Վահան Տեր-Գևորգյանի (1884-1920) մասին է, կուսակցական ծածկանունը՝ Խորենի: – Էջ 551:

6. Նկատի ունի նշանավոր ազգային-եկեղեցական գործիչ, բանասեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին (1866-1948): Եղել է Ատրպատականի հայոց հոգևոր թեմի առաջնորդ (1912-1948): Ն. Ադոնցի աշակերտական (Գևորգյան ճեմարանում) և ուսանողական (Ս. Պետերբուրգի համալսարանում) տարիների դասընկեր: – Էջ 554:

7. Ռոստոմ Զորյան (1867-1919) – Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից: Ն. Ադոնցի հետ գործուն մասնակցություն է ունեցել Բրեստ-Լիտովսկի բանակցություններում հայկական թղթածրարի ստեղծման գործում: – Էջ 554:

Գրախոսություն – Գ. ԳԱԼԵՄՔԵԱՐՅԱՆ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՐԱՖՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ: ՎԻԵՆՆԱ, 1908
(էջ 556)

Գրված է 1910 թ. փետրվարի 15-ին, Ս. Պետերբուրգում: Ընագիրը պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Իսահակ Հարությունյանի ֆոնդ, գործ № 180, թ. 1-22): Առաջին անգամ հրատարակել ենք մենք (տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 2001, թիվ Ա, էջ 93-107): Տպագրվում է ինքնագրից:

1. Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆյան (Սառաֆյան, Աղեքսանդրյան, Բյուզանդյան, Բյուզանդացի, Շնորհալի, Կոստանդնուպոլսեցի, Կեսարյան. մոտ. 1702-1773) – XVIII դարի կեսերի հայ իրականության ակնառու գործիչներից: Եղել է Կեսարիայի, Գաղատիայի, Ռոդոստոյի և Եվդոկիայի հայոց հոգևոր թեմերի առաջնորդ, մանկավարժ, տպագրիչ: Հրատարակել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը (Վենետիկ, 1752): – Էջ 556:

2. Հովհաննես վարդապետ Նուրտինյանը (1747-1803) եղել է Լիվոռնոյի հայկական համայնքի հովիվը: – Էջ 556:

3. Հայ կաթոլիկական Անտոնյան միաբանությունը ստեղծվել է 1705 թ. Լիբանանում: Կ. Պոլսում, Լիվոռնոյում, Հռոմում, Բեյրութում և այլուր ունեցել են եկեղեցիներ, վանքեր: Այստեղ խոսքը վերաբերում է Կ. Պոլսի Միջագյուղ (Օրթագյուղ) թաղամասում գտնվող Անտոնյան միաբանության դիվանին: – Էջ 556:

4. Սահակ (Իսահակ) արքեպիսկոպոս Ահագին, Քղեցի (? - 1763) – Կարինի և Զմյուռնիայի հայոց հոգևոր թեմերի առաջնորդ, Ս. Էջմիածնի նվիրակ: 1756 թ. ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս, սակայն շուրջ երեք ու կես տարի հապաղել է օծում ստանալ և գահակալել: 1759 թ. նրա ընտրությունը հայտարարվել է չեղյալ: – Էջ 559:

5. Հակոբ արքեպիսկոպոս Նալյան, Աստվածաբան (1706-1764) – Կ. Պոլսի հայոց պատրիարք (1741-1749, 1752-1764): – Էջ 559:

6. Հովհաննես արքեպիսկոպոս Կոլոտ (1668-1741) – ականավոր եկեղեցական գործիչ, Կ. Պոլսի հայոց պատրիարք (1715-1741): – Էջ 560:

7. Ստեփանոս եպիսկոպոս Ավգերյան, Աբգարյան, Գաղատացի (?– 1821) – եկեղեցական գործիչ, մատենագիր, Կ. Պոլսի հայ կաթոլիկական համայնքի պապական ներկայացուցիչ (1808-1821):– Էջ 560:

8. Թյուրիմացություն է: Հովհաննես Կոլոտը մահացել է 1841 թ. փետրվարի 13-ին:– Էջ 560:

9. Այդ ժամանակ Զմյուռնիայում պապական նվիրակն էր Ջիրոլոմա Լանցա դի Փերաո (P. Girolamo da Peraino) : – Էջ 560:

10. Տե՛ս «Հայաստան», լրագիր, Կ. Պոլիս, 1846, № 21: – Էջ 561:

11. Նկատի ունի իտալահայ պետական գործիչ, մատենագիր Հովհաննես Չելեպի Սեղբոսյանին (մարքիզ Ջիովանի դի Սերբոս, 1727-1811): – Էջ 561:

12. Խոսքը Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (1763-1780) մասին է: – Էջ 566:

13. Իրոք, Գ. Գալեմքեարյանը մի քանի տարի անց հրատարակեց խոստացած աշխատությունը՝ «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք» խորագրի ներքո (Վիեննա, 1915):– Էջ 567:

ՅԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ*

Աբաս, Կարսի թագավոր - 518
Աբաս Բագրատունի, սպարապետ – 470
Աբգար, թագավոր – 27, 68, 247
Աբգար (Աբգավար), Սողոմոնի որդի – 488, 489
Աբդ ալ Կաբիր, ոստիկան – 444
Աբդ ալ Մելիք ալ Ջահաֆի, Ջահապի որդի – 451
Աբդ ալ Ռահման, Բայլականի իշխան -451
Աբդլազիզ, ոստիկան – 483
Աբդուլլահ (Աբդ-Ալլա), Բաբեկի որդի – 318, 319, 524
Աբդուր-Ռահման, Կորդովայի ամիրա –281
Աբեղյան Մ. – 7
Աբեսալոմ (Աբիսողոմ), զորավար – 372
Աբիկուրա Թեոդոր, տե՛ս Թեոդոր Աբիկուրա
Աբիտալա (Ամիտալա), Դավիթ Մարգարեի կին – 493
Աբլաբաս, տե՛ս Սմբատ Աբլաբաս
Աբլբառ Կայսիկ, Ապահունյաց ամիրա – 469, 470
Աբլբերս, Հեր քաղաքի ամիրա - 470
Աբո, մարտիրոս – 492
Աբրահամ, արաբ ամիրա - 460
Աբրահամ, երեց – 123-125
Աբու Մուսե, Աղվանից իշխան – 475, 518
Աբու Մուսլիմ, Խորասանի պարսիկ իշխանավոր - 449
Աբուալի, Գրիգորի որդի - 516
Աբուբելջ, Գուրգենի հայր - 460
Աբուբելջ Գուրգեն, տե՛ս Գուրգեն Աբուբելջ
Աբուլ Կասիմ Մուհամետ ալ Հավկալ, խալիֆ - 510
Աբումանսուր Բախտիար, խալիֆ - 519, 520
Աբումուսլիբ, իշխան - 466
Աբուջափր Արծրունի – 460
Աբուսեթ, արաբ զորավար - 447
Աբուսեթ, Սահլ Սմբատյանի թոռ – 516, 517
Ագաթանգեղոս, պատմիչ – 55 - 57, 59-61, 100, 101, 111-114, 169-175, 177, 179
Ագաթիա, Միքայել III –ի խաղընկեր - 416
Ագդիստ, դից. – 20, 50
Ադադ - Նիրարի, թագավոր - 32
Ադամ, Աստվածաշնչ. -39, 128, 487
Ադարնասե (Ատրներսեհ), Աշոտ Կյուրապաղատի որդի - 503
Ադեր իբն Սիմետ իբն Համայի, Շաքիի իշխան - 511
Ադերկ, Փառնավազի հաջորդ - 491
Ադի (Ադդե, Ադդեի) – 551-553, 555
Ադոլիոս, Ակակիոսի որդի – 200
Ադոնիս, դից. – 15, 27, 36, 43, 45-51, 58-60, 61, 69, 74, 76
Ադոնց Ն. Գ. – 5-9, 10, 36, 272, 552
Աթանագինես, Հուսիկի որդի - 128
Աթարա (Աթար, Աթեհ, Հաթեհ), դից. – 27
Աթենագորաս, դից. – 26
Աթենայոս, դից. - 28
Աթենե, դից. - 42

* Կազմեցին **Մ. Գ. Յավրյանը** և **Լ. Գ. Մանուկյանը**

Աթինգան, գուշակ – 297
Ալամունդար, ցեղապետ – 202
Ալեքսանդր, Վասիլ I-ի որդի - 421
Ալեքսանդր Մակեդոնացի – 28, 141, 410, 424, 425, 434, 496
Ալեքսանդր Պոլիհիստոր, մատենագիր – 26-28
Ալեքսիոս I, կայսր - 75
Ալեքսիոս-Մուշեղ, դրունգար – 290, 291, 293, 295, 306, 316, 320, 326-330, 335
Ալի, ամիրա - 338, 503
Ալի, Վահեի որդի - 479
Ալի իբն Յահյա ալ Արմանի, արաբական զորավար – 371, 373, 376, 459, 463, 464
Ալիշան Ղ. – 537, 551
Ալկինոյոս, դից. – 43
Ածատուր, բռնակոթցի - 551
Ակակիոս, Արևմտյան Հայաստանի կառավարիչ -199, 200, 206, 229
Ակինյան Ն. – 487, 540
Ահմատ (Մուստային), խալիֆ - 463
Ահմատ, Հալթի որդի – 468
Ահմատ իբն Խալիդ (Մուհամատ իբն Խալիդ), Հիսեի որդի – 470
Ահմատ Շայբանի - 472
Ահմեդ Բոյյան, իշխան – 519
Ահմեդ իբն Մուհամեդ - 282
Աղա Մահմեդ, խան – 551
Աղան Արծրունի – 127, 185
Աղասի, Մելիք Սաֆրազի սերնդից - 553
Աղեքսանդր, Զիլֆիղար բեկի որդի - 554
Աճառյան Հ. - 7
Ամբազուկ, հոնաց թագավոր - 194
Ամմիանոս Մարկելինոս, պատմագիր – 49, 66, 99, 137
Ամին, խալիֆ - 450
Ամոն, հրեաների թագավոր - 495
Ամր, թուրք զորավար – 237, 244
Այետիոս, զորավար – 339, 340
Այտին (Այդին), Դավիթ Բեկի զորավար - 550
Անադիոմենե, դից. – 41
Անակ Պարթև - 6, 169, 171, 172, 176, 177
Անահիտ, դից. – 41, 72, 77
Անանիա Ա Մոկացի, Հայոց կաթողիկոս – 511, 514, 517, 518, 520- 523, 528, 529, 540 - 541
Անանիա Նարեկացի, վարդապետ – 535, 536
Անանուն (850 թ.) – 497
Անանուն, աշխարհագրագետ - 196
Անանուն, ասորի հեղինակ – 189
Անանուն, պատմագիր (VII դ.) – 83, 88, 174, 175, 495 – 501, 515
Անանուն հեղինակ (950 թ.) - 399
Անաստասիա, Թեոդորայի դուստր – 273, 327, 351
Անաստասիոս, կայսր – 133, 148, 193, 194
Անաստասիոս Սինկելլոս - 250
Անատոլիոս, ստրատեգոս – 181, 182
Անաքարսիս, սկյութ գիտնական – 419
Անբասա ալ - Ահվեր, Քաբալայի իշխան – 526
Անգեղ (Անգեղյա), դից. – 79, 80 - 85, 87, 88, 92 - 95, 495
Անգուրես, սենեկապետ - 412
Անդրեաս, հետերարք – 404, 418, 420
Անդրեաս Կայանագրաց, հերձվածող - 537
Աննա, Թեոդորայի դուստր - 327, 351
Աննեդոտ(ոս), դից. - 28
Անտալ (աս), մավր զորավար – 203, 204, 206
Անտիգոնոս, Վարդ Կեսարի որդի – 374, 382, 392, 406, 407
Անտոն, ճգնավոր - 259
Անտոնինոս, կայսր – 62

Անտոնիոս, զորավար – 167, 168
Անտոնիոս Կասսիմատ, պատրիարք - 260-262, 268
Անուշակզատ, առասպել.– 176
Անուշավան, նահապետ - 22
Անուշվռամ, Աշուշայի կին - 127
Աշնաս, արաբ զորավար - 339
Աշոտ I, իշխանաց իշխան, թագավոր – 219, 239, 286, 431, 433, 458-474, 476-479, 501, 504, 512, 527, 528
Աշոտ II Երկաթ – 516, 523, 526
Աշոտ III Ողորմած, Հայոց թագավոր - 480
Աշոտ, Բագրատի որդի (վրաց.) – 480, 481
Աշոտ, Դավիթ Բագրատունու որդի (862 թ.) - 465
Աշոտ, Շապուհ Բագրատունու որդի – 453, 455
Աշոտ, պատրիկ անթյուպատ – 326, 327, 333, 336 - 338
Աշոտ, Սահակ Բագրատունու որդի – 441, 487
Աշոտ, Վասակ Բագրատունու որդի – 234, 235, 453, 479, 501
Աշոտ Արծրունի – 339, 451, 456-458, 461, 466, 467
Աշոտ Բագրատունի, Բագրատի որդի – 465
Աշոտ Բագրատունի, Հայոց իշխան (775 թ.) – 236, 237, 244, 484
Աշոտ Բարեպաշտ, տե՛ս Աշոտ I
Աշոտ Գնթունի - 517
Աշոտ իբն Համզե իբն Գագիկ, տե՛ս Աշոտ Արծրունի
Աշոտ Կյուրապաղատ (949 թ.) – 480, 481
Աշոտ Կյուրապաղատ, Անտրներսեհի հայր - 480
Աշոտ Կյուրապաղատ, Անտրներսեհի որդի – 481, 485, 490, 491
Աշոտ Կյուրապաղատ, Բագրատ Կյուրապաղատի հայր – 331, 455, 456, 487
Աշոտ Կյուրապաղատ, Գուռամի եղբայր - 488
Աշոտ Կյուրապաղատ, Վասակի որդի – 455, 456, 485-487
Աշոտ Կյուրապաղատ, Տարոնի իշխան – 469, 470
Աշոտ Կույր – 289, 435, 440-442, 456, 479, 483, 485-487, 492, 501, 506-508, 533
Աշոտ Մսակեր – 238, 239, 241, 302, 326, 331, 333, 442, 447-453, 455-457, 479, 486, 487, 496, 501
Աշոտ Պատրիկ, տե՛ս Աշոտ Կույր
Աշշուր, դից. - 92
Աոս, դից. – 29
Ապոլլոդորոս Աթենացի - 28
Ապումասրա, Աբլ բերսի հայր - 471
Ապումճուր, արաբ զորավար - 443
Ապունջիպ, արաբ զորավար - 443
Առան, նահապետ - 515
Առաջավոր, դից. - 74-77
Առնակ Ամատունի - 428
Ասամ (Արշամ, Սամ), Սողոմոնի որդի – 488
Աստվաստր (Աստվածատուր), տե՛ս Կարդուծատ
Ասիլայոն, Վասիլ I-ի եղբորորդի – 394, 417-420
Ասիմ (Ձիջում), կուսակալ - 484
Ասողիկ, պատմիչ – 242, 310, 327, 337, 339, 434, 441, 452, 453, 463, 473-475, 477, 499, 512, 518, 519, 525
Ասպակուր, թագավոր - 66
Ասպատ, Բյուրատի որդի - 495
Աստատե, դից. - 31
Աստարատե, դից. – 15, 27, 29, 43, 47, 61, 69
Աստղիկ, դից. – 41, 42, 53

Աստվածատուր, Դավիթ Բեկի հայր – 547, 548
Աստվածատուր, քարոզիչ - 194
Աստվածորդի – 19, տես նաև Քրիստոս
Ասուդ (Աշոտ), անձնանուն - 493
Ասքանազ, Աստվածաշնչ. - 93
Ասսեմանյանի Ս. Է., պատմաբան – 189, 195
Ասսուր, դից. – 42, 93
Ավետիք (Ավետիս), Տեր Ավետիքի թոռ – 551, 553
Ատա ալ Մոկանա, հերձվածող – 449-451, 453, 454
Ատարդատ, դից. - 27
Ատերգատ, դից. – 28, 29
Ատի Ադիաբենացի, դից. – 68, 69
Ատիս (Ատտիս), դից. – 16-20, 27, 37, 40, 41, 45-51, 54, 58-61, 69, 70, 73, 74, 76, 77, 95
Ատրներսեհ, Աղվանից իշխան – 517
Ատրներսեհ, Աշոտ Կյուրապաղատի թոռնորդի – 501
Ատրներսեհ, Աշոտ Կյուրապաղատի որդի – 503
Ատրներսեհ, Ատրներսեհ Կույրի եղբորորդի – 482, 486
Ատրներսեհ, Ատրներսեհ Կույրի [illegible]ո – 485
Ատրներսեհ, Ափխազաց թագավոր – 505, 506
Ատրներսեհ, Բագարատի որդի – 519
Ատրներսեհ, Գրիգորի որդի - 517
Ատրներսեհ, Գուռամ Կյուրապաղատի թոռ - 488
Ատրներսեհ, Դավիթ Կյուրապաղատի հայր – 519
Ատրներսեհ, Դավիթ Կյուրապաղատի որդի - 479
Ատրներսեհ, Խաչենի թագավոր – 521
Ատրներսեհ, կյուրապաղատ – 480, 481
Ատրներսեհ, Համամի որդի – 511-513, 518
Ատրներսեհ, Շաքեի թագավոր – 529
Ատրներսեհ, Սահլի հայր – 515, 516
Ատրներսեհ, Սահլի որդի – 515, 517
Ատրներսեհ, Վախթանգի սերնդից – 490, 491
Ատրներսեհ, Վասակ Բագրատունու որդի – 479, 485, 486
Ատրներսեհ, վրաց թագավոր (923 թ.) - 479
Ատրներսեհ (Ներսեհ), վրաց թագավոր - 486
Ատրներսեհ (Վասակ), վրաց Բագրատունիների նախահայր – 484, 492
Ատրներսեհ, Ներսեհի որդի – 486, 488
Ատրներսեհ Կույր – 482-486, 489, 492, 506, 509
Ատրորմիզդ, մարզպան – 184, 226
Ատրուբիլիս, դեսպան – 375
Արա, դից. – 21, 22, 24, 42-48, 51-53, 77
Արա Գեղեցիկ – 20, 21, 22, 24, 495
Արալեզ (Առլեզ), դից. – 34, 51
Արամազդ, դից. – 64, 494
Արամանյակ, նահապետ – 22, 495, 501
Արամե, Ուրարտուի թագավոր - 33
Արգիր, պրոտոստատոր – 394
Արես (Արոտոս), դից. – 20, 48-53, 59, 60
Արթեմիա, Դիոկղետիանոսի դուստր - 61
Արիադնե, դից. – 16, 47
Արիաթար, Սիդոնիայի հայր – 70
Արիարաթես Եպիփանես – 156,157
Արիարաթես Փիլոմետոր – 157, 158, 160, 161
Արիարաթես Փիլոպատոր – 156
Արիոբարզանես, թագավոր – 157-160
Արիոբինդոս, ծերակուտական – 203-206, 208, 209
Արիստակես, Գրիգոր Լուսավորիչի որդի – 171,172

Արիստոնիկոս, բռնակալ – 156, 157
Արիստոտել – 29, 137
Արկադիաս, Միհրդատ Եվպատորի որդի – 161
Արկադիոս, կայսր – 133
Արմազ, դից. - 70
Արմոգ, Արամանյակի որդի – 495, 497
Արնոբիոս, մատենագիր – 20, 41
Արշակ, Արշակունի (VI դ.) - 210-215, 217
Արշակ, Հայոց թագավոր – 425
Արշակ, ճգնավոր – 275, 359
Արշակ, Պարթևաց թագավոր – 424
Արշակ I, Պարթևաց թագավոր – 201
Արշակ II, Հայոց թագավոր – 56, 107, 117, 121, 131, 135
Արշամ (Սամ), անձնանուն – 90, 488
Արշամ (Արսամ, Սամ), Սոդոմոնի որդի – 488
Արշավիր, Հովհաննես Քերականի եղբայր – 260
Արշավիր Կամսարական, Վարդան Մամիկոնյանի փեսա - 185
Արշավիր Կամսարական, Փոտ պատրիարքի մորեղբայր – 422
Արշավիր Մագիստրոս, պատրիկ – 285, 297
Արշավիր Պատրիկ – 320, 345, 380, 386
Արշավիր, քվեստոր – 293
Արոտոս, դից. - 52
Արչիլ, վրաց թագավոր – 482 - 486, 490 - 492
Արտաշան – 499
Արտաշես I, Հայոց թագավոր - 179, 496
Արտաշես IV, Հայոց թագավոր – 110, 432
Արտաշես, պարսից արքա - 25
Արտաշես Մամիկոնյան – 127
Արտաշիր, նիզակակիր – 205-209, 217
Արտաշիր I Սասանյան – 173-178
Արտավազդ, դից. – 45, 52
Արտավազդ, Լևոն Իսավրացու փեսա - 365
Արտավազդ, կայսր – 251-253, 292
Արտավազդ, Հայոց ավանդական թագավոր – 98
Արտավազդ, հետերարք – 417, 420
Արտավազդ, ստրատեգոս - 429
Արտավազդ II, Հայոց թագավոր – 497
Արտավազդ Մամիկոնյան (IV դ.) - 242
Արտավազդ Մամիկոնյան (VI դ.) - 216
Արտավազդ Մամիկոնյան (VIII դ.) - 236, 288-290
Արտավան Արշակունի, հայ իշխան (V դ.) - 424, 426-429
Արտավան Արշակունի (VI դ.), Հովհաննեսի որդի – 110, 198, 200- 217, 229, 230
Արտավան V, Պարթևստանի թագավոր – 174-178, 498
Արտաքսերքսես, պարսից արքա – 28
Արտաքսիաս, տե՛ս Արտաշես I
Արտեմիս, տե՛ս Կիբելե
Արցևուրիոս, դից. - 74
Արքայիկ, տե՛ս Դավիթ Արքայիկ
Ափշին, արաբ զորավար – 339, 508, 511-512
Ափրոդիտե, դից. – 25, 31, 41, 48, 49, 53
Աքեմենես, Աքեմենյանների նախահայր – 63

Բաալ, դից. – 62, 69
Բաբա, ոստանդար – 106
Բաբան – 452, 455, տե՛ս նաև Բաբեկ
Բաբգեն, անձնանուն – 331
Բաբեկ, աղանդապետ – 238, 317-319, 339, 452, 455, 508, 509, 512, 524
Բաբիկ Սյունի – 428

Բաբոց, ոստանիկ – 110
Բաբուցիկ (Բաբ, Բաբոց, Բաբուց), Կոստանդին և Թեոդոս Բաբուցիկների հայր - 331
Բագադատ Բագրատունի – 497
Բագադատա (Բագարատ) - 494
Բագադիա Բագրատունի – 493
Բագամ, անձնանուն - 90
Բագամ, Փառնավազի որդի – 495, 496
Բագա վազրակա, դից. - 494
Բագա - տուր, դից. – 494
Բագարատ, անձնանուն – 493
Բագարատ, Աշոտ Մսակերի որդի – 238, 239, 333, 456, 487
Բագարատ, Աշոտ Կյուրապաղատի որդի – 487
Բագարատ, Ատրներսեհի որդի – 519, 520
Բագարատ, Գեորգիի հայր – 479
Բագարատ, Գուռամի որդի – 492
Բագարատ, Գուրգենի որդի – 480
Բագարատ, Դավթի որդի – 480
Բագարատ, դից. – 83, 88
Բագարատ, պատրիկ – 489
Բագարատ, Սողոմոնի որդի – 488-490
Բագարատ, Վասակ Բագրատունու եղբայր – 508
Բագարատ, վրաց թագավոր – 528
Բագարատ, Աշոտ Մսակերի որդի – 238, 239, 333, 456, 487
Բագարատ, Տայքի իշխան – 478
Բագարատ Բագրատունի, Բագրատունիների նախահայր – 501
Բագարատ Բագրատունի (750 թ.) - 235
Բագարատ Բագրատունի (775 թ.) - 441
Բագարատ III, վրաց թագավոր – 489, 518
Բագարատ Կյուրապաղատ – 504, 505
Բագարատ Կյուրապաղատ, Աշոտ Կյուրապաղատի որդի – 479
Բագարատ IV, վրաց թագավոր – 489
Բագարատ Փառազյան – 495-498
Բագոաս, զորավար - 160
Բագրատ, Հովհաննես պատրիարքի հայր – 381
Բագրատ Կյուրապաղատ, Գուառամի եղբայր – 331
Բազե, դից. – 95
Բալաթ, դից. – 68, 69
Բալածորի, մատենագիր – 542
Բալուք Բել, դից. - 69
Բակուր, անձնանուն – 500
Բակուր, Գուգարքի իշխան – 67, 71
Բակուր, Հայոց թագավոր – 62
Բակուր, վրաց թագավոր – 65-68, 71
Բակուր III, վրաց թագավոր – 490, 491
Բակուր Շահնավազ, վրաց թագավոր – 548
Բահման, Արտավանի որդի – 176
Բաղդասար Հասան-Ջալալյան, արքեպիսկոպոս – 547, 549
Բանակ, Սպահանի իշխան – 175-177
Բասո (Վասո) Վազող, նահատակ – 340
Բարթոլոմե Ք., իրանագետ – 47
Բարհեբրե, ժամանակագիր – 195
Բարչան, Կարմանի թագավոր – 178
Բարսեղ, Աղվանից հայրապետ – 522
Բարսեղ, տե՛ս Վասիլ I
Բարսեղ Կեսարացի – 38, 114-116, 126, 170, 246
Բարսեմիոս, անձնանուն - 62
Բարսիս (Նասր) - 319
Բաքոս, վկա - 76, 260
Բել, դից. – 29, 30, 35, 36, 84
Բելք Վ. – 141, 142, 152
Բելտիս, դից. – 48
Բելլերոֆոն, դից. – 410
Բեկլաս (Beklas) - 421, 422, 424

Բեհ-Սաչան, առասպել. – 178
Բենեշևիչ Վ. Ն. – 529, 538
Բեսեր, ուրացող – 249, 250
Բերսաբե, Դավիթ մարգարեի կին - 480
Բիվրիտիան, տե՛ս Բյուրատյան
Բիրովի, բյուզանդական դեսպան – 193, 195
Բլղար Վղնդուր - 153
Բյուրատ, անձնանուն – 493, 499, 500
Բյուրատյան, Բագրատունի իշխան – 499, 500
Բյուրատ, Ասպատի հայր - 495
Բյուրատ Բագրատունի, Սմբատ Բագրատունու հայր - 499
Բյուրեղ, Սյունյաց իշխանուհի – 527
Բոգորիս (Բորիս), զորավար – 400, 401
Բոհակ, Սպահանի իշխան - 176
Բրոսսե Մ. - 484, 487, 489, 518
Բրուկ Ե.– 306
Բուզես (Բուզ, Վուզ), զորավար – 200, 214, 215, 229
Բուլխար Խոյտա Փատդոս – 510
Բուղա, արաբ զորավար – 118, 239, 286, 331, 445, 447, 451, 455, 457-460, 466-468, 475, 503-504, 508-509, 512, 516-517, 525
Բուտել, արաբական զորավար – 461
Բուրդար, պարսիկ մեծատոհմիկ – 171, 172
Բուրզ, Կարենյան տան դաշնակից - 178
Բուրջ(ակ), Արտաշիր Սասանյանի աջակից – 175, 177, 178
Բուրջակտուր, Արտաշիր Սասանյանի աջակից– 175, 177, 178

Գաբլուց, Աշոտ Մսակերի որդի – 331, 332
Գաբլուց, քորեպիսկոպոս – 527, 528
Գաբրիել, քորեպիսկոպոս – 527, 528
Գաբրիել, քարոզիչ - 193
Գագիկ I, Հայոց թագավոր – 518, 521
Գագիկ II, Հայոց թագավոր – 75, 76, 241
Գագիկ, Աղվանից թագավոր – 514, 522
Գագիկ, Աղվանից կաթողիկոս – 521
Գագիկ, Աղվանքի եպիսկոպոս – 517
Գագիկ, իշխանաց իշխան – 514
Գագիկ, Համամի որդի – 514
Գագիկ, Չորագետի թագավոր – 518, 522, 528, 529
Գագիկ, Վահան Արծրունու որդի – 290
Գագիկ Աբումրվան, Վահան Արծրունու որդի – 456, 467, 471
Գագիկ Մամիկոնյան (VI դ.) - 233
Գադիշո Մաղխազ - 226, 227
Գազարենոս Կոլոնիացի, զինվորական – 302, 303
Գաթըրճյան Հ. – 63
Գալեմքեարյան Գ. – 556, 559-565, 567
Գալերիոս, կայսր – 61
Գալլոս, կայսր – 173
Գամեր, Աստվածաշնչ. - 92, 93
Գամզա Իսփահանցի – 542
Գայանե, քարոզչուհի - 54, 61, 69
Գայոս Սալուցիոս Կրիսպոս, պրոկոնսուլ – 166
Գառնանգղ (Տորք Անգեղ), դից. – 90, 91, 95
Գարագաշյան Ա. - 81
Գարաման Կակաղեցի - 537
Գարիտ Ժ., բյուզանդագետ – 8
Գարսոյան Ն., բանասեր – 9
Գդիհոն Սյունի, իշխան – 220
Գեբելեզիս (Սեբելեզիս), դից. - 45
Գեբեոն, ինքնակոչ – 385
Գեղամ, նահապետ – 90
Գենեսիոս, դրունգար - 277

Գենեսիոս, պատմագիր – 277, 296, 334, 362, 371, 406, 407, 410-412, 414, 416, 424
Գեորգ, Աղվանից թագավոր – 522
Գեորգ Բ, Հայոց կաթողիկոս – 472-476, 511, 512
Գեորգ, մագիստրոս – 426
Գեորգ, վանական – 399
Գեորգ, Տեր Ավետիքի թոռ – 553
Գեորգի, Բագարատի որդի – 479, 480
Գեորգի Շահնավազ, վրաց թագավոր – 548
Գեորգիոս Պեգանես – 413-414, 418
Գեորգիոս Ստրատելատ – 413
Գեորգիոս վանականի Շարունակող – 405, 412, 415, 419
Գետ, Թրակիայի թագավոր - 58
Գերասիմ, վարդապետ – 538, 539
Գերմանոս, պատրիարք – 212-215, 250, 253
Գիլակ, զորավար – 428
Գիլգամեշ, դից. – 53
Գիորգի I, Աւիխազաց թագավոր – 504
Գիչի (Գիչի), Դավիթ բեկի զորավար – 550
Գղակ, իշխան (VI դ.) - 216, 427
Գղակ, մարդպետ (IV դ.) – 427
Գյուտ Ա, Հայոց կաթողիկոս – 226, 428
Գոլինդուխտ, վկա - 56
Գոնթարիս, Նումիդիայի զորավար – 203-211
Գոշազգակ (Գուշակտակ), Աղվանից թագավոր Փիլիպպեի հայր – 521, 522, 525
Գորդիոս, դեսպան – 156, 158, 159, 163
Գորիա, վկա - 55, 170
Գրեգոլ Պարթև, տե՛ս Գրիգոր Լուսավորիչ
Գրիգոր, Աղվանից թագավոր, Սենեքերիմի եղբայր – 520, 521
Գրիգոր, Աղվանից թագավոր, Սենեքերիմի որդի – 522
Գրիգոր, Աղվանից թագավոր, Սմբատի եղբայր – 520, 521
Գրիգոր, Աղվանից իշխան (906 թ.) - 517
Գրիգոր, Աղվանից կաթողիկոս – 522
Գրիգոր, Անձևացյաց իշխան – 289
Գրիգոր, բռնակոթցի - 551
Գրիգոր - Դերենիկ, տե՛ս Դերենիկ (Գրիգոր)
Գրիգոր, եպիսկոպոս - 536
Գրիգոր, խոջա - 554
Գրիգոր, Լևոն V Հայկազնի որդի – 305, 382
Գրիգոր, Հասան Վախթանգյանի որդի – 516
Գրիգոր, Սահակ-Սևադայի հայր - 518
Գրիգոր, Սահակ–Սևադայի որդի – 516 - 518, 520, 523
Գրիգոր, Սահլ Սմբատյանի թոռ – 516, 518
Գրիգոր, Սենեքերիմի թոռ – 520
Գրիգոր, Սյունյաց թագավոր, Սենեքերիմի որդի – 520, 521
Գրիգոր (XIII դ.), Սևադայի հայր – 520-521
Գրիգոր (XIII դ.), Սևադայի որդի – 520, 521
Գրիգոր, Փառիսոսի թագավոր – 518
Գրիգոր, Տեր Ավետիքի որդի – 551, 553
Գրիգոր Ասբեստոս, եպիսկոպոս – 386, 387
Գրիգոր Աստվածաբան – 305
Գրիգոր Արծրունի (VIII դ.) - 456
Գրիգոր Արծրունի (IX դ. կես) - 456
Գրիգոր Լուսավորիչ – 6, 54 – 61, 68, 69, 112, 169 – 172, 179, 190, 227, 305, 421, 432, 499, 551
Գրիգոր Խաչենցի, Աղվանից թագավոր, Փիլիպպեի հայր – 522
Գրիգոր Խաչենցի (1166 թ.) - 521

Գրիգոր Խաչենցի, Փիլիպպեի որդի – 522
Գրիգոր Կիպրացի, մատենագիր – 543
Գրիգոր Մագիստրոս - 89
Գրիգոր Մամիկոնյան (484 թ.) - 229
Գրիգոր Մամիկոնյան (VI դ.) - 205, 207
Գրիգոր Մամիկոնյան (662 թ.) - 499
Գրիգոր Մամիկոնյան (750 թ.) - 234, 235, 289, 506, 507
Գրիգոր Մամիկոնյան (855 թ.) – 286
Գրիգոր Մամիկոնյան, Մուշեղակի որդի – 288 - 293
Գրիգոր Մամիկոնյան, Քուրդիկ իշխանի որդի – 462, 463
Գրիգոր Մաշկևոր, գրիչ – 476
Գրիգոր Մուշեղակ, Օփսիկյան թեմի ստրատեգոս - 429
Գրիգոր Պետերոտես, զորավար - 302
Գրիգոր Սուփան, Սյունյաց իշխան – 465, 509
Գրիգոր Տաթևացի – 550, 551
Գրիգոր Փիլեմոն, պապիաս – 41
Գրիգորիկ (Գրիգոր), Տարոնի իշխան – 488, 489
Գրիգորիս, Աղվանից եպիսկոպոս - 197
Գուառամ, տե՛ս Գուռամ (Գորամ)
Գուլփարի, բռնակոթցի – 551
Գումեր, լոգոթետ – 413
Գուռամ (Գորամ), Բագարատի եղբայր – 331, 479, 503
Գուռամ, Ներսեհի հայր – 504, 505
Գուռամ, Վախթանգի փեսա - 492
Գուռամ, Վարազբակուրի հայր – 485
Գուռամ I Կյուրապաղատ – 482, 488, 490-492
Գուռամ II Կյուրապաղատ – 488, 490, 491
Գուռամյան Գուռամ, տե՛ս Գուռամ II Կյուրապաղատ
Գուտշմիդ Ա., պատմաբան – 60, 170
Գուրգեն, Աղվանից թագավոր – 522
Գուրգեն, Անծևացյաց իշխան - 455
Գուրգեն, Աշոտ Ողորմածի որդի – 480
Գուրգեն, Աջարիայի իշխանաց իշխան – 513
Գուրգեն, Արևելից Մեծ իշխան – 528, տե՛ս նաև Կյուրիկե II
Գուրգեն, վրաց թագավոր – 193, 230
Գուրգեն Աբուբեկր – 461, 462, 464, 467
Գուրգեն Արծրունի, Աշոտ Արծրունու եղբայր – 456, 458, 460-462
Ս. Գևորգ - 96
Գևորգ, եպիսկոպոս – 179, 267
Գևորգ Ասորի – 179
Գևորգ Լեսբոսացի, կրոնավոր – 363
Գևորգ Կիպրացի – 253

Դագոն, դից. – 28, 29
Դամասեն, դից. – 37, 40
Դամիանոս, սենեկապետ – 347, 348, 388, 389, 411
Դանելիս, Վասիլ I-ի հովանավորուհի – 402, 408-410
Դանիել, մարգարե - 55
Դաչի, Գարդմանի քորեպիսկոպոս - 527
Դաչի, Վախթանգի որդի – 490, 491
Դավիթ, Աշոտ I-ի մորեղբայր – 477
Դավիթ, Աշոտ Կյուրապաղատի թոռ - 487
Դավիթ, Աշոտ Մսակերի թոռ – 465, 487
Դավիթ, Աշոտ Մսակերի որդի - 456
Դավիթ, Աշոտ Սահակյանի որդի - 487
Դավիթ, Ատրներսեհի որդի – 479, 481, 520
Դավիթ, Աղվանից Ատրներսեհ թագավորի թոռնորդի – 517 - 519
Դավիթ, Աղվանից թագավոր – 522
Դավիթ, Աղվանից կաթողիկոս – 521
Դավիթ, Գրիգոր Լուսավորչի աներհայր –171

Դավիթ, Մամիկոնյան (†749), Մուշեղի եղբայր – 234, 235, 289
Դավիթ, մարգարե - 101, 102, 337, 479, 481, 482, 485-487, 494
Դավիթ, Սահակ-Սևադայի որդի – 516, 517
Դավիթ, Սմբատի որդի – 289
Դավիթ, Սպանդիատի եղբայր - 480-482
Դավիթ, վրաց մատենագիր, Սմբատ Դավթյանի հայր - 487
Դավիթ, քորեպիսկոպոս Կախեթի - 528
Դավիթ Անհողին - 518, 528, 529
Դավիթ Արքայիկ – 469, 470
Դավիթ Բեկ - 547-550, 552-554
Դավիթ Կյուրապաղատ († 937) - 481
Դավիթ Կյուրապաղատ († 1001) – 151, 519-520
Դավիթ Կյուրապաղատ, Բագարատի որդի – 479, 481, 504, 505
Դավիթ Մագիստրոս – 517 - 520
Դավիթ Մամիկոնյան (VIII դ. վերջ) - 457
Դավիթ Մամիկոնյան, Գրիգորի եղբայր - 506, 507
Դավկե, դից. - 29
Դավոն, Աղվանից իշխան – 318, 524, 525
Դարեհ I, պարսից արքա - 134, 494
Դարկիա, տե՛ս Դերկետո
Դեկապոլիտես, Եվդոկիա կայսրուհու հայր – 383
Դենդերիս, ծաղրածու – 272, 357
Դենշապուհ, պարսից պաշտոնյա - 102, 185
Դերենիկ (Գրիգոր) Արծրունի – 461, 462, 464, 467, 469-471
Դերկետո, դից. – 23-27, 29, 30, 33, 35, 40, 41, 61, 64, 70, 78
Դինար, վրաց իշխանուհի - 513, 529
Դինդիմենե, Լիդիայի թագուհի – 40-42, 61
Դիոդորոս Սիկիլիացի, պատմագիր – 25-30, 32, 40
Դիոկղետիանոս, Հռոմի կայսր – 55, 61, 76, 115, 134
Դիոն Կասսիոս, պատմագիր – 173
Դիոնիսոս (Դիոնիս), դից. – 16, 47
Դիոնիսիոս Թելմահարացի, մատենագիր – 453
Դիոնիսիոս Թրակացի, քերական – 6, 561
Դիորփոս, դից. – 20, 21, 52, 60
Դղակ (Գղակ), իշխան – 427
Դոմենտոս, սենատոր - 233
Դրբոգլավ, տեսուչ - 552
Դրինով, պատմաբան - 435
Դուկաս, տե՛ս Կոստանդին Դուկաս

Եզեկիա, հրեաների թագավոր – 495
Եզեկիել, Աստվածաշնչ. – 94
Եզիդ, Ուսադի որդի, ոստիկան - 443
Եզիդ I, խալիֆ – 249
Եզիդ II, խալիֆ – 123, 249
Եզիդ իբն Մազիադ ալ Շայբանի, ոստիկան – 443-445, 450
Եզնիկ Կողբացի, մատենագիր – 6, 40, 51
Եկավյան Զ. – 9
Եհովա - 102
Եղիա Ա Արճիշեցի, Հայոց կաթողիկոս – 527
Եղիա, Աստվածաշնչ. – 325, 404
Եղիա, Դավիթ Բեկի հորեղբայր - 547
Եղիշե, պատմիչ –56, 106, 109, 111, 120, 124-126, 135, 136, 173, 180-188, 196, 241
Եղիսե, բժիշկ – 68, 69
Եղփարիոս (Փղորենտ) Ասորի – 182
Եմելիան, Կյուզիկոսի եպիսկոպոս – 267
Եմեմիկ (Եմենիկ), տե՛ս Յամանիկ
Ենանոս Բագրատունի - 493
Ենիալ, դից. – 51

Ենիական Արես, դից. – 49
Ենսեն Պ., լեզվաբան – 84
Եսայի Աբու-Մուսե, Աղվանից իշխան - 318, 319, 458, 517, 524, 525
Եսայի, ճգնավոր – 360
Եսայի, մարգարե - 190, 260
Եսայի, Նիկոմեդիայի եպիսկոպոս – 275
Եսայի, որդի Շեխա - 468
Եսայի վարդապետ Կրճռնեցի - 553
Եվա, Աստվածաշնչ. – 282
Եվագրիոս, պատմագիր – 189, 248
Եվգինեոս Բ, պապ – 269
Եվդեմոս Ռոդոսցի - 29
Եվդոկիա, Դեկապոլիտեսի դուստր - 347, 383, 437
Եվդոկիա, Կոստանդին V-ի կին - 260
Եվդոկիա, Միքայել III-ի կին – 283
Եվդոկիա Ինգեր, Վասիլ I-ի կին – 346, 347, 389, 416, 417, 421, 436-438
Եվդոքս Ամորրացի - 267
Եվթաղ (III դ.), մեծատուն – 171, 172
Եվթիմեոս Զիգավի (Զիգաբի), վանական -75
Եվթիմիոս, վկա - 436
Եվլոգիոս, Վասիլ I կայսեր համախոհ - 417, 420
Եվպատոր, տե՛ս Միհրդատ VI Եվպատոր
Եվպրաքսիոս, պալատական –189
Եվսեբիոս Կեսարացի – 28, 65, 81, 92, 247, 248
Եվտիքիանոս, ծերակուտական - 261
Եվտիքիոս, Ալեքսանդրիայի պատրիարք - 434
Եվտիքիոս, Երուսաղեմի պատրիարք – 437, 438, 537
Եվփիմիոս Սարդացի – 267
Եվփրատաս, եպիսկոպոս – 194
Եվփրոսինե, կայսրուհի –282, 307
Երեմիա - 122
Երինիս (Ենիո), դից. – 49, 50
Երվանդ I, Հայոց թագավոր – 499
Երվանդ IV, Հայոց թագավոր – 179
Երվանդ, անծնանուն –47

Զադե, դից. – 70
Զալմոքսիս (Սալմոքսիս) - 44-46, 50, 58, 59
Զանդազան, ոստանիկ - 110
Զառմիհր Եռանշահիկ - 509
Զարեհ (Զարիադրես), Ծոփքի թագավոր (189 թ.) – 496
Զարեհ, Ծոփքի իշխան (IV դ.) - 496
Զարեհ Արամանյակյան – 495, 497
Զարիադր, Վշտասպի եղբայր - 496
Զաուցաս (Ստիլլիանոս), Մակեդոնիայի ստրատեգոս – 436
Զաքարիա, եպիսկոպոս – 151
Զաքարիա Հռետոր - 189
Զաքարիա Ա Զագեցի, Հայոց կաթողիկոս - 462, 474-475
Զենոբ, պատմիչ - 171, 172
Զենոն, կայսր - 84
Զիլֆիղար բեկ - 553, 554
Զոնարաս, պատմագիր – 173
Զոնդարա, մատենագիր – 47
Զոսիմաս, վանական - 261
Զոսիմոս, պատմագիր – 67
Զորահա, Մուսեի հայր - 456
Զորյան Ռ. – 554, 555
Զևս, դից. – 16, 20, 37, 50, 60, 88, 90, 91

Էա, դից. - 29
Էմին Մ., հայագետ - 511
Էյվազ, Դավիթ Բեկի եղբայր - 547
Էշին, խալիֆ – 483, տե՛ս նաև Հիշամ

էր, դից. – 46-48, 51-53
էր Հայկազն, Պամփիլուացի - 43
էրոս, դից. – 24

Թաղայշվիլի Ե., բանասեր – 487
Թամանյան Ա. – 7
Թամբե, Նինոսի մայր – 23, 24
Թամուզ, դից. – 15, 43, 48, 51, 54, 69
Թարաթա, դից. - 27
Թեկլա (Թեկղի), Թեոդորա կայսրուհու դուստր –273, 327, 341, 351, 389, 436
Թեկլա, կայսրուհի – 297, 305
Թեոգնոստոս, եպիսկոպոս – 388
Թեոգնոստե, առաքելուհի – 67-70
Թեոդեգիոս, աստղաբաշխության ուսուցիչ – 381
Թեոդոս, Ալեքսիոս – Մուշեղի եղբայր – 316, 330
Թեոդոս, Լևոն V-ի որդի - 305
Թեոդոս II, կայսր - 428
Թեոդոս Բաբուցիկ (Բաբոց), պատրիկ – 281, 285, 331, 340
Թեոդոս Մելիտինացի (Մալաթիացի), պատմիչ – 419
Թեոդոսիա, կայսրուհի – 264, 293, 297, 305
Ս. Թեոդոսիոս – 540, 544
Թեոդոսիոս, Եփեսոսի արքեպիսկոպոս – 250, 252
Թեոդոսիոս I, կայսր – 181, 182, 184, 185, 201, 224
Թեոդոսիոս II, կայսր – 126, 127
Թեոդոսիոս III, կայսր – 75, 76
Թեոդոտակես, պատրիկ - 388
Թեոդոտոս Կասսիտերաս, պատրիարք – 260, 264-267
Թեոդոր Աբիկուրա, Խառանի եպիսկոպոս – 448
Թեոդորա, կայսրուհի - 257, 272-278, 282-286, 288, 305-307, 316, 317, 320, 327-330, 332, 338, 341-359, 361 - 365, 367, 368, 377, 382, 383, 385-388, 391, 397, 399, 404, 407, 408, 410, 417, 418, 437, 459
Թեոդորիտոս, մատենագիր – 66
Թեոդորոս Ա, պատրիարք – 268
Թեոդորոս, Աղվանքի կաթողիկոս - 522
Թեոդորոս, երկրաչափության ուսուցիչ - 381
Թեոդորոս, էկոնոմոս - 330
Թեոդորոս Կրատերոս, պրոտոսպաթար - 340
Թեոդորոս Կրիթինոս, եպիսկոպոս – 329, 330
Թեոդորոս Ռշտունի, իշխան – 151, 221, 445, 499
Թեոդորոս Սանդաբարեն, եպիսկոպոս - 423
Թեոդորոս Վստամ Արևմանյան, Աղվանից իշխան – 528
Թեոդորոս Ստուդիտես – 256, 257, 263, 265-269, 271
Թեոկտիստե (Փլորինա), Թեոդորա կայսրուհու մայր – 272-276, 284, 286, 328, 357, 358
Թեոկտիստոս, ներքինի – 275-279, 324, 326, 333, 338, 341-351, 353, 359-367, 373, 382, 384-388, 391, 406, 411, 437
Թեոփանես, Թեոդոսիա կայսրուհու եղբայր – 264
Թեոփանես, ժամանակագիր – 248, 249, 257, 267, 271, 275, 277, 371
Թեոփանես, պաղեստինցի – 267
Թեոփանեսի Շարունակող – 271-275, 277, 278, 284, 294, 296, 297, 301-305, 308, 309, 312-315, 317, 333, 371

Թեոփանես Սփենոդեմոն, մատենադարանապետ - 421
Թեոփանես Փարղան (փարղանացի), պրոտովեստիարիոս – 343, 347, 348
Թեոփանո, Ստավրաիկոսի կին – 283
Թեոփիլակտոս Նիկոմեդիացի – 267
Թեոփիլակտոս Ռանգաբե, Միքայել I-ի հայր - 293
Թեոփիլակտոս, պալատական - 489
Թեոփիլիցես (Թեոփիլոս, Թեոփիլիկոս, Թեոփիլիդոն), Թեոդորա կայսրուհու ազգական – 404-407, 409
Թեոփիլոս, զորավար – 340
Թեոփիլոս, կայսր – 305 - 317, 270 – 279, 281 – 283, 301, 320-324, 328, 329, 332-339, 340-345, 351, 352, 354, 355, 357, 360-363, 367, 368, 372, 385, 400, 408, 422, 453
Թեոփիլոս, մատենագիր – 57
Թեոփիլոս Լիդիատես - 350
Թեոփիլոս Հիմերիոս, խեղկատակ - 414, 415
Թեոփոբոս, աղանդապետ - 319
Թեոփոբոս, պատրիկ – 276, 279, 285, 286, 316, 317, 319-326, 334, 338, 339, 343, 344
Թեոփրաստես, մատենագիր – 29
Թերսիտես – 272, 357
Թոմաս Ազախորդ – 191
Թոռնիկ Վանական – 481
Թովմա Արծրունի, պատմագիր – 118, 445-447, 453, 455, 458, 461-462, 464, 466-469, 472-475, 487, 508-509, 524-525
Թովմաս (726 թ.), արքեպիսկոպոս – 250
Թովմաս (787 թ.), եպիսկոպոս – 254
Թովմաս, լոգոթետ – 277
Թովմաս (815 թ.), պատրիկ – 264, 265
Թովմաս, պատրիկ, Կոստանդին դրուն-գարի որդի – 277
Թովմաս Գագիրացի – 269, 292, 294-304, 307, 309, 310, 314, 316, 365
Թովմաս Գենեսիոս – 332 - 334
Թորգոմ, Գամեղի որդի – 92-94, 440, 534
Թումանյան Հ. - 7
Թևդաս, Ափխազաց թագավոր - 502-503
Թոռնիկ Վանական - 481

Իաննիս, մոգ - 260
Իբն – Խոսրով, խալիֆ - 519
Իբն-Հավկալ, մատենագիր - 511, 513, 522, 523, 526
Իբրահիմ, Փանահ խանի որդի - 551
Իգնատիոս, պատրիարք – 305, 353, 381-388, 390, 391, 415, 421
Իգնատիոս, սենեկապետ - 417
Իզիս, դից. – 15, 95
Ինգեր Մարտինակ - 346
Ինճիճյան Պ. - 537
Իշխանակ (Իշխանիկ), Աղվանքի թագավոր - 511-514, 520, 529
Իշոկուհի, աստղի հոգևորական - 191
Իշտար, դից. – 15, 27, 29-31, 33, 40, 41, 43, 48, 53, 54
Իսա իբն Մուհամմադ, զորավար - 452
Իսա իբն Յուսուֆ իբն Ստեփանոս (Եսայի Աբու Մուսե) - 319, 524
Իսա իբն Նեխ, տե՛ս Եսայի, որդի Նեխա
Իսահակ, Աշոտի որդի, Մոկաց տեր – 454
Իսահակ, Իսմայելի որդի – 503
Իսահակ, քաղկեդոնիկ հայ մատենագիր – 75
Իսահակ Աշոտյան, Աշոտ Մսակերի որդի – 318
Իսահակ բին Ալհիման ալ Հարաշի – 450, 451

Իսահակ Կամսարական (VI դ.) – 143
Իսահակ Կամսարական, բյուզանդական զորավար – 216
Իսահակ Հոգևորական, տե՛ս Սահակ Պարթև
Իսահակ Շուաբ, ամիրա - 503
Իսահակյան Ա. - 35
Իսմայել, անձնանուն – 234, 244
Իսմայել, Իսահակի որդի – 337, 338, 503
Իսրայել Օրի - 553
Իրենե, Թեոդորա կայսրուհու քույր – 285, 305, 320
Իրինե, կայսրուհի – 253, 256, 257, 260, 262, 285, 289 - 292, 298 -300, 425, 429
Իրինե, միանձնուհի – 347, 383, 384
Իրինե, Վարդ Կեսարի դուստր - 382, 390
Իրինե, Փոտ պատրիարքի մայր – 285, 386
Իրմինգարդ, Լյուդովիկոս I-ի դուստր – 436
Իփիգենիա, դից. - 72
Իքթյուս, դից. – 28, 29

Լագարդ Պ. դը, ասորագետ – 46
Լանդ Ժ., պատմաբան – 189, 195
Լաոդիկե, Կապպադովկիայի թագուհի – 157
Լաստիվերտցի, պատմագիր - 152
Լատավրե, Ատրներսեհի դուստր – 485, 492, 493
Լատորի, անձնանուն – 493
Լեդա, դից. - 88
Լեհման – Հաուպտ Կ. Ֆ., ասորագետ – 30, 32, 33, 152
Լեոնտի Մրովել, Ռուիսի եպիսկոպոս – 482, 491
Լեոնտիոս, վանական – 261
Լեպիդոս – 168
Լետո, դից. – 42
Լիբերիոս, զորավար – 216
Լիպարիտ, Օրբելյանների նախահայր – 504
Լյուդովիկոս I Բարեպաշտ – 269, 270, 280, 281, 299, 330, 332, 340, 341, 346
Լյուկոֆրոնտես, մատենագիր – 88
Լոպարև Խ. Մ., պատմաբան – 267
Լուկիանոս Սամոսատցի, երգիծաբան – 27, 31, 33, 37, 62, 64, 419
Լևոն I, կայսր – 226, 424, 427-429
Լևոն III Իսավրացի, կայսր – 237, 249-251, 259, 262, 365, 388, 427
Լևոն IV Խազար, կայսր – 253, 266, 429
Լևոն V Հայ, Հայկազն, կայսր – 6, 258-262, 264, 265, 267-271, 276, 290, 292-302, 304, 305, 307, 315, 316, 331, 332, 341, 346, 360, 382, 388, 399, 429-431, 453, 456, 485, 501
Լևոն VI, կայսր – 277, 333-434, 436-437, 480, 488
Լևոն, Միտելեն կղզու եպիսկոպոս - 267
Լևոն, Վասիլ I-ի պապ - 425
Լևոն, փիլիսոփա, համալսարանի տեսուչ – 360, 380, 381, 391, 393, 411, 414, 422
Լևոն Ասորի, Պետրոս Բուլղարի եղբորորդի – 394, 395, 418
Լևոն Գոմոստոս, հետերարք – 400, 401, 429
Լևոն Կաստոր, քարտուղար – 412
Լևոն պատրիկ, ծերակույտի նախագահ - 388
Լևոն – Սմբատ, հանդերձապահ – 332
Լևոն Քամադրակոն, պրոտովեստիարիոս – 308, 315, 316, 332
Լևոն Քերական - 276

Խաղ, եպիսկոպոս - 138
Խալաթյանց Գր., պատմաբան – 22, 24, 80-83

Խալդի, դից. - 92
Խալիբ (Խալիբս), ցեղի նախահայր - 52
Խալիդ (Խալիլ), ոստիկան – 445, 502, 503
Խաչատրյան Ա., պատմաբան – 141 – 154
Խաչիկ Ա, Հայոց կաթողիկոս - 541
Խաչիկ վարդապետ (Դադայան) - 509
Խիզում - Ասիմ, տե՛ս Խուզիմա բին Խազիմ
Խոմյակով, պատմաբան - 435
Խոնդկարյան Ա., պատմաբան – 8,10
Խոնդկարյան Ա. Թ. - 9
Խոնդկարյան է. Հ. - 9
Խոսրով I Անուշիրվան (Նուշիրվան) – 134, 155, 195, 201, 202, 206, 211, 230, 248, 428
Խոսրով II Փարվեզ (Ապրվեզ) – 56, 110, 231, 232, 234, 498, 499
Խոսրով II, Հայոց թագավոր – 171, 173, 176, 177, 498
Խուժիկ, դից. – 102
Խուրշուդյան Հ., ոստիկանապետ - 554

Կալլիստոս, տուրմարք 340
Կալոմարիա (Գեղանի Մարիամ), Թեոդորա կայսրուհու քույր - 285, 305, 320, 345, 348, 349
Կակուլի, արքա - 178
Կաշով, դեսպան – 193, 195
Կասիոս, սենատոր – 168
Կասսիա, միանձնուհի – 282, 283
Կավատ I, պարսից արքա - 144, 191, 228
Կատա, Գրիգոր թագավորի դուստր - 520
Կատակիվլաս, բանակաթեմի հրամանատար - 302
Կատրամիտե, Հայոց թագուհի - 520
Կարապետ, բռնակոթցի - 551
Կարապետ, Մելիք Եղիայի որդի - 548
Կարբեաս - պավլիկյանների առաջնորդ - 371-373, 376
Կարդոս, Արայի որդի - 22
Կարդուծատ (Կարդուստ), Աղվանից եպիսկոպոս – 191- 194, 196, 197
Կեդրենոս, պատմիչ – 493
Կեղծ -Պլուտարքոս - 21
Կիբելե, դից. - 37
Կինամոն, մարտիրոս - 401
Կիպերտ Ռ., պատմաբան - 146
Կիրակոս Գանձակեցի, պատմիչ - 473, 474
Կիրիլ, սլավոնական առաքյալ - 381
Կլեոպ, Աստվածաշնչ.- 487, 491
Կլիենես Արշակունի (V դ.) - 424, 426-429
Կյուրիկե (Կորիկե), Աղվանից թագավոր (975 թ.) – 522
Կյուրիկե (Կորիկե), Աղվանից թագավոր (1010 թ.) – 518
Կյուրիկե (Կորիկե) I, Կախեթի քորեպիսկոպոս – 513, 528, 529
Կյուրիկե (Կորիկե) II, Կախեթի քորեպիսկոպոս – 528, 529
Կյուրիկե (Կորիկե) III Մեծ, Կախեթի քորեպիսկոպոս – 518, 528, 529
Կյուրիոն, վրաց կաթողիկոս - 540
Կյուրոս, պարսից արքա - 317, 403
Կոզմաս, կայսր - 250
Կոմիտաս, քերական – 381
Կոն (Կռնակ), Մամիկոնյանների նախահայր - 498
Կոստանդին - Արտաշիր, զորավար – 291
Կոստանդին, դեսպան – 195
Կոստանդին, դրունգար – 277
Կոստանդին, Եգերաց թագավոր – 505, 506, 513
Կոստանդին, Լևոն փիլիսոփայի աշակերտ - 381
Կոստանդին, Նիկոլիա քաղաքի եպիսկոպոս – 250

Կոստանդին, պալատական – 214
Կոստանդին, պրոտոստրատոր, Վարդան պատրիկի որդի – 290, 293
Կոստանդին, սպաթար և պրոտոստրատոր – 195, 290
Կոստանդին, Վասիլ I-ի որդի – 420, 421, 436, 437
Կոստանդին I Մեծ – 60, 116, 132, 217, 238, 247, 255, 425, 430
Կոստանդին III, կայսր – 532
Կոստանդին IV, կայսր - 151
Կոստանդին V Կոպրոնիմոս, կայսր - 251-253, 255, 260, 287, 365, 426
Կոստանդին VI Ծիրանածին, կայսր –253, 256, 267, 283, 290, 291, 298, 299, 320, 321, 425, 429
Կոստանդին VII Ծիրանածին, կայսր – 277, 334, 391, 392, 398, 402, 405-410, 412, 414, 415, 420, 424, 471, 479-481, 525
Կոստանդին X Դուկաս, կայսր - 75
Կոստանդին Բաբուցիկ, Թեոդորայի քեռայր – 285, 331-333, 339, 340, 345
Կոստանդին Կասսիմատ - 260, տե՛ս նաև Անտոն վանահայր
Կոստանդին Հայ, տե՛ս Կոստանդին Մանիակ
Կոստանդին Մանիակ, վիգլայի դրունգար – 277, 332, 333, 348, 349, 362, 412
Կոստանդին Միարես, եպարքոս - 413
Կոստանդին Տոքսարաս, Վասիլ I-ի զինակից - 394, 417-419
Կոստանդին Տրիփիլիոս, դեսպան - 375
Կոստանդինոս, Թեոփիլոսի և Թեոդորայի որդի - 327, 354
Կոստանյանց Կ., հայագետ - 510, 516, 551, 553
Կոստանցա, Կոստանդին Մեծի քույր - 247
Կորդիլես, Մակեդոնիայի զորավար – 400, 401, 429, 430
Կորյուն, մատենագիր - 6, 181
Կորյուն Արծրունի (VIII դ.) - 456
Կտեսիաս, պատմիչ – 25-27, 30, 32, 33
Կտրիճ (Ներսեհ), Գարդմանի իշխան - 525
Կրասոս, զորավար - 167
Կրենիտիսսա, Ալեքսիոս- Մուշեղի մայր – 327
Կրեչմեր Պ., լեզվաբան – 50, 84
Կրում, բուլղարների թագավոր - 399-401, 426, 429
Կրուսաս, Վասիլ I-ի խաղընկեր – 416
Ս. Կույս – 479, 480, տե՛ս նաև Մարիամ Աստվածածին
Կունդաջիկ, Միջագետքի իշխան – 468
Կուրդիկ Մամիկոնյան, իշխան – 239, 241
Կուրդիկ (Քուրդիկ, Կուրտ), անձնանուն – 293
Կուցինաս, Նումիդիայի թագավոր – 204

Հադադ, դից. – 62, 68, 69
Հազարավուխտ, պարսից զորավար – 120
Հազկերտ II, պարսից թագավոր – 126, 135, 180, 182, 184, 186, 224
Հազուն, տե՛ս Համզա Արծրունի
Հակոբ Նալյան, պատրիարք – 559, 560, 564-566
Հակոբ վարդապետ, Եսայի վարդապետի աշակերտ - 553
Հակոբջան, բռնակոթցի - 551
Հակովբ, Կարապետ քահանայի որդի - 548
Հակովբիկ Ապելատես – 417, 418, 420
Համազասպ, Սպերի իշխան – 199, 200, 229
Համազասպ, Վահան Արծրունու որդի – 290, 456
Համազասպ Արծրունի, Գագիկի որդի –

290, 456, 457, 484
Համազասպ Մամիկոնյան (VI դ.) – 233
Համամ, Աղվանից թագավոր – 512, 513
Համամ Ամատունի – 287, 321, 449
Համամ Արևելցի, մատենագիր – 511, 512
Համամ (Մուավիա) Բագրատունի – 510, 511
Համամ - Հովհաննես (Մուավիա), տե՛ս Մուավիա, Սահլի որդի
Համզա Արծրունի – 451, 456
Հայկ Նահապետ – 79, 87, 111
Հաշիմ, ոստիկան – 452
Հասան, արաբ զորավար - 454
Հասան Վախթանգյան Սակռեցի, իշխան – 516
Հավթանբոխտ, դից. – 175-178
Հավթուատ, դից. – 176
Հատիմ իբն Հարթամ իբն Այան, ոստիկան – 452, 455
Հարթամ, Հատիմի հայր – 452
Հարնակ, պատմաբան – 57
Հարութ (Մարութ), դից. - 64
Հարություն, տիրացու - 561
Հարուն-ալ-Ռաշիդ, խալիֆ – 300, 320, 442, 444, 445, 449, 453, 454, 542
Հարուն, ուռամյան աղանդապետ - 455
Հելոգաբալ, դից. - 63
Հելիոգաբալոս, կայսր – 62, 63
Հելլադիոս, քերական – 28, 29
Հեկատեյոս, մատենագիր - 44
Հեղինե, կայսրուհի – 328
Հեղինե, Մանուել Մամիկոնյանի կին – 274, 358
Հեռան, հոների թագավոր – 182
Հեսիքիոս, բառարանագիր – 52
Հերա, դից. – 42, 50, 62
Հերակլ, բյուզանդական զորավար – 233
Հերակլես, դից. – 52, 53, 79, 83, 87
Հերակլ(ես), կայսր – 425, 426, 428, 480, 526, 532
Հերոդոտոս, պատմագիր – 28, 44, 46, 92, 113
Ս. Հերոնիմոս – 101, 102
Հեփեստոս, դից. – 49
Հիլարիոս, վանահայր - 267
Հիմերիոս, խեղկատակ - 414
Հիշամ, խալիֆ – 483, 532
Հիպտա, դից. - 42
Հիսե, որդի Շեխի, արաբ զորավար – 466-467, 470, 472
Հիսուս Քրիստոս, տե՛ս Քրիստոս
Հմայակ (Հմայեկ), անձնանուն – 429
Հմայակ, Արտավազդ Մամիկոնյանի հայր - 429, 435
Հմայակ, Լևոն V-ի փեսա - 429, 431
Հմայակ, Վարդան Մամիկոնյանի եղբայր – 227, 289
Հյուբշման Հ., լեզվաբան – 106, 107, 119, 121
Հյուգասպ(ես), դից. – 26
Հյուլիաս, տե՛ս Հովհաննես Քերական
Հոբ, Աստվածաշնչ.- 267, 512
Հոմմել, պատմաբան – 94
Հոմերոս, բանաստեղծ – 48-50, 81, 272, 357
Հոնան, բռնակոթցի – 551
Հոնորիոս, կայսր – 67, 133
Հովակիմ, բռնակոթցի – 551
Հովակիմ, հրեաների թագավոր – 495
Հովակիմ, Տաթևի եպիսկոպոս – 550, 551
Հովիանոս, կայսր – 121
Հովհան Դամասկացի, մատենագիր – 246, 250, 251
Հովհան Մամիկոնյան, պատմիչ – 241
Հովհան Մայրագոմեցի – 76
Հովհան Ոսկեբերան – 551

Հովհան Ոզայնեցի, վանական – 191
Հովհան Օձնեցի, Հայոց կաթողիկոս – 533
Հովհաննես, Աղվանից թագավոր – 510, 522
Հովհաննես (Մուսավիա), Աղվանից իշխան – 510, 511
Հովհաննես, Աղվանից կաթողիկոս – 521
Հովհաննես, Արտավան Արշակունու հայր – 427
Հովհաննես, Արևմտյան Հայաստանի կառավարիչ – 233
Հովհաննես, Գերմանոսի փեսա - 215
Հովհաննես, Լիբիայի կառավարիչ – 209
Հովհաննես, ճգնավոր – 377
Հովհաննես, Սահլի որդի, Աղվանից իշխան – 509
Հովհաննես, սենեկապան – 360, 418, 422
Հովհաննես, վանական (787 թ.) – 254
Հովհաննես, վանահայր – 267
Հովհաննես, Վասիլ I-ի սուսերակիր - 409
Հովհաննես Արշակունի, Արտավան և Հովհաննես Արշակունիների հայր – 200, 229
Հովհաննես Արշակունի, զորավար – 110, 200, 201, 203, 216, 229
Հովհաննես Եփեսացի, մատենագիր – 248
Հովհաննես Դ Ովայեցի, Հայոց կաթողիկոս - 475
Հովհաննես Խալդ (Յիփիճարիտես), Վասիլ I-ի գործակից – 394, 395, 417-420
Հովհաննես Ե Կաթողիկոս (Դրասխանակերտցի), պատմագիր – 76, 119, 152, 242, 463-465, 471-477, 499, 505, 506, 511-513, 516, 517, 523, 525, 526, 529, 537
Հովհաննես Կոլոտ, պատրիարք – 560
Հովհաննես Կոքսես, պատրիկ - 388
Հովհաննես Նեատոկոմիտոս - 394
Հովհաննես Նուրտինյան, վարդապետ – 556, 557, 559-565, 567
Հովհաննես Չելեպի – 561
Հովհաննես Չմշկիկ, կայսր – 6, 521
Հովհաննես-Սեմբեքերիմ, Խաչենի թագավոր – 517, 518, 521
Հովհաննես Սինկելլոս, դեսպան - 311-314
Հովհաննես Սպեկտաս – 261
Հովհաննես VI Քերական, պատրիարք – 260 – 262, 264, 267, 270, 277, 278, 330, 333, 346, 359-362, 365, 380, 381, 422
Հովհաննիկ(իոս), ճգնավոր – 275, 359, 360
Հովհաննիսյան Պ. Հ. – 7, 9, 10
Հովնան Մարգարե, Աստվածաշնչ. - 28
Հովսեփ, Աղվանից իշխան, Եսայի Աբու Մուսեի հայր – 319, 524
Հովսեփ, Աղվանից կաթողիկոս - 522
Հովսեփ, Աստվածաշնչ. – 487, 491
Հովսեփ, նեստորականների կաթողիկոս – 193, 195
Հովսեփ, վանահայր – 256, 257
Հովսեփ Անապատական – 514
Հովսեփոս Գենեսիոս, տե՛ս Գենեսիոս
Հովսեպոս Փլավիոս, պատմագիր – 92, 93
Հովսիա, հրեաների թագավոր - 495
Հորացիոս, անծնանուն – 493
Հորուս, դից. – 95, 96
Հռիփսիմե, Աշուղ Մսակերի դուստր – 456, 457
Հռիփսիմե, առաքելուհի - 54, 61, 63- 65, 69 -71, 169
Հրահատ, անծնանուն – 150, 493
Հրահատ Կամսարական – 216, 493
Հրահատ Մամիկոնյան, կոմս – 289, 493
Հրահատուհի (Հրահատուհրի, Հրատուհրի, Հրատավրի), անծնանուն – 493
Հրուգեն, դից. – 52
Հուդա Մակաբայեցի, Աստվածաշնչ. – 122

Հուլիանոս Ուրացող, կայսր – 76
Հուլիոս Կեսար – 167, 168
Հուսկ, տե՛ս Հադադ
Հուստինիանոս Պարտիկիակ, Վենետիկի դուքս - 306
Հուստինիանոս I, կայսր – 103, 108, 126, 137, 145, 148, 189, 190, 193-195, 198, 201, 202, 208, 210-217, 228-230, 303, 426, 428
Հուստինոս I, կայսր – 193
Հուստինոս II, կայսր – 230
Հուստինոս, Հուստինիանոս I-ի ազգական – 212 – 215
Հուստինոս, պատմիչ – 137, 156 –158, 160
Հուրիզատ, բռնակոթցի – 551

Ձվիկ Մամիկոնյան - 127

Ղազար Փարպեցի, պատմագիր – 76, 100, 102, 103, 106, 107, 109—111, 119, 120, 123 -125, 127, 128, 142, 145, 146, 174, 178,180-188, 196, 241, 428
Ղազարոս վանական, նկարիչ – 271
Ղեբուբնա, մատենագիր - 27
Ղիչի (Գիչի), Տաթևի զորավար – 550
Ղրու Մրվան, տե՛ս Մրվան Ղրու
Ղուկաս Ա Կարնեցի, Հայոց կաթողիկոս - 551
Ղևոնդ Երեց, նահատակ – 188
Ղևոնդ Վարդապետ, պատմագիր – 6, 107, 123, 124, 242, 287, 289, 290, 321, 442, 443, 446, 449, 456, 483, 484, 506, 507
Ղևոնդիոս, Հուստինիանոս I-ի պալատական - 214

Ճանիկյան Հ., հայագետ – 537
Ճենբակուր, Ճենաց թագավոր - 500
Ճենբակուր, Մամիկոնյանների նախահայր - 498-501

Մալալա, պատմիչ - 148
Մալամիր, բուլղարաց թագավոր – 400, 401
Մախիրաս, Խարսիան թեմի պետ – 370
Մակար (Մակու) եպիսկոպոս, հոների քարոզիչ – 192, 193, 195
Մակար եպիսկոպոս (VI դ.), Պետրոս Քերթողի նախորդ - 195
Մակար, վանահայր - 267
Մահդի, աղանդապետ – 454, 455
Մահմետ, արաբ զորավար - 500
Մահմետ, խալիֆ - 309
Մահմետ, Խողթի որդի, ոստիկան - 458
Մահտեսի Հովհաննես, Կարապետ քահանայի որդի - 548
Մամ, պարսկուհի – 514
Մամ (Մամիկ), Մամիկոնյանների նախահայր - 498
Մամակ Մամիկոնյան, իշխան (VI դ.) - 233
Մամիկոն, Մամիկոնյանների նախահայր - 498
Մամուն, խալիֆ – 285, 300, 309-311, 319, 338, 450-452, 454
Մայկտես (Maiktes) - 425
Մանա, տե՛ս Թեոդորա կայսրուհի
Մանանդյան Հ. – 97- 99, 104-114, 116-132
Մանասե, հրեաների թագավոր – 495
Մանե (Մանի), քարոզչուհի – 71-73
Մանիակ, վիգլայի դրունգար –332, 333
Մանիոս Աքվիլիոս, զորավար – 160
Մանլիոս Մալտինոս, զորավար – 160
Մանսուր, խալիֆ – 443
Մանսուր (Հովհաննես) Դամասկացի - 253
Մանուել, Ադրիանապոլսի եպիսկոպոս – 401
Մանուել Արշակունի (VII դ.), զորավար – 426, 427
Մանուել Բագրատունի, Սմբատ ասպետի

հայր (591 թ.) - 427
Մանուել Մամիկոնյան, Թեոդորա կայսրուհու հորեղբայր – 273- 276, 284, 285, 305 - 314, 316, 320-324, 326, 334, 339, 341- 346, 350, 358, 359, 361, 363, 365, 368, 369, 372-374, 383, 430
Մանուել Մամիկոնյան (IV դ.), սպարապետ – 242
Մանուել Մամիկոնյան (VI դ.), Վարդանի եղբայր – 230
Մառ Ն., հայագետ – 78, 85, 535, 537, 538, 541
Մառնկա Ավետիս (Ավե), ֆիդայի - 39
Մասուդի, պատմիչ - 434, 526
Մավրիանոս, բյուզանդական զորավար - 445
Մավրիանոս, Վասիլ I -ի եղբայր, տե՛ս Մարիանոս
Մավրիկիոս (Մորիկ), կայսր – 6, 56, 231, 232
Մավրոթեոդորոս, մանկլավիկ - 395
Մատթեոս Ուռհայեցի, պատմագիր – 75, 521, 522, 525
Մարաբաս, մատենագիր - 83, 88
Մարգար, Մառնիկ գյուղի բնակիչ – 38 - 40
Մարիա, տե՛ս Կալոմարիա
Մարիա (Մարիամ), Թեոդորա կայսրուհու դուստր – 273, 286, 326-329
Մարիամ, Աշոտ I-ի դուստր - 465
Մարիամ, բռնակոթցի - 551
Մարիամ, Գրիգոր Լուսավորչի կին – 171
Մարիամ, Դերենիկ Արծրունու քույր – 469
Մարիամ, Կոստանդին VI –ի կին – 256, 283, 284, 290
Մարիամ, Վասիլ I– ի կին - 436
Մարիամ Աստվածածին – 77, 247, 282, 479, տե՛ս նաև Տիրամայր
Մարիանոս, Պետրոնասի որդի - 418, 430
Մարիանոս, Վասիլ I-ի եղբայր – 394, 417-420, 430
Մարիանոս (Մարինոս) Մամիկոնյան, Թեոդորա կայսրուհու հայր – 284 – 286, 305, 306, 430
Մարիուս, պլեբեյ, զորավար – 167
Մարկելլոս, թիկնազորի պետ – 213-215
Մարկիանոս, կայսր – 182, 184, 224, 226
Մարկոս, Աղվանից հայրապետ – 522
Մարկոս Ավրելիոս, կայսր – 62
Մարկվարտ Յո., պատմաբան – 63, 154, 479, 481, 483, 484, 493, 496-498, 500, 503
Մարտիրոս, արքեպիսկոպոս, Տաթևի առաջնորդ - 549
Մարտիրոս, բռնակոթցի – 551
Մաքսիմիանոս Դայա, կայսր – 61
Մեթոդիոս, պատրիարք - 269, 271, 275 - 280, 359-364, 382, 422, 423
Մելիտոն եպիսկոպոս, մատենագիր – 62, 68
Մելիք Եղիա, Դավիթ Բեկի հորեղբայր – 547, 548
Մելիք-Թանգյան Պարոնբեկ - 554
Մելիք Հարություն, Մելիք Եղիայի որդի - 548
Մելիք Հովհաննես, Դավիթ Բեկի ազգական - 548
Մելիք Հովհաննես, Դավիթ Բեկի հորեղբորորդի – 547, 548
Մելիք Մանուչար Ուռպելյանց Տաթևացի – 547, 549
Մելիք Պալի, Դավիթ Բեկի հորեղբորորդի - 547
Մելիք Ստեփան, Դավիթ Բեկի հորեղբորորդի - 548
Մելիք Փարսադան, Դավիթ Բեկի զորավար - 550
Մելիք Փարսադան, Դավիթ Բեկի հոր-

եղբորորդի - 547
Մելիք - Փարսադանյան եղբայրներ - 550
Մեհրաբ, Տեր Ավետիքի որդի – 551, 553
Մեհրուժան Արծրունի, Գագիկ Արծրունու որդի – 290, 441, 456, 457
Մեհրուժան Արծրունի (IV դ.) – 103, 242
Մեհրուժան Արծրունի (V դ.) – 185
Մեհրուժան Արծրունի (VIII դ.) – 290
Մեո, Փռյուգիայի և Լիդիայի թագավոր – 40
Մեսրոպ Մաշտոց – 6, 181
Մետրոփանես, Զմյուռնիայի եպիսկոպոս – 280, 363
Միդաս, թագավոր – 61
Միթրաս, զորավար – 160
Միհր, դից. – 20, 177
Միհր, Վախթանգի սերնդից – 491
Միհրակ, դից. – 176, 177
Միհրան, Միհրական հարստության հիմնադիր – 515
Միհրան, վրաց թագավոր – 66, 68-70
Միհրան-Գուշնասպ, վկա - 106
Միհրդատ Բրեստոս, Պոնտոսի թագավոր – 156
Միհրդատ VI Եվպատոր -156-164, 168
Միհրդատ II Մեծ, թագավոր – 161
Միհրդատ V Էվերգետես, Պոնտոսի թագավոր – 156
Միհրներսեհ, պարսից պաշտոնյա - 135
Միտափրաստ, մատենագիր – 56
Միրա, դից., Տիլոնի քույր – 37
Միրոն, Պետրոնասի աներ – 308, 344, 345
Միքայել, Երուսաղեմի սինկելլոս – 267
Միքայել, Կոլոնիայի արքեպիսկոպոս - 445
Միքայել, Սիննադայի եպիսկոպոս – 267
Միքայել I Ռանգաբե, կայսր – 257, 260, 267, 292, 293, 305, 382, 399, 429
Միքայել II Թևվատ, կայսր – 268-271, 275, 276, 280, 294-311, 314-316, 330, 360, 365, 501
Միքայել III, կայսր – 273, 276, 278, 283, 341, 342, 346 - 349, 351- 353, 367-369, 372-375, 378, 383, 384, 387-390, 392-395, 399, 404-410, 412-420, 431, 436-438, 459, 462
Միքայել Ասորի, պատմագիր – 310, 311, 318, 454
Միքայել Բոգորիս (Բորիս), բուլղարաց թագավոր – 400, 401
Միքայել Լախոնոդրակոն, զորավար - 288
Միքայել պատրիկ, Անատոլիկոն բանակաթեմի ստրատեգոս - 260, 264
Միքայել Սինկելլոս, եպիսկոպոս – 275, 360
Մխիթար Աբբա - 557, 561, 566
Մխիթար Այրիվանեցի, պատմագիր – 510, 511, 541
Մխիթար Անեցի, պատմագիր - 480
Մխիթար Ապարանցի, մատենագիր - 536, 537, 541, 544, 545
Մխիթար Գոշ, իրավագետ - 117
Մխիթար Սպարապետ- 550
Մկրտիչ, բռնակոթցի - 551
Մոդեստոս, Բարսեղ Կեսարացու նամակագիր - 115
Մոնոզոն, շրջիկ քարոզիչ – 432
Մոնցկա, Հ., պատմաբան – 141, 142
Մոպսոս Լյուդացի, դից. – 28
Մոսես, բռնակոթցի – 551
Մոսմար, Թովմասի հայր - 300
Մովսես, Ուտիքի իշխան - 523, 526
Մովսես Խորենացի, Պատմահայր – 6, 21-23, 27, 52, 66, 71, 72, 79-83, 86-89, 98, 99, 103-105, 107-109, 111, 120, 123, 128, 129, 147, 153, 171, 172, 176, 178, 179, 235, 242, 244, 403, 433, 486, 487,

489, 492-494, 498-501, 515, 536, տե՛ս նաև Պատմահայր
Մովսես Կաղանկատվացի, պատմագիր – 6, 126, 289, 319, 445, 455, 458, 466, 468, 499, 508 – 512, 514-517, 524, 525, 527, 528
Մորդման, պատմաբան - 80
Մորիկ, կայսր – 426
Մորտագոն, բուլղարաց թագավոր - 302
Մրվան, ոստիկան – 234, 482-485, 502, 507
Մրվան Ղրու, տե՛ս Մրվան ոստիկան
Մուավիա, Սահլի որդի, Աղվանից իշխան - 509-511
Մուավիա, խալիֆ - 249, 542
Մուհամմեդ (Մահմետ), մարգարե - 75, 93
Մուհամետ (Ահմատ) իբն Խալիդ - 468-470
Մուհամետ իբն Խալիդ Շայբանի, ոստիկան - 458, 463, 502-504
Մուհամատ իբն Հատաբ, ամիրա - 502, 503
Մուհտադի, խալիֆ - 459, 466
Մունտասիր, խալիֆ - 459
Մուշեղ, անձնանուն – 292
Մուշեղ, Կարսի թագավոր - 518
Մուշեղ, Սմբատ սպարապետի որդի - 475
Մուշեղ (Մոշալե), Սողոմոնի որդի – 488, 489
Մուշեղ Անձևացի – 464
Մուշեղ Բագրատունի, Մոկաց իշխան – 453, 455, 456, 469
Մուշեղ Մամիկոնյան (IV դ.), սպարապետ – 240, 242, 427, 497
Մուշեղ Մամիկոնյան (591 թ.), զորավար – 231, 232, 498
Մուշեղ Մամիկոնյան (750 թ.) – 289
Մուշեղ Մամիկոնյան (†775 թ.), Հրահատի որդի – 236, 238, 240, 289, 290, 427, 441, 443, 448, 457, 484, 493, 498
Մուշեղակ, Գրիգոր զորավարի հայր – 288, 289, 292
Մուսե, Բուղայի որդի - 466
Մուսե, Զորահայի որդի - 456
Մուսե, խալիֆ - 484
Մուսե, տե՛ս Մովսես, Ուտիքի իշխան
Մուստային, խալիֆ – 459, 463
Մուտազ, խալիֆ – 459
Մուտամիդ, խալիֆ - 459, 465, 466, 471, 472
Մուտասիմ, խալիֆ – 338, 339, 341
Մուտավաքիլ, խալիֆ – 239, 459
Մուտրագոն, բուլղարաց թագավոր - 401
Մուքայել, վարժապետ – 36

Յակուբի, պատմագիր - 310, 445, 451, 452, 466
Յահյա ալ Հարաշի, զորավար – 450
Յահյա - ալ-Ղազզալ, դեսպան - 281
Յահյա իբն Մուադ, ոստիկան - 452
Յամանիկ, Պարտավ քաղաքի իշխան – 444, 467-471
Յամբղիքոս, մատենագիր – 62, 63
Յիսա, Աբլ-Ասադի քեռորդի – 524
Յոհան, մատենագիր, Նիկիո եպիսկոպոս - 67
Յոհան, Վախթանգի սերնդից - 490
Յոհաննե Դեկանոս, մատենագիր – 482
Յովանե, Արչիլի որդի - 482
Յուպիտեր, դից. – 91
Յուսուփ, Ատրպատականի ամիրա - 152, 458, 512
Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամի, ոստիկան - 444

Նաբուգոդոնոսոր, Ասորեստանի արքա - 55, 60, 495
Նազենիկ, վարծակ - 493
Նազլու, բռնակոթցի – 551
Նանա, դից. – 41, 50
Նանա, վրաց. թագուհի – 70
Նանե, դից. – 41, 50
Նասար, Բուկելլարյան թեմի ստրատեգոս - 378
Նասոր, Քրիստափորոս մագիստրոսի որդի - 302
Նասր, արաբ դեսպան - 375
Նասր, խուռամյան զորավար – 318, 319, 321, 324, 326, 336, 339
Նասր (Ներսեհ), տե՛ս Ներսեհ Գուռամյան
Նարսիս (Բարսիս), տե՛ս Նասր, խուռամյան զորավար
Նեբո, դից. – 32
Նեբրովթ, Աստվածաշնչ. - 408, 440
Նեմանես, զորավար – 161
Ներգալ (Նարգալ, Ներգել), դից. – 83
Ներշապուհ Արծրունի, զորավար – 225
Ներոխ Տարոնցի – 36, 39
Ներսեհ (Ատրներսեհ), տե՛ս Ատրներսեհ Կույր - 486
Ներսեհ, Ատրներսեհի հայր – 485, 486
Ներսեհ, Ատրներսեհի որդի – 492, 493
Ներսեհ, Գարդմանի (Գարիթայան) իշխան – 517, 525
Ներսեհ, Իսահակ բին Սոլիմանի դաշնակից – 451
Ներսեհ, Սյունյաց իշխան, Փիլիպպոսի որդի - 515
Ներսեհ, Վարազ-Բակուրի որդի - 488
Ներսեհ (Նասր) Գուռամյան – 490, 491, 504, 505
Ներսեհ Կամսարական (VI դ.) - 216
Ներսեհ Կամսարական, († 785 թ.), Հայոց իշխան - 441, 448
Ներսես, անձնանուն – 325
Ներսես, բյուզանդական զորավար (VI դ.) – 217
Ներսես Ա Մեծ, Հայոց կաթողիկոս – 100, 113, 114, 116, 129
Ներսես Գ Շինող, Հայոց կաթողիկոս – 151
Ներսես Դ Շնորհալի, Հայոց կաթողիկոս – 75, 76
Նիափոր, Նինոյի ուսուցչուհի – 69, 70
Նիկետաս Մամիկոնյան, պատրիկ – 306, 328
Նիկետաս Մենակյաց, Թեոդորա կայսրուհու ազգական – 257
Նիկեփոր I, կայսր – 6, 256-258, 260, 265, 266
Նիկեփոր, պատրիարք – 258, 261, 263, 268, 292, 293, 304
Նիկեփոր, պատրիկ, Վարդան կայսեր հայր - 249
Նիկիտաս, Վասիլ I-ի քարտուղար – 431, 433
Նիկիտաս Պափլագոնացի, մատենագիր - 383, 421
Նիկիտին, պատմաբան - 341
Նիկիփորոս Մալեին, զորավար – 413, 414
Նիկողայոս, վանական, Ս. Դիոմեդես եկեղեցու միաբան - 404
Նիկողայոս, վանական, Ստուդիոնի միաբան – 358
Նիկողայոս Ա, Հռոմի պապ – 353, 384, 386-388
Նիկողայոս Ստուդիոս, վանական – 257, 265, 267, 274
Նիկոմաքոս, մենակյաց – 172
Նիկոմեդես, թագավոր – 156-158, 160, 161
Նիկոն Սեավլեռնցի, պատմիչ - 537, 541, 543, 544

Նինո (Նունե), վրաց առաքելուհի – 54, 65-67, 69-72
Նինոս, Ասորեստանի թագավոր – 23-26, 30, 35, 70
Նյոլդեքե Թ., արևելագետ – 27, 154, 176
Նոյ, Աստվածաշնչ. – 66
Նոննոս, մատենագիր – 37
Նորայր Բյուզանդացի, հայագետ – 122
Նուարդ, Արայի կին – 22
Նուշզատ, առասպելաբ. - 176

Շաբո Ի., պատմաբան – 109
Շահանդուխտ, Սյունյաց թագուհի, Գրիգորի կին - 520
Շահանդուխտ, Սյունյաց թագուհի, Սմբատի կին - 520
Շահթամրազ, պարսից թագավոր - 548
Շահխաթունի Հ. - 510
Շահնազար, բռնակոթցի - 551
Շահնավազ (Վախթանգ V), վրաց թագավոր - 548
Շահնավազ (Գեորգի), Վախթանգ V-ի որդի, վրաց թագավոր - 548
Շահնավազ (Բակուր), Վախթանգ VI-ի որդի - 548
Շամբաթ, անձնանուն - 493
Շամիրամ, Ասորեստանի թագուհի – 21-24, 26, 28-33, 35, 40-43, 61-64, 70, 77
Շամշի-Ադադ, թագավոր - 32
Շանշի, Փոքր Սյունիքի տեր - 516
Շապուհ, Աղվանից զորական - 319, 524, 525
Շապուհ, Աշոտ I-ի եղբայր - 447
Շապուհ, Աշոտ I-ի որդի - 510
Շապուհ, Աշոտ Մսակերի եղբայր –303, 442, 447-453, 455, 456, 469
Շապուհ, Աշոտ Մսակերի որդի – 326, 336, 465, 470
Շապուհ Ամատունի, Համամի հայր - 287, 321, 449
Շապուհ Բագրատունի, պատմագիր – 242, 285, 309, 310, 327, 337, 451, 452, 456, 462, 463, 474, 477, 479, 485
Շավաշ, Արամանյակի սերնդից – 495
Շավասպ, անձնանուն - 496
Շավարշ (Շավարշունի, Շավարշան, Շավաշ), անձնանուն - 496
Շաֆարիկ, պատմաբան - 435
Շեխ, Հիսեի հայր – 466
Շմոն Եդեսացի, մարտիրոս – 55, 171
Շնորհալի, տե՛ս Ներսես Շնորհալի
Շրոշանա, առասպել. - 70
Շուշան (Սուսանա), առաքելուհի Նինոյի մայր – 69-71
Շուշան, Նինոս թագավորի դուստր – 26
Շուշանիկ, Վարդան Մամիկոնյանի դուստը - 70

Ոգուհի, Գրիգոր Լուսավորչի մայր – 171
Որմիզդ, պարսից թագավոր - 231

Չամչյան Մ. - 500
Չերակով, պատմաբան - 435
Չորտվանել, Թոռնիկ Վանականի հայր - 481
Չուբին, տե՛ս Վահրամ Չուբին

Պահլավ, Արշակունի տոհմի նախահայր - 494
Պանկալո (Ամենագեղ), Վասիլ I-ի մայր – 430
Պապ Արտակունի - 110
Պապ, Հայոց թագավոր – 107, 110, 112-116, 128, 427
Պապ, Հովհաննեսի եղբայր – 209
Պասկուճ, դից. - 91

Պասքամ, Հայկի թոռ – 79, 81, 87, 89, 90
Պավսանիաս, մատենագիր – 20
Պատկանյան Ք., պատմաբան – 79-82
Պատմահայր – 22, 103- 105, 128, 242, 495, 515, տե՛ս նաև Մովսես Խորենացի
Պարիս, դից. - 282
Պեգանես, Գեորգիոս Ստրատելատի հայր – 413
Պեդերսեն Հ., լեզվաբան – 81, 82
Պելոպեդես, դեսպան – 160
Պետրոնաս Մամիկոնյան, Թեոդորա կայսրուհու եղբայր – 276, 284, 305, 326, 332, 333, 344, 345, 352, 365, 369-371, 373-378, 382, 418, 430, 459
Պետրոս, բռնակոթցի – 551, 552
Պետրոս, Ս. Սիմոն վանքի վանահայր - 537, 539
Պետրոս Առաքյալ – 101, 280, 390
Պետրոս Բուլղար, Վասիլ I-ի զինակից – 394, 395, 417, 418
Պետրոս Գնափեացի - 540
Պետրոս Թրակացի, Սողոմոնի զինակիր – 206, 208
Պետրոս Իբերացի – 71
Պետրոս Քերթող - 195
Պետրոս Ֆուլոն (Թափիչ) – 248
Պերոզ, պարսից թագավոր – 125, 199, 228
Պիգանիոլ Ա., պատմաբան – 131
Պինդար, պատմիչ – 50
Պլատոն, իմաստասեր – 43, 162
Պլատոն, վանահայր – 256, 257
Պլինիոս, պատմագիր – 27, 37
Պլուտարքոս, պատմագիր - 20, 21, 46
Պյութագորաս, մաթեմատիկոս – 44, 45
Պոլիփեմոս, առասպել. – 81
Պողոս, Աղվանից հայրապետ - 522
Պողոս, Միքայել կայսեր սենեկապան - 418
Պողոս Առաքյալ – 247, 257
Պողոս Տարոնեցի – 536, 537, 540, 541, 544
Պոմպեոս Տրոգոս, մատենագիր – 158, 160, 167
Պտղոմեոս, աշխարհագրագետ – 153, 154
Պտղոմեոս Փիլատելփոս, թագավոր – 190
Պտղոմեոս Փիլոմետր, թագավոր – 190
Պրեսքուսիոս, պատմագիր – 195
Պրիեկտա, Հուստինիանոս I կայսեր քրոջ դուստր – 198, 203, 205, 209, 210
Պրիսկա, Դիոկղետիանոսի կին – 61
Պրոբոս, Անաստասիոս կայսեր քեռորդի – 192, 193
Պրոկղ, մատենագիր – 44, 48
Պրոկոպիոս, Վարդ Կեսարի հանդերձապետ - 394
Պրոկոպիոս Կեսարացի, պատմագիր – 72, 141-143, 146-149, 151, 193-197, 209,493
Պուլքերիա, Թեոդորա կայսրուհու դուստր – 273, 327, 328, 351

Ջալալյան Սարգիս, արքեպիսկոպոս – 549, 553
Ջահապ, Մուշեղ Մամիկոնյանի փեսա - 441, 448, 450 – 453, 456, 501
Ջավիդան, խուռամյան աղանդապետ - 318
Ջափր, խալիֆ – 463, 479
Ջիջում - Ասիմ, ոստիկան – 484, տե՛ս Խուզիմա բին Խազիմ
Ջոնսոն, բառարանագետ – 107, 108
Ջևանշեր, Արչիլի որդի – 482, 485, 490, 491
Ջևանշեր, պատմագիր – 482, 485, 490, 491
Ջևանշեր Ջևանշերյան, տե՛ս Ջևանշեր պատմագիր

Ռադլով – 195
Ռատի Օրբելյան, Լիպարիտի որդի - 493
Ռաքել, Աստվածաշնչ. – 488
Ռեա, դից. – 16
Ռեյնակ Թ., պատմաբան – 160, 161
Ռենտակես, Միքայել III-ի հանդերձապետ - 412, 417
Ռիփաթ, Աստվածաշնչ. – 93
Ռոմանոս Լեկապենոս Ծիրանածին, կայսր – 480, 481, 488, 489
Ռոստոմ, Բաբեկի զորավար – 524
Ռոստոմ (Ռուստամ) Սագճիկ, առասպել. – 79, 86, 87, 494
Ռոստոմ Վարաժնունի, իշխան – 467
Ռստակես, Գրիգոր Լուսավորչի որդի – 172
Ռուստամ բեկ, Մելիք Մանուչարի եղբայր - 549
Ռուփինոս, մատենագիր – 64, 66, 67
Ռև, Միհրան թագավորի որդի - 69

Ս. (Սուրբ) Կույս, տե՛ս Մարիամ Աստվածածին
Ս. Սաբբա, վանական – 293, 540, 544
Սաբազիոս (Սավազիոս), դից. – 50, 74, 85
Սաբբատիոս (Սմբատ), վանական – 294
Սաբիր, ազգագրական անուն – 195
Սալմանասար, Ասորեստանի թագավոր – 32, 33
Սալոմե, Տրդատ III-ի դուստր – 69, 70
Սական, աղանդապետ - 450
Սահակ, Աղվանքի մեծ իշխան – 513
Սահակ, Աշոտ Կույրի հորեղբորորդի - 441, 487
Սահակ, Աշոտ Մսակերի որդի - 453, 455, 456, 467
Սահակ, Բագարատ Բագրատունու (Կյուրապաղատ) որդի - 508
Սահակ, Գագիկ Արծրունու որդի – 290, 456
Սահակ, Գարդմանի իշխան - 517
Սահակ, Թիփլիսի ամիրա - 527
Սահակ, Իսմայելի որդի – 337, 338, 339
Սահակ, Սյունյաց իշխան Վասակի որդի – 516
Սահակ, Սողոմոնի որդի – 488
Սահակ, Վահան Արծրունու որդի – 290, 456, 457
Սահակ Աբումկդեմ, Աբուջափրի քեռորդի - 460
Սահակ Ահագին - 559, 562-565
Սահակ Արծրունի – 484
Սահակ Բագրատունի, Մովսես Խորենացու հովանավոր – 87, 242
Սահակ Բագրատունի, Բագարատի որդի – 235, 236
Սահակ Ա Պարթև, Հայոց կաթողիկոս – 185, 430-432
Սահակ Գ Ջորափորեցի, Հայոց կաթողիկոս - 433
Սահակ Մամիկոնյան (591 թ.), զորավար - 233
Սահակ-Սևադա, Աշոտ II Երկաթի աներ - 523
Սահակ-Սևադա, Արցախի իշխան - 517
Սահակ-Սևադա, Խաչենի իշխան - 525
Սահլ Սմբատյան, Աղվանքի իշխան – 318, 508, 509, 511, 512, 514-517
Սահղի, տե՛ս Սահլ Սմբատյան
Սամ (Ասամ, Արշամ), Սողոմոնի որդի – 488
Սամսոն, Աստվածաշնչ. – 79, 87
Սամմուրամատ, Ասորեստանի թագուհի – 32, 33
Սամուել, Գարդմանի քորեպիսկոպոս – 527, 528
Սամուել, Մուշեղ Մամիկոնյանի որդի – 493

Սամուել Անեցի, պատմագիր – 300, 473, 474, 477, 528
Սամուել եպիսկոպոս, Աղվանից հայրապետ – 468
Սամուել Երեց, տե՛ս Սամուել Անեցի
Սամուել Հայ, բուլղարների թագավոր - 6, 10
Սամուել Մամիկոնյան (IV դ.) - 242
Սայիդ-իբն-ալ-Բադրիկ - 434 տե՛ս Եվտիքիոս պատրիկ
Սայս, գիտնական – 29
Սայտի, Շանշի որդի - 516
Սանդարամետ, առասպել. – 47
Սանեսան, Մազկթաց թագավոր – 97
Սասան, Արտաշիրի հայր – 177
Ս. Սարգիս (Սուրբ Սարգիս) – 74-77, 260
Սարգիս, դեսպան – 195
Սարգիս, Կապպադովկիայի իշխան – 76, 77
Սարգիս, Հալիձորի քահանա - 550
Սարգիս, Հովհան Մայրագոմեցու աշակերտ - 76
Սարգիս, վարդապետ - 75
Սարգիս բեկ, Աստվածատուր իշխանի որդի - 547
Սարգիս բեկ, Դավիթ Բեկի հորեղբայր – 547
Սարգիս Հասան-Ջալալյան, Ղարաբաղի թեմի առաջնորդ - 547
Սարգիս Սարաֆյան, արքեպիսկոպոս – 556, 567
Սարգիս (էյվազ) քահանա, Դավիթ Բեկի եղբայր – 547, 548
Սարգոն II, Ասորեստանի թագավոր – 92
Սարգսյան Ն., քարտեզագիր – 146, 147
Սարհանգ, Արամանյակի սերունդ - 495, 497
Սափատիա, Դավիթ մարգարեի որդի – 493
Սաֆրազ, Անգեղակոթի մելիք - 553
Սաֆրազբեկյան Ջավադ բեկ - 554
Սեբելեզիս, դից. - 45
Սեբեոս, պատմիչ – 83, 88, 155, 174, 188, 242, 426, 445, 499, 500
Սեբուխտ, դեսպան – 230, 231
Սելևկոս Նիկա՛տոր, թագավոր - 37
Սեմելե, դից. – 45
Սեմիրամ, տե՛ս Շամիրամ
Սենեքերիմ (Հովհաննես), Աղվանից թագավոր – 517, 518, 520, 521
Սենեքերիմ, Ասորեստանի թագավոր - 480, 495, 496
Սենեքերիմ, Գարդմանի քորեպիսկոպոս – 526, 528, 529
Սենեքերիմ, Գրիգոր Խաչյան իշխանի որդի – 514, 517, 520
Սենեքերիմ, Իշխանակի որդի - 514
Սենեքերիմ, Սևադա- Իշխանի որդի – 520-522
Սենեքերիմ, Վասպուրականի թագավոր – 434, 479, 480
Սենեքիա, անձնանուն - 493
Սեն-Մարտեն Ա., աշխարհագրագետ - 523
Սեվերոս, եպիսկոպոս - 248
Սերենա, տե՛ս Վալերիա
Սիդոնիա, առասպել. – 70
Սիմա (Սեմեա), դից. – 62, 63
Սիմմա, ախոռապետ – 30
Սիմե, դից. – 62, 68, 69
Սիմեոն, տե՛ս Սիմա
Սիմեոն, ոսկեհանքի տեր – 144, 199
Սիմեոն Ա Երևանցի, կաթողիկոս - 566
Սիմեոն Լեսբոսացի, Մեթոդիոս պատրիարքի գաղափարակից – 363
Սիմեոն Լեսբոսցի, սյունակյաց – 267, 363
Սիմեոն Լոգոթետ, ժամանակագիր – 293
Սիմեոն Հրաշագործ – 538, 544

Սիմեոն Մագիստրոս, մատենագիր – 265, 276, 277, 284, 294, 309, 312, 315, 317
Սիմեոն Մետափրաստոս, մատենագիր – 399
Սիմեոն Սյունական, սինկելլոս – 278
Սիմեոն Տաթևացի, արքեպիսկոպոս - 547, 549
Սիմիոն, բռնակոթցի - 551
Սին, դից. – 95
Սինկելլոս, մատենագիր – 26, 28, 92
Սիոն, զորավար - 372
Սիսակ, առասպել. - 515
Սիտտաս (Ցիտտաս), զորավար – 200, 202, 206, 229
Սմբատ, անձնանուն – 241, 493
Սմբատ, Աբուալիի ազգական - 516
Սմբատ, Լևոն V Հայկազնի որդի – 259, 305, 430
Սմբատ, մենակյաց -294
Սմբատ, Սահլի հայր – 508, 509
Սմբատ, Սյունյաց իշխան (920-ական թթ.) - 426, 523
Սմբատ, վանական, պատկերամարտ - 297
Սմբատ, Վարդ Կեսարի փեսա -294, 348, 351, 368, 384, 390, 392, 394, 411-414, 418
Սմբատ (Սմբատիոս), Վասիլ I-ի եղբայր – 417, 419, 420, 430, 435
Սմբատ, Վրկանից մարզպան, տե՛ս Սմբատ Բագմահաղթ
Սմբատ I, Հայոց թագավոր – 469, 477, 486, 505, 506, 512, 516
Սմբատ II, Հայոց թագավոր – 521, 536, 540
Սմբատ I († 998), Սյունիքի թագավոր - 520
Սմբատ II, Սյունիքի թագավոր - 520
Սմբատ III († 1166), Սյունիքի թագավոր – 520, 521
Սմբատ ասպետ Բագրատունի, Վարազտիրոցի որդի – 234, 426,427, 499
Սմբատ Բագրատունի, Արտաշես I-ի դայակ - 179
Սմբատ Բագրատունի (591 թ.), զորավար – 233, 234, 241
Սմբատ Բագրատունի (VI դ.), զորավար – 498, 499
Սմբատ Բագրատունի († 705 թ.), Վասպուրականի իշխան – 508, 509
Սմբատ Բագրատունի (712 թ.), կյուրապաղատ – 289, 435, 483, 485, 500
Սմբատ Բագրատունի († 775 թ.), սպարապետ – 236, 238, 441, 442, 479, 484, 486
Սմբատ Բագրատունի († 958), կյուրապաղատ - 519
Սմբատ Բագրատունի, Մոկաց իշխան – 453; 455
Սմբատ Բագմահաղթ (Խոսրով Շում) - 102, 426, 427, 499, 500
Սմբատ Բիվրիտիան, տե՛ս Սմբատ Բյուրատյան
Սմբատ Բյուրատյան, կյուրապաղատ – 289, 449, 484, 499, 506, 507, 509
Սմբատ Դավթյան, վրաց մատենագիր - 485-487, 491
Սմբատ (Սմբատ-Աբլաբաս) Խոստովանող - 238, 239, 241, 331, 333, 452, 453, 455, 456, 460-463, 475-477, 479, 487, 503, 504, 512
Սմբատ Սպարապետ (Գունդստաբլ), պատմագիր – 521, 522
Սմիռնով Ե., հնագետ – 78
Սոսիմիաս, դից. – 62
Սոզոմենոս, մատենագիր – 66
Սոկրատես, իմաստասեր – 66, 71, 160
Սոհեմոս, Հայոց թագավոր – 62, 63
Սողոմոն, Լիբիայի կառավարիչ - 206

Սողոմոն, հրեա - 487, 488, 490-493
Սողոմոն, Մեծարանց եպիսկոպոս - 509
Սողոմոն Բագրատունի (851 թ.) - 487
Սողոմոն Իմաստուն – 123, 206, 486-488
Սոսաննա, տե՛ս Շուշան
Սոփի, Աշոտ I-ի դուստր – 464
Սոփի, Գրիգոր Լուսավորչի ստնտու – 171, 172
Սոփիա, Թեոդորա կայսրուհու քույր – 285, 305, 320, 332, 345
Սոփրոնիոս, արքեպիսկոպոս - 341
Սպանդարատ, առասպել., - 494
Սպանդիատ, Բագրատունիների նախահայր - 480, 493, 494
Սպանդիատ, Կամսարականների տոհմանուն - 494
Սպանդիատ, Սողոմոնի որդի - 493
Սպանդիատ, առասպել., Վշտասպի եղբայր – 494, 496
Սպանդիատ Բագրատունի (505 թ.) - 494
Սպենտադատա, առասպել. - 494
Սպրամ, Վարազ-Տրդատի դուստր - 515-517
Ստավրակիոս, կայսր – 283, 293
Ստեփան I, Գուռամ Կյուրապաղատի որդի - 485, 488-491
Ստեփան II, Ատրներսեհի որդի – 488-491
Ստեփան, Արշավիր պատրիկի որդի - 345
Ստեփան, բռնակոթցի - 551
Ստեփան, Գրիգորի որդի - 553-555
Ստեփան, Վասիլ I-ի որդի - 421
Ստեփան, Վարազ - Տրդատի որդի - 515
Ստեփան, Փիլիպպոսի եղբայր – 488
Ստեփանոս, Աղվանից հայրապետ – 522
Ստեփանոս, Հալիձորի քահանա - 550
Ստեփանոս Աբլ-Ասադ, Աղվանից իշխան – 318, 319, 524
Ստեփանոս Ակգերյան, եպիսկոպոս – 560
Ստեփանոս Բյուզանդացի, մատենագիր – 153
Ստեփանոս Կոն, Սևորդաց իշխան - 525
Ստեփանոս Կրտսեր, եպիսկոպոս – 253
Ստեփանոս Շահումյան, պատմագիր – 547, 548
Ստեփանոս Օրբելյան, պատմագիր – 195, 510, 516, 517,520, 525
Ստոցաս, մավրուսների զորավար - 203
Ստիլլիանոս (Ջաուցաս), Մակեդոնիայի ստրատեգոս - 436
Ստրաբոն, աշխարհագետ – 27, 58, 72, 141 – 143, 158, 196
Սրվանձտյանց Գ., բանահավաք – 34 – 36, 38, 42
Սուիդաս, մատենագիր – 44, 91
Սուլլա, զորավար – 167
Սուսաննա, տե՛ս Շուշան
Սուրեն, Գրիգոր Լուսավորչի եղբայր – 171
Սուրեն, մարզպան – 230
Սուրենյանց Վ., նկարիչ – 7
Սուրմակ (IV դ.), վրաց. թագավոր – 66
Սևադա, Աղվանից թագավոր – 520 – 522
Սևադա, Գրիգորի որդի – 520, 521
Սևադա - Իշխան, Ատրներսեհի եղբայր – 517
Սևադա, Սենեքերիմի որդի – 520
Սևադա, Փիլիպպեի որդի – 520, 521
Սևադա իբն Աբդ ալ Համիդ ալ Ջաֆարի, զորավար – 452, 453, 455

Վազարիա, անծնանուն – 493
Վալդիմեր (Վլադիմիր), բուլղարների թագավոր, Բորիսի որդի - 400
Վալերիա, Դիոկղետիանոս կայսեր դուստը – 61
Վալերիոս Մաքսիմոս, մատենագիր – 156

Վալիդ I, խալիֆ – 483, 500, 542
Վալիդ II, խալիֆ - 249
Վախթանգ I, վրաց թագավոր – 485, 490 - 492, 499
Վախթանգ V, վրաց թագավոր – 548
Վախթանգ VI, վրաց թագավոր - 548
Վախուշտի, մատենագիր – 482, 485, 492
Վահագն, դից. – 52, 53
Վահան, Տարոնի եպիսկոպոս – 430, 431, 434
Վահան Ամատունի, Հայոց հազարապետ – 185
Վահան Անդորես, պաշտոնյա - 388
Վահան Արծրունի (VIII դ. կես) - 290, 456
Վահան Արծրունի, Աշոտ I-ի փեսա - 464, 467
Վահան Գնունի, երաժիշտ - 449
Վահան Մամիկոնյան (IV դ.) – 242
Վահան Մամիկոնյան († 505) – 103, 120, 127, 181, 227-229
Վահե, Տարոնի կուսակալ – 479
Վահրամ Չուբին, պարսից բռնատիրող - 231
Վաղարշ, պարսից թագավոր – 120, 228, 229
Վաղարշակ, Հայոց ավանդական թագավոր – 79, 98, 105, 244
Վաղինակ, Վասակ Սյունեցու հորեղբայր - 186
Վաղենտիանոս (Վաղենտինյան) Արշակունի, պատրիկ – 426, 427
Վաշագիան իբն Մուսե, տե՛ս Վաչագան, Աղվանից թագավոր
Վաչագան, Աղվանից թագավոր – 521-523, 525
Վասակ, Աշոտ Կույրի որդի, վրաց Բագրատունիների տան հիմնադիր – 442, 447, 456, 478, 479, 481, 483-486, 492, 501, 553
Վասակ, Սյունյաց թագավոր, Կատրամիտեի հայր - 520
Վասակ († 821), Սյունյաց իշխան – 318, 516
Վասակ Գաբուռ, Սյունյաց իշխան – 465
Վասակ Գնթունի – 517
Վասակ Իշխանիկ, Սյունյաց իշխան – 465
Վասակ Կովակեր - 447, 460
Վասակ Մամիկոնյան - 428
Վասակ Մամիկոնյան (IV դ.), սպարապետ – 222, 242
Վասակ Մամիկոնյան, Բյուզանդական Հայաստանի կառավարիչ – 181, 182
Վասակ Մամիկոնյան, Հովհաննես Արշակունու փեսա - 200-203, 205, 229
Վասակ Մամիկոնյան, Վահան մարզպանի եղբայր – 127, 229
Վասակ Սյունի, Հայոց մարզպան – 5, 103, 180-187, 224-226, 235
Վասիլ (Բարսեղ) I Հայ, կայսր, –239, 333, 352-353, 368, 389-438, 465, 471-473, 476, 477
Վասիլ, Լևոն V Հայկազնի որդի – 305, 382, 388, 430
Վասիլ, ճգնավոր – 259
Վասիլ Ռեկտոր, Վասիլ I-ի եղբորորդի – 419, 420
Վասիլ, Մանուել Մամիկոնյանին բանսարկող - 308
Վասիլիսկիան, պատրիկ – 416, 417
Վասիլև Ա. Ա., պատմաբան – 310, 319, 320, 340, 371, 373
Վարազ, անծնանուն – 60, 493
Վարազ (VI դ.), զորավար - 216
Վարազ-Բակուր, անծնանուն - 60
Վարազբակուր, Ներսեհի հայր – 485, 490, 491
Վարազդատ, անծնանուն – 60
Վարազդեն, անծնանուն - 60

Վարազ Դիմաքսյան, անձնանուն – 60
Վարազ-Շահունի, անձնանուն – 60
Վարազ-Շապուհ, անձնանուն – 60
Վարազ-Վաղան, Վասակ մարզպանի փեսա - 186
Վարազվարդ, Սողոմոնի որդի – 488
Վարազ - Տրդատ, Միհրական – 515, 517
Վարազտիրոց, անձնանուն – 60
Վարազտիրոց, Արմենիակյան թեմի սպարապետ – 288, 289, 429
Վարազտիրոց, Սմբատ Բյուրատյանի հայր - 499
Վարազտիրոց, Սմբատ Կյուրապաղատի հայր – 234, 289
Վարազտիրոց Բագրատունի, ասպետ - 435
Վարազտիրոց Բագրատունի, Սմբատ Բագմահաղթի որդի – 426,427
Վարազտիրոց Բագրատունի, Սմբատ մարզպանի հայր – 499
Վարազտիրոց Բագրատունի (Զավիտյան – Խոսրով), Սմբատ մարզպանի որդի – 499
Վարդ, Արշավիր պատրիկի որդի - 345
Վարդ, Լևոն V Հայկազնի հայր – 259, 290, 429, 430
Վարդ, Լևոն V Հայկազնի որդի – 430
Վարդ, Կորդիլեսի որդի – 400, 401, 429, 430
Վարդ, Վասիլ I-ի եղբայր – 419, 420
Վարդ, Վասիլ I-ի որդի – 420, 430
Վարդ, Վասիլ I-ի եղբորորդի – 419, 420
Վարդ, Վասիլ I-ի զինակից - 417
Վարդ (Վարդաս) Կեսար – 273, 276, 277, 284, 285, 292-294, 305, 333, 336, 338, 339, 341-353, 361, 365-368, 371-376, 378-396, 405-407, 409-413, 418, 422, 424, 430, 436, 459
Վարդ Մամիկոնյան, մարզպան - 228
Վարդ Սկլերոս, ապստամբ – 519
Վարդան, Արմենիակյան թեմի զորավար – 290
Վարդան, մոնոստրատեգոս - 382
Վարդան, պատմագիր - 147, 285, 286, 309, 311, 448, 451, 456, 463, 473, 474, 477-481, 485-487, 501, 505, 514, 526, 527
Վարդան Թուրք, զորավար – 257, 292-300, 348
Վարդան Մամիկոնյան († 451) – 70, 180, 181, 183, 185, 187, 188, 224, 225, 227, 235, 239, 240, 479
Վարդան Մամիկոնյան Կրտսեր (VI դ.) – 230, 498
Վարդան Փիլիպպիկոս, կայսր – 249, 257, 292, 296 – 300, 403
Վարդաս, Լևոն V-ի կայսեր եղբորորդի - 265
Վարդաս, Վասիլ Ռեկտորի հայր – 420
Վարչան, առասպելաբ. – 178
Վարսակ (իոս), Քրիստափորոս մագիստրոսի որդի – 302
Վելիսարիոս, զորավար – 200, 202, 205, 209, 212, 214-216
Վելկեր, պատմաբան – 51
Վեհ Դենշապուհ, պարսից պաշտոնյա - 106
Վեհսաճան (Վեհ-Ռաճան), առասպել. – 178
Վերեթրագանա, դից. – 52
Վիլքեն, պատմաբան – 23, 25
Վիստոն եղբայրներ - 523, 526
Վիտալիանոս, Հովհաննես Արշակունու հորեղբայր - 215
Վշնասպ, դից. - 177
Վշտասպ առասպել. - 496

Վրթանես, Գրիգոր Լուսավորչի որդի – 171, 172
Վրթանես Քերթող, մատենագիր – 247
Վուլլերս, բառարանագիր – 64, 108, 150

Տաբակ, առասպել. – 176, 177
Տաբարի, պատմագիր – 178, 319, 434, 504, 511
Տահիր իբն Մուհամմատ Սանանի, ոստիկան – 450, 451
Տաճատ Անծևացի, Բուկելլարյան թեմի ստրատեգոս – 288-290, 295, 429, 441
Տարասիոս, պատրիարք – 253, 256, 266
Տարկու, դից. – 84, 86-89, 91, 92, 94-96
Տեբակ, տես Տաբակ
Տերենտիոս, կոմս - 115
Տեր Ավետիք, Ադդեհի հայր - 552
Տեր Ավետիք, Ադդեհի որդի – 551 - 553
Տեր Ավետիք, Դավիթ Բեկի զինակից - 547, 549, 550, 552, 553, 555
Տեր Երեմիա, Աղվանից հայրապետ - 553
Տեր Գեորգ քահանա, բռնակոթցի - 551
Տեր Հակոբ քահանա, բռնակոթցի – 551
Տեր Հարություն քահանա, բռնակոթցի - 551
Տեր-Գևորգյան Խ., քահանա - 551
Տեր-Հակոբյան Տ., ուսուցիչ - 549
Տեր-Հարությունյան Պ., քարտուղար – 551, 552
Տեր-Մկրտչյան Գ., հայագետ – 55, 57, 511
Տեր-Պողոսյան Գ., հայագետ – 197
Տեր – Սահակյան Կ., Մխիթարյան միաբան - 433
Տիբերիոս III, կայսր – 250
Տիգրան, անծնանուն – 47
Տիգրան II Մեծ, Հայոց թագավոր – 156, 158-165, 168, 497
Տիգրանուհի, Հայոց արքայադուստր – 105
Տիլոն (Թիլոն), դից., Զևսի որդի – 37, 40
Տիշուպ, դից.- 17, 84, 86, 87, 90, 91, 96
Տիրամայր – 19, տե՛ս նաև Մարիամ Աստվածածին
Տիրան Արշակունի, Հայոց թագավոր – 98
Տիրոց Բագրատունի, Վասակ մարզպանի գործակից – 185, 186, 225
Տոմաշեկ Վ., պատմաբան – 45, 46
Տորգոս, դից. – 90, 91
Տորք (Տորք Անգեղ) – 79-90, 94, 96
Տորքոս Կողոփոնացի, ըմբիշ – 81, 82
Տրայանոս, կայսր - 25
Տրդատ, անծնանուն - 493
Տրդատ Արշակունի (VIII դ.), զորավար - 427
Տրդատ Բագրատունի, իշխան - 493
Տրդատ III Մեծ, Հայոց թագավոր – 54, 55, 59-61, 66, 68, 69, 112-114, 116, 169-174, 176, 179, 421, 424, 430 - 434
Տրիբոնիա, արքիատար (բժշկապետ) – 193, 195
Տուբիա, անծնանուն - 493

Ռաֆֆի, վիպասան - 547, 549-550

Ցանց (Ճանճ), Մակեդոնիայի զորավար – 401, 402, 404, 429
Ցանց (Ճանճ) տե՛ս Վարդ, Կորդիլեսի որդի - 401
Ցենկեր, բառարանագիր - 150
Ցիփինարիտես, դավադիր - 392

Ուլիթեոս, զինակիր – 206, 208
Ուխտանես, պատմագիր – 535, 536, 540-543, 545
Ուրիոս Քետացի, Բերսաբեի ամուսին – 479, 480

Փաղլա, Կորիկեի որդի, քորեպիսկոպոս - 528
Փաղլա Արևմանելի, Կախեթի քորեպիսկոպոս - 528
Փառնավազ, անձնանուն - 495, 497
Փառնավազ, Արամանյակի սերունդներից - 495
Փառնավազ, Բաբամի և Բագարատի հայր – 495, 501
Փառնավազ, վրաց առասպելական թագավոր - 491
Փառնավազ (Փառնաբազ), վրաց. թագավոր (Ք.ա. I դար) – 497
Փավստոս Բուզանդ, պատմագիր – 83, 100, 103, 106, 107, 109, 110, 112 -117, 119-122, 129, 131, 134-136, 138, 196, 197, 241, 242, 427, 497, 498
Փատլուն Շեդաղյան, Գանձակի ամիրա - 514, 518
Փարսադան, Հալիձորի մելիք – 549
Փարսման V, Վախթանգի սերնդից - 490
Փարսման VI, Վախթանգի սերնդից - 490
Փիլարետ, սուրբ - 284
Փիլարտոս Վարաժնունի, զորավար – 6
Փիլիպպե, Արցախի Բագրատունի իշխան – 517, 521
Փիլիպպե († 1003), Գրիգորի որդի – 518, 520-522
Փիլիպպոս, Աղվանից թագավոր – 521, 522, 525
Փիլիպպոս, Ատրներսեհի եղբայր – 448
Փիլիպպոս, Սյունյաց իշխան – 515, 516
Փիլիպպոս Մակեդոնացի - 424
Փիլոթեոս, պրոտոսպաթար – 349, 394
Փիլոմետոր, Կապպադովկիայի թագավոր – 158
Փիլոն Եբրայեցի, մատենագիր - 29
Փիլոքսենոս, եպիսկոպոս – 248
Փլորինա, տե՛ս Թեոկտիստե
Փղորենտիոս, պրեֆեկտ – 182, տե՛ս Եղփարիոս Ասորի
Փոտ, պատրիարք - 63, 285, 386-388, 393, 395, 396, 402, 412, 415, 421-424, 432-435
Փրկիչ Քրիստոս, տե՛ս Հիսուս Քրիստոս

Քալանթարյան Ա., հայագետ – 34
Քաղդի, դից. - 93
Քանարանգես, զորական – 211-214, 217
Քարամդուլու (Քարամօղլու), բռնակոթցի – 551
Քարես Միտիլենցի, մատենագիր - 496
Քիրեաս, զինվորական – 302
Քսանթոս Լյուդացի, պատմագիր – 28, 29, 37
Քսերքսես, պարսից թագավոր- 369
Քրիսոքիր, Բուկելլերյան թեմի զորավար – 291, 295
Քրիստափորոս, մագիստրոս – 302
Քրիստոս, Հիսուս Քրիստոս – 19, 25, 27, 52, 58, 59, 65, 66, 68, 73, 76, 127, 128, 160, 184, 190, 227, 238, 246-248, 252, 254, 262, 278, 279, 363, 453, 454, 473, 480, 487, 491, 494, 495, 511, 540
Քուրդիկ Մամիկոնյան, իշխան - 460, 462

Օանն(ես), դից. – 28-30
Օես, դից. – 28, 29
Օգիրիս, դից. – 16
Օթման, ոստիկան – 441
Օլբիանոս, Արմենիակյան թեմի զորավար – 307
Օմար, անձնանուն - 451
Օմար, ամիրա - 368 - 370, 373, 376
Օմար, տե՛ս Համզա Արծրունի
Օմար II, խալիֆ- 249

Օմուրտագ, տե՛ս Մուտրագոն
Օննն(ես), Ասորիքի հրամանատար – 26, 28-30
Օտրան Գ., պատմաբան – 95, 96
Օրիփասիոս, ծովակալ - 326
Տիրդուսի, բանաստեղծ - 542

ՑԵՂԵՐԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ, ՏՈՀՄԵՐԻ, ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԵՐԻ*

Աբբասյաններ - 234, 281, 432, 444, 449, 507
Աբդել (եփթալիտ), ցեղանուն – 196
Աբխազներ (ափխազներ) – 194, 300, 378, 502, 504, 505, 531
Ադոնց, տոհմ – 551, 553
Ադոք, տե՛ս Ադոնց
Աթինգաններ, աղանդավորներ – 257, 295, 297
Ալաններ – 191, 526
Ալոյադներ, ժողովուրդ, դից. – 50
Ակեացի, տոհմ – 185
Աղասոնք, տոհմ – 553
Աղվաններ – 440, 531, 541
Ամազոններ – 191
Ամատունի, Ամատունիներ, տոհմ – 242, 287, 449
Ամորյան հարստություն, տուն – 346
Այդինանց տուն, տոհմ – 550
Անգեղ, տոհմ – 83, 87, 496
Անծևացի, տոհմ - 287, 464
Անտոնյան միաբանություն – 556
Առավանյան, տոհմ, ընտանիք – 242
Ասկուզ, ցեղանուն – 93
Ասորեստանցիներ – 23, 93
Ասորիներ – 26, 76, 444
Ասպետյաններ – 200, տե՛ս նաև Բագրատունիներ
Ավակիմոնք (Աղակիմոնց), տոհմ – 551
Ավարներ – 89, 195
Ատոմյաններ – 475
Արաբներ – 75, 118, 220 – 222, 235, 238, 239, 242–244, 250, 281, 287, 289, 298, 299, 310, 311, 313, 314, 317, 318, 322, 323, 334 – 336, 338 – 340, 343, 368-371, 373, 375, 390, 414, 425, 429, 441, 443 - 447, 449, 454, 459-462, 464, 466, 472, 483, 499, 501 – 503, 507, 532, 533, 542, 543
Արծրունիներ – 107, 127, 134, 135, 138, 158, 183, 185, 239, 290, 337, 403, 431, 447, 456, 457, 460, 464, 467, 484, 492, 530
Արմեններ – 85,,138
Արշակիդ, հարստություն - 63
Արշակունիներ (հայ) – 83, 100, 103 – 106, 109, 110, 131, 134 – 138, 171, 173, 198, 199, 201, 205, 206, 209, 210, 216, 219, 220, 224, 225, 229, 231, 287, 424 – 435, 444, 473, 474, 494 – 499
Արշակունիներ (պարթև) – 171, 201, 494
Արշարունիներ, Արշարունյաց տոհմ - 226
Արտաշեսյաններ, տոհմ, հարստություն – 161, 495, 497
Աքեմենյաններ, տոհմ, հարստություն – 63, 161, 220, 494

Բագարսիկ (Բաղասճիք), ցեղանուն – 191, 196
Բագրատունիներ (Արցախի) – 515, 517

* Կազմեց Մ. Գ. Տատրյանը

Բագրատունիներ (Կախեթի) – 529
Բագրատունիներ (հայ) – 83, 107, 138, 183, 185, 186, 200, 219, 223, 224, 228, 229, 233, 234, 238- 243, 245, 287, 326, 333, 348, 390, 418, 426, 431, 435, 439 – 442, 448, 453, 455, 457, 460, 462, 471 – 473, 478, 482, 484, 486, 487, 489, 492 – 499, 501, 504, 506, 507, 528, 530, 531, 533, 534, 544
Բագրատունիներ (Շաքի - Աղվանքի) – 506, 508, 509, 514, 515, 517, 530
Բագրատունիներ (վրաց) – 442, 478, 479, 482, 485 –490, 492, 493, 501, 504 - 506, 519, 530, 533
Բագրատունիներ (Տարոնի) – 471, 488, 489
Բագրատունիներ – Կյուրիկյաններ – 494
Բակր, արաբական ցեղ – 443, 444
Բաղակացիներ – 318
Բայլականցիներ – 318
Բյուզանդացիներ – 321, 337, 340, 371, 488, 543
Բյուրատյաններ – 499, 500, տե՛ս նաև Բագրատունիներ
Բոյյան, Բոյեկան, տոհմ – 518
Բոնխա, ժողովուրդ - 153
Բոշաներ – 545
Բուլգարներ (Կովկասի) – 191
Բուլղարներ – 257, 289, 399 - 401, 406, 429, 439, 510
Բուխա (Բոկխա, Բոխա, Բոլխա), ցեղանուն – 153

Գաբեղյան, տոհմ – 185
Գարգարևս, ցեղանուն – 196
Գարդաբանցիներ – 527
Գետեր, ցեղանուն – 44
Գերմանացիներ – 141
Գիչունց, տուն, տոհմ – 550
Գնունի, տոհմ – 131, 135, 287, 449
Գոթեր – 66, 202, 216, 288

Դադու, ցեղանուն – 191, 195
Դիդոյք, ցեղանուն – 196, 529
Դիրմար, ցեղանուն – 191, 196

Ճաման (յաման), ցեղանուն – 191, 195, 444, 445
Եզիտներ – 54
Եռանշահիկ, տոհմ – 509
Եփթալիտ, ցեղանուն – 195, 196, տե՛ս Աբդել

Զատեր (զոտտեր, զուտտեր), ցեղանուն – 542 - 546
Զարմիհրական, տոհմ – 508, 509
Զղվար (դղվար), ցեղանուն – 196
Զուրարա (Զորահա), ցեղ – 446

Թաթարներ – 80, 546
Թանկոնք, տոհմ, տուն – 553
Թոռնիկյաններ – 6
Թորգոմյաններ - 92
Թրակացիներ – 18, 44, 48, 58
Թուշք, ցեղանուն – 529
Թուրքեր – 80, 237, 293, 551, 553, 554
Թուրքմեն – թարաքյամա, ցեղանուն – 554

Իսավրյան տուն, տոհմ – 291, 292, 298, 307
Իսմայելի որդիներ – 444, տե՛ս նաև արաբներ
Իվերներ – 300
Իրանցիներ – 93

Լազեր, ցեղանուն – 194, 201, 202, 531
Լեզգիներ, ցեղեր – 440
Լուսավորչի տոհմ, տուն – 306, 433

Խազարներ – 191, 195 – 197, 349, 441, 442, 446, 448, 450, 502, 531
Խալիբներ – 52
Խաչենի տոհմ – 520
Խեղայք, ցեղեր – 196
Խորասանցիներ – 443
Խորխոռունի, տոհմ – 185, 287
Խուժիկ, ցեղանուն - 444
Խուլաս (Քուլաս), ցեղանուն – 191, 195
Խուռամ, Խուռամյաններ, աղանդավորներ – 318, 319, 321, 322, 334, 452, 454, 455
Խևսուրք (Խևսուրներ), ցեղեր – 529, 530

Ծադեր, տե՛ս Ծաթեր
Ծաթեր, 535 – 546
Ծայթ (Ծաթ) – 537, 540, 545
Ծանարներ, ցեղեր – 201, 450, 523, 526
Ծավդեացիներ, ցեղեր – 537
Ծոնդեացիք (Ծոդեացիք), ցեղեր – 541, 545

Կամսարականներ, տոհմ – 107, 185, 216, 238, 285, 287, 441, 448, 493, 494
Կայսիկ (Կայս), ցեղանուն – 444, 445, 447 – 449, 471
Կապպադովկիացիներ – 69, 157, 159
Կարաչիներ, ցեղանուն – 545
Կարապետականք, տոհմ – 551
Կարենյան (Կարնան) Պահլավ, տոհմ – 178
Կարիացիներ, ցեղ – 23
Կարինցիներ – 337, 338
Կիմմերներ, ցեղեր – 93
Կրենիտես, տոհմ – 327
Կրոբյուզ, ցեղանուն – 44

Հագարի որդիներ, հագարացիներ – 75, 457, տե՛ս նաև արաբներ
Հաթյան ցեղեր – 86
Հակոբիկներ (Հակովբիկներ) – 527, 529, 530, 554
Հակոբջանականք, տոհմ – 555
Հայեր – 14, 20, 21, 24, 33, 34, 38, 41, 44, 48, 52, 59, 68, 70, 72 – 75, 79, 83, 85, 92, 108, 118, 120, 144, 160, 161, 179 - 184, 189, 194 – 197, 200, 203, 206 – 208, , 216, 219, 221, 222, 224, 229 – 232, 235, 238, 239, 276, 283, 285 - 287, 290 - 292, 295, 301, 319, 393, 397, 401, 402, 424, 426, 434, 440, 446, 458 – 460, 468, 495, 505, 532, 535, 537, 538, 540, 541, 543, 554, 556 – 558, 562 – 564
Հայկազյաններ – 105, 111
Հայկազյանց ազգ, տոհմ – 509, 515
Հաշտեանցիք, տոհմ – 98
Հասան - ավանդ, ցեղանուն – 154
Հասան – Ջալալյան, տոհմ – 549
Հարուս, ցեղանուն – 191
Հելլեներ - 23, 52, տե՛ս նաև հույներ
Հեփթաղներ (Եվթաղ), ցեղանուն – 178, 500
Հնդիկներ – 90
Հոներ – 182, 191 -194, 197, 227
Հոռոմներ, Հռոմայեցիներ – 143 – 145, 147, 179, 227, 337, 338, 371, 499, 544 տե՛ս նաև բյուզանդացիներ
Հռիփսիմյաններ – 69, 71, 169
Հռոմեացիներ, Հռովմեացիներ – 67, 156, 158, 160, 161, 165
Հրեաներ – 102, 249, 495
Հույներ – 92, 232, 233, 469, 482, 537, 540, 541, 544
Հունգարներ (մաջարներ) – 446

Պևոնդյանք – 178, 188

Մազիանացիք, արաբ. ցեղանուն – 527
Մազկութներ – 197
Մակեդոնացիներ – 399, 400, 402, 495
Մամիկոնյաններ, տոհմ – 46, 122, 127, 131, 134, 138, 183, 185, 186, 200, 205, 223, 225, 226 – 234, 236, 239 – 243, 285 – 287, 290, 292 – 294, 306, 316, 320, 326, 328, 335, 345, 354, 365, 396, 427, 430, 431, 435, 439 –441, 447-449, 457, 459, 462, 463, 479, 498, 501, 506, 507
Մանդակունի, տոհմ – 185
Մանիքեցիներ, աղանդավորներ – 423
Մավրուսներ (մավրեր) – 202 – 204
Մարդպետական տուն, տոհմ – 462
Մարեր, ժողովուրդ - 424, 495
Մարտինյակ, տուն, տոհմ – 346, 408
Մեդացիներ – 32, 33
Մելիսսեն, տոհմ – 348 – 350
Մելիք – Թանգյան, տոհմ – 553
Միհրական, տոհմ – 509, 515, 517
Մինգրել, ցեղանուն – 440
Մուդար, ցեղանուն – 443 - 445
Մուխամիր, աղանդավորներ – 318, տե՛ս նաև Խուռամյաններ
Մուտրուբներ, ցեղանուն – 545
Մկևի, դերվիշների համայնք – 54

Նիզար, ցեղանուն – 443 – 445

Շայբանի, ցեղանուն – 444, 446, 448, 466, 468, 472, 502, 503, 530
Շուաբի, ցեղանուն – 338, 504

Պալունի, տոհմ – 226
Պահլավ, տուն, տոհմ – 178, 231
Պավլիկյաններ, աղանդավորներ – 249, 253, 257, 291, 295, 340, 364, 371, 373, 459, 465
Պարթևներ, տոհմ – 110, 138, 159, 161 – 163, 167, 171, 177, 231, 428, 494, 495
Պարսիկներ - 18, 46, 79, 87, 91, 105, 136, 143, 145, 147, 150, 173, 180, 183, 185, 224, 231- 233, 299, 300, 316, 317, 321 – 323, 325, 480

Ջահապի (Ջահաֆի, Շահապ), տուն, տոհմ – 447, 451

Ռաբիա, ցեղանուն – 443 – 445
Ռուիսենյան, տոհմ – 185
Ռուբինյաններ – 6
Ռուսներ - 110, 373, 553

Սաբիր, ցեղանուն – 195
Սամանյաններ, տոհմանուն – 534
Սասանյաններ, տոհմանուն – 106, 110, 117, 134 – 136, 138, 139, 217, 220, 231, 241, 243, 443, 494
Սարակինոսներ – 301, տե՛ս նաև արաբներ
Սարուրգոր, ցեղանուն – 191, 195
Սաֆրազբեկյան, տոհմանուն – 553
Սաֆֆարյանք, տոհմանուն – 534
Սելջուկներ, ցեղեր – 84
Սեկանի, ցեղանուն – 546
Սեվերյաններ, աղանդավորներ - 248
Սիկիլիացիներ – 239
Սինդ, ցեղանուն – 543
Սիրիացիներ – 68
Սլավոններ – 296, 303
Սկյութներ – 89, 93, 296, 303, 349
Սյունյաց տուն, տոհմ – 464, 520, 530
Սոնթեր (ծաթեր), ցեղանուն – 537, 545, 546
Ստուդիոնի միաբանություն – 358

Սուրեն, պարթևական ցեղ – 171
Սևորդիք, Սևորդեցիներ, տոհմ – 446, 527

Վահանանք – 224, 428
Վահևունի, տոհմանուն – 186, 226
Վանիզներ, ցեղանուն – 202
Վարաժնունի, տոհմ – 110
Վարդանանք – 224, 226, 428
Վրացիներ – 68 – 71, 73, 230, 440, 480, 493, 499, 531

Տահիրյանք, տոհմ – 534
Տաճիկ – 444, 446, 447, 462, 466, տե՛ս նաև արաբներ
Տայ, ցեղանուն – 444
Տաշրաց տոհմ – 185
Տավրիկյան սկյութներ – 349
Տարոնացիներ – 6
Տերիզ, ցեղանուն – 44
Տեր - Ավետիքյաններ (Տեր - Ավետիքով), տոհմ – 552
Տեր - Ավետիքյաններ (Գանձակ), տոհմ – 552
Տիգրանյան հարստություն – 495

Ցիգաններ (գնչուներ), ցեղանուն – 257, 442, 545, 546

Ուլթան, Ուլթանիկ, ցեղ – 444, 445, 447 – 449, 461, 467

Ույգուրներ, ցեղ – 195, 197
Ունոգուր, ցեղ – 191, 195
Ուստաքոլունց տուն – 549
Ուտիացիներ – 523
Ուրարտացիներ – 34, 85
Ուրծեցիներ, տոհմ – 185

Փառավազյաններ (Փառազյաններ), տոհմ – 495, 497, 498
Փառնավազյաններ, տոհմ – 501
Փորթրիզոր, ցեղանուն – 195
Փոյուգացիներ, ժողովուրդ - 85, 92

Քաղդեացիներ, ժողովուրդ - 93, 526, 527
Քամալ-ավանդ, ցեղանուն – 154
Քասիդներ, ցեղանուն – 84
Քերամոնք, տոհմ – 551
Քիսաք, ցեղանուն – 529
Քրդեր, ժողովուրդ - 154, 178
Քուլաս (Խուլաս), ցեղանուն – 196
Քուշաներ, ցեղեր – 178

Օգուր, ցեղանուն – 191, 195
Օմմայաններ, տոհմ, տուն – 234, 281, 432, 444, 449, 507
Օս, ցեղանուն – 446
Օրբելյաններ, տոհմ – 493, 504

Ֆրանկներ, ժողովուրդ - 269, 280

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ*

Աբեղյան, գավառ - 186
Աբիսիա, գավառ - 284
Աբլբառի ոստան, տես Մանազկերտ
Աբխազիա, Ափխազիա, Ափխազաց աշխարհ, երկիր – 196, 301, 338, 339, 343, 461, 502-505, 530, 531, 533
Ագաթոս, վանք - 265
Ադամակերտ, ոստան – 107
Ադրիանուպոլիս, քաղաք – 339, 401, 402, 425, 426, 428, 429, 430, 435
Ազ-Անտոք (Աժ-Անտոք), քաղաք – 155
Ալազան, գետ – 513, 514, 523, 526
Ալանաց դուռ – 506, 526, 529
Ալաշկերտ, բնակավայր – 94, 152
Ալբանիա, տես Իլլյուրիա
Ալբերդ, ամրոց – 337, 338
Ալեքսանդրապոլ, տես Կումայրի
Ալեքսանդրիա, քաղաք – 252, 271, 387, 437
Ալիս, գետ – 288, 303, 370, 373
Ալմուլատ, քաղաք – 337, 338
Ախուրյան, գետ - 448
Ակշեհիր, քաղաք – 295
Ակրիտաս, նավահանգիստ - 395
Ակրոպոլիս – 327
Աղիովիտ, գավառ – 98, 103, 105, 445, 449
Աղծնիք, Աղծնյաց նահանգ, աշխարհ – 106, 181, 224, 446, 456, 472
Աղստև (Աղստափա), գետ – 515, 525
Աղվանից դուռ – 231
Աղվանք, Աղվանից աշխարհ, երկիր, գավառ – 125, 182, 189, 196, 224, 318, 440, 464, 504 - 506, 508-511, 513, 515, 517, 522, 523, 526, 528, 530
Ամասիա, քաղաք – 295, 423
Ամարաս, գավառ – 524, 525
Ամարաս, շրջան – 508
Ամիդ, շրջան – 371, 443, 459, 466, 468, 530, 543
Ամիդ, քաղաք – 191
Ամիսոս (Սամսոն), շրջան – 368-370
Ամյուկ, բերդ - 445, 467
Ամորիա, քաղաք – 295, 332, 339 - 341, 346, 375, 510
Ամստրիա, քաղաք – 323, 324
Այա - Կապու, դուռ – 351
Այրարատյան դաշտ – 151
Այրի, գետակ – 513
Անազավրա, քաղաք – 542, 543
Անահիտի տաճար – 77
Անատոլիա, երկրամաս – 375
Անատոլիկյան բանակաթեմ – 288, 289, 292, 339, 370, 375, 429, 452
Անբասա, գավառ - 526
Անգեղ, ամրոց – 83, 496
Անգեղ, ավան - 94
Անգեղ, գավառ – 84, 94, 338
Անգեղ տուն (Անգեղտուն) – 79, 83, 87, 89, 97, 107, 109, 181, 198, 495
Անգեղակոթ, գյուղ – 551 – 553
Անգիլենե, բնակավայր - 87
Անգղ, գյուղաքաղաք – 203
Անգորայի շրջան – 288
Անդգբերդ, ամրոց – 338

* Կազմեց Մ. Գ. Ցավրյանը

Անդրեաս Առաքյալի տաճար - 409
Անզես (Անզեն), բլուր – 322, 323, 332, 368
Անթիմոս, վայր – 330
Անի, քաղաք – 241, 245, 492, 521
Անկյուրա, քաղաք - 303, 310, 339, 340, 560
Անկյուռիա, Կյուռիոն, տե՛ս Անկյուրա
Անհուշ, բերդ - 56
Անծախի ծոր – 470
Անծնացյաց աշխարհ – 467
Ս. Աննա, եկեղեցի - 391
Անջատոք, քաղաք – 155
Անտիոք, քաղաք – 37, 155, 181, 252, 254, 387, 537, 539, 540, 542
Անփայտ (Վերին) Բասեն, գավառ – 153
Աշմուշատ, քաղաք – 338
Աշոցք, գավառ – 186, 448
Ապահունիք, Ապահունյաց գավառ – 444, 448, 452
Ապար, աշխարհ – 106, 125
Աջարա, երկրամաս – 485, 513
Առան, երկիր – 191, 515, 528
Առաջավոր Ասիա - 21, 33, 54, 84, 92
Առաջին Հայք – 199, 228, 229
Ս. Առաքելոց եկեղեցի – 327
Առբերանի, գավառ – 98, 103, 445
Ասաղ, բերդ - 337, 338
Ասիա, աշխարհամաս - 27, 164, 368, 418, 542
Ասկալոն, լիճ - 29, 35, 41
Ասկալոն, քաղաք – 25
Ասեաց – Փոր (Ասյացփոր), գավառ – 147, 485
Ասորեստան – 23, 32, 33, 123 -125, 443, 468, 470, 495, 534
Ասորիք – 15, 16, 21, 25, 26, 31, 62, 165, 166, 221, 271, 309, 497, 543
Ասպար, ավազան – 342, 383
Աստուր, քաղաք – 32
Ս. Աստվածածին, եկեղեցի – 151, 152
Ավնիկ, քաղաք – 200
Ատրպատական – 318, 439, 447, 449, 450, 452, 455, 461, 466, 512, 524
Արամեական երկրներ – 27
Արարատ, լեռ – 440
Արարատյաս նահանգ, գավառ – 171, 185
Արաքս, գետ – 20, 183, 184
Արգեոս, լեռ – 310
Արեա, տե՛ս Թրակիա
Արեաց աշխարհ – 227
Արեսի կղզի – 52
Արեսի պարտեզ - 52
Արետյաս, քաղաք - 52
Արզն, քաղաք – 106, 446
Արիոբենդի բաղանիք – 348
Արծիփ (Արծափ), բնակավայր – 84
Արկադիոպոլիս, քաղաք – 401
Արձն, գյուղ – 238
Արղանա, բնակավայր – 87, 198
Արճեշ, քաղաք – 237, 238, 243, 244, 446, 484
Արմամենտարիա, վայր – 408
Արմավիր, քաղաք – 22
Արմենիական (Արմենիակոն), բանակաթեմ – 284, 288, 289, 290-292, 295, 301, 302, 305, 359, 369, 370, 371
Արշակունյաց բուն երկիր - 112
Արշակունյաց երկիր – 121, 134
Արշակունյաց (հայ) թագավորություն - 105
Արշակունի ոստան – 106, 109, 134, 219
Արշակունյաց պետություն - 121
Արշամուշատ, քաղաք - 337, 338
Արշարունիք, Արշարունյաց գավառ – 152, 238, 448, 497, 553
Արշիպելագ, կղզիներ – 164
Արվաստան, երկրամաս - 231
Արտագերս, ամրոց – 134, 236, 448

Արտազի շրջան - 449
Արտահան, գավառ – 485
Արտանուջ, գավառ – 502, 504, 533
Արտաշատ, քաղաք – 57, 62, 180, 181, 185
Արտավիլ, քաղաք – 446
Արտեմիսի տաճար – 72, 77
Արցախ, նահանգ, աշխարհ – 514, 515, 517, 554
Արևելյան Հայաստան – 496
Արևելյան մեծ պետություն (Պարսկաստան) – 448
Արևելք – 23, 47, 52, 63, 76, 131, 161, 164-168, 171, 190, 222, 224, 230, 233, 245, 253, 303, 321, 334, 376, 439, 540
Արևմտյան Հայաստան – 72, 103, 228
Արևմուտք – 48, 95, 190, 222, 225, 228, 231, 233, 245, 253, 281, 396, 435, 439, 565, 566
Ափսիդ, վայր – 344
Աֆրիկա, աշխարհամաս – 166, 203
Աֆրիկա Նովա, երկրամաս - 166

Բաբելոն – 15, 28, 32, 64, 94, 534
Բաբերդ, քաղաք – 147
Բագավան, քաղաք – 496
Բագարան, քաղաք – 238, 446, 448, 464
Բագրավանդ (Բագրևանդավեն), տե՛ս Բագրևանդ
Բագրատունյաց ոստան – 106, 496
Բագրևանդ, գավառ - 75, 94, 151, 152, 154, 235, 238, 286, 441-443, 448, 460, 462, 463
Բազար չայ, գյուղ – 553
Բազար – չայ, գետ – 553
Բազգուն (Աբասգիա, Աբխազ), աշխարհ – 191, 196
Բազե աստծո երկիր (Եգիպտոս) - 95
Բալահովիտ (Բալու), գավառ – 198
Բակտրիա, երկիր – 26
Բաղդադ, քաղաք – 109, 239, 281, 312, 339, 340, 374, 466, 508, 509, 519, 526, 543
Բաղդադի դուռ – 285
Բաղեշ, քաղաք – 446, 456
Բաղք, գավառ – 517
Բայազիտ, ամրոց – 442, 484, 496
Բայլական, քաղաք – 449, 450, 524, 525
Բանանց, գյուղ – 552
Բասեն (Բասյան), գավառ – 142, 143, 145-147, 151-153, 200, 336-338
Բասեն, գետ – 145
Բարդողոս, գյուղ – 146, 147, 150, 153
Բարձրագույն Դուռ – 108, 558
Բարձր Հայք (Կարնո աշխարհ) – 41, 147
Բեխ (Պեխ), գյուղ – 550
Բեյրութ, քաղաք – 7, 8, 62
Բեովտիա, երկրամաս – 48, 164
Բեռլին, քաղաք – 23
Բերդուջ, գետ – 523, 527
Բերկրի, քաղաք – 443, 445, 460
Բերծոր, գավառ – 524
Բիզակ, նահանգ - 203, 206
Բիթլիս, քաղաք – 36, 94
Բյուզանդական դուռ – 224
Բյուզանդական կայսրություն, տե՛ս Բյուզանդիա
Բյուզանդական Հայաստան – 110, 198, 533
Բյուզանդիա - 126, 134, 138, 139, 156, 184, 198, 210, 217, 220, 224, 228, 229, 238, 239, 249, 281, 285-289, 310, 312, 318, 319, 332, 333, 340, 361, 387, 418, 427, 428, 433, 435, 439, 445, 453, 459, 461, 462, 472, 502, 503, 531-533
Բյուզանդիոն, երկիր – 221, 288, տե՛ս նաև Բյուզանդիա

Բյուզանդիոն, քաղաք – 373, 380
Բյութանիա, երկիր – 51, 52, 160, 163, 165, 271
Բնաբեղ, գյուղ – 199
Բոլոն, բերդ - 142-144, 146, 149, տե՛ս նաև Բողբերդ
Բող - բերդ (Բոխա - բերդ, Բոհա - բերդ, Բուհա, Բուխա, Բոխա), տե՛ս Բողբերդ
Բողբերդ (Բող) – 142, 143, 146, 147, 150-153
Բոստոն, քաղաք – 10
Բոսփոր (Բոսպոր, Վոսփոր), նեղուց – 265, 355, 367, 377
Բռնակոթ, գյուղ – 550-553
Բրյուսել, քաղաք – 5
Բուլուլ, գյուղ – 146, 147, 153
Բուխա, գավառ – 145, 152, 153
Բուկելլարյան բանակաթեմ – 288, 291, 295, 340, 370, 378, 404, 429
Բուկոլեոն, նավահանգիստ – 354, 397, 417
Բուհա (Բուխա), լեռներ – 153
Բուհա - Կալե, ամրոց – 152, 153

Գաբեղյան (Գաբեղենից), գավառ – 186, 286, 463
Գազանածակ, ամրոց – 463
Գազիրա (Գազյուրա), ավան – 295
Գալատա, Կ. Պոլսի արվարձան – 397
Գալատիա, երկիր – 93, 303, 378
Գալլիա, երկիր – 165
Գամիրք (Գիմիրի), երկիր - 93
Գամրաց կողմեր – 171
Գայլ, գետ – 295
Գանձակ, քաղաք – 94, 445, 514, 518, 525, 527, 552
Գանձասար, վանք – 553
Գաստրիա, պալատ – 273, 328
Գաստրիա, վանք – 351 - 353
Գավազնի, քաղաք – 513
Գարդման (Գարդաբան), գավառ – 239, 516, 517, 525-529, 532
Գարուն, գավառ – 177
Գեղամա (Անգեղ), գավառ – 337, 338
Գեղամա ծով – 516
Գեղարքունիք (Գեղամա), գավառ – 465, 515, 516
Գենջ, շրջան – 198
Գետաբեկ, գյուղ – 94
Գերմանիկե, քաղաք – 288
Գյուղիկ, գյուղ – 145
Գյումրի, քաղաք – 236
Գյուրին, դաշտ – 370
Գնունիք, գավառ – 449
Գոմածոր, գյուղաքաղաք – 336
Գորիս, քաղաք – 551, 552, 554
Գորոզուք (Գորոզու), բերդ - 522-525
Գրգուռ, լեռ – 36
Ս. Գրիգոր վանք – 96
Գուգարք, Գուգարաց աշխարհ – 67, 70, 506, 523, 526, 529
Գուլաշկերտ, քաղաք – 152
Գուլդուլա, վայր - 483
Գունդի – Շապուհի, քաղաք – 154
Գուռգուռ, վայր – 42
Գուրգան, երկիր – 190, 196, տե՛ս Վրաստան
Գուրիա, երկրամաս – 502
Ս. Գևորգ, եկեղեցի – 273, 328
Ս. Գևորգ, վանք – 94

Դազիմոն, քաղաք – 322 - 324, 332, 339, 368, 372-374
Դալմատոս, վանք – 267
Դաղոնաց սար – 42
Դաղստան, երկիր – 530

Դամասկոս, քաղաք – 507
Դանալու, գյուղ – 550
Դանուբ, գետ – 399, 400
Դավալլու, գյուղ – 550
Դատվան, ավան – 443, 469
Դատվան, նավահանգիստ - 36
Դարանաղի, գավառ – 72
Դարդանոս – 164
Դարիալի կիրճ, պահակ (Ալանաց դուռ) – 194, 446, 506
Դարոյնք, ամրոց – 106, 442, 448, 449, 484, 496
Դափնե, պալատ – 344, 347
Դեվե - Բոյուն, լեռներ – 145
Դերբենդ, Դարբանդ, աշխարհ – 446, 522, 525
Դերբենդի պահակ – 446
Դերսիմ, շրջան – 459
Դեքսոկրատ, դուռ – 351
Դիարբակր (Դիարբեքիր), քաղաք – 87, 443, 444
Դիար - բակր, շրջան - 443
Դիար – Մուդար, շրջան – 443
Դիար – Ռաբիա, շրջան – 443
Ս. Դիոմեդեսի եկեղեցի – 404
Դիորփոս, լեռ – 20, 21
Դիրաքիում, քաղաք – 385
Դմանիս, քաղաք – 446
Դորա, մարգագետին – 369
Դվին, քաղաք – 69, 120, 125, 127, 139, 186, 190, 203, 230, 232, 236, 237, 443, 446, 448-451, 453, 456, 458, 469, 470, 484, 501
Դու, գյուղ – 145
Դումլի, լեռ – 46, 145
Դևտերոն, վանք – 391

Եբիսսա, քաղաք – 284
Եգեական աշխարհ – 15, 31, 288
Եգերք, Եգերաց աշխարհ – 482, 483, 529
Եգիպտոս, երկիր – 16, 91, 95, 113, 165, 190, 253, 254, 311
Եդեսիա (Ուռհա) – 27, 248, 443, 444, 543
Եդի – կուլե, դուռ – 335
Եկեղյաց, գավառ – 70, 72, 414, 418, 488, 489
Եկլեց, գավառ – 488, 489
Եվբեա, քաղաք – 263
Եվդոկիայի թեմ – 565
Եվխայիտա, քաղաք – 423
Եվրոպա, աշխարհամաս – 542, 546
Ս. Եվփիմե, վանք – 419, 430
Երազգավորք, գյուղաքաղաք – 475, 521
Երասխ (Արաքս) – 449, 515, 524, 525
Երեզ, ավան – 41, 72
Երկաթե դուռ – 404
Երկրորդ Հայք – 199, 228
Երվանդակերտ, քաղաք – 152
Երվանդաշատ, քաղաք – 107
Երվանդավան, քաղաք – 152
Երրորդ Հայք – 199, 228, 229
Երուսաղեմ – 66, 73, 252, 254, 271, 273, 312, 328, 387, 480, 537, 538, 550, 560
Երևան – 9, 10, 34, 141, 552
Եփեսոս, քաղաք – 250, 252
Եփրատ, գետ – 27, 31, 42, 84, 92, 145, 153, 159, 253, 368, 443, 459, 465

Զանգեզուր, գավառ – 552
Զապետրա, քաղաք – 334, 336-339
Զարեհավան, ավան – 182
Զարևանդ, գավառ – 471
Զելա, քաղաք – 77, 368
Զենդանի գահ, վայր – 58
Զիարեթ – Ղազանբաշի, լեռնաշղթա - 145

Ջմյուռնիա, քաղաք – 280, 288, 363, 560-562
Ջուպատրա, բերդ - 310
Ջևու, բերդ - 550

Էգիլ, ավան – 83
էլվիր, բնակավայր – 247
էջմիածին, քաղաք – 100, 150, 476, 551, 552, 559, 560, 566
էռոռ, գավառ – 523
էրզրում, քաղաք – 142, 145, տես նաև Թեոդոսուպոլիս

Թալին, ավան – 493
Թասոս, կղզի – 338
Թավրիզ, քաղաք – 554
Թարթառ, գետ – 516
Թեբե, քաղաք – 49
Թելավ, քաղաք – 513
Ս. Թեոդոսիոսի վանք – 544
Թեոդոսուպոլիս, քաղաք - 142-145, 229, 336
Ս. Թեոդոր վկայի վանք - 265
Թեոփոբիա, սրբարան – 325
Թեսսալիա, Թեսալոնիկե, երկիր – 48, 51, 52, 381, 387, 400
Թիլ, ավան – 70, 435
Թիլ - Գարիմմու, երկիր – 92, 93
Թիփլիս (Թիֆլիս), քաղաք – 102, 239, 338, 428, 443, 446, 458, 491, 500, 502-504, 527, 548, 552
Թլա, գյուղ – 434
Թոկատ, քաղաք – 295
Թոռնավան, գավառ – 460
Թովուզ, տես Տաուշ
Թորգոմի (Թորգոմյան) տուն – 93, 94, 236, 432, 501, տես նաև Հայաստան
Թորթում, գետ – 145, 146, 148
Թորթում, հովիտ – 144, 147, 151
Թրակեսյան բանակաթեմ – 265, 288, 365, 370, 375, 390, 412, 414
Թրակիա, երկրամաս – 44-48, 52, 65, 85, 214, 232, 233, 287, 289, 368, 399, 402, 426, 434
Թուխարք, բերդ - 449
Թուրխալ, քաղաք – 295
Թուրքիա, երկիր – 550

Իբերիա, երկիր – 182
Իլլիրիա, երկրամաս – 212, 385
Իկոնիա, երկրամաս – 295, 303
Իշխան, գյուղ – 151
Իսպանիա, երկիր – 165
Իսրայել, երկիր – 104, 123, 237
Իտալիա, երկիր – 165, 212, 216, 202, 250, 328, 329
Իրան, երկիր, աշխարհ – 47, 48, 91, 108, 120, 134, 137, 138, 173, 220, 234, 243, 494, 534
Իրիս, գետ – 295

Լազարյան ճեմարան – 476, 477
Լազիկա, երկիր – 301, 304
Լազիկե, բերդ - 147, 203
Լալակաոն, գետ – 370
Լայնաքար, բերդ - 414
Լանգոբարդիա, տես Իտալիա
Լավոդիկիա, քաղաք – 249
Լավսիակոն սրահ – 348, 349
Լավսոս, պալատ – 414
Լատերան, քաղաք – 253, 388
Լեզք, գյուղ – 34, 36
Լեմնոս, կղզի – 49
Լենինական, տես Գյումրի
Լեռնային Ինքնավար Ղարաբաղ (Արցախ) – 515

Լիբիա, երկիր – 198, 202, 203, 206, 208, 210
Լիդիա, երկիր – 37, 40
Լիկաոնիա, քաղաք – 156
Լիկիա, քաղաք – 84
Լիկոս, տե՛ս Գայլ գետ
Լիսաբոն – 8, 9
Լիվոռնո, քաղաք - 565
Լոնդոն – 523, 526
Լոռե, քաղաք – 522
Լուլոն (Լուլու), ամրոց – 311
Լուվեն, քաղաք – 9

Խաղտիք, Խաղտյաց աշխարհ – 301, 303, 304, 321, 336 - 338, 392, 395, 418-420
Խաղտյաց լեռներ – 321
Խամսա, մելիքությունների միություն – 198
Խաչեն, գետ – 515
Խաչեն, նահանգ, աշխարհ – 514-518, 520, 521, 525, 527, 553
Խաչենաբերդ, ամրոց – 516
Խառան, քաղաք – 448
Խարբերդ, քաղաք – 198, 337, 338
Խարբերդի շրջան - 198
Խարսիան, երկրամաս – 334, 335, 370
Խարտոփիլակ, արվարձան – 418
Խերսոն, քաղաք – 267
Խիդար, իջևան – 482
Խլաթ, քաղաք – 237, 239, 244, 435, 443, 446, 447
Խնձորեսկ, գյուղ – 550
Խոզաբիր, գյուղ – 503
Խոնարիոն, վայր - 368
Խորա, վանք – 267
Խորասան, նահանգ – 109, 178, 332, 449
Խորխոռունիք, գավառ – 185, 186, 226
Խոր Վիրապ – 57, 170
Խորտուկ, գյուղ – 148
Խորտուկ, լեռներ – 148
Խրամ, գյուղ – 483
Խրիսոբալանտոս (Ոսկե պարկ), մենաստան - 383
Խուժիստան (Խուժիարան), նահանգ -154, 542

Ծակ Ուռի, բնակավայր – 553
Ծաղիկ, գյուղ – 145
Ծաղկուտ, գավառ – 496
Ծանար, Ծանարք, Ծանարաց աշխարհ, երկիր – 458, 460, 503, 506, 523, 526-530
Ծանարք, լեռներ – 523
Ծանի, երկիր – 144
Ծար, գյուղ – 516
Ծմու բերդ - 337, 338
Ծովասար – 38
Ծուփք, Ծուփաց աշխարհ, թագավորություն, 83, 158, 163, 181, 198, 496

Կաբալա (Կոլոնիա), տեղավայր – 303
Կաբալլա (Սպեր), տեղավայր – 141 - 143
Կազվին (Կզվին), քաղաք – 466
Ս. Կաթողիկե եկեղեցի – 75
Կալաբրիա, քաղաք – 387
Կալախ, քաղաք – 32
Կալմախ, ժայռ – 483
Կախեթ, գավառ – 483, 488, 489, 502, 513, 518, 528
Կաղանկատու, գյուղ – 446
Կաճկաքար, գյուղ -
Կամախ, գավառ – 309
Կամբեճան – 489, 523, 527
Կանդիլ, լեռնագագաթ – 145
Կապան (Սյունիք), գավառ – 311, 522
Կապանք (Դերբենդ), գավառ – 522

Կապկոհ (Կովկաս), լեռներ – 231
Կապպադովկիա - 42, 47, 77, 93, 156-165, 171, 312, 322, 370
Կապպադովկիական բանակաթեմ - 370
Կասպից ծով – 19
Կատարո, վանք – 267
Կարա - Հիսար, տե՛ս Կոլոնիա
Կարթագեն, քաղաք – 165, 203, 204
Կարիա, երկիր – 52, 84
Կարիան, մենաստան – 351, 353
Կարիան, պալատ – 351, 352
Կարին, քաղաք – 12, 142, 144, 145, 151, 153, 198, 199, 229, 235, 237, 238, 287, 300, 303, 337, 339, 426, 443, 446, 469, 506, 529, 530
Կարման, երկիր – 178
Կարմիր ծով – 28, 47, 527
Կարմրուկ, վանք – 36
Կարս, քաղաք – 492, 518
Կարնո դաշտ – 151
Կելլարիոն, դաշտ – 368
Կեպի (Պարտեզ), բանակատեղ – 390-393, 412
Կեսարիա, քաղաք (Կապպադովկիա) – 171, 343
Կեսարիա, քաղաք (Փոքր Հայք) – 335, 373, 537, 559, 560
Կերամոս, քաղաք – 50
Կեֆելե, մզկիթ – 342
Կիան, գյուղ – 148
Կիբելոն, լեռ – 40
Կիբիսիոտ, եկեղեցական թեմ – 267
Կիթառիճ, կայան – 199
Կիլիկիա, երկրամաս – 84, 156, 158, 160, 165, 309, 336, 414, 541, 546
Կիլիկյան դռներ (Կապան) – 310, 311
Կիրասուն, բնակավայր – 52
Կլավդիոպոլիս, քաղաք - 250
Կղարջք, Կղարջեք, գավառ – 453, 455, 456, 478, 482-485, 498, 502, 504, 529, 533
Կյուզիկոս, եկեղեցական թեմ – 267
Կոզովիտ, գավառ – 448
Կոլոնիա, քաղաք – 302, 303, 340, 370, 415
Կողքիս, երկիր – 52
Կոմանա, քաղաք – 42, 72
Կոմմագեն, երկրամաս – 27, 338
Կոսմիդիա, քաղաք – 551
Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս – 54, 75, 184, 260, 267, 306, 360, 387, 436, 446, 558, 560, 561, 563, 565
Կովկաս, Կովկասյան լեռնաշղթա - 89,162, 164, 189, 301, 487, 505, 506, 513, 514, 526, 529, 530, 531, 533, 534
Կորդվա, ամիրայություն – 281
Կորդվաց լեռներ - 318, 454, 455
Կորդուք, Կորդվաց աշխարհ – 454, 455
Կորնթոս, երկրամաս - 263
Կորոն, բերդ - 310
Կրամանըք, գյուղ – 525
Կրենիտիսսայի տուն – 327
Կրետե, կղզի – 343, 390, 394, 412
Կրոտոն, քաղաք – 216
Կուելի, գավառ – 513
Կումայրի, քաղաք – 236
Ս. Կույս Աստվածածնի եկեղեցի – 279
Կուշկուշլար, լեռ – 144 - 146, 148, 153
Կուռն, ավան – 310
Կուռու, տե՛ս Կուռն
Կուր գետ – 153, 506, 511, 523, 548, 554

Հաբանդ, գավառ – 524, 525
Հադամակերտ (Ադամակերտ), քաղաք – 107, 462
Հաթերք, գավառ – 516

Հալիծոր, բերդ - 547, 549, 550, 552
Հալիս, գետ – 253
Հակարի, բնակավայր – 524
Ս. Հակովբի վանք – 509, 511
Հաղբատ, վանք – 525
Համադան, քաղաք – 32
Համշեն, Համամաշեն – 321, 449
Հայաստան – 6, 15, 19, 21, 23, 24, 27, 33, 40, 41, 52, 54, 61, 64, 65, 69, 74, 77, 78, 80, 84, 86 - 88, 90, 91, 93-95, 97, 103, 108-110, 112, 115, 119, 121, 123, 128-131,134, 139, 141, 145, 148, 152, 159, 161, 164, 173, 179-185, 190, 198, 203, 206, 217-222, 224, 225, 228, 232-235, 239, 243, 286, 288, 289, 301, 302, 306, 309, 318, 321, 333, 337, 426, 427, 433, 435, 439, 440, 442-445, 447, 449, 450, 452, 453, 455, 458, 459, 464, 466, 468 - 470, 472, 475, 478, 483, 484, 492, 495, 496, 498, 501, 502, 504, 507, 509, 510, 522, 523, 531, 532, 537, 541, 543, 544, 549, 550
Հայաստան (Մյուս), տե՛ս Փոքր Հայք
Հայկական բարձրավանդակ – 93
Հայոց աշխարհ – 183, 187, 286, 463, 464
Հայոց երկիր – 117, 190, 196, 459, 469
Հայոց լեռներ – 220
Հայոց Ձոր – 461
Հայք, երկիր – 492, 530, 537, 545
Հանդաբերդ (Հանդու բերդ) – 516
Հանծիթ, գավառ – 198, 337, 338
Հաշտյանք, Հաշտենից գավառ – 98, 103, 105, 198
Հասան – Կալե, բերդ - 151, 152
Հավախաղաց (Հավքախաղաց), բերդ - 516
Հավպտուկ, բերդ - 516
Հարք, գավառ – 448
Հեմես, քաղաք – 62, 63
Հեր, քաղաք – 443, 446, 470, 471
Հերեթ, գավառ – 489, 513, 518, 525, 526
Հերմես, գետ – 37
Հիերապոլիս, քաղաք – 27, 31, 33
Հիերիա, պալատ – 252, 254, 335
Հինդոս, գետ – 542, 543
Հյուսիսային Կովկաս – 15
Հյուսիսային Հայաստան – 184
Հյուսիսային Միջագետք – 443
Հնդկաստան, երկիր – 67, 542
Հոդիգի (Ուղևորաց) Տիրամոր վանք – 390
Հոնաց աշխարհ, Հոնաց երկիր – 191, 194, 227
Հռոմ, տե՛ս Բյուզանդական կայսրություն – 145, 191, 222, 227
Հռոմդիեր, վայր – 336, 337
Հռոմ (Հռոմեական Հանրապետություն, կայսրություն) – 63, 69, 157-168
Հռոմ, կղերապետություն – 252-254, 268-270, 280, 353, 360, 386-388, 536, 537, 558, 561-563, 565-567
Հռովմեական կայսրություն, տե՛ս Բյուզանդական կայսրություն – 206, 431
Հրեաստան, երկիր – 493
Հունաստան, Հունաց աշխարհ, երկիր – 51, 52, 164, 165, 173, 189, 191, 194, 250, 287, 483, 502
Հունարակերտ, քաղաք – 506, 515, 529
Հունաց կողմեր – 286, 311

Ձեգամ, գետակ - 525
Ձորագետ (Ձորգետ, Ձորոգետ), գավառ – 516, 518, 526
Ձորոփոր, գավառ - 516

Ղաբալա, գյուղ – 526
Ղազանբաշի, լեռնաշղթա - 145

Ղարաբաղ – 198, 515
Ղարաբաղի թեմ – 547, 549
Ղարաքիլիս, գյուղ – 553
Ղարղաբազար, լեռնագագաթ – 145
Ղափան, գավառ – 547, 552

Ճանների երկիր – 303
Ճանիկ, տե՛ս Ջանիկ
Ճապաղջուր – 198
Ճենաց աշխարհ, Ճենաստան – 498, 500
Ճորոխ, գետ – 145-148, 498, 504, 523, 531, 533
Ճորոխի ծոր - 143
Ճվաշ, գավառ – 460, 470

Մաբբուգ, քաղաք – 248
Մագնավրա, պալատ, համալսարան – 315, 347, 380, 381, 423
Մալաթիա, քաղաք – 92
Մալտա (Մելիտե), կղզի – 216
Մակեդոնիա, երկրամաս – 52, 165, 368, 399, 400, 402, 404, 409, 410, 425, 434, 436
Մակեդոնիայի բանակաթեմ – 368
Մակու, քաղաք – 550
Մակուրան, աքսորավայր – 56
Ս. Մամասի վանք – 335
Ս. Մամասի պալատ – 414, 416 - 418
Մամիկոնյան երկիր – 134
Մանազկերտ, քաղաք – 445, 446, 470, 471, 533
Մանանաղի գավառ (Մանաղի) – 72
Մանյա այրք, Մանայարք, ճգնարան – 71, 72
Մառավան, ավան – 470
Մառնիկ, գյուղ – 38 - 40
Մասիս, լեռ – 448
Մավրոպոտամոն (Սև ջուր), վայր – 343, 373
Մարաշ, քաղաք – 288, 334, տե՛ս նաև Գերմանիկե
Մարաստան, երկիր – 496
Մարդաստան, գավառ – 462
Մարտիրուպոլիս, Մարտիրոսաց քաղաք – 229, 520
Մաքենոց վանք – 475
Մեանդեր, գետ – 412
Մելազկերտ, տե՛ս Մանազկերտ
Մելիտե (Մալտա), կղզի – 216
Մելիտինե (Մելիտին), քաղաք – 84, 92, 199, 229, 235, 287, 334, 343, 368, 373, 459, 465
Մելիսսենոսների տուն – 260
Մեծ ծով, 529, տե՛ս Սև ծով
Մեծարանց Ս. Հակովբ, վանք - 511
Մեծիրանց, գավառ – 508, 515, 516
Մեծկերտ, գյուղ – 337
Մեծ Մարաստան – 162, 164
Մեծ (Ներքին) Հայք – 198, 199
Մենանդրոս, գետ – 390
Մենուասի քաղաք (Մանուազակերտ) – 152
Մեռյալ ծով – 380
Միկենա, երկրամաս – 263
Մինգրելիա, գավառ - 502
Միջագետք – 15, 21, 40, 61, 69, 76, 77, 91, 95, 203, 311, 443, 444, 447, 468, 540, 542, 543
Միջերկրական ծով – 165
Միտանի, երկիր – 84
Միտիլեն, կղզի – 267
Մխանք, գավառ - 524
Մծբին, քաղաք – 27, 106, 109, 193, 231, 443, 444, 495, 496
Մկնառինճ, գյուղ – 145
Մշո դաշտ – 42
Մոլոս, քաղաք – 267

Մոկաց աշխարհ, գավառ – 453 - 456, 469, 530
Մոպսուեստիա, քաղաք – 542, 543
Մսիս (Մոպսուեստիա), քաղաք – 334
Մցխեթ, քաղաք – 66, 70
Մուլթան, երկրամաս – 543
Մուշ, քաղաք – 38, 39
Մուֆարղին, քաղաք – 229, 376, 520

Յոթոնիր (Յոթ թոնիր), աղբյուր – 35, 64

Նահրի, երկիր – 84
Նախճավան, գավառ – 460, 554
Նախճավան, Նախճվան, Նախիջևան, քաղաք – 152, 443, 446, 447, 483, 508
Նախճվան, ինքնավար շրջան – 550
Նակոլիա, քաղաք – 250
Նապոլիս, քաղաք – 562
Նեղոս, գետ – 15
Նեմրութ, լեռ – 36
Նեմրութ, քաղաք – 32, տե՛ս նաև Կալախ
Նեո – Կեսարիա, քաղաք – 303
Ներսեսի պալատ - 325
Ներքին Հայք – 199
Նիգալ, գավառ – 485
Նիկիա, Նիկե, քաղաք – 59, 254, 258, 262, 270, 402, 425, 428
Նիկոմիդիա, ծոց – 275
Նիկոմիդիա, քաղաք – 283
Նինվե, քաղաք – 21
Նյուշապուր (Նյուշապուհ), քաղաք - 106, 178
Նորավանք - 516
Նոր Քաղաք (Նորաքաղաք) – 62, 63, տե՛ս նաև Վաղարշապատ
Նուխի, քաղաք – 509, 513
Նումիդիա, երկիր – 203, 204
Նփրկերտ, քաղաք – 145, 198, 199, 229, 376, 446, 454, 459

Շահապիվան, ավան – 130
Շաղագոմ, գավառ – 120, 145
Շամիրամ, գյուղ - 36
Շամիրամակերտ, քաղաք – 34
Շամիրամի բլուր – 29, 77
Շամքոր, գավառ – 506, 529
Շամքոր, գետ – 525
Շամքոր, քաղաք – 514, 518
Շամքորի շրջան – 446
Շապին – Կարահիսար, քաղաք – 303
Շավարշան, քաղաք – 496
Շավշեթ, երկիր – 485
Շարապան, բերդ - 147, 149
Շաքե, Շաքի, երկիր – 483, 506, 508, 509, 511, 514, 515, 526, 529, 530
Շիկաքար, գյուղ – 508, 516
Շիրակ, գավառ – 35, 236, 333, 448, 453, 457, 530, 533
Շիրվան, երկիր – 511
Շմոնի գուբ, բանտ – 56
Շնհեր, գյուղ – 549
Շողգահո, գյուղ – 516,
Շուլավեր, շրջան – 482

Ոսկե Դուռ – 335, 398, 404
Ոսկեղբյուր, Ոսկե Եղբյուր, վայր – 335, 351, 397, 417
Ոսկեսրահ – 389
Ոստան, քաղաք – 109
Որդոք, գյուղ – 461
Որոտն, գետ – 553
Ոքաղ, գավառ – 145

Չխուր, երկրամաս – 36
Չոբան - Դեղե, լեռնագագաթ – 145
Չոխուր բոստան, վայր - 342
Չորրորդ Հայք (Ծոփք, Ծոփաց աշխարհ) – 199, 228, 337

Պալատինում, թաղամաս – 167
Պաղեստին, երկիր – 65, 66, 162, 164, 267
Պաղի, բնակավայր – 338
Պաղկանք, գավառ – 524
Պամփիլիա, երկրամաս – 48, 52, 260
Պատրա, քաղաք – 409
Պարթևստան, երկիր – 163
Պարխար, լեռներ – 449
Պարսից Դուռ – 202, 228
Պարսից պետություն – 202, 480, 499
Պարսկահայաստան – 103, 151, 199, 211
Պարսկահայք, աշխարհ - 143, 144, 190
Պարսկաստան – 84, 152, 175, 186, 201, 301, 317, 439, 494, 519, 548, 550, 554
Պարտավ (Բարդա), քաղաք – 443, 444, 446, 449-452, 458, 467, 468, 508, 514, 515, 522, 524, 527, 528, 515
Պարտողոս, բնակավայր – 147
Պարտոն, գյուղ – 146
Պափլագոնիա, երկրամաս – 156, 157, 284, 288, 306, 370
Պելեկետե, վանք – 267
Պելոպոնես, երկրամաս – 409
Պեսիրես, բնակավայր - 257
Ս. Պետերբուրգ, Պետրոգրադ, քաղաք – 5, 6, 114, 310, 341, 442, 554
Ս. Պետրոս և Ս. Պողոս Առաքելոց եկեղեցի – 502
Պերգամ, երկիր – 165
Պիգա (Պիգրա), ավան – 295
Պիսինունտ, երկիր – 16
Պղնձե դուռ – 262
Պոնտոս, երկիր – 52, 57, 116, 156, 157, 159-163, 165, 235, 301, 303, 321
Պոնտոս, ծով – 79, 87
Պոսոն, տեղավայր – 370, 373, 374, 376, 378
Պսիեա, վանք – 267
Պտոսոնորա (Պոսոնտա), տե՛ս Պոսոն
Պրոտեն, կղզի – 305
Պուլուլ, գյուղ – 147, տե՛ս Բուլուլ

Ջահրամ, քաղաք – 176, 177
Ջանիկ, շրջան – 303
Ջավախք, գավառ – 69, 70, 502, 503
Ջեզիրա, երկրամաս – 443
Ջղմար, բերդ - 460
Ջորջիա, երկիր – 196, տե՛ս Վրաստան
Ջրհոր, գյուղ – 36
Ջուռլա, վտակ – 526

Ռան, տե՛ս Առան
Ռեվանտ (Ռևան), քաղաք – 106, 178
Ռշտունյաց ոստան - 107
Ռոդոստո, քաղաք - 564
Ռուիս, երկրամաս – 482

Ս. Սաբբայի վանք – 544
Սալմաստ, ավան – 443
Սալքորա, գյուղ – 151
Սակասեներ, երկրամաս - 93
Սակկուդիոն, վանք - 256
Սամաթիա, թաղ – 273, 328
Սամառա, քաղաք – 239, 340, 516, 524
Սամոթրակե, աքսորավայր – 267
Սամոսատ, քաղաք – 27, 336, 338, 371, 372, 459
Սամուսատ, տե՛ս Սամոսատ
Սանահին, վանք – 525
Սանասարյան վարժարան – 141, 146
Սանարիա (Ծանարք), երկրամաս – 526
Սանգար, գետ – 16, 41, 50, 70, 77
Սանհանա, վայր – 301, 303
Սարդես, քաղաք – 37
Սեբաստիա, քաղաք – 199, 229, 368
Սելևկիա, քաղաք – 370

Սեմ, սար – 38
Սեմարիկ, գյուղ – 148
Սերչամ, վայր – 146
Սիկիլիա, քաղաք – 216, 387
Ս. Սիմոն Հրաշագործի վանք – 538, 544
Ս. Սիմոնի վանք – 537, 539
Սինա, լեռ – 527
Սինդ, նահանգ - 543
Սիննադա, գավառ – 267
Սինոպ, քաղաք – 157, 288, 317-319, 323, 324
Սինոպի Արմենիակյան բանակաթեմ – 288, 317, 318, 319
Սիսական աշխարհ – 191, 196, 446, 515, 524
Սիսիան, գավառ – 552, 554
Սի(ս)պիրիտ, գավառ – 141, տե՛ս Սպեր
Սիրակուզա, նավահանգիստ – 216
Սիրիա, երկիր – 68, 69, 94, 249, 253, 542
Սլավոնիա, երկիր – 434, տե՛ս Մակեդոնիա
Սկանդա, բերդ - 147,149
Սկեպի, վանք – 421
Սկիլա, սրահ – 349
Սկյուտար, թաղամաս – 330
Սմբատավան, քաղաք – 147
Սմիռնիա (Զմյուռնիա), քաղաք – 265
Սյուլլայոն, բնակավայր – 260, 262, 268
Սյունիք, Սյունյաց աշխարհ – 89, 196, 232, 239, 450, 455, 465, 515, 516, 520, 522-525, 547-550
Սոզոպետրա, քաղաք – 323, 336, 337, տե՛ս Զապետրա
Սոթ, գավառ – 516
Սոթք (Սոդք), Սոթից գավառ – 514, 516, 524, 525
Ս. Սոփիայի (Սոֆիա) Մայր տաճար – 263, 279, 330, 335, 336, 386, 399
Սոֆենա (Ծոփք), երկիր – 543
Սպահան, քաղաք – 177, 232
Սպանիա, երկիր – 281
Սպեր, գավառ – 141, 142, 143, 145, 147-149, 199, 222, 229, 302, 303, 333, 336-338, 447, 448, 453, 455, 457, 460, 484, 485, 498, 530
Ստահր, քաղաք – 176
Ս. Ստեփանոս եկեղեցի – 347
Ստուդիոն (Ստուդիոս) վանք – 256, 257, 263, 267, 274, 358, 387
Սրինգ, բերդ - 460,
Սրտաձոր – 144
Սուլեյմանբար, գյուղ – 148
Սուրբ Թոնիր, աղբյուրի փոսակ – 34 - 36
Սուրբ Լեառ, Եփեսոսի շրջակայքում բարձրություն – 377
Սև ծով – 15, 373, 531
Սևանա լիճ - 78, 94, 516, 525
Սևորդյաց աշխարհ – 521

Վալաշկերտ, տե՛ս Ալաշկերտ
Վահեվան, վանք – 510
Վահևունի, գավառ – 186
Վաղարշակերտ, քաղաք – 151, 152
Վաղարշավան, քաղաք – 152
Վաղարշապատ, քաղաք – 62, 63, 102, 171, տե՛ս Նոր Քաղաք
Վայկունիք, ամրոց – 516
Վայոց Ձոր – 465, 516, 518
Վան, գավառ – 34, 36
Վան, շրջան – 86
Վան, քաղաք – 32 - 34, 41, 92
Վանա լիճ - 34, 36, 84, 86
Վանանդ, գավառ – 186, 337, 338, 339
Վանի թագավորություն - 91
Վասպուրական, նահանգ - 232, 239, 339, 441, 455, 457, 460-462, 464, 467, 503,

504, 507, 508, 530
Վարագ, վանք – 467
Վարդանակերտ, քաղաք – 289, 446, 450
Վարդաշեն, գյուղ – 145
Վանդի – շապուհի, քաղաք – 154
Վեհ - ազ - Անտոկ – Խոսրով, քաղաք – 155
Վեհ - ազ - Անտոկ – շապուհի, քաղաք – 154
Վեհ - ազ - Անտոք, քաղաք – 155
Վեհ - Անջատոք, քաղաք – 155
Վեհ - Անջաթոք – Խոսրով, քաղաք – 155
Վեհ - Անտիոկ – Սապուր, քաղաք – 154
Վեհ - Անտոկ – շապուհի, քաղաք – 154
Վեհ - Անտոք – Խոսրով, քաղաք – 155
Վենդիսաբոր, քաղաք – 154
Վենետիկ, քաղաք – 98, 181, 182, 306, 433, 473, 561, 562, 566
Վերին Բասեն – 153
Վերին Ճորոխ, գետ – 145
Վերին Վայկունիք – 524
Վերին Փոյուգիա - 156
Վիեննա, քաղաք – 82, 86, 197, 540, 556
Վիրապ, տե՛ս Խոր Վիրապ
Վլաքերնա, թաղամաս – 279, 335, 351, 355
Վլաքերնայի Ս. Աստվածածին եկեղեցի – 329, 332, 352, 355
Վխիկ, գետ – 146, 153
Վոհ (Ճորոխ), գետ – 142 - 144
Վոսփոր, նեղուց – 363
Վրաստան, Վիրք, Վրաց աշխարհ, երկիր – 52, 65, 67-71, 189, 196, 224, 440, 452, 453, 464, 478, 482, 483, 488, 490, 492, 493, 497, 501 - 503, 505, 523, 526, 528, 530, 533, 548
Վրկան, աշխարհ – 234
Վրկան, քաղաք – 106, 109

Տաթև, վանք – 517, 549-553
Տաթև, գյուղ – 550
Տայք, Տայոց աշխարհ, երկիր – 145 -147, 151, 152, 229, 321, 442, 447 - 449, 456, 457, 478, 483, 485, 530, 531, 533
Տանայիս (Դոն), գետ – 496
Տանձիք – 514
Տաշիր, Տաշիրք, գավառ – 185, 492, 525
Տավրոս, լեռնաշղթա - 72, 343, 530
Տարհունա, Տարհունաբե, լեռ – 84
Տարոն, աշխարհ – 36, 41, 42, 238, 239, 333, 431, 434, 435, 451 - 453, 456, 457, 464, 465, 469 – 471, 483, 488, 489, 503, 506, 530
Տավուշ (Թովուզ), ավան – 525
Տարսոն, գավառ – 334
Տեվրիկ (Դյուրիկ), քաղաք – 371
Տերանց վանք – 305
Տիգրանակերտ, քաղաք – 105, 109
Տիգրիս, գետ – 36, 141, 199, 443, 542
Տիզբոն, քաղաք – 155, 232
Տոհակ, բնակավայր – 515
Տոսպ, Տոսպիտիս, քաղաք – 41, 85, 86
Տոքսար, վայր – 395
Տրապիզոն, քաղաք – 52, 199, 301, 433, 531
Տրտու (Թարթառ), գետ – 515
Տուս, գյուղ – 506, 525, 529
Տուրիան, գետ – 526
Տփղիս, քաղաք – 100, 106, 456, 502, 506, 529, տե՛ս նաև Թիփլիս

Ցիփինար, բնակավայր – 395

Ուղթի (Ուխտիք, Ուխթիք), բնակավայր – 153
Ուչթեփե, սարահարթ – 549, 554
Ուտիք, Ուտյաց աշխարհ – 446, 506, 515,

516, 523
Ուրարտու, երկիր – 32, 33, 93
Ուրբելի, քաղաք – 337
Ուրֆա, տե՛ս Եդեսիա

Փայտակարան, նահանգ - 524
Փայտակարան, քաղաք – 449, 522, 524
Փառիսոս, գավառ – 518, 522, 525
Փառնա, գավառ – 516
Փարանգիոն (Փառանգիոն), բերդ - 142 - 144, 146-151
Փարավան, լիճ - 69, 502
Փարիզ (Պարիս), քաղաք – 7, 8, 56, 270, 289, 547
Փարիզի Ազգային գրադարան – 27
Փարղան, երկիր – 347, տե՛ս Ֆերգան
Փարպի, գյուղ – 127
Փարսիստան, երկրամաս – 494
Փիլիպպիոն, քաղաք – 402, 425, 428
Փիլոմելիոն, վանք – 259, 295, 297
Փիլոպատիոն, որսատեղ – 410
Փիտար, գյուղ – 199
Փղշտացվոց աշխարհ – 488, 490
Փյունիկե, երկիր – 27, 31, 249
Փոյթ (Փոթի), քաղաք – 483
Փոքր Ասիա - 16, 21, 31, 40, 42, 52, 54, 77, 84, 134, 163, 165, 166, 251, 253, 288, 303, 340
Փոքր Հայք – 77, 116, 161, 199, 228, 303, 340
Փռյուգիա, երկիր – 40, 41, 59, 61, 78, 84, 85, 93, 94, 250

Քաբալա, երկիր - 526
Քալաթ ալ Կիլաբ, ամրոց - 450
Քաղկեդոն, քաղաք - 511, 513, 535
Քեոքահիա (Կոտիայոն) – 414
Քեռնդալան, գետ – 525
Քերոնեա, քաղաք – 164
Քերսոն, երկրամաս - 292
Քիրեջլի, լեռնաշղթա - 145
Քսան գետ – 502
Քրիսոպոլիս, արվարձան – 330, 418
Քրիսոտրիկլինոն (Ոսկեսրահ), պալատի բաժին – 348
Քուշանաց աշխարհ – 178
Քուստի, գավառ – 516

Օլթի, գետ – 145, 153
Օլիմպոս լեռ – 359, 383
Օձ, քաղաք – 36
Օձխրե, գավառ – 499
Օսմանյան Դուռ – 108
Օրքոմենա, բնակավայր – 164
Օփսիկյան բանակաթեմ – 288, 289, 291, 302, 370, 413, 414, 429
Օքսիա, կղզի - 316

Ֆերգան, երկիր – 347
Ֆիդի, ավան – 295
Ֆորնիզա, ամրոց – 158
Ֆրանկֆուրտ, քաղաք – 270
Ֆրանսիա, երկիր – 340, 558, 562

Adontz N. - 8, 9*
Adr-Burzin-Mihr - 177
Adr-Farnbag - 177
Adr-Gushnasp - 177
Ahmet Ibn Mohammet al Mokkari - 282
Ammianus Marcellinus - 49, 66
Annedotos - 28
Apollonius Phodius - 52

* Կազմեց Օ. Ս. Վարդազարյանը

Appianus - 156, 158, 159, 160
Arsakies - 275
Astor, Athtar - 27
Astoret, Astarta - 27

Basil - 278
Basilius - 391, 393
Bentey Th. - 47
Benveniste E. - 121
Beylié - 272, 273
Boisacq E. - 88
Boor C. de - 277
Brook E. W. - 311
Brooks F. - 189
Brosset M. - 331, 446, 482, 489, 492, 499, 505, 513, 519
Burjin - 177
Bury J. B. - 278, 299, 311, 320, 325, 353

Chabot J. A. - 106
Chosroes - 195
Clemen C. - 44, 496
Clermont-Ganneau - 96
Constantinus Porphyrogenetes - 376, 391
Cuinet V. - 148
Cumont F. - 46, 373

D'Ohsson M. C. - 511
Dagon, Odakon - 28
David - 267, 278, 362, 363
Delehaye H. - 267
Delitsch - 92
Digenis Akritas - 420
Dilman - 92
Dulaurier E. - 467

Eirene - 347
Eusebius - 247
Euthalios - 172
Evagrius - 248

Finlay G. - 278, 319
Forbiger - 196

Gaffi - 161
Gastrang J. - 27
Gelzer H. - 255, 543
Genesius (Genesios) - 271, 274, 275, 277, 280, 284, 294, 296, 297, 301, 304, 305, 308, 312, 317, 325, 333, 339, 342, 349, 350, 355, 356, 358, 364, 368, 370, 374, 383, 391, 392, 459
Georgius Cedrenus - 259
Georgius Cyprensis - 543
Georgius Monachus - 264, 265, 275, 276, 277, 309, 313, 315, 317, 323, 325, 332, 336, 339, 344, 347, 348, 349, 350, 352, 359, 373, 374, 375, 376, 378, 383, 389, 394, 395
Gilakios - 427
Graham C. - 89
Graillot H.- 59
Gruppe - 74, 90
Gylakes - 427

Hadad - 62
Haftwad (Haftanboxt, Astawad) - 176, 177
Hamilton F J. - 189
Harnack A. - 57
Hesichius - 91
Hefele C. J.- 266
Herodotus - 94
Hilprecht H. V. - 84
Hirch - 320, 323
Hoffmann G. - 106
Hogarth - 91
Hommel F. - 84

Ignatius - 258, 261, 263, 385, 388
Irene - 278

Jean, evecque de Nicée - 67
Joseph -195
Justinianus 156, 157, 158, 160

Kretschmer P. - 84

Lagarde P. de - 46
Lauer - 49
Launey - 148
Lebeau C. - 260, 325
Leclercq H. - 266
Leo Armenus - 260
Leo Grammaticus - 260, 276, 277, 317, 334, 347, 348, 383, 389
Ludwig der Fromme - 266, 270
Lycophrones - 88

Macritchie David - 543
Mai A. - 189
Maiktes (Maiakes, Maikes, Հմայակ, Հմայեկ)- 425, 429
Mansi J. D. - 247, 248, 250, 252, 254, 266, 270, 280, 299, 301, 330
Marquart (Markwart) J. 445, 452, 504, 508
Masudi - 325, 466
Meribanes - 71
Methodius - 275
Meyer Ed. - 31, 84, 96
Michel le Syrien - 310, 319, 337, 339, 455
Migne J. P. - 56, 61, 62, 67, 75, 115, 126, 246, 250, 251, 253, 261, 264-266, 271, 274, 278
Morgan J. de - 91
Müller Ch. - 29
Muralt E. de - 193
Murray I. - 148

Nicephorus 250
Nicephorus Partiarchus (Nicephore Patriarche)- 258, 261, 278, 287, 362
Nicetas - 261, 264
Nicolaus Studita - 265, 274, 350
Nöldecke Th. - 136, 138

Oes, Onnes, Oannes - 28

Paideuomenos (Թեոփիլիցես, Թեոփիլիոդիոն, Թեոփիլիկոս) - 404
Pedersen H. - 82
Petrus der Iberer - 71
Philaretus - 284
Photius - 28, 63
Piganiol A. - 126, 132, 133
Pitra J. B. - 247
Plutarchus - 159
Preller L. - 49
Prescus - 195
Procopius Caesariensis - 72, 195

Raabe - 71
Ramsay W. M. - 303, 310
Reinach Th. 160, 161
Ritchie M. - 545
Roscher - 31, 62, 95
Rosenberg Fr. - 58

Sayce A. H. - 93
Schlasser - 278
Scriptor Incertus - 258, 260, 262, 264, 266
Semea, Semaia, Sime 62
Semele - 45
Serruys D. - 266
Symeon Magister (Logothetes) - 258, 260, 264, 276, 277, 284, 294, 309, 313, 315, 317, 323, 325, 332, 350, 352, 360, 383, 394, 395

Simma - 30
Simson B. - 270
Skylitzes - 273
Sophia - 172
Spectas, Ioannes - 261
Stern M. A. - 47
Strabo - 58, 158
Strong H. - 27
Suidas - 91
Suum (Sum) - 30
Su-um-ma-tu (Semiramis) - 30
Symbation - 259
Syncellos Michael - 28, 275, 360

Tabari - 319, 466, 511
Tarhunazi - 84
Tarkudimme - 84
Tarkundaradus - 84
Tebak - 176
Theodora imp. - 283
Theodorus Melodes - 277
Theodorus Studita - 258, 260, 263, 264, 265, 266, 269, 271
Theognostus - 385
Theophanes - 248, 257, 261, 272, 273, 278, 287, 453
Theophanes Continuatus - 260, 271, 272, 274, 275, 277, 278, 284, 294, 296, 297, 301, 302, 303, 304, 305, 308, 309, 312, 313, 314, 315, 317, 322, 323, 325, 327, 330, 332, 333, 336, 338, 339, 341, 342, 343, 344, 345, 350, 352, 354, 355, 356, 358, 359, 362, 363, 368, 372, 374, 375, 383, 389, 391, 393, 459
Theophilus - 275, 279, 360, 363
Theostericus - 266
Tomaschek - 44, 48

Valerius Maximus - 156
Vigourout - 122

Wasmuth - 91
Weib - 319
Welcker - 49
Wilken - 23
Wroth W. - 327, 341

Zacharia ep. Mitylenes (Zachariah of Mitylene) - 189
Zotenberg H. - 67

Ἀντώνιος - 258
Ἀρτώκης (Ἀρτάκης) - 497
Γεράσιμος - 539
Εὐθύμιος - 538
Θεοδόσιος - 539
Ἰαννης - 260
Κασυματᾶς - 258
Κλειένης - 424, 427
Κωσταντῖνος - 258
Μόσχος Κολοφώνιος - 81
Ὁράτιρ (Ἀράτιος, Ωιιιη) - 493
Παγκράτιος (Σκιαστής) - 258
Πετρὸς ὁ Γναφεύς
Σαβάζιος - 85
Σαββάτιος - 294
Σάββας - 539
Συμβάτιος - 294
Συμεών -539
Τροκόνδης -84
Ὑλιλᾶς (Ὑλίλας, Hylzilas) - 258
Χριστός 539

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ (Պ. Հ. Հովհաննիսյան) 5
Հին Հայոց աշխարհայացքը 13
Տորք աստված հին Հայոց 79
Տարկուն հին հայերի մոտ 86
Հայ հին շինականությունը 97
Հայաստանի ոսկեհանքը 141
Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ 156
Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև 169
Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ 180
Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում (Զ դար) 189
Արտավան Արշակունի 198
Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում 218
Պատկերների խնդիրը 246
Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա 281
Վարդ Մամիկոնյան (856-866) 367
Վասիլ Հայազն (Մեծագործ կայսր. 867-886) 397
Բագրատունյաց փառքը 439
Հայ - ծաթերի ծագման մասին 535
Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը 547
Գրախոսություն – Գ. Գալեմքեարյան, Կենսագրություն
Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆյան և ժամանակին
հայ կաթողիկեայք: Վիեննա, 1908 556
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 569
ՑԱՆԿԵՐ 590

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Ե Ր Կ Ե Ր

Հատոր Ա

Պատմագիտական ուսումնասիրություններ

Կազմի ձևավորումը՝ **Գ. Վ. Մարիկյանի**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Գ. Բդոյան**
Սրբագրիչ **Վ. Վ. Դերձյան**
Համակարգչային
շարվածքը և ձևավորումը **Ս. Ա. Գասպարյանի**

**Ստորագրված է տպագրության 11.05.06 թ. Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$:
Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 36,7 մամուլ, տպագր. 40,75 մամուլ + 1 էջ
ներդիր, պայմ. 37,9 մամուլ: Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 17:**

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

«Նաիրի» հրատարակչության տպագրատուն, Երևան - 9, Տերյան 89

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռքբերված նվաճումների համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7 Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը,** 2001 թ..
9. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բաբկեն Հարությունյան** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** Տիեզերական պատմություն, (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Աբգարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Փայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթևոսյան** Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բադիկյան** Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Հրաչյա Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:

23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Հյուբշման** Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Հյուբշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Չևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգածե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Հրաչյա Աճառյան** Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր** Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարէն Իւզբաշեան** Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Դելլալյան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր–Ղևոնդյան** – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** – Երգնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Հրաչյա Աճառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքննություն, Շարահյուսություն, 2005 թ.:
41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բազյան** Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. **Ռամազ Գորգածե** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. **Պավել Շարաբխանյան** - Հանգաբանություն, 2005 թ.:
45. **Ռուբէն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ **Ալբերտ Շարուրեանի**, 2006 թ.:
47. **Նիկողայոս Ադոնց** - Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ: